АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ ИМ. М. АБЕГЯНА

МАНУК АБЕГЯН

ТРУДЫ

4

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1970

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆ

ԵՐԿԵՐ

Դ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1970

8 Ap
Ս. 13

Խմբագրական կոլեգիա

ԱՂԱՅԱՆ Է. Բ., ՀԱԿՈԲՅԱՆ Պ. Հ., ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ս. Բ.,
ՂԱՆԱԼԱՆՅԱՆ Ա. Տ., ՄԵԼԻՔ-ՕՀԱՆՋԱՆՅԱՆ Կ. Ա., ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Վ. Մ.,
ՊԻՎԱԶՅԱՆ Է. Ա., ՍԱՐԳՍՅԱՆ Խ. Ս.

Հատոր հրատարակության պատրաստեց և խմբագրեց,
ԷՄ. ՊԻՎԱԶՅԱՆԸ



ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Երկերի Դ հատորում տեղավորված են «Հայոց հին գրականության պատմության» երկրորդ գրքի՝ հեղինակի կողմից մշակված մասը, որը ընդգրկում է 10—15-րդ դդ. գրականության պատմությունը, «Էջեր դասախոսություններից»— Գևորգյան ճեմարանում կարդացած դասախոսությունները՝ 15—18-րդ դդ. տաղերգուների, պատմագրության և երգիչների վերաբերյալ, «Ուրվագծեր 19-րդ դարու հայոց գրականության պատմությունից (առաջին երեսնամյակ)» ուսումնասիրությունները:

Վերջին երկուսը «Հայոց հին գրականության պատմության» երկրորդ գրքի 1946 թ. հրատարակության մեջ՝ հեղինակի մահվան պատճառով անավարտ մնացած հատորը ամբողջացնելու նպատակով, դրված են իբրև շարունակություն մշակված մասի՝ «Լրացում» բաժնում, նյութերի համապատասխան խմբագրությամբ և տեղադրումով[1]:

Այս հատորը կազմելիս նպատակահարմար համարվեց հիշյալ «Լրացում» բաժնում դրված նյութերը ներկայացնել առանձին-առանձին, քանի որ դրանք հեղինակի ձեռքով մշակված չեն իբրև «Հայոց հին գրականության պատմություն» աշխատության մասեր, բայց և տեղավորել սույն հատորում, որպես հին գրականությանը վերաբերող նյութեր:

«Հայոց հին գրականության պատմության» երկրորդ գրքի համար իբրև բնագիր ծառայել է 1946 թ. հրատարակությունը, որը համեմատված է գրականության և արվեստի թանգարանում պահվող ձեռագիր օրինակի հետ. կատարված են խմբագրական մասնակի ճշգրտումներ, վերականգնված են ժամանակին կատարված որոշ կրճատումներ:

«Էջեր դասախոսություններից» ընդհանուր խորագրով ներկայացվող բաժնի համար ևս որպես հիմք վերցվել է նույն հրատարակությունը և համեմատվել թանգարանում պահվող ձեռագրերի հետ: Այստեղից հանված է հայերեններին վերաբերող ենթագլուխը, նկատի ունենալով, որ Երկերի Բ հատորում տպագրված է այդ թեմային վերաբերող «Հին գու-

---

1 *Տե՛ս «Առաջին հրատարակության առաջաբանից», 7, 8 կետերը:*

սանական ժողովրդական երգեր» ծավալուն հետազոտությունը (էջ 9—280):

«Ուրվագծեր 19-րդ դարու հայոց գրականության պատմությունից» ուսումնասիրությունը արտատպվում է «Արարատ» ամսագրից (1908 թ., էջ 890—904, 1103—1115, 1909 թ., էջ 257—270, 321—334, 417—438, 721—733) ամբողջությամբ, ներառյալ և Հարություն Ալամդարյանի մասին հատվածը, որ բացակայում է 1946 թ. հրատարակության մեջ:

ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ
Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն Ի Ց[1]

1940 թվականի աշնանը Մանուկ Աբեղյանը իր համաձայնությունը տվեց ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի գրականության և լեզվի ինստիտուտին գրելու հայ հին գրականության պատմությունը։

Այս աշխատության առաջին հատորը, որտեղ հայ գրականության պատմությունը հասնում է մինչև Գրիգոր Նարեկացին, այսինքն 10-րդ դարը, հանգուցյալ գիտնականը ավարտել է—ինչպես այդ երևում է հատորի առաջաբանի թվագրումից —1942 թ. ապրիլին։

Նույն թվականի կեսերից Աբեղյանը սկսեց աշխատել երկրորդ հատորի վրա, որ պիտի ընդգրկեր հայ գրականության պատմությունը 11-րդ դարից մինչև 19-րդ դարի առաջին տասնամյակների գրաբար գրականությունը։ Երկրորդ հատորի վրա Աբեղյանը աշխատեց՝ կարճատև ընդմիջումներով՝ մինչև իր մահը, բայց ցավոք չավարտեց այն, կարողացավ մշակել միայն մինչև 14-րդ դարի վերջը, այն է՝ Առաքել Սյունեցին։

Սկզբնական շրջանում ինստիտուտը ենթադրում էր՝ օգտագործելով «Արարատ» ամսագրում Աբեղյանի հրատարակված հոդվածները 19-րդ դարի գրաբար գրականության մասին, եղած բացը (15—18-րդ դարեր) լրացնել այլ հեղինակի շարադրանքով։

Սակայն, ժամանակի ընթացքում պարզվեց, որ Աբեղյանի արխիվում պահպանվել են Գևորգյան ճեմարանում նրա կարդացած՝ հայ հին գրականության պատմության հենց այդ պակասող շրջանին վերաբերող դասախոսությունների սևագրությունները։ Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այդ սևագրությունները իրենց շարադրանքով ու արծարծած տեսակետներով կարող են մշակված մասի թեկուզ համառոտ շարունակությունը հանդիսանալ, որով և ապահովվում էր հատորի հեղինակային միասնությունը։

---

[1] *Առաջին հրատարակության բանասիրական բոլոր աշխատանքները, հրատարակության պատրաստումը և խմբագրությունը կատարել են Խորեն Սարգսյանը և Արամ Ղանալանյանը—է. պ.։*

Այսպիսով, Մանուկ Աբեղյանի «Հայոց հին գրականության պատմության» տվյալ հատորը բաղկացած է հետևյալ երեք հիմնական մասերից. ա) մշակված մաս, որ ամենից ընդարձակն է, ինչպես ասվեց, 11—14-րդ դարերը, բ) սևագիր մաս, որ ընդգրկում է 15—18-րդ դարերը, և գ) տպագրված մաս («Արարատում»), որ ընդգրկում է 19-րդ դարի առաջին տասնամյակները։ Վերջին երկու մասերը հատորում անվանված են «Լրացում»— տարբերելու համար առաջին մասից։

Մի քանի խոսք այս բաղադրիչ մասերից յուրաքանչյուրի վերաբերյալ։

ԱՌԱՋԻՆ՝ ՄՇԱԿՎԱԾ ՄԱՍ

1. Մ. Աբեղյանի «Հայոց հին գրականության պատմություն» երկրորդ հատորի մշակված մասի ձեռագիրը պարփակված է 19 տետրակի մեջ, որոնք համարակալված են— բացառությամբ 18-րդ տետրակի— իր իսկ Աբեղյանի ձեռքով։ Մ. Աբեղյանը համարակալել է նաև էջերը, ըստ որում իր ձեռքով համարակալումը նա հասցնում է մինչև 16-րդ տետրակի վերջը, այն է՝ 1051-րդ էջը. 17 և 19-րդ տետրակների էջերը համարակալված են արդեն Մ. Աբեղյանի որդու, նկարիչ Մհեր Աբեղյանի ձեռքով, ինչպես և վերջինիս ձեռքով է համարակալված վերը հիշված 18-րդ տետրակը։ Այս երկու տետրակները պարփակում են ձեռագրի 1052—1183 էջերը։ Ինչ վերաբերում է 19-րդ տետրակին, ապա նրա համարակալումը նորից արված է Մ. Աբեղյանի ձեռքով, բայց ոչ իբրև 18-րդ, այլ 16-րդ տետրակի շարունակություն և ընդգրկում է 1052—1060 էջերը. այս երևույթի բացատրությունը կտրվի սույն առաջաբանի երրորդ կետում։

Այս հատորը նախորդի պես ունի «Հավելվածներ» բաժին։ Առաջին չորս հավելվածը նշված են իբրև հավելվածներ Մ. Աբեղյանի կողմից և մտնում են սույն մշակված մասի մեջ։

2. Իր ձեռագրի 19-րդ տետրակում— որը, ինչպես հայտնի կդառնա քիչ հետո, գրված է 16-րդ տետրակից անմիջապես հետո— Մ. Աբեղյանը 1059-րդ թերթի երկրորդ էջի վրա ունի հետևյալ նշումը իր անելիքի մասին.

Գրելիք (14—17-րդ դարեր)

I. Եկեղեցական գրականության վերջալույսն և արևմուտը։ Հովհան Որոտնեցի, Առաքել Բաղիշեցի, Առաքել Սյունեցի և այլն։

II. Վիպական գրականություն։

III. Քնարերգուներ. Մկրտիչ Նաղաշ, Թլկուրանցի, Աղթամարցի և ուրիշներ։

IV. Գուսանական երգեր—Հայրեններ։

Չորրորդ շրջան— գրականության նորոգումը 17—19-րդ դարերում։ Հետագայում, երբ Աբեղյանը ավարտում է սույն «գրելիքի» առաջին

կետը՝ բացատրությամբ Բաղիշեցու, 18-րդ տետրակի վերջին, 1183-րդ թերթի երկրորդ էջի վրա նա նորից նշում է իր անելիքը.

Շարունակություն— Առաքել Բաղիշեցի.
Ֆարման Մանուկի սիրավեպը.
Տաղասացություն
1. Մկրտիչ Նաղաշ
2. Թլկուրանցի
3. Գր. Աղթամարցի
4. Անանուններ
Գուսանական տաղեր։

Այդ երկու նշումներից կարելի է եզրակացնել, որ Մ. Աբեղյանը հրատակ պատկերացում ուներ իր անելիքի մասին. նշումների առանձին կետերը տեղ-տեղ տարբերվում են իրարից միմիայն ձևակերպումով, բայց ոչ բովանդակությամբ։

Սակայն, այդ «գրելիքը», ինչպես հայտնի է, հիմնականում գրելիք էլ մնաց. 1183-րդ էջով ավարտվող Առաքել Սյունեցին Աբեղյանի «Հայոց հին գրականության պատմության» երկրորդ հատորի վերջին, հեղինակի կողմից մշակված թեման էր։

«Գրելիք»-ից կարելի է եզրակացնել, որ Առաքել Սյունեցուն պիտի հետևեր Առաքել Բաղիշեցին, որը մեզ հայտնի 19-րդ տետրակում բացակայում է։

Բարեբախտաբար, Մ. Աբեղյանի թղթերի մեջ գտնվեց մի ձեռագիր տետրակ, որի առաջին 8 էջը ունի «Անանուն տաղեր» վերնագիրը, իսկ դրանց հետևող 6 էջը՝ «Առաքել Բաղիշեցի»։ Տետրակի ընդհանուր վերնագիրն է՝ «Նյութեր Հայոց հին գրականության», որ և դրոշմված է շապիկի վրա։ Թե՛ տետրակից և թե՛ գրության բովանդակությունից ու ձևից կարելի է հաստատապես ասել, որ դա Մ. Աբեղյանի վերջին շրջանի գրածներից է և որ այն բաղադրիչ մի մասը պիտի դառնար «Առաքել Բաղիշեցի» գլխի։

Նկատի ունենալով այն, որ Առաքել Բաղիշեցին Հայոց հին գրականության պատմության կարևոր օղակներից մեկն է, առանց որի պակասավոր կլիներ այդ պատմության շարադրանքը, նպատակահարմար համարվեց հիշյալ հատվածը — թեև այն չի ընդգրկում Բաղիշեցու ամբողջական դիմանկարը — տեղավորել ընդհանուր հյուսվածքի մեջ։

3. Կոստանդին Երզնկացու բաժինը, բաղկացած 15 պարագրաֆից ու մի հավելվածից («Շահնամայի ձևական ազդեցությունը»), ավարտվում է 16-րդ տետրակում, նրա վերջին, 1051-րդ էջի վրա, ըստ որում հավելվածը մտցված է հետագայում. հակառակ Աբեղյանի սովորության՝ տետրակների շապիկները դեն նետել կամ էլ կենտրոնացնել նրանց վերջում՝ հավելվածը մնացել է պարփակված իր շապկում։

«Հայոց հին գրականության պատմության» երկրորդ հատորի 19-րդ տետրակը բովանդակում է միայն մի պարագրաֆ, որի վերնագիրն է՝

«Վերածնության գրականության առաջին էտապը», թիվ 16, որ հետագայում մատիտով ջնջված է ու դարձված 1։

Թե՛ այս՝ 16 թվից և թե՛ պարագրաֆի ամփոփող բովանդակությունից կարելի է եզրակացնել, որ այն, ըստ սկզբնական հղացման, պետք է լիներ Կոստանդին Երզնկացու ստեղծագործությունը քննարկող գլխի (որը, ինչպես մեզ արդեն հայտնի է՝ համաձայն վերջնական ձևավորման՝ 15 պարագրաֆից էր բաղկացած) վերջին, հավելվածին նախորդող 16-րդ պարագրաֆը։

Փոխելով իր միտքը, Մ. Աբեղյանը հանել է այս 16 պարագրաֆը 16-րդ տետրակից, նրա փոխարեն գրել հավելվածը, էջերը համարակալել, ապա շարունակել համարակալումը 16-րդ պարագրաֆի էջերի վրա՝ հասցնելով այն 1052-ից՝ 1060-ի։

Այդպիսով, դուրս է գալիս, որ 16-րդ տետրակի անմիջական շարունակությունն է 19-րդ տետրակը։ Ապա ո՞ւր մնացին այդ դեպքում 17 և 18-րդ տետրակները։

16-րդ պարագրաֆը, այսինքն՝ «Վերածնության գրականության առաջին էտապը» ավարտվում է հետևյալ պարբերությամբ. «Բարեբախտաբար գրի առնված մնացել են գուսանական «հայրեննները», որոնք մեր քնարերգության դոհար վարդերն են։ Սրանց մասին էլ կտեսնենք այս գործի շարունակության մեջ»։

Հետագայում Մ. Աբեղյանը մատիտով երկու խաչ է դրել այս պարբերության վերջին, ու նախորդ թերթի (1059) երկրորդ էջում կրկնելով երկու խաչը, նույնպես մատիտով ավելացրել. «բայց նախքան այդ մի հայացք ձգենք մեր եկեղեցական գրականության վրա»։

17 և 18-րդ տետրակները պարփակում են հենց եկեղեցական գրականության այդ տեսությունը։ Ինչպես մեզ հայտնի է, 18-րդ տետրակի համարը Աբեղյանի ձեռքով չի գրված, բայց դրա փոխարեն նախորդ տետրակի հռոմեական XVII-ը դրոշմված է Աբեղյանի իսկ ձեռքով։ Պարզ է, ուրեմն, որ Մ. Աբեղյանը երկրորդ անգամ փոխել է իր մտադրությունը «Վերածնության գրականության առաջին էտապը» հատվածի տեղի նկատմամբ ու որոշել չդնել այն ոչ միայն «Կոստանդին Երզնկացի» գլխում, այլև նրանից անմիջապես հետո, այսինքն՝ նրա և եկեղեցական գրականության տեսության արանքում։

Արդ՝ ո՞ւր դնել այդ պարագրաֆը։ Աբեղյանը 16 թիվը փոխելով մատիտով 1-ի, ապա նույնպես մատիտով ընդհանուր վերնագիր «Տաղասացություն» (շապիկի վրա՝ «Տաղասացներ») և ենթավերնագիր՝ «Ընդհանուր տեսություն» տալով, պարզ է, որ մտադրություն ուներ լրացնելու այդ նորաստեղծ գլուխը նոր պարագրաֆներով, բայց թե ուր պիտի զետեղեր այս ամենը՝ չէր որոշել ու իր տարակուսանքները նա նշել է— դարձյալ մատիտով— հենց վերնագրին կից հետևյալ բառերով. «դնել վիպական քերթվածներից առաջ?? հետո?»։

Այդ տարակուսանքները Մ. Աբեղյանը, որքան մեզ հայտնի է, չլուծեց։ Վիպական քերթվածների մասին, որ ըստ նրա հղացման պիտի հետևեր եկեղեցական գրականությանը, նա չգրեց։ «Տաղասացություն» գլուխն էլ մնաց նույնությամբ՝ լոկ մեզ հայտնի «Վերածնության գրականության առաջին էտապը» պարագրաֆով։

Ելնելով այս ամենից, այլև նկատի ունենալով, որ նշված պարագրաֆը տեղի տեսակետից միանգամայն համապատասխանում է Մ. Աբեղյանի սկզբնական մտադրությանը՝ Ինստիտուտը որոշեց թողնել այն «Կոստանդին Երզնկացի» գլխում իբրև այդ գլուխը և նրան նախորդող գլուխները եզրափակող հատված։

Հիշված 16-րդ պարագրաֆը ներկա հատորի մեջ նշված է 17-րդ համարով, որովհետև Մ. Աբեղյանը հետագայում՝ այդ պարագրաֆը գրելուց հետո, 15-րդ պարագրաֆի վերջին հատվածը առանձնացրել ու դարձրել է 16-րդ պարագրաֆ հետևյալ վերնագրով՝ «Պարսկական բանաստեղծության ձևական ազդեցությունը և չափածո բանաստեղծության կատարումը»։ Այս նոր վերնագրի տակ մատիտով Աբեղյանը նշել է՝ «միացնել տաղասացության», դնելով կողքին երկու հարցական, որով և արտահայտել է իր տարակուսանքը այս հատվածի տեղադրության առթիվ։

4. Ներկա հատորի Ա գլուխը, որ կրում է «Վերածնության գրականություն» ընդհանուր վերնագիրը ու «Կյանքի ու աշխարհայեցության փոփոխություն» ենթավերնագիրը, իբրև դասախոսություն, 1943 թ. հունվարի 18-ին, «Կյանքի և աշխարհայեցության փոփոխությունը 10-րդ դարի վերջերում և 11-րդ դարի սկզբներում իբրև հիմք հայոց գրականության վերածնության շրջանի» խորագրի տակ, կարդացված է ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալում։

Նույնը, առանց դասախոսության ժամանակ արված սակավաթիվ բացատրությունների և հավելումների, տպագրված է ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի «Տեղեկագրի» մեջ (1943, № 1, էջ 39—52)։

5. Ներկա հատորի «Հովհաննես Սարկավագ վարդապետ» գլուխը, որ բաղկացուցիչ մասն է «Նոր մտավոր հոսանքի առաջին փուլերը գրականության մեջ» բաժնի, իբրև առանձին հատված տպված է ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի «Տեղեկագրի» մեջ (1944, № 1—2, էջ 31—60)։

Հիշյալ գլուխը Մ. Աբեղյանը, «Տեղեկագրին» տպագրության հանձնելուց առաջ, ենթարկել է զգալի փոփոխության թե՛ ըստ բովանդակության և թե՛ ըստ կառուցվածքի։ Նա հարստացրել է իր գործը մի շարք նոր և կարևոր նյութերով, խմբագրել ու ընդլայնել է եզրակացություն-ընդհանրացումները, փոխել մի երկու հատվածի վերնագրերն ու կառուցվածքը, վերջից ավելացրել մի նոր հատված՝ «Զգտում դեպի բնություն և ռացիոնալիզմ և դրա ազդեցությունը գրականության մեջ» և այլն։ Այս ամենի հետևանքով աշխատանքն ընդհանրապես դարձել է ավելի մշակուն ու կատարյալ։

Նկատի ունենալով հիշյալ հանգամանքը, Ինստիտուտը նպատակահարմար գտավ ներկա հատորում տալ ոչ թե այս հատորի համար Աբեղյանի կողմից նախապես գրված «Հովհաննես Սարկավագ վարդապետ» գլուխը՝ «Սարկավագ վարդապետի կենսագրության շուրջը» վերտառությամբ հավելվածով, այլ վերջինիս հիմնովին վերամշակված վարիանտը իր նույնանուն հավելվածով՝ տպված «Տեղեկագրի» մեջ[2]։

Կարևոր ենք համարում հիշելու նաև, որ այստեղ իբրև բնագիր օգտագործվում է՝ մեզ զբաղեցնող աշխատության «Տեղեկագրից» կատարված այդ արտատպության՝ հեղինակի գրադարանում պահպանված այն օրինակը, որի վրա նրա ձեռքով կատարված են մի շարք նոր, ուշագրավ լրացումներ և ուղղումներ։

6. «Գրելիքի» երկրորդ կետը «Վիպական գրականություն» բաժինն է, որը նույն «գրելիքի» երկրորդ վարիանտում կոչված է «Ֆարման Մանուկի սիրավեպը» (տե՛ս երկրորդ կետը)։ Մահը խանգարեց հեղինակին ի թիվս մի շարք այլ բաժինների գրելու նաև Ֆարման Մանուկի սիրավեպի մասին։

Ֆարմանի վեպի արձակ և չափածո տարբերակները կարելի է գրտնել միջնադարյան մի շարք հայ գրչագրերում։ Այդ վեպի ընտիր վարիանտներից մեկը (չափածո) «Պատմություն Ֆարմանի Ասմանի» վերնագրի տակ, հանդերձ ֆրանսերեն թարգմանությամբ, հրատարակված է Փարիզի «Անահիտ» ամսագրում (1904, № № 3—11 և 1905, № № 2, 4—9) եվրոպացի հայագետ Ֆր. Մաքլերի կողմից[3]։

Մ. Աբեղյանի կարծիքով, որ նա արտահայտել է Ինստիտուտի և Մատենադարանի մի քանի աշխատակիցների, Ֆարմանի վեպը ծագումով հայկական չլինելով հանդերձ (դա հավանորեն ընդհանուր արևելյան մի սյուժետ է), ստեղծագործական արմատական մշակման է ենթարկվել հայ իրականության մեջ։ Նա գտնում էր, որ հիշյալ վեպը իր գեղարվեստական արժանիքների շնորհիվ հանդիսանում է միջնադարյան հայ գրականության ուշագրավ հուշարձաններից մեկը, որը հատկապես աչքի է ընկնում իր կենդանի պատմվածքով, ժողովրդական սպարդ լեզվով ու ոճով, սահուն-երաժշտական ոտանավորով։

Այս նկատառումով էլ, ահա, Աբեղյանը անհրաժեշտ էր համարում Ֆարմանի վեպը մտցնել հայոց գրականության պատմության մեջ։

---

2 Այդ մասին ցուցում ունի նաև հեղինակը. տետրակների 166-րդ թերթի երկրորդ երեսի վրա, այդ գլխից առաջ Աբեղյանը գրել է. «Յովհաննես Սարկավագ Վարդապետ» գլուխըն ամբողջ (էջ 167—222, հետը նաև հավելվածը) վերամշակված է «Տեղեկագրի» մեջ տպագրելու համար, գրքի մեջ դնել վերամշակվածը»։ Իսկ գլխի վերնագրից անմիջապես առաջ նշել է «Տպել վերամշակվածը, որ գրված է ետևում»։—Է. Պ.։

3 Վեպի համառոտ բովանդակությունը հետևյալն է։ Ասորեստանի Ջարմանազան թագավորը ծերության հասակում ունենում է մի արու զավակ, որին կնքում է Ֆարմանի Ասման անունով։ Մեծանալով՝ Ֆարմանն աչքի է ընկնում իր գեղեցկությամբ, իմաստությամբ և քաջությամբ։ Պարսից թագավորի դուստր Շահիշապնուրինը լսելով Ֆարմանի

7. Ս. Աբեղյանի «Հայոց հին գրականության պատմության» երկրորդ հատորի այս մասը կազմված է հեղինակի՝ Գևորգյան ճեմարանում 1899—1900 թվականներին և հետագայում կարդացած դասախոսությունների շարադրանքից (տե՛ս «Արարատ», 1908, էջ 890 և ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի «Տեղեկագիր», 1941, № 5—6, էջ 85)։

Օգտագործված ձեռագիրը ամփոփված է երկու տարբեր շապիկների մեջ, ըստ որում առաջին շապկի մեջ գտնվում են հատորիս «Տաղասացություն» բաժնի նյութերը, երկրորդի մեջ՝ «Պատմագրություն» և «Երգիչներ» (Սայաթ-Նովա) բաժինների նյութերը։

Առաջին[4] շապիկն ունի 68 համարակալված և մեկ չհամարակալված սովորական տետրակի չափի թերթեր, երկրորդը՝[5] 48+23 թերթեր, ըստ որում վերջինը սկսվում է 8-րդ թերթից (որի առաջին էջը ջնջված է ու ներկայացնում է շարունակություն այլ շարադրանքի) և վերջանում 31-ով։

Առաջին շապիկը ունի «Բանաստեղծներ. աշխարհիկ հոսանք. 15—18-րդ դար» վերնագիրը և մի շարք նշումներ կատարվելիք անհրաժեշտ լրացումների վերաբերյալ (հեղինակների անուններ, գրքերի վերնագրեր և էջեր)։ Երկրորդը վերնագրված է՝ «Առաքել պատմագիր. Զաքարիա սարկավագ. Աբրահամ Կրետացի»։

Հրատարակության պատրաստելով նշված նյութերը, Ինստիտուտը կատարել է հետևյալը.

ա. Հանված կամ կրճատված են անմշակ մասերը և բնագիրը ծանրաբեռնող մեջբերումները, առանձնապես Հովհաննես Թլկուրանցու, Զաքարիա Սարկավագի և Սայաթ-Նովայի բաժիններում։

բ. Համապատասխան սկզբնաղբյուրների հիման վրա՝ ստուգված և ճշտված են հեղինակի կողմից արված բոլոր մեջբերումները։

գ. Տեքստը լրացված է մի շարք մեջբերումներով (գլխավորապես «Առաքել Դավրիժեցի» գլխում), որոնց էջերը ցույց են տրված Աբեղյանի կողմից։

համբավը և տեսնելով նրան, սիրահարվում է և հորից գաղտնի, երկու անգամ ծպտյալ այցելում նրան։ Պարսիկ նշանավոր փահլևան Հնդի Փոլադը փորձում է դավել Ֆարմանին, սակայն վերջինս ապանում է նրան։ Այդ բանի համար Ֆարմանը բանտարկվում է պարսից թագավորի կողմից, բայց շուտով իր հավատարիմ ընկեր Փայփառի ջանքերով նա ազատվում է բանտից և սիրած Շահիշապնուրինի հետ հայրենիք վերադառնալով, ամուսնանում։ Ժամանակ անց, մեռնում է Ֆարմանի հայրը, և նա դառնում է Ասորեստանի թագավոր։ Ֆարմանը կատաղի կռիվներ է մղում Շահիշապնուրինին վերադարձնելու եկած պարսից թագավորի հետ և պարտության մատնում նրան։ Շուտով Ֆարմանն ունենում է մի արու զավակ (Շահիշիրինին), որը մեծանալով դառնում է հոր նման գեղեցիկ, իմաստուն և քաջ մարդ։ Հաղթողի երջանիկ ուրախ կյանքով 60 տարի ապրելուց հետո մեռնում է Ֆարմանը։ Նրա տեղը Ասորեստանի թագավոր է դառնում որդին՝ Շահիշիրինը։

[4] *Այժմ գրականության և արվեստի թանգարանում պահվող Աբեղյանի ֆոնդի № 56-ն է։—Է. Պ.։*

[5] *Նույն ֆոնդի № 63։—Է. Պ.։*

դ. Ջեռազրի լուսանցքներում եղած կարևոր նշումները՝ վերնագրեր, դիտողություններ, բառեր, անուններ և այլն տրված են տողատակի ծանոթությունների մեջ։

ե. Մոռացությամբ կամ գրչի վրիպմամբ բաց թողնված բառերը վերականգնված են քառակուսի փակագծերի մեջ. նույնպիսի փակագծերի մեջ են տրված աղճատ տեքստը հասկանալի դարձնելու համար արված սակավաթիվ խմբագրական լրացումները։

Ց. Հայոց հին գրականության 4-րդ շրջանի բովանդակությունն ու վերջինիս համապատասխան վերնագրումը եղել է Մ. Աբեղյանի մտորումների առարկան երկար ժամանակահատվածում, շարունակ ենթակա լինելով վերափոխման և խմբագրման։

Իր ճեմարանական դասախոսությունների ձեռագիր տետրակներում այն անվանված է «Վերածնություն և նոր գրաբար մատենագրություն», որ հետագայում մատիտով խմբագրվել է՝ «Հին լեզվի, ոգու վերածնություն և նոր գրաբար մատենագրություն»՝ լուսանցքում տրված հետևյալ ծանոթությամբ. «Վերածնություն ոչ եվրոպական գրականության իմաստով, այլ վերակենդանացում» (սևագրի մասի առաջին տետրակ, էջ 1)[6]։

Տարիներ անց իր «Համառոտություն հայ ժողովրդական վեպի և հին գրականության պատմության» ստակետիպ աշխատության մեջ (Երևան, 1923), որ նույնությամբ արտատպվել է ՍՍՀՄ գիտ. ակադեմիայի հայկական ֆիլիալի «Տեղեկագրի» 1941 թ. № 5—6 «Վերածնությունը հայոց հին գրականության մեջ» վերնագրի տակ, Աբեղյանը նույն շրջանը անվանել է «Հնի, կրոնա-եկեղեցականի վերածնություն և նոր գրաբար գրականություն» («Տեղեկագիր», էջ 106)։

Նշված հոդվածի ներածական մասում, որ գրված է նոր, արտատպության կապակցությամբ, Աբեղյանը տալիս է հետևյալ ձևակերպումը. «Եկեղեցական գրականության վերածնություն, նոր գրաբար և աշխարհիկ գրականություններ» (ն. տ., էջ 86)։

Վերջապես, իր «գրելիք»-ում (1943—44 թթ.) Աբեղյանը տվյալ շրջանը կոչում է «Գրականության նորոգումը 17—19-րդ դարերում» («17—19-րդ դարեր» ասելով Աբեղյանը հասկացել է 1600—1830 ժամանակահատվածը, ինչպես այդ նշված է մի քանի տեղ սևագրում)։

Ինստիտուտը գերադասեց պահել վերջին ձևակերպումը։

Այս շրջանի սկզբնական մասի «Ներածություն» վերնագիրը տրված է մեր կողմից։

Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

---

6 Տե՛ս նույն տեղում, № 68։—Է. Պ.։

ՀԱՅՈՑ ՀԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔ

(10—15-ՐԴ ԴԱՐԵՐ)

ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ

ՎԵՐԱԾՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԿՅԱՆՔԻ ԵՎ ԱՇԽԱՐՀԱՅԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

1. Վերածնություն:—*Հայոց հին գրականության երրորդ շրջանը (11—17-րդ դար) արտահայտություն է գլխավորապես հայկական վերածնության: Արդարև դեռ շարունակվում են հին գրական տեսակները՝ մեկնություն, ճառ, հոգևոր երգ և այլն, բայց աշխարհիկ տարրը հետզհետե ավելի է մտնում եկեղեցականի ստեղծած գրականության մեջ՝ առաջ են գալիս գրական նոր թեմաներ և նոր տեսակներ, նոր լեզվով հորինված, մինչև որ լինում է մեր գրականության աշխարհականացումը: Առանձնապես բանաստեղծությունը բոլորովին փոխվում է իր բովանդակությամբ ու ձևով, և մեր հին քնարերգությունը ձեռք է բերում գրեթե բոլոր կարևոր թեմաները:*

Այս փոփոխությունը հետևանք էր կյանքի և աշխարհայեցության փոփոխության: Մինչդեռ քրիստոնյա աշխարհի ուրիշ կողմերում դեռ ընդհանրապես իշխում էր թանձր միջնադարը, 11-րդ դարի առաջին կեսին արդեն մեր կյանքի ու մտածողության մեջ մտել էր մի հեղաշրջում, որով կրոնա-ճգնավորական ոգին տակավ առ տակավ տեղի էր տալիս մի ուրիշ ոգու դիմաց, և առաջ էր գալիս ինքնուրույն վերածնություն[1], որից չէր կարող չազդվել և հոգևորականը:

Թե երբ է եղել այդ փոփոխության և մեր հայկական վերածնության սկիզբը, այդ դժվար է որոշել: Ոչ մի գրական նոր հոսանք,— ինչպես և

---

[1] *Տե՛ս այս շրջանի գրականության մասին՝ Մ. Աբեղյան, Համառոտություն հայ ժողովրդական վեպի և հին գրականության պատմության, դասընթաց Երևանի ժողովրդական համալսարանի 1921—22 ճեմ. տարվա, Երևան, 1923: Ապակետիպ՝ ձեռագրի իրավունքով: Այլև Մ. Աբեղյան, Վերածնությունը հայոց հին գրականության մեջ, ՍՍՀՄ գիտություններ ակադեմիայի հայկական ֆիլիալի «Տեղեկագիր», № 5—6 (10—11), Երևան, 1941, այլև առանձին արտատիպ:*

ուրիշ մտավոր, կուլտուրական երևույթներ,— մի քանի տարում չի ըս-կըսվում և երևան գալիս որոշ գծագրված կերպով։ Ինչպես Անանիա Շիրակացին գրում է, ամեն բնական երևույթի «վինելութիւնն է սկիզբն ապականութեան, և ապականութիւնն դարձեալ անդրէն է սկիզբն վինելութեան»։ Այս դիալեկտիկական, ըստ Շիրակացու, «անվնաս հակառակութեամբ» ծագում ու մահանում է նաև գրական երևույթը՝ տեղի տալով նորին, հարկավ, իր ֆունկցիան կատարելուց հետո կամ, ինչպես սովորաբար ասում ենք, բարգավաճելուց հետո։ Նորի սկիզբը հենց այդ հնի մեջ է, նույնիսկ նրա բարգավաճության մեջ։ Հին կրոնա-եկեղեցական ուղղության և վանական կյանքի ամենափայլուն ժամանակը մեզնում եղել է 10-րդ դարի երկրորդ կեսին և 11-րդ դարի սկզբներին, երբ դա ցայտուն կերպով արտահայտվել է եկեղեցական ճարտարապետության մեջ և Գրիգոր Նարեկացու գրական երկերով։ Բայց հենց այդ ժամանակներում, 10-րդ դարի վերջերին և 11-րդի առաջին տասնամյակներին, է սկիզբը հնի «ապականության», այսինքն՝ քայքայման, որ և սկիզբն է նորի բացահայտ «վինելության», նոր մտավոր հոսանքի, որ դանդաղ պրոցեսով զարգանում էր տակավին շատ ղորեղ կրոնա-եկեղեցականի կողքին, և որի արդյունքն է մեր վերածնության գրականությունը։ Ուստի թեև Գրիգոր Նարեկացին իր էությամբ պատկանում է նախորդ գրական շրջանին, բայց նրա երկերի մեջ արդեն, ինչպես տեսել ենք, երևում են վերածնության սաղմերը։ Նույնը նաև Անանուն Զրուցագրի մի քանի զրույցների մեջ, որ նույնպես տեսել ենք։

Այս «վերածնություն» տերմինն առնված է արևմտյան եվրոպական գրականությունից. ուստի նախ մի քանի խոսք այն մասին, թե ի՛նչ են հասկանում «վերածնություն» ասելով՝ եվրոպական գրականության մեջ։ Այդպես, այդ անունով կոչվում են Արևմտյան Եվրոպայի և առանձնապես Իտալիայի վաղ-բուրժուական (քաղաքացական) կուլտուրան 14—16-րդ դարերում։ Այդ ժամանակ արդեն գլխավոր հասարակական դեր էր կատարում բարձրացած նոր դասակարգը — բուրժուազիան (քաղաքացությունը), որի դասակարգային շահերի և իդեալների արտահայտությունն էին դառնում գիտությունը, արվեստն ու գրականությունը։ Կուլտուրայի կենտրոն էին քաղաքները։ Առևտրական կապիտալով փարթամացած քաղաքացիները, հակադրվելով ֆեոդալին և եկեղեցականին, ճոխ կյանք էին վարում պարսպապատ քաղաքներում շինված շքեղ բնակարաններում, ազնիվ հագուստներով, թանկագին կարասիքով, ընտիր անոթներով, աշխատելով ձեռք բերել ամեն վայելք խնջույքներով, երաժըշտությամբ և այլն։

Այս նոր դասակարգի կուլտուրայի առաջին հատկանիշն է դպրոցի և գրականության աշխարհականացումը՝ հակառակ հոգևորական սքոլաստիկայի ձգտում է լինում ուսումնասիրելու բնությունը, բնագիտությունն, մաթեմատիկա, իրավաբանություն։ Լատիներեն լեզուն դեռ երկար մնում է իբրև ընդհանուր միջազգային լեզու գիտության, փիլիսոփայու-

թյան և այլի համար. բայց առաջանում է պահանջ գրելու մի այնպիսի լեզվով, որ հասկանային ոչ միայն գիտնականները, այլև ուրիշները։ Ուստի ծագում են հասկանալի լեզվով ազգային գրականությունները, ազգային գրական լեզուները։

Նախորդ դարերում անհատականությունը ոչնչացած էր, անհատն իրավունք չուներ եկեղեցուց անկախ մտածելու։ Վերածնության ժամանակ սկսում են տեսնել մարդու մեջ անձի ազատության գաղափարը։ Առաջ են գալիս մարդիկ, որոնք համարձակվում են եկեղեցու պես չմտածել։

Այդ ժամանակներում ավելի մոտից ծանոթանում և ուսումնասիրում են անտիկ, այսինքն՝ հին հունական և լատինական արվեստը, գրականությունն ու փիլիսոփայությունը։ Ծնվում է սեր անտիկ գրականության ընտիր ձևերի և ձգտում կյանքի և ստեղծագործության մեջ հարություն տալու անտիկ աշխարհի կուլտուրային։ Այդ են համարել այս նոր կուլտուրայի հիմնական հատկանիշը, ուստի և ծագել է «վերածնություն» տերմինը, իբրև անտիկ կուլտուրայի վերածնություն ընդդեմ միջնադարյան ճգնավորական և սքոլաստիկական կուլտուրայի։ Իբր միջնադարը եղել է միակերպ անկման շրջան, չի բովանդակել ոչ մի ներքին զարգացում, և անտիկ կուլտուրայի ազդեցությամբ վերածնվել են գիտություն, փիլիսոփայություն, արվեստներ ու գրականություն։ Չմերժելով անտիկ կուլտուրայի զորեղ ազդեցությունը՝ պետք է ընդունել, սակայն, որ վերածնությունն իրոք արգասիք է ներքին ուժերի վրա հիմնված անընդհատ զարգացման, և դրա արմատները գտնվում են ավելի ևս հին ժամանակներում։ Վերածնության վաղ շրջանի սկիզբն եղել է միջնադարյան բարեպաշտության ժամանակ։ Այսպես՝ վերածնություն են տեսնում Դանտեի (1265—1321) և մի քանի ուրիշների մեջ՝ չնայելով նրանց բարեպաշտությանը և միստիցիզմին։ Նույնը երևան է գալիս նաև Պրովանսի տրուբադուրների և գերմանական մինեզենգերների երգերի մեջ, որոնք նախակարապետներն են վերածնության։ Ապա բանաստեղծության ու պրոզայի մեջ ստեղծվում են նոր գրական ձևեր և տեսակներ, որոնց մի մասը փոխառություն են անտիկ գրականությունից։ Դրանցից են, օրինակ, Դանտեի «Աստվածային կոմեդիան», հռչակավոր սոնետները Պետրարքայի (1304—1374), նովելլաները Բոկաչիոյի (1313—1375), էպիգրամմա, սատիրա և այլն։

Հայոց գրականությունը, ինչպես և արվեստն ընդհանրապես, հարկավ, կտրված չի եղել այլազգիների, առանձնապես արևելյան գրական հոսանքներից։ Բայց 10-րդ դարում դժվար է տեսնել մեզնում անտիկ գիտության, արվեստի ու գրականության այնպիսի մեծ ծանոթություն և ազդեցություն, որի հետևանքով կերպարանափոխվեր մեր եկեղեցա-ֆեոդալական գրականությունը։ Անշուշտ «արտաքին» գիտությունների հին թարգմանությունները բոլորովին մոռացության տրված չեն եղել, բայց նրանց ուսումն արդեն 10-րդ դարից առաջ խամրած է եղել։ Նույնիսկ

Անանիա Շիրակացու երկերն այլևս ուսումնասիրության առարկա չեն եղել։ Գրիգոր Մագիստրոսը մի նամակով Արշարունի Պետրոս կաթողիկոսին (1019—1059 թթ.) խնդրում է իրեն ուղարկել Շիրակացու մի գիրքը, «զոր մեծ Քննիկոնն անուանեն», «որ ևն այժմ ի տան տէրունեան, զոր նախ քան զքեզ խրթնացեալ և թագնի ընդ գրուանաւ ծածկէին»[2]։ Ապա նա այդ առիթով հիշում է Շիրակացու գանգատը, թե մեր ազգն անհոգ է գիտության վերաբերմամբ։ Հետո նա ինքն էլ իր կողմից տրտնջում է, թե «ի բազմաց անփոյթ եղելոյ այսպիսի գործառնութիւնք և հանդէսք», թե «ի մոռացումն այսպիսւոյ մատենի ոչ միայն եղև անկանել, այլև բազմաց», «քանզի Արամեան սեռի հպարտութիւն և անամոթ բնութիւն և խստապարանոց բարս ոչ ստորակայի յայսոսիկ կրթութիւնս յարատևական հաւանել, կամ եթէ ոչ փոյթ, որք պետականին հասին բախտի, մեծարու լինել և խուզել զխոհեմական արհեստս ի զարդ քարգոնոսական [=արքայական] ապարանին, որպէս մեծ Փտղոմէոսն այն և որք այլք այսպիսիք»։ Իսկը՝ Մ. Խորենացու գանգատի նման։ Մի անգամ որ այսպիսի վերաբերմունք է եղել դեպի արտաքին գիտությունները, բնականաբար չի կարելի մեր վաղ վերածնության ծագման համար անտիկ փիլիսոփայության և այլի ազդեցությունը տեսնել։ Վերածնությունն ինքը, 11-րդ դարի առաջին տասնամյակներից սկսած, թերևս մասամբ նաև բիզանդական ազդեցությամբ, նորոգում է հին թարգմանությունների ուսումնասիրությունը և զարթեցնում է, ինչպես հետո կտեսնենք, առանձին սեր ու հակում դեպի հին հունական փիլիսոփայությունն ու գիտությունը։ Իսկ մեր հայկական վերածնությունն ինքնուրույն է։ Դա ազգային կուլտուրայի ու գրականության շարունակական զարգացման մի իրակություն է, արդյունք հայկական քաղաքային կյանքի բարգավաճման, դրա հետևանքով և ներքին ուժերի այն ռեալիստական շարժման, որ առաջ էր եկել հարյուրամյա խաղաղության միջոցին։ Եթե «վերածնություն» բառով է անվանվում այստեղ մեր գրականության այս վերափոխված շրջանը՝ որովհետև այդ ժամանակ «վերածնվել է» հեթանոսական դարերի բուն աշխարհիկ ոգին և աշխարհայեցությունը՝ հակառակ կրոնա-եկեղեցականի, և որովհետև այդ շրջանի գրականության հատկություններն ընդհանրապես նույնն են, ինչ որ եվրոպական վերածնության գրականությանը։ Դա գլխավորապես հայ քաղաքացության, հայ բուրժուազիայի գրականությունն է։

2. Քաղաքներ և քաղաքացական կյանք ու կուլտուրա։—Հին դարերից ի վեր հայտնի են եղել Հայաստանում մի շարք քաղաքներ— Արտաշատ, Վաղարշապատ, Վան, Դվին, Խլաթ և ուրիշներ։ Երկարատև խաղաղ շինարարության գարաշրջանում (10—11-րդ դարերում) արագ բարձրանում է ժողովրդական տնտեսությունը. երկրի բնակչությունն աճում է. շինվում են բազմաթիվ գյուղեր, քաղաքագյուղեր ու գյուղաքա-

---

[2] «Գրիգոր Մագիստրոսի Թղթերը», ի լույս ընծայեց Կ. Կոստանյանց, Աղեքսանդրապոլ, 1910, Բ մասն, էջ 8։

ղաքներ, որոնք հետզհետե դառնում են ավելի ու ավելի մարդաշատ «Ագարակաց աւանացեալ և աւանաց քաղաքացեալ բազմամարդութեամբ և ընչեղութեամբ», գրում է Ստեփանոս Տարոնեցին[3]։ Նոր բարգավաճած քաղաքներից՝ մեր պատմագիրների հիշատակությամբ՝ աչքի են ընկնում՝ Անի, Կարս, Արծն, Դվին, սրանց մեջ՝ առանձնապես Անին, որի մասին ավելի պատմագրական տեղեկություններ ունենք և ավելի ծանոթություններ շնորհիվ պեղումների[4]։ Անին մի շատ նշանավոր տիպարն է այդ շրջանի մեծ քաղաքների։ Նա եղել է ոչ միայն բերդ և մայրաքաղաք, այլև շահաստան, առևտրական, արդյունագործական ու կուլտուրական մեծ կենտրոն թե՛ հայկական և թե՛ նաև օտար իշխանությունների օրով 11—15-րդ դարերում։ Այլազգիների ձեռքն անցնելուց հետո այդ քաղաքի ներքին կյանքը քիչ է փոխվել. 11—14-րդ դարերում Անին չի դադարել զարգանալ իբրև հայկական քաղաք։ Բայց միաժամանակ և նա, «կապ ունենալով Առաջավոր Արևելքի մահմեդական երկրների քաղաքային կյանքի ընդհանուր զարգացման հետ, առատությամբ ընդունել է հարևան ժողովուրդների ստեղծագործության հարուստ արդյունքները»[5] և դարձել միջազգային մեծ քաղաք իր բազմազգ բնակչությամբ։

Գտնվելով մեծ առևտրական ճանապարհի վրա՝ Անին Բագրատունիների օրով արդեն բարձրացել է իր շահաստանով։ Այդ ժամանակ են շինվել և նրա նշանավոր հզոր պարիսպները, ամրացված բազմաթիվ աշտարակներով։ Ոչ միայն Անիի, այլև Կարսի, Արծնի և ուրիշ քաղաքների վրայով էին անցնում տարանցիկ առևտրական մեծ ճանապարհի ճյուղերը, ուստի և նրանք ևս դարձել են վաճառաշահ կենտրոններ և՛ ներքին, և՛ արտաքին առևտրի, և՛ ապրանքների փոխանակության համար։ Արտաքին առևտուրը լինում էր և՛ Արևելքի, և՛ Արևմուտքի հետ։ «Ծով և ցամաք երկնէր և առատանայր կրել ի սմա զզօրութիւն իւր»,—ասում է Ա. Լաստիվերտցին իր հայրենի Արծն քաղաքի համար, «որ հոյակապ և ականաւոր էր ամենայն աշխարհաց»[6]։ Ծովային առևտուրն անում էին Տրապիզոնի վրայով։ Նույն հեղինակը (էջ 91) Կարսի համար գրում է, թե «յանկասկածի կէին, հարստացեալք ընչեղութեամբ ի ծովէ և ի ցամաքէ ամբարեալ»։ Բարգավաճում էին և երկրի արտադրող ուժերը, ծաղկում էր արդյունագործությունը։ Արտահանում էին նաև երկրի արդյունագործա-

---

3 *«Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 161։*

4 *И. Орбели,* Развалины Ани. История. Современное состояние. Раскопки. СПб, 1911. *Նույնի հայերեն թարգմանությունը. «Անվոյ ավերակները. Պատմություն. Այժմյան վիճակ. Պեղումներ»։ Հավելվածներով և ծանոթություններով, Վաղարշապատ, 1911։ Н. Я. Марр,* Ани. Книжная история города и раскопки на месте городища, М., 1934.

5 *И. Орбели,* Развалины Ани, *էջ 4 և հետ., 19, 25 և այլն։*

6 *«Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերտցւոյ», Թիֆլիս, 1912, էջ 78։*

կան, ինչպես և երկրագործական ապրանքներն ու բնական բերքերը։ Դրանք ևս կազմում էին մեծ եկամուտների կարևոր աղբյուրներ։ Գյուղատնտեսությամբ պարապում էին քաղաքների արվարձաններում, պարիսպներից դուրս,— ուր և ապրում էին սովորաբար նաև արհեստավորները,— այլև գյուղերում, մեծամեծների կալվածներում։

Բնականաբար առաջ էր գալիս դրամական տնտեսություն. դրամը մի նոր աստված էր դարձել. մարդիկ ամեն տեսակ շահի ետևից էին ընկնում։ «Յարգի եղև արծաթսիրութիւն քան զաստուածսիրութիւն, և մամոնայն՝ քան զՔրիստոս», գրում է Լաստիվերտցին (էջ 79)։ 10-րդ դարից արդեն նյութական կարողությունը —ոսկին, երկրի հարստությունները, կալվածներ և ուրիշ անշարժ կայքեր կենտրոնանում էին առանձին վաճառական անհատների ձեռին. առաջ էին գալիս կապիտալիստներ, որոնք կազմում էին մի նոր դասակարգ։ Իր դարի համար մի տիպիկ կապիտալիստ է եղել, մի փայլուն ներկայացուցիչ իր դասի, Տիգրան Հոնենց, 12-րդ դարի վերջում և 13-րդի սկզբներում, տեր չափազանց մեծ հարստության թե՛ դրամով և թե՛ անշարժ գույքերով[7]։

Այսպիսով ֆեոդալական շրջանի երկու իշխող դասերի՝ ազնվականության և եկեղեցականության կողքին տնտեսապես, ապա և մտավորապես բարձրանում և դիրք էր ձեռք բերում նոր դասակարգը— հարուստ քաղաքացությունը, որ նույնիսկ մրցում էր ֆեոդալների հետ։ Սոցիալ-քաղաքական կառուցվածքի, հասարակակարգի փոխվելով փոխվում է և հասարակական պսիխիկան, իրավունքի հասկացությունը, ապա և գաղափարախոսությունը կրոնի, մորալի-բարոյականության, արվեստի ու գրականության վերաբերյալ՝ նախորդ շրջանի գաղափարախոսությանը հակադիր։ Հետզհետե իշխանության և «իրավունքի աղբյուրը» ռազմիկ ֆեոդալներից անցնում է «խազաղ առևտրի վրա»։ Ստեղծվում է դեմոկրատիկ հոսանք ընդդեմ ֆեոդալական հասարակակարգի։ Անիում, հավանորեն և այլ քաղաքներում, «առաջ է գալիս քաղաքային ինքնավար կյանք, քաղաքային ինքնավարություն, քաղաքային ավագների գլխավորությամբ և օրենսդրական իշխանությամբ քաղաքի սահմաններում»[8]։ «Ավագների խորհուրդը վարում էր քաղաքի բոլոր գործերը»։ Դրա «ծագման մասին տակավին չկան տեղեկություններ, համենայն դեպս՝ դա գոյություն է ունեցել Անիում Շեդդադիդների, վրացի կուսակալների և Զաքարյանների օրով»[9]։ Եվ որ գլխավորն է՝ Անու կյանքը կանանց սոցիալապես հավասարեցրել էր տղամարդկանց հետ. «Աննեցի կանայք անարգել ունեին տղամարդկանց քաղաքացիական իրավունքները»[10]։ Նրանք էլ

---

7 Նրա շատ մեծ հարստության մասին գաղափար կարելի է կազմել նրա խիստ բազմաթիվ ընծաներից, որ տվել է իր շինած վանքին 1212 թ., և որ փորագրել է տվել արձանագրության մեջ։ Այս մասին տե՛ս Н. Марр, Ани, էջ 33 և հետ.։

8 Н. Марр, Ани, էջ 35։

9 И. Орбели, Развалины, էջ 26։

10 Н. Марр, Ани, էջ 41։

հերոսաբար պաշտպանել են իրենց քաղաքն ընդդեմ թշնամիների, ինչպես 1124 թ. Այծեմն (Այծեմնիկ) անունով քաղաքացուհին, որ «առնացի ստացեալ սիրտ», քաղաքի պարսպի վրա դիմադրել է պաշարողներին, «առ ոչինչ համարեալ զխոցուածս նետից զոր վիրաւորէին արտաքուստ»[11]։ Այծեմնիկն իհարկե մենակ չի եղել կանանցից։

Կուտակված հարստությունը գործադրվում էր ամենից առաջ քաղաքային շինարարության վրա. քաղաքները ոչ միայն պարիսպներով ամրացվում էին արտաքին թշնամիներից պաշտպանվելու համար, այլև զարդարվում էին բազմաթիվ հոյակապ եկեղեցիներով ու պալատներով։ Ա. Լաստիվերտցին[12] անպարիսպ Արծն քաղաքի համար գրում է. «վաճառականք սորա փառաւորք», «վաճառականք՝ եկեղեցւոյ շինողք և զարդարիչք»։ Ոչ միայն տղամարդիկ, այլև կանայք մասնակից էին լինում շինարարության գործին, նույնիսկ քաղաքի աշտարակների։ Ազնվանում է մարդկանց ճաշակն ու պահանջը. ձգտում էին ամեն ինչ, և՛ եկեղեցիները, և՛ աշխարհիկ շենքերը, նույնիսկ պարիսպներն ու աշտարակները, գեղեցկացնել որևէ կերպ։ Եկեղեցիները զարդարում էին քանդակներով, ֆրեսկներով ու նկարներով։ Զարդարանքներով պճնվում էին և իշխանական պալատները և այլ շինությունների ֆասադները[13]։

Մյուս կողմից քաղաքներում ստեղծվում են բարեկեցիկ կյանքի պայմաններ։ Անիում, անշուշտ նաև մյուս վաճառաշահ քաղաքներում, շինվում են քարվանսարաներ, որոնք անհրաժեշտ էին դրսից եկած առևտրականներին օթևանելու համար, կառուցվում են քարե տասնյակ գեղեցիկ կամուրջներ Ախուրյանի վրա։ Անց են կացվում, նույնիսկ 10-րդ դարից սկսած, ջրմուղներ հեռավոր աղբյուրներից քաղաքին ջուր մատակարարելու համար։ Անիի պեղումներով երևան են եկել նաև քարարկված փողոցներ և նույնիսկ մայթերի հետքեր, աղքատ տնակների հետ և մեծ տուն, որ ունեցել է հոյակապ պորտալ՝ զանազան քանդակներով։ Միջնաբերդի ապարանքը հոծ է եղել հարուստ զարդարանքներով, մի դահլիճում «կենդանիների նկարներ՝ բուսական շրջանակների մեջ։ Մի ուրիշ դահլիճում որմերին նկարված են եղել պատերազմական կամ որսորդական տեսարաններ. որմերը, բացի նկարներից, թանձր ոսկեզօծված են եղել. առաստաղն ունեցել է երկրաչափական ձևերի քանդակներ»։ Չի պակասել և բաղանիքը, իր նախասենյակով, ավազանով, տաք և սառը ջրի խողովակներով և այլն[14]։ Ինչպես երևում է, Անին ունեցել է բարեկեցիկ կյանքի համար անհրաժեշտ շատ բաղանիքներ. ըստ Տիգրան Հոնենցի արձանագրության՝ ի թիվս բազմաթիվ ընծաների՝ նա իր շինած վանքին նվիրել է նաև երկու բաղանիք։ Այսպես բարեշեն են եղել նաև

---

11 «Սամուէլ Անեցւոյ, Հավաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 126 և հետ.։

12 Ար. Լաստիվերտցի, Պատմութիւն, էջ 78 և հետ.։

13 И. Орбели, Развалины, էջ 29—31։

14 Նույն տեղում, էջ 41 և հետ.։

մյուս վաճառաշահ մեծ քաղաքները։ «Եւ իբրև ակն մի պատուական լուսագեղ պայծառութեամբ փայլէր քաղաքս մեր ի մէջ ամենայն քաղաքաց, ամենևին գեղեցիկ, բոլորովին զարդարուն», այսպես է գրում Ա. Լաստիվերտցին Արծնի համար[15]։

Փարթամ քաղաքացիներն իրենց առտնին կյանքը, նիստն ու կացը և հանդերձները ևս հարմարեցնում էին իրենց հարստությանը։ Հագնում էին դիպակ, մետաքսե պատմուճաններ և, ինչպես պեղումներից հայտնաբերվել է, մետաքսի ամբողջ հագուստներ՝ ոսկեթել ասեղնագործությամբ։ Երևի կանայք էին բանեցնում պեղումների ժամանակ գտնված երեսի քողը՝ մետաքսով և ոսկեթելով նուրբ կարած (գուլաբաթնով կարած), մետաքսե ժապավեն գոտին, ապարանջաններն ու մատանիները։ Ամեն ինչ ճոխ ու պերճ էր։ Ա. Լաստիվերտցին[16] *գովելով իր հայրենի Արծրն քաղաքը, նրա վաճառականներին՝ գրում է. «Բարեացն առատութեամբ լի էր, ամենայն ինչ ըստ մտի էր սորա. և նման իմն էր նորահարսն կնոջ, որ գեղոյն վայելչութեամբ և զարդուցն պայծառութեամբ՝ ցանկալի գոլ ամենեցուն»։ Քիչ հետո նա, մարգարեի խոսքերով, ամբաստանում է կանանց «անբարտավանութիւնը», նրանց «զստորինսն ընդ երկիր զքարշելն [երկայն քղանցքները գետնաքարշ տալնելը], զգինդսն, և զմատանիսն, զապարանջանսն, զքօղէսն [=թևի ապարանջան արմունկից վերև], և զմեհիւանդսն, [=մանյակ, ոսկե վզնոց, օղ], և զայլն ամենայն», նրանց «ոսկի զարդերը», «ոսկի կամարները» [քամարները], «պատվական հանդերձները»։ Նույնպես շքեղությամբ են եղել և տնային կահ-կարասիքը, գորգերը, բազմոցները, վարագույրները։ Բանեցնում էին արծաթե ընտիր անոթներ, հախճապակյա և ճենապակյա ամաններ՝ հարուստ բազմազան նկարներով, ճաշակավոր զարդարուն զանազան գույներով և ցայտուն ֆիգուրներով։ Դրանք շինված են եղել Անիում, «թեև հիմք չկա այդ առարկաների ծագումը բացառապես Անիից համարել»*[17]։ *«Մուսուլմանական ճաշակը հետզհետե ավելի մեծ չափով թափանցել է Անիի քաղաքացիների բնակարանները և երևան է գալիս անոթների ձևերի ու զարդանկարների վրա»*[18]։ *Այս անոթների մի մասն, անշուշտ, դրսից են բերված եղել։*

Մահմեդականների ազդեցությամբ, և ավելի՝ իբրև բնական հետևանք կյանքի զարգացման, փարթամ քաղաքացության մեջ սկսում է ընկնել 10-րդ դարի կրոնական խստակեցությունը։ Այդ մարդիկը թեպետ և դեռ կրոնասեր ու բարեպաշտ էին, բայց իրական կյանքն ու աշխարհը նրանց համար ստանում էին արժեք։ Մի կողմից՝ նրանք ժամ էին գնում, բարեպաշտական գործեր կատարում, մյուս կողմից՝ ճոխ ու հանգիստ

---

15 Ար. Լաստիվերտցի, *Պատմութիւն*, էջ *79*։

16 *Անդ*, էջ *79—81*։

17 *И. Орбели*, Развалины, էջ *49* և հետ.։

18 *Н. Марр*, Ани, էջ *36*, *43*։

ապրելով պարիսպներից ներս, զարդարուն պալատներում, շրջապատված ճարտարվեստի և գեղարվեստի պահուճանքներով, սիրում էին ուրախ-զվարթ կյանք, ամեն վայելչություն։ «Միայն հեշտութեան և փափկութեան սպասեն»,— գրում է Ա. Լաստիվերտցին (էջ 167) և՛ Անիի, և՛ ուրիշ քաղաքների համար։ Ուրիշ տեղ (էջ 56) նույն պատմագիրը Հայոց աշխարհի համար գրում է. «Ուրախական երգոց և բանից միայն լինէին հանդէսք»։

Մատթեոս Ուռհայեցին գրում է. «Զկնի մահուանն Աշոտոյ [= Գագիկ թագավորի որդի և Հովհաննես թագավորի եղբայր Աշոտի, Գագիկ Բ-ի հոր] թուլամորթեցան զօրքն Հայոց և առեցին զարուեստ պատերազմի, մտին ընդ լծով ծառայութեան ազգին Հոռոմոց, նստան ի գինարբուսն, սիրեցին զբարբուտ [=լայնափոր նվագարան մի] և զերգս գուսանաց»[19]։ Ներսես Շնորհալին 12-րդ դարի կեսերին «Ընդեսիոյ ողբի» մեջ գրում է, թե խնջույքներով էին զբաղվում, երգ ու երաժշտությամբ ուրախություն անում։ Մի դար հետո Սմբատ Սպարապետը 11-րդ դարի համար ասում է, թե «թուլացան և աղարտեցին զպատերազմ, և սիրեցին զգինի և զգուսանս»[20]։

Այսպիսի զվարթ կյանքի, կերուխումի, ուրախ ժամանցի համար բնականաբար զարգանում էին գուսանների ուրախության և սիրո երգերը, որ ամենահին դարերից ի վեր սիրված են եղել մեր ազնվականներից և այժմ էլ զվարճացնում էին հարուստ քաղաքացիներին։ Այդ երգերի մասին, որոնք մեր վերածնության նախակարապետներն են, մանրամասն կխոսվի առանձին իր տեղում։

Աշխարհիկ շքեղությունն ու պերճությունը մտնում էր նաև եպիսկոպոսների բնակարաններն ու կաթողիկոսարանը, որ ոչնչով ետ չէր մնում պալատներից։ Այնտեղ էլ արծաթը հարգի էր դարձել և անարատ բարեպաշտությունը պակասում էր։ Եթե վաճառականներն առուտուրի հետ նաև վաշխառությամբ էին պարապում, հոգևորականության մեջ էլ զարգանում էր կաշառակերությունը. «բարձաւ և ի քահանայից երկիւղ և ընտրութիւն սրբութեան. նեղին և մղին մերձենալ ի սեղանն... և ղայն ի ձեռն արծաթոյ», գրում է Ա. Լաստիվերտցին (էջ 80)։

Մեծ հարստություն էին դիզում եպիսկոպոսները։ Պետրոս Արշարունի, մականվանված Գետադարձ, կաթողիկոսը (1019—1059 թթ.), որ խառնվել է և քաղաքական գործերի և բարի համբավ չի թողել, ունեցել է մեծ հարստություն. «Ունէր կազմութիւն հայրենեաց՝ տուեալ ի թագաւորացն

---

19 Մատթեոս Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն*, Վաղարշապատ, 1898, էջ 79։

20 «*Սմբատայ Սպարապետի Պատմութիւն*», Մոսկվա, 1856, էջ 37։ Կիլիկիայի հայ ազնվականների մասին ևս Մարկո Պոլոյի ուղեգրության (1271—1295 թ.) մեջ կարդում ենք. «Հին օրերում այնտեղի ազնվականները քաջարի մարտիկ էին և կատարում էին զենքի հնրոսական գործեր. բայց ներկայումս ողորմելի արարածներ են և ոչ մի բանի չնորհք չունին, բացի հարբենալուց, որով նշանավոր են»։ Աղբյուրներ Հայաստանի և Անդրկովկասի պատմության, Ուղեգրություններ, հատոր Ա (1253—1582), Երևան, 1932, էջ 44։

Հայոց՝ հինգ հարիւր գեղ անուանի և մեծանիստ և շահաւէտ ընտիր ընտիր, նոյնպէս և եպիսկոպոս հինգ հարիւր փառաւոր և գաւառատեսուչս ի վերայ եօթն հարիւր թիմի. հանապազ երկոտասան եպիսկոպոս և չորս վարդապետ և տանն հայրապետին և վաթսուն երէց ի կրօնաւորաց, և յաշխարհականաց՝ հինգ հարիւր։ Եւ չէր նուաստ աթոռ հայրապետութեանն քան զթագաւորութեանն Հայոց։ Նաև զարդարանք եկեղեցեացն և տանն հայրապետութեանն բազում և անհամար և հրաշալի մեծութեամբ [=հարստութեամբ] լցեալ»[21]։ Ջնայելով որ նա մեծ կալվածատեր է եղել, անձամբ ունեցել է այնքան բազմաթիվ հայրենական գյուղեր, որոնց հետ նաև «Սուրմառի բերդավանի նման նշանավոր կալվածքը»[22], չի քաշվել ըստ ժամանակի ոգու նաև արծաթասեր լինելու և մեծ գանձեր ձեռք բերելու. «Քանզի յոյժ սիրող էր գանձուց Պետրոս, որ և բազումք վասն այնը եպերէին զնա»[23]։ Կաթողիկոսի իշխանության ներքո գտնվող 500 «գաւառատեսուչ» եպիսկոպոսների մի մասն արծաթասիրության և հարբստության կուտակելու վերաբերմամբ՝ հետևելիս են եղել իրենց վեհին։ Երբ սելջուկյան թուրքերն առնում են անպարիսպ Արծնը, «հռչակավոր և բազմամբոխ քաղաքն Հայոց», կոտորում ու կողոպտում են։ «Այլ զոսկւոյ և զարծաթոյ և զդիպակաց աւելորդ է ասել», — գրում է Մատթեոս Ուռհայեցին՝ խոսելով մեծ կողոպուտի մասին[24], և շարունակում. «Բայց զայս բազում անգամ լուեալ է մեր ի բաղմաց յաղագս քորեպիսկոպոսին՝ [= գաւառատեսուչ] որ ասէին Դաւթուկ, եթէ զգանձատունս նորա Աբրիհիմն էառ և քառասուն ուղտ բարձան զգանձարանն նորա. ութ հարիւր վեցկի [=երեք լուծ, վեց եզ լծած արօր] եզանց ելանէին ի տանէ նորա»։ Ահա իր կաթողիկոսին արժանի գավառատեսուչ եպիսկոպոսը։ Անշուշտ չափազանցություն կա, բայց այս էլ ծագել է նրա հարստության մեծությունից։

Ժամանակի բարոյական անկման մասին, ըստ եկեղեցու հայացքի, պարզ գաղափար է տալիս հետևյալ ավանդությունը։ 1022 թ. խավարում է արեգակը, միաժամանակ և երկրաշարժ է լինում։ Նույնը կրկնվում է և 1036 թ.։ Հովհաննես Սմբատ թագավորը և Պետրոս կաթողիկոսը մի քանի իշխանների, որոնց թվում և Գրիգոր Մագիստրոսին, ուղարկում են Սևանի՝ իր սրբությամբ հռչակված Հովհաննես Կոգեն վարդապետի մոտ՝ նրանից իմանալու, թե ինչի՛ նշան է այդ երևույթը։ Վարդապետը հայտնում է, թե դա նշան է, որ սատանան արձակվել է կապանքից, ապա նա հին մարգարեական եղանակով նկարագրում է իրական դրությունը՝ ասելով. «Եւ ահա յայսմհետէ ոչ ոք կարասցէ կալ հաստատուն ի հաւատս Քրիստոսի և ի պատուիրանսն Աստուծոյ՝ ո՛չ հայրապետ և ո՛չ վարդա-

---

21 Մ. Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն*, էջ 153 և հետ.։

22 Կ. Կոստանյանց, *Տեր-Պետրոս Ա Գետադարձ*, Վաղարշապատ, 1897, էջ 18։

23 Ար. Լաստիվերտցի, *Պատմութիւն*, էջ 89։

24 Մ. Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն*, էջ 103։

պետ, ո՛չ եպիսկոպոս և ո՛չ քահանայ, ո՛չ աբեղայ և ո՛չ կրօնաւոր, ո՛չ իշխան և ո՛չ ժողովուրդ, իշխանք յարենան ի գողս և յաւազակս և յափըշտակողս, դատաւորք ի կաշառս և յանիրաւ դատաստանս. կրօնաւորք թողուն զանապատս. և զմենաստանս և յաշխարհի զբաղմունս դեգերին և շրջին ընդ փողոցս և ի մէջ կանանց, ատեն զաղօթս և թողուն զկարգս կրօնաւորութեան իւրեանց, սիրեն զվարս աշխարհի և զհետ երթան գովեստից մարդկան, որոճալով որոճին զդիւական երգս [=սիրո երգերը]... Այլ և իշխանք պիղծ և մեծախտիւ յանդգնեալ և մոլորեալ... միշտ և հանապազ ի գինարբուսն դեգերին վասն սիրոյ և ցանկութեան չար և պիղծ ախտին։ Հայրապետք և եպիսկոպոսունք և քահանայք և կրօնաւորք արծաթասէրք առաւել քան աստուածասէրք»։ Նույնը կրկնում է նա երկրորդ անգամին. «Եւ ահա յայսմհետէ բազում հերձուածք մտանին յեկեղեցի... Յաղագս արծաթոյն թողուն ի բաց զհաւատն... վասն զի մեղսասէրք և ցանկացողք լինելոց են չար ճանապարհին... Առաջնորդք և իշխանք լինելոց են կաշառասէրք և ստախօսք և սուտերդմունք և ի ձեռս կաշառացն թիւրեն զդատաստանս իրաւանցն աղքատին... իշխանք և դատաւորք պոռնկասէրք... և ատեցողք լինին սուրբ ամուսնութեան և փակին ընդ պոռնկութեամբ ախտին... մեծարին զմատնիչն և զգողն, յափշտակեն անիրաւաբար զաշխատողաց զինչսն Յաղագս արծաթասիրութեան [առաջնորդաց] ատան ձեռնադրութիւն բազում անարժանից և զամենայն սղծեալսն ածեն ի կարգ քահանայութեան... և զանարատն դարձուցանեն և քահանայութենէ առ ի չունելոյ արծաթ... բազումք ի քահանայից և ի կրօնաւորաց լինելոց են ցանկասէրք, ախտից փափագողք, որոճալով որոճեն զերգս դիւական... յղփանան առաջնորդք աշխարհի արծաթասիրութեամբ...»[25]։ Հովհաննես Կողեն վարդապետի խոսքերով պատկերացված է ոչ միայն 11-րդ, այլև 12-րդ դարի դրությունը։

3. **Թոնդրակեցոց աղանդը։**— Աշխարհիկ կյանքի ու ձգտումների այնպիսի վիճակի միջոցին բնականաբար ամենից առաջ սկսում է զարգանալ վերածնության էական կողմը— եկեղեցուց անկախ, ազատ մտածողությունը։ Զորանում է պայքարը նոր գաղափարախոսության համար՝ ընդդեմ նախորդ շրջանի գաղափարախոսության, որի պաշտպան էին իշխողները— եկեղեցին և աղնվականությունը։ Այդ հանդես է գալիս, ինչպես սովորաբար՝ աղանդավորության, որի միջոցով Հայաստանում ավելի վաղ քան Եվրոպայում ձևավորվել է ընդդիմադիր, հետող ոգին։ Հայաստանը եղել է մի ակութ աղանդավորական անընդհատ շարժման համար՝ մերթ գաղտնի, մերթ հայտնի, նույնիսկ ապստամբության վերածվելով։ Հայոց գրականության սկզբում հենց հանդիպում ենք «բարբարիանոս» (իսկապես «բորբորիանոս») աղանդին Հայաստանի արևմտյան կողմերում։ Ապա մեր աշխարհում գործել են նաև Մարկիոնի աղանդին, մանիքեության, մծղնեության (մեսալյան աղանդ), «Հայոց աղան-

25 Մ. Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն*, էջ 52—55, 66—74։

դին» և ուրիշների հետևողները[26]։ Այստեղ չպիտի, հարկավ, զանազան անուններով երևացող աղանդների մասին մանրամասն խոսել։ Դրանցից առանձնապես,— բայց համառոտակի, որքան որ մեր խնդրին հարկավոր է,— հիշելու է երկուսը—պավլիկյան և թոնդրակեցոց աղանդները, որոնք երկուսն էլ հայկական հողի վրա են ծագել։

Պավլիկյանները տարածված են եղել Հայաստանում 8-րդ դարի սկզբներին. նրանց դեմ կռվել են Հովհան Օձնեցու ժամանակ և՛ ճառերով, և՛ եկեղեցական կանոններով։ Այդ աղանդը 9-րդ դարում բացարձակ ծավալվում է գլխավորապես Փոքր Հայաստանում։ Չնայելով կրած հալածանքներին՝ աղանդավորներն այնքան զորանում են, որ նույն դարի կեսերին մի մեծ ռևոլյուցիոն շարժում են առաջ բերում։ Նրանք զեն ի ձեռին ապստամբում են բիզանդական կառավարության դեմ, պահանջելով կրոնական և քաղաքական ազատություն։ Նրանց ուժն այնքան մեծ էր, որ կայսրությանը դիմադրում են 25 տարի շարունակ, մինչև որ 873թ. հաղթվում են կայսերական զորքերից և կոտորվում։ Նրանց կենտրոնը, Տևփրիկե քաղաքն ավերվում է, և նրանց մնացորդները ցրվում են։ Հետագայում նրանք փոխադրվում են Թրակիա։ Ինչպես սովորաբար ընդունում են, այս աղանդի ազդեցությունը մեծ է եղել ոչ միայն սլավոնական, այլև ընդհանրապես եվրոպական աղանդների կազմության վրա։ Այս աղանդն իր քարոզած սկզբունքներով մերթ նույնացրել են մծղնեության հետ, մերթ մոտեցրել են մանիքեության, կամ Մարկիոնի աղանդին[27]։ Այդ նրանից է առաջացել, որ երբեմն զանազան աղանդավորներ, ինչպես գրում է Հովհան Օձնեցին, հարում են իրար՝ եկեղեցու դեմ մի ընդհանուր կռիվ մղելու համար։

Պավլիկյանների պարտվելուց հետո աղանդավորությունը չի մեռնում Հայաստանում։ Շատ չանցած՝ դարձյալ հայկական հողի վրա, հայ կյանքից ծնունդ է առնում մի նորը, թոնդրակեցոց աղանդը, որ համարում են պավլիկյանների հաջորդը։ Ըստ Ստեփանոս Տարոնեցու՝ Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսի (897—928 թթ.) օրով, այն խառն ժամանակներում, հանդես է եկել, իբրև այդ աղանդի հիմնադիր, Սմբատ անունով մեկը՝ «հակառակ ամենայն քրիստոնէական կարգաց»։ Այս նոր աղանդը շատ նմանություններ ունի պավլիկյան աղանդի հետ. նրա շուրջը խմբված պիտի լինեն պավլիկյանների մնացորդները Հայաստանում, և երևի նույն հին աղանդն է նոր անունով երևան եկած։ Աղանդի կենտրոնն եղել է Ապահունիք գավառում Թոնդրակ գյուղը, ուր նստում էր աղանդապետը, որից և աղանդի անունը։ Բայց նրա ճյուղերը՝ նայելով տեղերին՝ կոչվել են նաև կաշեցի, թուլայեցի։

---

26 Տե՛ս սույն աշխատության Ա հատոր, Յոթներորդ հավելված («Երկեր», Գ, Հինգերորդ հավելված)։

27 Die Paulikianer im Byzantinischen Kaiserreiche und verwandte ketzerische Erscheinungen in Armenien, von *Karapet Ter-Mkrttschian*, Leipzig, 1893. **Այստեղ էջ 82—91,** Die Thondrakier.

Թոնդրակեցի կամ Թոնդրակյան աղանդավորները տարածվում են ավելի Մեծ Հայաստանի հյուսիս-արևմտյան կողմերում և 11-րդ դարի առաջին տասնամյակում արդեն բացարձակ կերպով բռնի գործողությունների են դիմում։ Այդ ժամանակներում նրանց կողմն է անցնում մինչև անգամ Հարքի եպիսկոպոսը և եկեղեցուն հակառակ կարգադրություններ անում։ Սարգիս կաթողիկոսը (992—1019 թթ.) ստիպված է լինում միջոցներ ձեռք առնել այդ եպիսկոպոսի դեմ և պատժել նրան։ Աղանդավորների թիվը, սակայն, շարունակում է աճել, Մանանաղի գավառում նրանց հարում են աբեղաներ, ինչպես և գյուղատեր ազնվական կանայք և տղամարդիկ։ Նրանք քանդում են իրենց գյուղերի եկեղեցիները, խորտակում են անդաստաններում կանգնած խաչքարերը։ Բայց երբ այդ աղանդավորները 1011 թ. փշրում են Պարխար լեռների ճյուղերից մեկի վրա կանգնած մի հայտնի խաչքար, ապա աղմուկ է բարձրանում, գավառի եպիսկոպոսն այրում, ավերում է նրանց գյուղերը։ Բանը հասնում է դատավորին, որ, հասկանալի է, պահում է ոչ թե աղանդավորների, այլ եկեղեցու կողմը[28]։ Թոնդրակեցիները, սակայն, շարունակ աճում ու ծավալվում են և սպառնալից են դառնում։ Հիշված դեպքից մի 40 տարի հետո, 1051 կամ 1052 թ., նրանց դեմ ելնում է Գրիգոր Մագիստրոս Պահլավունի իշխանը, որ բիզանդական կայսրության կուսակալն էր Միջագետքի վրա, և որի իշխանության տակ էին նաև Հայաստանի այն կողմերը, ուր գտնվում էին այդ աղանդավորները։ Նա զենքի ուժով ճնշումների է դիմում, ավերում է Թոնդրակ գյուղը և աղանդավորներին վտարում է իր իշխանության սահմաններից։ Բայց աղանդը չի ոչնչանում, այլ գաղտնի շարունակում է հարատևել և հասնում է մինչև 19-րդ դարը[29]։ Այս աղանդավորները ևս, ինչպես ընդունում են, անցել են Թրակիա և ազդել եվրոպական աղանդների կազմության վրա։

Նրանց ազդեցությունը երևում է ի միջի այլոց նաև ալբիգյան կամ ալբիգացոց աղանդի վրա, որ 11—13-րդ դարերում տարածվում էր Հարավային Ֆրանսիայում։ Ուստի և այդ Թոնդրակեցոց աղանդը, ինչպես և պավլիկենությունը, կարևորություն ունի ընդհանուր միջազգային տեսակետով ևս։

Ի՞նչ է եղել Թոնդրակեցոց ուսմունքը։ Շատ բան, հարկավ, դեռ կենդանի զարգացման մեջ է եղել բերանացի քարոզով և ավանդությամբ։ Նրանցից ոչ մի գրվածք չի մնացել։ Մեր ձեռքը հասել են միայն հակառակորդների գրածները[30], որոնց մեջ ամեն լուտանք թափում են նրանց

---

28 Տե՛ս Ալ. Լաստիվերտցի, Պատմություն, գլուխներ ԻԲ և ԻԳ, էջ 142—162։

29 «Փորձ», Դ տարի՝ 1880, հոկտեմբերի համար, էջ 91—130՝ «Թոնդրակեցիները մեր օրերում», Ա. Երիցյանի։

30 Դրանք են՝ ա) Գր. Նարեկացի, Թուղթ, որ տպված է Բարսեղ Սարգսյանի «Ուսումնասիրություն Մանիքեա-Պավղիկյան Թոնդրակեցիներու աղանդին և Գր. Նարեկացու Թուղթը», Վենետիկ, 1893, աշխատության վերջում, էջ 106—117։ Սույնը տպագրված է նաև Վենետիկի «Բազմավեպի» մեջ 1893 թ., էջ 59—64, 113—119։ բ) Գր. Մագիստրոսի կէ և

գլխին։ Բայց և այնպես բավական ծանոթություն ենք ստանում այդ ազանդավորների ընդդիմադիր գաղափարախոսության վարդապետության մասին։ Նրանք կատարելապես չէին մերժում քրիստոնեությունը, այլ ժխտում էին եկեղեցու բոլոր կարգերը։ Չէին ընդունում Քրիստոսին իբրև աստված. աղանդապետն ինքն իրեն քրիստոս էր անվանում։ Մերժում էին Ս. Գիրքը, երրորդության գոյությունը, հանդերձյալ կյանքը, մեռելների հարությունը, հոգու անմահությունը և այլն։ Մերժում էին եկեղեցու նվիրապետությունը (հիերարխիա), քահանայական կարգը, ձեռնադրությունը, ըստ նրանց աղանդապետ Սմբատի,— գրում է Գրիգոր Մագիստրոսը (էջ 154),—«ոչ այլ ինչ է այդ, բայց վասն խաբելոյ ժողովրդեանն»։

Մերժում էին նաև եկեղեցու խորհուրդները՝ մկրտություն, հաղորդություն, խոստովանություն, ապաշխարություն և այլն։ Խափանում էին ամեն պաշտամունք, եկեղեցական արարողությունները և սովորույթները— կիրակի օրը, ծնրադրությունը ծաղրում էին և ոչինչ էին համարում քահանայի զգեստը, պատարագը, ղոհաբերությունները և այլն։ Չէին հարգում և նույնիսկ ոչնչացնում էին եկեղեցիները., խաչերը, խաչքարերը, որոնցով զարդարված էին հանդերը, լեռները. արհամարհում էին սրբերին, տիրամորը և այլն։ Անգոսնում էին, արհամարհում, պախարակում էին ամուսնության կարգը։ Գրիգոր Նարեկացին նրանց ուրիշ ժխտումների հետ հիշում է և «զպսակին ամուսնութեան անգոսնութիւն... զպսակն անգոսնեն, և զոր սիրով մերձենան առ յիրեարս, կատարեալ սէր համարին և յԱստուծոյ և հաճոյ Քրիստոսի թէ Աստուած սեր է, և զսիրով միաւորիլն կամի և ոչ զպսակ» (էջ 110 և հետ.)։ Առն և կնոջ այսպիսի մերձավորությունը ժամանակակիցները բնականաբար համարել են, ինչպես գրում է Գր. Նարեկացին, «մծղնէական անխտիր պղծութիւն»։ «Ու այս ինչ են անօրէնութիւնք չարագործացն այնոցիկ,—գրում է Գր. Մագիստրոսը,—ոչ պահք նոցա... և ոչ խորութիւնք արանց և կանանց և ոչ ընտանեաց, թէպէտ և ոչ յայտնապէս համարձակին և ոչ պատուեն և ոչ զմի ինչ ոչ յաստուծայնոց ոչ յեղելոց. այլ զամենայնն ծաղր առնեն՝ զհին և զնոր օրէնս»։ Այս հեղինակը նրանց կենտրոնն անվանում է «Շնավանք»։ «Ու բնակեալք էին ի Շնավանսն այն արք հանդերձիւք կրօնաւորաց և կանանց բազմութիւն բազից» (էջ 152)։ Արիստակես Լաստիվերտցին ևս այս աղանդավորությունն անվանում է «մծղնեայ կրօնք», ասելով թե «պոռնկական մոլեգին ախտը», «օրէն է նոցին փարախին», և թե պոռնկություն են անում «անխրատապէս, ոչ ածեալ զմտաւ զարեան մերձաւորութիւնն»։ Եվ վերջն այս պատմագիրն ավելացնում է. «բայց զնոցա մծղնէ զգործն անպատշաճ համարեցաք ընդ գրով արկանել, քանզի կարի աղտեղի է»։

ԿՀ թղթերը. տե՛ս «Գր. Մագիստրոսի Թղթերը», Կ. Կոստանյանցի հրատ., Աղեքսանդրապոլ, 1910, էջ 148—168։ գ) Ար. Լաստիվերտցի, *Պատմութիւն, վերևում հիշված գլուխները։*

Այդ աղանդավորների համար մեղքը նույնպես գոյություն չուներ. ուստի մեղքի պատիժ և ապաշխարություն էլ չկար։

Ճգնավորական կյանքին և եկեղեցուն հակառակ մի վարդապետություն էր Թոնդրակեցոց ուսումը, ծայրահեղության հասած մի բողոք վանական ու ճգնավորական կյանքի, եկեղեցական իշխանության, եկեղեցու կարգերի ու գաղափարների դեմ, որոնք, ինչպես տեսել ենք, չափազանցության էին հասած 10-րդ դարում և 11-րդի առաջին տասնամյակներում։ Դա հակաեկեղեցական մի մեծ շարժում էր։ Թե ինչի՛ց էր ծագում և զարգանում դա, մեզ այդ չեն բացատրում ժամանակակից գրողները։ Բայց պարզ է այդ։ Դա եղել է նախ՝ քաղաքացության փարթամ զարգացման և աշխարհիկ կյանքին հակվելու հետևանքը։ Ապա՝ եկեղեցականության վատ բարքերը, հոգևորականներից շատերի զեղծումները, կեղծավորությունը, եկեղեցական իշխանության ճնշումները, բուռն վերաբերմունքը դեպի աղատ մտածողությունը, այս ամենը դրդել էին դրանցից դժգոհներին հակառակ դիրք բռնելու։ Եվ վերջապես՝ շատ տարրեր, որոնք չէին կարող հրաժարվել իրենց բնական խելքից և հաշտվել եկեղեցու քարոզների հետ, սկսում էին կռիվ եկեղեցու դեմ, ձգտելով եկեղեցին հիմնովին վերանորոգության—ռեֆորմացիայի ենթարկելու, շատ ավելի վաղ քան Լութերի և ուրիշների գործողությունը։ Պատահական չէ, որ Արիստակես Լաստիվերտցին շատ գովում է Թոնդրակեցոց աղանդին հարած եպիսկոպոսի ու քահանաների և իշխանի նախկին մեծ բարեպաշտությունը[31]։ Ինչքան էլ Պատմագիրը բացատրի, թե նրանք ուրիշներին խաբելու համար կեղծավորությամբ են բարեպաշտ եղել, այդ ընդունելի չէ։ Իրողությունն այն է, որ նրանք սկզբում, իրոք, ջերմեռանդ հավատացող են եղել և հետո միայն անցել են Թոնդրակեցոց կողմը։ Ի՞նչն էր ստիպում, օրինակ, որ այն նշանավոր Վրվեռ իշխանը հրաժարվեր եկեղեցուց, նա, որ իր կալվածում նույնիսկ կրոնաստան էր շինել, «ճգնաւոր եղբարս ժողովեալ ի նմա, և ընդարձակ սահմանօք՝ անկարօտ պահէր զկեանս նոցա». որ ամեն տարի մեծ պասին այդ կրոնավորների մոտ էր գնում «և հանդիսակից լինէր նոցա՝ մինչև յաւուրս մեծի պասեքին. և բազում այլ գործս բարեաց ցուցանէր ի սոցա սպասաւորութիւն. նաև յազքատասնութիւնս և ի քահանայից հնազանդութիւնս՝ քան զբաղումս յառաջադէմ ցուցանիւր»—ի՞նչն էր ստիպում այդ հայտնի իշխանին,— որից ակնածում էր դատավորը,— ինչպես և Հարքի ազդեցիկ եպիսկոպոսին, ոչ միայն հրաժարվել եկեղեցուց, այլև բոլորովին հակառակ գնալ։ Նրանք անպայման փորձով տեսել էին գոյություն ունեցող կեղծիքները, զզվել էին դրանցից, և այդ թելադրել էր նրանց մտնելու հակառակ բանակի մեջ և ձգտելու եկեղեցու վերանորոգության։ Բայց նրանց գաղափարը չէր կարող հայերի մեջ իրականանալ այն դարում, քանի որ եկեղեցին ու նրա պաշտպան իշխանությունը ու բիզանդական կայսրությունը դեռ շատ զո-

31 Ար. Լաստիվերտցի, *Պատմութիւն*, էջ 142—146, 152—153։

րեղ էին, իսկ այդ հետզհետե ու ժխտող աղանդը մի ռևոլյուցիոն ընդդիմադրություն էր իշխող դասակարգի դեմ, մի դասակարգային պայքար, որ անխնա պիտի բնաջինջ անել աշխատեին իշխողները։

4. Գաղափարախոսության զարգացման դանդաղ ընթացքը։— *Բոնդրակեցիների ընդդիմադիր վարդապետության դրական կողմը, ինչպես ասվեց վերևում, մեզ չեն հաղորդել նրանց հակառակորդ հեղինակները, բայց հասկանալի է այդ։ «Հիմնական հերետիկոսական գաղափարն այն է, որ երկրին է առավելություն տրվում, քան երկնքին»։ Այդ նշանակում է, որ բնությանը, իրական կյանքին առավելություն պիտի տրվեր. հայտնության կրոնի փոխանակ պիտի իշխեր ռացիոնալիզմը։ Հոգին ետ պիտի մղվեր մարմնի առաջ, իրավազուրկ մարմինն ու բնությունը ստանային իրենց իրավունքը, և գրականությունն աշխարհականանալով՝ կապվեր գլխավորապես իրական կյանքի, երկրի և մարմնի հետ։ Վերածնության այս գաղափարը, սակայն, չէր կարող իր ամբողջությամբ արագ անդրադառնալ գրականության մեջ 11-րդ դարի առաջին կեսին, երբ դեռ շատ զորեղ էր կրոնական ոգին, և ծանրաձեռն ճնշող էր եկեղեցու իշխանությունը, և գրականությունը դեռ գտնվում էր գլխավորապես հոգևորականների ձեռին։ Գրավոր դպրության մեջ զարգացումը, սկսվելով եկեղեցու տեսակետով անվնաս գաղափարներից, կատարվում էր շատ դանդաղ տեմպերով, և ոչ միակերպ հավասար ընթացքով, և ոչ էլ անընդհատ, քանի որ Հայոց երկիրը հենց այդ դարերում ենթարկվում էր պարբերական ցնցումների։ Բայց այնուամենայնիվ, սկսված առաջադիմությունն այսպես կամ այնպես շարունակվում է, մինչև որ վերջիվերջո գրականության մեջ էլ երկրավորին տրվում է առավելություն։ Եվ մեր դրականության այս շրջանը հետաքրքիր է նոր գաղափարախոսության աստիճանաբար զարգացման ընթացքով։ Խնդիրն այստեղ գրավոր դպրության մասին է և ո՛չ գուսանական երգերի և ժողովրդական բանահյուսության, որոնք սկզբից ի վեր աշխարհիկ բնավորություն են ունեցել։*

ՆՈՐ ՄՏԱՎՈՐ ՀՈՍԱՆՔԻ ԱՒԱՋԻՆ ՓՈԻԼԵՐԸ ԳՐԱԿԱՆՈՒԹԻԱՆ ՄԵՋ

ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ ՊԱՀԼԱՎՈՒՆԻ

1. Լուսավորության և ուսման ծավալումը:— *Գրականության աշխարհականացումը պիտի լիներ ամենից առաջ քաղաքներում ապրող աշխարհականների ձեռով։ Եվ իսկապես, վաղ վերածնության շրջանում ազնվականների մտավոր վիճակը բարձրանում էր, նրանք ևս սկսում էին ուսում առնել և գիտությամբ ու գրականությամբ պարապել, միաժամանակ և հովանավորել ուսումնականներին։ 10-րդ դարից ի վեր հանդես եկող Պահլավունի տոհմի մարդիկը հայտնի են դարձել ոչ միայն շինարարությամբ ու ռազմական գործերով, այլև իրենց ուսումնասիրությամբ. նրանք ջանացել են «ուսուցանել զմանկունս»[1]։ Լավ ուսում են տվել և մանուկ Գրիգոր Պահլավունուն։ Ուսումնասեր են եղել և Բագրատունիները. իմաստուն կամ իմաստասեր է հիշվում Հովհաննես Սմբատ թագավորը։ Նրա ժամանակ իր գիտությամբ հայտնի է եղել Անիի Սարգիս վարդապետը, Գրիգոր Մագիստրոսի բարեկամներից մեկը, որին այդ Պահլավունի իշխանը իր մի նամակի մեջ[2] դիմում է գրելով՝ «Հզօր հռետոր և աստուածային տեղետիս... Միշտ կարօտեալ կամ բանի քում և գրի, քանզի հզօր ես ի պուետիկոսականն մատենագրութեան։ Եւ սիրելի է ինձ,— ավելացնում է նա, — ոչ այլ ինչ, եթէ այնպիսի լսել ինչ կամ ասել»[3]։*

---

1 Գր. Մագիստրոս, *Թղթեր*, *ԺԱ*, էջ 42 և հետ.։

2 *Անդ*, *ԺԲ*, էջ 57։

3 «*Տեղետիս*» նշանակում է «*կատարելություն*». այդ բառը Բիզանդիայում գործածվում էր իբրև տիտղոս «գլուխ իմաստասիրաց կամ հռետորաց» նշանակությամբ։ Հետաքրքիր է այս գիտնական վարդապետի հիշատակարանը, որ նա մուծել է մի գրքի մեջ. «*Ցամի, յորում էր հայ թուականն ՆՂ [=490+551=1041], վճարեցաւ ի մարդկանէ արքայն Հայոց մեծիմաստն Յովհաննէս։ Գտի ես Սարգիս վարդապետ զգիրքս զայս յարքունական տան գանձուն անկեալ ի յանկեան միում, անայցելու թափառեալ թաւալէր յաճիւն յատակին և գրեթէ լայր լռելեայն։ Իսկ իմ հայեցեալ խնամով ի գրանցին, և ըստ սովորական մեր աֆորժակացս զյոքունս բացեալ՝ ի բանսն բերկրէր. [=բերկրէի?] և սա զատուցեալ յընկեր-*

Անիի արքունիքում եղել է գրադարան. նույնը կար և կաթողիկոսարանում։ Իբրև ուսումնասեր և գիտուն հիշվում է նաև Գագիկ Բ-ն, որի համար Մատթեոս Ուռհայեցին գրում է. «Այր հզօր էր յիմաստասիրական ջոկսն և անյաղթ ի պատասխանիսն»[4]։ Այսպես նաև և Վանանդի Աբասյան Գագիկ թագավորը։ Այս վերջինիս մի նամակ է գրել Գրիգոր Մագիստրոսը՝ հանձնարարելով նրան տելետիս Գրիգոր Հնձացի (Հինձք վանք և գյուղ Կարինի մոտ) կրոնավորին։ «Գրիգոր անուանեալ տելետիս,— գրում է նա,— իմասցի ստուգել արքայութիւն քո, զի այր հմուտ է աստուածեղէն դաւանութեան մերոյ բախտի, նաև հնում և արտաքին գրոց յոյժ տեղեակ։ Ու ըղձայ տենչացեալ զփափագանս իւր լնուլ պատարուն ընթերցմամբ, զի այնու ոչ երբէք շատանայ։ Ու կամիմ զի և դա արքունիս քոյոյ քարգոնոսական [=արքայական] ապարանի առկայացեալ արասցէ ինձ ճեմարան, զի մի՛ բնաւին Ասքանազեան և Արամեան դպրութիւնս՝ ի բազմաց սատարեալ՝ ի մոռացումն անկցի... Զի տեսանեմք զքեզ ի հոմերական տաղսն վերստառեալ չափաբերական և ոտանաւորս հագներգական կարկատեալ. զի և դա [=Գրիգոր Հնձացի] յայնոսիկ յարդարեալ» (Թուղթ Ա, էջ 97)։ Կնշանակե՝ այս Գագիկ թագավորը եղել է իմաստասեր, միաժամանակ և ոտանավորներ է հորինելիս եղել։ Նա հովանավորել է գիտնականներին և ունեցել է ճեմարան, այսինքն փիլիսոփայական դպրոց, ուր սովորեցնում էին կրոնականի հետ և արտաքին գիտություններ։ Այդպիսի ուսումն արդեն վերածնության ոգու առաջին պահանջն էր, որ պայծառ արտահայտություն է գտել հանձին Գրիգոր Մագիստրոսի։

1. Կենսագրությունը։ — *Գրիգոր Նարեկացին իր հանճարով ուներ բնության զգացումը, բայց իր երկով նա ոգևիրա չի դարձել անմիջական հաջորդների համար։ Գուցե և եղել են նրան հետևորդներ, ժամանակակից կամ քիչ ուշ հանդես եկող բանաստեղծներ, բայց այդպիսիների գրվածքներն երևան չեն եկել։ Վերածնության առաջին «պուետիկոսը», միայն ոչ մեր հին մեծ բանաստեղծի բնագավառում, դա Պահլավունի Գրիգոր Մագիստրոսն է, Գրիգոր Նարեկացու շատ կրտսեր ժամանակակիցը, որից մնում են բազմաթիվ թղթեր և մի քանի չափածո երկեր[5]։ Նա մի հետաքրքիր դեմք է, մի հայտնի իշխան, որ շատ հմուտ է եկեղեցական գրականությանը, սիրող և պաշտպան է հանդիսացել Հայոց եկեղեցու, կրոնասեր է, բայց իր ժամանակի համեմատ՝ ազատամիտ ու լուսամիտ մի բազմագետ անձ։ Նրա մեջ մարմնացել է իր ժամանակի վերածնության մտքի մի կողմը—չբավականանալ միայն կրոնականով և եկեղեցական դպրոցով, հայերի մեջ վերանորոգել և զարգացնել հին հունա-*

բացն կայր կարաւտ ձեռին առ ինքն կարկառելոյ։ Զոր ապա առեալ իմ ընդ իս տարայ՝ հանեալ ի բանէն» (Գար. Զարբհանալեան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց (դար Դ—ԺԴ), Վենետիկ, 1889, էջ 455)։

4 Մ. Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն*, էջ 161։

5 Գր. Մագիստրոս, *Թղթեր, բնագիրն առաջաբանով և ծանոթություններով առաջին անգամ ի լույս ընծայեց Կ. Կոստանյանց*, Աղեքսանդրապոլ, 1910։

կան գիտությունը, ուսումնասիրել մաթեմատիկա, երկրաչափություն, բժշկություն, ծանոթանալ հին հունական գրականությանը և ընդհանրապես բազմակողմանի գիտանքներ ձեռք բերել։

Այս նշանավոր անձը որդին էր Վասակ Պահլավունու, ծնված մոտ 990 թ.։ Նա մեծացել է Անի քաղաքում, Պահլավունիների պալատում, վայելելով նաև խնամքն իր հորեղբայր Վահրամ Պահլավունու, որ Անիի թագավորության վերջին շրջանում մեծ դեր է կատարել իբրև սպարապետ և ութսունամյա հասակում՝ 1047 թ. մարտի մեջ ընկել է քաջաբար։ Նրա մահը ողբում է Դրիգոր Մագիստրոսը իր մի Թղթի մեջ (ԺԱ, էջ 36 և հտն.), հիշելով, թե ինչպես նա իրեն սիրել է։ Մեր այս հեղինակն ուսումըն առել է Անիում, հմտացել է Ս. Գրքին և եկեղեցական հայերի գրվածքներին։ Բայց որ կարևորն է ժամանակի ոգու տեսակետով՝ նա պատանեկան հասակից արդեն պարապել է նաև արտաքին գիտություններով, ուսումնասիրելով փիլիսոփայություն և այլն։ Միաժամանակ նա վարժվել է զինվորական արհեստին, որ շատ անհրաժեշտ էր այն դարում։

Թուրքական հրոսակներն արդեն մտել էին Հայաստան։ 1021 թ. Դեղումք կոչված մի ցեղ Ատրպատականի կողմից հարձակվում է կենտրոնական Հայաստանի վրա, հասնում Դվին և ասպատակ սփռելով մոտենում Բջնի ամրոցին, որ Գրիգորի հայրական կալվածն էր։ Վասակը Բջնու պահպանությունը թողնելով իր որդուն՝ ինքն իր մարտիկներով ելնում է ասպատակավորների դեմ, ջարդում, հալածում է նրանց։ Հաղթությունից հետո նա Սերկևելո (Արայի) լեռան ստորոտում հոգնած քնում է քարերի տակ։ Քնած տեղը մեկն ասպանում է նրան[6]։ Հոր մահից հետո հայրական ընդարձակ կալվածները, որ Նիգ գավառից հասնում էին մինչև Գեղամա լճի և Ազատ գետի հովիտները և այլուր, անցնում են Գրիգորին։ Նա էլ, ինչպես վարվել էր իր հայրը, առանձին ուշագրություն է դարձնում վանքերի շինարարությանը Բջնիում, Կեչառիսում (Ծաղկաձորում) և ուրիշ տեղերում։

Գրիգոր Մագիստրոսը մյուս Պահլավունիների հետ պաշտպան է կանգնում Անիի թագավորության և Գագիկ Բ-ի գահակալության։ Նա իր զորքերով օգնում է Գագիկին ճակատ մղելու թուրքերի դեմ և ջարդելու նրանց 1042—1043 թթ., բայց շուտով գժտություն է ընկնում այդ երկուսի միջև, և նա հալածվում է թագավորից, ինչպես ինքը գրում է, կրելով բանտ, կապանք ու զրկանքներ և մինչև անգամ մահվան սպառնալիքներ (Թուղթ ԿԱ, էջ 139 և հտն.)։ Հետո թագավորը զղջալով կամենում է հաշտվել նրա հետ, բայց հավանորեն գլուխ չի գալիս հաշտությունը և Գրիգորը հեռանում է Տարոն։

Հայտնի է, որ Հովհաննես Սմբատ թագավորը Անին իր կալվածներով կտակում է բիզանդացոց կայսրին։ Երբ Գագիկ Բ-ը գնում է Կոստանդնուպոլիս այդ կտակի խնգիրը կարգավորելու, Գրիգորն ևս 1045 թ.

6 Մ. Ուռհայեցի. *Ժամանակագրութիւն*, էջ 11 և հտն.։

գնում է այնտեղ, հուսալով, թե գուցե իր այցելությամբ օղնի Գագիկին, բայց նա ոչինչ անել չի կարողանում։ «Իբրև ետես, եթէ ոչ են թողլոց զԳագիկ ի տեղի իւր,— գրում է ժամանակակից Արիստակես Լաստիվերտցին,— յառաջ կացեալ տայ զբանալին Բջնոյ ցթագաւորն, և զամենայն զիւր հայրենի ժառանգութիւնն, և մեծարեալ ի նմանէ՝ առնու զպատիւ մագիստրոսութեան, և զտեղիս բնակութեան ի սահմանս Միջագետաց գեօղս և քաղաքս, գրով և ոսկի մատանեաւ յաղդէ յաղդ մինչև յաւիտեան»[7]։

Ինքը Գրիգոր Մագիստրոսը Պետրոս կաթողիկոսին ուղղած մի Թղթի մեջ (Գ, էջ 13) իր այդ արարքն անվանում է «անտեղի մտածութիւն», այսպես գրելով. «Արդ ե՛կ դու, ո՛վ գերակատարդ իմաստից, տե՛ս զիմոյ անտեղի մտածութեանս, յորս անկայ փորձութիւն առաւել քան զպատմականն, յորս ոչ բարերջանիկ գոլ նմա եհաս հանդէս. ըստ որում որ ի գահհիկս պատմի առակեալ՝ արտուտի զգուշութիւն. երկնի յատորս կործանիլ, և նա անկեալ պորտ յորսայս, զոտն ի վերայ յերկին ջանայ կարկառել, զի մի՛ երկին յերկիր անկցի խափուցեալ։ Ի պարսաւ առեալ ոմանց թէ՝ Որո՞վ ծղէ ծնգօք ծառանաս, ծտիկ, քո ծովդ խելօք։ Պատասխանեալ հաւն ասաց. Որքան կարեմ, զայն առնեմ։ Արդ իմ ծղէ ծնգօքս է... Սակայն յուսալով ի Տէր և հաւատալով իբրու անտուստ խոստմանց, յարեայ աճապարեալ քաջագօտի գտեալ՝ ի սեպհականն հասուցի հայրենի, զոր ի բազմաց վաճառեալ և ծախեալ, և այժմ հալածական լեալ փախչիմք։ Տէր արասցէ դատաստան»։ Գրիգոր Մագիստրոսն, ուրեմն, չի կարողանում դեմն առնել Հայոց թագավորության անկման։ Թեպետև նա մի րոպե հավատում է խոստումներին, հավանորեն, բիզանդական կողմից, և այս մասին նույնիսկ իմաց տալու համար շտապով մարդ է ուղարկում հայրենիք, բայց վերջինս արդեն վաճառված էր շատերից։ Եվ ոչ միայն այդ. նա ընկնում է «փորձության» մեջ։ Նա ևս հենթակա է լինում նույն վիճակին, ինչ որ հայ իշխաններից շատերը։ Նա ևս ստիպված է լինում իր ծախված հայրենի երկրից դուրս մնալու։ Այդ մասին նա խորին տրտմությամբ հիշում է իր Թղթի մեջ։

Նա 1048 թ. ուրիշների հետ արևելք է ուղարկվում Թուրքերի դեմ երկրի սահմանները պաշտպանելու, և կարգվում է Միջագետքի—հետը նաև Վասպուրականի, Բերկրիի, Արճեշի, Մանազկերտի ու Տարոնի—կառավարիչ դուքս («կիտոն և դուկ») կամ բդեշխ կոչումով։ Նրա «մագիստրոս» պատվանունը ոչ թե մի զիտական աստիճան էր այն ժամանակ, ինչպես այժմ, այլ Բիզանդական կայսրության մի պալատական տիտղոս էր ռազմական գծով։ Գրիգոր Մագիստրոսն, ինչպես իր Թղթերից երևում է, շատ բարեկարգություններ է արել իրեն հանձնած մարզերում, բայց միշտ ցանկացել է թողնել իր վարչական գործը և միայն զրականությամբ զբաղվել։ Կայսրը, սակայն, չի արձակել նրան իր պաշտոնից։ Իր բդեշ-

7 Ար. Լաստիվերտցի, *Պատմութիւն*, Թիֆլիս, 1912, էջ 61։

խության ժամանակ նա հաճախ եղել է Տարոնի ս. Կարապետի վանքում, ուր նրա համար կանգնած են եղել ապարանք և դպրոց։ Նա վախճանվել է 1058 կամ 1059 թ.։

3. Ուսման ծրագիրն ըստ Գրիգոր Մագիստրոսի և նրա թարգմանությունները։—*Բոլոր ուսյալ աշխարհականների մեջ առանձնապես փայլում է այս Պահլավունի իշխանը, մեր վաղ վերածնության շրջանի լավագույն ներկայացուցիչը, իսկական լուսավորական գործիչ։ Նա ոչ միայն ուրիշներին հորդորել է գիտությամբ պարապելու և դպրոց ունենալու, այլև ինքը շարունակ սիրով և անխոնջ հետևել է դրան՝ նշանաբան ունենալով «պատարուն ընթերցմամբ», «գիտութեամբ լուսաւորիլ գանձըն»։ Նա ունեցել է իր դպրոցը։ Նամակների մեջ դիմում է աշակերտներին՝ խրատներ տալով նրանց, ծույլերին հանդիմանելով («Աւ հեզգս ոմանց յաշակերտացն, որք ուսանին զիմաստասիրութիւն»), կամ անկեղծ ուրախանալով նրանց առաջադիմության համար։*

Հետաքրքիր է նրա ծրագիրն ուսանելի առարկաների վերաբերյալ։ Այդ պարզ իմացվում է նրա Խե Թղթից (էջ 105 և հետ.) «Աւ աշակերտս իւր Բարսեղ և Եղիսէ յաղագս գրոցն Արիստոտելի»։ Նրանք այդ միջոցին գտնվում էին Պետրոս կաթողիկոսի մոտ։ Լսելով, որ սա նրանց տվել է Արիստոտել՝ Մագիստրոսն այդ առթիվ գրում է՝ (1). «Եթէ Արիստոտէլի հաւաքմունքդ այն է, որ ասացեալն է յաղագս երկնային մարմնոյն և գնդաւտեսութեան երկրի, կամ յաղագս օրինադրութեան կենցաղոյս, յորս յիշատակէ և զորականութեանցն քակտումն և զախտիցն բաժանմունս, զոր անուանեն խորհրդական, առաքեա՛ այսր զդա։

(2). Ապ՝ եթէ միայն Պորպիւռի առասութիւնքն իցէ բացորոշեալ ի խնդրոյ Քռիսաւորին հնգից ստորոգութեանցն, որք են այսոքիկ՝ սեռ, տեսակ, տարբերութիւն, յատուկ և պատահումն, կամ եթէ ութից, որք են՝ դիտաւորութիւնն, պիտանացուն, պատճառն, մակագրութեան կարգըն, վարդապետական յեղանակն, թէ առ ի՞նչ մասն, տարբերումն, կամ ղիւրն Ստագիրացւոյն՝ գոյացութիւն, որակ, քանակ, և առինչ ուր, երբ, կալ, ունել, առնել, կրել, այսոքիկ ոչ են մեզ ըղձալի ի ճեռաստանէ զայսպէս խնդրել։ Քանզի տրամադրութիւնս այս վաղ ուրեմն պատահեաց մեզ մինչ տակաւին պատանեակ եղելոյ»։

Բերված հատվածից ուշադրություն է գրավում այն, որ երկրորդ պարբերության վերջում Մագիստրոսը հայտնում է, թե ինքն ի՛նչպիսի փիլիսոփայական ուսում է առել դեռ իր պատանեկության ժամանակ։ Շարունակության մեջ գրում է, թե ինքն առանց հողնելու ամեն ջանք գործ է դրել իր այդ ուսումը կատարելագործելու պարսկականից ու արաբականից, և թե այդ թուղթը գրելիս էլ աշխատում է «Յունաց անդանդաղ քաղիցն արհեստից հետևաբար մասին ինչ տեղեակ լինել։ Քանզի,— ավելացնում է նա,— յայսոսիկ կրթեալ զմեզ վեհագոյն վարկանէի անկողոպտելի և անծայրագոյն ստանձնել, քան զամենայն ինչ որ ի կենցաղումս աղնուագոյն»։ Ահա իմաստասեր մարդու կարծիքը գիտության մասին։

Գալով իր ծրագրին ուսանելի առարկաների վերաբերմամբ, նա ասում է, թե Արիստոտելից առաջ (վերևի առաջին պարբերությը), «նախ՝ պարտ է զբերականութիւն հանդերձ թարգմանութեամբն [=մեկնությամբ, բացատրությամբ] ուսանել տիրապէս մակստացականութեամբ, և զկնի այսր՝ զհռետորականն երիւք հանդիսիւք անսխալ տրոհութեամբ, և ապա՝ զսահմանացն պարունակել, և զպղատոնական և արիստոտէլական, և դարձեալ՝ պիւթագորական կարակնակերտութեանն բացորոշմանց և դատողութեանց»: Ուրեմն չորս կարգի ուսում, որոնցից երրորդն են Պղատոնինն ու Արիստոտելինը: Բայց այդ, այսպես ասած, բարձրագույն շրջանի դասընթացն է: Դրանից առաջ հարկավոր է ուրիշ բաներ սովորել.

«Նախուստ քան զայսոսիկ կրթեցեալովք ներկուտ վերծանութեամբ զիին և զնոր կտակարանս, և առասպելավարժութիւնս ի բազում և զանազան տեղիս եղեալ զորքանութեամբ արտայայտել հաւանիմք, և ի խոյզ ելանել ջերմագոյն և քաջողջական խոհականութեամբ և տրամաբանական հատուածոց հոմերական և պղատոնական նախասականին և այլոցն բոլոր արհեստից և մատենից: Զի յամենայնի իմաստասէրն խոստովան լիցի զգիտութիւն և ուրացեալ զանգիտութիւն մանաւանդ ըստ կարողութեան բարւոյն արհեստից՝ թուական, երաժշտական, երկրաչափական, աստեղաբաշխական»: Այս էլ, ուրեմն, առաջին շրջանի դասընթացն է: Ուսումը պետք է սկսել Ս. Գրքի ընթերցանությամբ և առասպելավարժությամբ, ապա հոմերական ու պղատոնական և այլ գրքերի հատվածներից հետո «չորս արհեստները»՝ թվաբանություն, երաժշտություն, երկրաչափություն և աստղաբաշխություն, և նոր անցնել երկրորդ աստիճանի ուսման, որ է՝ քերականություն և մյուսները:

Այս միևնույն խնդրի մասին նա խոսում է և ուրիշ անգամներ. այսպես, օրինակ, Բ Գրքի մեջ, էջ 8 և հետ. ասում է, թե ովքեր առաջուց այդ ուսումը չեն առել, նրանք չեն կարող սովորել «աստուածաբանութիւնը», այսինքն փիլիսոփայության բարձրագույն ուսումը. «Քանզի պարտ է նախ ի բնաբանականէն [=ֆիզիկայից] յուսումնականն [=մաթեմատիկայի] ամբառնալ և անտուստ աստուածականն [=փիլիսոփայություն աստուծու մասին]... Եւ Պղատոն իսկ զգուշացուցանէ այսպէս յիւրումն աստուածաբանութեանն՝ Անհերկրաչափական ոք մի ներամտեսցէ զայսոսիկ ասելով, զի մի՛ ոք անկատար ի քառիցն ենթակայէ [=քառիցն արհեստից] մտցէ ի լսարանն, քանզի բնաւորեալ էր հրաշալին այն միայն աստուածաբանութեանն պարապել»:

Գրիգոր Մագիստրոսն ուսման ծրագրի մեջ դնում է, ինչպես տեսանք, և «առասպելավարժութիւն»: Հայերեն «առասպել» բառը նշանակում է և՛ զրույց աստվածների ու դիցազների մասին, և՛ առանձ արդի սովորական իմաստով: Գրիգոր Մագիստրոսն այդ երկու նշանակությամբ էլ հասկանում է այդ բառը: «Առասպելների» համար նա իբրև աղբյուր գրում է՝ «ի բազում և զանազան տեղիս եղելոյ»: Ուրեմն դրանք պետք էր վարժության համար քաղել ամեն տեղից, ուր կային այդպիսիները, ոչ միայն

գրքերից, այլև ժողովրդական ավանդությունից։ Եվ ինքը Մագիստրոսն ուշադիր է եղել թե՛ «ի գոեհիկս» պատմված առակներին, ինչպես վերևում բերված ծտի առակն է, և թե այլ բանահյուսական երկերին, ինչպես և Արտաշես Պարթևի (Արշակունու) «ի գոեհիկս աւանդեալ» հանրածանոթ խոսքը, որ ծագում է հին Վիպասանքից (Թուղթ ԼԹ, էջ 87. «Ո՛ տայր ինձ ղծուխ ծխանի...»)։

Ուսումը լինում էր հայերեն. հարկավոր էր ունենալ հայերեն լեզվով գրքեր։ Դրա համար կային հին թարգմանությունները, ինչպես՝ Ոլոմպիանոսի առակները, որ հիշում է Մագիստրոսը (ՄՂ, էջ 132)։ Կար և Անանիա Շիրակացու «Մեծ Քննիկոնը», «յորում մթերեալ են,—ասում է նա,—տոդորք աստուածային և ենթակայացեալ ամենայն արհեստի մակացութեան և նախադասեալ է թուականութեանն և երաժշտականութեանն... երկրաչափութեանն և աստեղաբաշխութեանն... և զկնի այսոցիկ յարամանեալք արհեստք և մակացութիւնք, մատենադրութիւնք, և զրէ եթէ ամենայն բոլոր վարժումն հռետորական» (էջ 8)։

Գրիգոր Մագիստրոսն ինքն էլ աշխատել է ուսումնասերներին հարմարություն ընձեռել սովորելու. նա արել է հին Քերականի մեկնությունը, որով հետագա դարերում ուսուցիչները սովորեցրել են աշակերտներին։ Նա իր ծերության հասակում, Միջագետքում վարած մեծ պաշտոնի օրերում էլ շարունակել է թարգմանության գործը։ «Ոչ եմք երբէք դադարեալ ի թարգմանութենէ ևս. բազում մատեանս, զորս ոչ եմք գտեալ ի մեր լեզուս՝ ղերկուս մատեանս Պղատոնի, զՏիմէոսի տրամաբանութեանն և զՓեդովնի... և զայլս բազումս յիմաստասիրացն... և զերկրաչափականն կԵւկլիդոսին սկսայ թարգմանել և եթէ տակաւին կամեսցի Տէր երկարանալ մեզ ի կենցաղումս, բազում հոգս յանձին կալեալ զմնացեալսն բոլոր՝ Յունաց և Ասորւոց թարգմանել ոչ դանդաղեցայց։ Եւ կարօտիմք քեզ մերձ ելոյ մեզ օգնականութեան այսպիսում իրողութեանց» (Թուղթ ԻԱ, էջ 66), գրում է նա իր բարեկամ Սարգիս վարդապետին, որի մասին հիշատակություն եղավ վերևում։

4. «Թղթերը»:—Գրիգոր Մագիստրոսի Թղթերն ունեն վերնագիրներ, որոնք ծագում են հավանորեն կամ հեղինակից, կամ նրան մոտիկ մարդկանցից, քանի որ վերնագիրներ դնողներն իմացել են, թե ինչ առթիվ են գրված և ո՛ւմ է ուղղված այս կամ այն Թուղթը։ Գրության բովանդակությունից միայն երբեմն չի իմացվում այդ։ Հեղինակը գիտության մարդ է. նրա այդ գործերն ամենից առաջ ունեն իր ժամանակի համար գիտական, մասնավորապես պատմա-հասարակական արժեք։ Այստեղ կարևոր չէ դրանց բովանդակությունը մի առ մի թվել, այլ այսքանը միայն պիտի ասել, որ այդ գրությունները հաճախ վերաբերում են գիտության և ուսման, ավելի են ընդարձակ ծանոթություններով, որոնք արգասիք են դրողի երկարամյա բազմակողմանի ընթերցանության։ Կան նաև կենցաղական բովանդակությամբ Թղթեր։ Սրանց մեջ նույնպես հեղինակը հանդես է

բերում իր հարուստ գիտանքները զանազան նյութերի մասին, երբեմն այնպիսի մանրամասնություններով, որ հիացնում է ընթերցողին։

Նրա թղթերով մեր գրականության մեջ մտել է մի նոր գրական տեսակ—նամականի ասածը։ Արդարև հայտնի են մեզանում «Գիրք թղթոց» ժողովածուի մեջ եղածները, բայց դրանք պաշտոնական գրություններ են ուրևէ խնդրի առթիվ. մինչդեռ Մագիստրոսի թղթերը մասնավոր նամակներ են, որոնց նմանները չեն պահված կամ երևան չեն եկած մեր գրականության նախորդ շրջանից։

Նա ունի գրելու իր հատուկ եղանակը։ Պետրոս կաթողիկոսին ուղղած մի նամակի սկզբում (Ա, էջ 3) գրում է. «Թէպէտ և ըստ գեղեցիկ խնդրոյ քում լուսափայլութեան, պետականդ բոլոր սրբազանից և զլուխ առաքելական, պարտ վարկանիս երկարագոյն նորագոյն բանս իմաստասիրել ծառայի քում, որով զուարճանաս իբր ղհայր ի վերայ որդւոյ, սակայն սիրելի է ինձ միշտ կարճառօտ հատանել։ Վասն զի զբոլորն մասն միակի—ուղղակի զբովանդակն պարառէ զուղղանկիւնեացն թէպէտ և մասն գոլ։ Եւ իմաստնոյն մի բան բաւական է զբիւրս բերել զկնի հետևաբար»։ Կաթողիկոսն, ուրեմն, պատշաճ է համարել, որ Մագիստրոսն ավելի երկար «իմաստասիրի» նորագույն բանները, բայց նրա համար սիրելի է եղել կարճառոտ գրելը. «Վասն զի,—ասում է նա,—ինչպես մի հատ ուղիղ գիծը ցույց է տալիս ուղղանկյան [քառակուսու] բոլոր ամբողջությունը, նույնպես և հասկացողի համար մի խոսքը կարող է ետևից իբրև հետևություն շատ խոսքեր բերել»։ Ահա նրա հորինելու հիմնական ձևը — կարճառոտ գրել, մի որևէ գիտական կամ այլ օրինակով բացատրել ասածը, մնացածը թողնել ընթերցողին լրացնելու։ Բայց նա երբեմն բավական երկար և ընդարձակ էլ է գրում։

Հետաքրքիր է վերևում ընդգծված «իմաստասիրել» բառը, որ այս գիտուն հեղինակը սովորաբար գործածում է իր գրածների բովանդակության համար։ Դա համապատասխան է հունարենի ֆիլոսոֆէ՛ո բային, որ նշանակում է՝ սեր ունենալ դեպի իմաստություն կամ գիտելիքները. գիտություն գործադրել, գիտությամբ պարապել, իր գիտանքները կիրառել, ուսումնասիրություն անել։ Եվ Մագիստրոսը միշտ «իմաստասիրում է». կարճառոտ գրելիս թե ընդարձակ՝ նա միշտ երևան է բերում իր բազմազան ծանոթությունները։ Այդ բառի փոխանակ նա գործածում է նաև «պուետիկոսել» (Ժե, էջ 50). «Երեկ զկաղնեացն իմաստասիրել քեզ ...շատացեալ... Այժմ զխնձորոցս կամիմք քեզ պուետիկոսել»։ Եվ բերում է զանազան մատենագիրներից տեղեկություններ խնձորի մասին։

Ամենից շատ սիրում է նա հին հունական առասպելները, դիցաբանությունը։ Դրանց կիրառությամբ նա նույնիսկ գերազանցում է կեղծդասական կոչված գրական դպրոցի հեղինակներից։ Հիշում է դրանք սովորաբար կարճառոտ, երբեմն ակնարկներով։ Այսպիսի դեպքերում մեզ համար այժմ երբեմն անհասկանալի են մնում նրա գործերը, երբ չգիտենք այդ առասպելների բովանդակությունը, կամ հին աստվածների

բնորոշ գծերը։ Նույնպես անշուշտ եղել են դրանք նաև Մագիստրոսի ժամանակակից հեղինակներից շատերի համար, բայց ոչ այն անձերի, որոնց ուղղել է նա իր նամակները։ Նրանք պետք է մի բան հասկանային իրենց թղթակցի գրածներից, թե չէ նրա կողմից դրված կլինեին ծիծաղելի դրության մեջ։

Բերենք դրա համար իբրև օրինակ սկզբի մասը ԻԲ Թղթի, որի վերնագիրն է. «Առ վարդապետն Սարգիս առաջնորդ ուխտին Սևանայ, քանզի գրեալ էր Գագիկ առ վարդապետս այս, եթէ եկեսցես առ իս և ի մասին գրոց պարապեսցուք»։ Գագիկը, դա Գագիկ Բ-ն է շատ երիտասարդ և գահազուրկ ժամանակ, քանի որ Մագիստրոսն իր նամակի մեջ նրան «մանուկ» է անվանում և նամակի սկզբում գրում է. «եկավ հասավ մեզ մոտ մեր առաջվա եղած [=երբեմնի] աբքայից ուղարկված մարդը, որին նա ուղարկել էր քեզ մոտ»։ Բերենք սակայն բնագիրը. «Եկն եհաս առ մեզ յղեալն ի մերոյ նախուստն ելոյ արքայէ, զոր առաքեալ առ քեզ, սրբազանդ և գերակատա՛ր բոլոր ճեմարանի Արամեան ազգին և քրիստոսական կրօնիւք և կուսական բրաբիոնիւ սաղարթացեա՛լ, որ և ինձ յոյժ ըղձալի և յոյս բարեաց։ Այլ մեր յոյժ երկիւղի եղեալ՝ տապ տագնապի տարակուսանաց հասանէր, յորժամ զառնէս համբաւոյ հրոսակք նախընթացից ալդեցին մեզ, ոչ ուղղախօսելով զԳոբռոնս Գդռիհոն մեզ ծանուցին. զոր մեր երկիւղի կասկածանաց եղեալ նախնույն այն կապտողի և յեղուզակի, ասեմ՝ ալիա՞րդ կրկին մատնեաց Տէր զտունս Մամիկոնեան ի ձեռս նորա։ Եւ ահա կարծիս կասկածանաց մեզ եղեալ յԱշտիշատայ դից դիւցազնական դիւական յարձակման, գուցէ սանդարամետականին խղեալ կապանաց, կամ եթէ իղձք կիւսոյ հմայից դիւթութեան՝ իրրու առ ի շաւղովն յարուցանեն զՍամուէլ, կամ շուայտական շիդարացն շարս շամանդաղեալ շոհանան ի վերայ մեր։ Մինչ յայսմ էաք զարհուրման, վառեալ վահանօք և սպառազինեալ անարի նիզակօք, պատախտի յուզական շիկորական որակեալ, ուշ եղեալ առ նախընթացն Ամլածին և ի մերն Պարթև՝ օգնականութեան կարօտեալ։ Իսկ յայսմ եղեալ հանդիսի, տեսի զԳդռիհոն եղեալ սա Գոբռոն, և ի Դիոնիւսեայ զմայլեալ, ատորոակ կայծակացեալ հրադիմական կարմրութեամբ, և գթեալ Գոբռոն գայթակղեալ, գաղաւիարեալ զԳդռիհոն։ Սակայն ծանոյց մեզ զքոյդ ողջութիւն, և զաւետեացն ձիր դմա շնորհելով, վերջնանահանջ առ քոյդ առաքեցաք սրբութիւն։ Եւ այս այսքան գոհհօրէն և անկոփ կարկատուն բան կատակական» (էջ 66 և հետ.)։ Այստեղ կան ակնարկներ և՛ հայոց պատմությունից, և՛ Ս. Գրքից, և՛ հունական դիցաբանությունից։ Որպեսզի ընթերցողը հասկանա այդ «կատակական» խոսքը և հաճույք ստանա դրանից, նա պետք է գիտենա, թե ո՛վ է եղել Գդռիհոնը (իսկապես Գդռիհոն, Սյունիքի իշխանը, Վահան Մամիկոնյանի հակառակորդը, որ անցել էր պարսիկների կողմը և մարտերից մեկի մեջ սպանվել)։ Նա պետք է տեղեկություն ուներ Աշտիշատի աստվածների, Սանդարամետականի, վհուկի միջոցով Սամուելի հարուցման առասպելի մասին ըստ Ս. Գրքի, այլև շիդարների

(առանձին ոգիներ են) մասին։ Նա պետք է իմանա, թե ո՛վ են «նախընթաց Ամլածինը» (Ս. Կարապետ Հովհաննես Մկրտիչն Ամլորդի), «մեր Պարթևը» (Գրիգոր Լուսավորիչ), և Դիոնիսոսը (գինու աստվածը, «ի Դիոնիսեայ զմայլեալ» =հարբած)։ Սարգիս վարդապետը հայոց պատմության և Ս. Գրքի վերաբերյալ ակնարկներն անշուշտ շատ լավ գիտեր։ Բայց նա անպայման ծանոթություն ուներ և Դիոնիսոս (=Բաքոս) աստուծու մասին։ Նա մի հայտնի գիտնական է եղել, Մագիստրոսը նրան անվանում է «գերակատար բոլոր ճեմարանի Արամեան ազգին», «մակացու բոլոր մակացութեանն» (=տեղյակ ամեն գիտության), և Գագիկը հրավիրել էր նրան միասին գրականությամբ պարապելու։

Թղթի զվարճաբանական առաջաբանից հետո Մագիստրոսը ծավրում է Գագիկին ըստ երևույթին նրա համար, որ նա կնոջից բաժանվել է ուզեցել «ըստ մերոյն Պարթևի» (այդ մասը մութն է). ապա մի ամբողջ բժշկական տեսություն է անում նա կնատության մասին՝ հիշելով հույն բժիշկներ Հիպոկրատեսին ու Սիսալիոսին, և դարձյալ հունական դիցաբանությունից պառնաս սարն և մի առասպել Դիոնիսոսի և Ապողոնի վերաբերյալ։

Վերջում նա ցանկություն է հայտնում, որ Սարգիս վարդապետն իր ուղևորության ժամանակ նախ հանդիպի իրեն՝ Մագիստրոսին, որպեսզի,— ասում է նա,— «առ միմեանս զգեղեցիկ հակառակութիւնսն ճեպեմք իմաստասիրել»։ Այդ արդեն կնշանակե, ըստ հին հունական փիլիսոփայության, դիալեկտիկայով—տրամաբանությամբ զբաղվել, որ է «դիա՛լոգոս»—տրամախոսություն վարելով վիճաբանել երկու միմյանց հակառակ պնդումների շուրջը։ Մեր «տրամաբանություն» բառը, որ այժմ ստացել է «լոգիկա» բառի իմաստը («լոգիկա» հնումն թարգմանել են «բանականն» բառով), հին ժամանակ ունեցել է «դիալեկտիկայի» վերևում դրված նշանակությունը։ Ինչպես երևում է, Մագիստրոսի և նրա ժամանակի գիտնականների համար սիրելի է եղել «տրամաբանությունը», որ նա հիշում է իր նամակների մեջ։ Օրինակ՝ ՄԳ (էջ 124) Թուղթը («Առ երաժիշտն Դանիէլ») սկսում է այսպես. «Զմտաւ ածի զՊորփիւռիփոնոս, գորմէ յիշատակեալ մեր յեռանդեանն տրամաբանութեանն, և գիտեմք, զի տարակուսանս իմ սակաւ առաջի ձեր սփռեցաւ»։ Եվ հետո պատմում Պորփյուռիփոնոսի առասպելը։

Մագիստրոսը չի մտածել գրական գործ կատարել, այնպես գրել, որ իր Թղթերը գրական-գեղարվեստական արժեք ունենան։ Նա գրում է մեծ մասամբ անսեթևեթ և անպաճույճ։ Գեղեցիկ հորինելու միակ ոճական հնարանքը, որով ազդել է ձգտում նա, է՛ համանիշների կուտակումը և բաղաձայնությունը—բաղաձայնների հանգիտությունը։ Բայց և այնպես նա կարողանում է իր նյութը սովորաբար հետաքրքիր դարձնել՝ ճարտարությամբ համեմելով այն՝ նմանություններով, զրույցներով, առասպելներով և առակներով։ Առանց դրան էլ՝ Թղթերի մեծ մասը գրավիչ ու գեղեցիկ են։ Այդ առավելապես նրանից է բխում, որ այդ փոքր երկերը մաս-

նավոր նամակներ են. գրողն իր անձը չի թաքցնում երբեք։ Նա ինքն անմիջականորեն շատ կարկառուն, կենդանի ու եռանդուն հանդես է գալիս իր հայացքներով ու գաղափարներով, իր կարծիքներով ու զգացումներով առ այն անձերը, որոնց ուղղում է իր խոսքը, կամ վերաբերմամբ այն անձերի և նյութերի, որոնց մասին գրում է։ Նա երբեմն շեղումներ է անում կամ արագ թռչում է ուրիշ խնդիրների, բայց չի մոռանում ընդհանուր կապը։ Առհասարակ նա հուսադրում է իրեն կամ իր բարեկամներին. հաճախ գովում է կամ պարսավում, ծաղրում ու հեգնում, երբեմն էլ «գոհհկօրէն անկոփ կարկատուն կատակական» խոսք է հորինում միայն ղվարճանալու համար առանց որևէ ուրիշ նպատակի։

Ուրիշ դեպքում (Ը, 29) նա լուտանք է թափում կաթողիկոսի դեմ լսբոստացած մի եպիսկոպոսի գլխին. «Զիա՞րդ սկունդն այն առ առիւծ համարձակիւր, և խուն առ հուր զմերձենալն և զհակառակելն խնդրէր, և գիշերայածու բուն առ արծիւն ի տունջեան մրցի, և շուայտացեալ շունն այն առ տէր իւր մատչի»։ Եւ ապա բացատրում է, թե ինչո՛ւ «շնական» իմաստասերներն այդպես են կոչվել։ Առանց քաշվելու նա քննադատում, դիպչում է նաև իր բարեկամ մեծերին, ինչպես, օրինակ, այն ժամանակ հայտնի եփրեմ եպիսկոպոսին, որ իր գործակիցն էր Թոնդրակեցոց աղանդի վերացման ժամանակ։ Նրան ուղղած մի նամակի մեջ, որի վերնագիրն է՝ «Յաղագս նոանց կատակական առ եփրեմ եպիսկոպոս Բչնուոյ» (ՍԸ, էջ 131), Մագիստրոսն ի միջի այլոց գրում է. «Այլ ինձ ոչ սակաւ եհաս հիացումն համարողութեանդ քո՝ երկրաչափականն համարձակելոյ մտանելդ և զմեզ շարժելդ։ Ահա զօրէն ճային Ոլոմպիանեայ կամ ասացեալն թէ ճանճն ճոխացեալ ճողոպրեալ կամեցաւ զճաշակս ի ծամելեւոց առիւծուն, ի քուն զնա գտեալ. զոր, այսր անդր ղագին գալարեալ, հողմահարիւր ի բաց մղեալ. և ոչ ոստուցեալ թռչունն արտակայիլ։ Ապա կոճեաց կեռեօքն կոփել կոկորդակոփ կասեաց ընդ ժանեօքն, և ժպտեալ. զոմանս եթող կիսամահ ընդ ոնգունսն ղերծեալք. զոր ի դատաստան մտեալ Ակկարովնեան ճանճիցն, ճենճերելով ճեմեալք ճոռոմաբանեն զճաշակաց առիւծուն. զոր ոչ ընկալեալ իրաւունսն ի Կրիտիսէն Կրետացի ասէ. «Ճանճի՛կ, ի ճոխ առիւծուց ծամելիս մի՛ մտաներ, յորժամ ի քուն մտանէ, եթէ ոչ՝ ճմլիս, ճոպճոպիս, շատ ճենճերաս. ծա՛կն, ի փեթա՛կն, ճանճի՛կ, անդ տղլա, բղլա և յարքունիսն մի՛ երթար»։ Արդ՝ ի խո՛ղն, ի խո՛ւցն, ի խրճի՛թն. անդ սաղմոսէ՛. նուագել ի ճեմարանսն մի՛ ճեպիք, եթէ ոչ՝ ճանճին պէս ճմլիք»։ Ուրեմն եպիսկոպոսին առակով հասկացնում է և անգամ պարզապես գրում է, թե՝ Քո բանը չէ համարձակվել թվաբանության ու երկրաչափության մեջ մտնելու և գիտության ճեմարանում նվագելու, այլ դու մտիր խուց, խուղ, խրճիթ և սաղմոս ասա, եթե չես ուզում ճանճի պես ճմլվել։

Մագիստրոսը կարծես շատ անդամ առիթ էր փնտրում՝ իր հմտությունը, իր ունեցած գիտանքները ցուցադրելով զգալի դարձնել իր գիտական առավելությունները։ Այսպես, օրինակ, Սասունի նշանավոր իշխան

Թոռնիկ Մամիկոնյանին (որ իր փեսան էր) գրած նամակների մեջ (ՀԴ—ՀԷ, էջ 212—225)։ Այս իշխանը խոստացած է եղել կարմրախայտներ ուղարկել նրան, բայց ուշացրել է։ Մագիստրոսն առաջին նամակով շատ ուժեղ ծաղրում է նրան՝ հիշելով մի քանի առասպելական ձկներ կամ ձկնակերպ գազաններ և ասելով, թե ինքը քաղցած մնալով սպասում է մեծ խնջույքի և ձկնից պատրաստած կերակուրների. «Սապէս կամելով մեր զյօշուածս կիտին, զոմանս ի շամբուրս հարեալ ի վերայ Հեփեստեայ, զոմանս ի սանի Պոսիդոնիւ ամոքեալ, և զոմանս ի տապակի տրամադրական մակեղուտ ելով ելլադացի իւղովք, և զոմանս ծպտեալ ի մէջ Դիայ, պարապատեալ արմանօք, քառանկիւնի և ուղղանկիւնի չարամանեալ ըմբոն, և զոմանս գծօրէն կտապրս, և դարձեալ խորտակեալս մանրագոյն պարսկական խորտիկս, և զայլս որակացեալս ոսկէտեսակ քրքմով, ռեհին մակաւասար արկեալ և ոքսեմելի։ Եւ այսոքիկ յանհատոն վարին զյատուկն յանուանէ թուել»։ Թոռնիկ Մամիկոնյանն անցած է եղել հունադավանության, որ չէր արգելում պաս օրերը ձուկ ուտել։ Այդ ծաղրելով՝ Պահլավունի իշխանն իր նամակի վերջում գրում է. «Բայց դու Մամիկոնեա՛ն, որ համոզեան հաւանեացար Ղեւոնեան ընդարձակագոյն տօմարի, ո՞ ոք ի քէն այժմ կարասցէ կորզել զուղակս, զոր Պոնտոս և Ովկիանոս ոչ հանդուրժէ կերակրել. որ և զայլոց ոմանց պատրաստեալ կերակուր յափշտակել փութայք՝ զթռչնոց և զգեռնոց, որպէս դխեչս և զքառաձէտս և զօձասո՛նդրս և զկրայակիրոս և զայլ զբիւրս ի բզզոց անզարդ զեռունս։ Բայց դու փութա՛ զխոստացեալն առաքել, թէ ոչ՝ զկնի այսմ նամակի ճահեցուցից քեզ ճարտասան բանիւք ճայթմունս առասուեթան, զի ոչ քաղցրասցի ի կոկորդս քո պարարտութիւն կարմրախայտիդ. զի ոչ միայն զայդ, այլ և զամենայն զեռունս և զբզիզան և զճճիս, զոր յուրբաթու ճաշակեալ է քո, տաղտկացեալ ախոնդեացդ զօրէն Կռոնեայ ժայթքեալ արտաքս բերցես»։ Վերջապես Մամիկոնյանն ուղարկում է կարմրախայտները և խնդրում է նրան «իմաստասիրել յաղագս ձկանց»։ Եվ նա գրում է առասպելական ձկների կամ ձկնակերպների մասին զրույցներ՝ թվով տասներկուսից ավելի, և դեռ վերջն էլ կցում է. «Յայսցանէ յոլովագոյն ինձ մակագրել քեզ՝ ոչ դժուարին է»։

Դարի արդեն փոխված ոգու տեսակետից աչքի է ընկնում ԼՋ Թուղթը (էջ 89), «Առ Հնձացին Գրիգոր Տելետիս սակս որոյ ել ի վանաց և չոգաւ ի լեառն Վարագայ»։ Սա այն կրոնավորն է, որի մասին խոսվեց վերևում։

Ինչպես երևում է, նա, նախքան Կարս ուղարկվելը, թողել է վանքը և գնացել Վարագա լեռը՝ միանձնական կյանք վարելու։ Մագիստրոսն այդ առթիվ «իմաստասիրում է» մի շարք լեռների մասին և հետո դժգոհում է, որ «սակս Աստուծոյ» փախչում են լեռները, մինչդեռ ինքը Հիսուս լինում էր ժողովրդի մեջ, և «ոչ միայն ի լերին կարող եմք զաստուած լանն ի մեզ ընդունել, այլ և յամենայն տեղւոջ»,—ասում է նա, և գրությունը վերջացնում է այսպիսի մի ծաղրով առանձնական ճգնավորների. «Այլ եկն առ մեզ նամակ յանտառէ կեղերջական [=գանգատական]

որտունջ տոչորեալ սրտի՝ յեղանց, յեղջերուաց և ի բոլոր գազանաց, եթէ ելեալք ի դրախտէն՝ զմեզ ի մերոյն սեփականէ արտաքս հանին. իսկ Դաւթայ մեզ ի լերինս հրամայեալ կալ. այժմ և անտուստ հալածենն»։ Երևի արտագրողներից մեկը դրել է այս բացատրությունը. «Հանաք և տնազ առնէ զգնացողս ի լեառն, ասելով անբանից, թէ ի դրախտէն հանած վարածքն եկին լցուան ի լերինս և զմեզ պէհուզուր անեն ի բնակութիւնս մեր»։ Գրիգոր Նարեկացու օրով մի բարեպաշտ մարդ չէր կարող «լեռնականներին», այսինքն լեռը քաշված ճգնավորներին, այպն ու ծանակ անելով՝ հավասարեցնել վայրենի անասուններին ու գազաններին։ Դա նոր աշխարհայեցության արտահայտությունն էր, — որ երևում է մինչև անգամ Թոնդրակեցիների դեմ գործող Գրիգոր Պահլավունու Թղթի մեջ։ Բայց այդ ազանդի բարձման ժամանակ էլ նա ցույց է տալիս մեղմություն։ «Ոչ զոք վնասեցաք մարմնական պատուհասիւք,— գրում է նա պարծանքով,— թէպէտ և յօրէնսն հրամայէ զվերջին պատուհասն կրել նոցա. որպէս և նախ քան զմեզ բաղում զօրավարք և պետք ի սուր սուսերի մատնեցին զնոսա և անողորմաբար ոչ խնայեցին ի ծերս և ի մանկունս, որպէս արժանն էր. նաև մեր քահանայապետք ի կիզումն դիմաց և ի դրոշմ աղուեսակերպ» (կէ, էջ 162)։ Այսպես վարվել էր հենց Մագիստրոսի օրով Սարգիս կաթողիկոսը։

5. Գրիգոր Մագիստրոսի լեզուն, *առանձնապես Թղթերի և մի քանի չափածոների, իրավամբ համարվել է ընդհանրապես խրթին և շատերին անմատչելի։ Այդ առաջանում է առավելապես այն հատկությունից, որ նա գործածել է բազմաթիվ հունաբան կազմություններ բառեր, որոնք չեն ընդհանրացել մեր նոր լեզվի մեջ, ուստի այժմ մեզ համար անհասկանալի են մնում։ Այդպիսի բառերը ծագում են կամ հին հունաբան գրողներից, կամ Մագիստրոսի իրեն կազմածներն են ըստ հունարենի։ Մեր նոր լեզուն չի յուրացրել այդ բառերը, զի դրանք գտնվում են փիլիսոփայական և այլ մասնագիտական գրքերի մեջ, որոնց ընթերցումն և ուսումը կարևոր չի համարվել մեր նոր դպրոցներում։ Իսկ Մագիստրոսը սիրում է հենց այդպիսի բառեր հաճախությամբ հորինել։ Դրանց փոխանակ մեր նոր լեզուն այժմ ունի ավելի հարմարավոր բառեր, կամ եթե չունի էլ՝ դրանց կիրառության կարիքը չի զգում։ Կան, հարկավ, և այնպիսինները, որոնք բոլորովին ավելորդ են, օրինակ՝ մակացութիւն=գիտություն, մակացու=գիտակ, գիտցող, տեղյակ*[8]։

---

8 *Այս բառը լավ օրինակ է, թե ինչպես երբեմն հունարենին հետևելով բառեր են կազմել. դա պիտի լինի՝ մակ—կացութիւն, մակ—կացու (ինչպես վերա-կացու), բայց կ տառերից մեկը դուրս է ընկել։ Իսկ մակ-կացութիւն կազմված է ըստ հունարենի եպիստէմէ բառի (եպի=մակ, վրա. ստէմէ=կացութիւն), որ նշանակում է՝ գիտենալը, տեղեկություն, ծանոթություն, մի բանի վերաբերյալ գիտություն։ Նույն կազմությամբ «եպիստամայ» բայը նշանակում է՝ մի բանի վրա կալ (կանգնել), ապա փոխաբերաբար՝ ճանաչել, գիտենալ, տեղյակ լինել. ինչպես հին հայերենում «կամ ի վերայ» նշանակում է՝ վրան կենալ, կանգնել, ապա՝ հասկանալ, հասու լինել։*

Այս հեղինակի լեզվի մթնոլորտի մի պատճառն էլ այն է, որ նա գործածում է երբեմն բառերն այնպիսի նշանակություններով, որոնք չափազանց հնացած են և գրաբարում անգամ անսովոր են, օրինակ՝ «տախտակ» բառը «գիրք» բառի իմաստով։ Նրա գրածների մեջ կան նաև բազմաթիվ հնացած կամ գավառական բառեր, որոնք ուրիշ հեղինակների մեջ չեն պատահում, և որոնց նշանակությունը դժվար է իմանալ, օրինակ՝ «ատինել», «շոհանալ»։ Շարահյուսության վերաբերմամբ էլ կան շատ անսովորություններ—բազմաթիվ շրջումներ, նախդիրների ու հոլովների այնպիսի գործածություններ, որոնք հեռու են մեր կլասիկ հայերենից, որին վարժված ենք։ Իբրև մասնավոր նամակներ՝ երբեմն անփույթ են հորինված, ուստի կան պակաս բառեր, կիսատ մնացած խոսքեր, որոնց թերությունը, սակայն, կարող է բնագրի աղճատումից ևս առաջացած լինել։ Մի կողմ թողած յուրահատուկ մտածության ձևերը, որոնք իսկույն հասկանալի չեն լինում, պետք է ասել, որ Մագիստրոսի գրածների մթնոլորտը ծագում է նաև նյութի նորությունից և անհասկանալիությունից։ Եվ վերջապես՝ նա հաճախ պատասխանում է ուրիշների գրությունների, որոնց բովանդակությունը մեզ անծանոթ է. ուստի Մագիստրոսի ակնարկներն այդ մասին մեզ անհասկանալի են[9]։ Դիտավորյալ կերպով խրթին է գրված նրա մի Թուղթը (Զէ, էջ 238) «Առ հեղգս յուսումն իմաստից», որ հայտնի է իր սկզբի «Գամագտական» բառի անունով։ Այդ արդեն առանց իր բանալին ունենալու հնարավոր չէ հասկանալ։

6. Չափածո գրվածքները[10]։— Գրիգոր Մագիստրոսի մեծ գրվածքը ոտանավորով՝ սովորաբար կոչվում է «Հազարտողեան», կազմված է 1016 տողից։ Ինքը հեղինակն առաջաբանի մեջ («Պատճառ ոտանաւոր բանիցս») պատմում է դրա ծագման մասին։ Նա 1045 թ. Կոստանդնուպոլսում շատ օրեր զանազան խնդիրների մասին զրույց է ունենում մի արաբ հմուտ բանաստեղծի հետ։ Սա գովում է իրենց Կուրանը՝ ասելով, թե դա ոտանավոր է «միայօդ չափաւորութեամբ գծի», մինչդեռ Ավետարանն այդպես չէ։ Գրիգոր Մագիստրոսը դրան առարկում է ասելով. «Տաղասացութիւնք Արաբացւոցն սովորաբար վարժաբանութեամբ մրցեալք միայօդ աւարտեալ գծի. զոր դուք կափայ անուանէք։ Սակայն թէ համարիս զայս մարգարէական տեսութիւնս՝ զոր Մահմէտ քոյ զքառասուն աւ

9 Կ. Կոստանյանցն իր ժամանակին շատ կարևոր և նշանակալից գործ է կատարել հրատարակելով Գր. Մագիստրոսի «Թուղթերը» բազմաթիվ ծանոթություններով հանգերձ. բայց հրատարակությունը դեռ բավարար չէ։ Պետք է ամեն մի նամակի բնագրի համար ավելի մեկնություններ անել, մութ ու խրթին կտորները լուսաբանել, ինչպես և Գր. Մագիստրոսի գործածած դժվար հասկանալի բառերի ու դարձվածների համար մանրամասն բառարան դնել գրքի վերջում։ Ապա ձեռագրական այլ ընթերցվածները պետք էր դնել ամեն մի էջի ներքևում, որպեսզի կարելի լինի կարգալիս անմիջապես նկատի ունենալ։

10 «Տաղասացութիւնք Գրիգոր Մագիստրոսի Պահլաւունւոյ», Վենետիկ, 1868։ Գր. Մագիստրոս, Թղթեր, էջ 31 և հետ., 294 և հետ.։

գրեաց, քառօրեայ զծագրեցից քեզ. յԱդամայ սկսեալ մինչև ցգալուստն կրկին այնմ որ ստեղծ զնա. և մատենագրեցից առաւել ևս հրաշալի միով գծիւ՝ յօդաւորեալ նուիրն զոր դովէիր զնա»։ Իսկ նա բազում գրաւս ի մեջ եդեալ. «Թէ կարասցես առնել դու զայդ, յայն ժամ լինիմ և ես քրիստոնեայ»։ Մագիստրոսը չորս օրվա մեջ կատարում է իր խոսքը, գրելով «Հազարտողեանը», որի վերնագիրն է՝ «Աւ Մանուէէ»։

Այդ երկը մի շատ համառոտ բովանդակություն է Ս. Գրքի. վերջին մասի մեջ (էջ 70—73) խոսում է նաև հայոց եկեղեցական պատմության մասին՝ Սուրբ Գրիգորից մինչև հայերեն գրերի գյուտն ու թարգմանիչները.

Կամի՛մ աստ քեզ ասել յառաջ քան զայս ըզՊարթևին,
Զսրբո՛յն մեր Գրիգորի և ըզՀայոց Լուսաւորչին,
Քաղաքաւրն Պահլաւին և ըստ ազգին Արշակունին...
Արդ զիս յա՛յս տոհմէ դիւսեմ ազգաւ Պարթև իմ հայրենին...

Ամբողջը ոչ թե բանաստեղծական հղացման, այլ լոկ սառն արվեստի արդյունք է, այն էլ շուտափույթ հորինված։ Սակավ են գեղեցիկ կտորները. սրանց մեջ լավագույնն է վերջին դատաստանի զգածված նկարագիրը սովորական մոտիվով.

Ի չորից հողմոց երկնից ձայն արձակէ զԳաբրիէլին,
Եւ զայլոցն հրեշտակաց քառակողմեան հրաւիրողին։
Ես անկեալ կամ դողալով, սարսափելով վասն ատենին,
Յայնմ աւուր ահեղ մեծին և ի վերջին հրապարակին,
Մինչ երկինքըն գալարին և լուսաւորքըն խափանին,
Աստեղքըն շիջանին և արեգակըն խաւարին,
Լերինքըն հուրբ ծախին, երկիր դողայ, վէմք երևին,
Հրեղէն կամարն որ կայ՝ երկնից վերև այն գալարին.
Ելանէ թնդիւն հրաշից և ցոլանայ ջոկ սրօբէին...

Դատաստանի աթոռի առաջ գալիս կանգնում են բոլոր մարդիկը՝ հարություն առնելով.

Անդ ոչ բարեխօսել, ոչ մեծութիւն թէ պատկառին...
Ոչ տո՛ւր կայ, ոչ առնուլ, բանըն կապած է հռետորին,
Ոչ արքայ, ոչ թագաւոր, իշխան չկայ յայն համարին,
Ոչ հզօր, ոչ զօրաւոր, ոչ մարտական պատերազմին...

Ինչպես Գրիգոր Նարեկացին՝ Գրիգոր Մագիստրոսն ևս դողում է, երևակայությամբ լսելով դատավորի խոսքը.

Արդ զայս լուեալ դողամ և սարսափեմ հոգեվարին,
Պատէ զիս արհաւիրս և տատանիմ փ տապանին,
Եւ արդ կամ ահաբեկեալ յորժամ յիշեմ զօր վախճանին,

Եւ սո՛ւտ եմ զմբաղած ի կենցաղումս ցաւագին,
Սուտ խաբած չար պատրանօք և մեծութեամբ որք սովորին...

Գրիգոր Մագիստրոսը չի օժտված քերթողական տաղանդով, այլ մի-այն վարժ ու հմուտ տաղաչափ է. ուստի և նրա «Հազարատողեանն» «և մի քանի ուրիշ ոտանավոր գրվածքներն արժեք ունեն միայն տաղաչա-փական տեսակետով։ Գրիգոր Նարեկացին արդեն դարի սկզբում իր Ող-բերգութեան մեջ, հետևելով ողբասաց կանանց, գործածել էր հանգը. բայց առաջին անգամ Գրիգոր Մագիստրոսն է ընդարձակ չափով կիրա-ռում այդ, հետևելով արաբական կափային (ոտանավորի հանգ, այլ և հանգավոր ոտանավոր)։ Նույնահանգ են հորինվում քերթվածի բոլոր տողերը։ Դարձյալ՝ մեր հին մեծ բանաստեղծի երգերի մեջ կան երկու-սը, որոնք ոգված են մեծ տողերով, բայց Գրիգոր Մագիստրոսն է առաջին անգամ այդ բանեցնում վիպական գրվածքի համար և զարգացնում հանգով։ Այդ ոտանավորը մի սովորական, ամենից երկար չափն է. տողը նորմալ ձևով կազմված է 16 վանկից, բաժանված չորս անդամի. չորս-չորս վանկերով (4+4+4+4), յամբական բարձրացող ռիթմով։ Տողերի առաջին անդամները, սակայն, մեր հին բանաստեղծները մեծ մասամբ կազմում են 1—3 վանկերից, որոնք առանձնապես շեշտվելով երկարում և հավասարեցվում են չորս վանկի, այսպես, օրինակ, «Հազարատողեանի» սկիզբը.

Մե՛ծ են գործ / *աստուածային,* || *ըսքանչելի* / *նորա բանին,*
Հրաշալի՛ / *անպատմելին,* || *յամենայնի* / *զարմանալին,*
Այն որ նստին / *յերկինս երկնից* || *ի բարձրութեան* / *սերովբէին,*
Լուսո՛վ / *ինքնամատոյց,* || *պարածածկեալ* / *անքննելին։*
Լո՛յս / *ինքն առաջին,* || *լուսոյ բերող* / *երկրորդ մասին։*

Տողամիջի հատածն անհրաժեշտ է, բայց ոչ՝ տողամիջի ավելի հան-գը, որ մեկ-մեկ, երբեմն և հաճախ, գործածում է Մագիստրոսը[11]։

7. Մագիստրոս և Պետրոս Գետադարձ։—*Մեր այս գրողը մի քերթ-ված ունի՝ ուղղած առ Արշարունի Պետրոս կաթողիկոսը՝ «Յաղագս խաչա-նշան գաւազանին զոր ընծայեաց տեառն Պետրոսի Հայոց կաթուղիկոսին, ասացեալ խորհուրդ խաչին»։ Սրա վերջում նա իրեն հատուկ մութ լեզ-վով մանրամասն բացատրում է այս ոտանավորի կազմությունը և՛ ոտք-երի, և՛ հանգերի վերաբերմամբ. «Հաղներգութիւնս այս... տաղ է հոմե-րական քաջ ոլորեալ, և սա տաղ դիւցազնական չափաբերեալ ըստ Յլլե-նացւոցն»։ Վերջը նա ավելացնում է, թե դա «մեծի տեսութեան ունի պէտս, և որք ոչն են հետևեալ տրամախոհութեանս՝ այս մեծի լսողու-թեանս, զոր հազիւ հազ ոք կարասցէ ներուշեղագոյնս առնել, մի՛ այսմ*

11 Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տաղաչափություն*, Երևան, 1933, էջ 209 և հետ.։

հետևեսցի ճեմարանի»։ Եվ ապա դիմելով կաթողիկոսին՝ կցում է. «Այլ քեզ որ ծայրագոյնդ ես լոյս, և ղամպարափայլ ջահավառութեամբ պայծառանաս և լուսաւորես, որ քեզն հետևին լուսափայլ շաւղաց. այլ ինչ յոլտնի է։ Վասն զի ըստ սրովբէականն գերունակութեան՝ մակպետական հեղումն ի ստորակայեալսն առ ի ծայրագոյն արփւոյն փեռեկի, սապէս և քև ի քո հաւատացեալ հօտ։ Ողջ լեր, փոխան Քրիստոսի»։ Թվում է, թե Պահլավունի իշխանը բիզանդական հաճոյախոսություն է անում։ Նա այդ կաթողիկոսին ուղղած թվով ինը թղթերի մեջ ևս չափազանց բարձրացնում է նրան։ Ինչպես երևում է, այդ հոգևոր պետը ոսկեսիրության հետ նաև գիտուն և ուսումնասեր է եղել, դրա համար և Մագիստրոսը միշտ առանձին սիրով ու հարգանքով է վերաբերվել նրան. «Որ ամենայնի ես բաւական,— գրում է նա մի թղթի մեջ (Ա, 3),— և զանսպառն հեղուս գիտութիւն և շնորհ»։ Այս կաթողիկոսը եղել է նաև հոգևոր երգիչ. շարականոցների ձեռագիրները նրան վերագրում են մի շարք շարականներ. «Պետրոս Գետադարձն՝ զՀանգստեան շարականսն, զՄարտիրոսացն, և զբազումս ի Մանկտեացն» (ասաց)[12]։ Այս ավանդությունն անշուշտ միայն այն ունի պատմական, որ այդ բազմաթիվ երգերի մեջ կան նաև նրա հորինածները, թե որոնք՝ այդ մենք այժմ չենք կարող իմանալ։ Այդ կաթողիկոսը, որ բռնելով հույների կողմը՝ բարի համբավ չի թողել Անին բիզանդացիներին հանձնելու պատմության մեջ, այս քաղաքի անկումից հետո ստիպված էր մինչև կյանքի վերջը տարագիր մնալու իր հայրենիքից, նախ բիզանդական կուսակալների հրամանով այս ու այն կողմ տարվելու, և ապա Կ. Պոլսում ու Սեբաստիայում ապրելու իբրև պատվավոր կալանավոր։ Կյանքի վերջում նա դառն փորձով զգացել է իր աշխարհային մեծության ու փարթամության ոչնչությունը։

Հանգստյան շարականները մասամբ համապատասխանում են նրա այդ անձնական վիճակին, բայց շատ ընդհանուր ձևով[13]։

Ոսկի եղեալս անպիտանացայ,
Գեղեցկայարմար շինուածոյս քակտումն.
Իմաստունս յիմարեցայ
Ի յալեաց մեղաց յոր ընկղմեցայ...
Կոչողն եհաս վերին կոչողին,
Կոչնատէրն ահեղ, կոչողն ահաւոր.
Դատաւորն անաչառ, դատաստանն արդար,
Հրեշտակք անողորմ դատեն զմեղաւորս[14]։

Ուրիշ երգի մեջ քերթողը ննջեցյալի բերանով ասում է[15].

---

12 «Շարական հոգևոր երգոց», էջմիածին, 1861, էջ Բ։

13 Կ. Կոստանյանց, Տեր Պետրոս Գետադարձ, էջ 47 և հետ.։

14 «Շարական հոգևոր երգոց», էջ 684։

15 Անդ, էջ 690։

Պակասեցայ յաղգատոհմէ,
Լքեալ Թողի զկեանս աշխարհի.
Եւ մարմին ունայնութեան
Դարձաւ ի հող ուստի ստեղծաւ։

Դրիգոր Մագիստրոսն էլ հորինել է մի հոգևոր երգ՝ «Ձորս ըստ պատկերի քում ստեղծեր»[16]*։*

8. Մագիստրոս և Վահրամ—Գրիգոր Վկայասեր:—*Ամենի կարևոր է իր որդի Վահրամին ուղղած նրա մի ոտանավոր գրվածքը (ՁԴ, էջ 234. «Լուաք թէ եկն»...), որի մեջ առաջին անգամ կիրառված է մեր 14-վանկանի (4+3||4+3) չափը, որ բավական սիրված է 19-րդ դարում և հետո*[17]*։*

Այս քեզ Բէլայն հաս հանդէս և Թորգոմեանըն Հայկայ,
Աճապարեա և փութա՛, զի ես Կադմեանն Արամեան։

Ոտանավորների վերջում հայրը դիմելով իր որդուն՝ գրում է. «Ազէ՛ առ ընթերցի՛ր զարհեստ ոտանաւորացդ. դիւցազնական է տաղդ, քաջ ոլորեալ, և տաղ պղպջուն, օղուն և դևղուն, եռակի վանկօք շարակայեալ... իբր առ մանկականսն քեզ կամեցայ յըստակ վճիտ շարադրել զայսոսիկ, զի մի՛ անկարելի ոմանց թուեցեալ, արտավազիկ արշաւանօք փախիցեն, այլ դիւրալուր եղեալ թերևս լսիցեն. զի սովորեալ կաթին, կարացեն վկնի այսր զմերս փութացուցանել բանաստեղծութիւնս, զի զկատարեալն կեբակուր տացուք իբր զքաջ խոհակեր»։

Գրիգոր Մագիստրոսի դիտավորությունն է եղել, ուրեմն, իր որդուն և ուրիշներին մի օրինակ տալ, որպեսզի նրանք իրեն հետևելով զարգացնեն մեր չափածո բանաստեղծությունը։ Նրա որդի Վահրամից, սակայն, չեն մնացել չափածո երկեր։ Մագիստրոսի մի գրությունից՝ «Առ վեստն Վահրամ որդին իւր»՝ իմանում ենք, որ նա իր որդուն նույնպիսի ուսում է տվել, ինչպիսին ինքն առել է պատանեկան հասակում. «Յատուկեցի կրթմունսն, մինչ տակաւին յանտիական տիս հասեալ, ի տէրունեան ճեմարանին զարգանաս։ ...Առաւսանութիւնս Պիւթագորեան և Պղատոնական և Ստագիրացւոյն [=Արիստոտելի] իբրու զսահինս դիեցեալ, մինչ ի տարերս տակաւին տարբերէիր, տենչացեալ ըղձալի քեզ արբուցանել անդանդաղ... և փոխարէնս հայցեմ ի քէն զաւանդութիւնն մեր ոչ մոռանալ երբէք և զփոյթ սիրոյն առ Քրիստոս աստուած մեր և զլոյս ճրագի նախնւոյն մերոյ ոչ շիջուցանել, զպարթևին ասեմ քոյոյ հաւուն» (ՁԴ, էջ 235 և հտն.)։

Հոր մահից հետո Վահրամը նշանակվում է Հոր Հաջորդ՝ Միջագետքի, Տարոնի և մյուս մարգերի կուսակալ։ Բայց նրա մեջ կրոնական ոգին

---

16 *Անդ, էջ 495։*

17 **Մ. Աբեղյան,** *Հայոց լեզվի տաղաչափություն, էջ 224 և հտն.։*

ավելի զորեղ էր. ուստի նա պաշտոնը թողնելով բաժանվում է կնոջից և դառնում կրոնավոր՝ Գրիգոր անունով։ Ապա նրան, հակառակ իր կամքի՝ 1065 թ. ընտրում են կաթողիկոս. բայց նա երկար չի զբաղվում կաթողիկոսական գործերով, այլ ուրիշներին թողնելով իր պաշտոնը վարել, ինքը պարապում է գրական գործունեությամբ։ Նա գնալով Կ. Պոլիս, Եգիպտոս և Պաղեստին՝ հավաքում և հունարենից ու ասորերենից հայերեն թարգմանում է կամ թարգմանել է տալիս հատկապես վկայաբանություններ, դրա համար կոչվում Գրիգոր Վկայասեր։ Մինչև կյանքի վերջը (վախճ. 1105 թ.) նա շարունակում է իր սիրած գործը՝ թարգմանելով կամ թարգմանել տալով նաև ճառեր ու մեկնություն։

«Երկրորդ Մեսրոպ մեզ երևեալ,
Զգիրըս բազումըս թարգմանեալ,
Առ ի Յունաց և յԱսորւոց
Ճառըս սրբոց վերաբերեալ»,—

այսպես է գրում Ներսես Շնորհալին նրա մասին իր «Վիպասանութեան» մեջ 1121 թվին։

Այսպես՝ նա, Վահրամը թեպետև բանաստեղծ չի դառնում, ինչպես կցանկար իր հայրը, բայց ջանացել է լրացնել մեր վկայաբանական թարգմանական գրականության թերին։ Նրանից առաջ և հետո ուրիշներն էլ աշխատել են նույն գործի վրա. թե հատկապես ո՛ր վկայաբանություններն է նա թարգմանել՝ այդ հայտնի չէ։

ԱՐԻՍՏԱԿԵՍ ԼԱՍՏԻՎԵՐՏՑԻ

1. Ընդհանուր դրությունը։— Գրիգոր Նարեկացու Ողբերգության հրատարակությունից մի քանի տարի անգամ չանցած՝ սելջուկյան թուրքերը սկսում են հրոսել Հայաստան։ Նրանք քանդում, հրդեհում են ամեն ինչ։ Շուտով հայոց բաղմաթիվ իշխանությունները միմյանց ետևից կործանվում են։ Նրանք փոխանակ միահամուռ ուժերով դեմ դնելու արտաքին թշնամիներին, պառակտված են մնում։ Մյուս կողմից բիզանդական կայսրները հետզհետե ընդարձակում են իրենց իշխանությունը Հայաստանում, տիրելով վասպուրականին, Անու թագավորությանը և ուրիշ կողմերի։ Նրանք, փոխանակ հին կայսրներին հետևելով՝ երկրի պաշտպանությունը թողնելու տեղական իշխանություններին՝ իրենց նշանակած սպարապետի գլխավորությամբ, անմիտ քաղաքականությամբ դեպի արևմուտք, Փոքր Ասիա և Միջագետք են հեռացնում հայ ազնվականությանը, որ կովող տարրն էր, երկիրը թողնում են առանց պաշտպանության սելջուկյան վայրենի հրոսակների դիմաց։ Սրանք առնում, սրի մատնում, ավերում են Արծն, Անի, Կարս, Մելիտինե և այլ հարուստ ու շահաստան քաղաքները. իրենց արշավանքները և ասպատակությունները կրկնում են պարբերաբար։ Հայաստանի բնակչությունը կոտորվելով և

գերվելով ու տեղափոխվելով պակասում է։ Ոչնչանում է քաղաքացությունը կամ ազնվականության հետ երկրից դուրս է հալածվում, ցրվում։ Հենց այդ շրջանում սկիզբն է առնում հայ ազգի երկար դարեր տևող եղերական վիճակը՝ տառապել ու ցրվել բնիկ երկրից դուրս՝ «զորս ո՛չ սուր սատակեաց՝ ցրուեցան զօրէն մոլորական աստեղաց»[18],—գրում է Արիստակես Լաստիվերտցին։ Բիզանդական տիրապետությունը և սելջուկյանների արշավանքները տակնուվրա են անում Հայաստանը, և նոր քաղաքակրթվող երկիրը ետ է ընկնում։ Երկիրը հանգստություն չի ունենում։ Ավերվում են առանձնապես երկրի հարավային կողմերը և կենտրոնական մասը, ուր ծաղկում էր ուսումն ու գիտությունը։ Այստեղ կազմվում են մահմեդական իշխանություններ։ Ավերմունքները շարունակվում են, մինչև որ թուրքերը Ալփասլան թագավորի օրով տիրում են Հայաստանին և դիմում դեպի Փոքր Ասիա։

Անշուշտ ոչ բոլոր վայրերը Հայաստանում միաժամանակ ենթակա են եղել լիովին ավերման։ Ուսումն ու գրականությունն ապաստան են գտնում պակաս կուլտուրական վայրերի վանքերում, հյուսիսային և արևելյան Հայաստանի անտառապատ, ավելի պաշտպանված լեռների վրա, ուր մնում են հայ իշխանություններ, ինչպես և հեռավոր Սև լեռների անառապատներում, հետագայում նաև Կիլիկիայում, ուր կազմվում է մի նոր հայ իշխանություն։ Այդ վայրերում էլ ազնվականներն անընդհատ կռիվների մեջ լինելով՝ միջոց չունեին ուսման վրա մտածելու. ուստի գրականությունը մնում է դարձյալ մենաշնորհ վանականների։ Իսկ սրբանք պարապում են դավանական վեճերով, մեկնություններով, ներբողներով կամ ժողովում ու թարգմանում են, ինչպես տեսանք, վկայաբանություններ ու ճառեր։ Հայ կյանքը չի շարունակում իր բնական շավղով արագ առաջ ընթանալ։ Քաղաքական հանգամանքներն այնպես շուռ են տալիս ամեն շինարարական գործ, որ աջող սկսված մտավոր շարժումն ու փոխված ոգին շուտով չեն զարգացնում մի նոր տեսակի փայլուն գրականություն։ Առանձնապես բանաստեղծությունը դադարում է արվեստավոր զարգացումից, և մինչ սպասելի էր, որ հոգևոր զորեղ քնարերգությունից հետո ծաղկեր վիպական բանաստեղծություն, բարգավաճեր մի նոր կենսուրախ բանաստեղծություն, մենք երկար տասնամյակներում ոչինչ չենք գտնում։ Ժողովրդական ու գուսանական սիրո ու պարի երգը չի բարձրանում իր բնական դրությունից. գոնե մինչև այժմ հայտնի չեն եղել Գրիգոր աշխարհականի կամ հոգևորականի հորինած այդպիսի երկեր։

2. Պատմագրությունը։—*Այս աղետալի շրջանի կարևոր երկը Արիստակես Լաստիվերտցու գրած Պատմությունն է*[19]; կենսագրական տեղե-

---

18 Ար. Լաստիվերտցի, *Պատմութիւն*, էջ 1—2։

19 «*Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերտցւոյ վասն անցիցն անցելոց ի յայլասեռն ազգաց որք շուրջ զմեօք են*», Թիֆլիս, 1912։

կություններ չունենք այս հեղինակի մասին։ Պետք է կարծել, թե Լաստիվերտը, որտեղացի է նա, գտնվել է Կարին գավառի Արծն քաղաքի մոտերը, քանի որ նա դրա համար գրում է «քաղաքս մեր»[20]։ Իր գրքից իմանում ենք, որ նա ապրել է 11-րդ դարում, զի նա իրեն ականատես է դնում շատ դեպքերի, այսպես, օրինակ, 1026 թ. Վասիլ կայսրի դեմ ծագած ապստամբության մասին գրում է. «զայս հաւաստեաւ գիտեմ, և աչօք իմովք տեսի»[21]։ Սմբատա լեռան վրա 1048 թ. տեղի ունեցած մեծ կոտորածի, ապա և Արծնի ավերման մասին գրում է. «Զոր աչօք մերովք տեսաք և ընդ փորձ չարեացն անցաք, զայն միայն գրեցաք»[22]։ Պատմությունը սկսում է Տայքի Դավիթ Կյուրապաղատի մահից հետո, երբ Վասիլ կայսրը (Բարսեղ Բ, 976—1025 թ.) իր թագավորության քսան և հինգերորդ տարում (976+25=1001 թ.) գալիս է տիրելու նրա կալվածներին, և ապա կայսրների հաջորդությունը պահելով վերջացնում է Ռոմանոս Դիոգենես կայսրի մահով 1071 թ., հիշում է և Ալփասլանի մահը 1072 թ.։

Նրա գրքից շատ կարևոր պատմական տեղեկություններ ենք ստանում Հայաստանի մասին այդ շրջանում, որի ընդհանուր դրությունը գծագրվեց վերևում։ Ուրիշ առիթներով էլ բերված են կարևոր նյութեր այս պատմագրից։ Այստեղ այսքանը միայն պետք է շեշտել, որ նա առանձնապես մանրամասն պատմում է հույների և սելջուկյան թուրքերի գաղանությունների մասին, նրանց կատարած սրածությունները ու ավերածությունները, երկրի ամայացումը։ «Նոքա իբրև զգայլս գիշախանձս՝ որք հանդիպին հօտի՝ որոյ ոչ գուցէ հովիւ, զի ոչ թէ իւրեանց կերովն միայն շատանան կոտորել, այլ զամենայն ջանան,—նոյնպէս և ի Պարսից եկեալ զօրքն ոչ թէ աւարաւ յագենային, այլ անյագ քաղց մերոյ սատակմանն ունէին. զի զոր աչօք տեսանէին, անհնար էր նմա ի ձեռաց նոցա պրծանիլ, մեծ բարեգործութիւն հաշուելով զայն»[23]։ Այսպես խիստ է բնորոշում Պատմիչը նրանց գազանությունները. նրանք չեն բավականանում, «ըստ իւրեանց արիւնարբու բարուցն», մարդկանց կոտորելով, այլ սիրում են չարաչար տանջել բոլորովին անմեղ մարդկանց։ Բերենք այստեղ երկու օրինակ։ «Իսկ զթանձրամարմինսն և զհարստակողսն յերկիր ի գուռս արարեալ, և պարզեալ զձեռսն ի ցիցս վարեալս՝ ի գետինն պնդէին, և կորզեալ զմորթն եղնգամբքն հանդերձ յայսկոյս և յայնկոյս ընդ բազուկ և ընդ թիկունս մինչև ի ծայրս ձեռինն երկրորդի բռնաբար քարշեալ և հանեալ, լար աղեղանցն առնէին»։ Այս գրելուց հետո բացագանչում է Պատմագիրը. «Ո՜հ, քանի՜ դառն է պատմութիւնս», և շարունակում է գրել ուրիշ նման եղեռնագործությունների մասին. «Իսկ զերի-

---

20 Անդ, ժ, էջ 63։
21 Անդ, Գ, էջ 13։
22 Անդ, ժԲ, էջ 85։
23 Անդ, ժԸ, էջ 123։

ցանցն և ղկրօնաւորացն ո՞ր լսելիք տանին զնորանշան չարիսն՝ զոր նոքա կրեցին զորոց ի կրծիցն ի վեր քերթեալ զմորթս՝ տարեալ երեսօքն հանդերձ զգլխովն շրջէին, և այնպիսի դառն տանջանօք տանջեալ, չետո ապա սպանանէին. որ քան զայս զի՞նչ այլ ոք դառն և անհնարին տանջանս իմանայցէ. որ ի սրբոց վկայութիւնս չերևի ուրեք եղեալ»[24]։

Բարի մարդը չի կարողանում երևակայել անդամ, թե այդպիսի անասելի չարչարանքներ կարելի է տալ մարդկանց։ Նա չի կարողանում և այն հասկանալ, որ ժողովուրդները երկար տարիներով ապրեն միմյանց մոտ և չբարեկամանան իրար հետ։ Եվ եթե այդպես չի եղել, դրա պատճառը ոչ թե արդեն մեղմաբարո հայերն են եղել, այլ արյունռուշտ խուժադուժները, որոնք մինչև վերջը շարունակել են մնալ նույնը։ «Զի ոչ մի օր, կամ միոյ ժամանակի հանդիպեցաք անդորրութեան կամ դիւրութեան,— գրում է նա,—այլ ամենայն ժամանակ աւուրց մերոց լի եղև խռովութեամբ և նեղութեամբ. և օր ըստ օրէ յաւելոյր ևս ի չարչարանսն և ի տառապանսն։ Եւ ոչ ոք ի նոցանէ բարեմիտ եղև առ մեզ, թէպէտ և բազում ամօք բնակեցան առ մեզ. ոչ արգելաւ սրտմտութիւն նոցա որպէս իժի, և ոչ եղև յագումն ագահութեան նոցա իբրև հրոյ. ղի ամենայն խորհուրդք նոցա որ վասն մեր՝ ի չարութեան են, և բանք նոցա՝ լի նենգութեամբ։ Վասն ղի ամենայն առաւօտու նորագոյն սկիզբն չարեաց առնէին. ղի այն էր խորհուրդ նոցա ամենեցուն՝ մաշել և սպառել զմեզ իբրև զհնացեալ ձորձս, և բառնալ զյիշատակս մեր ի միջոյ իւրեանց, զի բնաւ մի՛ հայեսցին և տեսցեն զմեզ կենդանիս. այլ եղիցին գերեզմանք մեր անհետ ի ներքոյ ոտից նոցա»։—Ահա՛ այն եզրակացությունը, որին հանգում է Պատմագիրն այդ բարբարոսների բնավորության վերաբերմամբ։

Իսկ հայերի վիճա՞կը. «Մերս ծանրագոյն և առաւելագոյն է քան զամենեսեան, անթագաւոր և անիշխան, անտէրունչ և անվերակացու՝ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ, և ոչ գոյ մի տեղի ապաստանի գտանել մեզ. այլ նուաղեալ հնազանդեալ եմք ի ներքոյ թագաւորութեան հեթանոսաց կալ, և զսաստիկ հարուած գաւազանի նոցա օր ըստ օրէ ընդունել»։ Եվ այսպես մինչև Պատմության վերջին տարին, 1072 թվականը։

Պակաս բարբարոսաբար չէին վարվում և հույները։ Ահա թե ի՛նչ է գրում նա Վասիլ կայսրի հրամանով 1025 թ. կատարվածների մասին. «Թագաւորն ընդ կողմանս աշխարհին զօրս առաքէ, ասպատակ արձակէ, պատուէր տայ մեծասաստ հրամանաւ՝ մի՛ ողորմիլ ծերոյն և մի՛ երիտասարդին, մի՛ տղային և մի՛ հասակաւ կատարելոյն, մի՛ առն, և մի՛ կնոջ, և մի՛ ամենևին ամենայն հասակի։ Եւ այսու ձեռնարկութեամբ, քանդեալ ապականէ գաւառս երկոտասան։ Յորս էր տեսանել տեսութիւն ողորմելի և բազում արտասուաց արժանի. քանզի բարձրաձեղուն ապարանք արքունական տաճարաց՝ որք մեծամեծ ծախիւք և հնարագիտութեամբ ճարտարաց՝ ի սքանչելս տեսողաց և ի վայելս ուրախութեան բնակողացն

---

24 *Անդ, ԺԸ, էջ 128 և հետ.։*

չինեալ էին հրայրեացք անկեալ կործանեցան, և որք նոցին տեարքն՝ առ նմին սրակոտորք։ Աւա՛ղ պատմութեանս, աւա՛ղ չար արարուածին. զիա՞րդ կարացից ես աղքատս գիտութեամբ և տխմարս քան զամենեսեան ընդ գրով արկանել զայն ժամու զլեալսն, և կամ ողբալ ըստ արժանւոյն զմեր թշուառութիւնս»[25]*։ Եվ այսպես հունական բանակը, որ իր գաղանութեամբ բնավ ետ չէր մնում թուրքերից։*

3. Աշխարհագրությունը։ *— Լաստիվերտցին չափազանցության է հասցրել նախորդ պատմագիրների մի ոճական հատկությունը. չունի հաճախ ինքնուրույնություն։ Բնականաբար նա ևս ազդված է մեր հին մատենագիրներից, բայց այդ այնքան էլ զգալի չէ։ Չափազանց է Աստվածաշնչի ազդեցությունը։ Կարելի է ասել, որ ներշնչված է մարգարեական գրքերից և երբեմն դրանցից է առնում իր գրության ուժը։ Երբեմն էլ նա որևէ անցք նկարագրելիս բերում է Ս. Գրքից ամբողջ հատվածներ՝ հարմարեցնելով այն իր պատմած եղելությանը և մինչև իսկ՝ ինչ որ մարգարեներն ասել են եբրայեցիների համար՝ համարում է հայ ազգի համար, և մեր ժողովրդի գլխին եկած թշվառությունները հասկանում է իբրև կատարումն հրեական մարգարեների կանխատեսությունների։ Բայց պետք չէ նրան այնքան միամիտ կարծել, թե հին հրեական ժողովուրդը և հայ ազգը շփոթեր միմյանց հետ։ Այդ իսկապես միայն մի արտաքին ձև է, որի մեջ նա միշտ նկատի ունի ներքինը, որ է հայ ժողովրդի իրական վիճակը և աստուծու կամքը։ Իբրև իր դարի զավակ ու վարդապետ, ամեն պատմական դեպք նա համարում է աստվածային կամքի արտահայտություն։*

Մինչ սպասում ենք, որ 11-րդ դարում երևան գար համեմատաբար ընդարձակ աշխարհայացք, հակառակն ենք գտնում։ Եղելությունների իրական պատճառների քննություն չկա։ Մարդկանց միտքը ճնշված էր ետևե ետև արագ վրա հասնող աղետների ծանրությամբ։ Ժամանակի ազգային չարաբաստիկ վիճակն ստիպում էր նրանց նորից ետ դառնալ, կրոնի մեջ գտնել մխիթարություն, և իրենց դժբախտ կյանքի բացատրությունն ու ելքը որոնել։ Առաջին հարցը, որ տալիս էին մտածողները, այս էր. ինչո՞ւ են գալիս մեր գլխին այս աղետները։ Հայերը, որ այնքան բարեպաշտ էին, այնքան եկեղեցիներ ու վանքեր էին շինել աստուծու փառքի համար, ինչո՞ւ են տառապում թուրքերի ձեռքին։— Պատասխան գրտնելը դժվար չէր՝ հին մատենագիրներն արդեն պատրաստել էին այն գաղափարը,— որ եղել է հին հրեաների և բոլոր քրիստոնյաների մեջ,— թե մարդիկ մեղք են գործում, և աստված նրանց պատժում է իրենց մեղքի համար։ Նա, Լաստիվերտցին էլ, ամեն թշվառություն համարում է աստվածային պատիժ մեղքի համար։ Բացի մեղքից՝ նրա համար էլ ուրիշ պատճառ չկա սելջուկների և հույների գաղանությունների համար։ «Զայս ամենայն յաղագս այնորիկ եղաք, զի ընթերցիք և գիտասջիք, եթէ մեղքն

---

25 *Անդ, Բ, էջ 13 և հետ.։*

եղև այս ամենայնի պատճառ որ անց ընդ մեզ զի հայեցեալ ընդ մեզ՝ զարհուրեսջիք երկնչել յերեսաց տեառն և դողալ յահէ զօրութեան նորա. կանխել յառաջագոյն խոստովանութեամբ և ապաշխարութեամբ»,—ահա՛ դժբախտ եղելությունների միակ պատճառն ու ելքը և իր երկի նպատակը, որ նա շեշտում է իր գրքի վերջում և որ հաճախ կրկնում է նա գրքի մեջ իբրև պատգամ, խորին համոզմունքով, վճռաբար, իբրև մի մարգարե։

Այդպես խոսում է նա իբրև մեկնաբան և բարոյախոս վարդապետ, մեղք և ապաշխարել, մեղքը լալ փրկության համար։ Կարծես դա հին բանաստեղծության, ապաշխարության շարականների և Գրիգոր Նարեկացու Ողբերգության իշխող գաղափարն է։ Բայց այդ ըստ երևույթին միայն նույնն է։ Մեղք և ապաշխարել, նմանությունը միայն այսքանն է. սրանից դեննն արդեն գալիս է նոր ոգին։ Մինչև հիմա մեղավորն էր անհատ մարդը, նա լալիս էր իր սեփական անձնական մեղքը. մինչև հիմա միստիկ ճգնավորներն ու նրանց արտահայտիչ բանաստեղծը ողբում էին անհատական մեղքը։ Հիմա մեղավոր է ազգը, նա՛ պետք է ապաշխարի։ Անհատն ապաշխարում էր մարմինը տանջելով. դրանով նա ձգտում էր գըտնելու իր հոգու փրկությունը, որ մահից հետո հանդերձյալ կյանքում էր լինելու աստուծու հետ միացումով։ Իսկ Արիստակես Լաստիվերտցու համար այդպիսի բան չկա. նա հեռու է միստիցիզմից։ Այստեղ ապաշխարությունը քարոզվում է տանջանքից ազատվելու և ազգի փրկության համար, որ այս աշխարհում պիտի լինի, այն էլ ոչ թե մարմինը մեռցնելով, այլ բարքերի մաքրությամբ, կյանքի բարոյական կարգավորությամբ։

Եթե միստիկ ճգնավորի համար աշխարհի վրա մտածելն անդամ մեղք էր, Լաստիվերտցին չի մերժում աշխարհը և նույնիսկ հարստությունը հարկավոր է համարում։ Բայց ամենայն հարստություն պիտի ծառայի բարի նպատակների և ձեռք բերվի արդարությամբ և իրավունքով, առանց վաշխի ու տոկոսիքի։ Առաջ այսպես էր,—գրում է նա իր հայրենի Արծն քաղաքի համար,—ուստի «ամենայն ինչ ըստ մտի էր սորա»։ Բայց կյանքը փոխվում է. սկսում են հարստություն դիզել միայն իրենց վայելքի համար, փարթամ ապրելու, ճոխ հագնվելու և զարդարվելու համար, իշխաններն ու վաճառականները դառնում են գողերի գողակից, կաշառառու, վաշխառու, խաբեբա, զրկող, շահախնդիր։ Նրանք հղփանում և ամբարտավանանում են։ Այսպես և «ամուրն Անի և որ շուրջ զնովաւ դստերք իւր՝ առաւել յամբարտաւանութիւն կրթեալ՝ ընդդէմ երկնից կայթս հարկանէին», «քաղաք՝ որ զմեղս իւր ի կատարումն լրիւ իւրով ունէր»։

Այդ քաղաքի բնակիչները թշնամիների դեմ հույս են դնում իրենց ամուր պարիսպների և անմատչելի աշտարակների վրա, մոռանալով, «զի սրբութիւնն է ամրութիւն, և պարիսպ՝ ընտիր գործք աստուածապաշտութեան»։ Եվ ահա 1064 թ. Պարսից թագավորը բազմաթիվ սպառազեններով գալիս, պաշարում, առնում է այդ քաղաքը, կոտորում է բնակիչներին. «Այլ և ի Կարապոյ անիրաւութեան ի նմա գործելոցն տոչորեցաւ

քարձրաշէն և գեղեցկայարմար ապարանքն, և եղև ամենայն բնակութիւնն իբրև հողաբլուր. և վաշխն և նենգութիւնն որ ի նմա՝ խափանեցաւ»,— գրում է Լաստիվերտցին և ավելացնում. «Այս է բաժին անիրաւ քաղաքաց, որ շինեն զինքեանս արեամբ օտարաց, և ի քրտանց տնանկաց փարթամանան, և ի վաշխից և յանիրաւութեանց զտունս իւրեանց ամրացուցանեն. և ինքեանք զմիտս իւրեանց անողորմ ունելով առ աղքատս և տնանկս՝ միայն հեշտութեան և փափկութեան սպասեն, և ի գործոց աղտեղութեան ո՛չ խորշին, այլ մխայն արբեալ լինին ի ցանկութեանցն, որ զնոսա ըմբռնեալ ունի»[26]։ Այսպես՝ թեպետ կրոնական ձևի տակ, բայց արդեն ընդարձակվում է Արիստակես Լաստիվերտցու պատմահայացքը։ Ազգի ուժը իր ներքին բարոյականության մեջ է։ Եթե չկա այդ ներքին ուժը, ինչքան էլ նա փարթամացած լինի, պարիսպներով և աշտարակներով ամրացած շեն քաղաքներով հարուստ, նա անխուսափելի պիտի ընկնի, ինչպես Անին, որի համար գրում է, թե «Արկ տէր ի մէջ պահապանաց և իշխանացն երկպառակութիւն և անմիաբանութիւն ամբոխումն և բաժանումն. և անդէն թողեալ զգործ պատերազմին՝ ի փախուստ դարձան»։ Եվ այլապես չէին կարող վարվել բարքերի ապականության ժամանակ հեշտասեր, ցոփ ու թուլամորթ մարդիկ։ Ապաշխարել, ուրեմն, ըստ Լաստիվերտցու՝ չի նշանակում ուրանալ աշխարհը, ուրախ ու երջանիկ կյանք չվարել, ապրել ինչպես մի ճգնավոր, այլ մեծացնել ներքին բարոյական ուժը և դրանով միայն հնարավորություն ունենալ պատերազմելու արտաքին թշնամիների դեմ և փրկվելու։

4. Աշխարհասիրություն և հայրենասիրություն։— *Աշխարհն արդեն ստացել էր արժեք այն աստիճանի, որ նույնիսկ այդ կրոնասեր մարդը, սգավոր պատմիչ Լաստիվերտցին, խորին սիրով սիրում է այն, սիրում է իր հայրենիքի անդաստանները, մշակած դաշտերը, շինանիստ ավաններն իրենց բարձրաձեղուն ու մեծամեծ ցանկալի տներով, ժողովրդի բարելից կյանքը, ուրախ-զվարթ աշխատանքը, կատարած ուրախությունները, երգերն ու պարերը, թագավորն իր փառավորությամբ, զորքերն ու կռիվները, որոնք կային մի ժամանակ և չկան այլևս։ Ուստի այժմ, ասում է նա, «յողբս փոխեցաւ մեզ ամենայն»։ Այս աշխարհասիրությունից է, որ նա հաճախ կրոնական ձևի տակ, բայց իսկապես մեր աշխարհիկ կյանքի դժբախտության ողբերգուն է դառնում։*

«Աշխարհ՝ որ երբեմն ժամանակաւ իբրև զդրախտ տնկախիտ առաջի իւր, կանաչագեղ, տերևալից, պտղաբեր, գեղեցկաշուք և երջանիկ անցաւորացն ցուցանիւր. քանզի իշխանք նստէին յիշխանական գահու զուարթահայեաց դիմօք, և զգարնանաբեր ծաղկանոցաց բերեալ զնմանութիւն՝ վառ ի վառ գունովք առաջի կացեալք, ուրախական երգոց և բանից միայն լինէին հանդէսք. ուր՝ և ձայնք փողոցն և ծնծղայիցն և այլ երգեցողական արուեստիցն զլսողացն անձինս լի առնէին ուրախական

---

26 *Անդ, ԻԴ, էջ 162 և հետ.։*

բերկրանօք։ Անդանօր և ծերք նստէին ի հրապարակս հարկևոր և պատուական ալեօք բարգաւաճեալ. այլ և մարք զմանկունս ի գիրկս ընկալեալ, և մայրենի գթովքն աղէխաբշեալ, վասն առատ ուրախութեանցն մոռանային զտխրական ժամանակս երկանց, զօրէն աղաւնեաց զնորափետուր ձագօքն միշտ թռթռելով։ Ջի՞նչ ասացից և զհարսանեացն ի սենեկի, և զփեսայիցն յառագաստի զսիրահարուստ ըղձիցն ղբորբոքումն և զանժոյժ բնութեանն զհակամիտութիւն...

Արդ այժմ թագաւորն անկեալ ի պատուոյ, իբրև զգերի կալանաւոր նստի ի հեռաբնակ տեղիս. այսպէս և հայրասլետական աթոռն ամայացեալ ի բնակողէն՝ ցուցանի տխուր դիմօք իբրև զկին նորահարսն՝ մնացեալ յայրիութեան։ Հեծելազօրն անտէրունչ շրջեալ ոմն ի Պարս և ոմն ի Յոյնս, և ոմն ի Վիրս։ Սեպուհ գունդն աղատաց ելեալ ի հայրենեաց, անկեալ ի ճոխութենէ, մոնչեն ուր և են իբրև զկորիւն առիւծուցն ի խըշտիս իւրեանց։ Արքունական ապարանքն աւերակ և անմարդի։ Մարդաբնակ աշխարհն թափուր ի բնակչացն։ Ոչ լսի ձայն ուրախութեան ի կութս այգեաց և ոչ բարեբայնութիւն առ կոխօղս հնձանի։ Ոչ խաղան մանկունք առաջի ծնողացն, և ոչ նստին աթոռով ծերք ի հրապարակս։ Ոչ լսի ձայն հարսանեաց, և ոչ զարդարին առագաստք հարսնարանին»։

Ինչպես որ գորովագութ մայրն իր մահացած որդու բարեմասնութիւնների գովքն անելով՝ աղիողորմ ողբում է նրա մահը և նորինորո սրտատրոփ հեծկլտում է, որովհետև սիրում է որդուն, նույնպես և այս բանաստեղծ պատմիչը։ Եթե նա շարունակ դառնակսկիծ սրտով գովքն է անում ավերված Հայաստանի անցած կյանքի, այդ նրանից է, որ նա սիրում է այն ամենը, ինչ որ վերհիշում է։

«Եհաս կատարած կենաց տանս Հայոց... աւերեցան գաւառք և գըւնացին յաւար տանն Յունաց. եղեն շինանիստ աւանք բնակութիւն գաղանաց»[27],— ահա նրա ողբերգության նյութը։ Նա Հայաստանի շեն և ուրախ կյանքի, շինանիստ ավանների ու բարգավաճ քաղաքների երգիչն է, միայն ոչ ցնծությամբ ու բերկրանքով, այլ դառն վշտով ու հառաչանքով. ոչ թե ուրախության երգ հորինելով, այլ ողբերգություն։ Բայց նա ոչ թե աշխարհի ու կյանքի ունայնությունն ու ոչնչությունն է երգում, ինչպես Գրիգոր Նարեկացին իր Ողբերգության մեջ, այլ աշխարհի, Հայոց գեղեցիկ ու շեն աշխարհի ոչնչացումը։ Ունայնության գաղափարի նշույլ անգամ չի երևում նրա մեջ։ Ուրիշներն այն ավերածություններից հետո կարող էին հանգել այդ գաղափարին, բայց Լաստիվերտցին հեռու է դրանից։ Նա սիրում է իրական կյանքը. միայն նա ցավում ու լալիս է, չի ուզում, որ այդպես ավեր լիներ, և ցանկանում է, որ աշխարհը մնար իր նախկին դրության մեջ։ Ահա նրա վշտի ու հեծեծանքի աղբյուրը—աշխարհասիրություն ու հայրենասիրություն։

5. Իրականության արտացոլք պատկերը:— Լաստիվերտցին ռեալիստ գրող է այն մտքով, որ նկատի ունի իրական կյանքը։ Նա իրական

27 Անդ, էջ 51։

դրության, եղելության ճշգրիտ վերարտադրությունն է անում, լինին թշնամության օրերը, թե փառավոր անցյալի ցանկալի շինարարությունը, աշխարհի մարդաշատությունը, հարուստ քաղաքներն ու ավանները, նրանց բնակիչների ուրախ, բարելից ու բարեպաշտ կենցաղը։ Այդ ամենը նա անդրադարձրել է ոչ թե իբրև մի ձև, մի նմանություն պատկերավոր արտահայտության համար, և ոչ թե այլաբանորեն, այլ նպատակ ունենալով հենց իրականությունը ցուցադրել, պատկերացնել ընթերցողի առաջ։ Եվ նա կարողացել է իբրև բանաստեղծ տալ մեզ այն, և տալ գեղեցիկ, պարզ ոճով, Աստվածաշնչի կարճ ու պատշաճ օրինակներով, բայց նյութին վայելուչ եղանակով, առանց մթնության, առանց պերճության և ուռուցիկ կուտակության, երբեմն աղդվելով Ս. Գրքի և հին հեղինակների արտահայտության ձևերից։ Այս է նրա սեփական գրության ձևը։ Եթե դուրս թողնենք Ս. Գրքից բերած մեծ ու երկար ցիտատները և դատողությունները, նրա գրվածքը միանգամայն և՛ հաճելի է, և՛ խիստ ազդու. որովհետև նա չի հորինում սառն և անտարբեր, այլ միշտ զգացված, որով և համակում է ընթերցողին իր զգացմունքով։ Եթե նա երբեմն մեր առաջ չի էլ բաց անում իր հեղձամղձուկ սիրտը, բայց միշտ էլ զգալի է նրա խորին վիշտն իրականության համար։ Եվ այս նա հաղորդում է մեզ մեծ կենդանությամբ, հորինելով սովորաբար նկարեն և նմանություններով, որոնք հաճախ շատ դիպուկ ու գեղեցիկ են։ Շատ բանաստեղծական և ուժեղ է, օրինակ, նրա արտահայտությունը, երբ նա Հայոց աշխարհի ամայացումը տալիս է աշխարհարարման վիճակի նմանությամբ և մեռելության ու կենդանության հակապատկերներով.

«Վա՜յ տարւոյն, վա՜յ աշխարհաւեր խորհրդոյն, յորում կործանեալ ապականեցան բնակիչք երկրի. քանզի դարձաւ յառաջին անզարդութիւնն ըստ աշխարհապատում բանին. «Երկիր, ասէ, էր ամայի և անպատրաստ. վասն զի մարդ չէր որ գործէր զերկիր»։ Զի զոր օրինակ գեղեցիկ դէմք առն՝ ի ծաղկի հասակի սիրուն և ցանկալի տեսողացն ցուցանի, իսկ յորժամ զարդարիչ հոգին մահուամբ բաժանի ի նմանէ, յառաջին պայծառ և գեղեցիկ զարդուցն ահարկելի և անշուք ցուցանի տեսողացն, նաև գութն ընդ նմա հատանի. ըստ այնմ, թէ «Մոռացեալ եղէ ես որպէս մեռեալ ի սրտէ». ըստ նմին օրինակի զերկիր է տեսանել. զի յորժամ մարդաբնակ շինութեամբ հարստանայ, յայնժամ երկրագործք առատութեամբ սերմամբ զանդաստանս լնուն. որք յորժամ բուսանին, կանաչագեղ տեսլեամբ զվայրսն վայելչացուցանեն, և բարձրաբերձ ածմամբ ի վեր ընձիւղին. և յորժամ զհասկիցն զկերպարանս ի գագաթունսն երևեցուցանեն, յայնժամ թանձրախիտ բարձրութեամբն ամպագձ տեսողացն ցուցանի, և ի քաղցրաշունչ օդոյն՝ ճոճի, ճեմի զօրէն ծովային ալեաց. այսպէս և հօտք անդէից արօտականաց ի հովիտս դալարաբեր բուսոց առ ցուրտ աղբերակամբք խայտան խաղան, և երկիր իբրև զդա՛յեակ՝ գեղեցիկ դիմօք զարդարի նոքօք, ըստ այնմ, եթէ «Ցնծասցեն դաշտք, և ամենայն որ է ի նոսա»։

Իսկ այժմ զնորին հակառակն տեսանեմք· երկիր աւերակ, թափուր ի բնակչաց. քաղաքք կործանեալք, և անդաստանք խոպանացեալք և փշաբերք, ահագին և զարհուրելի անցաւորացն ցուցանի։ Նաև քաղցրաձայն հաւուց տարմք, որք մարդասէր բարոյիւք ընտանի գոլով մերայինս ազինս, որ քաղցրանուագ եղանակօք զվայրսն հնչեցուցանեն, և յառաւօտինսն ճռուական երգովք և բարձրաձայն կարկաչիւք զերկրագործսն ի քնոյն դանդաղանաց իբրև խթանաւ զարթուցեալ, իւրաքանչիւր արուեստից պատրաստաբար յարդարէին. բայց այժմ շէնք աւերակք և ամայիք և անմարդիք, և նոցա ոչ գոյր տեղի բնակութեան. զի ո՞ւր տառեղունքն բոյն կառուցանեն, և ո՞ւր տկարք ի թռչնոց ի նոսա ապաւինին ըստ սաղմոսին ձայնի. և կամ ուր ծիծառն զիւր վարանից բունիկն յարդարէ՝ աներկիւղ սնուցանել զառ ի չինքենէ ծնեալսն»[28]։

Ինչպես կարելի է նկատել, բանաստեղծական նմանութիւններն այստեղ այնքան ընդարձակ են, որ կարող են նոյնիսկ անկախ նկարագիրներ դառնալ։ Դրանք, անցյալն ու ներկան, գրողի իրեն ապրած իրականութեան անդրադարձումն են շատ պայծառ վերհիշումով։ Նրա մտքից շարունակ անբաժան է մնում այն, թե ո՛րքան լավ և ուրախ էր առաջ, և ո՛րքան վատ ու տխուր՝ հետո։

Եվ նրա գրվածքի կենդանութեան գլխավոր գաղտնիքն այն է հենց, որ նա ապրած է իր գրածների նյութը, և՛ երբեմնի ուրախ, և՛ հետագայի տխուր իրականութիւնը։ Հենց դրանից էլ բխում է նրա լիրիզմը—քնարականութիւնը, որ անպակաս է։ Բերենք իբրև օրինակ մի հատված նրա ԺԱ գլխից, տեսնելու համար, թե ինչպես է նա հորինում պատմվածքը։

«Ի սոյն ամս բացաւ դուռն բարկութեան յերկնից ի վերայ աշխարհիս մերոյ. և շարժեալ զօրք բազումք ի Թուրքաստանէ, որոց երիվարք արագունք իբրև զարծուիս, և ամբակք նոցա իբրև զվէմս հաստատունք. աղեղունք լարեալք, և սլաքեալ նետք նոցա, գօտևորեալք քաջապէս, և անլուծանելի ունելով զխրացս կօշկաց։ Եւ ելեալ ի գաւառն Վասպուրականի, յարձակեցան ի վերայ քրիստոնէից իբրև գայլս քաղցեալս անյագեալս ի կերակրոյ. և եկեալ մինչև ի գաւառն Բասենի, և մինչև ի դաստակերտն մեծ, որ կոչի Վաղարշաւան, քանդեալ ապականեցին գաւառս քսան և չորս սրով և հրով և գերութեամբ։ Ողորմագին և բազում ողբոց և արտասուաց արժանի է պատմութիւնս։ Որք իբրև զառիւծս ընթացան, և իբրև կորիւն առիւծուց անողորմաբար արկին զդիակունս բազմաց գէշ գազանաց և թռչնոց երկնից. և կամէին այնու ձեռնարկութեամբ գալ ի քաղաքն Կարնոյ։ Բայց որ ծովու նդ սահման՝ ասելով՝ «Ցայդ վայր եկեսցես, մի այլ մի՛ ևս յաւելուցուս, այլ անդրէն ի քեզ խորտակեսցին ալիք քո», նա արկ զխաւար թանձրամած առաջի նոցա, և արգել զնոսա յընթացից իւրեանց»։

6. Հայրենասիրական ողբերգությունը։— *Այս սգավոր պատմիչը մի ուրույն տեղ է բռնում մեր պատմագիրների շարքի մեջ։ Նա իսկապես*

---

28 *Անդ, ԺԸ, էջ 120 և հետ.։*

քնարերգու բանաստեղծ է· բայց գրել է պատմություն և գրել է ոչ թե որևէ ուրիշի խնդրով կամ պատվերով, ինչպես նախորդ պատմագիրներն առհասարակ, այլ ինքնաբերաբար, իր տանջված սրտի զգացումները զեղելու պահանջից դրդված։ Դրա համար և նա շատ բան անտես է արել իր պատմության մեջ առնելու[29]։ Ապրելով դառն ու դժնդակ ժամանակներում և լինելով շատ բաների ականատես և անձամբ «ընդ փորձ չարեացն» անցած, նրա փափուկ ու զգայուն սիրտը չի դիմանում իր տեսածներին ու լսածներին։ Նա չի կարողանում պաղարյունությամբ վերհիշել այն ավերներն ու կոտորածները, որ արել են հույներն ու թուրքերը. սգում ու ողբում է, իր սրտի խորքից հեծեծալով ու թառանչելով իր դժբախտ հայրենիքի ու ժողովրդի համար, երբեմն նույնիսկ, ինչպես տեսանք, աղոթում է նրանց համար։ Եվ նա այդ ողբն անում է ոչ իբրև մի միստիկ ճգնավոր աշխարհից կտրվել կարողանալու համար, այլ իբրև մի հայրենասեր, որ սիրում է աշխարհը, Հայոց աշխարհը։ Ցաված սրտով նա շարունակ ընդհատում է պատմությունը և արտասվալից ողբեր է հորինում։ Էականը նրա համար ողբն է։ Եղելությունների պատմությունը հաճախ նրա համար է անում, որ ընթերցողին հասկանալի դարձնի իր ողբի նյութը։ Եվ այսպես վարվում է նա գիտակցաբար, առանց խորշելու, նպատակ դրած իրեն։ Նրա «Նախերգանքն» անգամ ոչ թե «առաջաբան» է, այլ մի ողբագին երգ է.

Ժամանեցին մեզ աւուրք չարչարանաց,
Եւ գտին զմեզ նեղութիւնք անհնարինք.
Քանզի լցեալ չափ մեղաց մերոց,
Եւ ել աղաղակ մեր առաջի աստուծոյ...
Որոյ աղագաւ ազգք օտարածնաց
Օտարացուցին զմեզ ի բնակութենէս մերմէ,
Եւ դարձան փառք մեր յապականութիւն։
Շունչ ի մեզ ոչ մնաց։
Եւ կորեաք ի հատման յուսոյ մերոյ։
Զօրացաւ մահ և եկուլ,
Եւ դժոխք շատ ասել ոչ կամեցան։
Ամենեցուն յարձակեցան ի մեզ ձեռք,
Եւ յանգման յաւուրս մեր ժամանակ ոչ ծանեաւ
Զմնացորդս պատուհասին վճարմամբ անցելոց։
Յաջորդք ի հաջորդաց փոխանակեցին,
Եւ նուազեաց արդիւն սրծարծիչ շնչոյ կենդանութեան։
Հաստատունք յաշխարհի ի պանդխտութեան իւրեանց
Պանդխտեցան երկրորդ անգամ և եղեն վտարանդիք...
... Զարթեան պատերազմունք ի չորից կողմանց.

29 Անդ, հե, էջ 168։

Յարևելից սուր, յարևմտից սպանումն,
Ի հիւսիսոյ հուր, և ի հարաւոյ մահ։
Բարձան ուրախութիւնք յերկրէ,
լռեցին ձայնք քնարաց.
լռեցին բոմբիւնք թմբկաց,
Բարձրացան աղաղակք լալեաց։

Այսպես ողբերգելուց հետո կցում է. «եւ այսոքիկ այսքան։ Բայց ժամ է մեզ ի գլուխս պատմութեանս ընթանալ, և աստի սկիզբն առնել, որպէս զի դիւրածան լիցի մեզ բանս», այսինքն՝ հասկանալի լինի, թե ինչու ինքը հենց սկզբում ողբում է։ Ուրիշ անգամ[30] կոտորածների մասին գրելուց հետո բացականչում է. «Ո՛վ, քանի՛ դառն է պատմութիւնս և ողբոց արժանի», և իսկույն, ողբալ սկսելուց առաջ, ավելացնում է. «Այլ թերևս ոք մեղադիր լինիցի մեզ, թէ մինչև ցերբ զվշտաց և զնեղութեանց արկանես առաջի մեր զրոյցս»։ Ապա իրեն արդարացնում է, թե եղած ու կատարված բաներ է պատմում, «որպէս զի ամենեցուն՝ որք լսիցեն՝ շարժեցից արտասուս, թէ ո՞րքան դառն ժամանակի հանդիպեցաք. կարծական եղև մեզ այս կեանքս... Աչխարհ ամենայն ի խաղաղութեան բնակէ, և մեք գերիք և կալանաւորք, սրակոտորք և տնաւերք և յընչից կողոպտածք»։ Եվ անմիջապես սկսում է իր ողբը Հայաստանի քաղաքական և կուլտուրական անկման համար։

Ողբեր հորինել են և մեր նախորդ պատմագիրները, բայց փոքր ծավալով, ավելի ճարտասանական զուսպ քնարականությամբ։ մինչ Լաստիվերացու երկի մեջ իսկական բուռն լիրիզմ կա, հորդաբուխ բռնկում և անմիջական արտահայտություն սրտակեզ մորմոքի։

Այսպիսի ողբերն, ինչքան էլ ազդու են, հաճախ կրկնվելով դանդաղեցնում են պատմության ընթացքը և հոգնեցնող ու նույնիսկ ձանձրալի կարող են լինել իրենց միակերպությամբ, բայց միայն այն ժամանակ, երբ այս բանաստեղծի երկը կարդում են պատմական եղելություններ քաղելու համար։ Թեպետև պատմության համար էլ դրանք ունեն իրենց նշանակությունը,—նա այդպիսի ողբերի մեջ ևս տալիս է կյանքի դծեր, կարևոր մանրամասնություններ, որոնցով կարողանում ենք կենդանի պատկերացնել կատարված բարբարոսությունները և երկրի ընդհանուր դրությունը,—բայց և այնպես դրանց արժեքն ավելի բանաստեղծական է։ Մենք դրանց մեջ տեսնում ենք սրտի կսկիծն այն դժբախտ օրերի հայրենասեր մարդու, որ երբ պատմում է թուրքերի ու հույների գործած խժդժությունների մասին, ինքնաբուխ արտասուքով լցված, հաճախ բանաստեղծություն է հորինում արձակ լեզվով և դառն ու աղիողորմ հառաչելով լալիս է իր հայրենիքի կործանված փառքը, կուլտուրական և քաղաքական կյանքի անկումը, քաղաքների ու ավանների ավերումը, և երգում է այն-

30 *Անդ, ժէ, էջ 111 և հետ.։*

պես խորն ու անկեղծ ու հուզիչ, որ խորին վշտով համակում է ընթերցողին։ Եվ նրա այդ տրամալի երգը երկու պատկերով, փառավոր և ուրախ անցյալի և իր ժամանակի անփառունակ ու տխուր վիճակի, դարեր շարունակ նմանողության աղբյուր է դարձել։ Եվ այսպես Հայոց թագավորությունների անկումից հետո, Հայաստանում սելջուկյան թուրքերի տիրապետությունը դեռ չհաստատված, սկսվում է հայրենասիրական ոգեբերգությունը Արիստակես Լաստիվերտցու երկով։

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳ ՎԱՐԴԱՊԵՏ

1. Կենսագրություն։—*Մեր վերածննդության նոր մտավոր հոսանքի առաջին արտահայտիչներից մեկն է և Հովհաննես (Յովհաննէս) Սարկավագ Վարդապետը։ Այս համբավավոր գրողի կենսագրության համար, ցավոք, սակավ տեղեկություններ ունինք, և եղածներն էլ մասամբ դեռ չեն ստուգված*[31]*։ Նա վախճանվել է 1129 թվականին. ծննդյան տարեթիվը հայտնի չէ։ Որովհետև նա մեռնելիս եղել է շատ ծեր, առնվազն 80—85 տարեկան, հետևաբար ծնված պիտի լինի մոտավորապես 1045—1050 թվականներին, հավանորեն ավելի ևս վաղ։ Ըստ Վարդան Արևելցու*[32] *նա Փառիսոս գավառից էր, «ի քահանայական աղգէ»։ Արցախի այս գավառը մի ժամանակ եղել էր մի հայկական փոքրիկ քաղաքական կենտրոն, որ ունեցել էր իր առանձին թագավորները։ Կուրսի Աբաս թագավորի (984—990 թթ.) մայրն, ըստ Ստեփաննոս Տարոնեցու*[33]*, Փառիսոսի թագավորների քույրն էր, «բարեպաշտուհի ի բարեպաշտ ծնողաց»։ 1003 թ. «իշխանքն Փառիսոսոյ, որ ի Հայկազեան ազանց բաւեալ մինչև ցՍեննեքերիմ և ցԳրիգոր՝ սպատեցան մահուամբ։ Զորոց աշխարհն բաժանեալ հակառակութեամբ ի միջի իւրեանց արքայն Հայոց Գագիկ և Փատլուն ամիրայն Գանձակայ»։ Գանձակի ամիրան նվաճել է բնականաբար արեվելյան դաշտային մասը, իսկ Հայոց թագավորին անցել են Վայոց Ձորից դեպի հյուսիս-արևելք ընկած լեռնային գավառները. «եւ տիրեաց նա [Գագիկ] յոլով բերդից և գաւառաց ի սահմանացն Վայոց Ձորոյ, Խաչենոյ և Փառիսոսոյ»*[34]*։*

Թե ո՛րքան է տևել այս բաժանումը, այդ հայտնի չէ. բայց դրանով ոչ միայն չի մարել ազգային անկախության գաղափարն ու ոգին այն կողմերում, ուր կային միշտ տեղական հայ իշխաններ, այլ, ընդհակառակն, ավելի ևս վառ ու բորբոք է մնացել հանդեպ այլազգիների ոտնձգությունների։ Բացի այդ՝ շարունակ զարգացել է այնտեղ եկեղեցական

---

31 *Այս մասին տե՛ս սույն գրքի Առաջին հավելված՝ «Սարկավագ Վարդապետի կենսագրության շուրջը»։*

32 *«Մեծին Վարդանայ Պատմութիւն տիեզերական», Մոսկվա, 1861, էջ 159։*

33 *«Ստեփաննոսի Տարօնեցւոյ Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 198, 256, 283։*

34 *Անդ, էջ 256։*

մշակույթը, ինչ որ ծնողների միջոցով անպայման զորեղ ազդեցություն է գործել մանուկ Հովհաննեսի կրթության և բնավորության վրա, եթե միայն ստույգ լինի Վարդանի հաղորդումը, թե նա Փառիսոս գավառից էր։ Ալիշանը[35] գրում է, թե ինքն իսկ Սարկավագն «իր խոսքովը... գրվածքի մը մեջ» ասում է իր մասին. «Ի նախնեաց բարեպաշտից և յիմաստուն ծնողաց բուսեալ, որք սնուցին զիս օրինօք հոգւոյն կենաց՝ առնել քան ըստ քնութեան տածիւք խնամս յատ մանկունս. որովք յառաջնումն հասակին դաստիարակեալ՝ յոյս տայի քաջութեան»[36]։ Հովհաննեսի ծնողներն, ուրեմն, առանձին խնամքով սնուցել և դաստիարակել են իրենց որդուն, ներշնչելով նրան բարեպաշտություն և գիտություն, անպայման և հայրենիքի ու հայ ժողովրդի սեր։ Նա մանուկ հասակից արդեն իր բնատուր շնորհքով հույսեր է տվել իր ապագայի համար։ Ուսումը կատարելագործելու նպատակով, անշուշտ ծնողների որոշումով, նա մտել է Հաղբատի վանքը։

Հովհաննեսի մանկության և պատանեկության տարիներին Հայաստանի ամենադժբախտ ժամանակն էր։ Հայկական իշխանություններն իրար ետևից ընկնում էին, և երկիրը մատնվում էր ավերմունքի։ Բայց Հայաստանի հյուսիս-արևելյան կողմերը, ուր տիրում էին հայ թագավորներ և իշխաններ, ապա և Վրաց թագավորները, ընդհանրապես դեռ խաղաղ էին մնում։ Կենտրոնական Հայաստանում վանքերը հետզհետե խափանվում էին. ուսումն ու գիտությունն ևս ավերվող քաղաքներից փախչելով՝ ապաստանում էին երկրի համեմատաբար ապահով վայրերում, լեռնային ամուր և խուլ անկյուններում։ Այստեղ դարձյալ վանքերն էին դառնում գրականություն մշակող։ Սանահնի ու Հաղբատի վանքերը, որոնք հիմնված էին 10-րդ դարում, վայելելով Հայոց Բագրատունի թագավորների, հետագայում նաև Վրաց թագավորների առանձին խնամքը, նվերներով հարստացել ու դարձել էին ոչ միայն բազմաթիվ կրոնավորների եղբայրանոցներ, այլ միաժամանակ նաև լուսավորության կենտրոններ իրենց անվանի գրագետ վարդապետներով։ Սկզբում Սանահնի վանքն է հռչակվում իր դպրոցով և գիտուն վարդապետներով, որոնցից Անանիա Սանահնեցին նշանավոր է հանդիսացել իր գրական երկերով[37]։ Սանահնից հետո սկսում է բարձրանալ Հաղբատի վանքը։

Տուղրիլ և Ալփասլան սուլթանների վայրագություններն արգելք չեն լինում, որ մեր պատանի Հովհաննեսը Հաղբատի (գուցե և Սանահնի) վանքի խաղաղ անկյունում ուսմամբ պարապեր և զարգացներ իր ընդունակությունները։ Նա այնտեղ խորը հմտանում է իր ժամանակի ոչ միայն

---

35 Ղ. Մ. Ալիշան, *Յուշիկք հայրենեաց Հայոց*, Բ հատոր, Վենետիկ, 1870, էջ 284։

36 *Այս ցիտատը բերում է և Զարբհանալյանը «Հայկ. հին դպր. պատմ.» մեջ, աղբյուրը ցույց տալով «ուրիշ տեղ մը» անորոշ բառերով ըստ հին վենետիկյան սովորության։ Հետաքրքիր է իմանալ, թե Սարկավագ Վարդապետն իր ո՛ր գրվածքի մեջ է գրել այն։*

37 «Հաղբատ և Սանահին վանքերը (967—1300)». Եր. ս. [Երվանդ ս. Տեր-Մինասյան], «Արարատ» ամսագիր, Էջմիածին, 1901, էջ 271—277, 338—344։

եկեղեցական, այլև արտաքին գիտություններին, ինչպես և Ճարտասանության ու քերթողության, և դառնում է մի շատ գովելի անձ իր ձեռ բերած ուսումով։ Նա մնում է նույն վանքում իբրև կրոնավոր և իր անխոնջ գործունեությամբ ու հռչակով բարձրացնում է իր վանքի անունը։

Երևի, ինչպես կարծում են, Հովհաննեսը վաղ տարիքում ստացել է սարկավագության եկեղեցական աստիճանը, և երևի երկար իբրև սարկավագ է մնացել. ուստի և «Սարկավագ» հորջորջը մնացել է նրա վրա իբրև սովորական անուն։ Նա բնականաբար ուներ նաև ժամանակի գիտական աստիճանը՝ վարդապետություն, որով և սովորաբար կոչվում է «Սարկավագ Վարդապետ»։ Նրան անվանում են նաև՝ «Իմաստասեր», «Մեծ Սոփեստեան Հաղբատայ»։ Նրա գերեզմանը, որ ցայժմ մնում է Հաղբատի վանքում, ուր սնվել և ուսել էր, ունի այս տապանագիրը. «Արձանս այս՝ սեմական է[38] Սոփեստոսի Սարկաւագի»։ Այս «սոփեստոս» բառն առնվում է, հարկավ, իր հին հունական լավագույն իմաստով՝ իբրև իմաստուն, գիտուն, գիտնական, այլև Ճարտասան, Ճարտասանության ու փիլիսոփայության ուսուցիչ։ Նա իր բանաստեղծության մեջ, որի մասին ներքևում կխոսվի, ինքն իրեն անվանում է «կիսակատար իմաստակ», այսինքն կիսակատար սոփեստես։ Շատ պարզ է, որ այս «Իմաստասերն» ուսումնասիրել է նաև իմաստասիրություն։ Թե այսպիսի բովանդակությամբ երկեր էլ հորինել է նա, թե չէ, այդ չգիտենք։ Նրա մահից մոտ հարյուր տարի հետո ծնված, շատ տեղեկությունների գիտակ պատմագիրը[39] նրա մասին գրում է. «Յոյժ իմաստուն էր այրն և աստուածային շնորհօք զարդարեալ. սորա բանքն ամենայն իմաստասիրական ոճով, որպէս զԴրիգորի Աստուածաբանի, և ոչ գեղջուկ»։ «Մեծիմաստն գիտութեամբ քան զյոլովս և հանճարեղն յամենայնի՝ մտահարուստն Յոհաննէս, Սարկաւագ կոչեցեալ», մեր այն վարդապետներից է, որ երբեք չի գոհացել իր իմացածով, այլ հարաչյան աշխատելով ձգտել է նորանոր գիտանքներ ձեռք բերելու։ Եվ իզուր չէ, որ նրա աշակերտ Սամուել Անեցին, առանց նրա անունը տալու, պարզապես կոչում է նրան «Վարդապետն մեծ», «Իմաստասէրն», «Իմաստասէրն աստուածային», իսկ ավելի ուշ՝ Կիրակոս Գանձակեցին մի տեղ նրան հիշում է լոկ «Աշխատասէրն» մականունով։ Նա ինքն էլ ներքևում վերլուծված իր բանաստեղծության մեջ իր մասին գրում է, թե ուսման ու գիտության համար շատ տարիներ գիշեր-ցերեկ զեգերել ու տքնել է։ Վերջերս հայտաբերված մի հին հիշատակարան[40] նրա մասին գրում է. «Սա ի մանկական անտի տիրոց մինչև

---

38 Այսինքն՝ հավիտենական կյանքի մուտքի «սեման», շեմակալն է, որի վրայով պիտի անցնել հանդերձյալի մեջ մտնելու համար։

39 «Պատմութիւն Հայոց Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ», Թիֆլիս, 1909, էջ 104 և հետ.։

40 Տե՛ս Երևանի պետ. համալսարանի «Գիտական աշխատություններ», հատոր XIII, Երևան, 1940, էջ 410—414. Աբ. Մովսիսյանի «Հայագիր դպրոցի ծագումը և նրա հետագա վիճակը» հոդվածի մեջ։

ցվերջին որոշումն հոգւոյն յերկրորդեն [յերկրէն?՛] ոչ երբեք շեղեալ սայթաքեցոյց երբեք զուշ ոգւոյն ի նպատակէ ընթերցման. ուսանելոյ և ուսուցանելոյ, գրելոյ և ընթեռնելոյ, հսկելոյ և աղօթելոյ, դուիւ և զգիշեր արտաքոյ ամենայն զբաղանաց և վայրաքարշ իրաց»։

Կիրակոս Գանձակեցին (էջ 107 և հտն.) պատմում է նրա ընթերցասիրության մասին հետևյալ զրույցը. «Այնպէս փոյթ էր այրն յուսումն, զի պատահեաց յաւուր միում գնալ նմա յայրն, ուր գրեանն էին, և այլք ընդ նմա։ Իբրև ելին՝ որ ընդ նմայն էին, և փակեցին զդուռն, նա թաքոյց զանձն ի ներքս, այսպէս գիտելով նոցա՝ եթէ նախ ել նա։ Իբրև անցին աւուրք բազումք ի վերայ, դարձեալ գնացին յայրն ի պէտս ինչ, տեսին զնա և սքանչացան։ Հարցանէին զնա, թէ՝ «Ո՞րպէս ապրեցար առանց կերակրոյ և ըմպելոյ»։ Եւ նա եցոյց նոցա զգրեանն, զոր ընթերցեալ էր, և «Այս է, ասէ, իմ կերակուր և ըմպելի, զոր կերայ և արբի զաւուրս զայսոսիկ»։

Այսպիսի անդուլ աշխատանքով նա դառնում է բազմակողմանի հըմտությունների տեր, մեծ գիտնական, փիլիսոփա մատենագիր, տոմարագետ, պատմագիր, ճարտասան հեղինակ կրոնական ներբողների, միաժամանակ և բնական գիտություններով պարապող ու բանաստեղծ։ Նրա գիտնականության հետ բնականաբար մեծանում է և նրա իմաստության համբավը և նյութ դառնում զրույցների։ Նա մենակ չէր. միաժամանակ կային և ուրիշ գիտնական վարդապետներ—նրա ընկերները։ Նրանցից հիշվում են՝ Ալավկա որդի Դավիթ, Թոքակերի որդի Գրիգոր. բայց Սարկավագ Վարդապետն ամենից բարձր էր։ Այս երեքն էլ, ասում է Կիրակոս Գանձակեցին, «էին յաշխարհէն Գանձակայ»։ Եվ ասյա (էջ 107) բերում է, երևի Գանձակում լսած, հետևյալ զրույցը. «Դէպ եղև զի յաւուր միում նստէին երեքեան արքս սքանչելի, եկն անդ ոմն շինական այր մի և ասէ ցնոսա. «Երանի՜ որ գիտէ ո՞ իմաստնագոյն իցէ»։ Զայս իբրև ծաղրական ասաց։ Պատասխանի ետ Թոքակերի որդին և ասէ. «Ես ասեմ. քեզ. մինչդեռ էաք ի մերում աշխարհին, ես կտրող էի և կարող. իսկ Սարկաւագս՝ կտրել միայն գիտէր։ Իսկ այժմ սա կտրէ և կարէ, և բազում նկարս յաւելու ի վերայ»։ Զայս առակաբար վասն իմաստութեան նորա ասաց»։

Նա իր շնորհքն ու մեծ պատրաստությունն ամուլ չի թողնում. բացի այն, որ աշխատասիրում է շատ գրվածքներ, այլև անտարբեր և անհոգացող չի մնում ժամանակի հրատապ խնդիրների վերաբերմամբ։ «Սա զբազմաց փափաքելին, և ո՛չ ձեռնհաս, զհաստատ և զանշարժ տօմարն կարգեաց Հայոց՝ փոխանակ շարժականին և անհաստատնոյն. արար և միաբանութիւն ամենայն ազգաց տօմարի ընդ Հայոց»[41]։ Հայկական տոմարի այս կարգավորությունը Սարկավագ Վարդապետի նշանավոր գործերից մեկն է։ Հայոց թվականը, որ սահմանված էր Մովսես Կաթողի-

---

1 Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն*, էջ 104։

Ցոսի օրով, սկսվում է 552 տարեթվից և շարժական էր։ Տարին հաշվում էին միշտ միայն 365 օր։ Նահանջ տարի չկար, որ չորս տարին մի օր ավելի հաշվեին, և տարին ունենար 366 օր։ Տոմարի այս թերությունը շփոթություններ էր տալիս։ Արդ՝ Սարկավագ Վարդապետի ձեռով 1084 թվականից ընդունվում է անշարժ տոմարը նահանջ տարով։ Բացի այդ՝ տարեգլուխը կամ Նավասարդի մեկը, որ տարիների ընթացքում հուլիսի 11-ից դեպի ետ շարժվելով՝ 1084 թ. ընկնում էր փետրվարի 29-ին, ըստ «սարկաւագագիր» անշարժ տոմարի՝ նշանակվում է օգոստոսի 11-ին[42]։

Սարկավագ Վարդապետի հոգացողության առարկա են դառնում ժամանակի համար կարևոր ուրիշ խնդիրներ ևս։ Այսպես, օրինակ, նա բանասիրական աշխատանքներ է անում, պարզելով և դյուրիմաց դարձնելով հին իմաստասիրական գրվածքները, աշխատելով ձեռք բերել ստույգ օրինակներ ոչ միայն արտաքին կոչված երկերի, այլև կրոնականների համար[43]։ *Սաղմոսների թարգմանությունը փոփոխության է ենթարկված եղել կամ աղճատումով, կամ այլևայլ թարգմանություններով։ Այդ դրությունը շփոթության առիթ է տալիս եղել։ Սարկավագ Վարդապետը դրա առաջն առնելու համար Հաղբատի վանքի գրանոցում որոնելով գտնում է հին թարգմանիչների գրած մի Սաղմոսարան և արտագրել տալով տարածում Հայաստանի բոլոր կողմերը, որպեսզի ամեն տեղ միատեսակություն լինի այդ երգերի նկատմամբ։ Եվ ուրիշ այսպիսի հոգացողություններ։*

Նրա գործերից ամենակարևորը, սակայն, եղել է այն, որ նա իբրև վարդապետ միշտ հոժար է եղել ուսուցանելու. սիրով գրավոր պատասխանել է ուրիշների տված հարցերին և, որ գլխավորն է, ուսուցչություն է արել և պատրաստել է բազմաթիվ աշակերտներ, որոնց մի քանիսի գրական աշխատությունները դեռ մնում են։ Նա իր այս ժրաջան աշխատանքով մեծացրել է Հաղբատի դպրոցի անունը և կարելի է ասել, որ ինքը պատճառ է դարձել այդ վանքի գիտական և ուսումնական փառավոր համբավի։ Նա ուսուցել է և Անի քաղաքում. վերևում հիշված հետաքրքիր ձեռագրի մեջ[44] *Սարկավագ Վարդապետի համար պատկերավոր ձևով գրված է նաև հետևյալը. «Որ իբրև զիմաստուն մեղու՝ բարձեալ յանդամս մտաց զծաղիկս յերանգոց գունոց հոտոց և համոց՝ բերէր ի* **fաղաf իւր և տեղի սննդեան ի fաղաfամայրս Անի**, *և լի առնէր զտունն ի փարթամութենէ անտի... Շուրջ բակ բոլորեալ զմսնկունս զիւրեաւ խոնարհաբար և ախորժելի սիրով ուսուցանէր զխրթին և զխորին իրս»։ Այս դպրոցում նա ուսուցել է նաև քերականություն, թվաբանություն և այլ առարկաներ։*

---

42 Օրմանյան Մաղաքիա արեպիսկոպոս, *Ազգապատում, Կոստանդնուպոլիս, 1912, էջ 569—574, 1306—1309։*

43 Ղ. Ալիշան, *Յուշիկք հայրենեաց հայոց, հատոր Բ, էջ 286 և հետ.։*

44 *Տե՛ս էջ 65-ի 40-րդ ծանոթությունը։*

Այսպիսի բազմակողմանի ու բեղմնավոր գործունեության համար ինքն, այս մեծ վարդապետը, վայելել է մեծ հարգանք ամենքից։ Այս «Վարդապետն սուրբ»,—ինչպես կոչում է նրան Սամուել Անեցին,—իբրև կրոնավոր ևս հայտնի է եղել իր «բարւոք քաղաքավարութեամբ»—կենցաղավարությամբ։ Նույնիսկ զրույցներ են պատմել նրա սրբության մասին[45]։ «Կարի յոյժ սիրէր զսա թագաւորն Վրաց Դաւիթ... այնքան դի մինչ լսէր զգալոյսատ նորա, յոտն յառնէր ընդ առաջ նորա, և խոնարհեցուցանել զգլուխն՝ խնդրէր ի նմանէ օրհնութիւն»[46]։

2. Երկերը։— Բազմաթիվ և ըստ բովանդակության բազմազան են եղել Սարկավագ Վարդապետի գրական գործերը, որոնք մեծ մասամբ չեն տպագրված, մասամբ երևան չեն եկել, կան այնպիսիներն էլ, որոնցից հատվածներ են միայն հայտնի։ Նա հորինել է ներբողյաններ, մեկնություն, ճառեր, տաղեր, շարականներ, աղոթքներ, տոմարական աշխատություններ, խրատներ («Բան խրատու առ ուսումնասէրս»), տիեզերագրական և ուրիշ բնագիտական գրվածքներ, փիլիսոփայական, բարոյագիտական երկեր և այլն[47]։ Շատ ցավալի է կորուստը նրա հորինած Պատմության (ըստ երևույթին՝ երկու գիրք), որ հիշատակում են հետագա գրողները, և որից հատվածներ է մեջ բերում Սամուել Անեցին[48]։ Նա գրած է եղել սելջուկների պատմությունը սկզբից սկսած։ Տուղրիլի վերջին տարիներում, ինչպես և Ալփասլանի ու Մելիքշահի օրով կատարված դեպքերին նա ժամանակակից է եղել։ Մեզ հասած հատվածների մեջ ցոլանում է նրա վերաբերմունքն իր պատմած եղելությունների և նրա հարտար ու բովանդակալից շարադրությունը՝ պարզ, մշակված և արվեստավոր, միանգամայն և ազնիվ ոճով։ Ավելորդ չի լինի այստեղ բերել այն կտորը, որով նա բնութագրում է Մելիքշահին։ «Իբրև առնոյր զփառս իշխանութեան բարեբաղդն Մելիքշահ զկնի հօրն մահուան՝ Ալփասլան կոչեցելոյն, մեծապէս կարգօք յօրինէր զթագաւորութիւնն ըստ անուանն արդարև եղեալ արքայ արքայից։ Ոչ հետևեալ հօրն բարուց և կամաց, այլ յաւէտ մանաւանդ զընդդէմսն ախորժեալ. մինչ զի և մուտահաս եղեալ գնորայսն բասրէր զիմացմունս, իբրև եղեալ հակառակ խաղաղութեան և կենաց մարդկան՝ արեամբ և զրկմամբ խանդացեալ։ Իսկ ինքն իմաստաբար քաղաքավարութեան կարգօք պատրաստէր զամենայն։ Արդ՝ խոհեմն այն և արի քան զյոլովս ի թագաւորաց և քան զամենեսեան որ առ մեօք՝ ոչ այնքան տանէր հոգ՝ որքան արդարութեամբ առ ամենեսին վարիլ. զի մի՛

---

45 Կ. Գանձակեցի, *Պատմութիւն*, էջ 105 և հետ.։

46 *Անդ*, էջ 105։

47 Ղ. Ալիշան, *Յուշիկք հայրենեաց Հայոց*, հատոր Բ, էջ 278—307, «*Սարկաւագ Սոփեստէս*», էջ 299—300։ Դ. Ջաբբանալյան, *Հայկ. հին. դպր. պատմ.*, Վենետիկ, 1897, էջ 609—616։ Հ. Ոսկյան, *Հովհաննես Սարկավագի գրությունները*, «Հանդէս Ամսօրեայ», Վիեննա, 1925, էջ 118—126, 233—247։ *Անդ*, էջ 27—39՝ «*Հովհաննես Սարկավագի կյանքը*», նույն հեղինակի։

48 Ս. Անեցի, *Հաւաքմունք*, էջ 97 և հետ., 119 և հետ.։

ոք լիցի տրտում ի զրկելոց, և հպարտ՝ ի գոռոզաց։ Էր և ազատաբարոյ և մեծախորհուրդ. այլ և տեսիլ մարմնոյն արժանի թագաւորութեան. ընդ որում հեզութիւն ի քաղցրութիւն բարուցն լծակցեալ՝ առնէր սիրելի ամենեցուն. զոր միայն կոչեցից թագաւոր և փարթամ։ Սա ի դոյզն ժամանակի փոքր ինչ նուազ զբոլորս հնազանդէր տիեզերս, զորս այլք ի թագաւորաց ի բազում ժամանակս և կամ ո՛չ բնաւ։ Բայց ո՛չ այնքան պատերազմաւ և բռնութեամբ, որքան սիրով և քաղցրութեամբ։ Զի թէ սակաւ ժամանակաւ այնքան զօրեաց, կարծեմ թէ և ոչ ելրոպէ կարէր ոչ տալ մուտս արքայութեան նորա, եթէ յոլովեալ էին կենաց նորա ժամանակք»։ Նրա մահից հետո,—ասում է,—«անպատմելի եղև խռովութիւն ամենայն ազգաց... Եւ այսպէս բարիքն ի բաց վճարեցան ընդ խզման կենաց թագաւորին. որոյ երկք և աշխատութիւնք թագաւորական ուրոյն, և շահն և օգուտն՝ հասարակաց ամենեցուն, մեծամեծքն և ընտրելիքն, մանաւանդ պիտաղազականն ասեմ զկեանս, և զանկարօտս և զանհակառակս»։

Այս մեծ հեղինակի գրական դեմքը լիովին կպարզվի, երբ նրա բոլոր երկերը, ինչ որ մնացել է, կհավաքվեն և իսկական գիտական եղանակով կհրատարակվեն ու բազմակողմանի կուսումնասիրվեն։ Այն ժամանակ մենք կտեսնենք նրա հայացքները, թե ինչպես նա իր լուսավոր մտքով հաճախ բարձր է կանգնած եղել միջնադարյան թանձրամած խավարից, մի խուզախնդիր ու որոնող ոգի, ձգտող իրերը բնական ձևով բացատրելու, մաքառող ընդդեմ սնահավատքի կամ, ինչպես ինքը գրում է, «առասպելական, ստութեան», «հիմարների կարծիքների»։ Ալիշանը[49] նրա գրվածքներից,—ցավոք դարձյալ առանց հայտնելու, թե նրա ո՛ր երկերից,—բերում է երկու ցիտատ՝ ասելով, թե ինքը Սարկավագ Վարդապետն ուսումնական բաներ սովորելու և գրելու համար հայտնապես պահանջում է, թե «Ամենևին բազմահմուտ պարտ է գոլ ձեռնարկողին այսմ, ոչ միայն սրբոց և աստուածաշունչ գրոց, այլ և արտաքնոց»։ Ուրեմն պետք է տիրապետել ժամանակի ամբողջ գիտութեանը։ Բայց այդքանն էլ դեռ բավական չէ. նա պահանջում է նաև փորձով ստուգել գիտցածը. «Դարձեալ թէև սոքօք [կրոնական և արտաքին գիտութիւններով] կիրթ և վարժ, առանց փորձի՝ կարծիքն հաւատարմանալ ոչ կարասցեն. և փորձն՝ հաստատուն և աներկբայ... վասն զի ոչ է պարտ միայն հնադիտակ [=հին բաներն իմացող] լինել, այլ և ինքնաբաւ [=ինքն իրեն բավական, ուրիշի անկարոտ] ըստ շնորհացն աստուծոյ»։ Ահա թե Սարկավագ Վարդապետը որպիսի արժեք է տալիս փորձին։ «Առանց այսպիսի հնարիւ գրող կամ խոսող գիտնոց խելքը՝ մեղադրելով կանուանէ. «Խօլ հանճար՝ անհանճարիցն»,—ավելացնում է մեր բազմահմուտ բանաստեղծ-բանասերը և շարունակում. «Արդ անտարակուսաբար կրնանք ըսել որ Սարկավագ Վարդապետ շատ մեծ արդիւնք ունեցավ այսպիսի ջանքով և գործերով, որոց բովանդակութիւնն է՝ ըլլալն իր ժամանակին և երկրին

49 Ղ. Ալիշան, *Յուշիկք հայրենեաց*, Ր, էջ 295։

մեջ նորոգող ուսմանց և ընտիր ախորժակ մատնող ինչ որ ժե դարուն մեջ սկսան Եվրոպացիք՝ ինքը մետասաներորդին սկսեր էր, կամ թե իրեն ժամանակակից դպրոցական ըսվածներուն հետ»։ Այս բնորոշումը շատ ճիշտ է։ Արդարև Բագրատունի թագավորների օրով արդեն Անիում, ինչպես տեսել ենք, մեծ ձգտում և ջանք կար գիտությունը նորոգելու հայերի մեջ և այդ ձգտման ու ջանքի ներկայացուցիչն էր Դրիգոր Մագիստրոսը, բայց իսկական կատարողը, գլուխ բերողը եղել է Սարկավագ Վարդապետը։ Նա շարունակել է Անի քաղաքի գործը, անպայմանն նաև այս քաղաքի աղդեցությամբ, քանի որ նա ամենայն հավանականությամբ վաղ մանկության ժամանակ, ծնողների հետ տեղափոխվել է Անի, այնտեղ մեծացել ու սնվել և այնտեղ ուսումն ու գիտություն ամբարել իր գլխում։ Ուստի և անհիմն չէ այն, որ Վրաց թագավոր «Դավիթ Շինողի պատմիչը (12-րդ դ.), խոսելով 1123—1125 թվերի միջոցին Թբիլիսիում գումարված հայ-վրացական եկեղեցական ժողովի մասին, նշում է, որ ժողովին հայերի կողմից ներկա էին «բազմաթիվ եպիսկոպոսներ և վանքերի առաջնորդներ, որոնք պարծենում էին նրանով, թե ինչպես հասել են ամենայն ուսմանց և գիտության գագաթնակետին»[50]։ Դա հայկական վերածնության առաջին վուլերի արգասիքն էր, բայց միայն այդ չէր։ Ապագան անշուշտ կհայտաբերի Սարկավագ Վարդապետի գրական վաստակի ուրիշ կողմերն ևս և նրա լուսապսակ գեմքն ավելի ևս կպայծառանա։ Մինչ այդ՝ կանդ առնենք նրա երկու գործի վրա և որոշենք սրանց արժեքը մեր տեսակետով։

3. Հայրենասիրական գաղափարախոսությունը։— *Ինչպես վերևում ասվեց, Սարկավագ Վարդապետը ժամանակակից էր սելջուկյան թուրքերի, «արիւնախանձ Ալփասլանի» և ուրիշների խժդժություններին և գրել էր նրանց պատմությունը։ Թե ինչպես են դրանք անդրադարձած եղել նրա պատմության մեջ, և ինչպիսի զգացումով է վերաբերվել նա իր պատմած աղետալից իրակությունների և արդյոք նա էլ ողբեր հորինե՞լ է իր պատմածների առթիվ, մենք այդ չգիտենք։ Բայց որ իր ժամանակի թշվառությունը նրա մեջ ևս զորացրել է հայ հայրենասիրական ոգին, այդ հավաստի է։ Արիստակես Լաստիվերտցին, հարկավ, մենակ չի եղել իր հայրենասիրական ցավով. նա ներկայացուցիչն էր իր ժամանակի մարդկանց, որոնք լցված էին նման զգացումով։ Եվ այդ բնական է. ընդհանուր թշվառությունը մարդկանց միացնում է մի ընդհանուր կապով։ Ջարթնում և աճում է ազգային ինքնագիտակցությունը. համազգային հայրենասիրության գաղափարն ու զգացումը, ծնվելով ժողովրդի դառնաղետ վիճակից՝ հետզհետե ընդհանրանում է, ազգային միության օղակներից մեկը դառնում, անբաժան մնալով թշվառ ու տանջվող ժո-*

---

50 Ն. Մելիքսեթ-Բեկ, *Հովհաննես Սարկավագ Վարդապետ Հաղբատացու «Վասն շարժման և սասանութեան երկրի»*, ՍՍՀՄ ԳԱ հայկական ֆիլիալի «Տեղեկագիր», սերիա I, № 1, Երևան, 1943, էջ 76։

ղովրդի վիճակի արդահատությունից,—ահա թե ի՛նչն է կազմում վերածնության շրջանի նոր ողբերգության էությունը սկզբում։ Քաղաքական կյանքի, հին անկախության և ազատության, ժողովրդի բարեկեցության կորուստը, ժողովրդի հայրենաթափ լինելն ու ցրվելը, նախ այս են ողբում լաստիվերտցու հետ մեծ ազեփից ցնցված ու խելաթափ։

Բայց երկրորդ սերունդն արդեն ուշաբերում է. լոկ ողբը բավական չէր։ Եվ ահա ծնվում է ցրված հայ ժողովրդին ի մի հավաքելու և փրկելու ձգտումը որոշ գաղափարախոսությամբ, որի առաջին արտահայտիչը գրականության մեջ՝ է մեծիմաստ Սարկավագ Վարդապետը։ Կիրակոս Գանձակեցին (էջ 105) հաղորդում է նրա մասին. «Սա գրեաց ճառս ներբողականս ի մեծաշօր արքայն Տրդատ, ի սուրբ հայրապետն Ներսէս, և ի սքանչելին Սահակ և Մեսրոպ. արար շարական Ղևոնդեանցն քաղցր եղանակաւ և յարմար բանիւ, որոյ սկիզբն է այս՝ Պայծառացան այսօր սուրբ եկեղ. գրեաց և նոցա ճառս ներբողականս»։ Նրա անունով մնում է և մի ներբողական լուսավորչի, «հաճոյական ոճով և կիրթ հանճարով յօրինուած»[51]։ Որ Սարկավագ Վարդապետը ճառ, ներբողյան ու շարական հորինել է հայկական պատմական անձերի վրա, կարելի է ասել, որ դրանցով հիշեցնելով հայ անցյալը՝ նա ցանկացել է խրախուսել սրտաբեկ մարդկանց։ Ի պատիվ Ղևոնդյանց ոգած հոգևոր երգի[52] մեջ նա գրում է. «Հեղմամբ արեան սրբոց քոց հօտապետաց զեկեղեցւոյ քոյ ցրուեալ մանկունըս ժողովեա՛ յուրախութիւն, ըզվարատեալս տրտմութեամբ և արտասուաց յորդահոս բղխմամբ փրկութեան մերոյ պարգեւաց բաշխո՛ղ»։ Նա խնդրում է, ուրեմն, որ աստված հայ եկեղեցու ցրված մանուկներին, տրտմությամբ և հորդահոս արտասուքով վարատվածներին (իրենց տեղից, երկրից քշված, ցիրուցան եղածներին) ժողովի ուրախությամբ և փրկի։ Ցրված հայ ժողովրդին հավաքելու այս տենչն ու ձգտումն ահա դառնում է մի նվիրական իղձ ու աղոթք և շատ վաղ, լաստիվերտցու կրտսեր ժամանակակցի, Սարկավագ Վարդապետի ձեռով մտնում մեր ժամերգության մեջ։ Այդտեղ դեռ չկա քաղաքական անկախության խընդիր, այլ միայն տառապանքից ազատվելու և Հայաստանում մնալու մի իղձ է այդ։

Սարկավագ Վարդապետի այս աղոթքը շատ փոքր, իր ձևով շատ հասարակ ու հետևակ բան է. բայց իր բովանդակությամբ մեծ ու վսեմ է և անկեղծորեն բխած լինելով իրականությունից, խորն ազդու է մանավանդ երբ իր «քաղցր եղանակով» երգվում էր եկեղեցում տառապյալ հավատացյալներից, առանձնապես նրանցից, որ դեռ երկար դարեր

---

51 «Քահանայութեան ճառը, ինչպէս նաև ներբողական գովեստք ի ս. Լուսաւորիչն և ի Թարգմանիչս և Աղօթամատոյցն հրատարակեալ են ի Վենետիկ ի շարս Հայկական Սոփերաց 1853 թ.»։ Գար. Ջարբհանալեան, Հայկ. դպր. պատմ., Բ, էջ 613, ծանոթ., այլև էջ 612։

52 «Շարական հոգևոր երգոց», էջմիածին, 1861, էջ Բ. «Յովհաննէս Վարդապետն Սարկաւագն զՂևոնդեանց ԴՋ մանկունք՝ զՊայծառացար այսօրն»։ Տե՛ս էջ 581։

զգում էին իրենց վարատված լինելը և աչքերը կարոտով դարձնում էին դեպի իրենց բնիկ երկիրը՝ Հայաստան։

Այսպես՝ մեր **բանաստեղծությունը**, կրոնական զգացումից և հայրենասիրական ոգբից հետո, գտնում է արդեն իր կարևոր և մեծ թեմաներից մեկը, որ այլևս կրոնական չէ։ Ճիշտ է, դրա տոնը դեռ շատ տխուր է, բայց դա այլևս ողբ էլ չէ, այլ մի նոր բովանդակությամբ ու նոր ոգով մի երգ է, դարձյալ հայրենասիրական։ Եվ այսպիսի զարգացումը բնական էր. խիստ կրոնականից մի անգամով թռիչք չէր կարելի անել դեպի մաքուր աշխարհականը, աշխարհիկ կենցաղն ու սերը, քանի որ բանաստեղծները դեռ հոգևորական էին, իսկ հայրենասիրությունը նաև սրանցն էր։ Այսպիսի հայրենասիրական թեման միաժամանակ և այն դարի պահանջն էր։ Եվ քանի որ հայ ժողովրդի վիճակը նույնն է մնացել 11-րդ դարից մինչև առ ի 20-րդ դարի առաջին երկու տասնամյակները, քանի որ կրկնվել են կոտորածները և ժողովրդի վտարանդումը, ուստի և այդպիսի թեմայով երգը, անգամ աղոթքը, հարատևել և կրկնվել է մինչև 19-րդ դարում և դեսը։ «Իմ սիրելի զաւակունքս կը թափառեն օտար աշխարհ...». «Եկայք, որդեակք իմ սիրելիք...». «Մեր հայրենիք զիս կու կանչէ...». «Մինչ իմ որդիք, ո՛վ գիտե՛... օտար աշխարհ հածում են», ահա 19-րդ դարի երկրորդ կեսին սիրված երգերի ընդհանուր կողմը։ Դա իր բովանդակությամբ մի ամբողջ գրական տեսակ է, որ իր սկիզբըն առնում է Սարկավագ Վարդապետի այն ըստ երևույթին աննշան հոգևոր երգից։

4. «Բան իմաստութեան»։ Արվեստի ծագման նոր տեսությունը։— Սարկավագ Վարդապետի բանաստեղծություններից մնում է միայն մեկը՝ «Բան իմաստութեան ի պատճառս զբօսանաց առ ձագն որ զաղօթանոցաւ նորա ճռուեղէր քաղցրաձայն որ կոչի սարիկ»[53]։ Այս մեծ (188 երկայն տողերով) քերթվածն իր ձևով ու բովանդակությամբ մի նշանակալից նորություն է մեր հին գրականության մեջ։ Եթե դա պատահմամբ փրկված չլիներ կորստից, մեր նոր մտավոր հոսանքի զարգացման տեսությունը թերի կմնար։ Եվ ո՞վ գիտե՝ քանի՛ այդպիսի արժեքավոր բանաստեղծություններ ոչնչացել են։

Այս երկն իր նյութով՝ բանաստեղծի և սարեկ թռչունի միջև փոխանակված մի տրամախոսություն է, որի մեջ թռչունը ներկայացուցիչն է արտաքին բնության։

Թեման՝ արվեստի ծագման խնդիրն է, հատկապես երաժշտության ու բանաստեղծության, որոնք երկուսը հնումն սերտ կապված են եղել

---

53 Տպագրված է «Բազմավէպ» հանդեսում, Վենետիկ, 1847, էջ 221 և հետ. «Յովհաննու Սարկաւագի իմաստասիրի և վարդապետի ասացեալ Բան իմաստութեան ի պատճառս զբօսանաց առ ձագն» և այլն, մի նախորդող հմտալից հոդվածով՝ «Յովհաննէս Սարկաւագ», որ ունի «Հ. Ղ. Մ.» ստորագրությունը, որ է՝ «Հայր Ղևոնդ Մարգար», Ալիշանի հին ստորագրությունը։

միմյանց հետ. բանաստեղծը երգի և՛ խոսքերը, և՛ եղանակը հորինողն էր, և՛ երգողը, այսինքն՝ կատարողը։ Այսպիսի ստեղծող է եղել և Հովհաննես (Յովհաննէս) Սարկավագը, որ ինքն այս քերթվածի մեջ իրեն անվանում է սարեկի արվեստակից, այսինքն՝ երգիչ։ Նա արվեստի ծագման մասին մի նոր տեսություն է առաջ բերել։ Մինչդեռ ըստ հին կրոնական հայացքի՝ արվեստի աղբյուրը «հայտնությունն» է, նա բանաստեղծությունը համարում է բնության նմանողություն և ներբողում է բնությունը։

Այսուհանդերձ, նրա այս քերթվածի ամբողջության գեղեցկություններից մեկն այն է, որ բովանդակության առաջխաղացությունը լինում է կրոնական առէջքի վրա, որը, սակայն, երկրորդական տեղն է բռնում։ Մի կողմից՝ իր դարից տարբեր և անկախ մտածողն է հանդիսանում, մյուս կողմից՝ ամեն ինչ պարուրված է կրոնական պարուրակով, որ բնական է այն ժամանակի համար։ Փիլիսոփա մտածողը գտնվում է իր ժամանակաշրջանի մեջ և ոչ նրանից դուրս, և այս տալիս է նրա երկին իրականության դրոշմ, որով և ավելի դրավիչ է դառնում այն։ Էական կրոնականը ոչ թե Ս. Գրքից առնված սակավաթիվ խոսքերն և ակնարկներն են, այլ քրիստոնյաների աչքին կարևորություն ունեցող մի քանի խնդիրներ,—որ են, այսպես ասած, «հայտնությունը», «սկզբնական» կամ «Ադամա մեղքը», որ իբր ժառանգաբար անցնում է բոլոր մարդկանց, Բաբելոնի աշտարակաշինության հանցանքը,—որոնց մասին բանաստեղծի տեսակետը ծավալվում է գլխավոր մտքի, թեմայի հետ զուգընթաց։ Առհասարակ քերթվածը հարուստ է բազմազան բովանդակությամբ, առլի է ուրիշ դրույթներով ևս, որոնք առաջին հայացքից թվում է, թե կողմնակի խնդիրներ են, բայց դրանցով իսկապես պարզաբանվում է քերթվածի թեման։

Ըստ հին տեսության, ինչպես ասվեց վերևում, արվեստի աղբյուրը «հայտնությունն»[54] է։ Արդ՝ դա, ըստ կրոնական հայացքի՝ այն գիտանքն է, որ աստված տալիս է կամ հայտնում է մարդուն այլևայլ գերբնական միջոցներով, կամ իր երևալովը նրանց, կամ հրեշտակի միջոցով։ Հայտնություն է և սոսկ աստվածային ներշնչումը. այսպես, օրինակ, կարծում էին, թե այդ ունեցել են Ս. Գիրքը գրողները, ուստի մեզնում այն կոչվել է «Աստվածաշունչ»։ Դա մի շատ հին կրոնական հասկացություն է. հոմերյան քերթվածների մեջ էլ աստվածուհին— մուսան է խոսում։ Մեր գրականության մեջ էլ նույնը երևում է. Դավթակ Քերթողն իր Ողբի սկզբում դիմում է «աստվածային բանի արվեստավոր հոգուն», ասելով՝ «յօրինեա՛ իմաստիւ զախրական երգմունս»։ Գրիգոր Նարեկացին էլ դեռ նույն կրոնական հայացքն ունի. նա, ինչպես տեսել ենք, իր Ողբերգության մեջ դիմում է աստծուն, ասելով.

---

54 «Յայտնութիւն»—Révélation, Offenbarung, откровение.

Եղիցի՛ հոգի [=շունչ] քո խառնեալ ի սա,
Շունչ զօրութեան Մեծիդ միասցի՛
Ի քո՛ ինձ շնորհեալ ստեղծաբանութիւնս։

Իսկ մի ուրիշ տեղ նույն գրքի մեջ նա գրում է՝ դարձյալ խոսքն ուղղելով աստծուն.

Ի քէն ազդեցաւ գրել ինձ զսոսին։

Այսպես, հին կրոնական հավատալիքով, աստված ինքն է խոսել մարգարեների բերանով կամ «ի ձեռն մարգարէից»։

Չսիտի կարծել, սակայն, թե Սարկավագ Վարդապետը մերժում է ընդհանրապես հայտնությունը։ Այդ դեռ շատ վաղ էր նրա դարի համար, երբ իշխում էր մեծ բարեպաշտությունը։ Նա ընդունում է կրոնական հայտնություններն իբրև ճշմարիտ եղելություններ և իր քերթվածի մեջ հիշատակում էլ է առաքյալներին եղած հայտնությունը վերնատանը հոգեգալստին. «որպէս և այլ տնտեսականքն». այսինքն՝ Քրիստոսի մարդեղության վերաբերյալ հայտնությունները, որոնք ասվում են նաև «տնօրինականք»։ Նա այդ հին տեսությունը չի ընդունում մարդկային արվեստի—երաժշտության ու բանաստեղծության նկատմամբ։

*Ինչ վերաբերում է Սարեկի «բազմանվագ եղանակների պատճառին», այդ էլ, ըստ մեր իմաստասեր Սարկավագ Վարդապետի, հայտնություն է, բայց այսպիսի մի հասկացությամբ։ Երբ Սարեկն իր արվեստի ծագումը բացատրելու համար ասում է Բանաստեղծին. «Արդ կացի ի բնականին որոյ պարգեւն է յայտնութիւն», այդ կնշանակի բնականի մեջ մնալու հետևանքով է տրվել նրան երգելու շնորհքը, կամ նրա արվեստի ներշնչումն «բնականի պարգև» է, արդի բառով ասած, բնատուր է։ Ուրիշ տեղ էլ քերթվածի մեջ Բանաստեղծն ասում է, թե **սարեկ, սոխակ և այլն «Բնականաւն են պաճուճեալք»**։ Այս կարգի **«հայտնությունն»**, ուրեմն, ուրիշ բան չէ, բայց եթե մի բնական հատկություն։ Այստեղ էլ, ուրեմն, Բանաստեղծը շեշտում է բնականը, բնությունը, լինի արտաքին աշխարհն իր ամբողջությամբ, թե որևէ էակի հատկությունների միահամուռը, իբրև նրան իրեն հատուկ բնությունը, ընդաբուխս բնությունը։ Սարեկը երգում է «զգայրենին բարբառելով», այսինքն՝ նա երգում է ինչպես իր հայրերը, ինչպես իր սեռի թռչնիկներն իրենց ընդաբուխս բնությամբ։*

Մինչդեռ թռչնիկների երգեցողությունը բնածին է և ոչ-սովորովի, այդպես չէ մարդկայինը։ Մարդս զարգանալով բարձրացել է մտավորապես, հեռացել է բնական վիճակից, ընկել է «ոչ բնաւոր»—ոչ-բնական, անբնական վիճակի մեջ։ Հենց այդ պատճառով նրա արվեստն, ըստ Սարկավագ Վարդապետի, բնածին չէ, այլ նա այն սովորում է նմանելով բնությանը, բայց միշտ էլ ցած է մնում բնությունից։

5. Հորինվածքը: — *Դժբախտաբար մեզ չեն հասել Սարկավագ Վարդապետի ուրիշ բանաստեղծությունները, որ տեսնեինք, թե ինչպես է գործադրել նա իր տեսությունը*[55]: *Բայց հենց այս միակ քերթվածի մեջ էլ երևում է, որ նա իրրև քերթող գեղեցիկ հորինել գիտե: Նախ տեսնենք, թե նա ինչպես է անդրադարձրել բնությունն ու իրականությունն իր այս երկի մեջ: Գրիգոր Նարեկացին էլ, որ դեռ կանգնած է կրոնական հայացքի վրա, ունի բնության զգացում: Նա բնությունն զգում է ներհայեցական—ինտուիտիվ կերպով. նա բնությունից վայրկենական տպավորություն ստանալով՝ անմիջական ծանոթություն է ունենում նրա մասին և այդ,—ինչպես և իր գիտակցության մեջ ծնված մի միտք կամ մի հուշիկ, — արտահայտում է բանաստեղծորեն ինքնաբուխ և արագ ծագած պատկերներով: Այսպես չէ Սարկավագ Վարդապետի համար: Սա էլ, հարկավ, տպավորվում է բնությունից, բայց նրան մատչում է երկար դիտելով այն, խորհելով ու դատելով, ուսումնասիրելով և եզրակացություն հանելով նրա մասին: Այսպես վարվում է նա իբրև իմաստասեր, և որովհետև նա միաժամանակ և բանաստեղծ է, իր այսպիսի հոգեկան գործունեությունը ձևավորում է բանաստեղծորեն: Նա նախ մտածել է իր քերթվածի հիմնական գաղափարը—թեման և ապա ստեղծել է դրա համար պատշաճավոր սյուժետը — Բանաստեղծի իրեն և Սարեկի տրամախոսությունը: Բայց այդ ստեղծումը կատարվել է ոչ սառն, անկենդան եղանակով, այլ ջերմ լիրիզմով հորինել է նա մի իմաստասիրական քնարերգություն: Մեծ ճարտարությամբ նա ընթերցողի առաջ սիրում է իր մտածմունքներն ու զգացմունքները, և ինչպես լավ դիտել գիտե, նույնպես և գիտածը տալիս է մեզ. մանրամասնությամբ նկարում է Սարեկ թռչունը, միշտ ցույց տալով իր վերաբերմունքն առ նա: Չկա քերթվածի սկզբում այլաբանություն, այլ մեր առաջ երևում է իրական երգեցիկ թռչունը, թեպետ Բանաստեղծը խոսքն ուղղում է նրան: Մենք տեսնում ենք և՛ իրեն Բանաստեղծին իր որոնող մտքով, միաժամանակ և՛ կրոնավորին իր աղոթանոցում: Նրա երկի գեղեցկություններից մեկն էլ հենց այս է, որ նա և՛ իրական թռչունի մասին է երգում, և՛ իր տեսության, այլև բանաստեղծության նյութ է դարձնում իր անձնականը:*

Նրա քերթվածի մեջ ամեն բան ասված է պարզ ու հասարակ ձևով,

---

55 *Սարկավագ Վարդապետի տեսության մասին այս եզրակացությունը ես եմ պարզել առաջին անգամ 1899—1900 թթ.: Այնուհետև նույնը կրկնել եմ հայոց հին գրականության դասախոսություններիս ժամանակ էջմիածնում, Թբիլիսիում, Բաքվում և Երևանում: Նույնը կա նաև 1923 թ. ուսանողների համար դասախոսություններիս ապակետրված Համառոտագրության մեջ, որ հրատարակված է «Ձեռագրի իրավունքով», որ և 1941 թ. տպվեց ՍՍՀՄ ԳԱ հայկական ֆիլիալի «Տեղեկագրի» մեջ: Արդ՝ 1940 թ. Երևանում տպված մի գրքի մեջ աղքատիմացի մեկը բառացի սեփականել է իմ եզրակացությունը: Նա յուրացրել է նույնիսկ իմ ցավը՝ «դժբախտաբար մեզ չեն հասել...», և ուրիշ բաներ: Ուստի խնդրում եմ ընթերցողներին, որ չկարծեն, թե ես օգտվում եմ 1940 թ. տպված գրքից: Ես քաղում եմ սեփական աշխատությունիցս, մի փոքր փոխելով նյութի դասավորությունը: Աղքատիմացն ա՛յս անգամ չի արել:*

սակավաթիվ պատկերավոր արտահայտություններով, սակայն այդ՝ իր պարզությամբ հանդերձ՝ ազդեցություն է թողնում իր հարուստ բովանդակությամբ, որ շարունակության մեջ հետզհետե ավելի ճոխանում և առլցվում է դանազան մտքերով, որոնց արտահայտության համար նա գտնում է բառեր ու խոսքեր մեծ փարթամությամբ, բայց ոչ ճոռոմությամբ։ Քերթվածն ազդում է նաև իր մեծավայելուչ ոտանավորով, որ մարդու լսելիքը շոյում է իր յամբական ռիթմով, որ և իր երկայն տողերով ու տողամիջի հատածներով ունի լուրջ բնավորություն և շատ պատշաճում է բովանդակությանը։ Այս չափը, հարկավ, Սարկավագ Վարդապետի ստեղծածը չէ. նույնով հորինել է Գրիգոր Մագիստրոսը, այն էլ միակերպ հանգերով. դա գալիս է ավելի հին ժամանակներից և դործածական է եղել նաև հետագայում[56]։ Սարկավագ Վարդապետն այդ կիրառել է մեծ աջողությամբ, առանց հանգերի, ինչպես են մեր ոտանավորներն իրենց հին ձևով։

Հետևենք քերթվածի բովանդակությանը, որով կպարզվի գլխավոր խնդրի դրումն ու լուծումն ըստ հեղինակի, ինչպես և Քերթողի մտածության ընթացքը և նրա երկի հորինվածքի ընդհանուր բնույթն ու գեղեցկությունը։ Իսկապես պետք է կարդալ և ուսումնասիրել քերթվածի բնագիրը՝ սրա գեղեցիկ ամբողջության մասին ճիշտ և լրիվ գաղափար կազմելու համար։ Ցավոք այստեղ չենք կարող մեծ հատվածներ մեջ բերել։

Քերթվածն սկսվում է դիմումով Սարեկին, եվ որովհետև հեղինակն իր աղոթանոցում է, հրավիրում է թռչնիկին գովերգելու արարչին։ Այնուհետև նա ամենայն մանրամասնությամբ, մի ամբողջ մեծ հատվածով (34 տող) վերլուծում է Սարեկի երգի թողած այլազան տպավորությունները. մեկ ա՛յս է լսում նա այդ երգի մեջ, մեկ ա՛յն։ Ինչպես մի բնագետ՝ նա հաճախ ուշադրությամբ լսել ու դիտել և ուսումնասիրել է այդ թռչունին, ուստի և մեծ ճշտությամբ բնորոշում է և՛ թռչունի, և՛ նրա երգի այլ և այլ, իրար հակառակ հատկությունները։

Արթո՛ւն և զուարթուն թրռչուն հրսկող և բարբառող,
Կանչող և կարկաչող, ճրռճռուող ձայնող պաշտօնասէր...
Անմերձ և մօտաւոր, ուրախարար լսասրրաց.
Քաղցրաձայն դաշնակաւոր, որպէս կարծեմ, ըստ արուեստին.
Սաստկախոս և հարթավանկ, խանդաղատող և ողբերգակ.
Հրամայող և ողոքող, ըզխրատականըս ներադրող,
Սպառնացող և հեզախօս, գրգուող կոչող և հրաժարող.
Կականող և ձայնարկու, յոյժ խընդացող և զուարճացեալ.
Արդ գիշերըն քեզ ի տիւ, և խաւարն որպէս ըզլոյս...
Պիտոյիւք սրղագունիւք իբր անճաշակ մարմին լըցեալ,
Նուագօքըն կերակրեալ որպէս ունող զայն զօրութիւն...

56 Այս չափի մանրամասնություններ կարելի է տեսնել Մ. Աբեղյանի «Հայոց լեզվի տաղաչափության» մեջ, Երևան, 1933, էջ 341—351։

Թռչունի երգի դովքով հանդարտությամբ սահուն կերպով զարգացնում է նա իր եղումը և դիմում իր բուն խնդրին։ Բանաստեղծը լսելով Սարեկի երգը՝ հափշտակվում է դրանով և հարցնում, թե այն «արուեստիւ ամենահնար երաժիշտը» որտեղից է ստացել իր «քաղցրաձայն դաշնակավոր» երգելու շնորհքը, քանի որ նա «անվարդապետ» և ինքնուսումն է, ոչ մի ուսուցչի մոտ չի սովորել։

Ո՞վ պարող դու անձանձիր և կաքաւիչ յոքնանըւագ...
Արդ ուստի՞ իցէ ſեզ խօսել յայլալեզուս և յընտանիս.
Ե՛կ ուսո՛ ինձ, զի ծանեայց, կիսակատար իմաստակիս.
Մի՛ պատճառեր դանբանութիւն, դո՛ւ յօդաձայնըդ վերծանօղ,
Անյօդ ձայնիւ վարդապետեա՛, և ըստացի՛ր զիս աշակերտ։
Զի հատուցից քեզ փոխարէն ընդ ուսելոյ իմաստութեանն,
Արձակեալ քեզ ներբողեան թողից ըզկնի անապական,
Առ հանդերձեալըն ժամանակ անչնչելի քաջայարմար,
Յորդորականս և վայելուչս, յորմէ օգտին իմաստնացեալք։

Այստեղ առաջին մասի մեջ հենց,—Քերթողն ինքն իր երկը մասեցի է բաժանել,—գծվում են այս «իմաստության բանի» կարևոր կողմերը. 1) գովաբանում է բնությունն ի դեմս Սարեկի. 2) դրվում է նրա երաժշտական շնորհքի ծագման խնդիրը. 3) Քերթողը ցանկանում է, որ ինքը ի դեմս Սարեկի՝ դառնա բնության աշակերտ և սովորի նրանից, և 4) որ բնության աշակերտ դառնալով՝ նա անմահ, «անչնչելի, քաջայարմար» ներբողյան կթողնի ապագայի համար։

Երկրորդ մասի մեջ թռչնիկը պատասխանելով Քերթողի հարցին՝ ասում է, թե մարդիկ մեղանչել են և դրա հետևանքով ընկել են «ոչ բնաւոր» — անբնական վիճակի մեջ. մինչդեռ ինքը Սարեկը չի մեղանչել, չի կորցրել իր սկզբնական ունեցածը, մնացել է բնականի մեջ. ուստի իրեն տրվել է «յայտնութիւն»։

Վերևում արդեն բացատրվեց, որ այդ նշանակում է, թե Սարեկի երաժշտական արվեստը բնատուր է, բնածին է, ոչ-սովորովի ի տարբերություն մարդկայինից, որ «հայտնությամբ» չի ծագում։ Որպեսզի հնարավոր լիներ մարդկային արվեստի ծագումը համարել բնության նմանողությամբ սովորովի, և ոչ հայտնությամբ, պետք էր հիմնավորել այդ՝ բացատրելով, թե մարդս զրկված է հայտնությունից։ Եվ ահա անհրաժեշտորեն մեջ է բերվել միջնադարյան մտածողության համար անխուսափելի մեղքը։ Մարդս իր գործած մեղքի պատճառով կորցրել է իր բնականը, բնական վիճակը. բնականը կորցնելով, զրկվել է հայտնության շնորհից. ուստի և մարդուս արվեստը չի կարող հայտնությամբ լինել։ Այսպիսով ժխտվում է հայտնությունն իբրև մարդուս արվեստի աղբյուր, և հնարավոր է լինում արվեստը համարել բնության նմանողությամբ սովորովի։ Ահա թե որպիսի դրույթներով է մտածել մեր Քերթողը, դրույթներ, որոնց հավատացել է այդ կրոնավոր իմաստասե-

րը, որոնք և անհրաժեշտ են եղել քերթվածի թեման բազմակողմանի լուսաբանելու և հիմնավորելու համար։

Սարեկի այս պատասխանը մեծ մասամբ վերացական բնավորություն ունի, համապատասխան արտահայտությամբ. բայց տրամախոսությունը կենդանացնում է նյութի բացատրությունը, տալով նրան շարժում։ Ձևի և բովանդակության նկատմամբ շատ գեղեցիկ և ուժեղ է առանձնապես երրորդ մասը, որի վերնագիրն է՝ «Իրաւացուցանէ Վարդապետն զդիմադրութիւն [= պատասխան] Ձագուն և առնու ոճ ամբաստանութեան»։ Քերթողն ընդունում է Սարեկի պատասխանը, թե «բնականին ի բաց դրութիւնը» եղել է հանցանքի համար, բայց ավելացնում է, թե ինքն այդ գիտե «ի բնութենէ», այսինքն՝ այդ տեսակետին հասել է նա բնությունը դիտելով և գիշեր-ցերեկ ուսման ու գիտության հետևվելով։ Ուրեմն հայտնություն չունենալը մեղքի հետևանք համարելուց հանդերձ՝ բացատրվում է նաև իրերի բնությամբ։ Բերենք այս կտորը.

Ձա՛յս ասաց պատճառ բազմանուագ եղանակացն
Թըռչունըն քաղցրախօս ի հարցանելըն մեր ըզնա...
Բնականին ի բաց դրութիւն վասն սղալման առ վեհագոյնսն
Նմանապէս են պատուհաս, որպէս գիտեմ ի բնութենէ,
Ուսայ ես դեգերմամբ ևս ի բազմաց ամաց հետէ.
Զի տքնեցայ զօր ամենայն և զգիշերըն բովանդակ
Առ իմաստըս ցանգութեամբ, նաև սիրովն որ առ հանճար,
Ձա՛յս ասաց և հաստատեաց որպէս կընիք իւրոցն իրաց.
Յանդիմանեաց զմեզ ուղիղ, և ինքն օդովըն սըլացաւ,
Ի բարձրութիւն ոստոյն նըստաւ ըզհայրենին բարբառելով։

Սարեկը շարունակում է երգել, իսկ Բանաստեղծն ընկնում է մտածմունքների մեջ։ Մեր աչքի առաջ պայծառ պատկերանում է գիտությամբ ու գրականությամբ պարապող իմաստասերն իր հոգեկան վիճակը վերլուծելիս։ Մենք տեսնում ենք խոհուն, գործունյա, հետազոտող ու հավատացող կրոնավորին, որ ոչ միայն շատ կարդացել է, այլև դիտել է բնությունը, զգացել է նրա վսեմությունը և աշխատել է ըմբռնել նրա վեհությունը, և նույնիսկ փանաքի, աննշան, գեղով անվայելուչ և անարդ էակների մեջ ներդաշնակություն տեսնել։ Նա նստած է իր խուցի «անապատի» մեջ, «ուր հանդարտությամբ օգտվի», որպեսզի իր իմաստությունն իզուր տրված չլինի իրեն, և ապարդյուն չանցնի իր մեծ ջանքը։ Բայց նրան տանջում է այն միտքը, թե ինքն իբրև մարդ մեղքի տակ է ծնված և բնականից զրկված։ Այս միտքը սևեռված է նրա գլխի մեջ, քանի որ թռչունը նստած է ծառի ճղին ու երգում է, ու երգում ճովողելով և իր «բնականի պարգևով» հանգիստ չի տալիս նրան, խանգարում է նրան մտածելու և նույնիսկ աղոթելու։ Մերթ նա աչքը պտտեցնում է այս ու այն կողմ թռչկոտող Սարեկի ետևից, մերթ ուրախանում է՝ հառած ունկնդիր լինելով իր սիրած թևավորին, մերթ տխրում է, հուզվում,

մտածելով, թե Սարեկը «յանդիմանեաց ըզմեզ ուղիղ»։ Ապա ուրեմն անշահ է իր բոլոր դեգերանքը, որ ինքը մի թռչնիկից անգամ ցած է գտնվում։ Բայց վերջը նա այն եզրակացությանն է գալիս, թե իր վերաբերմամբ անարդար է Սարեկի «հանդիմանությունը», քանի որ նրա ասած մեղքն՝ ինքը չի գործել։ «Մարդկանց մեջ պատահած բազմատեսակ հանցանքներն ինձ վրա ձգելով,—ասում է նա Սարեկին,—Դու ինձ նեղում ես առանց հոգնելու, իբր թե ինձնից մի վնաս գտած լինեիր։ Աղաղակելով ամբաստանում ես ինձ, ինչպես զրկվածների սովորությունն է։ Սաստիկ մեղադրում ես ինձ հրապարակով դատավորի առաջ։ Կամ գուցե կարծում ես, թե ես թշնամի եմ և իբրև օտար կռվել եմ քո դեմ։ Ես՝ որ քեզ սիրում եմ՝ քեզնից տրտնջում եմ...»։ Այսպես նա չի հասկանում, թե ինչո՞ւ ուրիշների մեղքերի համար ինքը պիտի պատժվի։ Այնքան խորասուզված է նա իր խոհերի մեջ, որ թանաքամանը թափում է իր զգեստի վրա, ապա սթափվելով ինքն է ամբաստանում Սարեկին և հարցնում, թե ինչու նա անապատ չի քաշվում և այնտեղ երգում միայնության մեջ, ինչպես սոխակները, որոնց լսողները քիչ են. էլ ինչո՞ւ է նա մարդկանց մեջ ապրում։ Բերենք այս մասի վերջից մի կտոր, որ շատ կարևոր է թեմայի տեսակետով.

Թէ ազգակից ես սոխակի, ասա՛ դու ինձ դիմադրությամբ,
Ընդէ՞ր չունիս դու քեզ կայան յանապատի որպես նոքայն.
Երաժիշտք են և նոքա, բայց ցանկացան անապատի,
Դաշնականացըն նուագօք ըզբացավայրսըն զարդարեն.
Սակաւուց եղև լըսել ըզբարեձայն երգատրութիւնսն.
Գովեցան և գրգուեցան յորոց լուան ըզքաղցրավանգան։
Ամփիոն այր Թեբացի և Արիոն Միթեմնացի,
Որփեւս Թրակացի, այս երաժիշտք են մեծագովք[57].
Այլ նուագեալ առ նոքօք որ բնականաւն են պաճուճեալք,
Զի գործի այսր առուեստի նոքա չունին ի բնութենէ։

Այստեղ դարձյալ հայտնվում է, որ արվեստի համար կարևորն է քնականը, բնությունը։ Բայց շարունակենք նրա դիմումը Սարեկին.

Մի և դո՛ւ ես յայնցանէ զորոց լուար ըզպատմութիւնն,
Համարուեստ և անուանի, որպէս արդիւնքըն վըկայեն.

---

57 Հրատարակիչն այս հունական առասպելական երաժիշտների մասին գրել է հետևյալ ծանոթությունը. «Ամփիոն երաժիշտ յոյն՝ արքայ Թեբացւոց, որ պարսպեաց զԹեբէ, կամ որպէս քերթողքն առասպելեն, քնար յԱպողոնէ ընկալեալ, և նորին նուագացն քաղցրութեամբ զքարինս շարժեալ ի շարս և ի զետեղումն պարսպացն ընթացուցանէր։ —Արիոն քերթող և երաժիշտ ի Միթեմնա քաղաքէ Լեսբոսի՝ թովեալ ասի քնարաւն զդլփին մի, որ ապա ընդ ասուեղատունս դասեցաւ։—Իսկ Որփեւս երգիչ կամ քերթող էր անուանի, յորոյ ի լուր ձայնին գազանք ամենայն ընթանային, և կողերք [=ճղեր] ծառոց ծափ զծափի Հարկանէին»։

Բայց միով ես պակասեալ, զի չսիրեցեր զընդ նոսա կեալ
Եւ չարարեր անդ քեզ դադարս, ուր և նոքա են տաւաղեալ։
Աստ գաս նստիս մերձ առ ինև իբր արուեստիւ ինձ յանգակից,
Բազմաղեաւ երգարանաւ եղանակես և կաքաւես.
Հոմերական տաղիցըն չափ fև ծանուցեալ լինի բազմաց՝
Յոտանաւոր և ցուցական (?) ըստ քերթողացն տեսակի,
Կամ թէ ես աւելագոյն, որպէս թըւի ինձ գիտողիս.
Ջի վարժումն և կրթութիւն ոչ ժամանէ առ բնութիւն։

Երրորդ մասի այս վերջին տողերի մեջ քերթողական արվեստն իր ծագումով պարզապես բնության նմանություն ու արդյունք է համարվում և զորեղ կերպով շեշտվում է, որ բանաստեղծության աղբյուրը բնությունն է։ Առաջին մասի մեջ արդեն, ինչպես տեսանք, Բանաստեղծը ցանկանում է, որ ինքը դառնա ի դեմս Սարեկի՝ բնության աշակերտ։ Այս երրորդ մասի մեջ նա ասում է, թե քերթողները նմանելով բնությանը՝ սովորում են իրենց արվեստը, բայց չեն հասնում իրենց արվեստի նախագաղափար բնությանը։ Այստեղ Քերթողը «բնութիւն» բառը գործածելով Սարեկի փոխանակ՝ պարզ հայտնում է, որ այդ Թռչունը քերթվածի մեջ հանդիսանում է բնության ներկայացուցիչ։

Չորրորդ մասի մեջ բանաստեղծն ավելի ևս պարզաբանում է նախորդ մասի մեջ արծարծված խնդիրները։ Սարեկը պատասխանելով Քերթողի հարցին, հայտնում է, թե մարդու հետ ապրելու խորհուրդն այն է, որ մարդը ստիպված լինի այդ կենակցությամբ տեսնելու, որ ինքը՝ մարդն անհավասար է նույնիսկ իր «ծառաներին», այսինքն բնությանը, որ, ըստ հին կրոնական հայացքի, ստեղծված է մարդուն ծառայելու։

Ընդ մեզ կենակցութիւն ձեզ չընտրողացըդ [կենակցութիւն] առ
աստուածն,
Առ ծառայս անզուգութիւն՝ ղանզուգութիւն մեծարողացդ։

Դարձյալ, ուրեմն, անհավասարություն («անզուգութիւն») բնությանը. անհավասարություն, հարկավ, արվեստի նկատմամբ, ինչ որ արդեն երկու անգամ ասված էր երրորդ մասի մեջ։

Մենք տեսանք արդեն, որ Բանաստեղծը երրորդ մասի մեջ չի ըմբռնում այն, որ ուրիշների մեղքերի (Ադամա մեղքի և աշտարակաշինության) համար ինքը պիտի պատժվի, և մի վայրկյան նա ըմբոստանում է Ադամա մեղքի դեմ և թվում է, թե նա պիտի մերժեր այն։ Բայց այդ հնարավոր չէր 11-րդ դարում՝ առանց ընկնելու թոնդրակեցոց աղանդի մեջ։ Թերևս սրանից իրեն ղերծ պահելու համար նա այս չորրորդ մասի սկզբում Թռչունի բերանով կանգ է առել նույն խնդրի վրա՝ մեկնաբանելով հիշված մեղքերը և ավելի պարզելով՝ ինչ որ ինքն երրորդ մասի սկզբում ասել էր, թե մարդուս «բնականին ի բաց դրութիւնը» գիտե «ի բնութենէ» և իր ուսած գիտությամբ։ Այստեղ նա իր այս տե-

սությունը հիմնավորում է բանականորեն։ Մարդիկ, իբրև մտավոր ու բանական էակներ, իրենց աղատ կամքով աշխատել են բարձրանալ նախնական բնական վիճակից՝ «աստուածութեանըն ցանկալ», «առ գերակայսն ամբառնալ», «ճոխանալ» «յերկինս ելանելով». այս են եղել նախամարդու և աշտարակաշինության մեղքերը[58]։ Դրանով է, որ նրանք կորցրել են իրենց անմեղությունը։ Բանաստեղծն այսպիսի ռացիոնալիստական մեկնության ճանապարհ բռնելով հանդերձ, իբրև իր դարի զավակ, իր լուսությամբ համակերպվում է աստվածաշնչյան գաղափարին ժառանգական մեղքի մասին։ Բայց նա չի կարողանում լուսությամբ հաշտվել մի ուրիշ կրոնական մտքի հետ, թե իրենց «իշխանի» —առաջին մարդու մեղքի համար դրախտից հանվելով պատուհասվել են և ավելի ևս դառն ճակատագիր ունեն մարդկանց «ծառայելու» համար ստեղծված անմեղ կենդանիները։ Բնության սիրահարը, որ Քերթվածի սկզբում հրճվանքով ներբողում էր իր սիրելի թռչնիկին, վերջում էլ նրա բերանով, իբրև բողոք այդ կրոնական հայացքի դեմ,—դրանով լուսյայն և Ադամա մեղքի դեմ,—անկեղծ կարեկցությամբ նկարագրում է թռչունների ծանր դրությունը.

Բայց և անմեղքըս վնասեցաք վասըն ձերոյդ ժըպրհութեան,
Ի փառըս ձե՛ր մեք գոյացեալք և վասն ձե՛ր ապականեալք...
Եւ աղէտք վըշտագինք պարապատեն ըզմեզ յերկրի,
Խորշակք և ձրմերունք և պիտոյից պակասութիւնք,
Յաւք և խօթութիւնք և տարաժամ մահու արկուածք...
Յորս աւելի՛ մեք աշխատիմք՝ ոչ ունելով յարկս և քաղաքս,
Ոչ համբարըս մըթերեալս ի լիութիւն հարկաւորացն,
Ոչ դեղս և ոչ բըժիշկս որով ցաւոց ախտ դադարէ,
Ոչ կակուղ ինչ կերակրիկ մեզ ի սփոփանըս դիւրութեան...
Զըրկումըն մեր ի ձէնջ, և դուք ըզմէնջ ամբաստանէք...

Հինգերորդ վերջին փոքրիկ մասը եզրակացությունն է.

Ճշմարտիւ զայս խօսեցաւ ըստ պատահմանցն Հանդիպման,
Ըզբացատրեալ հոյլըս բանից իմաստաբար բարբառելով.
Որով յաղթեալ մեզ իմաստնոցս և կարծեցեալ բանաստեղծացս...

Հաղթող է հանդիսանում, ուրեմն, բնության ներկայացուցիչը, «արուեստիւ երաժիշտն ամենահնար անվարդապետ», որ բուն արվեստավորն է, իսկական երգիչը, իսկ նրա «աշակերտ» և «արվեստակից»

---

58 *Այս բացատրության համար նա նկատի է ունեցել Օձի հետևյալ խոսքը, որ ասում է Եվային խաբելիս. «Ձի գիտէր աստուած թէ յորում աւուր ուտիցէք ի նմանէ, բանայցեն աչք ձեր, և լինիցիք իբրև զաստուածս՝ ճանաչել զբարի և զչար» (Ծնունդք, Գ, 5)։ Իսկ Բաբելոնի աշտարակաշինության համար նկատի է ունեցել հետևյալը. «Եկայք շինեսցուք մեզ քաղաք և աշտարակ, որոյ լինիցի գլուխն մինչ յերկինս» (Ծնունդ, ԺԱ, 4)։*

իմաստասերը՝ «կարծեցեալ բանաստեղծ», որ չի հասնում իր վարպետին—բնությանը։

6. Զգտում դեպի բնություն ու ռացիոնալիզմ և դրա ազդեցությունը գրականության մեջ։—*Սարկավագ Վարդապետի «Բան իմաստութեան» քերթվածի բովանդակությունից, որի մանրամասնությունների վրա դիտմամբ կանգ առանք, պարզ երևում է, որ եղել է ձգտում դեպի բնություն և ռացիոնալիզմ կրոնի մեջ, որով գլխավոր նշանակությունը տրվում էր ոչ թե հայտնությանը, այլ բնության դիտողությունից բանականությամբ ձեռք բերած ճշմարտություններին։ Դրա արգասիքն է եղել արվեստի ծագման նոր տեսությունը և առհասարակ մի նոր արվեստի պահանջը։ Մեր իմաստասեր Բանաստեղծը շատ աջող լուծել է կարևոր գրական խնդիրը, պնդելով, թե բանաստեղծը նմանում, հետևում է բնությանը, իրականությանը։ Այս հայացքը, որով արժեքը տրվում է բնությանը, այս արդեն մի մեծ նորություն էր մեր գրականության մեջ և կարող էր ծագել միայն վերածնության դարում իբրև հետևանք այն նոր ոգու և ազատախոհության, որ առաջ էր եկել կյանքի մեջ։ Սարկավագ Վարդապետն այդ անդրադարձրել է բանաստեղծության մեջ։ Բայց նա մենակ չի եղել այդպես մտածող։*

Այսպես ուրեմն՝ ինչքան էլ սելջուկյան թուրքերի ավերածությունները քայքայվել է Հայոց աշխարհը, դարձյալ քաղաքային կյանքի պերճ զարգացումն անհետևանք չի անցել։ Նոր մտավոր հոսանքի առաջին արտահայտությունները, որ տեսանք կորստից փրկված երկերի մեջ, այդ ևս 11-րդ դարի համար խոշոր գրական երևույթ է իր նոր տեսակներով և նոր թեմաներով։ Հովհաննես (Յովհաննէս) Սարկավագ Վարդապետից հետո՝ 12-րդ և հետագա դարերում մեր բանաստեղծները, թեկուզ հոգևորական, այլևս չէին կարող գիտակցաբար չանդրադարձնել բնություն և իրական կյանք, և չերգել հայրենասիրությունն իր գաղափարախոսությամբ։

Բանաստեղծության մասին նոր հայացքն ազդում է և ձևի վրա։ Դրա անմիջական հետևանքը լինում է և այն, որ մեր բանաստեղծներն և առհասարակ մատենագիրները թողնում են սեթևեթ շինծու ձևերը, անհասկանալի հնաբանություններն ու ճոռոմ ոճը, որ մտել էր բանաստեղծության մեջ անգամ։ Պարզությունն ու բնական մտածողությունն սկսում են իշխել ընդհանրապես։ Գրականության մեջ երևան է գալիս 12-րդ դարում կենդանի խոսակցական լեզուն՝ միջին հայերենը, որ արդեն բավական հեռացած էր հին գրական լեզվից՝ գրաբարից։ Ստեղծվում են, ինչպես գրում է Սարկավագ Վարդապետը, ըստ բովանդակության և ըստ ձևի ավելի գեղեցիկ, «անապական», «առ հանդերձեալն ժամանակ անջնջելի քաջայարմար» քերթվածներ։ Այս է եղել ազդեցության արդյունքը բնության աշակերտի, մեր տնքող Իմաստասերի աշխատանքի, ինչպես և նրա պես մտածող նրա ընկերների, որոնց մեջ ինքը Սարկավագ Վարդապետը փայլել է իր մեծ սիրով առ բնությունը և այժմ փայլում է իր «իմաստության բանով», որ մի ներբող է բնության։

ԴԱՎԻԹ ԱԼԱՎԿԱ ՈՐԴԻ

Կիրակոս Գանձակեցին[59], *հիշելով Սարկավագ Վարդապետի մահը 1129 թ., շարունակում է. «և զկնի ամի միոյ վախճանեցաւ սուրբ լուսաւորիչն Դաւիթ վարդապետն, Ալաւկայ որդի, որ գրեաց զկանոնական օրինադրութիւնս գեղեցկայարմարս և պիտանացուս ի խնդրոյ քահանայի միոջ, որում անուն էր Արքայութիւն, ի քաղաքէն Գանձակայ». Դավիթն ինքն էլ Գանձակ քաղաքից էր։ Նրա մասին հիշում է և Վարդան Արևելցին*[60], *ասելով, թե Սարկավագի մահից մի տարի հետո վախճանվել է և «լծակիցն իւր Ալաւկայ որդին Դաւիթ, որ կանոնքն էր դիւրահաս»։ [Այլ ընթերցված՝ «որ կանոնքն գրեաց դիւրահաս»]։ Թե Դավիթ վարդապետն ինչի՛ մեջ է եղել Սարկավագ Վարդապետի «լծակիցը», այսինքն՝ գործակից, աշխատակից ընկերը, այդ հայտնի չէ։ Երևում է, որ նա ևս իր ժամանակին հայտնի հեղինակավոր մի անձ է եղել, որ նրա մահվան մասին հիշում են և՛ Վարդանը, և՛ Կիրակոսը և վերջինս նրան «լուսաւորիչ» է անվանում։ Նրա «Կանոնական օրինադրությունները» կամ «Կանոնները», բարեբախտաբար, մնում են, թեպետ և դեռ ձեռագիր, բայց այդ մասին ունենք քաղվածաբար տպված բավական տեղեկություններ*[61]։

Դավթի գործը, որ բաղկացած է 98 կանոններից, ունի ոչ թե գրական արժեք, այլ կուլտուր-պատմական։ Դա ունեցել է իր ժամանակի համար գործնական կարևորություն, թե ինչպես պետք է վարվի մի քահանա կամ այլ ոք իրեն վերաբերյալ որոշ դեպքերում։ Դրա համար նա, հաճախ օգտվելով եկեղեցու հայրերի կամ Հայոց եկեղեցական կանոններից, ինչպես և ավանդություններից, տալիս է խրատներ ու հրահանգներ, բայց ոչ սառն, հակիրճ օրինադրական եղանակով, այլ սովորաբար ընդարձակ բացատրություններով։ Այդ եղանակով նա ձգտել է մտքերը «լուսավորելու» և «դյուրահաս» դարձնելու իր ասածները, ինչպես բնորոշել են նրան և նրա գործը Կիրակոսն ու Վարդանը։ Նրա ասացվածքը պարզ ու կենդանի է և անգամ ժողովրդական. նրա քննարկած բազմազան նյութն ևս մեծ մասամբ ժողովրդական է։ «Ալավկա որդու այս գործը Հայոց գրականության մեջ իր տեսակով առանձին մի բան է, գուցե առաջինն ու միակը։ Նա ներկայացնում է կյանքն, ինչպես կա, ինչպես ինքը տեսնում է այդ, և իր Կանոնները դնում է իր աշակերտին [այսինքն՝ Արքայութիւն քահանային] ըմբռնելի երևույթների դեմ։ Այդ դիտողական նկարագիրն է, որ բարձրացնում է կանոնական օրինադրությունների արժեքը։ Նրա պատմական նշանակությունը հենց այնտեղ է, որ նա սերտ կապված է իր ծագման, միջավայրի ներքին վիճակի և զարգաց-

---

59 Կ. Գանձակեցի, *Պատմութիւն Հայոց*, էջ 107։

60 «*Մնծին Վարդանայ Պատմութիւն տիեզերական*», *Մոսկվա, 1861, էջ 159*։

61 «*Ազգագրական հանդես*», *ԺԴ գիրք, 1906, էջ 105—132. նույն, ԺԵ գիրք, 1907, էջ 62—67.* Կ. Կոստանյանց, *Դավիթ Ալավկա որդի։ Այս հոդվածը մեր միակ աղբյուրն է*։

ման պայմանների հետ և ճշգրիտ հայտարարն է նրանց»։ Այս բնորոշումը, որ գալիս է մեր հին գրականությանը հմուտ մի անձից[62], բավական է արդեն Դավիթ վարդապետին համարելու Սարկավագ վարդապետի արժանավոր «լծակիցը»։

Անշուշտ, կարելի չէ պահանջել, որ նա մեր ժամանակի տեսակետներն ունենա. այլ բավական է, որ նա իր կանոններով մաքառել է իր դարի վատ սովորությունների և ապականված բարքերի դեմ, ինչպես և զանազան առողջապահական միջոցներ է առաջարկել «պղծումների» և մի քանի այլ բաների վերաբերմամբ ըստ իր ժամանակի հասկացության։ Նրա գրքից հնարավոր է լինում ծանոթանալ մեր հին կենցաղին, բարքերին, մտավոր բարոյական դրությանը, և, կարելի է ասել, Ալավկա որդին հաճախ հին սովորույթները կամ սովորութական դիրքերն է վերածել «կանոնների» կամ «կանոնական օրինադրություններ»։ Այսպես են, օրինակ, այն բազմաթիվ կանոնները, թե ինչպես պետք է վարվել կամ ինչպիսի մաքրության միջոցներ գործադրել, երբ որոշ կենդանիներ՝ շուն, գայլ և ուրիշներ դիպչում են ուտեստի, և ավելի ևս առանձնապես «մկնանկի» դեպքերում, այսինքն, երբ գարշելի մկնով պղծվում է որևէ ուտելեղեն։ «Ջի նորա [մկան] չարն շատ է, քան զամենայն», գրում է նա։ Այժմ ևս «մկնանկը» կամ «մկնառը» զզվելի է։ Այդ, իհարկե, առողջապահական զգուշությունից է ծագում։ Արքայություն քահանան ամենից առաջ դրանով է հետաքրքրվել. նա մկնանկի մասին է սկսել իր հարցումը, ուստի դրան վերաբերյալ կանոնները դրված են Դավիթ վարդապետի գործի սկզբում։

Սակավաթիվ չեն այն կանոնները, որոնց մեջ խոսվում է պատժի ենթակա զանազան մեղքերի ու հանցանքների մասին, ինչպես են՝ ամուսնական սրբապղծություն, տուփական ախտեր, «սպանություն, գողություն. վաշխառություն, հրդեհումն, երդմնազանցություն, հիշոց, կախարդություն և այլն»։ Առանձնապես մանրակրկիտ ձևով գրում է նա կանոններ ընդդեմ զանազան հմայությունների և սնահավատության. հրահանգներ է տալիս զանազան բարեպաշտական ծեսերի, տոների, ժամերգության. պահքի, մկրտության, մեռելի կոծի և այլի վերաբերմամբ։ Կան կանոններ նաև սեռական հարաբերության, ծննդաբերության, քահանաների երկրորդ ամուսնության, ձրի ուսման մասին, և ընդդեմ այն անկարգության, որով քահանայական տների պատկանող աշխարհականներից ոմանք իրենց սեփականությունն էին դարձնում ժողովուրդը և, նույնիսկ քահանա չեղած դեպքերում էլ, բռնությամբ հափշտակում էին «ղշահաւորութիւն քահանայից»։ Հատկապես հետաքրքիր է վերջին (98-րդ) կանոնը, որի մեջ խոսվում է այն ժամանակի «շնորհավաճառության և կաշառակերության մասին» Աղվանից աշխարհում։ Առաջնորդները պսակված ամուսիններին բաժանում էին միմյանցից և գրով թույլ տալիս ուրիշ-

62 «Ազգագրական հանդես», ժբ, էջ 67. հոդված Կ. Կոստանյանցի։

ների հետ կենակցել։ Այսպիսիներին նրանք որոշ հարկի տակ էին դնում և ամսե ամիս պահանջում հարկը։ Նրանք «ունեին իրենց գործին հավատարիմ գործակալներ, որոնց ձեռքն էին հանձնված օրհնության թղթերը և անվանական ցուցակները։ Այդ մարդիկ, ինչպես միջին դարերում ինդուլգենցիա բաժանողները, յուրաքանչյուր ամիս գավառից գավառ էին շրջում... և խստությամբ պահանջում էին նշանակած տուրքերը» և այլն։ Հետևանքը լինում էր «կնոջ և առն բաժանումն, զաւակաց ցրումն, ընչից առումն, տանց աւերումն, ի հայրենեաց ելումն, ի դատաւորս և յատեանս բազում քարշումն... և այլ և յոլով բճախեղդութիւն»։

Այս է ահա «կանոնների» կամ «Օրինադրությունների» բովանդակությունն ըստ հիշված աղբյուրի։ Այդ աշխատությունից օգտվել է Մխիթար Գոշը, բայց դա «պիտանացու» է համարվել նույնիսկ 13-րդ դարում, և, ինչպես երևում է, դրանով առաջնորդվել են ընդհանրապես, մինչև անգամ Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» հրատարակվելուց հետո։ Դրա պատճառն այն է, որ Դավթի կանոնների բովանդակությունը, թեպետ և մասամբ եկեղեցական կանոններից ծագած, ինչպես ասվեց, սերտ կապված է այն ժամանակաշրջանի իրականության հետ, և ամեն ինչ արտահայտված է դյուրըմբռնելի ձևով։ Նկատի ունենալով այդ գործի գործնական կիրառական նշանակությունը, կարծում ենք սխալ չէ, որ այդ «կանոնական օրինադրությունները» դնում են հայկական դատաստանագրքերի շարքի մեջ[63]։ Իսկապես որ այդ երկն իր տեսակով մի նոր բան է եղել մեր հին գրականության մեջ, և այդ նորն էլ ծնունդ է նոր մտավոր հոսանքի։

---

63 Խ. Սամուելյան, *Հին հայ իրավունքի պատմություն*, հատ. Ա, Երևան, 1939, էջ 75։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՏԹԵՈՍ ՈՒՌՀԱՅԵՑԻ ԵՎ ՈՒՐԻՇՆԵՐ

1. Ժամանակագրություն:—*Հայոց գրականության 12-րդ դարը,— հայտնի չէ, թե առաջին անգամ ումից, — կոչված է «Արծաթի» դար՝ համեմատությամբ 5-րդ դարի կամ «Ոսկեդարի»: Այդ կնշանակի՝ մեր գրականությունն առաջընթաց զարգացում չի ունեցել: Բայց այդ ճիշտ է միայն պատմագրության համար, այն էլ, երբ նկատի ենք առնում այս գրական տեսակը հորինվածքի կողմից: Արդարև 5-րդ դարում գրված պատմություններն ավելի կամ պակաս չափով գեղեցիկ են. ունենք Եղիշեի «Հայոց պատերազմի» նման գեղարվեստական երկը՝ իր ընդհանուր գույնով և գլխավոր գաղափարով ու խնդրով, որ սկզբից մինչև վերջն իշխում է ամբողջի վրա՝ տալով նրան մի գեղեցիկ միություն: Սակայն հետզհետե արվեստը պակասում է մեր պատմագրության մեջ, մինչև որ առաջ է գալիս ժամանակագրությունը կամ տարեգրությունն առանց որևէ արվեստավորության, անգամ առանց անձնական ոճի նույնության: Եթե Եղիշեի երկի հորինվածքի գեղեցկությունը ծագում է հունական կլասիկ գրականության ազդեցությունից, ժամանակագրությունն արգասիք է միջնադարյան ընդհանուր քրիստոնեական կուլտուրայի: Նույն գրական տեսակը նույն ձևերով և նման աշխարհայացքով սիրված է եղել նաև եվրոպական ժողովուրդների մեջ: Տարեգրությունն այն ժամանակներում պարզամիտ գրագետների համար համեմատաբար հեշտ կատարելի մի գործ է եղել — գրի առնել եղելությունների պատմությունն առանց որևէ ուսումնասիրության ու ներքին կապի, առանց որևէ հավակնության գեղեցիկ հորինվածք առաջ բերելու մի ղեկավար գաղափարով, որ ի մի միություն, ի մի ամբողջություն ձուլեր պատմված դեպքերը:*

2. Մատթեոս Ուռհայեցու Ժամանակագրությունը: — *Այսպիսի պարզ ու հասարակ տեսակի առաջնակարգ ներկայացուցիչն է մեզնում Մատթեոս Ուռհայեցին իր «Ժամանակագրութեամբ»*[1]*: Նա Սարկավագ Վար-*

[1] Մ. Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն: Գրքի սկզբի վերնագիրն է. «Պատմութիւն արարեալ Մաթէոսի մեծի քահանայի Ուռհայեցւոյ վասն Բազրատունեաց թագաւորացն և*

դապետի օրով է ապրել, բայց ոչ Հայաստանում։ Նրա կենսագրությունը հայտնի չէ. ինքն իրեն անվանում է՝ «Մատթեոս Ուռհայեցի և վանական», «Մատթէոս Ուռհայեցի և վանաց երէց»[2]։ Հավանորեն Ուռհայի մի վանքի երեց։ Նա ժամանակագրությունը գրել է այդ քաղաքում. «Ես Մատթէոս... զամս բազումս քաջաչան քննութեամբ կացի և արիաբար մտօք ի քաղաքս Միջագետաց յՈւռհա ժողովեալ գրեցաք մինչև ցայս վայր»[3], որ է 1000 թվականը ներառյալ։ Միջագետքում հին դարերից ի վեր ապրել են շատ հայեր. 11-րդ դարի երկրորդ կեսին, բիզանդական քաղաքականության հետևանքով, նրանց թիվն ստվարանում է այնտեղ։ Բավական թվով քաղաքներ իրենց շրջակա գյուղերով անցնում են հայ ազնվականների ձեռքը, որոնք իշխում են այն տեղերում իբրև բիզանդական կուսակալներ։ Այդպիսիներից մեկն եղել է մի ժամանակ նաև հին Նշանավոր Օդեսիա կամ Ուռհա քաղաքը, որի բնակիչների մի խոշոր մասը 11-րդ դարի վերջերին և 12-րդ դարում հայեր էին։ Մեր ժամանակագիր Մատթեոսն ահա այդ կողմերի հայության արտահայտությունն է 11—12-րդ դարում և հետաքրքիր է իբրև այնպիսին։ Ինչպես իր աշխատությունից երևում է, նա իր ժամանակի «վարդապետներից և կորովի գիտնականներից» չէ. ոչ ճարտասանական արվեստն է սովորել, ոչ էլ քերականական ուսում ստացել։ Կրոնական գիտությանն էլ հմուտ չէ. բայց, հարկավ, նա ևս, ինչպես ուրիշներն այն դարում, տոգորված է կրոնական ոգով ու հայացքով։ Նա համեստ մարդ է և շատ համեստ էլ կարծիք ունի իր մասին։ Բայց մի մեծ առավելություն է ունեցել այդ երեցը։ Սիրել է իր գործը, հոգով-սրտով նվիրված է եղել դրան, և սկսած 12-րդ դարի սկզբից կամ 11-րդի վերջերից, երկար տարիների մեղվաջան աշխատությամբ կարողացել է բազմազան աղբյուրներից նյութեր ժողովել, դեպքերի տարեթվերը որոնել, գտնել և ըստ կարի ճշտել, և եղելությունները, տարիների կարգով դասավորված, միմյանց հետևից գրի առնել և հորինել մի մեծ և ընդարձակ գիրք, վերջացնելով այդ գործը 1140-ական թվականներին, ծերության օրերում։

Ճիշտ է, նրա աշխատության բազմազան նյութերի մեջ չկա որևէ ներքին կապակցություն, բայց նա այդ արել է ոչ սառն, ոչ անտարբեր կերպով։ Նրա երկի մեջ հաճախ գտնում ենք նույն ոգին և զգացմունքը, ինչ որ Արիստակես Լաստիվերտցու, միայն ոչ բուռն սաստկությամբ, ավելի զտված ու նստած, և քաղաքական դրության և հայության վիճակի պայծառ հասկացությամբ։ Այս տարբերությունն առաջացել է այնու, որ Ուռհայեցին ժամանակով և տեղով բավական հեռու է եղել Լաստիվերտ-

---

այլոց բազմաց ի Դճ թուականէն սկսեալ մինչ ի ՈԺԱ թիւն աւարտեալ»։ Այս վերնագիրն ըստ երևույթին ուրիշի գրած է. ՈԺԱ (=611+551=1162) թվականը վերաբերում է շարունակող Գրիգոր Սրեցի Տարեգրությանը։ Գրքի սկզբում էլ պակասում է մի փոքր կտոր։

2 *Անդ, էջ 113, 114։*

3 *Անդ, էջ 278։*

ցու ապրած աղետալից ժամանակից ու տեղից, թեպետ և իր օրով և իր ապրած երկրում էլ պակաս չեն եղել ավերածն ու կոտորածը։

Նրա աշխատությունը կազմված է երեք մասից. առաջինը բովանդակում է Հայոց ՆԱ (=ք. 952) թվականից մինչև Հայոց Շ (=ք. 1051) թվականը։ Երկրորդ մասի առաջաբանի մեջ (էջ 114) գրում է. «Նա և այլ ևս ունիմք ասել ձեզ ամաց ութսնից զաշխատութենէ Մատթէոսի Ուռհայեցւոյ և վանաց երիցու»։ Ուրեմն մտադիր է գրելու մինչև 1131 թվականը (1051+80=1131)։ Պետք է ընդունել, որ նա հիշված առաջաբանը գրել է այս թվականից ոչ առաջ, քանի որ կարելի չէ կարծել, թե նա մտադրված լիներ գրելու իր դեռ չապրած տարիների ժամանակագրությունը։ Երկրորդ մասը հասցրել է մինչև Հայոց ՇՄ (=ք. 1101) թ.։ Դրանից հետո, ասում է երրորդ մասի առաջաբանի մեջ (էջ 277), «զամս տասն [ուրեմն ոչ վաղ քան 1141 թ., քանի որ 1131+10=1141] ոչինչ արարաք հոգս վասն այս ժամանակագրութեանցս և թողեալ էաք ի բացեայ զարուեստ գրչութեանցս»։ Ծերության ժամանակ վերսկսելով իր գործը՝ հայտնում է, թե «զամաց երեսնից դեռ ևս առաջի կայ ի գրի հաւաքել»։ Ուրեմն դարձյալ մինչև 1131 թվականը (1101+30=1131)։ Նույն առաջաբանի վերջում ևս հայտնում է, թե ՇՄ (=1101) թվականից հետո պիտի գրի «զայլ ևս զամաց քսան և հնգից և երեսուն՝ լիցի վճարումն գրոցս»։ Ուրեմն մինչև 1126 կամ 1131 թվականը։ Այսպես ուրեմն, նա մտադիր է եղել իր ժամանակագրությունը հասցնել մինչև Հայոց ՇՁ (=580+551=1131) թվականը, բայց բերել հասցրել է մինչև 1136 թվականը։ Ըստ այսմ նա իր աշխատության երկրորդ և երրորդ մասերը գրել է 1131 թվականից հետո և երկար ժամանակում։ Գործի համար նյութեր հավաքելը, հարկավ, նա վաղ է սկսել. «Եւ այս եղև ի հայրապետութեանն տանն Հայոց տեառն Գրիգորիսի և տեառն Բարսղի, յորժամ եղև սկիզբն առաջին՝ երկրապատմութեանս»։ Գրիգորիսը Գրիգոր Վկայասեր կաթողիկոսն է (1066—1105 թթ.), իսկ Բարսեղը՝ նրա աթոռակից Բարսեղ կաթողիկոսը (1181—1213 թթ.)։ Ուրեմն ոչ ուշ քան 1105 թվականը, որպեսզի միաժամանակ այն երկուսի օրով եղած լինի «առաջին սկիզբը»։

Ուռհայեցին իր գործի համար մեծ ջանք թափելով՝ հարցուփորձ է արել հին ժամանակների ականատեսներին և ականջալուրներին, շատ բան իմացել է ծերունիների ավանդությունից և կամ քաղել ուրիշների թողած հիշատակարաններից։

Առաջին մասի հարյուր տարվա պատմությունը գրել է նա «ըստ այնքանեաց տեսողացն և լսողացն, որք էին ի հին ամաց ծնեալք, և ընդ ընթերցողսն յառաջին պատմագրացս, որք ականատեսք էին լեալք ամենայն եղելոցս»[4]։ Երկրորդ մասի դեպքերի համար նա գրում է, թե կատարվել են «յաւուրս հարցն մերոց, որք էին բազում անդամ տեսեալ աչօք իւրեանց»։ Այդ մասի վերջին տասնամյակների, ինչպես և երրորդ

[4] Անդ, էջ 112։

մասի մեջ պատմված դեպքերին նա ժամանակակից է. որոշ բաներ նա անձամբ է տեսած կամ ականատեսներից լսած. «Զայս բազում անգամ լուեալ է մեր ի բազմաց». «Զոր և մեք իսկ լուաք զայս ի քաղաքացեացն», և նմաններըւ

Որքան նրա ժամանակագրությունն իր հարուստ բովանդակությամբ շատ կարևոր մի աղբյուր է պատմության համար, նույնքան այնտեղ գտնում ենք միամիտ դյուրահավանությամբ, տարրինների կարգով, իրար հետևից մեջ բերված ամեն տեսակի բաներ ևս. բնության երևույթներ՝ երկրաշարժ, գիսավոր աստղեր, զանազան օդերևույթներ, կարմիր ձյուն, սև ձյուն, անասունների կոտորած, թռչունների պատերազմ, մարախ, սովեր, մահտարաժամ, նախապաշարումներւ Ինչպես ընդհանրապես տարեգիրներն այլ ազգերի մեջ, նա պարզամտությամբ հավատ է ընծայում ամեն տեսակի պատմվածքների, երկնային նշանները — երևույթները համարում է դժբախտությունների չարագուշակ ազդարարներ, և նմաններըւ Դրանց հետ միասին խառն պատմում է նա, երբեմն կարճառոտ նշումներով, երբեմն էլ բավական ընդարձակ ու հանգամանորեն, ամեն տեսակ եղելություններ եկեղեցական և քաղաքական կյանքից։ Խոսում է հայոց թագավորների և կաթողիկոսների, հունական կայսրների և ուրիշ իշխողների մասին։ Փոխեփոխ բեմ է հանում բազմաթիվ վայրերի ու բերդերի տերեր, մեծ ու փոքր բռնակալներ—հույն ու հայ, արաբ ու թուրք, եգիպտական թե վրացական, ժամանակագրության վերջին մասի մեջ՝ նաև խաչակիր (ֆրանկ)։ Նրանք շարունակ արշավանքներ են գործում, իրար հետ պատերազմների մեջ են, միմյանցից հափշտակություններ են անում, կաղմում են իրենց համար նոր իշխանություններ կամ կորցնում են իրենց իշխանությունը։ Ամենքն ամենքի դեմ են։ Երկիրը գտնվում է շարունակ խռովահույզ ու մրրկածուփ վիճակի մեջ։ Եվ հետևանքը լինում է երկրի ավերում, ժողովուրդների կոտորած, տնտեսական քայքայում, սով, — «դառնաշունչ կոտորած», «կորուստ հաւատացելոց», «զոր կրեաց ազգս Հայոց ի գիսաւոր և ի պիղծ ազգէն եղիմնացւոց, Թուրքաց յեղբարոյ իւրեանց Հոռոմոց», հետո նաև՝ «ի մոլի ազգէն ֆրանկաց»։ Բացի Միջագետքից նա ուշադրություն է դարձրած նաև Ասորիքին և Հայաստանի հարավային կողմերին անշուշտ այն պատճառով, որ դրանք Ուռհայինմոտիկ են, և դրանց մասին ավելի նյութեր է ժողովել։ Մեզ հասած գրքի սկզբում հենց պատմված է, թե «Եղև սով սաստիկ ի բազում տեղիս. բայց յաշխարհն Հարաւոյ, յերկրին Տաճկաց [=արաբաց] եղև նեղութիւն մեծ, և առաւել քան զամենայն ի Միջագետս. և ի խստութենէ սովոյն տագնապ և տատանումն լինէր ի բազում տեղիս, և ևս ի հռչակաւոր մայրաքաղաքն յՈւռհա, զոր կանգնեաց Տիգրան արքայ Հայոց» և այլն։

Նա պատմում է շատ պարզ ու հասարակ լեզվով, սովորաբար աղքատ ու մերկ, անպաճույճ ոճով, նույն բառերի ու դարձվածների կրկնությամբ, մեծ մասամբ, անշուշտ, իր աղբյուրներին հետևելով։ Գրվածքը

մեկ-մեկ կենդանի և աշխույժ, նույնիսկ ազդու է դառնում. այդպիսի հատվածների մեջ ժողովրդական զրույցների արձագանքն է լսվում: Բայց հանդես է գալիս և ինքը ժամանակագիրը՝ բարեհոգությամբ դատելով ու կարծիքներ հայտնելով զանազան անձերի և իրակությունների մասին. իր սիրով դեպի ամեն ինչ, որ ժողովրդի օգտին է, լինի դա հայ թե օտարազգի, իր ատելությամբ դեպի ավերիչներն ու հարստահարիչները, և իր հայրենասիրությամբ: Մերթ ընդ մերթ Արիստակես Լաստիվերտցու ձևով, բայց ոչ նրա չափ հաճախ, նա էլ ողբեր է հորինում: Հայրենասիրությունն է դրդում մեր այս տարեգրին ատելու և՛ հույներին, և՛ թուրքերին: Նրա այդ զգացմունքը, սակայն, կույր չէ. նա ուրիշների վատ կողմերը եթե պախարակում է, լավերն էլ տեսնում է. երբեմն պակաս չի գովում նաև հունական կայսրներին ու զորավարներին: Բայց երբ նրանք դիպչում են հայերին և անիրավություններ են անում, այն ժամանակ նա բառ չի գտնում իր զայրույթն և ատելությունը ցույց տալու: «Գաղանաբար սպանմամբ ընթանայր իբրև զօձ թունաւոր, որ ելից զտեղի անհաւատ ազգաց», — ասում է նա հույն զորավարներից մեկի համար, որ եգիպտացիներից հաղթվելուց հետո՝ վրեժը հայ ժողովրդից էր առնում: Մինչ հայոց «սրբասնեալ» մեծ սպարապետ Վահրամ Պահլավունին չի թողնում, որ հաղթական հայ զորքերն անողորմաբար կոտորեն փախչող հույն զորքերին, սրանք, ընդհակառակն, չեն խնայում նույնիսկ խաղաղ հայ ժողովրդին: «Սովոր են ազգն Հռոմոց երդմամբ կորուսանել զամենայն մեծամեծս աշխարհի»,— ասում է նա: Եվ այսպես վարվում են նրանք ոչ միայն հայերի, այլև ուրիշների և իրենք իրենց վերաբերմամբ: Այդ պատճառով հույները նրա համար «աստուածուրաց և նենգաւոր ազգ են», «անողորմ և չար ազգ»:

Մատթեոս Ուռհայեցին, սակայն, հանգիստ չի կարողանում խոսել հունական իշխանության մասին գլխավորապես այն պատճառով, որ հայոց երկիրը՝ հայ իշխողների ձեռից խաբեությամբ հափշտակելուց հետո՝ անպաշտպան են թողնում արևելքից խուժող թուրքերի առաջ:

Նույնպես նա զայրույթով լցված է այս վերջինների դեմ: Նրանց գործած դաժանությունները պատմելիս բռնկում է մեր այս տարեգրի հայրենասիրությունը, և նրա գրիչը թափ է առնում՝ ստեղծելով գեղեցիկ գրական հատվածներ: Բերենք այդպիսիներից մի փոքր կտոր: Սեբաստիայի ավերումը մանրամասն պատմելուց հետո նա գրում է.

«Ո՞վ կարասցէ մի ըստ միոջէ պատմել զկորուստ բարկութեանն և ղլաց ապաշաւանաց տանս Հայոց, զոր յանօրէն և յարեանարբու գազանացն զօրացն Թուրքաց կրեաց յանտիրութենէ, ի սուտ պահապանացն, ի տկար և ի թուլամորթ վատ ազգին Յունաց: Վասն զի մի առ մի քակեալ հանին զքաջ զօրականսն ի տանէն Հայոց, զորս հանին յարկաց և ի գաւառաց և բարձեալ խափանեցին զաթոռ թագաւորութեանն Հայոց. քակեցին զցանկ պահպանութեանն զօրաց և զօրավարաց. և ազգն Հռոմոց իւրեանց անուն քաջութեան զանդարձ փախչելն արարին պարծանք. նմա-

նեցան վատ հովուացն, որ յորժամ զգայլն տեսանէ՝ փախչի։ Սակայն Հոռոմք յայն ջանս ջանացան, որ ղուր ղպարիսպ ամրութեան տանս Հայոց քակեալ կործանեցին և ղՊարսիկք ի վերայ արձակեցին սրով, և զամենայն յաղթութիւնն իւրեանց համարեցան, և ինքեանք անպատկառելի երեսօք կուրտ ղօրավարօք և ներքինի զօրօք զՀայք պահել ջանային, մինչ և Պարսիկք անտէր տեսին զամենայն արևելք։ Եւ յայնժամ մեծաւ զօրութեամբ զօրացան այլազգիքն, որ ի մէկ տարւոյ հասան մինչև ի դուռն Կոստանդնուպօլսի և առին զամենայն աշխարհն Հոռոմոց, զքաղաքս ծովեզերաց և զկղզիս նոցա, և արարին զազգն Յունաց որպէս ըզբանտարկեալս ի ներս ի Կոստանդնուպօլիս»[5]։

Այսպիսի հատվածների մեջ Ուռհայեցին բարձրանում է պատմագրի աստիճանի. նա ձիշտ ըմբռնել է պատմական իրականությունը և գեղեցիկ արտահայտել է այդ։ Նրա պատճառաբանությունը սելջուկյան թուրքերի արագ ծավալվող աջողությունների նկատմամբ մինչև այժմ էլ պահում է իր արժեքը։

Գալիս են խաչակիրները իբր «յօգնութիւն քրիստոնէից»։ Ուռհայեցին ուրախանում է։ Սև լեռան հայ կրոնավորները և այն հայ իշխանները, որոնք հաստատված էին Տավրոսի բարձունքների վրա, ինչպես Ասորիքում ու Միջագետքում, սրտաբաց ու գրկատարած ընդունում են նրանց, ամեն կերպ օգնում։ Բայց երբ նրանք մի փոքր ամրանում են Արևելքում, սկսում են այժմ նրա՛նք նեղել հայերին. հայ իշխանների ձեռից խլում են նրանց կալվածները և ոչնչացնում նրանց իշխանությունները։ Եվ Ուռհայեցու ատելությունը շուռ է գալիս այն նորեկ քրիստոնյաների վրա, որոնք «ամենայն անիրաւութեամբ և անառակ գնացիւք մոռացան ըզպատուիրանս տեառն»։ Ուստի աստված էլ նրանց այլևս չի օգնում, ասում է Ուռհայեցին։ Նրանց կրած առաջին կոտորածը պատմելիս մեր Տարեգիրը նույնիսկ ուրախանում է։ Այս դեռ առաջինն է, — ասում է նա. «յառաջ միտ դիք և մի՛ ձանձրանայք»։ Նրա այս չարախնդության պատճառն այն է, որ խաչակիրները բարբարոսաբար մեծ չարիքներ են հասցնում և անմեղ ժողովրդին։ Ֆրանկներն, — ասում է նա, — «յօժարութեամբ հեղումն արեան առնէին անմեղ և արդար արանց»[6]։

Դառն արհավիրքների ու կոտորածների հետ Ուռհայեցին արձանագրել է նաև սխրալի գործեր, երբեմն իսկական փոքրիկ վիպակներ մանրանկարչական ձևով, անգամ ժողովրդական վիպական մանրամասնությամբ պատմվածքներ։

Այսպես, օրինակ, մենք տեսնում ենք, թե ինչպես Թոռնիկ Մամիկոնյանը այն խառնաշփոթ ժամանակներում քաջությամբ պաշտպանում և պահպանում է Սասունի անկախ իշխանությունն ընդդեմ հարձակվող թուրքերի և բռնակալ Փիլարտոսի ու ֆրանկների և ուրիշների և սպան-

---

5 Անդ, էջ 135 և հետ.։

6 Անդ, էջ 302 և հետ., 308 և հետ., 337 և հետ.։

վում է դարանամուտ նետահարությամբ[7]։ Մի իսկական վիպական հերոս է նա, որի ժամանակն ու կյանքի դժերն անպայման ազդել են մեր ազգային հերոս Սասունցի Դավթի վեպի ու բնավորության վրա[8]։ Այսպիսի վիպական կտորներից է, օրինակ, նաև ծերունի մեծ իշխան Խաչիկի և իր որդիների մասին պատմածը։ Խաչիկը սակավաթիվ մարդկանցով քաջազնաբար մարտնչում է հարձակվող այլազգիների բազմության դեմ։ Նրա կտրիճ որդին, տասնուհինգամյա իշխանը, փախչելով իր արգելանոցից, ուր փակել էին նրան, որ կռիվ չգնա, ինչպես մի առյուծ մարտի մեջ է մտնում և սպանվում։ «Եւ տեսեալ Խաչիկ՝ բեկաւ ողն նորա, անկաւ սուսերն ի ձեռաց նորա»։ Նա էլ սպանվում է։ Նրա մյուս որդիները, Հասան և Ճնճղուկ, որոնք իրենց երկրից բացակա էին, վերադառնալով՝ մարտով լուծում են իրենց հոր և եղբոր մահվան վրեժը[9]։ Այս արիության գործը, որ ժամանակագրության մեջ պատմված է ինչպես մի ժողովրդական վեպ, կատարվել է 1041 թվին Վասպուրականի Թոռնյան գավառում։ Բայց մյուս կողմից տեսնում ենք նաև շատ ցավալի արարքներ ևս։

Ահա նույն Վասպուրականի Թուլամորթ թագավորը՝ Սենեքերիմ, այդ նախապաշարված նեղ խելապատակը, որ թագավոր լինելով հանդերձ՝ չի հասկանում իրերի դրությունը։ Խուժադուժ Թուրք զորքերը 1018 (ըստ այլ ընթերցվածի 1016) թվականին մտնում են Վասպուրական[10]։ Արքայորդին՝ Դավիթ և Շապուհ զորավարը զորքով ելնում են նրանց դեմ։ Մինչև այն ժամանակ, — ասում է Տարեգիրը, — հայերը «չէին բնաւ տեսեալ Թուրք զօրք հեծելոց. և ի հանդիպելն նոցա՝ տեսին այլակերպ զնոսա, աղեղնաւորս և հերարձակս իբրև զկանայս։ Եւ յայնժամ զօրքն Հայոց չէին սովոր պատրաստ լինիլ ընդդէմ նետից»։ Բայց և այնպես մերկացնում են իրենց սուսերները, քաջաբար հարձակվում թշնամու վրա և շատերին կոտորում։ Այլազգիներն էլ հեռվից նետաձգությամբ վիրավորում են հայ զորականներից շատերին։ «Քաջ և հզօր պատերազմող» Շապուհ զորավարը, հակառակ արքայորդու կամքին, նահանջել է տալիս, որպեսզի գնան «այլ զգեստ» պատրաստեն նետերի դեմ։ Գնում են Ոստան քաղաքը և թագավորին պատմում եղելությունը։ Սենեքերիմը, փոխանակ իր զորավարի խրատին հետևելով նոր պատրաստություն տեսնելու թշնամիների դեմ, և կամ մյուս հայ թագավորներից օգնություն խնդրելու, ահա թե ի՛նչ է անում. «Ոչ եկեր և ոչ էարբ, — ասում է Ուռհայեցին, — այլ կայր մտախորհ, լի տրտմութեամբ, և զգիշերին ամենայն անքուն անցուցանէր, և նստեալ քննէր զժամանակագրութիւնս և զասացուածս աստուածախօս տեսանողացն, զսրբոց վարդապետացն, և գտանէր գրեալ ի

---

7 Անդ, էջ 130 և հտն., 206—210։

8 «Մուրճ» ամսագիր, Թիֆլիս, 1889, էջ 1739—1741, 1743—1746, Մ. Աբեղյան, Ազգային վեպ, հոդված, շարունակությունը նույն ամսագրի 1890 թ. հունվար ու փետրվար ամիսների համարներում։

9 Մ. Ուռհայեցի, ժամանակագրութիւն, էջ 90 և հտն.։

10 Անդ, էջ 46 և հտն.։

գիրսն զժամանակն ելանելոյ Թուրքաց զօրաց և զօրականաց. և ծանեաւ զկորուստ և զկատարած ամենայն երկրի. և գտանէր ի գիրսն գրեալ այսպէս, եթէ «ի ժամանակին յայնմիկ փախիցեն յարևելից յարևմուտս...»։ Եվ այդքանը բավական էր. մարգարեներն իբր գուշակած են եղել Թուրքերի այս հարձակումը Հայաստանի վրա և հայոց ամբողջ երկրի կորուստն ու վերջը։ Էլ կարելի չէր դիմադրել։ Բայց նույն մարգարեներն իբր խորհուրդ են տվել փախչել արևելքից արևմուտք։ Ահա թե ո՛րչափով կորստաբեր է եղել նախորդ դարում ծայրահեղության հասած նեղ կրոնական ոգին և սրա հետ կապված սքոլաստիկական անմիտ մեկնաբանությունը։ Այդ մորթասլաշտ Սեննեքերիմին հենց այդ էլ հարկավոր էր՝ «փախչել արևելքից արևմուտք», և նա իր հայրենի աշխարհը տալիս է բիզանդական կայսրին, որ մեծ ուրախությամբ ընդունում է այդ նվերը, և փոխանակ տալիս է նրան Սեբաստիա քաղաքն իր գավառներով...։ Ժամանակագիրն այս տխուր պատմությունը մանրամասն անելուց հետո հիշում է միայն այս հետևանքը. «Եւ անտէրացաւ աշխարհն Հայոց ի թագաւորաց և յիշխանաց»։ Շատ ճիշտ խոսք է։ Սեննեքերիմի բացած կորըստյան գուռն այլևս չի փակվում, շուտով նրան հետևում են և ուրիշները, կամա թե ակամա ելնում են ու ելնում երկրից դուրս, և ոչ միայն իշխանները։ Փոխանակ միահամուռ ուժերով նտ մղելու ներխուժող թշնամիներին՝ թուլամորթությամբ փախչում են ոչ միայն արևմուտք, այլև ուրիշ կողմեր, և այդ է եղել հայության չար բախտն ամբողջ ինը հարյուր տարի շարունակ։

Այդպիսի հայրենախույս մեծամեծների դիակները միայն երբեմն երբեմն վերադարձրել են իրենց երկիրն՝ այստեղ թաղելու համար, ինչպես վարվում են վերաբերմամբ նույն Սեննեքերիմի, որ մեռնում է 1022 թ., և դին բերում թաղում են Վարագում իր հայրերի մոտ։ Այս է դրանց հայրենասիրությունը։

Այդպիսի հայրենաթափությունը՝ հասկացող մտքերի ու զգայուն սրտերի, ինչպես և իրեն՝ Մատթեոսի համար եղել է աղբյուր դառն վշտի, որով շարունակ համակվել են մեր հեղինակները 12-րդ դարում։ Կարելի չէ առանց զգածվելու կարդալ Գրիգոր Վկայասերի թաղումը (էջ 300)։ Նա 1105 թ. մեռնում է Հայոց մեծ իշխան Գող Վասիլի մոտ, որ Եփրատից արևմուտք կազմել էր մի բավական մեծ հայկական իշխանություն։ «Եւ թաղեցաւ մեծաւ հանդիսիւ ի Կարմիր վանքն մերձ ի Քեսուն [Գող Վասիլի իշխանության կենտրոնն է]... Եւ իշխանն Հայոց Վասիլն և այլ ազատագունդքն Հայոց արարին կոծ մեծ ի վերայ նորա, և դառնակոծ արտասուօք լային առ հասարակ ի վերայ նորա... և նովաւ յիշեալ լային տունն Հայոց, և լային զանտիրանալն իւրեանց ի յօտար աշխարհ և զելանելն ի հայրենի տանէն իւրեանց»։

Մատթեոս Ուռհայեցին ինքն ամենից լավ տալիս է իր գործի գնահատությունն իր գրքի երրորդ մասի առաջաբանի մեջ[11], իրեն նմանեց-

11 Անդ, էջ 279 և հետ.։

նելով բույն շինող ծիծեռնակին. «Որպէս և այն թեթև թռչունն, թէպէտ և ձայնովն ընդդիմանայ բազմաց, այլ մարմնովն տկարանայ, այն որ կոչի ծիծառն. սակայն նա զմերս ունի նմանութիւն առ զարմանալի գործ բնակութեանն իւրոյ, թէ զի՛րդ յոչնչոյ բնակութիւնս կազմէ և ի բարձունս առանց հիման կառուցանէ, շաղախաբեր և շիղաբեր վաստակս հնարով հնարէ, և ամրութիւնս պնդագոյնս հաստատէ, և որդուց իւրոց զնա տացէ ժառանգութիւնս, զոր և այլ յաղթանդամ թռչնոց անհնար է զայն գործել, արծուոյ ասեմ և նմանեաց նորա...: Արդ այսպիսի օրինակաւս հանճարեղք և գիտնականք զամենայն քննութիւնս Հին և Նոր Կտակարանացն աստուծոյ կարող են առնել... բայց զայս հաւաստապէս ասացից և առանց երկբայութեան, վասն այս՝ որ ի մէնջ քննեալ գծագրեցաւ, անհնար է եթէ այլ կարող լինի զայս գտանել և կամ հաւաքումն առնել միահամուռն ազգաց և թագաւորաց, հայրապետաց և իշխանաց, զամենայն ժամանակս թուականութեամբ ի գիր հաւաքել, վասն զի վճարեալ հատան առաջինքն, որք ականատեսք էին ամենայն ժամանակացն: Արդ զայս ոչ ոք է կարող առնել, զոր ինչ մեք արարաք, զի զոր ինչ գրեցաք՝ գրեցաւ»: Եվ նա մեծ հիշատակ է թողել իրեն՝ իր երկով դառնալով իր ժամանակի հարազատ հայելին և տալով մեզ մի մեծ ժամանակաշրջանի ընդարձակ պատկերը:

3. Գրիգոր Երեց անունով մեկը շարունակել է Ուռհայեցու ժամանակագրությունը 1137 թվականից մինչև 1162 թ. ներառյալ[12]:

4. Սամուել Անեցի: — Նախորդից ավելի կարևոր է այս ժամանակագրի աշխատությունը[13]: Նրա մասին կենսագրական տեղեկություններ չունենք. իր գրքի մեջ (էջ 137) գրում է. «Ի ՈԺ (=1161) թվին թագաւորն Վրաց Գօրգի էառ զԱնի ի յունիս ԺԳ. և ապա յօգոստոս ամսամտին՝ կոտորեաց զՇահիարմէնն էՒ. աւ զութսուն Ռ. սն. և այսորիկ ականատես եղաք մեք»: Բերել է բազմաթիվ ազգերի պատմություններից տարեգրություններ չափազանց համառոտ: Հայոց պատմության նկատմամբ՝ սակավաթիվ դեպքերում համեմատաբար ընդարձակ քաղվածքներ է արել: Այսպես են նաև Սարկավագ Վարդապետի գրած Պատմությունից հատվածները: Ժամանակագրությունը հասցրած է մինչև 1180 թվականը: Ոչ մի գեղարվեստական գրական արժեք չունի:

Սամուել Անեցու ժամանակագրությունը շարունակել են սկսած 1181 թվականից մինչև 1336 թ.: Ուրիշ ձեռագիրների մեջ եղել են հավելումներ նույնիսկ մինչև 1657 և 1665 թվականները[14]:

---

12 Անդ, էջ 369—429. Գրիգոր Երեց անունը՝ էջ 370:

13 «Սամուէլ քահանայի Անեցւոյ, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս Գիւտի ժամանակաց մինչև ի ներկայս ծայրաքաղ արարեալ», հառաջաբանով, համեմատությամբ, հավելվածներով և ծանոթություններով Արշակ Տեր-Միքելյանի, Վաղարշապատ, 1893:

14 Տե՛ս Ս. Անեցի, Յառաջաբան, էջ ԻՀ, և էջ 140, 161, 175: Սամուել Անեցու աշխատության հետ տպագրված են և շարունակողների գործերը: Բացի այդ՝ նաև իրրև հավելվածներ—էջ 185—199. Հովհաննիսիկ Վարդապետ, Համառօտ պատմութիւն անցից անցելոց ի վերին կողմանս Հայաստանի ըստ կարգի ժամանակագրութեան (սկսեալ ի

5. Մխիթար Անեցի[15]։ — *Եղել է Անի քաղաքի Կաթուղիկե եկեղեցու ավագերեցը. ապրել է 12-րդ դարի վերջերում։ «Պատմությունը» գրել է Հաոիճայի վանահայր Գրիգոր վարդապետի խնդրով։ Պատմությունն ունեցել է երեք «պրակ»։ Մեզ հասել է միայն առաջին պրակը—«սկիզբն և գլուխք իչ»։*

Ռիվ թուականէն Հայոց ցՌխԹ, այն է՝ յամէ տեառն 1572 ց1600)։ էջ 200—203. «Թարեխ տաճկաց»։ էջ 204—212. «Պատմութիւն ազգին Ռովբինեանց...»։ էջ 212—223. «Համառօտ պատմութիւն Ռուբինեանց իշխանաց»։ էջ 224—243. «Պատմութիւն Վարուց **Ներսէսի** *եպիսկոպոսի երգոցս Սաղմոսի քննօղի»։*

Կա նաև «Վահրամայ Բարունւոյ ոտանաւոր պատմութիւն Ռուբինեանց», Փարիզ. տպ. Կ. Վ. Շահնազարեան, 1859. ժամանակակից Շնորհալու։

15 **Մխիթար Անեցի**, *Պատմութիւն, Ս. Պետերբուրգ, 1879։*

Ա.ՇԽԱՐՀԻԿ ՈՓՈՒ ՎԵՐԱԾՈՒՄ

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Հայ գաղութն ասորական Մեջերկրայքում իբրև հայկական մշակույթի վայր: — *Մինչ Հայաստանի հյուսիսում Հովհաննես Սարկավագ Վարդապետը խոնարհվել էր արդեն դեպ իր արևմուտք, և Մատթեոս Ուռհայեցին Միջագետքում աշխատում էր իր ժամանակագրության վրա, նույն միջոցին Հայաստանից դուրս, Ծովք բերդում, 1121 թ. իր առաջին բանաստեղծական փորձն էր անում քսանամյա Ներսես Պահլավունին՝ հորինելով իր «Վիպասանութիւն» աշխատությունը: Հույների և սելջուկյան թուրքերի ձեռից 11-րդ դարում հայերը դիմում էին դեպի արևմուտք: Բազմաթիվ հայ իշխաններ իրենց մարդկանցով, հաճախ իրենց ժողովրդի բազմությամբ, մայր երկրից դուրս քաշվելով կամ քշվելով՝ տեղավորվում էին Փոքր Ասիայում, Կիլիկիայում՝ Տավրոսյան լեռների վրա, Միջագետքում, այլև Ասորիքում՝ Եփրատ գետից արևմուտք: Նրանք կազմել էին այդ կողմերում անկախ կամ կիսանկախ փոքր իշխանություններ, երբեմն էլ անունով միայն ենթարկվելով Բիզանդիային՝ իրենց անկախությունը պահում էին կռվելով մի կողմից թուրքերի դեմ, մյուս կողմից՝ հույն իշխողների: Այսպիսի տարադիմիկ վայրատականներից մեկն էր եղել և Ներսեսի պապը, մի Պահլավունի իշխան, Գրիգոր Մագիստրոս Պահլավունու չորրորդ դստեր ամուսինը. նրա որդիներից մեկն էր Ապիրատ Պահլավունին, Ներսեսի հայրը: Նա տերն էր Ծովք կամ Ծով կոչված փոքրիկ բերդի կամ դղեկի, որ գտնվում էր Տլուք գավառում, Անտիոքի երկրի մեջ, Մարաշից (=Գերմանիկից) դեպի արևելք և Այնթապից դեպի հյուսիս-արևմուտք, Սև լեռան շղթայի ճյուղերից մեկի մեջ, մի բրգաձև քարաժայռ ու քարակարկառ գագաթի վրա, ամեն կողմից սեպացած*[1]:*

---

1 Բաբգեն ծ. վ. Կյուլեսերյան, *Ծովք, Ծովք-Տլուք և Հռոմ-Կլայ*, Վիեննա, *1904*: Ղեվոնդ Մ. Ալիշան, *Շնորհալի և պարագայ իւր*, Վենետիկ, *1873*, էջ *96* և հետ., *151*, *189*, *310*: Բ. Կյուլեսերյանը մանրամասն ուսումնասիրել և որոշել է Ծովք բերդի և Տլուք գա-

Աշխարհականների հետ գաղթում էին նաև կրոնավորներն ու վարդապետները, որոնք տեղավորվում էին նորաշեն վանքերում, գլխավորապես Սև լեռան վրա։ Այսպես կոչվում էին Կիլիկիայի և Ասորիքի միջև հարավից դեպի հյուսիս ձգվող Ամանոս լեռնաշղթան, ավելի ևս սրա դեպի հյուսիս-արևելք և արևելք թեքվող այն ճյուղերը, որոնք խառնվում էին Կիլիկիայի հյուսիսային կողմերով դեպի արևելք պարզված Տավրոս մեծ լեռնաշղթայի ճյուղերի հետ։

Այս լեռան ընդարձակ թևերի վրա՝ բնական ամրության համար ժողովված էին հույն և ասորի կրոնավորներ ու ճգնավորներ։ Գրիգոր Վկայասերի ջանքերով հիմնվում են այնտեղ և հայկական վանքեր։ Ասորիքի այս մասում,—Կիլիկիայից արևելք, Տավրոսից հարավ և Եփրատից արևմուտք և հյուսիս-արևմուտք,—«Եփրատացիք» կոչված աշխարհում (հին Կոմագենե թագավորության երկրում, որի մայրաքաղաքն էր Սամոսատ), «Մէջերկրայքում», ինչպես անվանում է Ներսես Շնորհալին այդ կողմերը, 11-րդ դարի վերջերին և 12-րդի առաջին երկու տասնամյակներում կար, ինչպես տեսանք, Գող Վասիլի հայկական մեծ իշխանությունը, որի կենտրոնն էր Քեսուն[2] քաղաքը Եփրատին մոտիկ։ Կային այնտեղ նաև մի քանի ուրիշ հայկական մանր իշխանություններ։ Այս «Մէջերկրայքն» ահա իր վանքերով ու հայկական իշխանություններով՝ դառնում է հայկական կուլտուրայի համար մի նոր վայր, որի փայլուն ներկայացուցիչներն են հանդիսացել Գրիգոր ու Ներսես եղբայրները 12-րդ դարում, իսկ 13-րդ դարում՝ Վարդան Այգեկցին։

Գրիգոր Մագիստրոսի որդի Վահրամ-Գրիգոր Վկայասեր կաթողիկոսն իր կյանքի վերջին տարիներն անց է կացրել այդ կողմերի վանքերում, որոնք վայելում էին Գող Վասիլ ազդեցիկ իշխանի հովանավորությունը։ Ներսես Շնորհալին իր «Վիպասանության» մեջ այդ կաթողիկոսի համար գրում է, թե Եգիպտոսից վերադառնալիս՝ նա

Զօթևանօք զանց արարեալ,
Մինչ ի Տաւրոս լեառըն հասեալ,
Անդ ուր սըրբոցըն բնակք եղեալ...

վարի տեղը։ Նա Երուսաղեմի տպագրությունից բերել է նաև Մատթեոս Ուռհայեցու ժամանակագրությունը շարունակող Գրիգոր Երեցի հետևյալ վկայությունը. «Յայսմ ամի (1161—1162) Տէրն Անտիոքու... իջանէր յԱլեքսայ երկիրն, և ի բերդն Կաթողիկոսի, որ կոչի Շով»։ «Ալեքսայ» անվան տակ նա հասկացել է «Ալեքս Ա. կայսր Բիւզանդիոյ (1081—1118)»։ Բայց պարզապես աղճատում է դա։ Ուրիշ ձեռագիրների մեջ, ըստ էջմիածնի տպագրության, է «յերկիրն Տլբոյ»։—Մի ժամանակ սխալմամբ կարծել են, թե Շովքը Տավրոսյան լեռների մեջ, Ծոփաց աշխարհում, Խարբերդից հարավ գտնված լճակն է։

2 Բարգեն Կյուլեսերյանը «Շովք» աշխատության մեջ, էջ 28, 71 և այլն, նույնպես և Մ. Օրմանյանը՝ «Ազգապատում», էջ 1325. պար. 910, Քեսուն քաղաքը նույնացրել են Պհհանիի հետ, որ գտնվում է Եփրատի վրա աջ ափին։ Գրիգոր Երեցը, սակայն, հաճախ հիշում է այդ երկուսն իբրև առանձին քաղաքներ. Քեսուն, Պհհանի, Ռապան, Հռոմկլա ու Քեսուն, Պհհանի, Ռապան.—Քեսուն Պհհանի, Ռապան (Ուռհայեցի, էջ 370, 375, 395)։

Ի վայելուչ յայն վայր եկեալ
Հովուապետին զգօնացեալ,
Ի Սեաւ մըթին լեառն անուանեալ,
Ուր են հոգիք լուսաւորեալ...

Այնտեղ նա ոչ միայն կրոնավորական կյանք էր վարում, այլև գրականությամբ պարապում.

Զբանի սիրողսըն հաւաքեալ
Եւ առ ինքեան բնակեցուցեալ.
Զգիրըս Հոգւոյն միշտ ընթերցեալ
Եւ ընդ նոսին յար խօսակցեալ։

Հետո նա տեղափոխվում է Քեսուն և կարմիր Վանքը, որ Քեսունի մոտ էր։

Ի Մէջերկրեայս անդուստ փոխեալ,
Որ Եփրատայ մերձ առակացեալ
Քաղաք Քեսոն իմն անուանեալ,
Յոր հուպ է վանք կարմիր կոչեալ[3]։

Գող Վասիլ իշխանն ու իր ամուսինը պատվասիրում ու հանձանձում են նրան՝ «ըստիփամբ ծերատածեալ»։

2. Ներսեսի ուսումն ու կրթությունը: — *Գրիգոր Վկայասերն իր ձեռքի տակ մեծացնում ու կրթում էր իր քեռորդի Ապիրատ Պահլավունու Գրիգոր որդուն, վաղ մանկությունից, կամ ինչպես Ներսես Շնորհալին գրում է,*

Որ իր ստենէ գոլով հատեալ,
Առ համանուն հօրըն վարժեալ։

Հետո նա Գրիգորի հետ պահում ու խնամում էր նույնպես և նրա եղբայր Ներսեսին, որ ծնված էր շուրջ 1101 թ. և Գրիգորից մոտ վեց կամ յոթը տարով փոքր էր[4]։ *Ներսես Լամբրոնացին*[5] *գրում է, թե Գրիգոր Վկայասերը Ներսեսին էլ շատ վաղ տարիքից առնում է կրոնավորության համար.*

Այդ չորս քաղաքները կամ բերդերն էլ Եփրատի վրա կամ մոտ են եղել՝ ցույց տրված կարգով հյուսիսից հարավ։

3 «Ներսիսի Շնորհալւոյ, Բանք չափաւ», Վենետիկ, 1830, էջ 548 և հետ.։

4 Մ. Օրմանյան, Ազգապատում, էջ 1399, պարագրաֆ 961 գրում է. «իր կաթողիկոս եղբորմէն 5 կամ 6 տարեկան պզտիկ, որով շուրջ 1100-ին ծնված կըլլա Մովք դղյակին մէջ»։ Ուրիշները նրան 1102 թ. են ծնված դնում։

5 «Գովեստ ներբողական... Ներսիսի Լամբրոնացւոյ». տե՛ս «Թուղթ ընդհանրական Ներսիսի Շնորհալւոյ», էջմիածին, 1865, էջ 461—497, բերված կտորը՝ էջ 473։

Տէր Գրիգորիս որ երկրորդ է,
Ի պատուական սուրբ իւր զարմէ
Զայս հարաղատ եղբայրս ընտրէ
Ի յրստընդեայ փոքր հասակէ,
Ի մի՛անձանց սրբոց կոչէ,
Դաստիարակ ուսման կարգէ,
Ներսէս զանուն նախնւոյն կոչէ։

Բայց այդ երեխաները երկար չեն վայելում նրա խնամքը. նա վախճանվում է 1105 թ.։ Մահից առաջ նա Անի քաղաքից իր մոտ է կանչում իր քեռորդի Բարսեղ կաթողիկոսին, — որ իբ հայրական կողմից էլ պահլավունի էր և կաթողիկոսի աթոռակիցն էր արևելքում, — և նրան է հանձնում այն երեխաներին, որ լավ կրթի ու դաստիարակի նրանց, որպեսզի մեծ եղբայրը՝ Գրիգորը հետո կաթողիկոս դառնա։ Վկայասերի մահից հետո Բարսեղ կաթողիկոսը սիրով կատարում է նրա կտակը։ Նա մնում է Գող Վասիլի իշխանության մեջ և նստում է Շուղր անապատում.

Ի յանապատ իմըն բնակեալ՝
Ի մէջ լերանց՝ Շուղր անուանեալ։

Այն ժամանակ իր ուսումնական վարդապետներով նշանավոր է եղել Քեսունի մոտ Կարմիր վանքը, որի առաջնորդն էր իր գիտությամբ հռչակված Ստեփանոս Մանուկ կոչված եպիսկոպոսը։ Պատմում են, որ սա, Մեծ Հայաստանում արդեն քահանա ձեռնադրված, քարոզելիս է եղել։ Այնտեղից գնացել է Քեսունի Կարմիր վանքը և այստեղ էլ տասնութ տարեկան հասակում սկսել է եկեղեցու բեմից քարոզել և վարդապետել ծերունի վարդապետների թույլտվությամբ։ Ուրիշները Բարսեղ կաթողիկոսին գանգատվել են այդ առթիվ։ Կաթողիկոսը կարգադրություն անելուց առաջ լսել է նրա քարոզը, շատ հավանել է, ոչ միայն թույլ է տվել, որ այդ նորահասակ երիտասարդը շարունակի վարդապետել, այլև իր մատանին ու գավազանը նվիրել է նրան և եպիսկոպոս ձեռնադրելով նրան՝ կարգել է առաջնորդ Կարմիր վանքի և Գող Վասիլի իշխանության։ Իր գիտությամբ և սրբակյաց վարքով հայտնի այս վարդապետ-եպիսկոպոսին է ահա հանձնում Բարսեղ կաթողիկոսը Գրիգոր և Ներսես Պահլավունի եղբայրների կրթությունն ու դաստիարակությունը։

Քեսունի Կարմիր վանքը դառնում է մի նոր վարդապետարան. երկու եղբայրների հետ ուսանում են և ուրիշները, որոնցից են Սարգիս Շնորհալի, Իգնատիոս Շնորհալի, Բարսեղ Շնորհալի[6]։ «Շնորհալի մականունին կրկնումը նշանավորագույն աշակերտներուն վրա՝ մտածել կու տա, թե

---

6 Ղ. Ալիշան. *Շնորհալի և պարագայ իւր*, էջ 49 և հետ.։

այդ կոչումը որոշիչ պատվանուն մը եղած է Շուղրի կամ Քեսունի Կարմիր վանքի աշակերտության մեջ. ինչպես ferթող պատվանունը Սյունյաց դպրոցին և իմաստասեր պատվանունը Արագածոտնի դպրոցին հատկացյալ մակդիր անունի պես գործածվեցան»[7]։ Այդ «Շնորհալիներից», ինչպես և Ներսես Շնորհալուց մնացել են մեկնություններ, իրենց վարդապետ Ստեփանոս Մանուկից, սակայն, չի մնացել ոչ մի գրական երկ։

Կարմիր վանքում Ներսեսն առել է եկեղեցական ուսումը, որ հետո էլ նա կատարելագործել և ընդարձակել է անդուլ ջանքով։ Նրա ուսած առարկաներն եղել են՝ Ս. Գիրք, սուրբ Հայրերի գրվածքներ, եկեղեցու և սրբերի պատմություններ, դավանաբանություն, հայկական մատենագրություն ու թարգմանություններ թե՛ եկեղեցական և թե՛ արտաքին գիտությունների. հմտացել է եկեղեցական կանոններին ու կարգերին, սովորել է եկեղեցական երաժշտություն ու տոմարագիտություն, վայելուչ շարադրություն գրաբար լեզվով, այլև վայելչագրություն «ի զանազան կերպս»։

Նա ունեցել է գեղեցիկ ձեռք և նույնիսկ ծերության օրերին, ապատ ժամանակին, արտագրել է գրքեր, որոնց մի քանիսը հասել են մեզ։ Ներսես Լամբրոնացին[8] գրում է.

Ներսէս պատուով գեր ճոխացաւ,
Այլ ի գործոյ ոչ կասեցաւ,
Ձեռացն երկօք վաստակեցաւ,
Գիրըս գրրել միշտ ճրգնեցաւ.
Որպէս հօրանս ուղուց ցուցաւ
Գեղեցկագիր գիրըն կարդաւ։

---

7 Գ. Զարբհանալյան, *Հայկական հին դպրության պատմություն*, Վենետիկ, 1887, էջ 616 և հտն., էջ 642—648։ Մ. Օրմանյան, *Ազգապատում*, Կոստանդնուպոլիս, 1912, էջ 1335 և հտն., պար 917։ Օրմանյանն ու Զարբհանալյանը Շուղրի վանքն և Կարմիր վանքը սխալմամբ նույնացնում են իրար հետ, գրելով՝ «Շուղր անապատին Կարմիր վանքն» (Զարբ.), «Քեսունի կամ Շուղրի Կարմիր վանք», «Շուղրի կամ Քեսունի Կարմիր վանք» (Օրման.)։ Այդ երկուսը տարբեր վանքեր են։ Ներսես Շնորհալին «Վիպասանության» վերևում բերված տողերի մեջ գրում է, թե Գրիգոր Վկայասերը «բնակվեց Շուղր անվանված մի անապատում [=վանքում] լեռների մեջ»։ Հետո նա գրում է Բարսեղ կաթողիկոսի թաղման համար. «Ձոր և յուխտին [=վանքում] նախասացեալ ի Շուղր անունըն հանգուցեալ»—որին և թաղեցին վերևում հիշված Շուղր անունով վանքում։ Իսկ Կարմիր վանքը, ինչպես վերևում բերված տողերից կարելի է տեսնել, է Քեսունին մոտ։ Ուռհայեցին (էջ 329 և հտն.) գրում է, թե վիրավորված Բարսեղ կաթողիկոսն «ետ տանել զինքն ի վանքն իւր որ կոչի Շուղր», «մեռաւ և թաղեցաւ ի Շուղրն»։ Ապա անմիջապես պատմում է նա, թե ժողով են անում «ի Կարմիր վանքն մերձ ի Քեսուն գաւառս» և կաթողիկոս են ձեռնադրում Գրիգոր Պահլավունուն։ Ուրիշ տեղ (էջ 300) նա Գրիգոր Վկայասերի համար գրում է, թե «Թաղեցաւ... ի Կարմիր Վանքն մերձ ի Քեսուն». նույնպես և Դող Վասիլի համար ասում է, թե «Թաղեցաւ ի Կարմիր վանքն» (էջ 324)։

8 Ն. Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 470։

Ուսումնասեր լինելով, նա շատ ցանկացել է բարձրանալ իբրև գիտնական, բայց ժամանակի շփոթ դրությունը թույլ չի տվել նրան հասնել իր նպատակին։ «Արտաքին» գիտությունների ուսման պակասը նա ըզգացել է դեռ իր գրական գործունեության սկզբում։ «Վիպասանության» վերջում նա ինքն իրեն անվանում է «համբակ նուաստացեալ», իսկ նախերգանքի մեջ հայտնելով իր «անկարությունն» և «տգիտությունը», գրում է.

Զի հրահանգից վարժարանի
Չեմ տակաւին ներկուռ բանի։
Յաթենականըն քաղաքի
Զանձն իմաստիւք ոչ կըրթեցի.
Ուր լըսարանըն Պղատոնի,
Եւ չափ ոտիւք Հոմերովնի.
Ուր ստորոգողն Արիստոտէլ,
Տասըն բանիւ գըրողն էի.
Ուր հոյլք ամէն հրեւտորի,
Ժողովարան ճարտասանի,
Ներհըմտութիւն քերականի,
Բայի քերումըն քերթողի.
Զորըս գիտել նախ պատշաճի,
Եւ աստ ապա ձեռնարկելի։
Եւ զի յինէն այս է հեռի,
Տարաբերիմ յամենայնի՝
Եթէ զիա՛րդ սկըսանիցի
Եւ կամ ո՛րպէս վճարեսցի։

Ոչ միայն Սև լեռան վանքերում, այլև Հայաստանի քաղաքներում չկար այլևս հին հունական դիտության ու փիլիսոփայության ուսումը, որ այնպես աջող կերպով վերսկսվել էր ավելի քան հարյուր տարի առաջ, և որի ուսումն այնպես լայն ծրագրում էր Գրիգոր Մագիստրոսը։ «Ո՞ր մեր վարժարանք՝ ի թագաւորական պատրաստեալ հրամանացն», բացագանչում էր Ներսեսը իր ծերության տարիներին[9]։

Ազգային քաղաքական իշխանության հետ՝ այդ ևս վերացել էին, մնում էին վանքերը։

3. Գրիգոր և Ներսես եղբայրները Ծովք և Հռոմկլա բերդերում։ — Ներսեսը դեռ Կարմիր վանքում աշակերտ էր, որ նրա հայրը՝ Ապիրատը նետահար սպանվում է իր բերդի պաշտպանության ժամանակ։ Շուտով նա զրկվում է նաև իր «հոգևոր հորից»՝ Բարսեղ կաթողիկոսից։ Կարմիր վանքում ժողով է լինում, և կաթողիկոս է ընտրվում 1113 թ. իր եղբայր

9 Ն. Շնորհալի. Թուղթ ընդհանրական. Էջմիածին, 1865, էջ 150, «Պատասխան առաջին թղթոյն... Մանուէլի»։

Գրիգորը տասնութ կամ տասնինը տարեկան հասակում։ Նա է հոգում իր ընտանիքի մասին, ինչպես գրում է Ներսեսն իր Վիպասանության մեջ.

Զիւրաքանչիւրըս տնօրինեալ,
Եւ ըստ բախտի կարգաւորեալ.
Զեղբարս ինքեան հարազատեալ՝
Յիշխանական գահ յառաջեալ.
Վասիլ անուն վեհ երևեալ,
Եւ Զօրավար համապատուեալ.
Եւ Մարիամ քոյր անուանեալ,
Որ յաշխարհի կարգըս մըտեալ։

Կրտսեր Ներսեսը մնում է իր կաթողիկոս եղբոր մոտ և շարունակում է իր ուսումը. երբ արբունքին է հասնում, քահանա է ձեռնադրվում, հետո՝ նաև եպիսկոպոս։ Կաթողիկոսը նստում էր կամ Կարմիր վանքում կամ Շուղրի վանքում, բայց Գող Վասիլի մահից հետո Ուռհայի կոմսին աջողում է տիրել Քեսունի իշխանությանը, և Գրիգոր Պահլավունին 1116 թ. իր աթոռը փոխադրում է իր հայրենական Ծովք բերդը։ Ժամանակի քաղաքական դրությունը շատ անկայուն էր։ Խաչակիրները հետզհետե բռնանալով՝ հայերի ձեռից հանում են նրանց բերդերը Ասորիքում ու Միջագետքում։ Սելջուկյան թուրքերն էլ արևելքից արշավում էին դեպի այդ կողմերը։ Կար նաև Փոքր Ասիայում հաստատված սելջուկների մի ճյուղը, Իկոնիայի սուլթանությունը (1074—1294 թթ.), որ կոչվում էր Հռոմ, Հռոմք (Ռում) և կենտրոն ուներ Իկոնիոն քաղաքը Կիլիկիայից արևմուտք. դա էլ ձգտում էր տիրանալու այդ երկրամասին։ Մի չորրորդ կողմից Եգիպտոսի իշխողներն էին խուժում դեպի Ասորիք։ Այստեղ շարունակ տեղի էին ունենում ընդհարումներ, բերդերի և երկրամասերի հափշտակություններ ու խառնակություններ։ Ծովք փոքրիկ բերդն ևս անապահով էր։ Ուստի կաթողիկոսը մի լատին իշխողից գնում է Հռոմկլա կոչված բերդը, որ ավելի ամուր էր (Եփրատի աջ ափին Թլպաղարի հարավ-արևելյան կողմում, Այնթապից դեպի հյուսիս-արևելք, Եդեսիայից արևմուտք)։ Կաթողիկոսարանը 1150 թ. փոխադրվում է այդ բերդը։ Ներսեսը 1151 թ. գրված իր «Բան հաւատոյ» երկի «Յիշատակարանի» մեջ[10] պատմում է Իկոնիայի սուլթանի արշավանքի և աթոռը Հռոմկլա փոխադրելու մասին և գեղեցիկ նկարագրում է այդ բերդը.

Արդ յայսպիսում ժամանակի
Դառն և դըժնեայ և անբարի,
Յորում բնակեմք յայսմ ամրոցի
Ի գետապատ քարանձաւի,
Ի յԵփրատայ պարագրելի,

10 Ն. Շնորհալի, *Բանք չափաւ*, էջ 223 և հետ.։

Որ յԱդենայ քառորդ հոսի,
Յելից կուսէ հեզիկ շարժի,
Ի միւս փոքուէ մըտիւք պատի.
Ինքս ամբարձեալ իբր ըզկըղղի,
Յալեաց ծովուց ոչ երկընչի.
Ի մարդկանէ ոչ զարհուրի,
Զի է հնարից անյաղթելի։
Զոր տնօրինիչն ամենայնի
Տեղ պատրաստեաց ապաւինի
Սուրբ աթոռոյս ըսքանչելի.
Ի բարկութեան ժամանակի
Յորում նեղիմք յանօրինաց
Ի յարտաքին չար գազանաց,
Եւ ոչ նուազ ի դըրժանաց
Ի սուտանուն քրիստոնէից։

Ներսեսը, որ միշտ անբաժան էր իր եղբորից և նրան օգնում էր իր պաշտոնական գործերի մեջ, մինչև կյանքի վերջը կենում է այդ բերդում, ուստի կոչվում է նաև Ներսես Կլայեցի։ Գրիգոր Պահլավունին ծերության պատճառով 1166 թ. հրաժարվում է աթոռակալությունից, և Ներսեսն ընտրվում է կաթողիկոս։ Երեք ամսից հետո վախճանվում է Գրիգորը, իսկ Ներսեսն ապրում է մինչև 1173 թ.։

4. Երկու եղբայրների գրական վաստակը։ — *Այս եղբայրները մեր եկեղեցական պատմության գլխավոր դեմքերից են. նրանք ցույց են տվել մեծ գործունեություն։ Երկուսն էլ պարապել են նաև գրականությամբ, ավելի Ներսեսը։*

Ներսես Լամբրոնացին[11] *գրում է, թե Գրիգորը գրադարան է կազմել, իսկ Ներսեսը ընթերցանությամբ է պարապել.*

Զգիրըս ցըրուեալս ի մի ածէր,
Սոքօք զաթոռն արմատացնէր,
Կցորդ բարեաց զեղբայրն ունէր,
Որ յիմաստից վարժ մըտեալ էր,
Միշտ ընթերցմանըն պարապէր
Եւ հայր խորին բանից լինէր։

Ուրիշ տեղ էլ[12] *Լամբրոնացին գրում է Ներսեսի համար, թե նա «ի յընթերցումըն պարապէր»։*

Գրիգորն իբրև կաթողիկոս քաջալերող է հանդիսացել վարդապետներին զանազան երկեր հորինելու. այսպես, օրինակ, Սամուել Անեցին նրա հանձնարարությամբ գրել է իր ժամանակագրությունը, Ներսես Շնոր-

11 Ն. Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 476։
12 *Անդ*, էջ 470։

հալին հորինել է իր մի քանի երկերը։ Նա, հետևելով Գրիգոր Վկայասերին՝ ինքը թարգմանել է և ուրիշներին թարգմանել է տվել վկայաբանություններ և կարգադրել է, որ սրբերի նախատոնակներին եկեղեցում կարդացվեն նրանց վարքերը, Կիրակոս Գանձակեցին[13] գրում է. «Իսկ սքանչելի հայրապետն Գրիգորիս ձեռն ի գործ արկեալ շինեալ եկեղեցի հրաշազան գմբեթայարկ ի նոյն բերդի. և սկսաւ թարգմանութիւն առնել յաստուածային գրոց, և բաղում գիրս ետ թարգմանել ի հայ լեզու, զո՛րն ինքեամբք և զո՛րն ի ձեռս այլոց»։ Այդպիսի աշխատությունների համար նրան կոչել են Գրիգոր Փոքր Վկայասեր։ Նա հեղինակ է նաև մի քանի ինքնագիր հոգևոր երգերի[14], որոնք հորինված են սովորական մոտիվներով։ Նրանն են և Լուսավորչի մեղեդին՝ «Ի յելս արևու արև» և ջրօրհնեքի տաղը Հիսուսի մկրտության մասին։ Վերջինս մեր կրոնական գեղեցիկ երգերից մեկն է[15].

Ո՞վ զարմանալի խորհուրդ այս մեծ յայտնեալ,
Արարիչն Աստուած ի Յորդանան եկեալ...
Յորդանան լուեալ՝ փախստական դառնայր,
Վտակ առ վտակ պատգամաւոր լինէր։
Գե՛տ, մի՛ զարհուրիր, քո արարիչն եմ ես,
եկեալ մկրտիմ և լուանամ զմեղս...

Գրիգորից ավելի է սեր ու հարգանք և ժողովրդականություն վայելել Ներսեսը թե՛ մահից առաջ և թե՛ հետո։ Նա հայոց եկեղեցու մեծ հայրերից է, իսկապես բազմակողմանի բնատուր ձիրքով օժտված բանաստեղծ-երաժիշտ, շնորհալի մի անձ ոչ միայն իր բազմազան գրական ընդունակությամբ, այլև իր կյանքով։ Ուստի և նրա անվան հետ անբաժան մնացել է Շնորհալի մականունը։ Նա շատ բեղմնավոր է եղել իր գրական վաստակներով և առանձնապես իր չափածո քերթվածներով ու երգերով. դրանց համար և նա կոչվել է նաև երգող, ինչպես ինքն էլ իրեն անվանում է իր մեծ քերթվածների հիշատակարանների վերնագիրներում[16]։ Մերոսության օրերին անգամ նա չի դադարել բանաստեղծելուց։

ՆԵՐՍԵՍԻ ՉԱՓԱԾՈ ԵՐԿԵՐԸ

1. Հայացքը բանագործության վրա։ — Ներսես Շնորհալին արվեստի ու գրականության վրա նայում է ամենից առաջ ձևական և դիդակտիկական — ուսուցական տեսակետներով։ Այդ հայտնում է նա իր մի քանի

---

13 Կ. Գանձակեցի, *Պատմութիւն*, էջ 102։

14 «Շարական հոգևոր երգոց», Էջմիածին, 1861, էջ Ը, էջ 12, 364, «Գրիգոր Վկայասէր՝ եղբայրն Շնորհալւոյն՝ [երգեաց] զնորհուրդն անճառն և զմեծահրաշն»։

15 Կարելի է գտնել Աղնք. Մխիթարյանցի խմբագրած «Տաղեր ու խաղեր» ժողովածուի մեջ, Ալեքսանդրապոլ, 1900, էջ 3։

16 Ն. Շնորհալի, *Բանք չափաւ*, էջ 160, 222։

երկերի մեջ։ Խոսքի շնորհքն, — ասում է նա, — միատեսակ չի տրված մարդկանց[17].

...Շնորհն ոչ միակի,
Այլ ի բազումըս բաժանի.
Ոմանց տայ [աստված] շնորհ մեկին բանի,
Զի հանրական լուր օգտեսցի.
Այլոց իմաստ ծածուկ ճառի,
Զի զարթուսցէ զնիրհեալ հոգի։
Ոմանց տայ բան՝ որ ոչ չափի,
Բայց գօրաւոր և ըստ կարգի.
Այլոց շնորհէ բանըս տաղի,
Զի և այնու միտքըն բանի։
Քանզի բնութիւն մեր է յայտնի,
Արագայագ և ձանձրալի,
Վասն այսորիկ տայ նա լեզուի
Զյոքնասեռեան ազգըս բանի։
Ըստ այսմ և ես նրկարեցի
Զներտաղական բանս ի քարտի,
Ի զուարճութիւն բանասիրի
Եւ բարեմիտ ընթերցողի։

«Յիշատակարան երգողի բանիս»[18]։

Ոճի նկատմամբ, ուրեմն, խոսքը լինում է պարզ («մեկին բան»), որ ամենքը հեշտ հասկանում են, և խրթին («ծածուկ ճառ»), որ դժվար հասկանալի է։ Այս տեսակն էլ, ըստ Ն. Շնորհալու, հարկավոր է. թմրած հոգիները դրանով սթափվում են, քանի որ մութ գրվածները հասկանալու համար մտքի լարում է պահանջվում։ Բայց ինքը մեր բանաստեղծը մի երկու տաղ միայն ունի մութ ոճով, ինչպես է, օրինակ, «Ի սուրբ քառասունսն»[19]*։ Նա սիրում և կիրառում է ընդհանրապես շատ հեշտ ու թեթև և դյուրըմբռնելի խոսքը։ Այսպես հորինելն այնուհետև նրա մեծ աղդեցությամբ հաստատվում է մեր բանաստեղծության մեջ, և այլապես էլ չէր կարող լինել, քանի որ արվեստի գեղեցկությունն արդեն տեսնում էին բնականին հետևելու մեջ։ Ապա նա շարունակելով իր միտքը պարզել՝ ասում է, թե մարդիկ կան, որ ունեն ոչ-չափածո, աղդու և կարգավորյալ արձակ խոսքի շնորհ. ուրիշներին էլ ոտանավորի ձիրք է տրված։ Ոտանավորով խոսքն ավելի «գեղեցկանում» ու «վայելչանում է» ու «զվարճալի» է դառնում, բայց այդ երկու տեսակն էլ հարկավոր են. որովհետև ձանձրալի չլինելու համար բազմազանություն է պետք։ Այդ երկու տե-*

---

17 *Անդ, էջ 164 և հետ.։*

18 *Անդ, էջ 164։*

19 *Անդ, էջ 464 և հետ.։*

սակի էլ նպատակը մեկ է և գործնական, այն է՝ օգտակարությունը, մարդկանց «մտքի բացումը», զարգացումը։ Ինքը՝ Ներսես Շնորհալին ունի ոտանավորի շնորհ։ Նա չափածո է հորինել իր բազմաթիվ երկերը, բացի պաշտոնական թղթերից և մի քանի աղոթքներից։

2. Տաղաչափական արվեստի զարգացումը։—Հետևելով իր շնորհքին ու հայացքին ոտանավորի վրա, մեր այս բանաստեղծը մշակել է հայոց լեզվի տաղաչափությունը. ուստի նախ տեսնենք նրա վաստակի այս կողմը, որով նա ազդել է իր ժամանակակիցների վրա։

Ներսես Լամբրոնացին նրա գովեստի մեջ[20] գրում է.

Հոմերական տաղից չափող,
Ոտանաւոր տաղից գըտող.
Ի հոգևորսն ըզնոյն տուող,
Որով ըզսիրտս կարծր ճըմլող։

Ներսես Շնորհալու ռիթմական զգացումը, ինչպես իր գրածներից երևում է, շատ մեծ է. նրա ոտանավորները խիստ երաժշտական են։ Այդ պատճառով նա քիչ է բանեցրել մեր հին կրոնական բանաստեղծության ոտանավորներն ապատ ոտքերով և ապատ անդամներով[21], այլ գերադասություն է տվել պարզ ոտքերին, այսինքն՝ անթերի տակտերին։ Նրա ամենից ավելի սիրած ոտանավորն է յամբական երկանդամ 8-վանկանին, կազմված երկու յամբական բարդ ոտքերից, որոնց մեջ առաջին ոտքերը կարող են և անշեշտ լինել։ Տաղերի, ինչպես և ուրիշ հոգևոր երգերի մեջ, սակայն, առաջին անդամը նա մեկ-մեկ կազմում է երեք վանկերից, որոնք առանձնապես շեշտվելով՝ երկարում են և հավասարվում չորս վանկի։ Այսպես է վարվում նա յամբական եռանդամ 12-վանկանի և յամբական քառանդամ 16-վանկանի ոտանավորների մեջ ևս[22]։ Մեծ քերթվածների մեջ, սակայն, նա սովորաբար պակաս վանկեր չի թողնում և պահանջում է, որ ընթերցողն էլ այնպես կարդա, որ ոտանավորի չափն անթերի երևան գա, ոչ ավելի և ոչ պակաս։

Արդ առընկա՛լ բանս դուզնաքեայ,
Եւ վերծանեա ըստ իմաստնոց,
Ոչ առաւել և ոչ նուազ,
Այլ ի յոտին բերեալ չափոց։

Շնորհալու գործածած չափերը խիստ բազմազան են։ Մի քանի չափական ձևեր նա այնպես զարգացրել է և ռիթմիկ դասդրել, որ օրինակելի են մնացել և մեր հին գրականությունից նույնիսկ նորին են անցել։ Կարելի է ասել, որ հաջորդներն իսկապես նրա փորձերն են միայն գոր-

---

20 Ն. Շնորհալի, *Թուղթ ընդհանրական, էջմիածին, 1865, էջ 464։*

21 *Տե՛ս* Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տաղաչափություն, էջ 320 և հետ., 341 և հետ.։*

22 *Անդ, էջ 198—209։*

ծադրել, շատ քիչ բան փոխելով։ Կան նրա չափածո ձևերից, հարկավ, և այնպիսիները, որոնք չեն ընդհանրացել։ Ոտանավորների բազմաթիվ տեսակները, սակայն, ոչ բոլորը նրա ստեղծածներն են. դրանցից մի քանիսը գտնում ենք Գրիգոր Նարեկացու և Գրիգոր Մագիստրոսի տաղերի մեջ։ Կա նաև Վարդան Հայկազն անունով մեկի հորինած «Տաղ գերեզմանական վասն փոխման երանեալ և սուրբ կաթողիկոսին Հայոց Գրիգորի Վկայասիրի»։ Հեղինակը, ինչպես իր գրածից ենթադրում են, ժամանակակից եղած պիտի լինի Վկայասերին[23]։ Այդ «տաղը» գրաբարախառն աշխարհիկ լեզվով է, ութվանկանի ոտանավորով, միակերպ «ի» հանգով, շատ նման Ներսես Շնորհալու գրածներին։

12-րդ դարի սկզբից արդեն ժամանակի խոսակցական լեզուն և բերանացի աշխարհիկ բանաստեղծության ոտանավորը մուտք են գործել գրականության մեջ, այդ ժամանակի սիրո երգերից, սակայն, բան չի հասել մեզ, որ կարողանայինք որոշել, թե ի՛նչն է կազմում Շնորհալու իրեն տաղաչափական գյուտը։ Բայց այն հանգամանքը, որ մատաղ հասակից ի վեր վանքերում ապրած այդ մեծ կրոնավորը չի խորշել նմանելու սիրո երգերի ձևին և նրանց ոտանավորով հորինել է ոչ միայն տաղեր, ինչպես Գրիգոր Նարեկացին, այլև կրոնական բովանդակությամբ մեծ բանաստեղծություններ, ա՛յդ միայն ցույց է տալիս, որ վերածնության թարմ ոգին թափանցել էր նաև վանքերի խուցերը, բայց ոչ ամեն վանականի։ Շատերը Ներսես Շնորհալու պես աղաստախոհ չեն եղել և «անփակ բերանով» պարսավել են նրա արարքը, և Շնորհալին ստիպված է եղել ուրիշների հեղինակավորությամբ պաշտպանելու իր նորամուծությունը։ Այսպես՝ «Բան հաւատոյ» մեծ քերթվածի «Յիշատակարանի» մեջ[24] 1151 թ. նա գրում է.

Եւ զի ոտիւք է պարզական,
Եւ ոչ բանիւ անչափական,
Մի՛ յայս լեզուաւ պարսաւական
Բարբառեսցի անփակ բերան։
Քանզի բազումք նախ վարեցան
Այսպէս յիմասոս աստուածական,
Զի արարչին բանի բնութեան
Տացեն այսու բան գովութեան։
Որպէս Դաւթեան սաղմոսարան,
Եւ Սողոմոն առակաբան.
Մեծըն Գրիգոր աստուածաբան,
Եւ սուրբ Եփրեմ ասորական։

---

23 «Բազմավէպ», 1873, 264, Գ. Զարբհանալյան. Հին դպրության պատմություն, 1887, էջ 700 և հտն.։

24 «Բանք չափաւ», էջ 223։

Հետագեմ վանականներն այդ երկի ձևի համար ավելի ևս պախարակել են մեր բանաստեղծին, որ նա ստիպված է եղել հետևյալ տարին, 1152 թ., «Ողբերգութիւն» մեծ քերթվածի վերջում («Յիշատակարան երգողի բանիս»)[25] դարձյալ պաշտպանելու իրեն.

Եւ մի՛ ի յայս ոք ախտանայ,
Թէ չափաւոր բանիւ է սայ,
Եւ արտաքին կարծի նըմայ.
Որպէս և զերգն Ափրոդիտեայ։
Զի եթէ սուտն որ ձևանայ,
Սովաւ այնքան գեղեցկանայ,
Քանի՞ արդեւք վայելչանայ
Ճշմարտութեան բանս որ ի սմայ։
Երգոյն Հանգոյն Սողոմոնի,
Սա, որ երգոց երգ անուանի...
Եւ կամ Դաւթեանըն Սաղմոսի...
Եւ այլ բազմաց՝ որ են յայտնի,
Որք վարեցան չափով բանի...

Այս երկու մեծ զուտ կրոնական երկերը, որոնք հորինված են սիրո երգերի չափով 8-վանկանի տողերով, նաև հանգավոր տներով են, ինչպես հեղինակն ինքն անվանում է, «տամբ յանգական», այսինքն՝ ամեն երկու նույնահանգ տողերը միասին ըստ բովանդակության կազմել են մի միություն, մի «տուն» («բեյթ»)։ Այսպես հորինվել են, ուրեմն, հնումն սիրո երգերը։ Մի անգամ որ այսպիսի ոտանավորով և հանգերով խոսքն ավելի գեղեցիկ ու վայելուչ է դառնում, Ներսես Շնորհալին, իր ռիթմական զգացումով ու ճաշակով, չէր կարող չկիրառել այդ արվեստը միայն նրա համար, որ Ափրոդիտյան երգերն էլ այդպես են հորինելիս եղել։ Այսպիսով աշխարհիկ երգերի չափերի գործածությունը նրա մեծ հեղինակությամբ ընդհանրացել է ամեն տեսակի կրոնական բանաստեղծությունների համար ևս։ Նույնը պետք է ասել և ոտանավորների հանգի նկատմամբ։

Արդարև Գրիգոր Նարեկացին և Գրիգոր Մագիստրոսը գործածել են աշխարհիկ չափերից մի քանիսը, բայց Նարեկացին դեռ գրել է անհանգ ոտանավորներ։ «Ողբերգության» մեջ միայն մի երկու տեղ նա, ինչպես ինքն ասում է, նմանելով ողբասացների բանաստեղծությանը՝ հանգեր է կազմել։ Մեր այդ կրոնական մեծ բանաստեղծի հռչակը հավանորեն դեռ այնքան ծավալված չի եղել 12-րդ դարի առաջին կեսին, որքան հետագայում. ուստի նրա տաղերի ոտանավորը չի ունեցել հետևողներ ամեն տեսակի կրոնական քերթվածների նկատմամբ, մանավանդ որ նրա բա-

25 Անդ, էջ 163 և հետ.։

նաստեղծական հմայքը հիմնված է եղել ոչ թե տաղերի վրա, այլ «Ողբերգության», որ անհանգ է և կարող էր նաև «անչափական» համարվել։ Գրիգոր Մագիստրոսն արդեն հանգը բանեցրել է կրոնական բովանդակությամբ «Հազարտողեան» գրվածքի մեջ, բայց նրա գործը պատահական բան լինելով՝ ընդունելություն չի գտել։ Հայ կրոնական բանաստեղծությունն անհանգ է մնացել մինչև Ներսես Շնորհալին, որի երկերից շատերը, առանձնապես տաղերը, նույնպես անհանգ են։ Բայց և այնպես նա քսան տարեկան հասակից արդեն սիրում է բանեցնել հանգերը, հատկապես մեծ քերթվածների մեջ։

Հանգի գործածությունն այն դարում թե՛ Արևելքում և թե՛ Արևմուտքում շատ միակերպ էր. նույն հանգը սովորաբար անցնում է ամբողջ քերթվածի մեջ սկզբից մինչև վերջը։ Երբեմն հազարավոր տողերի վերջում կրկնվում են նույն հնչյունները, և փոխանակ փաղաքշելու մարդու լսելիքը՝ շուտով հոգնեցնում են այն և տաղտկալի դարձնում երկի ընթերցումը։ Շնորհալին իր ընտիր ճաշակով չէր կարող չզգալ այդ, և նա մի քանի տեղ հանգերի փոփոխություն է անում կամ տողեր անհանգ թողնում՝ այսպես բացատրելով այն[26].

Ո՛չ մի տառիւ վերջ յանգական,
Զի մի՛ ծուլից լուր ծանրանան.
Այլ խտրաբար փոփոխական,
Զի ընթերցողք ոչ ձանձրանան։

Այս փոփոխությունը, ցավոք, երբեմն այնքան շատ թվով տողերից հետո է լինում, որ գրեթե անզգալի է մնում։ Ժամանակի պահանջն այդպես էր, և այդ համարվում էր արվեստի կատարելություն հանուր ազգերի քանաստեղծության մեջ։ Շնորհալին, սակայն, ունի նաև բավական թվով երգեր, որոնց մեջ ամեն տուն իր առանձին հանգն ունի, և երբեմն նա նույնիսկ տող ընդ մեջ անհանգ ոտանավորներ է հորինում։ Եվ նա հանգերի այսպիսի կիրառության նկատմամբ ևս անպայման ազդել է իր հաջորդների տաղաչափական արվեստի վրա։

Նրա բանաստեղծության մեջ շատ սիրված է նաև ծայրակապը կամ գլխակապը (ակրոստիխ), կա՛մ այբբենական կարգով Ա—Ք և կա՛մ շուռ տված՝ Ք—Ա։ Նա հաճախ կազմում է այսպիսի գլխակապեր «Ներսեսի քանս է», «Բան Ներսեսի», «Ներսեսի է այս երգս», «Տէր Ներսեսի է սա» և այլն։ Այսպիսի գլխակապերը կարծես դիտավորյալ կերպով են գործածված՝ հեղինակի անունը պահելու համար։ Երբեմն երկատող տների տողերից առաջինն սկսվում է Ա—Ք կամ Ք—Ա տառերից մեկով, և երկու տողն էլ վերջանում են տների սկզբի տառով՝ կազմելով հանգեր կամ թե լոկ բաղաձայնություն, կամ առձայնություն, օրինակ.

---

26 *Անդ, էջ 223։*

Աստուածեղէն հոգւովն ի սմա
Խաղաղութեան անուն արքա...
Երբեակ տաղու վերաբերե,
Զմարդիկ յերկինըս մակագրե...[27]
Թըմբրեալ վհոգիս առնէ զըւարթ,
Յայս չանկանել դառն որոգայթ.
Ժամանակեայ զկենցաղըս յոյժ
Ասէ, զանկեալսն ի սմա անբոյժ.
Իբրև երազ իւոր դիշերի,
Կամ պըղպըջակ ինչ կաթուածի[28]*:*

Այսպիսի սկսվածքները տողավերջերի հետ հանգիտություն կազմելով՝ տներին տալիս են ըստ ձևի ևս ամբողջություն: Երբ առանձին տներ բոլոր տողերն սկսվում են նույն տառերով և տողերը կարճ են, նույնհնչյունների կրկնությունը տողերի սկզբում՝ թողնում է ռիթմական հանգիտության — բաղաձայնույթի կամ առձայնույթի տպավորություն[29]*: Դրանով ևս զգալի է լինում տողերի, ինչպես և տների ամբողջությունը, երբ վերջիններս փոքրաթիվ տողերից են կազմված: Այսպես հորինված են Ն. Շնորհալու նշանավոր «Առաւօտ լուսոյ» և «Աշխարհ ամենայն» երգերը, ինչպես և մի քանի ուրիշները: Բերենք իբրև օրինակ հետևյալները.*

Առաւո՛տ լուսոյ,
Արեգա՛կն արդար,
Առ իս լոյս ծագեա՛
Աշխա՛րհ ամենայն,
Առ իս նայեցեալ՝
Ախտակից լերուք:
Բանամ ըզշըրթունս,
Բարբառիմ լեզուաւս,
Բողոքեմ զանձնէս:
Գող եղէ մեղաց,
Գըտող կորըստեան,
Գութ ինձ փորեցի:

8. Հոգևոր երգեր ու տաղեր և թղթեր: — *Որչափ բազմազան են ներսես Շնորհալու բանեցրած տաղաչափական ձևերը, նույնչափ աչքի է*

---

27 *Երևում է, որ Շնորհալու ժամանակ արդեն էլ և և տառերը միապես են արտասանվել, և նա չի խորշում բառերի վերջում է տառի փոխանակ ե գրելուց:*

28 *Անդ, էջ 356: Տե՛ս և էջ 359 և հտն., «Անդրադարձութիւն տառից յիշատակի», որոնց տները սկսված են Ք—Ա տառերով:*

29 *«Հանգիտության, հանգի և տան» մասին ընդհանրապես՝ տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տաղաչափություն, էջ 398—452:*

ընկնում նրա ստեղծագործությունը նաև իր այլևայլ գրական տեսակներով։ Այս նկատմամբ ևս նա շատ բան, հարկավ, ժառանգել է նախորդներից, ինչպես են՝ տաղեր ու գանձեր, հոգևոր երգեր-շարականներ, հոգեբուխ աղոթքներ («Հաւատով խոստովանիմ»), թղթեր և այլն. բայց նա մեր գրականության մեջ մտցրել է նաև նոր գրական տեսակներ և հին տեսակները զարգացրել է։ Այսպես, օրինակ, նրա չափածո թղթերի մեջ[30] ներքին մտերմական զգացումով աչքի է ընկնում իր եղբորորդի Ապիրատին ի Կոստանդնուպոլիս ուղղած նամակը, որի մեջ նկարագրում է իր այդ տոհմիկի զինավարժական աջողությունները, ցանկանում է նրա գալուստն ի Հռոմկլա ամրոցը և տալիս է նրան խրատներ։

Ավելի կարևոր են Շնորհալու բազմաթիվ հոգևոր երգերը, որոնցով նա խիստ ճոխացրել է հայոց եկեղեցու ժամերգությունը[31]։ Դրանց մեջ կան և շատ գեղեցիկները և այնպիսիները, որ մի ժամանակ սիրված և ժողովրդականացած են եղել։ Բերենք միայն երկու տուն Վարդանանց շարականից[32], որի գլխակապն է՝ «Ներսեսի երգ»։ Ամեն մի տունը նվիրված է Ավարայրի ճակատամարտի մեջ ընկած այն հերոսներից մեկի հիշատակին, որոնց անունները հայտնի են պատմությունից. բանաստեղծը ժոռացության չի տվել նաև 1036 անանուն ռամիկ քաջերին։

Նորահրաշ պսակաւոր և զօրագլո՛ւխ առաքինեաց,
Վառեցար զինու հոգւոյն արիաբար ընդդէմ մահու,
Վարդա՛ն, քաջ նահատակ, որ վանեցեր ըզթըշնամին,
Վարդագոյն արեամբըդ քով պըսակեցեր ղեկեղեցի։
Երկնաւոր թագաւորին զինու յաղթեալ պատերազմին,
Խոհական իմաստութեամբ խոհեմացեալ անճառապէս,
Խորէ՛ն խորհըրդական և ծանուցեալ անուն բարի,
Խաչելոյն վրկայ եղեալ հեղմամբ արեան պըսակեցաւ։

Բազմաթիվ են Ներսես Շնորհալու «յորդորակները», այն ոտանավորները, որ նա կցել է հաճախ իր ուրիշ աշխատությունների վերջից։ Ավելի ևս մեծ թվով են նրա տաղերը[33], որոնք գրված են տերունական, ինչպես և սրբերի տոներին երգելու համար։ Դրանք հորինված են խիստ

---

30 «Բանք չափաւ», էջ 303—312։

31 «Շարական», էջմ., 1861, էջ Բ և հտն. «Սուրբն Ներսէս [երգեաց] զվառ ձայնն Աւագ օրհնութեան, զեօթանասնիցն, զնինուէացւոցն, զԱղուհացից ամենայն կիւրակէիցն, զՄաղկազարդի հարցն, զՀոգւոյ գալստեան չորս պատկերսն, զՎարդավառի զերկու պատկերսն և զՓոխման զերկու պատկերսն, զՅօհաննու ԴՉ հարցն, զՄարգարէից ԴՉ հարցն. զՀրեշտակապետացն, զնորահրաշն Վարդանանց, զՂևոնդեանցն, և զԱյսօր անճառն, զնորոդոդն, զԱստուած աննէղն, զԱրարչականն, զԱրևագալի շարականն, զՕրհնեմք զքեզն. զնայեաց սիրովն, և զիքէն հայցեմքն, և ըստ ոմանց՝ զսուրբ Յակոբայն ևս սորա է ասացեալ»։ Այլ և «Աստուած աննէղ», «Բանք չափաւ», էջ 323 և հտն.։

32 «Շարական», էջ 571 և հտն.։

33 «Բանք չափաւ», էջ 365—476։

նաստեղծական համայքը հիմնված է եղել ոչ թե տաղերի վրա, այլ «Ողբերգության», որ անհանգ է և կարող էր նաև «անչափական» համարվել։ Գրիգոր Մագիստրոսն արդեն հանգը բանեցրել է կրոնական բովանդակությամբ «Հազարտողեան» գրվածքի մեջ, բայց նրա գործը պատահական բան լինելով՝ ընդունելություն չի գտել։ Հայ կրոնական բանաստեղծությունն անհանգ է մնացել մինչև Ներսես Շնորհալին, որի երկերից շատերը, առանձնապես տաղերը, նույնպես անհանգ են։ Բայց և այնպես նա քան տարեկան հասակից արդեն սիրում է բանեցնել հանգերը, հատկապես մեծ քերթվածների մեջ։

Հանգի գործածությունն այն դարում թե՛ Արևելքում և թե՛ Արևմուտքում շատ միակերպ էր. նույն հանգը սովորաբար անցնում է ամբողջ քերթվածի մեջ սկզբից մինչև վերջը։ Երբեմն հազարավոր տողերի վերջում կրկնվում են նույն հնչյունները, և փոխանակ փաղաքշելու մարդու լսելիքը՝ շուտով հոգնեցնում են այն և տաղտկալի դարձնում երկի ընթերցումը։ Շնորհալին իր ընտիր ճաշակով չէր կարող չզգալ այդ, և նա մի քանի տեղ հանգերի փոփոխություն է անում կամ տողեր անհանգ թողնում՝ այսպես բացատրելով այն[26].

Ո՛չ մի տառիւ վերջ յանգական,
Զի մի՛ ծուլից լուր ծանրանան.
Այլ խտրաբար փոփոխական,
Զի ընթերցողք ոչ ձանձրանան։

Այս փոփոխությունը, ցավոք, երբեմն այնքան շատ թվով տողերից հետո է լինում, որ գրեթե անզգալի է մնում։ Ժամանակի պահանջն այդպես էր, և այդ համարվում էր արվեստի կատարելություն հանուր ազգերի քանաստեղծության մեջ։ Շնորհալին, սակայն, ունի նաև բավական թվով երգեր, որոնց մեջ ամեն տուն իր առանձին հանգն ունի, և երբեմն նա նույնիսկ տող ըստ մեջ անհանգ ոտանավորներ է հորինում։ Եվ նա հանգերի այսպիսի կիրառության նկատմամբ ևս անպայման ազդել է իր հաջորդների տաղաչափական արվեստի վրա։

Նրա բանաստեղծության մեջ շատ սիրված է նաև ծայրակապը կամ գլխակապը (ակրոստիխ), կա՛մ այբբենական կարգով Ա—Ք և կա՛մ շուռ տված՝ Ք—Ա։ Նա հաճախ կազմում է այսպիսի գլխակապեր «Ներսեսի քանս է», «Բան Ներսեսի», «Ներսեսի է այս երգս», «Տէր Ներսեսի է սա» և այլն։ Այսպիսի գլխակապերը կարծես դիտավորյալ կերպով են գործածված՝ հեղինակի անունը պահելու համար։ Երբեմն երկատող տների տողերից առաջինն սկսվում է Ա—Ք կամ Ք—Ա տառերից մեկով, և երկու տողն էլ վերջանում են տների սկզբի տառով՝ կազմելով հանգեր կամ թե լոկ բաղաձայնություն, կամ առձայնություն, օրինակ.

---

26 Անդ, էջ 223։

Նաստեղծական հմայքը հիմնված է եղել ոչ թե տաղերի վրա, այլ «Ողբերգության», որ անհանգ է և կարող էր նաև «անչափական» համարվել։ Գրիգոր Մագիստրոսն արդեն հանգը բանեցրել է կրոնական բովանդակությամբ «Հազարտողեան» գրվածքի մեջ, բայց նրա գործը պատահական բան լինելով՝ ընդունելություն չի գտել։ Հայ կրոնական բանաստեղծությունն անհանգ է մնացել մինչև Ներսես Շնորհալին, որի երկերից շատերը, առանձնապես տաղերը, նույնպես անհանգ են։ Բայց և այնպես նա քան տարեկան հասակից արդեն սիրում է բանեցնել հանգերը, հատկապես մեծ քերթվածների մեջ։

Հանգի գործածությունն այն դարում թե՛ Արևելքում և թե՛ Արևմուտքում շատ միակերպ էր. նույն հանգը սովորաբար անցնում է ամբողջ քերթվածի մեջ սկզբից մինչև վերջը։ Երբեմն հազարավոր տողերի վերջում կրկնվում են նույն հնչյունները, և փոխանակ փաղաքշելու մարդու լսելիքը՝ շուտով հոգնեցնում են այն և տաղտկալի դարձնում երկի ընթերցումը։ Շնորհալին իր ընտիր ճաշակով չէր կարող չզգալ այդ, և նա մի քանի տեղ հանգերի փոփոխություն է անում կամ տողեր անհանգ թողնում՝ այսպես բացատրելով այն[26].

Ո՛չ մի տառիւ վերջ յանգական,
Զի մի՛ ծուլից լուր ծանրանան.
Այլ խտրաբար փոփոխական,
Զի ընթերցողք ոչ ձանձրանան։

Այս փոփոխությունը, ցավոք, երբեմն այնքան շատ թվով տողերից հետո է լինում, որ գրեթե անզգալի է մնում։ Ժամանակի պահանջն այդպես էր, և այդ համարվում էր արվեստի կատարելություն հանուր ազգերի բանաստեղծության մեջ։ Շնորհալին, սակայն, ունի նաև բավական թվով երգեր, որոնց մեջ ամեն տուն իր առանձին հանգն ունի, և երբեմն նա նույնիսկ տող ըստ մեջ անհանգ ոտանավորներ է հորինում։ Եվ նա հանգերի այսպիսի կիրառության նկատմամբ ևս անպայման ազդել է իր հաջորդների տաղաչափական արվեստի վրա։

Նրա բանաստեղծության մեջ շատ սիրված է նաև ծայրակապը կամ գլխակապը (ակրոստիխ), կա՛մ այբբենական կարգով Ա—Ք և կա՛մ շուռ տված՝ Ք—Ա։ Նա հաճախ կազմում է այսպիսի գլխակապեր «Ներսեսի քանս է», «Քան Ներսեսի», «Ներսեսի է այս երգս», «Տէր Ներսեսի է սա» և այլն։ Այսպիսի գլխակապերը կարծես դիտավորյալ կերպով են գործածված՝ հեղինակի անունը պահելու համար։ Երբեմն երկատող տների տողերից առաջինն սկսվում է Ա—Ք կամ Ք—Ա տառերից մեկով, և երկու տողն էլ վերջանում են տների սկզբի տառով՝ կազմելով հանգեր կամ թե լոկ բաղաձայնություն, կամ առձայնություն, օրինակ.

---

26 Անդ, էջ 223։

Որք այժմ ըզմեզ գոն աղարտեալ,
Զանթագաւորքըս պարսաւեալ։

Առանձին սրտմտութեամբ խոսում է մահմեդական տաճիկների (արաբների) և ավելի ևս նրանց կրոնին հետևող իր ժամանակակից այլ ազգերի մասին.

Արեանարբուք գաղանացեալ,
Զազիր գործովք անասնացեալ...
Զոսկերըս մեր ըզչորացեալ,
Զոր էր նախնի ազգաց ծըծեալ,
Վիշապօրէն սոցա կըլեալ,
Եւ առիւծուց նըման մանրեալ։
Զի ի համար թիւ ոչ անկեալ
Անպարտ արեանցըն զոր հեղեալ.
Կամ ծառայիցն անգին գերեալ,
Եւ կամ յայտնին որ վաճառեալ.
Կամ ըզգոյիցն յափըշտակեալ,
Որք ընդ ձեռամբ նոցին անկեալ։
Որոց այնքան աղքատացեալ,
Որպէս յերկաթ գոլով՝ պընդեալ։
Թողից ըզչարըն մեծ ասել
Զհոգւոց կորուստըն գործեցեալ,
Ի հաւատոցն ուրացուցեալ,
Եւ չար գործովք ապականեալ...
Ի յաշխարհէ ծնընդեան ելեալ,
Ի հայրենեաց տարամերժեալ։
Յերկիր օտար պանդըխտացեալ,
Մինչ զի ըզմերըն մոռացեալ.
Զաշխարհըս մեր օտարք կերեալ,
Մեր առաջի աչաց տեսեալ[37]։

Այս «Վիպասանությունը» իր կոկ ոճի և լեզվի պարզությամբ շատ սիրելի է եղել և հետագայում, նույնիսկ նմանողության օրինակ է դարձել։ Կիլիկիայի հայոց Լևոն Գ թագավորը 150 տարի հետո Վահրամ Բաբուն կոչված վարդապետին շարունակել է տվել այն, սկսած թուրքերի հարձակումից և վերջին Գագիկ Բագրատունի թագավորից մինչև մոտ 1275 թիվը։ Գրված է Ռուբինյան տիրապետության մասին միևնույն ձևով և նույնիսկ նույն «եալ» հանգով, ինչպես Շնորհալու գործը[38]։

---

37 *Անդ, էջ 539 և հետ.։*

38 *Dulaurier,* Historiens Arméniens. *էջ 493։ Տե՛ս և* Ջարբհանալյան, *Հայկ. դպր. պատմ., էջ 701։*

Մի ուրիշ նոր գրական տեսակ է չափածո ներբողյանը։ Հին ներբողյանների ու ճառերի մեջ որոշ կտորներ ոչ միայն պերճախոսական բնավորություն ունեն, այլև երբեմն իրենց ռիթմով և լիրիզմով մոտենում են չափածո խոսքին և անգամ չափածո բանաստեղծություն կարող են համարվել։ Այդ բավարարություն չի տվել Ներսես Շնորհալուն. նա ոտանավորով բանաստեղծաբար հորինել է ս. Խաչի ամբողջ ներբողյանը, նյութն առնելով Դավիթ Անհաղթի անունով հայտնի Ներբողյանից[39], որի և հարաստությունն է արել։ Դրա վերջին մասը ջերմ հավատով ասված մի մեծ օրհներգություն է, բանաստեղծի սիրած ութվանկանի տողերով ու փոփոխ հանգերով։

Ոտանավորով է հորինված և «Մաղթանք առ սուրբ Հրեշտակսն»[40], որ կա հրեշտակների մասին «Գովեստ ներբողական» գրվածքից հետո։ Իսկ այս երկը Ներսեսը 1162 թ. գրել է իր եղբայր Գրիգորիս կաթողիկոսի խնդրով, հետևելով Դիոնեսիոս Արիոպագացու «Յաղագս երկնայնոյն քահանայապետութեան» (=հիերարխիայի), որ հայերեն թարգմանել է Ստեփանոս Սյունեցի Քերթողը հունաբան լեզվով։ Ուստի Շնորհալու ոճը, նրա ազդեցությամբ, այս գրվածքի մեջ մութն է, «աւելի բարձր և արուեստակեալ է»[41]։ Նա խոսում է հրեշտակների կամ զվարթունների ամեն մի դասի կատարած դերի ու պաշտոնի մասին։

Ներսեսն առհասարակ միշտ պատրաստ է եղել ոչ միայն իր եղբոր, այլև որևէ խնդրով իրեն դիմող ուրիշներին սիրով պատասխանելու և հաճախ իրեն տրված հարցերին իր մեծ հմտությամբ լուծում տալու։ Նա ունի նաև մի քերթված՝ «Յաղագս երկնից և զարդուց նորա բարառնաբար ի դիմաց նորին ի չափ երկոտասանիցն պարզեալ ոտից ի խնդրոյ առն բժշկապետի և աստեղագիտի Մխիթարայ»[42]։ Քերթվածը «բարառնաբար», այսինքն դիմառնաբար է հորինված. խոսում է ինքը երկինքը իր կողմից առաջին դեմքով իբրև անձնավորված էակ.

Իմ եղական գոլով բնութիւն և սկզբնական,
Յանեղէ՛ն ձգեալ կամաբ անղուգական,
Անջըրպետեմ զջուրսըն վերին և ներքնական...
Բոլորա՛կ եմ կիսագունդ որպէս խորան,
Բնութեամբ կայուն, անձամբ շարժուն անկայական։
Հիմն և աւարտ եմ գոյացութեանցս այս նիւթական.
Անդունդք ի խոր, բարձունք ի վեր, մինչ վերանամ։

---

39 «Բանք չափաւ», էջ 229—263. «Ներբողեան կենսատու սուրբ Խաչին առ ի սրբոյ Հօրէն մերմէ Դաւթէ Անյաղթ փիլիսոփայէ ասացաւ, Ոտանաւոր չափով աստանօր եդաւ». «Տեառն Ներսիսի Ներբողեան կենսատու սուրբ Խաչին»։

40 Անդ, էջ 267 և հետ.։

41 Պ. Ալիշան, Շնորհալի և պարագայ իւր, էջ 272 և հետ.։ Գ. Զարբհանալյան, Պատմ. հին դպրության, էջ 622։ Զարբհանալյան, Մատենադարան հայկ. թարգմանության, էջ 382 և հետ.։

42 Անդ, էջ 279 և հետ.։

Ամբողջը 12-վանկանի մի մեծ գրվածք է, որի մեջ նկարագրված է երկինքն ըստ ժամանակի հասկացության՝ արեգակ, լուսին, յոթն մոլորակներ, տասներկու կենդանակերպներ և այլն, առանձին խորհրդածություններով, ինչպես նույն նյութի մասին գրել են նույն դարում նաև բիզանդացիների մեջ։ Հայոց գրականության մեջ այդ մի նոր գրական տեսակ է մի նոր թեմայով, ոչ լիովին կրոնական բովանդակության, և հետագայում առաջ է բերել նմանողներ։ Շնորհալու այդ քերթվածի մեջ պակասում է բանաստեղծական թռիչքը, բայց այն հաճելի է իր ընտիր ու ճաշակավոր ոճով և սահուն ու ռիթմիկ ոտանավորով։ Գրվածքի վերջում կա մի «յորդորակ» այս վերնագրով՝ «Նորին այլաչափ տաղք ի խնդրոյ անուան նախագիծ տառից տանց»։ Ամեն տան (երկտողի) սկզբի տառերը կազմում են այս գլխակապը՝ «Մխիթար բժիշկ, ընկալ ի ներսէսէ զայս բան»։

Այս բժիշկ Մխիթարը[43], Շնորհալու բարեկամը, եղել է նաև «աստեղագէտ» և, երևի, իբրև այնպիսին՝ նա մեր քերթողից խնդրել է տաղաչափությամբ գրել երկնքի մասին։ Նրանից չի մնում աստղաբաշխական գրվածք, բայց կա մի կարևոր բժշկական գործ, որ նա անվանել է «Ջերմանց մխիթարութիւն, զի սա մխիթարէ զբժիշկն ուսմամբ, իսկ զհիւանդն առողջութեամբ»[44]։ Իր ժամանակի այս նշանավոր անձը, ինչպես իր գրքի առաջաբանի մեջ ինքը հայտնում է, եղել է Հեր (այժմյան Խոյ) քաղաքից։ «Ի մանկութենէ սիրող եղէ, ասում է, իմաստութեան և բժշկական արուեստից, և վարժեցայ ի դպրութիւն արաբացւոց, պարսից և հելլենացւոց»։ Իր գիրքը գրել է 1184 թ. հորդորանքով Շնորհալու հաջորդ Գրիգոր Պահլավունի Տղա մականվանված կաթողիկոսի, որին գովում է նա ասելով՝ «ամենևին սիրող իմաստութեան և հմուտ»։ Գիրքը նա հորինել է քաղվածորեն և թարգմանաբար արաբ, պարսիկ և հույն բժիշկների գրվածքներից։ Առաջաբանը գրաբար է, իսկ բուն նյութը ժամանակի խոսակցական լեզվով. «Ես արարի զսա գեղջուկ և արձակ բարբառով, զի դիւրահաս լիցի ամենայն ընթերցողաց, առ ի յիշատակել զմեզ»։ Մխիթար Հերացին գրած է նաև «Վասն քարանց և յատկութեանց նոցա և բժշկութիւն նոցա», և ուրիշ բժշկական աշխատություններ ևս, որոնցից քաղվածքներ կան հետագա բժիշկների գրվածների մեջ, բայց բուն երկերը երևան չեն եկել։ Առհասարակ բժշկական ուսումն և արվեստը հնուց սիրված է եղել հայերի մեջ. Մխիթարից և՛ առաջ, և՛ հետո եղել են շատ բժիշկներ։ Նրանցից առանձնապես հիշելի են Ստեփանոս (բժիշկ Ահարոնի տոհմից) 13-րդ դարում, Հայտնի գիտնական մի բժիշկ 15-րդ դարում՝ Ամիր Դովլաթ Ամասիացին, ինչպես և Ասուր Սեբաստացին 17-րդ դարում։

Առաջնորդվելով վերևում բացատրված իր տեսակետով, թե բանա-

---

43 Ղ. Ալիշան, Շնորհալի և պարագայ իւր, էջ 257 և հետ.։ «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1888, հոկտեմբեր։

44 «Մխիթարայ բժշկապետի Հերացւոյ, Ջհրմանց մխիթարութիւն», Վենետիկ, 1832։

գործության նպատակն է ուսուցանել և ոտանավորը զվարճալի է դարձնում գրվածքը, Ներսես Շնորհալին գրել է և երկու շարք չափածո խրատներ, և որպեսզի ավելի զվարճալի լինի, այդ փոքր երկերը հորինել է «ի դիմաց այբբենից տառից», այսինքն՝ այբուբենի կողմից[45]։ Դրանք ունեն վերացական բնույթ, բայց շատ հաճելի են հեղինակին հատուկ սահուն, երբեմն և պատկերավոր ոճով։ Շարքերից մեկը՝ «Խրատ ուսումնականաց մանկանց»՝ կազմված է մեր տառերի թվով քառյակներից։ Դա իսկապես մի մանկավարժական գրվածք է, որով թե՛ այբբենն է կարգով սովորեցնում, թե՛ միաժամանակ բարոյակրթական խրատներ է տալիս մանուկներին։ Առանձնապես աչքի է ընկնում և այն, որ նա հորդորում է սիրել ուսումն ու գիտությունը։

Այսպես, վերջաբանի մեջ ասում է.

Եկ բեր, մանո՛ւկ, զունկըն քո յիս,
Լուր և անսա իմում բանիս...
Սիրեա՛ զուսումն, որով պատուիս
Ի յերկնայնոցն և ի յերկրիս։

Բուն քառյակների մեջ էլ հաճախ նա կրկնում է նույնը. օրինակ՝

Գիմրն գանձէ քեզ բիւր բարի,
Գրելով վիմաստս ի տախտակի,
Ջնա արկ ի քոյդ պարանոցի,
Որ պատուական է քան զոսկի։

Դեռ 19-րդ դարի առաջին հիսնամյակին էլ, ինչպես Շնորհալու ժամանակ, վարժապետները տախտակի վրա գրում էին աշակերտների դասերը և կախում նրանց վզերից։

Դայն դուռն բանայ քեզ գիտութեան
Ըզտաճարին իմաստութեան.
Բախեա և մուտ արիութեամբ,
Մի արտաքոյ մնար հեղգութեամբ։
Զայն զարթուցանէ ըզքեզ, մանո՛ւկ,
Զայնիւ հընչմամբ որպէս թըմբուկ.
Մի՛ յուսմանէ լինիր տաղտուկ,
Զի մի՛ տաս վայ անձինդ յատուկ։
Ծէն ժուժկալ լինել, ասէ, յուսումն,
Թէև ապտակ առնուս յարբումն.
Հայեա՛ց յոսկին, որ ի քրայումն,
Զի ծեծելով առնու զմաքրումն։

45 «Բանք չափաւ», էջ 326—350։

Այսպես և ուրիշ քառյակների մեջ՝ Բարոյակրթական խրատները սովորական բովանդակություն ունեն, երբեմն և կրոնական — հեռանալ չարությունից, վատ մարդկանցից, սուտ խաղերով չզբաղվել, նմանել իմաստուններին, լսել ծնողներին և վարդապետին (ուսուցչին), հետևող լինել իմաստուններին, չլինել ծույլ, հպարտ, լինել ջանասեր, խոնարհ, հնազանդ լինել ծերերին և նմաններին՝

Պէն պատուիրէ պարկեշտ լինել,
Մի՛ զորովայնդ խրճողել,
Մի՛ ըզգինի բընաւ սիրել,
Մի՛ տարաժամ զբերանդ յածել՝

Խրատների մյուս շարքը գրված է ուիյակներով՝ «Բան ներտաղական ի խրատ ոգւոց համայնից ի դիմաց մերոյին տառից տանց յիւրաքանչիւրսն քառից», այսինքն՝ ամեն խրատ կազմված է չորս տնից (երկու տողը մի տուն)՝ Խրատներն ուղղված են ամեն մարդու՝ և՛ մանուկներին, և՛ երիտասարդներին, և՛ ծերերին, բայց ոչ գիտուն մարդկանց, «Սա ոչ գիտնոց՝ այլ տղայապէս մանկանց տըւաւ նուսխայապէս», գրում է հեղինակը՝ Ունին ընդհանուր բարոյակրթական բովանդակություն — օրինակ.

Բենըն բանից, ասէ, չարաց
Սանձեա զլեզուդ վասն ընկերաց.
Ի բերանոյ քո հան ի բաց
Զխօսս աղտեղիս նախատանաց՝
Նաև ի բան բամբասանաց՝
Դիր պահապան քոյոց շրթանց...
Ծայն ծանուցանէ յոյժ ծանրագոյն.
Զբան երդման ուրանալոյն...
Զայն չար ասէ ղագահութիւն,
Զի շատ մեղաց է ծնելութիւն՝
Զի ի նմանէ է սպանութիւն,
Նա է աւար և գերութիւն.
Անտի սկսեալ է գողութիւն,
Եւ անիրաւ դատողութիւն.
Ի յայնմանէ վաշխառութիւն,
Եւ ըզմիմեանս ատելութիւն՝

Խրատնել է տալիս և աշխարհի մեծամեծներին՝ չլինել անբարտավան, այլ քաղցր ու հեզ, խոնարհ և շատ նմաններըւ Կան նաև կրոնական բովանդակությամբ խրատներ, այլև կյանքի անցավոր լինելու մասին.

Կենըն կենաց ղանցաւորէ
Կըրկին դըրամբք քաղաք ասէ.

Ընդ մին մըտեր մերկ յարգանդէ,
Ընդ միւսն ելցես մերկ յաշխարհէ։
Արդ զի՞նչ օգտիս դու ի շահէ
Ի քաղաքիս այս վաճառէ,
Յորժամ ի դրունսըն կողոպտէ
Մահն, որ կենաց թըշնամին է։

Բոլորովին նույն ձևով, ինչ խրատական քառյակները, հորինված է և «Բան հաւատոյ վասն աննեղին և եղելոց բարառնաբար ի դիմաց հայկական տառից չափաբերմամբ ոգեալ»[46]*։ Դա մի փոքր գրվածք է, սկզբի քառյակների նյութը դավանաբանական է, հետո շատ էական կետերով համառոտ դրված է Ս. Գրքի բովանդակությունը, սկսած աշխարհի ստեղծումից մինչև Քրիստոսի երկրորդ գալուստը։ Բանաստեղծական արժեք չունի. հորինված է լոկ գործնական նպատակի համար։*

Վերջապես՝ վերևում հիշված Ապիրատի խնդրով, Հռոմկլայում 1151 թ. Շնորհալին գրել է իր մի ուրիշ աշխատությունը, դարձյալ «Բան հաւատոյ», որ նվիրել է ի հիշատակ իր ծնողներին և ազգականներին[47]*։ Դա Ավետարանի անզարդ և արագ ոճով համառոտ պատմությունն է մոտ 1500 ութվանկանի տողերով, հանգերի փոփոխմամբ.*

Փոքր բանիւ կարճ ի կարճոյ
Միայն ըզմիտսըն ցուցելոյ,
Ընթերցողաց վերծանելոյ
Արագ մըտացն հասելոյ։

Սկզբում դրված է եկեղեցու դավանությունն աստվածության և «երկու բնության» մասին։ Այս գործը, որ առանձին բանաստեղծական արժեք չունի, իր ժամանակին անպայման շատ հաճելի միջոց է եղել Ավետարանի պատմությունը սովորելու համար։ Դա առաջին փորձն է «մեսիական» հորինելու, բայց իրեն՝ հեղինակին, երևի, չի բավարարել։

5. «Առակք» — հանելուկներ։ *— Մեր Շնորհալի բանաստեղծը ոչ միայն մեկին գրելու հակումն է ունեցել, այլև հակառակ չի եղել իր խոսած լեզվով, անգամ ընտանեկան ոճով շարադրելուն։ Նա գրականության մեջ մտցրել է մի նոր տեսակ ևս՝ «Առակք վասն ուրախութեան մարդկան»*[48]*։ «Առակք» բառն այստեղ չպիտի հասկանալ արդի իմաստով, այլ իբրև «հանելուկներ»։ Տպագրված են 120 «առակներ», որոնց մեջ կան և ժամանակի խոսակցական լեզվով գրված։ Ինչպես ժողովրդական հանելուկների, նույնպես և «առակների» նպատակն է ոչ այնքան մարդկանց*

---

46 «Բանք չափաւ», էջ 313 և հետ.։

47 Անդ, էջ 167—227. «Բան հաւատոյ ոտանաւոր տաղի չափոյ»։

48 Անդ, էջ 560 և հետ.։

ուրախացնել, որքան զվարճալի եղանակով սովորեցնել և սրամտություն զարգացնել, դիտել տալ բնությունը, զանազան իրեր և այլն։

Դրանց նյութը կիսով վերաբերում է կրոնական բաների և անձերի, ինչպես են՝ աբեղա, միակեց, դրախտ, ապաշխարանք, առաքյալք, կաթեղ, Աբել և Կայեն, Աբրահամ, Ադամ, Դավիթ, Ղովտ և այլն. նաև Հայոց պատմությունից՝ Վարազդատ, Տորք, Տրդատ։ Հետաքրքիր են ավելի այն բազմաթիվ «առակները», որոնք, ինչպես ժողովրդական հանելուկները, հորինված են կենդանիների, պտուղների, տարվա չորս եղանակների և այլ ոչ կրոնական բաների մասին, օրինակ՝ ձյուն, երկինք, արեգակ, լուսին, անձրև, աշխարհ, ծառ, կշեռք, ճրագ, նուռն, դդում, խիար, իաղող, խնձոր, տանձ, ընկույզ, ցորեն, ջրաղաց, ագռավ, այծ, աղվես, արջ, էշ, կատու, կրիա, շուն, խոզ, մաքի, ուղտ, ջորի, սագ, սիրամարգ, կաքավ, արտուտ, բզեզ, մեղու, մրջիմ, գինի, գիրք, դանակ, դուռն, աշտարակ, աղեղ, սուր, սանդր և այլն։

Շնորհալին այս նոր գրական տեսակը յուրացրել է անշուշտ ժողովրդական բանահյուսությունից. նրա հանելուկների մի մասի նյութն էլ առնված է ժողովրդականից։ Այսպես, օրինակ, մահմեդական շեյխի (= վանահոր) և կաթոլիկ ֆրերի (=եղբոր՝ կրոնավոր իմաստով) նմանեցրած արջի հանելուկի վերջին տողն առնված է ժողովրդական առածից, թե՝ «Արջի աչքը մերու տանձին է».

Շրխուկ մի կայր վետ ըզֆըրեր.
Ու ինք խաւ ի վեր մուշտակ ունէր,
Խաղայր, քոլօլ[49] կենայր ու յառնէր,
Ու հետ տանձին զաչերն ածէր։

Ամպրոպ ու կայծակի հրեղեն և անձրևաբեր աստուծուն — Վահագնին ըստ մեր ժողովրդական հավատալիքների՝ փոխանակել է Եղիա մարգարեն, և վերջինս՝ Եղիան հանելուկի մեջ նկարագրված է հիշված աստվածության գծերով.

Տղայն չուտէր բայց միայն հուր,
Մեծին ագռաւըն տայր ապուր.
Հեծեալ հրեղէն ձի ու գնայ սուր,
'Ի ինքն ի յամպոյն հոսէ մեզ ջուր։

---

49 Տպված է՝ «քաջօլ կենայր», ուղղում եմ «քոլօլ կենայր»։ Հ. Աճառյանի «Արմատական բառարանի» մեջ «քաջօլ» բառի համար գրված է «անստույգ բառ»։ Դա աղճատումն է «քոլոլ» բառի։ Տե՛ս Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 676 և 674. «քլմստորել, քոլոլել—շների, կատուների և այլն, իրար վայր ձգելով, թավալելով խաղալը»։ Գործ է ածվում և մարդոց համար։ «Թագավորի հերն ու մերը խաղացին ու իրար քոլոլեցին» (Պռոշյան)։ Տե՛ս և Հ. Աճառյան, Գավառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 1120. «Քոլոլ կենալ, քոլոլել, քոլոլվել—շան գզգվիլը, իրարու հետ գզգվիլ. շները քոլոլվում են, դեսին տապալել» և այլն։

Ինչքան էլ ժողովրդական տարրը երևում է մի քանի «առակների» մեջ, բայց սրանք էլ, ինչպես և մյուսները, իբրև գրական երկեր Շնորհալու իրեն ստեղծածն են։ Նա ժողովրդական հանելուկների տեսակն ընդարձակելով, վերածել է նույնահանգ քառյակների (մեկն ությակ է), և անպաճուճ ու հակիրճ ոճով, բայց դիպուկ այլևմաց նմանություններով նկարագրել առակների մի քանի բնորոշ կողմերը և առաջ բերել իսկական փոքրիկ բանաստեղծություններ՝ լի ճշգրիտ իրականությամբ։ Այսպիսով ժողովրդական բանահյուսության այդ հասարակ տեսակն ստացել է որոշ գեղեցկություն և ունի մի առանձին համեղություն ու գրավչություն, մանավանդ երբ հորինված է խոսված լեզվով։ Բերենք մի քանի օրինակ։ Հենց սկզբում դրված հանելուկի մեջ կենդանի տեսնում ենք սևավոր աբեղային՝ *առանձնացած աղոթելիս.*

Մէկիկ հաւուկ մի կայր փոքրիկ,
Ի ի գլուխն ունէր սևուկ թեպրիկ.
Երթայր նըստէր ինքըն լըռիկ,
Աղօթք առնէր խիստ սըպըրկիկ։

Ահա և քարաշրջիկ խեղճուկ այծը, *որ իր մարմնով ծառայում է և՛ քրձազգեստներին, և՛ գինարբուներին, և՛ ամենքին.*

Յամէն շըրջի ինքն ի քարեր,
Ունի ծախու մազէ քըրձեր,
Գինոյ ունի աղուոր տըկեր,
Ի օժտէր ձըրի դանկի կոթեր։

Ջանասեր մրջյունների երկայնաձիգ քարավանները նմանեցրած են Խորասան գնացող բեռնակիր էշերի քարավաններին.

Կարի տեսայ ես շատ կարուան,
Որ կու իջնայր ի Խորասան.
Իշուին բոկիկ էր ու անփալան,
Մէկիկ հատիկ բառնան ու գան։

Գեղեցիկ է կանաչազգեստ մանուկ գարունն *իր արոտական խաշների հոտերով և բազմաթիվ գեր ձիերով. և ընդհակառակն՝ «տօթագին քարանձաւ» Հռոմկլայի և շրջակա երկրի այրող* աշունը, *որ ցամաքեցրել է գետի ջուրը, խանձել ու հնձել է դաշտի խոտը՝ զրկելով ձիուն և էշին։*

Թագուոր տըղայ աղուոր տեսակ,
Ջամէն հագնի կանաչ դիպակ.
Խաշինք ունի անթիւ բանակ,
Շատ գէր ձիան որձ ու մատակ։
Մանուկ մի կայր զօրեղ հրեղէն,

Խրմեց հատոյց զջուրն ի գետէն.
Ջիուն 'ւ իշուն արար նա քէն,
Հընձեց վերոյց զխոտն ի դաշտէն։

Ո՞րքան իրական է նկարագրված աշխարհ կերակրող ջրադացն իր ցրտոնում (ջրտուն) տառապող անվով (փառ), շաղ տված ալյուրով ու չախչախով.

Մինն ի յանդունդըս տառապէր,
Մինն ի յերեսըն թըքանէր,
Գըլխովըն ծափըս հարկանէր,
Ըզկենարարըն մեղ բերէր։

Ո՞վ կհամարձակվի բռնակալի երեսին բան ասել. բայց մի զարմանալի բան կա թռչունի մագիլներով, և նա ցատկում է բռնակալի երեսի վրա։

Եկ դու մի՛տ դիր, սիրելի՛,
Իրք մի ասեմ զարմանալի.
Մէկ մի ունի մագիլք հաւի,
Վաղէ յերես բըռնակալի։
(Սւսնդր)

Ինչքան էլ հանելուկների նվաստ տեսակն է մշակել մեր բանաստեղծը, նա չի մոռացել անցավոր մարդ էակի հեղհեղուկ բախտը և որ «աշխարհը հյուրանոց է, մարդիկը հյուր են. կուգան ու կերթան», այն էլ ինչպե՞ս կերթան...

Պանդոկ մի կայր վերայ երկրի
Ի յանցաւոր ճանապարհի.
Որ անծանօթքն ի նմա գային,
Եւ ծանո՛թքըն գընային։
Մինչ հիւրըն գայր՝ մնծարէին,
Եւ մինչ գընայր՝ կողոպտէին,
Ոչ թէ մասն ինչ իրս առնուին,
Այլ զբովանդակն խըլէին։

«ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ»

1. Դարերի լեգենդաները և ողբերգությունն։—*Հիշված բոլոր նոր տեսակի երկերը թեպետ ունեն գեղեցիկ հատվածներ, բայց իրենց նյութով բանաստեղծին արդեն հնարավորություն չեն տվել ոչ՝ երևակայության թռիչքներ գործելու և ոչ էլ ներսուզվելու իր հոգու խորքերը և քըրքըրելու իր զգացումները։ Կարծես Շնորհալին երկար որոնումներ է արել՝*

դրա համար մի հարմար նյութ գտնելու և գտել է ամբողջ Ս. Գիրքը։ Ուստի վերևում հիշված «Բան հաւատոյ» երկից հետո, որի նյութն Ավետարանի պատմությունն է, 1152 թ. հորինել է մի իսկական բանաստեղծական գործ՝ «Ողբերգութիւն վիպասանական ի տառից սրբոց», որ սովորաբար անվանվում է ըստ սկզբի բառերի «Յիսուս որդի»։ Ամբողջ վերնագիրն է՝ «Տեառն Ներսեսի նուէր մաղթանաց ներչափական տաղիւ տուողի բանից, ըղձումն աղօթից ներանձնական հոգւոց զարթուցելոց մտօք ի թմբրութենէ կրից յիշատակաւ անցելումն իրի ներկայի և ապագայի, ողբումն հեծութեան սրտի, խօսք ընդ աստուծոյ»[50]։ Այս ցիտատից հենց կարելի է տեսնել, որ Շնորհալին այս երկի համար ազդվել է Գրիգոր Նարեկացու Ողբերգության Մատյանից։ Մյուս կողմից նա հետևել է նաև Գրիգոր Մագիստրոսի «Հազարտողյանին»։ Ինչպես վերջինիս մեջ ոտանավորով տրված է Աստվածաշնչի բովանդակությունը, նույնպես և Շնորհալու երկի վիպական կողմն առնված է Ս. Գրքից և նույնիսկ ամբողջ երկը, չորս հազար տող («երկհազարեան տամբ յանգական»), հորինված է նույն «ին» հանգով, ինչպես «Հազարտողյանը»։ Բացի Հին և Նոր Կտակարանների պատմությունից՝ վերջը նա հիշում է նաև քրիստոնեության համար աշխատող հայրապետներին ու նահատակներին, ճգնավորներին ու չարչարվածներին և վիպերգը հասցնում է մինչև Քրիստոսի երկրորդ գալուստը—աշխարհիս վախճանը, վերջին դատաստանն ու հավիտենական կյանքն ըստ քրիստոնեական հավատալիքի։ Դա բովանդակում է, ուրեմն, այսպես ասած, դարերի լեգենդանները, մարդկային պատմության անցյալը, ներկան և ապագան։ Բայց դա լոկ վիպական աշխատություն չէ, այլ միաժամանակ և քնարական քերթված է կամ, ինչպես հեղինակը բնորոշել է, «ողբերգութիւն վիպասանական». մի կողմով պատմվածք է, մյուս կողմով՝ մի սրտաբուխ երգ։ Եվ այս կողմից արդեն նա նմանել է Գրիգոր Նարեկացուն։ Այս նմանություններով հանդերձ՝ նա հորինել է մի օրիգինալ — իսկատիպ, յուրաստեղծ ընտիր երկ, որի մեջ անձնականը — լիրիզմը բռնում է կարևոր տեղ։ Բանաստեղծը կամ «երգողը», ինչպես ինքն իրեն անվանում է հեղինակն այդ երկի հիշատակարանի մեջ[51], — իր վրա է դարձնում ըստ Ս. Գրքի և՛ մեղավորների, և՛ արդարների աղաչանքները, հարկավ, իրեն չհամարելով արդար.

Սկիզբն ի հօրէն մեր նախնական
Մինչ ի վերջին դարուս վախճան,
Ըղբան և զգործ համանգամայն
Առ իս փոխեալ գիմառական...

Ամբողջ գրվածքի մեջ շարունակ իշխում է բանաստեղծի իր դեմքը, որ հեծությամբ դիմում է աստծուն.

---

50 «Բանք չափաւ», էջ 7—166։

51 «Յիշատակարան երգողի բանիս», էջ 160։

Ընդ աստուծոյ դէմ յանդիման
Խօսակցելով անձն անարժան։

Այդ «խօսքն ընդ աստուծոյ» իսկապես մի «աղօթական բան» է, բազմազան աղոթքների մի շարք, որոնց յուրաքանչյուրի մեջ երևան է գալիս «ծրգողի զգացումների մի գիծ, հոգեկան վիճակի մի կողմ։ Նայելով պատմած իրողություններին՝ երբեմն նա զղջում է և խոստովանում իր արարքը, երբեմն որևէ խնդրվածք է անում՝ «իղձս աղօթից», և այդ ամենի ժամանակ, ինչպես Գրիգոր Նարեկացին, շարունակ իրեն անարժան ու մեղավոր է գտնում։ Մարդկային լանազան վիճակների մասին պատմվածքների մեջ՝ «աստծու հետ խոսքը», այս է կազմում երկի նպատակը և էական տարրը, ամբողջի ընդհանուր գույնը, որով և երկի միությունը։

Գրեթե անընդհատ կապակցությամբ ամփոփ պատմվածքի մեջ իրար հաջորդում են անձերն և իրողությունները և ապա համապատասխան քնարերգություն ու խորհրդածություններ։ Երբեմն այդ երկուսն իրար կից են մեջ բերվում, ինչպես, օրինակ, ղրույցը կարճահասակ մաքսավոր Զաքեոսի մասին, որ Հիսուսին տեսնելու համար բարձրանում է ժանտաթզենին (էջ 113)։

2. Արտահայտության ձևը Գրիգոր Նարեկացու ձևի հետ համեմատությամբ։ Հասարակության ազդեցությունը ոճի վրա։ — *Ներսես Շնորհալու այս երկի համար, ինչպես Գրիգոր Նարեկացու «Ողբերգության», իշխող է աստված, որից բխում է և երկուսի բանաստեղծությունը։ Երկուսն ևս իրենց «բանի», այսինքն՝ բանաստեղծության համար նույն նպատակն են դնում թե՛ իրենք իրենց համար և թե՛ ընթերցողների (էջ 158).*

Եւ որք ինև և կամ յետ իմ
Այսու բանիւ քեզ պաղատին,
Համարեսցիս միշտ ընդ նոսին
Զիս ըզներսէս մաղթել սովին։
Եւ առ հոգիս իմ յաւանդին
Եւ ի մարմինս իմ տապանին
Բարեաց ազդումն ի քէն լիցին,
Եւ ցընծացեալըք կայտռեսցին։

Այսպես ուրիշ նման կողմեր երկուսի մեջ ևս։

Ինչպես բերված հատվածներից կարելի է նկատել, Ներսես Շնորհալու այս բանաստեղծության մեջ ողբերգը մեղմ է, տխուր ու քնքուշ, ամենայն ինչ հանդարտ է ու փափուկ։ Ոչ վերամբարձ սլացք ու թռիչք, ոչ սրտի այրուք ու ճենճերում և ոչ տոչորող ու կրակոտ զղջում։ Այստեղ չենք գտնում հուսահատական ճիչ ու աղաղակ, որով ինքն իրեն կտրատում և ոչնչացնում է Գրիգոր Նարեկացին ողբալիս։ Ներսես Շնորհալու մոտ ևս զգացումների զեղումն անկեղծ է, մեծ է կրոնական զղջման եռանդը, բայց, ինչպես սովորաբար, նա չափավորության սահմանից չի

անցնում։ Երկուսի մեջ ևս կատարելապես նույն զգացումներն են, միայն արտահայտության թափով ու ձևով տարբեր։ Բայց Շնորհալին նման է մի բարեկիրթ մարդու, որ իրեն պահել գիտե, մինչդեռ Նարեկացին հիշեցնում է մի բնական մարդ, որի ներքինն անզուսպ է և որ անմիջականորեն, առանց քաշվելու արտահայտում է իր բոնկումները և հեկեկալով արտասվում։ Նա համեմատվում է մի պղտոր հեղեղի, որ գրդանք տալով՝ ալիք-ալիք ետևից քշում է առաջ, և որի մեջն ընկնողը տանջալից տարվում է երկար-երկար, առանց հասնելու եզրին. մինչդեռ Շնորհալին նման է մի ականակիտ, վճիտ աղբերակի, որ հանդարտ սահում է կարկաչելով, և որի խաղաղ ափին նստած՝ մարդ սուզվում է խորհրդածության մեջ աշխարհիս մասին։ Բայց այսպիսի զանազանությամբ հանդերձ՝ Շնորհալու այս երկը պակաս ազդու չէ, քան Նարեկացունը. դա մի հեծություն, մի հառաչ է, մեղմ ու հեզիկ, և ոչ հեծկլտանք ու թառանչ, բուռն ու սաստիկ։

Ինչի՞ց է առաջացել երկուսի այս ոճական զանազանությունը։ — Անշուշտ, երկու բանաստեղծների խառնվածքի, բնավորության տարբերությունից. մեկինը տաք ու բռնկող, մյուսինը՝ անուշ ու հանգիստ։ Բայց կա և հասարակությունը, որի արտահայտիչն են դառնում իսկական բանաստեղծները, ոչ միայն իրենց գործի բովանդակությամբ, այլև ձևով, ոճով։ Երկուսի էլ այս կրոնական գրականություններն արտացոլել են յուրաքանչյուրն իր ժամանակի հոգևորական դասի պատկերը, առանձնապես կրոնավորության ու ճգնավորության։ Արդ՝ Նարեկացու Ողբերգության գրվելուց ուղիղ հարյուր հիսուն տարի հետո է ստեղծել Շնորհալին իր երկը, իսկ այդքան երկար ժամանակի ընթացքում շատ բան էր փոխվել։ Վերածնության հեղաշրջող հոսանքը բավական զորացել էր արդեն. ազդել էին դրա համար և Հայաստանի ու հայ ժողովրդի քայքայիչ վայրիվերումները, մահմեդական այլազգիների եղերական տիրապետությունները, անընդհատ երերուն վիճակը և նմանները։ Այդ ամենի հետևանքով արդեն շատ փոխվել էր նաև կրոնավորության ոգին։ Գրիգոր Նարեկացու օրով, ինչպես նկարագրված է աշխատության առաջին հատորի մեջ, կրոնավորությունն ու ճգնավորությունը չափազանցության էր հասած թե՛ ներքուստ մարդկանց բորբոքված երևակայությամբ և թե՛ արտաքուստ իր արտահայտության սուր ու բիրտ, ճչուն ձևերով—մերկ ու բոկոտն մնալ, կամ գրգլյակներ հագնել, բազմօրյա անսվաղ պահքերով և այլևայլ միջոցներով տանջել մարմինները, ամեն տեսակ արտաքին ուժեղ ու բուռն ցուցադրություն մրրկող հոգիների և միստիկական ցավագար ձգտումների—մեղադրել ինքն իրեն, սաստիկ ապաշխարել, լալ, արտասվել և նույնիսկ ինքն իրեն ծեծել և այլն։ Այսպիսիները հոգով ու մարմնով անհանգիստ գերի էին ապաշխարության բռնակալ ուժին և համոզված էին, թե մեղքերի ծովն ընկած՝ ալեկոծվում են կուտակված ալիքների մեջ և շարունակ ավելի ու ավելի խիստ միջոցների դիմելով՝ աշխատում էին միմյանցից գերազանցել ինքնատանջությամբ։ Նրանց հարկավոր էր իրենց հոգեկան պղտոր վիճակի համապատասխան զգա-

յացունց ապաշխարական արտահայտություն, զորեղ ու բուռն խոսք, ձևի չափազանցում, «սպեղանիք զօրաւորք վիրաց անբժշկականաց, դեղք ալոդողականք ցաւոց անտեսականաց», որպեսզի այդպիսի ողբերգը կարդալով, դրա վրա աղոթելով, ավելի ևս լային ու կոծեին իրենց։ Թեթևը, մեղմը, հանդարտը, միակերպը նրանց հաճելի չէին լինիլ և չէին էլ ազդիլ ու բավարարիլ, քանի որ կյանքի մեջ կրում էին նույնը ծանրաթախիծ փոթորկահույզ կերպով։ Արդ՝ ինչպես կրոնավորությունն էր, նույնպես և նրա պահանջած և նրա արտահայտիչ բանաստեղծությունը, ոչ միայն բովանդակությամբ, այլև ուժեղ գույներով և բազմադիմի խուռն ճնշող ձևերով, մեկը մյուսից ուժեղ պատկերներով, հորդահեղ ոճով։

Այսպես չէր կարող լինել Շնորհալու ժամանակ, երբ կրոնավորությունը, այսպես ասած, աշխարհիկ էր դարձած, և լոկ ձև էր մեծ մասամբ, ինչպես կտեսնենք ներքևում, երբ խոսք կլինի Շնորհալու «Ընդհանրական» աշխատության մասին։ Գայթ, հարկավ, նաև դեռ մեծ ջերմեռանդներ. բայց ապաշխարության հորդ եռանդը պակասած էր, կրոնավորության բարձրացած, հորձանահոս հեղեղը նատած էր, պղտորությունը պարզված, թափը թուլացած։ Չկար այլևս բորբոքված ուղեղների երկնաթռիչ միստիցիզմը, արտաքին ցուցադրությունը։ Իսկական բարեպաշտ կրոնավորը, ապաշխարողը դարձած էր ներանձնավոր, իր մեջ, իր հոգու մեջ քաշված համեստ ու գուսպ վանական, սրբասեր, պարզ ու մաքուր կյանքով, բայց բնավ ոչ ինքնատանջ ճգնավոր, ոչ կամավոր նեղություն կրող, չարչարվող։ Չկար կրոնական հարբածություն իր արտաքին ծանր ու կեղեքիչ ձևերով։ Բավական էր միայն, որ բարեպաշտը, իր մեջ ամփոփված, ջերմ հավատով դիմեր աստծուն։ Այս տիպի կրոնավորների լավագույն ներկայացուցիչն է եղել ինքը Շնորհալին. ոչ միայն իր ապրած համեստ միակերպ կյանքով, այլև իր Ողբերգության թե՛ բովանդակությամբ և թե՛ ոճով, որ համապատասխան է իր և իր նմանների ներքինին։ Ամեն ինչ չափավոր, մեղմ, փափուկ, հանդարտ. և ոտանավորն էլ միակերպ, բայց սահուն ու սիրուն։

3. Վերջին դատաստանը։—Շնորհալին այս երկի մեջ ունի մեծավայելուչ հատվածներ ևս։ Վերջին դատաստանի նկարագրի մեջ, որ մեր հին բանաստեղծների սիրած նյութերից մեկն է, ինչպես և մեղավորների պատիժների թվարկության ժամանակ, մեր այս հեզաբարո քերթողի երևակայությունը մեծ թափ ու թռիչք է առնում։ Նա սաստիկ զգածված է։ Բերենք մի քանի կտոր՝ կրճատումներով.

Յորժամ տարերքըս դղրդին,
Հաստատութիւնքըն սասանին,
Իբր ըզծովու կոհակք կուտին
Ի յեռանդանըն կաթսային.
Լայնատարած դողայ գետին,
Ի թանձրութեանց հիմանց շարժին.
Մի ըզմիոյ հետ խափանին,

Կասեալ յերկուցըն տատանին,
Լերինք հիմամբըք զարհուրին,
Եւ ուժգնակի բախմամբ թընդին,
Կարծր բնութիւնք վիմաց հալին,
Եւ ամենայն նիւթք հըրդեհին։

Լուսյուն է լինում. կես-գիշերին հանկարծակի գոչում է Գաբրիելի փողը, հոգիները սլանում են իրենց տեղերից, ուր պահված էին։ Գերեզմանները բացվում են, փտած մարմինները նորոգվում են, նույնիսկ ծովի ձկների ու ցամաքի գազանների կերածները։ Հոգիները միանում են մարմիններին, և մարդիկ բոլորը դառնում են երեսնամյա. ոչ ծեր կա, ոչ մանուկ, ոչ արու, ոչ էգ և այլն։ Բացվում է ատյանը, նստում է դատավորը։

Թագավորում են աղքատները, քաղցածները, զրկվածները։ Պատժվում են զրկողները, գողերը, սպանողները, պոռնիկները։

Պատժվում են և խաբեբա վաճառականները, ենթգավոր արհեստավորները, աղքատներին ուղիղ չդատող դատավորներ և շատ ուրիշներ։

Պարգևներ են ստանում արժանավորները—առաքյալներ, մարգարեներ և այլն։

Ներսես Շնորհալին իր այս Ողբերգությամբ հանդիսանում է երկրորդ և վերջին նշանավոր եկեղեցական բանաստեղծն իբրև արտահայտիչ, ինչպես ասվեց, արդեն մեղմացած, բայց իսկական բարեպաշտ կրոնավորության—ներանձնավոր վանականության։ Նրա այդ երկն իր խորաթափանց անկեղծության համար, որ քնարերգության էական պայմանն է, շատ սիրելի է եղել հետագա սերունդներին։ Սաղմոսի հետ միասին հայկական տպագրության հենց սկիզբներում, 1565 թ., արժանացել է տպվելու, և այնուհետև հաջորդ երկու դարում նորից տպագրվել է ավելի քան ինն անգամ։ Մեծ է եղել այդ գրքի ազդեցությունը, համայքն ու պահանջը։ Դարեր շարունակ դրա վրա ոչ միայն աղոթել են և արտասվել. դա եղել է ոչ միայն «կարծր սրտերը ճմլող», ինչպես գրում է Ներսես Լամբրոնացին, այլև դրանով ուսել են Աստվածաշնչի պատմությունն ու եկեղեցու դավանությունը և բարոյական խրատներ են առել. որովհետև բանաստեղծը չի մոռանում, որ ինքն իր կոչումով հոդևոր դաստիարակ է։ «Ընտիր և արդարև գերընտիր, միանգամայն և իսկաշնորհ և բազմաշնորհ գրված մը», այսպես է բնորոշում այդ երկը բազմահմուտ բանասեր ու բանաստեղծ վարդապետը[52]։

«ՈՂԲ ԵԴԵՍԻՈՅ»

1. Քերթվածի իրական պատմական նյութը և ծագումը։—*Իսկական բանաստեղծական հղացմամբ և արվեստով գլուխ բերված մի մեծ քնարական քերթված է Շնորհալու այս երկը*[53], *նրա գլուխգործոցը։ Դրա*

52 Ղ. Ալիշան, *Շնորհալի և պարագայ իւր*, էջ 277։

53 «*Ողբ Եդեսիոյ յօրինեալ տեառն Ներսիսի Կլայեցւոյ*», *Տփխիս, 1829, ի տպարանի Ներսիսեան դպրոցի Հայոց*։

նյութը ոչ կրոնական է և ոչ կրոնավորներին է վերաբերում, այլ աշխարհիկ է։ Բայց դա մի արևելյան արաբական հեքիաթ էլ չէ, առանց ժամանակյան, տեղական և ազգային գույնի, որի մեջ գեղեցիկ չափածո բանաստեղծությամբ լալագին եղանակով պատմված լիներ կորցրած սիրուհու մասին, ու սիրահար հերոսը, մենակ կամ հավատարիմ ընկերի հետ, ելներ իր սիրածին որոնելու և բազմաթիվ բնական կամ անբնական արկածներից հետո գտներ նրան։ Մեր այս կրոնավոր բանաստեղծը հեռու է աշխարհիկ սիրուց։ Նրա այս քերթվածի նյութը պատմական է. դրա մեջ վիպերգված է հեղինակի իրեն օրով կատարված մի պատմական եղելություն։ Նա երգել է, ինչպես ինքը գրում է, «զիրս եղելոց, մեր ժամանակս դիպելոց»։ Այն դարում ամենամեծ նորությունն էր այդ—բանաստեղծություն հորինել ժամանակակից քաղաքական դեպքերի վրա։ Բայց միանգամայն այդ երկն իր մեջ լայնորեն անդրադարձրած ունի հեղինակին ժամանակակից իրականությունը, հասարակական և ազգային իրական կյանքի պատկերը, լի է հայրենասիրական ոգևորությամբ, հարուստ և փայլուն նկարագիրներով, լինի խաղաղ և բարօր կյանքի, բնության ու շեն քաղաքների, թե քաջամարտիկ կռիվների, որ քրիստոնյաներն ինքնապաշտպանության համար մղում են այլազգիների դեմ, և թե վերջիններիս գործած վայրագությունների։ Եվ այս ամենի վրա ընդարձակ ծավալով սփռված են հեղինակի հույզերն ու խոհերը, նրա զգայուն սրտի մորմոքն ու կսկիծը, նրա հույսերն ու տենչերը, որ միայն իրենը չեն, այլ նաև իր ժամանակի քրիստոնեությանն ընդհանրապես և հայությանը մասնավորապես։

Ի՞նչ է այս քերթվածի գործողության հիմք կազմող պատմական դեպքը։ Հին նշանավոր Եդեսիա քաղաքն իր շրջակա գյուղերով ազատ էր մնացել թուրքական տիրապետությունից. 11-րդ դարի վերջերին այնտեղ կառավարիչ էր Թորոս անունով մի հայ, որ այդ դարի վերջում սիրով ընդունում է խաչակիրներին։ Նրանք, սակայն, շուտով սպանում են նրան և Եդեսիան իր գավառով մնում է նրանց ձեռին իբրև առանձին կոմսություն։ Հետզհետե անարի են դառնում իշխող ֆրանկները և զեխ կյանք վարում։ Եդեսիայի վերջին կոմսը՝ Ճոսլին անունով, առևանգելով մի հայ իշխանի դուստրը, գնում է Եփրատ գետի մյուս կողմն՝ իր զվարճությունն անելու։ Քաղաքը մնում է առանց հզոր պաշտպանության։ Այդ իմանալով Հալեպի կամ Բերիայի ամիրան՝ Զանգի, որ տիրել էր գրեթե ամբողջ Միջագետքին և Ասորիքին, շատ զորքով արագ արշավում, պաշարում է Եդեսիան։ Քաղաքացիները մի ամիս քաջությամբ պաշտպանվում են, բայց դրսից չստանալով սպասած օգնությունը, վերջը թուլանում են բազմաթիվ թշնամիների առաջ, որոնք գրոհելով առնում, ավերում են քաղաքը և բնակիչներին սոսկալի կոտորածի, կողոպուտի և գերության մատնում։ Քրիստոնյաներին մեծ սուգ է պատճառում այդ։ Լուրը հասնում է Արևմտյան Եվրոպա, և պատրաստվում են նոր խաչակրաց արշավանքի։ Այս է կատարված դեպքը։

Ներսեսի Շահան կամ Ջորավար եղբոր որդին, պատանի Ապիրատը, պաշարման ժամանակ եղել է Եդեսիայում և այնտեղից ազատվելով գնացել է Ծովք և պատմել այն քաղաքի ավերումը։ Ուրիշ փախստականներ էլ անշուշտ հասած կլինեն նույն դեկը և պատմած նույն աղետալի եղելության մասին։ Շնորհալին ահա այդ դեպքի տպավորության տակ և Ապիրատի խնդրով հյուսել է իր «Ողբը»։

Շնորհալին այդ երկը հորինել է ըստ երևույթին 1145 կամ 1146 թ., խաչակրաց երկրորդ արշավանքից առաջ, երբ Ապիրատը, թեև արդեն զինավարժ ձիավոր, բայց դեռ «մանուկ տղայ» է եղել։ Այս Ապիրատին (որ հետագայում, 1195 թ. դարձել է կաթողիկոս՝ Գրիգոր Ապիրատ անունով) նա ուղղել է, ինչպես տեսանք, վերևում հիշված ոտանավոր նամակը և ընդարձակ «Բան հաւատոյ» աշխատությունը։ Արդ՝ իր պատանի տոհմիկի խնդրով և նրա ու նրա նման «տխմարների» և ոչ թե «գիտունների» համար հորինել է մեր քերթողն այդ «Ողբը», որ այսպիսի ծագում ու նպատակ ունենալով հանդերձ՝ նրա գրական վաստակների պսակն է, եռանդով ոգված մի գեղեցիկ քերթված։

2. Դիմառնությունը։—*Բանաստեղծն իր այս գրվածքն անվանում է «Բարառնական»։ Եդեսիան առնված է դիմառնաբար իբրև որդեկորույս որբևայրի կին կամ «տիկին», որ ողբում է իր գլխին եկած մեծ աղետը։ Նա սկզբում ողբակից է հրավիրում համայն քրիստոնյա աշխարհը.*

Ողբացէ՛ք, եկեղեցի՛ք,
Հարսո՛ւնք վերին առագաստի,
Քո՛րք և եղբա՛րք իմ սիրելիք,
Որք չընդհանուր կողմ աշխարհի.
Քաղա՛քք և գիւղք առհասարակ,
Ա՛զգք և աղինք որ էք յերկրի,
Հաւատացեա՛լքք Քրիստոսի,
Ի՛ երկըրպագուք նորին խաչի...

Դիմում է քրիստոնեական նշանավոր կենտրոններին՝ Երուսաղեմ, Հռոմ, Կոստանդնուպոլիս, Ալեքսանդրիա, Անտիոք, բանաստեղծորեն բնորոշելով նրանց կատարած դերերը։ Ապա խոսքն ուղղում է Մեծ Հայքին, Հայոց եկեղեցուն, առանձնապես Վաղարշապատ և Անի քաղաքներին, և սաստիկ ցրքալուց հետո պատմում է իր, Եդեսիայի, անցյալ փառավոր վիճակը և արաբացիներից կրած թշվառությունը։

Այս նյութը մեր բանաստեղծը վիպերգել է մեծ հմտությամբ իբրև մի գիտակ անձ, որ արդեն իշխում է իր կատարելության հասած արվեստին՝ երևան բերելով բացադրության թեթև ճոխություն և փայլուն գյուտեր։ Որ նա խոսում է ոչ իր կողմից, այլ անձնավորված Եդեսիայի, այդ հենց մի այնպիսի գյուտ է, որ ամբողջ երկին տալիս է մեծ կենդանություն։ Նա հազվադեպ մոռանում է դիմառնությունը և գրում է իր կողմից, այսպես, օրինակ, էջ 54 և հետ. 14 տողերի մեջ. «Բայց զի հնար ոչ

լինիցի... Մի ըստ միոչէ դրել բանիւ... Զի այս անկար շարագրողին», և այլն։ Կան հատվածներ և տողեր ևս, որ չեն հարմարվում մի ողբերգու կնոջ։ Բայց գիմառնութիւնը, այդ ճարտասանական ձևն, ընդհանրապես գեղեցկացրել է Շնորհալու երկը։ Կարդալիս, մեծագույն մասամբ, մոռացվում է բարառնութիւնը, և մեզ թվում է, թե իրոք մի մանկակորույս, գորովագութ որբևայրի թշվառ կին է խոսողն ու կոծողը, Եգեսիայի տիրուհին, որ լալով պատմում է իր գլխին եկածները։ Եվ այդ կենդանի մարդկային էակի դառն ցավն և աղեկտուր արտասուքը համակում է մեզ ի գութ և ի խանդաղատանք։

Լացէ՛ք, լացէ՛ք բարձրր ձայնիւ,
Զիս ողբացէ՛ք կողկողակի։
Եգեսիա՝ Ուրհայ քաղաք,
Որդեկորոյս որբ և այրի,
Կանչեմ առ ձեզ ձայն կանացի,
Կականալիր ՝ւ ողորմելի,
Քօղս ի գլխոյ մերկանալով՝
Զիմ պատառեմ ծածկոյթ զարդի.
Փետտեմ ըզվարս իմ ցանկալի,
Խրզեմ ըզհերս անխնայելի.
Քարամբ ծեծեմ կուրծըս սըրտի,
Բաղխեմ զերեսս իմ յաստակի։
Նըստիմ ի սուգ ի տան մըթին,
Որպէս օրէն է սրգաւորի.
Եւ փոխանակ որդան զգեստի՝
Սև ըզգենում գոյն տրխրալի.
Հեղում արտօսր անչափելի,
Յորդ և առատ՝ նըման գետի.
Քանզի առակ եղէ յերկրի,
Տիեզերաց նախատելի.
Եւ անցաւորք ճանապարհի
Վա՛յ ի վերայ ասեն վայի։

(էջ 21 և հետ.)

3. Էական կողմը։—*Պաշարման, կոտորածի և կողոպուտի ենթարկվել են ոչ միայն Եգեսիան, այլև հայկական քաղաքները—Անին, Կարսը և մյուսները, այն էլ մի քանի անգամ։ Եգեսիան Անի քաղաքի ավերն ու կոտորածը պատմելուց հետո ասում է նրան (էջ 19).*

Վասն այսորիկ, ո՛վ եղկելի,
Որ ես ներհուն այս ամենի,
Ի քոյն յայնժամ խիստ աղետի
Ծանի՛ր և զիմս ողորմելի...

Քանդի նըման յոյժ տեսանի
Իմըս քոյին հասեալ չարի։

Դեպքերը և աղետալից վիճակը շատ կողմերով նույն և նման են եղել ավելի քան մի դարից ի վեր 12-րդ դարի կեսից առաջ։ Ուստի Շնորհալին ի դեմս Եդեսիայի երգել է իսկապես նաև Հայաստանի այդ իրականությունը։ Նա իր եռանդն ստացել է թե՛ Եդեսիայի ավերման ցավից և թե՛, և ավելի ևս, Հայաստանի։

Դժբախտաբար այդ ողբերգական ղգացումները հարատևել են և հետագա մի մեծ շարք դարերում, որովհետև հաճախակի ավերմունքն է եղել Հայաստանի ճակատագիրը։ Ուստի Շնորհալու ստեղծագործության արժեքն ավելի ընդարձակվել է։ Նվ նրա «բարառնական բանը», հեղինակի ժամանակակից կյանքի երգը, միաժամանակ և մեր ժողովրդի դարավոր վերքերի առաջին բանաստեղծական ողբն է, «հայրենասերի ողբը», առաջին «Վերք Հայաստանին»։ Մյուս կողմից՝ այս գեղեցիկ քերթվածի մեջ հանդես է բերված մի ուրիշ մեծ խնդիր ևս—քրիստոնյա և մահմեդական ժողովուրդների, քրիստոնեության ու մահմեդականության հակադրությունը։ Դա միմյանց հետ նրանց վարած կռվի առաջին բանաստեղծական արտահայտությունն է։ Այս է կազմում քերթվածի էությունը—քրիստոնեության ու մահմեդականության հակամարտություն և հայրենասիրական ողբերգություն այլազգերից կրած ավերմունքի հիման վրա։

Արիստակես լաստիվերտցին, Հայաստանի լավ օրերի այդ ականատեսը, արդեն մորմոքվում էր Հայաստանի անկման, շեն երկրի ավերման համար և, ինչպես տեսել ենք, երբեմն իսկական քնարական արձակ բանաստեղծություն էր հորինում։ Մեր հին պատմագրությունների մեջ էլ պակաս չի եղել հայրենասիրական ողբաղին զգացման վեղումը։ Բայց այդ ամենն արձակ են և, բացի Լաստիվերտցու գրածից, ավելի հռետորական, քան մաքուր քնարական—բանաստեղծական։ Նախորդ շրջանում մեր բանաստեղծության մեջ, ոչ էլ անգամ Գրիգոր Նարեկացու մոտ, չենք գտնում հայրենասիրական նվագը։ Ներսես Շնորհալու այս մեծ «Ողբի» 1070 երկատող տների մեջ առաջին անգամ լսում ենք մի չափածո և հանգավոր սրտահույզ քնարերգություն։ Բանաստեղծը մերթ սրտի կսկիծից բռնն ճիչեր է արձակում թշնամիների դեմ, մերթ մեղմ և անուշ, բայց խորին տրտմությամբ լցված, հառաչում է Հայաստանի համար. որոնում է նրա անցած հին փառքը, որ այլևս չկա։ Ամբողջի մեջ տեսնում ենք մի անկեղծ կարոտալի վիշտ ու թախիծ վաղուց հեռացած ու կորած քաղաքական ազատության համար. տենչանք՝ ունենալու այն հին երկիրը, որ էր «նման փթթեալ ծաղկի», «պայծառացած ի գոյն վարդի», երանելի ու ցանկալի ամենքի համար։ Մի երկիր, որ վայելում էր ուրախ կյանք, երգ ու երաժշտություն, ամենալից սեղաններ, բարեկամական զվարճություններ։ Ո՞ւր է այս ամենը,—հարցնում է բանաստեղծը, դիմելով իրեն Հայոց աշխարհին.

Բայց հարցանեմ, ո՛վ բաղձալի,
Բանիս խընդրեմ պատասխանի.
Այժմ արդ ո՞ւր է թագ քո զարդի,
Եւ կամ պըսակըն հրաշալի։
Ո՞ւր զարդարանքըն դըշխոյի,
Հարսին որդւոյ թագաւորի.
Ո՞ւր պաճուճանք հարսնարանի,
Կամ ոսկեհուռ վերջաւորի։
Է՞ր չէ փեսայն ի խորանի,
Կամ փեսաւէրքն ի տաճարի.
Ո՞ւր են մանկունքն առագաստի,
Զի ոչ հընչեն զերգըս Դաւթի.
Զիա՛րդ լըռեալ ոչ հարկանեն
Զփողըն հընչող տարսոնացի.
Ո՞ւր պարարակ եղնամոլին.
Զիա՛րդ ի քեզ ոչ զենանին.
Կամ մատըռուակքըն բաժակին,
Զի ոչ բաշխեն զանոյշ դինին.
Ո՞ւր բարեկամք զուարճակից...
Ո՞ւր քաղցրաձայն երաժըշտի,
Կամ գեղգեղումն եղանակի...
Արդ ո՞ւր գահոյք թագաւորի
Վաղարշապատ քոյ քաղաքի,
Կամ նախարարքըն արքայի,
Արարատեանըդ գաւառի.
Ո՞ւր են իշխանք որք առաջին,
Կամ զինակիրք որք են վերջին.
Ո՞ւր զօրականքն յասպարիզի,
Կամ լեգէոնքն ի ճակատի.
Ո՞ւր մեծամեծքն ի բազմոցի,
Կամ ո՞ւր սեղանն ամենալի։
Ո՞ւր են ազատքն ի տաճարի,
Կամ տեառնորդիքն ի ծաղկոցի։
Ահա բարձաւ այս վաղագոյն,
Յոյժ հեռացաւ որ չերևի.
Անուրջք՝ւ երազք էին յայտնի,
Արդ ծածկեցաւ ի զարթըմնի։
Այլ փոխանակ այսր ամենի՝
Յոյժ հակառակըն տեսանի.
Քանզի նըստիս որբ և այրի,
Տըխուր դիմօք զերթ ի սրգի։

Ահա՛ Հայաստանի փառավոր անցյալն ու թշվառ ներկան Շնորհալու օրով։ Նա էլ ճիշտ նույն վիճակին է եղել և է՛ր, ինչպես Եդեսիան։ Պակաս դժբախտ չի եղել և Անի մայրաքաղաքը, որ ձեռք ձեռք էր անցնում։ Գրիդոր Պահլավունին, Շնորհալու եղբայրը, մտադիր է եղել և նույնիսկ բանակցություն է սկսել Անիի իշխողների հետ՝ կաթողիկոսարանը Ծովք դղյակից փոխադրելու Հայաստան—Անի, բայց այս քաղաքի անկայուն դրությունը հենց պատճառ էր դարձել թողնելու այդ միտքը։ Կարելի չէր երգել Եդեսիայի վիճակը և անտես անել հայոց քաղաքներից այդ մեծի բախտը, որ հետզհետե դեպի անկումն էր գնում գոնե աղգային հայացքով։ Եվ Շնորհալին Եդեսիային ողբակից է հրավիրում առանձնապես նաև Անի քաղաքը։

Բայց և ըզքեզ յայս հրաւիրեմ,
Արևելեան քաղաքդ Անի.
Կցո՛րդ լեր դու իմոյս ձայնի.
Եւ ըսփոփիչ տարակուսի։
Քանզի երբեմն և դու էիր
Վայելչական հարսն ի քօղի.
Մերձաւորաց յոյժ ցանկալի,
Հեռաւորաց փափագելի։

Ապա սրտալի սիրուն նկարագրից հետո բանաստեղծը վերհանում է եկեղեցու անցյալ վիճակն Անիում և շարունակում.

Սուրն անողորմ անօրինի,
Որ մեր արեանս է ի սովի,
Որ չէ յագեալ և ոչ յագի
Մինչև ի գալ կատարածի,
Նոյն նա եհաս ուրեմն ի քեզ,
Որպէս յիս յայս ժամանակի։
Հընձեաց զորայն յանդաստանի,
Կանաչաւոր ի հասակի.
Զայգին խըլեաց արմատաքի,
Մերկեաց յոստոցն ըզձիթենի.
Եհեղ զարիւն սըրբոց յերկրի,
Հոսեաց նըման ջրոց գետի.
Արար դիակն անթուելի,
Անթաղ մեռեալ գէշ գազանի.
Քահանայիցըն Քրիստոսի
Արեամբ ներկեաց զեկեղեցի.
Սարկաւագաց քրիստոնէի
Մարմինքն անկեալ մէջ փողոցի։
Եւ այլ բազումք որ ոչ թուի,

Եւ է՛ ասելն անկարելի՝
Որ քեզ հասին յայնըմ վայրի,
Բոլոր ամեն մասունք չարի[54]*՝*
Եւ արարին ըզքեզ գերի,
Քան ըզՍաղիմ այլ աւելի՝

Այդ ամեն չարիքները կրած լինելու համար Անին հրավիրվում է տրտմակից լինելու՝

Արդ ժողովեա զդըստերըս քո,
Վասն իմ ի լա՛ց և ի սըգի՝
Կոչեա՛ ձայնիւ կականելի,
Շարժեա ի յողբ զամէն հոգի.
Զի ղովացումն այրման սըրտի
Ոչ է այլ ինչ, քան այս լինի...

Ներսես Շնորհալու այս տխուր ողբերգով Վաղարշապատն ու Անի քաղաքը դառնում են Հայաստանի անցյալ մեծության սիմվոլներ, որ այնուհետև երգվում են և ուրիշներից։ Նույնիսկ սգավոր «Մայր Հայաստանի» կոչված հայտնի նկարի գաղափարը 19-րդ դարում առնված է «Ողբի» այս տողերից, որոնցով Շնորհալին պատկերացրել է ավեր Հայաստանը, «Նըստիս որբ և այրի, տրխուր դիմօք՝ զերթ ի սըգի»։

4. Իրականության հրապուրիչ ներքողը։—*Շարունակենք տեսնել այս քանաստեղծության ուրիշ կողմերը։ Նախ՝ թե ինչպես է նկարագրված Ծղեսիա քաղաքը՝ նրա բնական գեղեցկությունները, պարարտ հողը, ջրերն ու բուսականությունը, հարստությունները, շենքերն ու մաքրությունը և շեն ու բերկրալից կյանքը և շրջակա ավանները՝*

Ես մայր էի բազմորդութեան,
Անթիւ ծընայ դուստր և որդի,
Ջորս մայրաբար դիեցուցի,
Յըստեանց իմոց զկաթն արբուցի.
Գեղեցկատիպ յօրինեցի,
Վայելչապէս զարդարեցի՝
Քանզի երկիր պարարտ էի,
Աղբիւր կաթին յորդ բըղխէի.
Աւետաբեր նըման վայրի,
'Ի այլ գերագոյն որպէս թուէի.
Ջուր կենդանի յինէն բըղխէր,
Ջուարթ ծաղիկ բոյս յօրինէր.
Գետոց նըման վըտակ հոսէր,

---

54 *Տպված է «բարի». ուղղում եմ ըստ իմաստին՝ «չարի»։*

Ղլբուրաստանս արբուցանէր.
Ծովն ի միջի իմ ծածանէր,
Քաղցրիկ օդովըն ծիծաղէր.
Զալտեղութիւն տըղմին մաքրէր,
Ըզհրապարակսըն զարդարէր.
Բազմագունի տունկ յօրինէր,
Որպէս ըզդրախտըն որ յեդեմ էր.
Սաղարթաբեր ծառով ծաղկէր,
Առատագոյն պըտղաւէտ էր.
Տերևախիտ հեզիկ շարժէր,
Հոտ անմահից յիւրմէ բուրէր.
Նարդոս, քըրքում ինձ ընձիւղէր,
Վարդ, մանուշակ վերաբերէր։

Նախորդ շրջանում չենք գտնում այսպիսի բանաստեղծական նկարագիր, որի մեջ արտաքին բնությունը երգված լիներ ոչ թե պատկերների կամ նմանությունների համար, կամ այլաբանորեն իբրև սիմբոլիկ պատկեր, այլ անկախ կերպով, բնությունն ինքն իբրև երգի նյութ։ Կա Գրիգոր Նարեկացու «Վարդավառի տաղը», որի մեջ արդեն զգացվում է վերածնության շունչը, թեպետ այդ էլ դարձյալ կրոնական նպատակ ու դիտում ունի։ Արդարև մեր կլասիկ պատմագիրները, ավելի Մովսես Խորենացին, պատմվածքի ընթացքում ունեն գործողության վայրերի մի քանի գեղեցիկ տեղագրական կարճ նկարագիրներ, բայց ոչ ոտանավոր և այնպես մաքուր բանաստեղծական, բազմակողմանի և հեղինակի զգացմունքով տոգորված, ինչպես է Շնորհալուց վերևում դրվածը։ Սրանով մի նոր և ավելի գեղեցիկ ձևով վերածնվում է մեր կլասիկների երկերի այդ երկրորդական կողմը։ Այստեղ, «Ողբի» մեջ Շնորհալին մեղմ և անուշ, բայց և գունեղ ու նկարեն ոճով, երփնագրել է տեսարանը։ Ընթերցողն զգում է բնության և քաղաքի նուրբ և ակնհաճո գեղեցկությունը, կարողանում է երևակայել քաղաքն իր դիրքով ու բարեմասնություններով, իր շրջակայքով, և նրա փայլուն փարթամությունը։ Եվ այդ կատարված է մերթ շքեղ նմանություններով, մերթ մի երկու նկարչական բառով միայն, երբեմն անմոռանալի հստակ ու հոսուն տողերով.

Ծովն ի միջի իմ ծածանէր,
Քաղցրիկ օդովըն ծիծաղէր...
Տերևախիտ հեզիկ շարժէր,
Հոտ անմահից յիւրմէ բուրէր...
Առաւօտուն ցօղն իջանէր,
Ոսկենըման ճաճանչ փայլէր...

Շնորհալու արվեստի հրապույրը մեծ է և այնու, որ նրա նկարագիրը տոգորված է հեղինակի հույզով. նա բնությունը չի պատկերահանում

սառն և անտարբեր ձևով։ Իսկույն զգացվում է, որ նա սիրում է ամեն ինչ, որ ինքը ներբողում է։ Բայց միաժամանակ այդ բոլոր պայծառ պերճության վրա քաշված է մի սև տխրություն, մի անհուն թախիծ, որ և համակում է մեզ։ Այդ ամենն անցյալ է, և պատմվում է անցյալ ժամանակով։ Այս է բանաստեղծի շնորհալիությունը, որ բայերի անցյալ ժամանակով միայն՝ զգալ է տալիս այն, որ հետո ավելի մանրամասն պիտի պատմի, այն, որ այդ

Բարիքն ամեն ըսպառեցան,
Եւ քաղցրութիւնքըն դառնացան։

5. Բարբարոսական ռազմական գործողությունների ռեալիստական պատկերը։—Պակաս ճարտարությամբ չի վերհանել մեր բանաստեղծն իրականության այս դառն երեսն ևս—Եդեսիայի կործանումը։ Քաղաքի պաշարում, մարտերով պաշտպանություն և առում ու կոտորած, այդ շատ սովորական կրկնված երևույթ էր այն դարերի քաղաքական կյանքի մեջ։ Գրեթե բոլորովին նման ձևով, ըստ Արիստակես Լաստիվերտցու, եղել է և Անի քաղաքի անկումը Եդեսիայի դեպքից ութսուն տարի առաջ, 1064 թ.։ Ներսես Շնորհալին եթե անձամբ ներկա չի եղել այդպիսի ռազմական վայրագ գործողության, անշուշտ հաճախ լսել է ոչ միայն Եդեսիայի, այլև ուրիշ բերդերի մասին։ Նա իր «Վիպասանության» մեջ պատմում է, որ իսմայելացիները (=արաբները) արևելքից սփռվելով հասնում, պաշարում են իր հոր Ծովք բերդը։ Նրա հայրը և ամրականները քաջությամբ պաշտպանվում են. թշնամիները չեն կարողանում առնել բերդը, բայց հայրը աշտարակի վրա նետահար է լինում։ Նա իր մահից առաջ վրեժն առնում է նետն արձակողից և մեռնում է «բարիոք մահուամբ»[55]։ Այս դեպքը երիտասարդ բանաստեղծն իր առաջին երկի մեջ արդեն բավական մանրամասն պատմել է։ Նույնն ավելի ևս ընդարձակ և արդեն հասուն արվեստով եղերերգում է նա Եդեսիայի համար։ Նա մեծ տաղանդով և բանաստեղծական կենդանի հյուսվածքով ու կարգավորյալ շարադրությամբ արձանագրել է միջնադարյան բարբարոսական ռազմական գործողությունների ընդարձակ ռեալիստական պատկերը։ Սկզբում դեռ համեմատաբար հանգիստ պատմում է Եդեսիայի իշխանության հետզհետե թուլացումը շրջակա մահմեդականներից—հագարացիներից (=արաբներից)։ Երբ հասնում է բուն դեպքին, նա դառնանում է ատելությամբ առ մարդադեմ գազանները և թանձր գույներով նկարում է թշնամիների արարքները։ Գործողությունն ամբողջ դառնում է մի ուժեղ դինամիկա, շարունակ փոփոխվող մի նկար։ Մեր աչքի առաջ շարժվում են մերթ դրսից հարձակվողները, մերթ ներսի պաշտպանվողները կամ թե միաժամանակ երկու կողմերն ևս, և մերթ հնչում է նրանց քաջալերական խոսքն ու ճառը, կամ մենք տեսնում ենք միաժամանակ

---

55 «Բանք չափաւ», էջ 553 և հտն.։

Թշվառների ծանր դրությունը և այլազգիների եղեռնագործությունները։ Եվ այս ամենը վիպերգված է մեծ վարպետությամբ, շատ եռանդուն ու ցայտուն, լի դառնակսկիծ կամ բարկացայտ զգացումով, բայց միշտ Շնորհալուն հատուկ վճիտ ոճով։ Քանի առաջ է դնում վիպվածքը, ավելի խիստ լեզու է բանեցնում նա. զի ավելի և ավելի է գրգռվում թշնամիների ոճիրներով, մինչև հասնում է վերջը սոսկալի սնեծքների։

Պաշտպանվող քաջերը և արիները ժողովվում են միասին, երդվում են չլսել թշնամիներին և մինչև վերջը մարտնչել։ Նրանք քաջալերում են միմյանց նախնի քաջերին հիշեցնելով։ Հոգևորականներն էլ խրախուսում են մարտիկներին։ Սպասում են դրսից՝ Անտիոքից օգնության. ուսմի հակառակորդը շտապում է։ Վերջապես թշնամիները պարիսպը մի տեղ կործանում և մուտք են բաց անում։ «Աստանօր սիրտ իմ ճըմլի»,—ասում է պատմող այրին.

Երիկամունքըս գալարին,
Յաւ հարկանի որովայնիս.
Միտք և հոգիս իմ այլայլին,
Մինչդեռ յիշեմ զօրն ահագին,
Եւ զառաւօտըն մըթագին։

Բայց քաջարիները չեն վհատում ու փախչում, այլ հարձակվելով մարտնչում են, պարսպի ընկած տեղը վերականգնում։ Քահանաներն անգամ սրերով կռվում են, իսկ եպիսկոպոսները խրախուսում.

Հա՛պա եղբա՛րըք սիրելիք,
Մի՛ զարհուրիք, առձայնէին.
Ջմահն ընտրեցէ՛ք դուք քաջութեան,
Որ քան ըզկեանս է դովելին...

Մյուս կողմից թշնամու զորագլուխն է աշխատում քաջալերել իր զորականներին պարգևներ խոստանալով և սպառնալիքներ տալով։ Ջանգին ճանաչում էր իր զորքի հոգին. նա լավ գիտեր քաջալերության վերջին միջոցը։ Նա երբ տեսնում է, որ չեն կարողանում հաղթել, ավարի է մատնում քաղաքը։ Թշնամին քաջություն է ցուցաբերում ավարի համար։

Մի ամիս դիմադրելուց հետո հոգնում են. պարիսպը մի այլ տեղ առանց պահպանի է մնում։ Թշնամիներից ոմանք բարձրանում են այնտեղ։ Քաղաքի ժողովուրդն այն տեսնելով զարհուրում է և սկսում է գուժելով փախչել։ Թշնամի խուժանը մտնում է քաղաքը։

Սուսերամերկըք լինէին
Մեջ քաղաքին յարձակէին,
Եւ ժողովոցըն բազմութիւն
Մի ըզմիոյ հետ կասէին.
Անդ առաջի ընթանալին,

Մինչև ի դրունըս դըղեկին՝
Իսկ մարդադէմ չար գազանին
Ըզսայրասուրըն քամէին,
Եւ որպէս գայլք ի հօտ գառանց՝
Ի մէջ նոցունց անկանէին...

Կատարվում է սոսկալի արյունահեղ կոտորած։ Ժողովուրդը գլխակորույս դիմում է դեպի դղյակը (Ներքի բերդը, ինչպես կոչել են Անիում). դռները փակ են. իրար վրա են կուտակվում դռների մոտ։ Սրտաճմլիկ տեսարան է բացվում, որ և շատ աղեխարշ նկարագրում է բանաստեղծը։ Մարդկային թշվառությունը շատ մեծ է։ Կարելի չէ առանց հուզվելու կարդալ նրա մեծ արվեստով հյուսված այդ հատվածի տողերը (էջ 48 և հետ.), որ իրականության ռեալիստորեն գծված ճշգրիտ պատկերն է, մի իրականություն, որ հաճախ է տեղի ունեցել։ Դրանք նկարագիր լինելով հանդերձ՝ և՛ ողբ են, և՛ ցավի ճիչեր։ Մի կողմում՝ անմեղ մարդիկ—կին, ծեր, երեխա. հայր ու որդի, մայր ու դուստր. զարհուրագին տագնապի ու խուճապի են մատնված, հեղձամղձուկ են լինում իրար վրա դիզված, այնպես որ՝

Որպէս ի գետ կամ ի ծովի,
Վերայ գըլխոցն լողային։

Մյուս կողմում՝ մի վայրագ պատկեր. այլազգիների բազմությունները հանգիստ սրտով և՛ կոտորում են, և՛ գեղեցիկներին ի գերություն ընտրում, իսկ սպանվածներին ու գերիներին կողոպտում, մերկացնում։ Կապուտ-կողոպուտ և՛ տներում, և՛ եկեղեցիներում։ Սեղանները կործանում են, խաչերն ու պատկերները ոտնատակ տալիս։

Իսկ ի՞նչպես է տոնում իր հաղթանակը ինքը Զանգի ամիրան։ Նա երգվում է չվնասել դղեկի մարդկանց. սրանք անձնատուր են լինում. բայց նա երդմնազանցությամբ կոտորում է նրանց։ Ապա ինքն իր մեծամեծներով և Մահմեդի պաշտոնյաներով, այսինքն հոգևորականներով նստում է եկեղեցիներից մեկի սեղանում, հարճեր է նստեցնում նույն տեղում և երգով գինարբուք է անում։ Նույն անառակ շվայտությունները կատարում են և ուրիշ եկեղեցիներում.

Գործ գարշութեան անդ գործէին,
Զոր ուսուցեալ էր Մէհմէտին.
Զոր և խոսիլն է աղտեղի,
Լըսելըն գարշ՝ սըրբասիրին։

Եկեղեցիներից մի քանիսն էլ, ասում է, դարձնում են ուղտերի և ձիերի տուն. մի քանիսի մեջ էլ բնակվում իրենք, «որ են վատթարք, քան զանբանին», եզրակացնում է բանաստեղծը։ Գերիներ են միմյանց բաշխում և գեղեցիկներին ընտրելով ուղարկում Խորասան՝ մեծ սուլթանին, ինչպես և խալիֆային։

6. Մահմեդականության և քրիստոնեության կռվի հիմնական պատճառը, մեղքը: Նոր հայացք: Երկբայություն:—*Արիստակես Լաստիվերտցին զարմանում էր, որ սելջուկյան թուրքերը, տարիներ շարունակ հայերի հետ իբրև դրացի ապրելով, դարձյալ շարունակ չարություն են խորհում հայերի համար: Շատ տարիներ հետո նորահասակ երիտասարդ Ներսեսն իր առաջին աշխատության մեջ այսպես է բնութագրում այդ այլազգիներին.*

Արեանարբուք գազանացեալ,
Զազիր գործովք անասնացեալ...
Սուրն անողորմ անօրինի,
Որ մեր արեանս է ի սովի,
Որ չէ յագեալ, և ո՛չ յագի
Մինչև ի գալ կատարածի:

Մահմեդականների և քրիստոնյաների կռիվն, ուրեմն, անվերջ պիտի լինի: Դրա հիմնական պատճառը նրանց տարբեր կրոնական հասկացության մեջ է գտնում Շնորհալին: Այս բացատրությունը շատ բնական էր այն դարերում: Բայց ինչո՞ւ տուժողը պիտի քրիստոնյաները, հայերը լինեն: Այս հարցի նկատմամբ մեկնաբան Շնորհալին, ցավոք, հին մեկնաբաններից դենը չի անցնում: Երբ նա Զանգի ամիրայի համար գրում է, թե «Խորհէր ջընջել զայլս [=զայլ քրիստոնեայս] որ կային», ապա անմիջապես ավելացնում է հետևյալը (էջ 69).

Ոչ գիտելով զայս չիմարին.
'Ի ոչ ըզմըտաւ ածել կուրին,
Թէ ո՛չ ուժով իւրոյ բազկին,
Կամ զօրութեամբ իւր պիղծ գընդին
Մատնեալ ի սուր 'ւ ի գերութիւն
Եղև Ուռհայ յառնուլ նորին.
Այլ իմ մեղացըն բազմութիւն,
Եւ յաճախել գործոց չարին.
Մատնեաց ի ձեռս անօրինին...

Եթե այսքանը միայն լիներ և սրա ետևից անմիջապես շարունակվեր 78-րդ էջի ութերորդ տողից՝ «Արդ մի՛ պարծիր, ո՛վ անըզգամ», ապա այդ և՛ բնական, և՛ գեղեցիկ կլիներ: Բնական կլիներ, որովհետև թեպետ այն դարերում կար վերածնության ոդու, նոր մտավոր հոսանքի ազդեցությունը, բայց հինը դեռ բոլորովին չէր բացասվել և չէր դադարել գոյություն ունենալուց, մանավանդ կրոնական աշխարհայացքի այնպիսի կարևոր մասը, որպիսին էր՝ աղետները համարել աստվածային պատիժ մեղքերի համար: Ուստի կարելի չէր, որ Շնորհալու նման մի խիստ բարեպաշտ և մեկնաբան եպիսկոպոս բովանդակությամբ հարուստ մի քերթված գրեր և այն գաղափարը մեջ չբերեր: Բայց որ նա հետո եր-

կար ու բարակ, ամբողջ 182 տողերի մեջ, Ս. Գրքից բազմաթիվ օրինակներ բերելով պաշտպանում է մեկնաբանների կարծիքը, այդ արդեն իր սառնությամբ և երկայնությամբ վնասում է երկի վայելչահյուս գեղեցկությանը. անբնական է թվում այդ լսել մի ողբացող կնոջից. այդպես հորինում է ոչ թե բանաստեղծը, այլ մեկնաբանը։

Այդ կտորը, սակայն, մի ուրիշ տեսակետով կարևորություն ունի. դրանով մենք տեսնում ենք հասարակության որոշ խավերի մեջ երևան եկած նոր հայացքը։ Շարագրության ընթացքից պարզ նկատվում է, որ այդ մեծ հատվածը հետո է ավելացրած։ Դրան առիթ տվողն եղել է մի շատ հետաքրքիր նոր մտածմունք, այն, որ երկբայության ոգին արդեն գործելիս է եղել. խոհուն մարդիկ սկսած են եղել կասկածել մեկնաբանների այդպիսի հին բացատրության ճշմարիտ լինելու և աստուծու դատաստանի իրավացի լինելու մասին.

Այլ գի ոմանք ընդդէմ բերին.
Եւ աստանօր հակառակին.
Ասին՝ զիա՞րդ իրաւացին.
Այս է վճիռ դատաստանին։

Մի՞թե բոլոր քրիստոնյաների մեջ նրանք են միայն մեղանչել, որ աստված նրանց է պատժել,—հարցնում էին մարդիկ.

Կամ թէ արդա՞ր արդեօք էին,
Որոց ի ձեռըս մատնէին,
Զանգի և իւրքն ամենեքին,
Որ ըզնոսա չարչարեցին։

Մեկնաբան բանաստեղծը, հարկավ, պիտի հանգստացներ այդպիսի հարցերով ղբաղվողներին, ասելով նրանց, թե աստված սաստիկ պատժում է այնպիսիներին, որոնց ամենից ավելի է սիրում, և պատժում է, ինչպես և աշխարհում վարվում են ոչ թե լավ մարդու, այլ «անարժան վերջին մարդոյ և դահճի» ձեռով։ Զանգին և իրայիններն, ուրեմն, մի պատժող գործիք են միայն, ինչպիսին են նաև կարկուտը, խիստ եղյամը, անչափ անձրևը, կամ անխոնավ երաշտը, մարախն և դաշտերն ապականող զղվելի մուկը,—մի հայացք և օրինակներ, որ գտնում ենք նաև մեր կլասիկ հեղինակների գրվածքների մեջ, ինչպես, օրինակ, նաև Մովսես Խորենացու մեծ Ողբի մեջ։ Այդպիսի «դահիճները» վերջն ավելի խիստ պիտի պատժվեն,—ասում է Շնորհալին։

7. Անեծքների շարանը։— *Արվեստի նկատմամբ որքան անհարմար է հիշված երկար մեկնությունը մեղքով, նույնքան պատշաճ և տեղին է շարունակության մեջ լսել որդեկորույս մոր բերանից թափվող սոսկալի սպառնալիքն և անեծքն, ուղղված Զանգիին։ Այդ մեծ հատվածի սկզբի մասի մեջ, որ հյուսված է մեկնաբանների վերևում բերված օրինակներով, դեռ համեմատաբար հանգիստ է խոսում վշտահար տիկինը։*

Հասարակության ներկայացուցիչ թշվառ կնոջ հոգին հետզհետե ավելի է լցվում ատելությամբ առ այն «արյունարբուները», և առանձնապես դեպի «Զանգին արիւնակեր», այնպես որ նա նույնիսկ եռում է կատաղի վրեժխնդրությամբ։ Եվ այդ ժամանակ խոսքի գյուտերն ու մեկը մյուսից ավելի չարաղետ պատկերները մեծ հորդությամբ ու թափով հաջորդում են իրար, ասես թե նրա բռնկած սրտի լրությունը դուրս թափելու համար։ Նրա սիրտը չի հովանում, մինչև որ Զանգիին ձգում է «ի հուրն անշէջ կիզողական», որ Հավիտյան «այրէ իսպառ, բայց ոչ ծախէ»։ Այդ ժամանակ, ասում է նա,

Ուրախ լիցին արդարք ի տէր,
Մինչ հատուցման լինին դատեր.
Զի ի յարեան մեղաւորին
Լուասցեն ըզձեռս որպէս յաղբեր.
Եւ ասասցէ մարդ՝ արդարև
Գոյէ աստուած իրաւաբեր։

Այս վերջին տողերով խոսում է դարձյալ հեղինակը. նա ակնարկում է վերևում հիշված երկբայողներին, որոնք իրավացի չեն համարել աստուծու դատաստանի վճիռը։

Դժվար է այստեղ անեծքի մեծ հատվածից (էջ 78—91) ընտրությամբ տողեր մեջ բերել. բուռն և ուժեղ են դրանք գրեթե բոլորը, շատ ազդու են և նույնիսկ ճնշող են չարաբաղձ արտահայտությունների կուտակությամբ.

. . . Աստուած իսպառ
Կործանեսցէ՝ զքեզ յաւիտեան.
Եւ խըլեսցէ՛ զարմատս քո,
Յերկրէ հանցէ՛ կենդանական.
Զարք ամենայն որք անիծան
Ի սկըզբանէ մինչ ի վախճան...
Վերագայցե՛ն քոյդ գազաթան...
Արդ՝ եղիցի՛ս դու հալածեալ,
Որպէս փոշի հողմով հոսեալ...
Եւ ճանապարհ քո խաւարեալ,
Յաջ և յահեակ զքև պաշարեալ...
Ի գուբ խորին ապականեալ
Իջցե՛ս դու անդրը կորուսեալ...
Սըրով արևրդ պակասեալ,
Լիցի՛ տանեաց խոտ ցամաքեալ...
Ընդ քեզ և ազգըդ կորուսեալ
Հագարացւոց լիցի՛ ջընջեալ.
Որդիք ձեր որք, կանայք գերեալ,

Լիցի՛ն մուրողք և տատանեալ...
Զինչս և ըզգոյս ձեր վաստակեալ
Առցե՛ն օտարք յափշտակեալ...
Ձեր յիշատակ յերկրէ բարձեալ...
Ի դառնութիւն դարձցի՛ն տարերք,
Ջրրհեղեղին ելցե՛ն գետերք.
Սեաւ ամպ մըթին կարկըտաբեր
Ձքեզ արասցէ՛ անպտղաբեր։

Եվ այսպես բազմաթիվ անեծքների մեծ շարք։ Այդ բոլորն ասվում է այն խոր համոզմունքով, թե խոսքի ուժը մեծ է, և անեծքն անպայման կազդի։ Նախնական հավատքը, ըստ որի թովում էին թոթովելով և անիծում չարաբանելով, շատ մեծ է եղել մեր ժողովրդի մեջ, և հաճախ դրա արտահայտիչն է եղել մեր գրականությունը։ Ըստ մեր հին «Վիպասանքի» Արտաշեսն անիծել է իր որդի Արտավազդին, նոր վեպով՝ Դավիթը՝ Մհերին, և այդ անեծքները, վեպերի ասելով, կատարվել են։ Այդպիսի մի անեծք է անում և Դավթակ Քերթողն իր գրած դամբանականի մեջ։ Դժբախտաբար այդ անահավատքը բավական դեր է կատարել նաև մեր ազգային պատմության նկատմամբ. իբր Մեծն Ներսեսի և ուրիշների անեծքները ծանրացել են մեր ժողովրդի գլխին։ Շնորհալին ևս հավատում է, թե նրանց անեծքների հետևանքով ասված բարկացել է՝ «Բառնալով զթագաւորութիւն և զիշխանութիւն [Հայոց] և մատնելով ի սուր և ի գերութիւն [զՀայս], և ցրուելով ըստ հրէական տոհմին ի տարկութիւն և ի ծառայութիւն ամենայն ազգաց»[56]։ Թեպետ մեր բանաստեղծը հավատում է անեծքի զորությանը, բայց չպիտի մոռանալ, որ այդ մեծ շարք անեծքները նրա իրեն կողմից չեն ասված։ Անշուշտ, նա համոզված էր, որ Զանգին և մյուս չարագործներն առանց անեծքի էլ կպատժվեն. նա կցանկար, որ բոլոր մահմեդականները քրիստոնյա դառնան, կամ քրիստոնյաները հաղթեն, և նրանց «վարեն [=քշեն] մինչ յայն կոյս անբնակ»։ Բայց որ նա «արիւնակերների» պատճառով ասեր Զանգիին իր կողմից նաև «Ընդ քեզ և ազգդ կորուսեալ, Հագարացւոց լիցի ջընջեալ», և ուրիշ մի երկու նման տողերը, այդ ընդունելի չէ։ «Յիսուս որդի» քերթվածի երգողը չէր կարող չլինել «հուման»—մարդկային և չքարոզել «հումանություն»—մարդայնություն, չլինել մարդասեր ու բարեգութ դեպի ամեն ոք, և անիծել անմեղներին։ Բայց եթե այդպիսի մի երկու տողը չեն հարմարվում մեր հեղինակի մեղմ ու բարի հոգուն, դրանք շատ բնական են վշտահար, որդեկորույս Որբևայրու համար, որի բերանով խոսում է և տառապած հասարակությունը։ Նա ոչ միայն Զանգիին պիտի անիծեր, այլև նրա ազգ ու տակը և ասեր նրան՝ քո արմատը (քոքը)

---

56 *«Թուղթ ընդհանրական», էջմիածին, 1865, էջ 425 և հետ. «Աւետնաբանութիւն» ասված ճառի մեջ։*

կտրվի։ Շնորհալին այդ տողերն էլ ասել տալով Որբևայրուն՝ ճշգրիտ հետևող է եղել իրականությանը. այլապես թերի կլիներ իր «տիկնոջ» կերպարը։—Բայց մենք շարունակենք։

Բարկացայտ և ցասումնալից անեծքներից հետո բանաստեղծը հորինում է մի զորեղ հակադրություն, որ իր կողմից բաց անելով անիծողի սրտի քնքուշ խորշերը՝ պարզաբանում է նրա անեծքների հիմքը։ Որդևկորույս մայրն առանձին զորովով ու գուրգուրանքով է վերաբերվում դեպի սպանված սիրասուն զավակները. և Քերթողը դրա համար ևս գտնում է պատշաճավոր ոճ, ծաղկալից, կոկ ու շնորհալի տողեր։

Բայց դու՛ք որդիք իմ սիրելիք
Ձէք ինձ մեռեալ, այլ կենդանիք.
Քանզի յերկրի հաւատացեալք,
Եւ ի յերկինըս պըսակիք։

Եվ նա, մայրը, խանդակաթ սիրով նկարագրում է իր զավակների համար մի բերկրալի տեսարան. նրանց հարությունն ու երանավետ կյանքն «անմահական դրախտում».

Յորժամ կենաց ցօղոյն արբջիք,
Վաղվաղակի բուսանիջիք,
Որոտ ընդոստ վերաբերիք...
Որպէս ծաղիկ բողբոջիցիք,
Սաղարթագեղ պաճուճիցիք.
Ծառըն կենաց մերձևալ հրպիք...
Աշխատեցեալք իբրև մըշակք,
Ի տապ տօթոյ աստ քըրտնեցիք,
Յորժամ հընձէք զոր ցանեցիք՝
Յանմահական դրախտին հանգչիք.
Ընդ զովարար տընկոյն նըստջիք,
Յաղբերէն կենաց արբջիք...
Անճառ լուսով լուսաւորիք,
Եւ թագ ի գլուխ պըսակեսջիք...

Նահատակվածների այդ «անճառ լուսով լուսավորվելը» պիտի լինի մնացողներին մխիթարություն։ Այդ էլ իրականության անդրադարձումն է— ամեն մահացածի համար մաղթել հոգու լուսավորում,—մի շատ հին կրոնական հավատալիք և բարքի գիծ, որի գերապրուկը հասել է մինչև մեր օրերը։

8. Քաղաքական լավատեսություն և լավ օրերի գեղեցիկ երազը։ Աշխարհիկ կյանքի ծարավն ու հաղթանակը բանաստեղծության մեջ։— *Քրիստոնյաների համար մի լավագույն բախտ է պահված երկրում. շուտով ամեն ինչ կփոխվի, ասում է մեր Քերթողը որդեկորույս կնոջ բերանով.*

Ահա սակաւ ինչ ժամանակ,
Փոխէ զայըզտոր ջուրն ի յըստակ.
Եւ տայ ըմպել դառնաճաշակ
Այնմ որ արբոյց ինձ դըժընդակ.
Զվերջին մըրուրըն կապուտակ
Արբուցանէ նըմին բաժակ.

Իսկ ինձ պայծառ և քաղցրունակ,
Զանմահարարն ըմպել վըտակ,
Ոչ թէ իմոյն միայն դիմակ,
Զոր ինչ հատոյց ինձ ձախողակ,
Այլ և եօթնիցըս չափ կըրկնակ
Բարձցի ի ծոց իւր հակառակ։

Իսկ ըզկապեալսդ որ էք ի փակ,
Արձակեսցէ տէր ընդարձակ.
Եւ զգերութիւնս իմ վտարակ
Դարձուցանէ այսրէն ի յարկ.
Մատնէ զգերիչս իմ ի յապտակ,
Սուր ՚ւ ի զընդան ձեր փոխանակ։

Շնորհալին չափազանց լավատես է ապագայի համար. նա անշուշտ լսած է եղել երկրորդ խաչակրության համար նոր պատրաստությունը Եվրոպայում։ Նա մեծ հույս ուներ, որ պիտի գան շուտով, հաղթեն մահմեդականներին։ Այս հույսը նրան ոգևորություն է պատճառում. նա խանդությամբ ցնծում է և գեղեցիկ տողերով ու մեծ աշխուժով նույնը հաղորդում է իր ժամանակակից ընթերցողներին.

Շարժէ կըրկին զազգըն ֆրանկ,
Անհուն հեծեալ և հետևակ։
Իբր ըզծովու ալեաց կուտակ՝
Բորբոքելով գան խիստ և բարկ.
Ափան ծովու աւզի գունակ,
Կամ զերթ աստեղք երկնից ի կարգ,
Լընուն զամէն երկրի յատակ,
Որպէս ըզձիւն ասրաքատակ։
Հընչեն զերթ հողմըն հիւսիսակ,
Զամպըն վարեն ըզհակառակ,
Մաքրեն զաշխարհըս բովանդակ,
Յանհաւատից առնեն դատարկ.
Զմահմետական ազգ հասարակ
Առնուն յաւար և յասպատակ.
Գերեն զխորինըն Խորասան,

Զ Բաբէլ[57] առնեն խիստ աւերակ...
Զ Մէջէ քակեն հիմն ի յատակ։
Զքարըն գլորեն ըզսևորակ,
Զըգեն կարմիր ծովուն յատակ։
Որպէս առիւծ ընդ նապաստակ՝
Զհետ մըտանեն նոցա երագ.
Կամ զերթ առիւծ գոչէ առակ,
Փախչին երէքն անհակառակ։
Այսպէս ջընջին նոքա իսպառ
Ի սուր սուսեր ՚ւ ի տէգ նիզակ.
Եւ զայլն առնեն փախըստական,
Վարեն մինչ յա՛յն կոյս անբընակ։
Առնուն ղծառայս և զաղախնեայս,
Զկանայս նոցա և ըզզաւակ.
Տիրեն ամէն երկրի ծագաց,
Եւ յընդհանուր կողմն աշխարհաց.
Քրիստոնէից հանուր ազգաց
Փըրկիչ լինին յանօրինաց։

Ահա թե ինչպես է մեր բանաստեղծն անդրադարձրել խաչակրաց արշավանքների իրականությունը, կարծելով թե նրանք գալիս են իրոք արևելյան քրիստոնյաներին օգնելու և նրանց փրկելու մահմեդականների ձեռից։ Բայց նրա լավատեսությունն այդքանով չի սահմանափակվում։ Հովհաննես Սարկավագն իր գրած աղոթքով, ինչպես վերևում տեսանք, խնդրում է աստծուն, որ արտասվահոս տրտմությամբ վտարված ու ցըրված ժողովուրդը ժողովվի ուրախությամբ և փրկվի. նույնը Շնորհալին երևակայում է այդքան շատ շուտով կատարելի, նույնիսկ ավելի շուտ քան մի տարի («Զի չէ ամով այս լինելոց»), և այդ մասին բանաստեղծությամբ ավետում է.

Գան ժողովին յամէն կողմանց,
Ուր հալածեալ են և ցրուած...
Յայնժամ որդիքդ իմ հեռացած,
Որ այժմ չինէն էք բաժանած,
Գայք ի վերայ բարձեալ կառաց,
Պալարակապ երիվարաց.
Որք ցրուեցայք յամէն կողմանց
Զորեքծագեան տիեզերաց.
Ի գաւառաց հեթանոսաց,
Եւ յաշխարհաց Պարսից, Թուրքաց։

---

57 *Բաբէլ, Բաբելոն են կոչում հռճախ Բաղդադ քաղաքը։*

Պիտի գան ժողովվեն աշխարհի բոլոր կողմերից, և ի՜նչ ուրախություն է որդեկորույս մոր համար. բայց այդքանը միայն չէ.

Լինի աշխարհ քրիստոնէից
Անչափ ՚ւ անբաւ բալեօք լըցած։
Լինի առատ պըտուղ բազմաց,
Սերմանց ՚ւ ամէն պըտղաբերաց.
Մարդիկ ցընծան ղուարճացած,
Յուտել յըմպելըն պարարած.
Որք վա՜յ ասեն, վա՜յ մեռելոց,
Եղուկ կարդան գերեզմանաց,
Թէ է՞ր չհասիք յօրըս կենաց,
Յանգիստ բարիս հասարակաց։

Ահա թե ի՜նչ է տենչով երազում մեր բանաստեղծը։ Հարկավ, նա չի մոռանում եկեղեցու վերստին պայծառացումը, բայց էականն այդ չէ։ Նա մեծ կրոնասեր լինելով հանդերձ՝ չի քարոզում «Մի՜ կալ հակառակ չարին» սկզբունքը. այլ, ընդհակառակն, սիրում է քաջությունը, քաջամարտիկ կռիվն այլազգի թշնամիների դեմ՝ նրանցից պաշտպանվելու համար։ Նա համոզված է, թե մահմեդականության և քրիստոնեության կռվի մեջ պարտությունը մահմեդականներինը պիտի լինի։ Եվ ինչ որ կարևոր է՝ քրիստոնյաները պիտի հաղթեն ոչ թե հին կրոնա-ճգնավորական ոգին զարգացնելու, աշխարհն ունայն համարելու և մերժելու համար, այլ ուրախ-զվարթ կյանք վարելու, լավ հագնվելու, ուտել-խմելու և նույնիսկ պարարվելու։ Շնորհալու ստեղծագործությունն, ուրեմն, լի է կյանքի ծարավով, իբրև արտահայտություն և՛ իրեն հեղինակի, և՛ իր ժամանակի հասարակության բաղձանքի։ Այսպիսով վերջ է տրվում նարեկյան խիստ կրոնա-ճգնավորական հայացքին մեր բանաստեղծության մեջ, միաժամանակ և սկիզբն է դրվում մի քաղաքական գեղեցիկ երազի—արևելյան քրիստոնյաների լավ օրեր և վերածաղկում եվրոպացիների օգնությամբ։ Բայց Շնորհալին դեռ չունի բուն հայրենիքի, մայր Հայաստանի անկախության, Հայոց թագավորությունը սեփական երկրում վերականգնելու երազը։ Նա դարձել է երգիչ իր շրջանի արևմտյան հայության սպասելիքների և ընդհանրապես այն ժամանակվա դրության, որի մեջ ապրել է ինքը։ Միաժամանակ և նա դեռ 12-րդ դարում բանաստեղծել է խաչակրության մասին, այն՝ որ մեր «Եդեսիոյ ողբի» հորինումից չորս հարյուր տարի հետո ծնված իտալացի բանաստեղծ Տորկվատո Տասսոն պիտի երգեր իր «Ազատված Երուսաղեմ» հռչակավոր վիպական քերթվածի մեջ։ Արդարև մեր բանաստեղծի երկի նյութը խաչակրության շրջանի մի միջադեպ է միայն, քրիստոնյաների համար մի դժբախտ եղելություն, բայց նա ոչ պակաս ուժով նկարագրել է ռազմական իրականության այդ փառավոր կտորն ևս։

Եվ այսպես՝ Ներսես Շնորհալու ձեռով հմտորեն կիրառվել է նրա

ավագ ժամանակակից Հովհաննես Սարկավագ Վարդապետի տեսությունը, թե բանաստեղծությունը հետևում է բնությանը, որ է՝ իրականությունը։ Դժվար է կարծել, թե նա ծանոթ չլիներ Սարկավագի աշխատություններին, զի այն շրջանում արևելյան և արևմտյան վարդապետները, թեև քաղաքականապես բաժանված, բայց միմյանցից կտրված չէին։ Արևելքից միշտ երթևեկել են Հայոց կաթողիկոսարանը, որի նշանավոր եպիսկոպոսն էր Ներսեսը։ Բայց եթե սա տեղյակ էլ չլիներ Սարկավագի տեսությանը, կարող էր նրանից անկախ ևս արտահայտիչ լինել նույն հայացքին. ժամանակի ոգու պահանջն էր այն։ Նա անդրադարձրել է աշխարհիկ իրականությունը, հարկավ, ոչ բոլոր կողմերով, այլ այն միայն, ինչ որ չէր կարող պարսավվել «անդուռն բերաններից», քանի որ այն դարում շատ բան դեռ անպատշաճ էր համարվում մի հոգևորականի համար։ Բայց ինչ որ նա երգել է վեհ ներշնչումով ու ոգևորությամբ, դա մաքուր իրականություն է առանց գերբնական ուժերի և էակների մասնակցության, որին հավատում էին այն դարի մարդիկը, որով և լի է խաչակրության քերթող իտալացի բանաստեղծի նշանավոր երկը։ Որ մեր բանաստեղծը հեռու է այդպիսի վիպական հրաշալիքներից, դրա մեջ հենց պետք է տեսնել նոր մտավոր հոսանքի հաղթանակը։ Մեր բանաստեղծությունը 12-րդ դարի կեսին արդեն երկնքից իջել էր երկիր և դարձել կյանքի և բնության դեղեցիկ արտացոլումը ոչ միայն իր ընդհանուր էությամբ, այլև բովանդակության մանրամասներով, ինչպես և բնական ու պարզ ձևով, շնորհալի Քերթողի փափուկ, տրտմական կամ լուրջ հույզով և անուշ, սրտաշարժ շեշտերով, որոնց ստեղծողը բնավ չէր դիմում արվեստակյալ պերճության ու փայլի, ավելորդ զարդարանքների։ Ամեն ինչ թեթև ու ճաշակավոր, անբռնաղբոս ու կենդանի։

ԱՐՁԱԿ ԳՐՎԱԾՔՆԵՐԸ

1. Ատենաբանություն։ — *Շնորհալին իր գրական երկերը հորինել է ոտանավորով. արձակ լեզվով գրել է միայն պաշտոնի վերաբերյալ գործերը։ Բայց վերջիններս էլ իրենց տեսակի մեջ որոշ չափով գրական, ավելի ևս պատմական արժեք ունեն։ Դրանցից ժամանակով առաջինն է «Ատենաբանությունը», որ նա ասել է իր կաթողիկոս ձեռնադրվելու առթիվ բազմության առաջ*[58]։ *Անում է իր նախորդի, իր կաթողիկոս եղբոր, Գրիգոր Պահլավունու գովքը՝ թվելով նրա արժանիքները, նվաստացնելով և ամբաստանելով իրեն։ Գիտակցելով իր նոր վեհ պաշտոնի ծանր պարտականությունները՝ շարունակ համեստությամբ շեշտում է իր անարժանությունը։ Նկատի ունի նաև ժամանակի ծանր դրությունը։ «Զարհուրիմ երկիւղիւ նայեցեալ յիմս տկարութիւն և ի մեծի այսր աստիճանի բարձրութիւն և ծանրութիւն, մանաւանդ ի չար և յանմաան բա-*

58 Ներսէս Շնորհալի, *Թուղթ ընդհանրական, էջմիածին, 1865, էջ 411—426։*

րեաց ժամանակիս, որք ոչ միայն յարտաքնոցն որք հակառակ են հաւատոյս՝ նեղեալ տագնապիմք ըստ մարմնոյ, և աղաւաղին կարդ եկեղեցւոյ, այլ և անուամբ քրիստոնէից. նաև յորոց կցորդ են կարգի մերոյ և ձևոյ, որք յաղագս փառամոլ ախտի հակառակ գտեալք աստուածոյ և աստուածայնոյ աթոռոյս ի սկզբանէ հայրապետութեանս տեառն մերոյ մինչև ցայժմ՝ որպէս ծանօթ է ամենեցուն, և զազատեալս ի Քրիստոսէ զեկեղեցի սուրբ ընդ հարկաւ արարին անօրինաց՝ կամաւ և ո՛չ ի հարկէ» (էջ 421)։ Դժվարություններից մեծն այն է, որ հայ ժողովուրդը, ասում է նա, «ոչ ի միում աշխարհի բնակեն՝ որպէս այլոց ազգաց, զի դիւրին էր շրջել առ նոսա առաջնորդացն և սերմանել զբանն, այլ ըստ մեղաց մերոց ցրուեալ են ազգ մեր և ժողովուրդք ընդ ոլորտս տիեզերաց ի մէջ օտարասեռ ազանց։ Նաև աթոռս սուրբ դրդուեալ է ի հաստատութենէ ի զանազան և յանպատշաճ վայրս տարբերի ընդ հարկաւ և երկիւղիւ այլասեռից և անօգնական և աննուէր ի մերասերաց, որում ոչ է կար համարձակ շրջել և ուսուցանել, այլ թագնաբար լինել որպէս զվնասապարտս» (էջ 422)։ Վերջաբանի մեջ նա մի ցանկություն ունի, որ աստված համի «փրկել զմեզ... և դարձուցանել զամենեսեան յաշխարհն հայրենի... յարուցանել թագաւոր արդար»։ Ահա նրա աղոթքն ու փափագը։

Ով սիրում է ճոճոան ֆրազներ, այնպիսուն հաճելի չի լինիլ այս ատենաբանությունը, որ վսեմ է իր պարզությամբ, աղդու է ոչ թե արտաքին ձևով, այլ ջերմ ներքինով, որ բխում է ջերմ սրտից։ Մեկ-մեկ բանեցնում է երկար ասացվածքներ, բայց ընդհանրապես շատ հասարակ, իսկապես մեկին ոճով մի հորինվածք է դա, առանց որևէ ճարտասանական ճոռոմ զարդարանքների, կիրառում է հարցումներ և շրջումներ միայն և սակավաթիվ պատկերավոր ձևեր։ Բայց դրանց փոխանակ՝ նրա ճառն ուժեղ է տրամաբանությամբ, մտածության կապակցված ու կարգավորյալ ընթացքով, որ այսպիսի խոսքերի համար անհրաժեշտ պայման է։

2. «Թուղթ ընդհանրական»։—*Գրա-պատմական և բանաստեղծի կենսագրության կողմից ավելի արժեք ունի Շնորհալու այս թուղթը, որ ուղղված է բոլոր հայերին*[59]*։ Սկզբում հայտնում է իր կաթողիկոս ընտրվելն և կաթողիկոս եղբոր մահը. «Ինքն... եհաս անվնաս յանքոյթ և յառանց ալեաց նաւահանգիստն, և զմեզ եթող ի տաժանելի և յաղցաւոր կեանս ի մէջ օձից և կարճաց և զանազան խածանօղ գազանաց, երևելեաց և աներևութից, և ոչ այս միայն, այլ ծանրութեան բեռանց ի ներքոյ՝ հոգևորաց և մարմնաւորաց»։*

---

59 *Անդ, էջ 1—112. «Թուղթ ընդհանրական ներսէսի կաթուղիկոսի Հայոց առ համօրէն հայասեռ ազինս»։ «Ընդհանուր հաւատացելոց հայկականացդ սեռից, որք յարևելս ի սեփհական աշխարհդ Հայաստանեայց բնակեալք, և որք յարևմտեան կողմանդ սահեալք նժդեհութեամբ, և որք ի միջերկրեայս՝ ի մէջ այլալեզու ազանց տարաբերեալք, և որք յհիւրաքանչիւր յեզերս աշխարհաց ըստ մեղաց մերոց ցրուեալք ի քաղաքս և ի դղեակս, ի գիւղս և յագարակս»։*

«Օձ, կարիճ ու գազան» կոչում է նա Հռոմկլեան շրջապատող այլազգի բռնակալներին։ Ուրիշ տեղ էլ[60] նույնպես գրում է, թե կաթողիկոսը մեռնելով իրեն թողել է «ի ծովու աշխարհի և շուրջ եղելոց օձից և կարճաց» և վերջում հիշում է իր նեղությունը, ասելով, թե եկողները կպատմեն ձեզ «զմարմնաւոր կրից մեր տաժանումն՝ զոր ունիմք ի շուրջ եղելոցս զմեօք»։ Հայտնելով, թե ի՛նչ է իր պարտականությունը՝ խորապես ցավում է, որ «շրջել առ ամենեսեան՝ ընդ ամենայն կողմանս աշխարհի, և քարոզել... անկարելի է յաղագս ժամանակիս չարութեան և բազմիշխանութեան։ Եւ քաղաք թագաւորական և բազմաժողով ո՛չ գոյ ազգի մերում, որպէս զի անդանօր նստելով յԱթոռ հայրապետութեան և վարդապետութեան՝ ուսուցանէաք ժողովրդեան մերոյ»։ Շատ դժվար է եղել կաթողիկոսարանի, ինչպես մեր բանաստեղծի նյութական կացությունը ծերության օրերում։ «Այլ եմք իբրև զայծեամն յորսորդաց և ի շանը փախուցեալք ի քարանձաւիս յայս բնակելով,—գրում է նա,—յորում ո՛չ և մարմնական հարկաւոր պիտոյիւք շատացեալք ի գիւղից կամ յագարակաց, յորոց ունիմք և ո՛չ մի։ Նաև ո՛չ անդաստան հողոյ, զի վաստակօք և աշխատութեամբ զպէտս մեր լնուաք, և ո՛չ օգնութիւն ուստեք, որպէս արժան էր, ի թագաւորաց և յիշխանաց»։ Չկարողանալով անձամբ «խրատել և ուսուցանել», ասում է նա, «մեք իբրև ի կամաւոր բանտէ և կապանաց՝ յայսմ տօթագին քարանձաւի արգելեալք՝ գրով ձեռին մերոյ խօսիմք՝ որպէս բերանով՝ ընդ ամենեսին»։

Նրա այս գրությունը շատ հարուստ ու բազմաբովանդակ է։ Խրատների մի մասն, իհարկե, սովորական ընդհանուր տեղիք են, բայց շատը շոշափելով ժամանակակից իրական կյանքի այլ և այլ կողմերը՝ տալիս են մեզ բարքերի ընդարձակ պատկեր։ Սկզբում գրում է դավանաբանական խնդիրների և կրոնական դիտելիքների մասին, որոնք, որովհետև Շնորհալու գրչից են ելել՝ ապագա դարերի համար ևս արժեքավոր են հղել։ Ապա խոսքն ուղղում է ժողովրդի զանազան դասերին՝ կրոնավոր, վանահայր, առաջնորդ, քահանա, իշխան, զինվոր, քաղաքացի, երկրագործ և ամենից վերջը՝ կանայք։ Այս ամեն ինը կարգի մարդկանց տալիս է իրենց վիճակին համապատասխան խրատներ։ Կանանց, օրինակ, պատվիրում է «պարկեշտութեամբ և բարեձևութեամբ լինել յամենայնի... և առաւել քան ոսկւով և արծաթով՝ ամօթխածութեամբ և պատկառանօք զարդարել զանձինս»։ Անմիտ երիտասարդներին գայթակղեցնելու համար ներկերով չայլագունել իրենց երեսի գույնը. կավատությամբ չպարապել, հետևող չլինել կախարդության և դեղատվության աղանդներին։ Այս մասին հիշում է նա իր նամակներից մեկի[61] մեջ ևս. «Կանանցն պատուէր տուք,—գրում է նա Թորոս քորեպիսկոպոսին,—ի կախարդու-

60 Անդ, էջ 148—162. «Պատասխանի առաջին թղթոյն թագաւորին Հռոմոց Մանուէլի»։

61 Անդ, էջ 315. «Թուղթ ի Սամոսատիա քաղաք յաղագս արևորդեաց դարձի», էջ 308 և հետ.։

թենէ և ի դեղատուութենէ և յամենայն դիւական աղանդաւորութենէ ի բաց կալ»։ Արժանի չհամարել քրիստոնեական թաղման «նոյնպէս և որ զպիղծ և զաղտեղի իրս ի կերակուրս և յըմպելիս խառնեալ՝ տայ ուտել քրիստոնէի վասն դիւական սիրոյն [=սիրահարեցնելու համար]... զգուշացուցէ՛ք զնոսա յամենայն ի յայսպիսի բժժագործութենէ»։

Երկրագործներին ու բոլոր ժողովրդականներին խրատում է՝ չապականվել «պղծալից պոռնկութեամբ և շնութեամբ», չհարբել գինով, «յորում դեղխութիւն և յիմարութիւն է, որ է մայր պոռնկութեան և անիրաւութեան և վիճման և աղտեղի բանից անարգանաց, յորմէ և սպանութիւնք լինին»։ «Դարձեալ,—ասում է,—մի՛ զլեղուս ձեր առնէք գործի սատանայի ի ձեռն չար և դառն յիշոցաց, մանաւանդ որ զհաւատ և զհոգիս անարգեն, և զմկրտութիւն աւազանին և զմկրտիչ քահանայն և զերես և զբերան»։ Ապա դարձյալ՝ պատվիրում է կրթել մանուկներին և ուսում տալ նրանց. «Սաստեցէ՛ք չսովորել ի խօսս աղտեղիս և ի յիշոցաւտութիւնս»։ Այսպես խրատում է ըստ պատշաճին նաև քաղաքացիներին, զինվորներին, իշխաններին։

Հոգևորականների բարոյական և ուսումնական վիճակն անպայման ավելի ծանոթ է եղել Շնորհալուն, և նա երկար ուսուցանում ու խրատում է նրանց. իսկ մենք նրա «Ընդհանրականով» բավական ծանոթանում ենք նրանց, ըստ եկեղեցական հայացքի, ընկած բարքերին։ Տեսնենք այդ մի փոքր մանրամասն, քանի որ նրանց այդ դրությունը կարևոր է գրականության պատմության համար։ Կրոնավորների կյանքի մեջ արդեն մեծ փոփոխություն էր կատարվել. այլևս չկար Ստեփանոս Տարոնեցու նկարագրած անընչասեր և անստացված աշխարհուրացությունը։ Ընդհակառակն, նրանք առհասարակ արդեն բռնել էին, այսպես ասած, աշխարհականացման և աշխարհասիրության ուղին։ Վանք, անապատ քաշվելով հանդերձ՝ կրոնավորները չէին կտրվում երկրավոր ցանկություններից և միշտ ետ էին նայում դեպի աշխարհը։ Հետաքրքիր է այն, որ կրոնավորությունն արդեն դարձած է եղել հարստացման միջոց։ «Բազումք են ի ժամանակիս կրօնաւորաց, որ յաշխարհի առանց ժառանգութեան էին, և հարկատուք իշխանաց, և աղքատք ի գոյից, և կարօտք հարկաւորացն. և յորժամ ղձն կրօնաւորութեան ընկալան՝ տեարք եղեն ի վանորայս բազում ժառանգութեան, և փարթամացան ստացուածովք. և ոչ միայն հարկաւոր պիտոյիցն եղեն անկարօտ, այլև աւելորդօքն լցան, և յաշխարհի հոգովք և երկօք տաժանեալք, և աստ անհոգողութեամբ և հեշտութեամբ ստուարացեալ»։

Այսպես հարստանում էին նրանք, որովհետև վանքերում ապրելով փոխանակ հասարակաց աշխատանքին մասնակցելու՝ իրենց առանձին սեփական տնտեսություններն ունեին և դրանցով էին պարապում՝ «ի չիւրեանց առանձնական գործս արի և արթուն լինելով, և ի հասարակացն՝ հեղգ և պղերգ»։ «Զգուշացուցանեմք,—գրում է Շնորհալին,—զձշմարտագունիցդ երամս՝ յաղագս նոր եղելոյ սովորութեանդ ի վանո-

րայս ի մերում ժամանակի, այգեգործ իւրաքանչիւր ոք լինելով ի կրօնաւորաց, որպէս ի դէօղս, որ անվայելուչ է կրօնաւորական կարգի»։ Մեր կրոնավորներն,—ասում է նա,—իրար նախանձում են, «թէ ո՞վ քան զընկերս յընդարձակագոյն տեղւոջ և ի պարարտ երկրի տնկիցէ այգի, և թէ՝ զիա՞րդ սնուցանիցէ իմաստութեամբ զնորագոյն տունկսն։ Եւ փոխանակ զարուեստս առաքինութեան ուսանելոյ ի միմեանց՝ յայգեգործութեան հնարս վարժին անհմուտք ի հմտագունիցն։ Արժա՜ն է, ասեն, այսպիսի օրինակաւ վաստակել եզամբք, և բրել ձեռամբ՝ փայտատօք և բահիւք, և հակառակ տնկոցն զարմատս և զբոյսս արմատաքի խլել ... Այլ և հատանելոյն օրինակ զանազանեալ է՛ իւրաքանչիւր տնկոյն սեռից առ իմաստունսն յայնոսիկ, ղի զոմանս հուպ յարմատսն, և զայլսն ի բացեայ հատանեն. յոմանս սակաւ ղուռսն, և ի կէսս յոլովագոյնս թողուն, և այս ամենայն՝ որպէս զի յաճախագոյնս պտղաբերեսցեն, և յոլովս զգինւոյն չափոյ աճեցուսցեն զթիւս։ Թողից ասել զպատուաստելոյն հնարս, մի քան զմի առաւելեալ ի հանճար, և զգործելոյն եռանդն ջերմութեան, զի ոչ զտիւն ոմանք բաւական համարին ժամանակ գործելոյ, այլ և զգիշերն ևս խառնեն ընդ տունջեանն»։ Այսպէս մի ամբողջ արվեստ և ուսում այգեգործութեան, որով պարապել են կրոնավորները։ Շատ բնական է, որ այդպիսիների ուշ ու միտքն իրենց սեփական գործին է եղել։ Երբ այլ և այլ տեղերից իրար հանդիպում են այգետեր կրոնավորները,—ասում է նա,—նրանք իրար ողջունելուց հետո՝ ոչ թէ կրոնավորական գործի մասին են հարցնում միմեանց, «այլ թէ յայսմ ամի, ո՛վ եղբայր, զիա՞րդ է պտղաբերութիւն քոյին տնկոցն. առաւե՞լ է՝ թէ նուազ։ Եւ նա թախծեալ սրտիւ պատասխանէ՝ զինչ ասացից, ասէ, զաղէտսն որ պատահեցան. զի ոմանք ի ճճեաց վնասեցան, և յոմանց ծաղիկքն թոթափեցան, և այլքն արևակէզ եղեալ ողկուզաց չորացան, և կէսք՝ նեխութեամբ ապականեցան, և թէ զի՞նչ արարից՝ անգիտանամ զելս վտանգիս եղելոյ։—Եւ ընկերն թելադիր եղեալ նմին՝ խրատ տայ, զոմանս պատուաստել ի տնկոցն՝ որք պտղակորոյսք լինին, և զայլսն՝ զանազան փորձեալ հնարիւք բժշկել ի պատահելոց կրիցն» (էջ 28 և հետ.)։

Այս բոլոր աշխատանքն անում էին կրոնավորները, որպեսզի շատ գինի ստանան և «ագահութեամբ և որկորստութեամբ» ապրեն, և ոչ թե, ըստ կանոնի, բավականանան «միաբանական կերակրով և հանդերձով». նրանք նույնիսկ արբեցություն էին անում։ Գինին վաճառելով էլ էին պարապում և արծաթ ամբարում, կամ թե կրոնավորին անվայել «լուծ և մեղկ կյանք» էին վարում։ Այդպիսիները թողնելով ընկերակից կրոնավորների կենակցությունը՝ առանձին էին բնակվում, «ոչ յաղագս ճգնողական վարուց՝ որպէս միայնակեացք, այլ վասն ագահութեան ախտի, զի զանձին իւրոյ աշխատութիւն ոչ հասարակաց եկեղեցւոյն, այլ իւր միայնոյ ամբարիցէ... Զի առ բազումս,—ավելացնում է Շնորհալին,—քան զերկիւղն աստուծոյ առաւել զօրէ ընկերակցացն ամօթոյ երկիւղ, յետս դարձուցանելով զյօժարութիւն մտացն ի չար ցանկութեանց մեզացն

կատարմանէ»։ Դրանք, այդ թաքուն մեղք գործողները, դեռ համեմատաբար լավերն են եղել։ «են ոմանք դարձեալ յաշխարհասէր և ի մեղկ կրօնաւորաց,—շարունակում է Շնորհալին,—զի ... անձամբ իսկ ընդ աշխարհականս բնակեն ի գիւղս և ի քաղաքս և ի բանից բերանոյ գարշութիւնս և ի գործս վատթարութեան, և յորովայնամոլութիւնս անպատկառս և յարբեցութիւնս անառակս, և յամենայն անկարգութեանց բերմունս՝ առաւելուն քան զնոսա» (էջ 26)։ «Դիվական երգերն» էլ պակաս չեն եղել այդպիսի կրոնավորների բերանից։

«Եւ քանզի ի նիւթականաց ցանկութիւն զբազումս, ի կրօնաւորաց ժամանակիս տեսանեմք ըմբռնեալս, որք զթեթևանալն յայսպիսի ծանրութեան հոգոց՝ դժուարինս վարկանին», ուստի, ասում է Շնորհալին, «և մեք ոչ դնեմք օրէնս՝ այսպիսի կրօնաւորաց ամենևին ի բաց կալ ի տնկագործութենէ և յամենայն գոյից ստանալոյ»։ Նա լավ գիտե, որ այնպիսիներն իրեն չե՞ն լսելու. ուստի պատվիրում է, որ նրանք գոնե իրենց նկամուտներից մաս հանեն աղքատների ու կարոտների համար, այն էլ իրենց ձեռով և ոչ թե մահից հետո ուրիշների միջոցով։

Կրոնավորների ուրիշ պակասութիւններ էլ թվում է կաթողիկոսը։ Ինչպես, օրինակ, չնչին պատճառով նրանք թողնում են իրենց եղբայրակիցներին ու շրջում են վանքից վանք։ Հենց որ նրանց մի նկատողություն են անում իրենց անպատշաճ գործերի կամ խոսքերի համար՝ գիշերը թողնում, փախչում են։ Գողութիւն են անում, «այլ և ստութիւն վասն գողութեանն. ոչ լոկ բանիւ, այլ և մեծամեծ երդմամբ ուրացութիւն», և նմաններըը։ Եվ սակավ չեն եղել ստահակները. «Յազգի մերոյ կրօնաւորաց զբազումս տեսանեմք անհրահանգս և անխրատս և անհնազանդս աւազագունից, և գրեթէ զբովանդակն բաց ի սակաւուց» (էջ 39)։

Թողնում ենք վանահայրերի և աշխարհի եպիսկոպոս առաջնորդների համար գրվածները։ Բերենք մի քանի բան քահանաների վերաբերյալ։ Կան քահանաներ,—ասում է,— որոնք, ինչպես լսում ենք, «յառաւօտէ մինչև ցժամ պատարագին ի վաճառափողոցս քաղաքին շրջին ի տուրեվառութիւն վաճառաց». կամ հասարակաց զբաստներով և աղտեղի տրեխներով ելնում են բեմ և պատարագ անում. եկեղեցիների պայծառության և ընդհանրապես մաքրության հոգ չեն տանում, վարում են զանազան աշխարհիկ պաշտոններ, և այլն։ «Լսեմք զոմանց քահանայից ձիավարժս լինել և ղէնս առնուլ ըստ զինուորաց, և ի խրախճանութիւնս խաղուց ձիընթացից ընդ նոսին արշաւել երիվարօք և ի յորս երէոց և ի նետաձգութիւնս և յամենայն ինչ յայսպիսիս» (էջ 89)։ Վիճակավոր առաջնորդ եպիսկոպոսներին էլ պատվիրում է՝ «Ո՛չ սրընթաց ձիովք շահատակել, և շամբք և բազէիւք որսականօք բերիլ առ երէվայրիս և թռչունս, որպէս լսեմք զոմանց թէ իցեն»։ Դրանք եպիսկոպոս լինելով հանդերձ՝ չեն տարբերվել աշխարհական տերերից, և նրանց «բանք բերանոյն» եղել են «անմտաբար խեղկատակութեամբ կամ աշխարհօրէն զառականս կամ զանկածութիւնս ի լեզուն յեղյեղլով անարգել զոք» (էջ 57)։

Այսպես՝ Ներսես Շնորհալու «Ընդհանրական թղթից» իմանում ենք, որ հոգևորական դասի հասկացությունների ու կենցաղի մեջ արդեն մեծ փոփոխություն էր մտել. 12-րդ դարի կեսերին կրոնավորությունն անգամ ձև էր դարձած: Այս փոփոխությունը կաթողիկոսը բացատրում է ժամանակի թշվառությամբ, աղքատությամբ, «յաղագս ամեն գոլով ի բարեաց՝ ժամանակիս», որ նա շեշտում է հաճախ (էջ 48, 50, 52, 65): Նաև ուրիշ թղթերի մեջ (օրինակ՝ էջ 309. «ի նուազեալ բարեաց ժամանակս մեր»): Այդպես չէր առաջ, ասում է նա. Հայաստանյայց եկեղեցիները պայծառ էին սկզբից «մինչև յաւերումն աշխարհի ի հիմանց»: Որ հին բարի ավանդություններին հակառակում են, դրա պատճառն ուրիշ բան չէ, «քան թէ տգիտութիւն և ինքնօրէն անձնահաճ կամապաշտութիւն՝ որք ո՛չ տեսին զառաջին պայծառութիւնս, մինչ ողորմութեամբ տեառն լի էր երկիր, այլ ի հալածանացս ծնեալ ժամանակի ընդ խրթնատեսակս նայեցան տգեղութիւն, որովք կապեալ են յամենայն ուրեք ազգ մեր յաղքատութեան, որպէս ընդ երկաթոյ ի ներքոյ լծոյ ծառայութեան իւրաքանչիւր ազգաց՝ ուր և իցեն. ոյք և հարկաւոր պիտոյիցն կարօտ են ըստ մարմնոյ, թող թէ պայծառութեան եկեղեցւոյ ի խնդիր» (էջ 71): Շնորհալու հիմնավորումը ճիշտ է մասամբ, ինչ որ եկեղեցիների բարեզարդությանն է վերաբերում: Թե չէ՝ կրոնական ոգու թուլացումը, որ սկըսված էր արդեն 11-րդ դարից, բնական զարգացման հետևանքով առաջատվությամբ շարունակվել է մինչև 12-րդ դարի կեսերը և հետո մինչև 17-րդ դարը, աղդելով նաև մեր գրականության զարգացման ընթացքի վրա:

Ներսես կաթողիկոսի այս մեծ գրությունը որքան իր բովանդակությամբ շատ կարևոր պատմական փաստաթուղթ է, նույնքան և արժեքավոր մի գրական երկ է: Իբրև բանաստեղծի գործ՝ դա բնականաբար հորինված է գեղեցիկ ձևով, հեղինակին հատուկ հաճելի ոճով: Մարդ այդ կարդալով՝ երբեմն հրապուրվում է նրա կարգավորյալ ու թեթև, միաժամանակ և հաճախ պատկերավոր մտածությամբ: Նա միտքն արտահայտում է սովորաբար կարճ ասացվածներով, հստակ ու սրտալի խոսքերով, խուսափելով բառերի և քերականական ձևերի կրկնությունից: Ջի մոռանում իր աստիճանին պատշաճ խրատական եղանակը. զրուցում է մեղմ, հանդարտ ու ծանր. ոչ հրամայողաբար, ոչ ինքնագով մեծամտությամբ, այլ համեստաբար, իբրև էլ ոչ արդար համարելով: Ոչ մի շինծու խոսք չկա. հաճախ խոսում է մեկնաբան Շնորհալին: Գործածած նմանությունները մեծ մասամբ ոչ թե բանաստեղծական պաճուճանքի համար են, այլ միտքն օրինակներով հեշտ հասկանալի և համոզիչ դարձնելու: Բայց դրանք միաժամանակ և առանձին համ ու հոտ են ընծայում նրա խոսքին: Այսպիսի դեպքերում երբեմն, ինչպես ներքևում բերված հատվածների մեջ, ասացվածները բավական ընդարձակվում են միջանկյալ խոսքերով, բայց մեծ մասամբ չեն կորցնում իրենց հեշտ հասկանալիությունը, որովհետև հեղինակը չի մոռանում խոսքերի կապակ-

ցությունն ու մտածության թելը։ Շատ բան, անշուշտ, Ս. Գրքի և ուրիշ կրոնական գրվածքների խոսքերով և օրինակներով է համեմած, ինչ որ անհրաժեշտ էր ըստ ժամանակի պահանջի։ Բայց պակաս չեն և իր սեփական գյուտերը, բնությունից և կենդանի իրական կյանքից առած, միշտ չմոռանալով, որ ինքը գրում է ոչ միայն խրատելու, այլև ուսուցանելու համար։ Խոսելով, օրինակ, գրավոր աղոթքների ծագման մասին՝ գրում է. «Յառաջագոյն ի ժամանակս... մինչդեռ նոր ծաղկեաց գարունն հաւատոյ», ամենքը «յինքեանց մտաց խօսէին զբանս աղօթից՝ ըստ ժամուն պիտոյից... Իսկ ի ժամանակս յետինս՝ քանզի հանդերձեալ էր ձմեռն մեղացն սառնամանեօք խստութեան ցրտացուցանել զբորբոքումն առ աստուած սիրոյն», դրա համար և հոգեկիր վարդապետներն իրենց աղոթքները գրելով թողել են հետնորդներին։ Բայց ի՞նչպես են ասում քահանաներն այդ հոգեբուխ աղոթքները։ Դիմելով նրանց՝ պատվիրում է. «Մի՛ իբր ջուր ընդ խողովակ անցանիցէք անմտաբար ընդ խորհրդական բանս աղօթիցն...» (էջ 68)։

Շնորհալին ճանաչելով իր ժամանակի հոգևորականներին, գիտե, որ շատերին ախորժելի չեն լինիլ իր ասածները «կամ յաղագս ծուլութեան և մեղսասիրութեան, կամ վասն արհամարհելոյ զմեօք»։ Այդպիսիներին էլ, ասում է նա, «Մեք զոր հրամայեալն է մեզ՝ արասցուք, աղաղակելով որպէս դէտ ի բարձր դիտանոցէ զպատուիրանս աստուծոյ ի լսելիս ձեր»։ Եվ իսկույն ավելացնում է համեստաբար. «Բայց մի՛ ոք կարծիցէ զմէնջ, թէ իբրև առողջս զմեզ համարելով յախտից մեղաց՝ ձեզ միայն զբժշկականս զայս մատուցանեմք դեղ՝ որպէս հիւանդացելոց։ Այլ ծանիցէ ամենայն ոք, զի մեք առաւել քան զամենեսեան ունիմք պէտս հոգւոց բժշկութեան։ Բայց որպէս յիմար հիւանդի է զիւրն առողջութեան դեղ, զոր մատուցանէ նմա ախտացեալ ումն բժիշկ՝ ի բաց մերժել, տեսանելով զցաւս մարմնոյ նորա,—նոյնպէս իմաստնո՛յ է ոչ զբնութեան բժշկին ունել փոյթ, թէ առողջ է և կամ հիւա՞նդ, այլ զդեղին քննել զօգտակարութիւն, եթէ առողջարա՞ր իցէ, եթէ վնասակար։ Արդ՝ և դուք մի՛ վասն մեր անարժանութեան և ի հոգևորսն պակասութեան՝ ղօգտակար դեղս հոգւոց՝ զորս մատուցանեմք ձեզ՝ արհամարհիցէք և ոչ ընդունիցիք» (էջ 21)։

Նկատի ունենալով, որ իսկական բարեպաշտ կրոնավորները,—և կային դեռ բավական թվով այդպիսիներն եւս,—գուցե իրենից նեղանան մտածելով, թե իրենք խրատների կարոտ չեն, առասում է նրանց. «Թէպէտ և... չունիք ինչ պէտս կարեաց՝ մերոյ դուզնաքեայ բանից, այլ որպէս ծառայք՝ որք զհասարակականն կերակուր հրաման առնուն ի տէրանց բաշխել՝ ո՛չ միայն քաղցելոց, այլ և յագեցելոցն շնորհին,— նոյնպէս և մեք։ Զի ընդհանուր ծառայակցաց մերոց՝ հրամայեցաք ի տեառնէ՝ տալ զբանին կերակուր, հասարակաբար պարտիմք մատակարարել՝ փարթամաց գիտութեամբ և աղքատաց ի գիտութենէ, զօրաւորաց առաքինութեամբ և տկարագունիցն յառաքինութենէ» (էջ 23)։

Բերենք նրա՝ երկար պարբերություններով և բարդ ասացվածքներով գրված պրոզայից իբրև օրինակ և հետևյալ գեղեցիկ հատվածը. «Առ առաջնորդս սրբոց ուխտից վանականաց», այսինքն՝ վանահայրերին ուղղած գլխի սկիզբը։ Նա մարդուս երկու աչքերի նմանությամբ խրատում է նրանց, թե լավ առաջնորդ լինելու համար նրանք պետք է և՛ գիտություն ունենան, և՛ առաքինասեր գործեր։

«Փոքր ինչ և առաջնորդացդ ի յերկինս ճանապարհորդելոցն [=կրոնավորների առաջնորդներից] տացուք ծառայակցաբար զհոգևորական և զաստուածային բանին կերակուր, որք աչաց ունիք գործ և սպասաւորութիւն մարմնոյ եկեղեցւոյ։

Զի զո՞ր օրինակ աչք առաջնորդին անձին յամենայն շարժումն՝ ի լաւադոյնսն կամ ի վատթարագոյնս, ըստ այսմ նմանութեան և ոչ առաջնորդք՝ առաջնորդելոցն։ Եւ որպէս բիբք աչացն, եթէ մաքուրք լինիցին ի յախտից ինչ ի ներքս անկելոց, սրատեսութեամբն անմոլար առաջնորդէ անձին յուղիղ ճանապարհն. իսկ եթէ շամանդաղք մթինք ներականն լուսոյ՝ որ ի գլխոյ անտի յաչսն իջանեն՝ խնուն անտեսութեամբն, սխալէ՛ և ընդ ինքեան ի խորխորատ մահու զբոլոր անձն իւր արկանէ,—ըստ այսմ օրինակի և առաջնորդք եկեղեցւոյ։

Որ ոք երկոքումբք աչօք լուսաւորեալ իցէ, այսինքն՝ գիտութեամբ աստուածաշունչ գրոց, և առաքինասէր գործովք՝ ամբծութեամբ և սրբութեամբ և ամենայն արդարութեամբ, զոր պատուիրանք աստուծոյ ուսուցանեն, այնպիսին որպէս անձին իւրոյ, սոյնպէս և համօրէն եղբայրութեանն բարւոք առաջնորդէ յաստուածայինսն։

Իսկ որ զմի յաչացն բա՛ց ունիցի, և միւսովն կափուցեալ իցէ, այսինքն՝ որ կամ գիտութիւն առանց գործոց առաքինութեան, և կամ առաքինութիւն առանց գիտութեան ունիցի, թերի՛ է ի բարեաց և ոչ կատարեալ. քանզի միականեաց նմանի այնպիսին։ Զի թէպէտ և որ զիմաստութիւնն ունիցի՝ գիտէ զշաւիղս արդարութեան ճանապարհին ուսուցանել բանիւ, այլ ինքեան ո՛չ գնալովն ընդ նոյն՝ գործով, ո՛չ կարէ հաւանեցուցանել զայլս գնալ։ Նոյնպէս և այն՝ որ սրբութեամբ վարուք իցէ միայն՝ առանց գիտութեան գրոց, թէպէտ և անձամբ իւրով գնայ ընդ ճանապարհ օրինացն աստուծոյ, բայց զի այլոց՝ որպէս արժան է՝ ո՛չ գիտէ իմաստութեամբ առաջնորդել, վասն այնորիկ բազում անկարգութիւնս մտանէ յեկեղեցի։

Իսկ այնոքիկ՝ որ զերկոսեան տեսարանս աչաց խաւարեալս ունիցին ի լուսոյ, այսինքն՝ զի են տգէտք աստուածային գիտութեանց, և են պղերգ յամենայն գործս արդարութեան, մա՛նաւանդ թէ՝ և հակառակօքն լցեալք, և յանդգնին տալ զանձինս յառաջնորդութիւն եկեղեցւոյ (որ և զբազումս տեսանեմք յայսպիսեաց ի մերումս թշուառացեալ ժամանակի՝ ձեռնամուխ եղեալ յայսոսիկ),—լինին այնպիսիքն ըստ տէրունական առակին, կոյր կուրի՛ յորժամ առաջնորդէ՛, ասէ, երկոքին ի խորխորատ անկանին. որք ո՛չ յաստուածոյ, այլ ի սատանայէ շարժեալք՝ դիմեն յա-

ռաջնորդութիւնն յայն՝ ի կորուստ ինքեանց և առաջնորդելոցն» (էջ 46 և հետ.)։

3. Ուրիշ գրութիւններ։—*Ներսես Շնորհալուց մնում են և բազմաթիվ ուրիշ թղթեր, գրություններ, որ նա ուղղել է այլ և այլ անձերի, երբեմն իբրև պատասխան նրանց տված հարցերի։ Նամակների մեջ կան նաև մասնավոր, անձնական բովանդակություն ունեցողներ, բայց այդ գրությունները մեծ մասամբ վերաբերում են դավանական և այլ կրոնական խնդիրների, որոնցով հետաքրքրվել են ժամանակակիցները։ Ուստի նա երբեմն դրանց մեջ դիմում է նաև մեկնության, մանավանդ որ նա լավ ծանոթ և վարժ էր մեկնության, քանի որ գրած ուներ նաև Մատթեոսի Ավետարանի մեկնությունը։ Այդ գրությունները իբրև պատմական փաստաթղթեր կարևոր են գլխավորապես հայոց եկեղեցու պատմության համար, բայց երբեմն էլ ձևով բարձրանում են և ստանում գրական արժեք իբրև պերճախոսություն։ Այդպիսիներն աչքի են ընկնում իրենց զորեղ տրամաբանությամբ, բերված գեղեցիկ օրինակներով և զանազան ճարտասանական ձևերի գործածությամբ, ուժեղ հակաճառությամբ և առարկությամբ, մի քանի դեպքում նաև ծաղրով ու հեգնությամբ։*

Պատմության համար առանձին նշանակություն ունեն այն թղթերը, որոնք վերաբերում են այսպես կոչված «Միության խնդրին», այսինքն՝ հայկական և հունական եկեղեցիների միացման խնդրին, որ հարուցվել էր մի կողմից՝ հայոց կաթողիկոսի և մյուս կողմից՝ Բիզանդիայի կից Մանուել կայսրի միջև։ Միությունը գլուխ չի եկել Ներսեսի մահվան պատճառով։ Այդ թերթերից տեղեկանում ենք Ներսեսի խոհեմ, քաղաքագետ և զգույշ բնավորությանը. տեսնում ենք, թե ինչպես նա պաշտպան է հայոց եկեղեցու պատվին, թագավորի հետ խոսում է և պահանջում է եկեղեցիների վերաբերմամբ խոսել ինչպես հավասարը հավասարի հետ (էջ 159)։ Նա չի կամենում միությունը գլուխ բերել մենակ ինքն անձամբ, առանց հայոց եկեղեցական ժողովի, որ պատրաստվում էր անելու։ Ինքը պաշտպան է հայկական եկեղեցական մի քանի ծեսերի, սովորությունների միայն նրա համար, որ չգրգռի դրանց վարժված ժողովրդին, թե չէ պատրաստ է նույնիսկ զիջող լինելու, «և այն,—ավելացնում է նա,—յաղագս աստուածային սիրոյն հաղորդութեան և ո՛չ իբր ի մոլորութենէ դառնալով ի ճշմարտութիւնն» (էջ 221)։ Այստեղ արդեն լսում ենք Ներսեսի այսպես ասած՝ ազատամտության ձայնը։ Այդ ևս ծագած էր անշուշտ նոր մտավոր հոսանքի ազդեցությամբ. բայց այդ մասին գործոն էր նաև հույների մեջ ցրված հայ ժողովրդին հունական կրոնական հալածանքներից ազատելու ներքին դիտումը[62]։

4. Գրիգոր Տղա։—*Ներսես Շնորհալուց հետո կաթողիկոս է դարձել (1173—1193 թթ.) նրա վասիլ եղբոր որդին՝ Գրիգոր Պահլավունին,*

---

62 «Ընդհանրական», էջմ., 1865. Միության խնդրի համար փոխանակված բոլոր թղթերը և Ներսեսի, և ուրիշների՝ էջ 113—280, 426—457, Ներսեսի մյուս թղթերն ու գրությունները՝ էջ 285—411։

«Տղայ» մականունով։ Նա սնվել, կրթվել և ուսում է առել կաթողիկոսարանում և հավանորեն այնտեղ էլ մանուկ հասակում կոչվել է այդ մականունով։ Նա էլ փափագում է եկեղեցիների միությունն առաջ բերել, նկատի ունենալով, որ այդու կթեթևանա հունական տերության մեջ ապրող հայերի վիճակը, բայց հաստատ պահելով «ճշմարիտ հայությունը»[63]։ Այս մտքով շարունակում է նա բանակցությունները միության մասին հույների և հայ հոգևորականների հետ. 1179 թ. ժողով է դումարում Հռոմկլայում, բայց Մանուել կայսրը մեռնում է, և միությունը դլուխ չի գալիս։ Գրիգոր Տղայից մնում են մի քանի թղթեր[64], որոնք գրված են հմտությամբ, երբեմն և սուր ոճով, բայց չունեն առանձին գրական նշանակություն և կարևոր են եկեղեցական պատմության համար։

Նրանից մնում է և մի ոտանավորով դրվածք։ 1187 թ. մահմեդականները Սալահադինի ձեռով նորից տիրում են Երուսաղեմին. կործանվում է խաչակիրների հիմնած թագավորությունը։ Այս դեպքն ազդում է ի միջի այլոց և հայոց կաթողիկոսի վրա, և նա հորինում է «Բան ողբերդական վասն առման Երուսաղեմի»[65]։ Այն դրված է Ներսես Շնորհալու «Եղեսիոյ Ողբի» նմանողությամբ բարառնաբար, ութավանկ տողերով և «ին» հանգով (1395 տող)։ Խոսում է անձնավորված Երուսաղեմ քաղաքը, սկզբում դիմելով նշանավոր քրիստոնեական քաղաքներին, թվելով իր սրբավայրերը և ողբալով իր աղետները։ Լի է բացադարձություններով, կրկնություններով և, ինչպես հաճախ վարվել են մեր գրողները, բռնազբոսիկ ակնարկներով Հին Կտակարանի մեջ պատմված դեպքերին։ Ջունի այն կենդանությունը, պատկերների փայլն և մտածության ու զգացմունքի խորությունը, ինչ որ Շնորհալու քերթվածը։ Արժեքավոր է միայն պատմության համար իր հաղորդած «հարուստ պատմական իրողություններով և Պաղեստինում ապրող ֆրանկների բարքերի, սովորույթների ու հաստատությունների նկարագրով»։

ՆԵՐՍԵՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ

1. Կենսագրությունը։—*Ինչպես «Մեջերկրայքը» Եփրատի և Ամանոսի միջև, նույնպես և Կիլիկիան Ամանոսից արևմուտք՝ շատ հին ժամանակներից ծանոթ էր հայերին, որոնք առևտրական հարաբերություն*

---

63 *Անդ, էջ 449, 457։*

64 *Անդ, էջ 229 և հտն., 250 և հտն., 266 և հտն., 432 և հտն.։ Վերջինս՝ «Պատասխանի վարդապետացն Հայոց հիւսիսային կողմանցն» կա նաև՝ «Գրիգորի կաթողիկոսի Տղայ կոչեցելոյ նամականի», Վենետիկ, 1865, էջ 53—90։ Այստեղ նաև «Պատասխանի թղթոյն վարդապետին Գրիգորի Տուտէորդւոյն», էջ 5—52. Գրիգոր Տուտեորդու երկու թղթերն առ Գրիգոր Տղա՝ տե՛ս «Արարատ» ամսագիր 1893, էջ 321 և հտն., իսկ «Թուղթ վարդապետացն Հայոց հիւսիսային կողմանցն ... առ ... տէր Գրիգորիոս» տե՛ս «Ընդհանր.», էջ միածին, էջ 426 և հտն.։*

65 *Բնագիրը ֆրանսերեն թարգմանության հետ տպված է Պարիզում.* Dulaurier. Recueil des Historiens des Croisades, Historiens Arméniens.

ունեին այն կողմերի հետ։ 11-րդ դարում Հայաստանի քաղաքական աղետների հետևանքով՝ շատ հայ իշխաններ իրենց ժողովրդով տեղափոխվում են նաև Կիլիկիայում, որ բիզանդական իշխանության ներքո էր, որ և իր ծովափնյա դիրքով մի հարմարավոր վայր էր Արևմտյան Եվրոպայի հետ հաղորդակցություն պահելու համար։ Հայությունը հետզհետե թվով աճում է այնտեղ և տնտեսապես զորանալով դառնում է ազդեցիկ։ Հայ իշխանները սկզբում բիզանդական կուսակալների պաշտոն են վարում, հետո տիրանում են որոշ բերդերի բիզանդական գերիշխանության տակ. ապա ձգտում են նաև քաղաքական անկախ իշխանություն կազմելու։ Բագրատունի Գագիկ Բ. թագավորի մոտիկ ազգական Ռուբենը 1080 թ. Կիլիկիայում հիմնում է անկախ հայկական իշխանություն, որ 12-րդ դարի վերջում դառնում է թագավորություն ընդարձակ սահմաններով և հարատևում է մինչև 1375 թ.։ Այս նոր Հայաստանը ծովային մեծ առևտրական հարաբերություն ուներ Եվրոպայի հետ և բարեկամական կապեր՝ մոտիկ խաչակիր իշխանությունների հետ, միաժամանակ և չէր կտրված Մեծ և Փոքր Հայաստանների հետ հաղորդակցությունից. նա շուտով ծաղկում ու բարձրանում է և՛ քաղաքականապես, և՛ տնտեսապես, հանդիսանում է մի նոր կուլտուրական վայր իր բազմաթիվ նորաշեն վանքերով։ Գրականության մեջ աչքի ընկնող ներկայացուցիչը 12-րդ դարում է Ներսես Լամբրոնացին։

Լամբրոնացու մեծ պապը, Օշին անունով մի ազնվական, Գանձակի կողմերից 1073 թ. տեղափոխվում է Կիլիկիա, ուր կուսակալ էր նրա ծանոթ ու բարեկամ Ապլղարիպ Արծրունի իշխանը։ Սա տալիս է Օշինին Լամբրոն ամուր բերդը Տորոսյան լեռների մեջ։ Օշինը և նրա որդին՝ Հեթումը, մնում են կայսերական ծառայության մեջ և դառնում են այն կողմերի հայտնի իշխանները։ Այդ Հեթումի դուստրերից մեկի հետ ամուսնանում է Ներսես Շնորհալու մեծ եղբայրը՝ Վասիլը։ Հետագայում Հեթումի որդին՝ Օշին անունով՝ Շնորհալուց թաքուն կին է առնում Շնորհալու կրտսեր եղբոր՝ Շահանի, նույն և Զորավարի Շահանդուխտ դուստրը։ Այս Օշինի և Շահանդուխտի զավակն է Սմբատը, ապագայի Ներսեսը, որ ծնվել է 1153 թ., վախճանվել 1198 թ.։ Ստնդյա ժամանակ ծանր հիվանդացել է նա, և ծնողներն ուխտել են իրենց որդուն, եթե առողջանա, նվիրել եկեղեցու ծառայությանը։ Ուստի մանուկ հասակից նա կրոնական կրթություն և ուսում է առել Սկևռա վանքում, որ շինել էր իր հայրը, և հետո՝ Ներսես Շնորհալու մոտ կաթողիկոսարանում։ Այստեղ նա սովորել է նաև հույն, ասորի, լատիներեն լեզուները։ Շնորհալին նրան տվել է կուսակրոն քահանայի կարգ՝ մկրտության՝ Սմբատ անունը փոխելով ի Ներսես, և հետո, երբ նա դեռ քսաներկու տարեկան երիտասարդ էր, Գրիգոր Տղայից ձեռնադրվել է եպիսկոպոս և նշանակվել Տարսոնի, Լամբրոնի և Սկևռա վանքի առաջնորդ։

Մեծանալով Շնորհալու ձեռի տակ՝ Ներսես Լամբրոնացին սիրում է ուսումն և գիտությունը, և վաղ երիտասարդական տարիքից արդեն ան-

խոնջ պարապում է գրականությամբ՝ անելով թարգմանություններ և հորինելով մեկնություններ և այլ կրոնական երկեր։ Բացի այդ՝ ազդվելով Ներսես Շնորհալուց՝ նա սերտ փարում է եկեղեցիների միության խընդրին. այդ նկատմամբ հետևում է իր մեծ ուսուցչի, հետո և Գրիգոր Տղայի ուղղությանն ու հայացքին։ Ջափազանց ցավում է, որ միության գործն անկատար է մնացել։ Սիրել է և միանձնական կյանք՝ իդեալ ունենալով Գրիգոր Նարեկացուն։

«Ուսումնասիրելով օտարների մեջ տիրող եկեղեցական կարգ ու սարքը, և բաղդատելով հայերի մեջ տիրացած անկարգությունների հետ, որոնք հետևանք էին քաղաքական աննախանձելի ու վարատական կացության, Լամբրոնացին սկսում է սիրահարվել ուրիշների մոտ տեսածին»[66] և ինքնագլուխ ինչ-ինչ փոփոխություններ և նորություններ է մտցնում եկեղեցու կարգերի մեջ։ Արևելյան վարդապետները դժգոհում են նրա ընթացքից և այդ մասին հայտնում են Կիլիկիա Լևոն Բ-ին, որ արևելցիներին հաճելի լինելու համար հոժարում է Լամբրոնացուն հեռացնել իր մոտից։ Այս հանգամանքներն ահա՛ առիթ են ընծայել Լամբրոնացուն հորինելու իր նշանավոր Ատենաբանությունը և գրելու Լևոնին ուղղած թուղթը[67]։ Ատենաբանությունը, ըստ վերնագրին, խոսված է «Յաստուածախումբ և ի տիեզերական ժողովն Տարսոնի», որ տեղի է ունեցել 1197-ին։ Դա «միության խնդրին ի նպաստ եռանդուն և պերճաբան հորդորական է», «ազգային գործերի քննադատությամբ»։ Լևոնին ուղղած թուղթը գրված է լի զայրույթով իր հակառակորդների դեմ. արեվելցիներին համարում է «տխմարք և անկարք և յիմար բանից շաղակրատողք»։ Ակնարկելով Գրիգոր Տուտեորդուն և Քոբայրեցուն՝ գրում է. «ի Ջորոյգետ զերկուց արանց, որք իբրև զշունս լիրբս հաչեն՝ զկա՞մս հաճեմ, որք վասն զԱնեցի արբեալն ի գուսանաց և յորովայնամոլութենէ, յարբեցութենէ ի կաթողիկոսութիւն քարշելոյ՝ զմեզ նախատեն» (էջ 232)։ Անեցին Անի քաղաքի Բարսեղ եպիսկոպոսն է։ Եվ այսպիսի նախատական խիստ խոսքերով նա անարգում է իր արևելյան հակառակորդներին։ Եկեղեցական պատմության համար կարևոր այդ երկու գրությունները եթե մի կողմից՝ վավերագրեր են ժամանակի բարքերի համար, մյուս կողմից՝ ճշգրիտ բնութագրում են իրեն՝ Ներսես Լամբրոնացուն իբրև համարձակ, բուռն եռանդոտ, բայց և կրքոտ ու հուզվող, տաքարյուն ու բռնկվող մի մարդու, որ իրեն զսպել չգիտե։ Բայց դրանք միաժամանակ և լավ ապացույց են նրա հռետորական շնորհքին։

---

66 Մ. Օրմանյան, *Ազգապատում*, Կոստանդնուպոլիս, 1912, էջ 1479 և հետ., էջ 1518 և հետ.։

67 Տպագրված Վենետիկ, 1865, «Ընտիր մատենագիրք» շարքի մեջ «Գրիգոր Կաթողիկոս Տղայ, Ներսէս Լամբրոնացի», նախ՝ «Գրիգորի կաթողիկոսի Տղայ կոչեցելոյ նամականի», էջ 5—90. հետո՝ «Ներսեսի Լամբրոնացւոյ Տարսոնի եպիսկոպոսի ատենաբանութիւն», էջ 93—205. Թուղթ, էջ 207—248. Ճառք, էջ 249—326։

2. Համբարձման ներբողյանը:—*Ն. Լամբրոնացու ճարտասանությունն ավելի ևս փայլուն է նրա Հոգեգալստյան և Համբարձման ներբողյանների մեջ*[68], *որոնցով նա հանդիսանում է տաղանդավոր հռետոր, լավագույն ներկայացուցիչը մեր հոգևոր պերճախոսության. ուստի և այստեղ մանրամասն, հարկավ, մեծ կրճատումներով, տեսնենք նրա Համբարձման ներբողյանը, քանի որ մեր հին գրականության այս տեսակի երկերից ոչ մեկի վրա առանձնապես կանգ չենք առել: Նա բնականաբար կիրառում է ամեն տեսակի ճարտասանական ձևեր՝ դիմում, բացադարձություն, ձայնարկություն, հարցում, նմանություն, կրկնություն և այլն: Դրանք նա բանեցնում է վարպետորեն, ոճի պեսպեսության համար: Կրկնություններով էլ, օրինակ, նրա ասացվածը ոչ թե թուլանում է, ճապաղ ու ձանձրալի դառնում, այլ, ընդհակառակն, զորանում և գրավչություն է ստանում: Ամենն ասում է նա վայելուչ դարձվածներով, ոչ սակավ բանաստեղծական պատկերներով, հորդ ու ծաղկուն, բայց պարզ ու մեկին ոճով, առանց կուտակաբանության, հեռու մթնությունից և բարդ ու պարբերական ասացվածներից: Ֆրազները հաճախ եռևե եռև կազմում է երկ-երկու խոսքից, ինչպես երկատող տները բանաստեղծության մեջ, դրանով որոշ չափականություն և կշռական դաշնակավորություն առաջ բերելով: Բայց Լամբրոնացու ներբողյանի գեղեցկությունը միայն արտահայտական ձևերի մեջ չէ, այլ ավելի ևս նրա ներքինի, ճառի ամբողջ կառուցվածքի և լիրիզմի մեջ:*

Սկզբից հենց նա իր բնաբանին պատշաճ մի շարք դիմումներով գրավում է ժամավոր ունկնդիրների ուշադրությունը և զարթեցնում նրանց հետաքրքրությունը՝ կենդանի հաղորդակցություն ստեղծելով իր և նրանց միջև, ինչ որ հարկավոր է ամեն ճառախոսի: «Ցնծա՛ այսօր, հա՛րսն ողջախոհ, եկեղեցի՛ հեթանոսաց, ի պատիւ յիշատակի փեսային քո Քրիստոսի խորհրդոց»: Այսպես է սկսում նա այդ ճառը և ապա շարունակում. «Պարեցէ՛ք, ո՛վ մանկունք առագաստի, այսօր ուրախութեամբ, զի հաստատեցաւ սիրտ ձեր ի հանդէս փառաց նորա մեծութեան: Ջուարճացեալ խրախոյս խնդութեան հարէք ի մէջ տաճարիս, դասապե՛տք դասուց հանդիսի ժողովոյս: Քանզի ահա այսօր լրումն փափաքանաց ձերոց յերկինս երկնից կառուցեալ ամրացաւ: Ո՛վ արեամբ փրկեալ ամբիծ գառինն՝ սեպհական ժողովուրդք... այսօր եկա՛յք բարձրացիք սլացեալ ընդ նմին թևօք հաւատոց ի փառս երկնաւորս, յոր մտեալ նստաւ ընդ աջմէ Հօր, առհաւատչեայ և ճանապարհ ամենեցուն ձեզ»: Ապա իրեն դառնալով՝ ասում է. «Այլ ինձ, որ զտարտամութիւնս ընթադրեալ՝ պաշտպան կացի աւուրս մեծի, ո՛վ տայր հաւասարել խորհրդոյս և զամենեսեան զձեզ սխրացուցանել՝ իմաստութեամբ տօնելոյս»: Հետո մի

---

68 *Անդ, էջ 249—289. «Բարեբանութիւն ներբողական գովութեամբ ի Համբարձումն տեառն Յիսուսի Քրիստոսի յերկինս», էջ 290—326. «Ներբողեան ասացեալ ի հրաշափառ դալուստ Հոգւոյն սրբոյ»:*

մի կարճ ասացվածներով հիշեցնելով հրեշտակների երգակցումը սքանչելի փառքի տոնին, առաքյալների պշած սքանչացումը և մարգարեների օրհնության երգերը՝ բացագանչում է. «Ո՛վ դուք եկեղեցւոյ մանկունք, բարձեալ զձայնս քաղցր եղանակաւ՝ սաղմոս ասացէք աստուծոյ մերում, սաղմոս ասացէք թագաւորին մերոյ, սաղմոս ասացէք»։

Անպայման մեծ է եղել ջերմ հավատով և անկեղծ ոգևորությամբ ասված այս խոսքերի ազդեցությունը հավատացյալների վրա, բայց այդ չի բավարարել Ճառախոսին. ուստի իսկույն հառաչում է նա՝ «Այլ աւա՛ղ, զի հեղգութիւն մեր ծանրացեալ ի զբաղմանէ մարմնոյ՝ հաւանել հրամանիս վերջացաւ, և զճաշակ համեղ գիտութեանն՝ չամբել անձին երգօք օրհնութեամբ՝ յուլացաւ։ Քանզի որպէս մարմնոյ ոչ է մի տեսանելն զյագեցուցիչ իւր համադամս՝ և ճաշակելն, այսպէս ո՛չ է հաւասար լսել զբանս աստուծոյ, և ո՛չ խուզողական հանճարովն որոնել. զի այսու պարարեալ բերկրի, և այնու երբէք ոչ մխիթարի»։ Շարունակելով զարգացնել ասածը՝ բերում է մի ուրիշ նմանություն, թե մարդուս կյանքի համար բավական կլիներ մի տեսակ կերակուր, բայց նրա մարմնին տրված են զանազան պտուղներ ու կերակուրներ, որպեսզի յուրաքանչյուրի էլ համ ու հոտն առնի և ղվարճանա։ Այսպես և նրա հոգուն տրված են մեկից ավելի կերակուրներ—զանազան աստվածային տոներ, իրենց առանձին խորհուրդներով և անուշահոտ բուրմամբ, որպեսզի նրանցով զվարճացնի իր մտավոր գիտությունները։

Եվ անմիջապես կորովի ձայնով կանչում է Սատանային, իբրև ամենամեծ թշնամուն. «Ո՞ւր ես, անգե՛ղդ ի չարիս բանսարկու. ո՞ւր դու, զրպարտի՛չ դատախազ. ե՛կ այժմ կա՛ց մեզ առընթեր, ոչ իբր զսիրելի, այլ իբրև զթշնամի» և այլն։ Եվ այսպես շարունակում է մի մեծ շարք խոսքեր, որոնցով Սատանայի տկարությունն ու պարտությունն է մեջ բերում, ամաչեցնելով ու խայտառակելով նրան, և փառավորում է համբարձումը, միշտ այնպես ճառելով, որ կարծես Սատանան կողքին կանգնած լիներ։ Եվ նա հավատում է դրան և հավատացնում է իր ունկնդիրներին։ Հավատում է, որ՝ ինչպես հին դյութերը, երդմնեցուցիչները սաստում էին չար ոգիներին, ինքն էլ իր այդ խոսքերով դուրս է քշել Սատանային։ Ուստի իր ճառի այս նախաբանի վերջում ավելացնում է. «Զայսոսիկ առ բանսարկու թշնամին ի դէպ էր մեզ ի սկզբանս բարբառել, և զմախանօք յաչաղօղն ի ժողովոյս մեր ամօթով արտաքս վարել և ապա ղհոգևոր սեղանս բարեկամացդ սփռել և զամենեսեան կերակրել»։

«Հոգևոր սեղանի», այսինքն՝ ճառի կենտրոնական մասի նյութն է, «(1) թէ զի՛նչ հարկ աստուծոյ իջմանն ի յերկիր, (2) կամ այսօր՝ ուր էնն ի յերկինս՝ փառօք համբարձմանն»։ Այս խնդիրներից առաջինն է փրկագործության խորհուրդը. փրկիչ Հիսուսն իբրև մարդ հաղթել է մեղքին. մարդս հետևելով նրան՝ նույնպես պիտի հաղթի մեղքին և վերադառնա իր առաջին հայրենիքը. «Պարտաւորքս սրբեալք առ աստուած

դարձցուք»[69]։ *Այս խորհուրդը համառոտակի, թեթև, աշխույժ ոճով բացատրելուց հետո անցնում է երկրորդին՝ Համբարձմանը, որ ճառի բնաբանն է։ Նոր Կտակարանի փոքրիկ պատմությունն և ավանդությունն ընդարձակում է՝ ստեղծելով մի վիպական երկ պատկերների ու տեսարանների բնութագիրների և խոսքերի մանրամասնություններով, միշտ աշխատելով ազդելու ժամավորների երևակայության և զգացմունքների վրա։ Եվ այստեղ երևում է նրա մեծ շնորհքը։*

Հիսուս իր աշակերտների հետ Ձիթենյաց լեռան վրա է և այնտեղից սկսում է երկինք վերանալ. «Ի վայրն՝ ուր ուսան զձառս նորին թշնամեաց, և ուր լուան զբանս չարչարանացն և երկեան, ծանուցեալ զփառաւոր համբարձումն՝ բերկրեցան։ Ի լեառն՝ ուր տեսին զնա յաղօթս տարակուսանօք, անտի տեսին զնա սլացեալ ընդ ամպս լուսեղէն փառօք... Ի կեդրոնեան ձորոյն՝ ուստի տարան զնա ի խաչ սուսերօք, ի նմանէ ամբարձաւ ի կառս քրովբէից նուրբ հողմոցն թևօք»։

Հանդես է գալիս ամենից առաջ Հիսուսի մայրը. «Մայրն՝ ուր խոցեցաւ յայնժամ ի նախատանացն սայրասուր սլաքօք, այժմ տեսանէ զորդին իւր թագաւոր պճնեալ պսակօք... վասն այսորիկ ցնծայր, հրճուէր, և այսպիսի ինչ ի բարձրանալն որդւոյն զկնի բարբառ արձակէր.

— Այսօր սիրտ իմ հաստատեցաւ, և բերան իմ յարձակեցաւ ի վերայ թշնամեաց, ո՛վ անդրանիկ իմ և տէր, որ կափուցեալ տատանէր ի քո յանճառն խոնարհութենէ։ Այսօր բարձրացուցեր զգլուխ մօր քոյ փառօք, որդի՛ իմ և աստուած, որ լուծեալդ կորանայր ի բամբասելն զկուսութիւն իմ յուրթի բժժանօք։ Այսօր պայծառացուցեր զդէմս իմ՝ նշուլից հետոց ոտինդ ճառագայթիւք, որ ի ժամ չարչարանաց քոց զզեցաւ սուգ՝ մթին ստուերօք...»։

Ապա Մարիամը դիմում է առաքյալների դասին, որ հաղորդակից լինեն իր ցնծությանը.

— Ո՛վ Պետրէ, ընդէ՞ր լռես. ահա հրեշտակք ակումբ առեալ եղանակեն շուրջ զվարդապետաւն քո զօրհնութիւնս. ա՛ռ զգունդս քո, և խառնեա ի պարս նոցա, երգակցեա՛, տալով օրհնութիւն այնմ՝ որ օրհնեաց զերկիր գալստեամբ իւրով, և պայծառացոյց զերկինս ընթացիւք իւրովք... Օդդ ահա արտափայլէ ի փառաց նորա, և երկինք խոնարհի ընդ ոտիւք նորա, և բարապանք նորին բանան զդրունս մտից նորա. դուք մինչև ցո՞ր վայր պշուցեալ՝ կամիք տեսանել զընթացս նորա։

Բայց Հիսուսի աշակերտների ուշքն ուրիշ բանով է տարված։ Հարությունից հետո փոխվել է նրանց վերաբերմունքն առ իրենց ուսուցիչը. «Եւ այնուհետև սկսան յայլ դէմս կերպարանաց պատիւ տեառն և վարդապետին առնել. ի նայելն ընդ նա զարհուրէին, յիշելով զթևասքօղեալ սերովբէն... Ի խօսելն պատկառէին... Սէրն բորբոքեցաւ ի սիրտ նոցա նորոգապէս... յայս կոյս յայն կոյս ընթանային ամօթխածութեամբ և հայ-

---

69 Վերևում հիշված «Ընտիր մատենագիրք...», էջ 259 և հետ.։

էին ի դէմս նորա անյագ փափագմամբ...»։ Այսպիսի հոգեկան վիճակի մեջ էին նրանք, երբ Հիսուս ձեռները բարձրացնելով՝ օրհնեց նրանց, «և անդէն փութապէս մեկնեալ՝ սկսաւ վերանալ յերկինս։ Իսկ նոքա սրտաթաւ յուսակտուր խոնարհեալ, զերկիր համբուրեալ՝ շնորհ ունելով օրհնութեանն, յարուցեալ փութապէս և երագ պշուցեալ նայէին ընդ երկինս յերթալն նորա»։

Նրանք հոգնում են դեպի վեր պշնած նայելուց։ Ահա տեսարանի մեջ շարժում է մտնում. գալիս են երկու բարեկամ հրեշտակներ՝ նրանց սփոփելու և դեպ երկինք նայելը դադարեցնելու։ Ասում են.

— Արք գալիլեացիք, այժմ զի՞ կայք հայեցեալ ընդ երկինս անջրպետութեամբ ամպոյդ որոշեալք ի սիրելւոյն։ Այս Յիսուս որ վերացաւ ի ձէնջ՝ սոյնպէս դարձեալ եկեսցէ։ Արդ դարձիր սպասեցէք սորա կրկին գալստեանն...։

Աշակերտները հարցնում են.

— Եւ զի՞նչ լիցուք աշակերտքս յանկարծ բաժանեալք ի վարդապետէն... Մեզ զի՞նչ տայք մխիթար, ո՛վ զուարթունք, ի տրտմութեան և ի ցնծութեան միջի վարանեալ աշակերտացս. ցնծութիւն՝ զի տեսաք զնա յայնպիսի փառս ձոխացեալ, և տրտմութիւն զի ստորև ի նմանէ եղաք աստ մնացեալ։

Հրեշտակներն ասում են.

— Արք գալիլեացիք, մի՛ հիանայք, ցնծացէք, զի գայ համբարձեալս ի յերկիր, և պսակէ զամենեսեան զձեզ ի նորոգութիւն յարութեանն հրաշապէս...

Եվ ճառախոսը հրեշտակի բերանով նկարագրում է մի ուրիշ տեսարան. նա ունկնդիրների երևակայության առաջ բանում է աշխարհի վերջը, երբ Հիսուս փառքով կիջնի երկնքից երկիր, նրա հետ բոլոր հրեշտակները, մարդիկ էլ գերեզմաններից ամպերի վրա ընդ առաջ կթռչեն։

Դարձյալ փոխվում է տեսարանը. հրեշտակները նորից դառնում են համբարձմանը։

— Ահա դուք տեսաք,—ասում են նրանք,—թե ինչպես սլացավ նա, և թեթև քայլելով օդերի վրա՝ սքանչելապես բարձրացավ ու ձեր մարմնական աչքերից ծածկվեց նեղքևի ամպով։ Այժմ բացեք ձեր մտավոր աչքերը և դեպի երկինք հառեցեք՝ «ուսանել խորհուրդս անպատումս»։

Ի՞նչ է դա։—Այդ հասկանալու համար դննենք այստեղ հեռևյալը քրիստոնեական գրուցաբանությունից։ Հին հայացքով ամպերից վեր, տեսանելի երկնքից դենը, էր երկնային զորությունների կամ զվարթունների վայրը։ Ներսես Շնորհալու ըստ Դիոնիսիոս Արիսպագացու դրած մի աշխատությունից, որի մասին խոսվեց վերևում, իմացվում է, որ նրանք, այդ երկնայինները, բաժանվում են ինը դասերի, որոնց ամեն երեքը կազմում են մի կարգ։ Բարձրագույն կարգի մեջ են՝ Սերովբեներ, Քերովբեներ և Աթոռներ. հետո գալիս են՝ Տերություններ, Զորություններ և Իշխանություններ. իսկ ստորին կարգի մեջ են՝ Պետություններ, Հրեշտակա-

պետներ և Հրեշտակներ։ Այս երկնային «հոգեղենները» բոլորն էլ ընդհանուր անունով կոչվում են Զորութիւններ կամ Զվարթուններ կամ Հրեշտակներ. բայց «հրեշտակ» կոչվում են սովորաբար իններորդ դասի զվարթունները միայն, և Ներսես Լամբրոնացու այս ճառի մեջ «հրեշտակ» բառը միայն այդ նշանակութեամբ է գործածված։ Նրանք, լինելով վերին երկնքի ամենացած մասում, երկրին ավելի մոտ են և երևում են մարդկանց, նույնպես երբեմն նաև հրեշտակապետները, առանձնապես Գաբրիել և Միքայել։

Դառնանք Լամբրոնացու ճառին։

Նրանք, հրեշտակները, մարդկանց վերակացուներն են, տեղյակ են մարդկային գործերին, ուստի գիտեին, թե ո՛վ է երկինք համբարձողը։ Վերին կարգի երկնայինները մոտ են աստուծուն, որի կամքը և նրանք հաղորդում են ցածի կարգերին։ Բայց նրանք հեռու լինելով երկրից, չգիտեին, թե ո՛վ է վեր համբարձողը։ Ուստի իններորդ դասի հրեշտակներն այդ մասին տեղեկութիւն են տալիս վերիններին. «քանզի աստուած ի ստորնայնոցս ի վեր ելանէ», ասում է Հիսուսի աշակերտների հետ խոսող հրեշտակը, որ ինքն էլ ստորիններից էր։ Հիսուս, ուրեմն, ամբառնալիս նախ հանդիպում է իններորդ դասին—հրեշտակներին, հետո հետզհետե բարձրանում է դեպի վերին դասերը, մինչև հասնում է «հայր աստուծուն» և նստում նրա աջ կողմը։ Ներսես Լամբրոնացու ճառի այս մասը հորինված է ահա՛ այս «երկնային դասակարգութեան» և այս քրիստոնեական վրուցաբանութեան վրա. պատմվում է Հիսուսի համբարձման գործողութիւնը, նրա ընթացքն երկնայինների դասակարգութեան—հիերարխիայի միջով։

Երբ Հիսուս հասավ իններորդ դասի հրեշտակներին, նրանք, որովհետև գիտեին, թե ո՛վ է համբարձողը, ցնծութեամբ եկան նրան ընդառաջ,—ասում է պատմող հրեշտակը և շարունակում, թե՝

«Ոմանք զդրունս աւետարանին համբառնալ, և ոմանք զթագաւորէն հարցանեն ուսանել։ Ներքինքս անուանեն զնա թագաւոր փառաց և վերինքն տարակուսին, թէ ո՞վ է սա թագաւոր փառաց, որ ընդ երկինս ճանապարհ ի յերկրէ առանց օգնականի ինքնիշխանութեամբն հորդեաց։ Գաբրէլեանքն աղաղակէին. «Տէր զօրութեամբ իւրով, տէր կարօղ ի պատերազմի». և Միքայէլեանքն հիանան. և «Ձի՞րդ կարմիր ունի հանդերձ զի գոյն արեան և մարմնոյ»... Նրանք բողոքում են Հիսուսին և աղաղակում.

— Տէ՛ր ամենակալ, մինչև ե՞րբ ոչ ողորմիս վերինս Երուսաղէմի, և քաղաքացն դրախտին, ուստի արտաքս ձգեցեր գերի զբնակիչն զԱդամ...

Հիսուս մխիթարական խոսքերով պատասխանում է.

— Փրկեաց զնոսա բազուկ իմ, և սրտմտութիւն իմ միայն զդէմ կալաւ։

Հրեշտակներն ու հրեշտակապետները լսելով, որ մարդկային աղգը փրկված է, ցնծում ու հրճվում են և ուղեկցելով համբարձող արքային՝ ձայն են տալիս վերիններին, որ շտապեն ճանապարհ բանան։

Եվ մինչդեռ հրեշտակներն ու հրեշտակապետները և սերովբեներն ու քերովբեները խոսում էին միմյանց հետ,—շարունակում է պատմող հրեշտակը դառնալով դեպի աշակերտները,—ինքը Հիսուս, որ հրեշտակների դիմացից էր գնում, առաջ անցնելով այսպես պատասխանեց վերին դասերին.

— Ես եմ որ խօսիմ զարդարութիւն և իրաւունս փրկութեան. ես եմ որ իրաւամբք և արդարութեամբ յաղթեցի և կոխան զթշնամին հակառակամարտ՝ արարի. ես եմ որ զգերեալ ազգ մարդկան փրկեցի, և դարձեալ զյոյս նոցին յերկինս ուղղեցի. ես եմ որ զթշնամութիւն ի մարմին իմ սպանի, և խաղաղութիւն յերկինս և յերկրի արարի։

Վերին դասերը հարցնում և ասում են.

— Ես զի՞ կարմիր են, ասեն, պատմուճան քո և հանդերձ քո՝ իբրև զհնձանահարի լիոյ հնձանի կոխելոյ... Արդ զի արարեր զայս ամենայն աստուածապէս՝ հաւատամք. մարմնոյ հանդերձ արիւնոտ ընդէ՞ր զգեցեալ ես ի վերայ աստուածութեանդ փառաց, և բոսորատիպ գունովդ զնոյն պաճուճեալ... Ես զի կարելի է սքանչելի գործ յերկրի անմարմնոց զօրութեանց՝ հաւատամք. բայց դու ահա տկար պատմուճանաւդ վանեցեր զմեծամեծ մարտս՝ հիանամք, և զչեղանակ բազմապատիկ իմաստից քոց ուսանել ըղձանամք. յայտնեա՛ իշխանութեանց և պետութեանց երկնայնոց զնորոգ արուեստի քոյ իմաստս, աստուա՛ծ մեր և տէր։

Հիսուս պատասխանում է.

— Ոչ թէ որպէս դուք կարծէք, ասէ, աստուածային զօրութեամբ իմ, ո՛վ երկնաւորք, ի գլուխ ածեալ զմարդկան փրկութիւն ուղղեցի, և ոչ թէ կառք և երիվարք հրեշտակացդ ինձ ի մարտս պաշտպանեցին... այլ փրկեաց միայն բազուկ իմ, և սրտմտութիւն արդարութեան մարմնոյս իմոյ միայնակ առանձինն կացեալ ընդդէմ՝ կոխեաց զթշնամիսն։ Միայն ի լեառնն պէսպէս փորձութեանցն յաղթեցի... Միայն ընդ մաքսաւորսն ճաշակեցի... Միայն ի խաչին չարշարանս դիմեցի... Չէն ոչ առի ի ձեռս զհրեղէն ձեր սուր, այլ տկար մարմին... և այսպէս պատերազմեալ յաղթեցի աշխարհի։ Վասն այսորիկ արդարութեամբ իմով և կամաւոր մահուամբ զմեղաց մարդկան զմուրհակն պատառեցի. և այժմ ելանեմ նստել ընդ աջմէ հօր, բարեխօս և քահանայ հօտին իմոյ, ղոր պատուական արեամբ իմով գնեցի։

Այս որ լսում են հրեշտակների գնդերը,—շարունակում է պատմող հրեշտակը,—զարմանում են, որ նա իբրև տկար մարդ հաղթել է Սատանային։ «Սկսան ապա նոր եղանակաւ զերգս նմին վերերգել, և զմարդիկ ի կցորդութիւն օրհներգութեանն իւրեանց ժողովել։

— Ծափս հարէք, ասեն, ա՛զգք հեթանոսաց, համաձայն քաղցր երգոցս հրեշտակաց, և աղաղակեցէք ընդ մեզ փառաց թագաւորիս ի ձայն ցնծութեան գովութիւն օրհնութեան... Ահա մտանէ քահանայապետս առ աստուած պատարագաւն հաշտութեան... և առնէ խնդրուածս վասն ձեր փրկութեան. «Հա՛յր, կամիմ զի ուր եւն եմ ի ծայրագոյն գաւոյս... մտցէ

եկեղեցի իմ տեսանել զփառս զոր ստացայ... *Հա՛յր, զորս ետուր ինձ գինք արեան ժողովուրդ սեպհական, սիրեցի ի չափ սիրոյ քոյ ընդ միածնիս հաճութեան, և բարեխօսեմ ածել զնոսա ի պատիւ փառացս իմ հաւատարութեան»: Ուրեմն մարդկային ազգի փրկութիւնը կամ նրա բարձրացումն, աստվածային դառնալը:*

Այստեղ վերջանում է երկու հրեշտակների խոսքը: Անմիջապես հետևում է Ճառի վերջաբանը, որի մեջ Ճառախոսն արտահայտում է իր սեփական զգացումները՝ խոսքն ուղղելով նորից եկեղեցուն, այսինքն քրիստոնյա ունկնդիրներին, և հորդորելով նրանց, որ հետևեն Հիսուսին. «Ո՛վ մեծի շնորհիս,—բացագանչում է նա,—ո՛վ անճառ երախտեացս, որում արժանի գտար, եկեղեցի՛, ի համբառնալս Քրիստոսի... Ա՛րկ ի բաց ղքօղ տգեղութեան երկրաւոր սահեցման... խարիսխ քո յերկինս, դու ընդէ՞ր ի ստորինս կորանաս... Աստի օ՛ն հրաւիրեցար գնալ ի յերկրէ յերկինս, յապականութենէ յանապականութիւն, ի միջոյ կարճաց ի հրեշտակաց դասակցութիւն: Դարձիր յունայնութեանց և կացո՛ զոտս քո յուղիղ պողոտայն զի... արժանի լիցուք յետ ելիցն աստի՝ երկնային տանն օթևանացն...»:

Այսպես՝ Ներսես Լամբրոնացին իր Ներբողյանի բուն մասի մեջ ղվարթ եղանակով նկարագիրներ է անում, թեմ հանում գործող անձեր և նրանց խոսել տալիս միմյանց հետ: Հիսուսի մայրը, Պետրոս առաքեալը, մյուսները, ինքը Հիսուս, հրեշտակներն իրենց դասերով փոխ առ փոխ երևան են գալիս ունկնդրի աչքի առաջ, հարցումներով դիմում իրար, պատասխանում, հիացմունք հայտնում, խոսում մեծ ցնծությամբ ու հավատով: Տեսարանները հետզհետե փոխվում են, ամեն ինչ շարժվում է, կարծես՝ մի վեպ է պատմվում դրամատիկ ձևով. ամբողջը կազմում է մի մեծ գործողություն, արագ ու եռանդուն ընթացքով: Ճառախոսը սկզբից մինչև վերջը մեծ ավյունով ու սրտի զեղումով բանաստեղծում է ինչպես մի քերթող, վառում է ունկնդիր ժամավորների երևակայությունը, նրանց տեսնել է տալիս իր պատմածը և լսել է տալիս գործող անձերի խոսքերը: Ահա թե ի՛նչ է նրա արվեստի բնորոշ կողմը—ազդել ժամավորների երևակայության վրա, առաջ բերել ոգևորություն ու ցնծություն տոնի առթիվ: Այժմ իսկ՝ կարդալիս մարդ գրավվում է, հաճույք ստանում նրա վսեմ, ազնիվ ու պայծառ խոսքից, ո՞ւր մնաց այդ գեղակազմ տղամարդի կենդանի բեմասացությունը լսող հավատացյալներն այն դարում: Բայց Ներսես Լամբրոնացին հետամուտ է ոչ միայն ազդելու և հավատը մեծացնելու, այլև կրոնի ուսում տալու: Այս նկատմամբ էլ նրա Ճառը շատ հարուստ է, բովանդակալից: Եվ նա սովորեցնում է քրիստոնեական «կրոնագիտությունը» հաճախ Ս. Գրքի բառերով ու խոսքերով ոչ միայն պատմելով, նկարագրելով, ուրիշներին խոսեցնելով, այլև նույնիսկ մեկնելով, բայց այնպես նուրբ ու թեթև եղանակով, որ չի զգացվում, թե մեկնում է:

Լամբրոնացու այս երկի վրա դիտմամբ ավելի երկար կանգ առանք,

զի դա մեր ընտիր ճառերից մեկն է, միանգամայն և մի պայծառ օրինակ է, թե ինչպես այս գրական տեսակը մնացել է նույն հին կրոնական ներբողյանը, բայց փոխվել է ձևի և ամբողջ հորինվածքի գեղեցկությամբ։ Այդ բխում է ոչ միայն հեղինակի տալանդից, այլև ընդհանուր նորոգիչ ոգուց։ Ներբողյանի կամ ճառի այս գեղազան վերաճումն էլ մի արտահայտություն է նոր մտավոր հոսանքի. ո՞ւր լամբրոնացու այս ճառը, և ո՞ւր նման թեմաներով հին ճառերը։

3. Ուրիշ աշխատություններ։—Ինչպես վերևում ասվեց, մեր այս հեղինակը շատ վաղ հասակից սկսել է շարադրել և անդուլ ջանքերով գրել է բազմաթիվ երկեր[70]։ Նրանից մնացել են, բացի արդեն հիշվածներից՝ նաև ուրիշ թղթեր ու ճառեր, շատ մեկնություններ, այլև չափածո գրվածքներ—շարականներ և ուրիշներ, որոնք մեծ մասամբ կրոնական բովանդակություն ունեն։ Նրա հորինած հոգևոր երգերը չունին բանաստեղծական արժեք. համբարձման շարականների մեջ, օրինակ, նույն քրիստոնեական զրուցաբանությունն է հեղհեղվում սառն և անպաճույճ. բայց դժվար թե ամբողջ կանոնը[71] մեր այս հեղինակի գործը լինի։ Փոքր ինչ եռանդուն և իմաստալից է Ջատկի կանոնի հայտնի օրհնությունը[72].

Այսօր յարեաւ ի մեռելոց
Փեսայն անմահ և երկնաւոր,
Քեզ աւետի՛ք խընդութեան,
Հա՛րսն ի յերկրէ եկեղեցի.
Օրհնեա՛ ի ձայն ցընծութեան
Ջաստուած քո, Սիո՛ն։
Այսօր անճառ լոյսն ի լուսոյ
Լուսաւորեաց զմանկունըս քո...
Այսօր խաւարն անդիտութեան
Հալածեցաւ երրեակ լուսովն,
Եւ քեզ ծագեաց լոյս գիտութեան...

Ն. Լամբրոնացու ամենամեծ ոտանավոր գրվածքն է՝ «Գովեստ ներբողական սլատմագրական բանիւ յաղագս վարուց մեծի Հայրապետին տեառն Ներսիսի Կլայեցւոյ Հայոց կաթողիկոսի»[73]։ Այս 937 տողից կազմված չափածոն հորինված է Ներսես Շնորհալու հետևողությամբ ութավանկ տողերով. հանգերը փոխվում են մեծ հատվածներից հետո։ Դա մի պոեմա, մի քերթված է բառիս սկզբնական նշանակությամբ իբրև արվեստով արված մի գործ, կամ ինչպես ընդհանրապես կոչվում են

---

70 Բազմաթիվ մեկնություններ, երեք թուղթ, հինգ ճառ և այլն։ Տե՛ս Գ. Ջարբհանալյան, Հայկ. հին դպրություն, էջ 654—660։

71 «Շարական», էջմիածին, 1861, էջ 9, 355 և հտն.։

72 Անդ, էջ 283։

73 Տպագրված է ի «Թուղթ ընդհանրական... Ներսիսի Շնորհալւոյ», էջմիածին, 1865, էջ 461—497։

ոտանավորով հորինված երկերը, մանավանդ երբ մի որոշ երկայնություն ունին և վիպում են որևէ դեպք։ Այդտեղ պատմվում է Շնորհալու կենսագրության մասին։ Բայց դա մի քնարական, լիրիկական քերթված է, քանի որ դրա մեջ արտահայտված են նաև հեղինակի զգացումները առ Շնորհալին. նա ոչ միայն պատմում է, այլև գովում, ներբողում է։ Այսպես լինելով հանդերձ՝ նրա այս մեծ երկը, ինչքան էլ ոտանավորով է հորինված, չունի առանձին գրական արժեք, որովհետև չի արտահայտված բանաստեղծական ներշնչումով, կենդանի պատկերավորությամբ։ Որքան նա ջերմ, բուռն մի հռետոր է հանդիսանում իր ճառերի մեջ, այնքան պաղ ու թույլ է իբրև քերթող։ Գուցե այդպես է մասամբ և այն պատճառով, որ նա անվարժ է եղել ոտանավորներ հյուսելու.

...Ձմիննն յընտրելոց աչօք տեսի,
Գովել բանիւրս բաղձացի.
Այլ զի անվարժ ի չափ տաղի,
Ոտանաւոր տառից կարգի,
Քերթողական մեծ արհեստի
Չեղեալ ներհուն ըստ արժանի...

Եվ այսպես վերացական մտածությամբ է հորինել նա այս «Գովեստն» ընդհանրապես։ Չափազանց ներբողում, մեծացնում է Շնորհալուն, բնութագրելով նրան՝ իբրև տեր բազում ու բազմազան բարեմասնությունների. այդ ժամանակ մեկ-մեկ նա դիմում է սովորական ձևերի.

Բանիւքն աղբիւր յորդ հոսեցաւ,
Ծիծաղապէս ծաւալեցաւ,
Մինչ ընդ աշխարհըս ծովացաւ,
Եւ արբուցիչ մարդկան գըտաւ։

Հետևյալ տողերը սակավաթիվ գեղեցիկներիցն են.

Ծաղկեալ ազինք մեր փըթթեցան,
Երանգ երանգ գունով ներկան,
Ի նոր գարունս ուրախացան,
Շքեղ փառօք ճոխ փայլեցան.
Մարգագետինք և խաղ ցընծան,
Յորոց անուշ հոտ բուրեցան...

Նպատակն եղել է իբրև «հետևող» և «աշակերտ» գովելով պատմել Շնորհալու մասին, նրա վարքն ու արարքը.

Շարժեալ ստիպէ հարկ տերունի
Ըզշարադրումն իմըս բանի՝

Նիւթ գովեստի տալ յապաւնի
Հօրն որ արժան վարուք պատուի։

Այսպես է սկսում նա իր երկը, և քիչ հետո գրում է.

Քանզի բազում հոգի բաղձայ
Տեղեկանալ գայս յարակայ,
Անյագ անուանըն սէր տենչայ
Տարաշխարհիկ հօտըն նորա.
Թաղծեալ ի սուգ նըստեալ ողբայ,
Մխիթարիլ կարօտանայ,
Յորմէ երբէք ոչ թուլանայ,
Թէ նըշանակ վարուց չմնա.
Եւ թէ պատմօղ ոք յառաջ գայ
Սիրովն ի բանս ուրախանայ...

Ներսես Լամբրոնացին, ինչպես ինքը գրում է.

Արձան կանգնեալ սըրբոյն յապայ։

Եվ իսկապես, նրա այդ քերթվածը մի «արձան» է, որ ապագա սերունդներին հիշեցրել է Շնորհալու կյանքն ու գրական գործունեությունը։ Դա հեղինակի իրեն համար էլ մի հիշատակ է այն մասին, որ նա մեր գրականության մեջ սկիզբն է դրել մի նոր գրական տեսակի—ոտանավորով կենսագրության։ Լամբրոնացուն այս մասին հետևել է իր աշակերտը, «Խաչատուր անունով մեկը, որ իր... վարդապետի վրա գեղեցիկ ու քերթողաբան ողբ է շարադրել ոտանավոր»[74]։ Բայց մեզ հայտնի չէ, թե այդ մի կենսագրակա՞ն է արդյոք, թե՞ մի դամբանական ողբ, ինչպես է Դավթակ Քերթողի քերթվածը 7-րդ դարում։

4. Թարգմանություններ։—*Ներսես Լամբրոնացին հմուտ է եղել օտար լեզուների, նրան են հանձնել թարգմանել պաշտոնական գրությունները ու նամակները, այլև «Դիր կարգաց լատին եկեղեցւոյ» և «Օրհնութիւն թագաւորի»[75]։ Շատ նշանակալից են օրենքների հավաքումն ու թարգմանությունները, որ են՝ «Աւրէնք յաղթող թագաւորաց քրիստոնէից՝ Կոստանդիանոսի, Թէոդոսի և Լևոնի», «Համառօտ ժողովումն օրինաց վերստին», «Աւրէնք և գիրք ի ձեռն Մովսիսի՝ յելից գրոց», այլև «Օրինագիրք մի քաղուած ի Ղևտական գրոց»[76]։ Բերենք այստեղ թարգմանչի հետաքրքիր հիշատակարանից հետևյալը.*

«Զայս ծայրաքաղ աւրինադրութիւնքս տառապեալ եպիսկոպոսս Տարսոնի թարգմանեցի ի ծերացեալ հելլենացի մատենէ, թուին Ոխե [=645+

---

74 Գ. Զարբհանալյան, *Հայկ. հին դպրություն*, էջ 662, «Ողբք ի տէր Ներսէս արհին Տարսոնի, ասացեալ Խաչատուր պաշտօնէի, նորուն աշակերտի»։

75 Գ. Զարբհանալեան, *Մատենադարան Հայկական թարգմանութեանց նախնեաց*, Վենետիկ, 1889, էջ 500 և հետ.։

76 *Անդ*, էջ 750—755։

+551=1196]... Յամս քահանայապետութեանն Հայոց Գրիգորի[77], որ երրորդ էր նախնեացն իւրոց ի Հռոմկլայն, յաջորդ աթոռոյն, թուին ՈԽԲ [=642+551=1193], յութ և տասներորդ ամի նորին հայրապետութեան, խնդիր եղև առ նոյն սրբազանն ի քաղաքաց և ի գաւառաց բնակչաց՝ fաղաfական *աւրինացն. զի որք Իսմայելացւոցն էին իշխանք ի քաղաքս և դատաւորք՝ զդատ Հայաստանեայցս ոչ դատէին. այլ զխնդրողսն իրաւանց՝ առ իւրեանց աւրէնս առաքէին. զի այս էր ի նախագլուխ Մելիքացն հրաման առ դատաւորս քաղաքաց՝ յիւրեանց յօրինացն դատ թողուլ զնոսին։ Եւ եկեալ ոսոխք յեկեղեցին՝ հարցանէին աւրէնս ի քահանայից և ի քահանայապետաց. ոչ ունէին գիրս, որով ընտրեսցեն զիրաւունս. զոր և այլոց ազգաց տեսանէին՝ քրիստոնէից և մսլիմանաց, այսինքն՝ հռոմայեցոց, հելլենացոց, ասորոց, եգիպտացոց, արաբացոց, պարսից և այժմու իշխողացս թուրքաց։ Ի խնդիր եկին ապա առ հայրապետս ի Հայաստանեայց՝ արթունք կղերիկոսք և աշխարհականք, խեթեկալք յայլոց ազգաց և նախանձեալք զբարուրքն։ Եւ խուզեալ ընդ նա մեր՝ յարկեղս գրոց կաթուղիկոսարանին՝ ոչ գտաք աւրէն. բայց միայն զկանոնականս, որ ի սուրբ հարցն ժողովելոց էր գրեալ. և որ ի նոյն յարեցաւ ի նոցանէ կանոնս զգուշաւորս եկեղեցւոյ։ Իսկ* fաղաfի աւրէնս *ոչ գտաւ ի մէջ Հայոց, ոչ յեկեղեցիս և ոչ առ իշխանս։ Եւ կարի վշտացեալ հայրապետն՝ խնդիր առնէր առ այլ ազգս և պատահեալ անդ յասորոց Թէոդոս անուն կիրթ յիմաստութեան քահանայ, յայտնեաց տեառնս զի գոյր առ ինքն այս համառաւտ աւրինադրութիւնս, և հրաման տուեալ ինձ տառապեալ իւր ձեռնասուն որդւոյ Ներսէսի՝ յեղաշրջեցաւ ի հայս, նմին յիշատակ բարի, և զկնի եկելոցդ ուղղութիւն ընթացից։ Յետ որոյ ապա և ի հելլենացւոց արարի թարգմանութիւն մովսիսական աւրինացդ և Լէոնի և Կոստանդեայ աւրինացդ, ի նմանէ թարգմանեցի և* զզինուորական աւրէնիդ. *և ընծայեցի որոց սիրենն վարիլ սովաւ և համօյ գտանիլ աստուծոյ, և կառավարիչք քաղաքաց և գաւառաց»։*

Ներսես Լամբրոնացին այս հիշատակարանի մեջ շատ լավ բնորոշել է, թե ժամանակի ի՛նչպիսի կարիքից են ծագել քաղաքական օրենքների ժողովածուները, որ մինչ այդ չեն եղել հայերի մեջ։ Բայց այդ միանգամայն և Կիլիկիայի հայ պետության պահանջն էր և վերածնության շրջանի նոր մտավոր հոսանքի արդյունքը։ Ճիշտ նույն ժամանակներում, մի ութ-ինը տարի առաջ, 1184 թ. սկսել էր կազմել և Մխիթար Գոշն իր «Դատաստանագիրքը» հյուսիս-արևելյան Հայաստանում՝ և այս ոչ թե մահմեդականների ազդեցության համար, այլ օրինագիրք ունենալու պահանջից։ Բայց, ինչպես երևում է, Մխիթար Գոշի գործը դեռ հայտնի և տարածված չի եղել, գուցե և դեռ չավարտված։

---

77 *Գրիգոր Տղա կաթողիկոսն է։*

Ա ՌԱՋԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄԽԻԹԱՐ ԳՈՇ

1. Հյուսիս-արեվելյան Հայաստանի ազատումը մահմեդական բռնատիրությունից:— *Սելջուկյան տերության մեջ 11-րդ դարի վերջերից սկսվում են ներքին խռովություններ. առաջ են գալիս կենտրոնից անջատված անկախ իշխանություններ թե՛ Հայաստանում և թե՛ այլ երկրներում: Վրաստանը, որ համեմատաբար վերծ էր մնացել թուրքերի գործած մեծ ավերմունքներից, կարողանում է շուտով զորանալ. նրա թագավորներն օգտվելով թշնամիների ներքին գժտություններից՝ իրենց երկիրը մաքրում են նրանց բռնակալությունից:*

Միաժամանակ նրանք սկսում են գրավել Հայաստանի հյուսիս-արեվելյան կողմերը, ուր դեռ կային հայ անկախ իշխանությունները, բայց այլազգիների դեմ մաքառումով շատ թուլացած: Այդպիսիներից էր Լոռի քաղաքի և շրջակա գավառի Բագրատունի տերությունը, կամ Զորագետի թագավորությունը, որ Անու անկումից հետո մի առժամանակ սկսել էր առանձին նշանակություն ստանալ: Նա ընդարձակելով իր սահմանները դեպի հին Աղվանքի կողմերը՝ կոչվում էր նաև Աղվանից թագավորություն: Բայց «Աղվանք» անունն այն ժամանակ լոկ աշխարհագրական էր, բնակիչները բոլորը հայ էին և թագավորությունն ու երկիրը հայկական էր, ինչպես և Աղվանից կաթողիկոսությունը, որ վաղուց ի վեր մի հայկական կաթողիկոսություն էր, միայն անունը պահում էր հինը[1]:

«Կյուրիկէ Բագրատունի, որ ի Լօռէ քաղաքի,—գրում է Կիրակոս Գանձակեցին,—զամենայն ժամանակս իւր կացեալ ընդդէմ Վրաց, ի հաստատութեան պահէր զհայրենիս իւր. և յետ մահուան նորա որդիք իւր՝ դաւեալք ի Վրաց, ելեալք ի տանէ հայրենեաց գնացին ի Պարսիկս»:

---

[1] *«Աղվանք» կոչվում էր Հայոց աշխարհի մի մասը: Դավիթ Անհողին թագավորը պատվիրում է Աղվանից կաթողիկոսին, թե՝ «Ժողովեա զամենայն Եպիսկոպոսունդ Հայոց աշխարհիդ որ յԱղուանսն են...»: «Տէր Բարսեղ յարուցեալ գնայր յաշխարհն Հայոց ի յԱղուան գաւառի՝ ի Լօռէ քաղաք առ թագաւորն Հայոց Կիւրիկէ՝ որդի Անհողինն Դաւթի»:* Մ. Ուռհայեցի, *ժամանակագրութիւն*, էջ 80 և հետ.:

Նրանք տիրում են Տավուշին, Մածնաբերդին և այլ տեղերի[2]։ Զորագետի թագավորության անկումը լինում է 1112 թվականին Վրաց թագավոր Դավիթ Վերաշինողի ձեռով[3]։ Այս թագավորի օրով, սակայն, շարունակում են ծաղկած վիճակի մեջ մնալ հայկական վանքերը, ինչպես՝ Հաղբատը, որ տեսանք Հովհաննես (Յովհաննէս) Սարկավագ վարդապետի օրով։ Նաև նրա հաջորդները, ձգտելով Հայաստանի կողմերում ընդարձակելու իրենց տերությունը, աշխատում էին հենվել հայերի օգնության վրա։ Հայերին գրավելու համար նրանք նվերներ էին տալիս հայոց վանքերին, նոր տիրած հայկական գավառներին կառավարիչներ նշանակում էին հայերից։ Ուստի և շատ հայ ազատներ, հովանավորվելով նրանցից, մտնում էին վրացական զորքի մեջ, աշխատելով ընդհանուր ուժերով ազատել Հայաստանը մահմեդական լծից։ Դավիթ Վերաշինողը փորձում է տիրել նաև Այրարատին. նա 1124 թ. նվաճում է Անին, բայց երկու տարի հետո այդ քաղաքն անցնում է նորից Շեդդատյանների ձեռքը։ Գեորգի Գ. թագավորն (1156—1184) էլ 1161 թ. տիրում է Անիին, բայց չի կարողանում երկար պահել, 1165 թ. այդ քաղաքը նորից նվաճում են թուրքերը։ Միայն 1174 թ. նա կրկին առնում է Անին, որ այս անգամ մնում է վրացիների ձեռին։

Գեորգի Գ. թագավորի օրով հանդես է գալիս Զաքարյան կամ «երկայնաբազուկ» (վրացերեն՝ «Մխարգրձելի») անունով հայտնի հայ իշխանական տոհմը, որ հաստատվելով Զորագետում՝ խնամիացել էր այնտեղի Բագրատունի թագավորների հետ և որի սերունդներն իրենց արձանագրություններում մեջ իրենց համարում էին ծագումով Բագրատունի՝ «յազգէ Բագրատունեան»։ Այդ տոհմից Սարգիս անունով մեկը, իբրև ժամանակին հայտնի մի պաշտոնյա, 1161 թ. դառնում է Անու կառավարիչ, իսկ 1174-ին՝ կառավարչի տեղակալ։ Նա նշանավոր է դառնում ավելի ևս Թամար թագուհու (1184—1210 թթ.) օրով։ Լոռին և Անի քաղաքը թագուհուց նվիրվում են Զաքարյաններին ի ժառանգական սեփականություն և Սարգիսը կարգվում է Վրաց թագավորության ամիր-սպասսալար, այսինքն՝ սպարապետ։ Մի տարի հետո մեռնում է։

Սարգսի որդիները վայելում են Թամար թագուհու շնորհը և կատարում Վրաստանում ամենաբարձր պաշտոնները. նրանցից Զաքարեն դառնում է իր հորից հետո՝ ամիր-սպասալար, իսկ Իվանեն՝ աթաբեկ, այսինքն հազարապետ։ Այդ երկու եղբայրներն ևս շատ նշանավոր են հանդիսանում և մեծացնում Թամարի թագավորության սահմանները ու փառքը։

Զաքարյանների մեծ աջողությունները տեղի էին ունենում այն ժամանակ, երբ Լևոն Բ-ն ընդարձակել էր իր երկրի սահմանները՝ Կիլիկիա-

---

2 Կ. Գանձակեցի, *Պատմութիւն Հայոց*, էջ 145։

3 «Շողակաթ», էջմիածնի հայագիտական ժողովածու, Վաղարշապատ, 1913, էջ 73, Ա. Շահնազարյանց, *Զաքարյան (Երկայնաբազուկ) տոհմի ծագումը...*, էջ 66—83։

յից դուրս նվաճումներ անելով և ձգտելով դեպի Մեծ Հայաստան։ Թվում էր, թե Զաքարյաններն ու Լևոն թագավորը պիտի աջողին միմյանց ձեռք մեկնել։ Երկու եղբայրները հարձակվում են և էուբյան (Ծտյան) իշխանության վրա, պաշարում Խլաթ քաղաքը, բայց Իվանեն անզգուշության հետևանքով գերի է ընկնում, և ստիպված են լինում հաշտվել և բարեկամության դաշինք կռել՝ Իվանեի դուստրը կնության տալով էուբյան մելիքներին։ Զաքարյանների առաջխաղացումը կանգ է առնում Հայաստանի հարավ-արևմտյան կողմում Եգիպտոսի էուբյան հզոր տերության առաջ։ Դրա փոխանակ Զաքարեն իր արշավանքը մինչև իր մահը շարունակում է դեպի Ատրպատականի կողմերը։

Այսպես Վրաստանի թագավորները շնորհիվ իրենց խելոք քաղաքականության՝ գրավելով հայերին՝ վրացի և հայ միացյալ զորքերով, հետո և հայ զորապետների ձեռով կարողանում են նվաճել մեծ Հայաստանից մի մեծ երկրամաս մինչև Ատրպատական և իրենց գերիշխանության տակ պահել մինչև թաթարների ներխուժումը։ Եվ վերջապես հայ ժողովրդի մի ստվար մասն ազատվում է մահմեդականների բռնատիրությունից և ենթարկվում է բարեկամ քրիստոնյա տերության։

Այդ բարեկամությունն արտահայտվում էր այնու, որ ազատագրված Հայաստանի իսկական կառավարիչները ազդեցիկ Զաքարյաններն էին Վրաց թագավորի անվանական գերիշխանության տակ։ Թե ինչպիսի կախում են ունեցել Զաքարյանները Վրաց թագավորներից, այդ դեռ լիովին պարզված չէ. բայց նրանք հզել են Հայաստանի տերերը, ամեն կարգադրություններ անելու անսահման իրավունքով։ Նրանք անվանում էին իրենց ձեռին գտնված երկիրը «թագավորություն», «ինքնակալ պետություն», իսկ իրենց՝ նաև «թագավոր», «շահինշահ»։ Կիլիկիայի հայ եկեղեցականությունն ևս Զաքարեին ուղղած իր թղթի մեջ նրան կոչում է «մեծ սպարապետ և շահնշահ արևելեան կողմանցն»[4]։ Նրանք Հայաստանի գավառները ոչ միայն իրենց էին սեփականում, այլև տալիս էին իրենց զինակից հայ ազնվական տոհմերին, որոնք իբրև վասալներ ենթարկվում էին Զաքարյաններին և անվանում էին նրանց իրենց «պատրոնը», այսինքն «տերը»։ Այսպիսով վերականգնվում է և ուժեղանում Հայաստանում ֆեոդալական (ավատական) հասարակական-պետական կառուցվածքն իրեն հատուկ հիերարխական կազմով ու կախումով միմյանցից աստիճանաբար։

Իշխանության կենտրոնն էր Անի քաղաքը, որ թուրքերի տերության ժամանակ էլ պահել էր իր առևտրական մեծ քաղաքի դերը։ Կային և ուրիշ առևտրական կենտրոններ։ Երբ հայ իշխանություններ են կազմվում, ավելի ևս զարգանում է առևտուրը նաև Արևմուտքի հետ Կիլիկիայի միջոցով։ Բարձրանում են վաճառականները, որոնք ունեին ոչ միայն դրամական մեծ հարստություն, այլև գնումներ անելով կամ վաշխառությամբ տիրանում էին մեծ կալվածների և անշարժ կայքերի։

4 Կ. Գանձակեցի. *Պատմութիւն Հայոց*, էջ 159։

Տնտեսական զարգացման հետևանքով առաջ է գալիս կուլտուրական բարգավաճում և շինարարություն քաղաքներում։ Ծաղկում է նաև եկեղեցական շինարարությունը։ «Շինեցան բազում վանորայք, որ ի վաղուց ժամանակէ անտի աւերեալ էին ի հեթինեն Իսմայէլի,—գրում է Կիրակոս Գանձակեցին (էջ 155),—վերստին նորոգեցան եկեղեցիք... շինեցան և նոր վանորայք և եկեղեցիք, որ ի հնոցն չէ՛ էին լեալ վանք»։ Վաճառականներն ու ֆեոդալները ոչ միայն աշխարհիկ շենքեր էին կառուցում, այլև նվերներ էին տալիս վանքերին ու եկեղեցիներին և ամեն կերպ նպաստում նրանց։ Այս եղանակով նրանք միջոց էին գտնում իրենց կուտակած հարստության մի մասը գործադրելու։

Ասել չի ուզիլ, որ ինչպես Բագրատունիների շրջանում, նույնպես և այժմ հարստությունը տանում էր նաև դեպի ճոխ ու փարթամ կյանքի վայելչությունը։ Բայց ինչպես այն ժամանակ, նույնպես և Զաքարյանների օրով սրված էր վայելող և աշխատավոր դասակարգերի հարաբերությունը։ Բուն արտադրող ժողովուրդը ենթակա էր անխնա կեղեքման ու շահագործման։ Այսպիսի սոցիալական հակասության հետևանքով բնականաբար սրվում էին սոցիալական հարաբերությունները, և իրար դեմ կանգնած էին երկու տնտեսապես հակառակ կողմերը։ Նույն ֆեոդալական դրությունն ու դասակարգային ներհակությունն էր և արևմտյան Հայության մեջ ու Կիլիկիայում։ Շահագործվող աշխատավորության դրությունն ավելի ևս ծանր էր մահմեդականների իշխանության տակ մնացած ժողովրդի համար։ Գրիգոր Տղան (1173—1193 թթ.) դեռ իր կաթողիկոսության առաջին տարիներում, ուրեմն Զաքարյան եղբայրների իշխանությունից առաջ, միության խնդրի առթիվ Գրիգոր Տուտեորդուն ի Հաղբատ ուղղած թղթի մեջ[5] գրում է. «Յամենայն Հայոց աղգաց եկեղեցիս որ յայդ կողմանդր են, մանաւանդ թէ ի բոլոր սեռս՝ խաղաղութիւն, անդորրութիւն ձեզ է պարգևեալ ի վերուստ։ Թագաւոր քրիստոսասէր, և իշխանք բարեպաշտօնք, պարգևք գաւառաց և անդոց՝ հոգևոր և մարմնաւոր հանդերձ աղատութեամբ. և դուք կամաւ անգիտանայք և անտես առնէք զբեկումն ազգիս, և ստայօղ պատճառօք հրաժարէք ի գլխոյս կոչմանէ... երբ դուք հրաժարէք, յառաջ զո՞վ կոչեմք. զԱյրարատեա՞նդ եթէ զկարնեցիք, եթէ զՏարօնեցիքն՝ որ նեղեալ և զրուեալ են ի հարկապահանջ բռնակալացն, և կարօտին միայն աւուրն պարենի»։ Այսպես է նկարագրում Գրիգոր Տղան հայերի վիճակը մի կողմից մահմեդականների, մյուս կողմից վրացական իշխանության ներքո Գեորգի Գ-ի օրով, երբ սա Անին արդեն առել էր։ Նա քրիստոնյա տերության մեջ ապրող հայերի վիճակին հակադրում է տառապյալ դրությունն այն հայերի, որոնք դեռ գտնվում էին մահմեդականների ձեռին։ Բայց հիշված «հոգեվոր և մարմնավոր աղատությունն» ունեին միայն «բարեպաշտոն իշ-

---

5 Գրիգորի կաթողիկոսի Տղայ կոչելոյ նամականի, «Պատասխանի թղթոյն վարդապետին Գրիգորի Տուտէորդւոյն...», Վենետիկ. 1865, էջ 87 և հետ.։

խաններն» և հոգևորականներն ու վանականները։ Սրանք էին իշխաններից ստանում «պարգևք գաւառաց և անդոց»։ Իսկ աշխատավոր ժողովրդի տնտեսական վիճակը ծանր էր։ Այս մասին, ինչպես սովորաբար, անուշադիր են պատմագիրները, բայց ոչ մեր այլ գրական հիշատակարանները, առանձնապես առակները, որ կտեսնենք հետո։

Որ իշխանները հովանավորում էին վանքերը, այդ միայն նրանց բարեպաշտությունից չէր բխում, այլև նրա համար էր, որ գիտությունը, ուսումն ու գրականությունը, ինչպես առաջ, հոգևորականներն էին մշակում գլխավորապես վանքերում։ Երևելի են հանդիսանում բազմաթիվ վարդապետներ, որոնց մեջ իր կյանքով, իր ուսուցչական և գրական գործունեությամբ փայլում է Մխիթարը, Գոշ (=քարձ, կարճամորուս) ավելի անունով. «Այսպէս կոչէին զնա մականուամբ, քանզի հեղգագոյն եկին ալիք նորա», բացատրում է Կիրակոս Գանձակեցին (էջ 208)։

Նշանավոր վարդապետներից է և Հազարծին վանքի առաջնորդ Խաչատուր Տարոնեցին «գիտութեամբ հռչակեալ, մանաւանդ երաժշտական արուեստիւ։ Սա պայծառացոյց զսուրբ ուխտն՝ որում առաջնորդ էր ինքն, որ յառաջ քան զգալն նորա՝ ամայի էր և խամրացեալ։ Զսա պատուէր մեծապէս թագաւորն Վրաց Գիորգի, Հայր Թամարին։ Եւ եկեղեցւոյն ձեռնագրովն իւրով ետ ղերկուս գեւղսն, զԱբասաձոր և զՏանձուտն, և այգի մի ի Միջնաշինին... Սա եբեր զխազն ի կողմանս յարևելից, զանմարմին եղանակն ի մարմին ածել, զարարեալսն յիմաստնոց, որ ցայն ժամանակս չե՛ւ էր սփռեալ ընդ աշխարհս։ Սա եկեալ գրեաց և ուսոյց՝ բազմաց»[6]։ Ցավոք, Կիրակոսը չի հիշում, թե Խաչատուր Տարոնեցին ո՛րտեղից էր եկել արևելք, ո՛րտեղից էր բերել երաժշտական խազերը, և ո՛վքեր են եղել դրանց հնարողները։ Այդ ձայնանիշները շատ կիրառվում են հետագայում, բայց 18-րդ դարի վերջերից ի վեր մոռացության են տրված, և այլևս հնարավոր չի եղել նրանց վերծանությունը, որով հայտնի կլինեին մեր հոգևոր երգերի հին եղանակները, որ խազերով նշանակված են ձեռագրերի մեջ։ Խաչատուր Տարոնեցին եղել է նաև երգեցող և բանաստեղծ. նրա հորինածն է և «Խորհուրդ խորին, անհաս, անսկիզբն» բառերով սկսված երգը, որ ասվում է պատարագի արարողության սկզբում և շատ ծանոթ ու սիրված է եղել նաև իր վսեմ եղանակի համար։

2. Մխիթար Գոշի կենսագրությունը։—*Այս «մեծ վարդապետի» մասին կենսագրական տեղեկություններ հաղորդում է գլխավորապես Կիրակոս Գանձակեցին[7]։ Նա Գանձակ քաղաքից էր։ Ծնողները նրան տվել են «յուսումն Գրոց սրբոց»։ Ջափահաս դառնալով նա ձեռնադրվել է կուսակրոն քահանա։ Տարիներ հետո ցանկանալով ավելի «հմուտ լինել Գրոց սրբոց և առակաց խորոց՝ որ ի նոսա», աշակերտել է Հովհաննես (Յովհաննէս) Տավուշեցի վարդապետին, որ իր գիտությամբ երևելի է*

---

6 Կ. Գանձակեցի, *Պատմութիւն Հայոց*, էջ 199 և հետ.։

7 Անդ, էջ 195—205 և այլուր։

եղել այն ժամանակները և տեղեցտեղ շրջելով քարոզութիւն արել։ Սրա, ինչպես և մի քանի ուրիշների մոտ սովորելուց հետո Մխիթարն ստանում է վարդապետական աստիճան։ Բայց նա չի բավականանում իր առած ուսումով, այլ գնում է արևմտյան կողմը, Սև լեռը, և չհայտնելով, թե ինքն արդեն վարդապետական պատիվ ունի, ուսանում է այնտեղի վարդապետների մոտ և շատ օգտվում է նրանցից։ Վերադարձին Մխիթարը Կարին քաղաքում ծանոթանում է Քուրթ իշխանի հետ, որ այնտեղ էր «սարտուցեալ ի թագաւորութենէ Վրաց»։ Նա շատ սիրում է Մխիթարին, թե ե՛րբ և քանի՛ տարի է ուսում առնում այս «հռչակաւոր և գիտութեամբ մեծիմաստ» վարդապետը, այդ հայտնի չէ։ Երբ վերադառնում է իր հայրենիքը,—ասում է Կիրակոս Գանձակեցին,—նրա գիտության համբավը տարածվում է ամեն կողմ, և շատերը ժողովվում են նրան աշակերտելու։ Բայց հետո նեղվելով մահմեդականներից՝ գնում է Խաչենի գավառը Հաթերքի իշխան Վախթանգի և նրա եղբայրների մոտ, որոնք մեծ պատվով ընդունում են նրան։

Քուրթ իշխանը Թամար թագուհու օրով վերադառնում է իր հայրենի «աշխարհն Կայենոյ և Մահկանաբերդոյ». թագուհին շատ մեծարում է նրան՝ տալով նրան նրա հայրենի տեղերը, այլև ուրիշ շատերը։ Այս որ իմանում է Մխիթարը, հիշելով իր հին բարեկամությունն այն իշխանի հետ՝ Հաթերքից գնում է նրա մոտ և բնակվում է Գետիկ վանքում, որ Կայենո գավառում էր, Աղստև գետի վրա, գետի աջ կողմում (ոչ հեռու Դիլիջանից)։ Վանքի առաջնորդը, Սարկավագ անունով, որ Մխիթարի աշակերտներից էր, ուրախությամբ ընդունում է նրան։ Վարդապետն այնտեղ մնում է երկար ժամանակ։

Սաստիկ երկրաշարժից քանդվում է Գետիկ վանքը. միաբաններր Մխիթարի խորհրդով չեն ցրվում, այլ Իվանե Աթաբեկից խնդրում են մի «բարեվայելուչ» տեղ, որ անվանվում էր Տանձուտա ձոր, և այնտեղ հիմնում են մի նոր վանք—«Նոր Գետիկ»։ Նախ շինում են երկու փոքր եկեղեցի, հետո 1191 թ. սկսում են շինել և հինգ տարում ավարտում են մի «մեծափառ եկեղեցի կոփածոյ վիմօք և գեղեցկաշէն արուեստիւ, գմբեթայարկ երկնանման, սխրալի տեսողաց»։ Շինում են և եկեղեցու դավիթ «գեղազարդ կոփածոյ վիմօք»։ Վանքի շինարարությանն օգնում են Հաթերքի տերը՝ Վախթանգ Խաչենեցին և իր եղբայրները, Քուրթ իշխանի որդիները և դուստրը՝ Արղու Խաթուն, որ Հաթերքեցի Վախթանգի կինն էր։ Շատ օգնում են նաև Զաքարեն ու Իվանեն, որոնք Քուրթ իշխանի քեռորդիներն էին։ «Քանզի նոքա ունէին զիշխանութիւն գաւառին, և զսուրբ վարդապետն [Մխիթար] յոյժ սիրէին. քանզի Զաքարէ խոստովանութեամբ որդի էր նորա հոգևոր [ուրիշ տեղ, էջ 158. «էր հայր խոստովանութեան նմա»]։ Եւ ընծայեցին եկեղեցւոյն սահման ջրադարձովք լեռնէ ի լեառն, և բով մի յԱբասաձոր և զՋօրոձոր ի նահանգին Բջնոյ և զԱշաւա ի գլուխ վանացն»։ Շինում են մոտիկում և երկու գյուղ, այլև ուրիշ շենքեր։ Այսպես Քուրթ իշխանի մերձավորներն առանձնապես՝ հո-

գում են Մխիթար Գոշի վանքի համար։ Նրա դուստր Արզուն ոչ միայն շատ օժանդակում է շինությանը, այլև, ասում է Կիրակոս Գանձակեցին, «արար և վարագոյր գեղեցիկ՝ դատերօք իւրովք՝ ծածկոյթ սուրբ խորանին, զարմանալի տեսողաց, ի մազոյ այծից կակղագունաց, ներկեալ պէսպէս և զանազան, գործ քանդակակերպ և նկարեալ պատկերօք, ճշգրտագոյն հանուածովք, տնօրինականօք Փրկչին և այլ սրբոց, որ հիացուցանէր զտեսողսն...»։ Նա նույնն անում է և ուրիշ եկեղեցիների ու վանքերի համար։ Այսպես, իշխանների հովանավորությամբ զարգանում են վանքերը—այն ժամանակների կուլտուրական վայրերը։

Ինչպես վերևում ասվեց, Մխիթարի գիտնականության համբավը մեծ էր. նրա մոտ հավաքվում էին բազմաթիվ աշակերտներ զանազան կողմերից. ամենքը փափագում էին տեսնել նրան և սովորել նրանից։ Ինչպես ինքը Մխիթարը վարվել էր մի ժամանակ, շատ վարդապետներ ծածկում էին իրենց աստիճանը և աշակերտելով նրա մոտ՝ նորից ստանում էին վարդապետելու իրավունք։ Նրա աշակերտներից ոչ սակավներ հետագայում հայտնի են լինում իբրև վարդապետներ։ Նա մեծ հարգանք էր վայելում ոչ միայն իր աշակերտներից, այլև երկրի իշխողներից և եկեղեցականությունից։ Նա հեղինակավոր էր շատ խնդիրների մեջ։ Երբ պատարագի համար շարժական սեղան ունենալու խնդրի առթիվ Զաքարեն եկեղեցականների ժողով է գումարում Անիում, և Մխիթարը հիվանդության պատճառով բացակայում է, եկեղեցականներն ասում են. «Անհնար է մեզ առանց մեծ վարդապետին առնել զայդ», այսինքն՝ ընդունել շարժական սեղանը։ Իսկ երբ Մխիթարին թախանձելով բերում են, Զաքարեն դիմավորելով նրան, ասում է. «որովհետև եկիր դու, ինձ ոչինչ է փոյթ զնոցանէ»։ Նա Մխիթարին ավելի բարձր է դասում, քան եկեղեցականների համագումարը։ Չնայելով դրան՝ նա չի մեծամտում, և մարդահաճություն չի անում. նա բնավորությամբ համարձակ է և առանց քաշվելու մեղադիր է լինում Զաքարեին, որ իշխանաբար է գործում եկեղեցական խնդիրների մեջ։ Բայց և նա հոգացող է իր ազգի համար. պատրաստ է որոշ կրոնական ծեսերի մեջ վիջող լինելու, միայն թե ազգային կորուստ չլինի։ Նա բարի է և ներողամիտ իրեն մեղադրողների վերաբերմամբ և Զաքարեի մոտ միջնորդում և ազատում է շատերին, որ զորավարն ուզում էր իրենց տեղերից վտարել[8]։

Եվ այսպես շարունակ աշխատելով և ուսուցանելով՝ նա 1213 թ. վախճանվում է, իր աշակերտներով ու միաբաններով շրջապատված, և թաղվում է իր շինած վանքում։ Նրա ծննդյան թվականը հայտնի չէ։ Նա մեռել է հասնելով «ի խորին ծերութիւնն», «ալևորեալ և լի աւուրբք»։ Եթե այսպիսի ծերությունն է 80—85 տարեկան հասակը, ապա նա ծնված պիտի լինի շուրջ 1130 թվականին։ Այս արևելյան մեծ վարդապետը, ուրեմն, ժամանակակից է Ներսես Շնորհալուն և Ներսես Լամբրոնացուն,

8 Կ. Գանձակեցի, *Պատմութիւն Հայոց*, էջ 157—168։

և ինչպես սրանք գրականության մեջ փայլուն ներկայացուցիչներն են արևմտյան հայության, նույնպես և Մխիթար Գոշն իր վարդապետական ու գրական գործունեությամբ արտացոլումն է հյուսիս-արևելյան հայության վիճակի 12-րդ դարում։

3. «Դատաստանագիրք Հայոց»։—Մխիթարի կենսագրության վերջում կիրակոսը գրում է, թե «Ետող նա յիշատակ և արձան գերեզմանի գիրս մտախորհս յօգուտ ուսումնասիրաց»։ Եվ նա հիշատակում է հետեվյալները՝ «Համառօտ մեկնութիւն մարգարէութեանն Երեմիայի», «Սուղ ինչ կանոնք», թե ինչպես և ինչպիսի կարգով պետք է պատարագ անել, «Գիրք մի Ողբք ի վերայ բնութեանս՝ ի դիմաց Ադամայ առ որդիս նորա, և ի դիմաց Եւայի առ դստերս նորա», «Գիրք մի յայտարարութիւն ուղղափառութեան հաւատոյ ընդդէմ ամենայն հերձուածողաց՝ ի խնդրոյ մեծ զորավարին Զաքարէի և եղբօր իւրոյ», և «Թուղթք խրատականք»։ Կիրակոսի հիշածներից հետաքրքիր կլիներ «Ողբքը», բայց այս դեռ հայտաբերված և տպագրված չէ։ Ձեռագրերի մեջ նրա անունով կան և ուրիշ երկեր, որոնցից տպագրված են «Աղոթքներ», «Առակք» և «Դատաստանագիրք Հայոց»[9]։ Վերջին երկուսը Մխիթար Գոշի ամենակարևոր գրական գործերն են, և այդ երկուսն ևս ժամանակի արտահայտությունն են։

Հայոց հին կյանքը մինչև 12-րդ դարը կամ 11-րդ դարի վերջերը առաջ չի բերել որևէ աշխարհիկ իրավաբանական աշխատություն. եղել են միայն եկեղեցական կանոնները։ Սրանցով և սովորույթի ավանդական դիրքերով բավականացել են և աշխարհիկ ֆեոդալները, մանավանդ որ, ինչպես հայտնի է, նրանք ևս մասնակցում էին եկեղեցական կանոնադիր ժողովներին։ Աշխարհիկ օրենսդրության չգոյությունը բացատրվում է այնու, որ մեր գրավոր դպրության սկզբից ի վեր շատ դարեր գոյություն չի ունեցել ազգային ինքնուրույն պետություն։ Բայց զարմանալի է, որ Բագրատունյաց թագավորության օրով ևս, գոնե հարյուրամյա խաղաղ շինարարության դարում, չի զգացվել գրավոր օրենքների պահանջ, և առաջ չի եկել հայկական որևէ օրինագիրք։ Այս բացատրվում է այնու, որ շատ վաղ վերջ տրվեց ընդհանուր հայկական պետությանը, և կազմվեցին մի շարք մանր, իրարուց անջատ տերություններ, որոնք չէին կարող ընդհանուր օրինագրքեր հրատարակել։ Ապա եկեղեցին, հոգևոր իշխանությունը, շատ ղորեղ էր իր ազդեցությամբ նրանց վրա. ուստի շարունակում էին եկեղեցական կանոններով բավականանալ։ Անիի թագավորության վերջին տասնամյակներում դեռ նոր պիտի հասունանար սեփական ազգային օրենքների պահանջը, բայց վրա հասավ հայկական սոցիալ-քաղաքական կյանքի քայքայումը, երբ այլևս միջոց չկար այդ մասին խորհելու։

---

9 Մխիթար Գոշ, Դատաստանագիրք Հայոց. Իրաւաբանական հետազօտութիւնք հանդերձ ծանօթագրութեամբք Վահան ծ. վարդապետի Բաստամեանց, Վաղարշապատ, 1880, բարձր դնահատության արժանի մի հրատարակություն, ընդարձակ «Յառաջաբանությամբ» (1—180 էջ), բազմաթիվ ծանոթություններով և ձեռագրական այլ ընթերցվածներով։

Այդպիսի աշխատության առաջին փորձը եղել է Ալավկա որդի Դավթի ձեռով. նրա «Կանոնները» կամ «Կանոնական օրինադրություններ» արտահայտություն էին հյուսիս-արևելյան հայկական գավառների առաջին բարգավաճմանը վրաց թագավորների հովանավորության ներքո։ Այդ դրությունն, ինչպես տեսանք, գնալով զարգանում է, և առաջանում է Զաքարյանների իշխանությունը Հայոց երկրի մի ընդարձակ տարածության վրա. մյուս կողմից մեծանում և ուժեղանում է հայկական պետությունը Կիլիկիայում։ Երկու կողմերում էլ կազմվում են հայկական ավատական իշխանություններ նման սոցիալ-քաղաքական պայմաններով. տնտեսապես և կուլտուրապես ծաղկում են նրանք, և ձգտում են ավելի ևս բարեկարգվելու։ Եվ ահա՛ միաժամանակ երկու կողմերում ևս զգացվում է անհրաժեշտ պահանջ աշխարհիկ օրենքների։ Պետք էր գրավոր օրինագրքի միջոցով հիմնավորել և հաստատել ազգային պետությունների մեջ արդեն գոյություն ունեցող իրավական դրությունը։ Արևմուտքում այդ, ինչպես տեսել ենք, աշխատում է գլուխ բերել Ներսես Լամբրոնացին Հայոց կաթողիկոս Գրիգոր Տղայի հրամանով, հետագայում Սմբատ Սպարապետը, իսկ Արևելքում՝ Մխիթար Գոշը Աղվանից Ստեփանոս կաթողիկոսի հարկադրանքով։ Բայց այդ՝ ոչ լոկ կաթողիկոսների մտքի ծնունդն էր, այլ ընդհանրապես այն ժամանակի մտավորականների, մինչև անգամ Հայաստանի այն մասերում, որոնք գտնվում էին մահմեդականների ձեռին։ Վերջիններիս դատավորները հայերի դատը չէին անում, «այլ զխնդրողսն իրաւանց՝ առ իւրեանց օրէնսն առաքէին», գրում է Ներսես Լամբրոնացին։ Այս էր այլազգի իշխողների կարգը։ Իսկ հայերը չունեին դատաստանագիրք, որով ըստ օրենքների լիներ արդարադատությունը, և դրանից առաջանում էին դատի ժամանակ շահախնդրական վերաբերմունքներ դատավորների կողմից։ Ոսոխները պահանջում էին ազգային գրավոր օրենքներ. և քանի որ այդ չկար, ետ դառնալով դիմում էին այլազգիներին։ Այս դատարանական ծանր դրությունը եղել է և՛ Արևմուտքում, և՛ Արևելքում, և այս շատ խորը գիտակցում է Մխիթար Գոշը։

«Դատաստանագիրքն» ունի մի «Նախադրություն», որի առաջին գլխի վերնագիրն է. «Պատասխանի այնոցիկ, որ բամբասեն զմեզ ոչ ունել դատաստանս»։ Եվ ապա նա հենց սկզբից գրում է. «Հանդերձեալ գրել զգիրս դատաստանաց, յառաջ պատասխանի տացուք նոցա, որք բամբասեն զօրէնսն Քրիստոսի, թէ դատաստան ոչ կայ ի նմա. քանզի բազումք են որ գովեն զայլազգիս, որպէս թէ իրաւացի դատաստան ունին»։ Մխիթարը կրոնավորի ու մեկնաբանի վայել պատճառաբանությամբ արդարացնում է դատաստանագիրք չունենալը, և հետո երկրորդ գլխի մեջ բացատրում է, թե ի՛նչ պատճառից դրդված՝ ինքը կամենում է «գրել դատաստանք»։ Առաջին պատճառն այն է, ասում է նա, որ «բազում անգամ լուաք բամբասանս յայլազգեաց և ի քրիստոնէից, թէ՝ բնաւին ի Քրիստոսի օրէնքս դատաստան ոչ կայ»։ Եվ նա թվում է տասներկու

պատճառներ, որոնցից յոթներորդն է. «Զի մի՛ վասն ոչ գոլոյ դատաստան՝ երթիցեն առ այլազգիս ի դատաստան»։ «Ութերորդ՝ տեսանեմք զի այժմ ոմանք յեպիսկոպոսաց և ի վարդապետաց և ի քահանայից և ի գլխաւոր աշխարհականաց և յիշխանաց զի աչառանօք և կաշառօք և տգիտութեամբ թիւրեն զուղիղ դատաստանն։ Վասն որոյ սակաւուք դրոշմել կամեցաք զգիրս դատաստանի, զի լիցի ի յանդիմանութիւն այնպիսեացն և յուղղութիւն»։ Նա չի մոռանում ուրիշների նախատական խոսքերը. իններորդ պատճառաբանության մեջ դարձյալ ասում է, թե իր գիրքը գրել է, որպեսզի «յամենայն ժամ ի ձեռս առեալ յիշեմք. և ցուցցուք այլոց ազգաց, թէ գրոց դատաստանաւ վարիմք. որով ըմբերանեալք մի՛ կարասցեն նախատել զմեզ»։

Մեծ վարդապետն իրեն ճնշված է զգացել հայկական արդարադատության այդպիսի վատթար վիճակից. «Ի բազում ժամանակաց տարակուսեալ լինէի վասն սորին իրաց ի նախատելն զմեզ մերոց և օտարաց,—գրում է նա։—Այլ և հարկեաց զմեզ յայս սիրեցեալ աշակերտն Սուրբ Գրոց Պաւղոս հարկեցուցիչ բանիւք, և ոչ կարացի առնուլ յանձն պատճառ ունելով զտգիտութիւնս և զմարմնոյս տկարութիւնս»։ Բայց երբ Ստեփանոս կաթողիկոսը մի քանի անգամ ստիպում է նրան կատարել այդ գործը, նա վերջը սկսում է այն։ Վերջին ԺԱ գլխի մեջ՝ «Յիշատակարան սակաւուք», հայտնում է, թե ե՛րբ (1184 թ.) և ո՛ւր (Դասնո անապատում և Հոռոմաշեն վանքում) սկսել է գրել «Նախադրութիւն»-ը, և որպիսի նեղութեամբ։ Այստեղ նա թվում է դժվարությունները՝ «անպարապութիւն, զի ընդ ստեամբ ախտաժէտիւ զմանկունս ունէի բանի. և զպանդխտութիւն. և զանտեղութիւն գրչութեան... և զպակասութիւն գործեաց գծագրութեանց, և զաղքատութիւն մատենից, յորոց զնիւթս հաւաքել ի դէպ էր բանից»։

«Նախադրության» մյուս գլուխների մեջ Մխիթարը պարզում է իր հայացքը դատաստանական խնդիրների և անձերի մասին, ինչպես են՝ դատավարություն, դատավորներ, վկաներ, երդում, օրենքների աղբյուրներ, և այլն, և վերջապես մի ամբողջ գլուխ (Թ) դարձյալ ժամանակի ցավոտ կողմի մասին՝ «Յաղագս թէ ո՛չ է պարտ քրիստոնէի երթալ յատեան անօրինի, զի բազում է միջոցն, որպէս այժմ ցուցանէ բանս»։ Եվ Մխիթարը մանրամասն թվում է հայի և մահմեդականի հասկացությունների տարբերությունները։ Բայց չնայելով դրան, ասում է նա, «զբազումս տեսանեմք այժմ, զի յորժամ ի հոգևոր դատաստանս մեր գիտեն թէ ոչ արդարանան՝ դիմեն և գնան առ այլազգիս, զի թերևս նոցա դատաստանաւն յաղթեսցեն ոսոխացն»։ Ուրիշ տեղ (գլ. Զ, էջ 28) գրում է՝ երբ դատավորներն ուղիղ դատաստան չեն անում, «Գայթակղին միտք տկարացն և դիմեն առ այլազգիսն երթալ ի դատաստան»։

Բուն դատաստանագիրքը կազմված է երկու մասից, առաջին՝ «Եկեղեցական կանոնք», և երկրորդ՝ «Աշխարհական օրէնք»։ Թե ինչպիսի աղբյուրներից և ինչպես է օգտվել Մխիթարը իր գիրքը հորինելիս, այդ

մասին կարևոր չէ այստեղ կանգ առնել։ Միայն պետք է նկատել, որ նա, ինչպես «Նախադրության» մեջ հայտնում էլ է, աղբյուրների պակասություն է ունեցել և, ինչպես երևում է, աղբյուրները միանգամից չի ունեցել ձեռի տակ, այլ հետզհետե, և այսպես էլ հետզհետե օգտվել է դրանցից։ Ուստի նրա գրքում հոդվածների դասավորության մեջ զգացվում է օրենքների խմբավորման նկատմամբ որոշ ձևական թերություն։ Գալով բովանդակությանը՝ պետք է ասել, որ թեև Մխիթար Գոշն օգտվել է օտար աղբյուրներից, բայց նկատի է ունեցել և հայկական սովորույթներն ու ազգային իրավաբանական ավանդությունները, և հաճախ քննադատում է իր աղբյուրների հոդվածներն և իր տեսակետն է առաջ քաշում. օրինակ՝ «Մխիթարը, ինչպես պարզ երևում է նորա Դատաստանագրքից, ամենևին չէ համակրում մովսիսական խիստ և վրեժխնդիր օրենքներին, և ընտրելով նոցա միջից մեղմագույնները՝ ինքն անդադար կա՛մ կերպարանափոխում է նոցա և կա՛մ թողնում է դատավորի ազատ կամքին նոցա գործածելը կամ չգործածելը»[10]։ Այդ իսկ պատճառով նրա Դատաստանագիրքը հիմնականում ունի ազգային բնույթ ու գաղափարախոսություն ի հակադրություն նախորդ քաղաքական շրջանի այլազգի, այսինքն մահմեդական իշխողների շահերը պաշտպանող օրենքների, իրոք մահմեդական կրոնի, «զի նոքա ըստ իւրեանց կրօնիցն առնեն զդատաստան», դրում է Մխիթարը։ Այդ ազգային-կրոնական ներհակության հետևանքով «Դատաստանագրքի բոլոր հոդվածներում կարմիր թելի նման անցնում է ազգային խտրության գաղափարը, ուր հայը հակադրվում է «այլազգուն», ուր իրավական դերակշռությունը պատկանում է հայությանը, հանձին ֆեոդալական դասի և դրա համապատասխան չափով սեղմվում, սահմանափակվում են «այլազգիների» իրավաբանական պաշտպանության միջոցները»[11]։

Մենք այստեղ, հարկավ, չպիտի խոսենք այս նշանավոր աշխատության առանձին հոդվածների մասին, բայց կցանկանայինք մի երկու կետ բերել Առաջին մասի երրորդ գլխից, «Յաղագս դատաստանաց վարդապետաց», և այս նրա համար, որ «վարդապետ» բառը հաճախ հիշատակվում է մեր հին գրականության մեջ։ Հայոց եկեղեցու մեջ վերջին դարերում գրեթե չի գործածվում «աբեղա» բառը. ամեն վանական, կրոնավոր, որ ձեռնադրվում էր կուսակրոն քահանա, միաժամանակ ձևականորեն ստանում էր վարդապետի կոչում։ Այսպես չի եղել հնումն, երբ «վարդապետ» նշանակել է «ուսուցողը», «ուսուցիչ» (դոկտոր), և այդ անունը իբրև մի գիտական տիտղոս, կոչում՝ առանձին ծիսակատարությամբ տրվում էր աբեղաներին։ Դրանով նրանք իրավունք էին ստանում ուսուցանելու, քարոզելու ժողովրդին, և իբրև նշան այդ կոչման՝ կարող էին ձեռներին գավազան բռնել։ Վարդապետության գիտական կոչումը

---

10 Մխիթար Գոշ, *Դատաստանագիրք Հայոց, «Յառաջաբանութիւն հրատարակողի» Վահան վ. Բաստամյանի, էջ 117։*

11 Խ. Սամուելյան, *Հին հայ իրավունքի պատմություն, հատ. Ա, Երևան, 1939, էջ 80։*

տալիս էին միայն վարդապետները վարդապետացուի գիտական պատրաստությունը քննելուց հետո։ Արդ՝ Մխիթար Գոշն իր Դատաստանագրքի մի ընդարձակ հոդվածով (էջ 88—93) կանոնադրում է և վարդապետական կարգը. քաղենք սրանից մի քանի հետաքրքիր կետեր.

1. Հենց սկզբից ասում է նա. «Եւ վարդապետք եղիցին ըստ իրաւանց նախակրթեալք Հին և Նոր Կտակարանաց և կանոնական հրամանաց»։ Ուրեմն վարդապետացուները, նախքան իրենց կոչումն ստանալը, պետք է վարժված լինեին եկեղեցական ուսումով։

2. «Յերկուց և յերից վարդապետաց կոչեսցին ի պատիւ հրամանի, թէ և պատահի միոյ աշակերտիլ. և թէ ղկամս եպիսկոպոսի և կամ ևս առաւել զհայրապետի ընդ իւրեանս առնուցուն, նաև զիշխանի, բարիոք ևս գործիցեն. ապա թէ ոչ՝ ըստ օրինացն յերկուց և յերից հաստատեսցի։ Իսկ ի միոջէ զկարգեալսն և զանձամբ ընտրեալսն իրաւունք կացցէ դատաստանի լռեցուցանել. այլ ըստ օրինացն ղկարգեալսն պատուել»։ Ուրեմն առնվազն երկու և երեք վարդապետ միասին պետք է վարդապետական իրավունք տային վարդապետացուին։

3. «Իսկ [որք] նախակրթեալք ի միոջէ վարդապետէ և ամբարտաւանեալք՝ յայլմէ առնուցուն պատիւ հրամանի արհամարհելով զիւրն, իրաւունք լիցին դատաստանի՝ ի նմանէ ղուսեալն երկրորդել»։ Հետաքրքիր է հետևյալ կետը։

4. «Այլ զայնոսիկ որ հանդերձեալ իցեն կոչիլ յաշտիճան հրամանի, զհամար ուսման գրոցն արժան է պահանջել, թէ ո՛ւր և կամ յումմէ՛ զտառս [=զգիրս] զիւրաքանչիւր ընթերցաւ ուսմամբ. և այս առ այնք լիցի, զոր ի բազումս շրջեալ անգիտանամք ուսմանն. զի մի՛ պատրեալ անկատարս զպատիւ առեալ՝ բազում վնասս խակութեամբն գործիցեն»։ Ուրեմն մեծ զգուշություն էին բանեցնում, որ տգետները չստանային վարդապետական կոչում։ Իսկ եթե պատահեն կանոններին անհամապատասխան կերպով վարդապետ կոչվածներ, «զայնպիսիսն լռեցուցանել իրաւացի դատաստանաւ, առեալ ի ձեռանէ զպատաղանն՝ տայցեն ցուպ շրջողութեան»։ Այդպիսիներին, ուրեմն, պետք էր արգելել քարոզություն անել։ Կան և ուրիշ կետեր «վարդապետ» կոչման մասին։

Վերջապես պիտի շեշտել, որ Մխիթար Գոշի այս մեծ աշխատությունը, իբրև միակ հայկական օրինագիրք, շատ տարածված և գործածված է եղել ոչ միայն Հայաստանում, այլև հայկական գաղութավայրերում՝ Լեհաստանում, Խրիմում, ինչպես և Վրաստանում, ուր մտել է Վրացական օրինագրքի մեջ և այստեղից իբրև նյութ ծառայել ռուսական օրենսդրության համար։ Դրանից օգտվել է և Հևթում Թագավորի եղբայր Սմբատ Սպարապետը իր «Յաղագս դատաստանաց Թագաւորաց» օրինագրքի համար, որ կազմել է Կիլիկիայում։ Այսքան ահա մեծ է եղել այս մեծ վարդապետի այս մեծ երկի գործնական ու կուլտուր-պատմական նշանակությունը։ Դրանից օգտվել է և հայոց հոգևոր իշխանությունն իր իրավասության ենթակա գործերի համար վճռահատում անելիս։

4. Առակներ:—*Ն. Մառը*[12],—*որի սիրով կատարած երկարամյա հետազոտությանն է արժանացել մեր հին գրականության այս ճյուղն և որի շնորհիվ շատ բանասիրական խնդիրներ պարզված են և ունենք Վարդանա առակների մեծ խնամքով պատրաստված մի ժողովածու,—ցույց է տվել, որ թեպետ և Եզոպոսի անունը չի գտնվում հայոց հին գրականության մեջ, բայց հայերը հնուց անտի ծանոթ են եղել նրա առակներին, որոնցից մի քանիսը հիշատակվում են մեր հին մատենագիրների մեջ: Բացի այդ՝ մոտավորապես 7-րդ դարում հավանորեն ձարտասանության կամ քերթողական արվեստի գրքերից թարգմանել են Ոլիմպիանու առակները*[13], *որ Եզոպոսի առակներից են հռետորական խմբագրությամբ. այդ առակները, ըստ Ն. Մառի, թվով տասնհինգ են եղել, որոնց վրա հետագայում ավելացել են նաև ուրիշները և դարձել են քսան և երեք: Հավանորեն 6—7-րդ դարում թարգմանվել է նաև «Բարոյախօս» (Ֆիզիոլոգ) կոչված գիրքը*[14], *որի հեղինակը հայտնի չէ և որի մեջ խոսվում է կենդանիների «բարոյքի», այսինքն բարքերի, բնավորության մասին: Այս գրքին ծանոթ են երևում նույնիսկ մեր կլասիկ հեղինակները՝ Ագաթանգեղոս, Եղնիկ Կողբացի և ուրիշները: «Բարոյախօսն» և Եզոպոսի առակները, Ոլիմպիանոսի անունով, շատ սիրված են եղել հնում հայ հեղինակներից: Հատ-հատ ուրիշ առակներ ևս հիշատակում են մեր հին հեղինակները:*

Գրիգոր Մագիստրոսը, ինչպես տեսել ենք, նամակներից մեկի մեջ պատվիրում է դպրոցներում աշակերտներին սովորեցնել քերականության և ճարտասանության հետ նաև «առասպելաբանություն», այսինքն՝ աշակերտներին գրել, անգիր անել և մեկնել տալ առակներ, որ և մի շատ հարմար վարժություն է եղել ապագա մեկնաբաններ պատրաստելու համար: Առակների հայկական ժողովածուներ, սակայն, հայտնի չեն, իսկ ժողովրդական առակները մշակելու և նրանցից ժողովածուներ կազմելու մասին՝ մտածել անգամ կարելի չէ մինչև 11-րդ դարի կեսերը և ավելի ևս ուշ: Ժողովրդական առակները, որոնցից մի քանիսը պատահաբար մեջ են բերում հին հեղինակները, նույն բախտն են ունեցել, ինչ որ մեր հին ժողովրդական բանահյուսությունն ընդհանրապես: Դրա պատճառն այն է, որ գրականությունը դեռ եկեղեցականների ձեռին էր. իսկ եկեղեցականը, ինչպես հայտնի է, իր կոչումով արդեն ընդունակ չէր մշակելու

---

12 *H. Марр*, Сборники притч Вардана, ч. 1, Исследование. СПб., 1889. *Նույնի, Ժողովածոյք առակաց Վարդանայ, մասն Բ, բնագիր, ՍՊբ. ՒՅՆԳ. Նույնի*, ч. III, Приложения, СПб., 1894:

Տե՛ս և՝ «Ժողովածոյք առակաց Վարդանայ», Թարգմ. Հ. Յ. վ. Տաշեան, Վիեննա, 1900, Ազգ. Մատենադարան, ԼԶ:

13 *Տե՛ս H. Марр*, Сборники притч Вардана, I, *էջ 289, ծան. մի ձեռագրի նկարագրի մեջ:*

14 *Տպագրված են Մխիթար Գոշի առակների հետ, «Առակք Մխիթարայ Գոշի», Վենետիկ, 1854. ետևից, էջ 167 և հետ. «Առակք Ողոմպիանոսի»:*

թեկուզ մի խոնարհ գրական տեսակ, ինչպիսին առակներն են։ Դրանք մեր գրագետ եկեղեցականի կողմից ոչ միայն արհամարհված են եղել իբրև գեղչկական, ուստի և անարժեք բաներ, այլև իրենց աշխարհիկ բնավորության պատճառով հալածված։ Ջանազան տեսակի գուշակություն անողների հետ, ինչպես են՝ «հաւահմայք», «հացահմայք», «հատահարցք», մերժված և հաղորդության անարժան են համարել նաև «զրախաւսք, զրատեսք, շրջողք տանէ ի տուն, հետաքրքիրք, զրուցարարք, առասպելախաւսք»։ Վերջինը վերաբերում է առակախոսներին. հայերեն «առասպել» բառը, բացի իր իսկական նշանակությունից, գործածվում է նաև իբրև առակ, ինչպես որ սույն կրկին նշանակություններն ունեն համապատասխան հունարեն mythos, լատիներեն fabula բառերը։ Մխիթար Գոշը գրում է հաճախ «խրատէ առակս», «յանդիմանէ առակս» և այլն, «Ողոմպիանու առակներից» 3-րդի խրատական մասն սկսվում է «խրատէ առասպելս»։

Այսպես, ուրեմն, հնում հալածված են եղել ինչպես գուսանները և ուրիշները, այնպես և առասպելախոսները, այսինքն առակախոսները։

Բայց և այնպես կյանքը կանգ չի առնում։ Հոգևորականի համար, ինչպես տեսանք, այլևս անպատշաճ չի համարվում, թեկուզ ողբի ձևով, երգել աշխարհային կյանքի բարիքները և երկրի, առանձնապես քաղաքների, ծաղկումն ու ավերումը։ Նա սկսում է հորինել նաև նոր գրական տեսակներ։ Ապա 12-րդ դարից սկսած՝ նա, ինչպես ուրիշ երկրներում, մշակում է նաև առակներ։ Եկեղեցականն իր կոչումով ուսուցիչ էր, վարժ մեկնաբանությունների մեջ գործադրվող այլաբանական ձևին. նա ամեն առասպելի մեջ էլ տեսնում էր այլաբանություն. ուստի բնական է, որ նա սիրեր խրատական այլաբանությունը։ Եվ սիրելով այդ, հոգևորականները վերջ ի վերջո սկսում են ժողովել ամեն տեսակի պատմվածքներ, որոնց տալիս են խրատական այլաբանության ձևը, և որոնք մեր հին գրականության մեջ հայտնի են մի ընդհանուր առակ անվան տակ։

Առաջին հեղինակը, որի համար հաղորդում են, թե գրել է առակներ, է Ներսես Շնորհալին (1102—1173), որի համար Կիրակոս Գանձակեցին գրում է[15], թե «Արար և առակս խորհրդաբար ի դրոց, զի փոխանակ առասպելեաց զայն ասասցեն ի գինարբուս և ի հարսանիս»։ Շնորհալու անունով մնացած կան 120 «Առակք վասն ուրախութեան մարդկան»։ Դրանք, սակայն, ինչպես տեսանք, ոտանավորով հանելուկներ են և ո՛չ առակներ։

5. Մխիթար Գոշի առակները։—Իսկական առակների առաջին ժողովողն ու խմբագրողն է Մխիթար Գոշը։ Ն. Մառը կասկածում է, թե Գոշի անունով հայտնի առակները նրանը՝ Մխիթար Գոշինը լինեն. բայց նրա կասկածը չի հաստատված համոզիչ հիմունքներով։ Որ Կիրակոս Գանձակեցին,—որը ոչ թե Մխիթարի աշակերտն է, ինչպես սխալմամբ դնում

15 Կ. Գանձակեցի, *Պատմութիւն Հայոց*, էջ 140 և հտն.։

է Մաոը (С. п., ч. 1, էջ 66 և հտն.), այլ Վանական վարդապետի աշակերտը և Մխիթարին ոչ ժամանակակից,—որ Կիրակոսը չի հիշատակում, թե Մխիթարն առակներ է գրել, այդ, իհարկե, չի կարելի իբրև հիմք ծառայեցնել, ինչպես անում է Ն. Մառը, կասկածելու, թե Մխիթարն է հեղինակ նրա անունով հայտնի առակների։ Գանձակեցին նպատակ չի դրել Մխիթարի բոլոր երկերի ցուցակը տալ և ոչ նրա բոլոր երկերն էլ նա հիշում է, ինչպես ի միջի այլոց նա չի հիշատակում նաև Մխիթարի «Դատաստանագիրքն» ևս։

Մառի կասկածի համար, սակայն, իբրև հիմունք ծառայել է նաև այն, որ էջմիածնի Մատ. մի ձեռագրի մեջ (№ 2238),—որ ժողովածու է զանազան երկերի (մասամբ ամբողջապես արտագրված, մասամբ հատվածորեն),—ի միջի այլոց կա վերջում Մխիթար Գոշի առակների վերջին մասը՝ «Առակք ստեղծականք», որի համար իբրև հեղինակ, վերնագրի մեջ գրված է Հովհաննես Սործորեցին և որի վերջում կա հետևյալ հիշատակարանը. «Եւ զվերջացեալս ի բարեաց գործոց պտարտամ գրիչս զՅոհ ծանօթ բանի և տեղեաւ Երզնկացի։ Իսկ այժմ՝ Սործորեցի։ Աղաչեմ չմոռանալ ի բարիս զիս, և զիման ամենայն։ Ի թվականիս Փրկչին ՌՅԺԶ։ Եւ զպիտակ պէտս Գրիգոր զվերջին գծօղ յիշել աղաչեմ»։ Նույն տեղում ներքին լուսանցքում. «Իսկ ըստ հայոց ԷՃԽԳ աւարտ եղև գիրքս»։ Ապա մի հիշատակարան ևս, որ, ըստ Ն. Մառի, ժողովածուն կազմողինն է։ Վերևում բերված հիշատակարանից Ն. Մառը եզրակացնում է, թե Սործորեցին հիշված ժողովածուն կազմողը չէ, այլ առակների արտագրողն է։ Որ ժողովածուի մեջ Սործորեցին դարձել է առակների հեղինակ, այդ իբր նրանից է, որ ժողովածուի մեջ սկզբնապես առակների համար հեղինակ հիշված չի եղել. այդ իբր նրանից է, որ Սործորեցու արտագրածը, որից օգտվել է ժողովածուն կազմողը, այդպես է եղել։ Որ Սործորեցու արտագրածի մեջ հեղինակ հիշված չի եղել, այդ էլ ցույց է տալիս, որ Մխիթարի անունով հայտնի առակները հին ժամանակ անանուն են եղել։ Հետևաբար, հետագայում, շատ ուշ ժամանակ, արտագրողներն այդ առակները վերագրել են Մխիթարին։

Այսպիսի ենթադրություններով, սակայն, և այն հանգամանքով, որ առակների ձեռագրերը հետին դարերի են, կարելի չէ անստույգ համարել Մխիթարի հեղինակ լինելը։ Բանը որ ենթադրության է հասնում, կարելի է շատ տեսակ-տեսակ ենթադրություններ էլ անել։ Քանի որ մեր ձեռքը չի հասել Սործորեցու արտագրածը, կարող ենք ենթադրել, որ դա ունեցած է եղել Մխիթարի անունը, բայց սկզբի թերթը կարող էր մաշված կամ պոկված լինել, ուստի և հիշված ժողովածուն կազմողն առակներն անանուն դրած լիներ իր ժողովածուի մեջ։ Կարող էր ժողովածուն կազմողը, քանի որ բոլոր առակները չէր արտագրում, այլ միայն վերջին մասը, մոռացմամբ չդնել առակների հեղինակի անունը։ Նա կարող էր նույնիսկ դրած լինել Մխիթար անունը, և մի արտագրող մոռանալ, կամ թե անզգուշությամբ Մխիթարի տեղ Սործորեցի դնել, և այլն, և այլն։

Կարելի չէ լոկ ենթադրության վրա հիմնվելով հարցական թողնել այդ առակների հեղինակի ով լինելը, կամ հետին դարերում գրչակների ձեռով ավելացրած համարել Մխիթարի անունը, որ կա ամբողջական ձեռագիրների վրա, թեկուզ դրանք շատ հին չլինեն։

Թե Մխիթարի անունով մնացած առակները նրանն են, այդ ցույց է տալիս նրանց բովանդակությունն էլ, որ տանում է մեզ այն ժամանակը, «երբ հայերը դեռ քաղաքական ազատություն ունեին և մահմեդականներից ավելի ուժեղ էին զգում իրենց»։ Եվ այդ հենց Մխիթար Գոշի ժամանակն է, 12-րդ դարի երկրորդ կեսին, երբ հայերը թե՛ Արևելքում և թե՛ Արևմուտքում—Կիլիկիայում շատ ավելի ուժեղ էին, քան մահմեդականները։

Կանգ առնենք մի քանի ուրիշ հանգամանքների վրա ևս։ Այս առակների հեղինակը շատ հմուտ մարդ է եղել, ինչպես եղել է և Մխիթարը։ Նա գիտակցաբար վերաբերվելով իր գործին՝ հարկ է համարել մեկ-մեկ ծանոթություններ տալ իր կատարած գործի և ընդհանրապես առակների մասին իբրև մի գրական տեսակի։ Այդ ծանոթություններից հենց իմանում ենք, որ այդ ժողովածուն իր տեսակում ժամանակով առաջինն է մեր մեջ։

Ամենից առաջ տեսնում ենք, որ առակներ ժողովելն ու գրելը դեռ անպատշաճ է համարվում. ուստի և հեղինակը բացատրում է, թե ինչու է ինքը գրել. «Թէպէտ անըմբռն [անպատշաճ] ասացեալըդ կարծի, սակայն թանձրամտաց առաւել ախորժելի երևին, որոյ աղագաւ սակաւ յօժարեցաք գրել»[16]։ Ապա այդ գործն ուրիշները ծաղրելի են համարում, և հեղինակը խնդրում է, որ չծաղրեն իրեն։ Ամեն անգամ որ մեր հեղինակները մի նոր բան են մտցնում գրականության մեջ, ստիպված են կամ ապացուցել, թե թույլատրելի է իրենց արածը, կամ խնդրել, որ չծաղրեն իրենց։ Այսպես, Կորյունը մեր գրականության սկզբում դեռ ստիպված է երկար ու բարակ ապացուցել, թե ո՛չ միայն թույլատրելի է, այլև հարկավոր է Մեսրոպ Մաշտոցի նման մարդկանց վարքը գրել։ Ներսես Շնորհալին իր «Ողբերգության» հիշատակարանում ստիպված է ապացուցել, թե կարելի է մեր այժմ սովորական դարձած տաղաչափությամբ, որ այն ժամանակ գործածվում էր միայն աշխարհիկ երգերի համար, բանաստեղծություն հորինել նաև հոգևոր բաների մասին։ Հովհան Մամիկոնյանը ժողովրդական ղրույցներից ու երգերից խմբագրելով «Տարօնոյ պատերազմը», վերջը գրում է. «Յորժամ զշարադրութիւնս զայս ընդօրինակէք մի՛ ինչ թուխսցի ծաղր ումեք»... Նույնիսկ Մխիթար Գոշն իր «Դատաստանագրքի» համար, որ նորություն էր մեր գրականության մեջ, գրում է. «Եւ արդ մի՛ ոք պարսաւեսցէ զասացեալս, զի թէ տխմար ոք իցէ՝ ուսցի, և թէ կատարեալ՝ զպակասն ի սմանէ ինքն լցցէ. զերկոցունցն պատրաստ եմք սիրով ընդունել զկամսն»։ Ճիշտ այսպես և նույն

16 «Առակք Մխիթարայ Գոշի», Իե, էջ 30։

Մխիթար Գոշն առակների համար գրում է վերջաբանում. «Եւ արդ մի՛ ոք ծաղր առնիցէ ւմեզ, զի առնուլ ի սոցունց ի պրուցատրութիւն և յասացուածս ի դէպ համարեցաք, քան զաշխարհականացն վարիլ սովորութեամբ: Եթէ հաճոյ ոմանց թուիցի, տեառն շնորհ. ապա թէ ոչ, թողութիւն մեզ արասցէ սիրով Նորին» (էջ 153):

Մեծ դժվարությամբ ուրեմն, նույնիսկ առակի տեսակը մուտք է գործում եկեղեցականի գրականության մեջ: Դա ծաղրի առարկա է, զի դրա առասպելն աշխարհիկ բնավորություն ունի. և եթե հկեղեցականը մշակում է այն, որովհետև թանձրամիտներին ախորժելի է առակների առասպելը, և դրանով հեշտ է սովորեցնել ու կրթել:

Մխիթար Գոշն առակների մեջ տեսնում է բնականաբար երկու մաս. բուն պատմվածքը և խրատական եղրակացությունը:

Պատմվածքը,—որ նա կոչում է առակ, գաղափար, օրինակ, եղանակ և այլ բառերով,—ըստ Մխիթարի՝ լինում է երեք տեսակ՝ բարոյական, առասպելական և ստեղծական: Բարոյական առակները (բարոյք, բարք= բնություն բառից, որից և «Բարոյախօս» գրքի կոչումը) առնված են կենդանիների բարքից, բնավորությունից կամ բույսերի հատկություններից և շատ քիչ ունեն կամ բնավ չունեն գործողություն: Առասպելական առակների մեջ պատմվածքը վերաբերում է կենդանիներին, երբեմն և բույսերին, իբրև գործող անձերի. իսկ ստեղծական առակներն առնված են մարդկանց կյանքից, գործող անձերը մարդիկ են:

Խրատական եզրակացությունը,—որ հեղինակը կոչում է՝ խրատ, ճշանակ, ճշմարտութիւն և այլ բառերով,—երկու տեսակ է՝ աշխարհիկ և եկեղեցական. «Դիցուք և սակաւուք առակք ստեղծականք, որ նման ասացելոցն կերպարանէ զճշմարտութիւնն աշխարհօրէն և եկեղեցականապէս» (Մխ. Առ., էջ 128):

Առակների երկու մասերից հոգևորական հեղինակի համար բնականաբար ավելի կարևոր արժեք ունի այս երկրորդը, խրատական մասը, այն էլ ավելի եկեղեցական մեկնությամբ, որովհետև հեղինակը ցանկանում է, որ խոսակցության ժամանակ մեջ բերվեն այդպիսի մեկնությամբ առակներ, քան աշխարհականների սովորությամբ վարվել, այսինքն առակները լոկ աշխարհական մեկնությամբ պատմել: Ուստի խրատների մեջ կարևոր տեղ բռնում են հոգեշահ խրատներն ու հոգևոր առաքինությունները: Բայց Մխիթարի նման մեկը չէր կարող անուշադիր մնալ դեպի կենցաղական խրատը, առօրյա ընկերական հարաբերությունները, սոցիալական և ազգերի հարաբերության և նման խնդիրները կամ «ճշմարտութիւնն աշխարհօրէն»:

Մի անգամ որ հեղինակի համար առակի մեջ էականն է առակի «ճշմարտութիւնը», ուստի և նա առակը մշակում է այնպես, որ կարևոր տեղ բռնի «ճշմարտութիւնը»: Կնշանակե՝ առակը հորինվում է ոչ իբրև ինքնուրույն բանաստեղծական տեսակ, այլ իբրև մի ուսուցական դիդակտիկական երկ, որ նպատակ ունի ախորժելի ձևով խրատել և ապդել: Դրա

համար առակի առասպելն այնպես է հորինվում, կամ փոփոխվում (երբ ուրիշ աղբյուրներից է առնված), որ հարմարվի բարոյակրթական մասին, կամ գործողությունն այնպես կարճ է պատմվում, որ երբեմն նույնիսկ խրատական մասն ավելի մեծ տեղ է բռնում, քան պատմվածքը։ Ուստի սակավ ենք գտնում բանաստեղծական նկարչություն, կենդանիների և մարդկանց բնավորության էական գծերի բնորոշում և ոչ էլ միշտ արագ և ուժեղ գործողություն ենք գտնում սեղմ ու պայծառ պատմվածքի մեջ, որ գեղարվեստորեն հորինված առակների կենդանությունն է կազմում։ Արդարև Մխիթար Գոշն էլ սեղմ ու հակիրճ է, բայց ոչ միշտ պայծառ ու կենդանի։ Սովորաբար մի երկու ընդհանուր գծեր է տալիս նա և ապա իսկույն անցնում է խրատին։ Երբեմն էլ պատմվածքն այնքան կարճ է և այնպիսի, որ դժվարությամբ կարելի է եզրակացություն հանել, կամ հանած եզրակացությունը շատ թույլ կապով է կապվում պատմվածքին, կամ համապատասխան չէ նրան։

Հեղինակը, սակայն, իր խրատը բավական չհամարելով՝ դեռ գրում է. «Զառեալ նշանակսդ չափաւորապէս համեմատեցաք՝ պատճառս տալով տեսողաց բանին նմանապէս զթերին լցուցանել» (էջ 30)։ Կնշանակե՝ Մխիթարն առակն ասողին ազատ է թողնում մեկնության թերին լրացնել, ճիշտ ինչպես նա իր Դատաստանագրքի «կատարեալ» ընթերցողի համար ևս ասում է, թե՝ «զպակասն ի սմանէ ինքն լցցէ»։ Այստեղ էլ, ուրեմն, առակների և Դատաստանագրքի հեղինակը նման ձևով է մտածում։

Բնականաբար պիտի սպասենք, որ Մխիթար Գոշն առակների մեջ ևս նույն հայացքն ունենա դատաստանի մասին, ինչ որ Դատաստանագրքի մեջ։ Այստեղ Նախադրության մեջ (էջ 28) պատվիրում է, թե դատավորները պետք է «ուղիղ դատաստան անեն» և ապա (էջ 32) գրում է. «Եւ թէ ոսոխքն յատենի անդ բանակիւ լիցին՝ մի՛ տայցեն թոյլ, այլ սաստեսցեն... Ուսցին և դատախազքն, թէ ոչ վասն վիճոյ գան յատեաննն... ըստ կարգի տայցեն խօսել ոսոխացն»։ Այս երկու գաղափարն էլ, դատավորի արդար մարդ լինելու հետ միասին, արտահայտված ենք գտնում մի առակի մեջ։

Հաւրաւ զբոյն տատրակի քակտեալ, և իւր շինեալ. և եղև նոցա երթալ առ արդարն արագիլ ի դատաստան. և անդ զմիմեանս նախատէին և պարծէին, տատրակ ողջախոհութեամբ, կրօնաւորութեամբ. և հաւրաւ պահօք քառասնօրէիւք. և նախատի ոմն կեղծաւորութեամբ, և ոմն զայլոց ուտելոյ զվաստակն։ Իսկ դատաւորն երկուցն սաստէ և հարցանէ զհաւրաւ, թէ ընդէ՞ր քակտեցեր։ Եւ նա ասէ. Շինուածոյ նշան ինչ ոչ տեսի, և վասն այնո՛ առի ինձ։ Հարցանէ դարձեալ. Դո՞ւ էիր եղեալ զոր առեր։ Եւ նա ասէ՝ ոչ։—Եւ կամ ո՞չ էր երկու հնձան եղեալ ի վերայ միմեանց։ Եւ ասէ՝ եղեալ էր։ Հրամայէ անդրէն դարձուցանել, նա և տուգանս ևս տալ։

Ջդատաստան ուղիղ հրամայէ առակս դատել, և ոչ յայտնի մեծաբանել, և կամ թըշնամանել զմիմեանց դատախազաց։ Եւ դարձեալ զի զոր չիցեմք եղեալ՝ ուսուցանէ չառնուլ, և զշինուածս յայլոյ՝ թէ և յոռի իցէ, չքակել։ (Մխ., ճխ. 118)

Այստեղ, ուրեմն, տեսնում ենք, թե ինչպես ոսոխները՝ Հավբալն ու Տատրակը, դատաստանի են գնում արդար Արագլի մոտ. բայց նրա առաջ իրար նախատում են, իրար հետ վիճում են և ամեն մեկն իր արժանավորությամբ պարծենում։ Դատավորն երկուսին էլ սաստում է, ապա հարց ու փորձ անում և դատաստան կտրում։

Տեսնենք մի ուրիշ գիծ էլ։ Դատաստանագրքի մեջ (Նախադրություն, էջ 29) Մխիթարը պատվիրում է, թե «Դատաւորն մի՛ լուիցէ զոսոխին կամ զդատախազին բանսն միայն»... Այսինքն նա մեկ կողմը միայն լսելով՝ չպիտի դատ անի։ Առակներից մեկի մեջ ասում է, թե անընտրող դատողները՝ լինեն թագավոր, իշխան, դատավոր, թե եկեղեցու առաջնորդ, «անփորձապէս դատապարտեն», այսինքն առանց քննելու դատապարտում են նույնիսկ արտաքին տեսքից կամ համբավից (այսինքն ուրիշներից լսելով). և առակախոսը պատվիրում է, թե չպետք է «ի տեսլենէ կամ ի համբաւէ դատել» (Մխ., ԺԸ. 19)։

Նկատենք և հետևյալը։

Մխիթար Գոշի առակները, որոնց թիվը 190 է, խմբագրված են, ինչպես վերևում ասացինք, մի շատ հմուտ մարդու ձեռով, ինչպիսին իրոք եղել է Մխիթարը։ Դրանց համար նա օգտվել է եզոպոսի առակներից ու Բարոյախոսից, ինչպես և այլ գրավոր աղբյուրներից ու ժողովրդական առակներից։ Անպայման կան և այնպիսիները, որ հեղինակի իրեն ստեղծածն են։ Նա, ինչպես երևում է, մեծ նյութ է ունեցել ձեռի տակ, բայց ամեն ինչ որ ունեցել է, չի գործադրել. «Ջբազումս ի գիտելեաց և յանգիտելեաց թողաք իբր համազօրս յօրինակս և յառակս» (էջ 29)։ Բայց ամեն ինչ, որ նա առել է իր ժողովածուի մեջ՝ շատ որոշ կարգով դասավորել է ըստ նյութի, այսինքն՝ ըստ գործող անձերի, նախ՝ երկինք ու երկիր և երկնայիններ և ապա՝ բույսեր, լեռներ, կենդանիներ ու մարդիկ։ Ամբողջի մեջ երևում է մի մտածող, կարգ ու կանոն սիրող մարդու ոգին։ Այսպիսի միակերպություն չունեն վարդանա առակները, որոնք և մի մարդու գրչից չեն դուրս եկած և ոչ էլ մի դարու արգասիք են։

ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՑԻ ԵՎ «ԱՌԱԿՔ ՎԱՐԴԱՆԱՅ»

1. Վարդան Այգեկցի։—*Մեր հին գրականության հարստություններից մեկն են կազմում և «Վարդանա առակները»։ Սրանց նախահայրն է Վարդան Այգեկցին, որ Մխիթար Գոշից մի սերունդ կրտսեր է. Մխիթարը վախճանվել է 1213 թ. խորին ծերության հասակում, իսկ Վարդանն այդ ժամանակ արդեն տարիքավոր է եղել և անվանի՝ իր բանաստեղծական քարոզներով։ Ծննդյան և մահվան թվականը հայտնի չէ. ապրել է 12 և 13-րդ դարերի մեջ։ Ծնվել է մի բազմանդամ ընտանիքում, հին Տլուք գավառի Մարաթա անունով մի բնակավայրում. ինքն իր մասին հայտնում է, գրելով. «ողորմելի Վարդանս որ ի Մարաթաոյ», որ է՝ ի Մարաթայոյ։ Սովորել է Կիլիկիայի Արքակաղին վանքում (Սսից հյուսիս, մի*

լեռան վրա), որ մի ժամանակ եղել է կաթողիկոսական աթոռանիստ։ Այդ ժամանակ և մոտիկ ծանոթացել է մի քանի իշխանների՝ «յոյժ ծանօթացաք նոցա սիրով աստուծոյ»,—գրում է նա։

Այնտեղ նա ոչ միայն կատարելագործել է իր ուսումը, այլև մշակել է իր համար դարին համապատասխան որոշ աշխարհայացք հատկապես դասակարգային հարաբերությունների վերաբերյալ։ Իր թղթերից մեկում հայտնում է, թե նվեր պիտի տալ սեփական աշխատանքով ձեռ բերածը միայն, որ աստուծուն ընդունելի լինի. բայց իշխաններին այդ վիճակված չէ. «Քանղի վա՛յ է ոնա որ իշխան կամ առաջնորդ կացուցանեն յայս չար և ի դառն ժամանակիս։ Զի թէ մեք որ սակաւ ունիմք զկարիքն, և իշխանութիւն և կարողութիւն ոչ ունիմք, բայց փոքր ի շատէ առանց ոլոկանաց ո՛չ կարեմք մնալ, ապա վասն նոցա ոլո՞նչ ասացից, որ ունին զիշխանութիւնն և զկարողութիւնն և զբազում կարիքն և վաւելորդն և զբազում ծախքն, զոր բազում անգամ տեսայ շրջելով ի մէջ նոցա։ Եւ աղաչանաւք ամենայն սրբոց թողեք աստուած նոցա և մեղ ողորմութեամբ իւրով, քանզի մարդիկք եմք դիւրակործան»։ Իշխանների ստացվածքն, ուրեմն, «ոլոկանքի» վրա է հիմնված. և այդ ասում է նա իբրև իրականություն։ Ինչպես Ղեղիշեն Հաղկերտ թագավորի չարության մասին խոսելիս ասում է. «Թէպէտ և ոչ ունիմք հրաման բամբասել զիշխանն, բայց և ոչ գովողք կարեմք լինել այնմիկ՝ որ աստուածամարտն լինիցի. այլ վանցս իրացն պատմեմք... ոչ բամբասասէր մտօք, այլ ճշմարտութեամբ զելս իրացն ասելով», նույնպես և Վարդանն սկզբից դնում է, թե իր ասածը բամբասանք չէ. «Եւ զայս ասելով ոչ եթէ բամբասեմ զիշխանսն, քա՛ւ և մի՛ լիցի այս. զի գրեալ է, թէ մի՛ բամբասեր զիշխան ժողովրդեան քո։ Այլ ողորմելով նոցա՝ զչարութիւնն սատանայի ցուցանեմ ձեզ»։ «Սատանայի չարությունն» իշխանների ձեռով։

Եվ տեսեք, թե նա ի՛նչ զլվանքով է վերաբերում դեպի մի իշխանի կես դահեկան չարավաստակ նվերը, որ նա տվել է ընդհանուր եղբայրությանն Արքակաղին վանքում։ Նա գիշերը երազներ է տեսնում այդ մասին. «Զառաջին [երազը] յորժամ առի [նվերը մի իշխանից], տեսայ ի նմին գիշերի. և ա՛հա լցաւ բերան իմ յանկարծակի զազրելի աղբով, և ոչ կարէի թափել զնա ի բերանոյ իմմէ. և իմ խնդրեալ անքոյթ տեղի՝ փսխեցի զնա, և զուք աւրն ոչ փարատէր հոտ գարշութեան նորա ի քմաց իմոց։ Այս յուսմանն ի ժամանակն եղև ի սուրբ ուխտն յԱրքակաղինն։ Եւ տուրք իշխանին էր կէս դահեկան, զոր ետ հասարակաց եղբայրութեանն»։

Որ իշխանի տուրքը բոլոր եղբայրությանը՝ Վարդանն է առել, այդ ցույց է տալիս, որ նա Արքակաղին վանքի եղբայրության անդամներից մեկն է եղել և, հավանորեն, մի պաշտոնատար։ Իր կյանքի այդ շրջանից արդեն նա եղել է կրոնավոր։ Նրա հետագա կենսագրության մասին չկան տեղեկություններ. չի ստուգված նրա «Ամթեցի երէց» լինելը, և իր «ծխականները» կամ «ծուխն» ունենալը նախ Ամիդում, հետո՝ Տլուքում։ Եթե

նա «երեց» էլ եղած լինի, անշուշտ եղել է «վանական երեց», այսինքն՝ կուսակրոն քահանա, թե չէ՝ նրան սովորաբար անվանում են «վարդապետ»։ Իբրև այսպիսին նա եղել է քարոզիչ, ոչ անպայման մի վանքում նստած. վարդապետները քարոզելով շրջում էին և տեղից տեղ աշխարհականների մեջ։ Ներսիսյան հասակում երիտասարդ կրոնավորներին ուղղած մի խրատի մեջ[17] նա գրում է. «նոյնպէս և ես, ո՛վ որդեակք, ի մանկութենէ մինչև ի ծերութիւն շրջեցայ ի մէջ աշխարհի [=աշխարհի մարդկանց] և տեսի բազումս զմեղս մեծամեծս, և անչափ լուայ ծածկաբար ի գործողացն ղչարս. նաև ուսայ յաստուածեղէն գրոց որոց ոչ գոյ թիւ»։ Մանկությունից (=երիտասարդությունից) մինչև ծերություն նա շրջել է, անշուշտ, իբրև քարոզիչ վարդապետ։ Որ նա գրում է. «Անչափ լուայ ծածկաբար ի գործողացն ղչարս», այդ նա ծածուկ լսել է իբրև խոստովանահայր։ Դրանից, սակայն, սևեռք չէ հետևցնել, թե նա ծխատեր քահանա է եղել. խոստովանահայր լինում էին և վարդապետները։ Նա, ինչպես ընդհանրապես վարդապետները, ունեցել է և իր «բնիկ ժառանգությունը», այսինքն՝ բուն, իսկական վիճակը, քարոզչության թեմը «Կիւրիսոյ երկրում», «Տլքոյ գաւառում», կենտրոն ունենալով իր հայրենի Մարաթան։ Այստեղ, այս կողմերում 11-րդ դարից ի վեր կազմված էին հայկական մեծ գաղութավայրեր. այստեղ՝ Տլուք գավառում էր և կաթողիկոսական Ծովք բերդը։ Բնական է, որ Ծովքից կաթողիկոսական աթոռի տեղափոխությունից հետո՝ նույն գավառում եղել է հայկական հոգևոր իշխանություն և պետք է եղել նաև մի քարոզիչ վարդապետ։ Թե ինչպիսի՛ հայ բնակչություն է եղել այն գավառում և նրա քարոզներն իրենց բովանդակությամբ որպիսի՛ աղերս ևն ունեցել տեղական ժողովրդի կյանքի հետ, այդ պարզված չէ։ Նա մի քարոզի մեջ դիմում է և՛ արանց, և՛ կանանց («Դուք՝ դասք արանց», «Դուք դասք կանանց») և առանձին խրատներ տալիս նրանց. կանանց հորդորում է, որ հնազանդ լինեն և հոգատար, իսկ արանց՝ որ սիրեն իրենց կանանց և քաղցրությամբ խրատեն նրանց, զի նրանք կարճամիտ և սակար են։ Բայց սրանք քարոզչական ընդհանուր տեղիներ են։ Նույնպես սովորական է հանդիմանել կանանց, նրա համար, որ զարդարվում ու պճնվում են, երեսները շպարում, ունքերին դեղ դնում, որպեսզի գեղեցկանան ի գայթակղություն երիտասարդների, կամ դեղերով իրենց զրկում են երեխա բերելու ընդունակությունից, և նույնը սովորեցնում ուրիշներին։ Մի ուրիշ ճառի մեջ նա դժոխքի տանջանքներով սարսափեցնում է վաշխառուներին, մշակների վարձը կտրողներին, նրանց, որ զրկում են որբերին, այրիներին ու տնանկներին կամ խաբում չափ ու կշռի մեջ, նրանց, որ կաթի ու գինու

---

17 «Յաստուածային սուրբ գրոց խրատք վարուց առաքինութեան կարճ ի կարճոյ և համառօտ միայն զբանիցն գրել ողորմելոյս Վարդանայ որ ի Մարաթաո, և այժմ ի ծորս Սուրբ լերինս միանձանց առ մանկագոյնս կրաւնաւորս որ գան ի կարգս կրաւնաւորութեան և կամ միանձնութեան ի ծերպս վիմաց»։ Н. Марр, Сборник пр. Вард., часть I. էջ 297։

մեջ ջուր են խառնում և այնպես ծախում։ Այս ամենն էլ սովորական, նույնիսկ աստվածաշնչյան մոտիվներ են։

Եթե այդ բովանդակությամբ ճառերն ասվել են Տլուքում, կարելի է դրանից հետևցնել, ինչպես վարվել է Ն. Մառը, որ այնտեղի հայ գաղութը չի եղել մի խուլ անկյուն, այլ մի առևտրա-արդյունաբերական հարուստ կենտրոն և Վարդանի այդ քարոզներն ուղղված են հարուստ քաղաքացիների և վաճառականների դեմ։

Ճառերի այդպիսի ընդհանուր բովանդակությունից կարելի չէ ենթադրել, թե դրանց համար այն շնորհալի քարոզիչը հալածանքի է ենթարկվել և ստիպված է եղել իբրև հալածական հեռանալ կամ փախչել իր բնիկ գավառից ու հայրենի Մարաթա գյուղից։ Դրա պատճառը թաքնըված է, հավանորեն, քաղաքական հեղհեղուկ դրության մեջ, կամ գուցե մի ծանրակշիռ հարցի շուրջը սաստիկ ընդհարման մեջ տեղի իշխողների հետ։ Երկու տարի նա նյութական նեղության մեջ է ընկնում։

Պաղտին իշխանի համար 1212 թ. գրած քաներկու ճառ աշխատության մեջ ասում է. «Եւ այլ յոյժ ծանտր եղև մեզ, զի երկու ամ է [ի] զբաղումն աշխարհի էաք և ոչ ընդերձուն [ընթերցումն] գրոց. քանզի բուռն է կարիք մարմնոյ յորժամ պակասէ. զի հալածական եղաք ի բնիկ ժառանգութենէ մերմէ յերկրէն Կիւրիսոյ և ի գաւառէն Տլքոյ և եկաք յԱյգեկս, և աստուած ի բարի աջողեաց զամենայն գործս մեր և զպէտս մարմնոյ, իսկ ի ճիճ ուսմանէ յիշեալ հաւաքեցի... Հայոց ոկա [=661+551=1212]. և էր թագաւոր Հայոց Լէոն Ըոոբինեանձ ի Կիղիկիայ...»[18]։ Ուրիշ տեղ նա սույն ճառի համար գրում է. «Ի չորրորդ ամի գալստեան մերոյ ի Մարաթառ ի սուրբ լերինս յԱյգեկս. և եղի ի գիրս զոր գրեցի ճառս .իբ. [=քսան և երկու] ի խնդրոյ թագաւորազն իշխանին որ կոչի Պաղտին»։ Այս «չորրորդ ամն» է 1212 թվականը, երկու տարի էլ նեղություն է կրել մինչև Այգեկում տեղավորվելը, ուրեմն նա իր հայրենի Մարաթայից, Տլուք գավառից հալածական է եղել 1206 թվականին։

Շատ հավանական է, որ իր ծանոթ թագավորազն իշխան Պաղտինի (Բալդվինի) հովանավորությամբ և հաջողվել է Վարդանին դառնալ միաբան Սուրբ լեռան կամ Սև լեռան վրա 12-րդ դարի վերջին քառորդին հիմնված Այգեկ կրոնաստանի։ Այստեղ էլ Վարդանը երկար, գուցե մինչև կյանքի վերջը, մինչև խորին ծերություն ապրել է, ուստի կոչվել է «Այգեկցի»։ 1229 թ. նա դեռ կենդանի է և աշխատում է ըստ մի գրության։

Այստեղ, այս «անապատում» կամ «սուրբ ուխտում» նա պարապել է գլխավորապես գրականությամբ, թղթակցել է շատերի հետ. զանազան հարցերով դիմել են նրան, ինչպես Պաղտին իշխանը, Անտիոքի Միքայել եպիսկոպոսը և ուրիշները, և նա սիրով պատասխանել է նրանց. գրել է ճառեր, խրատներ երիտասարդ կրոնավորների համար։ «Ես Նուաստս յամենայնի յերիս ճառս կարգեցի զբանս խրատուց նորամուտ կրոնա-

---

18 Արտագրող գրչի տգիտությունից կամ անփութությունից են առաջացած սխալները։

զորաց մանգագունից և ո՛չ ծերոց»։ Սկզբում նա աշխատել է առանց գրքերի, հիշողությամբ, Պաղտին իշխանի համար 22 ճառը հորինել է «ի հին ոսմանէ յիշեալ», գրում է նա։ Նրա գրքերը մնացել էին Տլուքում։ Միքայել եպիսկոպոսի հարցմանն էլ նույնպես է պատասխանել. «Կա՛մ ես յանապատի աստ հեռի ի գրենից և ի մեկնչաց», ասում է նա. «Եւ առաջի աստուածոյ անսուտ ասեմ, որ չունիմ յանապատի աստ բազում գրեանս և կամ զմեկնութիւն հինգ բանիցս, զի եդից օրինակ և գրեցից։ Ապա... սկսայց կատարել զհրամանս քո, զոր տայ սուրբ հոգին, ի հին յիշատակաց և յոսմանց, բայց և յամենայն շնորհաց որ լինի և ոչ ի մեր ջանաց. քանզի խաւարեցաւ միտք իմ յաշխարհիս և նուազեցաւ լոյս աչացս և տկարացաւ ծերութեամբս»։

2. Վարդանի գրությունների թեման կամ նյութն էապես նորություն չէ։—Նա քարոզում է, թե ավելի լավ է, որ կրոնավորները կենան եղբայրանոցներում. նրանք պիտի աշխատեն և ապրեն իրենց աշխատանքով, սեփականություն պետք է չունենան։ Նրանք նվերներ պիտի ընդունեն միայն, երբ կարող են աշխատել, այն էլ միայն երկրագործներից և արհեստավորներից. որովհետև, ինչպես վերևում տեսանք, նա անընդունելի է համարում անարդար եղանակով ձեռ բերվածը. ուստի իշխաններից պարգև ընդունել թույլատրում է լոկ ծայրահեղ կարիքի դեպքում։ Այս վերաբերում է, հարկավ, կրոնավորների անձնականին. թե չէ՝ դժվար է վարծել, թե Վարդանը քարոզեր, թե վանքերը չպետք է նվեր ընդունեին, քանի որ այդ դարում և առաջ շատ սովորական էր վանքերին տալ ամեն տեսակ ընծաներ և՛ անշարժ, և՛ շարժական գույքերով։ Նա քարոզում էր, որ սեփականություն չունենան կրոնավորներն անձամբ և ոչ վանքերը։

Ն. Շնորհալու «Ընդհանրականի» վերլուծության ժամանակ տեսանք, թե ինչպես կրոնավորներն ընկած էին անձնական հարստությունների ետևից, սեփական այգեգործությամբ էին պարապում։ Մի քառասուն տարվա ընթացքում Շնորհալուց հետո՝ կրոնավորների բարքերն ավելի ընկել էին, քան բարվոքվել։ «Այգեկ» անունը հենց ցույց է տալիս, որ այգեգործությունը մեծ տեղ էր բռնում այն անապատում, ուր ապաստանել էր Վարդանը։ Նա գրում է. «Ասա՛ ինձ, ո՛րդեակ, թէ ընդէ՞ր ելեր աշխարհէ և կամ ի խցաւոր վանից, յորժամ պիտոյ էր քեզ այգիս և դրախտս տնգել։ Ահա խաբեցեր զմարդիկ և զաստուած, խաբեցար և դու. զի չես միայնակեաց։ Զի ուր արտավարութիւն աւելի քան զպէտսն, և այգի և դրախտն տնգի և բուծանի վաստակով և ջրով, և ի գիշերի աղաղակէ զհետ գաղանացն, և ի տունջեան գոչէ պարսաքարիւ զհետ թռչնոցն առ ի պահպանութիւն մրգոցն և ողկուզացն. և ի վերայ այսոցիկ ա՛յլ մեծագոյն կորուստ. զի վէճ և կռիւ, նախանձ և մախանք ոչ պակասէ. սա ի՛մ և այն քո՛,—ո՛չ է այնպիսի վարքն միայնակեցի, այլ աշխարհականի»։

Շարունակենք տեսնել, թե ինչ է ասում այդ առթիվ Վարդանը երիտասարդ կրոնավորներին.

«Ո՛վ որդեակք իմ, եղէ՛ք այսպիսի խոհուութիւն և վէճ և մախանք ի

միջի մերում, և աստի առի զփորձն զոր զրեցի։ Քանզի բազում ծառս գեղեցիկ մրգաբերս տնգեալ էին առաջին միայնակեացքն որ բացին և սրբեցին զանապատս. որ է սակաւ ինչ պակաս ի քառասուն ամէն։ Եւ այս երկու ամ է զի տնգեաց սատանա մախանք ի միջի մերում և նախանձ ի վերա մրգաբեր ծառոց և վէճ և աղաղակ. և մեծ պատերազմն ունէր զմեզ և տրտմութիւն զայս երկու ամս և ելք ո՛չ կարէաք գտանել, զի բարձցի վէճն և մախանք ի միջոյ, և աւր քան զաւր յաւրդորէր չարն ի շնչոյ դիւացն։ Եւ եկեալ եղբարքն յեկեղեցի ի մուտս կիւրակէին և խորհեցաք, թէ շահ ինչ ոչ կա մեզ ի մրգաբերացս. այդ խռովութիւն էր ի մեզ. և Քրիստոս հրամայէ թէ զաջ ակնն և զաջ ձեռն հատանել և զոգին ապրեցուցանել։ Եւ զայս ասացեալ եղբարցն և դիմեալ իւրաքանչիւր ի տապար իւր և սուր ի վերա եդեալ կոտորեցաք զամենայն մրգաբերսն աւելի քան զհարիւր ծառս որ կային ի դրունս .Թ. [=իննն] խցին՝ Թզենիս և ընկուզիս, սերկևէլիս և սալորիս, մշմշիս և արքակաղնիս։ Եւ ես մեղաւորս քաջալերէի զեղբարսն, թէ մի՛ երկնչիք. զի այս վարձք է և ոչ դատապարտութիւն, պարծանք է անապատիս և ոչ նախատինք։ Եւ զայս արարաք և ի նոյն ժամս գրէի զգիրս զայս, և եղև խաղաղութիւն յոյժ ողորմութեամբն աստուծոյ»։

Ամեն վանքում, հարկավ, չկար Վարդանի նման մեկը, և այդպիսի կտրուկ ձևով չէին վարվիլ, և կռիվն ու խռովությունը պիտի շարունակվեր անձնական սեփականության համար։ Կային և շատ այնպիսիները, որոնք չէին հետևիլ Վարդանին։ Այդպիսիներին է ակնարկում նա գրելով ի միջի այլոց հետևյալը.

«Վա՛յ զի կամա՛ւ սիրեցի զփառս աշխարհի և կեղծաւորեալ շրջեցա և ձևացա առ աչս մարդկան. կամա՛ւ և գիտութեամբ մեղա և եղա ողորմելի քան զամենեսեան։ Բայց ո՛վ մանկունք նորո Սիոնի և ծնո՛ւնդք սրբութեան նորին սուրբ արգանդին, գիտեմ, որ ի միտս ձեր ո՛ւնչս առնէք և քամահէք զբանս իմ ասելով, թէ՝ «Ո՛վ դու զառանցեալ և գարշելի ալեվոր, որ լցար անաւրէն և շարաւաբեր չար գործաւք և չես ժամանեալ ի կարգ աշակերտի և դարձեալ վարդապետե՛ս մեզ զաւրէնս աստուծոյ, զոր դու ոչ պահեցեր։ Ժամ է քեզ լռել և պապանձել. զի ձանձրացան լսելիք մեր և տաղտկացան սիրտք մեր ի քո ընդվայր շատաբանութենէտ։ Նաև ո՛չ այլ ինչ խորհիս և անծանաւթս պատմես մեզ, բայց միայն զոր քաջ գիտեմք ի մանգութենէ մերմէ»։

Ահա թե ինչ են ասել Այգեկցուն նրա հակառակորդները. իսկ նա այնպիսիներին պատասխանում է.

«Իսկ ես հաւանիմ և արդարացուցանեմ զմտածութիւնս ձեր զոր կարծէք վասն իմ։ Նաև գրով ձեռին իմոյ բազում արձանս կանգնեմ ի մէջ աշխարհի խոստովանելով մինչև ի լրումն ժամանակաց, թէ տգէտ եմ և բազմամեղ։ Եւ զի լցաւ երկիր գիտութեամբն աստուծոյ՝ ըստ բանասացութեանն Սողոմոնի և Եսաիայ, և այդ ես ուստի՞ կարացից նորագոյնս ինչ պատմել ձեզ»։ Բայց և այնպես նա ասում, խրատում է, զի չի կարող

այդ չանել և քանքարաթաքույց լինել։ «Նաև շունք պահեն զհատս ոչխարաց և զդրունս յաւազակաց,—ասում է նա,—և չար փշաւք զայգի և զդրախտ ամրացուցանեն, և չար ծառայք շուրջ զքաղաքաւ փոսս հատանեն, որպէս զի անվնաս մնասցեն բնակեալքն ի նմա։ Նա և զղաւակ քահանայի սնուցանէ դայեակ պոռնիկ. և անկերպ յեսայեն զսուր հատանող առնէ ի պէտս մեր. և զաղբատեսակ ճրագն լոյս արձակէ և զխաւարն հալածէ. անպէտ գայլախազն և փոքր երկաթն հուր պարգևեն ի սպասաւորութիւն կենաց մերոց։ Ա՛յսպէս համարեցարուք և դուք զիս և զբանս իմ, ո՛վ որդեակք, և աստուծոյ լերուք շնորհակալ և զնա՝ աւրհնաբանեալ փառաւորեցէք»։

Ուրիշ տեղ էլ նա գրում է.

«Ապա քահանայք և ժողովուրդք աստուծոյ, այս ձեզ սակաւ մի բանք ի պատուիրանացն աստուծոյ մերոյ, զոր անդադար լսէք և գիտէք ի մանկութենէ. զի լցաւ աշխարհ գիտութեամբ աստուծոյ. վասն որոց կարճ և համառօտ գրեցի. որ կարէ իմանալ տխմարն և տգէտն. և մի՛ մեղադրէք. զի չէ բանքս զերդ որ պատեհն է. զի ծերութիւնս և յերկար ցաւքս կուրացոյց զմիտս և զաչս իմ»։

3. Առակավոր ճառեր։—Ինքը Վարդանն էլ շեշտում է, որ իր գրութիւնների, իր քարոզների նյութը նորութիւն չէ։ Հայոց գրականութեան սկզբից ի վեր մեր ճառագիրները բանեցրել են նույն կրոնական թեմաները—մեղքից խուսափում, զղջում, արտասուք, բարեգործութիւն և այլ հոգեշահ խրատներ։ Նորութիւն չի եղել ի միջի այլոց նրա խրատը կրոնավորներին՝ «գրեցէք, կարդացէ՛ք»։ Բայց այդպիսի հին թեմաները, որ այն դարում դեռ չէին կորցրել իրենց արժեքը, նա մշակում է մի բոլորովին նոր, ինքնուրույն ձևով։ Վարդանը հորինում է կատարելապես պարզ ու հասարակ, մեկին ու թեթև, ախորժալուր։ Նա ոչ թե ճառում է, այլ կենդանի լեզվով զրույց է անում, սիրով խոսակցում իր ունկնդիրների, ավելի ևս ընթերցողների հետ, հոգալով ոչ միայն ժամանակակիցների համար, այլև ապագա սերունդների։ «Վա՛յ ինձ, մանկո՛ւնք Սիոնի, որ գայք հետ մեր յաշխարհի, զի ցանգամ տեսանել զձեզ և ոչ կարեմ, զի հողացեա՛լ եմ ի գերեզմանի. ապա գրաւքս այս խաւսիմ ընդ ձեզ մինչև ի հինգ և յեւթն ազգն. և կա՛մ հոգովս ի միջի ձերում»։ Ահա հավերժության համար մի անկեղծ ցանկություն, որ ուղղված է ոչ առ իր անձը, այլ առ իր ապագա ընթերցողները։ Եվ այս անկեղծ ձգտումը շարունակ ուսուցանելու, տալիս է նրա երկին գրավչություն, հետևաբար և գեղեցկություն։ Պակաս չեն, հարկավ, նաև արտահայտության գեղեցիկ ձևերը, բանաստեղծական պատկերավորությունները, նմանությունները և այլն, որոնք առանց որևէ որոնումի, բնականորեն ելնում են նրա գրչի տակից։ Նախորդ ճառագիրների խոսքն էլ այդ նկատմամբ աղքատ չէ։

Բայց Վարդանն ունի մի ուրույն ոճական հատկություն ևս, որ ըստ երևույթին նա առաջ է բերել Ավետարանին հետևելով։ Նա, ինչպես Ն. Մառը ցույց է տվել, իր ճառերի մեջ մտցրել է այլաբանական առակներ,

որ «Վարդան Այգեկցուց առաջ հայ քարոզիչներն ըստ երևույթին չեն կիրառել իրենց խրատական ճառերի մեջ»։ Վարդանն է առաջին անգամ հոգեշահ, բարոյակրթական նպատակով օգտագործում առակները, որ նրա գաղափարները պարզում և հեշտ հասկանալի են անում։ Այսպիսով նա իսկապես ստեղծել է մի նոր ձև, մի «առանձին գրական տեսակ», առակավոր ճառեր, խրատներ։ Դրանով նա իր խոսքը բազմազան է դարձրել և ավելի գրավիչ, հետաքրքիր և ազդու, մանավանդ պարզամիտ ընթերցողների և ունկնդիրների համար։ «Ապա թէ ախորժէք և կամիք լսելով, քահանայք, իշխանք և ժողովո՛ւրդք, նա՛ ես գարշելի և մեղաւք լցեալ ծերս ի վերայ խորհրդոյ ճառիս ցուցանեմ ձեզ այժմ պարզ առակաւ, թէ որպէս են այսաւր սիրտք և խորհուրդք ամենայն մարդկան։ Եւ արդ՝ ահա էր ոմն փարթամ և յոյժ մեծատուն»։

Նա իր ճառերի համար առակները քաղել է զանազան աղբյուրներից, երբեմն մանրամասնությունները մշակելով. բայց երբեմն և ինքն է ստեղծել[19]։ Նրա ստեղծածն ու մշակածն է, օրինակ, «Վասն տասն վաճառականացն» առակը, որ գրված է Պաղտին իշխանին ուղարկած քսաներկու ճառ [=գլուխ] ունեցող թղթի մեջ, որ հիշվեց վերևում։ Ինչպես երևում է, նա իր այս գրությունը մի քանի անգամ մշակել է. վերջին անգամ Կիլիկիայի Դրազարկ վանքում, որ Սիս մայրաքաղաքից հեռու է եղել մի օրվա ճանապարհով։ Այնտեղ էր նստում Սսի եպիսկոպոսը, և այնտեղ է եղել մեծամեծների հանգստարանը. բայց որ գլխավորն է՝ վանքի միաբանները պարապել են ուսմամբ և գրել կամ արտագրել են բազմաթիվ ձեռագիրներ 12—14-րդ դարերում։ Թե ե՛րբ և ի՛նչ առթիվ է Վարդանը Այգեկից գնացել Դրազարկ վանքը, այդ հայտնի չէ։ Նա երկար ժամանակ ցանկացել է իր հիշված աշխատության մեջ այլաբանական առակ դնել, բայց իրեն չի հաջողվել, մինչև որ վերջապես այդ գլուխ է բերել Դրազարկում, ինչպես ինքը պատմում է նույն աշխատության առաջաբանի մեջ։ Վերջինս հետաքրքիր է և այնու, որ այնտեղ Վարդանը «պատկերացնում է իր ստեղծագործության երկունքը»։ Բերենք դրանից մի հատված։

«Ողորմելիս Վարդան, որ ի Մարաթաւոյ, ի միայնաւոր խցիս՝ ի սահմանս աստուածաբնակ ուխտիս, որ կոչի Դրազարկ, [կամեցայ] ձևացուցանել ժ [=տասն] առակաւոր բանիւ վաճառականս և ութ որոգայթս առաջի նոցա և գտանել Ը [=ութ] մեղս նման յորոգայթան և այն Ը [=ութ] մեղաւքն խաւսել առ ձեզ, ո՛վ քահանայք աստուածոյ և բարեպաշտ իշխանք և հաւատացեալ ժողովուրդք Քրիստոսի աստուածոյ մերոյ, և յայն ութ մեղք ժողովել զամենայն մեղս և զամենայն բարեգործութիւնս։ Եւ յոլով աւուրս աշխատեցա և բազում անգամ սկսա և ոչ յաջողեցաւ բանն. և տրտմեալ վարանեցա. և իմացա ստոյգ որ անբաւ անաւրէնութիւնք իմ

---

19 Վարդանի գործածած առակները նրա երկերից հանած և ի մի հավաքած տե՛ս Ն. Մառի հիշված աշխատության երրորդ մասի մեջ, часть III, Приложение II. Притчи Вардана Айгекского, էջ 65—93, «Առակք Վարդանայ Այգեկցւոյն»։

խաւարեցոյց ղմիտս իմ. և փախեալ կապեաց զլեզու և զշրթունս իմ։ Իսկ անոխակալն աստուած ոչ արար ըստ մեղաց իմոց, այլ հայեցաւ յաւգուտն»։ Ապա մանրամասն պատմում է դիշերը քնի մեջ տեսած՝ սկզբում ծանր մղձավանջային երազը, որ հետո փոխվում դառնում է մի ցանկալի տեսարան ու գործ իր համար։ Երազներին միշտ սիմբոլիկ բացատրություն են տվել. Վարդանն էլ զարթնելով՝ իր երազը բարենշան է համարում։ «Եւ ապա սկսա,—շարունակում է պատմել,—և անաշխատ յարմարեցի և գրեցի կարգաւ ժ [=տասն] վաճառականս և Ը [=ութ] առաւկաւոր որոգայթս առաջի նոցա և Ը [=ութ] մեղս և զառակս Ըն[=ութն] մի առ մի. ընդ մեղսն խորհրդաւոր համեմատեցի և պարբանիւ առընթեր մեղաց եդի. այս Գ [=այս գոյն=այսպէս] կարգելով»։ Սրանից հետո գալիս է ընդարձակ այլաբանությունը՝ «Վասն տասն վաճառականացն», որ չենք բերիլ։ Այստեղ կարևոր չի խոսել նաև առանձին առակների ու նրանցից հանած բարոյակրթական խրատների մասին։

4. «Առակք Վարդանայ»։—*Այս ճառախոսի գործածած առակները դյուր են գալիս և բերանացի ու գրավոր տարածվում են։ Ինչպես կարծում է Ն. Մառը, ամենայն հավանականությամբ նա ինքը կազմած պիտի լինի իր առակների մի երկու փոքրիկ ժողովածու. գուցե և ուրիշները նրա ճառերից հանել են առակները և ի մի խմբել, որով և առաջացել են Վարդանա առակները։*

Այդ առակների ժողովածուները, սակայն, անփոփոխ չեն մնում, այլ մինչև 17-րդ դարի կեսերը ենթարկվում են մեծ զարգացման։ Հետզհետե շատ նմանողներ են դուրս գալիս և կազմում են նորանոր ժողովածուներ թե՛ Վարդանի առակներից և թե՛ ուրիշ աղբյուրներից։ Այսպես զարգանում են առակների ժողովածուները՝ զի դրանց համար պահանջ կար։ Դրանք հարկավոր էին, նախ՝ քարոզության համար և պետք է օգնեին քարոզիչ հոգևորականներին, թե ո՛ր հոգեշահ խրատի համար ի՛նչ առակ կարելի էր պատմել։ Առակների ժողովածուներն, ուրեմն, ծառայում էին նախ նույն գործնական նպատակին, որի համար և դրանք կիրառել էր Վարդան Այգեկցին։ Ապա, ինչպես սկզբում ասվեց, առակներ սովորեցնում էին դպրոցներում և զանազան ձևերով վերամշակել ու մեկնել էին տալիս. ուստի և կազմվում էին նոր ժողովածուներ հաճախ վերամշակված ձևերով և նորանոր մեկնություններով։ Բայց որ գլխավորն է՝ 12—13-րդ դարերում և հետո ամեն տեղ առհասարակ, այնպես էլ մեզնում սիրում էին պատմվածքներ, առակներ ու զրույցներ և առասպելներ։ Ուստի առակների ժողովածուները դառնում էին հաճելի ընթերցանության գրքեր նաև աշխարհականների համար և զարգանում զանազան տիպերով և զանազան ծավալով։

Որովհետև ժողովածուների սկիզբը դրվել էր Վարդան Այգեկցու առակներով, ուստի ժողովածուները երևան են գալիս Վարդանի անունով, ունենալով վերնագիրս՝ «Գիրք առակաց ասացեալ վարդապետին Վարդանայ ի պէտս հոգւոյ և մարմնոյ պիտանի»։ Մի ուրիշ ձեռագրի մեջ էլ,

քավական աղճատ ուղղագրությամբ, «Արդ՝ գրեցաւ Առակաց գիրքս ընդ թերձումն յուսումնասէր մանկանց. զի ասացեալ է սայ առն աստուածայբանի և տիեզերայհռչակ եռայմեծին և երիցս երանեալ նազելի լայբունուն և քաջ փաղերային Վարդանայ զի հոգոյ և մարմնոյ շահ և օգուտ է ընդ թերձողաց»[20]։ Ուրեմն «Գիրք առակաց» կամ «Առակաց գիրք Վարդանայ». Վարդանը դառնում է ամեն տեսակի և զանազան աղբյուրներից ժողոված առակների համար հեղինակ։

Ինչպես երևում է, առակագրքերի մեծ պահանջ է եղել, որ 17-րդ դարում՝ 1668, 1676, 1683 և 1698 թվականներին, ուրեմն երեսուն տարվա մեջ չորս անգամ տպագրվում է Եվրոպայում, ուրիշ նյութերի հետ, Վարդանա առակների մի ժողովածու «Գիրք առասպելաբանութեանց որ է [կամ՝ որ ասի] Աղուէսագիրք» վերնագրով։ Այդ տպագրություններով բնականաբար պակասում է առակների ձեռագիր ժողովածուների պահանջը, բայց և դրանցով մեծանում է առակների ծավալումն ընթերցողների և առհասարակ պատմվածքներ սիրողների, առակախոսների շրջանում։ Անշուշտ նույն պահանջն է դրդիչ եղել, որ մեր Առակագիրքը՝ «Աղուէսագիրք» անունով թարգմանվել է արաբերեն՝ արաբախոս քրիստոնյաների համար, ինչպես ավելի ուշ՝ նաև վրացերեն լեզվով։

Մի անգամ որ առակների ժողովածուները դառնում են «ընթերցումն ուսումնասէր մանկանց», «հոգւոյ և մարմնոյ պիտանի», «հոգւոյ և մարմնոյ շահ և օգուտ ընթերցողաց», բնականաբար հոգեշահ առակների հետ՝ պահանջվում են նաև աշխարհային կենցաղական բնավորություն ունեցողներ։ Այս վերջին հանգամանքը պատճառ է դառնում, որ շուտով Վարդանա առակների ժողովածուների մեջ մտնում են ոչ միայն առակներ սովորական մտքով, այլև ամեն տեսակ պատմվածքներ՝ կենցաղային մոտիվներով, հեքիաթներ, անեկդոտներ, զանազան զրույցներ, ոչ միայն գրքերից, այլև ժողովրդի բերանից, վերջից ստանալով մի հոգեշահ խրատական մաս, որ շատ անգամ բռնազբոսիկ կերպով կցված է բուն պատմվածքին։ Այսպես, օրինակ, «Միամիտ գողը» զվարճալիքը։

Երկու գողք գնացին ի մեծատան միում յերդիք և կամէին գողանալ զինչս նորա։ Եւ էր լուսնկայ, և իմացաւ այրն, որ գողքն ի յերդիքն եկին։ Եւ ասէ կինն ցայրն, թէ՝ Ամէն գանձս և դրամն և ղումաշն ո՞ստի է եկեր քեզ։ Եւ ասէ այրն. Երթայի ի գողութիւն ի գիշերի մեծատանց երդիք ի լուսնկայ լուսոյն, որպէս որ այժմ կա. և շուք լուսնկին յերդից ի վայր ցայթէր զերդ հիմայ. և ես գիրկ առնէի զլուսնկին շուքն՝ բռնէի և ի վայր կիջնայի ի տունն և բան մի կասէի. որ ինչ գեղեցիկ ղումաշ կայր ի տանն, նա ամէնն ինձ կերեւնար և առնէի ի շուքն կապէի և զիս այլ ի հետ ղումաշին. և շուքն զիս ի վեր կուհանէր ի տունսն (տանիսն). և այսպէս զամէնն շահեր եմ։ Իբրև լսեցին գողքն զբանս զայս, խիստ ուրախացան և հաւատացին պատրողական բանիցն և գրկեցին զշուքն, որ ի վայր իջնուն, անկան և խելաց թափեցան։ Եւ այրն յարեաւ և եսպան զնոսա։

---

20 Տե՛ս Ն. Մառի հիշված աշխատության Ա. մասի մեջ, էջ 104, 160։ Աղճատ ուղղագրությունը դիտմամբ անփոփոխ է բերվում այստեղ։

Յուցանէ առակս, թէ մարդն որ գողանայ և սատանայական բանին հաւատայ, նա որպէս այն գողքն գորնչին. և պատճառն ի կնոջէն ելաւ, որ այն գողքն յերդից ի վայր անկան։ Կինն ի կողէն է, և կողն ծուռ է և ինքն չար է (Առ. Վարդ., Բ. 298, ՄՂէ)։

Նոյնպիսի է «Ճուհւոյ տղայ» զվարճալիքն իր մեկնաբանութեամբ, որ խրատ էլ չէ (Առ. Վարդ., Բ. 175, ՃԽԸ)։ Կամ՝ «երէց ասորի և երիտասարդ հայ» պատմվածքը, որի մեջ ասորի քահանայի տգիտութիւնն է ծաղրում (Առ. Վարդ., Բ. 63, ԽԴ)։

«Հարսն և սկեսուր և սկեսրայր» գեղեցիկ առակի մեջ շատ սլայծառ ու նկարեն երևում է ընտանիքի մեջ հարսի ստրկական վիճակը բռնակալ սկեսրի և սկեսրայրի ձեռի տակ, որոնց խոնարհ ծառան է նա և հլու հնազանդութեամբ ու մեծ համբերութեամբ պարտավոր է կատարել նրանց ամեն անմիտ պատուէրները։

Նոր հարս մի եղև խոնարհ և համբերող. և կամեցան փորձել զնայ սկեսուրն և սկեսրայր նորա։ Ասէ մին, թէ՝ Ջդուտն փակէ։ Եւ միւսն ասէ. Բաց, մին ասէ. Ել փակէ զդուտն, հողմ է։ Եւ իբրև գնաց և փակեաց զդուտն, և միւսն ասէ. Ել բաց զդուտն, զի ծուխ է։ Եւ սկսան ասել՝ փակէ և բաց։ Եւ նա սկսաւ փակել և բանալ կարգաւ և ասէ. Քեզ փակեմ և դորայ բանամ։ Եւ յերկարեաց և ոչ բարկացաւ։

Յուցանէ առակս, թէ առաքեալքն և մարգարէքն մեծ համբերութեամբ և հեզութեամբ քարոզեցին աշխարհի և մեծ սպառնալեաւք փակեցին զդժոխքն, զի մի մտցեն ի նայ. և բացին զարքայութիւն ողորմութեամբ աստուծոյ և շնորհաւքն, զի մեղաւորք դիմեն և մտցեն ի նայ յուսով ապաշխարհութեամբ. այս է փակելն և բանալն (Առ. Վարդ., Բ. 67, ԽԷ)։

Վարդանա Առակների այս բազմազան մեծ նյութը[21], որ մինչև 19-րդ դարը շատ սիրելի է եղել ոչ պահանջկոտ ընթերցողների համար, դժբախտաբար գեղարվեստական զարգացման տեսակետով կես ճանապարհին կանգ է առել, անպայման այն քաղաքական դրության պատճառով, որ ուներ Հայաստանը 14—17-րդ դարերում։ Մի Թլկուրանցի կամ Աղթամարցի, իր խաղաղ անկյունը քաշված, կարող էր իր սիրո և բնության երգը հնչեցնել և զարգացնել այն դարերում. առակները գեղեցիկ մշակելու համար, սակայն, բավական չէր մի փոքրիկ խաղաղ անկյունը։ Դրա համար պետք էր, որ խաղաղ ապրելիս լիներ և ավելի պահանջկոտ լիներ այն հասարակությունը, այն քաղաքացի բնակչությունը, որից ծագել էին առակները և որի համար պետք է արվեստավոր նոր հորինվեին դրանք։ Այդպիսի հասարակություն և այդպիսի պահանջ, սակայն, չկար և չէր կարող լինել 14—17-րդ դարերում, երբ Հայաստանի քաղաքներն ավերվում էին և ժողովուրդն ընդհանրապես ավելի հետադիմում էր, քան առա-

---

21 Ն. Մառի խմբագրությամբ՝ «Ժողովածոյք Առակաց Վարդանայ», մասն Բ. բնագիր. 485 առակներ, հաճախ իրենց վարիանտներով, ինչպես և այլ ընթերցվածներով։ Տե՛ս նույնի Գ մաս, «Հավելվածներ»։

ջադիմում։ Այդ պատճառով և առակների ժողովածուները մնում են իրենց նախնական ձևով, բավարարություն տալով միամիտ ընթերցողներին։

Ստեղծագործական հանճարը, կարելի է ասել, շատ քիչ է ձեռք տվել այդ ժողովածուների մեջ ամբարված բազմազան նյութերին, դրանք որոշ ուղղությամբ բանաստեղծորեն վերամշակելու համար։ Թեպետև կան ընտիր ու կենդանի ոճով համեղ ու սրամիտ պատմվածքներ, ևս ավելի երկրորդ կամ երրորդ խմբագրությամբ, բայց այդ ամենը պատահաբար է կատարված։

Նույնպես պատահաբար և ոչ գիտակցաբար ժողովրդականից ծագող առակների և զրույցների հետ մտնում է նաև ժողովրդական լեզուն և ոճակաբանությունը և ընդհանրապես ժողովրդական կյանքն ու ոգին։ Դրանց ազդեցության տակ՝ գրական ծագում ունեցող առակներն ևս, որոնք մաքուր գրաբար լեզվով են, երբեմն վերամշակվում են կենդանի ժողովրդական լեզվով ու ձևով. գործողությունը դառնում է ավելի լրիվ, պատմվածքն ավելի շարժուն, և լեզուն խոսակցական ու զվարթ։ Նյութն ուրեմն արտաքին ձևով կենդանանում և ժողովրդական բնավորություն է ստանում. բայց այդ արտաքինի հետ՝ ընդհանրապես և ներքինն է ստանում ժողովրդական ոգի։ Այդ կատարվում է երբեմն երկու-երեք վերամշակումներով։

Հետաքրքիր կլիներ այստեղ բերել մի քանի օրինակներ այդպիսի վերամշակություն կրած առակներից, բայց այդ մեզ հեռու կտաներ, մանավանդ որ ներքևում բերված են ուրիշ նպատակով բազմաթիվ առակներ։ Լավ կլիներ, եթե կարողանայինք այստեղ գրել նաև այն առակների մասին, որոնք ծագում են հայ ժողովրդական բանահյուսությունից թե Մխիթարի և թե Վարդանա առակների մեջ, կամ գուցե դրանք են ժողովրդականացել և մինչև վերջերս պտտում են մեր ժողովրդի բերանին. շատ բան, հարկավ, ընդհանուր արևելյան զրույցներից է ծագում թե՛ Վարդանա առակագրքերի և թե՛ մեր ժողովրդական բանահյուսության մեջ։ Այս խնդրի ուսումնասիրությունն ևս, որ դեռ չի կատարված, մեզ շատ հեռուն կտաներ, ինչպես և այն, թե արդյոք հայերի մեջ եղե՞լ է կենդանական վեպ ասածը, ինչ որ շատ հավանական է։ Այսպիսի մի վեպի մնացորդներ են ըստ երևույթին թե՛ առակագրքերի մեջ մտած և թե՛ ժողովրդի մեջ պատմվածբազմաթիվ առակները, ինչպես և առածները, որոնց գործող անձերը գանազան կենդանիներ են, առանձնապես աղվեսն ու գայլը։ Կենդանական վեպից են ծագում ըստ երևույթին «Գայլի պատահարները» («Պատահարք գայլի»)—հիմար գայլի գլխին եկած բազմազան փորձանքները, որոնք մասամբ մտած են Վարդանա առակների ժողովածուների մեջ։ Բայց այդ ևս հատուկ ուսումնասիրության խնդիր է։ Մեր նպատակի համար այստեղ բավական է այն, որ ապահովապես կարելի է ասել, որ ժողովրդական առակները բավական ստվար թվով մտել են առակագրքերի մեջ։

Այսպիսով ուրեմն, առակները դառնում են մի տեսակ միջոց ժողո-

վրրդական տարրերը թե՛ ըստ ձևի, թե՛ ըստ բովանդակության մտցնելու մեր հին գրականության մեջ, և դրանց միջոցով մեր գրականությունը հետզհետե մոտենում է ժողովրդին, ենթարկվում է աշխարհիկ ոգուն և հոսանքին։ Սկսում են գրականությունը հորինել նաև աշխարհականների, ժողովրդի համար։ Ուստի եթե Վարդանա առակների հին ժողովածուների մեջ երևում է ավելի կրոնական ուղղություն, հետագա ժողովածուների, կամ հին առակների նոր մշակությունների մեջ տեսնում ենք նաև նոր, ոչ-եկեղեցական մտածողության եղանակներ և, որ գլխավորն է՝ ժողովրդական իրական կյանքի պատկերը մի բոլորովին նոր աշխարհայեցողությամբ։ Եվ այս այսպես է ոչ միայն Վարդանա, այլև արդեն Մխիթար Գոշի առակների մեջ։ Այստեղ հնարավոր չէ մանրամասն խոսել մեր հին գրականության այս նոր ոդու բոլոր կողմերի մասին. կառնենք միայն նրանցից մեկը հետևյալ գլխի մեջ։

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՌԱԿՆԵՐԻ ՄԵՋ

1. Դասակարգային պայքարը։—Այս հատվածի առաջին գլխի առաջին պարագրաֆի մեջ արդեն տեսանք, որ Բագրատունիների իշխանության շրջանից ի վեր ավելի ու ավելի ծանրացած էր աշխատավոր ժողովրդի տնտեսական դրությունը։ Մինչ մի կողմից երկրի հարուստները,—լինեին աշխարհական թե եկեղեցական, ազնվական թե քաղաքացի վաճառական,—փարթամացած վայելում էին կյանքի բարիքները, մյուս կողմից՝ աշխատավորությունը գյուղում ու քաղաքում տառապում էր չքավորության ճիրաններում։ Իշխողների հարստության աղբյուրը կազմում էր ոչ միայն առևտուրն ու վաշխառությունը և արդյունագործությունը, այլև աշխատավորների շահագործումը. բուրժուազիան կեղեքում էր մանրը արհեստավորներին։ Հողերը կենտրոնանում էին աշխարհական ու հոգևորական իշխանավորների և վանականների ու վաշխառուների ձեռին, որոնց տնտեսության հիմքը կազմում էր երկրագործությունն ու շինականների հարստությունը, թեկուզ և կային «հողագործ իշխաններ» և վանականներ, որոնք իրենք անձամբ էին մշակություն անում։ Այս տրնտեսական-սոցիալական հարաբերությունների հետևանքով տեղի էր ունենում մի պայքար ճնշող և ճնշված դասակարգերի միջև, և այս ո՛չ միայն Զաքարյանների տիրապետության երկրում, այլև Արևմուտքում, հայկական իշխանությունների մեջ, այլև մահմեդական տիրակալների ձեռի տակ։ Արտադրող ժողովուրդը նույն կեղեքման ենթակա էր նաև թաթարների իշխանության օրով 13-րդ և հետագա դարերում։

Այս տնտեսական հակասության հետևանքով առաջացած դրությունն ու դասակարգային պայքարն արտահայտված գտնում ենք առակների մեջ[22]։ Տեսնենք, թե ինչպես է գծագրվում հասարակական կյանքի պատ-

22 Սրանով, հարկավ, չենք ուզում ասել, թե նախորդ դարերում չի եղել դասակարգային պայքար։ Մեր հեղինակները լռում են այդ մասին, բացի գուցե Նրշակավանի զրույց-

կերն առակների մեջ, ավելի Մխիթար Գոշի, նկատի ունենալով, հարկավ, ոչ այնքան առասպելական, որքան խրատական մասիրը, որովհետև մինչ առաջինները կարող են ընդհանուր բնավորություն ունենալ և մեծ մասամբ այդպիսին են, վերջինները ծագում են հայ հեղինակներից, որոնք և իրենց դասակարգի գաղափարախոսներն են։ Վարդանի առակների մեջ արծարծվում են ընդհանրապես նույն գաղափարներն, ավելի ազատախոհությամբ։ Այստեղ կառնենք հատկապես, նախ՝ ազնվականության և աշխատավոր ռամիկ դասի հարաբերությունը և երկրորդի պայքարն առաջինի դեմ. ապա՝ այն խուլ պայքարը, որ երևում է մի կողմից քաղաքի տարբեր արհեստավորների, մյուս կողմից՝ քաղաքի և գյուղի միջև. երրորդ՝ թե ի՛նչ վիճակ ունի եկեղեցականությունը և ի՛նչ կարծիք ունեն նրա մասին աշխատավորները, կամ աշխատավորության կռիվը հոգևորականության դեմ. և վերջապես՝ հոգևորականության հայացքը հայերի և այլազգիների իրար հետ հարաբերության վերաբերմամբ[23]։

2. Աշխատավորության պայքարն ազնվականության դեմ։—*Երկրի գլուխը թագավորն է, որ ունի իր երկրորդը։ Առակախոս Մխիթարը թագավորի երկրորդն անհրաժեշտ է համարում։ «Հարկաւոր ցուցանէ առակըս զերկրորդն լինել թագաւորի և բնաւ կարգաց. զի ոմն զբարեկարգութիւն պահիցէ, և միւսն զմարտսն վանիցէ» (Մխ., ԿԸ. 64)։ Մնացած իշխաններին էլ թագավորն ըստ պատշաճի պաշտոններ է տալիս (Մխ., ՀՁ. 70)։*

Թագավորի գործը գլխավորապես այն է, որ նա կամ ասպատակում է ուրիշ երկրներ, կամ թե իր երկրի մեջ տեղետեղ շրջելով՝ ծանրանում է իրայինների վրա։

Յետ կարգելոյ զիշխանս ի չուրսն, Լևիաթա՛ն արքայ, ասեն, զիա՞րդ է՝ զի ոչ շրջիս կամ ասպատակես։ Եւ նա ասէ. Զի թշնամիք առ մեզ ոչ գոն, և անկարօտ եմք իմիք. զմերս վայելեսցուք. և ընդ ձեզ ոչ զբօսանամք, զի մի ծանր ձեզ եղէց։ Եւ ասացեալքն հաճոյ նոցա թուեցաւ։

Ակնարկութիւն առակիս այսպէս է. զի թէ թագաւորութիւն յայլմէ ոչ նեղիցի ի թագաւորէ՝ և բաւական կեանս ունիցի, բարի է խաղաղասէր լինել, նա և ոչ իւրոցն ծանրանալ շրջելով. ապա թէ հարկաւորի ի թշնամեաց, անարգութիւն է ոչ տալ պատերազմ (Մխ., ԿՁ. 63)։

ցից։ Մեր նոր պատմաբաններն այդպիսի դասակարգային կռիվ են ուզում գտնել Հովհաննես [Յովհաննէս] կաթողիկոսի Պատմության իրար հաջորդող երկու ասացվածների մեջ։ Բայց դրանցից երկրորդը նրանք, գրաբար լավ չիմանալուց, բոլորովին սխալ են հասկանում. ուստի նախորդ ասացվածի իմաստն էլ կասկածելի է մնում դասակարգային պայքարի տեսակետից։ Այս պայքարը մեր դրականության մեջ շատ որոշ երևան է գալիս ամենավաղ առակների մեջ, որ և առաջին անգամ ցույց է տվել տողերիս գրողն իր ներքևում հիշված աշխատության մեջ։

[23] Մ. Աբեղյան, *Հայոց միջնադարյան առակներն և սոցիալական հարաբերություններն նրանց մեջ, Երևան, 1935 (Արտատպված է «ՀԽՍՀ Կուլտուրայի պատմության ինստիտուտի աշխատությունները» ժողովածուի Ա հատորից, Երևան, 1935)։*

Մխիթարն, ուրեմն, խրատում է, թե երբ թագավորը բավական ապրուստ ունի, ավելի լավ է խաղաղասեր լինել, և ոչ իրայիններին վրա ծանրանալ շրջելով։ Թագավորը ոչ միայն շրջելով է կեղեքում, այլև իր մոտ երկրպագու եկած իշխաններից շատերին կլանելով իրեն կերակուր է դարձնում։ Նրանք էլ թագավորից օրինակ առնելով՝ ավելի հանդուգն են դառնում, ավելի ևս հորդորվում են չարիք գործելու և իրենցից թուլլերին և փոքրերին են ուտում։ Եվ եթե թագավորը մեկ-մեկ մեղադրում ու հանդիմանում է այդպիսի իշխաններին, այդ արժեք չի ունենում։

Մեղադրեցան ձկունք ի թագաւորէն իւրեանց, թէ՝ Ընդէ՞ր զայլս ուտէք զմանունսն։ Եւ նոքա համարձակեալ ասեն. Վասն զի ի քէն ուսաք. եկեալ բազմաց յերկրպագութիւն, և կլանելով կերակուր քեզ արարեր. ըստ այսմ և ինքեանք ևս յանդգնագոյնք եղեն։

Զայնոսիկ յանդիմանէ առակս, զի որով ինքեանք գործեն, զայլս բամբասել կամելով առաւել ևս ի չարիս յորդորեն՝ քան թէ կարճեն. վասն զի գործով՝ քան բանիւ ի դէպ է լինել խրատուն (Մխ., Հե. 69)։

Ահա մի թագավորություն, որ հիմնված է այնոր վրա, որ զորեղը թուլլին ուտում է։ Իսկական և վերջին ուտվողը ժողովուրդն է կամ աշխատող դասը՝ լինի քաղաքացի թե շինական, իսկ ազնվականները՝ թագավորը, իշխաններն և եկեղեցականները միայն վայելողն են։ Այսպես և Մխ., է. 9.

«... Զձեզ իշխանս կարգելով՝ այնպէս թագաւորեմ ... Եւ յօրինեաց զկարգ թագաւորութեանն յանձն առնելով նոցա զորթ՝ գինէպետ, և զթզենի՝ հիպատոս, զդժնիկ՝ դահճապետ, և զնռնենի՝ բժշկապետ, և զայլս ի պտղոց ի դարմանս, զմայրս՝ ի շինուածս, զանտառս՝ յայրումն, զմորենի՝ ի բանտ, և զայլսն ամենայն յիւրաքանչիւր գործ»։

Այրվողը հասարակ ժողովուրդն է, որ, հարկավ, գոհ չէ իր վիճակից. ուստի առակախոսը եզրակացնում է.

Յանդիման կացուցանէ առակս, թէ ոչ ոք կարէ ճոխանալ առանց անփառից, և ոչ բարձրանալ առանց անարգից։

Շատ տխուր է այդ թագավորության դրությունը։ Մխիթարի մի շարք առակների մեջ այս սոցիալական անհավասար դրությունը խիստ զգալի է։ Ժողովուրդն իշխանների սեփականությունն ու ստացվածքն է։ Նրանք շատ ուրախանում են, երբ իրենց հպատակները հաջողություն են ունենում, բայց այդ ոչ թե իրենց բարեսրտությունից, այլ որովհետև այդ հաջողությունն էլ իրենցն են համարում, քանի որ ուզած ժամանակ կարող են հպատակներից ամեն մեկին խփել և ուտել։

Վարուժանի տեսեալ բազմորդի զլոր՝ գոհանայր զաստուծոյ, և խնդակից նմա լինէր։ Եւ ասէ լոր. Թէ ճշմարտութեամբ գոհանաս, երանի է քեզ։ Եւ անդէն եհար զմի ի ձագուց նորա՝ և ըմբռնեաց։ Ասէ լորն. Ահա յայտ եղև, զի ոչ վասն աստուծոյ գոհանայիր, այլ վասն ագահութեան։

Յայտնէ առակս զբարս իշխանաց, զի ուրախ լինին ընդ ձեռամբ անկելոց ընդ յաջողուածսն, ինքեանց վարկանելով զնոցայն՝ քան թէ ստացողացն (Մխ., ՃԺէ. 99)։

Իշխանները, որ գողերին պատժում են, իրենք ավազակությամբ ու գողությամբ են պարապում։

Գող զբորէ ըմբռնեաց առիւծ. և նա ասէ. Ջմեռնա՛լս ուտեմ, զի կենդանեաց ոչ յաղթեմ, իսկ դու զի հաղթող ես՝ անդանդաղ զայդ գործես։

Ջբռնակալ իշխանս առակս բամբասէ. զի զգողս պատժեն, և ինքեանք բռնակալութեամբ զնոյն գործեն, ըստ յանդիմանութեան առաքելոյ (Մխ., ՂԳ. 82)։

Ո՞վքեր են այդ պատժվող գողերը.—միայն հասարակ ժողովուրդը։ Իշխաններն ինչքան էլ գողություն ու ղրկանք անեն, չարիքներ գործեն, նրանց համար դատ ու դատաստան չկա։ Դատվողն ու պատժվողը միայն ժողովուրդն է։

Դատելու ամենամեծ իրավունքը, նույնիսկ կաթողիկոսից ավելի, պատկանում է վարդապետին, այսինքն միջնադարյան գիտնականին։ Բայց սա իրավունք ունի դատելու միայն ժողովրդին, աշխարհականին, ռամիկին։ Իսկ երբ իշխանավորն է հանցանք գործում, այդ ժամանակ իբր թե ինքը ժողովուրդն ասում է, թե ժողովուրդը չպետք է իշխանավորին դատի. «Զի ամենայն իշխանաւոր աստուծոյ ազնիւ ծառայ է»։ Բայց չէ՞ որ հանցանքի մեջ բռնվել է այդ «ազնիվը»։—Այո՛, բայց այդ «ինքն գիտէ և Քրիստոս»։ Ուրեմն իշխանավորի դատը միայն աստված պիտի անի և ոչ ժողովուրդը, որ իշխանության տակ լինելով, ասում է առակախոսը, պարտավոր է հնազանդ մնալ իր իշխանին, նույնիսկ եթե նա գող ավազակ լինի։

Ի՞նչ պիտի լիներ դրա հետևանքով աշխատավորի դրությունը։ Բերենք Վարդան Այգեկցու իրեն առակներից մեկը.

ՄԵՇԱՏՈՒՆՔ ԵՎ ՄՇԱԿՔ, ԻՇԽԱՆՔ ԵՎ ՇՈՒՆՔ ԵՎ ԹՌՉՈՒՆՔ

Եւ դարձեալ այս չէ զարմացումն, ով ժողովուրդք աստուծոյ, թէ աստուած ի ձեռն մեղաւորի զայլ մեղաւորս որդորէ՝ դառնալ առ նա՝ յուսով ապաշխարութեանն։ Եւ զայս վասն այնորիկ առնէ աստուած, զի տեսցեն մարդիքն և զնա փառաւորեսցեն և ոչ զմարդն. որպէս և ցուցանեմ ձեզ յայտնապէս և պարզ աւրինակաւ։

... Եւ արդ՝ ահա տեսանեմք զմեծատունսն, որ ի ձեռն մշակաց գործեն և փշովք պատեն և պահեն զայգիս և զդրախտս. եւ ի ժամ ճաշակման ողկուզիցն և պտղոցն ոչ զմշակսըն յիշեն և ոչ զփուշն, այլ տանուտեառն շնորհակալ լինին. և նմա կենանք և խաղաղական հայցեն յաստուծոյ։ Նոյնպէս և փառազարդ մեծամեծ իշխանքն ի ձեռն շանց և գիշակեր թռչնոցն որսան զերէսն և զթռչունսն։ Իսկ ի ժամ ճաշակման պարարտ և անուշահամ մսոյն ոչ զշունսն յիշեն և ոչ զթռչունսն, այլ իշխանին լինին շնորհակալ, և յաստուծոյ խնդրեն յերկար ժամանակաւք վարել նմա զիշխանութիւն (Առ. Վարդ., Գ. 77, ե.)։

Այսպես ուրեմն, այն աստիճան ընկած և մոռացության է տրված աշխատավոր շինական դասը, որ իշխանների համար դործող մշակները հավասարվում են այն շներին ու գիշատիչ թռչուններին, որոնց միջոցով իշխանները որս են անում։ Վայելում են իշխաններն աշխատավորի ձեռքի արդյունքը, և աշխատավորը մնում է քաղցած։ Վարդան Այգեկցին այդ պատմում է իբրև մի սովորական հանրածանոթ երևույթ։ Ուրիշ տեղ, սա-

կույն («Վասն որկանաց») նա պաշտպանել է աշխատավորի իրավունքը դժոխքի սարսափներով զարհուրեցնելով մշակի վարձը կտրողներին։ Սոցիալական խնդիրներ, սակայն, նա չի հարուցանում։ Բայց արդյոք կյանքի մեջ չկայի՞ն դրանք։ Տե՛ս Մխիթար Գոշի առաջին առակը։

Աստուած յառնելն նրբեմն զարարածս՝ երկեաւ հակառակիլ. և խառնեաց զծանրն ընդ թեթևին, զտկարն ընդ հզօրին. զի թէ հակառակ դարձցին՝ առ միմեանս, և ոչ ընդ արարչին։

Խրատէ առակս զթագաւորս՝ կարգել զմեծամեծս զնուաստս ընդդէմ միմեանց. զի մի ընդ թագաւորս, այլ ընդ միմեանսն պատերազմեսցին (Մխ., Ա. 5)։

Ըստ այս առակի, թագավորի կառավարության սիստեմն այն է, որ նա «մեծամեծներին ու նվաստներին» իրար հետ կռվեցնում է, որպեսզի իր դեմ չելնեն։ Եվ վարչության այս եղանակը մի անհրաժեշտություն է համարում թագավորական իշխանության գաղափարախոս և մեծ իշխանների անձնական բարեկամ Մխիթարը, որ խրատում է այդպես վարվել։ Նա մինչև անգամ աստծու անունով սրբագործում է այդ, պատճառաբանելով, թե աստված ինքն էլ այդպես է վարվել արարչագործության ժամանակ։

Այսպես ուրեմն, իրար դեմ հանել «մեծամեծներին և նվաստներին»։ Բայց ովքե՞ր են դրանք։—«Մեծամեծքն» ազնվականներն են, ազատները, իսկ «նուաստքը»—ոչ ազնվականները, անազատները, կամ «վար, ցած, խոնարհած, յետին, տառապեալ, չնչին, խեղճ» մարդիկը, ինչպես բացատրված է այդ բառը Հայկազյան լեզվի Առձեռն բառարանի մեջ։ Թե այս բացատրությունը ճիշտ է, երևում է Մ. Խորենացու Հայոց Պատմության մի հատվածից (Ա, գլ. ԻԴ)։ Այստեղ պատմագիրը երգիչներից առնելով գծագրում է թագավորի գաղափարական տիպը, որի համար ի միջի այլոց ասում է. «Ոչ ընդ լաւագոյնսն խանդայր և ոչ զնուաստսն արհամարհէր»։ «Լաւագոյնքն» ազնվականներն են։ Մ. Խորենացու ձեռագիրների Ա խմբի մեջ «զնուաստսն» բառի փոխանակ կա «զստրուկսն»։ Կնշանակե՝ հին ժամանակ նուաստ և ստրուկ բառերը հասկացված են իբրև համանիշ։ Այդպես «նուաստ» կոչվել է ռամիկը, հասարակ աշխատավոր դասը, ինչպես այժմ էլ կոչում ենք վերին կամ բարձր դասակարգ և ստորին կամ ցածր դասակարգ։

Մխիթար Գոշը, ուրեմն, խրատում է, որ թագավորն ազնվականներին ու հասարակ, աշխատավոր ժողովրդին իրար դեմ հանի, որպեսզի չկարողանան թագավորի իրեն դեմ ելնել։ Մի անգամ որ Առակագիրն այդ է քարոզում, նշանակում է իրականության մեջ գոյություն է ունեցել այդ կռիվը, դասակարգային պայքարը, և հենց այդ է պատճառը, որ Մխիթարը հանդես գալով իբրև թագավորական իշխանության գաղափարախոս՝ ամենից առաջ, իր առաջին առակի մեջ հենց այն հոգացողությունն ունի, որ հեղափոխական շարժումն ուղղված չլինի թագավորի դեմ։ Կա՞ր արդյոք այդ շարժումը։

Դասակարգային պայքարը տեղի է ունենում այն ժամանակ, երբ ճնշված, հարստահարված դասը գիտակցում է իր դրության վատթարությունն և իր շահերի հակադրությունը ճնշողների ու հարստահարողների դէմ։ Եվ Մխիթարի առակների մեջ տեսնում ենք, որ ռամիկը շատ լավ գիտե իր տառապագին դրությունը։ Նա գիտե, որ տերերն իրեն տանջում են, կաշին քերթում են ոչ միայն կենդանի ժամանակ, այլև մեռնելուց հետո։ Ուստի և նա ստիպված է թաքնվել տերերից։

Մեղադիր եղեն ոմանք կղերու, եթէ զիա՞րդ ի ջուր յաճախ դեգերիս։ Եւ ասաց. Զի ոչ շատանան զերկուորիս առ կենօք առնուլ, այլև մահուամբ մերկ ի մարթոյ առնեն։

Զչարաց տերանց առակս ազդէ. զի կենօք տանջի և մահուամբ (Մխ., ՂՋ. 83)։

Աշխատավորն իր տերերից ոչ մի լավ բան չի սպասում. մինչև անգամ Առակախոսը խրատում է, թե պետք է զգուշ լինել տերերից, զի նրանց բարքն այնպիսի է, որ նույնիսկ «քաղցր» տերերը միշտ էլ բարի չեն։

Հաւ ընտանի յըմբռնել ստացողին իւրոյ, յոյժ աղաղակէր. և ոմանք մեղադիր լինէին, եթէ զմէ վայրապար կոխիս ամբառնաս։ Որոց ասաց, թէ՝ Զարհուրիմ, զի ոչ յամենայն ժամու վասն բարւոյ ըմբռնէ զի երբեմն գլխիվայր կախէ, և բազում աւուր ճանապարհ տանի. և երբեմն ի վերայ կայծականց խորովէ և ուտէ։

Զբարս տերանց առակս յայտնէ, զի ոչ է յամենայն ժամու բարի ի նոցանէ գտանել. թէպէտ և քաղցր իցեն. այլ երբեմն և չարի ակն ունել արժան է, և զգաստ կեալ, և պատրաստութեամբ վարիլ ընդ նոսա (Մխ., ՃԻԸ. 106)։

Խեղճ մարդիկը տառապում են իրենց չքավորության մեջ և մինչ մտածում են իրենց դառն դրությունը թեթևացնել, իշխաններն ու բռնակալ թագավորներն ավելի ևս տանջում են նրանց կոռ ու բեկարով և կողոպտելով։ Կարդանք «Աղօթք աղքատի» առակը։

Այր մի աղքատ երթար ի քաղաք մի. ի ճանապարհին հիւանդացաւ և աղաչէր զաստուած պատրաստել նմայ գրաստ տանել ի շէնն. և ահա գայ ոմն չարաբարոյ՝ հարկանէր զնայ։ Արի յոտն, ասէ, և շալկէ զքուռակս. զի ոչ կարէ գալ զհետ մաւրն իւրոյ։ Եւ յարեաւ և լար դառնայպէս. զի ոչ կարէր կանկնել. և այրն չարաբարոյ ոչ դադարէր ի հարկանելոյ զնայ։ Եւ նայ ասէ. Վա՛յ ինձ, աստուած իմ, փոխանակ թեթևացուցանելոյ ծանրացուցեր զվիշտս։

Յուցանէ առակս, թէ աղքատքն տառապին վասն չքաւորութեան և խնդրեն ինչք և ստացուածք ի յաստուծոյ. և թագաւորքն և բռնաւորքն, զինչ ունի, զան ալ կողոպտեն և թալնեն (Առ. Վարդ., Բ. 196, ՃԿԵ)։

Թե ո՛րքան հետզհետե ավելի վատթարանում է աղքատների տնտեսական դրությունը, և իշխանները մեկը մյուսից ավելի դաժան են դառնում, այդ լավ արտահայտված է հետևյալ «Իշխան և այրի» առակի մեջ։

Իշխան մի կայր՝ յոյժ չար և անիրաւ։ Եւ այրի կին մի կայր ի նոյն քաղաքի, և իշխանն հարկ պահանջելով նեղեր զնա. և կինն աղօթելով ասէր, թէ աստուած զինքն խաղաղութեամբ պահէ։ Գնացին ասացին իշխանին, թէ քո չարիդ համար աղաւթք կու առնէ։ Նա ձեռնաւորն և ասէ. Ես քեզ լաւ չեմ արարել. դու ինձ համար է՞ր կու աղաւթես։ Նայ ասաց, թէ քո հայրն վատ մարդ էր, ես անիծեցի, նա մեռաւ, դու նստար ի նորա տեղն այլ

[=ավելի] խիստ չար. կու վախեմ, թէ մեռանիս, նա քո որդին այլ [=ավելի] խիստ լինի չար (Առ. Վարդ., Բ. 328, ՅՇԶ)։

Մարդիկ արդեն սկսել են դիտել սոցիալական անհավասար դրությունը և մտածել դրա մասին։ Զրկանք կրողները դասակարգային գիտակցության գալով, բնականաբար տրտնջում ու դանգատվում են իրենց վիճակից։ Առակների մեջ «հանդգնում են» խոսել իշխանների դեմ, քննում են նրանց գործերը, դատում են և շատ չարիքների պատճառը նրանց համարում («Դատիչք լինին վարուց իշխանաց, և բազում պատճառս չարեաց դնեն նոցա»)։ Այս արդեն հեղափոխական մտքեր են, իսկ «հեղափոխական մտքերի գոյությունը որոշ դարաշրջանում՝ ենթադրում է արդեն հեղափոխական դասակարգի գոյությունը»։ Կարդանք այս առակը։

Տրտունջ եղեւ տնկոց ամենեցուն զթագաւորէն իւրեանց, թէ առաւօք բաշխեաց զիւրաքանչիւր պատիւ. զի զոմանս ի տունս բնակեցոյց՝ որպէս զնարինջ, և զոմանս ի բուրաստանս, և զոմանս՝ յայգեստանս՝ և պատուին ի մարդկանէ, և զոմանս իբրեւ զանարգս ի վայրի զպտղաբերս, որ և կերակուր լինին խոզից և կոխան գազանաց, և զայլս յանտառս՝ որպէս զմայրս, զսարդի և զնոճի և որ նման սոցին, զոր հարկանեն անխնայ, և անարգ քարշանօք ի շինուածս և յայրումն պատրաստեն։ Եւ նորա լուեալ կոչեաց զնոսա, և սաստեալ ի վերայ նոցա ասէ. Ո՞չ գիտէք, եթէ զխորհուրդ թագաւորին ոչ ամենեքեան գիտեն, որպէս և ոչ զաստուածոյն. և թէ այլ ևս յանդգնիք, մեծագոյն ունիք պատուհասիլ։ Եւ զարհուրեալք լռեցին։

Հանճարեղս զմեզ լինել կամի առակս, և հնազանդս աստուծոյ և թագաւորաց, և ոչ տրտնջել զանճառ խնամոցն աստուծոյ, և ոչ զծածուկ խորհրդոց թագաւորաց. այլ իւրաքանչիւր գործոյ ուշ ունել։ Զի ոչ եթէ վայրապար ինչ եղև կարգել ի թագաւորէն տնկոց զնոսա, որպէս և ոչ աստուած և ոչ թագաւորք տնօրինեն վայրապար. զի զոմանս յայգիս կարգեաց ի պտղաբերաց, և զոմանս ի բուրաստանս, և զոմանս զհամացեղս յանտառս. այսպիսի պատճառաւ զի գազանաց և անասնոց կերակուր լինիցին, և մի նեղեսցեն զմարդիկ զտածեալս ի նոցանէ՝ ուտելովն. և թէ ի տունս ոմանք տնկեցան, անուտելիք մանաւանդ են, ուստի համարին մարդիկ լինել ի զբօսանս տեսլեան և ի բուրումն, զի կերակուր է ըղձալոց բուրումն, և տեսլեան ի զուարճացումն՝ որպէս բուրաստանք. նա և ի բժշկութիւն եւս։ Եւ այլ թէ անտառք ի շինուածս և յայրումն պատշաճեցան, և այս նախախնամաբար, զի մի՛ լիցի՝ որ զպտղաբերս հարկանիցեն ի շինուածս և յայրումն։ Այսպիսի և աստուծոյն տնօրինի և թագաւորաց զանխուլ և անքննելի դատաստանաւ, և թէ ոք յանդգնի անկարգաբար ասել, դատապարտի (Մխ., Ի. 21)։

Առակախոսը փորձում է «այրվողների» տրտունջը լռեցնել և քարոզում է հնազանդություն աստծուն և թագավորներին և նույնիսկ դատապարտում ու սպառնում է իշխանների դեմ տրտնջացողներին։ Բայց կարդանք հետևյալ առակը.

Կարգեցաւ հրամանատար և ի թագաւորէն բուսոց ճակնդեղ ի վերայ բանջարոց իբրև զտևող յամարայնի ի կերակուր մարդկան։ Եւ խանդացեալ սեխ և ձմերուկ, և այլ պտուղք բանջարաց և պարտիզաց՝ թաղթ և շաղգամ և ստեպղին, և սկսան չարախօսել՝ եթէ սաստիկ ամենևին է, և գոչող որովայնի։ Եւ գիտացեալ արքայի նոցա, տանջել զնոսա հրամայեաց, եթէ զի յանդգնիք ընդդէմ իշխանի, զի հնազանդել պարտիք, և ոչ քննիչք լինել, զի մի՛ անկարգութիւն լիցի։

Յածուցանէ առակս զյանդգնութիւն մարդկան, որ դատիչք լինին վարուց իշխանաց, և բազում պատճառս չարեաց դնեն նոցա. և ոչ իմանան՝ թէ այնոքիւք լուծանին կարգք իշխանութեանն՝ մինչև ի բնաւիցն ժամանէ իշխանն աստուած (Մխ., Ը. 51)։

Տրտնջացողներին ուրեմն տանջում են, որովհետև ոչ ոք չպիտի հանդգնի իշխանի դեմ։ «Չի հնազանդել պարտիք և ոչ քննիչք լինել, զի մի՛ անկարգութիւն լիցի»։ Այդ քննութիւնը, ինչպես երևում է Առակախոսի վերջին նախադասութիւնից, «հասած է եղել մինչև ամենքի իշխանաստծուն»։ Բողոքողները երբեմն թագավորի սաստելուց զարհուրած՝ լռում են։ Բայց մի անգամ որ մարդիկ սկսել են տրտնջալ իրենց վիճակից, այլևս հնարավոր չէ լոկ խոսք ու խրատով լռեցնել և հնազանդեցնել բողոքողներին։ Դասակարգային կռիվն սկսված է իշխանների ու նրանց բռնութեան ենթակա գյուղացիների միջև, և առակագիր վարդապետը, որ իր կոչումով իբրև դատավոր՝ իբր միջնորդ է երկու դասակարգերի՝ աղնվականութեան և շինականութեան միջև, ստիպված է առերես գոնե ամեն մեկին իր տեղն ու արժեքը տալ և քարոզել, թե՝ «ոչ ոք կարէ ճոխանալ առանց անփառից, և ոչ բարձրանալ առանց անարգից» (Մխ., է. 10)։ «Բնաւից կարօտ լինել մեծամեծաց և փոքունց առակս ցուցանէ, ոչ միայն թագաւորաց, այլ ամենեցուն՝ իշխանաց և այլոց աշխարհականաց. նմանապէս և յեկեղեցիս. զի պէտս ունին փոքունց և անարգաց» (Մխ., ՃԺԹ. 96)։ Բայց դրանով բնավ չի բարվոքվում աշխատավորի վիճակը։ Ի՜նչ մխիթարութիւն աշխատավորի համար, թե իշխող և իշխված դասակարգերն էլ պետք են և իրենց արժեքն ունին աշխարհում, քանի որ նրան կարգել են ինչպես «զմայրս ի շինուածս, զանտառն յայրումն», քանի որ նա աշխատում է, և ուրիշները վայելում են, իսկ ինքը միայն «այրվում է»։ Այդ տանջվողները, մաշկվողները, ինչպես տեսանք, թաք են կենում իշխաններից և նույնիսկ մտածում են. «ելցուք և մի՛ դարձցուք առ նոսա». ճիշտ ինչպես մեր ժողովրդական վեպի՝ «Սասնա Ծռերի» մեջ[24] իշխանից դժգոհ ժողովուրդն ուզում է թողնել հեռանալ իշխանի երկրից։

Եղև երբեմն տրտունջ անդէոց, թէ՝ վասն ծննդոց մեր աշխատիմք, և ստեամբք ժողովեմք կաթն, և մարդիկ ճմլեալ զպտկունս՝ առնուն ի մէնջ զվաստակս մեր. ելցուք և այլ մի դարձցուք առ նոսա։ Եւ մի ոմն ի նոցանէ իմաստուն ասէ. Ոչ է այդպէս. զի զաւելորդսն քան զպէտս ծննդոց մերոց առնուն մարդիկ, և խնամեն մարդիկ զմեզ և ծնունդս մեր, զի առնումք շատ՝ քան թէ տամք։ Եւ ուսեալք զայս՝ ուրախ եղեն։

Խրատ առակս զբրթմնջող սպասաւորս, որք շատ կարծեն զինքեանցն քան զտերանցն զոր առնուն, այլ ուսեալք յիմաստնոց գիտեն՝ զի սակաւ է ինքեանցն (Մխ., Ջ. 73)։

Առակախոսը փորձում է, ուրեմն, ուրիշ կերպ համոզել բողոքողներին։ Աշխատավորները չպետք է տրտնջան, թե իշխանները նրանց աշխատանքը վայելում են, դի աղնվականները իբր նրանց աշխատանքի ավելորդ մասն են միայն առնում և դրա փոխանակ խնամք են տանում, պահպանում են նրանց։ Առակախոսը ձգտում է նույնիսկ համոզելու, թե

---

24 Մեր «Սասնա Ծռեր» ժողովրդական վեպը, ինչ որ պատմականին է վերաբերում, իր վերջնական հորինվածքն ստանում է մինչև 13-րդ դարի կեսերը։ Տե՛ս Մ. Աբեղյան, Հայ ժող. վեպը, Թիֆլիս, 1908. այլև «Աղդագրակ. հանդես», գրքեր 13—17, 1906—1908։

իբր տերերի տվածը կամ կատարածն ավելի շատ է, քան առածը։ Աշխատավորներն «իմաստուններից», այսինքն՝ հոգևորականներից իմանալով այդ, հանգստանում են մի առժամանակ և նույնիսկ ուրախանում են միամտությամբ։ Բայց դրանով չի վերջանում դասակարգային պայքարը։ Ինչքան էլ աշխատավորները տգետ լինեին, պիտի տեսնեին, որ կան շատ իշխաններ, որոնք աշխատողներից կերակրվում են, բայց իրենց հարկատուներին ոչ խնայում են և ոչ պահպանում գայլերի ու գազանների դեմ, այլ, ընդհակառակն, իրենք գայլ դարձած՝ տանջում են նրանց։ Կարդանք Մխիթարի հետևյալ առակը.

Բնկեալ առիւծու ոտք՝ տրտնջէր ղրնաւ կենդանեաց, եթէ՝ Հարկատուք իմ էք, զի իշխան գազանաց եմ. ընդէ՞ր այժմ ոչ պատարագիք՝ զի դարմանեցայց։ Եւ ասէն. Զի ի քէն ինչ ոչ գտաք պահպանութիւն՝ ոչ յարջոյ և ոչ ի գայլոյ և ոչ յայլ ինչ գազանէ. նա և ոչ դու իսկ ի մեզ խնայեցեր. այլ մեզ պատարագել աստուծոյ արժան է, որ այդպիսի չարեաց զքեզ պատահեցոյց։

Յայտնի է առակիս միտք. զի չարք յառաջնորդաց յաշխարհայնոց և յեկեղեցականաց՝ տանջելով զհնազանդեալսն և ոչ յայլոց պահեն ի վտանգէ։ Եւ ըստ արժանոյն անկեալք ի չարիս՝ աստուծոյ գոհութիւն մատուցուք, զի ոչ ի մէնջ եղեւ (Մխ., Ջե. 76)։

Իշխանները փորձում են մի ուրիշ կերպ էլ արդարանալ։

Թռչունք առ հասարակ զաղազակ բարձին, եթէ՝ Ջար է իշխանս մեր արծիւ, զի միշտ ի մէնջ կերակրի՝ և յայլոց որսողաց ոչ պահէ։ Եւ լուեալ ասաց, եթէ՝ Զինչ քան զայն ձեզ բարի, զի երկու ծնանիմ որդի՝ և զմինն ապականեմ, զի մի՛ ծանր ձեզ եղէց. և մերձ լինելով իմ՝ ոչ ոք կարէ որսալ զձեզ, և այլ ուրեք յանպատրաստի զձեզ գտեալ՝ որսան. զուր զինէն ամբաստանէք։

Ըստ առակիս սովոր են առնել թագաւորք ամենայն. առ իւրեանս ունել որդի՝ ժառանգ թագաւորութեան, զի մի՛ պատճառ կործանման իցեն յաշխարհի. և ի մերձ կալն նոցա՝ չիշխէ ոք գործել չար (Մխ., ՃԺԴ. 97)։

*Ձեզ համար դրանից ավելի ի՞նչ լավ բան կա,—ասում են թագավորներն աշխատավորներին,—որ երկու որդի եմ ծնում, բայց մեկին սպանում եմ, որպեսզի ձեզ վրա չծանրանամ։ Այն, որ արևելյան թագավորներն իրենց որդիներին, բացի թագաժառանգից, կուտրել էին տալիս կամ հեռացնում իրենցից, Առակախոսը բացատրում է, ուրեմն, իբրև թագավորի բարեհոգության նշան, որպեսզի իբր «չծանրանա» աշխատավորների վրա, և կամ աշխարհի կործանման պատճառ չդառնա։ Բայց ուրիշների և հայ Արշակունյաց այդ սովորությունից ոչ ոք չէր խաբվիլ, իհարկե. ուստի նույն առակի մեջ ավելանում է նաև հետևյալը. «Եւ մերձ լինելով իմ ոչ ոք կարէ որսալ զձեզ, և այլ ուրեք յանպատրաստի զձեզ գտեալ՝ որսան. զուր զինէն ամբաստանէք»։ Կնշանակե՝ թագավորը կամ իշխանն իրավունք ունի վայելելու աշխատավորի վաստակը. բավական է միայն, որ նրա հովանու տակ ապրելով՝ այդ աշխատավորն ուրիշներից այլևս չի կեղեքվում. «ի մերձ կեալն նոցա՝ չիշխէ ոք գործել չար» (Մխ., ՃԺԴ. 97), ասում է Առակախոսը։ Եվ եթե այդպես չի լինում, եթե ուրիշներն էլ կեղեքում են, դրա մեղքն իբրև թե իշխաններինը չէ։ Բայց արդյոք հավատո՞ւմ են դրան։ Աշխատավորները բողոքում են. «Ջար է իշխանս մեր ... զի միշտ ի մէնջ կերակրի և յայլոց որսողաց ոչ պահէ»։

Այդ չար իշխանն ահա, ինչպես վերևում բերված Զե առակի մեջ, մի օր թուլանում, ընկնում է, և հպատակներն ընդվզելով նրա դեմ, հնարավոր են գտնում հարկ չտալ. ուստի և դադարեցնում են հարկատվությունը: Որի՞ կողմը պիտի լինի այժմ առակախոս Մխիթարի համակրությունը: Նա գոհ է, որ ընկնում են այդպիսի չար ու տանջող իշխանները, լինին «յառաջնորդաց յաշխարհայնոց և յեկեղեցականաց»: Բայց և այնպես նա ավելի ևս գոհ է, որ չար իշխանները ժողովրդի ձեռքով չէ, որ պատժվում են. «Եւ ըստ արժանոյն անկեալք ի չարիս՝ Աստուծոյ գոհութիւն մատուցուք, զի ոչ ի մէնջ եղև» (Մխ., Զե. 76): Ուրեմն դարձյալ նա չի մոռանում իր դասակարգը և չի ուզում, որ աշխատավորի ձեռքով պատժվի չար իշխանը: Նույնը նաև Վարդանա առակների մեջ (Գ, ԽԸ, էջ 107): Եվ ոչ միայն այդ: Ազնվականության գաղափարախոսը, հակառակ ժողովրդական առածի, թե՝ «գեղ կանգնի, գերան կկոտրի», խրատում է, թե տկարները, ինչքան էլ թվով շատ լինեն և միաբան, չեն կարող հզորին հաղթել, և թե խելոքություն կլինի, որ այդ ապստամբ տկարներն իրենց ուժը համեմատաբար պակաս ուժեղի, այսինքն՝ երկրորդական իշխանների դեմ փորձեն:

Ժողովեալ երբեմն աստեղաց՝ ասեն ի նոցանէ ծերագոյնքն. Մեք բազումք եմք, զիա՞րդ զտիւ և զգիշեր ոչ լուսաւորեմք նման արեգական և լուսնի: Ասէ ոմն. զի ոչ միաբանութեամբ վարիմք: Եւ խոնարհեալ միաբանութեամբ նախ հերքել զարեգակն, և ի ծագել լուսնի՝ պարտեցան և ասեն. Այսպէս ի սմանէ աղօտացաք, զի՞նչ և յարեգական ծագելն լիցուք: Եւ զղջացեալ զպարտութիւն խոստովանեցան:

Խրատէ առակս, թէպէտ և բազումք իցեն, և տկարք, հզօրի յաղթել ոչ կարեն. իմաստութիւն է՝ այլևս տկարիւ զփորձ առնուլ՝ և զղջանալ, որ և թողութեան է արժանաւոր (Մխ., ե. 7):

Մխիթարն ինչքան էլ մի կողմից տկարներին խրատում է չապստամբել հզորների դեմ, մյուս կողմից, սակայն, հզորներին էլ զգուշացնում է տկարներից:

Զբոյն մրջեան արջ փորէր և լեզուաւ ժողովէր և ուտէր. և հնարի մրջիւն սատակել զնա. երթեալ առ պիծակ և գոռեխ և մժեխ և շանաճանճ և բրէտ և առ նմանք սոցին. և աղաչէ օգնել իւր ազգային: Ցավակցեն՝ հարկանեն զաչս և զլսելիս արջուն, և հարկանէ գլուխ զքարի, և նեխի և որդունք ևս ծնանին. և ի սաստկութենէ ցաւոց զբերան բացեալ գոչէր և նոցա մտեալ յորովայնն՝ խոցոտեն զաղիսն. և նեղեալ դիմէ ի հոսանս ջրոյ, և անչափ ի ներքս մտեալ՝ հեղձանի:

Զօրութիւն առակիս այսպիսի է. զի հզօրք զտկարս արհամարհեն, և ոչ երկնչին, սակայն իմաստութեամբ զօրանան փոքունք, և յաղթեն հզօրաց: Եւ այս իմաստութիւն է՝ ի փոքունց իրրև ի մեծամեծաց երկնչել (Մխ., ՃՄԲ. 124):

Բոլոր իշխաններն էլ չար չեն ըստ Մխիթարի. կան և այնպիսիները, որոնք իրենց բերդերի մոտ տեղ են տալիս ժողովրդին ապրելու և իբրև կռվող պաշտպանում են նրան ավազակներից ու ասպատակավորներից: Եվ այս անում են նրանք իբր մի բարեգործություն, իբր մի բարեպաշտական գործ, վշտակցելով տկարներին և փոխարենն իբր թե միայն աղոթք ու մաղթանք ստանալով իրենց ողջության և հոգու փրկության համար:

Եթէ ճընճղկու երթեալ առ արագիլ, և աղաչեալ զնա ասեն, Ի բոյն քոյ տեղի մեզ տացես հանել ձագս, և յօձից զձագ մեր պահեսցես: Եւ նա ասէ. Զի՞նչ ինձ առնիցէք, զի զայդ ձեզ առնիցեմ: Եւ ասեն. Աղօթս առնեմք. զի ձագք ձեր առողջութեամբ սնանիցին ի վնասակարութենէ օդոյ, և ի հանդերձեալսն կենաց արժանի լինիք յաղագս արդարութեան ձեր: Եւ յաղագս այսորիկ տեղի ետ նոցա: Եւ եղև ի հանել նոցա ձագ, սողաց օձ առնուլ ի նոցանէ, և տեսեալ տատեղան՝ եհար սատակեաց զօձն. և շրջէր ևս շուրջ ի սահմանսն միանգամայն սատակել զօձսն յաղագս փրկութեան նոցա:

Զվշտակցութիւն առակս ուսուցանէ տկարաց՝ յերկաքանչիւրսն վայելել փրկութիւն սակս բարեգործութեան նոցա (Մխ., ՃԻԲ. 103):

Վարդանա առակների մեջ, սակայն, այդ պաշտպանությունը չկա: Մխիթարի այդ առակն այնտեղ փոխվել է այնպես, որ իշխանն այլևս չի պաշտպանում իր հովանուն ապաստանող ժողովրդին, այլ միայն իր զվարճությունն է անում. նա ժողովրդին խաբում է, ըստ առակի առասպելին, իբրև թե օգնել չի կարողանում նրան, թեպետ կամենում է: Այս արդեն 14—15-րդ դարերի հայացք է, երբ հայ ազնվականությունն ընկած էր:

ՄԱՆՐ ԹՌՉՈՒՆՔ ԵՒ ԱՐԱԳԻԼ

Ժողովեցան մանր թռչունքն և աղաչեցին զարաքիլն, զի դիցեն զբոյնս իւրեանց ի ներքոյ բնին արաքլի: Եւ եկեալ ասէքն բնակեցան ի խոխան, զոր կուտեալ էր արաքիլն ի բունն իւր: Եւ սկսան քարոզել զնորածին ձագսն մանր թռչնոցն: Եւ արաքիլն ունի սովորութիւն, որ տանի զգլուխն յետ ի վերայ թիկանցն և զկտուցն կլկլեցնէ իբրև զձնձղայս. և կարծէին մանրաձագերն, թէ ապաշօք (ապաշաւել=խղճալ, ափսոսել, ցավել) զմեզ. և ասէին առ նա, թէ՝ Շատ շնորհակալ եմք քեզ. զի թէպէտ և ուզնել ոչ կարես, տրտմակից լինիս մեզ:

Նշանակէ առակս, թէ թագաւոր ոմն կամ իշխան ոչ կարէ ուզնել ժողովրդեանն և պահել ի թշնամեաց. այլ զհարկն յաւելորդ պահանջեն աղքատացն և ինքեանք փափկանան, նոյնպէս և հոգևոր առաջնորդքն ղի խնամ ոչ տանեն հօտին և ոչ հոգան զբորոտն գհիւանդացեալսն մեղօք, այլ զգէրն զենեն և ճարպովն պարարտանան (Առ. Վարդ., Բ., 198. ՃԿԵ):

Ըստ առակի խրատական մասի, ժողովուրդն արդեն գիտե, որ ազնվականությունն այլևս անպետք է և ավելորդ է և զուր ծանրաբեռնություն: Նա միայն փափկանում և իր անձն է պարարում: Այսպես և հոգևորականությունը:

Բայց այդ չէ միայն: Վարդանա առակների մեջ, որոնք ժամանակով ավելի ուշ են, աշխատավոր՝ շինականի այս դասակարգային պայքարն ընդդեմ ազնվականի՝ մի փոքր ավելի է շարունակվում: Աշխատավորն այնտեղ արդեն կատարելապես գիտակցում է իր արժեքը, իր շահերի հակադրությունն իշխանների դիմաց: Նա ըստ արժանվույն գնահատում է այն թագավորներին, իշխաններին ու պարոններին, որոնք ոսկով ու արծաթով զարդարուն ձիերի վրա բազմած ման են գալիս և ապրում են աշխատանքով մշակի, որ չարչարվում և հոդնում է աշխարհը շեն պահելու համար: Ուտում են իշխանները և երախտամոռ լինում. հեծնում են ձի և միայն աշխարհ ավերում:

Եզն և ձին խաւսեցան ընդ միմեանս։ Ասաց ձին ընդ եզն, թէ՝ Դու ո՞վ ես կամ զի՛նչ պէտս ես։ Ասէ. Ես ձի եմ, որ թագաւորք և իշխանք և պարոնայք կազմեն զիս ոսկով և արծաթով և բազմին ի վերայ իմ։ Ասէ եզն. Ամէն աշխարհիս շէն եմ ես, որ վաստակիմ և չարչարիմ և խոնջիմ. և ապայ դու և քու թագաւորն ուտէք. և ամենայն մարդ զվաստակս իմ ուտեն. և թէ ոչ վաստակիմ, դու և քու թագաւորն մէկ հետ մեռանիք. և դու երախտամոռաց մի՛ լինար։

Յուցանէ առակս, թէ մարդ կայ, որ աշխատի քան զեզն, և մարդ կայ, որ հանապազ զձի հեծնի ու աւեր ածէ աշխարհի. և թէ աշխատաւորն ոչ աշխատի, որպէս զեզն. նայ մեռանի ձին և հեծնող նորա (Առ. Վարդ., Բ, 151. ճիէ)։

Ազնվականն, ուրեմն այլևս ոչ միայն անպետք է, այլև պարապորդ, ավերածու։ Այս գիտակցությունն այնուհետև մինչև այժմ էլ մնում է մեր աշխատավոր ժողովրդի մեջ։ Ինչքան էլ իրականության համապատասխան է եղել առածը, թե «էշը դատի, ձին ուտի», բայց և այնպես ժողովրդական առակը, որ տողերիս գրողը գրի է առել 1885 թ. Աստապատ գյուղում[25], ասում է.

«Ոսկե թամքով ձին բեռնած եզան ասավ.
—Ես ձի ամ ձիավորին,
Ոսկե աթոռ ամ թագավորին։
Եզն ասավ.
—Ես եզն ամ եզնավորին,
Ոսկի աթոռ ամ ոըշպարին.
Ես չդատեմ արտն ու գարին,
Դառդառնին [ագռավները] պոչիդ տակին կշարվին»։

Այսպես ուրեմն, վերջ ի վերջո աշխատավորը, երկրագործ շինականն ավելի բարձր է դասվում, քան նրան կեղեքող ազնվականությունը։ Եվ այլապես էլ չէր կարող լինել, քանի որ առակների տեսակը, ինչքան էլ հոգևորականի ձեռով գրված, իր արմատներն ուներ աշխատավոր դասի մեջ և առակներն իսկապես նրա գրականությունն են։ Հենց այդ պատճառով էլ դրանց մեջ տեսնում ենք այն կռիվը, որ կեղեքված աշխատավորները վարում են ազնվականության դեմ։

3. Արհեստավոր քաղաքացիներ և քաղաքացիների վերաբերմունքն առ գյուղացիները։—*Առակները լինելով ամենից առաջ քաղաքացական գրականություն, բնականաբար, նույնիսկ Մխիթարի խմբագրությամբ, իրենց նյութն առնում են նաև քաղաքացիների կյանքից։ Այսպես, օրինակ, Մխիթար Գոշի առակների մեջ հանդես են գալիս առանձնապես* **արհեստավոր** *fաղաfացիները—հյուսն, դարբին, կտավագործ, կարող (դերձակ), պղնձագործ, երկաթագործ, արծաթագործ, ոսկեգործ, խաղախորդ (կաշեգործ), մորթեգործ, բրուտ, կոշկակար, շինողություն։ Բացի դրանցից, կան նաև տնկագործ, վաճառական և այլն։*

---

25 *Տպված է Տ. Նավասարդյանի «Հայ ժողովրդական հեքիաթների» մեջ. յոթներորդ գիրք, Թիֆլիս, 1891, էջ 85։*

Այս արհեստավոր մարդկանց մեջ տեսնում ենք մի խուլ մրցություն։ Հաճախ վեճ է ծագում, թե որի՛ արհեստն է ավելի բարձր։ Այսպես, օրինակ. Մխ., ճԿե. 133, դարբնին առավելություն է տրվում հյուսնից. ճԿէ. 134, երկրագործը գերադաս է պղնձագործից։

Արքային Սողոմոնի հանդերձ ոմն կարէր արուեստիւ սքանչելի և յոյժ ուրախացեալ պանծայր. և բեհեզագործն ընդդէմ զիւրն յարգէ արուեստ։ Եւ լուսալ արքայի կոչեաց զնոսա և ընտրեաց ի մէջ նոցա, թէ անկազմ է կտաւ առանց կարողի. սակայն զո՞ կարէ արուեստին, եթէ չիցէ արարեալ կտաւ. զի և Ադամ զտերև եգիտ և արար հանդերձ։ Եւ այսու առաջին ցուցաւ կտաւագործ քան զկարողն։

Ամենայն ուրեք առակս անպարապաւ ցուցանէ զկտաւագործ, զոր բազումք այպանեն (Մխ., ճԿԶ. 133)։

Այս առակով կտավագործն ավելի բարձր է, քան կարողը, այսինքն՝ դերձակը։ Շատերն այպանում են կտավագործին, բայց թե նա որքան գիտակցում է իր արհեստի արժեքը, այդ տեսնում ենք ներքևում դրված առակից՝ տամբատեցի կտավագործի մասին։ Ծաղրն ու այպանումը տեսնում ենք և ուրիշների վերաբերմամբ. խաղախորդը մորթեգործին է այպանում, և սա նրան (Մխ., ճԿթ. 135). ուրիշները կոշկակարին (Մխ., ճՀԱ. 136)։ Այս ցույց է տալիս տարբեր համքարությունների վերաբերմունքը միմյանց։ Տեսնենք մի ուրիշ կողմ—տարբեր վիճակների կամ դասերի հարաբերությունը։ Այսպես՝ Մխ., ճԿե. 132 առակի մեջ դարբնությունը, քաղաքացու արհեստը, նախամեծար է դասվում, քան երկրագործությունը, շինականի պարապմունքը։ Դա քաղքենիների կարծիքն է. Այդպես չի մտածում, սակայն, ինքն առակախոս Մխիթարը. ամեն արհեստ ու պարապմունք, ժամանակին նայելով, կարող է ավելի մեծարելի լինել։

Ի թագաւորելն ոսկի խնդրէր երկրպագութիւն յամենայն նիւթոց, և թագաւոր զանձն կոչէր, զի պատկեր եղև թագաւորի. և նովաւ ամբարտաւանէր գործովն ևս ի վերայ արծաթագործաց և այլոց. և ի գալն ամենեցուն՝ ոչ եկն ցորեան ասելով. Կամ, մինչև նախ լնձ եկեալ երկիր պագանիցէ։

Փոխոխելի առակս ցուցանէ զնիւթականքս, զի ոչ միշտ պատուին. զի յերբեմն մեծարի ոմն, և երբեմն անպատուի. վասն բազում անգամ վտանգի սովոյն նիւթք ամենայն խոնարհին ընդ ձեռամբ ցորենոյ։ Նմանապէս և յայլսն է տեսանել. ըստ այսմ և յարուեստաւորս պատահի, որովք չէ պարտ ամբարհաւաճել (Մխ., ճԿը. 134)։

Վերջ ի վերջո ցորենը, ուրեմն դարձյալ երկրագործ շինականն է, որ չի երկրպագում «թագավորի պատկեր» ոսկուն և հպարտությամբ պահանջում է, որ իրեն գան երկրպագեն։ Դա շինականի կարծիքն է։ Քաղաքացիների կարծիքը, սակայն, այդպես չէ։ Քաղաքի և գյուղի միջև տեսնում ենք մի խուլ պայքար, որովհետև քաղաքի տնտեսությունն ուրիշ բնություն ուներ, քան գյուղինը. քաղաքինը նոր էր, արագ բարձրացող, գյուղինը՝ հին, ընկած։ «Ասպետն աբեղայի և գյուղացու հետ միասին,— գրում է Կ. Կաուցկին,— հանդիսանում էր արտադրության հին ավատատական եղանակի ներկայացուցիչը։ Այս երեք վիճակներից (դասերից) յու-

րաքանչյուրը ծառայում էր իբրև արհամարհանքի և ատելության առարկա մեծ քաղաքների բնակիչների համար... Քանի դեռ հեղափոխական էր մնում քաղաքացի բնակչությունը... նա թշնամիների դեմ կռվում էր կատակներով ու ծաղրներով։ Հիմար գեղջուկը, դատարկապորտ տերտերը, իր աղքատության մեջ հպարտ ասպետը սիրված գործող անձեր են վերածնության և հաջորդ դարաշրջանների գրականության»[26]։

Այս միևնույնը գտնում ենք նաև հայոց գրականության մեջ 150—200 տարով ավելի վաղ, քան եվրոպական գրականության մեջ։ Մխիթարի մի քանի առակների մեջ ծաղրվում են ոչ միայն հոգևորականները, այլև չինականները — մշակը, երկրագործը, հողագործը։ Մխ., ԾԴ. 54. «Ջխստոր Գալիանոս՝ Թիւրակէ կոչէր չինականաց. եւ լուեալ մշակի միոյ, առեալ եկեր կայթիւ (=կողովով), և խելագարեալ կուրացաւ»։ Կամ հետևյալը. Մխ., ԾԴ. 54. «եփեալ հողագործ ոք ի պարտիզէ իւրմէ զսոխ բազում, կարծելով զնա բանջար, և անկաւ յորովայնածութեան ախտս»։ Կան առակներ, որոնց մեջ ևս ծաղրվում են իսկապես հիմար գեղջուկները, բայց Մխիթարն, ինչպես երևում է, զգուշությամբ, ընդհանուր ձևով «ոմն», «ոք» բառերով է պատմել։ Այդպիսիներից են, օրինակ՝ Մխ., ՍԸ. 56, կ. 58 ,կԱ. 59։ Վարդանա առակների մեջ կա Մխիթարի Կ. առակի մի փոփոխակը, որի մեջ մի մարդ քաղաք է գնում մի էշ գնելու։ Ուրեմն գյուղացի, որ քաղաք է գնում։ Դրա մի փոփոխական էլ ես գրի եմ առել 1885 թ. Աստապատ գյուղում։ Այստեղ ծաղրվում են Դարաշամբի գյուղացիները, որոնց վրա են պատմում ամեն տեսակի զվարճալիքներ[27]։

4. Աշխարհականի հայացքն եկեղեցականի վրա։—*Առակների մեջ ինչպես ազնվականության, նույնպես և եկեղեցական դասի նկատմամբ արդեն փոխված է հայացքը։ Չնայելով որ Մխիթարի առակները գրել է մի հոգևորական,—առակներից մեկի մեջ (ՃԺԸ, էջ 98) տեսնում ենք, որ հեղինակը հոգևորական է, քանի որ նա քահանաների մասին խոսում է առաջին դեմքով,—բայց և այնպես նրանց մեջ պարզ երևում է աշխարհականի, այն էլ ոչ ազնվականի վերաբերմունքը դեպի հոգևորականը, որ և ապացույց է մի շարք առակների աշխարհիկ ծագման։ Ինքն Առաքսոնն իբրև հոգևորական դեռ շատ մեծ կարծիք ունի եկեղեցականների մասին. նրանք, ինչպես երկինքը երկրից, շատ բարձր են աշխարհականներից և լուսավորության աղբյուրն են։*

Երկիր հայեցեալ ի բարձրութիւն լերանց՝ համարձակեցաւ լինել և երկին. և ոչ կարաց զլուսաւորս ընդ ինքեամբ առնել նման երկնի՝ և լուսաւորել։

Յանդիմանէ նշանակս զաշխարհական ոմանս, որ փքացեալ ի ճոխութիւն իւրեանց, զքահանայից կամին հափշտակել զպատիւ. սակայն լուսաւորին՝ քան լուսաւորեն, նման երկրի, որ լուսաւորի՝ քան լուսաւորէ (Մխ., Ջ. 8)։

---

[26] *К. Каутский*, Томас Мор и его утопия, М., 1924, *էջ 41 և հտն.*։

[27] *S. Նավասարդյանց, Հայ ժողովրդ. հեքիաթներ, վեցերորդ գիրք, Թիֆլիս, 1890, էջ 54—61*։

Քահանայական տոհմը, թեպետ աղքատ, բայց հոգևորով հարուստ լինելով՝ արժանի է Առակախոսի կարծիքով նույնիսկ թագավորական տոհմի հետ հավասարվելու։

Խնամութիւն առնել ընդ միմեանս կամեցան թթենի և ձիթենի. և պանծայր ի զօրութիւն իւր իւրաքանչիւր ոք, ձիթենի յարազուարճութիւն և ի պտղաւէտութիւն, մանաւանդ զի պտուղ նորա նիւթ է ձիթոյ. և ձէթ նիւթ է լուսոյ, և լոյս լուծիչ խաւարի։ Իսկ թթենի ի քաղցրութիւն պտղոյ, և զի սաղարթ իւր նիւթ է մնատաքսոյ, զոր որդունք ծնանին, յորմէ կերպասք լինին, զոր թագաւորք և իշխանք վայելեն։ Որում և դիմադրէ ձիթենի զդիւրանցութիւն պտղոյ նորա, և զախտաւորն լինել հանդերձ, քան թէ հարկաւոր, և զի ի գիշերի մերկանայ, բայց լոյս ի գիշերի վառի։ Ասէ թթենի. Այլ ի տունջեան շիջանի։ Եւ ասէ ձիթենի, թէ՝ Ոչ շիջանի. այլ յազգակիցն իւր խառնի. իսկ փառք քո ծաղկընկէց է և անցաւոր։ Եւ այսու պարտեալ թթենի՝ և հայցէ լինել իրին։

Նշանակ առակիս այսպիսի է. զի թագաւորական ազգ թէպէտ փառաւոր է, այլ երկրաւորօքս ճոխանայ, որք հոսանուտք են, որում թթենիդ ի նշանակ։ Իսկ քահանայական տոհմ թէպէտ և աղքատ իցէ, մեծապատիւ է հոգևորօք, և արժան է զուգիլ ընդ թագաւորական տոհմի (Մխ., ԺԹ. 41)։

Բայց այդպես չէ ժողովրդի հայացքը եկեղեցականի վրա։ Ինչքան էլ սա երևում է դեռ կարգապահ և մեծ ազդեցությամբ ոամկի վրա, ինչքան էլ կան նաև իսկական սևազգեստ կրոնավորներ, որոնք մի անգամ որոշած լինելով հեռանալ աշխարհից, միշտ սգավոր են մնում և նույնիսկ կարճ ժամանակով չեն ուզում ուրախանալ (Մխ., ՃԼԲ. 112), բայց և այնպես եկեղեցականությունն ընդհանրապես ընկած է պատկերանում։ Հոգևորականը նույնպես հափշտակող է, ինչպես և իշխանը. ուստի նրա դեմ էլ պայքարում է աշխատավորությունը, և այդ պայքարն երևան է գալիս հաճախ ծաղրով։ Հին ճգնավորական խստակեցությունն այլևս ոչ միայն հարգանք չի վայելում և ազդեցություն չի թողնում, այլև, ընդհակառակն, ծաղրի առարկա է։

Գնդածաղիկք և կորնգան և խոլորձ՝ առուոյտ կապոյտ և սէզ և նմանք սոցին ծաղր եդեալ զցինկ՝ ասէին, եթէ՝ Ձի՞ է զի մեք զուարճացեալք կամք, և նա ծիւրեալ դեղնութեամբ։ Եւ լուեալ՝ պատասխանեաց. Վասն զի անմիտք էք և աներկիւղ, ոչ խորհիք եթէ վասն մեր սուրք սրեն գերանդեաց. իսկ ես խոկալով յայսոսիկ՝ զարհուրեալ դեղնիմ։

Յայտնապէս ցուցանէ առակս, թէ յոյժ անմիտք են որ մոռանան, եթէ բնութեամբ մահկանացու է ազգ մարդկան. և պատրեալք յերևելի ի մեծութիւնս՝ ծաղր առնեն զարս երկիւղածս և զկրօնաւորս. ուստի յանդիմանին ի նոցունց անմտութիւն նոցա. և ինքեանք դիտելով զապականութիւն երկրաւորացս՝ ոչ պատրին. այլ ճնշեալ և երկիւղիւ միշտ ներգևին (Մխ., ԼԹ. 39)։

Ծաղրում են, ուրեմն, կրոնավորների կենցաղավարությունն ասելով, թե՝ ինչո՞ւ մենք ուրախ ենք և նա հալումաշ է եղել, դեղնել։ Իհարկե, Մխիթարի համակրությունը ծաղրողների կողմը չէ, որոնց նա անմիտ է համարում։ Ծաղրում են կրոնավորների վարք ու բարքը, նրանց գծծությունն ու ժլատությունը, և նույնիսկ պահանջկոտ են նրանց և վանական-

ների վերաբերմամբ։ Աշխարհականները հյուր են գնում աղքատ կրոնավորների մոտ, նրանց նեղլիկ քարանձավները, ցույց են տալիս այդ դժվար տեղերն և միաժամանակ պահանջում են պարարտ կերակուրներ և խորտիկներ (Մխ., ՃԻէ. 107)։

Կրոնավորները շատ անգամ բան չեն ունենում տալու. բայց և շատ անգամ էլ պատահում են այնպիսի ժլատ ու գծծի կրոնավորներ, որոնք դեղի համար էլ բան չեն տալիս, և այդպիսիների գլխին աշխարհականները խաղեր են սարքում. «Ոչ ետուր դեղոյ, ետուր փորոյ» (Մխ., Զէ. 77)։

Դրա պատճառն, անշուշտ, կեղծ կրոնավորությունն է, կեղծ բարեպաշտությունը, որ հաճախ հանդիմանվում է Մխիթարից։ Կրոնավորները կորցրել են իրենց խոնարհությունը (Մխ., Իե. 29). կան այնպիսիները, որ մահից վախենալով, այսինքն՝ զինվորական ծառայությունից փախչելով, ասում են, թե կրոնավոր են, բայց անապատում ապրելու փոխանակ՝ աշխարհում դատարկ շրջում են (Մխ., ՃԺԶ. 99)։

Այսպիսի կեղծ կրոնավորներ միշտ էլ եղել են. բայց 12-րդ դարում նրանց թիվը մեծացած է եղել, որ Ներսես Շնորհալին, ինչպես տեսանք, իր Ընդհանրական թղթի մեջ հատուկ ուշագրություն է դարձնում նրանց վրա։ Եղել են, հարկավ, և այնպիսիները, որոնք գնալով լեռը կրոնավորելու, չեն դիմացել տեղի դժվարությանն ու կյանքին և շուտով ետ են փախել աշխարհ՝ նորից իրենց հին կյանքին։ Մխիթարի համակրությունն, անշուշտ, այդպիսիների կողմն էլ չէ (Մխ., ՃԴ. 91)։

Շատ ուժեղ կերպով արտահայտված է արդեն աշխարհական կյանքի ձգտումն առակների մեջ։ Քահանայության ուսումը, օրհներգությունն ու սաղմոսն այլևս չեն գրավում, դի սուգ և տրտմություն են պատճառում։ Թեպետ դեռ գիտեն, որ այս աշխարհի տրտմությունը հետո այն աշխարհում ուրախություն է բերում, բայց և այնպես այդ քարոզին լսող, հետևող չկա։ Մարդիկ ավելի սիրում են իրենց հոր արվեստը, ուրախ երգը, խաղ ու պարը, «երկրաւոր ուրախութեանց պատրանքը»։

Սարեկ ետ զորդի իւր յուսումն քահանայութեան. և նա ի սոխճս և ի մրմունջս թեւակոխէր։ Եւ խրատէր քահանայն օրհներգութեանց և սաղմոսաց փոյթ առնել, յորմէ սուգ և զղջումն յոգի գործի։ Իսկ նա ի պար յաւելոյր, թէ՝ Հօր իմոյ արուեստ ուրախութեան է պատճառ, իսկ քոյդ տրտմութեան։ Եւ թէպէտ ուսաւ յետոյ՝ թէ տրտմութիւն այժմուս բերէ ուրախութիւն յեւոյ, սակայն անլուր նղնալ, դարձաւ ի տուն իւր։

Զերկրաւոր ուրախութեանց զպատրանս առակս նշանակէ, որով զկատարածն իմանան, եթէ ի յողբ վախճանի, որպէս և աէր իսկ ասաց. Նմանապէս և Հոգևորն սուգ յուրախութիւն յանգի (Մխ., ՃԼԳ. 112)։

Այսպես ուրեմն, ինչքան էլ տեսականի մեջ դեռ իշխում է ճգնավորական հայացքը, գործնականի մեջ, ընդհակառակն, ուրախ կյանքը, աշխարհիկ ոգին է տերը։ Նույնիսկ միաբնակյացը սատանայի հետ պայման է կապում և նրա օգնությամբ եպիսկոպոսական աստիճանին հասնելով, եկեղեցին դարձնում է գուսանական նվագի վայր։

Ասի յառակաց, թէ միակեց մի սատանայի ուխտ եդ, որ տարի մի պահս կենայ, թէ զնա ի մեծութիւն հասուցանէ։ Սատանայ յանձն էառ կատարել զխնդրուածս նորա։ Յորժամ վճարեաց զպահսն, շարժեաց զեպիսկոպոս քաղաքին, որ եդ զնա նկեղեցապան. և ի միւս տարւոջն շարժեաց որ օրհնեաց զնա աբեղայ. և ի միւս տարւոջն եղև մեռանիլ եպիսկոպոսին. շարժեաց զթագաւորն և զքաղաքացիսն առնել իւրեանց եպիսկոպոս։ Եւ յորժամ կամէր զդեստաւորիլ, զի ժամ արասցէ, եկն սատանայ, ետ ի նա փոքրիկ չորեքաղի մի և ասէ. Իմ ամէն լաւին փոխարէն, որ զքեզ յայդ մեծագոյն աստիճանդ հասուցի, զայս արա. առ զայդ փոքրիկ չորեքաղիդ ի ծոցդ դիր. և զգեստդ ի վերայ հագիր և յորժամ ի բեմն ելանես, նա մէկ մատամբդ ի վերայ մէկ լարին զարկ։ Եւ այնպէս արարեալ պատրեալ եպիսկոպոսին՝ յանկարծակի հազարք հազարաց և բիւրք բիւրոց տասնաղի և թմբկի և սուռնայի և չանկի և չորեքաղւոյ ձայն հնչեաց՝ ի մէջ եկեղեցւոյն։ Զարհուրեցան թագաւորն և ժողովուրդն և ոչ զոք տեսանէին հարկանող նուագարանացն։ Հրամայեաց Թագաւորն բռնել զդուռն եկեղեցւոյն՝ և զիւրաքանչիւր ոք մերկացուցանել և փնդռել։ Եւ այնպէս արարեալ ո՛չ զոք գտին պատճառ, և մնաց թագաւորն և եպիսկոպոսն միայն։ Թագաւորն ևս մերկացաւ. և ո՛չ գտաւ առ նա ինչ։ Եւ յորժամ մերկացուցին զեպիսկոպոսն, գտին ի ծոցն զչորեքաղին այն, և ի չարշարանս արկեալ խոստովան եղև զուրացութիւնն և զդաշինս, զոր եդեալ էր ընդ սատանայի։ Յայնժամ կապեցին զնա ի յագի ամեհի ձիոյ և թողին ի դաշտի. մանրամասնաբար կոտորեալ եղև մարմին նորա. և այնպէս աւանդեաց զդատաստանեալ հոգին ի ձեռն սատանայի։

Յուցանէ առակս, թէ ով ոք սատանայի բարւոյն և ուխտին հաւատայ, բաժին նորա վերջն այնպէս լինելոց է (Առ. Վարդ., ՄԻԳ. 252)։

*Պակաս ընկած չէ իր զոշաքաղութեամբ և **fահանաների** դասը։ Առակախոսը քահանաների արդար իրավունքն է համարում, որ միայն մեռելների ստացվածքը կողոպուտ անելով ապրեն և ոչ թե իշխանների նման նաև կենդանի մարդկանց ստացվածքը հափշտակեն անիրավութեամբ. բայց իսկապես այդպես չի լինում (Մխ., ՃԺԵ. 98)։*

Քահանաները սուտ ու կեղծ են. ծուլ են, խաբեբա, միայն արտաքին ծեսերը կատարող, մատաղի ետևից ընկած։ Աղվեսները լափելու համար քահանա են դառնում (Մխ., ՂՀ. 84)։

«Հոգևոր առաջնորդքն... խնամ ոչ տանեն հօտին... այլ զգէրն զենեն և ճարպովն պարարտանան» (Առակք Վարդ., Բ., 198. ՃԿԷ)։ Քահանաները, ինչպես և եպիսկոպոսներն ագահութեամբ նույնիսկ խոստովանութեան խորհուրդը դարձնում են եկամուտի աղբյուր, պոռնիկներին և պիղծ մարդկանց նախ եկեղեցուց մերժում են վախեցնելով, իսկ հետո կաշառքով ընդունում են և հաղորդում։ Քահանան նույնիսկ անմեղներին մերժում է եկեղեցուց. իսկ չարագործներին կաշառքով ընդունում եկեղեցի (Առ. Վարդ., Բ. 257. ՄԻԶ)։

Այսպիսի դրության ժամանակ հասկանալի է, որ մարդիկ, նույնիսկ հովիվները չցանկանային այլևս հաղորդվել։

Յաւուր զատկին տօնին եկին հաւատացեալք հաղորդել, և զոմն հովիւ բռնադատէին հաղորդել. և տեսեալ ի բաց փախեաւ ասելով. Ոչ ճաշ է ի կերայց, և ոչ հրամենք։ Եւ ասեն. Այդքան է խորհուրդն։ Եւ ոչ հաւանէր առնուլ, այլ ի բաց գնաց։

Զար ամենայն ուստեք առակս ցուցանէ զանգիտութիւն վայրենացելոց ոմանց, զի յերեւելիս միայն հային և գայթակղին (Մխ., ՃՀԲ. 137)։

Առակախոս Մխիթարն այդ բացատրում է «վայրենացած մարդկանց անգիտությամբ», բայց իրականի մեջ այդ առաջացած է եղել եկեղեցականների բարոյական անկման հետևանքով։ Եկեղեցու այդ խորհրդի ծաղրը երևում է առակի պատմվածքից։ Նույն ծաղրը տեսնում ենք և մի ուրիշ առակի մեջ, ուր հովիվը գազանների կերածն է աստծուն մատաղ անում։

Ի ձեռաց շահենի յորսալն զերծաւ ձագ հաւբալի, և ասաց. Եղիցի պատարագ տեառն։ Ծաղր արար զնա հաւբալն, եթէ՝ Զոր ձեռօք մատուցանես, այն պատարագ տեառն։

Զհովուին ձևացուցանէ զբարս՝ առակս, դի զկերակրևալս գազանաց և զբեկեալս դայլոց՝ նուէրս տեառն ասէր լինել (Մխ., ՃԺՀ. 100)։

Վարդանա առակների մեջ ավելի ղարգացած է քահանաների ընկած վիճակը. ուստի և սուր երգիծանքներ են հորինված նրանց վրա։ Գող քահանաները եկեղեցու ոչ մի սրբությունը չեն պահում այն աստիճանի, որ գողացած կովը տիրոջից թաքցնելու համար նույնիսկ եկեղեցու սեղանն են բարձրացնում և վարագույրը քաշում։

ԳՈՂ ՔԱՀԱՆԱՅ ԵՒ ԱՅՐԻ

Քահանայ մի գողացաւ զկով այրի կնոջ մի և էած ի յախոռն. և կին չիմացաւ, և ասէ առ քահանայն. Տէր, ժամ է մահուան իմոյ. եկ յախոռն, որ խոստովանիմ։ Եւ յայնժամ անցուց զկովն ի ներսի տուն և անդի ի ժամայտուն և անդի եկեղեցին։ Եւ ասէ կին. Տէր, առաջի բեմին պարտ է ասել զմահու խոստովանութիւն։ Եւ հանին զկովն ի բեմն և քարշեցին զվարայգուրն ի դէմ։ Իբրև մտան եկեղեցին և նստան, յայնժամ կին ի վեր կալաւ զվարայգուրն և ասէ ընդ կովն. Ո՛վ գարշելի, զքեզ կով գիտէի. և արդ զքեզ պատարագաւղ ո՞վ արար, ասայ ինձ։

Ցուցանէ առակս, թէ այսպէս համբերութեամբ և իմաստութեամբ պարտ է առաջնորդին և վարդապետին զամենայն ինչ քննել. և ստուգել ամենայն քահանայս և յիմանալ զվարս նոցա և որ չէ արժանի պատարագի, ծածկաբար յանդիմանել և ոչ տալ թույլ կըրկին խաչել զորդին աստուծոյ անարժան պատարագաւն և հաղորդութեամբն, որ չէ բարի անարժանութիւն (Առ. Վարդ., Բ. 78. ՄԴ)։

Մենակյացները շնացող են (Առ. Վարդ., Բ. 69), նրանք էլ գողություն են անում և գողացած ապրանքը ծածուկ ծախում բոլորովին չնչին գնով, արդարացնելով իրենց, թե Քրիստոս ասել է՝ ձրի առաք, ձրի տվեք (Առ. Վարդ., Բ. 73. ՄԳ)։

Որկրամոլությունն ու ագահությունը հոգևորականների, այլև աշխարհականների ամենամեծ պակասությունն է. 15-րդ դարում Մկրտիչ Նաղաշը կովում է այս ախտի դեմ իր ոտանավորներով. նույնը գտնում ենք և Վարդանա առակների մեջ (Առ. Վարդ., Բ. 33. ԻՋ)։

Այս ամենի հետևանքն այն է, որ ժողովուրդը սառել է եկեղեցուց։ Այլևս ժամասեր չեն։ Ավելի սիրով զվարճություն անելու, զվարճալի տեսարանների մոտիկ տալու են գնում, քան աղոթելու և քարոզ լսելու։

ԵՐԷՑ ԵՒ ԺՈՂՈՎՈՒՐԴ

Կայր էրէց մի ի գիւղ մի և խիստ սաղմոսասէր. և գեղացիքն ոչ գային ի ժամ. էրէցն ւրթայր ի տունս նոցա և ասէր, թէ՝ Ի ժամ եկէք։ Եւ նոքա ասէին, թէ՝ Դամք։ Եւ ոչ գային։ Եւ էրէցն օր մի սուտ խև եղաւ և զգաւազանն ի փիլոնին ծայրն ծալեց և ի վեր կալաւ և շուրջ գայր և գոռայր։ Եւ ասեն գեղացիքն, թէ էրէցն խևցաւ. երթամք և ծիծաղիմք։ Ժողովեցան այր և կին և տղայ, մեծ և փոքր և եկին առ էրէցն։ Եւ ասէ էրէցն ցժողովուրդն, թէ՝ Նստէք։ Եւ նստան։ Եւ ասէ էրէցն ցժողովուրդն. Ո՛վ մոլորեալք, քանի որ սաղմոսէի և աղաւթէի և ժամ ասէի, նա սատանայ կապել էր զսիրտն ձեր և քարացուցել՝ որ դժար ֆուէր ձեզ ժամ գալն. և այժմ սատանայի ձայնն եկիք շուտով լսել և ծիծաղել։ Եւ բարկացեալ էրէցն ձգեց զփիլոնն և գնաց ի գեղէն (Առ. Վարդ., Բ. 265. Մէջ)։

Մարդիկ այլևս հավատքի խնդիրներով չեն զբաղվում. գրեթե սառն և անտարբեր են դեպի այդպիսի վեճերը, որ միջնադարի էությունն էին կազմում։ Հայտնի պատվական ակի առակի մեջ՝ ճշմարիտ հավատը բնականաբար դեռ քրիստոնյաներինն է. բայց դա հոգևորականի տեսակետն է։

ԵՐԵՔ ԹԱԳԱՒՈՐԻ ՈՐԴԻՔ ԵՒ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԱԿՆ ԵՒ ԴԱՏԱՒՈՐ

Ասի ի պատմութեանց, թէ կայր թագաւոր մի և ունէր բազում ճոխութիւն և Գ որդի և ակն մի պատուական, որ առնէր բժշկութիւն։ Եւ նա ետ նշան որդոց և ասէ, թէ՝ Ձեւտ մահուան իմոյ, որ ունի զակս զայս, նա առնէ զթագաւորութիւնս իմ։ Եւ յորժամ մեռանէր ետ զակն ի միոյ որդոյ իւրոյ։ Եւ Բ որդիքն արարին իւրեանց ապակի ակն ի նմանութիւն այնմ ակին և եկեալ վիճէին ընդ միմեանս վասն թագաւորութեան. և գնացեալ առ իմաստուն դատաւոր մի առնել նոցա դատաստան։ Եւ նա առեալ զակն եդ ի վերայ հիւանդին. և յայտնեցաւ զճշմարտութիւնն և նա ետ զթագաւորութիւնն այնմ որդոյն, որ ունէր զակն պատուական։

Առակս ցուցանէ զթագաւորն ամենեցուն աստուած, որ ունի բազում որդիս ըստ արարչութեան և ետ զպատուական հաւատքն քրիստոնէից միայն. թէ որ ունիցի զայս, նայ է ժառանգ արքայութեան ըստ այնմ, թէ որ ոք ոչ ծնցի ի ջրոյ և ի հոգւոյ, ոչ մտանէ յարքայութիւնն աստուծոյ։ Բայց բազում մարդիկք ունին զձև հաւատացելոց, այլ ոչ ճշմարիտ հաւատքն. քանզի այլազգ սքանչելիք ոչ լինին, բայց միայն քրիստոնէից. զի սոքա ունին զճշմարիտ ակն. զի այնով ժառանգեսցեն զհայրենի արքայութիւնն (Առ. Վարդ., Բ. 286. Մէջ)։

Ինչքան էլ Առակախոսը ասելու լինի «պատվական հավատքը քրիստոնյաներինն է», բայց և այնպես աշխարհականը, նույնիսկ հոգևորականը շատ էլ չի հետաքրքրվում դրանով (Առակք Վարդանա, ՃԽԲ, էջ 168—172)։ «Քրիստոնեայ և այլազգի. այլ և օրինակ վէմի յաղագս հաւատոյ» առակի՛ և իր վարիանտների մեջ դրվում է այն խնդիրը, թե որի հավատն է ճիշտ, հայի՞, թե՞ ուրիշ քրիստոնյաների, հայի՞, թե՞ այլազգու, այսինքն մահմեդականի։ Եվ պատասխանն այն է, թե «12 քրիստոնյա ազգերը» լծված՝ ամեն մեկը հավատի վեմն (վարիանտների մեջ՝ քար, լուսեղեն լեռ) իր կողմն է քաշում, բայց վեմը տեղից չի շարժվում (Առ. Վարդ., Բ. 171. ՃԽԲ)։

Այսպես և «72 ազգերն էլ՝ ամեն ազգ լուսեղեն լեռը—աստված իր կողմն է քարշում, թե՝ ես եմ առաջ. բայց աստված ամենքինն է և ան-

շարժ»։ «Լուսեղէն լեառն աստուած է և ՀԲ [72] լուծքն ՀԲ [72] միլաթն է. որ ամէն միլաթ դէմ իւր քարշէ, թէ՝ ես եմ յառաջ և աստուածն ամենեցուն է և անշարժ»։

Այս ամենից, այս ազատախոհութիւնից արդեն շնչում է մի նոր ոգի, որով վերջնապես կազմակերպվում է աշխատավոր դասի հայացքը եկեղեցու և եկեղեցականի մասին։ Նրա համար եկեղեցականը նույնն է, ինչ որ ազնվականը։ Նա հոգևորականության դեմ մաքառելով՝ վերջ ի վերջո իրեն ավելի բարձր է դասում, քան հոգևորականին, թեպետև չի համարձակվում այնպես կտրուկ խոսել նրա դեմ, ինչպես ազնվականի դեմ։ Եկեղեցականը պատարագ է անում, մեղքի թողություն տալիս. բայց նա չէր անիլ այդ, եթե չուտեր աշխատավորի վաստակը։

Բայց ո՞րն է ավելի բարձր, հոգևո՞րը, թե՞ մարմնավորը։ Կարդանք «Եկեղեցի և ջրաղաց» առակը.

Եկեղեցին պարծեցաւ ի սրբութիւն իւր և ասաց, թէ՝ ես եմ տաճար աստուծոյ և յիս գան քահանաք և ժողովուրդք յաղաւթս մատուցանել աստուծոյ և պատարագ. և հաշտի աստուած ընդ աշխարհիս. և մեղաց թողութիւն լինի։ Յայն ժամ գայ ջրաղացն և ասէ ընդ եկեղեցին, թէ՝ Զինչ դու ասես, արդար է և ճշմարիտ է. բայց դու ղիմ երախտիքն մի՛ մոռանար. որ զիշեր ու ցերեկ կու աշխատիմ և կու դատիմ, որ կոյ ուտեն քահանաքն և ժողովուրդքն. և ապայ գան առ քեզ աղաւթել և երկիր պագանել աստուծոյ։

Ցուցանէ առակս, թէ կան աշխարհի մարդիք, որ հանապազ աշխատին և դատին, որպէս մեղու. և թագաւորք և իշխանք և ամենայն մարդիք զվաստակս նոցա ուտեն և ապայ երթան յեկեղեցին և զաստուած աւրհնեն և յիշեն (Առ. Վարդ., Բ. 151. ՃԻՋ)։

Այսպես ուրեմն, նախ մարմինը, ապա հոգին, նախ ուտել և ապա նոր եկեղեցի գնալ աղոթելու։ Կարդանք և մեկ ուրիշը Վարդանա առակներից։

ԱՂՈՒԷՍ ԵՒ ԿԱՔԱՒ

Աղուէսն էառ կաքաւ մի ի բերանն և կամէր ուտել զնայ. և ասէ կաքաւն. Աւրհնեալ է աստուած, որ կոչեաց զիս իւր արքայութիւն. զի զերծանիմ ի յայս չարեացս. և ապա՛յ դու, աղուէս, գոհացիր զաստուծոյ և ապայ ուտես զիս. քեզ մեծ վարձք է։ Եւ աղուէսն կկզեցաւ և հայեցեալ յերկինս և բացեալ զբերանն՝ ասէ. Գոհանամ զքէն, աստուած բարի, որ պատրաստեցեր ինձ սեղան բարւոքեան։ Եւ կաքաւն զերծաւ ի բերանոյն և թռաւ։ Եւ ասէ աղուէսն. Ո՛վ անմիտս և յիմարս, յառաջն պարտ էր ինձ ուտել և ապայ գոհանալ զաստուծոյ։

Ցուցանէ առակս, թէ զխոստացեալ իրքն մի՛ համարիր քեզ և մի՛ շնորհակալ մարդոյ լինիս, մինչև առնուս. և թէ ջուր տան քեզ, ի նոյն ժամն ի գոգդ առ զինքն, զի շատք ասեն և ոչ տան զասացեալն իւրեանց, ո՛վ եղբայր, և սուտ լինին (Առ. Վարդ., Բ. 58. ԽԲ)։

Ահա թե ինչին է հանգում մեր միջնադարյան վերածնության միտքը մեր առակների մեջ. նախ ուտել և ապա գոհանալ աստծուց։ Եվ չկարծեք, թե այս գաղափարը միայն մեր հին առակներինն է. դա բուն ժողովրդական հասկացողություն է, որ տարբեր ձևով արտահայտված գտնում ենք նաև մեր արդի ժողովրդական առակների մեջ։

«Ադուիս զկաքաւ բռնից։ Կաքաւ ըսաց. «Ա՛ղուիս, ի՞նչ տ՚էնիս»։ Ըսաց. «Քի տ՚ուտիմ»։ Ըսաց. «Փառք տու աստուն. նուր զի կիտ։—Ինչ փառք իտու աստուն, կաքաւ բերնէն թռաւ։ Ադուիս դարձաւ, ըսաց. «Ես տուն աւիր ըլի, ինչ չուր կուշտ չուտը, փառք տա աստուն» (Գ. վ. Հովսեփյան, *Փշրանքներ*, Թիֆլիս, 1892, էջ 30)։

5. Հոգևորականության հայացքը այլազգիների հետ հարաբերության վերաբերմամբ։—*Սոցիալական հարաբերություններ են իրենց հիմքում նաև միջազգային հարաբերությունները, որ մի ազգի իշխող դասակարգն ունի մյուսի նկատմամբ։ Ուստի առակների այս տեսությունը լրիվ անելու համար տեսնենք այժմ, թե ինչպես Մխիթար Գոշն առանձին ուշադրություն է դարձնում հայերի հարաբերությանն «այլազգիների», այսինքն՝ մահմեդականների հետ— ինչպես նա իր Դատաստանագրքի մեջ էլ անվանում է մահմեդականներին— և ինչպիսի կարծիք ունի նրանց մասին։ Թվում է, թե բուն Հայաստանում թե՛ քրիստոնյա և թե՛ մահմեդական տերությունների մեջ 12-րդ դարում իրար կողքի ապրող երկու ժողովուրդների, հայերի ու սելջուկյան թուրքերի միջև հետզհետե պետք է մեղմանար այն թշնամությունը, որ նկարագրում է Արիստակես Լաստիվերտցին։ Կարծես, նրանք իրար հետ միևնույն տեղում ապրելով, կենդանի փոխադարձ ազդեցությամբ, խառն ամուսնությունների և ավելի ևս կրոնական անտարբերության հետևանքով, մի հայրենիքի, մի հող ու ջրի մեկ ընդհանուր ժողովուրդ պիտի կազմեին, իրար հետ միացած ընդհանուր շահերով։ Բայց այդ գլուխ չի գալիս 13-րդ և հետագա դարերի վերիվայրումների հետևանքով և այլ պատճառներով։ Ի՞նչ է մտածում այս մասին Մխիթար Գոշը և առհասարակ եկեղեցական դասը։*

Երբ իր բանակի մեջ շարժական եկեղեցի ունենալու համար Զաքարե զորավարն Անիում ժողով է գումարում, այնտեղ բերում են նաև «մեծ վարդապետ» Մխիթարին։ Ահա թե ինչ է ասում Մխիթարը ժողովական եպիսկոպոսներին ու վարդապետներին. «Դուք հոգայք վասն ազգիս, դի մի՛ այդպիսի սովորութեամբ խառնեսցին ընդ Վիրս, և ես հոգամ վասն զօրավարիդ, դի մի՛ լիցի սա վրացի իբրև զեղբայր իւր, որում սպասեն Վիրք»[28]։ Եկեղեցականությունն, իր շահերի տեսակետով, ոչ մի բանի, նույնիսկ երկրորդական կրոնական սովորությունների նկատմամբ զիջող չէր։ *Եթե քրիստոնյաների վերաբերմամբ այսպես էր, բնականաբար, Մխիթարի համակրությունը չէր կարող լինել հայերի ու մահմեդական թուրքերի այնպիսի բարեկամական հարաբերության կողմը, որի մասին ասվեց վերևում։ Այն ժամանակ, երբ Զաքարիան, «մեծ սպարապետ և շահնշահ արևելեան կողմանցն», սրի ուժով նվաճում էր Հայաստանի «այլազգիներին» մինչև Բագրևանդ և հասնում մինչև Արտավիլ, Մխիթարը, որ նրա խոստովանահայրն էր, չէր կարող անտարբեր մնալ դեպի «այլազգիները»։ Նա առակների մեջ հրահրում է հայերի կրոնական զգացումներն և ատելությունը դեպի մահմեդականները, ցույց տալով, թե*

---

28 Կ. Գանձակեցի, *Պատմութիւն Հայոց*, էջ 167։

Նրանք չեն կարող միմյանց բարեկամ լինել։ Առակագիր Մխիթարի աչքին ամենից առաջ զարնում է «այլազգիների» լվացումը, որ նա ծաղրում է։ Ըստ Առակագրին՝ նրանք շատ չարիքներ են գործում՝ իրենց առաջնորդներին՝ մոլլաներին հետևելով կապկաբար, և երբ մեղադրվում են, մեղքը ձգում են իրենց մոլար առաջնորդի վրա և ասում են. «այլազգի եմ, լուանամ և սրբիմ»։

Ետես կապիկ զմալում զի լուանայր, և լուացաւ ետես զի ի բարձրաւանդակ ելեալ աղաղակեաց. արար և զայն կապիկ։ Իջեալ ետես զի գէշ ուտէր շուն, և սկսաւ կապիկ։ Եւ ի մեղադիր լինելն ասաց՝ Այլազգի եմ, լուանամ և սրբիմ։ Զի զտեսեալն գործէ։

Պարզ է առակս. զի զբազում չարիս տեսանելով գործեն, և լուացեալ՝ ասեն սրբիլ, զպատճառն ի մոլար առաջնորդն կուտելով (Մխ., ՂԹ. 85)։

Ներսես Շնորհալին արդեն ծաղրում է մահմեդականների այս ծեսը։

Այն որ գործէ զաղտեղութիւն
Զանասելի մարդոյ լեզուին.
Ի՛ուսուցանէ իւր ժողովին
Գործել ըզնոյն ըզպղծալին.
Եւ քաւութիւն մեղաց նոցին
Օրինադրէ լուանալին.
Ողողանել չըրով գետին.
Մաքրել միայն զերեսելին.
Որով և գորտք՝ որք ի չըրին,
Առաւելուն քան ըզնոսին։
(Ողբ Եդեսիոյ)

Մխիթարի առակների մեջ ուրիշ տեղ ծաղրվում է մահմեդականների մատաղը, որի վրա կովում են։

Պատարագ զենման մատուցանել ագռաւ կամեցաւ, և զբազումս հրաւիրեաց, և եկին յօժարեալք։ Եւ զենումն նորա էր մուկն հնացեալ։ Եւ սկսաւ ինքն հարկանել, և ապա այլքն, և եղեւ պատերազմ. և զբազմաց զաչսն փորեցին, և մերկ զմիմեանս արարին։ Եւ սկսան նզովել զպատարագ նորա, և զմատուցողն ևս. և ասաց նոցա, թէ՝ Յաշակերտացն ուսայ ի Մահմետի զպիղծն մատուցանել, և դարձեալ պատերազմել։

Գիտելի և ամենեցուն առակս. զի զդէմս պատարագին ունին պղծոյն Մահմետին։ (Մխ., ՃԻԹ, 109)։

Կարդանք և այս առակը.

Մեռաւ որդի ագռաւու՝ և սգաց յոյժ. եկին և բազմաք յողբ նորա, և նա ճաշ մեծ յօրինեաց սգաւորացն ասելով. Զայս ի քրիստոնէիցն ուսայ, և ոչ ի յայլազգեաց. զի ժլատեալք ի լաց և ոչ ի հաց կոչեն։ Եւ զայս ագռաւ արար, զի զբան պատարագին բժշկիցէ։

Ամենայնիւ առակս զսովորութիւն կարգաց նոցա Փիւրս ցուցանէ՝ զսգոյ և զպատարագի և զայլոց ևս (Մխ., ՃԼԱ. 110)։

Այսպես ուրեմն, «այլազգիների» բոլոր կրոնական սովորույթյուններն ու կարգերը թյուր են ըստ Առակագրին։ Եթե նրանք մի լավ բան ունին, ինչպես մեռելահացը, այդ էլ քրիստոնյաներից են սովորել, ասում է Առակագիրը։

Մխիթարն իբրև հոգևորական դեմ է ելնում խառն ամուսնություններին: Նա մեծ հոգացողություն ունի, որ այդպիսի ամուսնություններ չլինեն հայերի և մահմեդականների մեջ։

Բու հրեշտակ առաքեաց առ արծիւ, և խնդրեաց զդուստր նորա Հարսն ասելով. Դու տուընչեան քաջամարտիկ ես, և ես գիշերոյ. պատշաճիմք ի խնամութիւնս։ Եւ յետ բազում թախանձանաց յանձն առ տալ։ Եւ ի լինել Հարսանեացն, ի տուէ լոյս ոչ կարէր տեսանել փեսայն, և ծաղր առնէին բազմեալքն։ Եւ իբրև եղև գիշեր՝ և ոչ Հարսն ետես լոյս, յաճախեաց և անդ այպանումն։ Եւ վասն այսորիկ փութով լուծաւ Հարսանիքն։

Զմիտս իւր առակս նմանեցուցանէ այնոցիկ հաւատացեալ թագաւորաց և իշխանաց, որ զդուստերս իւրեանց ըստ իրիք պատճառի յամուսնութիւն տան այլասեռից՝ խաւարելոց ի լուսոյ հավատոց. ուստի և ոչ է միաբանութիւն, այլ հարկաւոր բաժինս (Մխ., ՃԻԳ. 104)։

Քրիստոնյա թագավորներն և իշխանները, ասում է Առակագիրը, իրենց աղջիկներին որևէ պատճառով ամուսնության են տալիս «այլազգիներին», բայց դրանով սեր ու միաբանություն չի լինում։ Նա այս առակը գրելիս անշուշտ նկատի ուներ նաև այն, որ Զաքարեի եղբայր Իվանե Աթաբեկն իր աղջկան տվել էր Հալեբի սուլթանին կնության։ Այս միևնույն առակի խրատականը Վարդանա առակների մեջ (Գ. 107. ԾԱ) այսպես է. «Յուցանէ զհաւատացեալ մարդիկ, որ զդուստերս տան այլասեռից խավարելոցն ի լուսոյն Քրիստոսի»։ Ուրեմն ոչ միայն թագավորների և իշխանների դուստրները, այլ ընդհանրապես։

Թոքէկ թախանձեր զոզնի թէ՝ Զորդիդ քո սան առից, և բարեկամք լիցուք։ Եւ իբրու յանձն էառ զկնի բազում հարկի, ասաց, եթէ՝ Վասն զի դժուարահամբոյր է, մերկացո զնա, զի դիւրին իցէ ի գգուել։ Եւ պատրեալ արար։ Եւ իբրև ետ զնա, սկսաւ ուտել, և ձեռնհաս ոչինչ էր առնել. և գնաց բազում կոծով։

Չխորամանկութիւն այլասեռից առակս նշանակէ, որ զքրիստոնեայս պարզամիտս պատրեն՝ իշխանաց տալ զորդիս նոցա, զի պատուեալ մեծացուցանիցեն. և ոչ կամին թէ խրատիչ ոք ընդ նոսա իցէ, զի թափուր արարեալ զոգիս նոցա, սպանանիցեն. որ և յայտ եղեալ խաբէութեան, ոչ ինչ կարող են առնել, բայց միայն ողբան. նմանապէս և ի դրստերսն է տեսանել (Մխ., ՃԺԱ. 95)։

Այստեղ էլ Մխիթարը պատմում է, թե «այլազգի» իշխանները խորամանկությամբ խաբում են պարզամիտ քրիստոնյաներին, որ իրենց որդիներին տան իրենց, խոստանալով, թե մեծ պատվի կհասցնեն նրանց։ Միաժամանակ, սակայն, նրանք չեն ուզում, որ այդպիսի քրիստոնյա տղաների կամ աղջիկների հետ խրատող մի մարդ գնա։ Մնողները չեն հասկանում որոգայթը և հետո միայն իմանալով այդ՝ լոկ ողբում են։

Ճայեկ առ սագ աղերսէր, եթէ՝ Դիշերադէմ գոլով ես՝ ի բնաւից պարսաւիմ. և դու այդքան սպիտակ և պայծառ լինելով՝ աղաչեմ զի ուսուցես ինձ նման քեզ սպիտականալ։ Եւ նա կամակից եղեալ՝ ասաց, թե՝ Միշտ նման ինձ լուացիս ջրով։ Եւ ի լուանալն ելանէր սև նորա փետուր, և դարձեալ նոյն գայր օրինակաւ։ Եւ զայս դարձեալ աղաչէր ուսանել. որում ասաց. Թէ ընդ լուացմանդ զիմս ուսցիս լեզու, ապա կարիցես նման ինձ լինել։ Եւ նա յանձն ոչ առնոյր զազգի մոռանալ զձայն. և մնաց նոյնօրինակ գիշերադէմ։

Մեկնի այսպէս առակս. զի գիշերադէմ են ոգւով ազգ Պարսից. և եկեալ առ քահանայս՝ զպայծառութիւն կամին ուսանել ոգւով, զոր ասաց զխորհուրդ մկրտութեանն ամ-

բողջ պահել։ Եւ նա լուացեալ ի մեղաց փոխեալ լինէր, և դարձեալ ճշմարիտն խոստովանութիւն յանձն ոչ առնոյր, նոյն օրինակաւ մնայր սեաւ ոգւով. զոր չէ արժան և ոչ ջրով մկրտել, եթէ զհաւատս ոչ ընկալցին (Մխ., ՃԼԵ. 113)։

Ուրեմն կան պարսիկներ, *որոնք ենթարկվում են հայերին և սրանցից չպարսավվելու համար՝* խնդրում են քահանաներին, որ մկրտեն իրենց, և մկրտվում են: Նույն իսկ սրա՛ դեմ է Մխիթարը: *Դրանով նրանք իսկական քրիստոնյա չեն դառնում, ասում է նա. քանի որ այդ մկրտվողները հանձ չեն առնում իրենց հայրենի բնությունն ուրանալ, «զազգի մոռանալ զձայն», այսինքն՝ հայ դառնալ լեզվով ու բարքով, այլ մնում են իրենց ազգին, իրենց հին ոգով և վարք ու բարքով։ Այս պատճառով և Առակախոսը խրատում է, թե այդպիսիներին «չէ արժան և ոչ ջրով մկրտել, եթէ զհաւատս ոչ ընկալցին»։ Այս սովորությունն և այսպիսի մկրտությունը, երևի, երկար հարատևում է մինչև 19-րդ դարու զվարճալիքը, թե քրդի կամ թուրքի երեխաները չէին մնում. ծնվում է մի երեխա ևս, որին հայրը բերում է քահանայի մոտ և նրան շատ բուրդ ու բամբակ տալով խնդրում է մկրտել։ Քահանան էլ մկրտում է ասելով.*

Գետը գայ Սավալանա,
Թուրքի տղան լողանա.
Ինձ ինչ կը հայանա, թե կը թուրքանա,
Թաք իմ բուրդ ու բամբակը բոլանա։

Մխիթարի առակների մեջ տեսնում ենք, որ «այլազգիները» գրեթե ընկճված են, և նրանց ու հայերի հարաբերությունը բարեկամական է: *Բայց ըստ Առակագրին այլազգիները սրտով բարեկամ չեն, այլ միայն ուժի առաջ խոնարհված են. ուստի պատրաստ են միշտ երդմնազանց լինելու։ Քրիստոնյա թագավորը ձեռի տակ ունի «այլազգի» իշխաններ, որոնք խոստանում են անհապաղ տալ թագավորի հարկը, մի պայմանով միայն, ասում են, որ «մի՛ հարաժամ զմեզ զարհուրեցուցես»։ Թագավորը դաշինք է դնում և պահելով իր ուխտը՝ երկար ժամանակ խաղաղությամբ ապրում է նրանց հետ։ Բայց նրանք այդ խաղաղասիրությունը թուլություն են կարծում, սկսում են ապստամբել, այլ և ծաղրել նրան: Այդ ժամանակ քրիստոնյա թագավորն էլ չհամբերելով՝ հարձակվում է նրանց վրա և շատերին կոտորում անխնա։*

Զարծիւ աղաչել սկսան թռչունք միանգամայն որ ընդ ձեռամբ նորա, և ասեն. Անյապաղ զհարկ քո տացուք, մի յարաժամ զմեզ զարհուրեցուցես։ Եւ նա դաշինս եդ, և կայր ընդ նոսա խաղաղութեամբ բազում ժամանակս։ Եւ սկսան ապստամբել, այլ և այպանել. և ժողովեալ խորհէին և յիշխանութենէ ևս ընկենուլ։ Պարծէր և ճընճղուկ, եթէ՝ Յաչս նորա ծրտեալ կուրացուցանեմ։ Եւ իւրաքանչիւր զօրութեամբ իւրով պարծէր. և սկսան մարտ ևս դնել։ Եւ նորա ոչ տարեալ յարձակեցաւ ի վերայ, և զբազումս ի նոցանէ սատակեաց։

Տպաւորէ այս առակ զդէմս հաւատացեալ թագաւորի և զանհաւատից, որ բարեպաշտութեամբ խաղաղութիւն առնեն. նոքա ապախտացեալ ապստամբեն, զպատճառս խաղաղութեան ոչ գիտելով. և այպանեն, և պատերազմ ևս շարժեն, և ակամայ լինին մահ արկանել նոցա անխնայ (Մխ., ՃԻԴ. 105)։

Ներսես Շնորհալին այդպեն «այլազգիներին» համար սովորական է համարում ուխտադրուժ լինելը.

Զուխտն ստէր զոր եդ ընդ նոսին,
Որպէս բնութիւն էր այս նոցին

(Ողբ Եդեսիոյ)։

Թվում է, թե ըստ Մխիթարի սուտ երդումը սովորական է եղել իր դարաշրջանում ընդհանրապես։

Մկունք համանգամայն հրեշտակս առաքեն առ կատուն և ասեն. Զի՞նչ քեզ մեղան չեմք՝ որ այդքան զմեզ հալածես. զի՞նչ քո ուտեմք։ Եւ նա ասէ. Ո՞չ գիտէք, եթէ յայն սակս զմեզ դարմանեն մարդիկ, զի զամբարս նոցա մեք պահեսցուք. արդ եթէ դուք այնմ ոչ մեղիցէք, համարձակ շրջեսջիք, և ոչ ինչ ձեզ վնասեցից։ Եւ ձեռն ի գլուխ եդեալ երդմամբ հաստատեաց զայս։ Եւ մկանցն համարձակեալ՝ կամեցան զանկեալ հատոն առնուլ. և յարձակեալ ի վերայ կալաւ զբազումս ի նոցանէ։ Եւ ասեն. Ո՞չ ապաքէն երդուար՝ անկեալ հատի ոչ առնուլ վրէժս։ Եւ նա ասէ. Ոչ երդուայ, այլ ըստ սովորութեան զգլխով զձեռս արկի։

Նման իսկ է առակս կեղծաւոր երդուեցողաց, զի և ոչ պայմանի մնան և ոչ ուխտի, այլ ատեն՝ դիպող միայն ժամ գտեալ (Մխ., ՂԱ, 81)։

Բավական է միայն կարդալ Վարդանա առակներից մեկն ևս, «Տաճկաց օրէնք», այսինքն՝ մահմեդական օրենք, որպեսզի տեսնենք, թե ինչպես նրանք, ըստ Առակախոսին, պատրաստ են երդումը խախտել որևէ ձևականությամբ։

ՏԱՃԿԱՑ ԱՒՐԷՆՔ

Տաճիկ ֆախիր մի զէշն փախուցեր էր և այլ ոչ կարէր բռնել։ Եւ երդումն արար ի վերայ կնոջ իւր, թէ՝ Գ տալախ կնիկն պոշ լինի ի յիւրմէ, թէ զէշն բռնէ, հեծնու և այլ ոչ իջանէ յիշուն։ Եւ յորժամ բռնեց զէշն և հեծաւ և եկաց ի վերա՛յ իշուն շատ մի և յեճեղեցաւ և քշէր զէշն և ինքն ի վերայ։ Եւ երթայ առ կարդացողնին, թէ ֆաթվայ տան. որ յերբ իջանես յիշուն և կինն ոչ թողի։ Եւ ամենեքեան ասացին, թէ՝ Այդ բանիդ ոչ կայ ֆաթվայ։ Եւ յետոյ եկեալ մին կարդացող և ասաց, թէ՝ Մի՛ տարեկուս լինիր. այսոր բան հեշտ է. գնա քշէ զէշն ի ծառին տակն և ել յիշոյն ի ծառն և իջիր ի ծառէն ի վար։

Յուցանէ առակս, թէ այլազգիքն առասպելք են և բնութեամբ զաւրինացն գործեն. քանզի աւրէնս ոչ ունին. զի անաւրէնք են և յամենայն աւրէնս իւրեանց զառասպելս խառնեալ ունին (Առ. Վարդ., Բ. 174. ձ'խէ)։

Մի անգամ որ «այլազգիների» մասին այս կարծիքը կա կազմված, Առակախոս Մխիթարը խրատում է՝ ամենևին չհավատալ «այլազգիներին», զգուշանալ նրանցից։

Ողբէր ոմն զխրխնչիւն՝ ասելով. Արի եկ արտաքս, զի մեծարեալ պատուեցից զքեզ բազմազան օրինակօք։ Եւ նա ասէ. Ձիք ոք զքեզ տեսեալ պատուասէր առ այլս, զի՞րդ և ինձ լինիցիս. ոչ է այդ. այլ զի արեան իմոյ ցանկաս։ Եւ ոչ ել արտաքս զերծեալ ի նմանէ զգուշութեամբ։

Զարթուցանէ զմեզ առակս, ամենևին ոչ հաւատալ պատիր բանից այլազգեաց, յայտնի ունելով զմիտս յանցելոց խաբեութեանց առ այլս. զի արեան և ստացուածոց ցանկալ քրիստոնէից, և ոչ եթէ պատուեն (Մխ., ՀԲ. 67)։

Այս ժամանակներից են անշուշտ գալիս մեր այն ժողովրդական առածները, որոնցով որոշվում են մեր և «այլազգիների» հարաբերությունները և զգուշություն է քարոզվում նրանց նկատմամբ։

Մխիթարը մի ուրիշ տեսակ վերաբերմունք էլ է խրատում ընդհանրապես թշնամիների հանդեպ.

Սկսեալ ազգ ձկանց առաջի Թագաւորին իւրեանց՝ և ասեն. Ձի՞ ասացեր թէ թշնամիք առ մեզ ոչ գան, և վասն այն ոչ տամք պատերազմ. ահաւասիկ սկսեալ մարդիկ որսան զմեզ, և դու վրէժ ոչ առնուս. և սղոցաձկանն հարեալ զնաւ որսորդաց՝ և զբազումս ընկղմեաց։ Եւ զայլս ևս եղեալս պատմէին նմա։ Եւ լուեալ զչարացաւ նոցա. և ումեմն ձկան հրամայեաց պահ ունել նաւորդաց, զի մի այնպիսի ինչ պատահիցէ. և զնոսա հաճէր՝ Ո՞չ գիտէք, ասէ, զի իշխան մեր են մարդիկ կարգեալք յաստուծոյ, և վասն այն հարկ է մեզ լռել՝ զոր ինչ և գործեն։

Հանճարեղս կամի առնել օրինակս զԹագաւորս. զի յորժամ հզօր ոք քան զնորայն իցէ Թագաւորութիւն, և կամիցի հարկս պահանջել, յանձն առցէ տալ սիրով, և զընդդիմացեալսն խրատեսցէ՝ ոչ հակառակել. զի յաստուծոյ կարգաւորեալ է՝ տկարի հնազանդ լինել հզօրի (Մխ., կէ. 63)։

Ուրեմն հզորների առաջ հարկավոր է լռել և հարկատու լինել։ Մի ուրիշ առակի մեջ խրատում է, թե երբ թշնամիներին դիմադրել չեն կարող, ավելի լավ է նույնիսկ այդ մասին ժողով չանել և չխորհել։

Ազգ ճրնճղկաց հրապարակ եդին խորհել զորսողաց. իսկ ծերունի ոմն ասէ. Մի՛ ժողովիք, գուցէ լուեալ զձայն թևոց թշնամեաց, և թռուցեալ՝ զվատասրտութիւն ձեր յայտ առնիցէք. այլ յեկեղեցիս դիմեալ աղօթեցէք առ աստուած։ Եւ ոչ լուան. և յանկարծակի ձայն առին թևոց որսողաց, և լուծաւ երախանն։

Ձմեզ խրատէ առակս. զի յորժամ չիցեմք բավական ընդդէմ կալ թշնամեաց, բարի է ոչ ժողովելոյ վասն նոցա տալ կարծիս, և դիւրաւ լուծանել յահէ նոցա, և զվատասրտութիւն մեր յայտ առնել. այլ խրատաւ իմաստնոց յեկեղեցիս յաղօթս ապաւինել (Մխ., ՃԼ. 110)։

Առնենք մի ուրիշ առակ.

Հարցաւ ընդ թզենի, թէ Ձի՞րդ է զի բազում ոստս առ երկրաւ տարածանես։ Եւ նա ասէ. Քանզի բազում են թշնամիք իմ, և ես խոնարհիմ, զի մի ոստակոտոր եղեց. և նախ քան զելանելն յիս՝ յագեցուցանեմ, և մոռանան զչարութիւն։

Խրատէ զմեզ առակս, խոնարհութեամբ և սեղանօք և քաղցրութեամբ ընդ առաջ ելանել թշնամեաց, յորժամ ստնանել ոչ կարեմք. զի շիջանիցին ի դառնութենէ բարուց, և մոռասցին զչարիս (Մխ., ԺԲ. 13)։

Այս առակի մեջ տրված խրատը, խոնարհություն թշնամիների առաջ, արդարացվում է նրանով, թե թշնամիները շատ են, և եթե այդպես չվարվի մարդ, «ոստակոտոր կլինի»։ ուստի թշնամիների հարձակվելուց առաջ՝ նրանց աչքը պետք է կշտացնել։ Թույլի վարմունքի ուրիշ կենցաղական խրատներ էլ է տալիս նա. «Անվնաս է (հոգու տեսակետով) դիպող առութեամբ ազատիլ ի վտանգէ թշնամեաց, և է անեպեր» (Մխ., ՀԹ. 74)։

ինչպես և երբ մարդ ընկնում է սպանողի ձեռն, կարելի է խաբեությամբ ազատվել բռնի մահից։ Եվ վերջապես՝ եթե մեկն իր թշնամու ձեռից փախչում է և մահից ազատվում, նա երկչոտ չէ, այլ արի։

Անկաւ ի պատառէ կերոդի հատ սիսեռան. և այսպանեցաւ ի բակլայէ որպէս զերկչոտ. որում ասաց. Ոչ եմ երկչոտ, այլ արի։

Յուցանէ առակս, յարաժամ յապականչաց կենաց մերոց զանգիտել, սակայն արիութեամբ ի նոցանէ փախչել (Մխ., ՀԲ. 45)։

Ահա ուժեղ թշնամու և առհասարակ ուժեղի հետ թույլի վարմունքի եղանակներ, որ մեր ժողովրդի մեջ եկել հանգել են այն առածին, թե՝ «Այն ձեռը, որ կտրել չես կարում, պիտի պաչես դնես ճակատիդ»։ Այս առածը, սակայն, այլազգիների նկատմամբ, ավելի ուշ ժամանակի է, երբ հայերը խիստ ճնշված են եղել զորեղ հարևաններից և ստիպված են եղել այդպես խոնարհվելու, որի պատկերը շատ ցայտուն հանված է Վարդանա առակներից մեկի մեջ («Քահանայ և Դադի»)։ «Էրէց մի և խատի մի և խատուն սև ծառայ մի երթային ի ճանապարհ. և էրէցն ամենևին ոչ խօսէր։ Եւ ասաց խատին. «Քաշիշ, ասա ինձ բան ի գրոց»։ Ասաց էրէցն. «Սէտի, նայ դու Գ հագուց ես հագեր պողպատի և ես մերկ եմ։ Ա. զի խատի ես և շաբաթ. Բ. զի մսըլման ես. Գ. քու իրաւն իրաւ է և սուտն ալ իրաւ է»։ Նա ասաց. «Մի՛ ահ կրեր. հանց բան ասէ որ հաւանիմ»... (Առ. Վարդ., Բ. 167, ՃԽԱ)։ Ահա թե ինչու ստիպված է քահանան խոնարհվել ղադու առաջ և, ինչպես շարունակության մեջ պատմվում է, քրիստոնեություն և մահմեդականություն մի հավասար կարգում դնել։ Այս ծայրահեղ խոնարհությունն, ինչպես ասվեց, ավելի ուշ ժամանակի է, երբ զադին երեք պողպատի հագուստ էր հագած, իսկ քահանան մերկ էր։ Մխիթարի ժամանակ, սակայն, եթե հայերը մի տեղ թույլ էին «այլազգիներից», ուրիշ տեղերում մեծ մասամբ ավելի ուժեղ էին զգում իրենց։ Ուստի ինչքան էլ Մխիթարը խաղաղասիրություն և անհրաժեշտության առաջ խոնարհել է խրատում, բայց և այնպես նա չի ƒարոզում չկռվել. այլ ընդհակառակն, թագավորի համար նա ասում է. «Թէ հարկաւորի ի թշնամեաց, անարգութիւն է ոչ տալ պատերազմ» (Մխ., ԿԶ. 63)։ Ուրիշ տեղ նա ասում է, թե խոնարհությունն իր չափը պիտի ունենա. խոնարհվելով չպիտի ընկնել գետին և լինել «կերակուր անմտաց՝ ոչ գիտելով զպատիւ անձին». «զի խոհականութեամբ խոնարհիլն՝ տիրապէս խոնարհութիւն է, իսկ անիմաստաբարն՝ եղծումն՝ ոչ գիտելով զօրինակ խոնարհութեան ըժամանակի և ժեղւոյ՝ ըստ զանազանութեան» (Մխ., ԼՀ. 43)։ Անիմաստաբար, այսինքն՝ անխելք, անմիտ կերպով խոնարհվելը, ուրեմն, «եղծում», այսինքն՝ ավերում, քայքայում է պատճառում։ Բացի այդ՝ անձնապատվությունը չպիտի մոռանալ և դրա համար չպիտի վախենալ մահից։

Այս բոլորի հետ գտնում ենք շատ որոշ ու կտրուկ կերպով արտահայտված նաև այն միտքը, թե երկու չարիքից փոքրագույնը պիտի ընտ-

րել և թե մահն ավելի փոքր չարիք է, քան մշտական տանջանքն ու զրկանքը։ Ուստի ավելի լավ է միանգամից մեռնել ու ոչնչանալ, քան հրում ու ջրում տանջվել շարունակ։

Ի չափոզէ զերծեալ ի ձեռանէ ոլեռն՝ գնատեսակ գոլով գնտին. և նորա զայրացեալ ասէ. երթ կերակուր լեր թռչնոց։ Որում ասաց. Բաւական է ի կապճիդ ի հուր և ի ջուր տանջել. ես պարզաբար կերակուր ախորժեմ թռչնոց լինել։

Միտք առակիս այս է. զի միջոց է ընդ տանջանս և ընդ տանջանս, ընդ զրկանս և ընդ զրկանս. յորոց եթէ պատահի, հարկաւոր է զհանդարտագոյնն ընտրել ի գործադունէն, և ի մեծամեծաց զփոքրագոյն (Մխ., եԳ. 46)։

Սոցիալական հարաբերությունների այս տեսությամբ, գլխավորապես Մխիթար Գոշի առակների հիման վրա, պարզվեց, որ 12-րդ դարում և հետո Հայաստանում գոյություն է ունեցել աշխատավոր դասակարգի պայքարն ընդդեմ ազնվականության և եկեղեցականության։ Առակագիր Մխիթարը, լինելով հոգևորականության նշանավոր ներկայացուցիչը և բարձր ազնվականության անձնական բարեկամը, բնականաբար չպիտի ճշտությամբ և ամբողջությամբ տար այդ դասակարգային կռվի իրական ընդարձակ պատկերը։ Բայց թե իրոք եղել է մի հեղափոխական շարժում, այդ շատ մեկին տեսնում ենք առակների մեջ։ Պայքարող աշխատավորության գաղափարներն ու ձգտումները, սակայն, կազմակերպված ձևով չեն երևան գալիս։ Աշխատավորները, լինեն քաղաքացի թե շինական, արդեն եկել են այն գիտակցության, որ իրենք տանջվում են, իսկ ազնվականությունն ու հոգևորականությունը միայն վայելում են։ Նրանք դժգոհ են իրենց վիճակից, քննում են իշխանների արարքները, տրտնջում են նրանցից, և վերջիվերջո ավելի ուշ ժամանակներում, Վարդանա առակների մեջ ազնվականներին անպետք և ավելորդ ծանրաբեռնություն են համարում և նույնիսկ երկիրն ավերողներ։ Մյուս կողմից՝ ինչքան էլ հոգևորականությունը ջանում է մարդկանց մեջ կրոնամոլություն բորբոքել և նույնիսկ նրանց գրգռել ընդդեմ այլակրոն «այլազգիների», բայց և այնպես հոգևորականներից էլ դժգոհ են, նրանց էլ պարսավում ու ծաղրում են։ Եկեղեցու վերաբերմամբ անտարբերություն է երևում առակների մեջ, և նույնիսկ նախապատվությունը մարմնին է տրվում և ոչ հոգուն։ Այս արդեն վերածնության ոգու էական կողմն է, որ տեսնում ենք առակների մեջ։ Նույնը հետո կգտնենք և ուրիշ գրական երկերի մեջ։

ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Վանական վարդապետ:—*Մխիթար Գոշը մեռնելուց առաջ իր աշակերտներից «ընտանի» մեկին, Մարտիրոս անունով, կարգում է Նոր Գետիկ վանքի առաջնորդ։ «Եւ գրեաց կտակ առ մեծ Հազարապետն Իւանէ, եղբայր Զաքարէի,—ասում է Կիրակոս Գանձակեցին*[1]*,—և յանձնեաց ի նա զվանսն և զառաջնորդն»։ Այս նոր վանահայրը թեպետև էր «մանուկ տիօք, բայց կատարեալ իմաստութեամբ, ա՛յր քաղցրաձայն յերգս պաշտամանն, և առատամիտ ընթերցող, և երագ ի գրչութեան»։ Եվ Մխիթար Գոշը չէր սխալվել իր ընտրության մեջ։ Առաջնորդ Մարտիրոսի «իմաստութեամբ» փառավորվում ու հռչակվում է նրա վանքը «քանզի ա՛յր շինարար էր. շինեաց և այլ ժամատուն... Շինեաց և գրատուն մի գեղեցկաշէն յարկօք ... Եւ բազում եղբարք ժողովեցան վասն հռչականուն տեղւոյն, և բազմաց եղև տեղի սննդեան և ուսման. որ և մեք իսկ սնեալ և ուսեալ եղաք ի նոյն վանս»,—գրում է Կիրակոսը։*

Այս պատմագիրը ծնվել է շուրջ 1200 թվականին[2]*։ Նրա «Գանձակեցի» կոչումը ցույց է տալիս, որ նա եղել է կամ Գանձակ քաղաքից, կամ «յաշխարհէն Գանձակայ»*[3]*։ Ուրիշ տեղ*[4] *էլ նա Գետիկ վանքն անվանում է իր համար «տեղի սննդեան»։ Պարզ է, որ նա մանկությունից մեծացել և ուսել է այն վանքում։ Բայց նա չի գոհացել այնտեղի ուսումով։*

Մխիթար Գոշի նշանավոր աշակերտներից մեկն եղել է և Վանական վարդապետը. սրան նույնպես աշակերտել է Կիրակոս, և իր այս ուսուցչին էլ շատ գովում է նա՝ անվանելով նրան «ա՛յր սուրբ և պարկեշտ, և յամենայն գործս բարիս յառաջադէմ, ողջախոհ և զգաստ յամենայնի, և վարդապետական բանիւ քան զամենեսին՝ որ ի ժամանակին էին՝ գերազանցեալ, ծննդական մտօք և յարմար բանիւք։

---

1 Կ. Գանձակեցի, *Պատմութիւն Հայոց* էջ 207։

2 *Հիշելով 1241 թ. կատարված մի եղելություն «Վասն Ռպանին Ասորւոյ» գլխի մեջ (Պատմ., էջ 263), նա ավելացնում է, թե այդ տեղի է ունեցել «ի ժամանակի կենաց մերոց ամս քառասուն՝ պակաս կամ աւելի»։ Ուրեմն նա ծնվել է շուրջ 1200 թ.։*

3 *Ինքը գրում է. «... սոքա երեքեանս էին յաշխարհէն Գանձակայ, ուստի և ես» (Պատմ. Հայոց, էջ 107)։*

4 *Անդ, էջ 239։*

Վասն որոյ,—շարունակում է Գանձակեցին,—դեղերէին առ նա ուսման ապագաւ ո՛չ միայն վարդապետական բանի, այլ ամենայն կեանք նորա և շարժումն անգիր օրէնք էին տեսողացն»[5]։

Վանականը, անշուշտ Մխիթար Գոշից վարդապետական կոչումն ստանալուց հետո, շինել է մի վանք, որ կոչվել է Խորանաշատ. «վասն յոլով եկեղեցեացն՝ որ ի նմա, ընկալաւ զանունն, որ կայ հանդէպ երգեվանից բերդին և ի թիկանց Գարդմանայ»[6]։ *Այստեղ, իր շինած վանքում, նա ուսում էր տալիս իր աշակերտներին*[7]։

Դժբախտաբար այդ ժամանակներում սկիզբն է առնում Հայաստանի համար մի նոր եղերական վիճակ, որ չորրորդն էր հայկական դրավոր պատմության շրջանում։ Թաթարները Միջին Ասիայի խորքերից շարժվում են դեպի արևմուտք։ Նրանց հարվածից փլչում է Խորասանի թագավորությունը, և նրա սուլթանը՝ Ջալալադին՝ 1225 թ. զորքի մեծ բազմությամբ փախչում է դեպի արևմուտք, առնում Գանձակ, Տփխիս և այլ քաղաքները, և պարսիկ, արաբ ու թուրք զորքերով հեղեղելով Հայաստանն՝ անցնում է դեպի Հռոմների, այսինքն Իկոնիայի սուլթանության կողմերը։ Այստեղ նա պարտվում է Իկոնիայի և Եգիպտոսի իշխանությունների, ֆրանկների ու Կիլիկիայի հայերի միացյալ ուժերից և դառնում է Մուղան։ Թաթարները հետո նրան հետապնդելով՝ քշում են մինչև Ամիդ և այնտեղ ոչնչացնում նրան և նրա բանակը[8]։ *Թաթարներից առաջ Խորազմի սուլթանի այս վայրագ արշավանքն արդեն մեծ պատուհաս է դառնում մեր երկրի համար. այրացավեր են լինում քաղաքներն ու վանքերը, կանգ է առնում հայ իշխանությունների մեջ բարգավաճող շինարարությունը։*

Ավերվում է նաև Վանական վարդապետի Խորանաշատի վանքը։ Բայց նա չի դադարում աշակերտներին ուսում տալուց։ Նա «ի սահմանս Տաւուշ բերդոյ» ստեղծում է իր համար մի նոր օթևան. իր աշխատությամբ փորում է իր համար «քարայրս ի կատարս բարձրագոյն քարի միոջ, որ կայ հանդէպ գեղջն՝ որ Ոլորուտն կոչի, ի հարաւոյ կողմանէ Տաւուշ բերդի։ Եւ շինեալ էր յայրի անդ եկեղեցի մի փոքրիկ, և անդ պագարէր դաղթութեամբ. իբրև աւերեցաւ առաջին վանք նորա, որ կայ հանդէպ բերդին երգէվանից, ի Ջալալադին Սուլտանէն։ Եւ անդ կայր զետեղեալ՝ ժողովեալ բազում գրեանս, զի յոյժ ուսումնասէր էր այրն, մանաւանդ թէ աստուածասէր։ Եւ բազումք գային առ նա, և ուսանէին

---

5 *Անդ, էջ 206։*

6 *Անդ, էջ 311, 333։*

7 *Համազասպ Ոսկյան, Հովհաննես Վանական և յուր դպրոցը, Վիեննա, 1922, էջ 5։ Այստեղ, էջ 10, բերված մի հիշատակարանում կարդում ենք. «Արդ գրեցաւ սաղմոսարանս... Ձևռամբ նսայի գրչի ի յերկիրս Տայոց և ի գիւղս որ կոչի Թաւուշ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս... յաթոռս Խորանաշատի և Վանական վարդապետի...»։—Խորանաշատի վանքը մինչև այժմ էլ մնում է։*

8 *Ն. Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 211—217։*

զբանս վարդապետականս ի նմանէ։ Եւ իբրև շատացան մարդիկն, հարկ եղև նմա իջանել յայրէ անտի, և առ ստորոտս քարին շինեաց եկեղեցի և սենեակս, և անդ դադարեալ էր»[9]։

Այստեղ է, որ Վանական վարդապետին աշակերտում է և Կիրակոսը. նա իր ուսուցչին գովելուց հետո՝ ավելացնում է. «Եւ զայս ո՛չ թէ միայն ականջալուր ասեմ, այլ և ականատես իսկ եմ, զի բազում ժամանակս կացաք առ նա ի վարժ կրթութեան ի սահմանս Տաւուշ բերդոյ, յանապատի անդ՝ զոր ստացաւ իւր բնակութիւն, և աղբիւրաբար արբուցանէր ամենեցուն զբանն վարդապետական»[10]։

Սակայն շատ երկար չի տևում Վանականի լուսավորական գործունեությունն այս նոր վայրում. վրա է հասնում ավելի մեծ չարիքը։ Թաթարներն ամբողջ Պարսկաստանին տիրելուց հետո գալիս հասնում են «յաշխարհն Աղուանից ամենայն ախիւք բազմութեամբ իւրեանց, և ի բերրի և յարգաւանդ դաշտին՝ որ կոչի Մուղան, լի ամենայն բարութեամբ, ջրով և փայտիւ և մրգով և որսով, անդ զետեղեալ՝ հարին ylխորանս իւրեանց։ Այսպէս առնէին զամենայն աւուրս ձմերայնոյն, և ի ժամանակս գարնանային սփռնէին ընդ կողմանս ասպատակաւ և աւերմամբ. և դարձեալ դառնային անդրէն բանակէին»[11]։ Նրանք առնում, կործանում են Գանձակ քաղաքը. հետզհետե ավերում, կոտորում ու կողոպտում են և՛ Հայոց, և՛ Աղվանից, և՛ Վրաց աշխարհները։ Առնում, բանդում են և Վահրամի իշխանության ներքո գտնված Շամքոր քաղաքը։ «Ապա յարձակեցան ի վերայ այլ բերդիցն՝ որ ընդ իշխանութեամբն Վահրամայ, ի Տիրունականն, և ի յՈրդեվանքն, և ի Մածնաբերդ, զոր ունէր Կիւրիկէ Բագրատունի... և ի Գարդման, և յայլ կողմանս։ Ի Ջարևքն և ի Գետաբակս... Բայց այնոքիկ որ առին զՇամքոր, եկին ամենայն ախիւն իւրեանց ի Տաւուշ և ի Կածարեթ և ի Նոր բերդ, և ի Գագ, և որ շուրջ զնոքօք. և ի նեղ արկեալ պաշարեցին զնոսա»։

Շրջակա գյուղերի բնակիչներն ապաստանելու համար գիմում լրցվում են Վանականի քարայրը. թաթարներր պաշարում են նրանց. Վանականը երկու քահանայի հետ իջնում է թաթարների մոտ և աջողում է կոտորածից ազատել ժողովրդին։ Նրանք որոշ թվով մարդկանց, որոնց մեջ և Վանականին ու Կիրակոս Գանձակեցուն, առնում են իրենց հետ։ Վանականը նույն տարին, 1235 թվականի վերջերին, ազատվում է փըրկանքով, իսկ Կիրակոսը փախչելով պրծնում է նրանց ձեռից։—Այս դեպքը մանրամասն պատմել է Կիրակոսը և նրա Պատմության այդ հատվածր բերված է ներքևում։

Վանականն ազատվելուց հետո 1236 թ. լինում է Տփխիսում։ Այդ անխոնջ աշխատավորը չի լքվում ձախորդությունից և ձեռնթափ չի լի-

---

9 Անդ, էջ 230։

10 Անդ, էջ 206։

11 Անդ, էջ 221 և հետ.։

նում իր սիրած գործից։ Նա վերադառնում է Խորանաշատի վանքը, նորոգում է այն, և «առնէր նա շինուածս երևելիս,—գրում է Կիրակոսը[12],—գաւիթ շինելով ի կոփածոյ վիմաց ի դուռն մեծ եկեղեցւոյն, զոր իւր իսկ շինեալ էր, և ղբան վարդապետութեանն ուսուցանէր այնոցիկ, որ ժողովէին առ նա յամենայն գաւառաց»։ Այստեղ էլ նա վախճանվում և թաղվում է 1251 թ. «Եւ ժողովեցան անթիւ բազմութիւնք ի թաղումն նորա և մեծաւ սգով և տրտմութեամբ ողբային յոյժ, զի զրկեցան ի լուսաւոր վարդապետութենէն երանելւոյն և ի հոգեշահ բանիցն»։

Վանական վարդապետը մի զեղեցիկ տիպարն է իր դարի շինարար ու տոկուն ուսուցչի։ Նրա կյանքը մի հոյակապ դրվագ է, թե ինչպես Մխիթար Գոշի և ուրիշների աշակերտները, բազում «գրեանս հաւաքեալ» գրատներ շինելով, սփռում էին գիտության լույսը, և հայկական իշխանությունների մեջ արևելյան խուլ անկյուններում ծաղկում էր կուլտուրան, լուսավորության գործին նվիրված անձերի անդուլ ջանքերով։ Նրանք պատրաստում էին իրենց գործը շարունակողներ։ Վանականն էլ, ըստ Կիրակոսի, «ի տղայական տիոցն աստուածագործ ծառայութեամբ կացեալ, բազում քրտունս և աշխատութիւնս ցուցեալ ի բանն վարդապետական, բազում ոդիս ի փառս ածեալ»[13]։ Նրա այդպիսի «որդիներից» մեկն է եղել և Մեծն Վարդանը, որ անվանում է նրան «համբաւատենչ և արդիւնական վարդապետն Վանական», «աստէն թողեալ անուն քաջութեան յաշակերտս իւր ի գիրս գանձուց եկեղեցւոյ, զորս ամբարեաց ի շնորհացն Աստուծոյ և ի հատակ մտաց ծննդականաց»[14]։ Իսկ Մաղաքիա Աբեղան[15] գրում է. «Ի դառն ժամանակիս փայլէր իբրև զարեգակն սուրբ հոգի վարդապետն մեր Վանականն յերկիրն արևելեան երկրորդ արևելք անուանեալ... Նոյնպէս և գովելի աշակերտքն իւր Վարդան և Կիրակոս, Առաքեալն և Յովսէփ Խաչանման բաժանեալ զաշխարհն արևելից լուսաւորեցին կենարար վարդապետութեամբ... այլ և բազում ոդիս ի փառս ածին, ձրի բաշխելով զտիրական խաչանիշ գաւազանն [=վարդապետական գավազան, վարդապետություն] նմանեալ փառաւոր վարդապետին իւրեանց»։

Ուսումնասեր վարդապետ Վանականը պարապել է նաև գրական աշխատություններով. նա գրել է իր ժամանակակից պատմություն ըստ վկայության Վարդանի և Կիրակոսի։ Վերջինս «Յառաջաբանի» մեջ նախորդ պատմագիրների շարքի վերջում հիշատակում է իբրև պատմություն գրող «Մեծիմաստ և հանճարեղ վարդապետն անուանեալ Վանական»։ Ապա Լոռիի և Անիի ժողովների (1204 և 1205 թվականների) պատմության վերջում[16] ավելացնում է. «Զբովանդակ իրս՝ զբան և զգործ այսմ

12 Անդ, էջ 331—334։

13 Անդ, էջ 331 և հետ.։

14 Մեծին Վարդանայ Բարձրբերդցւոյ Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 191 և հետ.։

15 Մաղաքիա Աբեղայի Պատմութիւն վասն ազգին Նետողաց, Ս. Պետերբուրգ, 1870, էջ 12։

16 Կ. Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 167 և հետ.։

ժողովոյս գրեաց մեծիմաստ և աւատամիտ վարդապետն Վանական յիւրում պատմութեանն, զի՝ ականատես էր նա իրացն եղելոց, և ականջալուր, յաշակերտի կարգի գոլով յայնժամ առ մեծ վարդապետին [=Մխիթար Գոշ]։ Այս և այլ յոլով իրք գտանին ի գիրս նորա, որք կամին մտադիւրութեամբ ուսանել»։ Իսկ Վարդանը գրում է.[17] *«Արդ ի վեց հարիւր ութսուն և հինգ [=1236] թուականէն Հայոց մինչև յեօթն հարիւր չորեքտասանս [=1265], յորում եմքս մեք, զոր ինչ արարին ազգն Նետողաց ընդ իշխանս և ընդ իշխանութիւնս որ յայսմ կողմանէ ծովուն մեծի—ընդ Պարսս և ընդ Աղուանս, ընդ Հայս և ընդ Վիրս և ընդ աշխարհն՝ Հոռոմոց կոչեցեալ, ուր էին բնակեալ Հայք և Ասորիք և Յոյնք, Տաճիկք և Թուրքմանք—գրեալ են մանրամասնաբար Հայրն մեր և ընդ սուրբս աստուծոյ փառաւորեալն Վանական վարդապետ, և հարազատն մեր Կիրակոս վարդապետն՝ հօրն համանմանն»։*

Վանականի գրած պատմութիւնը, ցաւոք, չի մնացել, երևան են եկել նրա անունով որոշ թվով երկեր՝ կրոնական բովանդակութեամբ[18]*։ Դրանց բոլորի համար իբրև հեղինակ հիշվում է «Վանական վարդապետ». աշակերտներն էլ այդպես են անվանում նրան։ Նույն անունը տալիս է և նրա եղբորորդին. «Ես տէր Մարգարէ՝ եղբօրորդի Վանական վարդապետին, համախոհ եմ վերոյ գրելոցս ի յանդարձոյ հօրեղբորն իմոյ»*[19]*։ Բայց 1858 թ. տպագրված է մի աշխատություն՝ «Յովհաննէս Վանական վարդապետի Տաւուշեցւոյ Բացատրութիւն աղօթից Ամբակումայ մարգարէի» վերնագրով։ Որ Վանական վարդապետը կարող էր «Տաւուշեցի» կոչվել, այդ հասկանալի է. քանի որ նա ըստ «Յայսմաւուրքի»՝ էր «ի Տաւուշ գաւառէն», և նրա վանքերը եղել են «յերկիրն Տայոց», «ի սահմանս Տաւուշ բերդոյ»։ Բայց որ նրա անունը եղած լինի «Յովհաննէս», այդ ընդունելի չէ. վերևում հիշված մի երկը տպագրել տվողները, ըստ երևույթին, նրան շփոթել են Մխիթար Գոշի ուսուցիչ «Յովհաննէս վարդապետ Տաւուշեցի» կրոնավորի հետ։ Եվ ուրիշներն էլ հետագայում այդպես «Յովհաննէս... Տաւուշեցի» անունով շարունակել են կոչել Մխիթար Գոշի աշակերտ «Վանական վարդապետին»։ Անունը՝ «Վանական» իբրև հատուկ անուն գրտնում ենք մի ուրիշի համար ևս Կիրակոսի Պատմության մեջ*[20]*, ուր բազմաթիվ անունների շարքի մեջ՝ կա «եպիսկոպոսքն Բջնոյ՝ Վանականն և Գրիգոր», և մի տասն անուններից հետո՝ «մեծ հռչակաւոր վարդապետն Վանական»։ Ինչպես Բջնո եպիսկոպոսի անունը եղել է «Վանական», նույնպես և Կիրակոսի վարդապետի անունը կոչվել է «Վանական», և ոչ «Յովհաննէս վանական Տաւուշեցի», որի մեջ «վանական» առնվում է իբրև հասարակ անուն։*

---

17 *Մեծին Վարդանայ Պատմ. Տիեզ., էջ 192։*

18 *Յուցակը տե՛ս Համ. Ոսկյան, Հովհաննես Վանական և յուր դպրոցը, Վիեննա, 1922, էջ 25—35։*

19 Ստեփաննոս Օրբելեան, *Պատմ. նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 462։*

20 Կ. Գանձակեցի, *Պատմութիւն Հայոց, էջ 295։*

2. Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց»:—Վանականի նշանավոր աշակերտներից է Կիրակոսը, հայտնի մի վարդապետ, որին Վարդան Արևելցին անվանում է «րաբունեաց պետ»: Գրականություն սիրող է նա, հետաքրքրվող՝ ժամանակակից խնդիրներով, թե կրոնական և թե քաղաքական: Բայց, ինչպես երևում է, ավելի շատ աշակերտների հետ գործնական պարապմունքով է զբաղվել վարդապետը, ավելի դրդել է ուրիշներին գրելու, քան ինքը գրել է: Ուստի նրանից չեն մնում ուրիշ գրական երկեր, բացի նրա «Հայոց պատմությունից»: Սրա վրա նա անպայման «բազում աշխատութիւն և երկար ջան» է գործադրել՝ նյութեր ժողովելու և մշակելու, համարելով այդ իր համար մի «արձան գերեզմանի», ոչ թե քարե, «այլ կենդանի, զի յիշեսցի ի սմա անուն Կիրակոսի»: Այսպես է գրում նա իր գործի Նախաբանի վերջում: Իր անվան անմահացման համար է հոգացել նաև այնու, որ Առաջաբանի սկզբի ասացվածների գլխակապը կազմել է «Կիւրակոս»: Եվ իսկապես, նրա հիշատակը կենդանի է մնացել իր միակ կարևոր աշխատությամբ, առանց որի անծանոթ կմնային, կամ թերածանոթ կլինեին մեզ Հայոց և Հայաստանի պատմության շատ կողմեր, քաղաքական և կուլտուրական շատ եղելություններ և բազմաթիվ պատմական դեպքեր ու դեմքեր:

Նրա Պատմության առաջին մասը քաղված է նախորդ գրավոր աղբյուրներից՝ «երկօք աշխատութեան հաւաքեալ ի նախագրելոց»: Այստեղ, սկսած Ս. Գրիգորից, շարունակաբար համառոտ պատմություն է անում ըստ կաթողիկոսների հաջորդության, գլխավոր ուշադրությունը դարձնելով եկեղեցական անձերին ու դեպքերին և երկրորդաբար միայն մեջ բերելով քաղաքական եղելություններ: Մեջը կան և այնպիսի տեղեկություններ, որոնք հայտնի չեն ուրիշ պատմագիրներից: Երբ հասնում է Ներսես Շնորհալուն, բերում է նրա մի ընդարձակ գրությունը՝ «Գիր հաւատոյ խոստովանութեան Հայաստանեայց եկեղեցւոյ»: Քանի պատմությունը մոտենում է հեղինակի ժամանակին, այնքան ավելի կարևոր է դառնում իր նյութով. վերջը նույնիսկ ժամանակակից իրողությունների և անձերի մասին է խոսում:

Երկրորդ մասը սկսում է Լևոնի իշխանությունից և նրա թագավորելուց (1197 թ.) և հասցնում է մինչև 1265 թվականը: Այս մեծ հատվածի պատմության համար հայտնում է, թե «էՙ որ ականջալուր, և էՙ որ ականատես» է ինքը: Աշխատության ընթացքում էլ մեկ մեկ ցույց է տալիս իր աղբյուրները, ինչպես՝ երբ խոսում է Հեթում թագավորի ճանապարհորդության և նրա տեսածների ու լսածների մասին, ավելացնում է. «բազում իրս զարմանալիս պատմէր մեզ զբարբարոս ազգացն...»: Բազդատի առման մասին պատմելուց հետո՝ ասում է. «եւ զայս ամենայն պատմեաց մեզ իշխանն Հասան, զոր Պոօշն անուանէին... որ ականատես և ականջալուր էր իրացս»: Այսպիսի ծագում ունենալով, նրա հաղորդած հարուստ տեղեկություններն ընդհանրապես մեծ արժեք ունին և՛ Արևվելյան, և՛ Արևմտյան Հայոց, ինչպես և Վրաց պատմության համար: Նա

մանրամասն խոսում է Զաքարե և Իվանե եղբայրների գործերի մասին, այլև Հայաստանի արևելյան կողմի ուրիշ իշխանների ու վարդապետների, նրանց շինած վանքերի։ Բերում է նաև թղթեր կրոնական խնդիրների վերաբերյալ։ Առանձնապես ավելի կանգ է առնում թաթարների արշավանքի, նվաճումների և հայերի ու նրանց հարաբերությունների վրա։ Թեև երբեմն մեջ է բերում նաև սին զրույցներ, որոնց նա հավատում է մեծ դյուրահավանությամբ, բայց նրա այդ գործն իր ամբողջությամբ մեր առաջ բաց է անում մի շատ կարևոր պատմական դարաշրջանի պատկերը։ Անհեթեթ բաների մասին պատմվածքներն անգամ իրենց կողմից պարզում են այն ժամանակի և իրեն՝ Կիրակոսի, հետը նաև իր ժամանակակից մտավորականների հասկացողության մակարդակը։

Ինչքան էլ դժվար ժամանակներում էր ապրում նա, բայց և այնպես նա հուսահատ չէր, և այս է նրա անձնական մեծ առավելություններից մեկը. «Վասն զի յօժարեցաք մեք յիշատակ թողուլ յազգս՝ որ գալոց են. քանզի ակն ունիմք մեք յուսով փրկութեան ի նեղութենէ աստի՝ որ պաշարեալս է զմեզ, սակաւիկ մի ցուցցուք քննասիրաց զկերպարանս և զխօսս նոցա» (=թաթարների)։ Այսպես է սկսում նա իր Պատմության գլուխներից մեկը[21], որի մեջ շատ հանգիստ ու լիովին բնութագրում է թաթարներին, որոնց անձամբ լավ ճանաչել էր ինքը։ Քիչ պատմագիրներ մերոնցից ունին այդպիսի նկարագիրներ։

«Էին տեսլեամբ կերպարանաց դժոխատես և ահագնալուր, մօրուս ո՛չ ունելով, բայց սակաւ ոմանց թուելով մազս ունելով ի շուրթն կամ ի կլափն. ակն նեղ և արագատես, ձա՛յն նուրբ և սուր բազմակեացք և տևողք։ Յորժամ անկանէր յաճախ ուտէին և ըմպէին անյագ, յորժամ ո՛չ անկանէր, ժուժկալք էին. ուտէին զամենայն կենդանիս՝ զսուրբս և զանսուրբս և ցմիս ձիոյ առաւել մեծարէին, անդամ անդամ յօշեալ և եփեալ, կամ խորովեալ առանց աղի, և ապա մանր կտրեալ և թացեալ յաղաջուր, այնպէս ուտէին. ոմանք ի գուճս ըստ նմանութեան ուղտուց, և կէսք նստելով ուտէին, և յուտելն հասարակ բաշխէին տիրանց և ծառայից, և չըմպելն զղմուզ կամ զգինի, առեալ մի ոմն մեծ ամանով ի ձեռս իւր, և փոքր բաժակաւ առեալ ի նմանէ, ցանէին յերկինս, և ապա՛ յարևմուտս, ի հիւսիս և ի հարաւ. և ապա իւր իսկ ցրուողին զայն սակաւ մի ըմպեալ ի նմանէ, մատուցանէր աւագագունին։ Եւ թէ ոք բերէր նոցա կերակուրս ինչ կամ ըմպելիս, նախ բերողին տային ուտել և ըմպել, և ապա ինքեանք ուտէին և ըմպէին. զի մի՛ մահացու դեղոց ինչ դժրիցին։ Որչափ և կամէին՝ կանայս առնէին. բայց զպոռնիկս ամենևին ոչ ապրեցուցանէին, որ ընդ իւրեանց կանայս. բայց ինքեանք ո՛ւր և հանդիպէին այլազգեաց, անխտիր խառնակէին, և գողութեան ատելիք էին. մինչ զի չարաչար մահուամբ սպանանէին։ Եւ պաշտօն ինչ ո՛չ գոյր առ նոսա, կամ երկրպագութիւն, բայց ստէպ զանուն Աստուծոյ յիշէին յամենայն իրս. զայս՝ թէ զէ՛ն Աստուծոյ գոհանային, և կամ թէ զայլ ոմն Աստուած կոչէին՝ մեք ո՛չ գիտեմք. և ո՛չ ինքեանք ևս։ Բայց սովորաբար զայս ասէին. զի զարքայն իւրեանց ազգակից Աստուծոյ. զերկինս առեալ Աստուած իւր բաժին, և զերկիրս տուեալ խաղանին. զի ասէին զՋանկղ Ղանն, զհա՛յր խաղանին, ո՛չ ծնեալ ի սերմանէ առն. այլ լոյս իմն եկեալ յանեղութենից, և մտեալ ընդ երդ տանն, և ասացեալ մօրն, թէ յղասչի՛ր և ծնցիս որդի ինքնակալ երկրի. և յայնմանէ ասէին ծնեալ զնա։

---

21 Կ. Գանձակեցի, *Պատմութիւն Հայոց*, էջ 257 և հետ. «Վասն ցուցման կերպարանաց թաթարին...»։

Ջայս պատմեաց մեզ Գրիգոր իշխանն որդի մարզպանին՝ եղբայր Աշլան պէկին Սարգսի և Ամիրային, յազգէ Մամիկոնէից, զոր իւր իսկ լուեալ էր ի մեծ յառնէ միոջէ ի կարի աւագացն, որում անուն էր Ղութու Նուին, յաւուր միում յուսուցանել նոցա զմանկագոյնսն։ Եւ յորժամ ոք մեռանէր ի նոցանէ, կամ սպանանէին, է՛ր զոր բազում աւուրս շրջեցուցանէին ընդ իւրեանս, քանզի մտեալ դիւի՝ խօսէր անդուստ բազում բարբաջմունս, և է՛ր զոր այրէին. և զկէս թաղէին յերկրի խո՛ր փոսիւք, և ընդ նմին դնէին զզէնն և զհանդերձ, և զոսկի և զարծաթ, որ ինչ բաժին իւր էր։ Եւ թէ ի մեծաց ոք լինէր, ի ծառայից և յաղախնեաց ևս դնէին ընդ նմա ի գերեզմանի, զի սպաս կալցի ասէին նմա. այլ և ձիս, զի ասէին անդ պատերազմ սաստիկ լինել. և զոր յիշատակ կամէին առնել մեռելոց, ճեղքէին զփոր ձիոյն, և քարշէին ընդ այն զամենայն միսն առանց ոսկեր. և ապա զիորոտին և զոսկերսն այրէին հրով, և կարէին զմորթ ձիոյն, իբրև թէ զամենայն մարմինն ունիցի։ Սրեալ փայտ մի մեծ, հարեալ ընդ որովայնն և հանեալ ընդ բերանն, այնպէս վերացուցանէին ի ծառ, կամ ի բարձրաւանդակ տեղւոջ։

Այլ և կանայք նոցա կախարդք էին, և զամենայն ինչ հմայէին. և առանց հրամանի կախարդացն և դիւթիցն ոչ երթային ի ճանապարհ ուրեք, բայց թէ նոքա հրամայէին։ Այլ և խո՛սք նոցա խժականք և անծանօթք ի մէնջ. քանզի կոչէին զանուն Աստուծոյ՝ Թանգրի և զմարդն՝ ճարեեան, և զկին՝ ափչի, և զանուն հօր՝ էչկա, և զմայր՝ ամա, և զեղբայր՝ աղա, և զքոյր՝ ամաճի, և զզուխս՝ թիւօն, և զաչս՝ նիտուն, և զականջսն՝ չիֆին և զմօրուս՝ սախալ, և զերես՝ յիոզ, և զերեսն ամսան, և զատամն՝ սխուր, և զհաց օթմակ և զնձն՝ ամար, և զկով՝ ուկէն, և զոչխար՝ ղոյնա, և զգառն՝ ղուղաճ, և զայծ՝ իման, և զձի՝ մօրի, և զշորի՝ լօսա, և զուղտ՝ քամաճ, և զշուն՝ նօխա, և զգայլ՝ չինա, և գարշ՝ այտոու, և զաղուէս՝ նօֆան, և զնապաստակ՝ թապղայ, և զհաւ՝ թախեա, և զաղաւնի՝ կօկաչա, և զարծուի՝ ղուշ, և զշուր՝ ուտուն, և զգինի՝ տարասու, և զծով՝ տանկրգ, և զգետ՝ ուլանսու, և զթուր՝ իօլաու և զաղեղն՝ նմու, և զնետ՝ ոռմու, և զթագաւոր՝ մելիք, և զմեծ պարոն՝ նուին, և զերկիր՝ էլ, և զերկինք՝ գօգայ, և զարեգակն՝ նառան, և զլուսին՝ սարա, և զաստեղս՝ սաղրա, և զլոյս՝ օտուր, և զգիշեր՝ սոյնի, և զգրագիր՝ բիբիֆշի, և զսատանայ՝ բառաճուէ, և զայլ այսպիսի խժական անուանս, զոր ի բազմաց մեզ անծանօթք. իսկ այժմ ակամայ ծանուցեալք»։

Կիրակոսի աշխատութեան վրա կարելի չէ նայել գրական տեսակետով. դա մի կարգավորեալ ամբողջական երկ չէ, և ոչ էլ մի ժամանակագրութեան տարիների հաջորդութեամբ. դեպքերն իրար ետևից պատմվում են բավական խառն դասավորութեամբ. հեղինակը գիտակցել է իր երկից մի ամբողջութեյուն ստեղծելու պահանջը, բայց չի գտել դրա համար անհրաժեշտ կապը կամ կենտրոնը։ «Իւրաքանչիւր ոք յառաջին աշխատասիրացն եգիտ տեղի ինչ բուռն հարկանելոյ, կամ թագաւոր երևելի և կամ նահապետութիւնք ազգաց յայտնի,—գրում է նա իր Առաջաբանի մեջ։—Իսկ մեր յայսմ յամենայնէ թափուր եղեալ. զի թագաւորութիւնն վաղ ուրեմն բարձեալ, Արշակունին և Բագրատունին, և իշխանքն ոչ ուրեք երևեալ Հայկազնի, բայց թէ ուրեք ուրեք ղօղեալք և թաքուցեալք յօտար աշխարհի... Վասն որոյ,—շարունակում է նա,—աղաչեմք զկնի եկեալսդ ոչ աղարտել զաշխատութիւնս մեր, որպէս անուսմունք. և խնչել քթօք, և յօնօք պռստել»։

Կիրակոսն, ուրեմն, իր ասելով, հայկական քաղաքական մեծութեյուն չլինելու հետևանքով՝ չի կարողացել և հորինել իր երկն իբրև մեկ միութեյուն կազմող, ներքին կապակցութեյամբ շարունակական պատմութեյուն։ Նա պատմել է թռիչքներով, մեկ Արևելքի մասին, մեկ՝ Արևմուտքի, մերթ՝

վրացիների, մերթ՝ թաթարների, երբեմն՝ հայոց եկեղեցական գործերի, երբեմն էլ՝ հայ իշխանների։ Եվ այդ պատմել է նա պարզ, հեշտ հասկանալի ձևով, առանց ձգտելու որևէ ճարտասանական զարդարանքների ու վերամբարձության, կամ որևէ խորիմացության ու նրբամտության, բայց մեծ մանրամասնությամբ ու սիրով, որովհետև նրան տանջել է այն միտքը, թե չպիտի մոռացության տալ իր ժամանակի եղելությունները կամ ինչպես ինքը գրում է. «Զի հարկանեն զմեզ միտք մեր՝ ոչ տալ լռութեան զայսպիսի աղէտ տարակուսանաց, զոր լուաք ականջօք մերովք, և տեսաք աչօք»[22]։ Եվ համն էլ հենց այդ հասարակ ու անզարդ, բայց ջերմ սրտով, մանրապատում հաղորդումների մեջ է։ Նրա երկի մեջ կան շատ հատվածներ, որոնք մենակ, առանձին առած շատ գեղեցիկ ու գրավիչ են իրենց պարզությամբ և անկեղծությամբ, երբեմն անգամ իրենց միամտությամբ և հեղինակի կենդանի ապրումներով։ Դրա համար բերենք այստեղ այն հատվածը, որի մասին հիշվեց վերևում։ Թաթարները մոտենում են Վանական վարդապետի քարայրին.

«Իբրև եղև այս կործանումն աշխարհի ի Թաթարէն, և եկն Մօլար Նուինն յայն սահմանս, բնակիչք գեղջիցն այնոցիկ յայր անդ դիմեցին, և լցաւ արամբք և կանամբք և մանկտօք. և եկեալ Թաթարն պաշարեաց զնոսա յայրի անդր. և նոքա համբարս ո՛չ ունէին և ո՛չ ջուր. և է՛ր եղանակն ամառնային, և է՛ր տօթ յոյժ. և սկսան տապիլ յարգելանի անդ՝ իբր ի բանտի. և մանկունքն պապակէին ի ծարաւոյ, և մերձ էին ի մեռանել. և թշնամիքն ձայնէին արտաքուստ, թէ ընդէ՛ր մեռանիք, ելէ՛ք առ մեզ, և տացուք ձեզ վերակացուս, և թողցուք զձեզ ի տեղւոջս ձերում. և կրկնէին և երեքկնէին երդմամբ։ Ապա որք էին յայրի անդ, անկանէին առ ոտս վարդապետին, աղաչէին զնա և ասէին. «զնեա՛ զարիւն մեր ամենեցուն, և է՛ջ առ նոսա, և արա սէր ընդ նոսա»։ Իսկ նա ասէ ցնոսա. «ես զանձն իմ ո՛չ խնայեցից վասն ձեր, թէ գոյ հնար փրկութեան. զի և Քրիստոս զանձն իւր ի մահ ետ վասն մեր, և փրկեաց զմեզ ի բռնութենէն սատանայի. ապա պարտիմք ի վերայ եղբարց մերոց զնոյն սէր ցուցանել»։

Ապա առեալ վարդապետին երկու քահանայս ի մէնջ, անուն միոյն Մարկոս, և երկրորդին Սոպհենէս, որք ապա յետ այնորիկ առին զպատիւ վարդապետական ի նմանէ, զի անդ էաք մեք ի վարժս կրթութեան Դրոց Սրբոց ընդ աւուրսն ընդ այնոսիկ, և էջ առ նոսա՝ ես գլխաւորն կայր հանդէպ այրին ի վերայ բլրակի միոջ, և հովանի ունէին ի վերայ գլխոյ նորա վասն տօթոյն, զի ի տօնի Վարդավառին արգելին զմեզ։ Իբրև մօտ եղեն ի զօրագլուխն, որք տանէին զնոսա՝ երից անգամ հրամայեցին երկիր պագանել նոցա ի վերայ ծնգաց իւրեանց, իբրև ուղտ ի ժամ ճգելոյն. զի այնպէս էր սովորութիւն նոցա։ Ես

---

22 Անընդունելի է ասել, թե «Որովհետև Կիրակոս հմուտ էր թաթար կամ տաճիկ լեզվին, առանձին ուշադրության կարժանանա թաթար խմբապետին առչև, որ զինքը կորոշի «ի պէտս դպրութեան՝ գրել Պուղթ և ընթեռնուլ» (Հ. Ոսկյան, Հովհաննես Վանական և յուր դպրոցը, էջ 94)։ Թաթարների լեզվից մի շարք բառեր բերելիս՝ Կիրակոսը գրում է. «Այլ և խօսք նոցա խժականք և անծանօթք ի մէնջ ... Ես զայլ այսպիսի խժական անուանս, զոր ի բազմաց մեզ անծանօթք. իսկ այժմ ակամայ ծանուցեալք»։—Կիրակոսը միայն գերության ժամանակ կարող էր սակավ ինչ սովորել թաթարերեն։ Նա գրագրությունը չպիտի անպատճառ և տաճիկ (=արաբերեն) լեզվով աներ, և ոչ թե հայերեն, քանի որ Հայաստանում էին գտնվում թաթարները և գործ ունեին հայերի ու հայ իշխանների հետ։ Նրանք անպայման ունեցել են իրենց թարգմանները հայերի հետ հարաբերության ժամանակ։

իբրև եկին առաջի նորա, հրամայեաց յարենլս կոյս երկիր պագանել խաղանին՝ արքային իւրեանց. և ապա մեղադիր եղև, թէ «իմ լուսալ է զքէն, թէ ա՛յր իմաստուն և երևելի ես, և կերպարանք քո յայտ իսկ առնեն զքեզ». զի ա՛յր բարի էր տեսլեամբ, հանդարտ օրինակաւ, փառաւոր մորուօք, ծաղկեալ ալեօք. «դու իբրև լուար զհամբաւ գալոյ մերոյ ի սահմանս ձեր, ընդ կ՚ը ո՛չ երկիր ընդ առաջ մեր սիրով խաղաղութեամբ, և ես հրամայէի պահել զամենայն, որ ինչ քոյ էր, անվնաս՝ ի մեծէ մինչև ի փոքր»։ Պատասխանի եւս վարդապետն և ասէ. «մեք զբարեմտութիւն ձեր ո՛չ գիտէաք, այլ երկիւղիւ և դողմամբ պաշարեալ էաք յահէ ձերմէ, և լեզուիդ անտեղեակ, և ի ձէնջ ոչ ոք եկն առ մեզ կոչել զմեզ առ ձեզ, վասն այս էր դանդաղումն մեր. արդ իբրև կոչեցիք, եկաք առաջի ձեր. մեք ո՛չ դինուոր եմք և ո՛չ ընչից տեարք, այլ արք պանդուխտք և օտարականք, ժողովեալք յայլ և այլ աշխարհաց վասն ուսման ինչ մերոյ պաշտամանս. արդ աւասիկ առաջի ձեր եմք, զոր ինչ կա՛մ է ձեր՝ արարէ՛ք ընդ մեզ, թէ կենօք և թէ մահուամբ»։ Յայնժամ ասէ ցնա իշխանն. «մի՛ երկնչիր». և հրամայեաց նոցա նստիլ առաջի իւր, և բազում հարցեալ զնա վասն բերդին և իշխանին Վահրամայ, թէ ո՞ւր իցէ, զի կարծէր զնա, թէ մարմնական ինչ իշխան իցէ ի վերայ երկրին։ Եւ իբրև ասաց՝ զոր ինչ գիտէրն, և զայն ևս՝ թէ գործակալ ո՛չ ինչ իցէ նա մարմնական, ապա հրամայեաց նմա, զի իջուսցէ զմարդիկն յամրոցէ անտի աներկիւղս, և խոստացաւ իւրաքանչիւր յիւրում տեղւոջ կալ իւրովք վերակացուօք, և յանուն նորա շինեալ զգիօղսն և զագարակսն։

Ապա ձայնեցին առ մեզ երիցունքն, որք էին զհետ վարդապետին, թէ իջէ՛ք վաղվաղակի, և զոր ինչ ձեր է՝ բերէ՛ք ընդ ձեզ։ Եւ մեր իջեալ դողութեամբ առ նոսա, որպէս գառինս ի մէջ գայլոց, երկուցեալք և զարհուրեալք, ակն ունէաք մահու, ասելով զհաւատոյ խոստովանութիւնն, որ ի սուրբ Երրորդութիւնն. յառաջ քան զիջանելն մեր յայրէ անտի հաղորդեալ էաք պատուական մարմնոյ և արեան Տեառն. և տարան զմեզ ի փոքրադոյն աղբիւր մի, որ կայր ի մէջ վանիցն, և եռուն մեզ ջուր, զի յոյժ ծարաւի էաք զաւուրս երիս. և ապա տարան արկին զմեզ ի տեղի ինչ յարգելանի և զաշխարհականս ի գաւիթս եկեղեցւոյն. և ինքեանք շուրջ զմեօք պահէին զմեզ զգիշերն, զի ընդ երեկս էր օրն, և ի վաղիւ անդր հանին զմեզ ի գլուխ վանիցն ի բարձրաւանդակ տեղի ինչ, և խուզեալ առին որ ինչ կայր առ ումեք, որ պիտոյ էր նոցա. և որ ինչ յայրի անդ էր, և որ ինչ սպասք էր եկեղեցւոյն կամ շուրջառ, կամ այլ անօթ ինչ, կամ խաչ արծաթի, և երկու աւետարանս ընդելուզեալ արծաթով, զայն եռուն ցվարդապետն, զոր յետոյ առին ի մէնջ եւ ընտրեալ ի մէնջ արս, որք կարող էին շրջիլ ընդ նոսա, և զայլսն հրաման եռուն տանել ի վանսն և ի գիւղ անդր, և վերակացու թողին ինքեանց, զի այլք մի՛ խուզեսցեն զնոսա։ Հրամայեաց և վարդապետին կալ ի վանս անդր, և եղբօր որդի մի էր նորա քահանայ, Պօղոս անուն, նմա հրամայեաց գալ ընդ մեզ զկնի նորա։ Իսկ վարդապետն սուրբ խնայեաց յիղբօր որդին իւր, զի մանուկ տիօք էր, ինքն եկն զկնի նորա, յուսացեալ թէ հնարիցէ և զմեզ փրծուցանել։ Եւ շրջեցուցեալ զմեզ զկնի իւր աւուրս բազումս նեղութեամբ և տառապանօք, հետի՛ և բոկ ևս, և որք կարզեալ էին պահել զմեզ, արք պարսիկք էին ծարաւի արեան քրիստոնէից, նոքա առաւել կեղեքէին զկեանս մեր ամենայն տառապանօք յուղեգնացութեան, այնքան ստիպմամբ տանէին զմեզ՝ որպէս ղերիվարս յասպատակի։ Եւ թէ դէպ լինէր ումեք վասն տկարութեան մարմնոյ, կամ խեղութեան սակաւ մի կասել ի դնացից, անխնայ ջարդէին զկառափունսն, և ծնծղէին զմարմինսն գանալից մինչև զի զփուշս անգամ ոչ կարէին հանել ոտից՝ թէ ելանէր ընդ նա, և ո՛չ ջուր ըմպել ոք կարէր վասն ստիպողացն։ Եւ իբրև իջանէին, տանէին՝ լնուին զմեզ ի տունս նեղս, և ինքեանք շուրջ նստեալ պահէին, և ո՛չ տային թոյլ ումեք ելանել յարտաքս ի պէտս կարեաց մարմնոյ, այլ ի նոյն տունս անցուցանէին զպէտսն, և ի նմին ագանէին զլոլով աւուրս։ Վասն որոյ ո՛չ կարեմ ընդ դրով արկանել դամհնայն նեղութիւնսն, որ անցին ընդ մեզ, և զվարդապետն ո՛չ թողին առ մեզ, այլ ուրո՛յն հեռի ի մէնջ յայլս ոմանս յանձնեցին զգուշութեամբ պահել։ Ապա առին և զիս յընկերաց իմոց զկնի իւրեանց ի պէտս դպրութեան գրել թուղթ և ընթեռնուլ. զօրն զկնի իւրեանց շրջեցուցանէին, և երեկոյին հասեալոյ բերէին՝ տային զմեզ ի վարդապետն նրաշխաւորութեամբ. և դարձեալ գային առնուին հետի՛ կամ մերկ ի վերայ տրմուղ գրաստոյ. և այսպէս առնէին զօրս բազումս։

Իսկ իբրև անցին աւուրքն ամարանի, և եկն եղանակն աշնանալին, և հանդերձեալ էին հեռանալ նոքա ի ծանօթ յաշխարհէն մերմէ ի հեռաւոր օտարութիւն. ապա զանձինս ի մահ եդին ամենեքեան, և սկսան առ սակաւ սակաւ փախչել ի գիշերի՝ ուր և կարասցեն զերծանիլ։ Այսպէս եղև շնորհօքն Քրիստոսի ամենեցուն զերծանիլ՝ բա՛ց յերկուց երիցանց, որք ի տունչեան կամեցան գաղտ երթալ, և ո՛չ կարացին զերծանիլ. զոր ըմբռնեալ ածին ի բանակն և սպանին առաջի մեր յերկիւղ և ի զարհուրումն մեզ. զի այսպէս առնէին ամենայն փախուցելոց։ Ապա յաւուր միում ասէ ցիս վարդապետն սքանչելի. Կիրակո՛ս. և ասեմ՝ զի՞նչ հրամայես վարդապետ։ Ասէ ցիս. որդեակ, գրեալ է թէ յորժամ ի նեղութիւնս անկանիցիք, համբերեցէ՛ք. արդ պարտ է մեզ զբանս գրոյն յանձինս մեր ցուցանել. զի ո՛չ լաւ եմք մեք քան զսուրբսն առաջինս զԴանիէլ և զԱնանիանսն և զնզեկիէլ, որք ի գերութեանն իւրեանց զբարեպաշտութենէ բուռն հարին, մինչև Աստուած ա՛յց արարեալ, փառաւորեաց զնոսա ի գերութեան անդ. արդ և մեք կացցուք խնամոցն Աստուծոյ, մինչև ինքն ա՛յց արասցէ մեզ, որպէս և կամի։ Եւ ասեմ. որպէս հրամայես, հա՛յր սուրբ, այնպէս արասցուք։ Դէպ եղև ապա յաւուր միում գալ իշխանին այնմիկ, որ գերեաց զմեզ ի տեղին՝ ո՛ւր էաք մեք ի պահեստի. և տեսեալ զմեզ՝ խոտորեցաւ առ մեզ. և մեր ընթացեալ ընդ առաջ նորա, ասէ ցմեզ. զի՞նչ պիտոյ է ձեզ. մի թէ քաղցե՞լ էք. տաց ձեզ միս ձիոյ ի պէտս կերակրոյ. զի ինքեանք անխտիր ուտեն զամենայն սուրբ և անսուրբ անասունս՝ այլ և զմուկն և զամենայն սողունս։ Ասէ ցնա վարդապետն. մեք ձիոյ միս ո՛չ ուտեմք, և ո՛չ զայլ կերակուրս ձեր. թէ կամիս շնորհ առնել մեզ, արձակեա՛ զմեզ ի տեղի մեր, որպէս խոստացար. զի ա՛յր ծեր եմ ես և հիւանդոտ, և ո՛չ եմ քեզ ի պէտս ինչ գործոյ զինուորութեան, կամ հովուութեան, կամ այլ ինչ ի պէտս ձեր։ Ասէ ցնա զօրագլուխն. յորժամ եկեսցէ Ջուչուղայն, հոգացից վասն այդորիկ. և էր Ջուչուղայն այն վերակացու տանն նորա. և է՛ր երթեալ ընդ զօրս նորա յաւար. այսպէս կացաք առաջի նորա երկիցս և երիցս, և նա զնոյն պատասխանէր։ Ապա եկն այրն ի ճանապարհէն, և կոչեցին զմեզ ի դուռն իշխանին. և յղեաց նոյն այր առ մեզ հանդերձ թարգմանաւ, ո՞չ ապաքէն ասէք դուք, թէ ինչս տալ մեռելոցն օգուտ է հոգւոյ նորա. արդ մեռելոցն օգնէ, զկենդանիս ընդէ՞ր ո՛չ փրկէ. տո՛ւր զոր ինչ ունիս, և գնա՛ զոգի քո, և երթ՝ նիստ ի տան քո։ Պատասխանի ետ վարդապետն և ասէ. մեր ինչքն ա՛յն էին, զոր առէք դուք խաչքն և աւետարանքն. բայց յայնմանէ մեր այլ ոչ ինչ գոյ։ Ասէ ցնա այրն. եթէ ո՛չ ունիս ինչս, և ո՛չ է հնար քեզ երթալ աստի։ Պատասխանի ետ վարդապետն. ճշմարտութեամբ ասեմ քեզ, մեր ո՛չ ինչ կայ, և ո՛չ գին աւուր միոյ կերակրոյ. բայց թէ կամք են ձեզ՝ առաքեցէ՛ք զմեզ ի մի ի բնդրիցս յայսցանէ, որ շուրջ կան զմեօք, և բրիստոնեայքն որք կան ի նոսա, գնեն զմեզ։ Իսկ նոցա հատեալ գինս ծանունս ի վերայ նորա, և դարձեալ թեթևացուցին յայնմանէ, և առաքեցին զնա ի բերդն, որ կոչի Գագ։ Իսկ նա խնդրեաց զմեզ գնոյ, զի ընդ իւրն և զմերն տացէ, և ո՛չ ետուն. ասեն՝ սա ի պէտք է մեզ թուղթ գրելոյ և ընթերցման, թէպէտ բազում գինս տայք, ո՛չ տամք զսա։ Եւ բազում արտասուօք բաժանեցաք ի միմեանց. և ասէ ցիս. որդեա՛կ, ես երթամ անկանիմ առ ոտս Սրբոյ Նշանին, որ յանուն սրբոյն Սարգսի, խնդրել նովաւ ի Տեառնէ վասն քո, և այլ եղբարցդ՝ որ կան ի ձեռս անօրինացդ. զի թերևս զերծուսցէ և զձեզ Աստուած գթութեամբն իւրով։ Չի էր ի Գագ խաչ մի սքանչելագործ առ ւսմենայն նեղեալս, և մանաւանդ առ գերիս. զի որք ապաւինէին բոլորով սրտիւ, ինքն իսկ սուրբ վկայն Սարգիս բանայր զդուռն բանտից և արգելանաց, և լուծանէր զերկաթն, և առաջնորդէր մարմնաւոր տեսլեամբ ի տեղիս իւրեանց. և համբաւ սքանչ՛ելացն տարածեալ էր ընդ ամենայն ազգս, զոր կանգնեալ ասէին սրբոյն Մեսրոպայ վարդապետին մերոյ։

Եւ եղև, որպէս ասաց վարդապետն. գնեցին զնա ութսուն դահեկանի. և իբրև տարան զնա, ի նմին աւուր ասէ ցմեզ Մօլարն. մի՛ որոմիր ընդ գնալ մեծ երիցուն. զքեզ վասն այնորիկ ո՛չ թողաք ընդ նմա, զի պիտանի ես մեզ. մեծացուցից զքեզ իբրև զմի ի մեծաց իմոց. և թէ կա՛յ քո կին, բերից զնա առ քեզ. և թէ ո՛չ՝ ի մէնջ տաց քեզ։ Եւ առժամայն ետ մեզ վրան մի, և երկուս պատանիս սպասաւորս մնզ, և ասէ. ի վաղիւն տաց քեզ ձի, և ուրախ արարից զքեզ, միամիտ կացջիր. և գնաց ի մէնջ։ Եւ խնամօքն Աստուծոյ պա-

տահեաց մեզ ի նմին դիշերի գաղտագնաց լինել ի նոցանէ և զերծանիլ. և եկաք ի տեղի անդեան մերոյ ի վանքն՝ որ կոչի Գետիկ. և նա աւարեալ էր ի նոցանէ, և այրեալ շինուածքն որ ի նմա, և անդ դադարեցաք։

3. Վարդան Արևելցի։—*Վանական վարդապետի նշանաւոր աշակերտն է սա, իր ժամանակի համբավաւոր գիտնական վարդապետը։ Նրան կոչել են և «Մեծն Վարդան» ի տարբերութիւն ժամանակակից նուիրնանուն ուրիշ վարդապետների։ Նրանց գործերը սխալմամբ մեկը մյուսին են վերագրված. Վարդան Արևելցու պատմական աշխատությունն էլ համարել են մի ուրիշ վարդապետինը—Վարդան Բարձրբերդցունը*[23]*։ Մեծն Վարդանի ծննդյան տեղը հայտնի չէ. նրա Արևելցի կոչումից երևում է, որ նա Արևելյան Հայաստանից է եղել, հավանորեն Գանձակ քաղաքից կամ նրա շրջանակներից։ Մնված է մոտ 1200—1210 թվականների մեջ։ Վանական վարդապետի մոտ ուսանելիս՝ նրա աշակերտակիցն եղել է Կիրակոս Գանձակեցին։ Սա պատմում է, որ Վարդանը գնում է Երուսաղեմ ուխտ, վերադառնալիս մտնում է Կիլիկիա, լինում է Հեթում արքայի և նրա եղբայրների մոտ։ Ապա նա գնում է Կոստանդին կաթողիկոսի մոտ, որ նրան տեսնելով՝ շատ ուրախանում է, «և առ իւր պահեալ յոլով ժամանակս, սիրով կապեալ ընդ նմա, և զոր ո՛չ կամէր երբէք մեկնիլ ի նմանէ»*[24]*։ Կաթողիկոսը շրջաբերական թուղթ և եկեղեցական կանոններ է ուղարկում «իմաստուն և հանճարեղ վարդապետ» Վարդանի ձեռով Հայաստանի քաղաքներն, ավաններն ու վանքերը և երևելի իշխաններին։ «Եւ եկեալ վարդապետն Վարդան և որք ընդ նմա առաքեալքն ի կաթուղիկոսէն յԱրևելս, և շրջեալ ընդ գաւառս Հայոց, յեպիսկոպոսս և ի վանորայս և յիշխանս, և տուեալ ամենեցուն զհրամանս կանոնականս, և պահանջեալ յամենեցունց ձեռագիր հաւանութեան սահմանին եղելոյ»։ Վարդանը բազմաթիվ եպիսկոպոսների և իշխանների հավանության գիրը, նրանց ստորագրությամբ, ուղարկում է կաթողիկոսին՝ Հռոմկլա 1246 թ., «և ինքն եկեալ ի Կայանոյ ի միայնարանն իւր, զոր սուրբ Անդրէ կոչէին, հանդէպ անառիկ բերդին Կայանոյ, և անդ դադարեալ յուսուցանել զբազումս, որք աշակերտէին նմա, վարդապետական բանին»*[25]*։*

Վարդանը, սակայն, հարատև մի վայրում չի մնում, այլ աստանդում է զանազան վանքեր—Խորվիրապ, Թեղենյաց վանք, Սաղմոսավանք, Հաղբատ, Հառիճո վանք, Աղջոցվանք, ամեն տեղ էլ ուսուցանելով և գրականությամբ պարապելով։ Նա ունեցել է բազմաթիվ աշակերտներ, որոն-

---

23 Մկրտիչ Էմին, *Մեծին Վարդանայ Բարձրբերդցւոյ Պատմութիւն տիեզերական, Մոսկուա, 1861։* Կա և երկրորդ հրատարակությունը՝ Վարդան վարդապետ Մեծն, *Համառոտ պատմութեան Վարդանայ վարդապետի, լուսաբանեալ ի Վենետիկ, 1862. հրատարակողների «Յառաջաբանը»։* Տե՛ս նաև՝ Գ. Զարբհանալյան, *Հայկական Մատենագիտություն, Վենետիկ, 1883, էջ 639 և հետ.։*

Բարձրբերդը գտնվել է Կիլիկիայի սահմաններում։

24 Կ. Գանձակեցի, *Պատմութիւն Հայոց, էջ 278—296։*

25 *Անդ, էջ 295։*

ցից շատերը նույնպես աչքի ընկնող գործունեություն են ցույց տվել. նրանցից մեկն է եղել և հայտնի գրող Հովհաննես Երզնկացին[26]։ Նա իր բազմակողմանի հմտությամբ և անխոնջ վաստակով անվանի և հռչակավոր է դառնում. 1264 թ. Հուլավու էլղանը կանչում է նրան իր մոտ. նա գնում է. վերադառնալուց հետո շարունակում է իր սովորական գործը մինչև իր մահը՝ 1271 կամ 1269 թ.։

Այս մեծ և արդյունաշատ ուսուցչի գրական վաստակն էլ մեծ է եղել.—մեկնություններ, ներբողներ, հոգևոր երգեր, բազմաթիվ մանր երկեր, ինչպես են՝ «Յաղագս մեկնութեան քերականին», «Թուղթ... առ Հեթում թագաւորն», և այլն. նաև թարգմանություններ[27]։ Կան երկեր էլ, որոնց նրանը լինելը կասկածելի է, կամ թե վերագրված են նրան։ Այդպիսիներից պետք է հիշել Վարդան աշխարհագրի «Աշխարհագրութիւն նորոգ թարգմանչին և երկրորդ լուսաւորչին Վարդանայ վարդապետի», որ ավելի ուշ ժամանակի դործ է[28]։

Նրա ամենակարևոր ոչ-կրոնական աշխատությունն է վերևում հիշված Պատմությունը, որ իբրև գրական երկ՝ շատ ցած է մնում Կիրակոսի պատմությունից։ Դրա մեջ Վարդանը չանացել է օգտվելով հայ պատմագիրներից և բազմաթիվ այլ աղբյուրներից, հանդես բերել իր բազմակողմանի հմտությունը, հորինելով ոչ թե հայոց պատմություն, այլ «Պատմութիւն տիեզերական»։ Իր «Նախերգանքի» մեջ խոսում է առաջ «անսկիզբն» ու «մի և միակ է»-ի և նրա ստեղծագործության, երկնի և երկրի ու հրեշտակների, բնության և այլի մասին, ոչ միայն ըստ Ս. Գրքի, այլև «որպէս ասեն իմաստունք», այլև «ըստ Արիստոտելի», կամ «որպէս ասեն գիտողք»։ Իր ժամանակակիցների համար, ըստ նրանց հայացքի, հետաքրքիր մի կրոնագիտական ամփոփ տեսություն է այդ։ Բուն պատմությունն սկսում է Ադամից ու մարդկային ազգի աճելությունից ըստ Աստվածաշնչի, մեջը հյուսելով նաև գիտնականների ստեղծած այլևայլ զրույցներ, ավանդություններ ու բացատրություններ, այսպես, օրինակ, Բաբելոնի աշտարակաշինության զարդարուն զրույցը։

«Եւ սկսան ապա շինել զաշտարակն յառաջին ամին Ռագաւու՝ ասեն, ոսկեղէն և արծաթեղէն սարողօք, շուրջն դնելով աղիւս՝ խորովեալ հրով զանկեալ բոով, կրով և կպրով, արձակահիմն խորամէջ լայնափողոց բացեալ պատուհանաւք լուսաբերօք. ասեն և ակունս լուսարձակս դնել առ պատուհանաւքն։ Անխոնջ վաստակօք զամառն և զձմեռն գործէին և հողն

---

26 Հ. Ոսկյան, *Հովհաննես Վանական և յուր դպրոցը*, էջ 47։ Աղբյուրը՝ «Տաշ. Յուց.», էջ 16. «Հօրն մերոյ Վարդանայ վարդապետի»։

27 Մխքայել Ասորու Պատմության թարգմանությունը, որի «Յիշատակարանը» տեսնել Մաղաքիա աբեղայի «Պատմութիւն վասն ազգին նեստորաց», Ս. Պետերբուրգ, 1870, էջ 55—63։

28 Վարդան Արևելցու և նրան վերագրված երկերի ու նրանց տպագրությունների և ձեռագրերների մասին՝ Հ. Ոսկյան, *Հովհաննես Վանական և յուր դպրոցը*, էջ 53—89։ Այլև Գ. Ջարբհանալյան, *Հայկ. հին դպր.*, Ա, էջ 738 և հետ.։

ձեռն տայր. և շար իմն մրջմանց՝ յամենայն կողմանց ելողաց և իջողաց այր զայր գրգռէր և կին զընկերն իւր։ Եւ ոչ ոք ասէր, թէ ես շատ գործեցի քան զքեզ, այլ թէ դու շատ գործեցեր քան զիս, զի դեռ անախտ և անցաւ ունէին զընութիւն։ Եւ մինչև ցքառասուն ամն Ռագաւու ոչ առին պարապ գործոյն՝ մինչև հասուցին յօդն անտես, յորձուտն և մղձկուտն և ի սատակողն, յոր թռչուն ոչ վերանայ, և թէ ձկտի՝ թևակիզեալ անկանի։ Եւ ասեն, թէ զոսկին ի յատակացն սկսեալ տարան ընդ մէջն մինչև ի վեր և հալէր ի ջերմութենէն, և մարդիկն չանային ևս հնարիւք անկէզ մնալ. և ոչ կասեալ ի գործոյն. մինչև ինքն Տէր ողորմեալ դադար տայր առնուլ յանօգուտ չանիցն։ Եւ գտանին զրոյցք ի տանն Նեբրովթայ, եթէ նախ հրեշտակ եկն առ Նեբրովթ, որ իշխան էր և որսայր շինողացն կերակուր, և ասէ ցնա. «Ես եմ հրեշտակ Աստուծոյ՝ կողմապետ արևելից.—այսպես ասէ Տէր Աստուած երկնի և երկրի. «լուեցէք դադարեցէք ի գալոյդ առ իս. զի ոչ կարէք. այլ ես եկից առ ձեզ ի ժամանակի և տաց ձեզ սանդուղս, որով կարէք գալ և դուք առ իս»։ Եւ ոչ լուան հրեշտակին։ Ապա ինքն ասաց ցէակիցսն իւր. «Եկայք՝ մեք իջցուք և բաժանեսցուք զլեզուս նոցա»։ Եւ զի ստեղծուածք ձեռաց Նորա՝ ի ցասմանէ զարհուրեալք, փախչէին առ նա, ոչ պատժեաց զնոսա, այլ հոտով դրախտին արբեցոյց զնոսա, զի հանդէպ կայր դրախտին գլուխ բրգանն։ Եւ այսպէս մխիթարեալք զմայլմամբ յանճառելի բուրմանէ հոտոյն՝ մոռացան զառաջին լեզուն։ Եւ չարար զնոսա վաստակ միւսանգամ քակելով, այլ հողմոյն հրամայեաց գործ, և ոչ զոք սպան ի նոցանէ՝ զի ոչ շրջեաց, այլ հոսեաց։ Եւ շատ ինչ բարի եղև. մի՝ զի ծանեան մարդիկ զիւրեանց տկարութիւն, և դարձեալ՝ զի պատճառք իմաստից և գեղեցկութեան ի խոշոր լեզուէն առաջնոյ և ի կոպտաձև՝ փափկագոյն հելլենացւոց և սաստկագոյն հռովմայեցւոց, հոնն սպառնական և ասորին աղաչական, պարսիկն պերճական և ալանն գեղեցկաձև, գութն ծաղրական, եգիպտացին խարափաձայն և հնդիկն ճճուող, և հայն ևս ամենազարդ և համեղական. և որպէս ազգի ազգի գոյնք գեղեցկութիւն առնեն և զանազանութիւնք հասակաց, այսպէս և լեզուաց զանազանութիւնք։ Եւ առաջին լեզուն մնաց առ Եբերայ, որ ոչ միաբանեցաւ ընդ այլսն։ Եւ որպէս մեղքն բաժանեաց յերկու տուն զմարդիկ՝ ի Կայենին և ի Սեթայն, նոյնպէս և աստ երկու եղեն ազգ մարդկան՝ Եբեր և ՀՌ տանուտէրքն»։

Հետաքրքիր է, որ ինչպես հավատացել են, թե սկզբում մեկ լեզու է եղել և հետո է առաջացել լեզուների զանազանությունը, նույնպես՝ թե աշխարհի վերջում պիտի լինի մի ազգ ու մի լեզու, բոլոր մարդկությունը մի ընդհանուր լեզու պիտի ունենա. «ի յարութեան հասարակ ի յԵբերայն խօսի» [ազգ մարդկան][29]։ Վարդանը, սակայն, համաձայն է մի ուրիշ կարծիքի. նա անմիջապես կցում է. «բայց զայս է ասել, եթէ ցեղացեղ և

29 Եբեր կամ Հեբեր է, ըստ Ս. Գրքի, Աբրահամ Նահապետի նախնիներից մեկը, որի անունով, ինչպես ենթադրում են, հրյաները կոչվել են նաև Եբրայեցի։

բազմակարօտ մեր բնութիւնս և յոգնանուն երբ պարզի և մաքրի, անկարօտ լինի՝ զլեզուս հրեշտակաց առնու, ասէ սուրբն Եղիշէ, որով ընդ աստուած և ընդ միմեանս խօսին». «բայց այս պետք է ասել, որ երբ մեր [մարդկային] բազմացեղ, բազմակարօտ և բազմանուն բնությունը զտվի ու մաքրվի, անկարօտ դառնա, ապա նա,—ասում է սուրբ Եղիշեն,—կունենա հրեշտակների լեզուն, որով կխոսեն [մարդիկ] աստուծու և միմյանց հետ»։ Այսպես է հին լեզվաբանական տեսությունը լեզուների ծագման և վախճանի մասին։

Աշտարակաշինությունից հետո անում է զանազան ազգերի, այսպես ասած, համաժամանակյան պատմությունը մեծ համառոտությամբ, հաճախ լոկ անունների ու տարիների թվարկությամբ։ Կարևոր տեղ է բռնում, հարկավ, հայոց պատմությունը, Հայկ ու Բելից սկսած մինչև վերջը։ Հայերի հետ երևան են գալիս՝ հրյաներ, պարսիկներ և այլն, հետո նաև բիզանդացիք, արաբներ, թուրքեր, վրացիք, թաթարներ և ուրիշներ։ Քանի մոտենում է 11-րդ դարին, ավելի ու ավելի հարստանում է պատմվածքը ընդարձակ տեղեկություններով և դառնում է ժամանակագրություն։ Նրա հաղորդումների մեջ կան շատերը, որոնք ուրիշ աղբյուրներից հայտնի չեն և ունին պատմական նշանակություն։ Կան և այնպիսիները, առանձնապես հին պատմության վերաբերյալ, որոնք գիտական հերյուրանքներ են, կամ անարժեք զրույցներ, որոնց նա՛, իր ժամանակի այդ գիտնականը, նույնպես հավատ է ընծայել։

Թաթարների առաջին հարձակումներն, ըստ Վարդանի, տեղի են ունենում 1221 թ.։ Սպասելի էր, որ այդ տարիներից սկսած նա մանրամասն պատմություն գրեր իբրև եղելությունների ժամանակակից, բայց, ցավոք, նա չի թողնում համառոտ ժամանակագրելու եղանակը։ Իր այդ վարմունքն արդարացնում է ասելով, թե որովհետև 1236—1365 թթ. մանրամասնաբար պատմել են Վանական վարդապետն ու Կիրակոսը, նրանց գրածները «մեք ոչ համարձակեցաք երեքկնել կամ բազմաբանել, այլ համառօտ բերեալ միայն զթիւ ժամանակին նշանաւոր իրաց և գործոց յիշատակաւք ի լրումն մերոյ գործառնութեանս՝ յորով ժամանակօք սկսեալ և թերի թողեալ, պատկառելով ի գրողացն պատուոյ, զորս վերագոյն յիշեցաք»։ Մանրամասն պատմում է միայն յուր տեսակցությունը Հուլավու էլղանի հետ[30]։ Այնուհետև հիշատակելով մի երեք դեպք, իր գործը վերջացնում է Կոստանդին կաթողիկոսի մահով, 1267 թ.։ Բերենք հիշված տեսակցության կտորը։

«Յեօթն հարիւր երեքտասան թուին կոչեաց զմեզ Հուլաւու էլղանն ի ձեռն շնորհաւոր կոչեցեալ առն փառաւորելոյ յայնմ ժամանակի յամենեցունց և աւելի յաշխարհակալացն՝ ի Բաթու կուսակալէն հիւսիսոյ, ուր չոգաւն և պատուեցաւ նախ, այլ ի Հուլաւու էլղանէն, որ տարաւ իւրով ծախիւք և կրաստիւք զմեզ և որք ընդ մեզ էին վարդապետք եղբարք մեր՝

30 «Մեծն Վարդ. Պատմ. Տիեզ.», էջ 204։

Սարգիս և Գրիգոր և աւագ երէցն Տփխեաց տէրտէրն։ Եւ տեսաք զմեծն զայն ի մեծի աւուրս ամսամտի և տարեմտի իւրեանց՝ յամսեանն յուլիս ըստ հռովմայեցւոց և ըստ մեզ արաց։ Եւ էր նոցա աւուրք ուրախութեան իբր լուսին մի, և կոչէին զաւուրսն զայնոսիկ Խուտաբայ՝ իբր խորհրդատօնս յորս այլ ղանքն՝ ազգայինք Ջանկզ ղանի, առ մեծն եկեալ խորհէին, զոր ինչ պատշաճ տեսանէին հանդերձ ամենայն աւագանօքն իւրեանց, ամենեքեան նոր զգեցեալ՝ յամէն աւուր որիշ գունով փոփոխս։ Անդ լինէին և ամենայն հնազանդեալքն իւրեանց շատ և երևելի նուիրօք՝ թագաւորք և սուլտանք, որպէս և ի մեր տեսն թագաւորն Հայոց Հեթում և թագաւորն Վրաց Դաւիթ և բրինձն Անտաքու և սուլտանք ի Պարսից կողմանց յոլովք։ —Եւ ի տեսանել զմեզ՝ ծունր կրկնել ոչ ետուն և ոչ չոքել ըստ սովորութեան իւրեանց, իբր թէ արքայունք Աստուծոյ միայն երկրպագեն։ Գինի ետուն օրհնել և ի մեր ձեռաց առնուլ։ Եւ խոսք զոր ինչ հրամայեաց առաջին այս է.—

«Կոչել եմ զքեզ, որ տեսանես զիս և ճանաչես և ի սրտաց աղօթես վասն իմ». և աւելորդ է թերևս զամենայն գրել։ Շատ խօսեցաւ, և մեք տուաք պատասխանի։ Եւ նստուցին զմեզ, և գինի ետուն, և շարական պաշտեցին եղբարքն որ ընդ մեզ, և Վրացիքն զիւրեանց պաշտօնն, և Ասորիք և Հոռոմք զիւրեանցն։ Յայնժամ տեսին զեկեալսն յամենայն կողմանց՝ մինչ ասել էլղանին, «թէ զքեզ միայն եմ կոչեցեալ, զի՞նչ է այս նշանս, որ ոչ յառաջ և ոչ յետ, այլ մի աւուրք յամենայն կողմանց եկին ընդ քեզ տեսանել աւրհնել զիս»։ Եւ յառաջեաց հրամայեաց ինքն. «թուի թէ նշան է, որ Աստուծոյ սիրտն լաւ է ինձ»։—Ասացաք. «զմեզ այլ կալաւ զարմանք և պատճառք զոր դուք հրամայեցիք»։—Ապա հրամայեաց, «թէ ծածուկ բան ունիմ առ քեզ»։

Եւ յաւուր միում արար անապատ յոյժ.—և հեռի կացուցեալ զամենայն բանակն՝ և երկու արամբ միայն խօսեցաւ ընդ մեզ յերկար՝ յիւր ծննդենէ հետէ և ի մօրէ, որ քրիստոնեայ էր՝ ասէ. «Եւ թէպէտ դայեակ սնուցանէ զտղայն, իբր ի հասակ գայ՝ զիւր մայրն սիրէ. չենք օտար ի սիրոյ քրիստոնէից—զոր ինչ ունիս ասելոյ՝ ասա». և բռնեալ էր զիմ ձեռքս։ Եւ մեք ասացաք զինչ Աստուած երեսս ասել բան, «թէ որչափ ի վեր ես դու քան զայլ մարդիկ՝ մօտ ես յԱստուած։ Աստուծոյ աթոռն արդար դատաստանաւ է հաստատ։ Ամէն ազգի տուեալ է Աստուած տէրութիւն աշխարհի և փորձեալ։ Մինչ ի քեզ աշխարհաւեր են լեալ, և աղքատաց՝ անողորմ՝ ծանր շալակ են դրեալ. նոքա հոգոց են հանեալ և լացեալ առաջի Աստուծոյ.— Աստուած առեալ է զիշխանութիւնն և յայլ ազգ տուեալ։ Թէ դուք աշխարհաշէն լինիք և աղքատաց ողորմած՝ ի ձեզանէ չառնու Աստուած զոր տուեալ է, թողու առ ձեզ. և զոր տալ կամի՝ զայն այլ տայ։ Ի քո դրան հանց մարդ կացո, որ յԱստուծոյ երկնչի և զձեզ սիրէ, որ զլալով եկած տառապեալն, որ աղերս չունի և կաշառք՝ ուրախ ի տուն յուղարկէ և քեզ յիշեցնէ։ Եւ զաշխարհս տուր հանց մարդոյ, որ յստակ տեսանէ՝ կուրանայ ոչ՝ կաշառօք, և քեզ ասէ զիրաւն»։—Եւ յայս կարգիս շատ խօսեցաք։

Հրամայեաց թէ, «ի սրտումս դրի զքո խօսեցեալքդ.—ո՞նց է որ զամէն զա՛յն ասացեր, որ իմ սիրտս կայր, որ ինձ դուր թուաց։ Աստուած խօսեցե՞լ է ընդ քեզ, երևե՞լ է քեզ»։

Ասացաք թէ, «չէ՝ մենք մեղաւոր մարդ ենք. ապա զաստուածախօս մարդկանց գիրքն կարդացեալ ենք, և սիրտք թագաւորաց ի ձեռին Աստուծոյ են»։

— «Աստուած յայտնե՞լ է քեզ առանց գրոց»։—

Ապա ասացաք թէ—«առաջի Աստուծոյ խօսք մի եմ յասել, որ Աստուած լսէ և ապա դու, որ սուտ չկայ ի ներս»։

Հրամայեաց թէ—«ասա»։

Ասացի թէ—«զինչ քրիստոնեայ կայ և արքայունք ընդ ծով և ընդ ցամաք՝ ամենու սիրտն հետ քեզ լաւ են, և քեզ աղօթք են առնում»։

Հրամայեաց թէ—«հաւատալ եմ որ հանց է, ապա յԱստուծոյ ճանապարհն չեն արքայունքն՝ ինձ ինչ աղօթք առնեն. և թէ առնեն՝ Աստուած երբ լսէ, մէջում արքայունն զաստուած յերկնից յերկիրս բերէ չբերէ՝ ասացէք, որ յաստուծոյ ճանապարհն կենան և աղօթք առնեն։ Մեր եղբարքն հետ մեզ վասն այն են ի կռուիլ, որ մենք զքրիստոնեայ սիրենք և քրիստոնէութիւն կայ ի մեր տանս. նոքա տաճկասէր են և տաճկութիւն կայ ի նոցա տանն»...— Ապա ասէ ցմեզ.—«ոչխարենի է՞ր ես զգեցեալ և ոչ ոսկի»։

Եւ իմ ասացեալ թէ—«մեք մեծ մարդ և աստիճանի տէր չենք, լուկ աբեղայ միայն եմք»։

Եւ հրամայեաց թէ—«մեծացուցանեմ ղքեզ ոսկի զգեստիւ, և շատ ոսկի տամ»։

Եւ մեք ասեմք—«ոսկին և հողն մեզ մի են. մեք այլ մեծ ուզեմք, որ վայել է քո մեծութեանդ—ողորմութիւն ի վերայ աշխարհի»։

Եւ հրամայեաց թէ—«մէջում քթէք կարեմ քեզ՝ խիստ գէշ և խիստ փոքրիկ լուկ այնչափ, որ խունկ դնես եկեղեցոյն. թէ չէ եկիր՝ ի՞նչ ասեն, թէ էլղանն ո՞նց տեսաւ զքեզ։—Եւ զայդ՝ զոր ասացեր, առնեմ, և մարդիկք յղարկեմ, որ տեսանեն զաշխարհս»։

Իսկ երբ հրաման ուզեցաք գնալոյ՝ այլ կոչեաց զմեզ և խօսեցաւ, և ունէր ի ձեռին բալիշ մի և երկու հանդերձ էր կարել տուել։ Ցիշեցուցաք թէ—«էլղան՝ այդ քո դրանդ հատանի և հանդերձդ մաշի, մեք անհատանելի և անմաշելի խնդրեցաք պարգեւք»։

Եւ հրամայեաց թէ—«առաջի օրն զքո խօսքդ լմնեցի.—առլեխ եմ գրել տուել՝ կարդալ տուր, և զինչ քո սրտիդ պիտի աւելի՝ զայն այլ գրել տուր։ Եւ ի սախալթու և ի շահաբատին եմ յանձնել զերկիրդ և զքեզ—զոր ինչ ասես՝ առնեն»։

Եւ մեք շնորհակալ եղաք և ելաք»։

Այս հատվածը կարևոր է ոչ միայն իր բովանդակության, այլև ժամանակի խոսակցական աշխարհիկ լեզվի տեսակետով։ Այստեղ գտնում ենք արդեն միջին հայերենի գրեթե բոլոր ձևերը, այլև այն, որ արդեն

ծագած է եղել արևելյան աշխարհաբարի «ում» վերջավորությամբ խոնարհման ձևը, ինչպես է, օրինակ, «աղօթք են առնում», որ է «աղօթք են անում»։

4. Մաղաքիա Աբեղայի «Պատմութիւն վասն ազգին Նետողաց»[31]։ *Այս հեղինակի կենսագրության մասին միայն այն գիտենք իր գրքից, որ նա եղել է Վանական վարդապետի աշակերտ։ Հիշելով նրա մահը 1251 թ.՝ գրում է. «Փոխեցաւ ի Քրիստոս աւագ և փառաւոր վարդապետն մեր Վանականն և սուգ մեծ եթող մեզ, և ոչ թէ միայն մեզ աշակերտելոցս նմա, այլ և ամենայն աշխարհիս»*[32]*։ Բերված վերջին թվականն է «Հայոց Ջ և Ի» (=720+551=1271), երբ վախճանվել են «փառաւոր վարդապետքն Հայոց Վարդան և Կիրակոս»*[33]*։ Դրանից հետո շուտով ավարտում է նա իր աշխատությունը՝ պատմելով Հեթում Թագավորի (վախճ. 1270 թ.) որդի Լևոն Թագավորի առաջին տարիներում տեղի ունեցած մի խարդավանական դեպքի մասին և աղոթելով նրա կյանքի ու հաղթող լինելու համար։*

Գրվածքի վերջում կարդում ենք. «Կատարեցաւ պատմութիւն Տաճարիս գործելոց ԽԴ (=44) ամաց, բայց համառօտ, և ոչ ամէնն»։ Սակայն ըստ երևույթին վրիպակ կա կամ այս, կամ ներքևում բերված 1214 թվի մեջ։ Մաղաքիան իր աշխատության սկզբում գրում է Թաթարների ծագման և Ջանկզղանի մասին, ապա պատմում է նրանց հարձակումը Հայաստանի հյուսիս-արևելյան կողմերում աղվանից և վրաց երկիրների վրա և հաղթությունը «ի թուականութեան Հայոց ՈԿԳ» (=663+551=1214)։ Երեք տարի անց առնում, ավերում են Գանձակ քաղաքը, հետո և ուրիշները։ «Ահին և զքարայրն մեծ վարդապետին բազում ընչիւք իւրով աշակերտօքն»։ Հայ և վրացի իշխանները շուտով հնձարկվում են Թաթարներին և բարեկամ մնում նրանց. նույնպես և Կիլիկիայի Հայկական իշխանությունը։ Այնուհետև էլ Մաղաքիայի Պատմության նյութը մեծ մասամբ նույնն է, ինչ որ Կիրակոսինը և Վարդանինը Թաթարների մասին, բայց մանրամասնություններով մեջ տարբերվում է նրանցից։ Բացի Թաթարների վարած պատերազմական գործողություններն և նրանց կատարած ավերմունքների ու կոտորածների նկարագրից՝ այստեղ գտնում ենք նաև շատ բան ներքին կյանքի վերաբերյալ, ինչպես են՝ հարկերը, ժողովրդին հասցրած նեղություններն ու կեղեքումներն այն ժամանակ, երբ Հայերն արդեն ենթարկված էին Թաթարներին։ Եղել են նաև բարեմիտ իշխողներ, որոնցից մեկն է և Հուլավու ղանը և նրա որդին, որոնց կողմն

---

31 *«Մաղաքիա Աբեղայի Պատմութիւն վասն ազգին Նետողաց», Ս. Պետերբուրգ, 1870. կա նաև Երուսաղեմյան հրատարակություն. այստեղ այդ երկը թյուրիմացաբար վերագրված է «Վարդան պատմիչին», այսինքն Վարդան Արևելցուն։ Տե՛ս Հ. Ոսկյան, Հովհաննես Վանական և յուր դպրոցը, Վիեննա, 1922, էջ 115 և հետ.։*

32 *Անդ, էջ 12, 21։*

33 *Անդ, էջ 52։*

է Մաղաքիայի համակրությունը։ «Եւ էր Աբաղանն բարի տեսլեամբ և գեղեցիկ հասակաւ ի մեջ լ [=30) եղբարց իւրոց և յաւուրս զանութեան նորա էր առատութիւն ամենայն իրաց ընդ ամենայն երկիր»[34]։

Գրական տեսակետով Մաղաքիայի այս գործն ավելի բարձր է, քան Վարդանի «Տիեզերական պատմությունը»։ Պատմվածքի համար կենտրոն է ունեցել «Նետողաց ազգի»—թաթարների արարքները Հայաստանում և Հայաստանի սահմանակից երկրներում, միաժամանակ ուշադրություն է դարձրել նաև զուտ հայկական գործերին, և եթե երբեմն ավելի երկար է կանգ առել այս մասի վրա, բայց դարձյալ ընդհանրապես թաթարների հետ կապակցությամբ։ Նա հորինել է առանց որևէ մասերի բաժանելու, շարունակաբար, շատ պարզ ու հասարակ, միանգամայն և կենդանի ու հաճելի եղանակով, հաճախ իր ժամանակի խոսակցական լեզվով։ Շատ մանրամասն և սրտառուչ կերպով պատմել է Մսրա (Եգիպտոսի) Ֆնտուխտար սուլթանի հարձակումը Կիլիկիայի վրա, Հեթում թագավորի որդի Թորոսի սպանվելը, իսկ մյուս որդու՝ Լևոնի գերվելն ու գերությունից ազատվելը[35]։ Այս դեպքը մեծ տպավորություն է թողել ժամանակակիցների վրա և արժանացել հայոնի ժողովրդական երգին՝ «Աւաղ ըզԼեոնն ասեմ, որ Տաճկաց դուռն ընկել գերի»։

5. Մխիթար Այրիվանեցի[36]։—*Սրա «Հայոց Պատմությունն» ևս մի ժամանակագրություն է, սովորական ձևով համառոտ, սկզբից—Ադամից մինչև 1289 թ.։ Հեղինակն ապրել է 13-րդ դարում։ Այս, ինչպես և մյուս ժամանակագրությունները գրական արժեք չունին, բայց գնահատելի են իբրև պատմության աղբյուրներ։ Գրեթե բոլորի մեջ ևս երևում է նույն կրոնական և հայրենասիրական ոգին։*

6. Սմբատ Սպարապետ:—*Այս հեղինակը Հայոց Հեթում Ա արքայի եղբայրն է. ծնված է 1208 թ., ինչպես իր աշխատության մեջ*[37] *ինքը գրում է. «Ի թուին ՈՄԷ ծնաւ Սմբատ Գունդստապլն թարգմանող Պատմութեանս»։ Ռուբինյանների օրով Կիլիկիայում «գունդստապլ» (connétable —ախոռապետ) պատվանունով էին կոչվում սպարապետները։ Գրելով Կիլիկիայի Հայոց առաջին թագավոր Լևոն Բ-ի թագավոր օծվելու մասին 1198 թ. և գովելով նրան՝ ասում է*[38]. *«Եւ ուր իմանայր թէ գոյ այր իմաստուն և գիտուն, և աջող ի գործ կամ ի զինուորութիւն, կամ ի խօսս և ի պատասխանիս, յղէր և կոչէր խոստմամբ, և հանգուցանէր պարգևօք. յորոց մի ես եմ Սմբատ Սպարապետ թարգմանող տառիս և պատմու-*

---

34 *Անդ, էջ 37։*

35 *Անդ, էջ 38—47։*

36 *«Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց», Մոսկուա, 1860։*

37 *«Սմբատայ Սպարապետի եղբօր Հեթմոյ առաջնոյ արքայի Հայոց Պատմութիւն Յունաց ի Կոստանդնուպօլիս և Հայոց Մեծաց ըստ կարգի ժամանակաց», Մոսկուա, 1856, էջ 106. ձեռագրի մեջ վերնագրի վերջին բառերը եղել են՝ «Եւ յայսմ ժամանակի ժամանակագրութիւն». հրատարակիչը՝ Ոսկան Հովհաննիսյանց Երևանցի՝ փոխել է «ըստ կարգի ժամանակաց». տես «Յառաջաբան», էջ Ը։*

38 *Անդ, էջ 99։*

թեանս»։ Լևոնի մահվան ժամանակ՝ 1219 թ. Սմբատը եղել է տասնումեկ տարեկան պատանյակ և, ինչպես երևում է, աչքի է ընկել իր ընդունակությամբ և թագավորից պարգև է ստացել։ Ուրիշ տեղեր ևս ժամանակագրության ընթացքում հիշում է իրեն. այսպես՝ Կիլիկիայի վրա Հոռոմքի, այսինքն Իկոնիայի սուլթանի հարձակումների ժամանակ 1226 և 1246 թվականներին[39]*։ Հեթում թագավորն իր այս սպարապետ եղբորը 1248 թ. դեսպան է ուղարկում թաթարների խանի մոտ. «Ի թուին ՈՂԷ գնացի ես Սմբատ Գունդստապլս ի թաթարն. և թուին ՈՂԹ* [=1250 *թ.*] *դարձայ առ իմ եղբայրն Հեթում թագաւորն»*[40]*։ Այս մասին պատմում է և Կիրակոս Գանձակեցին, ասելով թե Սմբատ զորավարը շատ մեծարվելով Ղանից՝ «դարձաւ երևելի փառօք, և հաւատարիմ հրովարտակօք տուեալ նմա գաւառս բազումս և բերդս յոլովս, զոր յառաջ լեալ էր Լևոնի արքայի, և զկնի մահուանն առ ի նոցունց Ալադին Սուլտանն Հոռոմոց»*[41]*։ Սմբատը վախճանվում է 1275 թ.։ Եգիպտացիները զորքի մեծ բազմությամբ հարձակվում են Կիլիկիայի վրա. հայ զորքերը, Լևոն Գ թագավորի և Սմբատ Սպարապետի կորավարությամբ, շրջապատում են թշնամիներին և կոտորում։ Սմբատը, չնայելով իր տարիքին, անձամբ արշավասույր հետապնդում է թշնամիների փախչող զորագլուխ Ամիրային. ձիու սաստիկ արագ վազելիս՝ քաջ Սպարապետի ոտքն առնում է մի ծառի և վնասվում է։ Այլևս չկարողանալով շարունակել թշնամու հալածումը՝ նա ետ է դառնում և մի քանի օրից հետո վախճանվում*[42]*։*

Այն խառն ու խռովահույզ ժամանակներում, երբ պետք էր միշտ պատրաստ լինել զենքով դիմադրելու ամեն կողմերից ներխուժող թշնամիներին, Սմբատը ոչ միայն կորովի զորավար էր հանդիսանում, այլև խոհեմ քաղաքագետ։ Նա, ինչպես տեսանք, կարողացավ հեռավոր ճանապարհ անցնելով հաջողությամբ լուծել արտաքին քաղաքականության խնդիրը և բարեկամության դաշինք կռել թաթարական տերության հետ։ Բայց միայն արտաքուստ ապահովությունը չէր նրա հոգացության առարկան. հարկավոր էր հայկական երկիրը և ներքուստ բարեկարգ վիճակի մեջ դնել։ Ներսես Լամբրոնացին արդեն կատարել էր քաղաքական և զինվորական օրենքների հավաքումն և թարգմանություն, բայց այդ օրենքները համապատասխան չեն եղել, բավարարություն չեն տվել տեղական պահանջին Կիլիկիայում։ Այստեղ հայ պետության մեջ արդեն ընդունված էին Արևմտյան Եվրոպայի ֆեոդալական և ուրիշ կարգերը՝ վարչական, արքունի և այլն, և հայերը հենվում էին ավելի եվրոպացիների և ավելի մոտիկ ֆրանկ իշխանությունների վրա ընդդեմ հարևան մահմեդական պետությունների, քան թե հույների վրա։ Ուստի Սմբատը ֆրան-

39 *Անդ, էջ 113 և 114։*

40 *Անդ, էջ 115։*

41 Կ. Գանձակեցի, *Պատմութիւն Հայոց, էջ 302։*

42 *Տե՛ս «Սմբատայ Սպարապետի... Պատմ.», «Յառաջաբան», էջ Զ, ուր իբրև աղբյուր հիշված է Մ. Չամչյանի «Պատմ. Հայոց», հատ. Գ, էջ 277—278. իսկ այստեղ իբրև աղբյուր հիշված է «Յիշատակարան Ռամանոսի ժամանակակից վարդապետի ...»։*

սերևնից հայերեն թարգմանում է Անտիոքի ֆրանկ իշխանության մեջ գործածված օրինագիրքը՝ «Անսիզք Անտիոքայ» (Les assises d'Antioche), որի բնագիրը չի գտնված։ Թարգմանության առաջաբանի մեջ գրում է. «Ես արդ վասն զի սովորութեամբ այն Անսիզովն կու գնայր ազգս մեր և դարպասս Հայոց, և սղալումն ինչ կու գայր մեզ վասն տգիտութեան և վտանգութիւքն ոգւոց, և պղերգանք ինչ վասն հարցանելոյ անդ զմեծամեծ դատաստանսն, և ես ուժգին սենչմամբ և բազում աշխատութեամբ գտի զսայ և հալծեցայ ի փոխելն, և երբ փոխեցի ես՝ յուղարկեցի դարձեալ ի յԱնտաքոյ դարպասն, որ դէմընդդիմեցին և հաստատեցին իրենց ձեռնագրերովն և վկայութեամբն, ու ստոյգ է և ըղորդ բան բանի»[43]։ Բացի սրանից՝ Սմբատ Սպարապետը 1265 թ. կազմել է և մի համառոտ ազգային օրինագիրք՝ «Յաղագս դատաստանաց թագաւորաց», որի մեջ մտնում են օրենքներ ու կանոններ աշխարհականների և եկեղեցականների համար։ Նա օգտվել է Մխիթար Գոշի Դատաստանագրքից, բայց վրամշակելով սրա հոդվածները և հարմարեցնելով Կիլիկիայի պայմաններին ու ֆեոդալական հասարակարգին ու սովորություններին[44]։ Դա արտահայտություն է Կիլիկիայի հայ պետականության։ «Գրեցի զսա,— ասում է նա,— վասն հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ, և վասն աշխարհի դատաւորաց և թագաւորաց. և զսիրտ բանիցն առեալ եդի համառօտաբար»[45]։

Մնում են Սմբատ Սպարապետից նաև քրոջն ու քեռայրին գրած նամակները և, որ գլխավորն է, նրա «Պատմությունը», որ հիշվեց վերևում։ Այս մի ժամանակագրություն է սկսած հայոց Ն (400+551=951) թվականից։ Մինչև հայոց ՇՁԲ (=585+551=1136) թվականը բովանդակությունը նույնն է, ինչ Մատթեոս Ուռհայեցու գործինը և մեծ մասամբ շատ համառոտ ու կրճատումներով քաղվածք է նրանից, երբեմն նույնիսկ բառացի։ Կան, հարկավ, այնպիսի հաղորդումներ ևս, որոնք ուրիշ աղբյուրներից են ծագում։ Սկսած ՇԽԱ (=541+551=1092) թվականից առանձին ուշադրություն է դարձրած Կիլիկիայի Ռուբինյան իշխանությանը, մանավանդ ՇՂԷ (=1197) թվականից հետո։ Հայոց ՉԼԸ (735+551=1286) թվականից մինչև 1331 թվականը և հետո եղածները, բնականաբար, մի անծանոթ շարունակողի գործն են։ Այս հատվածը, ինչպես մասամբ նաև Սմբատի գործի իր ժամանակակից մասը, ընդհանրապես շատ կարճ հաղորդումներ են և ունեն տարեցտարի նշանակված հիշատակարանի բնույթ։ Չնայելով դրան՝ պատմաբաններն այդտեղ կգտնեն թանկագին տեղեկություններ իրենց ճիշտ թվականներով։

Սմբատ Սպարապետի գործերը շատ կարևոր են հայոց լեզվի զարգացման ուսումնասիրության տեսակետով։ Նա իր աշխատությունները

---

43 Գ. Ջարբհանալյան, *Հայկ. թարգմանութիւնք նախնեաց*, էջ 306 և հետ.։

44 Հ. Սամուելյան, *Հին հայ իրավունքի պատմությունը*, հատ. Ա, Երևան, 1939, էջ 90—95։

45 Գ. Ջարբհանալյան, *Հայկ. հին դպր. պատմ.*, Վենետիկ, 1897, էջ 774։

հորինել է այն լեզվով, որով խոսում էր ինքն ուրիշների հետ։ Դա այլևս ոչ գրաբարն է, ոչ գրաբարախառն կենդանի լեզուն, այլ Կիլիկիայի խոսակցական բարբառը։

7. Ստեփաննոս Օրբելյան։—*Այս հեղինակի կենսագրությունն իմանում ենք հենց իր գրքից*[46]։ *Նա գրում է Սիսական տան, այսինքն Սյունիքի պատմությունը, խոսում է Հայաստանի այս նահանգի իշխանների և եպիսկոպոսների մասին։ Վերջում այնտեղ իշխել են Օրբելյանները,— ասում է նա,— և ինքն էլ եղել է այնտեղի եպիսկոպոսը, ուստի պատմում է ոչ միայն իր կենսագրությունը, այլև մի մեծ գլուխ առանձնապես նվիրում է Օրբելյան տոհմին*[47], *բացի այն, որ ուրիշ տեղեր էլ հիշատակում է նրանց և իր մասին։*

Այս տոհմի ծագման զրույցը բոլորովին նման է Մամիկոնյանների ծագման պատմությանը։ Նրանց նախնին, մենաստանի մի արքայազն, ըստ Ստեփաննոսի, իր ընտանիքով ու մարդկանցով փախչում է իր ազգայինների ձեռից, տեղավորվելով Վրաստանում՝ մեծ պատվի է արժանանում։ Նրանք բնակվում են Օրբեթ բերդում և դրա համար կոչվում են Օրբեուլք, այսինքն Օրբեթեցիք։ Այդ արքայազնի սերնդի մարդիկը դառնում են Վրաստանի սպասալարներ և տեր շատ կալվածների։ Բայց Գեորգի Թագավորը 1177 թ. կոտորել է տալիս նրանց. ազատվում են միայն երկու եղբայրներ։ Նրանցից մեկը՝ Իվանե՝ Թամար Թագուհու օրով վերադառնում է Վրաստան և ստանում է Օրբեթ կալվածը. նրանցից ծագում են վրացոց Օրբելները։ Երկրորդ եղբայրը՝ Ելիկում՝ ծառայելով պարսիկների մոտ՝ կալվածք է ստանում Երնջակ բերդը և Ճահուկ ավանը. նա ամուսնանում է մի ճահկեցի հայ աղնվականի դուստրի հետ։ Նրանից ծագում են հայ Օրբելյանները։

Թամար Թագուհու օրով Զաքարե և Իվանե եղբայրները հայ Օրբելյանների նախնի Ելիկումի որդի Լիպարիտին կալվածք են տալիս Հրաշկաբերդը Վայոց Ձորում, այլև կալվածներ Կայենում, Գեղարքունիքում, Կոտայքում, ապա և ամբողջ Սյունիքն իր բերդերով։ Այսպես կազմվում է Սյունիքի Օրբելյան մեծ իշխանությունը, որի կենտրոնն էր Արփա գյուղը։ Լիպարիտի որդի և հաջորդ «մեծ և արքայաշուք իշխան» Սմբատի օրով ավելի ևս զորանում է Օրբելյան իշխանությունը, որ ենթարկվում է Թաթարների գերիշխանությանը և ապահով մնում։ Սմբատին հաջորդում է իր եղբայր Տարսայիճը, որ վախճանվում է 1290 թ.։ Սրան էլ հաջորդում է իր որդին՝ Ելիկում։ Այս իշխանները բարեկամական կապ պահելով Թաթար բռնակալների հետ՝ կարողանում են նրանց բռնություններից զերծ պահել իրենց իշխանության ներքո գտնված ընդարձակ երկիրը։

Տարսայիճի որդին էր Ստեփաննոսը, որին իր հորեղբայր Սմբատն՝

---

46 «Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910, գլ. ՀԱ, էջ 477—497։

47 Անդ, գլ. ԿԶ, էջ 368—433։

անղավակ լինելով՝ որդեդրում և կրթել է տալիս՝ «ի հրահանգս ընթերցման և երաժշտութեան»։ Նա շուտով դառնում է դպիր և սարկավագ։ Հայրը նրան քահանա է ձեռնադրել տալիս, «և մանկական տիօք կարգեալ կղերիկոս»,— ասում է նա իր համար. «վարժեցայ ի կրթարանի աստուածեղէն տաճից... և տհաս խակութեամբ նստայ յաթոռ վարդապետական»։ Քահանա ձեռնադրվելուց հինգ տարի հետո, 1285 թ., հայրը եպիսկոպոսների ժողովի որոշմամբ ուղարկում է նրան «ի թագաւորութիւնն Հայոց ի Կիլիկիա» «առնուլ ձեռնադրութիւն մետրապօլտութեան ի վերայ աթոռոյս Սիւնեաց»։ Այդպես էլ լինում է. նորոգվում է Տաթևի մետրապոլտական աթոռը։ Նա, երկար մաքառելով ըմբոստ եպիսկոպոսների դեմ, մեծ նեղութեամբ միացնում է իր ձեռքի տակ Տաթևի և Նորավանքի (Վայոց Ձորում) առաջնորդությունները։ Նորոգում է Տաթևի վանքը և իր բաժին հայրենի կալվածները նվիրում է վանքերին, նյութապես և բարոյապես հովանավորելով հայ լուսավորության կենտրոններին։ Ինքն և իր եղբայրները համաձայն ու սիրով կառավարում են երկիրը, ինքը՝ հոգևոր աթոռը, եղբայրները՝ աշխարհական իշխանությունը, «պահելով զաշխարհս զայս ի խաղաղութեան և զվանորայս ի շինութեան։ Եւ զի յայսմ ժամանակի ամենայն աշխարհ աւերեալ և ապականեալ էր, և վանորայք խափանեալ ի պաշտամանէ, և ամենեքեան առհասարակ դիմեալ ի տէրութիւն սորա [Ելիկումի], աստ զհանգիստ առեալ զետեղէին... և էր տեսանել շնորհօքն աստուծոյ զտունս զայս իբր զտապանն Նոյեան ի մէջ աշխարհակործան ալեացն»[48]։ Այն «տունը» ձգվում էր «ի Բաղաց մինչև ցԱյրարատ» և «ի դրանէն Բարկուշատայ մինչև ցսահմանն Բջնւոյ»[49]։ Ստեփաննոսը մեծ անուն և դիրք է ձեռք բերում արևելյան եպիսկոպոսների մեջ, որոնց և ղեկավար առաջնորդն է հանդիսանում ընդդեմ արևմտյան եպիսկոպոսների և Գրիգոր Անավարզեցի կաթողիկոսի նորաձևություններին[50]։ Նա վախճանվում է 1305 թ.։ Կոստանյանց («Из арм. лит. XIII—XIV вв.», Москва, 1914, էջ 6) մահվան թվականը դնում է 1309 թ.։

Ստեփաննոս Օրբելյանը մի կրոնասեր և ավանդապահ անձ է, միաժամանակ և հայրենասեր, գործունյա, հետաքրքիր, հմուտ ու լուրջ, զարգացմամբ ու հասկացողությամբ բարձր քան շատերը ժամանակակիցներից, հոդացող երկրի շինության և լուսավորության։ Լինելով ուսումնասեր՝ նա ձեռք է բերել և իր համար ուրիշ տեղերում արտագրել է տվել մի շարք մատենագիրներ։ Իր այս հատկությունների շնորհիվ նրա գրած Պատմությունը տարբերվում է մեր շատ պատմագիրների գրվածներից։ Երկար ժամանակից ի վեր,— ասում է նա[51],— «եռայր յիս տարփումն բաղձանաց և խորհէի... ընձեռել գրով ըստ իմում կարի զպայազատութիւն նախա-

48 Անդ, էջ 427—429, 431։

49 Անդ, էջ 417, 478։

50 Անդ, գլ. ԿԲ, ԿԹ, էջ 447—467։

51 Անդ, գլ. Ա, էջ 8—10։

*րարութեան և վմեծ նահապետութիւն բարձր իշխանութեանս Սիւնեաց, և զնախագահութիւն վսեմական և աստուածամեծար աթոռոյ հայրապետութեանս այսմ... զի ի նուազեալ աւուրս և ի վերջին ժամանակս տեսաք ամենայնիւ բարձեալ և չնչեալ զյիշատակ այսմ գեղեցիկ և մեծափառ աթոռոյ տէրութեանց. մարմնականն բնաւին սպառեալ և ի մոռացօնս անկեալ. և հոգևորն ոչ ընդհատ քան զնա մերձ ի սպառումն»։ Ուրիշների պատմութիւնները մինք տեսել ենք,— գրում է նա,— «Զայլոցն տեսաք՝ զՄամիկոնեանն և զՏարօնոյն, զԲագրատունեացն, զՎասպուրականացն, որք յետոյ թագաւորեցին, զՎրացն, զԱղվանից»[52], իսկ Սիսական իշխաններինը չկա։ «Յելով երկօք որոնեալ,— շարունակում է նա,— ոչ գտաք յառաջնոցն զյիշատակ սոցա ընդ գրով արկեալ, և զկնի եկելոցս թողեալ արձան գովելի։ Թէ ոչ էին գրեալ, և կամ թէ ի բազում աւերմանց և հինահարութեանց կորուսեալ էր՝ ոչ գիտեմ»։ Վերջում էլ նա կրկնելով գրում է. «Բազում խոյզ քննութեան ի մէջ առեալ՝ տեղեկացայ յաշխարհս հեռաւորս և մօտաւորս, ի վանորայս և յարկեղս կտակարանաց, այլ և ի գիտունս և ի տեղեակս հնագէտ պատմութեանց, և ոչ ինչ գտաք յիշատակ զրուցաբանութեանց ուրոյն այսմ աշխարհի և կամ տեղեկութիւն իրաց»։ Դրա համար և ինքը հոգ է տանում գրելու Սիսական աշխարհի իշխանների և եպիսկոպոսների գործերի մասին. «զի ծանիցեն զպատիւ և զբարձ իշխանաց և հայրապետաց և իշխանաց և զամենայն կարգ սահմանի նոցա»։ Այդ էր պահանջում Օրբելյան մեծ իշխանության պատիվը. աշխարհին պետք էր իմացնել և հիշատակ թողնել ոչ միայն Օրբելյանների մասին, այլև թե ինչպիսի՜ մեծ իշխանության երկրի տեր են եղել նրանք, և թե ինքն Ստեփաննոսն ինչպիսի՜ մեծ աթոռի վրա էր նստած։ Նրա Պատմությունը, ուրեմն, արդյունք է տոհմասիրության, որ ընդհանուր մի գիծ էր հին դարերում իշխողների համար։

Պետք էր հորինել առանձին տոհմային պատմություն Սիսականի. բայց ի՞նչ աղբյուրներից։ Այստեղ արդեն Ստեփաննոս Օրբելյանը ներկայանում է իբրև մի գիտակ անձ։ Հին ժամանակի պատմության համար առանձին զգուշություն է ցուցաբերում նա. մի կողմ է թողնում աստվածաշնչյան նախնական պատմվածքները, որով սկսել են ուրիշները, նույնիսկ Մովսես Խորենացին. հարկ չկա դրան. ամենքն էլ, ամեն տոհմեր էլ, Ադամից են ծագում որդեցորդի։ Նա չի ցանկանում, որ Սյունիքի իշխանական տոհմը սկզբից մինչև վերջն անվանե անուն ծննդաբանությամբ առաջ տանի. դրա համար հարկ կլիներ շատ բան հերյուրել. «Փափագելի է մեզ,— գրում է նա,— այժմ թողուլ զամենայն սնոտիապատում վէպս հնոցն, և բուռն հարուլ միայն զերջանկաւէտ բարեբաստութեանց և նախագահ նախակարգութեանց վեհափառ տէրանցն Սիւնի և ցեղին Սիսակայ. քանզի երկք աշխատութեանց յոլովք են և շահ օգնութեան և ոչ մի ինչ. յորմէ ի բաց տարեալ զձգտումն մտացս՝ պիտանիքն միայն ի մէջ անցեալ արձանասցին մեզ»[53]։

52 Անդ, էջ 17 և հետ.։

53 Անդ, 9, էջ 14։

Նա օգտվում է գրավոր աղբյուրներից, ամենից առաջ հին պատմագիրների հիշատակություններից Սյունի տոհմի մասին. «Ապա հանդէս արարեալ ամենայն պատմագրաց Հայոց, և զոր գտաք՝ հաւաքեցաք ի նոցանէ ամենայն ճշդիւ, նաև սակաւ ինչ ի Պետրոսի՝ Սիւնեաց եպիսկոպոսի ճառիցն, որ վասն Բաբկայ՝ Սիւնեաց տեառն»։ Ծանոթ հեղինակներից քաղած պատմություններն այժմ, իհարկե, առանձին արժեք չունեն, քանի որ ունենք բուն աղբյուրները, ինչպես են՝ Մովսես Խորենացի, Ագաթանգեղոս, Ջենոբ եպիսկոպոս Տարոնացի, որ է Ջենոբ Գլակ։ Բայց կան, սակայն, անծանոթ, այսինքն մեզ չհասած աղբյուրներ ևս, ինչպես վերոհիշյալ Պետրոս եպիսկոպոսը, որի մասին խոսվել է սույն աշխատության առաջին հատորի մեջ։ Բայց որ կարևորն է, նա մեծ չափերով օգտվել է թղթերից, կաթողիկոսական շրջաբերականներից, հրովարտակներից, եկեղեցիների կալվածական թղթերից, արձանագրություններից, գրքերի հիշատակարաններից, որոնք բոլորը պատմական վավերագիր աղբյուրներ են, որով և Ստեփաննոսի Պատմությունն առանձին արժեք է ստանում հին մասի մեջ ևս, որ հեղինակին ժամանակակից չէ։ Եվ նա այդպես վարվում է իբրև հասկացող հեղինակ։ «Եւ այլ ինչ ի հին նամակաց թագաւորաց Հայոց և իշխանաց Սիւնեաց, նաև ի կաթողիկոսաց Հայոց և եպիսկոպոսաց Սիւնեաց, որ մնացեալ էին ի վաղ ժամանակաց յամուրս քարանձաւին և որ ի սուրբ ուխտս Հայրապետանոցիս Տաթևու, և յարձանագրութեանց եկեղեցեաց և ի յիշատակարանաց գրոց։ Աստ և անդ գտեալ զթիւ աւուրց և զթուական ժամանակաց իշխանաց և եպիսկոպոսաց, և իւրաքանչիւր գործոց և բանից, շինութեանց և աւերմանց, նաև կարգի և սահմանի և պատուոյ սուրբ աթոռոյս և առաստատուր պարգևաց ի սուրբ եկեղեցիս զոր ժողովեալ սևագեղով՝ եդաք ի մի պարուրեայիկս սակաւ ինչ տեղեկութիւն, զոր հնար էր ի մէնջ և կար»[54]։ Այս միևնույնը կրկնում է նա Պատմությունն ավարտելիս[55], ավելացնելով նաև բանավոր աղբյուրները. «էր ինչ և որ յաւանդութեանց ստուգագէտ արանց որում վկայէին իրքն և տեղիքն, զհետ մտեալ ամենայն ճշդիւ ստուգութեան, ի բաց ձգեալ և զունայնախոյզ զրաբանութիւնն, զի մի՛ տաղտկասցին լսողք»։

Արդարև նա իր Պատմության մեջ դնում է բավական շատ ժողովրդական զրույցներ, վանքերի ծագման ու ճգնավորների վրա ասված հրաշապատումներ և այլ ավանդություններ, և իբրև իր դարի որդի՝ հավատում է հրաշալիքների, բայց գիտե, որ դրանք պատմություն չեն, այլ բերում է միայն, որպեսզի Սյունիքի մասին, որքան կարելի է, շատ ծանոթություններ տա։ Այդ բաների համար,—ասում է նա դիմելով ընթերցողին,—ոչ «աւելախոյզ զիս ծանիցես. այլ պատշաճ և ի դէպ մերումս ձեռնարկութեան [վարկցիս]. զի զՍիսական աշխարհի սկսաք ճառել զվէպս, վասն որոյ հարկ է ամենայնիւ զեղեալսն ի սմա գործս և հրաշս ցուցանել ձեզ»[56]։

---

54 Անդ, էջ 10։

55 Անդ, ՀԹ, էջ 505։

56 Անդ, ԻԱ, էջ 79։

Ավանդությունների և ավանդական բանահյուսության գրառումն ևս կապ-
մում է հարցասեր Ստեփաննոսի Պատմության արժանիքների մի կողմը.
դրանցով վառ գույնով պատկերանում է մեզ տեղական աղգային կյանքը:

Եվ այս ամեն հազորդումները,—լինեն գրավոր հիշատակություննե-
րից հանած, թե ավանդությունից գրի առած,—նա տալիս է մեզ պարզ
ու թեթև ոճով, կամ հենց հիշատակարանների լեզվով և անփոփոխ, և
մարդ ախորժանքով կարդում է նրա Պատմությունը բազմազան պատմա-
կան տեղեկություններից գրավվելով:

Իսկ իբրև ուսյալ գրող՝ նա Սիսականի պատմությունն սկսելուց առաջ
դնում է այդ նահանգի աշխարհագրությունը[57], որ հազվադեպ մի գործ է
մեր հին պատմագիրների մեջ. «Յուցմունքն սահմանաց աշխարհիս Սիւ-
նեաց, և թէ զինչ ունի պարարտութիւն ի պէտս մարդկան, և որքանութիւն
գաւառաց և անառիկ բերդից»: Գլուխն էլ վերջացնում է այսպես. «Եւ
արդ՝ այս այսքան տեղեկութիւն քեզ բերող և պարարտութեանց և սահ-
մանաց և բերդից և գաւառաց Սիսական աշխարհիս»: Ցավոք, աղճատ-
ված է այդ գլուխը. պակասում են տեղեկություններն այդ նահանգի սահ-
մանների և բերքի ու պարարտության մասին: Այդպիսով մենք չենք
կարողանում մանրամասն ու ճիշտ որոշել Օրբելյան իշխանության ներքո
գտնված երկրի սահմաններն ու մեծությունը: Պատմության վերջում[58] էլ
դրել է մի ընդարձակ ցուցակ տասներկու գավառների իրենց բազմաթիվ
գյուղերով և եկեղեցական հարկի քանակով: Ցավոք, չեն բերված աշ-
խարհիկ իշխանությանը տրված հարկերը:

Աշխարհագրությունից հետո պատմությունն սկսում է Սիսակից, ըստ
Մովսես Խորենացու, և այնուհետև ժամանակագրական կարգով բերում
է, ինչ որ գտել է Սյունիքի իշխանների և եպիսկոպոսների մասին: Առանձ-
նապես պատմության նյութ են դառնում այն նահանգի վանքերը, նրանց
կալվածները, հատկապես մեծ վանքեր Տաթևն ու Նորավանքը, եկեղեցի-
ների շինարարությունը, վանահայրերի և իշխանների ջանքերն իրենց
վանքերը ծաղկած պահելու, նշանավոր վարդապետներն և վարդապետա-
րանը: Գրում է նույնպես այդ կողմի եպիսկոպոսների հարաբերությունե-
ները Հայոց և Աղվանից կաթողիկոսների հետ, իշխաններինը՝ մյուս հայ
և օտար իշխանների և թագավորների հետ: Վերջապես 10-րդ դարի վեր-
ջերում, Սյունիքի Սմբատ իշխանի օրով, Բաղաց գավառում կազմվում է
այդ կողմերի թագավորությունը, որ երկար մաքառելով թուրքերի կրկնվող
հարձակումների դեմ՝ ընկնում է 1170 թ.: Բաղաց վերջին ժառանգը, խա-
չենցի Հասանը, որին որդեգրել էր Գրիգոր թագավորը, քաշվում է Խաչենի
գավառը, և վերջանում է Սիսական տոհմի թագավորությունը Սյունիքում:
Նրա վերջին մնացորդներից մեկը, Համտուն անունով, կրոնավորելով Նո-
րավանքում՝ մեռնում է 1231 թ., իսկ մի ուրիշը, Մահեվան անունով,

---

57 Անդ, Գ, էջ 12—14:

58 Անդ, ՀԴ, էջ 509—523:

փախչում է Անի, անհայտ է մնում։ «Ահա զայսօրինակ բարձաւ տէրութիւն Սիւնեաց և Բաղաց, և եղև վախճան տոհմին Սիսակայ և նախարարութեան Սիւնեաց»։

Շուտով այնուհետև այն տոհմի տեղը բռնում են Օրբելյանները, և Ստեփաննոսը սիրով ու մանրամասն հյուսում է սրանց պատմությունը։ Վերջընթեր գլխի մեջ, որ է «Յիշատակարան մատենիս նորին Ստեփաննոսի», նա հայտնում է. «Արդ յարմարեալ այս հանդէսք բանի շարագրեցաւ յաշխարհակալութեան մեծի և ինքնակալ արքայի Ղան Ղաղանին...ի թուաբերութեան... 1299... ի վանս... ուխտիս Նորավանից»։

Այս Օրբելյան պատմագիրը Սիսական տոհմը իրեն համար խորթ և օտար չի համարում, մեկ՝ այն պատճառով, որ Օրբելյանները հանդիսացել են այն նշանավոր նախարարական տոհմի անմիջական հաջորդներն և նրանց երկրի իշխողները, մեկ էլ՝ որ նա եղել է «ի մօրէ ծնեալ Սիսական և ի հօրէ՝ Օրբէլեան, որ Տարսայիճ կոչի»[59]։ Հենց դրա համար էլ նա անտարբեր կերպով չի հյուսում Սիսական իշխանների պատմությունն ևս։ Նա հրճվանքով գրում է նրանց թագավորելու մասին[60]. «Այժմ լո՛ւր ինձ և պատմեցից քեզ, ո՛վ պատուական ընթերցող, զպանծալի բանից լուրս. դի սեռս Սիսակայ որ ի Հայկայ՝ երբեմն խառնեալ էր ընդ թագաւորական ցեղն Արշակունի և Պահլաւից և երբեմն ընդ խազրաց թագաւորութեանն, և հուսկ յետոյ՝ ընդ Բագրատունիսն, բայց երբէք ոչ ըմբոստացան ի հայրենի տէրութեանցն։ Իսկ յետ յոլով ժամանակաց մինչ դուն բացին նախ՝ Արծրունիքն և թագ կապեցին ընդդէմ Սմբատայ՝ Հայոց թագաւորի, թագ կապեաց և Ատր-Ներսէհ՝ Վրաց բդեաշխն. թագ կապեաց և Աղուանին Համամ... և ձորոյգետացիքն որ Կիւրիկեանքն կոչին, նաև Կարուցն և Վանանդայն որ Բասենք կոչի»։ Վերջիվերջո օտարների վրա հենվելով թագավորում է և Սիսական Սմբատը, որ «տուեալ էր զԲոռն իւր... զԿատրամիդէ կին Գագկայ թագաւորի՝ որդւոյ Աշոտոյ...»։ «Եւ զի յայնմ ժամանակի Բագրատունիքն իշխէին միայն Շիրակայ և Այրարատու... և Սիւնիք կտրեալ էր ի նոցանէ. վասն որոյ ոչ ինչ քրէական մեղս համարեցաւ [=իր թագավորելը] Սմբատ, զի թէ Բագրատունիքն (որք) գերութեամբ իմն ածեալ էին Հրաչէէ՝ այնմ արժանի գտան, ապա քանի՞ ևս առաւել սոցա անկ էր որ ի Հայկայ...»։ Ահա թե ինչպես է արդարացնում Օրբելյանը

---

59 Անդ, ՀԱ, էջ 477 և հտն.։—Ուրիշ տեղ, ԿԶ, էջ 416. իր հորը՝ Տարսայիճին գովելուց հետո՝ հայտնում է, թե նա առել է «իւր կին յիսմայէլացւոցն՝ զդուստր տեառն Սիւնեաց՝ զԱրուզ խաթունն, որ եղև քրիստոնեայ և երևելի հաւատով... յորմէ ծնան որդիք երեք՝ Ելիկումն, Ստեփաննոս, որ կոչեցաւ յեպիսկոպոսութիւն...»։—Կ. Կոստանեանցն (Ստեփաննոս Օրպէլեան, Ողբ ի ս. Կաթուղիկէն, Թիֆլիս, 1885, էջ 6) այս կտորի հիման վրա գրել է, թե Տարսայիճը — «Սյունյաց այլազգի իշխաններից մեկի դստերն՝ Արզու խաթունին իրեն կնության ուզելով՝ նախ քրիստոնյա մկրտել տվեց նրան և ապա ամուսնացավ նրա հետ»։ Կասկածելի է այս բացատրությունը, քանի որ Ստեփաննոսն իրեն համար ասում է՝ «ի մօրէ ծնեալ Սիսական և ի հօրէ՝ Օրբէլեան»։

60 Անդ, ՇԾ, էջ 299 և հտն.։

Սիսական Սմբատի արարքն ընդդեմ Հայոց Բագրատունի թագավորների, միաժամանակ շատ լավ հասկանալով, որ ազգային տեսակետով գովելի գործ չէր այդ, քանի որ դրանով թուլանում էր հայկական իշխանությունը։ Լոկ հայ կամ «Հայոց թագավոր» անունն անգամ այն դարերում հայկական ազգային միության մի ազդակ էր։ Ըստ Մատթեոս Ուռհայեցու[61], նրա օրով, երբ չկար «Հայոց թագավորությունը», Կապանի թագավորներն էին հիշատակվում պատարագի ժամանակ, և այսպես Միջագետքի Ուռհա քաղաքում, այն էլ այն թագավորները, որոնք արդեն մի փոքր գավառի կամ մի երկու բերդի վրա էին իշխում։ Հայերին, որտեղ էլ լինեին, հարկավոր էր, թեկուզ մխիթարության համար, մի հայ թագավոր, քանի որ սեփական թագավոր չունենալը համարվում էր ազգային ամոթ ու նախատինք այլազգիների առաջ։

---

61 Մ. Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն*, էջ 231։

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ

ՍՏԵՓԱՆՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆ

1. «Ողբ ի դիմաց Կաթուղիկէին»:—*Թաթարների տիրապետության օրով, 13-րդ դարի վերջին քառորդից սկսում է ծաղկել բանաստեղծությունը. իշխում է չափածո խոսքը։ Մոտ երեք դար շարունակ զարգանում է մի բանաստեղծություն, որ հին հայ գրականության պարծանքներից մեկն է։ Հետզհետե երևան են գալիս մի քանի քնարական տեսակներ հաստատ բովանդակությամբ ու գեղեցիկ ձևով։ Նրանցից առաջինն է Ստեփաննոս Օրբելյանի «Ողբը»*[1]*։ Ստեփաննոսի ժամանակակիցներն են Խաչատուր Կեչառեցի, Ֆրիկ, Հովհաննես Երզնկացի և Կոստանդին Երզնկացի. վերջինս թերևս կրտսեր ժամանակակիցը։*

Եթե Ստեփաննոսի Պատմությունը, ինչպես տեսանք, արտացոլումն է Օրբելյան իշխանների և իրեն՝ Ստեփաննոսի տոհմային պահանջի, ապա նրա այս քնարական քերթվածը, որ նա հորինել է 1300 թվականին[2]*, իր մեջ անդրադարձրել է հեղինակի և նրա ժամանակի հայ հայրենասիրական ոգին ու խոկերը։ Այս տեսակետով պետք է մատչել նրա այս բանաստեղծությանը, որի «բուն վերնագիրն» է. «Բան բարառնական ոգեայ դիմառնաբար ի դիմաց Վաղարշապատու Ս. Կաթուղիկէին. Ողբ աւաղականք և ձայն աշխարականք լեալ անհուն հեծեծանօք աւերման աշխարհիս Հայոց և բնաւին սպառելոյ հայրապետութեան և թագաւորութեան համագունդ իշխանութեան, շարեալ չափաբան բերմամբ հոմերական արհեստիւ ի Ստեփաննոսէ Սիւնեաց այցելուէ ի խնդրոյ շնորհազարդ վարդապետի Խաչատրոյ Կեչառեցի»*[3]*։ Ով որ եղել է այս «վերնագրի» գրողը,—քերթվածի հեղինա՞կը, թե՞ հավանորեն ուրիշ ոքմին,—նա բնորոշել է դրա բովանդակությունը ոչ ամբողջ էական կողմով։ Դա լոկ ողբ չէ։ Քերթ-*

---

1 *«Ստեփաննոս Օրպէլեանի Ողբ ի Ս. Կաթուղիկէն», բնագիրը առաջաբանով և ծանոթություններով հրատարակեց Կարապետ Կոստանյանց, Թիֆլիս, 1885։*

2 *Անդ, էջ 11։*

3 *Անդ, էջ 53 և հտն.։*

վածի վերջում կա մի «Յիշատակ բանի ըստ անուան ոգողին»։ Ութ տնից հորինված մի «Յիշատակարան» է սա (ամեն մի տունը ութ տողերից և տարբեր հանգերով), որի տների առաջին տողերը կազմում են «Ստեփանոս» (և ոչ «Ստեփաննոս») գլխակապը։ Տներից մեկի մեջ անվանելով հիշյալ Խաչատրին «րաբունապետ հոգւով լցեալ, Անյաղթ հռետ[որ] շնորհօք ծաղկեալ», «բանիբուն» և շատերից «գովաբանեալ», ասում է, թե նա «ՅԱրարատեան տանէն եկեալ»՝ «փութով մեծաւ» հարկադրել է իրեն գրելու իր քերթվածը՝ «ի յայս հանդէս բանից մղեալ»։ Այս ցույց է տալիս, որ Օրբելյանի բանաստեղծությունն արդյունք է ոչ լոկ անձնական խոկերի, այլ նրա պես խորհել է նաև «Արարատեան տանը» ծանոթ նշանավոր վարդապետը, Խաչատուր Կեչառեցին, անպայման և ուրիշներն արևելյան վարդապետներից։ Ի՞նչ է եղել այդ խոհն ու խոկը, և ինչի՞ արտահայտություն է այդ։

2. «Ոդբքի» պատմական հիմքը նկատմամբ արևմտյան հայության և թեման։—Օրբելյանն իր Պատմության վերջին գլուխներից մեկի մեջ[4] մեծ զայրույթով գրում է, որ Լևոն Թագավորի մահից հետո՝ Կոստանդին կաթողիկոսի վրա դնելով «բարուրս բաղումս զրադատ բանից»՝ զրկում են նրան կաթողիկոսությունից և բանտարկում են չորս տարի։ Այս լինում է 1289 թ.։ Նրա փոխանակ կաթողիկոս են դնում Ստեփաննոս անունով մեկին։ Այդ ժամանակներում Եգիպտոսի սուլթանը տիրում է ֆրանկների իշխանության վերջին քաղաքներին և քրիստոնյաների մեծ կոտորածներ անում։ Պաղեստինն ամբողջ նորից ընկնում է մահմեդական լծի տակ։ Հերթը հասնում է Հայոց հայրապետական աթոռանիստ Հռոմկլային։ Մի ամիս պաշարելուց հետո՝ 1292 թ. առնում են և այս բերդը, կողոպտում, և կաթողիկոսին իր եպիսկոպոսներով և այլ մարդկանցով գերեվարում Եգիպտոս, ուր նա մի տարի բանտարկված մնալով՝ մեռնում է բանտի մեջ։ Եվ այսպես՝ մոտ 140 տարի հետո Հռոմկլան, Հայոց նշանավոր կաթողիկոսների և գրողների նստավայրը, դադարում է Հայոց կաթողիկոսի աթոռավայր լինելուց։ Կաթողիկոս է ձեռնադրվում 1293 թ. Գրիգոր Անավարզեցին, որ հորինած ունի ներբողյաններ, մի դրվատ, թուղթ ու բազմաթիվ շարականներ[5]։ Նա նստում է Կիլիկիայի Սիս քաղաքում։ Կիլիկիայի Հայոց թագավորությունը մենակ է մնում և շրջապատված մահմեդական իշխանություններով։ Մեջ է գալիս ավելի զորեղ կերպով հին քաղաքականությունը՝ կրոնական զիջումներով օգնության թիկունք ակընկալել արդեն հեռու ընկած քրիստոնյաներից։ Գրիգոր կաթողիկոսը, որ «գիտէր և զլեզու և զդպրութիւն լատին և յոյն ազգին», բռնում է Հռոմների հետ միաբանելու ընթացքը։ «Եւ սկսաւ,—ասում է Օրբելյանը,— առ սակաւ սակաւ զամենայն աւանդութիւնս Հռոմոց եկեղեցւոյն սպրդեալ մուծանել ի մերս եկեղեցի. և ի մերոյս ի բաց քեցել մի մի»։ Առաջանում է

4 Անդ, ԿՀ, կԹ, էջ 436—467։

5 Գ. Ջարբհանալյան, Հայկ. հին դպր. պատմ., Վենետիկ, 1897, էջ 779։

գժգոհություն և խռովություն. «Իսկ մեք հանապազ աղեցաւ և լերդախոց լինելով ի վերայ այսր ամենայնի՝ հաշեալ մաշէաք ծփական խորհրդովք ի տուէ և ի գիշերի»։ Եվ հետևանքը լինում է այն, որ նա արևելյան եպիսկոպոսների և իշխանների հավանությամբ ու սատարագրությամբ գրում է վերևում հիշված թուղթը կաթողիկոսին։

Հեռատես ու խոհուն վարդապետները շատ լավ հասկանում էին, որ շրջապատող մահմեդական տերություններից վտանգված էր նաև Կիլիկիայի Հայոց թագավորությունը։ Նրանք նկատում էին նաև արևմտյան հայ հոգևորականության գայթումը դեպի հունա-հռոմեական եկեղեցիները, ինչ որ գժտություն էր պատճառել արևելյան և արևմտյան հայ եկեղեցականների միջև, սկսած դեռ Ներսես Լամբրոնացու և Գրիգոր Տուտեորդու ժամանակներից։ Այս ամենի արգասիքն է ահա պատմագիր եպիսկոպոսի քերթվածը, որ քարոզում է կաթողիկոսական աթոռը փոխադրել Արևելք։ Բայց կա և ավելի կարևոր կողմը։

Եթե Շնորհալին, որ եկեղեցիների միության կողմնակիցն էր, համոզված սպասում էր երկրորդ խաչակրաց արշավանքի (1147—1149 թթ.), թե ֆրանկները շուտով պիտի գան, և քրիստոնյաները տիրեն ամբողջ երկրին, և հալածված ու ցրված քրիստոնյաները գան ժողովվեն իրենց տեղերը և ուրախ կյանք վայելեն,—ապա այդ հույսը չկա այլևս։ Վերացել էր այդ երազը, որ թերևս երբեք չէին էլ ունեցել արևելյան հայերը իրենց բնիկ երկրում։ Շնորհալին, թեպետ ողբում էր Հայաստանի քաղաքական իշխանության կործանումը, բայց չէր մտածում Հայոց աշխարհում անկախ հայկական թագավորություն վերականգնելու մասին։ Նա իր քերթվածի մեջ ներկայացուցիչ է հանդիսացել արևմտյան հայության, 12-րդ դարի կեսերին։ Իսկ Օրբելյանը 13-րդ դարի վերջերում արտահայտիչ է բուն հայաստանցիների իղձերի ու տենչերի։ Նա և Խաչատուր Կեչառեցին և նրանց նման մտածող արևելցիները ամփոփվելով իրենց մեջ՝ աշխատում էին մի նոր ազգային գաղափարախոսություն զարգացնել և դրանով առաջ բերել ազգային հասարակական շարժում, այն, որ ցրված հայերը ժողովվեն մայր հայրենիքի մեջ, և Հայաստանում, հատկապես Վաղարշապատում լինի ազգի ոչ միայն եկեղեցական, այլև քաղաքական կենտրոնը։ Ի՞նչ էր այս քաղաքական ձգտման հիմքը Մեծ Հայաստանում։

3. Թաթարական իշխանությունը 13-րդ դարում։—Զարմանալի չէ, որ թաթարների ծանրալուծ տիրապետության շրջանում, 13-րդ դարի վերջում ծագում է Մեծ Հայաստանի քաղաքական աղատության գաղափարը։ Դեռ Կիրակոս Գանձակեցին հույս և ակնկալություն ուներ, թե հայերը թաթարական լծից կփրկվեն։ Այսպիսի քաղաքական լավատեսության հիմքն այն էր, որ թեպետև հայերն, առանձնապես գյուղացիք, տնտեսապես շատ նեղն էին, բայց ազգայնապես դեռ բոլորովին ընկճված չէին այլազգիներից. դեռ կային հայկական իշխանություններ, իրենց ներքին ավատական իրավունքներով, թեպետ թաթարների գերագույն իշխանությանը ենթակա։ Ինքը Ստեփաննոս Օրբելյանը Սյունյաց մեծ իշխանու-

թյան պայազատներից մեկն էր, Խաչատուր Կեչառեցին կամ Կեչառուեցին էլ, ըստ երևույթին, էր Հայտնի Պռոշյան տոհմից[6], որ նշանավոր Պռոշ իշխանից առաջ կոչվում էր Հաղբակյան (Խաղբակյան) կամ Վարդանաց (այլև Հայկազուն)։ Պահլավունիների սեփականությունն է եղել Կեչառուք կամ Կեչառուս (այլև Կեչառիս) (այժմյան Ծաղկաձոր կամ Դարաչիչակ) գյուղն և այնտեղի հռչակավոր վանքը։ Գրիգոր Մագիստրոսի շինածն է այնտեղի մեծ հոյակապ եկեղեցին։ Իսկ 13-րդ դարի սկիզբներին այդ Կեչառուք գյուղն ու մենաստանը սեփական ստացվածքն էր Պռոշյան տոհմի, և նշանավոր Պռոշ իշխանի հայրը, Խաղբակի որդի Վասակը, 13-րդ դարի առաջին քառորդին շինել է տվել այնտեղի փոքր գեղեցիկ եկեղեցին ի հիշատակ նաև իր պատրոնների, Իվանե և Զաքարե եղբայրների[7]։ Թաթարական արշավանքի երկրորդ տասնամյակի սկզբում հենց նորոգում են այդ վանքը[8]։ Կային և ուրիշ իշխանական տոհմեր։ Այսպես Զաքարյաններն, ենթարկվելով թաթարական իշխանությանը, դեռ երկար պահում էին իրենց դիրքը։ Նրանք թաթարների օրով ևս առժամանակ ժառանգական իրավունքով չէին կորցրել իրենց դիրքը նաև Անիում։ Բայց այս քաղաքի կառավարությունը հետագայում մոնղոլ խաների կողմից հանձնվում էր ուրիշ, սովորաբար հայ իշխանների։

Ավելի կարևոր է հետևյալ պարագան։ Երբ թաթարները տիրում են ամբողջ Հայաստանին, նրանց արշավանքի ավերիչ հոսանքը, որ ինչպես մրրիկ տակն ու վրա էր անում երկիրը, շուտով նստում է։ Նրանց կառավարիչները՝ սահմանված մեծ հարկերը ստանալու համար՝ աշխատում էին երկիրը խաղաղ պահել, հպատակ աշխատավոր ժողովրդին ապահով և զերծ անել կողոպուտից և ավերմունքից։ Նրանք ձգտում էին, որքան կարելի է, շենացնելու և բազմամարդ դարձնելու աշխարհը. վերաշինում էին իրենց իսկ ձեռով քանդված ավանները, քաղաքները, ինչպես Գանձակ, Կարին։ Բացի այդ՝ երկրի զանազան մասերի հարմարավոր հաղորդակցության համար՝ շինել էին տալիս ճանապարհներ, հալածում էին ավազակներին[9]։ Հատուկ ուշադրություն էին դարձնում առևտրական մեծ ճանապարհների ապահովության և կարավանների ազատության։ Հայաստանի վրայով դեպի Տրապիզոն էր անցնում հին տարանցիկ ուղին, որ գործել էր Բագրատունիների և Զաքարյանների օրով և կապում էր Արևելքն Արևմուտքի հետ։ 13-րդ դարի վերջերում թաթար ղաների ձեռներեցությամբ իբրև վաճառաշահ մեծ կենտրոններ բարձրանում են

---

6 Յակովբոս վ. Տաշեան, *Ուսումնասիրութիւնք Ստոյն Կալինիճենայ Վարուց Աղեքսանդրի, Վիեննա, 1892, էջ 124 և հետ.։*

7 Ղեւոնդ վ. Մ. Ալիշան, *Այրարատ, բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ, 1890, էջ 259—269։*

8 *К. Костанянц*, Из армянской литературы XIII—XIV вв. Оттиск из Сборника, посвященного А. Н. Веселовскому, Москва, 1914, *էջ 3։*.

9 Գևորգ Ալթունյան. *Մոնղոլական արշավանքները, Վաղարշապատ, 1913, էջ 79—84. «Կարգի վերահաստատումն և հարկահանություն»։*

Ատրպատականի քաղաքները՝ Սուլթանիա և Թավրիզ. սրանցից էլ Հայաստանի վրայով էին առևտրական ճանապարհները դիմում դեպի հյուսիս՝ Սև ծովի ափերն»[10] ու Խրիմ (Կաֆա, արդի Թեոդոսիա քաղաքը) և դեպի Արևմուտք՝ Փոքր Հայաստանի—Իկոնիայի սուլթանության—և Կիլիկիայի Հայ թագավորության երկրով, որ բարեկամ և դաշնակից էր Թաթարներին: Առևտրական կապիտալի շնորհիվ զարգանում են նաև մեր երկրի քաղաքական կյանքն ու արդյունագործությունը: Կարին, Երզնկա և այլ քաղաքներն առանձնապես կարևոր առևտրական կենտրոններ են դառնում:

Առևտրի, ինչպես և երկրի կառավարության մեջ, բնականաբար, մեծ դեր էին խաղում և հայերը թե՛ հին իշխանական տոհմերից և թե՛ նորելուկ ընտանիքներից: Առաջանում են և նոր մեծ կապիտալիստներ, որոնք իրենց հարստությունը ձեռք էին բերում թե՛ հին հայտնի միջոցներով և թե՛ այնով, որ վերակացու և հսկող էին դառնում տերության գանձարանը մտնող հարկերի ու տուրքերի: Այսպիսի մեծ կապիտալիստներից պետք է հիշատակել Պարոն Սամադինին, որի մասին տեղեկություններ են տալիս արձանագրությունները, սկսած 1263 թվականից մինչ 1291 թ., իսկ 1295 թվին արձանագրություններից մեկի մեջ հիշվում է նրա թոռ Բեսութան[11]: «Սամադինը եղել է մեկն Անիի այն երեք պատրոններից, որոնք «իրիցունս բաժինը» վերացրել են տաղմաճինների[12] միջոցով»: Այդ իշխանը, ուրեմն, եղել է և վարչական անձ. ըստ արձանագրությունների, նա կարգադրություններ է արել հողային սեփականությունների ու հարկերի, կալվածների առ ու ծախքի և փոխանակության մասին: Ինքը գնել և ուրիշներին տվել է կալվածներ, ի միջի այլոց 1264 թվականին,—ինչպես Երևանի Կաթուղիկե եկեղեցու արձանագրությունից իմացվել է,— նա գնել է իր հողով ու ջրով և Երևան քաղաքը, որ 13—14-րդ դարերում հայտնի է եղել ոչ միայն իր այգիներով, այլև իր խանութներով իբրև վաճառաշահ մի վայր:

Շնորհիվ վարչության խաղաղասեր քաղաքականության և համեմատական բարեկարգության, չնայելով չափազանց ծանր հարկերին, Հայոց երկրի տնտեսական կյանքը սկսում էր փոքր ինչ աշխուժանալ: Երկրի ժողովուրդը ամենամեծ մասով հայ էր. ընկած դրությունից բարձրանում

---

10 *Манандян Я. А.*, О торговле и городах Армении. Эривань, 1930, *էջ 192 և հետ.* «Развитие международной торговли в монгольскую эпоху и участие в ней городов Армянского нагорья».

11 *ՀԽՍՀ Պատմ. և գրակ. ինստիտուտի «Տեղեկագիր», Ա գիրք, Երևան, 1938, էջ 165 և հետ.*, Կ. Ղաֆադարյան, *Երևանի Կաթուղիկեի և Նորահայտ Հուշարձանի վիմական արձանագրությունները: Այս հոդվածից են առնվում և մնացած տեղեկությունները Սամադինի վերաբերյալ:*

12 *«Տաղմա», «Թամղա» ասվում էր քաղաքներից առնվող առևտրի և արդյունագործության հարկը, իսկ այդ հարկը հավաքողները կոչվում էին «տաղմաճի» կամ «թամղաչի»: «Թամղա» բառի տեղ գործածել են նաև «բաջ», «բաժ»:* Հ. Օրբելի, *Անվո ավերակները, էջ 61 (ծան. թարգմանչի):*

էին քաղաքները։ Ավեր էր Վաղարշապատը, բայց դեռ կանգուն հայաբնակ կենտրոններ էին Դվին, Անի, Կարս, Կարին և այլն. հոծ հայ բնակչություն են ունեցել Մեծ Հայաստանի մի քանի նահանգները, ինչպես և Կիլիկիայի հայկական թագավորությունը և ուրիշ կողմեր։

Հայաստանի բախտը սկսած Հուլաղու դանից (1256—1265 թթ.) կապված է եղել պարսկական մոնղոլների իշխանության հետ. «Իլղանները գովելի եռանդով ջանում էին նմանել Պարսկաստանի հին իշխողներին, որոնք հովանավորում էին գիտությունն ու գրականությունը»[13]։ Սրանից հայերին, սակայն, այն մասնիկն էր միայն հասնում, որ նրանք ընդհանրապես համբերատար էին դեպի այլազգիներն ու այլակրոնները։ Այդ համբերության և երկրի խաղաղության հետ՝ բնականաբար լինում է նաև կուլտուրական առաջադիմություն. մանավանդ որ թաթարները մինչև մահմեդականություն ընդունելը շատ չէին խառնվում Հայաստանի ներքին գործերին. չկար ընդհանրապես կրոնական հալածանք, հարկից ազատ էին մնում և նույնիսկ հարստանում էին հոգևորականները, եկեղեցիներն ու վանքերը, որոնք և ազգային լուսավորության ու կուլտուրայի կրողներն էին։ Անգամ թաթարական առաջին ավերիչ արշավանքների ժամանակ և քիչ հետո արդեն եռանդուն կերպով սկսում էին նորոգել ավերված վանքերը՝ Կեչառուք և ուրիշները, ինչպես Վանական վարդապետն էր անում. կառուցում էին և նորերը, վարդապետները հավաքում էին աշակերտներ, կազմում էին գրադարաններ։ Հիմնում էին կամուրջներ, ջրմուղներ և նմաններ։ Մի քանի իշխանական տներ, կարողանալով թաթարների հետ բարեկամական հարաբերություն պահել, հովանավորում էին վանքերին ու գիտնական վարդապետներին։ Եվ այսպիսով Հայաստանում կանգ չի առնում լուսավորության գործը, առաջ են գալիս գրողներ ո՛չ միայն հին սերնդից, այլև թաթարների օրով ծնված նոր սերնդից։ Նրանք պահպանում և զարգացնում են հայ կուլտուրական ժառանգությունը։ Առանձնապես հայտնի են դառնում հին Տաթևի վանքը, և ապա Նորավանքն ու Գայլեձորի վանքը Վայոց Ձոր գավառում։

Այս վերջինը կոչվում էր և «Աղբերաց վանք». դրա շինել տվողն ու հովանավորն էր Խաղբակյան Պռոշ իշխանի որդին՝ Էաչի, սրա պապը՝ Վասակ, ինչպես ասվեց վերևում, շեն էր պահում Կեչառուքի վանքը, որ ըստ 1248 թվականի մի վիմական արձանագրության, նորոգում են թաթարների ավերածությունների օրերում։ Գայլեձորի վանքը հռչակվում է իր դպրոցով իբրև «երկրորդ Աթենք»։ Այնտեղ ուսուցիչ էր Ներսես Մշեցի (մեռ. 1284 կամ 1290 թ.) վարդապետը, որ աշակերտել էր Վարդան Արևելցուն, գիտեր և հունարեն և հունական գրականությունը։ Նա սկզբում գործել էր Տարոնի Առաքելոց վանքում, հետո հաստատվել Գայլեձորի վանքում։ Նրա աշակերտներից մեկն և նրա հաջորդող էր Եսայի Նչեցին

---

13 *Стэнли Лэн-Пуль*, Мусульманские династии. пер. В. Бартольд, СПб. 1899, *էջ 181*։

(մեռ. 1338 թ.), Սասունի Նիչ գյուղից. շատ հեղինակավոր մի վարդապետ, ժամանակի համբավավոր գիտնականներից մեկը, որին անվանում են «Մեծամեծ փիլիսոփայ», «Անյաղթ հռետոր»։ Նրանից մնում են և գրական աշխատություններ—Ս. Գրքի մեկնություններ, թղթեր, «Վիճաբանութիւնք», «Մեկնութիւն քերականի»։ Նա իր երկարամյա գործունեության ընթացքում Գլաձորի վանքում պատրաստել է բազմաթիվ աշակերտներ, թվով մինչև 363, ինչպես հաշվում են։ Այդ վանքում, ինչպես նաև մյուսների մեջ, բացի Ս. Գրքի ու կրոնական գիտությունների հմտությունից, ուսուցանում էին նաև քերականություն և փիլիսոփայություն, Արիստոտելի, Պորփիրի, Դիոնիս Թրակացու և ուրիշների մեկնություններով։ Նրանք ժողովում էին և ձեռագիրներ, զբաղվում էին ձեռագիրների արտագրությամբ՝ գրքեր բազմապատկելու համար. երբեմն և ծաղկի գրերով ու մանրանկարներով զարդարում էին իրենց արտագրած ձեռագիրները։ Նսայի Նչեցու աշակերտներից իբրև ծաղկարար և մանրանկարիչ, միաժամանակ և իբրև գիտնական վարդապետ, հայտնի է Մխիթար Սասունցի (1291—1337 թթ.)[14]։ Սա աշակերտել էր նախ Ներսես Մշեցուն, հետո Նսայի Նչեցուն. ապա ուսուցիչ է եղել Մեծոփա վանքում և պատրաստել բազմաթիվ աշակերտներ։ Պարապել է և գրականությամբ՝ հորինելով ճառեր, մեկնություններ և այլ գրվածքներ։

Արդարև քաղաքական կացությունը 13-րդ դարի վերջին քառորդին շատ հարափոփոխ էր. թաթար իշխանները հաճախ զենքի ուժով միմյանց դեմ էին ելնում. նրանցից շատերը հենվում էին մահմեդականների վրա և հակված էին մահմեդականության կողմը և նույնիսկ երբեմն հալածանքներ էին հանում քրիստոնյաների դեմ. բայց կային նաև ղաներ, որոնք բարեմիտ էին դեպի քրիստոնյաները, զի սրանց մեջ էին տեսնում իրենց թիկունքը։ Այսպիսիներից էին Հուլավու ղանը, որի համար Ստ. Օրբելյանը (էջ 419) գրում է. «Մեծ և բարեպաշտ արքայն աշխարհակալ, յոյսն և ակնկալութիւնն քրիստոնէից». նրա որդին՝ Ապաղա, «այր հեզ և բարի և խաղաղարար. և սա սիրող քրիստոնէից»։ Ապաղայի մահից հետո (1282 թ.), ինչպես գրում է Ստեփաննոս Օրբելյանը[15], «նստի Թագուտարն՝ եղբօրորդի նորին՝ ղան ամենայն աշխարհի. որ և Ահմադ անուանեաց զինքն. և խորհեցաւ քակել զօրէնս քրիստոնէութեան և առնել մըսլման զամենայն ազգ»։ Նա իր գահը հաստատուն դարձնելու համար՝ 1286 թ. «գնաց անհուն զորօք ի Խորասան ի վերայ Արղունին՝ որդւոյ Ապաղայ ղանին, զի սպանցէ զժառանգ թագաւորութեանն. և կալեալ զնա դարձաւ այսրէն։ Իսկ Աստուածն frիստոնէից յայնմ գիշերի դարձոյց զսիրտ մեծամեծացն առ Արղունն, զոր հանեալ ի բանտէ կապանացն՝ թագաւորեցուցին և սուր ի վերայ եդեալ կոտորեցին զամենայն թշնամիս

---

14 *К. Костанянц*, Из армянской литературы XIII—XIV вв. Оттиск из Сборника, посвященного А. Н. Весловскому. Москва, 1914, էջ 6—8։

15 Ստ. Օրբելեան, *Պատմ. նահանգին Սիսական*, Թիֆլիս, 1910, էջ 425 և հետ.։

նորա։ Հասեալ զկնի սատակեցին զԱհմադն և զհամախոհս իւր՝ զՀասան Մանլի շեխն, զՍահիպ դիւանն, զԱլինախն և զայլս բազումս։

Եւ էր ընդ նոսա թագաւորն Դեմետրէ, զոր սիրեաց Արղունն, և ետ նմա զամենայն աշխարհս Հայոց՝ զտունն Աւագեան [Ավագն Իվանեի որդին էր] և զտունն Շահանշահեան [=Զաքարեի] և զԳագեցին և զորդիսն Սադուն Աթաբեկին։ Եւ ինքն էր յոյժ սիրող քրիստոնէից և եկեղեցեաց։ էր ընդ նոսա և Տարսայիճն [=Ստեփաննոսի հայրը], զոր յոյժ մեծարեաց և սիրեաց Արղունն։ Ապա դարձաւ Դեմետրէ մեծաւ խնդութեամբ և ամենայն ազատօք, և մեծամեծք Վրաց և Հայոց ընդ նմա։ Եւ եկեալ ի Շարուր՝ գնաց նմա ընդ առաջ Տարսայիճն մեծամեծ պատուով, և արքունական ընծայիւք մեծարեաց զթագաւորն։ Եւ նա առեալ տարաւ ընդ իւր զնա յերկիրն Աւագեան՝ յԱյրարատ. և բազում թախանձանօք բռնազբօսեաց զնա, և եդ Աթաբէկ ի վերայ ամենայն տէրութեան իւրոյ մինչև ի Տփխիս և յԱնի և ի Կարս... Եւ յայնմ հետէ ունէր Տարսայիճն զաթաբէկութիւն աշխարհիս Հայոց և բազում դիւրութիւն և ողորմութիւն առնէր նեղեալ ազգիս Հայոց»։ Նա Տփխիս գնալով՝ այնտեղի արքունի դիվանի հարկատվության դավթարից հանում է 150-ից ավելի հայկական վանքեր և ապատում է հարկից։

Թվում է, թե արդեն առաջացել էր հայկական մարզերի քաղաքական միությունը մեկ հայ իշխանի ձեռի տակ, և վերականգնվում էր Զաքարյան տիրապետության շրջանը։ Բայց ցավոք, երկար չի տևում այն. Դեմետրե թագավորը սպանվում է 1289 թ., և հաջորդ տարին վախճանվում է Տարսայիճը։ Վերանում է Հայաստանի քաղաքական միությունը մի հայ իշխանի կառավարությամբ, և հայ իշխանները մնում են իրարուց անջատ։ Բայց դրանով չի մեռնում Հայաստանի քաղաքական միության գաղափարը, գուցե և ավելի ևս ծավալվում է այն, անշուշտ ոչ ժողովրդի բոլոր խավերի մեջ, այլ նշանավոր իշխանների ու վարդապետների։

Այլ դրություն է ստեղծվում, երբ թաթարների մեծամասնությունը Արղունի որդի Ղազան ղանի (1295—1304) օրով և նրա հրամանով ընդունում են մահմեդականություն և հետզհետե սկսում են, իբրև մոլեռանդ մահմեդականներ, ավելի ու ավելի նեղություն պատճառել հայերին, և հայերի ընդհանուր դրությունն ավելի ու ավելի վատթարանում է 14-րդ դարի կեսերին և հետո։ Հայերն այն ժամանակ արդեն հուսախաբ են լինում իրենց քաղաքական իղձերի մեջ, բայց 13-րդ դարի վերջերում, և նույնիսկ Ղազան ղանի օրով, որ բարեհաճ էր դեպի հայերը, դեռ կենդանի է եղել Հայաստանի քաղաքական անկախության գաղափարը, որ և անդրադարձվել է մեր բանաստեղծության մեջ։ Տեսնենք այժմ այդ։

4. Օրբելյանի «Ողբի» նյութն ու հորինվածքը։—Այս քերթվածի հիմնական գաղափարի համեմատ էլ աջողությամբ ընտրված և հարմարված է նրա նյութը (սյուժետը) և ընդհանուր հորինվածքը։ Ինչպես միտումնավոր վիպական բանաստեղծության մեջ անուղղակի տրվում է որևէ բարոյական ուսում, նույնպես և այս քերթվածի հեղինակն իր հիմնական

գաղափարը քարոզում է և իր ղգացումներն արտահայտում է իբրև «Արքայուհի» անձնավորված Կաթուղիկեի բերանով։ Սա քերթվածի կենտրոնն է։

Զայն բարձրագուժ և ահագին
Նման օդոցդ որոտացին.
Կանչիւն ահեղ և սաստկագին
Գայ ի դաշտէդ Արարատին։

Այսպես է սկսել Օրբելյանն իր «Ողբը»։ Զայնը լսվում է ամեն տեղ և հրավիրում է՝

Երթա՛լ ի գուժ աղաղակին։

Լսողներն այդ ձայնի վրա զարթնում են մահաբեր քնից, խուռն կարավան կապած իրար ետևից դիմում են դեպի «Արամա[զ]նեան տունը», լցնում Արարատյան դաշտը, հասնում Հայոց Նոր Քաղաքը—Վաղարշապատ։ Եվ ի՜նչ են տեսնում.

Տեսին ի նմա զարքայուհին...
Զմայրն լուսոյ Հայկայ զարմին,
Մերկ, խայտառակ ի բաթրոնին,
Զանձամբ արկեալ զքուրձ խաւարին,
Հերքն ճողեալ որպէս կնտին,
Ստինքն ցամաք զերդ ըսկընդկին[16].
Զկուրծքն բախէր քարամբ ուժգին,
Առուք արեանց իջանէին.
Մոխիր կուտէր նման բլրին,
Ցանէր ձեռամբն ի գագաթին։
Երամք կանանց ճչող ջայլից
Շուրջանակի զնա պարէին.
Դասք երգողաց կանգնեալ կային,
Զդամբանական փողս ածէին.
Աւաղական ողբովք լային
Զգալարափողսըն հնչէին.
Կէսքն շիւան մեծ քարշէին,
Կէսքն զվարսիցըն փետէին։

Եկողները հարցնում են ողբացող Արքայուհուն.

Այս ո՞վ, այս ո՞վ ի բաղմոցին
Նման մեծի արքայուհւոյն.
Այս ի՞նչ, այս ի՞նչ սուգ անհնարին...

---

16 Սկնդիկ—ամուլ կամ երեխա չունեցող որբևայրի կին։

Նա, մեծ թագուհին, սրտի խորքից հոգոց հանելով պատասխանում է.

Այս ե՛ս, այս ե՛ս էջք Միածնին...
Իսկ այս՝ որ շուրջ զինև պարեն՝
Են իմ դստերքն որ նախ ելին...
Եկեղեցիք Հայաստանին.
Ժողովեցաք ի միասին
Լնուլ ողբովք զաշխարհ բնաւին։

Ուրեմն Արքայուհուն, այսինքն «Կաթուղիկէին» [դիմառնաբար] շըրջապատող լալկան կանանց երամը պատկերացնում է Հայաստանի «Կաթուղիկէի»—մայր եկեղեցու դուստր եկեղեցիներն ու վանքերը, որ մեծ մասամբ նույնպես ամայացած էին։ Եվ Արքայուհին բացատրելով իր սուգի պատճառը՝ ասում է եկողներին.

Երբեմն էի որպէս զերկին,
Հիմ հաւասար եմ գոհիւն.
Երբեմն արփի արևածին,
Այժմ խաւար անհնարին...
Երբեմն հարսն առագաստին,
Մածեալ գրկօքն իմ փեսային,
Այժմ եմ սեղեխ օտարոտին,
Անպէտ նման հոսեալ ջրին։

Խաչատուր Կեչառեցին, անշուշտ, վշտահար սրտով պատմել է Օրբելյանին Վաղարշապատի Կաթուղիկեի տխուր դրությունը, որ և անդրադարձվել է «Ողբի» մեջ.

Այժմ անպիտան նման աղբին,
Եղեալ կոխան չորքոտանւոյն...
... Սկիւթացի հօրանք թուրքին,
Կամ խայտառակ մանկունք նոցին,
Որք միշտ կոխան... առնէին,
Տեղիք չարեացն, որք գործէին...
Փոխան բուրմանցըն նարդոսի
Աղբք և աւիշք... կուտին...
Հօրանք այծից... բունին։

Կնշանակի՝ Կաթուղիկեն լքված, անուշադրության է մատնված եղել, մի ամայի անշեն դաշտի մեջ։ Ավեր է եղել և Վաղարշապատ մայրաքաղաքը, և շուրջը միայն խաշնարոտի տեղ։ Այդ դրությունից է, որ «այրի» «Արքայուհին», այսինքն ի բաց լքված եկեղեցին, ճչալով ողբում է։ Եվ նա բացատրում է իր ցավալից վիճակի պատճառը, այն է՝ Հայաստանի քաղաքական անկախության անկումը և այլազգիների տիրակալությունը, երկրի ավերումը, իշխանների դուրս քշվելը, կորչելը... Եվ քերթողը Ար-

քայուհու բերանով երկար կանգ է առնում Արշակունի, Բագրատունի, Արծրունի և նույնիսկ Սիսական թագավորությունների և նրանց կործանման վրա, և վերջը հարում է.

Ահա՛ սոքա այսպէս անցին.
Բնաւին ի բաց եղծեալ գնացին.
Որպէս զստուերք այլ չերևին.
Նման երազոյ կարծեօք թուին։
Որպէս ծաղիկք ամարայնոյն
Արևակէզ թարշամեցին.
Որպէս սաղարթք վարսեալ ծառին
Խորշակահար ցամաքեցին...
Արդ ոչ ևս է, ոչ երևին,
Անէացեալք նման նանրին։

Ի՞նչ է եղել հայկական քաղաքական անկախության անկման հետևանքը։ Հայ իշխանությունները,—շարունակում է ողբացող Արքայուհին,—անցան ոչնչացան, և

Միայն այրի պիս աստ թողին,
Որպէս զոչինչ ի բաց լքին։

Իսկ ի՞նչ է մտածում Արքայուհին, որ նույն է՝ ի՞նչ գաղափար է քարոզում հեղինակը նրա բերանով։ Նա շարունակում է ասել.

Արդ մենացեալ յանվայր [=անշէն] դաշտին
Ջերդ զգազան անապատին,
Ջաչուերս ածեմ կողկողադին,
Ջայն արձակեմ ողորմագին.
«Ու՞ր էք, որդի՛ք իմ սրբածին,
Եկայք առ մայրըս ձեր նախկին,
Որպէս օրէնն է զաւակին,
Տանիլ խնամ ձեր ծնօղին»։

Ահա թե ի՛նչ է քարոզում նա — վերադարձ դեպի մայր երկիրը, հոգալ սրա համար։ Վերադարձ այն ամենքի, որոնք իրենց օտարական են համարել Հայոց աշխարհից դուրս և միշտ կարոտով նայել դեպի իրենց մայր երկիրը։ Բայց տակավին առհասարակ ուշադիր չեն այդ կոչի ձայնին. և այրի թագուհու վիճակը մնում է նույնը, որ վերևում տեսանք։ Նա ոտնակոխ է այլազգիներից։

Տեսէ՛ք զիմ փառքըն զառաջին,
Տեսէ՛ք զվերջին նախատս անձին,
Թէ ո՛ւր էի, ’ւ ո՛ւր ընկեցին.
Յերկնից յերկիր զիս իջուցին,
Խորք անդնդոց զիս ծածկեցին...

Ո՞ր են փեսայքն իմ առաջին,
Հայրապետաց չոկքն որ անցին.
Ո՞ր թագաւորքն իմ են նախկին,
Ո՞ւր և ազատքն ընդ սեպուհին.
Ո՞ր են իշխանք գահագլխին,
Նախարարաց կոյտքն որ կային։
Ո՞ր զօրութիւնք բիւր բանակին,
Խուռնեալ ամբոխքն անթուելին.
Ո՞ր բաբունիքն որ յիս կային...

Եվ մի մեծ շարք ճարտասանական հարցումներով հիշեցվում է Հայաստանի անցյալ փառքն ու ճոխությունը, որ,— ասում է,—

Նման հողմոյ յիս շնչեցին
Ու անհետ ի բաց անցեալ գնացին։

Եվ իրեն մնում է լալ ու վա՛յ տալ իր գլխին և դիմում է եկողներին, որ նրանք էլ վայ տան։

Փոխան բուրմանցըն նարդոսի
Աղբք և աւիշք ի քեզ կուտին...
Փոխան զենմանց պարարակին
Հօրանք այծից ի քեզ բունին.
Ա՛յ վա՛յ քեզ վա՛յ որ չվճարին,
Վա՛յ քո փեսայքըն առաջին...
Վա՛յ զքո երէցն Արշակունին.
Վա՛յ զքո կրտսեր Բագրատունին.
Վա՛յ զքո Սիւնին և զԱրծրունին.
Վա՛յ զՄամիկոնին և զԱղուանին,
Վա՛յ զՇիրական և զՎանանդին.
Վա՛յ զՏարօնոյն և զՕրփացին...

Այսպես սաստիկ ողբ ու կոծ. բայց՝ մինչև ե՞րբ։ Եվ Արքայուհին վերջը դիմում է իր «նախածին դուստրներին» (Հայաստանի եկեղեցիներին-վանքերին), և նրանց, որ եկել էին նրա կուչին[17] և իր մոտ էին, խոսքն ուղղում է նաև այն ժամանակվա բոլոր նշանավոր վանքերին ու հայկական կենտրոններին, և հայաբնակ վայրերին, որ են՝ Դվին, Անի, «Սիւնիք և Աղուանք ընդ Վիրային», Ամարաս վանք, Արտազի Թադեոս առաքյալի վանք։

---

17 *Բնագիրն է՝ «Ջորս և առ իս ժողովեցին»— և նրանց որ ինձ մոտ ժողովեցի։ «Ժողովեցին» բայն այստեղ հոգնակի 3-րդ դեմքով չէ, այլ եզակի 1-ին դեմքով։ Վերջի «ն» տառը հոդ է։*

Հաղբատ, Բջնին 'ւ Ամատունին,
Որ յԱրագած ես յԱնբերդին.
Բագուան և Կարս ընդ Բասենոյն,
Կարին քաղաք բարձր հային,
Վասպուրական տունըդ Վանին,
Տարօն, Սասունք և Տուփայքին,
Եւ այլ աշխարհ հայասեռին՝
Միջագետաց և Հոռոմին,
Կիւլիկիայ, Կողմ Ստորին,
Պատուեալ գլխովքըդ մեր նախկին[18]։

Նա խոսքն ուղղելով այս ամենքին՝ ասում է.

Թողո՞ւմք զողբանքըս ցաւագին,
Առնե՞մք աւարտ լալեաց բանին.
Յուսահատիլ չէ պարտ քնաւին։

Պետք է զարթնել ինքնամոռացության քնից.

Զարթնուլ ի քնոյ զբաղականին։

Վախճան կլինի հայերի կրած բազմամյա չարիքին, կնորոգվի կյանքըն,—ասում է Արքայուհին։

Նա՛ [=ահա] նորոգումըն մեզ կրկին,
Որ բնաւ չյիշեմք զփառսն առաջին.
Կանգնէ [աստված] զաթոռ թագաւորին,
Եւ զգաւազան պատրիարքին,
Ամենեցունց ըստ իւր կարգին,
Ուղղէ զգահոյս տիրականին [=տերության],

---

18 *Տալած է «Կիւլիկիայ կողմ ստորին», իբր Կիլիկիան կոչվելիս լիներ «կողմ ստորին»։ Ուղղում եմ ինչպես գրված է վերևում։ Այսպես՝ «Կողմ Ստորին», «Աշխարհ Ստորին» կոչվում է հին Կոմագենի և հետագայի Եփրատեցիք կոչված աշխարհը, Ներսես Շնորհալու «Միջերկրայք» անվանած երկրամասը, որ, ինչպես Շնորհալու կենսագրության մեջ տեսանք, ընկնում էր Կիլիկիայից արևելք և Եփրատից արևմուտք և հյուսիս-արևմուտք, որ և միաժամանակ Անտիոքի Ֆրանկ իշխանության ներքո է եղել։ Այնտեղ էին Սև լեռները, Կարմիր վանք և Տովք ու Հոռոմկլա կաթողիկոսական աթոռանիստները։ Սրան է ակնարկում Օրբելյանը, երբ «Ստորին Կողմի» համար գրում է «պատուեալ գլխովքդ մեր նախկին», այսինքն նախկին կաթողիկոսներով, որ են՝ Գրիգոր Վկայասեր, Գրիգոր Պահլավունի, Ներսես Շնորհալի և ուրիշները։ Քիչ առաջ էլ «Ողբի» մեջ Օրբելյանը կաթուղիկեի բերանով ասում է. «Փեսայս [=կաթողիկոսը] այրի թողեալ [զիս կաթուղիկէս] հալածեցաւ յԱշխարհ Ստորին»։ Ներսես Շնորհալու «Ողբի» մեջ էլ Անտիոքին դիմելուց հետո՝ ասված է. «Արդ՝ ի Ստորին Կողմն աշխարհի Զոր խօսեցաքըս՝ շատասցի. Բայց բանըս մեր փոփոխեսցի, Յելս արևու վերադարձցի, Առ Մեծըն Հայք, տուն Թորգոմի»։ Օրբելյանի Պատմության մեջ (գլուխ ԿՐ, էջ 439) Մեծ Հայքը կոչվում է «Վերին Աշխարհ Արևելից»։*

Նոր զարդարէ փառօքըն հին,
Ծաս առաւել քան զոր էին.
Տայ մեզ գոչել ձայնիւ ուժգին.
«Վերջինս է մե՛ծ քան զառաջին»։

Ահա Օրբելյանի քերթվածի նյութն ու գլխավոր գաղափարը։ Հայրենասիրությունը նրա երկի մեջ ավելի խորացած է, դարձած մի կոնկրետ ձգտում։ Այդ այլևս ոչ թե լոկ ողբ էր, ոչ թե տարագիր ժողովրդին հավաքելու և փրկելու մի տարտամ իղձ և աղոթք էր, որ երգել էր դեռ Հովհաննես (Յովհաննէս) Սարկավագ Վարդապետը. ոչ թե մի երազ արևմտյան ազգերի ձեռով փրկվելու արևելյան քրիստոնեության հետ, այլ քարոզվում էր վերջ տալ ողբանքին, խնամ տանել սեփական երկրին, ձգտել բնիկ երկրում ունենալու եկեղեցական կենտրոնը և Այրարատյան դաշտում, իր նախկին վայրում, վերանորոգելու Հայոց թագավորական գահը։ Այս արդեն մի նոր ու մեծ, պարզ ու որոշ զարգացում էր մեր հայրենասիրական երգի մեջ արծարծված գաղափարի—սիրով կապվել բուն հայկական երկրի հետ և կլինի «նորոգումը»։

5. Ուրիշ ձևական կողմեր։—*Վերևում բերված բովանդակությունից և հատվածներից կարելի է տեսնել, որ Օրբելյանի բանաստեղծության ձևն ըստ ընդհանուր կառուցվածքի հարմար ու գեղեցիկ է մտածված. ըստ ոճի կամ մանրամասների արտահայտության, սակայն, բավական աղքատ է, չունի պերճություն. հայ թագավորությունների մասին պատմող կտորների մեջ նույնիսկ պրոզաիկ է հնչում։ Բայց գրվածքն ընդհանրապես չոր ու ցամաք չէ, ինչպես գուցե թվա ոմանց։ Դա ազդում է, որովհետև շնչում է մի անկեղծ ջերմ զգացմունք, որ կենդանություն է տալիս ամբողջին, և որովհետև իր էական գաղափարով մտածել է թելադրում ընթերցողին։ Դրանցով այդ երկը հաճույք է պատճառել իր ժամանակին, պատճառում է և մեզ իսկ։*

Օրբելյանի քերթվածի ձևական թերությունը պարզ ու հասարակ ոճի մեջ չէ,—քանի որ այսպիսի ձևով էլ բանաստեղծությունը կարող է գեղեցիկ լինել,—այլ պակաս ինքնուրույնության մեջ։ Դա մասամբ նմանողություն է ներսես Շնորհալու «Եղեսիո Ողբին»։ Ավելորդ է այստեղ դնել այդ երկուսի մանրամասն համեմատությունը։ Երկուսի մեջ էլ ընտրված է դիմառնության ձևը, Եդեսիան իբրև ողբացող այրի կին կամ տիկին, Վաղարշապատի Կաթուղիկեն՝ իբրև նույնպիսի թագուհի։ Երկուսն էլ ուրիշներին կոչում են ի ողբակցություն։ Երկուսի մեջ էլ հին լավ օրերի և ժամանակակից աղետալից վիճակի հանդիպադրություն, որ սակայն Ն. Շնորհալուց առաջ էլ արել է ողբացող Արիստակես Լաստիվերտցին։ Երկուսի մեջ էլ դրա համար կիրառված են «ուր» բառով ճարտասանական հարցումներ։ Կան նաև մի քանի նման պատկերներ և այլ թեթև նմանություններ, որ երկրորդական են, օրինակ՝ սգացող կնոջ նկարագրի մեջ Շնորհալին ունի՝ «Քարամբ ծեծեմ կուրծրս սրտի», Օրբելյանը՝ «Զկուրծքըն բախէր քարամբ ուժգին»։ Անցնել և այլևս չերևալ ստվերի պես կամ

երազի պես. կամ «Որպէս ծաղիկ ամարայնի» (Շն.), «Որպէս ծաղիկք ամարայնոյն» (Օրբ.)։ Բայց այդ ամենը, բացի գուցե բարառնութիւնից, կարող են համեմատ լինել նյութի նմանութեան պատճառով և միմյանցից անկախ ևս ծագած լինել իրական կյանքից։ Բացի այդ՝ շատ ճարտասանական և բանաստեղծական պատկերավորութիւններ այն ժամանակներում եղել են ընդհանուր տեղիներ և սովորական դարձվածներ. ինչպես՝ Կաթուղիկեն անվանել են մայր եկեղեցի, իսկ մյուս եկեղեցիները՝ նրա դուստրներ։ Սրանից էլ կարող է բխած լինել Վաղարշապատի Կաթուղիկեի բարառնական պատկերացումն իբրև մի կին, շրջապատված իր դուստրներով—եկեղեցիներով, վանքերով։ Բայց այս ամեն ձևական նմանութիւնները երկրորդական են, քանի որ Օրբելյանի երկի ընդհանուր հորինվածքն ու նրա զարգացումը հեղինակի իրեն (գուցե Խաչատուր Կեչառեցու հետ խորհրդակցութիւնամբ) ստեղծածն են և նյութին ու թեմային հարմար ու վայելուչ մտածված ու գլուխ բերված։ Եվ որ գլխավորն է, ինչպես վերևում ասվեց, նա արտահայտիչ է դարձել արևելյան հայութեան որոշ խավերի։

ԽԱՉԱՏՈՒՐ ԿԵՉԱՌԵՑԻ

1. Ողբ վասն իշխանացս։—*Այս գրողի մասին չունինք ուրիշ կենսագրական տեղեկութիւններ, բացի վերևում հիշվածներից, որ իմանում ենք Օրբելյանից, որոնցից և երևում է, որ նա մի հեղինակ է, որ պատկանելի գիտնական է եղել, Կեչառուք կամ Կեչառիս վանքի առաջնորդ կամ միաբան, ուստի և ըստ ժամանակի սովորութեան կոչվել է Կեչառուեցի կամ Կեչառեցի։ Գուցե և այդպես անվանվել է իր ծննդենիքով։ Քանի որ, ինչպես տեսանք, Կեչառեցու դրդելով է Օրբելյանը գրել իր «Ողբը», ապա սպասելի է, որ նա ինքն էլ հայրենասիրական ոգով տոգորված լիներ։ Ալիշանը հիշում է Կեչառեցու «Ողբք վասն աւերման տանս արևելեան»*[19] *և բերում է սրանից ութ տող։ Այդ, ըստ երևույթին, նույնն է, ինչ որ մի ուրիշ ձեռագրի մեջ կա «Ողբ Խաչատրոյ Կեչառեցոյն վասն իշխանաց» վերնագրով.*[20] *որովհետև սրա մեջ կան մեր բանաստեղծ բանասերի իր մեծ աշխատութեան մեջ առած ութ տողերը։ Այս «Ողբը» կազմված է երկու մասից. երկուսն էլ արվեստի տեսակետից աննշան բաներ են, բայց արժեք ունեն իրենց պատմական բովանդակութեամբ։*

Ինչպես վերևում տեսանք, Սյունիքի Տարսայիճ իշխանը, որ ընդարձակ սահմաններով Հայաստանի կառավարիչ էր, մեռել է 1290 թ., և դրանից հետո Արևելյան Հայաստանի վիճակն սկսել է վատանալ։ Ղազանի իշխանութեան սկզբում (1295 թ.), նրա գորավար Նավրուզը, որ

---

19 Ղ. Ալիշան, *Այրարատ, էջ 268 ա, 15—22։*

20 *Հայաստանի Պետ. Ձեռագրատուն (Մատենադարան), գրչագիր № 425 (Գանձարան), էջ 681—685։ Այս «Ողբի» արտագրութիւնը շնորհակալութեամբ ստացա Մատ. գիտ. աշխատակից Լ. Խաչիկյանից։*

«յոյժ ատեցող էր քրիստոնէից և թշնամի եկեղեցաց», հրամայում է «առհասարակ քակել զամենայն եկեղեցիս, և կողոպտել զամենայն այր քրիստոնեա և, թլփատել զքահանայս»։ «Քակեցին բազում եկեղեցիս. խողխողեցին բազում քահանայս. կոտորեցին բազում քրիստոնեայս. և որք ի սրոյն մնացին՝ կողոպտեցին զամենայն ինչս. գերեցին բազում կանայս և մանկտիս»։ Եվ այդպես վարվել են, մինչև որ Կիլիկիայի Հայոց թագավոր Հեթումի միջնորդությամբ՝ Ղազան ղանը հրամայել է դադարեցնել քրիստոնյաների հալածանքը, և «լինէր խաղաղութիւն մեզ և ամենայն աշխարհիս Հայոց», գրում է Ստեփաննոս Օրբելյանը[21]։ Խաչատուր Կեչառեցու «Ողբի» մեջ պատկերացված է ահա Արևելյան Հայաստանի այս տխուր դրությունը 1295 թվականին, և երևում է, որ նա այն միջոցին էլ հորինել է իր քերթվածը, ինչպես Ֆրիկն իր նշանավոր մի բանաստեղծությունը, որ կտեսնենք հետո։ Նա ողբում է մեջ բերելով երկրի ըստ եկեղեցական հայացքի ընկած դրությունը։

Զերկիրս արեամբ, մեղաւք ներկեցաք...
Զեկեղեցեաց դրունըս փակեցաք...
Զաւազանին խորհուրդն ուրացաք...
Զխաչն և զհաղորդըն զայրացուցաք,
Զեկեղեցին սուրբ քամահեցաք.
Ծաղր ու նախատ բազմաց մեք եղաք.
Յերկաթ ու ի նեղ ըընդան մեք մըտաք,
Յաղքատութիւնս որ ժամանեցաք...
Ի ձեռըն չար ազգի գրաւեցաք.
Բըժիշկ չունինք ցաւիս որ դիպաք...

Ինչո՞ւ է այդպես։—Որովհետև այլևս չկան հին հայ իշխանները,—մտածում է քերթողը։ Եվ նա իր քերթվածի երկրորդ մասի մեջ մեկ մեկ թվում է իր շրջանի նշանավոր իշխաններին.

Մեռա՜ն իշխանքըն մեր ցանկալի,
Ու իրեանց որդիքն տղայ հասակի.
Սուգըն տիրեաց մեզ Իսրայէլի...
Սադո՜ն, սիրա՜ծ մեծ Ապա ղանի,
Գոված, ընտիր յամէն հանդիսի,
Զաչերըդ բաց, զինչ Դամասկոսի,
Տես ըզգաւառս ի յերեմանի,
Զեկեղեցիս ի մեծ վըտանկի,
Ու fահանայս ի տարտարոսի,
Զխուխլու բուղայն յարեան հալաւի,
Զիւրեան նըման պատկերն ի մոխրի.

21 Ստ. Օրբելեան, *Պատմ. նահանգին Սիսական*, էջ 471—475։

Զարքայն չիշխեմ յիշել վվրացի,
Զատլաս երեսն զԴեմետրէի,
Որ դեռ քըրտունքն ի վայր կու վաթի՝
Սիրտըն քաշած, ու դեռ կենդանի։
Պարոն Պըռոշըն զարդ հեծելի,
Որ զերկաթի դուռն առնէր փոշի,
Աջու բաղուկ էր նոր Սիոնի,
Հիմն հաստատ Հայոց հաւատի...

Նա այսպես գովելով հիշում է և Պռոշի որդիներին, Տարսայիճ իշխա-նին և ուրիշներին. վերջը բացականչում է տրտմութեամբ լի.

Աւա՜ղ, թէ զորն ասեմ ի լալի,
Զայն հին ու նորքն ի գերեզմանի։
Վա՜յ զմնացորդքըս սուտ կենդանի,
Մակար չէաք ծընեալ յաշխարհի։
Արդ գերեցաք ու խիստ արժանի,
Մեր գերադարձքըն չեն ի միջի։
Աւգնեա մեզ ի նեղութեան մերում,
Աստուա՛ծ, աղաչեմք։—

Այսպես աղոթքով վերջացնում է նաև առաջին մասը։

Նրա երկի արժեքը միայն այն չէ, որ նա ազդվել է ժամանակի իրա-կանութիւնից, այլ ավելի այն, որ ողբալով Հայաստանի թշվառ դրու-թիւնը երկրորդ մասի մեջ կարոտով հիշում է հին նշանավոր իշխաննե-րին, որոնք «Կորիւնքն առւծի» էին, «զաւրաւոր ի պատերազմի», «պատուեցան ի դուռն արքունի» կամ, ինչպես մեկի համար գրում է միջ-նադարի համար մի անսպասելի համեմատութեամբ,

Հանց ուժընդակ էր ինքն յատենի,
Քան Քրիստոսի նըշանն [=խաչը] ի բեմբի։

Քերթողը խիստ ցավում է, որ այլևս չկան նրանք. եթե լինեին այն-պիսի իշխաններ, մեր երկիրն արյունով չէր ներկվիլ։ Թվում է, թե նույն տարիներին հենց մեր այս քերթողի մտքում ծագել է Հայաստանի կենտ-րոնում հայկական քաղաքական իշխանութիւնը վերականգնելու գաղա-փարը, որ քիչ հետո երգել է Ստեփաննոս Օրբելյանը հենց այս քերթողի հորդորանքով։ Պետք էր հայերին ուսուցանել, թե ի՛նչ էր հարկավոր իրենց փրկութեան համար։

2. «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ»։—*Խաչատուր Կեչա-ռեցին գրականութեան համար ուրիշ կողմից էլ որոշ դեր կատարել է։ Թաթարների իշխանութեան օրով, 13-րդ դարի երկրորդ կեսին, ինչպես տեսանք, կանգ չի առել հայկական քաղաքների բարգավաճումը։ Նրանց-*

բնակիչներն էլ ունեին իրենց դրական պահանջը։ Բացի գուսանական երգերից, որոնք զվարճացնում էին փարթամ քաղաքացիներին նրանց ուրախության խնջույքների միջոցին, ծագում է նաև թեթև ընթերցանության գրքերի կարիքը։ Սրբերի վարքերը, «Յայսմաւուրքի» մեջ մտած և ուրիշ վկայաբանություններն այլևս չէին գոհացնում ընթերցասերներին։ Հարկավոր էին, այսպես ասած, զբոսուցիկ կամ զվարճական վեպեր ևս, որոնցով նրանք զբաղվեին իրենց պարապ ժամերին։ Մեր դպրության առաջին դարում արդեն գեղեցիկ լեզվով թարգմանված էր Կալիսթենեսին վերագրված «Աղեքսանդրի պատմությունը»[22], որ նիրված է եղել հայերի մեջ։ Միջնադարում ասպետական ռոմաններից մի առանձին ցիկլ են կազմել Ֆրանսիայում նաև Ալեքսանդրի վեպերը, որոնք մշակված են հնության ավանդություններից և ֆեոդալական սովորույթների խառնուրդով։ Ինչպես երևում է, մեղանում ևս 13-րդ դարի վերջերում պահանջ է եղել այդ գրքի համար, որ Խաչատուր վարդապետն անձամբ արտագրել է այն՝ «սրբագրեալ [=մաքուր գրելով] ի գրոց հնոց»[23]։

Բայց նա իբրև լոկ «գրիչ» չէ հանդես եկել, այլ նաև իբրև քերթող. այն պատմության հատվածների վերջում դրել է քերթվածներ, որոնց մեջ նույն նյութը ժամանակի կենդանի խոսակցական լեզվով պատմում է նմանողությամբ, կամ հորինում, հարմարում է «ոտանավոր նմանողական պատմություններ», որոնք կոչվում են «կաֆայք», այսինքն հանգավոր ոտանավորներ։ Սրանց մեջ, սակայն, չի առնվում հատվածների բովանդակությունն ամբողջապես, այլ այս կամ այն կետը, որ արժանանում է հեղինակի ուշադրությանը, որից և ազդվում է նա։ Ուստի այդ ոտանավորները միասին չեն կազմում մի կապակցված պատմվածք։ Այս ձևով, սակայն, նա թարմացրել և ավելի ևս հետաքրքիր ու գրավիչ է դարձրել Աղեքսանդրի առասպելախառն Պատմությունը։ Հետո ուրիշները,—ինչպես նույն Պողչյան տոհմից Զաքարիա եպիսկոպոսը Գնունյաց, որ կոչվում է Գնունցի, ինչպես և սրա ուսուցիչ Գրիգորիս Աղթամարցին,—նույնպես հորինել են համանման քերթվածներ, որոնք հետագայում խառնվել են միմյանց և աղավաղվել են, կրելով նորանոր խմբագրություններ հավելումներով ու կրճատումներով։ Այդ գրքի սերն ու պահանջն այնքան մեծացել է, որ ծաղկագրվել ու նկարազարդվել էլ է՝ Զաքարիա եպիսկոպոսն էլ եղել է դրա նկարող ու ծաղկագրող. «Զաքարիա եպիսկոպոս՝ գծողս և նկարողս Աղեքսանդր գրոց», դրում է նա իր համար։ Ուրիշներն էլ նույնն արել են, այնպես որ կան ձեռագիրներ, որոնց ամեն երկու երեսին կա մի նկար պատմված դեպքերի վրա[24]։ Քերթվածներ գրված կան նաև նկարների տակին կամ շուրջը և վերաբերում են երբեմն նկարներին։

---

22 «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ», Վենետիկ, 1842։

23 Տաշյան Հակոբոս, Ուսումնասիրութիւնք Ստոյն Կալիսթենեայ Վարուց Աղեքսանդրի, էջ 86 և հետ., 112 և հետ.։ Տեղեկությունների մի մասն առնվում են այս գրքից։ «Սրբագրեալ» ոչ ուղղել ըստ այս բառի նոր նշանակության, այլ՝ մաքուր գրել, արտագրել։

24 Անդ, էջ 113։

Ինչո՞ւ է այսպես սիրվել այս դիրքը։ Դա միակն է եղել իր տեսակի մեջ և ժողովրդականացած, իբրև պատմություն Ալեքսանդր Մակեդոնացու, որի անձնավորությունը Ա՛րևելյան, Ա՛րևմտյան շատ ժողովուրդների հիացմունքի առարկա է եղել։ Բայց կա և հետևյալ հանգամանքը։ Այն ժամանակի պարզամիտ մարդիկն ընդհանրապես շատ հեշտ հավատում էին ամեն տեսակի հրաշալիքներով լի պատմվածքների, որոնք գրգռում էին նրանց երևակայությունը և դյուր էին գալիս նրանց։ Հիշենք միայն, թե ինչեր է պատմելիս եղել Հեթում թագավորն առ Մանգու ղանն արած հեռավոր ճանապարհորդությունից վերադառնալիս. «Բազում իրս զարմանալիս և անծանօթս պատմէր մեզ զբարբարոս ազգացն, զոր տեսեալ էր և լուեալ։ Ասեն թէ կայ աշխարհ մի անդր քան զՀատայիքն, ուր կանայք են ի ձև մարդոյ բանականաց, և արքն ի կերպարանս շանց, և են անբանք, մեծք և մազեղք... Կայ կղզի մի աւազուտ, յորում բուսանի ծառօրէն ոսկր ինչ պատուական... և ի հատանելն այլ բուսանի ի տեղին ըստ նմանութեան եղջերուաց»[25]։ Սրանց նման բաներ են և Սուտ Կալիսթենեսի ֆանտաստիկ պատմածները, թե Ալեքսանդրը հեռավոր երկիրներում ինչ հրեշավոր էակներ է տեսել։ «Տեսաք չնագլուխս և անգլուխ մարդիկ, որ զաչսն ունէին ի լանջսն և զբերանն»։... «Եւ էին յայնմ անտառին մարդիկ, որ տնկածոյք կոչէին, և ունէին մեծութիւն առ մարդ կանգունս քսան և չորս, և երկայնապարանոցք էին, և ձեռք և մատունք սղոցաձևք... Ապա անդուստ գնացեալ՝ եկաք ի դալարկուտ իմն վայր, ուր կային մարդիկ վայրենիք նման հսկայից, մեծութեամբ իբր զառաջինսն, լանջօք բոլորակք, թաւ, շէկ. և ունէին երեսս որպէս զառիւծու... Հերս ունէին կանգունս չորս և լայնութիւնն իբրև աշտէի, և եկին առ մեզ մաշկեայ պարեգօտովք, հզօրք յոյժ, պատրաստք պատերազմ տալ՝ առանց տիգաց և նետից»։ Տեսնում են և երեքաչքանի գազաններ, կրիայի չափ լվեր, մարդակեր մարդիկ, «թաւ իբրև այծ», որ շան պես հաջում են. հրաշալի ծառեր, ձկներ, «որք հուրբ ոչ լինէին եփեալք, այլ ցուրտ ջուրբ աղբերաց», հինգ ոտանի գազաններ, «հինգ աչօք և այլք վեցաչք և վեցոտանիք, երկայնութեամբ իբրև կանգունս երեսուն»։ «Անգլուխ» մարդիկ. «գլուխ ոչ ունէին բնաւ, այլ ի լանջս ունէին զաչս և զբերանն», և այլն[26]։

Դժվար թե ինքը կեչառեցին հավատացած լինի ամեն այսպիսի, իր բառով ասենք, «շաղփաղփ» բաների, բայց այսպիսի կտորներն էլ է նա վերածել քերթվածի.

Ա՛յ իմ հրաշագործ Աստուած՝
Արարիչ ազգաց ամենի,
Ու զարմանալի քոյ գործք՝
Ջինչ պատմեն երամք տեսողի.
Ըզբուսանովի ոչխարս

25 Կ. Դանձակեցի, *Պատմութիւն Հայոց*, էջ 356։

26 «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ», հատ. ՄՄՀ. ՄԹ., էջ 168, 122 և հետ.։

Ջը տեսաք ի Հունդուստանի.
Բայց զայս տընկածոյ մարդիկ՝
Ձենք տեսել յառակս ամենի։
Այս են հըսկայքըն վայրենի
Որ են սըներ ի յանտառի,
Լանջք բոլոր թաւք շիկամորթի,
Երեսս ունել իբր առիւծի,
Հերս ունէին չորից կանգնի՝
Ու լայնութիւն գինչ աշտէի.
Պարեգաւտաւք մաշկեղինի՝
Պատրաստեցան ի կռիւ յայտնի.
Եւ խարճ ածին յանկարծակի
Երկուց կողմանց վտանգելի։
Տեսողացս է հիանալի,
Եւ ի մէնջ է ձեզ պատմելի...[27]

3. Կեչառեցու կարծիքն Ալեքսանդրի կյանքի և Պատմության մասին։—*Կա մի ուրիշ պարագա ևս, որով այս գիրքն արժանացել է մեր այս Քերթողի առանձին ուշադրությանը։ Առաջաբանի մեջ «նախադրութիւն շարադրութեանց գրոց աշխարհակալին»՝ նա հայտնում է, թե «Աստուածազան խնդիր հարանց հոգևորաց և համշիրակ համբակաց և համակամ և մշտաշարժ սիրով ստիպել է» իրեն «արտաճառել... զաշխարհակալ իմաստունն, որ* տիպ և գաղափար եղև ճշմարիտ երկնաւոր թագաւորին՝ և կուսածին աստուծոյն մերոյ Յիսուսի Քրիստոսի». *որովհետև թեպետ և Արիստոտելը գրել է այն վիպասանությունը, «սակայն արդիւնքն շահաւէտ ոչ տրամադրեցաւ ի տարմալուկ մտաց նորա», այսինքն նա իր պատմածները չի նմանեցրել Քրիստոսի տնօրինականներին, որ և ինքն այն անում է «յօգուտ ոմանց բանասիրաց»։ Վերջն ավելացնում է, թե Ալեքսանդրի կյանքը պատմում է «յօգուտ և յօրինակ ամենայն թագաւորաց և իշխանաց... և քաջահմուտ արանց պատերազմողաց .ղ. [=չորս] են արտադատմունք՝ գիտութիւն, արիութիւն, համբաւ և դատաստան։ Այսպես և ըստ այսմ օրինակի վայել է արքայից և զօրապետաց իմաստուն և հանճարեղս լինել... Իսկ արդար դատաստանաւ՝ որ է մասն քաւից խոհեմութեանց ըստ իմաստնոյն Պղատոնի, որ գրեալ է ի Տիմէական տրամաբանութեանն որ իսկապէս ի սա տեսանի լաւաբախտ յաջողութիւն առ ասացեալ իրացս յայտարարութիւնքն»։*

Բերենք նախաբանի բուն մասը, որի մեջ բացատրում է, թե ինչպես Ալեքսանդրի կյանքը «տիպ և գաղափար» կամ պատկերն է Քրիստոսի կյանքի։ «Աստանօր նախաճառեմք զծնունդ նորա [=Աղեքսանդրի], որ եղև շարժմամբ և նշանօք՝ բերելով զնկարագրութիւն ապէնիազն աստու-

---

27 *Առնված է Հ. Տաշյանի «Ուսումնասիրութիւնք Ստոյն Կալիսթենեայ» գրքից, էջ 120։*

ծոյն սր եղև ի Բիթղահէմ աստեղն գուշակմամբ և գալստեամբ Արաբացւոց։ Իսկ յաղթութեամբն խուժադուժ ազգաց՝ յայտ առնէ զյաղթութիւն Տեառն խաչիւ ի վերայ խաւարասէր իշխանին։ Նաև քակտումն Ծուրայ և Ծայդանայ՝ զաւերման դժոխոց բերէ զյիշատակ։ Իսկ զըմպանակն մահաբեր արբեալ նմա՝ արտայայտէ զճաշակումն լեղւոյն և քացախոյն վասն յառաջաճաշակ պտղոյ նախաստեղծին։ Իսկ փայլակն որ անկաւ ի ծով և աստղն զոր վերացոյց արծուին՝ ցուցանէ զաւանդումն հոգւոյ հզօրին՝ որ ի ծոց ծնողի նորա։ Եւ զշանթն հրացեալ ի ջուր՝ աղդէր ընսեմանալ լուսաւորացն. իսկ շամանդաղն՝ զխաւարն աշխարհատարած, որ ընդ բոամբ ածեալ շօշափէր իբրև զհանդերձ։ Նմանապէս ամք կենաց նորա ԼԹ [=38]. նունքանիւ չափեալ զժամանակ՝ ելանելոյ յաշխարհէ աստուածն բանի»։ Վերջն ավելացնում է, թե ամբողջ համեմատությունը լիովին կգտնես գրքիս վերջում։

Գրեթե բոլոր ձեռագիրներն ունին բարառնություններին անմիջապես կից վերջաբանական մի հատված, որի խորագիրն է. «եթէ ամենայն կեանք վարուց յաղթութեան և արիութեան, նաև վախճանն նշանօք առ տէրն մեր, զոր բերեմք մարգարէութեամբ». կամ ըստ ուրիշ ձեռագրի՝ «եթէ որպէս առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս վերաբերի Աղեքսանդրոս»[28]։ Սրանից մի կտոր տպագրված է[29]։

Խաչատուրը ջանում է համոզել, որ եթե Եվային խաբող թշնամու ասածը, «Կամ առ Մովսէսիւ օձն օրինակ եղև տեառն չարչարանաց... նաև պոռնկիկն Ովսէի և մեղանչելն Դաւթի ունի տեսութիւն մարգարէութեան, նաև պատկերն Աբեննայ, ապա ո՞րչափ ևս առաւել այրս այս սքանչելի Աղեքսանդրոս Մակեդոնացի տիպ և գաղափար եղև երկնակալ թագաւորին մերոյ Յիսուսի Քրիստոսի, զոր Աստուծով և աստուած օգնական պարգևօք յայտ առնեմք»։ Ապա բերում է 18 բաղդատություն Քրիստոսի և Ալեքսանդրի կյանքի։ Կաֆաներից մեկի վերջին տողերի մեջ էլ նա գրում է.

Քաջ առիւծ էր [Աղեքսանդր] հեծելի...
Կարողութեամբ Սամսոնի,
Եւ օրինակ էր Քրիստոսի։

Խաչատուր Կեչառեցու այդ վարմունքը, որի դեմ 19-րդ դարում անգամ ծառացել են Եվրոպայում նստած կաթոլիկ վարդապետները, հետաքրքիր է նախ այնու, թե մինչև ո՛ւր է հասել մեզնում միջնադարյան սքոլաստիկ մտածողությունը. մեր վարդապետները քրիստոնեական աստծու մարդեղության, այսպես ասած «տնօրինականների» սիմբոլիկ պատկերները տեսել են ոչ միայն Հին Կտակարանի մեջ, այլև Աղեքսանդրի Պատմության։ Այդ մի շատ պայծառ իլյուստրացիա—լուսաբանումն է այդ

28 Հ. Տաշյան, *Ուսումն. Ստոյն Կալ.*, էջ 87, 100—105, 115։

29 «Պատմ. Աղեքս. Մակեդ.», էջ 195, ծանոթության մեջ։

ուղղության, դրա համար և կանդ առանք այդ մասին։ Բայց միայն այդքանը չէ Կեչառեցու գործի պատմական նշանակությունը, այլ դա միաժամանակ ցույց է տալիս, որ նույնիսկ սքոլաստիկ վարդապետն ազատախոհ է եղել։ Նա, որ ծանոթ է Պլատոնի, գուցե և ուրիշ փիլիսոփաների երկերին, առանց քաշվելու ազատ մեկնություններ է տալիս «հավատով աշխատելով», այսինքն հավատալով իր ասածների ճշմարտությանը, չմտածելով անգամ, թե դրանով պրոֆանացիայի—սրբապղծության է ենթարկում իր կրոնի խորհուրդները։ Եվ այդ անում է նա «աստվածազան հոգևոր հայրերի» ու «համշիրակ համբակների» խնդրելով՝ «յօգուտ ոմանց բանասիրաց»։ Այսպիսի ազատամտությունն, ուրեմն, լոկ անհատական չէր, այլ հատուկ էր եղել որոշ մտավորական խավի։

Ամենքը, հարկավ, այդպես չեն մտածելիս եղել։ Կեչառեցին գիտե, որ իրեն մեղադրողներ էլ կլինեն այդ բանի համար. ուստի Ալեքսանդրի կյանքն իբրև «տիպ և գաղափար» Քրիստոսի ներկայացնելուց հետո՝ «Յիշատակարանի» մեջ գրում է. «Եւ արդ զայս այսպէս համեմատեալ՝ մի՛ ստգտանիմք յոմանց, զի զպատճառն վերագոյն ճառեցաք. այլ ընթեռնելով զսա յիշման արժանի լիցի և ձէնջ հաչատուր կեչառուեցիս. զի ի յարմարում սակաւ բանիցս և ի գրչութիւն գրոցս հաւատով աշխատեցայ. նաև զի [այլ ընթերցված՝ «նա՛ դի»] հեթանոսական գրեալքն անմիաբան են և անվայելուչ ի վերոյ շաղկապեալ բանիւք որակացեալ, և ներքոյ լի սնոտի կարծեօք և խաբէութեամբ»[30]։ Շատ հետաքրքիր է և այս հիշատակարանը։ Որ այս, այսինքն Ալեքսանդրի և Քրիստոսի կյանքն այսպես համեմատեցի,—ասում է նա,—դրա համար թող չմեղադրվեմ ոմանցից. որովհետև պատճառը վերևում հայտնեցի։—Իսկ վերևում ասել էր, թե «աստվածազան հոգևոր հայրերը» ստիպել են նրան այդ մեկնությունները գրելու։ Դրանք երևի Կեչառուքի միաբաններ են եղել։—Չմեղադրեք ինձ,—ասում է նա,—այլ, ընդհակառակն,—շարունակում է նա,—այս որ կարդաք, ինձ հիշման արժանի արեք. «Որովհետև սակավ խոսքերս (այսինքն իր բաղդատությունները) հորինելու և այս գիրքը (Ալեքսանդրի Պատմությունն) արտագրելու համար հավատով նեղություն կրեցի, մանավանդ որ հեթանոսական գրվածքները (Ալեքսանդրի Պատմության) «անմիաբան» են, իրար չբռնող, հակասական են և «անվայելուչ», անվայել, անհարմար են՝ դրսից կապակցված խոսքերով որակավոր են, այսինքն գեղեցիկ են հորինված, և ներսից լի են սնոտի կարծիքներով ու խաբեությամբ»։ Կնշանակի՝ թեև Կեչառեցին արել է իր 18 բաղդատությունները, բայց նա չի ընդունել ամեն ինչ, որ պատմված է Սուտ-Կալիսթենեսի գրքի մեջ։ «Ալեքսանդրի Պատմության» կարճ ու գեղեցիկ քննադատությունն ըստ ձևի և ըստ բովանդակության՝ մի անհրաժեշտ հիմք է Կեչառեցու և իր պես մտածողների ղարգացման աստիճանը որոշելու համար։ Նրանք այնքան էլ խիստ պարղամիտ և դյուրահավատ չեն եղել, որ

30 Հ. Տաշյան, *Ուսումն. Ստոյն Կալ.*, էջ 88 և հետ.։

այն գրքի շաղփաղփանքներն ընդունեին։ Հարկավոր էր նրանցից զատել Ալեքսանդրի լավագույն բարեմասնությունները։ Դրա համար ահա նեղություն է կրել Կեչառեցին իր մեկնությունն անելիս։

4. Կաֆաներն և այլ քերթվածները։— «Ալեքսանդրի Պատմության» համար հորինված կաֆաների մասին դեռ չեն կատարված բավարար բանասիրական աշխատանքներ, որոնցով պարզված լինեին նրանց աղճատումները և որոշված լիներ, թե որո՛նք են Կեչառեցու գրածները, որոնք՝ Ֆրիկինը, Գրիգոր Աղթամարցունը, կամ ուրիշներինը։ Երկու քառյակի նույնությունը Ֆրիկի բանքերի հետ՝ ցույց կտրվի ներքևում։ Բացի այդ՝ պետք է նկատի ունենալ, որ Կեչառեցու գրվածքներից սակավաթիվ պատառիկներ միայն կան տպագրված. չեն հրատարակված նրա այլ բանաստեղծություններն ևս։ Ուստի հնարավոր չէ այժմ առհասարակ լիովին լուսաբանել նրա քերթողական դեմքը, պարզել նաև, թե նա ինչպես է մշակել իր ըստ բովանդակության նմանողական կաֆաները, որքա՛ն և ի՛նչպիսի ինքնուրույնություն է մտցրել նրանց մեջ՝ համեմատությամբ «Ալեքսանդրի Պատմության»։ Այդ պատճառով այստեղ կբերենք նրա անունով եղած երկերից բավարար հատվածներ, որոնցից կերևա նրա արվեստը։

Նա հաճախ հորինում է բարառնությամբ (պրոսոպոպոյիա), այսինքն կամ խոսքն ուղղելով անխոս կամ վախճանված հերոսներին, կամ նրանց բերանից խոսելով։ «Ալեքսանդրի Պատմության» այն հատվածի համար, որի մեջ պատմվում է Ալեքսանդրի ու Դարեհի ճակատամարտն և Դարեհի հաղթվելն ու փախչելը, տպագրված կա հետևյալը.

Ձա՜յն արար, ձա՜յն արար,
Փող բընարին ձայն արար...
Հաներ զթուրդ քո ճօհար,
Ի նրիվարըդ քո հեծար.
Ձամբոխդ ի հանդէս տարար,
Ձօրօք զօրավիգ եղար.
Ի Դարեհի հանդէպ հասար,
Ճակատըն բոլոր անցար.
Փոթորակի պէս խառնեցար,
Արծրւաբար դու բարձրացար։ . . .
Ճակատ առ ճակատ եղեն,
Խառնեցան յանդուգն ու ահագին,
Դիակօք զվայրըն լըցին.
Խաւարաւ արևն ի յերկին։
Խառնամբոխ մեծ հանդիսին
Աղեքսանդրու և Դարեհիս,
Սուսերամերկ կարաւանիս
Աճապարեալք ոատի գընդիս.
Դիաթաւալ արեան ծովիս,

Ճախր և ճակատ ի մէջ դաշտիս.
Կէսք վա՜յ ասեն յասպարիսիս,
Կէսք վա՜յ ասեն յաջողակիս։
Դարե՜հ, դարձաւ ալամդ ի չար.
Բաղդըդ նենգեց քեզ չարաչար.
Դարձի՜ր ի հետ 'ւ արա քեզ ճար.
Հա՜ն արտասուս անձրևաշար.
Բանդ ի վերուստ է անհընար,
Խափանեցաւ խորհուրդդ անկար[31]։

Եթե կեչառեցու այս վիպական հատկութիւնների մեջ առանձին շնորհք չի երևում, ընդհակառակն, ազդու և ճաշակավոր են նրա ողբերն ու բարոյախոսական կաֆանները հայրենի չափով և կենդանի խոսակցական լեզվով հորինված. սրանց մեջ խտացրած, սեղմ արտահայտված է որևէ իմաստալից միտք ըստ ժամանակի ոգու։ Այսպես, օրինակ, մի ո-րոշ շնորհքով է ոգված Ալեքսանդրի մոր ողբն իր որդու մահվան համար.

Մա՜րք մանկագունից, լացէ՜ք,
Վա՜յ տուք ինձ թշուառականիս.
Որ փառաց թափուր եղէ,
Խաւարի աչեր ծնողիս.
Արևն իմ շուտով մըտաւ,
Քաղեցաւ շունչս իմ ու հոգիս.
Ծառըս ծաղկաթափ եղէ,
Անպըտուղ կամ ի յաշխարհիս.
Ա՜յ իմ միամօր որդի,
Աղեքսանդր հզօր մեծ արքայ.
Ջեղէ արժանի տեսոյդ,
Վա՜յ մօրըս քո Ոլոմպիայ.
Ոչ բան մի բերնէդ լուայ,
Թէ սրտիս մէջըն կայ եարայ,
Քո ցաւուդ ես դեղ առնէի,
Կամ հէքիմ բերէի բեջարայ[32]։

Գեղեցիկ են և հետևյալ իմաստական-ուսուցական քերթվածները.

Հիւանդին աստուած է դեղ,
Որ մահու և տէրն է կենաց.
Ջհաքիմըն սաբաբ ասեն,

---

31 «Սիսուան, Համագրութիւն Հայկական Կիլիկիոյ և Լևոն Մեծագործ, հաւաքեալ ի Տ. Ղևոնդեայ վ. Մ. Ալիշան», Վենետիկ, 1885, էջ 399, ծան. 1—400։

32 Կ. Կոստանյանց, Գրիգորիս Աղթամարցի և իւր տաղերը, հավելված Աղեքսանդրի Պատմության տաղերը, Թիֆլիս, 1898, էջ 121 և հետ.։ Այս քերթվածը համարում եմ կեչառեցունը ըստ ամենայն հավանականության։

Խելօքնուն է բանս ասուցած.
Զոր և իմաստուն խօսիւք
Գալինոս բազմաց վկայեաց.
Հրամանն ի վերուստ պիտի,
Որ աւգնէ բժիշկըն գոված։

Միևնույն միտքն արտահայտված է բախտի անվի պատկերով ևս ըստ ժողովրդական հավատալիքի.

Յորժամ չարխն ի յետ քակի
Ու ձրգէ ի յաչքըն խոլոր,
Ոչ զաւրք և ոչ մալն աւգնէ,
Ոչ հարիւր հազար ձիաւոր։

Ահա և խաբուսիկ բախտի դեմ զայրույթը, կամ մարդուս անձարությունը հեղհեղուկ կյանքի և ապագայի անհայտության առաջ.

Է՛ չարխ, ես քեզ ո՞նց աւտամ,
Երբ չունիս զոք ոչ մաւտևոր,
Ոչ զավէ, ոչ երդում ունիս,
Զի քո սիրտըն է նենգաւոր...

Այս և նախորդ քառյակը կան նաև Ֆրիկի «Ընդդէմ ֆալաքին» բանաստեղծության մեջ [33] *և հավանորեն այստեղից են անցել «Ալեքսանդրի պատմությունը»։*

Երբ չարխն ու ֆալաք են մի
Միացե՛ր, ես ո՞ւմ գանգատիմ.
Այս իմ սրնուցած ծառայք
Ջրթողին սակաւ մի հանգչիմ.
Տօլվաթն ի քամի նըման,
Որ յերկրէ յերկիր վտարիմ,
Աստուած գիտէ թ՛ ուր մեռնիմ,
Կամ ես ո՛ւմ ձեռօք տի թաղվիմ[34]։

Վերջին տողերը հմմտ. Ֆրիկի հետևյալ տողերի հետ[35].

Ոչ գիտեմ թ՛ ուր մեռանիմ,
Ոչոք չունիմ որ թաղէ զիս։

Կեչառնցին սիրում է երգել կյանքի ունայնությունը, ուրիշ քերթվածների մեջ՝ երբեմն բավմաթիվ տներով, որոնք դասավորված են այբբե-

---

33 Ֆրիկ, *Բանաստեղծություններ*, Երևան, 1941, էջ 218 և հտն.։

34 Հ. Տաշյան, *Ուսումն. Ստոյն կալ.*, էջ 119 և հտն. «Հիւանդին աստուած է դեղ». Նաև Կ. Կոստ., *Գր. Աղթ.*, էջ 121։

35 Անդ, էջ 31. «Գեղեցիկ պատիերք ու հնր» տողով սկսվող բանքի մեջ։

նական կարգով ըստ իրենց սկզբի տառի։ Այդպիսիներից է, օրինակ, «Այս կեանքն է երազ նման» տողով սկսված շարքը[36], որ լի է բարոյա-կրթական խրատներով. բերենք դրանից հետևյալներն իբրև օրինակ.

Ճանապարհ անբիծ գնայ.
Որ չտիրէ տանջանքն անվախճան.
Մի՛ խաբիր սնոտի սիրով,
Որ խաւար բերէ հոգեկան,
Յիմար գինին չէ՛ բարի,
Նայ է ամեն մեղաց բանալի.
Նըման այնոր մի՛ լինիր,
Որ չափէ զքսամին ի սարի։
Շատ ապրելըն չէ պարծանք.
Պատասխանն իրաւ կու պիտի, և այլն[37]։

Այս տաղից տարբեր է նույն սկիզբն ունեցող հետևյալ գեղեցիկ քերթվածը մարդկային կյանքի ունայնության մասին[38].

Այս կեանքս է յերազ նըման,
Ջինչ զարթնու՝ լինի փոշիման.
Ի քուն գինքն իշխան գիտէ,
Երբ զարթնու՝ աղքատ է՝ւ անբան.
Թէ քալցել է՝ հաց տեսնու,
Լըրջանայ՝ կարօտ՝ւ անպիտան։
Այսպէս Աղէքսանդր եղև,
Որ մըտաւ ի նեղ գերեզման։

Աշխարհի երերուն կյանքի պատկերն ու ոչնչությունն է երգել Կեչառեցին նաև հետևյալ սիրուն կաֆայով[39].

Այս կեանքս է ի ծով նըման[40],
Որ մարդիկ ի ներս կու լողան.
Մարմինս է ի նաւ նըման,

---

36 Հիշում է Ալիշանը իր «Այրարատ» աշխատության մեջ, էջ 259 և հետ. Կեչառուքի և Կեչառեցու մասին գրելիս, բերելով այս առաջին տողը։

37 Անձամբ առնում եմ Հայաստանի պետ. ձեռագրատան (Մատենադարան) 1417 թվականին գրված № 8689 ձեռագրից, էջ 70։ Սկզբից պակաս է, մի թերթ հանած լինելով. նույնն այբբենական կարդով սկզբից սկսած («Այս կեանքս է նրազ նման») կա № 7709 ձեռագրի մեջ, էջ 153 ա։

38 Կ. Կոստանյանց, Գր. Աղթ., էջ 125. Տաշյան, Ուսումն. Ստոյն Կալ., էջ 127, հեղինակը Կեչառեցին է։

39 Կ. Կոստանյանց, Գր. Աղթ., էջ 115. տե՛ս և Տաշյան, Ուսումն. Ստոյն Կալ., էջ 119 և հետ.։

40 Պետ. Ձեռագրատուն, № 7039 ձեռ., էջ 156 ունի «Աշխարհըս է ի ծով նըման»։

Հոգիս է գանձ անմահական.
Միտքս է նաւավար ճարտար,
Որ հանէ զցամաքն յերևան.
Աւա՜ղ թէ կոտրի այս նաւս,
Մեք ի վար մընամք փոշիման։

Աշխարհիս ունայնութիւնն ու մահն է ողբում նա երազի և մեռնող հոր պատկերով ու խրատական բովանդակութեամբ նաև հետևյալ անտիսկ քերթվածի մեջ, որ բերում ենք ամբողջությամբ[41].

. ՈՂԲ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ
ԱՍԱՑԵԱԼ Ի ԽԱՋԱՏՈՒՐ ԿԵՋԱՌԱՑՒՈՅ

Եղբա՜ր ք, ձեզ խրրատ մի տամ,
Մի՛ կենաք դուք շատ խոր ի քուն.
Զարթի՛ ք և արթուն կացէք,
Խիստ ի մօտ եմք յօրն ի մահուն։
Աշխարհս է յերազ նըման,
Զինչ լինի մէկ մ' անուշ ի քուն.
Եւ ի քուն լինելն ի ներս՝
Գանձ գըտաւ անթիւ և անհուն.
Խընդալուն ցընծայր ի սիրտն՝
Եւ ուրախ էր գանձին սիրուն.
Եւ հանց համարէր յիւր միտքն,
Թէ լինիմ իշխան մեծատուն։
Երբ որ ի քրնոյն զարթեաւ
Եւ տեսաւ որ է՛ր սուտ ի քուն,
Յայնժամ փոշիման դարձաւ
Ի վերայ իւր շատ խընդալուն[42]։
Յորժամ հրամայէ աստուած,
Որ խընդիր գան մարդուն հոգւոյն՝
Պահիկ մի դադար չի տան,
Որ տեսնու գորդիքն իւր սիրուն։
Զաչերն ողորմուկ ածէ
Եւ նայի ի դէմ սիրելնուն.
Ի ճարկէ ճարակ ընկնի,
Չի գըտնու հնար վերծանելուն.
Հառաչէ սրտէն ի վեր
Ու կոչէ զմայր տըղեկներուն։
Ու հանց պատասխան տայ իւրն.
Որ նուաղի ի խեղճ յասելուն։

---

41 Առնում եմ Պետ. Ձեռագրատան վերևում հիշված № 8689 ձեռագրից, էջ 70 և հետ.։
42 Վերջին 12 տողերը տե՛ս «Արարատ» ամսագիր, 1918, էջ 250, իբր Ֆրիկի։

«Քո կէս մարմընոյդ եմ ես,
Որ կանցնիմ ի ներքև հողուն։
Տըղա՛յք, ձեր ծընօղքն եմ ես,
Որ կերթամ ՚ւ այլ ոչ գամ ի տուն։
Հիմիկ դուք ձեզ պէտ արէք,
Թողէ՛ք զչարն գնացէք հետ բարուն։
Ջարին ատեցող լերուք,
Որ չլինիք բաժին գեհենուն.
Բարեացըն սիրող լերուք,
Գործեցէք ՚ւ արէք ձեզ անուն.
Գիտեմ՝ քանի որ ապրիք,
Վերջք մահ է ձեզի գալուն»։

Ձեռագիրների մեջ կան խաչատուր Կեչառեցու անունով և ուրիշ բանաստեղծություններ, այսպես, օրինակ՝ հետևյալները հայրենի չափով. «Տաղ ի խաչատուր Կեչառացուէ՝ ես եմ կորուսեալ ոչխար, մոլորեալ ի սուրբ քո հօտէն»[43]*, որ ունի կրոնական խրատական բովանդակություն, աղոթախառն։ Նաև «խաչատուր Կեչառեցւոյ ասաց [եալ] տաղ ոգեշահ և պիտանի՝ Թէ մարդ ես և միտ ունիս՝ ես տամ ձեզ (քեզ) խրատ մի քանի»*[44]։

Բացի այսպիսի ոգեշահ, խրատական քերթվածներից՝ գտնում ենք նաև «վարդ ու պիւլպիւլի» մի վեպ[45] *նույնիսկ խառն թուրքերեն տնով. «ի խաչատուր վարդապետէ ասացեալ Կեչառեցւէ»։ Սկսում է այսպես. «Յորժամ եղև գարուն, եկ պիւլպիւլն այդին. Տեսեալ ըզթուփ վարդին ունայն ի նըմին, Տըրտմեցաւ դառնագին, արտասուէր ուժգին. Զի ոչ հգիտ անդէն ըզիւր սիրելին». [հաջորդում է մի թուրքերեն տուն, և շարունակությունը հայերեն]։ «Ասէ ցայգեգործն. «Եղբա՛յր սիրելի, ո՞ւր է վարդըս պայծառ, զոր աստէն թողի. Միթէ տեսեալ ես դու. տուր պատասխանի, Թէ ով տարաւ ընդ արար դիս գերի», և այլն։ Կասկածելի է, թե այս տաղը Կեչառեցունը լինի։*

5. «Բարառնութիւնք ի մահն Աղեքսանդրի»:— *Մակեդոնացի աշխարհակալի պատմության վերջում դրված են Կեչառեցու չորս բարառնություններ, որոնցից հետո գրեթե բոլոր ձեռագրների մեջ կա այս հիշատակարանը. «Որք լսէք զաղիողորմ բարառնութիւնս՝ ղյարմարող սոցա ղխաչատուր Կեչառուեցիս յիշեցէք ի Քրիստոս»*[46]*։ Դրանից հետո կա մի հինգերորդ բարառնություն ևս խրատական բովանդակությամբ, որ ոչ անհիմն կերպով Կեչառեցունը չի համարվում։ Առաջին չորս բարառ-*

---

43 *Վերևում հիշված № 8689 ձեռ., էջ 69 բ։*

44 *Պետ. Ձեռագրատուն, № 7709 ձեռ., էջ 149 բ. վերջին երկուսը հիշում է և Ալիշանը «Այրարատի» մեջ, էջ 259 և հետ.։*

45 *Պետ. Ձեռագրատուն, № 1636 ձեռ., էջ 35 բ, առնում եմ անձամբ։*

46 Հ. Տաշյան, *Ուսումն. Մատյն կալ., էջ 107։*

նությունները ողբեր են՝ Ալեքսանդրի, նրա մոր, նրա կնոջ և նրա նախարարների բերանից ասված։ Դրանք մեր աշխարհիկ պերճախոսության լավագույն օրինակներից են, չորսն էլ իսկական գեղեցիկ հորինվածքներ, որոնց մեջ փայլում է հեղինակի ճարտասանական արվեստը։ Իզուր չէ, որ Ստեփաննոս Օրբելյանը Կեչառեցուն անվանել է «անյաղթ հռետոր շնորհօք ծաղկեալ», «հոգւով լցեալ», «գովաբանեալ», այլև «շնորհազարդ»։ Լեզուն հին հայերեն (գրաբար) է, և ոչ թե ժամանակի այն խոսակցական լեզուն, միջին հայերենը, որով հորինված են Կեչառեցու կաֆտանները։ Այն դարում միջին հայերենը գործածում էին բանաստեղծության համար, իսկ ճառեր և այլն հորինում էին գրաբար, ինչպես, օրինակ, Հովհաննես Երզնկացին, որ մեծ հաջողությամբ և՛ գրաբար է գրում, և՛ միջին հայերեն։ Նույն հաջողությունն այս երկու լեզվի նկատմամբ ունի նաև Խաչատուր Կեչառեցին։

Բարառնությունների նյութի համար հեղինակը բնականաբար օգտվել է «Ալեքսանդրի Պատմությունից»։ Սրա թարգմանությունից ազդված է նաև լեզվի նկատմամբ, և այս շատ հասկանալի է, քանի որ նա շատ ղբաղվել է այդ գրքով և կաֆտանները հորինելիս էլ նմանել է դրան։

Բարառնությունների մեջ գտնում ենք մի երկու հեթանոսական հասկացություններ և աստվածների հիշատակություն. բայց վերջինս ոչ իբրև մի ձև պատկերավորության համար, ինչպես հաճախ վարվել են կղեր-դասական գրողները և նույնիսկ մեր հայտնի բանաստեղծները[47]։ Այդ մասամբ հետևանք էր հին հունական գրականության ծանոթությանը, որ սկսվել էր արդեն 11-րդ դարում։ Գրիգոր Մագիստրոսը շատ սիրում է այդ կիրառությունը, երբեմն «պերճանալու», այսինքն պարծանքով բան ծախելու նպատակով։ Այսպիսի «պերճանքից», սակայն, հեռու է Կեչառեցին. նա մի երկու հույն հեթանոսական անուններ մեջ է բերում սակավաթիվ անգամներ, այն էլ մեծ մասամբ հետևելով «Ալեքսանդրի Պատմությանը»։ Շատ բնական է հնչում, օրինակ, լսել Մակեդոնացի հերոսի կամ նրա մոր բերանից իրենց աստվածների անունները։ Եվ այս բարձրացնում է մեր հռետորի հասկացությունն իր արվեստի մասին. նա ողբացողներին իրենց խոսքն ասել է տալիս իրենց դարին և հավատալիքներին համեմատ, ինչպես մեր օրով վարվում են պատմական վեպեր գրողները։ Բացի այդ՝ «շնորհօք ծաղկեալ» հռետորը բարառնություններից յուրաքանչյուրի մեջ մեծ համառությամբ դրել է նրանց աստղի վիճակին ու կյանքին համապատասխան բովանդակություն։

Առաջին բարառնության մեջ Ալեքսանդրի բերանով մանրամասն

---

47 Այսպես, օրինակ, երբ Հովհ. Հովհաննիսյանը գրում է՝

Երբ մատաղ մուսաս ժպիտն երեսին
Առաջին անգամ ինձ երևեցավ,
Նա գեղեցկության սիրո պատկերին
Երկրպագելու ինձ պատվեր տվավ։

նկարագրված է ուժեղ, առույգ, բազմահաղթ երիտասարդի մահացման աղետը «ի հիւանդութեանն իւրում ըմբռնեալ դեղով»: Նա իբրև դավաճանության զոհ, թունավորված լինելով, կռվում է մահվան դեմ: Կեչառեցին այնպես շնորհալի է հորինված, որ այդ նրա հոգևարքը կարդալիս՝ մարդ խղճում է նրան, այն դժբախտ հերոսին: «Զիարդ էի կամ յո՛րպիսի հասի տառապանս», ասում է նա, որ կարծում էին, թե Ամոնից կամ Արամազդից սերված լինելով՝ անմահ պիտի լիներ, «և այժմ յիմարեալ՝ անճողոպրելի ի մահուանէ, որ յաղթէ յաղթողաց»: Նա մտաբերում է իր արարքները՝ սկսած արբուն հասակից, և վերջը տվայտված՝ ասում է. «Արդ որ այսքան հզօր և յաղթական փառաց հասայ, արդ այժմ կա՛մ տարաբերեալ ծփմամբ կոհակօք ի մահիճս մենական և մահահրաւէր: Տեսակս իմ ցանկալի՝ սևացեալ թխացեալ քան զքարինս եթովպական. հասակս իմ պանծալի՝ գթոտեալ ի վայելչալի պերճութեանց. գլուխ իմ ընդգրկեալ ծնգեալ իբրև զհասկ՝ որ հասանէ ի մանգաղս մահու. ճակատ իմ լիալիր և մաքուր՝ ծրարեալ և պատեալ ի վարշամակս դեղոց. աչերս իմ ծովածաւալ սպառնանկատ և քաղցրահայեաց՝ կաշկանդեալ և խփեալ մածմամբ՝ իբր խրդանց և ջլչիկանաց. վարս և հեր գլխոյ իմոյ փետեալ ցամաքեալ իբր զմանուշակ գարնայնոյ յերիս աւուրս սպառելով»: Այսպես և բերանն ու լեզուն, ձեռքերն ու մեջքը և ոտներն ինչպիսի են եղել և են: Նա, ինչպես հաճախ անում են մեռնողները, վերջը մտաբերում է իր պատանությունը, երբ Ստագիրացու (Արիստոտելի) մոտ ուսում էր առնում, փիլիսոփայություն սովորում, ամեն ինչի մասին խոկալով և գիտությունների ու արվեստների մեջ խորանալով. «յորժամ ծաւալէաք ի ծաղիկ բուրաստանաց իմաստութեանն, ի գիտութիւն գոյից և ի ծանօթութիւն աստուածայնոց և մարդկային իրողութեանց... Իսկ այժմ յիմարեալ անասնաբար, ոչ կարել դիտել զզիարդն. բայց զայս միայն՝ զի բազկացեալ ի քառից տարերց ի նոյն իսկ լուծանիմ. զի ինքն միայն է անմահ որ ամենից տիրէ»:— Ահա՛ հին հեթանոս իմաստասերի եզրակացությունը մարդու և նրա մահվան մասին. նա բազկացած է չորս տարրներից, մահանալիս լուծվում է նույն տարրներին: Չկա նրա համար անմահություն. միայն ինքն աստված է անմահ:

Երկրորդ բարառնության մեջ ողբագին խոսում է աշխարհակալի մայրը. «Լացէ՛ք զիս, մա՛րք մանկագունից միամօր զաւակաց... զի ոգիս թռեաւ և շունչս ել արտաքս. իսկ մարմին թշուառականիս առասպելաբար շրջի, դիակիր լինելով սատանեալ կենաց իմոց: Արևն իմ էանց և սպառեաց լուսինն լրացեալ. պարք զօրու աստեղացն ինձ թօթափեցան, և խաւարեցան տեսլարանս ի հայեցուածէ»: Նա մտաբերում է իր հղացումն Ամոնից, ըստ եգիպտական մարգարեի ասելուն. հիշում է իր որդու սխրագործությունները և ավելացնում. «Եւ ես կարծէի զիս մայր կայսեր և ինքնակալի. այժմ մեռելոյ մայր... Մեռանիմ ընդ իմ մեռելոյդ. կորնչիմ ընդ կորուսելոյդ. նուաղիմ ընդ ոգևարիդ...»: Խոր ցավում է, որ որդին հեռացել է Մակեդոնիայից, և ինքն այլևս չի տեսել նրան: «Ծագեցար

իբր արուսեակ, և ցնդեցար նման մրրկի. գոչեցեր ամպօք իբր առիւծ, և տկարացար զինչ սարդի ոստայն. ծաղկեցար իբր զգարուն, և խորշակահար եղեր թարշամեալ, որ բազումք չինէն զարհուրէին, այժմ ես ի բազմաց կորնչիմ»։

Նա կին է, որդեկորույս մայր՝ զրկված և անոք, և իբրև կին և մայր էլ վերջացնում է իր ողբը. «Ուրեմն յաղթեցին ինձ անէծք մօրն Դարեհի կամ ծնողին Պաւրոսի արքային հնդկաց, որ ես այս թշուառութեանս հանդիպեցայ»։ Կատարվել է Ալեքսանդրի կողմից սպանվածների մայրերի անեծքը, որ տվել են Ալեքսանդրի մորը։

Շատ ավելի թշվառ է Ալեքսանդրի մանկամարդ կինը՝ Հռոքսիանե, Դարեհի դուստրը, որ սրտառուչ կերպով ողբում է իր հիքութիւնը երկու կողմից. «Դարեհ չէ ի միջի հայրն իմ հռչակաւոր, և Աղեքսանդրէ բարձաւ ի միջոյ... տուն և հօր իմոյ քայքայեալ ցրուեցան, և ապարանք առն իմոյ մեծապէս տատանեցան. իսկ ես հոսայ իբրև զջուր, կոխան եղէ իբրև զհող անպիտան... Ա՞յդպէս առես զիս յաւանդ ի ձեռանէ հօր իմոյ, տէ՛ր իմ Աղեքսանդրէ, զի և աւուր միոյ տեսլեան հրեսաց քոց ոչ եղէ արժանի, արարեր զիս դշխոյ և թագուհի, և քոյին սոսկալի սիրոյդ ես ոչ եղէ արժանի. որբ էի ի ծնողաց, արդ այրի եղէ ի գլխոյ։ Կարօտիմ մահճիդ, գիրկս արկանեմ տապանիդ, խոնարհիմ քո գաւրշապարիդ, յանձն առնեմ զոգիս քում ոգւոյդ»։ Սա էլ իր ողբը հեծեծալով վերջացնում է իբրև հին արևելյան թագավորի մի ամուսին. «Զի որպէս հանդերձեալ ես յաստուածոցն խառնիլ երամս, այսպէս և զիս արա գերեզմանակից և մահակից. զի կին կայսեր ոչ պարտ և պատշաճ է զուգել ընդ ումեք»։

Թողնում ենք նախարարների ողբն ու կոծը, որի ժամանակ խոսքերի փոխանակություն է լինում նրանց և Աղեքսանդրի միջև։

Խաչատուր Կեչառեցու գրիչը թռիչք ու թափ է առել այս ողբերը հորինելիս։ Ծաղկալից ու շքեղ է նրա ոճը պատկերավոր արտահայտութիւններով, միանգամայն և թեթև, պարզ ու հստակ։ Նա կարողացել է թափանցել իր բարառնութիւններն ասողների հոգեկան վիճակի մեջ և իր հոգով անցկացնելով նրանց զգացմունքը՝ տալ մեզ այն՝ նրանց վիճակի համապատասխան լիրիզմով։ Երբեմն կարծես նա բանաստեղծություն է հորինում երկատող տներով՝

Տուն հօր իմոյ քայքայեալ ցրուեցան,
Եւ ապարանք առն իմոյ մեծապէս տատանեցան...

Այսպես վարվել են նշանավոր հռետորները. և դրանով էլ մեծ ազդեցություն են գործել ունկնդիրների վրա։ Կեչառեցին էլ իր այս երկերով հանդիսանում է իրև աչքի ընկնող մի հռետոր, և կարծում եմ, որ նա իրև քերթող էլ ավելի պատվավոր տեղ կբռներ մեր հին գրականության մեջ, եթե ունենայինք նրա բոլոր երկերը։ Բայց և այնպես նշանավոր հռետորները միշտ նվազ բանաստեղծ են, քան ճարտասան։

Տե՛ս երկրորդ հավելված՝ «Բարառնութիւնների հեղինակը»։

1. Գրականություն։— *Վերջերս շատ խոսվեց, թե Ֆրիկի նման բանաստեղծ ենք ունեցել և չենք տպագրել նրա երկերը, և նույնիսկ իբր դիտմամբ թաքցրել են այն, և Ֆրիկն անհայտ է մնացել։ Մինչդեռ իրականությունն այն է, որ այս բանաստեղծը շատ լավ ծանոթ է եղել հայոց հին գրականությամբ հետաքրքրվող ու պարապող մարդկանց։ Սկսած 1513 թվականից, «մեղապարտ Յակոբի» տաղարանից, Ֆրիկի այս կամ այն քերթվածները գտնվում են պանագան ժողովածուների կամ պարբերական հրատարակությունների մեջ։ Դեռ 1876 թ. Երուսաղեմի հայոց վանքի «Սիոն» լրագրի մեջ տպագրված են սոցիալական խնդիրների տեսակետով կարևոր քերթվածներ՝ «Վասն թալեհի և բրջի» և «Ընդդէմ Ֆալաքի» («է՞յ չարիս, երբ ծռիս մարդոյն»)։ Տփխիսում 1882 թ. տպված է վարդապետ Տևկանցի շատ ծանոթ «Հայկրդ» ժողովածուն, որի մեջ և Ֆրիկի նշանավոր «Գանդատը»՝ «Աստուած սրդար և յիրաւի», այլև ուրիշ երեք բանաստեղծություններ։ Ֆրիկից հրատարակություններ եղել են և հետո՝ 1885, 1896, 1905 թվականներին, ինչպես և 1912 թ. «Հայ էջեր» ժողովածուի մեջ՝ վեց քերթված։ Տպվել են և թարգմանություններ Ֆրիկից՝ ֆրանսերեն և ռուսերեն լեզվով և քննադատական հոդվածներ կամ ակնարկներ նրա մասին։ Արդարև չունենք Ֆրիկի բոլոր կամ ստվար թվով տաղերի հրատարակություն մի գրքի մեջ, բայց միայն այս սիրված ու ժողովրդական բանաստեղծի քերթվածները չեն եղել այդպիսի վիճակի մեջ։ Պատճառն այն է, որ սակավ մարդիկ մեզնում հնարավորություն են ունեցել մեր հին գրականությամբ պարապելու, և ավելի ևս քչերը միջոց են ունեցել ձեռագիրները պրպտելու, նրանցից ժողովելու այս կամ այն բանաստեղծի երկերը և տպագրել տալու։ Ջսլիտի մոռանալ և այն, որ դրանք ցրված են ձեռագիրների մեջ, որոնք գտնվում են այլ և այլ մատենադարաններում, այն էլ աշխարհի զանազան կողմերում։ Մեր մի շարք հին հեղինակները դեռ սպասում են իրենց երկերի հրատարակությունն և ուսումնասիրությանը. Ֆրիկն այդ նկատմամբ ավելի բախտավոր է եղել. նրա մասին խոսվել է և դասախոսություններ մեջ*[48]։

Այսպիսի դրության մեջ էր, եթե կարելի է այսպես ասել, «Ֆրիկագիտությունը», երբ 1918 թ. էջմիածնի «Արարատ» ամսագրի մեջ լույս

---

48 *Տողերիս գրողն էլ նրա մասին խոսել է Թբիլիսիում, Հայ գրողների կովկասյան ընկերության հրավերով 1916 թ. արած դասախոսության ժամանակ՝ «Ընդհանուր տեսություն հայոց հին բանաստեղծության», որ և հաջորդ տարում տպագրվել է Թբիլիսիում։ Նույն դասախոսությունը նա կատարել է նաև Բաքու քաղաքում։ Նա 1917 թ. գարնանը, դարձյալ Հայ գրողների ընկերության հրավերով, դասախոսել է Թբիլիսիում «Հայոց միջնադարյան առակները և սոցիալական հարաբերությունը նրանց մեջ», որ և հետո տպագրվել է Երևանում։ Այս դասախոսության ժամանակ խոսվել է Ֆրիկի մասին։*

տեսավ մի հոդված՝ «Մոռացված մի հայ երգիչ» վերնագրով[49]։ «Մոռացվածը» բնավ մոռացված չէր. ինքը հեղինակն իր հոդվածի մեջ բավական մանրամասն բերել է, ինչ որ իր գրվածքից առաջ տպված է եղել Ֆրիկից և սրա մասին[50]։ Այդ հոդվածը մի ուսումնասիրություն էր Ֆրիկի և առանձնապես նրա ապրած ժամանակի մասին. դա պիտի լիներ առաջաբան այն հրատարակության, որ ձեռնարկել էր հեղինակը։ Նա էջմիածնի, Օքսֆորդի, Լոնդոնի, Պարիզի, Վիեննայի, Երուսաղեմի, Կոստանդնուպոլսի (Անտոնյան) մատենադարանների ձեռագիրներից հավաքել էր Ֆրիկի երկերն իրենց այլընթերցվածներով հանդերձ և պատրաստել տպագրության և սկսել էր նույնիսկ տպագրել, բայց իրենից անկախ պատճառով գլուխ չեկավ այդ գործը։ Հետագայում ևս 1927 թ. փորձ եղավ հեղինակի թույլտվությամբ Երևանում տպագրելու նրա ժողովածուն իր առաջաբանով հանդերձ, բայց դարձյալ անկատար մնաց այդ։ Վերջապես նրա ժողովածուն լույս տեսավ 1941 թ., բայց հայտնի չէ, թե արդյոք ժողովածուի իրեն տպագրության համար պատրաստած գործի՞ց, թե՞ սրա նախնականից[51]։

2. Կենսագրություն։— Ֆրիկի կենսագրության միակ աղբյուրը նրա բանաստեղծություններն են։ Նրա երկերի լեզուն միջին հայերենն է, բայց նա լեզվի հետ բավական ազատ է վարվում։ Նրա գործածած բազ-

---

49 «Արարատ» ամսագիր, էջմիածին, 1918, էջ 64—88, 171—203, «Մոռացված մի հայ երգիչ», Տիրայր եպիսկոպոսի։ Այս հոդվածի մեջ կան չհասկացած կամ սխալ հասկացած կտորներից հանած եզրակացություններ, «վարկածներ», որոնց մասին չենք խոսիլ, զի բոլորովին անարժեք են։ Բայց մնացածով մի կարևոր գործ է դա, և այստեղ նկատի ունենք այդ։

50 Դրանից օգտվել ենք վերևում։ Ավելի մանրամասնություններ ձեռք բերել ցանկացողը կարող է դիմել հոդվածին։

51 Ֆրիկ, Բանաստեղծություններ, ժողովածուն՝ համեմատություններով, ծանոթագրություններով և բառարանով կազմեցին ֆիլ. գիտ. թեկնածու Մ. Մկրյան և ե. Թորոսյան, խմբագրությամբ Հ. Մելիքյանի, Մ. Մկրյանի, Հ. Սիրասի, Արմֆանի հրատարակչություն, Երևան, 1941։ Գրքի այս երեսաթղթի ճակատին տպված է նաև «ՍՍՌՄ գիտությունների ակադեմիա-Հայկական ֆիլիալ, գրականության և լեզվի ինստիտուտ»։ Եթե չլիներ Տիրայր եպիսկոպոսի գործը, չէր էլ լինի այս հրատարակությունն իր քառյակ և կրկնակ անուններով։ Նրա անունն իբրև «բանասեր Տիրայր» խցկված է 2-3 տողի մեջ, էջ 23, որ քիչ մարդու աչքի կընկնի։ Ֆրիկն իր ժամանակին այսպիսի բան չէր անիլ։—Այս հրատարակությունը, ցավոք, անկրիտիկա-անքննադատ է, լի վրիպակներով, թերի բառարանով, առանց բացատրական ծանոթությունների։ Վերջից էջ 259—262 դրված «ծանոթագրությունները» վերաբերում են քերթվածների աղբյուրներին, և թե երբ են քերթվածներն առաջին անգամ տպագրվել։ Այս տեղեկություններն էլ ամենամեծ մասով առնված են Տիրայր եպս.-ից, դարձյալ չհիշատակելով նրա անունը։ Նրա փոխանակ՝ փայլում է երեսաթղթի մեջ հիշված քառյակ անուններից կրկնակը, որի ձեռով մի երեք տարի առաջ հրատարակվել են Ֆրիկի երեք քերթվածը։ Այս 1941 թ. հրատարակությունն ունի նաև մի առաջաբան «Ֆրիկի ստեղծագործությունը» վերնագրով և «Մ. Մկրյան» ստորագրությամբ. օգտված է մասամբ նաև Տիրայր եպս.-ից, էլի առանց նրա անունը հիշելու։ Կրկնում եմ, այսպես չէր վարվիլ Ֆրիկը։

մաթիվ խոսքի դարձվածներն ու լեզվական ձևերը նկատի ունենալով՝ հավանական է ենթադրել, որ նա եղել է Արևելյան Հայաստանից կամ ապրել ու գործել է ավելի այնտեղ, բայց ոչ թե առանձնապես Սյունիքում, կամ Կիլիկիայում, ինչպես կարծել են։

Կարելի է որոշել նրա մի քանի բանքերի գրության տարիները և սրանցով՝ դրանց հեղինակի ծննդյան և մահվան թվականները՝ մոտավոր հաշվով։ Նա ծնվել է Թաթարաց արշավանքի սկիզբներում, շուրջ 1236 թվականին, «Ընդդէմ Ֆալաքին» քերթվածը հորինել է ոչ առաջ քան 1286 թվականը և հավանորեն հենց այս թվականին. «Վասն Արղուն զանին և Բուղային» երկը հորինված է 1289 թվականից ոչ առաջ, ամենայն հավանականությամբ, հենց այս թվականին, իսկ «Գանգատ» քերթվածը՝ հավաստի 1295 թվականին։ Այս վերջին քերթվածը հորինելուց հետո դեռ նա ապրել է շատ տարիներ և հասել է լի ծերության և վախճանվել է 14-րդ դարի առաջին կամ երկրորդ տասնամյակին։

Այս թվականների մասին տե՛ս «Երրորդ հավելված», «Ֆրիկի կենսագրության շուրջը»։

Չի հիմնավորված այն կարծիքը, թե «Ֆրիկ» անունը բանաստեղծի իսկական անունը չէ, այլ «բանաստեղծական անունը» կամ կեղծ անունը։ Այդ պարզապես մի անձնանվան նվազական ձև է, թերևս, ինչպես կարծել են, Ֆրեդերիկ անվան։ Ղ. Ալիշանը[52] գրում է. «Բարակ զգացման և ուղիղ մտաց տեր, նաև ճարտար տաղաչափ պեսպես վանկերով՝ նորանուն քերդող մը կայ՝ Ֆրիկ, որդի Թագվորի եղբորորդի Դոդոնայի, որուն ժամանակն որոշակի հայտ չէ, բայց այս (ԺԵ) դարես ետք այլ չէ. գրվածքն բարոյական խրատք են, սակայն սրտով սփռած»։ Պակաս «նորանուն» չեն Ֆրիկի հայրն ու հորեղբայրը, որոնց մասին ոչ մի տեղեկություն չի հաղորդել Ալիշանը, և ուրիշներն էլ չեն գտել ցայժմ։

Ֆրիկն իր տաղերի մեջ ընդհանրապես հիշել է իր անունը, և տաղերի վերնագիրների մեջ էլ սովորաբար կա Ֆրիկ անունը. բայց չնայելով դրան՝ որոշ չափով անորոշություն կա այս կամ այն ոտանավորների հեղինակի վերաբերմամբ, որովհետև մի վատ սովորություն է եղել հեղինակի անվան փոխանակ ուրիշ անուն դնելու։ Դրա դեմ բողոքելով իր մի քերթվածի[53] վերջում գրում է մեր բանաստեղծը.

Ով զիմ անունըս խափանէ,
Զիւրըն գըրէ պարծենալոյ.
Աստէնս չառնէ ինքն թողութիւն,
Անդէն զըրկի ինքն ի բարոյ։

---

52 Ղ. Ալիշան, *Յուշիկք հայրենեաց*, հատ. Բ, էջ 125. «Ազգային վիպասանություն» հոդվածի մեջ։

53 «Արարատ», 1918, էջ 76. տե՛ս Ֆրիկ, Բանաստեղծություններ, էջ 95. «Նորին Ֆրիկանն ասացեալ», «Է՛ անօրէն և անառակ» քերթվածը։

Կարևորն այն չէ, թե Ֆրիկն աշխարհական է եղել[54], *այն էլ, ինչպես ենթադրել են, անգրագետ և անուս, այլ թե նա ուսում է ստացել, ե՛րբ է մտել արդյոք հոգևորական դասի մեջ և բանաստեղծությունները կյանքի ո՛ր շրջանում և ի՛նչպես է հորինել։ Նա իր համար գրում է*[55].

Յիմ հօրէն զայս լսեցի,
Թէ Քրիստոսի բզքեզ կուտամ։

Այս ցույց է տալիս, որ հայրն ուղեցել է որդուն հոգևորական կոչմանը նվիրել։ Այսպիսի դեպքում նրան մանկական հասակից արդեն, ըստ ժամանակի սովորության, պիտի սկսեին կրոնական կրթություն տալ, ուրեմն և գրագիտություն սովորեցնել։ Մի տեղ[56] *նա գրել է.*

Ի մանկութենէ ի վեր
Զիս ուսմանն խոցըն կու մաշէ։

Այս էլ նշանակում է, որ նա մանկությունից սկսած սիրել է ուսումը և պարապել դրանով։ Եվ իսկապես, նրա բանաստեղծություններից ւեսնում ենք, որ նա մեծ ծանոթություն ունի Ս. Գրքի և առհասարակ կրո-

---

54 «Ֆրիկը եղել է աշխարհական. այդ մասին ինքը հեղինակը մի քանի հիշատակություններ է արել իր բանաստեղծությունների վերնագրերում. այսպես, օրինակ՝ մի վերնագիր. «Այլ տաղ վասն բարեգործութեան մարդկան ի Ֆրիկէ աշխարհականէ ասացեալ». կամ մի ուրիշը. «Ֆրիկ ճարտար աշխարհականէ» (Ֆրիկ, Բանաստեղծություններ, էջ 9)։

Ֆրիկի աշխարհական լինելու մասին էլ առաջին անգամ գրված է Տիրայր եպս.-ի շատ անգամ հիշված հոդվածի մեջ։ Նա իր կարծիքը հիմնավորել է վերևում բերված առաջին վերնագրի վրա, որ այդպես կա այդ տաղի հինգ ձեռագիր օրինակներից միայն մեկի մեջ կարմրադեղով գրված, «այժմ եղծված, հազիվ ընթեռնելի»։ Բայց այս հոդվածագիրը չի նկատել, որ այնտեղ գրված է ոչ թե «ի Ֆրիկէ», այլ «ի Ֆիրիկէ»։ Այսպես է տպված նաև Ֆրիկի Բանաստ. էջ 89 նույն քերթվածի («Իմ սիրտ, վատին մի՛ լսել») այլ ընթերցվածների մեջ։ Երկրորդ վերնագիրն էլ, որ բերել է Մ. Մկրյանը, դարձյալ այդ տաղի չորս թե հինգ ձեռագիրներից մեկի մեջ միայն կա այդպես։ Տե՛ս Ֆրիկ, Բանաստ., էջ 95, «Է՛ անօրէն և անառակ» քերթվածի այլ ընթերցվածների մեջ։ Սակայն սրա համար էլ պետք է նկատեմ, որ Հայաստանի պետական թանգարանի համար 383 ձեռագրից (որից առնված է տպված քերթվածը) ես 1926 թ. արտագրած ունիմ այսպես. «եր. 272. վերնագիր՝ «Ֆրիկ ճարտար աշխարհականէ»։ Շատ պարզ երևում է, որ այս երկրորդ «վերնագիր» ասածը ոչ թե հեղինակի գրածն է, այլ մի ուրիշ մարդու, որ դրանով ուղեցել է իր իմացած տեղեկությունը տալ բանաստեղծի մասին։ Ապա՝ այն հանգամանքը, որ «աշխարհական» հիշատակությունը չորս-հինգ ձեռագիրներից միայն մեկի մեջ կա, և որ երկու դեպքում էլ «Ֆիրիկ» է գրված, դեռ քննելի է դարձնում այդ երկու «վերնագիրները», թե արդյոք հեղինա՞կն է այդպես գրել իր համար, որ կասկածելի է։ Ապա դարձյալ՝ «աշխարհական» բառը ես միայն բերված երկու ձեռագիրների մեջ գրված գիտեմ, և ոչ թե «մի քանի», ինչպես գրել է «Ֆրիկի ստեղծագործությունը» առաջաբանի հեղինակը։

55 Ֆրիկ, Բանաստ., էջ 63. «Յիսուս անուն յիս գթացար» քերթվածի մեջ։

56 «Արարատ» ամսագիր, 1918, էջ 78. հիշված հոդվածի մեջ։ Չի ասված, թե ո՛ր բանից է առնված այդ։ 1941 թվականի «Ֆրիկ, Բանաստեղծություններ» ժողովածուի մեջ չեն երևում այդ երկու տողերը։ Ըստ երևույթին Տիրայր եպիսկոպոսի ժողովածուն ամբողջապես չի տպագրված։

նական խնդիրների. մեծ հմտություն Ավետարանին, տալիս է Ս. Գրքի բովանդակության համեմատ խրատներ, ծանոթ է նաև ուրիշ երկերի, ինչպես՝ Եփրեմի ճառեր, Վարք սրբոց. շարադրում է դավանաբանական քերթվածներ, աղոթելով հանդերձ, կամ Քրիստոսի տնօրինականքի պատմությամբ։ Եվ, վերջապես, նա մեկ մեկ հորինում է և գրաբար լեզվով, հաճախ կրոնական երկերի մեջ ընդունված սովորական դարձվածներով ու պատկերներով և բանաձևերով, ինչպես և բազմաթիվ ակնարկներով, որոնք վերաբերում են եկեղեցու ընդունած հավատի խնդիրներին։ Կարելի չէ ասել, թե այսպիսի գրվածքներն անուս մարդու են, և կամ թե այդ ամենը նա յուրացրել է եկեղեցում ժամերգության ժամանակ՝ ընթերցվածները լսելով կամ այլուր ուրիշների կարդացածներին ունկնդիր լինելով։ Նա ինքը կարդացել է։ Երբ նա գրում է[57].

Անալի դարձել եմ ի միտս ու անհամ,
Ո՛չ առնում բզգըրոց ճաշակ և ըզհամ,—

այդ ապացույց է, որ նա առաջ գրքեր կարդացել է և վայելել նրանց համ ու հոտը։ Այս ամենով հանդերձ՝ նրա երկերը չեն կրում հին քերթողական ուսման դրոշմ. պարզ երևում է, որ նա չի առել վարդապետարանների մեջ ընդունված իմաստասիրական ու հռետորական և սքոլաստիկ աստվածաբանական-մեկնաբանական ուսումն իր նրբամտություններով։ Դրա համար և, ինչպես երևում է, չեն հավատացել, թե նա կարողանար այնպիսի բաներ հորինել. ուստի նա ստիպված է եղել գրելու[58].

Տէր կենդանի է և օրհնեալ,
Որ չէ այլոց բանքս ասացած,
Զինչ ըզծաղիկ եմ ժողովել,
Քան զմարգարիտ պայծառ շարած։
Թէպէտ յերկար բան կու խաւսի,
Ցըրիկն ասել է ի մըտաց։

Ուրիշ տեղեր նա իր բանքեր հորինելու շնորհքն աստուծուց է համարում. օրինակ, նա ասում է[59].

Գոհանամք յողորմածէն...
Որ զանարժանս արժանացոյց,
Որ հանց գօհար բան ի շար կու գայ։

Երևում է, որ ծաղրել են նրա պարզաբան գրվածքները, մանավանդ այսպիսի կրոնականները՝ «Բան մեկնութեան», «Ասացուածք ի տնօրէ-

---

57 Ֆրիկ, *Բանաստ.*, էջ 206. «Փափագել եմ ի չուրն» քերթվածի մեջ։

58 Ֆրիկ, *Բանաստ.*, էջ 78. «Երբ քեզ խրատ էր պատրաստած» տողով սկսված մեծ բանաստեղծության մեջ, բովանդակությունը գրքից է առած։

59 Անդ, էջ 50։

նութիւն փրկչին»[60], ասելով, թե նա ի՞նչ գիտե, ե՞րբ է ուսում առել, որ այդպիսի բաներ է հորինում։ Դրա համար և նա շատ նուրբ կերպով հեգնում է այնպիսիներին իր «Ի ծնունդ սուրբ կուսին» քերթվածի մեջ[61]։

Ֆրիկն ի՞նչ հող է կամ մոխիր,
Որ հանց գոհար բան շարէ նա.
Ոչ է ծառայ վարդապետի,
Ոչ կարդացել է օր մի նա.
Ոչ[62] ի հօրէ առեալ միրաթ,
Ոչ աստուծոյ տուած նորա,
Նա ե՞րբ կարէ հանց բան ասել,
Ով որ կարդայ՝ օրհնէ ըզնա։

Այս տողերը սխալ բացատրելով[63] եզրակացրել են, թե Ֆրիկն իբր չի ծառայել վարդապետի, հետևաբար ուսում չի առել, նա մի օր էլ չի կարդացել, հետևաբար և անգրագետ է եղել. իբր հայրն էլ միջոց չի ունեցել, որ իր որդուն «դպրոց տար ու կարդացներ»։ Այդ տողերը, սակայն, հեգնութեամբ են ասված. պետք է հակառակ իմաստով հասկանալ։ Ժողովրդական լեզվի մեջ շատ հաճախ հաստատական ու դրական խոսքերն ասվում են բացասական ու հարցական ձևով։ Այսպես՝ բանաստեղծը երբ ասում է՝ «Ֆրիկն ի՞նչ հող է կամ մոխիր», նա ոչ թե իրեն նվաստացնում է իրոք ինչպես ուրիշ դեպքում[64], այլ հեգնելով պատասխանում իրեն բամբասողներին՝ ասելով իսկապես, թե Ֆրիկը հող ու մոխիր հո՛ չէ, նա կարող է գոհար բաներ շարել. նա ուսում է առել վարդապետի մոտ, շատ կարդացել է, հորից էլ միրաթ-կրթութիւն[65] է ստացել, աստված էլ շնորհք է տվել նրան. հետևաբար նա կարող էր այնպիսի «բան» հորինել, որ ով կարդա՝ օրհնի նրան։

Ուշադիր պիտի լինել, որ խնդիրն այստեղ սովորական գրել-կարդալու կամ ուսում առնելու մասին չէ, այլ գեղեցիկ ոտանավորներ, այն էլ ըստ ձևի և ըստ բովանդակության «գոհար բաներ» հորինելու։ Այս բանաստեղծական շնորհքը նա, հարկավ, վարդապետների մոտ չէր սովորել, և չէր էլ կարող նրանցից սովորել այն, որ բնատուր էր։ Բայց

---

60 Անդ, էջ 127, 150։

61 Անդ, էջ 126։

62 Բնագրի մեջ տպված է «թէ», առնում եմ ըստ իմաստին այլ ընթերցվածը «ոչ»։ Ապա հաջորդ տողի սկզբի «այս» բառն ուղղում եմ «ոչ» ըստ ամբողջի իմաստին. այլապես անկապ և անմիտ է մնում դրա հաջորդ տողը։ Եթե «այս», այսինքն շնորհքն աստուծուց է տրված, ապա այլևս կարելի չէր գրել, թե «նա ե՞րբ կարէ հանց բան ասել»։

63 «Արարատ», 1918, էջ 78 և հետ., բայց հոդվածագիրն այս տողերի մեջ հեգնութիւն տեսնելով հանդերձ՝ տալիս է այդ սխալ բացատրությունը։

64 Ֆրիկ, Բանաստ., էջ 119. «Բան պիտանի և լաւ» բանաստեղծութեան մեջ՝ «Ֆրիկն ի՞նչ հող է և մոխիր, որ այս բարոյս նա ցանկացաւ»։

65 «Միրաթ» բառն այսպես «կրթութիւն» է բացատրված («Արարատ», 1918, էջ 79)։

այդպես չէին հասկանում այն ժամանակի սքոլաստիկները. նրանք կարծում էին, թե այն էլ պետք էր դպրոցում—վարդապետարանում ուսած լինել:

Ժամանակակից բանաստեղծ Կոստանդին Երզնկացին իր մի քերթվածի սկզբում գրում է. «Ոմանք չարախօսեն ղինէն վասն նախանձու, թէ որպէս խօսի սա այսպիսի բան [խոսքը ոտանավորների մասին է], զի վարդապետի չէ աշակերտել», և ապա՝ բացատրում է. «ա՛յլ է աշակերտելն և այլ է շնորհքն ի հոգւոյն»: Եվ ինքը բանաստեղծը պատմում է, թե երբ տասնուհինգ տարեկան ժամանակ վանքում ուսումն առնելիս է եղել («ի վանքն յուսումն էի»), իր մեջ զգացել է բանաստեղծելու «աստվածատուր» շնորհքը: Այսպես և Ֆրիկը, որ հպարտ է իր «գոհար բաներով, անպայման ուսում առել է որևէ վանքում կամ մի քահանայի մոտ, բայց հորինել է բնատուր շնորհքով, որ «Աստուծոյ տուած նորա»:

Նա հորինել է բազմաթիվ «հայէրեն բաներ», երաժշտական անսխալ ռիթմով, որ ապացույց է, թե նրա շնորհքներից մեկն էլ եղել է երաժշտական զգացումը: Նա հավասար աջողությամբ և գրեթե հավասար թվով ոտանավորներ է հորինել մեր երկու շատ ռիթմիկ չափերով—«Հայրենի կարգով», որ է՝ 2+3+2||3+2+3 ոտքերով տողերը, և 4+4 յամբական տողերով. մի երեք բանք էլ ունի 3+3+2+3 պարզ ոտքերով: Այստեղ կարևոր չի այս ոտանավորների մասին մանրամասնել[66], միայն պիտի ասել, որ կան աղճատումներ, բառեր ետ ու առաջ ընկած, որով խանգարված են չափերը:

Թե բանաստեղծը միաժամանակ և երգիչ է եղել թե չէ՝ այդ չգիտենք. մեկ քերթվածի վերնագրի մեջ կա «երգիչ» բառը՝ «Վասն Թալեհի և բրջի ի Ֆրիկ երգչէ. մեջին, սակայն, չի հիշվում Ֆրիկ անունը: Իսկ վերնագիրների համար չենք կարող ապահովապես ասել թե հեղինակից են ծագում: Մի քանիսի վերնագիրներն են «Տաղ» կամ «Այլ տաղ Ֆրկանն ասացեալ»: Ավելի գործածվում է՝ «Նորին Ֆրկանն ասացեալ բան...», կամ լոկ «Նորին Ֆրկանն ասացեալ»: Այս «ասել» բայը չպիտի շփոթության մեջ ձգի. դա գործածվում է «հորինելու» իմաստով նույնիսկ պատմության համար, օրինակ՝ «Հայոց պատմութիւն ասացեալ Մովսիսի Խորենացւոյ»:

Ֆրիկն իր «բաները» կամ «բանքերը», ինչպես ավելի հարմար է կիրառել աշխարհաբարում (սույն բառը գործածվում է նաև որոշ բարբառ-

---

66 Այս չափերը մանրամասն ուսումնասիրված են սրա հեղինակի մի ուրիշ աշխատության մեջ. «Հայոց լեզվի տաղաչափություն, ուսումնասիրեց պրոֆ. դ-ր Մ. Աբեղյան», Երևան, 1933, էջ 267—275՝ «Հայրենի կարգ». էջ 198—209՝ «Յամբական ոտանավորներ բարդ ոտքերով» և էջ 240—241՝ «Անապեստյան 11-վանկանի, երրորդ ոտքը յամբ»:

Հայրենի չափի մասին տե՛ս առանձնապես Մ. Աբեղյանի «Հին գուսանական ժողովրդական երգեր» աշխատության մեջ, Երևան, 1931, էջ 15—43. արտատպ. ՀԽՍՀ Պետ. Համալսարանի «Տեղեկագիր» № № 2—3, 4, 6:

ների մեջ «բանք» կամ «բանս», նաև «բան» ձևով) հորինել է կարդալու համար և անձամբ դրելով։ Այդ երևում է նրանից, որ հորինելու ժամանակ իր քերթվածն անվանում է «բան» և հետո դրա մասին գրում է՝ «ով որ կարդայ...», կամ «որ երբ կարդայ...»։ Այսպես, օրինակ, վերևում բերված վերջին ցիտատի մեջ։ Մի ուրիշ քերթվածի մեջ ևս՝

Ով կարդայ զայս բաներս 'ւ ինքըն ղլմբաղի...
Թէ քննէք զայս բաներս ի միտ 'ւ ի հոգի...
Եւ ուսիք, որ կարդայք ի մէջ ժողովի...[67]

Երբ բանաստեղծն իր երկը հորինելիս խոսում է դրա կարդալու մասին, կնշանակի նա հորինում է գրելով։ Ոչ մի հիմք չկա կարծելու, թե Ֆրիկը բերանացի հորինելիս լիներ և հորինելիս թելադրած լիներ մեկին, որ գրեր. կամ բերանացի հորիներ և իրար նման և այնքան մեծ ու երկայն բանաստեղծությունները անշփոթ միտը պահեր և հետո մեկին թելադրեր, որ գրեր։ Այդ հնարավոր է միայն կարճ բանքերի ու եղանակավոր երգերի վերաբերմամբ, այլև վիպական քերթվածների, որոնց մտաբերմանն օգնում է դեպքերի հաջորդությունը։

Թե ե՛րբ է նա սկսել բանաստեղծել, այդ չգիտենք. նա իբրև քերթող աշխատել է նաև ալևորության ու ծերության օրերին, ինչպես հիշում է մի շարք երկերի մեջ, ինչպես, օրինակ՝

...Երբ դարձաւ սէդ ի սպիտակ։
էջ 57

Քո սէդ ի սպիտակ դարձաւ։
էջ 86, 113

Հոգոյն շնորհք երետ ծերուս։
էջ 93

Թե ինչո՛վ, ի՛նչ պարապմունքով է նա իր ապրուստը հայթայթել, այդ չի երևում նրա բանքերից։ Մի քանի անգամ նա խոսում է հարստության ետևից լինելու մասին, բայց չի պարզվում, թե արդյոք անձնապես ի՞ր մասին է խոսում, թե՞ իբրև բարոյախոս՝ ընդհանրապես, բայց իր վրա դարձնելով ասելիքն և առաջին դեմքով խոսելով, միաժամանակ իր անձնականը խառնելով հետը. այսպես, օրինակ՝ հետևյալների մեջ.

Շատ ոլորեցի մարդու մորոյս...
Շատ պարծեցայ ի վերայ ոսկոյս...
էջ 92

---

67 Ֆրիկ, *Բանաստ.*, էջ 153. «...Տնօրէնութիւն փրկչին» քերթվածի մեջ աղճատված տող է հետևյալը։ «Աստուած օրհնէ զայսն կարդացօղն յորժամ երգէ զՖրիկն յիշեա». այլ ընթերցվածով վերականգնվում է «...որ ըզՖըրիկըս յիշէ նայ», էջ 49, «Մինչ ածէ զմահն...» քերթվածի մեջ։

Անշուշտ իրեն, հեղինակին են վերաբերում հետևյալ տողերը, եթե միայն հիշված «Հարգայ», վարիանտ՝ «Հարզայ» բառը տեղանուն է.

Անկայ ի յոսկոյ ցընոր
Ու ըզհոգոց տունըն շինեցի...
Ասցի թէ շինեմ ես բերդ
Ու քաղաք և դարպասընի...
Շատ մի [վար. դարդակ] դատեցայ, եղբա՛րք,
Ի Հարգայ [վար. Հարզայ.] ես շատ մի տարի.
Ասցի թ'իմ չանօքս առնեմ
Մեծութիւն առանց հրամանի...

էջ 42

«Հարգայ» անունը փորձել են նույնացնել Կիլիկիայի «Հարգան» տեղանվան հետ [68]*. բայց այդ դեռ կարելի չէ հաստատ համարել։ Կարծում եմ պետք է առնել ավելի շուտ «Հարզայ» փոփոխակը և նույնացնել «Հազրա», շուրջ տված՝ «Հարզա» տեղանվան հետ, որ նշանավոր կենտրոն է եղել Աղձնիքում, թաթարաց իշխանության երկրում, քան թե Կիլիկիայի մի հեռավոր անկյունում գտնված մի տեղ, թաթարական տիրապետությունից դուրս։*

Մաքուր անձնական բանաստեղծություն է «Ողբանք փոշիմանութեան» (էջ 25 և հտն.), որի մեջ կան հետևյալ հետաքրքիր տողերը.

Բուռն եմ ածել ես աշխարհի,
Որ կու վազեմ հետ շատ շահի.
Ջինչ տէրն երետ՝ հերիք չածի,
Այլ մեծութիւն սիրտ ունէի.
Ժողովեցի շատ մի բարի,
Ըռզակ արի զնա թաթարի...
Այն բազային եմ նըմանի,
Որ փոքր որսին ոչ հաւանի.
Ով որ ածէ զաչքն այլ մեծի,
Քաղցած կենա և անօթի։
Ահա եղաւ այնչափ տարի,
Որ տուն ու տեղն դեռ կու քակի.
Ջինչ մեծամեծ վաստակ արի,
Ամէն դարձաւ հող 'ւ ի փոշի։

Նա իր աշխատած հարստությունից զրկվել է թաթարների ձեռով կա՛մ կողոպտվելով, կա՛մ հարկահանությամբ։ Կիրակոս Գանձակեցին խոսելով իր ժամանակի ծանր հարկերի մասին՝ գրում է. «Ու ոյր ոչ գոյր՝ զուստերս և զդստերսն առնուին ընդ պահանջմանն». «Որ ոչ կարէր հատուցանել

68 *«Արարատ», 1918, էջ 86։*

զսակն՝ զմանկունս նոցա առնուին ընդ պարտուցն»[69]։ Արդ՝ կարծում են, թե Ֆրիկի որդին էլ նույն դժբախտությունն է ունեցել[70]. բայց այն բանաստեղծությունը[71], որի մեջ հիշատակվում է այդ, կարոտ է բանասիրական քննադատության։

Տե՛ս երրորդ հավելված՝ «Ֆրիկի կենսագրության շուրջը»։

Կենսագրական տեսակետից շատ հետաքրքիր է մի բանքը (էջ 40), որի սկիզբն է «Գնաց մանկութեան հասրաթն». բանաստեղծը խոսում է դառնացած հոգով. նա կորցրել է ամեն ինչ, ընկել է անհուն հոգսերի մեջ, չունի տուն ու տեղ, խոցվում է, ամբողջ օրը տանջվում է հարկի ձեռից—

Գնաց մանկութեան հասրաթն
Ու երեկ ինձ հոգ անհուն.
Զըրկած եմ երկու կենօք,
Վասն այնոր չեմ ելնել ի հուն։
Գազան 'ւ անասուն ու հաւ
Գէմ ունին իւրեանց տուն ու բուն.
Ոչ տուն ու ոչ տեղ ունիմ,
Կու խոցիմ զօրն ի յայն հարկուն։
[Վար.՝ Կու խոցիմ ի յանհաւատնուն]։

Նա սկսել է գինու մեջ թաղել իր վիշտը, բայց քանի ավելի գինի է խմում, այնքան ավելի ծփանքի մեջ է ընկնում։ Նա հույսը կտրել է մարդկանցից, չի հավատում, թե որևէ իշխան կօգնի իրեն, հասկանալի է՝ հարկի պարտքը տալով։ Եվ վերջը մտածում է լինել «սիրող վանքերուն», այսինքն վանական դառնալ, որպեսզի ծառայի աստծուն, որ տեր է մարդուս «անձին ու հոգուն», և եթե աշխարհիս անցավոր կյանքից, տուն ու տեղից զրկված է, դոնե անդենի կյանքի ճարն անի։ Գինու գործողությունը նա ուրիշ երկերի մեջ էլ հիշում է.

Գանձով զընած ես դու գերի,
Դու է՞ր խըմես զօրըն գինի։

էջ 28, տ. 91—92

Եթե բառացի հասկանանք, Ֆրիկը գերի է ընկել, հարկավ, թաթարների ձեռը, և փրկանքով գնվել, ազատվել է։ Թե նա ո՛ր տարիքին է ընկել այսպիսի դժբախտության մեջ, այդ դժվար է որոշել նրա բանքերով միայն։ Ալևորության ժամանակ նա իրեն դժբախտ է զգում մենակությունից։

Դու յէ՞ր կու դատիս, Ֆրիկ,
Երբ չունիս դուն դուստր ու որդիք։

էջ 85, տ. 34

---

69 Կ. Գանձակեցի, *Պատմութիւն Հայոց*, էջ 360, 349։

70 «Արարատ», 1918, էջ 83 և հտն.։ Այստեղից և «Ֆրիկ, Բանաստ.», էջ 10։

71 Անդ, էջ 40 և հտն. «Գնաց մանկութեան հասրաթն»։

Երբ նրա «անն սպիտակ է դարձել», արդեն հիշում է աշխարհի ունայնության մասին և մտածում.

Աճապ ա՜մ յէ՞ր կու դատիս,
Աշխարհիս երակ դու Ֆրիկ.
Ոչ տուն ու [ոչ] տեղ ունիս,
Եւ ոչ կին, ոչ դուստր և որդիք։
Ա՜մ երբ հանց ընկեր քո բախտն
Ու թալեհն, ա՜մ, ի՞նչ կայ հարկիք...

էջ 113, տ. 60 և հտն.

Ինչքան էլ «դատելու», այսինքն աշխատանք անելու մասին է գրում, բայց աղքատ է, աշխատածը, երևի, գինու է տալիս, զգալով նույնիսկ, որ լավ բան չի անում.

Թէ՞ [=երանի՞ թե] լինէր ինձ դօլուաթ և խելք ի բարի,
Որ կարի հա՜նց կենալ, ինչ որ կու պիտի։
Է՜, աւաղ, է՜, աւաղ, ափսոս կու լինի,
Զիմ խելայ ուժն չինէն գինին կու տանի։
Պարտական եմ հոգով, լեզուս կու կապի,
Թէ չէ՝ այլ շատ բաներ յառաջ հանէի։

էջ 153, տ. 60 և հտն.

Դառն է նրա վիճակը ծերության ժամանակ. նա իրեն բոլորովին մենակ և անճար է զգում.

Ոչ գիտեմ թ' ուր մեռանիմ,
Ոչ ոք չունիմ որ թաղէ զիս.
Ոչ ունիմ տեղ հանգըստեան,
Ոչ խընդացել եմ յորդիս...
Ոչ եղբայր՝ւ ոչ զոք ունիմ,
Որ աւաղէ, ափսոսայ զիս.
Ոչ ծըլեմ, ոչ բուսանեմ,
Զերդ զաղընձած սերմ եմ գերիս։
Թէ ունէի ճորտ ու ծառայ,
Կամ կարևոր յաստըւորիս,
Սոքա այլ գիս ուրացան,
Եւ ատեցին զաղքատ հոգիս։
Զայս ի յիմ բախտէս ունիմ,
Որ չի նայել քաղցր աչօք յիս.
Ինձ նըման այլ չէ ծընել,
Ինչ կու նայիմ ի վերայ բանիս։

էջ 31—32, տ. 10—25

Նրա թշվառությունն այն աստիճանի է, որ վախենում է, թե իրեն կարգին չթաղեն իր աղքատության պատճառով.

Եղո՛ւկ ու վա՛յ ինձ այս ծերիս.
Երկու կենօքըս չ'յաջողեաց,
Այս խոց մնաց ի վերայ սրտիս։

էջ 33, տ. 55—57

Է՞, Ֆրիկ, պատրաստ կացիր,
Ի ծերութիւնդ չի գլորիս։
Այլ չունիս փող մի պահած,
Որ գքեզ թաղեն երբ մեռանիս...

էջ 32, տ. 32—35

Ապա աղաչում է աստուծուն, որ «օրհնեալ հողը ծածկէ» իրեն։ Ահա թե ո՛րքան ծանր է եղել նրա վիճակը ծերութեան օրերին. նա սոսկում է, որ կարող է չարժանանալ նույնիսկ կարգին թաղման, որ ամենամեծ դըժբախտութիւնն էր համարվում մինչև վերջերս մեր ժողովրդի մեջ։

Այսպիսի դժվար օրերին, երբ նա մենակ էր, տանջվում էր և՛ նյութապես, և՛ հոգեպես, նա հայացքը բնականաբար պիտի դարձներ դեպի եղբայրանոցները, լիներ «սիրող վանքերուն» և այնտեղ գտներ մխիթարութիւն։ Թե նա իրոք մտել է որևէ վանք, այդ որոշ չի երևում նրա բանքերից, իսկ որ նա շատ փափագել է դրան, գուցե և դարձել է որևէ վանքի միաբան, մնալով իբրև աշխարհական, այդ զգացվում է նրա բանաստեղծութիւններից։

Տե՛ս պարագրաֆ 8. «Հոգեշահ բանքեր և միստիկական ձգտում»։

Այսպես ծանր ծերութիւն է ունեցել այս ժողովրդական բանաստեղծը, որի երկերը սիրված են եղել և ամփոփված մի տեղ «Ֆրիկ դիրք» վերնագրով։ Թեպետև նրա մասին չկան ուրիշներից հաղորդված տեղեկութիւններ, բայց նրա բնավորութիւնն ու գաղափարները լիովին ծանոթ են մեզ հենց նրա սեփական բանքերից։ Նա եղել է զգայուն սրտի տեր, դիտող ու խորհող, ոչ անտարբեր դեպի շրջապատի իրական կյանքը, կատարված նշանավոր եղելութիւնները։ Նա անկեղծ կերպով տանջվել է հասարակական և ազգային թշվառ դրութիւնից. հաճախ վառվել է վրեժխընդրութեան բոցով, այնքան շատ նա ատել է ժողովրդի հարստահարիչներին։ Նա առաջնորդվել է որոշ բարոյական սկզբունքներով, հարկավ, ըստ իր դարում իշխող ընդհանուր հասկացութեան և, ինչպես շատերն իր ժամանակին, նա էլ տոգորված է եղել կրոնական ձգտումով ու միստիցիզմով։ Եվ նրա երկերի հիմնական մտքերը վերաբերում են բացի անձնականից նաև ազգային, սոցիալական և կրոնական խնդիրների, կրոնականը, սակայն, հաճախ ընկերականի հետ շաղկապված։

3. Ազգային ու սոցիալական հարցեր։— *Վերածնութեան շրջանի գրականութեան կարևոր թեմաներից են այս երկուսը։ Ազգային հարցն, ինչպես տեսել ենք, առաջին տեղն էր բռնել քաղաքական անմխիթար դրութեան հետևանքով. իսկ սոցիալականը ծագում էր երկու դասակարգերի տնտեսական վիճակի ծայրահեղ տարբերութիւնից։ Մինչ ազնվականը,*

հոգևորականն ու փարթամ քաղաքացին հարստանում ու վայելում էին, աշխատավոր ժողովուրդը տառապում էր հետին չքավորության մեջ։ Եվ այսպես Բագրատունիների իշխանության ժամանակից ի վեր նաև թաթարների օրով։ Սրանց դրած մեծամեծ հարկերը վերջին հաշվով ծանրանում էին գյուղացի ու քաղաքացի աշխատավորության վրա. հարկահաններն ևս, լինեին այլազգի թե հայ, կեղեքում էին ժողովրդին. գործում էր և վաշխառությունը։ Եվ հետզհետե թե՛ գյուղերում և թե՛ քաղաքներում առաջանում էր մի կողմում՝ ընչազուրկ մասսա, որ ճորտ ու ծառա էր դառնում պաշտոնատար ազնվականության ձեռին, մյուս կողմում՝ փարթամ հարուստներ ու շահագործողներ։ Այս դրությունը, որի մասին կարևոր չէ երկար կանգ առնել այստեղ, բնականաբար առաջ էր բերում դասակարգային սուր պայքար, որի արտահայտությունը 12—13-րդ դարի համար արդեն տեսել ենք («Առակներ» հատվածի «Սոցիալական հարաբերություններն առակների մեջ» գլուխը)։ Այս երկու խնդիրներն էլ, ազգային ու սոցիալական, չէին կարող չզբաղեցնել Ֆրիկի նման մի բանաստեղծի, որ ծնվել էր առակագիր Մխիթար Գոշի մահից մի քսան-քսանուհինգ տարի հետո, ժամանակով ավելի ևս մոտ էր Վարդան Այգեկցուն և ապրել էր Վարդանա առակների սկզբնական զարգացման շրջանում։ Երեք քերթվածների մեջ, որոնց երկուսի գրության թվականները շատ հավանական ճշտությամբ և մեկինը հավաստի հայտնի են, առանձնապես զորեղ է հընչում Ֆրիկի ձայնն ազգային և սոցիալական հարցերի մասին։

4. «Ընդդեմ ֆալաքին»։— Այս բանքը նա հորինել է Արղուն ղանի թագավորության և Օրբելյան Տարսայիճ իշխանի աթաբեկության սկզբում, երբ մեծ հույս կար ազգային վիճակի բարվոքման համար. ուստի բանաստեղծը լավատեսությամբ է հայտարարում գալիք քաղաքական փոփոխության մասին.

Հիմիկ դըժարեց բաներս,
Որ թաթարն եղաւ թագաւոր.
Զըրկեց զամենայն աշխարհս,
Ու գողերն եղիր մեծաւոր։
Այս ա՛յլ չի մընայ հանցեղ,
Ու ֆալաքն ոչում կարևոր [=կարեկից],
Զարնու և ձրգէ ի վայր,
Չհամարէ ղոչ ոք թագաւոր[72]։

Ուրեմն վերջ կլինի զրկանք-զուլում անող թաթարական թագավորությանը։ Նրա այս համոզմունքը հիմնված է այն տեսության վրա, թե մարդկային բախտը հեղհեղուկ է։ Դիմելով բախտի անվին (չարխ ի ֆալաք)՝ նա ասում է.

---

72 Ֆրիկ, *Բանաստ.*, էջ 217 և հտն., «Արարատ», 1918, էջ 190 և հտն.։ Այստեղ 6-րդ տողն է «Ու ֆալաքն», իսկ նախորդի մեջ՝ «Ոչ ֆալաքն»։

Է՛յ չարխ, ամ քեզ ո՞նց աւտամ,
Երբ չունիս զոչով մօտևոր.
Ոչ ղաւլ, ոչ երդումն ունիս,
Զի քո սիրտդ է խիստ նենգաւոր։
Զով որ կու սիրես այսօր,
Կու դընես ի յոսկի աթոռ.
Յեգուց կու ձրգես յաչից,
Հաւսարես հողոյն մոխրաւոր։
Ոչ մուլքն, ոչ ապրանքն օգտէ,
Ոչ հարիւր հազար ձիաւոր.
Յորժամ չարխն ի յեա քակուի.
Եւ ձրգէ ի յաչքըն խոլոր։

Դրա համար նա իբրև լավ ապացույցներ ուներ ժամանակակից թագավորների և իշխանների արագ բարձրացումն և անկումը։

Ինչ վերաբերում է սոցիալական հարցին, այս բանքի մեջ նա, թեպետ դեռ անհամարձակ, ֆալաքի պատկերով, բայց արդեն դժկամակում է կյանքի մեջ տիրող անհավասարության և անարդարությունների դեմ, որոնց ենթակա էր եղել և ինքը։ Ֆալաքի, ճակատագրի կամ բախտի հին հավատքը, որի դեմ պայքարել էր դեռ Եզնիկ Կողբացին, կարող էր ընդունելի լինել ռամկի համար, բայց ոչ Ֆրիկի պես խոհուն ու քրիստոնեաբար զարգուն մտքի։ Ֆալաքը նրա բանքի մեջ մի լոկ ճարտասանական ձև (ֆիգուր) է, որով նա վերացական գաղափարից ստեղծել է ըստ հին ժողովրդական հավատքի մի խոսուն ու գործուն էակ, որ իբր բաշխում է մարդկանց բախտը, և ապա մեծ աջողությամբ իր մտածմունքն արտահայտել է մի կենդանի տրամախոսությամբ, որ տեղի է ունենում բանաստեղծի ու վերացական գաղափարի անձնավորման մեջ։

Այդ անհրաժեշտ էր բանաստեղծական գեղեցիկ արտահայտության համար։ Բայց այս ձևական կողմն է։ Նրա ֆալաքն այլևս հին կույր բախտը չէ, բախտի կույր աստվածությունը, որ մարդկանց բաշխում է պատահական վիճակներ։ Բանաստեղծը նրանից պահանջում է բարոյական սկզբունք, այն է, որ մարդկանց բախտն ըստ արժանիքի պիտի տրվեր, արդար և ուղիղ դատաստանով, մինչդեռ ֆալաքը ծուռ, անարդար դատավոր է։ Ինչո՞վ։—Մի անգամ որ մարդ անհաջողության է հանդիպում, ֆալաքն այլևս չի ուղղում նրա գործը։ Այսպես է սկսել Ֆրիկն իր այս բանքը.

Է՛ չարխ, երբ ծըռիս մարդոյն,
Զօրն ի բուն փորես նորա հոր.
Յորժամ դու քակես ըզմանն
Ու չթողուս որ դառնա յոլոր։
Սահուն 'ւ երերուն պահես,
Յաստըւորս ի գիլ 'ւ ի գըլոր.

Կապիճ մի չարխ ցուցնես,
Թէ դու լից զայդ հոգս ու ցընոր։

Այս իրեն՝ Ֆրիկի վիճակն է իր ծռված բախտով, որ մինչև վերջը չի ուղղվում։ Լավ, իմաստուն, գիտուն, «ուղղոդ» մարդիկը,—ասում է նա,— աջողություն չունին, աղքատ ու դժբախտ են, մի կտոր հացի կարոտ են մնում, նրանց տունը քանդվում է. իսկ վատ, անգետ, հիմար, անհունար ու ծուռ մարդիկը մեծ հարստության և իշխանության են հանդիպում.

Է՛յ չարխ, ըզվատի տունըն
Կու ծեփես դու ոսկով բոլոր.
Զաղէկն ի յերկիր ի ներս
Վըտարես որ ժողվէ կըտոր։
Զայն որ խոզարած չվայլէ՝
Կու շինես ահեղ ձիաւոր.
Ու գուղորդ մարդկանց տունըն
Կու քակես առանց բահաւոր։
Ֆալա՛ք, թէ քեզ քուֆր ասեմ,
Նայ ասեն, թէ մարդըն մոլոր.
Թէ չէ ի գիտուն մարդիքն
Յերակ յէ՞ր նայիս դու խոլոր։
Զանգէտ ու վնասքակ մարդիքն
Աստըւորս առնես մեծաւոր.
Զիմաստուն մարդկանց հացըն
Կու ձրգես ի սար կամ ի ձոր։

Մեր բանաստեղծն իր քերթվածի այս մասի մեջ առհասարակ անհատական կյանքի մեջ տեղի ունեցող անհավասարության դեմ է դժգոհում, և մանավանդ այն անարդարության դեմ, որ մարդ ըստ արժանիքին չի գնահատվում և աջողություն ունենում։

Նրա անունով հայտնի նույնիմաստ երկրորդ բանքի մեջ[73]*, որ արվեստի նկատմամբ թույլ է, քան առաջինը, շեշտված է դասակարգային անհավասարությունը.*

Թէ բուլջն ու թալեհն աղէկ՝
Յաստուծոյ է քեզ հրամայած,
Զինչ յաշխարհըս մարդ որ կայ՝
Զերդ մըշակ են քեզ կանգընած...
Այն մարդն որ թալեհ ունի
Յոչումէ իսկի չէ զրկած.
Զօրըն նա սպարապ նըստի,
Ու բարիքն ի մօտն է կուտած...

---

73 Ֆրիկ, *Բանաստ.*, էջ 225 և հետ., «Վասն թալեհի և բրջի ի Ֆրիկ երգէ»։

Մէկն թագաւոր լինի,
Մէկն աղքատ մոխրին պառկած։

Այս իրական դրութիւնն է, աշխատող և չաշխատող դասակարգերի վիճակների մեծ տարբերութիւնը, որ միամտութեամբ բացատրվում է բախտով կամ աստուծով։ Բայց բանաստեղծը չի բավարարվում դրանով։ Նա ցանկանում է հավասարութիւն, և ձգտում է իրական անհավասարութեան բուն պատճառը որոնելու, բայց չի գտնում այն.

Ձայս ո՞նց գիտենալ կարենք,
Թէ այս է՞ր է (ի) հանց բաժանած...
Ձայս ո՞նց գիտենալ կարենք,
Ես մըտօքս ի հոգս եմ անկած.
Ասեմ, թէ այս է՞ր լինի,
Որ զամէն հաւասար չէ զուգած։

Նա դասակարգային պայքարի խնդիր չի դնում. բայց որ նա հասարակութիւնը բաժանում է երկու դասակարգի—անարժան վայելողներ և զրկված արժանավորներ, և որ նա դժգոհում է անարդարութեան դեմ, գտնելով այդ դրութիւնը ծուռ, և ցանկանում է, որ հավասարութիւն լինի, այդ արդեն ըստ ինքեան դասակարգային պայքար է։

Ֆալա՛ք, դու (ես) ծըռին ընկեր,
'Ի ուղղորդին ես խիստ նեղգաւոր.
Թէ չէ՝ դու հայեց ի նա,
Որ չունի հունար հոգևոր.
Աննկել է յոսկուն ի մէջն,
Շըփոթել դինչ ըզթագաւոր։
է՛յ չարխ, սամ քեզ ի՞նչ ասեմ,
Քան զամէնն ես խիստ դու մոլոր...
Ծուռ է դինչ որ դու կառնես
Ո՞վ լինի հաւա՛ն քեզ այդոր։

Այսպես ամեն ինչ ծուռ է, ֆալաքի դատաստանն ուղիղ չէ. նա ծուռ դատավոր է։ Այսպես է դիտել և անձամբ զգացել բանաստեղծն աշխարհի իրականութիւնը։ Նա դժգոհ է եղած դրութիւնից, չի կարողանում հաշտվել դրա հետ։ Եթե նա միայն նրանով վերջացներ իր բանքը, թե ամեն ինչ որ անում է ֆալաքը ծուռ է և թե ոչ ոք նրա արածին հավան չէ, այդ կնշանակեր՝ բանաստեղծութեան մեջ անդրադարձնել իրականութեան պատկերը։ Այս էլ անշուշտ արժեքավոր և մեծ գործ կլիներ, մանավանդ որ քերթողն իր երկի մեջ ցույց է տալիս քննադատական ոգի, կանգնում է աշխատավորների թեր և պահանջում հավասարութիւն և ըստ արժանիքի վարձատրութիւն, դառնալով աշխատավորութեան մտքի ու զգացմունքի թարգմանը։ Բայց նա այստեղ կանգ չի առնում, ավելի հեռուն է գնում։

Ֆալաքն ինձի բարկացաւ.
— Մի՛ հաչել, անգէտ ալևոր,
Քանի ես ֆալաք եմ լեէ,
Չեմ տեսել քան ըզքեզ մոլոր.
Չարիւնդ ի վերաս ձրգես
Թէ ֆալաքն է մեղաւոր.
Չգիտե՞ս թ'արարչէն լինի,
Չով կամի առնէ մեծաւոր....
Հազար թէ ֆալաք եմ ես,
Չեմ կարող որ տամ քեզ կտոր.
Հրամանքն աստուծոյ լինի,
Ես առնեմ ըզքեզ թագաւոր։

Ուրեմն ամեն ինչ տնօրինողն աստուծու կամքն է, և ոչ ֆալաք ասածը։ Կնշանակի՝ բանաստեղծի դժգոհությունը վերջին հաշվով վերաբերում է աստուծուն։ Սակայն բանը որ հասնում է աստուծուն, այստեղ արդեն ետ է կանգնում նա, ասելով.

— Ֆալա՛ք, քեզ մեղ ո՞վ դրնէ.
Ջինչ առնես՝ զամէնն է աղւոր.
Գիտես ըզտալու տեղին.
Չանարժանն ու զարժանաւոր։
Ապա մե՛զ հանցեղ թուի,
Թէ դու չես իրաւ դատաւոր,
Չամէնն է հաշուով զուգել [Աստված],
Ու զմարդիկք պահել ահաւոր։

Ուրեմն՝ մե՛զ է այդպես թվում, թե չէ աստված ուղիղ դատաստան է անում։ Ապա ինչպես անձնականով սկսել էր, նույնպես վերջացնում է իրենով, ցանկալով, որ իր դժբախտությանը վերջ լինի և հին վիճակը ետ ստացվի.

Է՛յ չարխ, ամ հերիք սրայ
Ու ձգէ զքակտիլդ ի յոլոր.
Կըրէ զչարութիւն յինէն
Եւ դարձո զինչ հին կայ ի նոր։

Այս է մեր բանաստեղծի այս բանքի բովանդակությունը։ Այստեղ տեսնում ենք, որ ազգային և իր անձնական չարաբաստիկ հանգամանքների և հասարակական անարդար անհավասարությունների պատճառով բանաստեղծության մեջ երևում է դժգոհություն իրական անհավասար սոցիալական վիճակից, և մի վայրկյան միայն բանաստեղծի մտքի մեջ շողում է երկբայության ոգին, թե աստուած «իրավ դատավոր» չէ։ Բայց այս վերջինս, նրա մտքի ցոլքը, արտահայտվում է դեռ շատ մեղմ, անհա-

մարձակ, նույնիսկ երկչոտ եղանակով, ու վերջը բանաստեղծը նույնիսկ համակերպում է եղած դրությանը, թե աստված ամեն ինչ հաշվով է արել— անձնապես մխիթարվում է, թե՝

Աղքատն իմաստուն լաւ է,
Քանց հաղար անգէտ գանձաւոր։

Այդպես է և աստուծու մոտ, դի

Աստէն նա [գանձավորը] չունի հոգի,
Անդէնին է դառն ու մոլոր։

Ուրեմն ոչ թե մի ծրագիր ազգային դրության և սոցիալական անարդար վիճակի բարվոքման համար, այլ լոկ մի մխիթարություն անդենի կյանքով՝ ըստ ավետարանական Աղքատ Ղազարի առակի։ Եվ այլապես չէր կարող լինել 13-րդ դարում, երբ դեռ իշխում էր քրիստոնեական մեծ բարեպաշտությունը, և Ֆրիկն, ինչպես նրա մյուս երկերից կտեսնենք, իր ժամանակի որդին էր այդ նկատմամբ։

Կենսագրական տեսակետից էլ կարևոր է բանաստեղծի այս բանքը. պարզ երևում է, որ նա այս հորինելու ժամանակներն, 1286 թվականին, եղել է ալևոր, մոտ 50—51 տարեկան. արդեն կորցրած է եղել իր ստացվածքը և աղքատության ու անհաջողությունների մեջ ընկած։

Տե՛ս երրորդ հավելված՝ «Ֆրիկի կենսագրության շուրջը»։

5. «Վասն Արղուն դանիճ և Բուղայիճ»։— *Ֆրիկի այս քերթվածը նրա լավագույն գրվածքներից մեկն է։ Սրա մեջ ավելի պայծառ երևում են նրա բանաստեղծության էական կողմերը, նրա մի քանի հասկացություններն ու մտածմունքն ազգային և սոցիալական խնդիրների մասին, միաժամանակ և հայ ժողովրդի ծանր տնտեսական և ներքին քաղաքական դրությունը, այլև որոշ կենսագրական տեղեկություններ ենք ստանում հեղինակի մասին։ Այս երկն իր հիմքում մի քերթված է հեղինակի օրով կատարված մի պատմական եղելության և իր ժամանակի վրա, ոչ թե ոտանավորով ժամանակագրություն, այլ մի իսկական բուռն քնարերգություն։*

Պատմական դիպվածն է 1289 թ. Արղուն ղանի դեմ լարված դավադրությունը, որ չի հաջողվել. կոտորվել են դավադիրները։ Հենց այս թվականին էլ ամենայն հավանականությամբ Ֆրիկը հորինել է իր այդ երկը։

Տե՛ս երրորդ հավելված՝ «Ֆրիկի կենսագրության շուրջը»։

Օրբե՛լյանը, ինչպես տեսել ենք, Արղուն ղանի համար հաղորդում է, թե նա «ինքն էր յոյժ սիրող քրիստոնէից և եկեղեցեաց»։ Այս պատմագիրը նրա մասին պարզապես գրում է, թե «Աստուած քրիստոնէից յայնմ գիշերի դարձոյց զսիրտ մեծամեծացն աւ Արղունն», որին հանում են բանտից, թագավորեցնում և կոտորում նրա թշնամի Ահմադ ղանին ու սրա կուսակիցներին։ Ուրեմն հավատում էին, թե քրիստոնեական աստվածն է թագավոր կարգել հայերի բարեկամ Արղունին։ Կնշանակե՝ հայերի համակրությունն ուղղված էր աւ Արղունը, ինչպես և դեպի նրա հայր Ապաղա

ղանը և պապը՝ Հուլավու դանը։ Ֆրիկի համակրությունն էլ բնականաբար եղել է Արղունի կողմը և ոչ 1289 թ. նրա դեմ դավադրություն սարքողների, որոնց պարագլուխն էր Բուղան։ Նա քերթվածի սկզբում փառք տալով «արդար ու իրաւ դատաւոր» աստուծուն՝ բացագանչում է և բացադիմում սպանված դավադիր Բուղային.

Տեսէք, թէ ի՜նչ զարմանք եղև
Հետ Բուղային և Արուխին։
Բուղա՛, դու ո՞նց կամիր նենդել
Աստուածադիր թագաւորին.
Զոր քրիստոնեայքն ամէն հաւսար՝
Ի յաստուծոյ կու խնդրէին։
ԶԱրղուն Ղանն աստուած եդիր,
Ո՞վ է յաղթող Արղուն Ղանին.
Արղունն ի՞նչ վընաս գործեց,
Գիտեմ՝ որդին էր Աբաղին։

Արղուն դանն էր Բուղային «վեր քաշել» և ամեն բարիք տվել, մեծացրել այն աստիճանի, որ նա Արղունից պակաս չէր,— ասում է Ֆրիկը, — կամ, ինչպես Օրբելյանը գրում է, եղել էր «չինքսան», այսինքն «աւագաց աւագ».

Դու քանց զԱրղունըն չիր [=չէիր] պակաս,
Ի քո յահէդ խիստ կու վախին [=կու վախէին]։
Բուղա էիր, չինքսան եղար,
Բէկլար բէկի՛ իր [=էիր] հեծելին.
Չգիտեմ, թէ ո՞նչ կամիր [=կամէիր] լինել,
Դու չի՛ր [=չէիր] որդի Ջանկըզ-Ղանին։

Իր ստացած բարիքների փոխարեն՝ Բուղան կամեցել է Արղունին սպանելով ինքը դառնալ թագավոր. բայց այդ,— ասում է Ֆրիկը,— նրան տրված չէր ի վերուստ։

Մըտիկ դրէ աշխարհ ամէն
Ըսքանչելեացն երկնաւորին,
Տեսէ՛ք, թե ի՜նչ արար աստուած
Ըզհատուցումըն հրգօրին։
Քակեց ըզբարձրըն յաթոռոց,
Ջախեց զգըլուխըն վիշապին.
Ով կուրըն տայ թագաւորաց,
Իւրըն բերէ կործանութիւն։

Սատանան էլ,— ասում է բանաստեղծը,— այդպես մտածեց իր ստեղծողի նկատմամբ. բայց իր փառքից զրկվելով վայր գլորվեց, կործանվեց, անդունդն ընկավ։ Այդպես էլ սատանայի գործակիցներին աստված

Հա՛նց խայտառակ հրապարակէ,
Ջինչ որ արար հետ Բուղայինն
Տէրըն էվարկ երկնից ի վայր
Ջընքսա-Բուղին և Արուխին,
Եւ ամենայն գլխաւորացն,
Ջինչ ի մէկ տեղ խորհուրդ արին։

Ազգային-սոցիալական խնդիրը շատ կարևոր տեղ ունի Ֆրիկի այս քերթվածի մեջ։ Շարունակ զգացվում է բանաստեղծի զայրույթն առ դավադիրները և սրտանց բավարարումը, որ նրանք պատժվել են իրենց գործերի համար։ Նրա այս երկու հույզերը ծագում են երկու դրդիչներից։ Մեկն այն է, որ, ինչպես տեսանք, դավադիրները ցանկացել էին «նենգել աստվածադիր թագավորին», որ բոլոր քրիստոնյաների ուզածն էր. բնականաբար Ֆրիկն էլ ուրիշների հետ պիտի զայրանար նրանց գործի համար և գոհ լիներ, որ նրանք պատժվել են։ Երկրորդ դրդիչն ազգային-սոցիալական է, այդ այն է, որ նա այդ դեպքից առաջ էլ սոսկալի ատել է դավադիրներին, որոնց անունները դավադրությունից ու կոտորվելուց առաջ արդեն իրենց չար գործերով հրապարակի վրա են եղել և հանրածանոթ։ Մեր քերթողի խորին ատելության գլխավոր աղբյուրը, դա աշխատավորության թշվառ իրականությունն է, որ շարունակ մաշել է քերթողին։ Դա հայ ժողովրդի տառապագին վիճակն է այն բռնակալ մարդկանց ձեռին, խեղճերի հառաչանքն ու հեծծությունը, զրկված որբերի և այրիների քաշած նեղությունները, շատ մարդկանց տների քանդումը և ամեն տեսակի կեղեքումները, որ աշխատավոր ժողովրդի գլխին բերում էին ոչ միայն դավադիրները, այլև ընդհանրապես բոլոր «մասասչինները»։

Ֆրիկի «Բանաստեղծությունների» գրքի վերջում դրված «բառարանի» մեջ «մասասչիք» բառի դիմաց կա «անծանոթ բառ»։ Այս բառը մի քանի անգամ գործածված է տվյալ քերթվածի մեջ, թաթարական դարաշրջանի պատմության համար կարևոր է, և պետք է թե՛ լեզվաբանները և թե՛ պատմաբանները որոշեն դրա ճիշտ նշանակությունը։ Նույն շրջանում քաղաքներից առևտրի և արդյունագործության համար առնվող հարկը կոչվում էր «տաղմա» կամ «թաղմա», իսկ այս հարկը հավաքողները՝ «տաղմաչի» կամ «թաղմաչի»։ Նույն կազմությունն ունի «մասասչի» բառը «մասաս» բառից, որ մի անգամ գտնում ենք Ֆրիկի սույն քերթվածի մեջ։ Ըստ գործածության այս բառը նշանակում է՝ իշխանավոր, կառավարիչ, վերակացու, պաշտոնյա, իսկ «մասաս»՝ իշխանություն, կառավարություն (թաթարական), վերակացություն, գուցե և կողոպտում, կամ սրանց նման մի բան։ Մասասչիներն, ըստ Ֆրիկի, կեղեքիչներ են։ Ինչպես հայտնի է, իշխող ղաներից հողային ընդարձակ կալվածներ էին շնորհվում բարձր պաշտոնյաներին ու զինվորականներին, որոնք և ամեն կերպ չափազանց շահագործում ու հարստահարում էին ժողովրդին։ Այդպիսիներից են եղել նաև Բուղան, որ «ամեն բարիք» ստացել էր Արղունից, այլև

իր ընկերշակները («օրթախնին»). նույնը եղել են և ուրիշ կառավարիչները կամ պաշտոնյաները։ Նրանք ոչ միայն ճնշում ու կողոպտում էին աշխատավորներին, այլև իրենց մեծ թվով նախիրներն ու խաշների հոտերն արածացնելու համար՝ ոտնակոխ էին անում, ավերում մշակված, շեն ու մարդաբնակ երկիրը, ձմեռն արան գնալով, ամառը քոչելով սարերը։ Այս քոչվորությունը՝ հարկերի ծանրության հետ միասին՝ հայ ժողովրդի ու Հայաստանի պատուհասն էր դարձած. նստաբնակ ժողովրդին տեղահան անելով՝ իբր նախրորդ ու հովիվ քշում էին այս ու այն կողմ։ Շատ բնական է, որ ժողովրդասեր Ֆրիկը զայրանար այդպիսի կեղեքիչների վրա և շատ գոհ լիներ, որ «արդար և իրաւ դատաւոր» տերը խփել ոչնչացրել է Բուղային և նրա ընկերներին, որ նա անմեղ տանջվածների վրեժն առել է։ Դրա համար և մեր բանաստեղծը վերևում բերված վերջին քառյակից հետո՝ իբրև հավատացյալ իր գոհությունն է հայտնում.

Դու ես, տէ՛ր, խնդրող վրէժից,
Ի խոր նայիս անդնդային.
Լսես ձայնի հառաչանաց,
Եւ հեծութեանցըն տրնանկին։
Դու զըրկելոց ես ողորմած,
Որբերըն քո՛ են և այրին.
Տէ՛ր, դու տեսար յերկնից ի վայր,
Ջինչ քո ծառայքըն քարշեցին։
Գէմ չի մնաց աղբիւր ու գետ,
Որ լացուցածքըս չխըմեցին.
Գէմ չի մնաց լեռներ ու դաշտք,
Որ մասասչիՒրն չկոխեցին։
Ջըմեռն յարան երթին [=երթային] լալով.
Ի ամառն ի քոչըն քարշէին.
Քըսան տարի դար [=տանջանք] քարշեցաք,
Ու հալեցաւ ոսկր ու մորթին։
Լոկ շնչաւոր ենք մնացել,
Խելք, զգայարանք մեզ չերևին։

Ֆրիկի հիշած «քսան տարին» տանում է մեզ 1260-ական թվականները, երբ 1261 թվականի հայ-վրացական ապստամբական շարժումից հետո՝ սկսում է ավելի ևս ծանրանալ ժողովրդի դրությունը, և Ֆրիկը կարող էր վշտահար սրտով ասել՝ «դար»—տառապանք, դառն օրեր քաշեցինք։

Անեծք ու վրեժխնդրություն, ահա թե ինչով է բորբոքվում Ֆրիկը մասասչիների հանդեպ։ Եվ որքան մեծ է եղել ընդհանուրի թշվառությունը, նույնքան և ավելի բուռն է մեր բանաստեղծի ատելությունը նրանց վերաբերմամբ։ Նա անուններով հիշում է մի երեքին, որոնցից մեկի համար գրում է.

Տէրըն սաստեց խոլոր աչօք,
Որ ցրուեցաւ տունն ու բարին.
Հանց փոխարէն արար աստուած
Այն Գրիգորին և իւր ազգին.
Որ ամենայն մարդ վկայեաց,
Թէ օրթախներին անիծեցին։

«Գրիգորը» Գրիգոր Լուսավորիչն է, իսկ նրա ազգը՝ հայ ազգը։ «Աստված,— ասում է Ֆրիկը,— Գրիգորի և նրա հայ ազգի վրեժն ա՛յնպես առավ, որ ամեն մարդ վկայեց, թե [հայերը] օրթախներին [=դավադիր ընկերներին] անիծեցին», այսինքն՝ հայ ժողովրդի անեծքով կատարվեց այդ. աստված նրա, ժողովրդի վրեժն առավ։ Անեծքի կատարման այս հասկացությունը, որ դարեր շարունակ իշխել է հայերի մեջ, Ֆրիկի այս քերթվածի մեջ ուրիշ դեպքերում ևս ուժեղ կերպով երևան է գալիս։ Իսկ Գրիգոր Լուսավորչի հանդես գալը բացատրվում է այնու, որ եթե «օրթախները» աջողություն ունենային «քրիստոսադիր» թագավորի դեմ, մահմեդականության կողմից պիտի վտանգվեր Գրիգորի հավատը, հայոց եկեղեցին։ Հայերը նեղության մեջ էին ոչ միայն տնտեսապես, նկատմամբ այս աշխարհի [=«աստէնիս»],— ասում է Ֆրիկը,— այլև այն աշխարհի [=«անդէնին»], այսինքն կրոնի.

Յերկու դիմաց ինք պարտական,
Մէկ՝ աստէնիս, մէկ՝ անդէնին։

Բայց մենք շարունակենք տեսնել, թե ինչպիսի վրեժխնդրության կրակով եռում է Ֆրիկի սիրտը։ Մի ուրիշ «անօրէն» կեղեքիչի համար նա ցանկանում է.

Հանց խորտակէ աստուած զնա,
Որ իւր ազգովն ամէն չնչին։

Իսկ մի երրորդի համար գրում է.

Տիրասպա՜ն, աստուածուրաց,
Լիրբ 'ւ անամօթ այն շուն Սօֆին.
Հանչաք վազէ դոնէ ի դուռն,
Մինչ որ անկնի ի մէջ գըբին։

Եվ վերջապես բերելով Ս. Գրքի խոսքերը՝ բացականչում է.

Թէ երանի՛, որ հարկանէ
Զորդիքն ի քարըն՝ չարկամին.
Մենք վա՜շ ասենք անձանց մերոց,
Թէ ո՞նց տեսաք ըզթշնամին։

Սրանից էլ ավելի չէր կարող լինել ատելության և վրեժխնդրության բոցը հայ աշխատավոր ժողովրդի չարկամների ու թշնամու վերաբեր-

մամբ։ Մեր գրականության մեջ կան ուրիշ նման անեծքներ ևս։ Դավթակ քերթողն էլ, ինչպես տեսել ենք, անեծքներ է տալիս մի իշխողի, մի անձի սպանողներին, բայց դա հոգեւորական բնավորություն ունի։ Ներսես Շնորհալու գործեղ անեծքը «Ընդեսիոյ Ողբի» մեջ մի քաղաքի կոտորածի համար է, որ բանաստեղծն ինքը տեղում չէր ապրել։ Իսկ Ֆրիկի խոսքերն ավելի աղդու և ուժեղ են, վերաբերում են ոչ թե միայն մի անձի սպանման, կամ մի քաղաքի ավերման, այլ մի ամբողջ ժողովրդի շատ տասնյակ տարիներով կրած ամեն տեսակի և՛ մարմնական, և՛ հոգեկան տագնապ ու տառապանքների, որ ոչ միայն զգացած է բանաստեղծը, այլև ինքն իր անձի վրա կրել է այն։

Այդ ամենի հետ կար նաև բարոյական կողմը. բավական չէր, որ հարըստահարում էին, այլև չարախինդ մարգիկը ծաղրում, վիրավորում էին անմեղ խեղճերին, նրանց բարոյական զգացմունքին դիպչում, ինչ որ տանել չի կարողանում բանաստեղծի զգայուն սիրտը։

Գիտե՛մ, կային հանցեղ մարգիկք,
Որ ի մեր չարըն խնդային.
Երբ նստէաք ի հրապարակ,
Ամէն ըզմեզ ծիծաղէին։
Հա՛նց բարետես աչուի ունինք,
Որ նոքա ա՛յլ գլխիվայրին.
Թող չյուսանայ մարդ ի դրամ,
Եւ ոչ ի զուր մարդ ծիծաղին...

Այդ չարախինդ մարդիկը հարստացած մասասչիներն են, որոնց աբարքներից այնքան դառն ցավով լցված է մեր բանաստեղծը, որ չի հանգըստանում, շարունակ դրդված ու գրգռված է մնում. ուստի կրկին ու կրկին դառնում է նա նույն խնդրին.

Ապա զայս այլ կամիմ ասել,
Զինչ մասասչիքըն գործեցին.
Խիստ յուսացան ի յանցաւորս,
Եւ պարծեցան յիւրեանց մտին,
Թէ մենք չինենք շատ մի թուման,
Երթանք կախենք զորըն և զայրին.
Հետ ընկերաց ծուռ են կացել,
Եւ շատ մարդկանց տուն քակեցին...
Զինչ որ տուել էր տէր նոցա,
Զայն գոհութեամբ հերիք չարին...
Հանց խար(ա)զանաւ տէրըն ծեծեց,
Որ իմացան զինչ գործեցին...
Հա՛նց սատակեաց աստուած զնոսա,
Զինչ մասասչեց [=մասասչեաց] չար կամէին։

Իսրայէլի գերիքն էաք,
Ձեռն ինք ընկել ի Բուղային.
Ումեկ հատել էր ի սրտէ,
Թէ ի՞նչ լինի ճար մեր բանին.
Դառն և ողորմ ինք մնացել,
Թէ ե՛րբ հասնինք մեր մուրատին...

«Աստված ա՛յնպես սատկեցրեց նրանց (մասսաչիներին), ինչպես (տանջված մարդիկը) չար էին կամենում մասսաչիներին»,— այսինքն՝ կատարվեց ժողովրդի տված անեծքը։ Հարստահարված խեղճ մարդիկը,— շարունակում է քերթողը,—

Յիւրեանց բարեացըն [=բարիքներից] զրկեցան,
Դէմ աստուծոյ շատ մի լացին.
Գանգատ ասցին ի խոր սրտէ
Հառաչանօք զայս ասացին.
«Տէ՛ր, մի՛ հաներ զմեզ ի կենացս,
Մինչ որ մեր պարտքըս վճարին»։

Այս նշանակում է, թե տանջվածներն աղոթել են, թե իրենք չմեռնեն, մինչև որ իրենց «հատուցումը» լինի, այսինքն իրենց վրեժն առնվի և իրենց աչքով տեսնեն աստուծու արդար դատաստանը և մասսաչիների պատիժը։

Ֆրիկը շատ լավ գիտեր, որ Բուղայի և սրա համախոհների ջնջումով չէր բարվոքվում կառավարության սիստեմը, դեռ չէր ոչնչանում «մասսաը», դեռ մնում էր մյուս մասսաչիների ոհմակը։ Այս ամենի բնաջնջումն էր կամենում նա, ծանր և անտանելի հասարակական ու քաղաքական կարգերի հեղաշրջումն էր տենչում։ Այս է նրան հուզում, և այս էր նրա երազի առարկան։ Դրա համար, սակայն, նա դժբախտաբար ուրիշ միջոց չի գտնում և չի առաջարկում այս քերթվածի մեջ, բայց եթե աղաչել աստուծուն և անեծք.

Ձինչ մասսաչի կայ՝ հաւասար
Ամենեքեան թող ժողովին.
Որ աղաչենք ըզտէր աստուած,
Որ ցուցանէ[74] Արղուն Ղանին,
Թէ չէ՛ աղէկ այն արտասուքն,
Որ թափեցին օրթախընին։

Արղուն Ղանին աստված հասկացնի,— ասում է բանաստեղծը,—որ լավ չէ այն արտասուքը, որ օրթախները—դավադիր ընկերակիցները

---

74 Ֆրիկի «Բանաստեղծություններ» մեջ տպված է «ցուցածն է», իսկ «Արարատ» ամսագիր, 1918, էջ 176 է «ցուցանէ», որ և ուղիղն է։

թափել են տվել։ Ղանին արած այս նուրբ ազդարարությունը վերաբերում է նաև նրա մոտ ժողովված բոլոր մասսաչիներին, որոնք դեռ կենդանի էին և հավատարիմ էին Արղուն Ղանին. նրանք էլ պիտի իմանան, որ լավ բան չէ այն չարիքը, որ բերում են ժողովրդի գլխին։ Բանաստեղծը, սակայն, անմիջապես նրանց մի երեքի անունները տալով՝ «Հոգացող անուն» աստծու հրամանով հայտնապես զգուշացնում է նրանց, որ շուտ հոգ տանեն իրենց մասին, այսինքն չարիքներ չգործեն, թե չէ՝ նրանցով կզբաղվեն, ժողովուրդը նրանց անեծք կտա, և աստված այդ անեծքը կլսի, կկատարի.

Կու հրամայէ Հոգացող անուն[75]
Թաչար Ղուջան Սադադալլին,
Թէ շու՛տ հոգցէք զիւրեանց բաներդ,
Թէ չէ ի հետ ձեզ պարապին։
Անէծքըն չէ ոչում բարի,
Շուտ կը բռնէ զադամորդին.
Աստուած յերկնից ականջ դրել,
Խիստ կու լսէ մեղաւորին...

Քերթվածի վերջին մասը *մի շատ ազդու հատված է, որ առանձին առած կարող է լինել մի գեղեցիկ կրոնական բանաստեղծություն։ Այստեղ արտացոլում է Ֆրիկի ուղղությունը, ոգին և իղձը։ Նա դեռ կանգնած է հին կրոնական, բիբլիական գաղափարի վրա, թե ուրիշների հետ ինքն էլ մեղավոր է. մեղանչել է և ժողովուրդը, թե աստված օտար դաժան բռնակալների ձեռով մեղքի համար պատժում է ժողովրդին, բայց պատժում է իր սիրելիներին և վերահաս դժբախտություններով՝ լոկ փորձում է մարդկանց։ Այսպես դեռ իշխում է նույն հայացքը, ինչ որ Ներսես Շնորհալու ժամանակ։*

Աստուած յերկնից ականջ դրել,
Խիստ կու լսէ մեղաւորին,
Թէպէտ որ քիչ մի կու դատէ,
Բայց կու փորձէ զիւր սիրելին։

Եվ ահա իրեն մեղավոր զգացող մեր այս բանաստեղծը, իբրև մի երկար տանջված մարդ, երեսը գետնին դրած՝ արտասուքով թրջելով հողը՝ աղոթում է։ Նրա աղոթքը հավատացող մարդու,—Գրիգոր Նարեկացու խոսքով ասած,— սրտի խորքերից բխած մի ջերմ խոսք է առ

---

75 «Հոգացող» և համանիշ «խնամող», «խնամիչ», «նախախնամող» բառերն աստծու ստորոգելիներն են։ «Հոգացող անուն» կիրառությունն աստուծու համար՝ համեմատ է «Սէր անուն Յիսուս» կիրառությանը, որ գտնում ենք Ներսես Շնորհալու մի երգի մեջ։ Ինքը Ֆրիկը գործածել է «Յիսուս անուն»։ Տե՛ս Ֆրիկ, Բանաստ., էջ 63. «Յիսուս անուն, յիս զթացար» քերթվածի սկզբում։

աստված։ Բայց նա միայն իր անձի փրկության համար չէ աղերսում, այլև ընդհանուրի. ոչ թե հոգևոր փրկություն է հայցում, այլ մարմնավոր **ազատում «մասասից»**:

Տէ՛ր, որ զՅունան տուեր կէտին,
Հաներ արձակ հող 'ւ ի գետին,
Զայս մեղաւոր ծառայքս յետին
Մի՛ տար տանել մեղաց գետին...[76]
Ողորմութեամբըդ կու մընամք,
Որ վերջք առնես դու մեր չարին.
Աւուրքս անցաւ հետ մասասիս,
Եզըր չըկայ, հուն չերևին։
Ցաւս յերկարեց 'ւ ի յոսկր անցաւ,
Այլ չի մնաց համբերութիւն.
Տէ՛ր, վասըն քո աստուածութեանդ
Յօգըն հասիր մեզ յատենին։
Փրկեա՛ ըզմեզ ի տանջանաց,
Երևեցո՛յ զերեսս քոյին։

«Օգնության հասիր մեզ հատենին»—դմտաստանին։ Այս նշանակում է՝ «արդար և իրավ դատ» արա մեզ համար, ինչպես վարվեցիր Բուղայի և ընկերշակների վերաբերմամբ, նրանց դիվան-դատաստանը տեսար, նույնպես վարվիր այժմ մնացած մասասչիների, ընդհանրապես «մասասի» հետ, վերջ տուր մեր կրած չարիքին ու ցավին և փրկիր մեզ տանջանքից։ Բայց թե ի՛նչ միջոցով պիտի լինի փրկությունը, այդ չկա։ Ֆրիկի այս կերպի աղերսն արտահայտություն է հասարակ մարդու, անճարակ ժողովրդի, որ խորն զգում է իր տառապանքի սոսկալի ծանրությունը և ցանկանում է ազատվել դրանից, սակայն որևէ գործնական միջոց չի գտնում, բայց եթե անիծել և «աստուա՛ծ-աստուա՛ծ» կանչել։ Այսպես և Ֆրիկը, որ «արդար և իրաւ դատաւոր»-ով սկսում է իր այս նշանավոր քերթվածը և նրանով վերջացնում։ Այդ է նրա քերթվածի գլխավոր, հիմնական գաղափարը։ Այդ էլ մի աստվածաշնչյան հասկացություն է. «Դատ արա ինձ, ա՛ստուած, և իրաւ արա ինձ ի դատաստանի իմում»։ Աստուծու արդար դատաստան և իրավունք։

Բայց դրանով բնավին չի նվաստանում նրա այս գործը, որ սերտ կապված է ժամանակի իրականության, իրական կյանքի հետ, անդրադարձնում է առհասարակ ամենքին մտատանջող հարցը, թե ե՛րբ պիտի գա թաթարական իշխանության վերջը։ Եվ եթե նա դրա համար մի կոնկրետ քաղաքական ծրագիր չի տալիս իր բանքի մեջ, դրա փոխանակ նա այնպիսի թանձր ու մռայլ գույներով նկարել է ազգային-հասարակական

---

76 *«Մեղաց գետ»—դժոխքի հրեղեն գետը, որի մեջ իբր ընկնում և քշվում են մեղավորները։*

ծանր վիճակը, և այնպիսի սրտամորմոք զգացմունքով է խոսում այդ մասին, այնպես սաստիկ սրտնեղում, թե ինչու ուշանում է սպասած փոփոխությունը, «մասասի» ու «մասասչիների» վերջը, և այնպես մեծ իղձով և ուժգին թափով երգում է փափագած փոփոխությունը, որ անչափ գրավում է և իր հետ հափշտակում ընթերցողին։ Նա մեր գրականության մեջ հասարակական և ազգային-քաղաքական խնդիրների առաջնակարգ քնարերգուն է իբրև, այսպես ասած, «սլարագայական» կամ «դիպվածական բանաստեղծ»։ Բայց այդ քերթվածը չէ միայն։

6. «Գանգատ»։—Մինչ բանաստեղծն իր նախորդ երկու երկերը հորինելիս 1286 թվականից ի վեր անձկությամբ սպասում էր «արդար և իրաւ դատաւոր» աստուծու վճռին, որով վերջ պիտի տրվեր ժողովրդի տանջանքին, 1295 թվականին հակառակն է լինում, սաստիկ հալածանք է սկսվում հայերի դեմ։ Ուստի նա այդ միջոցին հորինված «Գանգատ»[77] բանքի մեջ, «սրտի դառնությունից» դժգոհության ձայն է բարձրացնում առ աստված, դառնալով արտահայտիչ այն ժամանակի հայկական աղետավոր իրականության և փոխված աշխարհայացքի։ Դա մի խիստ բողոք է աշխարհի ամեն անարդարության և անհավասարության դեմ, լինի այն բնական թե ընկերական, և մանավանդ այն անարդարության, որ հայ ազգը կրում էր՝ դարեր շարունակ չարչարվելով իշխանների ձեռին։ Նորից մեր իրականության մեջ հարց է տրվում կտրուկ կերպով, թե ինչո՞ւ է քրիստոնյա ժողովուրդն այնքան կեղեքվում այլակրոնների։ Ներսես Շնորհալու ժամանակ արդեն եկեղեցուց անկախ և ազատ քննադատությունն ու երկբայության ոգին գործում էին աստուծու «արդար և իրաւ» դատավոր լինելու մասին,— որովհետև ամենայն ինչ աստուծուց էր ծագած ընդունվում։ Բայց մեկնաբան բանաստեղծը հակաճառում էր այդպես մտածողների դեմ՝ իր պաշտպանության տակ առնելով աստուծու դատաստանը, բացատրելով, թե իբր մեղքի պատճառով էին հայերի գլխին գալիս այն ամեն չարիքները։ Սընիկ Կողբացուց սկսած միամտությամբ հաշտվում էին այդ մեկնության հետ. իսկ այժմ, երբ կրոնական ոգին համեմատաբար թուլացել էր, այդ այլևս չէր բավարարում շուրջ վաթսունամյա հասուն տարիքն ունեցող Ֆրիկին, նրա հետ, հարկավ, նաև ուրիշներին, և ինքը բանաստեղծն արդեն դատ է սկսում և վիճում նույնիսկ «արդար և յիրաւի և ողորմած» աստուծու հետ։ Նրան զբաղեցնում է այս հարցը.

Ապա այս է՞ր որ կու լինի,
Եւ թէ յումէ՞ կայ և յայտնի։

---

77 Այս «Գանգատ» վերնագիրը ձեռագրից չի ծագում, այլ Արիստակես Վ. Տևկանցի գրածն է։ Տե՛ս նրա «Հայերգ» ժողովածուն, Թիֆլիս, 1882, էջ 143 և հետ.։ Ձեռագրի մեջ վերնագիրն եղել է՝ «Բան ի Ֆրիկ գրքոյն», վարիանտ՝ «Բանք ի Ֆրիկ գրոցն»։ «Ֆրիկ գիրք» անունը ցույց է տալիս, որ այդ վերնագրով մի ժողովածու է եղել Ֆրիկի ոտանավորների։

Նույնպես և մի ուրիշ երկի[78] մեջ ինքն իրեն հարց է տալիս.

Զայս ո՞նց գիտենալ կարենք,
Թէ այս է՞ր է(ի) հանց բաժանած։
Զայս ո՞նց գիտենալ կարենք,
Ես մըտօքս ի հոգս եմ անկած,
Ասեմ՝ թէ այս է՞ր լինի,
Որ զամէն հաւսար չէ զուգած։

Կնշանակի՝ բանաստեղծը երկար ժամանակ խորհում, ձգտում է թափանցելու իրերի խորքը, գտնելու աշխարհում եղած և՛ ազգային, և՛ դասակարգային անհարթությունների ու չարիքների իսկական արմատը։ Ազգային դժբախտությունների հիմնական պատճառ նա համարում է այն, որ աշխարհում կան բազմաթիվ ազգեր, և ոչ թե մեկը։ Եվ այդ տեղից էլ սկսում է իր ասելիքը։ Չէ՞ որ սկզբում մեկ Ադամ-Եվա են եղել և «մեկ բարբառ համազգային»[79], բայց զարմանալի է, շատ զարմանալի,— ասում է նա,— որ այն մի զույգից

Ո՛րքան ազգեր ծնան յերկրի.
Ուրիշ լեզու ամէն մէկի,
Որ մէկ մէկի ոչ հաւանի։

Ապա նա թվում է իր ժամանակի իրեն հայտնի ժողովուրդներին, թվով քսան, որոնք իրենց ցեղական ու լեզվական տարբերությամբ ընդհանրապես իրար դեմ անհավան կերպով կանգնած են եղել։ Այս անհավանությունը կրոնականի մեջ ավելի մեծ ուժով է երևան եկել։ Մխիթար Գոշի առակների ուսումնասիրության ժամանակ արդեն տեսել ենք, թե ինչպես ծաղրում էին ուրիշների կրոնական ծեսերն ու սովորությունները. բայց հայերի և «այլազգիների», այսինքն մահմեդականների հարաբերությունն այն ժամանակ ընդհանրապես բարեկամական էր։ Այդպես չէր դրությունը հարյուր տարի անց։ Հայերս, որ ճշմարիտ հավատն ունինք, ասում է Ֆրիկը, տանջվում ենք այլազգիների ձեռին։ Եվ նա գծագրում է 1295 թվականի թշվառությունները.

---

78 Ֆրիկ, Բանաստ., էջ 227, «Վասն Թալհի և բրջի»։

79 Շատ դյուրագայթ պիտի լինել դրելու համար, թե «Գանգատում» «վեճի բռնվելով աստծու հետ, Ֆրիկն ամենից առաջ կասկածի տակ է առնում աստվածաշունչը», «Ֆրիկ (ժողովածու)», Երևան, 1937, էջ 114, հոդված Ա. Ղանալանյանի)։ Իսկ մի ուրիշն՝ ավելի ևս զարգացնելով իր նախորդի միտքը՝ գրում է. «Իր այս բանաստեղծության մեջ Ֆրիկը համարձակորեն վեճի կանչելով աստծուն, նախ և առաջ լուրջ կասկածի է ենթարկում «Աստվածաշնչում» նկարագրված աշխարհի և մարդկանց արարչագործությունը։ Ֆրիկը չի հավատում Ադամ-Եվայի լեգենդին» (Ֆրիկ, Բանաստեղծություններ, Երևան, 1941, էջ 10. Առաջաբան Մ. Մկրյանի)։ Այսպես գրողներն իրենց մտածածը վերագրում են Ֆրիկին. թող կարդան նրա «Բան պիտանի և լաւ ասացեալ Ֆրկանն վասն արարչութեան», և այլ կրոնական քերթվածները։

Այլ կամք ի ձեռս անօրինի,
Որք կու վարեն անգին գերի.
Ո՞րքան քակեն եկեղեցի,
Քանի՞ շինեն պիղծ մըզկիթնի։
Քանի՞ կանայս առնեն այրի,
Եւ ո՞րքան որբ քրիստոնէի.
Ո՞րքան արիւն հեղան յերկրի,
Քանի՞ առնեն բան խոտելի։
Ո՞րքան տանջեն զմեզ յաշխարհի,
Եւ կեղեքեն զկեանս մեր յայտնի.
Եւ դո՛ւ ներե՞ս յամենայնի,
'Ի անտե՞ս առնես զմեզ ի վըշտի։

Ինչո՞ւ պետք է «արդար և իրաւ» աստվածն այս ամենը ների և այս անիրավութիւնների վրեժը հայտնի կերպով չառնի։ Եվ մի տեսակ հանդիմանութեամբ ավելացնում է՝ դիմելով աստծուն.

Գիտե՞ս, մարմի՛ն եմք մըսեղի,
Գէմ արձա՛ն չեմք ինչ պըղընձի.
Եղե՛գըն չեմք, կամ խո՛տ վայրի,
Որ խանձ արկեալ ես կըրակի,
Քան դանդաստան փըշաբերի,
Կամ մացառաց ինչ պըրակի։

«Լա՛վ, ասենք բարկացել ես հայ ազգի վրա, ինչպես երբեմն հրյանների վրա, ուրեմն ինչ բարկութիւն, որ թեզնից թափվի՝ մե՞ր գլխին պիտի գա կուտակվի»։ Այս հարցապնդումները և մանավանդ հայ ժողովրդի ողբերգական վիճակը զորեղ թափով են արտահայտված, որովհետև բանաստեղծի վիշտն էլ սաստիկ է։ Ժողովրդի կրած տառապանքի մեծութեան պատճառով մեջ է գալիս այն գաղափարը, որ թեթևակի երևում էր արդեն Մխիթար Գոշի առակների մեջ, թե ավելի լավ է մի՛ անգամից մեռնել ոչնչանալ, քան թե տանջվել շարունակ։

Արդ՝ եթէ չեմք ինչ պիտանի,
Եւ կամ չունիմք գործ ինչ բարի,
Կամ քո սրտիդ եմք ատելի,
Որ չարարաք ըստ հրամանի,
Նա՛ դու ջընջէ՛ զմեզ մէկ հետի,
Որ քո բարի սիրտըդ հանգչի։

Այս մի հուսահատական ճիչ է, որ ինքնաշարժ կերպով թռչում է բանաստեղծի բերանից. բայց իսկույն նա զգաստանում է, որ հեգնել է աստուծու «բարի սիրտը», և ուղղում իրեն.

Թէ ա՛յս կամօքըդ քո լինի,
Ամենակա՛լ աստուած բարի,
Նա՛ Ձեզ տանեմք, որչափ պիտի,
Եւ համբերեմք ամենայնի.
Այլ որ վատուժն է՝ թող կորի,
Եւ ղոր կամիս՝ թող ա՛յն լինի։

«Թող վատուժը, թուլլը կորչի, թե չէ՝ մենք, եթե այս լինում է քո բարի կամքով, կդիմանանք ամեն բանի. թող ամենակալ բարի աստուածուդ կամքը լինի»,— ասում է բանաստեղծը՝ այլևս չհուսահատվելով իր ազգի համար և համակերպելով աստուծու կամքին։

Շարունակության մեջ անցնում է հասարակական ու բնական անհավասարություններին։ «Իմ ազգը թողնենք»,— ասում է նա,— բայց մի՞թե «արդար, իրավ դատավորի հրամանն» է,

Որ մէկն ապրի տասն տարի,
Մէկն հարիւր այլ ավելի,
Մէկն ոչ ի տասն հասանի,
Երկու-երեք ամսոց մեռնի։

Եվ նա թվում է բնական և սոցիալական անհավասարությունները— մեկի վաղաժամ մահը, մյուսի բազմամյա անպետք կյանքը. մեկը՝ խիստ ուժեղ, մյուսը՝ սարսափելի վախկոտ. մեկը՝ հանճարեղ ի բնե, մյուսն՝ անշնորհք. մեկը՝ հրեշտակի պես գեղեցիկ, մյուսն՝ անճոռնի տգեղ. մեկը՝ բարեգործ, մյուսը՝ չար, սպանող, և այլն։ Հապա դասակարգային անհավասարությունները՞ը.

Մէկն ի պապանց պարոնորդի,
Մէկն ի հարանց մուրող լինի.
Մէկին հազար ձի և ջորի,
Մէկին ոչ ուլ մի, ոչ մաքի...
Մէկին ատլաս և ղըրմըզի,
Մէկին շապիկ մի չի հասնի.
Մէկին հարամըն յաջողի,
Մէկին հալալըն կորուսի...
Մէկին բոախտ և զըրեհի,
Ճոխով նըստի ի պէտաւ ձի.
Մէկն է բոպիկ և անվարտի,
Հետևակին առաջ փախչի.
Նա բարկութեամբ ի հետ հասնի,
Զվիզըն կըտրէ և չողորմի.
Զկին և զտըղայքն առնու գերի,
Եւ հանց տանի, որ այլ չթափի։

Սրանք են աշխարհի ուժեղներն և այսպես են վարվում թույլերի հետ։

Իշխան դըրեր ես մէկ մէկի,
Քան զքանասար գայլ՝ ոչխարի,
Կամ զերդ վագան նապաստակի,
Կամ քաջ առիւծ՝ ամէն հօտի։

Այսպես է խիստ ուժեղ խոսքով բնութագրում Ֆրիկը կեղեքող և կեղեքվող դասակարգերը. աշխարհի իշխանները հոտերը պատառող գայլեր և առյուծներ են։ Նա առանձնապես կանգ է առնում նաև հարուստների կամ «բախտավորների» և աղքատների կամ «անբախտների» վիճակի մեծ տարբերության վրա։ Բախտավորների մեջ են և հոգևորականները.

Անբախտըն գայ ամօթալի,
Հեզ և հանդարտ, առաքինի.
Գայ և կանգնի յետին տեղի,
Անշուք, անշնորհք և անյարգի։

Իսկ, ընդհակառակն, ահա թե ինչպիսի վիճակ ունի «լուծն ի փորին», այսինքն՝ գիրուցի բեռը փորին՝ հաստափոր, ցնփոր, տգետ և անգործ քահանան.

Բախտաւորն գայ ճօճկտալի,
Գայ և նըստի յաւագ բարձի.
Լուծն ի փորին թէ շուրջ անցնի՝
Ոչ ալելու մի չի դիպնի.
Բայց վաւըն մէկ աւուր տօնի,
Որ թէ զատիկ, այլ տօն լինի,
Նա՛ խաչհամբոյրն իւր շատ անկնի,
Մորթ և էրի և գադանի։

Ամեն լավ ու վատ բան, ամեն աննման անհարթությունները կախված են բախտից, իսկ բախտն էլ աստուծուց է տրվում.

Ամէն ի բախտըն գայ կուտի,
Թէ աստուծոյ տուեալ լինի։

Հետևաբար բանաստեղծը բախտավորի և անբախտի հակադրությամբ ևս տարակուսում է աստուծու «արդար և իրաւ» վերաբերմունքի մասին։ Եթե այդպես է, աստուծու վճիռն իրավ է, ապա ինչո՞ւ աշխարհում գոյություն ունին այնպիսի չարիքներ, անհավասարություններ ու դժբախտություններ։ Բանաստեղծն ուզում է իմանալ այդ երևույթի պատճառը, բայց նա իր հարցերի պատասխանը չի գտնում, և երկբայության մեջ մնալով՝ վերջը նա իր հարցերի համար «մեղա գալով», դարձյալ խոստովանում է, թե աստուծու «դատաստանն իրավ» է. նա, աստված, ամեն

մեկին դիտավորությամբ, որոշ նպատակով («նեաթով») է տալիս իրենց վիճակը, ուստի և ինչպես որ աստված կամենում է, այնպես էլ պիտի լինի.

Ես քեզ մելայ երկնաւորի,
Տեառն աստուծոյ ահեղ մեծի.
Քո դատաստանն է յիրաւի.
Նեաթով կուտաս ամէն մէկի։
Տէր, քո կամացն է աշխարհս լի,
Այսպէս լինել, զոր ասացիր
Քեզ օրհնութիւն ի մէնջ տացի,
Ամենազօր տեառնդ Յիսուսի։

Այս դեպքում էլ, ուրեմն, համակերպվում է աստուծու կամքին ոչ միայն նրա համար, որ վերջիվերջո իրավ է գտնում աստուծու դատաստանը, այլև որովհետև աստված «ահեղ, մեծ», «ամենազօր տէր» է[80]*. կամ, ինչպես «Ընդդէմ ֆալաքին» քերթվածի մեջ ասում է, աստված*

Ջամէնն է հաշուով զուգել [= արել],
Ու զմարդիկք պահել ահաւոր։

Այսպես ուրեմն՝ Ֆրիկն իր երեք քերթվածներով, որ տեսանք և որոնց նյութն են ազգային ու սոցիալական խնդիրները, հանդիսանում է մեծ հայրենասիրական բանաստեղծ, ժողովրդի ցավերով վշտահար մի երգիչ և լավագույն ազգային ապագայի ձգտման, թաթարական լծից ազատվելու իղձի մի քարոզիչ։ Նրա գրավչությունն ավելի մեծ է այնու, որ նա ազգային խնդրի հետ միաժամանակ և իրար հետ կապակցված ու միակերպ ուժով, զբաղվում է նաև հասարակական-տնտեսական, դասակարգային և ընդհանուր մարդկային խնդիրներով։ Եզակի ուժգնությամբ և խորին ատելությամբ աղաղակ է բարձրացնում աշխարհում իշխող ու հարստահարող կոպիտ ուժի դեմ, բուռն զայրույթով նկարում կեղեքող պարոնին, շահագործող ուժեղին ու նրա վայրագությունը, հեգնությամբ երգիծում բախտավոր, տգետ քահանային ու նրա պերճությունն ու վայելքը, և քնքշությամբ արգահատում խեղճերին, թուլերին ու կեղեքվածներին, միշտ ձգտելով մի լավագույնի, մի իդեալի։

---

80 *Լսեցե՛ք, թե ինչ են ասում։ «Այսպիսով, Ֆրիկի այս [«Գանգատ»] բանաստեղծությունից ինքնըստինքյան բխում է այն եզրակացությունը, որ աստված «արդար և յիրաւի» չէ, հետևաբար նա աստված չէ [այսինքն աստվածն աստված չէ— Մ. Ա.] և այդպիսին գոյություն էլ չունի» (Ֆրիկ, Բանաստ., էջ 18, Առաջաբան Մ. Մկրյանի)։—Խե՞ղճ Ֆրիկ, 20-րդ դարում էլ քաշելիք ես ունեցած եղել, այն էլ ի՜նչպիսի։— Եթե վերևի արտառոց տողերի հեղինակը լիներ ուղղատես, ուղղամիտ և ուղղադատ,—ինչ որ անհրաժեշտ է ամեն մի գիտական աշխատողի համար և առհասարակ ամեն մի մարդու համար, ապա նա Ֆրիկին այնպիսի բիրտ ձևով չէր բռնադատիլ, որ մոդեռնիզացիա—արդիացման ենթարկվի և նոր ժամանակի մարդու քղամիդ հագնի։*

Նա որոշ չի հայտնում, թե ի՛նչ է իր իդեալը։ Բայց երբ նա դժգոհում է բազմաթիվ ազգերի և լեզուների գոյությունից և մարդկանց վիճակի անհավասարությունից, այդ ցույց է տալիս, որ նա բաղձում է, որ լիներ աշխարհում մի ազգ ու մի լեզու, և որ բոլոր մարդիկ հավասարապես վայելեին բարիքները։ Նրա քննադատությունը հենց վկա է նրա ազգային ու դասակարգային գիտակցությանը. և նա դրանով իսկապես պայքարում է թաթարական բռի ու կեղեքիչ տերության և ընդհանրապես իշխող դասակարգի դեմ։

Բերենք մի համեմատություն։ Սուրբ Գրքի մեջ Հորը (Յորը) ահեղ ու հզոր աստուծուց գանգատվում է և նրա հետ դատ վարելով արդար դատաստան է ուզում իր անձնական մարմնավոր տառապանքի համար։ Գրիգոր Նարեկացին 11-րդ դարի սկզբում իր Ողբերգության առաջին բանի մեջ «ահավոր դատաստան» անող աստուծուն դիմելով՝ ասում է.

Եւ ի դնելս իմ ընդ քեզ դա՛տ խառանեա
Հզո՛ր, մի՛... տաղտկալի քեզ երևեսցի...
Այլ իբր զբուրեալ խունկն հաճոյական...
Ի վերստին գիւտ կորուսեալս հոգւոյ առակի
Ընդունելի կամաց քոց լիցի։

Իսկ Ֆրիկը 13-րդ դարի վերջերում իր «Գանգատի» սկզբում գրում է.

Աստուած արդար և յիրաւի,
Եւ ողորմած յամենայնի,
Հանդէս [=դատ] ունիմ, բան մի վիճի,
Թէ դու լսես քո ծառայի։

Ո՛րքան տարբերություն մեր այս երկու հին մեծ բանաստեղծների ոճի մեջ, մեկը վսեմ ու ճոխ ձևով, մյուսը՝ պարզ ու հասարակ, բայց ոչ պակաս գրավիչ։ Խնդիրը սակայն այդ չէ։ Նրանք երկուսն էլ դատ են սկսում աստուծու հետ։ Նարեկացու «դատ դնելը» նույնն է, ինչ Ֆրիկի «հանդէս» և «բան վիճի»։ Այս երկու դարձվածն էլ նշանակում են իր «իրավունքը փնտռել», ուզել, պահանջել, ինչպես օտար բառով ասում են, «դավա անելով»—դատ վարելով, վիճելով, կռվելով[81]*։ Եվ ո՛րքան տարբերություն այս երկուսի «դատի» եղանակի, նյութի և նպատակի մեջ։ Մեկն աղերսախառն խոնարհությամբ է դիմում «ահավոր դատաստան» անող «հզորին», մյուսը դժգոհությամբ ու համարձակ հարցապնդում է*

---

81 «Դատ» նշանակում է նաև «իրավունք», իսկ «դատել»՝ նաև «վիճել»։ Տե՛ս Հր. Աճառյան, Արմատական բառարան, «դատ» բառի տակ։ «Հանդէս» նշանակում է նաև «դատաստան», իսկ «վէճ» բառը՝ նաև «կռիվ»։ Տե՛ս «Առձեռն բառարան Հայկազնեան լեզուի»։ Օտար «դավա» բառը նշանակում է՝ դատ, վեճ, կռիվ։ Տե՛ս «Բառգիրք յաշխարհաբարէ ի գրաբար», Վենետիկ, 1869, էջ 516, «տաւայ» բառը։ Այլև Հր. Աճառյան, Թուրքերենն փոխառյալ բառեր հայերենի մեջ, Վաղարշապատ, 1902, էջ 331՝ «Տավա—կռիվ, դատ։

ուղղում նույն «ահնդ, ահավոր», «ամենապորին» իր արած դատաստանի համար։ Մեկի դատի «խօսքն ընդ աստուծոյ» վերաբերում է իր և իրեն նման կրոնավորների անձնական հոգևոր, այսինքն կրոնական կյանքին և իր «կորած հոգու» փրկությանը, որ լինելու է անդենի աշխարհում— երկնքում ըստ ժամանակի հավատքի։ Նա արտահայտիչ է իր դարի վանական-կրոնական կյանքի ու միստիկական անուրջների։ Իսկ մյուսի «դատ ու վեճի բանի» նյութն է ընդհանրության, ժողովրդի իրական դրժբախտ կյանքն այս աշխարհում և նրա մարմնավոր փրկությունը տառապանքից։ Սա էլ արտահայտիչ է իր ժամանակի ազգային և հասարակական իրականությանն, իր ժամանակի մտածմունքների ու ձգտումների։ Եվ այսպես մեր բանաստեղծությունն երկնքից իջնելով աշխարհականացել է արդեն և դարձյալ կապվել իրական աշխարհիկ կյանքի, երկրի հետ։ Բայց այդ դեռ չի նշանակում, թե արդեն առավելությունը կատարելապես տրվում էր երկրին. դրա համար դեռ հարկավոր էր, որ ժամանակ անցներ։

Ֆրիկն, իբրև տաղանդավոր բանաստեղծ, բազմակողմանի կերպով արտացոլել է իր երկերի մեջ ժամանակի ամբողջ ոգին։ Տեսնենք նրա բանաստեղծության այլ գծերն ևս։

7. Մեղքն իբրև ժողովրդի տառապանքի պատճառ և նրա փրկության միջոցը։—*Սխալ է ասել, թե Ֆրիկը Հայոց աշխարհին հասած դրժբախտությունները հետևանք չի համարում մեղքերի, և իբր նա «այդ կողմից խզում է այն կապը, որ ունի իր նախորդների հետ»*[82]*։ Արդարև, նա «Գանգատի» մեջ առանձնապես չի բերում մեղքը, որովհետև նրա խնդիրն է ազգային և դասակարգային անարդար և անիրավ վիճակների դեմ բողոքելը. բայց այնտեղ էլ վերջը նա ոչ միայն համակերպում է աստուծու կամքին, այլև կողմնակի հայտնում է մեղքի մասին՝ ասելով աստուծուն, որ եթե «քո սրտիդ կամք առելի, որ չարաբաք ըստ հրամանի, նա՛ դու չնչէ զմեզ»։ Աստուծու հրամանի համեմատ չգործելը հենց՝ է մեղքը, որի համար և պատժում է աստված։*

Մի բանքի մեջ (էջ 147) նա թաթարների օրով կրած անվերջ չարիքների ժամանակն անվանում է «մեղաց դար»—մեղքի համար կրած տանջանք, հալածանք, տառապանք.

Ես ի՞նչ գիտէի, եղբայր,
Թէ մեղա՛ց դարն հանց լինենայ,
Զինչ որ կու քարշենք հիմիկ,
Շատ չարիս[83]*, և վճար չըկայ։*

«Ես ի՞նչ դիտեի, թե մեղքի տանջանքն այսպես է, ինչ որ այժմ քաշում ենք շատ չարիքներ, և վերջ չկա»։ Մի ուրիշ բանքի մեջ՝ «Վասն ան-

---

82 *В. Брюсов*, Поэзия Армении, 1916, *էջ 73։*

83 *Սխալ է այս «չարիս» բառը բացատրել իբրև «հարկի մի տեսակ», ինչպես դրված է Ֆրիկի Բանաստ. Բառարանի մեջ։ Այդ պարզապես «չարիք» բառի հայցական հոլովն է։*

միաբանութեան քրիստոնէից», որ նա գրել է 1295 թ. հալածանքի ժամանակ, նա մասնավորապես մեղքի խնդիրն է դնում՝ այսպես սկսելով.

Որք որ լսեն այս ողբերուս՝
Թող ըզմեղաց սուգըն պահեն։

Նա խոսում է քրիստոնյա ազգերի՝ հատկապես ֆռանգների, հոռոմների մեղքերի մասին. ամենքը «մեղաց տէր են».

Ամէնքն ատողք են միմեանց,
Վասն այն օտարք ըզմեզ կոխեն.
Գէմ քրիստոնեայք մեծ մեղք ունեն,
Որ հանց յերկար դար [=տանջանք] կու քաշեն...
Թող թ'ապայ յո՞ր ազգի մեղաց
Զեկեղեցիքըն հալածեն...
Թագաւորքըն չի հաշտին,
Հետ միմեանց ոխ կու պահին,
Հանապազ զաւր ժողովեն
Եւ զմիմեանս ի սուր քաշեն։

Նա մանրամասն նկարագրում է քրիստոնյաների իշխող դասերի ընկած բարքերը. վարդապետներ, եպիսկոպոսներ, թագավորներ, քահանաներ, վանականներ, միաբեղներ, ճգնավորներ ու հայրապետներ, ամենքը, բացի աշխատավորներից, մի առ մի ներկայանում են իրենց բացասական կողմերով և չեն պրծնում մեր բանաստեղծի հարվածող խարազանից։ Ամենքը մեղավոր են ըստ իրենց կարգին։ Քրիստոնյաները

Զինչ մեղք որ կայ՝ զամէն գործեն։

Այդ պատճառով և,— ասում է նա,—

Ըզմեզ երեսս աստուած ի ձեռն
Անօրինաց որ կոտորեն։

Աստված բարձիթողի է արել նրանց, քրիստոնյաներին,—ասում է նա.

Ասպա ի՞նչ ցեղ առաջ երթան
Դէմ թըշնամոյն, կամ ո՞նց յաղթեն։

Ֆրիկն այդ ամենն առաջ է բերում սրտի ցավով և հուսալով, որ աստված օգնության կգա, ոխ չի պահիլ, և

Յարուցանէ մեզ թագաւոր
Սուրբ, որ առնէ ղարդարութիւն.
Խնդրէ վրէժս ի թշնամեաց,

Որ քրիստոնեաց խոր կու փորեն,
Կխորտակէ զմեր թշնամին...

Ապա վերջում, մեղքի թողութիւն խնդրելով և, ինչպես ուրիշ բանքերի մեջ, աղոթքով դիմում է աստուածուն, ասելով.

Յարոյ եղջիւր մեղ փրկութեան.
Օգնեա ազգիս քրիստոնէից...
Մի՛ տար անձանց մեր սատանումն,
Ոչ հաւատացըս մեր բեկումն...

Թե ի՛նչ «սուրբ թագավոր» է Ֆրիկի ցանկացածը, այդ չի ասում նա։ Հավանորեն մի հայ, կամ ուրիշ մի քրիստոնյա, հաղիվ թե Արղունի նման մի թաթար թագավոր, քրիստոնյաների բարեկամ, քանի որ դժվար է կարծել, թե թաթարի համար գործածեր «սուրբ» տիտղոսը, որ ընդունված էր քրիստոնյա թագավորների համար։ Բայց համենայն դեպս նա էլ, ինչպես ժամանակակից Ստեփաննոս Օրբելյանը, փրկությունը տեսնում է մի թագավորի ձեռով, այլև քրիստոնյաների միաբանությամբ։ Եվ փրկությունը «անօրենների», այսինքն այլազգիների ձեռից, ոչ միայն հայ ազգի համար, այլ ընդհանրապես քրիստոնյաների։

8. Մահվան և ունայնության երգը:—*Սոցիալական անհավասար և անարդար բախտի դեմ բողոքելով հանդերձ՝ բանաստեղծը, չարիքն ուղղելու համար, տեսանք՝ ոչ մի գործնական միջոց չի առաջարկում։ Նա դեռ կանգնած է հին կրոնական հայացքի վրա, այն է՝ «անարգել զփառքն և զպատիւն անցաւորական», լինել իմաստուն և աշխարհն համարել ունայն։*

Աշխարհս ունայն է, քանի որ մահը գալիս, սրբում տանում է ամենքին հավասարապես։ Եվ Ֆրիկը ոգում է համայնաջինջ մահը մի մեծ գաղելով, որի առաջին մասը հետևյալն է[84]*.*

Յորժամ որ մահն մօտենայ
Եւ անողորմ գըրողըն գայ.
Ոչ ի ծե՛ր կու խընայէ,
Ոչ ի մանուկ 'ւ ոչ երեխայ.
Չի քննել հպիսկոպոս,
Ոչ վարդապետ, ոչ քահանայ.
Չի քննել թագ(ա)ւոր 'ւ իշխան,
Ոչ զայնոսիկ որ կու մուրայ.
Չի ասել, թէ պարտական (է),
Կամ աղքատ է, կամ տըղայ.
Չի խըղճար յօտարականն,
Թող թէ հազար դառըն կու լայ.

84 Ֆրիկ, *Բանաստ.*, էջ 45։

Անողորմըն բաժանէ
Զնոր պըսակած հարսն ու փեսայ.
Բաժանէ ի մէկմէկէ
Զքոյր և զեղբայր՝ առնու գընայ,
Հանց կրակ դնէ ծընօղացն,
Որ յաւիտեան երթայ մընայ.
Զհայրն ու մայրըն կու տանի,
Կաթնակեր տղայն ի տուն մընայ.
Հանց որբեր յետ կու թողու,
Որ սար ու ձոր ամէն կու լայ.
Ի հիմնէ՛ տու կու քակէ,
Որ այլ իսկի շէն չի մընայ.
Հանց ցանկութիւն կու խափանէ,
Որ իւրն նըման իսկի չըկայ.
Ոչ այն սըրբոց կու ամաչէ,
Որ աստուծոյ բանիւ կու գայ.
Մեղաւորացըն չողորմի,
Զասէ՝ յէգուց նա դարձ կու գայ.
Ոչ ի գոդոյ 'ւ ի պիսակէ,
Ոչ յաղտեղաց կու գարշի նա.
Պահլաւանից և ի քաջանց
Ոչ երկընչի 'ւ ոչ վախենայ.
Զինչ որ ծնեալ կայ՝ մեռանի,
Մահն ամենի հասեալ կու գայ.
Ոչ մեծատան, ոչ աղքատի
Յերբ հասանի՝ համբեր չը տայ.
Հանց բնութիւն զինչ մահն ունի՝
Չեմ ի մընալ, թէ նա խըղճայ.
Յորժամ ելնի տաքն ու կակուղն,
Նա՛ հովն ու չորն անպիտանայ։
Լըսէ՛ խըրատ ի Ֆըրկանէս,
Իսկի յայս կեանքըս շահ չըկայ...
Ֆրիկն հանցեղ պարզ է խօսիլ,
Որ ամենա՛յն մարդ իմանայ,
Թէ ճըշմարիտ է բանս 'ւ ողորդ,
Որ այս կենցաղըս խաբ կու տայ...

Այս միևնույն նյութին նա դառնում է և ուրիշ քերթվածների մեջ, մահը պատկերացնելով իբրև անողոք և ամենազոր տիեզերական ուժ, որ անխնա և անողորմ ոչնչացնում է ամենքին, ամենքին։ Ուստի,—ասում է նա,—«իսկի յայս կեանքըս շահ չըկայ», «այս կենցաղըս խաբ կու տայ», այսինքն աշխարհիս կյանքն անօգուտ և խաբուսիկ է։ Ինչի՞ է պետք այս կյանքն ու հարստությունը.

Տեսէ՛ք, թէ քանի՞ մարդ [իկ]
Աշխարհէս դարտակ մընացին.
Ջամէնըն յետին թողին,
Անընչիկ ի հոն գընացին[85]...

Մահն ինչքան էլ ցավալի տեսարաններ է բանում, Ֆրիկի բանաստեղծության մեջ չի դառնում կատարյալ ոչնչացման մի սուր զգացում, այլ մահվան երգը ծագած լինելով քրիստոնեության էությունից, դեռ կապված է քրիստոնեական հավատալիքների և հասկացությունների հետ։ Դեռ իշխում է Ավետարանի խոսքը՝ «Երանի սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին»։ Ուստի մահվան մասին բանաստեղծությունն ասվում է իբրև մխիթարություն տառապյալների համար. այսպիսինները մահով ազատվում են աշխարհիս դժնդակ աղետներից։ Բացի այդ՝ ով որ այս աշխարհում եղել է աղքատ, բայց իմաստուն, այնպիսին ոչ մի երկյուղ չունի մահից, որովհետև եթե նա այս աշխարհում բախտավոր չի եղել, մեռնելուց հետո անդենը հակառակ վիճակն է ունենում. մինչդեռ վայելող հարուստը, կեղեքիչը՝

Ի յանդէնն է դառն ու մոլոր։

Կամ մի ուրիշ տեղ գրում է Ֆրիկը՝

Ով որ այս կեանքս է խիստ ուրախ,
Անդէնըն շատ ի լաց կենայ։

Սույն միտքը նա հաճախ կրկնում է և դրա ճշմարտությունն ապացուցելու համար նա մի ուրիշ գեղեցիկ դազելով շատ կենդանի պատկերացնում է ավետարանական Աղքատ Ղազարի ու Մեծատան վիճակները և՛ աստեն, և՛ անդեն։ Եվ այս նա հիշեցնում է իր մի շարք ուրիշ բանքերի մեջ ևս։

Յէ՞ր չես երթար ի միտքդ ի վար,
Է՞ գերեվա՛ր մարդ ու տըխմար...
Ի կեր 'ւ ի խում ի հետ մեղաց,
Ի շուրջ կու գաս զօրն անդադար.
Զըրկես ու տաս մարմնոյդ ի կեր,
Գիրացընես որդանց համար.
Գերեզմընըն ի վար հայեց,
Տե՛ս քանի՞ մարդ կայ ի շար.
Ամէն փրտեր ներքև հողին,
Քան զմեզ քանի՞ հարիւր հազար...
Քան զՄեծատունն այլ ո՞վ հարուստ,
Այնչափ ունէր ակն ու գոհար.

---

85 *Անդ, էջ 174։*

Կապայ հագնէր ցեղք ի ցեղաց,
Փողպատն ամէն մարգարտաշար.
Ի կեր՝ւ ի խում ի շուրջ կու գար,
Եւ անդէնէն չունէր խասպար.
Ամբարտաւան կեցաւ զամէնն,
Յետոյ մեռաւ հանցկուն յիմար։

Նրա դռանը կենում էր տառապյալ աղքատ Ղազարը կարոտ հացի ու հագուստի։ Մեծատունը նրան չէր օգնում։ Երկուսն էլ մեռնում են։

Մեռաւ, գընաց Աղքատ Ղազար,
Տեղն է կանաչ սազ ու պայծառ,
Անմահութեան աղբիւրն առջին,
Շուշան ծաղկունք հարիւր հազար։
Նա՛ մեծատունն ասէր լալով
Թէ՝ «կաթ մի ջո՛ւր, Աղքատ Ղազար»...

Մահն, ուրեմն, զարհուրանք է միայն հարուստների, ուժեղների և կեղեքիչների համար, որոնք դրկանքով վայելում են աշխարհի բարիքը և մահով զրկվում են դրանից։ Իսկ ճնշվածները, սովալլուկներն ու տառապյալները մահով միայն ազատվում են իրենց թշվառ վիճակից։ Մահը գոնե հավասար ու միակերպ է վերաբերում ամենքին, և դրանով գեթ առնվում է անհավասարության վրեժը և գոհացում տրվում սոցիալական հավասարության պահանջին։

Այսպիսով մահվան և ունայնության երգը, որ սկսված էր մեր միստիկական բանաստեղծության մեջ, մի նոր ձևով և նոր բովանդակությամբ կրկին երևան է գալիս բոլորովին տարբեր Գրիգոր Նարեկացու մահվան երգից։ Մինչ ըստ վերջինիս՝ ունայնության գաղափարը հեշտացնում էր ճգնավորին աշխարհից կտրվելը և մահը միջոց էր տալիս նրան շուտով միանալու աստուծուն,—սպա այժմ, 13-րդ դարում, ազգային և սոցիալական անարդարությունների հանդեպ դա հանդիսանում է, ինչպես ասվեց, իբրև մխիթարություն, մոտ երկու դար ավելի վաղ, քան նման երգը, օրինակ, ֆրանսիական գրականության մեջ։ Եվ այնուհետև այս ցավագար մրմունջը շարունակվում է հաջորդ դարերում, քանի որ ազգային և սոցիալական աղետավոր դրությունը նույնն է մնում։ Մեր գրեթե բոլոր բանաստեղծները երգում են այս ընդհանուր նյութը, և ամենքին էլ մերթ հանգստացնում է, մերթ անհանգստացնում այս տիեզերական մեծ առեղծվածը, որ քնարերգության կարևոր թեմաներից մեկն է։

9. Կրոնական ու հոգեշահ բանքեր և միստիկական ձգտում։—*Ֆրիկը, սոցիալական անհավասարությունը վերացնելու համար, ինչպես ասվեց, ոչ մի գործնական միջոց չի առաջարկում։ Նա հետևում է ավետարանական խոսքին, թե՝ սգավորները մխիթարվում են անդհնը։ Բայց*

մխիթարվում են ոչ ամենքը, այլ «իմաստունները» կրոնական մտքով։ Եվ Ֆրիկի քերթվածներն ամենամեծ մասով պտտվում են այս խնդրի շուրջը, թե ինչպես պիտի լինին «իմաստունները», «խելոքները»։ Նրա այդպիսի բանքերն ունին հոգեշահ բովանդակություն խրատական բնավորությամբ. դրանք են՝ «Բան ոգեշահ», «Բան պիտանի», «Վասն հոգոյ», «Տաղ վասն հոգոյ» և նմաններ։ Դրանց մեջ փափուկ շեշտերով միակերպ հեղհեղվում են հոգու և մարմնի հակամարտության խնդիրը, այս աշխարհի և այն աշխարհի կամ աստենի և անդենի, երկնավորի և երկրավորի վերաբերյալ մտածություններ ըստ միջնադարյան սովորական կրոնական հայացքի։

Սուտ է մարմին և սընոտի,
Ներքըն հոդին կերթայ փըտի։

էջ 29

Ուստի պետք է հոգալ հանդերձյալ կյանքի, հոգու փրկության համար, վի հոդին առավել է, քան մարմինը։ Պետք է միշտ պատրաստ լինել մահվան և վերջին դատաստանի համար, չպիտի խաբվել անցավորին, քննել այս ու այն կյանքը, վերջին օրը հոդալ, լինել անընչասեր, հոգևոր ճանապարհը բռնել գնալ, ուրանալ այս կյանքը, պահքով, աղոթքով ու լացով, արտասուքով սպանել մարմինը, մարմնավոր վայելքների ետևից չընկնել, կենդանի ժամանակն անել հոգու ճարը, աղքատներին օգնել, անցավորը չսիրել, հառաչելով դղջալ, «մեղա գալ», կացքը փոխել, այս կյանքս ոչինչ համարել և այն կյանքին ցանկալ, իրեն համար անդենը հայրենիք շինել, բարիք անել ուրիշներին, չառնել կաշառք, շատ վաշխ ու մեծ տոկոս, հետևել միշտ ավետարանական խրատներին, մարմինն ուրանալ, որպեսզի հոդին պայծառանա. և շատ նմաններ։ Կարիք չկա այստեղ նրա այդպիսի երկերի մասին առանձնապես խոսելու. միայն պետք է ասել, որ Ֆրիկն իր այսպիսի քերթվածներով հանդիսանում է մեր հին գրականության նշանավոր կրոնական բանաստեղծներից մեկը։ Հավանորեն նա իր այսպիսի բանքերը մեծ մասամբ հորինել է իր կյանքի այն շրջանում, երբ ցանկացել է լինել «սիրող վանքերուն», և ինչպես վերևում պրեցինք, գուցե և դարձել է որևէ վանքի միաբան, մնալով առանց որևէ քահանայական աստիճանի, իբրև մի աշխարհական կրոնավոր։ Այսպիսի վիճակով միայն հասկանալի է ծագումը ոչ միայն այդպիսի, այլ նաև այն բազմաթիվ կրոնական քերթվածների, որոնց նյութն առնված է Ս. Գրքից կամ այլ կրոնական զրույցներից։ Բերենք հետևյալ աղոթքը, որ մի կտոր է մի մեծ բանքից։

Առաւօտ խաղաղութեան,
Դէմ քո լուսոյդ ես կու մրնամ.
Ջինչ ըզձուկն յաղի ծովէդ՝
Քաղցըր ջրիդ ի դէմ կու գամ...

Կենդանի աղբիւր դու ես,
Ծարաւիս տուր, որ զովանամ։
Ոչ ոսկոյ, ոչ արծաթոյ,
Ոչ աշխարհիս կու ցանկանամ,
Քո տեսոյդ եմ փափագած,
Յայս կարօտոյս զօրն երերամ.
Ժողովէ՛, տէր, ի քեղ,
Որ քո լուսոյդ արժանանամ...
Քան զքեզ ա՛յլ ծանօթ չունիմ,
Քո դրանէդ ո՞ւր հեռանամ...

Այս գեղեցիկ մեծ քերթվածը[86] *նա մի շնչով ոգել է այն ժամանակ, երբ կարծես դարձել է կրոնավոր որևէ վանքում, որի դռնից, իբրև աստուծու դռնից, չի ուզում հեռանալ։ Ապա՝ նա փափագում է, ինչպես միստիկ, աստվածային լուսին և աստուծու «տեսին» կամ «տեսլեանն» արժանանալ. ինչ որ կրկնում է և ուրիշ բանքերի մեջ։ Նա իր այդ գերակա նպատակին տիրանալ է աշխատում սիրով ըստ կրոնական հայացքի, ուստի մի քանի քերթվածների մեջ սիրո գովքն է անում, այսպես, օրինակ, հետևյալի մեջ*[87]*.*

Այս է համասփիւռ ծաղիկն,
Որ թափէ ըզմարդն ի հողոյ.
Գիտեմ թէ զայս ո՛ւր ուզեմ,
Սա կենայ ի լեառն ի սիրոյ...

Մի ուրիշ քերթվածի մեջ՝ «Ոտանաւորք ասացեալ Ֆրկանն յաղագս կենդանի սիրոյ առ աստուած»[88] *բացատրում է, թե սիրով են եղել ամեն նշանավոր գործեր, որ Ս. Գրքի և այլ սրբազան գրքերի մեջ պատմվում են.*

Քան զամէն ինչ յառաջ սէրն է դոյացել։

Այդ աստվածային սիրու շառավիղն իրեն բանաստեղծի մեջ էլ է ծագում, և դրանով է, որ նա կարողանում է իր «գեղեցիկ բանները» հորինել.

Թէ չըկայ սէր հոգոյն ի սրտէ բըղխեալ,
Զայս ամէն գեղեցիկ բաներն ո՞վ ասէր։

Ուրիշ քերթվածի մեջ էլ՝ «Նորին Ֆրկանն ասացեալ հավատոյ»[89] *իր առ աստված սիրո գովքն է անում.*

---

86 Տրիկ, *Բանաստ.*, էջ *62—69։*
87 *Անդ, էջ 62։*
88 *Անդ, էջ 159—166։*
89 *Անդ, էջ 146—149։*

Այս սէրս, որ ի յի՛մ սիրտս է
Բընակել, զայն նա՛ գիտենայ,
Որ ինքըն հանց սէր ունի,
Որ նըման ընկեր չունենայ։
Այս սէրս աշխարհիս սիրուս
Չէ նըման, ով ինքս իմանայ՝
Այս սէրս ի լուսոյ եկել.
Ով սիրէ, նա՛ անմահանայ։

Ապա թե այս սերն իր սրտում ունեցողը՝

Շատ հոգւոյ [=հոգու] բաներ ասէ,
Ով լըսէ և գինքն իմանայ,
Ջմարմինըն տաճար շինէ,
Որ աստուած գայ հանգչի ի նայ։
Յանկայ երկնային լուսոյն,
Եւ յերակ ըղմահն յիշէ նայ.
Ջամէն ցեղ մեղաց տեսակ՝
Թող կոխէ ու անցնի գընայ։

Ուրեմն դարձյալ մի միստիկական փափագ մահով միանալու աստուծու հետ. աստված իր մեջ, ինքն՝ աստուծու, կամ՝ որպեսզի

Երբ որ յարութիւն լինի,
Նա անանց լուսոյն տիրանայ։

Դառնանք բանաստեղծի արվեստին։

10. Ստեղծագործություն ինքնաշարժ ազդումով։ Ձևական կողմը։— *Առաջին տպավորությունը, որ ստացվում է Ֆրիկի բանքերից, այն է, որ դրանք մեծ մասամբ հորինված են սպոնտան կերպով, այսինքն մի ինքնաշարժ, ինքնաբուխ ազդումով, առանց խորը խոկալու, մի տեսակ բնազդաբար։ Կարծես մի ներքին ձայն խոսում է նրա մեջ, նա ունենում է մտքի լուսավորություն և սաստիկ հուզված ու լցված, մտասույզ ու հափշտակված, դիմում է բանաստեղծության։ Այդ է պատճառը, որ նրա քերթվածներն ունեն մեծ քնարականություն։ Հոգիշահ բանքերն անգամ, որոնք թվում է թե իբրև խրատներ պիտի լինեին սառն և անկենդան, ունին անձնական բնույթ, ինքնաբուխ ելնում են սրտի խորքից և առանց որոշ ծրագրի, ինչպես ափերից դուրս ելնող գետ՝ հորդահոս զեղումներով և անարգել առաջ ընթանում։ Եվ բանաստեղծն ինքը լավ զգում է իր ստեղծագործության այս եղանակը.*

Յորժամ որ զմիտքըս կու պարզեմ [=կը մաքրեմ]
Ազդումն հոգւոյս ի յիս կու գայ.

Երբ կու ծաղկի միտքս և հոգիս,
Լեզուս իմ հանց պըտուղ կու տայ[90]։

Այդ «հոգու աղդումը»—ավյունը, ըստ բանաստեղծին, աստուծու շնորհն է. ուրեմն նա նույն կրոնական հայացքն ունի իր բանաստեղծության ծագման մասին, ինչ որ Գրիգոր Նարեկացին։

Փառք աստուծոյ միշտ կենդանոյն,
Որ հանց շնորհ նա մեզ կու տայ.
Որ կարենանք հանց բան ասել,
Որ իմաստունն հաւան կենայ[91]։

Այս միևնույն քերթվածի վերջին մասի մեջ նա ասում է.

Մեք զոհանամք յողորմածէն,
Թէ ի մեղաւորքս ոնց կու գթայ.
Որ պանարժանս արժանացոյց,
Որ հանց գօհար ի շար կու դայ։
Փառըք փառաց թագաւորին,
Որ մեր մրտացըս լոյս կու տայ.
Զինչ արևն ի շող ջըրին՝
Ի մէջ հոգոյս կու թրոուրոայ։

Ուրիշ գրվածների մեջ էլ[92] *իր ոտանավորներն անվանում է «գօհար բան», «գօհար բան շարել»։ Թե ինչպիսի ուժեղ, արտասվաթոր ապրումներով ու տանջալի հույզերով է նա հորինել իր շատ երկերը, այդ պարզ տեսնում ենք նրա հետևյալ տողերից*[93]*, որոնց մեջ նա ավելի ևս մանրամասն նկարագրում է իր բանաստեղծելու պրոցեսը.*

Շատ մի հայերէն բաներ խորհրդով դըրախտ տընկեցի,
Զաչիցս աղբերացըն ջուր քաշեցի զինչ որ սընուցի.
Զիմ լերդս զինչ ըզհաց կերայ, ա՛յ եղբայրք, ինչ որ բուսուցի,
Երկու լուսն ի մին դարձաւ զիշերին, մինչ որ հասուցի.
Անկայ ի հոգոց ծովըն, երբ որ զայս բաներս յիշեցի.
Զիմ միտքըս լողնորդ արի 'ւ ի ծովու յատակն իջուցի.
Զիմ աչերը չափ արի ու ծովու ջուրըն չափեցի.
Վասն ա՛յն մարգարտին համար, որ ծովու յատակըն լինի։
Անչափ աղաչեմ զաստուած, որ հոգոյ աչքըս բացուի,
Եւ իմ ըզգայարանքս յաշխարհի ժանգէս մաքրի։

---

90 Տրիկ, *Բանաստ.*, էջ 48։
91 *Անդ*, էջ 50։
92 *Անդ*, էջ 126, «Ի ծնունդ Սուրբ Կուսին» քերթվածի վերջում։
93 *Անդ*, էջ 44, «Բան ոգեշահ և լաւ» քերթվածի վերջում։

Բանաստեղծն իր բանքերը «գօհար» կամ «մարգարիտ» է անվանում իրենց հոգեշահ բովանդակության համար, իսկ վերջինս,— հետևաբար և «գոհարը», «մարգարիտը»,— է իսկապես այն անանց, անմահ կյանքը, աստվածային լույսը, Քրիստոսի տեսությունը, որը տենչում է նա իբրև իր կրոնական իդեալը։ Ինչպես ամբողջ քերթվածները, նույնպես ինքնաշարժ, անբռնադրոս ծնվում են և ձևավոր արտահայտությունները, նմանությունները և առհասարակ փոխաբերությունները, որոնցով շատ հարուստ է Ֆրիկի լեզուն։ Կարելի է ասել, որ նա մեծ մասամբ նկարեն ձևով, գունագեղ պատկերների շարքով է մտածում, քիչ անգամ վերացական արտահայտության է դիմում, ինչպես, օրինակ, հետևյալ տողերի մեջ[94].

Գերի Ֆրրի՛կ, մարդ մի՛ խաբիլ,
Մի՛ սուտ վարուք կեղծաւորիլ.
Գրնա ի յօն դիր շինութիւն,
Որ յաւիտեան անհոգ լինիս։
Այս կեանքըս գուբ է և խաւար,
Եւ ի ձեռինդ լապտեր չունիս.
Դարանակալն հոն կա թաքել,
Ճարտար փայլէ՛ որ չըմբռնիս։
Երբ ելանես, դու հանց գրնա,
Որ յետ յաշխարհս այլ չի նայիս.
Տարաժամեալ օրն և գրնաց,
Լաւ ընկերացն ե՞րբ հասանիս։
Մինչ դեռ ամառն է՝ պէտ արա,
Որ ի ձրմեռն չանկանիս.
Ձիւնն ի վերայ լերանց իջաւ,
Յաջողութիւն դու քեղ չունիս։
Թէ կալ ու կաս առնես այսօր,
Ձիւնն ի վայր գայ, դու մըսես.
Երթա արևն, և դու մընաս,
Ի շինութիւն չը հասանիս։
Ձիւնըն ալիքդ է սպիտակել,
Ձրմեռն է այն, որ ուժ չունիս.
Տե՛ս՝ դու սրղայ չես անիմայ,
Աղէկ լըսէ՛, թէ խելք ունիս.
Թող զայս խաւար աշխարհս ի բաց,
Լուս աշխարհի թէ ակն ունիս...

Երբեմն պատկերներն ընդարձակվում, կազմում են մի մեծ ամբողջություն, ինչպես, օրինակ, հետևյալ կտորը, որի մեջ բանաստեղծը դիմում է աստծուն՝ իբրև այգեգործի.

---

94 Անդ, էջ 35 և հետ.։

Թէ դընես ցանկ այս այգոյս,
Ի կողոպտէն անհոգանամ.
Այգէգործ ըզքեզ գիտեմ,
Թէ պէ՛տ չանես, նա՛ չորանամ։
Ջիս տընկէ՛ ծառ յերկիր բարի,
Որ ես հաստատ արմատանամ.
Ջհարաւային հողմըն գարնան
Հընչէ յիս, որ բորբոքամ։
Ջիս յօտէ՛ 'ւ ի խոր փորէ՛,
Որ ես զարթչիմ զուարթանամ.
Խաղացոյ ջուր կենդանի
Յարմատ սըրտիս, որ կակղանամ։
Առոգա՛ յորդ վըտակով,
Որ կանաչեմ և մանկանամ.
Մի՛ թողուր զիս անարև
Եւ անծաղիկ, որ գօսանամ։
Ջիս սընոյ և դարմանէ՛,
Որ ի ժամու պտուղ քեզ տամ.
Յանչրդիս եմ ցամաքել.
Ամպ չէ ցօղեալ, որ զուարթանամ։
Ցօղեա՛, տէր, զցօղ ողորմութեան,
Լինի պտուղս իմ քաղցրահամ.
Աղերսեմ թագաւորիդ,
Առնում պարգեւս և պարծենամ։

Ինքնաբուխ ստեղծագործության հանգամանքից ծագում են նաև Ֆրիկի արվեստի թերությունները։ Արդարև առանձին ձևավոր խոսքերը գեղեցիկ և աղդու են, բայց պատահում է, որ նա իրար ետևից շարում է պատկերավոր «գոհար բաներ», թեթևությամբ հորինում է վերևում բացատրված հայրենի և յամբական չափերով բազմաթիվ տողեր, որոնց ներքին կապակցությունը մնում է տարտամ, կամ թե մի երկար շնչով, մի նվագով բերում է բազմաթիվ նմանություններ, այնպես որ գրվածքը, կարծես, այլաբանություն է դառնում։ Այսպիսի ընդարձակված պատկերները մեկ մեկ մնում են անհատակ, մութն ու դժվար ըմբռնելի, զի բանաստեղծն էլ ետ չի դառնում իր երկերը հղկելու և կարգավորելու. նա դրանք այնպես բնական ձևով էլ թողնում է, ինչպես սկզբում ինքնաշարժ ոգել է։ Այդպիսով առաջացել են բազմաթիվ ավելորդ կրկնություններ ոչ միայն տարբեր բանքերի մեջ, այլև նույնի։

Ապա՝ մի աչքի ընկնող թերություն էլ այն է, որ քերթվածները հաճախ շատ երկարաշունչ են և այնպես, որ երբեմն հեշտ չի հասկացվում կամ պարզ և արագ չի իմացվում բազմաթիվ տողերի կամ տների ու մասերի հաջորդականությունը մի հիմնական մտքի, մի թեմայի շուրջ, կամ

թե դրանք իրար հետ միանում են լոկ ընդհանուր բովանդակությամբ։ Պատահում է, որ նույնիսկ մուքն է մնում և չի որոշվում քերթվածի թեման, հիմնական միտքը։ Արդարև մի բանքի համար[95] հեղինակն ասում է, թե

Ճրիկն անցեղ պարզ է խօսել,
Որ ամենայն մարդ հասկանայ...

Բայց ոչ բոլոր բանքերն իրենց ամբողջությամբ միշտ և իսկույն հասկանալի են, թեպետև սովորաբար պարզ ու հաճելի են նրա տողերը։

Առնենք իբրև օրինակ նրա մի քերթվածը[96], որի մեջ «անանց բարուն տիրանալու» միստիկական ձգտումը երևան է գալիս սկզբում կենդանի կամ կենդանարար ջրի պատկերով, վերջը՝ ծովում որոնած գոհարի։

Փափագել եմ ի ջուրն, յուսով կու գընամ,
Թէ հասնիմ յայն աղբիւրն, որ կենդանանամ.
Ես խըմեմ յայն ջըրէն ու հետ գոհանամ,
Թէ թողուն մէկ պահիկ, յոր յինքն լողամ.
Այն սիրովն յաւազանն ես զիս լուանամ,
Նորոգիմ վերըստին քան ըզհին Ադամ։

Ապա մի երկայն շարք տողերի մեջ «ջուրը» դեն դնելով՝ ասում է, որ եթե արժանի լինի՝ մեծապես կփայլի. եթե «կենդանանաց երկիրն» է կամենում, աստուծու օրենքից չի հեռանալ. եթե ուզում է «անանց բարուն տիրանալ», պիտի մոռանա տուն ու տեղ, քույր, եղբայր, պիտի սաստիկ արտասվի, մեղքից մաքրվի և արդարանա, թողնի հարստությունը, քուրձ հագնի, նեղ ճանապարհով գնա, աստծուն մոտենա, որպեսզի վերջին դատաստանի ժամանակ անվախ արժանանա Հիսուսի տեսին, լավ ընկերներիցետ չմնա։ Հետո նորից վերադառնում է «ջրին».

Յայն աղբիւրն եմ կարօտ, որ լաց կու կենամ,
Թէ հասնի կաթ մի յիս, որ արդարանամ։
Երանի՛ ինձ հազար, թէ հանց լինենամ,
Որ ի մեծ աղբիւրէն կարօտ չի մընամ.
Դու աստուած ես զըթած և խիստ ողորմած,
Յայն ջըրէն ինձ արբոյ, որ ես լիանամ,
Ի բըղխմանց սուրբ հոգւոյդ, որ ես զովանամ,
Յերեսաց ի լուսոյդ ուրախ լիննենամ...

Դարձյալ՝ մի ավելի ևս մեծ շարք տողերի մեջ նկարագրելով իր հոգեկան վիճակն ու տենչանքը՝ ասում է, թե վերջին դատաստանի օրը Հիսուսի աջ կողմը գնա, խոստացած բարիքներին տիրանա այն կյանքում,

---

95 Ճրիկ, Բանաստ., էջ 47. մահվան մասին հորինված ոտանավորների մեջ։
96 Անդ, էջ 203—208։

բայց կասկածում է այդ մասին, համարելով իրեն մեղքերով մեռած, «անզգամ փորձողից» զնդանված, ինչպես մի հիմար կամ հարբած։ Վերջն աստուծուն դիմելով՝ ավելացնում է.

Երբ բացեր զիմ ըզմիտս, որ ես կու ըզգամ,
Վառեցաւ սէրդ ի յիս, զերդ հուր կու եռամ.
Խօսեցայ հետ սըրտիս, թէ ես ի՞նչ լինենամ,
Ո՞վ հանէ յայս կապէս, որ ես դուրանամ։
Տէ՛ր, զքո ձայնդ յիս հասո՛ւ, որ խաղաղանամ։
Լոյս ծագեաց խաւարիս, այլ ոչ կուրանամ,
Խըղճացիր ծառայիս, որ չանպիտանամ,
Քարշեցեր զիս ի քեզ, տէ՛ր, ո՞ւր դառընամ,
Երբ յիշեմ զայս գոհար բաներս ու ցընծամ,
Զահագին զիմ ըզմեղքն ու նըստիմ և լամ։

Պիտի սպասեինք, թե քերթվածի վերջն է. բայց այս «գոհար բանեբով» լուսավորվում է նրա միտքը, և զուգորդությամբ ծնվում է «գոհարը» [=մարգարիտը] ծովի մեջ որոնելու հետևյալ ընդարձակ պատկերներն այլաբանությամբ.

Զինչ ըզգետ յաշխարհիս բոլոր պիտի գամ,
Ու մըտնիմ ես Ֆըրիկս ի ծովն ու ծըփամ.
Ի յալեաց կոծելոյն ես ո՞նց [վ. է՞ր] վախենամ,
Երբ ծովուն ի միջին ես ղարդ լինենամ [=ընկղմիմ],
Երբ որ զիս հարցանեն, թե ո՞ւր կու գընամ,
Ես նորա պատեհի պատասխանի տամ,
Թէ՝ խնդրեմ զայն գոհարն, որ փարթամանամ
Ու տեսնում[97] իմ մըտաց աչօքս և դողամ։
Ո՞վ բերէ զինքն առ իս, որ պահ մի խընդամ,
Կու քաղի շունչս յինէն, թէ ե՛րբ մօտենամ,
Եւ առնում պահ մի յափս և ուրախանամ,
Եւ հոգով և մարմնով ես անմահանամ։
Ես հաստատ և անբեկ նաւի կու մընամ,
Որ մըտնիմ ես ի նա՛ և այլ չերերամ։
Նաւապետ է Քրիստոս, ի հետ կու գընամ,
Քան ըզնա այլ ինձի ճարակ չունենամ.
Հասուսցէ զիս յայն տեղն, որ ես կու ցանկամ...
Թող մաշիմ ի յայս հոգս և խիստ հընանամ.
Իմաստուն և խելօք ապա լինենամ.
Երբ առնեմ քննութիւն ու զլաւն իմանամ,

---

97 Ֆրիկ, *բանաստ., տպված է «Կուտեսնում», իսկ «Արարատ», 1918, էջ 203 ունի «Ու տեսնում»։*

Երբ սակաւ մի աստ լամ, նա՛ անդ խընդանամ.
Արարչէն ես պատիւ և փառ ըստանամ,
Որ հանգչիմ ես անդէն ՚ւ ի նա գոհանամ։

Նախ՝ նկատեմ, որ «ի նա գոհանալ», այսինքն «յարարիչն գոհանալ» դարձվածը նշանակում է՝ դավանել, խոստովանել, ճանաչել արարչին իբրև աստված։ Ապա՝ Քրիստոսի՝ նավապետ լինելու համար իբրև համեմատություն՝ բերեմ հետևյալ շարականները[98].

Ով կենցաղոյս հանապազ զիս ալեկոծէ,
Մրրըրկեալ ալիք թըշնամին ինձ յարուցանէ,
Նաւապետ բարի, լեր անձին իմոյ ապաւէն։
Մերձ եմ յընկղմիլ, օգնեա՛ ինձ, նաւապե՛տ բարի,
Քանզի ծանրացան ի վերայ իմ բեռինք մեղաց...
Փըրկեա ի վտանգէ ըղնաւաբեկս ի յալեաց ծովուս...

Այստեղ երկար խոսվեց Ֆրիկի այս քերթվածի մասին իբրև մի օրինակի, թե նա ինչպես է հորինում։ Բացի այդ՝ մանրամասն բերվեց դրա բովանդակությունը, որպեսզի պարզված լինի, որ մեր բանաստեղծի այս երկը զուտ կրոնական բովանդակություն ունի. թեման է, ինչպես սովորաբար նրա մյուս կրոնական երկերինը, «հոգով և մարմնով անմահանալ», «անանց բարուն տիրանալ»։ Եվ նա այդ բանին հասնել է աշխատում սովորական միջոցներով—լինել իմաստուն և աստեն ապաշխարել անդենի խնդության համար։ Մի անգամ որ այս է քերթվածի նյութը, թույլատրելի չէ թեթև մոտեցումով,—ինչպես վարվել են,—ամբողջ քերթվածից պոկել հանել ծովի մեջ «գոհար» (=մարգարիտ) որոնելու պատկերը, որ տեսանք նախորդ 9-րդ պարագրաֆի վերջում ևս, և դրա մեջ գտնել ինչ որ ազգային բան[99], կամ «հասարակական մի նոր կյանքի» ձգտում[100]։ Այդ, կարծում եմ, կնշանակի բնավ չհասկանալ Ֆրիկի այս երկը, կամ թե բռնի կերպով շուռ տալ դրա կրոնական իմաստը և իր ուզած բովանդակությունը դնել մեջը։ Գեթ հին բանաստեղծության նկատմամբ պետք էր լինել ուղղամիտ և ուղղատես։ Նրա որոնած «գոհարը» կամ «մարգարիտը» ոչ թե հասարակական երջանիկ կյանքն է, այլ անդենի «միստիկական անմահ կյանքը», «անանց բարին», «հոգով և մարմնով անմահանալը»։ Կրոնական բանների մասին խոսելու համար՝ պետք էր ծանոթ լինել նյութին և կրոնական լեզվին։ «Գոհարը» կամ «մարգարիտը» կրո-

---

98 *«Շարական հոգևոր երգոց», էջմիածին, 1861, էջ 132 և հտն.։*

99 *«Արարատ», 1918, էջ 202 և հտն. Տիրայր եպիսկոպոսի հիշված հոդվածը։*

100 *Ֆրիկ, Բանաստ. էջ 15, Մ. Մկրյանի հիշված Առաջաբանի մեջ. «Ֆրիկը... ձգտել է, երազել է հասարակական մի նոր կյանք, այնպիսի կյանք, որ կեղեքվող աշխատավորությանը կարողանար երջանկություն բերել։ Իր այս ձգտումն ու մտորումները Ֆրիկն այլաբանորեն արտահայտել է մի քանի բանաստեղծություններում. երջանիկ կյանքը՝ նրա փնտռած մարգարիտը կամ գոհարն է, որը ձեռք բերելու համար բանաստեղծը պատրաստ է ամբողջ աշխարհը պտույտ գալ և ամեն մի դժվարություն հաղթահարել»։*

նական լեզվի մեջ մի սիմբոլ է հենց այդ հոգևոր անմահության ըստ քրիստոնեական գաղափարի. այսպես, օրինակ, Կոմիտաս կաթողիկոսն իր հռչակավոր օրհներգության մեջ Հռիփսիմյան կույսերին անվանում է «վաճառականք առատք անյայտ մարգարտին»=«աներևույթ մարգարտի ճոխ վաճառականներ», այս դեպքում գնողներ, գնորդներ ըստ «վաճառական» բառի երկրորդ նշանակության։ Բերեմ նաև Առաքել Սյունեցու ներբողյանից[101] հետևյալ կտորը, որով նա գովաբանում է Գրիգոր Տաթեվացուն. «Գրիգորիոս՝ վաճառականն անգին մարգարտին, որ զամենայն անցաւոր և զանոտի՝ դիւրագին վաճառեաց և առ ոչինչ համարեցաւ, և միայն զմարգարիտն Քրիստոս առ ինքն ընկալաւ»։

Ֆրիկի երկերի մեջ ուրիշ դեպքերում էլ կիրառված են եկեղեցական գրականության մեջ սովորական դարձվածներ, արտահայտներ, պատկերներ և նմանները։ Դրանք արդեն ընդհանուր տեղիներ են, բայց բանաստեղծից նո՛րինորո ոգեշնչված են, ուստի և կրում են յուրահատուկ դրոշմ։ Այսպես են, օրինակ, իրեն հոգեպես հիվանդ համարելը ֆիզիկապես հիվանդի պատկերով, աշխարհիս կյանքը երազ ընդունելը, վերջին դատաստանն ու դժոխքը, որ բավական հաճախ նա նոր ու թարմ ձևով նկարագրում կամ հիշեցնում է ի վախ և ի զգուշություն մեղավորների, այսպես և հոգու և մարմնի միջնադարյան հակամարտությունը[102]։

Հոգիս ի մարմինս ասաց·
«Ա՛յ տըխմար, ողորմ ու լալի,
Վաղըն դատաստան լինի,
Ջիս առնէ որդի գեհենի»։
Հոգիս է տըխուր նըստեր,
Ջով տեսնու՝ լալով գանգատի,
Թ' «Եղայ հարամու ընկեր,
Թալանեց 'ւ արար զիս գերի»։
Ահա որ աշունն երեկ,
Կու շարժիմ, քամին կուտանի.
Յօդուածս ի թոռմիլ արեր,
Ջինչ կըտրած ծառն որ ցամաքի։
Ոտիցս ի գնալ առնում,
Նա՛յ դողայ 'ւ ի չետ կոլորի,
Աչերս իմ սակաւ գոցի,
Իմ թուլթակ լեզուս կու կապի...

Հորինում է հաճախ ոչ միայն սովորական ոճական ձևերով, այլև Ս. Գրքից ակնարկներով՝ Ադամից սկսած, կամ զղջում է Ավետարանի

101 «Գիրք քարոզութեան... Գրիգորի Տաթևացւոյն, Ամարան հատոր», կ. Պոլիս, ՌՃՂ=1190+551=1741, էջ 719. «Առաքել վարդապետի ասացեալ Ներբողեան առ քաջ հռետորըն... Գրիգոր Տաթևացի...»։

102 Ֆրիկ, Բանաստ., էջ 171. «Տաղ... վասն հոգւոյ»։

խոսքերով և առակներով։ Ներսես Շնորհալու «Յիսուս որդի» երկի ձևով մի քերթվածի մեջ[103] էլ առնում է «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ» հայտնի երգի տողերը։ Եվ վերջապես՝ կան ամբողջ բանիեր աստվածաշնչյան նյութերի մասին, բոլորն էլ հորինված գունեղ, պարզ, թեթև ոճով և անձնական զգացմունքով։

11. Մի քանի ուրիշ գրական տեսակներ (գրական սեռեր):—Հաճախ նա իր երկերի մեջ ստեղծում է անկեղծ, հոգեբուխ աղոթքներ, աղաչական ու ողբագին եղանակով, որոնց մեջ խոսելով աստուծու հետ՝ ապաշավում է մեղմ լիրիզմով, զգացվում է ցավատանջ հեղինակի ընշվածությունը, կարծես, մի ծանր բեռան տակ.

Իմ մեղքն ի վերայ ուսիս
Կու հակէ ի վայր կու տանի։

Ավելի ևս հաճախ խոր կրոնական ոգով տոգորված՝ ինչպես մի բարեհոգի ծերունի, զրույցի ձևով հանգիստ խրատում է իրեն, կամ իր անձով՝ ուրիշներին։ Նրա խրատներն էլ, որ ընդհանրապես ավետարանական բովանդակություն ունին՝ ուղղված անդենին, միշտ քաղցր ու համեղ են, երբեմն ժողովրդական ձևով.

Զայս վերայ ի՛նձ եմ խօսեցեալ,
Մի՛ մեղադրէք, խըրատ կու տամ։

Ուրիշներին չվիրավորելու համար այսպես է ասում նա վերջին դաստաստանի և դժոխքի մի զգածված նկարագրի մեջ[104]։ Բայց աշխարհի հարստահարիչները, աշխատավորների քրտինքով լավ ուտող-խմողները շատ բան ունին Ֆրիկի լեզվից նեղանալու. նա առիթ չի փախցնում ոչ միայն յումորով, այլև դառն հեգնանքով, անգամ կծու սարկազմով ծաղրելու այնպիսիներին և նրանց վրա բանաստեղծական երգիծաբանություններ հորինելու։ Ահա մեկը[105].

Է՛ անմիտ և անասուն,
Գիտե՞ս՝ զոր տեղիքըն կուզես...
Հազար կապիճ մեղք ունիս,
Այդով ո՞նց երկինք ելանես։
Եղբա՛յր, թէ դու շա՛տ ուտես
Ու խըմես, նա՛ շա՛տ հառաչես,
Զասես, թէ դու մարդ ծընար,
Յիրաւի ի յէշ նըմանիս.
Երթաս թաւալիս յաղբիսն,

---

103 Ֆրիկ, *Բանաստ.*, էջ 118 և հետ., «Նորից Ֆրկանն ասացեալ բան պիտանի և լաւ»։
104 *Անդ*, էջ 167—170։
105 *Անդ*, էջ 155—158, «Բան շահաւէտ»։

Հետ թոքաս և հետ փուք հանես.
Այդով դու ի՞նչպես հասնիս
Յայն սըրբոց դասն որ դու կուզես...

Մի մեծ խրատի մեջ (47 քառյակ), որ սկսվում է «Է՛ անօրէն և անառակ երիտասարդ» բառերով[106], ամեն երկու տողով նկարագրում է անառակ հարստի վարք ու բարքը և ապա ուրիշ երկու տողով՝ թե ինչպես պետք էր ապրել.

Դու զատամունքդ կըրճըտէիր,
Զինչ նենգաւոր հարբած ուղտոյ.
Քաղցըր պիտէր զինքըդ բանալ,
Անուշ խօսել հետ սիրելոյն.
Զլեզուդ մըխել ես չար ու սուր,
Չես ձանձրանալ յիշոնց տալոյ.
Փառաբանող ստեղծած է դա՝
Ջոխ և զգիշեր, զառաւօտու.
Բերանըդ պիղծ է ու զազիր՝
Ի յամենայն պիղծ ուտելոյ...
Զխռչակըդ լայն ես դու բացեր՝
Չհարամն անհոգ ի կուլ տալոյ...
Լանջացդ անուշ գայր քո յերակ,
Զեռըն կնոջ անօրինոյ...
Բազուկըդ հաստ էր և յաղթող՝
Վասըն կըռւոյ և ծեծելոյ...
Զեռքըդ պիղծ է և անմաքուր՝
Յաղտեղութեանց՝ ւ ի զրկելոյ...
Սիրտըդ լցած է նենգութեամբ,
Քան ըզգայլոյ և զառիւծոյ...

Վերջին մասի մեջ կենդանի նկարագրում է, թե այդպես ապրողն և իր խրատն չպահողն ի՛նչ վիճակ է ունենում վերջին դատաստանին։ Մի ուրիշ քերթվածի մեջ[107] սուր երգիծաբանությամբ դիմում է հարստին ու փարթամին՝ ծաղրելով նրանց նիստ ու կացն ու վախճանը.

Է՞ր ես հագել դո՛ւ նասիճ
Ու նըստել վինչ մէկ ի նուրն.
Ճորտեր են կանգնած յառջևդ.
Զըռօաշ զինին լընուին.

---

106 **Ֆրիկ**, *Բանաստ., էջ 95—104, «Խրատ ոգեշահ ասացեալ Ֆրկանն վասն երիտասարդի և արբեցողաց»։ Մի ուրիշ ձեռագրի մեջ «Խրատ ոգեշահ ասացեալ Ֆրկանն վասն ցանկութեան երիտասարդի շնութեան»։*

107 **Ֆրիկ**, *Բանաստ., էջ 127—129, «Բան մեկնութեան»։*

Տառապելքն են ի դուռն եկել,
Որ իւրեանցն կրտոր մուրային.
Կանչէր թէ՝ ի զատ հանէք
Յերեսէս, որ իրք չուզէին.
Յորժամ դատաստան լինէր,
Որ ըզքեզ յառաջ կոչէին,
Ի՞նչ ես դու տուել նոցա,
Որ ի քո՛ դուռըն կու գային։
Ո՞ւր են այն ամէն ճորտերն,
Որ կանչեն անո՞ւշ պարոնին.
Թող գան ու թափեն ըզձեզ
Կըրակէն ՚ւ ի հուր գեհենին։
Ո՞ւր է քո ոսկի կապայն,
Որ ծառայքն ի թևն առնուին.
Ո՞ւր է փափուկ անկողինդ,
Որ գիշերըն քեզ փըռէին։
Այսօր ոչ կապայ ունիս,
Ոչ անկողին ի մէջն ի հողին.
Յայգուց հուր ու բոց ածեն
Ի բերան ըռօաշ խըմոզին...
Ո՞ւր է ձեր ամէն դեկանն
Ու թաւերն և շատ ծառանին
Թող գան ու թափեն ըզձեզ
Ի ձեռացըն չար տանջողին...

Այդպիսիներն իրենց արդարացնել են ուզում՝ իրենց արարքների համար մեղավոր բռնելով սատանային. այդ էլ ծաղրում է մեր բանաստեղծը[108].

Ազէկ քընըննէ ըզքեզ,
Ա՛յ յիմար, թէ ի՛նչ բանի ես.
Զչարըն քո կամաւ գործես,
Զսատանայ պատճառ դու դընես։
Եղբա՛յր, քեզ երդումըն տամ,
Սատանայ դու ե՞րբ տեսել ես.
Ասա՛, թէ ի՞նչ կերպ ունի.
Կամ ի յու՞մ բերնէ լսել ես.
Դու զմիտքդ սատանայ դուգես,
Ի յաշխարհս ի շուռ կու ածես.
Սատանայ զայն ի՞նչ գիտէ,
Զինչ որ քո մըտօքըդ քըննես.

108 *Անդ, էջ 157։*

Յայն կեանքն ո՞վ առնէ մըտիկ
Այդ պատճառիդ ինչ որ դընես։

Սնամիտ պիտի լինել կարծելու համար, թե Ֆրիկը չի հավատում սատանայի, ինչպես և աստուծու գոյությյան[109]*. նա վերևի տողերով միայն ծաղրում է մեղքը սատանայի վրա գցողներին և սատանային իրեն, թե չէ՝ մեր բանաստեղծը, ինչպես ընդհանրապես միջնադարում, ընդունում է սատանայի սադրանքը նույնիսկ իրեն համար, բայց դրանով չի արդարացնում նա ինքն իրեն։ Նա իրեն էլ է խիստ ծաղրում այդ նկատմամբ, այն էլ խորին ծերության օրերին իր լավագույն բանքերից մեկի մեջ*[110]*.*

Ջանացի թէ լոյսն ելնեմ,
Ի խաւարըն խիստ մօտեցայ...
Ալիքս է դեղին դարձեր,
Նա մեղօք այլուի սևացայ...
Ականջս խաբողին դըրի,
Ջաստուծո՛յ բանըն մոռացայ...
Բելիար ինձ զայս ասաց,
Թէ՝ «Քան զքեզ ինձ մէկ այլ չըկայ.
Ջիմ կամքս ես դու կատարել,
Ես քեզ տամ՝ զինչ քեզ պիտենայ,
Տանիմ ըզքեզ իմ դարպասն,
Որ աննես աղէկ թամաշայ»։
Ջթըմբուկն էր ի ձեռն առել
Ու ինձի կ՝ասէր, թէ՝ «խաղա՛,
Որ ես հանգչիմ իմ դասովն
Ու եղբայրն իմ Բեղզէբուղայ.
Հանցեղ դու շընորհք առնուս,
Ով հայի ի քեզ՝ ծիծըղայ»։

Ահա թե ինչպիսի «թամաշայ»—տեսարան է բաց անում Բելիարը. նա հանդիսավոր կերպով բազմության առաջ պար է ածում իր կամքը կատարող ծերունուն և խաղք ու խայտառակ դարձնում նրան. Ֆրիկը մի բանքի մեջ[111] *ինքն իրեն դիմելով ասում է, թե «մեծ ատեանին» ժամանակ՝*

---

109 Ֆրիկին աթեիստ էլ դարձրին. «Ֆրիկն իր մի քանի տողերի մեջ երևան է գալիս նաև որպես աթեիստ։ Նա շառաչուն ապտակ է զարկում «անճառելի», «անքննելի», «անեղ» աստծուն»։ Ֆրիկ *(ժողովածու)*, Երևան, *1937*, էջ *66*. Հոդված *Ե. Թորոսյանի*։

110 Ֆրիկ, *Բանաստ.*, էջ *79—81*, «Նորին Ֆրկանն է ասացեալ լաւ հաւատոյ». ուրիշ ձեռագրի մեջ. «Ողբանք զղջման ի հոգի ասացեալ Ֆրկանն»։

111 *Անդ*, էջ *57* և հետ., «Նորին Ֆրկանն ասացեալ հոգեշահ», սկսվում է «Ֆրիկ զինչ Ֆընծոյայ ես դու» խոսքով։

Կապի քո բըլբուլ լեզուդ,
Ի յահէն լինիս դու լեզակ,
Ո՞ւր են քո ամէն բաներն,
Հայերէն մասալ ու առակ։

Վերջին տողից պետք է եզրակացնել, որ նա որոշ թվով **«մասալ ու առակներ»** պիտի գրած լինի, բայց հայտնի է միայն մեկը[112], որ վերնագրի մեջ անվանված է «տաղ»։ Երկու հարուստ եղբայր կային Մարում, —ասում է նա։— Մեծ եղբայրն ուզում էր մորթել փոքրին, որպեսզի բոլոր հարստությունն իրեն մնա։ Պատից մի աղյուս պատմում է իր գլխից անցածները և համոզում մեծ եղբորը չգործել եղբայրասպանություն։ Գեղեցիկ պատմված առակ է, որի բուն գաղափարն է մարդուս ոչնչությունը։ Խոսող աղյուսը սկզբնապես եղել է մի մեծ պարոնի մարմինը, որ զանազան արկածների հանդիպելուց հետո՝ բանեցվել է իբրև աղյուսի նյութ[113]։

Այսպես՝ Ֆրիկը կիրառել է բազմազան բանաստեղծական ձևեր ու տեսակներ, երբեմն միևնույն բանքի մեջ։ Նա և՛ ձևով, և՛ հարուստ բովանդակությամբ հանդիսանում է մի ինքնուրույն առաջնակարգ բանաստեղծ, որ հավասար գեղեցկությամբ երգում է և՛ իր անձնական կյանքի վիճակը, և՛ ազգային-քաղաքական և հասարակական խնդիրներ, արտահայտիչ դառնալով իր օրերի իրականությանը, պայքար մղելով ընդդեմ հարստահարիչների և խորը հավատալով ժողովրդի լավագույն ապագային։ Նա միաժամանակ և լավագույն կրոնական քնարերգու է։ Նա աչքի է ընկնում և այնու, որ աջողությամբ հորինում է զանազան տեսակներ, ոչ միայն իսկական քնարական քերթվածներ, այլև խրատական երկեր, երգիծաբանություններ, աղոթքներ և այլն, բոլորն անձնական զգացումով հեղեղված։

Վերջապես՝ այս էլ պիտի հիշել, որ նա շատ սիրում է նաև **իմաստական ասքը**, բայց ոչ իբրև մի առանձին տեսակ, այլ այդպիսի տողերով ու տներով նա համեմում է իր բանքերը, ինչպես վարվում են ժողովրդի մեջ շնորհալի խոսողները գործածելով առածներ։ Կարծես այդպիսիներին էլ հետևում է և նրանց առածներից էլ օգտվում է մեր այս բանաստեղծը։ Հաճախ նրա քերթվածների մեջ գտնում ենք մեծ վարպետությամբ հորինված մի քանի իմաստալից խոսքեր, որոնց մեջ խտացրած կերպով արտահայտվում է հեղինակի բուն գաղափարը կամ խրա-

---

112 Անդ, էջ 199—202, «Տաղ Ֆրկան ասացեալ ի վերայ եղբայրասպանին»։

113 Այս առակը նման բովանդակությամբ կա Վենետիկի Մխիթ. Ձեռագրատանը, № 1823 (Գ., է), էջ 579—582, 1690 թվականի մի տաղարանի մեջ «Առակ լաւ և պիտանի» վերնագրով։ Վերջին երկու տողերն են՝ «Այս քանի բանս իւրմէն ասեր Աշըխ Քօչակն կունեհքար»։ Սկզբի և վերջի երկու տները, որ ձեռի տակ ունիմ, նման չեն Ֆրիկի գործին։ Երևի, Քոչակը նույն բովանդակությունը վերապատմել է. բայց հավաստի կարելի է ասել միայն ամբողջը նկատի ունենալով։ Գուցե և Քոչակը յուրացրել է Ֆրիկի առակը։

տը, մեծ մասամբ իբրև բարոյախոսական եզրակացություններ։ Այսպես, օրինակ, հետևյալները նրա մի երկից.

Ջինչ զօրն ի բուն մարդըն խորհի,
Գիշերն ամէնըն խափանի...
Ջինչ որ մարդոյ խորհուրդ լինի,
Ամէնըն հող է և քամի[114]*։*
Այն բազային եմ նմանի,
Որ փոքր որսին ոչ հաւանի.
Ով որ ածէ զաչքն այլ մեծի,
Քաղցած կենայ և անօթի...
Երբ ժամանակ մարդոյն ծրռի,
Երես ի վայր նա դըլորի,
Երթայ դիպնի հանցեզ դարի,
Որ մինչ ի մահն ոչ վրճարի[115]*։*

Կան քերթվածներ, որոնք մասամբ կազմված են իմաստական ասքերի շարքից. այսպես, օրինակ, նրա՛ մի «Հոգեշահ և պիտանի» բանքը[116].

Իմ սի՛րտ, վատին մի՛ լսել,
Ու չարին տեղ իսկի մի՛ տալ.
Յայս աստըւորիս վերայ
Վատն իսկի մարդու չի մնալ։
Այն մարդն որ ինքն վատ առնէ,
Հանդիպի ինքն վատի մի այլ...
Յորժամ քո չարկամն ընկնի,
Դու ի քո սիրտդ մի՛ խընդալ...

Թեպետ և այսպիսի խոսքերը հաճախված են Ֆրիկի երկերի մեջ, բայց նա իմաստաբան քերթող չէ, այլ քնարերգու։ Իմաստական ասքերը, որ առաջ անվանում էին «ասք իմաստնոց», մի առանձին գրական տեսակ են կազմում, և ունենք բանաստեղծներ, որոնք սիրում են այդ և հորինում են ամբողջական իմաստա-ուսուցական գրվածքներ։

ԻՄԱՍՏԱԲԱՆՆԵՐ ԵՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԶՆԿԱՑԻ ԿԱՄ ՊԼՈՒՉ

ԻՄԱՍՏԱԿԱՆ ԱՍՔԵՐ

1. Իմաստա-ուսուցական բանաստեղծություն։— *Առակների հետ միաժամանակ 13-րդ դարի վերջին քառորդից ի վեր, մինչև 17-րդ դարը և հետո, ծաղկում է իմաստական և ուսուցական կամ խրատական բա-*

114 Ֆրիկ, *Բանաստ., էջ 25, «Վասն ողբանք փոշիմանութեան»։*

115 *Անդ, էջ 26։*

116 *Անդ, էջ 89 և հետ., «Նորին Ֆրկանն ասացեալ հոգեշահ և պիտանի»։*

նաստեղծությունը։ Հայրենասիրական որոշ գաղափար արծարծել և ուսուցանել է եղել իսկապես նաև Ստեփաննոս Օրբելյանի «Ողբի» միտումը, բայց իմաստական բանաստեղծություն չէ այն։ Վերջինս հորինված է սովորաբար միջին գրական հայերենով ու ժողովրդական ոճով և բովանդակություն ունի ընդհանրապես բարոյական գաղափարներ, երբեմն պարսավի կամ խորհրդածության հետ միացած։ Բանաստեղծներն իրենց ուրիշ երկերի հետ մեծ սիրով քերթում են նաև իմաստալից բանքեր կամ, ինչպես հնում անվանում էին, «ասք իմաստնոց», «բանք իմաստութեան», որոնց մեջ կան այնպիսիները, որ ժողովրդական առածների և իմաստալից ասույթների համեղ ու գունեղ վերակերտումն են։ Որքան մեր միջնադարյան առակները ձևով մեծ մասամբ անմշակ են մնացած, այնքան ավելի գեղեցիկ են հորինված այս փոքրիկ իմաստական քերթվածները, որոնք մի քանի տողով, սեղմ և կուռ ոտանավորներով տալիս են մեզ երբեմն ընդարձակ աշխարհայեցություն։ Դրանց իմաստաբան հեղինակները մեկ-մեկ փայլում են անձնական համարձակ, իրենց ապրած դարաշրջանի նկատմամբ՝ անգամ խիզախ տեսություններով, բայց նրանց ասքերը մեծ մասամբ, ինչպես մեր միջնադարյան առակները, տոգորված են քրիստոնեական բարոյական գաղափարներով, զբաղվում են կրոնական ուղղության խրատներով, մերթ-մերթ նաև այնպիսի խնդիրներով, որ անձնապես հետաքրքիր են եղել քերթողի ժամանակի մարդկանց համար։ Կան հարկավ և այնպիսի քերթվածներ, որոնց քարոզած գաղափարներն արժեք ունեն նաև ամեն տեղի և ժամանակի համար, քանի որ ընդհանուր մարդկային կյանքն է կազմում դրանց բանաստեղծների մտածության նյութը։ Թեպետև այդ քերթվածները պատառուն են բարոյակրթական քարոզներով, երբեմն կազմված են մի ամբողջ շարք իմաստական ասքերից—բարոյական սենտենցիաներից, բայց դրանց հեղինակներն իսկական բարոյախոսներ—մորալիստներ չեն։ Նրանց երկերն ուսուցական կամ խրատական լինելով հանդերձ՝ սովորաբար իսկական քնարերգություններ են, որովհետև ոգված են անձնական տրամադրությամբ, ջղուտ և խորն զգացած, և բարոյական խրատներն էլ ըստ երևույթին իրենց հեղինակների փորձառության և ապրումների արգասիք են, ինչպես, օրինակ, Ֆրիկի և Կոստանդին Երզնկացու։

Այս տիպի, ինչպես և ընդհանրապես խրատական և հոգեշահ քերթվածները կազմում են մեր հին բանաստեղծության հարուստ ճյուղերից մեկը, բայց դրանց զարգացման պատմությունն անել այժմ հնարավոր չէ, որովհետև դեռ չի կատարված բանասիրական աշխատանք, չեն ժողովված և հրատարակված բոլոր այդպիսի երկերը, որոշված չեն շատերի հեղինակներն և նրանց ապրած ժամանակը։

Այս իմաստական ասքերը հորինված են սովորաբար հայրենի չափով և լեզվով ու ձևով շատ նման են միմյանց. ուստի հեշտությամբ հնարավոր է եղել դրանցից կազմել մեծ կամ փոքր շարքեր, մեծ մասամբ

առանց հեղինակների անվան, և այսպես էլ մտել են դրանք զանազան ժողովածուների կամ տաղարանների մեջ։ Իբրև հեղինակներ հիշվում են Պլուզ և Ֆրիկ։ Կան նաև սակավաթիվ այնպիսիները, որոնք խաչատուր Կեչառեցունը կամ ուրիշներինն են։ Դրանց մասին այստեղ հնարավոր չէ առանձին մանրամասնությամբ խոսել։ Հիշենք այսպիսի ոչ մեծ տաղաշարքերից մի հայտնին, որ սկսվում է «Կուզես որ ազիզ կենաս» տողով, որ կա և՛ Ֆրիկի անունով, և՛ անանուն[117]։ Դրա մեջ կան նաև քառյակներ Պլուզի անունով վերևում հիշվածներից, ինչպես և սիրո տաղերից։ Բերենք առաջին երկու քառյակները, որոնց քարոզած խրատը խոնարհ և կակուղ բնավորության մասին՝ շատ էլ չի հարմարվում Ֆրիկի ոգուն[118].

Կուզես որ ազիզ կենաս,
Որ ամէն մարդ ըզքեզ սիրէ՝
Դու հողու նըման կացիր,
Որ ամէն մարդ ըզքեզ կոխէ։
Քանց զերկաթն այլ ի՞նչ ամուր,
Որ կըրակըն զինք կու հալէ.
Դու ջըրի նըման կացիր,
Որ կըրակն ի քենե վախէ։

Դնենք այստեղ մի իմաստական ասք ևս գիտության և ուսման մասին[119].

Մտիկ կանթեղին արա,
Ջուրն ու ձէթն ու լուսն ի շարս.
Կանթեղն է մըտաց նըման,
Ջուրն ուսման, ձէթըն գիտութեան։
Քանի միտք դու սո՛ւրբ ունիս,

---

117 Տպված է Կ. Կոստանյանցի «Նոր ժողովածու, Գ. պրակ. Միջնադարյան հայոց տաղեր և ոտանավորներ» հրատարակության մեջ, Թիֆլիս, 1896, էջ 35—40. առնված է մի ձեռագրից, որի մեջ վերնագիրն եղել է՝ «Ֆրկան ասացեալ զայս տաղս», մի ուրիշի մեջ նույնն անանուն է եղել։

Այս տաղաշարքը ես ունիմ Պետական Թանգարանի № 383 ձեռագրից, վերնագիրն է՝ «Տաղ Հոգոյ և մարմնոյ», անանուն։ Նույնը էջմիածնի Մատենադարանի № 2394, էջ 176. անանուն. իսկ էջմիածնի Մատենադարանի № 3081, էջ 127 բ՝ «Ֆրկան ասացեալ զայս տաղս» վերնագրով։

118 Այսպիսի իմաստական ասքերի շարքեր կան Վենետկի Մխիթարյան գրադարանի ձեռագիրների մեջ, № 74 (Ա. Տ.), էջ 255—258. անդ, 730 (Ջ. Ա.), էջ 85—87, անդ. № 1339 (=739 Ա. Բ.), էջ 21—34։ Այլև Cod. Antonian, ձեռագրի № ՃՂԳ. fol. 11—15 «Տաղ Ադամայ» վերնագրով։

119 Վենետկի Մխիթար. Մատ. № 1339 ձեռագրի մեծ տաղաշարքից։ Տե՛ս և Նահապետ Քուչակի Դիվանը, էջ 91, ևն։

Որ կարող ես սիրող ուսման[120],
Գիտուն է հոգիս պայծառ,
Որ լուս տայ քեզ ի մըթութեան։

Մի անգամ որ իմաստական ասքերի ամբողջական ժողովածուներ դեռ չեն կազմված և հեղինակներն ըստ հնարավորին դեռ չեն պարզված, և դեռ չեն կատարված մենագրական աշխատանքներ, հասկանալի է, որ այժմ կարելի չէ, ինչպես վերևում նկատվեց, դրանց զարգացման ընթացքը որոշել և ձևն ու բովանդակությունը բնութագրել ինչպես հարկն է։

Բավականանում ենք այս գլխի առաջին պարագրաֆի մեջ գրվածով։ Ավելացնենք միայն, որ ոչ միայն իմաստաբան հեղինակների անձնական, այլև ազգային ոգու և պատմական փորձառության արտացոլումն ևս անշուշտ մեծ է դրանց մեջ։

13-րդ և 14-րդ դարերում բանաստեղծներից առանձնապես աչքի են ընկնում՝ բացի Ֆրիկից, որ քնարերգությունների մեջ հաճախ իմաստական ասքեր է խառնում, նաև Խաչատուր Կեչառեցին, որ տեսել ենք, այլև Հովհաննես (Յովհաննէս) և Կոստանդին Երզնկացիները։

2. Երզնկան իբրև առևտրական և կուլտուրական կենտրոն։—*Այս քաղաքը, հին Երիզա (Երեզ) ավանը, հնագույն դարերից ծանոթ է իբրև կռապաշտական կրոնական կենտրոն։ Քրիստոնեական շրջանում նշանավոր է դարձել քաղաքից ոչ հեռու, արևմտյան կողմում, Սեպուհ լեռն իր Ս. Լուսավորիչ և այլ վանքերով ու ճգնարաններով։ Այնտեղ, ինչպես և շրջակայքի ուրիշ վանքերում, կենում էին ոչ միայն կրոնավորներ ու մենակեցներ, այլև գրագետներ, որոնք ձեռի տակ ունեին շատ գրքեր և ուսում էին տալիս երիտասարդ սերնդին։ Կանաչով և ընտիր պտուղների պարտեզներով շրջապատված Երզնկա քաղաքը, Եփրատ գետի վրա, այլև նրա բարեբեր գավառը (հին Եկեղիք), կարևոր դեր է խաղում թաթարների իշխանության օրով։ Սահմանագլխի մի մեծ քաղաք էր այն, որից արևմուտք, Փոքր Ասիայում, տարածվում էր Հռոմի (Հռոմ, Ռում) տերությունը—Իկոնիայի սուլթանությունը։ Առևտրական տարանցիկ մեծ ճանապարհը Կիլիկիայից գալով՝ թուրքերի իշխանության երկրից հասնում էր Երզնկա, այստեղից անցնում դեպի Մեծ Հայաստանի ներսը և դեպի Հարավ՝ Թավրիզ քաղաքն և դեպի Հյուսիս՝ Սև ծովի ափերը*[121]։ *Համբավավոր վենետիկեցի ճանապարհորդ Մարկո Պոլոյի ուղեգրության (1271—1295 թթ.) մեջ կարդում ենք Մեծ Հայաստանի մասին*[122]. *«Այս*

---

120 Անդ, 6-րդ և 7-րդ տողերն այսպես.

Դու սիրով չանա ուսման,
Հոգիդ է պայծառ գունով . . .

121 *Տե՛ս սույն հատվածի առաջին գլխի 3-րդ պարագրաֆը՝ «Թաթարական իշխանությունը 13-րդ դարում»։*

122 *«Աղբյուրներ Հայաստանի և Անդրկովկասի պատմության, Ուղեգրություններ», հատ. Ա (1253—1582 թթ.), Երևան, 1932, էջ 48 և հետ.։ Տարանցիկ առևտրականն է Թավրիզ։*

մի մեծ երկիր է։ Սկսվում է մի քաղաքից, որ կոչվում է Արզինկա [Երզընկա], ուր հյուսում են աշխարհի լավագույն բեհեզները։ Նա ունի որևէ վայր գոյություն ունեցող բնական աղբյուրներից լավագույն բաղնիքները։ Երկրի ժողովուրդը հայեր են, որոնք հպատակվում են թաթարին։ Բազմաթիվ քաղաքներ և գյուղեր կան երկրի մեջ, բայց նրանց քաղաքներից ամենեն ընտիրը Արզինգանն է, որ արքեպիսկոպոսական թեմ է, և Արզերոն [=Արզրում] և Արդիդի [=Արճեշ]»։ «Մի ավանում, կոչված Պայպուրթ, որ անցնում ենք Տրապիզոնից Թավրիզ գնալիս, կա արծաթի հանք»[123]։ Երզնկան իր նշանակությունը պահում է մինչև 15-րդ դարի մեջերը։ Ռույ Գոնցալեյ դի Կլավիխոյի ուղեգրության (1403—1406 թթ.) մեջ[124] ասված է. «Երզնկա, Սուրմալու [=Սուրմառի], Իգդիր և Խոյ քաղաքներն այդ ժամանակում քաղաքական և առևտրական կարևոր կենտրոններ էին։ Թավրիզը Պարսկաստանի առևտրական մայրաքաղաքն էր այդ շրջանում։ Առևտրական ճանապարհը կենտրոնական Ասիայից գալիս էր Թավրիզ և ապա դեպի Սև ծովի նավահանգիստները, մասնավորապես Տրապիզոն»։ Երզնկա քաղաքն այսպես է նկարագրված[125]. «Ամեն քայլափոխին կային շատ գեղեցիկ պարտեզներ և այգիներ։ Հայերն են շինել Արզինջան [=Երզնկան] և քաղաքի պարտեզներում կարելի է տեսնել շատ տեղեր քարերի վրա փորագրված խաչի նշանը... Քաղաքը շատ բազմամարդ է, և այնտեղ կարելի է տեսնել շատ գեղեցիկ փողոցներ և հրապարակներ։ Շատ պաշտոնական անձնավորություններ ապրում են այստեղ, որոնց մեծագույն մասը հարուստ մարդիկ են, և կան շատ փարթամ վաճառականներ»։ Հիշվում է Թահարթեն անունով մի հայ իշխան Երզնկայի։ Առևտուրը հայերն են անում. «Արզինջանի հողերից բազմաթիվ կարավանները տանում են վաճառականական շատ ապրանք, գալով Սուրիայից գնում են Թուրքիա» [=Հռոմ][126]։

Հովհաննես Երզնկացու պատանության և երիտասարդության ժամանակ, 13-րդ դարի երկրորդ կեսին, Երզնկա քաղաքն և իր շրջակա վանքերը եղել են ծաղկած դրության մեջ։ Քաղաքի առաջնորդ եղել է Սարգիս եպիսկոպոսը, մի շինարար և ուսումնասեր անձ. իսկ կառավարիչ իշխանը՝ նրա որդին՝ պարոն Հովհաննեսը, որ հետևող է եղել իր հոր օրինակին, երկուսն էլ վայելել են մեծ վստահություն զանների կողմից։

14-րդ դարում և հետո՝ Երզնկան հաճախ անցնում է թուրք ու թուրքմեն ցեղերի մեկի ձեռքից մյուսին, բայց, ինչպես վերևի նկարագրից տեսանք, ընդհանրապես պահում է իր նշանակությունն իբրև առևտրական կենտրոն, միաժամանակ և հայերի համար իր վանքերով իբրև մի կուլտուրական վայր։ 13-րդ և 14-րդ և նույնիսկ 15-րդ դարերում Երզնկայից ծագել են մի քանի նշանավոր եկեղեցականներ և դրագետ վարդապետ-

123 Անդ, էջ 60 և հետ.։
124 Անդ, էջ 68։
125 Անդ, էջ 95։
126 Անդ, էջ 97։

ներ։ Այս քաղաքի և իր շրջակայքի կուլտուրական կյանքի արտադրությունն են ահա և մեր երկու ականավոր գրողները՝ Հովհաննես և Կոստանդին Երզնկացիները։

3. Հովհաննես Երզնկացու կենսագրության մասին բավական տեղեկություններ ունենք իր գրվածքների հիշատակարաններից և ուրիշներից[127]։ Նա ծնված է շուրջ 1250 թվականին Երզնկա քաղաքում, ուստի կոչվել է Երզնկացի, Երզնկայեցի։ Իր ձեռով գրած մի գրքի մեջ գրել է իրեն համար. «Նուաստ և տկարոգի Յոհաննէս Երզնկայեցի, սպասաւոր բանի»։ Մխիթար Գոշի առակների մի մասի արտագրության հիշատակարանի մեջ 1294 թ. նա գրում է. «Ջտարտամ գրիչս վՅոհ. ծանօթ բանի և տեղեաւ Երզնկացի, իսկ այժմ Սործորեցի, աղաչեմ չմոռանալ...»[128]։ Հովհաննեսը, որ հայտնի է նաև Պլուզ (կապուտաչուի) մականունով, ուսումն առել է Սեպուհ լեռան Ս. Մինաս վանքում, բայց այնտեղի ուսումով չի բավականացել։ Նա մոտիկ վանքերն էլ այցելելուց հետո անցնում է հյուսիս-արևելյան Հայաստան և աշակերտում համբավավոր Վարդան Արևելցի վարդապետին Կայենո ձորի մի վանքում։ Նա 1271 թ. վերադառնում է Երզնկա, և տասը տարի հետո այստեղից դնում Կիլիկիա, ուր, իբրև մեծ հեղինակության տեր վարդապետ, լավ ընդունելություն է գտնում ժամանակի կաթողիկոսից և Հայոց թագավորից, պարապում է ուսուցչությամբ։ 1284 թ. նրան գտնում ենք Տփղիս քաղաքում։ 13-րդ դարի վերջերում նա հաստատված է Արտազու Ս. Աստվածածնի կամ Թադեոս առաքյալի վանքում, Սործոր գյուղի մոտ շինված, ուստի կոչվում է նաև Հովհաննես Սործորեցի։ Ինչպես ուրիշ տեղերում՝ այստեղ էլ այս վանքի առաջնորդը, Զաքարիա անունով մի ուսումնասեր անձ, սիրով ընդունում և պահում է նրան։ Այստեղ էլ նա պարապում է նաև գրական աշխատանքով. 1316 թ. մի անգամ էլ ճանապարհորդում է ի Կիլիկիա և վերադառնալով Արտազու վանքը, այնտեղ էլ երևի ապրել է մինչև մահը, որի ճիշտ թվականը հայտնի չէ. դնում են մոտ 1326 թ.։ Վերջին գրական աշխատություններից մեկը, եթե ոչ վերջինը, որ հիշվում է, է 1321 թ. կատարած մի թարգմանություն լատիներենից, որ նա սովորել էր, երևի, Կիլիկիայում եղած ժամանակ։

4. Երկերը։— Հովհաննես Երզնկացին իր ժամանակի գիտնական վարդապետի մի տիպարն է, որ պարապում էր միաժամանակ և՛ ուսուցչությամբ, և՛ գիտությամբ, և՛ գրականությամբ, և՛, ինչպես ուրիշները, ուղատ ժամանակին նաև գրչությամբ, այսինքն ձեռագրիներ էր արտագրում։ Նա ունեցել է ճարտար լեզու, և սմեն տեղ, ուր գնացել է, ճառեր է ասել և հիացում պատճառել իր ճարտասանությամբ, միշտ քարոզչություն է արել և սովորեցրել։ Լինելով ուսումնասեր՝ բազմակողմանի հմտության տեր է դարձել, աշխատելով իբրև մեկնիչ, տոմարագետ, քի-

---

127 Ղ. Ալիշան, *Յուշիկք հայրենեաց Հայոց*, հատ. Բ, էջ 457—493. «Երզնկա և Յովհաննէս Երզնկացի»։

128 Էջմիածնի Մատ. ձեռագիր № 2238։

բականագետ։ Հորինել է ճառեր ու ներբողներ, այլև իբրև բանաստեղծ՝ տաղեր ու շարականներ և այլ քերթվածներ։ Նրա աշխատություններից մի քանիսն արդյունք են ուրիշների դրդման. այսպես՝ 1280 թ. Երզնկայի Ս. Գրիգոր վանքի միաբանության խնդրով գրել է «Կանոնք և սահման միաբանութեան եղբարց». կաթողիկոսի և ուրիշների դրդումով հորինել է Դիոնիս Թրակացու Քերականության մեկնությունը, նկատի ունենալով հին մեկնությունները։

Տփղիսում նրանից խնդրում են, և նա գրում է «Յաղագս երկնային շարժման»։ Ապա ուրիշներն էլ խնդրում են նույն նյութի վրա գրել բանաստեղծություն, և նա գրում է «ան» հանգով հատար տողով ոտանավորներ[129], նկարագրելով երկինքն ըստ ժամանակի հասկացության, երբեմն և դիմառնաբար երկնքին դիմելով։ Արվեստի տեսակետից սակավաթիվ դեղեցիկ տողեր միայն կան միջին, ինչպես հետևյալը՝ «Ներբողական գովեստ երկնի»։

Ո՛վ սքանչելի ձեղուն յարկի այս մեծի տան,
Ի բարձրելոյն բանէ ձգեալ որպէս խորան...
Դու յարկ մեծին ձեռամբ շինեալ արքայական,
Ջահք ի բարձանց ի քեզ կախեալք անշիջական,
Դու անթառամ ծաղկանց լուսոյ մեծ բուրաստան,
Որք յանդաստան քո գեղեցիկ ծաղկագրեցան.
Ոչ թէ միայն քո պարանոց զարդարեցան,
Այլ բովանդակ մարմին և անձն շքեղացան։
Յոյժ մեծութիւն քո հրաշագեղ անչափական,
Հանդերձքս նուրբ և պատմուճան քեզ կարդեցան,
Ոչ թէ միայն կրկին ակունք որք ճոխացան,
Այլ յոգնակի ակունք լուսոյ շարադրեցան,
Եւ մարգարիտքս լուսափայլ որք յեռեցան
Ընդ գիշերոյ սպիտակափայլ ջահ ճախրական,
Իսկ ի տուէ բազմափայլիւն բոց կայծակեան
Յոր գիշերոյն աղօտ փայլունքն ծածկեցան[130]։

Հաճախ նկարագիրն անում է իբրև այլաբանություն կամ իբրև խորհրդանիշ—սիմբոլ որևէ կրոնական հավատալիքի կամ մարդկային կյանքի մի երևույթի, ինչպես, օրինակ, հետևյալն արեգակի մասին.

---

129 Տպագրված է Նոր Նախիջևանում 1792 թ. «Տետրակ համառօտ և լի իմաստնախոհ բանիւք, արարեալ հոգելից և իմաստուն վարդապետին Յօհաննիսի Երզնկացւոյ, որ և ասի Օտրծորեցի...»։ Հեղինակի առաջաբանի վերնագիրն է. «Յաղագս երկնային շարժմանն, Յօհաննիսի Երզնկայեցւոյ շարադրեալ յիմաստնոց բանից ի խնդրոյ բարեպաշտ և երկիւղազարդ պատանւոյն պարոն Վաղթանկայ»։ Անում է իր աշխատության ծագման պատմությունը։ Երկրորդ մասը (էջ 21 և հտն.) ունի վերնագիրս՝ «Յաղագս որ ի սմա եղեալ բանիցն՝ կանխաբանութիւն». համառոտ դնում է իր քերթվածի բովանդակությունը. Գրել է «ի խնդրոյ բարեպաշտ իշխանին Ապլոցիկ»։

130 Անդ, էջ 51։

Այլ և զպայծառ լուսոյն աղբիւր միշտ հոսական,
Ըզգեղեցիկ ակն աշխարհի լոյս ցուցական,
Զնա ի կամարըդ քո բերես ջահ փայլական,
Որ զկերակուրըն հրոյ բաշխէ բնաւից պիտան։
Սա մեզ խրատ օրըստօրէ քարոզական,
Ըզմահ և զկեանք օրինակէ դէմ յանդիման,
Առաւօտուն ծագմամբ զծնունդըն մայրական,
Երեկոյին թաղմամբ ըզմուտն ի գերեզման։
Սա զօրինակ բերէ լուսոյն անեղական,
Որ ի ծոցոյ հօրէ ծընունդ որդի և բան։
Յարևելից գեղով ծագէ փեսայական,
Արագապէս ընթացս առեալ հընսկայական,
Զարեգականն արդարութեան պատմէ ըզբան,
Զաննիւթ լուսոյն մեղ քարոզէ լոյս եղական[131]։

Հովհաննես երզնկացուց մնում են բազմաթիվ և բազմազան բովանդակությամբ երկեր, բացի վերևում հիշվածներից նաև շատ ճառեր, մի «Ներբող ի սուրբ Լուսաւորիչն», որ ասել է Լուսավորչի տոնի օրը նրա անունով վանքում Սեպուհ լեռան վրա, մեկնություններ, խրատական երկեր, ոտանավորներ խրատական բովանդակությամբ, այլև տաղեր, շարականներ և այլն[132]։ *Սրանց մեջ նա հաճախ ցուցաբերում է ջերմ սրտագին ղգացումներ դեպի հայկական սրբավայրերը և անցյալը։ Նրա բանաստեղծությունները, ցավոք, դեռ չեն հավաքված և միասին հրատարակված մի ամբողջական ժողովածուի մեջ։*

Նրա անունով մնում են և բազմաթիվ իմաստական ասքեր ևս, առանձնապես հայտնի են մի մեծ շարք ասքերը՝ «Երգ Պլուզ վարպապետի ասացեալ» վերնագրով[133]։

5. Հովհաննես Պլուզի աշխարհայացքը։ Մարմնի իրավունքը։— *Մեր այս գրողն իր ասքերով հանդիսանում է իբրև իսկական իմաստաբան քերթող, հանգիստ ու գիտուն վարդապետ, լուրջ բնավորությամբ, ավելի մտածող, քան զգացող։ Նա իր ժամանակի աշխարհիկ ոգին շատ ուժեղ և բյուրեղակերպ ձևավորել է իր ասքերի մեջ։ Արդարև նա դեռ ևրևան է բերում մի քրիստոնեական հոռետեսություն, բայց արդեն խիստ տարբեր նախորդ շրջանի հայացքից։ Աշխարհը նրա համար այլևս մի հառաչանքի հովիտ չէ, լի չարչարանքներով ու չարիքներով, այլ մի զվարթ կյանքի վայր, որը, սակայն, իր մեջ ունի մի մեծ հակադրու-*

---

131 *Անդ, էջ 54 և հետ.։*

132 *Մանրամասնությունը տե՛ս Գ. Ջահուկյան, Հայկ. հին դար պատմ., էջ 750—767, «երզնկացուն երկասիրությունքը»։*

133 *Ձեռի տակ ունիմ Վենետկի Մխիթարյան Մատենադարանի № 324 թ. բ. ձեռագրից հատուկ արտագրությունը։ Նույնը մեծ մասամբ տպված է Վ. Փափազյան, Պատմություն հայոց գրականության, Թիֆլիս, 1910, վերջի «Նմուշների» մեջ, էջ 81։*

թյուն—մահը։ Եվ որպիսի՜ գեղեցիկ պատկերավորությամբ, սեղմ ու լի բովանդակությամբ, մի քառյակի մեջ կարողացել է արտահայտել նա այդ։

Աշխարհս է կանաչ մարգեր,
Մենք ի մէջն ենք կաքու ձագեր.
Գըրողն է եղել բազա,
Կու կըրէ մէկ մէկ դար ի վեր։
[Վարիանտ՝ Հրեշտակնին արծիւ դարձեր,
Կու տանին զմեզ մէ՛կ մէկ ի վեր]։

Մարդս չի կարողանում ուրախ և երջանիկ զգալ իրեն, որովհետև մարդկային վիճակը և կյանքն իսկ անկայուն է.

Աշխարհս ի տոլապ նըման,
Որ ի վեր 'ւ ի վայր թաւալի.
Վերինըն ի վայր դառնայ,
Եւ վարինն ի վեր ոլորի։

Մըտիկ դու հիւսանն արա՛,
Որ թապուե 'ւ օրոցք շինէ նայ.
Մէկըն գայ և մէկն երթայ,
Նայ իւր բան պակաս չի մընայ։

Այսպես, ուրեմն, ծնունդ ու մահ միասին են շարունակ և այս երկուսի մեջ մարդուս բախտը վեր ի վայր է թավալում։ Անզգալի անցնում է կանաչ երիտասարդությունը, կարծես իսկույն վրա է հասնում ծերությունն իր երկյուղով, որ մարդուս սիրուն շինվածքն անսպասելի պիտի քայքայվի։

Աշխարհս է ի ծով նըման,
Ով որ գայ՝ անթաց չի մընայ.
Յայս ծովս ես ի նաւ մըտայ,
Գընաց նաւս, և ես չիմացայ։

Եղեր մօտեցեր է նաւս,
Վախեմ թէ քարի դիպենայ,
Քակտի իմ աղուոր շինուածս,
Ու տախտակըս մէ՛կմեկանայ[134]։

---

134 Վարիանտի մեջ ավելացրած է այս քառյակը.

Երթամ աղաչեմ զաստուած,
Որ հանէ դիհաց մի քամի,
Այս մըծանըս լոյս մի տայ,
Ջմեզ բարի երկիր մի հանի։

Եվ մարդիկ կարավան կապած գնում են անդենը, առանց կշտանալու աշխարհից։

Շատ թագաւորաց մեծաց
Յիմաստնոց արանց լըսեցի,
Թ՚այնչափ չըկըշտանայ մարդն
Աստնւորովս, ինչ որ մեռանի.
Տանին գերեզման դընեն
Եւ հողով իւր աչքըն լըցուի.
Ապա փոշիմնայ ՚ւ ասէ,
Թէ հերիք է ՚ւ այլ չի պիտի։

Մի անգամ որ մարդս անվերջ չի վայելում կյանքը և իր աշխատանքը և ծերություն ու մահ կա, հետևաբար ունայն է ամեն ինչ և անօգուտ՝ ամեն վաստակ։ Կյանքի այս անկայունությունն ու մահն են ձդում մեր իմաստաբանին հոռետեսության մեջ, թե չէ՝ կուզեր նա իբրև «կաքավի ձագ» անվերջ ապրել «կանաչ մարգագետնում»։

Աշխարհս է ոչինչ նման,
Շատ դատին, դառնան փոշիման.
Հալալ ու հարամ այնեն,
Հոս թողուն ՚ւ ի հոն կու գընան։

Հոռետեսությունը շատ բանաստեղծների տունում է դեպի հաճույքը, րոպեական վիճակի վայելչությունը, բայց այս կենսուրախ հայացքը մեր գրականության մեջ 17-րդ դարի վերջերին է առաջ գալիս, իսկ 13-րդ դարը դեռ շատ մոտ էր հին կրոնական շրջանին։ Ուստի ինչքան էլ մեր բանաստեղծի հոռետեսության հիմնական պատճառն աշխարհասիրությունն ու կենսասիրությունն է, բայց նա լոկ համակվում է տխուր վըշտով՝ չհամարձակվելով անգամ դրա պատճառը բացահայտ շեշտելու կամ աշխարհն ու կյանքը երգելու։ Ուրիշներին նույն հոռետեսությունը տանում է դեպի ամենայնի ոչնչացումն և անտարբերությունը. բայց մեր բանաստեղծը դեռ բարեպաշտ քրիստոնյա է. նա հավատում է անդենի կյանքին։ Ուստի նրա համար ամեն բան ոչինչ է, բացի գիտուն լինելուց, գիտությունից ու բարի գործից, հատկապես աղքատասիրությունից, ինչ որ Ֆրիկն էլ քարոզում է, այն էլ աստենիս արարքներն անդենի նկատմամբ։

Մանկտի՛ք, երբ ի հաց նըստիք,
Ձէնեցէք աղքատք ձեղ ընկեր.
Մեռնիք ՚ւ ի յանդէն երթայք,
Կու նըստէք մէկ մ՚այլ ի վեր։

Բայց բարեգործությունը, աղքատասիրությունը, որ արվում է «վարձքի» համար, դեռ բավական չէ։ Որովհետև մարդ չկա, որ մեղա-

վոր չլինի. պետք է ուրեմն զղջալ, սգալ, մեղքը լալ: Սակայն կարո՞ղ էր արդյոք մեր իմաստասիրան Պլուզն իրագործել այդ: Մի Գրիգոր Նարեկացի 10-րդ դարում՝ համակերպվելով իր ժամանակի որոշ դասի փոխհարաբերությանը՝ կարողանում էր շարունակ սգալ ու ողբալ, որովհետև նա խորը համոզված էր, որ աշխարհն ու կյանքը վատ է, և մի՛միայն չարիք. նա մերժում էր աշխարհը, մեռցնում մարմինը, որ միանար աստուծու հետ, և այդ էր անվերջ քնարերգում նա: Հովհաննես Պլուզն,— և իր պես մտածող ուրիշները,—անընդունակ էր այդպես վարվելու. նա չէր կարող ուրանալ աշխարհը, մեռցնել մարմինը. ուստի նրա ապաշխարանքն երբեր սառն է հնչում և չի փրկում նրան.

Ելայ ժողովեցի զիմ մեղքն
Ու ղըրի առջև ու լացի,
Յանդէնըն քարւան կ'երթար,
Շալկեցի 'ւ ի հետ գընացի.
Հրեշտակն այլ ի դէմս ելաւ,
Թ' «Ո՞ւր կ'երթաս ողորմ ու լալի.
Այդ շալակդ որ դու ունիս,
Անդէնին քեզ տեղ չի ընկնի»:

Պլուզը ոչ միայն գործնականորեն չի կարողանում հետևել նախորդ շրջանի միստիկական ձգտումներին ապաշխարությամբ, այլ նա տեսականորեն էլ արդեն հակառակ է դրան. նա մարմնին գիտակցաբար տալիս է իր իրավունքը: Նա մարմին ու հոգի, այս երկուսը միմյանց հավասար ընկերներ է համարում սկզբունքով, իր ժամանակի համար մի խիզախ տեսությամբ: Բերենք նրա նշանավոր քերթվածը, որի մեջ նա պարզում է իր տեսակետն ամբողջ միջնադարի մտքերն զբաղեցնող խնդրի մասին:

Երկուս ի մէկտեղ բերած,
Ջերդ զընկեր կ'ասեն թէ՝ պահէ՛.
Ու չորս բընութիւնս օտար,
Հետ իր(ե)րաց կ'ասեն թէ՝ սազէ՛:
Ջայս չորս յիրար ո՞նց պահեմ,
Ամեն մէկ յինքըն կու քարշէ,
Ջիս հոգս ի յայսոց միջին,
Ջերդ կըրակ ըզմոմ կու հալէ:
Հողըս չոր խուշկիկ առնէ,
Ջուրըս գէճ կու ցըրտացընէ,
Քամին զիս յերերք ունի,
Կըրակին բոցըն կու վառէ՛:
Հանցեղ սիրելի չարկամ
Մէկտեղ ո՞վ իսկի տեսեր է.
Հոգիս թէ ի վեր քարշէ,

Հողըս ծանր ր վայր կու հակէ։
Վախիմ թէ հողոյս լըսեմ,
Նա՛ հոգո՛յս բանըն դըժարէ՛.
Եւ հետ հոգոյն ո՞վ թըռչի,
Երբ նորա տունըն հեռի է։

Բանաստեղծը նույնիսկ երկբայում է, թե կարելի լինի իրար հետ իբրև ընկերներ հաչտ պահել հոգին ու մարմինը, որոնք իրար հակառակ ու «չարկամ» են, ինչպես չորս տարրերը։ Նա հնարավոր չի համարում մարմինը թողնելով՝ հոգու հետ գնալ. և ոչ ոք էլ չի կարող հոգու հետ վեր սլանալ, ասում է նա, քանի որ «Նորա [=հոգու] տունը հեռի է»։ Բացի այդ՝ կենդանի մարդը մի թույլ էակ է՝ կազմված լինելով չորս տարերքից, որոնք իրար աննման են, մեկմեկու չարկամ են, միմյանց հակառակ ազդեցություն ունին, և մարդս նրանց պահանջին ենթակա լինելով՝ անհրաժեշտորեն պիտի կատարե նրանց, որ է՝ իր մարմնի կամքը։ Բերենք և հետևյալը, որ կա իբրև շարունակություն նախորդ քերթվածի.

Հինգ դուռն է ի բաց թողած,
Թէ՝ փակէ՛ որ գող չի մտնէ·
Ըզգողըս ես տանէս ունիմ,
Որ զդրռներս ի բաց կու պահէ։
Շաղուած ես ի չորս իրաց,
Այդ ցեղ շէնքդ ամուր չի լինի.
Օդըն հողուն ի՞նչ նըման,
Հուրն ու ջուրն են խիստ ատելի.
Ի հակառակէ ստեղծած,
Եւ եղած ես մարդ կենդանի,
Վերնայ օդն ու հուրն ու ջուրն,
Եւ մարմինըդ դառնայ փոշի։

Այսպես ուրեմն, մարդուս մարմինն ունի հինգ զգայարաններ, որոնց դռները բաց է թողած և կարելի չէ փակել և կտրվել աշխարհից. մարդս ուզի չուզի բավարարություն պիտի տա մարմնին, որը կարելի չէ մեռցնել հոգին փրկելու համար։ Այսպիսի աշխարհայեցությամբ վերջ է տրվում հին կրոնական քնարերգությանը, որ միստիկական բնավորություն ուներ և արտահայտվում էր անվերջ ողբասացությամբ ու մարմինը մեռցնելու ձիգերով։ Եվ եթե այժմ էլ բանաստեղծը դեռ քարոզում է մեղքը լալ ու սգալ, այդ ինքն անկարող է անել. դա մի երանելի վիճակ է, որ իրենից շատ հեռու է։ Ուստի նա անմիջապես շարունակում է.

Երնեկ ես նորա ասեմ,
Որ զաշխարհս ի սուգ կ'ուզենայ.
Ջիւր մեղքն ի յիշումն ածէ,

Զօրն ի բուն նըստի նա ու լայ.
Արտասուքն սապոն լինի,
Սևութիւնն ըսպիտականայ.
Թէ չէ՝ օր հարանիցըն գայ,
Նա հանդերձ հարսին չունենայ։

Եվ նույնիսկ այս լացն էլ, որ երանելի մարդիկն արել են և անում են, ըստ մեր իմաստաբանի՝ ոչ մի օգուտ չունի և ավելորդ է։ Ահա թե նա ինչպե՛ս է արտահայտել այդ միտքը հետևյալ տողերի մեջ.

Մէկ մարդ մի ճուհար ունէր
'Ի ի խելաց շահել չը կարաց.
Զինչ խելքն ի վերայ եկաւ,
Նա՛յ գընաց ճուհարն ի ձեռաց։
Գընաց նա ի վայր նըստաւ՝
Ողորմիկ ու շա՛տ մի իլաց.
Նորա լացն այլ ի՞նչ շահ է,
Երբ գընաց ճոհարն ի ձեռաց։

Վերջապես՝ փուչիացող մարմինը, որ իր տան դռները բաց ունի արտաքին աշխարհի դիմաց, ամենևին պատասխանատու չէ մեղքի համար. հոգու «ամալը»—գործը, արարքն է այդ, և նա թող պատասխան տա։

Հոգին հողվըրտովն անցաւ
Ու զմարմինն ի հողն անիծեց,
Թէ՝ «Զմեղքն ես ու դո՛ւ արաք,
Յանդէնն ի՛մ երեսն ամաչեց»։
Մարմինն ի հողուն ի դուրս
Այս խօսօք զհոգին վճարեց,
Թ՝ «Ես հող էի 'ւ ի հող դարձայ.
Քո ամալն է՝ ըզքեզ բըռնեց»։

Այսպես՝ մարմինն ստանում է իր իրավունքը։ Սրանից հետո մի քայլ էր միայն մնում, որ բանաստեղծը մարմնի գովքն աներ, և մեր բանաստեղծությունը թողնելով իր մռայլ բնավորությունը՝ դառնար լուսաշող ու զվարթ։ Բայց Պլուզից չեն մնում այսպիսի տաղեր։ Առանց որևէ հիմքի նրան վերագրել են մի սիրո երգ, որի մասին կխոսվի հետո։

6. Ուրիշ իմաստական ասքեր։— *Հովհաննես Պլուզի անունով երեվան են եկել և ուրիշ ասքեր, որոնք մասամբ դեռ մնում են ձեռագիրների մեջ և չեն հավաքված ի մի։ Այս ասքերն ունեն ընդհանուր խրատական բովանդակություն և մասամբ ժողովրդական առածների և իմաս-*

տալի ասացվածքների բանաստեղծական զարգացումն են իբրև ֆոլյակներ: Բերենք հետևյալները[135].

Աւա՜ղ, մեզ հայիլ պիտի
Յայն արևն որ լոյս կու ծագէ.
Շատ կայ ի յաչըն նըման,
Ի պընչէն օձըն կու վազէ։
Գիտուն մարդն յարև նըման,
Խօսքըն լուս պայծառ կու ծագէ.
Ի անգէ՜տ մարդն օձուն նըման,
Հանապազ ըզմարդ կու խոցէ։
Մարդ կա որ հազար արժէ,
Հա՜զար կայ որ մէկ մի չարժէ.
Ան մարդն որ հազար արժէ,
Անգէտին մօտ փող մի չարժէ։

Վերջին քառյակի առաջին երկու տողը հայանի ժողովրդական առած է։

Բազան ի անտառ մորին,
Թէպէտ բու՜, թէպէտ բազա է.
Ճոհարն ի ծովուն միջին,
Թէպէտ քա՜ր, թէպէտ ճոհար է։
Խելօքն ի յանգէտն ի մօտ,
Միտք արա, թէ ի՜նչ նըման է.
Ճըրագն ի յառջև կուրին՝
Կու վառի, ՚ւ ինքըն չի գիտէ։
Խելօքն է ի ծով նըման,
Որ քանի չափես՝ կու տանի.
Անգէտն է տիկ նըման,
Փառչ էւէլ լընուս՝ նա՜ պատռի։

Առնենք և հետևյալները վերևում հիշված ձեռագրից.

Ջորս բան ա՜ռ խըրատ յինէն,
Որ զամէն աշխարհս քեզ արժէ.
Ջայլոց մեղք դու մի՜ քընններ.
Ջքոյդ յերակ մըտօքդ անտիճէ։
Ջաստուած մօտ ի քեզ դու տե՜ս.
Եւ զմահուդ օրըն դու յիշէ։
Ջխըրատս ի սիրտըդ տընկէ,
Ջքեզ յամէն չարեաց այս փըրկէ։

---

135 Տպված են՝ Վ. Փափազյանի «Պատմ. հայոց գրականության աշխատության վերջից դրված «Նմուշներին» մեջ, էջ 82 և հետ.։

Լաւ մարդ ես նորա ասեմ,
Որ բանայ զբերանըն համով.
Հանցեղ լեզուն գին չունի,
Զինչ լընուն տուն մի ճոհարով։
Լեզուն է գործիք բանի,
Արդարոց քան զհալած ոսկի.
Զմարդոյն է մէկ փերթ ստեղծեր,
Եւ օձուն է երկու ճըղի։
Այն մարդն որ երկու խօսի,
Զմէկըն քաղցր և զմէկըն լեղի,
Եղբայր է օձին եղեր,
Եւ զնորա անէծքն ընդունի։

Այսպես և մի շարք ուրիշ իմաստական ասքեր, որոնք կան Պլուզիր անունով[136]*։ Կան ասքեր ևս, որոնք որոշ ձեռագիրների մեջ Պլուզի անունով են, ուրիշների մեջ՝ անանուն, կամ երբեմն մի տեղ՝ Պլուզի, մի ուրիշ տեղ նույնը՝ Ֆրիկի անունով*[137]*։*

ԿՈՍՏԱՆԴԻՆ ԵՐԶՆԿԱՑԻ

1. Կենսագրական։— *Հովհաննես Երզնկացուն ժամանակակից է մեր այս անվանի բանաստեղծը, որ նույնպես, ինչպես Հովհաննեսը, արտագրություն է Երզնկայի և իր շրջակայքի կուլտուրական կյանքի, որ տեսանք վերևում։ Նրա կենսագրության մասին, ցավոք, գրեթե բան չգիտենք։ Բայց նա բախտավոր է եղել այնու, որ նրա քերթվածները, թվով քսաներկու, մեզ հասել են 1336 թ. Թավրիզում կատարված մի արտագրությամբ. դրանց վրա ավելացած են ուրիշ երկուսը մի տաղարանից (ԻԴ և ԻԵ քերթվածները)*[138]*։ Արտագրությունն ունի հետևյալ հիշատակարանը. «Բայց գրեցաւ սայ ի Թավրէժ ի Դաւվազայի Սնջայրանս... ձեռամբ մեղապարտ և դատապարտեալ ոգոյ՝ նուաստ գրչի Ամիրիս՝ մականուն Փօլին Քալայմաչ՝ ի Յուսուփայ որդուս՝ Միքեռի թոռն՝ ի վայելումն անձին իւրոյ... ի թվիս ՉՀԵ [=1336] ի նաւասարթի գրէցաւ այս գիրս, ամէն»։ Կոստանդնի բանքերից մեկն*[139] *ունի այս վերնագիրս.*

---

136 *Այս ասքերի մի մասը տպագրված է «Պղնձե քաղաք», 1731, էջ բճիդ. «Բանք պիտանիք և օգտակարք ասացեալ առաջնոց» վերնագրով։*

137 *Տե՛ս* Նաճապետ Քուչակ, *Դիվան, Փարիզ, 1902, էջ 81 և հտն. «Խրատական և այլաբանական երգեր», որոնք տպված են Սուտ Քուչակի անունով, և էջ 125—129, «Մանոթագրություններ», որոնց մեջ նույն անանուն տաղերից ինը հիշված կան Պլուզի անունով, վեցը՝ Ֆրիկի անունով, իսկ երկուսը՝ և՛ անանուն, և՛ Պլուզի, և՛ Ֆրիկի անունով։*

138 *«Կոստանդին երզնկացի և յուր քերթվածները», ուսումնասիրությամբ հրատարակեց Հ. Մ. Պոտուրյան, Վենետիկ, 1905։ Այս հրատարակության մեջ ենթադրաբար վերագրված են Կոստանդինին նաև ԻԳ և ԻԶ քերթվածները*

139 *Անդ, ԻԱ, էջ 153։*

«Բան Կոստանդնեայ առ մեր հոգևոր եղբայրն Ամիր, հոգով ի հոդի և սրտէ ի սիրտ». դա սկսվում է այս տողերով.

Պարո՛ն Ամիր, մեր պարծանաց եղբայր և սիրելի.
Զայս սակաւ բանքս ի կարգի որ վասն ձեր շարագրեցի,
Աղէկ մըտիկ դի՛ր ու ճանչէ՛, ուժով է բանքս և պիտանի.
Բայց յանգէտ մարդիքն ի մօտ է անպիտան, դառն և լեղի։

Բովանդակությամբ ամբողջապես կազմված է իմաստական ասքերից, որ բանաստեղծն ուղղում է իր մտերիմ բարեկամին։ Ենթադրում են, թե այս «պարոն Ամիրը» նույն Ամիր Փոլինն է, որ Թավրիզում իր համար արտագրել է Կոստանդնի քերթվածները։ Թե պարոն Ամիրն ի՛նչ պարագաներով մեր բանաստեղծի սրտակից «սիրելին» է եղել, այդ հայտնի չէ։ Հավանորեն նա Կոստանդնի հետ միասին մանկության ժամանակ ուսել է մի վանքում, քանի որ բանաստեղծն անվանում է նրան «հոգևոր եղբայր», բայց մինչ Կոստանդինը դարձել է վանական, նրա ընկերը մնացել է աշխարհական։ Կարծում են, թե Կոստանդինը կենդանի եղած պիտի լինի դեռ 1336 թ., երբ Ամիր Փոլինն արտագրել է նրա բանաստեղծությունները. բայց այդ կարծիքը հիմնավորված չէ։ Միայն այն ստույգ է, որ Կոստանդնի քսաներկու քերթվածները հորինված են հիշված 1336 թվականից առաջ։ Ապա նրա բանքերից մեկի մեջ[140] մի ցուցմունք կա հեղինակի ապրած ժամանակի համար. խոսելով կյանքի ունայնության և մահվան մասին՝ նա գրում է.

Թէ լինի հզօր փատիշահ զերդ Ղազան,
Ջմնայ՝ քանի է ինք սրտով զերդ գազան։

Այս տողերի մեջ Ղազան ղանը (1295—1304 թթ.) հիշվում է այնպիսի ձևով, որ նա մեռած պիտի լիներ այդ գրելիս։ Կնշանակի՝ Կոստանդինն իր այդ բանքը հորինել է 1304 թվականին կամ հետո, հետևաբար նա ապրել է 13-րդ և 14-րդ դարերի մեջերը։ Որ մեր բանաստեղծն իր մի քերթվածի մեջ անվանում է իրեն Կոստանդին Երզնկացի, այդ ցույց է տալիս, որ նա ծննդով Երզնկայից է եղել, կամ թե մանուկ հասակին նվել, ուսել, կրոնավորել ու գործել է Երզնկայի վանքերում։ Ինչպես նրա բանաստեղծություններից իմացվում է, նա վաղ հասակից արդեն ցույց է տվել դրական շնորհք։ Վանականները կեղծ բարեպաշտությամբ ատել, նույնիսկ հալածել են մեր քերթողին այն պատճառով, որ նա աշխարհիկ երգերի մոտիվներով կրոնական բանքեր է հորինել։ Այլևս ուրիշ բան չգիտենք Կոստանդնի կյանքից, բացի նրա բանաստեղծություններից, որոնց մեջ տեսնում ենք նրա խոհերն ու զգացումները։

2. Կրոնական և խրատական բանք։— Կոստանդինն իր բանաստեղծական աշխատանքներն սկսել է, անշուշտ, իր նախորդներին հե-

140 Անդ, ԺԴ, էջ 130։

տևելով, կրոնական քերթվածներով։ Նրա առաջին (Ա) երկն, ըստ Ամիր Փոլինի ժողովածուի, է մի կրոնական գրվածք, իսկապես Ս. Գրքի պատմության բովանդակությունը ոտանավորով։ Դա մի համառոտ, բայց ճաշակավոր պատմվածք է՝ հետևողությամբ Գրիգոր Մագիստրոսի և Ներսես Շնորհալու։ Իսկ երկրորդ (Բ) քերթվածը կրոնական իմաստով խրատական «բանք» է, որ հավանորեն նրա այս տեսակի գրվածքներից առաջինն է ժամանակով։ Դրա առաջին տունն այս է.

Ահա սկիզբն առնում բանից
և խրատ տամ հասարակաց.
Իմաստութիւն ձեզ ցուցանէ՝
յով որ հոգոյ աչք կայ ի բաց։
Ջինչ մարգարիտ շարեալ յոսկի՝
հանց գեղեցիկ բանն ի մըտաց,
Բայց անգիտին ոչինչ թուի
զինչ մարգարիտն ի մէջ խոզաց։

Ամբողջը մի գովք է ոչ թե «աշխարհիս» կամ «երկրավոր իմաստության», այլ «երկնավոր իմաստության» կամ «աստվածային գիտության», որի հիմքն է սերը.

Ով սէր չունի իր հաւատար,
որ գիտութեան հիմն է դըրած,
Նա՛յ զգիտութիւնն աստուածային
հըպարտ հոգով իսկի չգիտաց.
Հանց տես թէ հիմն ի վերայ ջրոց
կայ անհաստատ իրք մի շինած։

Կոստանդինն երկրորդ «բանքը» հորինել է ըստ երևույթին այն ժամանակ, երբ իր կրոնական ուխտն է արել. նա քարոզում է չսիրել այս աշխարհս, անցավոր բաների ետևից չգնալ, և վերջը խնդրում է աստուծուց, որ իրեն բաշխե երկնավոր պարգևը.

Տէ՛ր ըզդ վերին, ի քէն խընդրեմ,
գըթա՛յ ի յիս, հայր ողորմած,
Եւ բաշխէ՛ անարժանիս
քո երկնային մեծ պարգևաց.
Որ արբիմ շնորհօք Հոգոյն,
կենամ սիրովն երկնաւորաց.
Եւ թողու՛մ զայս անցաւորս
ես Կոստանդինս յինէն[141] ի բաց։

---

[141] Արտագրողն իր անունն էլ ավելացնելով՝ այս տողը դարձրել է՝ «ես Կոստանդինս և զԱմիրս որ գրեցի ի մենէ ի բաց»։ Արտագրողի ավելացրածը դուրս ձգելուց հետո՝ «ի մենէ» բառն էլ, որ թողել է հրատարակիչը, բնականաբար դարձնում եմ «յինէն»։

Այս երկու քերթվածներն էլ սովորական են իրենց բովանդակությամբ, բայց գեղեցիկ են իրենց պարզությամբ ու կենդանությամբ։ Կան տողեր ու տներ, որ հիշեցնում են բանաստեղծի մյուս երկերը. ինչպես, օրինակ, երկնքի ստեղծագործության պատկերը.

Կամարակապ խորանն երկնից
առանց սիւնի հաստատեցան,
Գեղեցկութիւնք վայելչապէս
զարմանալի յօրինեցան.
Ծաղկեալ երկինքն աստեղինօք՝
լուսաւորօք զարդարեցան,
Ի գիշերոյ զարդ աստեղացն
և ի տունջեան արեգական։

Ա, էջ 64

Գեղեցիկ տներից է, օրինակ, և հետևյալը.

Լըսէ՛ քեզ բան խիստ գեղեցիկ,
ծաղիկ քաղած է ի բազմաց,
Անմահութեան պըտուղն է սայ,
որ է յերկնից յաշխարհս իջած.
Թէ զնորայ ճաշակն առնուս,
կամ սէր ունիս 'ւ ես ծարաւած,
Այլ չհաւանիս անցաւորիս,
թողուս զամէն աշխարհս ի բաց։

Բ, էջ 75

Այս երկրորդ «բանքի» մեջ արդեն Կոստանդինը ցույց է տալիս իր հակումն և ընդունակությունը հորինելու կարճ ու կտրուկ իմաստական ասքեր, որոնք կարող են իբրև առածներ գործածվել, ինչպես հետևյալ տունը, որ կազմված է չորս այդպիսի խոսքերից.

Քանի հասնիս ի մեծութիւն՝
խոնարհ կացիր մարդկան ու ցած։
Որչափ լինիս դու իմաստուն՝
շատ մի՛ խօսիլ մէջ անգիտաց։
Աղքատին մի՛ բարկանալ,
որ չըդատէ զքեզ աստուած։
Քո ընգերին հոր մի՛ փորել,
Թէ չէ՝ այն քե՛զ կայ պատրաստած։

Բ, էջ 75

Ուրիշ գրվածքների մեջ էլ նա կերտում է իմաստական ասքեր, որ մենք կտեսնենք իրենց տեղում. բայց մեր բանաստեղծի առաջին գրա-

կան մեծ արժանիքը դրանց մեջ չէ, այլ այլաբանորեն հորինված կրոնական երկերի մեջ։

3. Արեգակի, գարնան և լուսու բանքեր։— *Սրանց մեջ արդեն տեսնում ենք կյանքի ու բնության սիրահար շնորհալի բանաստեղծին, որ հեռանում չէ ուսուցական քերթուβյանը։ Նա յուրացրել է Գրիգոր Նարեկացու այն տաղաչափությունը, որ հոգևոր իմաստով, անձնական շեշտերով երգում է ուրախ, լուսավառ բնությունը։ Կոստանդնի այս կարգի քերթվածները շատ ավելի մաքուր ու չինջ են, ուստի և ավելի գեղեցիկ են, քան իր վարպետ Գրիգոր Նարեկացու Մննդյան ու Վարդավառի տաղերն իրենց մβնությամբ և բառախաղերով։ Արդարև, այլաբանությունը դեռ մեկ-մեկ աղդում է մտքի պայծառության վրա, բայց Կոստանդնի արվեստն ավելի զարգացած է, բանաստեղծն ընդհանրապես խուսափում է այլաբանական անհստակությունից։ Նա կամ բավականանում է վերնագրի մեջ միայն հիշելով, թե իր բանքը հոգևոր է, կամ իր երկի անկախ մեկնությունն է անում՝ դնելով այն իր գրվածքի վերջում, երբեմն էլ մեկնությունը դնում է իբրև առանձին քերթված, այնպես որ բուն բանքը մնում է իբրև մի մաքուր օրինաբերգություն բնության. կամ թե այնպես է հորինում, որ կարելի է և՛ հոգևոր, և՛ մարմնավոր նշանակությամբ հասկանալ այն։ Նա բնությունից առնում է ընդհանրապես մեղմ ու քնքուշ տեսարանները, արեգակի ծագումը՝ լուսով ու գույնով, գարնանային կյանքով ու բուրմունքով լցված։ Այս տեսակի երկերի մեջ է ահա ամենից ավելի փայլում Կոստանդնի բանաստեղծական տաղանդը։ Որովհետև նա կյանքի և բնության էությունը գտնում է լույսի ու սիրու մեջ, ուստի նրա երգերի մեջ լույսն ու սերը դարձել են մի տեսակ պաշտամունքի առարկա. նա ներբողում է արեգակի ծագում, գարնան գալուստ, լույս ու սեր, հորինելով մեկը մյուսից գեղեցիկ քերթվածներ (Գ, Ե, Զ, ԺԱ, ԺԵ, ԺԶ)։ Հետևենք նրա այս երկերին այն կարգով, որով դրված են Ամիր Փոլինի ժողովածուի մեջ։*

4. «Գարուն»։— *Երրորդ քերթվածի վերնագիրն է՝ «Այս գարունս ղգալուստն Քրիստոսի պատմէ առակօք»։ Այլաբանական լինելը շատ պարզ է և ինքը բանաստեղծն իր երկի երկրորդ մասի (վերջին չորս տները) սկզբում դարձյալ այսպես է հայտնում այդ մասին.*

Ղգսակաւ բանքըս որ գըրեցի
վասըն գարնան եղանակաց,
Եւ յիշեցի օրինակաւ
ըզյարութիւն դատաստանաց...

Կնշանակի՝ գարնան նկարագիրը նա անում է իբրև օրինակ Քրիստոսի, ինչպես ասում են, «երկրորդ գալստեան», երբ մեռելները հարություն պիտի առնեն և դատաստան լինի ըստ քրիստոնեական հավատքի։ Այս երկի մեջ դեռ զարգացած չէ Կոստանդնի արվեստը։ Քանի որ դատաստանի ժամանակ արդարները պիտի ցնծան, իսկ մեղավորները պի-

տի լան, ուստի բանաստեղծը գարնան նկարագիրն անում է նկատի ունենալով և՛ սրանց, և՛ նրանց։ Բայց երբեմն մեղավորների մասին խոսելիս հեռանում է գարնան պատկերից և հետևում հանրածանոթ կրոնական պատկերացումներին, որ կապ չունին գարնան հետ. ինչպես, օրինակ, քերթվածի առաջին տան ներքևում ընդգծված տողերի մեջ.

Գարունն լինի ուրախութիւն
և ցընծութիւն երկրածընաց.
Կիսոց մի գայ մեծ հարսանիք,
կէսմ մի յերկաթ, ի բանդ 'ւ ի լաց։
Ոմանք ծաղկին զերդ բուրաստանք.
գոյն ըզգոյնով ցեղք ի ցեղաց.
Ոմանմ զգենուն մեծ պրոմութիւն
և շարշարին ըզհետ դիւաց։

Մյուս տների մեջ երկակողմանի նկարագիրներն առնված են պարտեզի և արտ ու բուրաստանի գարնանային աշխատանքից և բուսականերկությունից. այստեղ էլ, սակայն, մեղավորների համար բերված չոր ու անպիտան, լավ պտուղ չտվող ծառերը, փուշն ու հրով այրելը, որ կըրկրնված են տարբեր տների մեջ, ինքնուրույն գյուտեր չեն, բայց հարմարվում են գարնան եղանակին, ինչպես հետևյալների մեջ.

Ծառքըն ծաղիկս ի վեր փըչեն,
թէ կան դալար ու չեն մըսած.
Ով որ ընդրի չոր 'ւ անպիտան,
նոքայ հրոյն են պատրաստած.
Բուրաստանքըն զարդարին,
վարդըն փըռէ տերև շարած,
Վասն այնոր ինք թագաւոր,
որ համբերէ ի մէջ փըշաց։

Կամ հետևյալ տների մեջ.

Ահա եղև յորդոր գարուն,
յայտնեցաւ զինչ կայ պահած.
Ու զինչ ծածուկ գործք ու սերմանք,
զիրենք ցուցին յամէն ցեղաց։
Ահա բարի սերմանահանքն
հրնձեսցեն զպտուղ բարեաց.
Իսկ սերմանողիքն չարութեան
ժողովեսցեն փուշ խոպանաց։
Ծառ մի ծաղկել գեղեցկասլէս
և լի պըտղով կայ զարդարած.
Եւ մին մի չոր և անպիտան,

յիմիճ մաճաբեր փուշ կայ բուսած.
Վասն այնորիկ սուրբն ճրեղէն
ի մի ծառոյ կայ պատրաստած,
Որ ոչ բերէ պըտուղ բարի,
Նայ ճատաճէ ճասարակաց:

Բանաստեղծն այս քերթվածի մեջ դեռ շատ անվստահ է շարժվում իր հորինման ժամանակ: Կարծես նա իր առաջին փորձն է անում այսպիսի մի երկ ստեղծելու, ուստի չի խիզախում շատ հեռանալու ընդունված հին ձևերից, և այնպես է հորինում, որ այլաբանությունը թափանցիկ լինի և անգետներն էլ հասկանան բուն կրոնական իմաստը, նրանք որ

Զմարմինքըն են զարդարել
գեղեցկապէս ու խիստ պայծառ,
Եւ չեն ի հասկանալ,
մըտօք ճանչել բան ծածկաբար:
Դ, էջ 82

Բայց չնայելով քերթողի անհամարձակությանը՝ արդեն երևում է նրա ընտիր ճաշակը և մտածությունը յուրահատուկ գեղեցիկ ձևերով, առանձնապես գարնան հրճվալից նկարագրի մեջ, ինչ որ վերաբերում է արդարներին: Այստեղ պատկերները ոչ թե հարաստություն են ավետարանի, այլ ինքնուրույն դյուտեր են և շատ թարմ ու ղվարթ են, ինչպես, օրինակ,

Ոմանք ծաղկին զերդ բուրաստանք
գոյն ըղդոյնով ցեղք ի ցեղաց:
Ծառքըն ծաղիկս ի վեր փըչեն,
թէ կան դալար և չեն մըսած:
Վարդըն փրոէ տերև շարած:

5. «Բանք յերկու դէմս»:—*Մեր հին բանաստեղծության դոհարներից մեկն է նրա առավոտյան օրհներգությունը (ե քերթված, էջ 85—88), որի վերնագիրն է. «Բանք յերկու դէմս մտաց տեսութիւնք ի հոգի և ի մարմին. զոր առակօք խօսի այսպէս»: «Առակօք խօսի» դարձվածը ցույց է տալիս, որ այդ բանաստեղծությունը հորինված է այլաբանական նմանությամբ, բայց այլաբանությունն այլևս պարզ չէ և, ինչպես հեղինակը հայտնում է, բանքը կարող է և «ի մարմին» հասկացվել: Քրիստոնյա հավատացյալի վսեմ ներշնչումով ստեղծված լուսաբացի մի նկարագիր է դա, որի մեջ պատկերներն, ավելի ու ավելի հրապուրիչ, հաջորդում են միմյանց: Մենք բանաստեղծի հետ տեսնում ենք բնության զարթոնքը, լուսաղարդ շքեղությունն և կենդանությունն ու շարժումը. միաժամանակ և նրա հետ զգում ենք նրա սերն առ առավոտյան լույսը և նրա խորագգաց սրտի սքանչացումը, որով նա դիտում է նախ*

կեսգիշերային ս։րթուն-անքուն լուսատուները և ապա բնության մյուս գեղերը։

Զարթի՛ր ի յերազուտ,
բացէ՛ր զաչերտ՝ ով կայր ի քուն.
Տեսէ՛ր մէջ գիշերիս շա՛տ,
որ պահ մի չեն լել ի քուն,
Անդադար ի շուրջ գալո՛վ
կան հրամանաւ մի աստուծուն,
Որ բանիւ զերկինք ի վեր
կամար կապել երեւ քամուն։

Բանաստեղծը զարթնում է քնից, վեր կենում. երբ երկար գիշերն անցնում է, տեսնում է՝ լուսինը պայծառ և բազմաթիվ աստղերն՝ «ի յիր սպասուն»՝ զարդարում են երկինքը։ Երևում են առավոտվա նշանները. ծագում է պայծառ լուս-աստղը Արուսյակի[142] (=արեգակի) առաջից.

Մի աստղ ելաւ պայծառ
առջև Արուսեկին լուսոյն.
Ունէր լոյս գեղեցիկ
քան զաստեղացն այլ գերագոյն.
Տեսս ըզնա լուսին,
և հրաման տայ աստեղնոյն.
Հաւասար ի մայր մտան,
նուաղեցան յիրենց լուսոյն։

Եվ ահա դուրս է գալիս ինքն արեգակը.

Ջերեսս երկնից երաց,
երբոր ծագեց լոյսն արևուն.
Տղայ երևեցաւ,
քաղցր կոչի իրենն անուն.
Հոգի հաւասար երեւ շատոց
պայծառ լոյս աչերուն,
Ով սիրով մընաց լուսոյն
Արուսեկին առաւօտուն։

Մանուկ արեգակի ծնունդը, բնության մեծասքանչ խորհուրդն և երևույթը, հոգի և կենդանություն է բերում, ամեն կյանքի աղբյուրն է։ Ամեն բարիք պարգևվում է մարդուս արեգակի ծագելիս։ Առավոտյան լուսաբացին է, որ աստված, սիրով լցված, քաղցր է նայում արարածներին. և վերջապես լուսածագի ժամին է բուրում անմահության անուշ

142 Քրիստոնեական կրոնական լեզվի մեջ «Արուսեակ» է կոչվում հաճախ արեգակը, որ և իբրև սիմբոլ՝ նշանակում է Քրիստոս։

հոտը, որ հարբեցնում է հոգիները, և մահը հավիտենական կյանքի փոխում. բանաստեղծը այնպես հափշտակված է առավոտով, որ տենչում է, որ կյանք, խնդություն, սեր լինի իր համար առավոտյան, նույնիսկ իր մահը։

6. «Բանք յաղագս Արեգական արդարութեան»։— Պակաս գեղեցիկ չէ և այս բանքը (Զ, էջ 88—90), որի վերնագրի մեջ հեղինակը դարձյալ գրում է. «զոր առակօք խօսի», և թե այլաբանությունը վերաբերում է Քրիստոսին, «որ և ծագեաց ի հօրէ միածին որդին»։ Այստեղ էլ նկարագրված է գարնան արեգակի ծագումն ու նրա սքանչելի ազդեցությունը բնության այլ և այլ կողմերի վրա։ Առաջին անգամ մեր բանաստեղծության մեջ խանդավառ ոգով, արագաթռիչ սլացքով ու թափով փառաբանվում է արեգակը կարծես մի արևապաշտից. լույս ու ջերմություն, խավարի հերքում, ձմեռնային սառնամանիքի վերացում և աշխարհի ցնծություն։

Ահա՛ գիշերս էանց,
նըշան եղև առաւօտուն.
Աստղըն պայծառ ծագեց,
աւետաւուր երեկ լուսոյն.
Խաւարըն հերքեցաւ
ու ցրնծացաւ աշխարքս ամէն.
Երնեկ ետուն միմեանց,
որ արժանի եղեն լուսոյն։

Ջինչ որ ի բանդ կային
և ի խաւար ի խոր զընդան,
Նա՛յ լոյս ծագեց նոցայ
յարեգականն ի մեծ լուսոյն[143].
Երկիրս էր սառն ու պաղ,
ու ցուրտ ձրմեռն ու հողմային,
Ահա եղև գարուն
յարեգականն ի մեծ լուսոյն։

Սկսվում է բնության մեջ կենսաբեր շարժումը—ծիլ ու ծաղիկ, ջրերի խաղացում և ընդհանուր կենդանացում.

Երկիր կենդանացաւ,
ու լեռն ու դաշտ կանաչ բուսան.
Ծաղիկ բերին ծառերն
յարեգականն ի մեծ լուսոյն.
Ծաղկունքըն զարդարին

---

143 Համմ. «ժողովուրդ որ նստէր ի խաւարի՝ ետես լոյս մեծ. և որոց նստէին յաշխարհին և ի ստուերս մահու՝ լոյս ծագեաց նոցա»։ Ավետարան ըստ Մատթ. Դ, 16։

ազգի ազգի գոյն ըղգոյնով,
Փըռի վարդըն կարմիր
յարեգական ի մեծ լուսոյն։
Ակունքըտ յորդորին
ու ցընծալով յառաջ խաղան,
Գետերտ ոլոր կապին
յարեգական ի մեծ լուսոյն։
Ջինչ որ կայ արարած,
ու անհոգի մեռած կայինն,
Ահա՛ կենդանացան
յարեգական ի մեծ լուսոյն։

Բանքի այս առաջին մասն այնպես է հորինված, որ կարծես թե դրա հեղինակը մեր ժամանակի մի բանաստեղծ լինի, որ հիացած է արեգակի հրաշակերտ զորությամբ և երգում է այն առանց որևէ «ծածուկ» մտքի։ Բայց դա Քրիստոսի ծննդյան մի գովք է այլաբանությամբ։

7. Խորհրդավոր նմանության օրինակներ։— *Ինչի՞ց է բխում Կոստանդնի այս հիացական խորասուզումն առավոտյան լույսի մեջ և բնության այսպիսի վեհ ըմբռնումը, որ ունի նա, կամ այն, որ լույսն ու սերը նրա համար մի տեսակ պաշտամունքի առարկա են։— Անշուշտ այդ ծագում է ամենից առաջ բնության լուսագեղ տեսարանի տպավորությունից։ Բայց այդ չէ միայն։ Նա ներշնչված է նաև քրիստոնեական սիմբոլիզմից, որով Քրիստոս կոչվում է «լոյս», «արեգակն արդար», «արդարության արեգակ»։ Սրա լույսն՝ «իմանալի լոյս», և Քրիստոսի «ծնունդն ի հօրէ» (ըստ դավանության) ասվում է նաև «ծագումն ի լուսոյ», Քրիստոս՝ «լոյս ի լուսոյ»։ Այսպես երգվում է «Արևագալի» և «Քրիստոսի Սննդեան» շարականների մեջ.*

Լո՛յս, ի լուսոյ ծագումն, արեգակն արդար...
Ի ծագել լուսոյ առաւօտուս
Ծագեա ի հոգիս մեր զլոյս քո իմանալի։

Կոստանդինն, ինչպես և իր «Հոգևոր եղբայրները», շատ անգամ երգել են Քրիստոսի համար նաև.

Ի հօրէ ծագեցար
Լուսաւորել զարարածս,
Արդարութեան արեգակն...
Լոյս ի լուսոյ ծագեալ ի հօրէ
Եւ լուսաւորեաց ըզտիեզերս,
Ծնունդ յանըստուեր լուսոյն...
Լոյս ի լուսոյ զմեզ լուսաւորեա...
Լոյս ի լուսոյ ի հօրէ առաքեցար...[144]

144 «Շարական», էջմիածին, 1861, էջ 597, 24, 27, 672, 50։

Այս խորհրդանշանները, սիմբոլները, ինչպես արդեն տեսել ենք, ե-կեղեցու մեջ մտել էին արեգական աստված Միհրի (Միթրա) կրոնի ազ-դեցությամբ[145]։ Արդ՝ Կոստանդին Երզնկացին սույն հին նյութն է եր-գում, նույն «լույս աստվածը», կամ աստվածային լույսը և «արդարու-թյան արեգակն» ու նրա ծագումը. բայց մինչ հոգևոր երգերի մեջ, որ-պեսզի ֆիզիկական լույսն և ֆիզիկական արեգակը չհասկացվին, ավե-լացնում էին «իմանալի» և «արդար» կամ «արդարութիւն» բառերը, Կոստանդինը մի փոփոխություն է անում. նա այս որոշիչները դուրս չ ձգում և առնում միայն լույս և արեգակ։ Նրա երգն, ուրեմն, այնպես չ հորինվում, որ թվում է, թե նա փառաբանում է իսկական ֆիզիկական արեգակն և նկարագրում է լոկ առավոտյան լույսի ծագումն իր շար-ժումներով և ազդեցություններով, բայց իրապես այդպես չէ։ Ֆիզիկա-կան լույսից և արեգակից ստացած ներշնչման հետ իշխում է և հավա-տացյալ քրիստոնյայի զգացմունքն առ արդարության արեգակն և սրա ծնունդը, այնպես որ նա երգում է միաժամանակ և՛ նյութական, և՛ ի-մանալի լույսերը, և՛ ֆիզիկական արեգակը, և՛ արդարության արեգակը կամ, ինչպես ինքը հեղինակը ճիշտ բնորոշում է, նա ստեղծում է «Բանք յերկու դէմս մատց տեսութիւնք ի հոգի և ի մարմին»։ Եվ այս է տալիս նրա բանաստեղծությանն առանձին ուժ ու վսեմություն։ «Արդար», «ի-մանալի» բառերի բացթողումով արձակվում են մեր կրոնավոր բանաս-տեղծի թևերը. նա արդեն ազատ թռիչք է գործում իր սիրած բնության մեջ և երգում լույս, առավոտ, արեգակի ծագում, ուրախ գարուն, այն-պես, ինչպես ինքն զգում ու հասկանում է բնությունը։ Դրա հետևանքով և մեր բանաստեղծությունը ձեռք է բերում մի նոր անկախ գրական տե-սակ—բնության ֆնաrեrգություն, որի մեջ մեծ տեղ են բռնում բանաս-տեղծի անձնական տպավորությունները բնությունից ու զգացումները մի ներքին ջերմությամբ և կրոնական խորհրդավորությամբ կամ «խոր-հըրդականութիւյամբ», ինչպես ասում էին հները։ Եթե լուսո և արեգակի հին պաշտամունքը քրիստոնեական հավատքի մեջ մտել էր իբրև մի սիմբոլ—խորհրդանշան միայն, այժմ այդ սիմբոլը մեր բանաստեղծու-թյան մեջ դառնում է արդեն ինքնուրույն երգի նյութ։ Բնության երգն, ուրեմն, ոչ իբրև մի հատված ուրիշ մեծ երկերի, ինչպես Ներսես Շնոր-հալու «Ծդեսիոյ ողբի» մեջ է։ Բայց այսպես դեռ Կոստանդնի քերթված-ների ոչ-մեկնական մասերի մեջ։

Անգետ մարդիկը, որոնք խելամուտ չեն կրոնական գրականությանն ու հավատալիքներին, հեշտությամբ միայն ֆիզիկական նշանակությամբ կհասկանան Կոստանդնի այդպիսի քերթվածները, և այդպես հասկա-ցողներ եղել են թե՛ Կոստանդնի և թե՛ մե՛ր իսկ ժամանակակիցներից։

---

145 Մ. Աբեղյան, *Հայոց հին գրականության պատմություն*, հատ. Ա, «Հոգևոր երգ» հատվածի երկրորդ գլուխ՝ «Զևն և բովանդակությունը», պարագրաֆ 6. «Միհրի կրոնի ազ-դեցությունը», էջ 501 («Երկեր», հատ. Գ, էջ 512)։

Կոստանդինը, սակայն, այդպես չի մտածել, այդ երևում է ոչ միայն վերնագիրներից, այլև քերթվածների մեկնական մասերից։ Ահա թե ի՞նչ է գրում նա վերևում բերված արեգական բանքի չորրորդ տնից հետո.

Է՞ր չէք ի զարմանալ
ու կամ հարցուկ լինիլ բանիս,
Վասն այս արեգականս
և իր պայծառ լցեալ լուսոյն.
Այս նո՛ր ծագեց մեզ լոյս
քան զարեգակն, ու ա՛յլ պայծառ.
Ջինչ լուսաւորք կայինն՝
ծառայ կոչին այն մեծ լուսոյն։

Ինչո՞ւ չեք զարմանում ու հարցնում, թե այս ի՞նչ արեգակ է պայծառ լուսով (որ երգում է ինքը), ի՞նչ նոր մեծ լույս է ծագել արեգակի պես ու նրանից էլ ավելի պայծառ, այնպես որ բոլոր լուսավորները նրա ծառան են,— այսպես հարցնում է բանաստեղծը և անմիջապես պատասխանում.

Ի լուսոյն ի սկզբանէ
լի լուսով շառաւիղ ծագեց,
Լոյս ի լուսոյ ծընաւ
յարեգական ի մեծ լուսոյն։
Այս լոյսս ի յայն լուսոյն,
որ ինքն է տէր ամէն լուսոյն,
Ու թագաւոր կոչի,
՝ւ ամենուն լո՛յսն ի յիր լուսոյն։

Բանաստեղծն այստեղ բառախաղ չի անում, այլ ընդունված բանաձևով և «շառավիղի» օրինակով խոսում է քրիստոնեական դավանանքի մասին և բացատրում, թե իր երգած լույսը, և՛ ամեն լույս, և՛ ամենի լույսն աստվածային լույսից է. (արդարութ֊յան) արեգակի մեծ լույսից, և սա էլ աստվածային հայր աստուծո լույսից «ի սկզբանէ» ծագած մի «շառավիղ» (ճառագայթ), ինչպես ընդունում և բացատրում էին դավանաբանութ֊յան մեջ։ Որ բանաստեղծը «լոյս» ասելով հասկանում է մտավոր, հոգևոր լույսը, կամ քրիստոնեական կրոնի լույսը, այդ պարզ երևում է այս 2 բանքի վերջին երեք տներից. ոչ քրիստոնյաները, որ չեն հավատում «արեգական և իր լուսոյն»,—ասում է նա,—«չունին մասըն լուսոյ յարեգականն ի մեծ լուսոյն», իսկ ինքը Կոստանդինը փաֆագում է, որ լուսավորվի «յարեգականն ի մեծ լուսոյն»։ Բայց որ նա գրում է, թե ամեն լույս և ամենի լույսն աստվածային լույսից է, պետք է հասկանալ նաև ֆիզիկական արեգակի լույսը, քանի որ այն էլ ծագում է աստուծուց, բայց, հարկավ, ոչ իբրև աստվածային լույսի մի մասն, իբրև նրանից

ծագող մի «շառավիղ» (ճառագայթ), այլ իբրև աստուծու «արարած»[146] լույս։

Կոստանդնի քերթվածները, առանձնապես ե-ն ճիշտ հասկանալու համար կանգ առնենք և հետևյալի վրա։ Լուսածագն, առավոտյան արեգակն ու գարունը հեթանոսական ժամանակից ի վեր կապված են եղել նաև մի ուրիշ հավատալիքի հետ, այն է՝ մեռելների հարությունը պետք է լինի գարնանն արևածագին։ «Մազդեզական հարությունը վախճանական արշալույս է, մինչդեռ վեդայական արշալույսն ամենօրյա հարություն է»։ Ըստ հայ ժողովրդական հավատքի՝ արշալույսն ամեն օր կրկնվող հարություն է միաժամանակ և հոգիների դատաստան, որից տարբեր է վերջին դատաստանը։ Հավատում են, թե ամեն օր արևածագին բացվում են երկնքի դռները և ինչպես հին իրանական հավատքով՝ լուսաստվածը, որի աթոռն է արեգակը, այդ դռների առաջ դատաստանի է նստում. իրանացիների համար առաջին դատավորն է Միթրան, առավոտյան արեգակի աստվածը, ըստ հայ ժողովրդական հավատքի՝ Քրիստոս, որ հարկավ քրիստոնեական ժամանակում փոխանակել է հեթանոսական աստուծուն։ Դատաստանից հետո արդարները գնում են անմահության անուշակ դրախտը[147]։ Այս հավատալիքը մինչև մեր օրերը կենդանի մնում էր մեր ժողովրդի մեջ և արտահայտվում է նրա լուսաբացի ժողովրդական աղոթքների մեջ։ Սրանցից հանրածանոթ է հետևյալ հիմնը, որ անշուշտ գալիս է շատ հին ժամանակներից.

Լուսացա՜վ, լուսացա՜վ։
Լույսն է բարին,
Միտն է ծառին...
Երկնքի դրռները բաց է.
Ոսկի աթոռ դրրած է.
Քրիստոս վրրան նրստած է.
Լուսավորիչ կանգնած է,
Ոսկե գրրիչ բրռնած է.
Մեծ ու պրստիկ գրրում են,
Արդարները խաղում են,
Մեղավորներ լալում են։
Լուսացա՜վ, լուսացա՜վ։

---

146 Դիտմամբ այստեղ այսքան կանգ ենք առնում այս խնդրի վրա, որովհետև անճաշակ և անժուռ կերպով հրատարակել են և սովորեցնում են, թե Կոստանդին Երզնկացին այս քերթվածներով իբր հանդիսանում է «պանթեիստ»։ Այդ մարդիկը կամ պանթեիզմ չեն հասկանում, կամ անամոթությամբ բարձրացնել են ուզում մեր հին բանաստեղծներին։ Այդպիսիների ասելով՝ Ֆրիկի համար աստվածը գոյություն չունի, նա «աթեիստ» է, Կոստանդին Երզնկացին, անգամ Գրիգոր Նարեկացին «պանթեիստ» են...։ Առանց այդպիսի կեղծիքների էլ մեծ է մեր հին բանաստեղծների փառքը։

147 Մանրամասնությունների և աղբյուրները տե՛ս Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական հավատքը. Dr. Manuk Abeghian, Der armenische Volksglaube, Leipzig, 1899, էջ 19 և հետ.։

Այս հին հավատալիքն ևս իր կողմից ազդել է Կոստանդնի արեգակի ու գարնան երգերի վրա։ Մեռած բնությունը վերակենդանացնող գարունը դարձել է մի խորհրդավոր օրինակ ոչ միայն Քրիստոսի ծննդյան համար, որով աշխարհս, ըստ հավատացյալների, ստացել է մի նոր հոգևոր կենդանություն,— այլև Քրիստոսի «երկրորդ գալստյան» և մեռելների հարության, երբ և դատաստան պիտի լինի։ Դրա համար և Կոստանդինն, ինչպես տեսանք Գ քերթվածի մեջ, այդ երգում է գարնան պատկերով և վերնագիրն էլ դնում է. «Այս գարունս զգալուստն Քրիստոսի պատմէ առակօք»։

Նա գարնանային առավոտյան լուսաբացի պատկերով երգում է երկրի կենդանացումը Զ քերթվածի մեջ։ Եթե վերջինս հասկացվում է Քրիստոսի ծննդյան համար, նրա Ե քերթվածի մեջ՝ «Բանք յերկուս դէմս», շատ կտորներ հարությանն են ակնարկում, և կարող են այսպես էլ հասկացվել, ինչպես են հետևյալները.

Հոգի հաւսար երեւ,
շատոց պայծառ լոյս աչերուն,
Ով սիրով մըննաց լուսոյն
Արուսակին առաւօտուն։
Քաղցր է ծընունդ լուսոյն,
երանի տամ ես այն մարդոյն,
Որ բաժին ինքն ունենայ
ի յայն լուսոյն առաւօտուն
Թէ դուրն կայ երկնից
պարգևատու մի աստուծուն,
Ի ծագել արեգականն
ի մեզ բացվի դուրն բարոյն։

Կամ հետևյալները.

Թէ անուշ հոտ կայ բուրել
՛ւ ի կե(ա)նք փոխէ զդուրն մահուն,
Են շատոց հոգի հարբած
յանուշ հոտոյն յառաւօտուն.
Թէ անմահական սէր կայ՝
Որ հոգի տայ հոգեստնուն,
Իմ բաժին սէրն ու հոգին
խառնել ի սէրն առաւօտուն։
Թէ ինձ կեանք կամ խընդութիւն
բաժին կայ ի դուռն ի Սիրուն [= աստուծու],
Մէկ պահու սէրն ի սըրտէ՝
Թող լինի ինձ յառաւօտուն...

Շատ ու թափանցիկ են մանավանդ այս տողերը.

Ով կամի սիրով լինիլ
ինքն յարութեան որդի լուսոյն,
Թող խընդրէ ի յայն Սիրոյն [=Հիսուսից],
որ ինքն յարեաւ առաւօտուն.
Ի Սիրոյն սէր յաւելու
սիրով գընալ տունն ի Սիրոյն [=աստուածու];
'Ի ով Սիրոյն ինք հետևի՝
հասնի սիրովն առաւօտուն [=հարության առավոտին]։

Եվ վերջապես այս վերջին տողերը շատ պարզ կերպով ակնարկում են, որ Կոստանդնի երգած առավոտը խորհրդաբար վերաբերում է նաև հարության արեգակի ծագմանը։ Այսպես է իր համար աղոթում մեր բանաստեղծը.

Տէ՛ր, գըթա՛յ յիս ի ծառայս,
և տուր բաժին ինձ յայն հոգոյն,
Որ շատոք ին ցանգացել,
բայց քիչք հասան առաւօտուն...
Խընդրեմ ի քէն, տուր ինձ
սէր ի սիրոյն առաւօտուն։

8. Վարդ ու սոխակի այլաբանական սիրավեպը և սիրո գովաբանությունն։— *Մեր բանաստեղծը, որ լույսի սիմբոլիզմից անցնում էր արեգակի և լույսի երգերին, ինչպես վերևում բերված կտորներից կարելի է տեսնել, լույսի հետ անհրաժեշտորեն սեր էլ էր երգում, քանի որ քրիստոնեական աստվածը ոչ միայն «Լոյս» էր, այլ միանգամայն և սիրո աստված և «Սէր» էլ կոչվում էր։ Նա հավատում էր, որ ինչպես աստվածային լույսից է «ամեն լույս» և «ամենի լույսը», նույնպես և «Սէր» աստուծուց է ամեն սեր. «Ի Սիրոյն սէր յաւելու»։ Աստվածային սիրուց է, որ ծագում է արեգակը.*

Թէ Տէրն [=աստված] ի յարարածս
հայի քաղցր ի յիր սիրոյն,
Յայն պահուն է որ լինի
նըշան լուսոյն առաւօտուն։

Առավոտյան լույսն, ուրեմն, աստուծու քաղցր աչքից է, և նա քաղցր աչքով նայում է իր սիրուց։ Ահա թե ի՛նչ հայացք ուներ Կոստանդինը և՛ սիրո, և՛ լույսի ծագման մասին։ Հենց դրա համար էլ նա Լույս երգելիս չի մոռանում և սերը։ Բայց նա առանձնապես էլ երգում է սերը։ Բնությյան այս խանդավառ բանաստեղծը, որ իր ներշնչումները բնությունից ստանալով աստվածային լույսն երգելիս առնում էր ֆիզիկական լույսն այլաբանությամբ, չէր կարող իր կրոնական բանքերի համար չօգտվել սովորական իմաստով աշխարհիկ սիրու երգերի ձևերից։ Եվ իսկապես՝

մեր հոգևորականների հորինած բանաստեղծության մեջ առաջին անգամ,— նրանից առաջինը ժամանակով՝ ցարդ հայտնի չէ,— նա կիրառում է վարդ ու սոխակի սիրավեպը, սիրո շատ տարածված այս այլաբանությունը:

Հայոց գրականության մեջ վարդը երևան է գալիս 10-րդ դարում արդեն, բայց վարդ ու սոխակի այլաբանությունն ընդհանուր գրականության մեջ, որքան հայտնի է, նախ երգել են պարսիկ բանաստեղծները: Մեր բանաստեղծների համար հեշտ ընդունելի է եղել այս այլաբանությունը, քանի որ վարդը մեզնում հնուց արդեն կապված է եղել սիրու հետ. հեթանոսական ժամանակներում արդեն այս ծաղիկը նվիրական է եղել սիրու աստվածուհի Աստղիկին: Ուստի մեզնում ևս այս սիրավեպի այլաբանության տակից պարզ ցոլանում է զգայարանական հեշտավետ սերը:

Արևմուտքում,— առնում ենք առանձնապես Ֆրանսիան,— այս սիրավեպն ստացել էր ավելի վերացական և ուսուցական բնավորություն: «Կղերականները սիրո մասին գրելով՝ սիրո նյութի մեջ բնականաբար մտցրել էին իրենց բոլոր մտավոր սովորությունները. նրանք են եղել գլխավորապես, որ քրիստոնեական աստվածաբանության դիմաց հաստատել էին մի իսկական սիրային թեոլոգիա, սիրո աստուծուն տալով Հիսուս Քրիստոսի տեղը, և այդ սիրո աստուծու փափկության նստավայրը հորինելով եդեմական դրախտի պատկերով, ի՛ անուն նրա օրինադրելով մի տասնաբանյա պատվիրանք և վերջապես՝ կազմելով մի ամբողջ դավանանք ու պաշտամունք, ինչպես և սիրահարների մի եկեղեցի, որ ուներ իր հավատացյալներն ու հերետիկոսները, իր սրբերն ու մեղավորները: Կղերականները կուրտուազական (մեծարական, քաղաքավարական) սիրո վրա գործադրում են նույնպես իրենց վերացականության մոլությունն ու իրենց դիդակտիկական ձգտումը, և նրանց ազդեցությամբ՝ «սիրո արվեստները» բռնում են երգերի ու վեպերի տեղը. գրում են սիրելու արվեստ, թարգմանում են Օվիդիոսի «Սիրելու արվեստը»: Վերացականության և դիդակտիկական բանաձևերի սերը երեվակայությանը մուտք էր տալիս միայն այլաբանության կողմից, և այլաբանության հանգան սիրո մասին գրող բոլոր կղերականները: Եվ այս միջոցը միայն չթողեց, որ չոր ու ցամաք օրինադրության մեջ ընկնեն և շատ ու քիչ գունավորեն վերացականությունը»[148]: Այսպիսի բնավորություն ունի նաև ֆրանսիական նշանավոր սիրավեպը՝ «Վարդի ռոմանը» (Le roman de la Rose), որի առաջին մասը գրված է 1230-ական թվականներին, իսկ երկրորդ մասը՝ մի ուրիշ հեղինակի ձեռով մոտ 1277 թվականին, ուրեմն, հավանորեն Կոստանդին Երզնկացու մանկության տարիներին: Դա սիրելու արվեստ է և կուրտուազական սիրո օրինագիրք:

---

[148] Histoire de la Littérature française par Gustave Lanson, Paris, 1895, էջ 121 և հան.:

Այսպիսի սիրավեպեր և սիրելու «արվեստներ» և օրինագրքեր չեն առաջ եկել մեր գրականության մեջ, դի մեզնում կյանքի մեջ չի եղել դրանց պահանջն ունեցող արքունիք, «կուրտուազական» վերաբերմունք տիկինների հանդեպ։ Չեն եղել և «կուրտուազ ասպետները», այն ժամանակի կիլիկյան բառով՝ «ձիավորները»։ Ճիշտ նույն դարում թաթարական բռնապետությունն էր Մեծ Հայաստանում, և հայ ազնվականությունն արդեն դեպի քայքայում և անկում էր դիմում։ Ուստի մի քանի սիրավեպերը, որ մնացել են մեր հին գրականությունից, ոչ վերացական, ոչ էլ ուսուցական բնավորություն ունին։ Վարդ ու սոխակի սիրավեպն այլաբանորեն կիրառվում է ոչ թե իբրև «սիրո արվեստ», այլ իբրև մի սիրո քերթված՝ ընդհանրապես սեր գովերդելու համար։

Արևմուտքում ևս, հարկավ, հորինված կան նաև հզոր սիրո քերթվածներ, նույնիսկ 14-րդ դարում։ Բայց համեմատության համար բերենք այստեղ մի փոքր կտոր իտալական վերածնության վերջին շրջանի, 16-րդ դարի նշանավոր բանաստեղծ Տորկվատո Տասսոյից։ Նրա հռչակավոր «Ազատված Երուսաղեմ» վիպական քերթվածի մեջ[149] զենքերի շաչյունի ու շռինդի և արյունահեղ կոտորածների ու մահվան հետ՝ մեծ տեղ է տրված նաև սիրո քնարական գովքին։ Ահա նրա Երջանիկ կղզիների մեջ երջանկության տաճարը, սիրո կախարդական ամրոցն իր մարդկային սիրահար զույգով, շուրջը ծաղկող ու պտղող ծառեր, ականակիտ լճակներ իրենց մեջ լողացող սիրատարփ ու հրապուրիչ, մերկամարմին ջրանուշներով։ Գարնանային գեղեցիկ բնություն սիրով լցված։

«Սիրավառ թռչունները
Ճոճում են զմրուխտ շվաքարանները,
Եվ իրենց միայն հասկանալի լեզվով
Հառաչում են իրենց խինդ ու վշտի համար»։

Այդ թևավորներից մեկը, խատուտիկ փետուրներով մի կարմրակտուց թռչուն, մարդկային ձայնի նման հնչյուններով երգում է վարդի մասին.

«Ահա վա՛րդը, որ պատրաստ է բացվելու.
Որքան պակաս են բացված նրա թերթերը,
Այնքան ավելի հմայք կա նրա մեջ[150]։
Բայց ահա՛ նա փթթել է մեր առաջ,
Ու փրթթումից հետո իսկույն ծաղկաթափ.

---

149 Տորկվատո Տասսո *(1544—1595 թթ.), Ազատված Երուսաղեմ։ Օգտվում եմ ռուս. թարգմանությունից.* «Освобожденный Иерусалим», поэма Торквато Тассо, перевод В. С. Лихачева, СПб, *Տասն և հինգերորդ ու տասն և վեցերորդ երգեր։ Տե՛ս հատկապես էջ 236 և հետ., 16-րդ երգ, ությակներ 12—17։*

150 *Հմմտ. հայ գուսանական հայրենը՝ «վարդն բացուած մի՛ սիրէ ... վարդըն պուպուղիկ սիրէ՛ ...»։*

Եվ այդ այլ ևս այն ծաղիկը չէ,
Որ գեղուհիների սրտում նախանձ էր բորբոքում,
Եվ նրանց կրակոտ պաշտողների հայացքը գրավում։
Բավական է մեկ օր միայն,
Որ թառամի ծաղիկը մեր կյանքի։
Ամեն տարի բնությունը նորոգվում է,
Իսկ մեր երիտասարդությունը չի վերադառնում։
Քաղե՛նք ուրեմն վարդն առավոտյան.
Օրը կանցնի, և իրիկնադեմին արդեն կըթառամի նա.
Քաղե՛նք շուտով սիրո ծաղիկն
Ու սիրենք, քանի կարող են մեզ սիրել»։
«Լռեց երգեցիկ հավքը, և իսկույն
Օդը նորից լցվեց թռչունների հավողյունով.
Աղավնիները համբույրներ են տալիս,
Եվ ամեն ինչ բռնված է գարնային հրայրքով։
Ե՛վ կաղնին, և՛ դափնին, թփերն ու խոտեր,
Ինքը հողը, գետնի ջրերը,—
Ամեն ինչ միայն սեր է շնչում,
Ամեն ինչ անձնատուր է սիրո բուռն իշխանությանը»։

Մեր Կոստանդնի բանաստեղծության մեջ էլ (Քերթված ԺԱ, էջ 110—118) սերը դրված է գարնային թարմ ու գեղեցիկ բնության մեջ, բայց առանց որևէ կախարդանքի ու հավերժահարսերի։ Ամեն ինչ բնական ձևով է, հարկավ, որոշ այլաբանությամբ— ծաղիկներն աղջիկներ են, և ամենագեղեցիկը վարդն է, որին նախանձում են մյուս գեղուհիները։ Հավքերը (թռչունները) տղայքն են։ Չկա մարդկային սիրահար զույգը, դրա փոխանակ այլաբանորեն բլբուլն ու վարդն են սիրահար։ Զարդարուն բուրաստանում սիրավառ հավքերը, գեղեցիկ հագնված և ծաղիկների անուշ բուրմունքից հարբած, իրենց սերն են քաղցր եղանակում։ Այստեղ էլ սերը ներգործում է բնության բոլոր երևույթների վրա, թափանցում է և՛ կենդանի էակների, և՛ ծառ ու ծաղկի, անգամ ջրերի մեջ։ Ամեն ինչ լցված է սիրով, ամեն ինչ լինում է սիրով և կենդանի ու գեղեցիկ է միայն սիրով։

Սիրով արեգակի լույսից գեղեցկանում, բացվում, փթթում է վարդը. նրա պայծառ տեսքից ուրախանում են երիտասարդները ու մոռանում ամեն հոգս ու տրտմություն։ Բայց նա ինքը վշտերի մեջ է, քանի որ վաղանցիկ է իր փթթած կյանքը։ Ուստի կրակի պես վառվող այդ գեղանի սիրուհին իր սիրական բլբուլի առաջ բանում է իր սիրատանջ սիրտը և հրավիրում նրան, որ համբուրի իրեն՝ վարդին՝ ու կշտանա սիրով. որովհետև կգան, կքաղեն իրեն,— ասում է նա,— ու բլբուլն այլևս չի գտնիլ նրան։

Ահա՛ մեր Կոստանդնի սիրավեպի նյութը, որ էապես նույնն է, ինչ որ նրանից ավելի քան 250 տարի հետո հորինող իտալացի հռչակավոր

բանաստեղծինը։ Մեր քերթվածի մեջ սերը նույնիսկ ավելի վեհ ու վսեմ է, զի դա հեշտանք չէ փափկության դրախտում, այլ, ըստ կրոնական հայացքի, բխելով Մեր աստուծուց՝ դարձած է հավերժ կենդանության աղբյուր, մի աստվածային ստեղծագործ կենդանարար ու գեղեցկացնող զորություն ամբողջ բնության համար։

Տեսնենք բնագրից հատվածներ։

Այսօր եղև պայծառ գարուն,
ցընծան ծաղկունք և յորդորին,
Հագնին ցեղք ի ցեղաց
մանդրուն հաւերն՝ ի հաւն խօսին.
Ի վերայ լերանց բարձանց
գոյն ըզգոյնով ծաղկունք փըռին,
Ծածկեն զերեսս երկրի,
ըզլեռն, ըզդաշտ ու զբաղչանին։
Են գեղեցիկ փետուր հագել
փոքրիկ հաւերն ի ծաղկոցնին.
Ու հազար դասըս դասով՝
քաղցրաձայնեն զանլըռելին.
Հարբել են յանուշ հոտոյն,
ու նստել (են) ի վրա ծաղկին.
Ի սիրու են ըստեղծած,
սէր կայ յիրենք որ կու խօսին։
Բուրաստանք է զարդարած,
ու ցեղ ու ցեղ հաւեր խօսին.
Ու ամէն հաւ սէր ունի
ու շատ հասրաթ ի յիր սըրտին.
Յանդադար քաղցըր ձայնէն
քունն է հատել ի գիշերին.
Ու ամէն հաւ յիր դիմաց
վասն ի սիրուն քաղցրր խօսին։

Ահա թե ո՛րքան ուժեղ է արտահայտել մեր բանաստեղծը թռչունների գարնային հրայրքը—ցանկության բոցը։ Ծաղիկները ցնծում են։ Վարդը դեռ չի բացված. մանիշակի նախաձեռնությամբ՝ ծաղիկները—հորոտ-մորոտ, ձյունծաղիկ, շուշան, նունուֆար, նարգիզ, մասրենի, սոսամբ ծաղիկ և ուրիշներ—հավաքվում, խորհուրդ են անում, որ կրտրեն վարդենին, ասելով՝

Որ ոչ գայ վարդըն կարմիր,
ու գեղեցիկ տերև փըռին,
Եւ ի նորա պայծառ տեսուն
որդիք մարդկան ի մեղ չհային։

Ուրեմն այստեղ փթթած վարդը գեղուհիների նախանձն է շարժում, քանի որ նա է գրավում տղաների հայացքը։

Բլբուլը, վարդի սիրահարը, հանկարծ վեր է կենում ու ձայն տալիս ծաղիկներին, թե վարդը քնից զարթնել է իր կանաչ վրանի մեջ։ Վարդը որ լսում է բլբուլի ձայնը, բաց է անում վրանի դուռը, հանում կանաչ կապան և կարմիրը հագնում։ Ծաղիկները թառամում են, ոմանց տերևները թափվում, ուրիշները փախչում, բարձր լեռներն են ելնում. ոմանք ամոթից կապտում ու սուգ են անում, մի քանիսն էլ երկյուղից դողում են ու դեղնում։ Իսկ վարդը զարդարում է բուրաստանը. բլբուլը գալիս, նստում է նրա դիմաց և հոյակապ տողերով ամենասփիռ սիրո գովքն է անում սքանչացած, ասելով՝

Թէ՝ «Սէր է ծառն ու սէր ծաղիկն,
ու սէր հաւուն ձայնն ի ծառին.
Սէր է վարդն ու սէր՝ բլբուլն,
սիրով նըստել (ի) վերայ վարդին.
Սիրով են գոյն ու գոյն
ու գեղեցիկ այն ծաղկընին.
Վասն սիրոյ փոքրիկ հաւերն
ի ծաղկընուն վերայ նըստին»։
Նա՛յ բլբուլն ուրախանայ
ու բազմի (ի) վերայ վարդին.
Թէ՝ «Հազար բարի գալուն
վարդին՝ ծաղկանց թագաւորին»։

Վարդն էլ խանդակաթ զմայլանքով պարզում է իր սիրո աղբեղությունը և իրեն, և ամենի վրա.

Նա՛յ դառնայ վարդն ի բլբուլն
ու պինդ փըռէ զիր տերևնին.
Թէ՝ «Ես այլ եմ սիրու տէր,
ուսկայ սըրտիս մէջն է դեղին,
Թէ չըկար սէր յիմ սըրտիս
ու ես ունի անհոգութիւնն,
Նա՛յ ես է՞ր ի կախ լինի
զօրն ու գիշերն ի մէջ փըշին.
Ես սիրո՛վ կամ կենդանի
՝ւ եմ զարդարել զիմ տերևնին.
Ու թէ սէրն չիսնէ զատի,
նա՛յ զիս տանի հողմ ու քամին։
Բլբո՛ւլ, մի՛ դու զարմանալ
զպայծառ վարդիս գեղ պատկերին,
Չի ով որ սէր չունենայ՝

առ ինք չլկայ գեղեցկութիւնն.
Ջուրըն սիրո՛վ յիս վերանայ,
որ յարմատոյս առ իս քամի.
՝Ի ի լուսոյ արեգականն
ես ժողովեմ գեղեցկութիւնն։
Ի յիմ անուշ հոտոյս
կենդանացան որ վհոտն առին.
՝Ի ի յիմ պայծառ տեսուս
ուրախացան ՝ւ ի խաղ մըտին.
Ջինչ որ յաշխարհի կայ
հոգս ու ցընոր ու տըրտմութիւն՝
Ի յիմ շնոֆոր տեսուս
փարատեցան երբ վիս տեսին,
Յով որ սէր կայ յիր սըրտին,
նա՛յ ղիս նորայ կամակ տանին։
Որ քանի նայ յիս հայի,
նա՛յ հանդարտի սէրն ի սըրտին։
Առնուն ղիս և տանին,
սիրով փըռին ի մըձլիսնին,
Որ ի յիմ պայծառ տեսուս
ուրախանան ՝ւ ըմբեն զգինին։
Ահայ կա՛մ ես զարդարած
՝ւ իմ տերևնիս վերդ հուր վառին.
Ու բացել եմ վիմ սըրտիս
մէջն ի դիմացս որ է դեղին.
Ար՝եկ զիս համբուրէ.
ու կըշտացիր սիրովըտ հին.
Ահա՛ գան և զիս քաղեն
՝ւ այլ ոչ գըտնուս ի բաղչանին»։

Սիրո այս գովքը 13-րդ դարի վերջերում կամ 14-րդ դարի առաջին քառորդին՝ մեր հին բանաստեղծության մի աննման, մի փարթամ փըթթած ծաղիկն է, որ, թեև այլաբանությամբ, բայց այնպես գունագեղ ու վճիտ է հորինված, և այնպես պատշաճ է հարմարեցրած իրական կյանքին, որ պարզապես հասկացվում է աշխարհիկ բովանդակությունը։ Ջնայելով, որ հեղինակը վերնագիրը գրել է՝ «Բանքս վարդի օրինակաւ ղՔրիստոս պատմէ», բնականաբար շատ դժվար կարելի էր կրոնական այլաբանություն համարել այն։ Ուստի բանաստեղծն ստիպված է լինում գրելու մի առանձին քերթված (ԺՒ, էջ 119—125) այս վերնագրով. «Մեկնութիւն վարդին համառօտ։ Վասն անգիտաց շինեցի. զի կարծէին եթէ մարմնաւորաց էր բանք վարդիս։ Ես վասն այն գրեցի»։ Այս «մեկնության» մեջ նա բացատրում է, թե վարդը Հիսուս է, Մանիշակը՝ Հու-

դան, Բլբուլը՝ Քրիստոսի հարության փողը փչող Գաբրիել հրեշտակը և այլն։ Հեղինակն ինքը թերևս սկզբից հենց մի կրոնական այլաբանական բանք է ցանկացել հորինել աշխարհիկ սիրու երգի ձևով ու մոտիվներով, բայց նրա գրածն իսկապես աշխարհիկ բանք է դուրս եկել. իսկ մեկնությունը, որ հետո ավելացրել է, չի հարմարվում բուն գործին։

Միևնույն նյութին և այլաբանությանն են վերաբերում նաև Կոստանդնի ԺԵ և ԺԶ (էջ 132—142) բանքերը, որոնց առաջինի վերնագրի մեջ՝ «Բան գարնան օրինակաւ խորհուրդ ի Քրիստոս. մի՛ մարմին հասկանայք զբանս, այլ հոգևոր», զգուշացնում է հեղինակը սկզբից, թե ինչպես պետք է հասկանալ իր «ի խոր ծածկեալ բանը», «ծածուկ բանը»։ Այս սիրավեպի մեջ նորանոր կողմերից լրացվում է գարնան գեղազարդ պատկերը։ Դա ջերմին, լուսաճաճանչ ու հրճվալից մի հարսանիք է մայր երկրի համար ձմեռային մռայլ մթությունից և սառած քարացած մեռելությունից հետո, երբ հարավ հողմի փչելով վերանում է ամեն տրտմություն և կենդանացած շարժվում, ծաղկում է բնությունը։

Հեզ որոտայ ամբ ցօղաբեր,
Կամար կապի յերկինս ի վեր,
Հոսէ յերկիր ահեղ գետեր.
Հաւսար զերկիր են արբուցել...
Ծովըն դըրուրդ առնու սիրով,
Խաղան զեռունք յերկիր՝ւ ի ծով.
Ակունքա յորդոր գան պաղ ու հով,
Եւ ի քարէն յառաջ բըխել։
Ահեղ գոչեն գետերա յոլով՝
Յորդ ի լերունքա ի վայր գալով.
Գան ման ի ման ծաւալելով,
Սիրով ի ծովն երես դըրել...
Հաւերըտ գան քաղցըր ձայնով,
Ծիծեռն ի հետ սաղմոսելով.
Գայ արտուտիկըն կարդալով,
Զառաւօտուն է բարբառել։

Ամեն կենդանի էակ, կապանքից արձակված, տեղից շարժվում է, ծնում և աճում։ Ժողովվում են և ծաղիկները բուրաստանում. վարդը միայն դեռ չի երևում.

Բլբուլն եհաս շաքարբերան,
Աւետաբեր մեծ յարութեան.
Վարդին եհար կանաչ վըրան,
Որ գայ բազմի զերդ հուր վառել։

Բայց վարդը ծածկվելով կանաչ կապայով՝ թաքնվում է.

Կամով ծածկի ի մէջ փըշին,
Ջերդ որ ի յամբ մըտնու լուսին։

Բլբուլը աղաչում է վարդին, որ երեսը բանա, բայց վարդը, հակառակ բլբուլի հորդորներին, մերժում է նրա խնդիրը. որովհետև, իբրև մի ամոթխած աղջիկ, չի համարձակվում ապատ երևան գալ և երեսը ցույց տալ, քանի դեռ ժամանակը չի հասել, և անգետները բամբասում են։ Վերջիվերջո նա դուրս է գալիս, նրան տեսնող ծաղիկներից ոմանք գունաթափվում ու փախչում են. իսկ գեղեցիկները շրջապատում են նրան ու գովում նրա գեղեցկությունը։ Ուրախանում է բլբուլը, մեծ հրավերք է անում. գալիս են բլբուլները (տղաները) խմբերով. մեծ խնջույք են անում նվագելով։ Վարդն այժմ առանց քաշվելու բազմում է նրանց մեջ և ասում բլբուլին, թե նա այժմ որքան կուզե թող գովի իրեն։ Ապա տեղի է ունենում վարդ ու սոխակի մեջ մի զրույց, որով վարդը պարզում է, թե ինչ է սպասում իրեն աշխարհում—լինել դեղ, վարդաջուր, և բանաստեղծն իրեն դառնալով ասում է.

Կոստա՛նդ, ի խոր ծածկեալ է բան,
Ջայս որ առ մեզ տուեր նըշան.
Տուր գոհութիւն անլըռական
Այնմ որ կամաւ է խոնարհել։

9. Անձնական բանաստեղծություն։— *Լույսի ու սիրու, գարնան և արեգակի սիրահար քերթողի բանքերը, որոնց պատկերներն առնվում էին բնությունից և աշխարհիկ երգերից, խորթ և անհաճո են երևում Երզնկայի վանականներին, որոնք թեպետ սիրով լսում էին «Շահնամանն», բայց քրթմնջում էին, թե Կոստանդինը մարմնավոր բաներ է հորինում։ Կային և նախանձողներ նրա շնորհին։ Բանաստեղծը շատ վըշտեր է կրում «սուտ եղբայրներից», որոնք չարախոսությամբ բամբասում էին նրան։ Նա թեպետ և հպարտությամբ արհամարհում էր այնպիսիներին, որովհետև նրանք «անգետ» և «անմիտ» էին, բայց լինելով դյուրագգաց՝ հոգով շատ վրդովվում է և կռիվ է սկսում նրանց դեմ իր երկերով։ Այդ առթիվ նա հորինում է* **խմաստական ասմեր**, *այլև* **անձնական ճառերգություններ** *վշտահար զեղումներով իր խոցված սրտից։ Այսպիսով նա ստեղծում է մի նոր տեսակի քնարերգություն—անձնական բանաստեղծություն, որի համար նյութ են դառնում բանաստեղծի իրեն ապրած անձնական հանգամանքները, սերն ու ատելությունը, բախտն ու դրժբախտությունը, ինչ որ մասամբ արդեն տեսանք Ֆրիկի բանքերի մեջ։ Անհատն ուրեմն ընդհանրությունից անջատվելով ստանում է իր արժեքն և պաշտպանում ու ցուցադրում է իրեն։ Կոստանդնի անձնական բանաստեղծությունները կարևորություն ունեն և այնով, որ բխում են ոչ թե մի որևէ սոսկ անձնական պատճառից, այլ որ նա սիրում է կյանք, բնություն, լույս ու գարուն։ Եվ իսկապես կյանքի ու բնության սերը, և սրա*

համար կրած թախիծն ու վիշտն են կաղմում նրա ստեղծագործության, ինչպես և նրա բանաստեղծական հառաչների ու գանգատների էական կողմն ու հատկանիշը։ Եվ գրանով է, որ արժեքավորվում են նրա բանքերն իր անձնականի մասին, որոնց մեջ նա, իր սրտի ցավերը երգելու հետ՝ պարզում է և իր աշխարհայեցությունը։

10. «Տեսիլը»։ Հայացքն իր բանաստեղծության ծագման վրա։— Ը քերթվածը (էջ 97—101) ունի այս բացատրական վերնագիրը. «Ոմանք չարախօսեն զինէն վասն նախանձու թէ որպէս խօսի սա այսպիսի բան, զի վարդապետի չէ աշակերտել. զի այլ է աշակերտելն և այլ է շնորհքն ի հոգւոյն. զոր ես պատմեմ ձեզ յաղագս տեսլեան իմոյ, զոր տեսի ի զարմանալի տեսիլ, մինչ ի վանքն կայի հնգետասան ամաց. զոր տեսի այր մի արեգակնապզեստ և լի լուսով»[151]։

Ոմանք չար են հետ ինձ ու նախանձով են յիմ վերայ՝
Վասն իմ գըրեալ բանիս, որ առ մարգիկ երևենայ.
Ասեն, թէ՝ «Ո՞նց գըրէ բան քաղցրահամ ու մեզ կարդայ,
Որ ի մեր միջիս ընգեր կամ համեմատ իւր չըկայ»։
Կոյր են հոգւով աչօք, մըտօք յիմար են անյիմայ,
Թէ տէր ո՛վ է խելաց կամ այս շնորհիս որ առ իս կայ.
Ես եմ աման հողէ, 'ւ յիս լըցած կայ խազինայ.
Զոր ես խօսիմ հոգւով՝ այն մեծ տիրոջն է մանանայ։
Ով գող է այս գանձիս ու կամ նենգով ինձ լինայ՝
Աստուծոյ է հակառակ, 'ւ ինք դատաստան արնէ նորայ։

Բանաստեղծը չի բավականանում ասելով, թե իր շնորհքն աստուծուց է, և իր նենգ նախանձորդներն աստուծու հակառակ են գնում, նա անգետներին այդ հասկացնելու համար՝ դիմում է տեսլի պատկերին, մեղմ ու փափուկ ձևով ստեղծելով մի սիրուն բանք, որի ուրիշ նմանը չկա մեր տեսլական գրականության մեջ։ Դա և՛ տեսիլ է, մի վիպական երկ, և՛ անձնական բանաստեղծություն։ Նա պատմում է, թե երբ տասնուհինգ տարեկան մանուկ էր և վանքում ուսում էր առնում, մի գիշեր քնած ժամանակ տեսնում է, որ՝

Մանուկ մի լուսեղէն, յաթոռ նըստել որպէս արքայ,
Նըման արեգական է գեղեցիկ որ լոյս կու տայ։

Մեր մանուկ Կոստանդինը, զարհուրած և առանց հարցնելու, թե ով է նա, երկրպագում և նրանից երեք խնդիր է անում. խնդիրներից վերջինն է՝

---

151 *Այս վերնագրի մեջ, էջ 97, տպված է՝ «աշխատիլն», «զարմանալիս» առանց սկզբի «ի» նախդրի, «վանք» առանց վերջի «ն» հոդի. մինչդեռ նույնը հրատարակչի առաջաբանի մեջ, էջ 11, տպված է անսխալ «աշակերտելն», «ի զարմանալի», «վանքն»։*

Ասցի. «Ես եմ աղքատ, 'ւ յերակ բանի կարօտ կեցայ,
Շնորհէ դու այս գերոյս մասն ու բաժին ինձ և ղիւայ»։

Տերը շնորհում է նրան այդ ընդունակությունը։ Եվ այնուհետև նա հանգստությունը կորցնում է, և հետո միայն, երբ ուսման մեջ վարժվում է, հասկանում է իր սեսլի խորհուրդը.

Եղև յանկարծակի ինձ բան խօսիլ ով ուղենայ.
Այնպէս որ ես ի յիմ խօսից շարելըն զարմացայ.
Սիրով ու մեծ յուսով ես այս բանիս ի փորձ մըտայ,
Զհոգիս փոխան տուի, 'ւ ասլայ ես այն հոգոյն հասայ։
Իմ բանս ի յայն լուսոյն եկել առ իս ինձ մանանայ,
Որ իմ աչօքս ես ղինք բարձր ի յաթոռ նըստած տեսայ...

Բանաստեղծն, ուրեմն, իր տաղանդը համարում է աստուծու հայտնությամբ իրեն պարգևված մի շնորհք։ Դրա գիտակցությունը նրան ոչ միայն ուրախություն է պատճառում, այլև հպարտություն.

Այսօր հոգուվս ուրախ եմ և ի մեծ մուրատ հասայ,
Որ ես առանց շրթունք կու խըմեմ յայն գինուն շիշայ.
Սարխօշ եմ յայն սիրուն, 'ւ է միտքս ի հօն յուր ինք լինայ.
Ջունիմ շատոց կարիք, ով է չարկամ ու ղիս որսայ։
Ես եմ մէջ աշխարհիս զերդ ըղյիմար ի յանդիշայ.
Ոմանց թուիմ խելօք, ոմանց խիստ խև ու անյիմայ,
Ոմանք չար ին հետ ինձ, կըրճեն ատամ ի յիմ վերայ,
'Ի ոմանց պատեհ թուի զարիւնս հեղուլ իր կամ լինայ...

Այս տողերից երևում է, թե ինչպես հալածել են ավյունով հարբած, «աւեալ» բանաստեղծին։ Յալոք, պակասում է այս քերթվածի վերջին մասը՝ ձեռագրից թերթ դուրս ընկած լինելով։ Բայց առանց դրան էլ՝ մենք լավ տեսնում ենք վշտացած բանաստեղծի ազնիվ հոգին, ազնիվ էլ ներշնչումով։

11. Իմաստական ասքեր։— *Կոստանդինը վարպետ իմաստաբան է և շատ էլ հորինած ունի իմաստական ասքեր։ Նրա զենքն իր չարկամնեբի դեմ կռվելու համար՝ է գլխավորապես բարոյական խրատը, իմաստալից ասացվածները, որոնք բխելով բանաստեղծի իրեն անձնական կյանքից, հորինված են խիստ ղգայուն, թրթռուն ու եռանդուն։ Հաճախ իմաստա-խրատական ու քնարական տները փոխիփոխ հաջորդում են միմյանց և կենդանի ցոլացնում են հեղինակի ղգացումներն ու խորհրդածություններն իրեն և իր հակառակորդների վերաբերյալ. դրանք ուղղված են գլխավորապես «չար ընկերների» դեմ[152]. «Բան յաղագս չար ընկերաց և պատրաստ կալ մոլորեցուցիչ ոմանց, որք հակառակին բա-*

152 *Տե՛ս նաև՝ Քերթվածներ՝ Բ, էջ 74 և հետ., Դ, էջ 80 և հետ., Է, էջ 91 և հետ., Թ, էջ 102 և հետ., ԺԴ, էջ 129 և հետ., ԺԷ, էջ 142 և հետ., ԻԱ, էջ 154 և հետ., ԻԲ, էջ 158 և հետ.։*

րութեան» (քերթ. Դ, էջ 80—84)։ Այդպիսի ընկերները մոտենում ու մոլորեցնում են ինչպես քաղցրախոս թշնամիներ, գառնազգեստ գայլեր, թունավորող բժիշկներ. հպարտ, չարասիրտ ու կույր առաջնորդներ են նրանք, բարին ատող ու նախանձող, տգետ հիմարներ, որ մարմիններն են միայն ղարդարում, չեն հավանում իմաստուն ու գիտուն մարդուն, որին «խև» են անվանում։ Բանաստեղծն ինչքան էլ աշխատում է սառնասիրտ լինել, չի կարողանում. դի այն տգետներն իրեն են դիպչում, չեն հասկանում իր գրվածքների բուն իմաստը, չեն ըմբռնում «ծածուկ բան», «բան ծածկաբար», այսինքն այլաբանությունն, ու չեն գնահատում իր գրվածքները.

Թէ մեկ մի զանձն ի մահ եդել ու գնայ ի ծովն ի վայր,
Ջոհար բերէ ի դուրս, նա՛ անպիտան կոչեն զնա քար...
Գիտունն ի յանգիտաց մէջըն ծառայ է չարաչար,
Որ նըման խամ սապիկու յաժան ձրգեն անգին ջոհար։

Նրա վրդովմունքն այնքան մեծ է, որ իմաստական բանքը հետզհետե փոխվում է մի դառն ողբի ու երգիծանքի իր անմխիթար ժամանակի վրա ընդհանրապես.

Հազար աւաղ տամ ես որ տէրն ըզմեզ յեռնորդս արար
Ի յանցեալ ժամանակիս՝ որ մեղ չըկայ իրք մըխիթար.
Հովիւ չունինք տեսող ու մենք ենք մոլորեալ ոչխար,
Շատ գայլք են յարձակել ի վերայ մեր խիստ անհամար.
Պիտէր մեզ նաւապետ մարդ կենդանի զերդ Նոյ արդար,
Որ մեզ տապան գործէր, ծովուս լինէր եզր ու վըճար...
Ջունինք մարդ կենդանի, հոգւով մեռած ենք հաւասար...
Ի մէջ ծովուս ծըփինք, ոչ նաւ ունինք, ոչ նաւավար։

Վերջը բանաստեղծն ինքն իրեն դառնալով խրատում է իրեն.

Զհոգիդ քանի՞ մաշես, է՛ Կոստանդին, զօրն անդադար.
Հերիք արա սըրտիդ, զքեզ ի ծովո՛ւդ մէջըն տեսար.
Դարձի՛ր ի յետ նայէ՛, ու գի՛տ խելօք թապտիր ու ճար,
Որ չմնաս ի մէջ ծովուն, ՚ւ յեղր ի հանգիստ իսկի չհասար։

Այսպիսի մի անձնական, միաժամանակ և հասարակական քնարական երկ է և է քերթվածը (էջ 91—96), որ վերնագիր ունի «Յաղագս անգիտաց սուտ խօսելոյ գբանս, անպիտան և հակառակ կալ իմաստնոց»։ Բանաստեղծը խիստ հուզված է «անգէտ և անմիտ» մարդկանցից, այնպես որ նա տանջվում է, կորցնում իր հանգստությունը և բողոքի ու հառաչի ճիչեր է արձակում բարկ խոսքերով, ուժեղ և անմոռանալի շեշտերով։

Ֆըրիաթ[153] *կանչեմ հազար 'ւ ահեղ հառաչ բերեմ լալով,*
Ի յանգէտ մարդկան ձեռաց զհոգիս երեմ անշէջ հըրով.
Եմ յիմար դարձել ու խև ու սաւդայի[154] *ի շուրջ գալով*
Եւ վասըն էշ ու անյիմայ ոմանց՝ հանեմ զհոգիս շուտով։
Ես չունիմ հանգըստութիւն, 'ւ յերակ խոցիմ անդէտ խօսով...

Նա խիստ հարվածներով խարաղանում է իրեն հալածողներին, ո-րոնք անհոգի կենդանիներ են, չգիտեն մի պիտանի և խելոք խոսք ա-սել, ատելով ատում են իմաստուն մարդուն։ Եվ Կոստանդնի այս քերթ-վածը հետզհետե դառնում է լավ, բարի, իմաստուն և վատ, չար, տգետ մարդկանց հավերժ հակամարտության մի հոյակապ պատկեր. և որով-հետև բանաստեղծը նկատի ունի մի կողմից՝ ինքն իրեն և մյուս կողմից՝ իր հակառակորդներին, ուստի նրա բնորոշումները և՛ շատ ճիրագեղ են ու փափուկ ոճով, ինչպես սովորաբար հատուկ է Կոստանդնին, և՛ խիստ, ցասկոտ ու ատելաբար, ամբողջը ազնիվ ձգտումով լցված, անկեղծ ու խոր զգացումով ոգված, դառն գանգատի և հոգեռանդն ջերմության խառնուրդով։

Ջիմաստունն ո՞վ է յաղթել, թող թէ հընար բերեն չարով,
Կամ զուգեն բանք աղտեղի և բամբասեն սուտ խօսելով.
Նայ լոյս է, և նայ խաւար, որ չկայ հընար մերձենալով,
Ջի յիրմէ փախչի հեռի ի խոր տեղիք բընակելով։

Եվ այսպես իրար հաջորդում են մի շարք գեղեցիկ տներ իմաստուն և անմիտ մարդկանց մասին.

Իմաստունն է առաւօտ, աւետաւոր է ցընծալով,
Իսկ անմիտն ի խաւարի կայ թանձրացել երազ քընով։
Իմաստունն արեգական պէս է պայծառ և լի լուսով,
Իսկ անմիտն է խաւարի տուն և տեղի, լի ցաւով։
Իմաստունն է բուրաստանք ծաղկով լըցած գոյն ըզգոյնով,
'Ի անմիտին սիրտն է ի լի մութն ու մըլար սառնամանով։
Իմաստունն պըտուղ բարի, անմահութեան ճաշակ տալով,
Իսկ անմիտն է անպտուղ, դատարկացեալ և լի փըշով։

Իմաստունն աշխարհից կուշտ է, միտքն՝ առատ, իսկ անմիտը՝ ցանկությամբ լի, քաղցած ու ծարավ, ծակաչք. իմաստունը գնում է ճշմարտության ճանապարհով, իսկ անմիտն ընկած է խորխորատ ու ծով... Մի թուլություն միայն ունի իմաստունը.

Իմաստունն ոչ երկընչի թէ հարկանեն զինքըն սըրով,
Բայց յանգէտ մարդու խօսից խոցի հոգով ու մարմնով,
Ջի անգէտն և անըզգամն աստուած չունի ինք գիտելով։

---

153 *Ֆրիաթ—բողոք։*

154 *Սաւդայ—մելամաղձիկ։*

Եվ խոցվում է մեր բանաստեղծը, որ այնպիսի մարդիկն աշխարհի սկզբից ի վեր հակառակում ու չար են կամենում իմաստուն մարդկանց և հալածում նրանց։ Եվ նա ընկնում է մեծ հոռետեսության մեջ աշխարհի վերաբերմամբ, գրելով՝

Բովանդակ աշխարհս է գայլ
և միաբան կան մի ժողով,
Նա՛յ գառին ո՞ւր կայ հանգիստ
մէջ գալենուն ինք կենալով.
Ով խելօք է և ուզէ
զինք կենդանի սըրտի կամով՝
Թող լինի ի յաշխարհէս
ինք անծանօթ հրաժարելով...
Լաւ է ինձ մէջ գազանաց
մարդակերաց բընակելով,
Քանզ անմիտ 'ւ անիմաստ
որ յիս խօսի յանգէտ բանով։

Բանաստեղծն իր դրությունից մի ելք է որոնում և խրատելով իրեն՝ գրում է.

Կոստանդի՛ն, է՞ր կաս ազար
'ւ ի սիրտ ելնես թէզ մ' ըշտապով.
Վասն անգէտ 'ւ անմիտ ոմանց՝
զքեզ է՞ր տանջես շատ ցընորով.
Ոչ կարես հաւան պահել
դու զամէն մարդ հետ քեզ սիրով։
Թէ կամիս հանգիստ կենալ,
որ չըմաշես դու զքեզ հոգով՝
Մի՛ փառաց դու հետևիլ,
մի՛ անգանիլ անեզր ի ծով,
Զի ծովուն ոչ կայ հանգիստ,
յերակ ծրփի յալիս քամով։

Սուլնպիսի անձնական եղանակով հորինել է նա և մյուս ասքերը, ինչպես, օրինակ, Թ քերթվածը, որի սկիզբը չունենք։ Այստեղ խրատներն իբր ուրիշի կողմից ուղղված են Կոստանդնին։ Դրանցով նա երբեմն անձնաքննություն է անում և ինքն իրեն խրատական խոսքեր ուղղում, հանդիմանում իր պակասությունները, բայց այնպիսի ձևով, որ դրվածքն ստանում է ընդհանուր խրատական բնավորություն։ Սիրում է, որ ուրիշներն իրեն գովեն, վրդովվում է ուրիշների խոսքերից, մինչդեռ,— ասում է,— պետք է լինել խոնարհ, անփառասեր, համբերող, մի խոսքով՝ լինել «իմաստուն և հանճարեղ մարդ կատարեալ»։ Իր սմենա-

մեծ պակասությունը նա իր լեզուն է գտնում, իր բանաստեղծությունը, լի թանկագին խրատներով, որ իբրև բեռ դնում է ուրիշների վրա.

Լեզուն նըման հըրոյ
  բազում անդառք է հըրդեհել.
Դու լեր խալաս ոսկի,
  որ շատ հետեր ի հուր մըտել.
Լեզուն հողմըն սաստիկ,
  որ շատ խըռիւ է տարտարել.
Դու լեր ծառ պըտղաբեր՝
  ի մէջ երկրի արմատացել։
Լեզուն է հեղեղատ,
  շատոց հիմունս է կործանել.
Դու լեր վէմ հաստատուն,
  գըլուխ անգեան հիմըն շինել.
Լեզուն է յորդ քամի,
  ծովուն խրոովութիւն բերել.
Ի զա՛տ կաց ի նմանէ՝
  յատակ ծովուն ջօհար պահել։

Բայց կարո՞ղ է արդյոք Կոստանդինն «ի զատ կենալ» իր լեզվից, այսինքն հրաժարվել իր բանաստեղծությունից։

12. Մարմնի իրավունքը։— Մեր քերթողն իր ասքերը հորինում է մի ներքին կռվով «հոգու և մարմնի» միջև։ Մենք զգում ենք, որ նա, զգալով հանդերձ իր մեծությունը լեզվագարների դիմաց, ճիգեր է անում կտրվելու աշխարհից, զսպելու իրեն, հեռանալու մարդկային անձնասիրությունից ու սնափառությունից։ Սակայն և այնպես՝ նա ոչ մի կերպ բավարարություն չի գտնում, և իզուր Ֆ քերթվածի մեջ, կարծես մի բարեկամի կողմից, ինքն իրեն խրատներ է ուղղում.

Քո սիրտ ի յաշխարհիս
  ի հասարաթէն է հուր վառել.
Քանի որ շատ սիրես՝
  նա՛յ շատ դրռներ է քեզ բացել.
Մարմինդ է ցանգութեամբ
  ի յաշխարհիս սէրըն մաշել.
Քանի որ շատ վայլես՝
  յետև կարօտ ևս մընացել։
Մարմինդ որ էր տըղայ՝
  նըման ծաղկի գեղեցկացել,
Իսկ այժմ ահայ հասեր
  ՚ւ երիտասարդ ևս կատարել.
Հիմի գայ ծերութիւնն,
  որ ինք ըզմահն էր գուշակել.

Ոչ փա՛ռք այլ երևի,
և ոչ պատկեր գեղով լըցել։

Եվ ահա հետո գալիս է մահը, և հարությունն գարունն իր բոլոր պա-
րագաներով։ Բայց արդյոք այդ մահը և «անդենը» սարսռեցնո՛ւմ է Կոս-
տանդին երևնկացուն, ինչպես իր ժամանակակից Ֆրիկին։— Բնավ ո՛չ։
Կոստանդինը սիրում է մարմինն ու աշխարհը։ Եվ նա վերջիվերջո բըն-
կում է և խնդիրը բացահայտ դնում ժ (էջ 107—109) քերթվածի մեջ, որ
մի պատասխան է նախորդ քերթվածի մեջ իբր բարեկամից տրված
խրատին ի դեմ։ Բերենք այդ շատ հետաքրքիր բանաստեղծությունը, որի
վերնագիրն է՝ «Կրկնեալ պատասխանի այսպէս ի դէմ»։

Հոգով տուեր խըրատ
դու Կոստանդեայ կամաւ լըսել։
Ասէ, թէ՝ հասկացայ,
կամիմ պատասխանի առնել։

Եվ ի՞նչ է նրա պատասխանն իր խրատատու բարեկամին։ Նա սրա
առաջ բաց է անում իր տանջված սրտի ծածուկները, ասելով.

Մի՛ այդչափ ի գործոց
ղիս յայտնապէս յանդիմանել.
Տըկար եմ և անզօր,
մի՛ ծանր ու մեծ բեռըն դընել։
Հոգիս է խիստ յօժար
բանից իմաստընոց լըսել.
Մարմինս է հեշտասէր,
ղի յաշխարհէս է ինք ծընել.
Ի յերկուքիս միջին
մոմ եմ ի մէջ հըրոյն վառել.
Անհիմն և անհաստատ՝
եմ անհանգիստ ի շուրջ եկել։
Ի չորս հակառակէս
ուսկում յերեր եմ մընացել.
Զի հուրն ի վեր քաշէ,
նա՛յ հողըս ծանդր ի վայր հակել.
Սակաւ մի ի ջըրոյն՝
բոցըն հըրոյս է հանդարտել.
Քամին է յօգնութիւն
և բորբոքէ զհուրըս վառել։
Երկու կամաց ծառայ
դըժար է ինձ յիրաւ սազել.
Կամ հուրն ի ծոցն առնուլ
ու անվընաս զինքըն պահել.

Կամ մարմնաւոր ոտօք
վերայ ծովուն թեթև քայլել.
Կամ կհողմն արագընթաց
մարդ ընդ ձեռամբն է արգիլել։

Եվ այսպես՝ նա չի կարող չսիրել աշխարհը, քանի որ «հեշտասեր մարմինն» «աշխարհից է ծնվածծ». նրա, այդ կրոնավորի, սիրտն աշխարհի կարոտով վառվում է, ինչպես կրակով։ Նա չի կարող և՛ հոգուն, և՛ մարմնի կամքին ծառայել, ինչքան էլ ցանկանում է։ Հնարավոր չէ հաշտեցնել այդ երկուսը, որ իրար հակառակ են, ինչպես չորս տարրները, որոնցից կազմված է մարմինը։ Եվ այսպիսի հալումաշ և անհանգիստ հոգեկան վիճակի մեջ են,— ասում է նա,— ոչ միայն ինքը բանաստեղծը, այլև ուրիշ շատերը.

Զայս եմ ես ինձ խրրատ
և յանդիմանութիւն գրրել,
Եւ զիս բազմաց նըշան,
վրկայ և օրինակ բերել։

Անմիտ կեղծաւորները, սակայն, ուրիշի վիճակը չեն հասկանում՝ խոցում են Կոստանդնին և կսկիծ ու վերք հասցնում նրան, հարձակվում նրա վրա։ Բայց մենք շարունակենք տեսնել, թե ինչպես այդ համեստ կրոնավորը վշտահար կերպով և անհամարձակ սփոում է իր սրտի ցավերը.

Ինձ չէ՛ պարտ համարձակ
նըման եղբօր ի քեզ խօսել.
Այլ ինձ երես դընել
փոխան հողոյ՝ ով որ կոխել։
Ի սըրտէ արտասուք
ու շատ դանգատ լալով բերել,
Ով որ սիրով սըրտի,
եղբայրութեամբ ի յիս նայել.
Զի շատ կըսկիծ ու վէր
ի մարդկանէ է յիս հասել.
Իմ սիրտս է խոց զուգած,
Դառըն ցաւօք է զիս տանջել։
Եմ հողէ պարիսպ ածել
ու բերդ ամուր անուն հանել.
Զերկիր պատերազմաւ
ի յիմ վերայ եմ յարձակել.
Ես եմ առանց սըլէհ
ու մերկ եմ յանդիման կանգնել.
Հազար դեհաց խոցեն,

ու չներևի, թէ են խոցել։
Նա՛յ կէսք մ՚ասեն՝ Դայ է
յիմար ու խև մաղաս կաթել.
Ու կէսք մ՚ասեն, թէ պարտ
է զայսպիսոյս արիւնն հեղել։
Նայ ես պատասխանեմ,
թէ՝ Կոստանդի՛ն, չէ պարտ լըսել,
Եւ ոչ քեզ հաւատալ
ամէն մարդու՝ ի սիրտ մըտել։

Ահա թե ի՛նչպիսի ուժգին անկեղծութեամբ խոսում է բանաստեղծն իր անձնական զգացմունքների ու վիճակի մասին, իր գանգատին տալով անմոռանալի գույն։ Մենք տեսնում ենք շնորհալի բանաստեղծի հուզիչ դրութիւնը և նրա մեջ գտնում մի մարդ, որ բարձր է իր ժամանակակից վանականներից, որ և ունի իր հաստատ համոզմունքը և չի ընկճվում իր հակառակորդների առաջ։

Անշուշտ, նա մենակ չի եղել իր ազատ հասկացութեամբ. իր հայրենակից Հովհաննես (Յովհաննէս) Երզնկացին էլ, ինչպես տեսանք, նույնն է արտահայտել իր իմաստական ասքերով։ Այս երկուսի այդ երկերը ոչ միայն գաղափարով նույն են, այլև ձևով, առանձնապես չորս տարրների պատկերով, նույնիսկ մի երկու տողերի նմանութեամբ. այնպես որ, ըստ երևութին, նրանցից մեկն ազդված է մյուսից։ Բայց չնայելով այդ նմանութեանը, նրանք շատ տարբեր են միմյանցից։ Մինչ Հովհաննես Երզնկացին հորինում է հանգիստ, սառն մտածմունքով, Կոստանդինը մի զգայուն բանաստեղծ է, ավելի քնարերգու, քան բարոյախոս։ Նա իր անձնական շեշտերով երգում է ոչ միայն իր սեփական ապրումները, այլև իմաստա-խրատական ոտանավորները։ Եթե Հովհաննես Երզնկացին ավելի մտածելով է մարմնին տալիս իր իրավունքը, Կոստանդինն իր խառնվածքով նույնիսկ անհնար է համարում չսիրել ու չերգել աշխարհի կյանքը, բնութիւնը ու մարդկայինը։

13. «Սիրու բաները»։— *Հոգու և մարմնի խնդրի մասին այնպիսի պարզ խոստովանութիւնից հետո մեր բանաստեղծն այլևս չպիտի դիմեր այլաբանութեան և սեր պիտի երգեր նաև ոչ կրոնական իմաստով։ Եվ հավանորեն այս շրջանից հետո են հորինված նրա սիրո երգերը, որոնցից երկուսը կորստի չեն մատնվել*[155]*։ Դրանցից առաջինի վերջում հեղինակը, մի տեսակ իրեն արդարացնելու համար, գրել է հետևյալ հիշատակարանը.*

Եղբարք մի կան հետ մեզ սիրով,
Աշխարհի բան ուզեն գըրով.
Նա՛յ ես վասն այն յայտնի ձայնով՝
Սիրու բաներս ասցի յոլով։

155 *Քերթած ԻԴ, էջ 169—171. «Տաղ սիրոյ»։ Քերթված ԻԵ, էջ 171—173. «Տաղ սիրոյ ազնիւ»։*

Այդ «աշխարհի բանն» ուզող «եղբայրները» պետք է եղած լինին Կոստանդնի սննդակից աշխարհականներ։ Չնայելով որ նա «Հայտնի ձայնով», այսինքն առանց այլաբանության է հորինել սիրո երգը, բայց դեռ ոչ կատարյալ վստահությամբ է անում մարմնի գովեստը. տաղի վերջում ինքն իրեն հանդիմանում է՝ համարելով այդ ունայն, սուտ, անշահ և անօգուտ, սխալ և անցավոր բանք և խրատում է իրեն՝ «դառնալ» (=ետ կենալ) դրանցից, որովհետև իրեն «բաժին իրք մ'այլ անկաւ», այսինքն ինքը կրոնավոր է։ Երկրորդ տաղի մեջ, սակայն, նա արդեն իբրև սկզբունք է դնում, թե կին սիրողն է «ճշմարտություն և անմահություն գտնում».

Ով ընկեր ի քո սիրուդ բանտ ի ղընտան՝
Հաղեղէթ և անմահութեանդ է նա տես։

Սեր ունեցողն է «կենդանի հոգևոր մարդը», ասում է նա. իսկ առանց սիրո մարդուն նա, կնոջ բերանով, անվանում է «անբան և անասուն»։ Այսպիսի հասկացություն հայտնելուց հետո՝ բանաստեղծն այս երկրորդ տաղի մեջ արդեն համարձակ է. նա այլևս չի ղղջում իր «աշխարհի բանքի» համար, այլ, ընդհակառակն, գրում է, թե առանց իր սիրած էակի չկա իր համար «կեանք մուրաւոյ».

Այլ չըկա՛յ քեզ, Կո՛ստանդին, կեանք մուրաւոյ,
Երբ ի յիւր քաղցըր տեսուն հանց կարօտ ես,
Է՞ սուրաթ պայծառ ու պատկե՛ր լուսատես,
Զիմ աչերս ի քո սիրուտ յէ՞ր կու զատես։

Կոստանդին երվնկացու այս երկու սիրու տաղերը մեր այս տեսակի ամենահին բանաստեղծություններն են, որ մինչև այժմ երևան են եկել, և հենց իբրև այդպիսիք հետաքրքիր են։ Մարմինը, մարմնի գեղեցկությունը միայն չէ, որ գովվում է դրանց մեջ, այլ արտահայտվում է նաև սիրահար երգչի հոգեկան վիճակը։ Տաղերն արվեստակված չեն, այսինքն ճարտար ձեռքով շինված լոկ ոտանավորներ չեն, այլ սիրաբուխ են, Կոստանդնին արժանի։ Շատ պարզ զգացվում է, որ այդ կրոնավորը երգում է անկեղծությամբ իր սեփական ապրումները։ Անշուշտ, նրա այս երգերի մեջ ևս, ինչպես առհասարակ մեր դուսանական սիրու տաղերի, մեծ տեղ է բռնում սիրուհու մարմինը։ Նա ևս հաճշտակված է կանացի գեղեցկությամբ, կնոջ «պայծառ ու լուսատես պատկերով», «մորճ ու շիտակ» հասակով։ Նա ևս սիրավառ գովքի է արժանացնում կնոջ՝ լուսնանման բոլոր դեմքը, սև մազերը, «շուրջ երեսին մազերն ոլոր», շրթունքների ներսում «ակն ու արեգակ շարած» ատամները, կարմիր երեսը, անգամ գույնզգույն հագուստը, մանր քայլվածքը,—մարմնի մի գովք, որ անպայման հնուց է գալիս, որ և մասամբ գտնում ենք արդեն Գրիգոր Նարեկացու, ինչպես և հետագա բոլոր սիրո երգիչների ու դուսանների երգերի մեջ։ Բայց մինչ մեր միստիկ մեծ բանաստեղծը խո-

րին ակնածությամբ և հոգևոր հիացումով աղոթում ու երկրպագում է Սուրբ Կույսին, իբրև մի աստվածային անհասանելի, աննյութական էակի,—մեր այս Երզնկացու համար իր սիրածը մի մարմնավոր կին է, մի իսկական տարփածու գեղուհի, որ դառնում է մեծ հիացմունքի առարկա։ Մի անգամ որ նա տեսել է իր անձկալիին, այլևս սրա գեղեցիկ պատկերը չի հեռանում իր մտքից, և նա, այդ կրոնավորը, մնում է հարբած դրության մեջ։ Երբ նրան «իմ աչքըս տեսաւ»,— ասում է նա,—

Զօրն ես ի յիւր սէրըն կենամ,
Յերակ հետ իւր տեսուն գընամ,
Զաչերս արեամբ հետ իւր թանամ,
Զիրայ հոգիս յիսնէ տարաւ։
Երբ որ անուշ հոտն յիս բուրեց՝
Զիս ի խելաց շուտով թափեց.
Ի յայն պահուն սիրտս իմ եփեց,
Երբ իւր տեսն ինձ երևեցաւ։

Ապա իր տեսած կնոջ նկարագիրն անելուց հետո՝ դարձյալ մեր առաջ բաց է անում նա իր հոգեկան վիճակը, որ ունի տարփալիի կողմից առանց պատասխանի մնալուց։

Ես եմ կարօտ ի յիւր սիրուն,
Զինչ ծարաւած յերկիր ցօղոյն,
Կամ զինչ գարնան անուշ քամուն,
Թէ երբ հընչէ հողմըն հարաւ։
Քանի որ յիմ տեսուս[156] զատեր,
Կենաց ճարակն է ինձ հատեր,
Լացն ու հառաչն է զիս պատեր,
Հոգու քաղիլ ու սըրտացաւ։

Թեպետև Գրիգոր Նարեկացուց մինչև Կոստանդին Երզնկացին երեք դար ժամանակամիջոց է ընկել, բայց մենք, ցավոք, չունենք ոչ մի սիրու երգ, որ այդ երկար ժամանակաշրջանում հորինված լիներ, և նույնիսկ չգիտենք էլ, թե արդյոք եղե՞լ են ուրիշ սիրո երգիչներ ևս՝ բացի գուսաններից, որոնք միշտ էլ գոյություն են ունեցել։ Սակայն քանի որ դեռ չէր մեռել կրոնական ոգին և Կոստանդինն ինքն էլ մի վանական էր, ուստի Գրիգոր Նարեկացու Ողբերդության և Աստվածածնի երգից անցումը Կոստանդնի սիրու երգին կատարվել է, ըստ երևույթին, բնականորեն։ Երևում է, որ այս բանաստեղծի սիրու երգերի վրա ազդեցություն է թողած դուսանականների հետ նաև մեր միստիկական բանաստեղծությունը։ Նա կինը երգում է նման ձևերով ու հատկություններով, ինչպես միս-

156 Տպված է աղճատ ձևով։ «Հիմ տեսնուս», ուղղում եմ «յիմ տեսուս», որ է՝ իմ աչքից։

տիկ երգիչն իր աստուծուն կամ իր պաշտած Ս. Կույսին։ Կինը, թեև մարմնավոր, ոչ աստվածային էակ, նրա համար հանդես է գալիս գաղափարական պատկերով, միստիկական Սեր ու Լույս աստուծու հատկություններով։ Լուսո և արեգակի երգիչն իր սիրո առարկան ամենից առաջ երևակայում է բնականորեն իբրև մի լուսատու էակ, իբրև մի արեգակ ու լուսին։ Եթե միստիկ երգիչ Գրիգոր Նարեկացին, խավարի մեջ նստած, դիմում է իր Լույս աստուծուն և ասում. «Կամք քո չիս, և խաւարն ինձ ճառագայթ»[157], նույնպես և մեր այս կրոնավոր տաղերգուն «խաւարած սրտով» նստած է կես գիշերին, և նրա տարփալին, իբրև մի լուսեղեն էակ «լուսատես պատկերով», արեգակ ու լուսին, լույս է ծագում նրան, նրա աչքերին, և լուսավորում նրա մռայլ ու տրտում հոգին.

Ի յերկրի ի՞նչ կայ նըման քեզ օրինակ,
Դու ի յերկնից լուսեղէնքն ես նըմանակ.
Քու տեսովդ ես դու լուսին պատրի թամամ,
Որ իմ սըրտիս խաւարեալ՝ լուս կու ծագես։
...Երբ որ դուն յորդորելով մանրաքայլես,
Ասեն՝ արև ծագեցաւ ի մէջ գիշերիս...

Այսպես և ուրիշ տողերի մեջ արվում է լույսի համեմատություն։

...Իմ աչերուս լուս ծագեցաւ։
Երբ գունըղգուն ելնէ փայլէ,
Ջերկիր ի յիւր լուսոյն հալէ։

Գրիգոր Նարեկացին դիմելով աստուծուն՝ գրում է.

«Միայն թագաւոր ինքնակալ ոզորեզ... գալստեանդ քոյ ակն ունիմ և ողորմութեան փրկչիդ սպասեալ յուսամ. ի յոտս քո անկանիմ, և զգարշապարիդ հետս համբուրեմ...»[158]։ Կոստանդնի համար ևս իր սիրած կինը թագավոր կամ թագուհի է.

Դու սուլթան ես, պէհրսապ շատ ծառանով
Ջծառայիս ձայնըն գիտեմ որ կու կանչես...
Թէ լինէր որ զքեզ տեսնի առ յիս դալով,
Ես խընդութեամբ ի դէմ գայի քեզ սիրով.
Ի յերկրի երես դընի քեզ կոխելով,
Ու հոգիս անդ հանէի յօժար կամով։

Այս գեղեցկաբարշ ստրկացումը բոնակալ սիրո (այսինքն՝ սիրական կնոջ) առաջ, ինչ որ ընդհանուր է արևելյան ժողովուրդների բանաստեղծությանը, անշուշտ խորին հնությունից ի վեր հատուկ է եղել նաև մեր

157 «Գրիգորի Նարեկայ վանից վանականի Մատենագրութիւնք», Վենետիկ, 1840, Ողբերգութիւն, բան կե, էջ 167։
158 Անդ, կԶ, էջ 171։

գուսանական սիրո երգերին, և սրանից օգտվել է մեր միստիկ բանաստեղծը։ Բայց էականն այստեղ այն է, որ այդ սիրո բռնակալությունը նույն կերպ ազնվացած է երկու դեպքում էլ. որովհետև ինչպես միստիկի համար Սեր աստուծու ծառայությունը սիրով՝ մի փրկություն է, բավական է, որ նա ողորմությամբ քաղցր աչքով նայե իրեն,—նույնպես և մեր այս սիրո երգչի համար նույնպիսի ծառայությունն ազատություն է.

Դու հուքմով փատիշահ ես քու եասիրով,
Եասիր կամ քո ծառայ՝ զինքն ազատես.
Ես ազատ եղեալ եմ այսօր յերկրի վրայ,
Թէ ծառայ սըրտի կամով զիս տեսանես։

Ինչպես որ միստիկը շարունակ ղբաղված է աստուծով և փափագում է տեսնել նրան, նույնպես և մեր այս երգչի հոգուն հարատև իշխում է սերը, և նա տենչում է իր սիրելիին մեծ կարոտով, ինչպես տեսանք վերևում բերված տների մեջ։ Միստիկի համար աստուծուց բաժանված վիճակը պատճառ է դառնում անվերջ ողբ ու լացի. այսպես և մեր այս երգիչը հառաչում և արտասվում է, որ իր սիրուհին հեռու է իրենից, ինչպես տեսանք վերևում, այլև հետևյալ տողերի մեջ.

Դու քանի հեռացեալ ես այս քո գերուս,
Արտասուքն ի վայր թափես ի յաչերուս։

Սիրելի կնոջ ներկայությունն ու տեսքը միայն արբեցնում է սիրահարին. և նա միայն մի խնդիր ունի.

Բուրաստանք ծաղկով ի լի տես թէ վառես.
Որ ի յիս անմահութեան հոտ կու բուրես.
Դու ծաղկանց ես թագաւոր վարդի գունով,
Զիս ի քո դիմացդ ի փուշն յէ՞ր կու դատես...
Ա՜յ սուրաթ պայծառ ու պատկեր լուսատես,
Զիմ աչերս ի քո սիրուտ յէ՞ր կու զատես.
Դու գարնան քամի, ես ծաղիկ ծարաւած,
Իմ ծարաւ սըրտիս համար հողմը հընչեց։

Միստիկ Գրիգոր Նարեկացու բոլոր ձգտումն է անվերջ սիրով անբաժանելի միանալ իր աստուծուն, նույնպես և մեր այս բանաստեղծն է փափագում անվախճան սիրով, անբաժան կերպով լինել իր սիրածի հետ, որ նրա համար մի տաճար, մի աստվածային տուն, մի սրբություն է միստիկի աստուծու հատկություններով՝

Թէ սիրտ ունիմ՝ սէր անվրճար,
Որ բաժնելոյ այլ չըկայ կար.
Նա իմ հոգոյս եղեր տաճար...

Այսպես մեր առաջին սիրո երգի վրա, ինչպես համեմատությունից կարելի է տեսնել, խիստ ազդել է մեր միստիկական բանաստեղծությունը, և այդ ազդեցությունը հարատևել է հետագա բանաստեղծների սիրո երգերի մեջ։ Նման ձևերն առաջացել են, հարկավ, մասամբ նաև երկուսի՝ Գրիգոր Նարեկացու և Կոստանդին Երզնկացու երգած նյութերի էության նմանությունից, մեկի համար հզոր սեր առ աստված, մյուսի համար նույնպիսի սեր դեպի իր տենչալին, և երկուսի համար ևս հոգետոչոր ձգտումն միանալու նրա հետ, որին սիրում է ինքը։ Միստիկի միացումն իր աստուծու հետ լինում է աղոթողի մահից հետո. այդպես չէ, հարկավ, մեր սիրերգուի համար. այդ կլինի միայն այն ժամանակ, երբ նա իր սիրածի հետ խնջույքի-ուրախության կնստի.

Ջնայ երբ ի խաղ տեսնում նազով,
Լուսին սուրաթ սիահ մազով,
Ես ի յիւր դէմ ելնեմ սազով,
Եւ թէ ծառայ լինիմ կամով։
Յայնժամ լինի այն մեզ նըշան,
Երբոր խըմեն չինի[159] շիշան,
Նրոան գունով[160] գդինին ռաւշան,
Որ քու տեսուտ նըմանեցաւ։

«Մէջլիս», «ժողով»— խնջույք, ուրախություն, գինի, նվագ ու երգ, պար ու խաղ անբաժան են սիրու երգերից,—դա հարսանիքն է,—ինչպես նույնը գտնում ենք նաև Կոստանդնի Վարդ ու սոխակի սիրավեպի վերջում։ Այդ ժամանակ է միայն տեսնում նա կատարյալ և անբաժան սերը։ Կոստանդին Երզնկացին, հարկավ, չի ունեցել այդ ուրախությունը. նա կուսակրոն վանական էր։ Բայց որ նա ունեցել է, ինչպես ասում են, իր «սրտի հատորը», որին և երգել է նա, այդ անկասկած է։ Նա անհույս սիրով սիրել է և երգել նրան,—անպայման ավելի մեծ թվով բանաստեղծությունների մեջ։ Անհույս սիրով մինչև կյանքի վերջը սիրել և երգել է իր հոչակավոր լաուրային նաև մեծանուն իտալացի բանաստեղծ Պետրարքան (1304—1374 թթ.), մեր Կոստանդնի կրտսեր ժամանակակիցը։ Բայց ո՛րքան տարբերություն այս երկուսի կյանքի մեջ։ Իտալացի քերթողը, որ կուսակրոն էր դարձել իր անհույս սիրո համար, մի փառապանծ երգիչ, ամենքից հարգված ու գովված հենց իր քնքուշ զգացմունքով լի բազմաթիվ շնորհալի երգերի համար, մի դափնեպսակ երգիչ, որի կյանքի մանրամասնությունները հայտնի են և որի գրական գործերը մնացել են։ Իսկ մեր Կոստանդնի կյանքի մասին գրեթե բան չգիտենք, բայց եթե այն, որ նա իտալացի բանաստեղծից առաջ արդեն շնորհալի կերպով երգել է սեր, և որ նա նույնպես դժբախտ է եղել, բայց ավելի ևս նաև

---

159 *Տպված է աղճատ ձևով «չլընի», ուղղում եմ «չինի» ըստ իմաստին։*

160 *Տպված է «գինուով», ուղղում եմ «գունով» ըստ իմաստին։*

իր սիրու երգերի համար, որոնք, ինչպես և նրա մյուս քերթվածները, մնացել են ոչ բոլորը։ Նրա կյանքն իր մեջ ներկայացնում է հայ ժողովրդի ընդհանուր կյանքի պատկերը։

14. Բանքեր անձնական վշտի, աշխարհիս ունայնության և մահվան մասին։— Կոստանդնի «յայտնի ձայնով» երգերը նրան ավելի ևս վիշտ են պատճառում, և նա իր գործով ու գաղափարներով մենակ է մնում իր շրջանի կեղծավոր մարդկանց մեջ, որոնք հարձակվում են նրա վրա, հիմար ու խելագար անվանում նրան։ Նա ոչ մի մխիթարություն, ոչ մի սիրելի մարդ չունի. սիրելիներն անգամ խորթանում են նրանից։ Նրա ԺԹ (էջ 147—149) քերթվածը,—«Բանք խօսիլ ի ժամ տրտմութեան, զոր գրեցի առ պա(հն վա)ս(ն) սուտ եղբարց, զոր վիրաւորեցայ»,—ամբողջապես դառն արտասուքով ողողված անձնական վշտի մի սրտաճմլիկ հեծեծանք է։ Սիրո կենսուրախ երգիչը մտերմական սեր էր որոնում մարդկանց մեջ, բայց չէր գտնում այն. նրա կյանքը «չունէր դիւրութիւն», քանի գնում ծանրանում էր. նա չէր վայելում հանգիստ և ուրախություն, շարունակ վիշտ ու նեղության մեջ էր։ Եվ նա խորտակվում է, ընկնում հուսահատության մեջ, մանավանդ, որ վերջ չէր տեսնում իր տանջանքներին։

Ես քանի՞ հառաչ բերեմ
կամ ի սըրտէ կենամ ազար,
Եւ յերակ զօրն ի դուսայ
հոգօք մաշեմ զիս անդադար.
Ես չունիմ հանգըստութիւն,
'ւ ուրախութեան ինձ չըկայ ճար,
Որ պահ մի հանգիստ առնում,
կամ դուրանայ կեանքըս դըժար։
Ջերդ ի ծով կամ տատանել,
յերակ ծըփիմ յալիս խաւար,
Եւ չըկայ եզր ի ծովիս,
կամ թէ ճամբուս թէզ կայ վըճար.
Ոչ ունիմ ես օգնական,
յոյս 'ւ ապաւէն ինձ կամ եար,
Որ ի յայս շատ ցընորէս
լինէր խօսօք ինձ մըխիթար։
Ոչ ունիմ մարդ սիրելի
ի (յընտանեաց) ինձ կամ օտար,
Որ գըթայ սըրտովն ի յիս,
կամ աղետայ զիս իր եղբայր.
Ով սըրտով էր սիրելի՝
եղաւ հեռի յիսնէ 'ւ օտար.

Նա՛ օտարին ի՞նչ մեղ դընեմ,
երբոր լինիմ յիրմէն ազար։

Այլևս ուրիշ մխիթարություն չէր մնում կյանքի ու բնության սիրով վառված հրճվալից երգչին, բայց եթե սթափվել իր արբեցությունից և տեսնել, որ «այս սուտ կենցաղս», այս «երազ» կյանքը չարժեր, որ մարդ դրա համար մտածուի լիներ. մանավանդ որ գողի պես գալիս է ամենազոր և ամենասպան մահը, որ ոչ մի բանի մտիկ չի տալիս, գալիս հանկարծ որսում է ամեն մարդու և գերեվարում։ Բանաստեղծն այսպիսով դիմում է աշխարհի ունայնության ու մահվան ցավագար երգին՝ անձնական վշտերի մխիթարություն գտնելով դրա մեջ, քանի որ մահն է վախճան ամեն անհատական տանջալից կյանքի։ Աշխարհն ունայն է ոչ այն պատճառով միայն, որ մահ կա, այլև որ չկա ոչ մի բարություն ու շահ, չկա սիրելի և անկեղծ ընկեր, չկա իսկական վայելչություն, չկա կենդանի ոգի, նույնիսկ «մարդ» չկա.

Այս կեանքս է ունայն և ժառանկ ենք մահու,
Ջունի՛ մեզ դըրունք բարութեան և շահու.
Երազ է խաբող և խայալ[161] անցաւոր,
է սո՛ւտ սիրելի և ընկեր նենգաւոր։
Ցուցնէ՛ մեզ սիրո՛ւ դուռն ու տա՛յ շատ նիշան,
Բայց է՛ ի ծածուկ գազանի՛ պէս ու շան.
Նըստեալ է սաղի[162] սայ ի մեծ ջամիաթ[163],
Հանել զի ոչինչ սուտ բաներն ի դիմաթ[164]։
Զգինին որ բաժնէ՝ կայ ի ներս մահու դեղ,
Ոմանք որ խըմեն՝ արբենան ցեղ ու ցեղ.
Հոդւով են մեռած ու թուին կենդանի,
Ով որ ենք խըմել յայն գինուն շիշանի...

Եվ Կոստանդինն իր ԺԴ (էջ 128—132) քերթվածի մեջ մեծ ուժով և տխրությամբ, բայց հանգիստ երգում է աշխարհի ունայնությունն ու մահվան գործած ավերածությունները։ Նա չի վրդովվում, զի կյանքը նրա համար արդեն անարժեք էր։ Մահը նրան ցավ կպատճառեր, եթե նա մահով զրկվելու լիներ այն գեղեցիկ կյանքից, որ նա երազել էր լույսի շողյունից և սիրո հրայրքից կերտված։ Նա ամեն բանի մեջ ամենաստիր սեր էր տեսել, և իր համար սեր էր որոնել կյանքում, բայց փոխարենն ատելություն էր գտել.

Ջայս ի յո՞վ հարցուկ լինիմ,
որ ինձ խըրատ տար կամ կար,

---

161 *Խայալ—առաչոք երևույթ։*
162 *Սաղի—մատուռակ։*
163 *Ջամիաթ—խնջույք։*
164 *Ղիմաթ—գին, արժեք։*

Թէ զիս է՞ր աշխարհս ամէն
Հանց կու առեն թըշնամաբար.
Զով սիրով ես ընդունիմ,
Թէ ի սըրտէ ինձ տայ խապար,
Նայ յետև ինք յերեսաց
ցուցնէ զիր սէրն ու անկատար։

ԺԲ, էջ 148

Եվ մի անգամ որ կյանքի մեջ չկա սեր, հետևաբար չկա և գեղեցկություն («Զի ով որ սէր չունենայ՝ առ ինք չկայ գեղեցկութիւն»), ապա թեկուզ ոչնչանա այն—անսեր, պաղ կյանքը։ Ահա թե ինչից էր ծագում նրա հանգստությունը մահվան և ունայնության մասին երգելիս.

Ես սիրո՛վ կամ կենդանի.
Ե՛ւ եմ զարդարել զիմ տերևնին.
Ու թէ սէրն յիսնէ զատի,
Նա՛յ զիս տանի հողմ ու քամին։

ԺԱ, էջ 116

Հավանորեն մեր այս սիրելի բանաստեղծն է 14-րդ դարի առաջին քառորդին՝ 1304 և 1314 թվականների ձեռագիրների մեջ հիշատակված Կոստանդինը, Երզնկայի վանքերում «միաբան եղբայր», կամ «հոգևոր հայր», ապա նույնինքը նաև «միայնակեաց»[165]։ Նա է, որ իր հուսախաբ կյանքի վերջին տարիներն անց է կացրել մի սառն ու մռայլ խուցի կամ քարայրի մենավորության մեջ տխուր ու տրտում, և անշուշտ այնտեղ էլ աչքերը հավիտյան խփել, երազելով վառ գարուն, լույս, սեր։

15. Գուսանական երգերի ձևական ազդեցությունը։ *— Հասարակական և ընդհանրապես աշխարհական կյանքի ազդեցությունը մեր հին կուլտուրական կենտրոնների—վանքերի վրա՝ քանի գնում զորանում էր։ Վանականներից շատերը, ինչպես տեսել ենք, 12-րդ դարի երկրորդ կեսին արդեն իսկապես անունով միայն կրոնավորներ են եղել, իսկ իրենց նիստ ու կացով, ապրուստով և հասկացություններով շատ էլ չեն տարբերվել աշխարհականներից։ Այդպիսիների բերանից կրոնական երգերի հետ անբաժան են եղել նաև գուսանական սիրո տաղերը, բայց իրենք ըստ երևույթին տակավին խոտելի են համարել այնպիսի բուն աշխարհական բանների հորինումը։ Միայն Կոստանդինն աշխարհիկ ոգուց զրկված՝ վերջիվերջո գուսանների սիրած նյութն էլ բանեցրել է ի «գայթագղություն» «սուտ եղբայրների», որոնք նույնպես ընդունում էին մարմնի իրավունքը, բայց կեղծավորում էին։ Մինչ այդ՝ գուսանական ուրախության և սիրո երգերի ազդեցությունը վանականների բանաստեղծության վրա՝ եղել*

---

165 *«(Յիշեսջիք) ընդ նմին (Գրիգորիսի) և զհոգևոր հայրն իւր զԿոստանդին միայնակեաց, որ բազում առաքինութեամբ զարդարեալ է»։* Մ. Պոտուրյան, *Կոստանդին Երզնկացի, Վենետիկ, 1905, էջ 13 և հետ.։*

է ավելի ձևական կողմից՝ ոտանավորի չափերով և որոշ թվով մոտիվների ու պատկերների հետևողությամբ, ինչ որ տեսնում ենք արդեն Գրիգոր Նարեկացու տաղերի մեջ և, ոտանավորի նկատմամբ, նաև Ներսես Շնորհալու երկերի մեջ։ Կոստանդին Երզնկացին էլ բնականորեն այդպես է վարվել նախքան սիրո երգեր գրելը։

Զարմանալի է, որ նրա բանաստեղծություններից ոչ մեկը հայրենի չափով չի, որ այնպես հաճախ կիրառել են Հովհաննես Երզնկացին ու մանավանդ Ֆրիկը։ Նրա սիրած չափն է մեծատող քառանդամ յամբական ոտանավորը, որի սկզբում դնում է սովորաբար եռավանկ, նույնիսկ երկավանկ անդամ[166]։ Սիրո բանքերից մեկը 11-վանկանի է՝ 3+4+4 անդամներով, և մի երեք բանաստեղծության մեջ էլ բանեցրել է նա երկանդամ յամբական ոտանավորը։ Հորինում է շատ ռիթմիկ, ընդհանրապես ճիշտ պահելով ռիթմական շեշտերը, ինչպես վարվել են սովորաբար մեր հին բանաստեղծները։

Գալով հանգերին՝ պետք է ասել, որ Կոստանդինը մի քանի բանքի քառատող տների առաջին երեք տողերը կազմում է միանման հանգերով, իսկ չորրորդ տողը վերջացնում տարբեր հանգով, որ կրկնում է հաջորդ տների չորրորդ տողերի վերջում (aaab cccb dddb և այլն)։ Մի բանքի (քերթ. ԺԶ) առաջին տան չորս տողն էլ ունին նույն հանգը, որ կրկնվում է մյուս տների չորրորդ տողերի վերջում։ Գուսանական երգերի նմանողությամբ են արված հանգերի այսպիսի կիրառություններն և՛ս, ինչ որ գտնում ենք նաև 18—19-րդ դարի աշուղական երգերի մեջ ևս։

16. Պարսկական բանաստեղծության ձևական ազդեցությունը և չափածո բանաստեղծության կատարումը։—Թեև կրոնական հանգամանքների հետևանքով միայն ձևական կողմից էին նմանում մեր գուսաններին, ապա այլազգիների բանաստեղծությունների բովանդակությունից խուսափում էին նաև քաղաքական տեսակետով։ Սակայն մինչև այժմ դեռ չի պարզվել հայկական և իրանական գեղեցիկ գրականությունների հարաբերությունն ըստ ձևի և ըստ բովանդակության մեր վերածնության շրջանի առաջին երեք և ոչ հաջորդ դարերի ընթացքում։ Բայց այդ չի նշանակում, թե մեր քերթողներն անծանոթ են մնացել պարսկական երգերին։ Ապրելով իբրև հարևաններ և միևնույն տերության մեջ, հայերը հնագույն ժամանակներից արդեն յուրացրել էին իրանական վիպական բանահյուսության շատ հատվածներ, իսկ Կոստանդին Երզնկացու ժամանակներում իրանական շրջիկ գուսանները մուտք էին գործում և Հայաստան։ Մեր այս բանաստեղծն իր ԺԴ (էջ 128 և հտն. «Բանք յաղագս անցաւոր մեծութեան...») քերթվածի վերնագրից հետո գրել է հետևյալ ծանոթությունը. «Այր մին [նստ]էլ կայր ու Շահնամայ ասէր ձայնով. նայ եղբայրք խնդրեցին, թէ ի Շահնամայի ձայն մեզ ոտանաւոր ասայ. ես շիննցի զբանքս դայս. ի Շահնամայի ձայն կարդացէք»։

---

166 **Մ. Աբեղյան**, *Հայոց լեզվի տաղաչափություն*, էջ 241 և հտն.։

Այս հետաքրքիր ծանոթությունից իմանում ենք, որ իրանական աշխարհիկ բանաստեղծությունը 13—14-րդ դարերում թափանցած է եղել անգամ մեր վանքերը, և «եղբայրները», այսինքն Կոստանդնի կրոնակից վանականները սիրով լսելիս են եղել Շահնամա և նույնիսկ ցանկացել են դրա «ձայնով» ոտանավոր լսել հայերեն։ Շահնաման, հարկավ, միայն երզնկայի վանքերում չի ասվել, և ավելի ևս սիրով մեր աշխարհականներն են այն դարերում լսել պարսից այդ մեծ դիցազներգությունից։ Պետք է կարծել, որ Հայաստանում Շահնաման «ձայնով ասել են» պարսկերեն լեզվով։ Այս մեծ քերթվածից հայերեն հին թարգմանություն, այն էլ ոտանավորով, հայտնի չէ. հատվածները անշուշտ կպատմեին հայերեն, ինչպես դեռևս մեր օրերում էլ պատմում են հայերեն[167]։ Կոստանդնի հաղորդածը՝ «ասել ձայնով», «ի ձայն կարդալ»՝ վերաբերում է ոտանավորին, քանի որ նրանից խնդրում են հորինել ոտանավոր «ի Շահնամայի ձայն», այսինքն այնպիսի չափով, որ կարելի լինի Շահնամայի պես առոգանել։ Եվ նա հարմարում է մի քերթված 11-վանկանի տողերով, ինչպես Շահնաման է, անապեստյան ոտքերով, սկզբից ունենալով մի յամբ։ Այսպիսի մի չափը, որ գործադրել է նաև Գրիգոր Նարեկացին, շատ հեռու է Շահնամայի չափից, բայց կարելի է «ձայնով ասել», «ի ձայն կարդալ» ինչպես Շահնաման։ Կոստանդնի քերթվածի բովանդակությունն է աշխարհի ունայնությունը և ոչ թե աշխարհիկ վիպական նյութ։ Ուրեմն պարսկական մեծ դիցազներգության նմանողությունը եղել է լոկ ըստ ձևի։

Տե՛ս Չորրորդ հավելված՝ «Շահնամայի ձևական ազդեցությունը»։

17. Վերածնության գրականության առաջին էտապը *տևում է մոտ երեք հարյուր տարի, 11-րդ դարի առաջին տասնամյակներից մինչև 14-րդ դարի առաջին քառորդը, մինչև Կոստանդին Երզնկացին։ Այնուհետև մոտ 75 տարի գրականությունը հայտնի չէ մեզ մինչև Առաքել Սյունեցի և Բաղիշեցի—եկեղեցական բանաստեղծությունը։ Թեև մի հետադարձ հայացք ձգենք այս երկար ժամանակաշրջանի գրականության ընթացքի վրա, կտեսնենք, որ, չնայելով հայերի անբարեհաջող քաղաքական վիճակին, մի իսկական ինքնուրույն վերածնությամբ աշխարհիկ միտքը թափանցում է հայ եկեղեցականի գրականության մեջ։ Մեր բանաստեղծությունը՝ Գրիգոր Նարեկացու Ողբերգությունից ի վեր՝ ձեռք է բերում նոր գրական տեսակներ և բազմաթիվ նոր թեմաներ—կրոնական միստիկական զգացումն ու մտածությունը, հայրենասիրություն, բնության սեր ու երգ աշխարհի ունայնության ու մահվան գաղափարը, անձնական հանգամանքներ, բուն ժողովրդական աշխատավոր դասի իրական կյանքն ու աշխարհայացքը, սոցիալական խնդիրներ, ժողովրդի զանազան դասերի հարաբերություն ու դասակարգային պայքար, դժգոհություն եղած դրու-*

---

167 Ֆիրդուսի, *Բանաստեղծի ծննդյան հազարամյակին նվիրված ժողովածու*, Երևան, *1934*, էջ *157—222*. «Ռոստոմ Զալ», հայ-իրանական վեպ, գրի առավ Արտաշես Բարսեղյանս

թյունից, աշխատավորի բողոքը սոցիալական անհավասարության դեմ, երգիծանք վատ կարգերի, ազգային քաղաքական ձգտումներ, կրոնական երկբայություն, ազատախոհություն և այլն։ Ահա մի նոր աշխարհայեցություն, կրոնական կաշկանդումից ազատություն, որ հետզհետե, թեպետ դանդաղ և ընդհատումներով, արտահայտված ենք գտնում մեր գրականության մեջ։

Որ մեր բանաստեղծությունն այսպես շուտ, եվրոպականից շատ վաղ է թոթափել միջնադարյան ոգին, դրա պատճառը պետք է տեսնել անշուշտ ոչ միայն ցեղի ընդունակ բնավորության ու նրա այն մեծ շարժման մեջ, որ, ինչպես տեսել ենք, ունեցել է 10-րդ դարում, այլև իր հայրենիքի դրության մեջ։ Բացի արևմտյան քրիստոնյա ազգերից, հայերը շփվում էին նաև արևելյանների հետ՝ պարսիկների և արաբների։ Թեպետ իրանական և հայկական բանաստեղծությունների հարաբերությունը և առանձնապես իրանականի ազդեցությունը մերի վրա ըստ ձևի և ըստ բովանդակության, ինչպես վերևում ասվեց, դեռ չի ուսումնասիրված, բայց արդեն պարզ է, որ մեծ է եղել արևելյան ժողովուրդների կուլտուրական ազդեցությունը հայկական քաղաքային և ընդհանրապես հասարակական կյանքի վրա, հետևաբար անպայման նաև գրականության վրա։ Այս ներքին և արտաքին հանգամանքների շնորհիվ ահա մեր բանաստեղծության մեջ լինում է մի կատարյալ հեղաշրջում, որ ընկնում է Պրովանսի մոտավորապես նույնպիսի բանաստեղծության հետ միաժամանակ, հարկավ, Պրովանսից անկախ, քանի որ մեր բանաստեղծությունն իր նախապատրաստությունը կյանքի մեջ ունենում է 10—11-րդ դարերում, երբ ֆրանկների հետ հարաբերություն չունեին հայերը։ Հաջորդ 12-րդ դարի վերջում և 13-րդի սկզբում միայն, այն էլ Արևելքում ունեցած շփումով, նոր դեռ մտավոր շարժում էր սկսում առաջ գալ Իտալիայում և Ֆրանսիայում, ուրեմն՝ մերինից բավական ուշ։ Բացի այդ՝ մեր բանաստեղծության զարգացման ընթացքը տարբեր է լինում եվրոպականից։ Առնենք ֆրանսիականը և սիրո քերթվածները։

Պրովանսի բանաստեղծությունն ընկնում է։ Այնտեղ, ինչպես և Հյուսիսային Ֆրանսիայում, բանաստեղծները պարապում են արվեստակյալ շինծու ձևերով. միշտ միևնույն ընդհանուր գաղափարներով, կնոջ պաշտամունքի ու գեղեցկության մի գովքով միայն, այն էլ քարացած, ավանդական դարձած ու դժվար հասկանալի խրթին արտահայտություններով և ոտանավորի բարդ, խճճված տեսակներով։ Չկա անհատական զգացում, չկա բնության սեր. ավելի ու ավելի լոկ դատողության մի բանաստեղծություն, մտավոր վարժությամբ հորինված։ 14-րդ դարի առաջին քառորդից,—ուրեմն մեր Կոստանդին Երզնկացու ժամանակից,—նույնիսկ կանոն է դրվում, թե սերը չպետք է սովորական ձևով երգել, այլ միայն այլաբանությամբ, և թե կանանցից միայն Ս. Կույսին և մյուս սրբուհիներին կարելի է երգել։ «Նրանց գոված կինը միայն կնոջ գաղափարն է, նրանց տարփանքը՝ միայն տարփանքի գաղափարը. ամեն ինչ

նրանց կլխով անցնում է իբրև վերացական շինվածք և ոչ նրանց սրտով իբրև կենդանի հույզ»[168]։ Ահա թե ինչպես են բնորոշում Պրովանսի և ֆրանսիական սիրո բանաստեղծությունը 14 և 15-րդ դարերում։

Մեր սիրո երգը,— այս ենք առնում միայն,—բոլորովին ուրույն և ավելի հաջող ընթացք է ունենում։ 10—11-րդ դարերում արդեն լինում է Աստվածածնի կրոնական գովքը գուսանական սիրերգի մոտիվներով. ապա վարդ ու սոխակի պատկերով փառաբանվում է սիրաբորբոք տարփանքը. 13-րդ դարի վերջում կամ 14-րդի սկզբներում այդ երգն ազատվում է այլաբանությունից, և եթե հետագայում ևս Աստվածածնի անունով են սիրերգում կամ վարդ ու սոխակի պատկերով կամ այլաբանությամբ ևս գրում են, այդ ոչ թե նրա համար, որ թույլատրված չէր բացահայտ երգել սեր, այլ որ այլաբանական ձևը դյուր էր գալիս կրոնավորներին, իսկ եթե Աստվածածնի անունով են սիրերգում, այդ այնպիսի վճիտ աշխարհիկ երգ էր լինում, որ բանաստեղծները հայտնում էին, թե կուզեք՝ աշխարհիկ սեր հասկացեք։ Մյուս կողմից՝ բանաստեղծությունը 12-րդ դարից սկսած ձգտում է ազատվել կաշկանդանքից, խրթնաբանություններից ու «ծածուկ ճառերից», և Դանտեից մի դար առաջ արդեն մեզնում կարիք է զգացվում կենդանի խոսակցական լեզվով գրելու։ Բայց որ գլխավորն է՝ ինչքան էլ շատ միակերպություն կա մեր սիրո երգի մեջ ևս, բայց և այնպես 15—16-րդ դարերում մեր այդ երգը, ինչպես առհասարակ տաղասացությունը, ոչ միայն չի ընկնում, այլ, ընդհակառակն, ավելի զարգանում, ուռճանում է և ստեղծվում են շատ ընտիր ու փայլուն բանաստեղծություններ։ Առաջ են գալիս վիպական քերթվածներ՝ կրոնական ու այլ բովանդակությամբ, ինչպես նաև սիրավեպ առանց որևէ այլաբանության, նովելլաներ և այլն։ Սրանց կողքին, շատ վաղ դարերից ի վեր, մինչև վերջը միշտ գոյություն է ունեցել գուսանական բերանացի երգը, սիրո և ուրախության տաղը, բոլորովին զերծ որևէ կրոնական կաշկանդանքից և այլաբանությունից։ Բարեբախտաբար գրի առնված մնացել են գուսանական «հայրեննները», որոնք մեր քնարերգության գոհար վարդերն են։ Սրանց մասին էլ կտեսնենք այս դործի շարունակության մեջ։

Բայց նախքան այդ մի հայացք ձգենք մեր եկեղեցական գրականության վրա։

---

[168] Histoire de la Littérature française par Gustave Lanson, Paris 1895, էջ 84 և հետ.։

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԱԼՈՒՅՍՆ ԵՎ ԱՐԵՎՄՈՒՏԸ

ՃԻԳԵՐ ԱՆԿՄԱՆ ԱՌԱՋՆ ԱՌՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1. Ավերմունքների դարեր:—*Մենք թեւակոխում ենք այժմ մի պատմական ընդարձակ շրջան, որ կամ անծանոթ է, կամ սակավ ծանոթ, զի մեր պատմաբանները խուսափել են ընդհուպ մոտենալու մեր ժողովրդի այս հինգհարյուրամյա պատմությանը 14-րդ դարի առաջին տասնամյակից մինչև 19-րդ դարի սկիզբները։ Կարծես մի մեծ մոայլ ու ալեկոծ տարածություն են կազմում այդ դարերը, որոնք, չնայելով իրենց փոքր հանգրվաններին՝ աղետալի հետևանքներ են ունեցել մեր ժողովրդի համար, ավելի ևս չարաչար, քան արաբական, սելջուկյան և թաթարական բռնատիրությունները։ Այստեղ կարող ենք և կարևոր է միայն ընդհանուր կերպով գծել մեր երկրի ու ժողովրդի չարաբաստիկ վիճակն այս մեծ շրջանի առաջին դարերում։*

Ամենից առաջ աչքի է ընկնում իշխող տոհմերի և իշխողների հարափոփոխ դրությունը, որին ընկերակից էին հարատև պատերազմները, ուստի և երկրի հարատև ավերումն ու ժողովրդի ավելի ևս կեղեքումներն ու քայքայումը։ Թաթարներն ընդունում են մահմեդականություն, և ընդհանրապես այլևս բարեհաճ չէին դեպի քրիստոնյա հայերը։ Մոլեռանդների կողմից տեղի էին ունենում սաստիկ ճնշումներ։ Շուտով, 14-րդ դարի երկրորդ տասնամյակից, Պարսկաստանի մոնղոլական հարստությունը, որ տիրում էր նաև Հայաստանին, թուլանալով խաղալիք է դառնում զորավոր կառավարիչների ձեռին և վերջապես ընկնում է (1344 թ.)։ Առաջ են գալիս մի շարք ինքնագլուխ խաներ զանազան կողմերում. Հայաստանը մնում է Ատրպատականի իշխողների ձեռին։ Խաները կարճատև տիրակալությամբ հաջորդում են միմյանց և իրար հետ կռվելով ավերում են երկիրը մինչև մեծ ավերիչ Լանկթամուրը։

Այդ ժամանակներում բարեհաջող վիճակի մեջ չէր նաև Կիլիկիայի հայկական թագավորությունը։ Դադարել էր հայերի դաշինքը թաթարների հետ. երկրում մեծանում էին երկպառակությունները. կաթողիկոսները

հաճախ զիջումներ էին անում կաթոլիկ եկեղեցուն, ինչ որ խռովություններ էր առաջ բերում։ Դրսից անընդհատ հարձակվում էին շրջակա մահմեդականները մասամբ այն պատճառով, որ հայերը չէին կտրվում արևմտյան տերություններից, թեև ոչ մի շահ չունեին նրանցից և չէին կարողանում մի ընդհանուր լեզու գտնել գոնե Եգիպտոսի տերության հետ, որի ձեռով և վերջիվերջո 1375 թ. ընկավ այն կողմերի հայկական անկախ թագավորությունը։

Նույն տարիներում Հայաստանին տիրում են երկու թուրքմեն հարըստություններ—Ղարաղոյունլի, որ է Սև խոյի (1378—1469 թթ.), կենտրոնը Թավրիզում, և Աղղոյունլի, այսինքն Սպիտակ խոյի հարստություն (1378—1502 թթ.), կենտրոնը Ամիդ (Դիարբեքիր) քաղաքը։ Միաժամանակ և Չինգիզ խանի սերունդներից (կանանց կողմից) Լանկթամուրը 1380 թ. սկսում է Ջաղաթայի խանությունից (Տրանսոկսիանում—Բուխարայում Սիր-Դարյա գետից հյուսիս, արդի Ուզբեկստան երկրում) իր արշավանքները Պարսկաստանի վրա, ավերում է նաև Ատրպատականն ու Հայաստանը։ Նրա բանակները 1387—1402 թթ. մի քանի անգամ հեղեղում են Հայաստանը և քարուքանդ անում Արցախ, Սյունիք, Ծրնջակ, Կարբի, Բջնի, Գառնի, Կողբ, Սուրմարի, Կոգովիտ, Արճեշ, Կարս, Վան, Մալաթիա և այլն. մտնում են նաև Կիլիկիա, 1400 թ. անցնում են Անատոլիա։ Այստեղ Իկոնիայի (Հռոմի) սուլթանությունը 1294 թ. կործանված էր թաթարների ձեռով, և կազմված էին մի շարք իրարուց անկախ իշխանություններ. 1299 թ. մի թուրք ցեղապետ՝ Օսման անունով՝ իրեն հռչակել էր սուլթան և հետզհետե զորանալով ընդարձակել էր իր տերության երկիրը։ Կազմվել էր տաճիկների օսմանյան տերությունը։ Լանկթամուրը 1402 թ. ջարդում է օսմանյան թուրքերին ևս Անկյուրիայի մոտ, և վերջապես կաղմվում է նրա հսկայական մեծության տերությունը՝ կենտրոն ունենալով Սմրղանդ մայրաքաղաքը։

Լանկթամուրի մահից (1405 թ.) հետո մեծ խռովություն է սկսվում նրա ժառանգի և նվաճված տերությունների միջև. օսմանցիներն ու թուրքմենները վերականգնում են իրենց իշխանությունները։ Ղարաղոյունլիների ցեղապետը՝ Ղարա Յուսուֆ՝ պատերազմում է Լանկթամուրի որդի Շահրուհի դեմ (1405—1447 թթ.). ապա նույն պատերազմը շարունակում է Ղարա Յուսուֆի որդի Իսքանդարը (1420—1437 թթ.), մինչև որ դառնում է տեր Ատրպատականի և Հայաստանի մեծ մասին՝ կենտրոն ունենալով Թավրիզ քաղաքը։ Իսքանդարից ապստամբում է իր եղբայր Ջհանշահը (1437—1567 թթ.), և իշխում է նաև Հայաստանի մեծ մասի վրա (Այրարատ, Սյունիք, Վասպուրական և ուրիշ կողմեր)։ Մի առժամանակ համեմատաբար խաղաղում է երկիրը. Ջհանշահի որդին իբրև ընդհանուր կուսակալ Հայաստանի և այլ երկրների՝ նստում էր Նախիջևանում իր ձեռի տակ ունենալով կառավարիչ բեգեր Երևանում, Վանում, Տփղիսում և ուրիշ տեղերում։ Բայց շուտով սկսվում են պատերազմներ Աղղոյունլիների և Ղարաղոյունլիների միջև, հաղթում են Աղղոյունլիները

1469 թ. և սիրում են նաև Ատրպատականին և ամբողջ Հայաստանին ծանր լծով։ Նրանց իշխանությունը, սակայն, երկար չի տևում։

Սեֆյան տոհմից Շահ Իսմայիլը (1502—1520 թթ.) Շարուրում ջարդում է թուրքմեններին, նվաճում է ամբողջ Պարսկաստանը, մայրաքաղաք դարձնում և Թավրիզը։ Իշխում է Սեֆյան հարստությունը (1502—1736 թթ.)։ Այս նոր պարսկական տերությունն արևմուտքից սահմանակից է դառնում օսմանյան տերության հետ. սկսվում է դարավոր պատերազմ օսմանցիների ու պարսիկների միջև. Շահ Իսմայիլի օրով հենց օսմանյան տերությանը կցվում են Հայաստանից Կարնո, Կամախի և Մշու գավառները։ Բայց երկարատև պատերազմի ընթացքում Հայաստանի դանազան մասերը հաճախ մեկից մյուսին են անցնում մինչև Շահ Աբաս Թագավորը (1587—1628 թթ.) և հետո։ Երբեմն էլ օսմանցիները տիրում են և ամբողջ Հայաստանին, բայց արևելյան Հայաստանն ընդհանրապես մնում է պարսկական իշխանության ներքո։

Այսպես՝ այս երկու հարյուր և ավելի տարիների ընթացքում Հայաստանում իշխել են զանազան տոհմեր՝ մոնղոլ ու թուրքմեն, թուրք ու պարսիկ—բոլորը մահմեդական, թշնամի միմյանց և ավելի ևս հայերին։ Պատերազմները գրեթե անընդհատ էին. նույն տոհմի իշխողներն անգամ հաճախ միմյանց դեմ էին ելնում, և Հայաստանը շարունակ դառնում էր պատերազմների ասպարեզ։ Մահմեդականները, որ վայրագ անգթությամբ կոտորում էին միմյանց ևս, ավելի ևս մեծ դաժանությամբ էին վերաբերում դեպի քրիստոնյա հայերը, որոնց իրենց թշնամիներն էին համարում կռվող կողմերը։ Ուստի սուր ու կոտորած, ավար ու ավեր միշտ կախված են եղել անպաշտպան հայ ժողովրդի գլխին։ Ոչ միայն լանկթամուրը, այլև ուրիշները մասսայական կոտորածներով բնաջնջում էին ժողովրդին, գերեվարում, մի տեղից մյուս տեղը քշում։ Բնակիչներն իրենք էլ գլխակորույս դուրս էին գալիս իրենց բնիկ երկրից, գնում Փոքր Ասիա, Կ. Պոլիս, Բալկաններ և այլն ավելի մեծ բազմություններով, քան սելջուկյան և թաթարական արշավանքների օրով։ Ավելի սոսկալի է լինում դրությունը, երբ հին պատերազմող բռնակալների սովորությամբ հրամայում են ժողովրդին գաղթել երկրից դուրս, իրենց ետևում այրելով, ավերելով ամենայն ինչ, որպեսզի հետապնդող թշնամին միայն ամայի երկիր գտնի։ Քանդվում են քաղաքները. գետնի տակն են մտնում Դվինի, Անիի նման վաճառաշահ կենտրոնները. ոչնչանում է արդյունագործությունը, գրեթե դադարում առևտուրը։ Պակասում է հողագործությունը. մշակված, բերրի դաշտերը խոպանանում և ամայի դառնում։ Ջորանում, արմատախիլ են լինում այգիներն ու պարտեզները։ Փոքրանում է երկրագործ հայ ժողովրդի թիվը. նրա տեղը հետզհետե բռնում են վաչկատուն թաթարներ, քոչվոր թուրք ու քուրդ ցեղեր, որոնք երկար ժամանակ դեռ չեն դառնում նստակյաց և քոչվորությամբ ավերում են շեն ու մշակված հողերը, հաճախ հափշտակում անպաշտպան քրիստոնյա ժողովրդի ձեռից այգիներն ու տները։ Կրկնվում են համատարած սո-

վերը։ Մյուս կողմից՝ սովալլուկ ու մերկ ժողովուրդը տառապում է կողոպտիչների և հարկահան կոչված հարստահարիչների ձեռին։ Օսմանյան երկրում ժողովրդի համար մի պատուհաս է դառնում նաև «մանկաժողով» ասածը։ Այս ամենի հետ շարունակվում են կրոնական հալածանքները և՛ մոլեռանդ կառավարիչների, և՛ ֆանատիկ մահմեդական ամբոխի կողմից. փակում կամ քանդում են եկեղեցիները, ստիպում են մահմեդական դառնալ, և թշվառ ժողովուրդը հաճախ բռնի հավատափոխ է դառնում. տեղի են ունենում նաև բազմաթիվ նահատակություններ կրոնի համար։

Այսպես ահա հայ երկիրն ապրում է մի գրեթե անընդհատ փոթորկահույզ վիճակ և վերջիվերջո մի սոսկալի անկում, տնտեսական ու կուլտուրական։ Հայաստանի պատկերն անգամ փոփոխվում է թե՛ ազգագրորեն, ըստ բնակչության ցեղերի, և թե՛ նույնիսկ ըստ աշխարհագրական անունների, իսկ ժողովուրդը հետադիմում է ըստ ամենայնի։ Այսպիսի դրությունն առաջ է եկել հետզհետե, աստիճանաբար, և մեր պատմաբանները պետք է դեռ նոր պարզաբանեն այս աստիճանական անկումը բոլոր մանրամասնություններով։ Դեռ նոր պետք է հայտնաբերվեն ի միջի այլ բաների նաև հայկական կուլտուրայի նեցուկ հայ ազնվականության աստիճանական ոչնչացումը կամ աննշան դրության վերածվելը, ինչպես, օրինակ, Սյունյաց մեծ իշխանության Օրբելյան տոհմի, որ սպառվել է 1438 թվականին։ Ավելի ևս կարևոր է իմանալ մեր **կուլտուրայի**—լուսավորության ակութների—վանքերի վիճակը և՛ նյութական, և՛ կուլտուրական կողմից 14—17-րդ դարերում և հետագայում։

2. Ունիթորական գրականություն և լատինաբան աղճատ հայերեն։ —Այս ավերմունքների մեծ շրջանի առաջին դարում հայոց վանքերը բնականաբար դեռ բոլորովին ընկած չէին։ Նրանք էին, որ դեռ շարունակ հակազդում էին Կիլիկիայի իշխանների և բարձր հոգևորականության ձգտումին՝ քաղաքական նպատակով կրոնական զիջումներ անելու կաթոլիկ եկեղեցուն։ Հռոմն արևելյան հայ վանականների դիմադրությունը խորտակելու համար մի նոր միջոցի է դիմում. նա պարսկական մոնղոլ հարստության թուլացման սկիզբներում հենց՝ 1319 թ. քարոզիչներ է ուղարկում Արևելք։ Հիմնում են Մարաղայի լատին եպիսկոպոսությունը՝ կենտրոն ունենալով մայրաքաղաքը՝ Սուլտանիա։ Հայ վարդապետները սկզբում հետաքրքրվում են լատին եպիսկոպոս Բարթողիմեոսի (մեռ. 1333 թ.) ոչ թե կրոնական քարոզներով, որոնցով նա հռչակված էր այն կողմերում, այլ նրա բնագիտական հմտություններով։ Այդ ժամանակ դեռ ծաղկած դրության մեջ էր Վայոց գավառում Գայլեձորի (Գլաձորի) վանքը, որի մասին խոսվել է վերևում. նրա վանահայր Եսայի Նչեցին, որ իր աշակերտների մեջ զարթեցրել էր գիտության սեր, թույլ է տալիս նրանցից մեկին՝ Հովհան Քռնեցուն 1328 թ. գնալ հիշված լատին եպիսկոպոսի մոտ՝ նրա նոր գիտությունը լսելու և լատիներեն սովորելու։

Քոնեցին հրապուրվում է կաթոլիկ քարոզչից ու «լատին աստվածաբանութեան արուեստակեալ ձևերից», հարում է կաթոլիկ եկեղեցուն և մի քանի ընկերներով 1330 թ. հաստատվելով Երնջակի Ապրակունիս կամ Ապարաններ վանքում՝ սկսում են քարոզել միացում կաթոլիկ եկեղեցու հետ։ Նրանք ունենում են հետզհետե ավելի ու ավելի հետևողներ Նախիջևանի և Ճահուկի գավառներում. ստեղծվում է կաթոլիկ եկեղեցու հետ միանալու հոսանքը և միացումը գործնապես, կամ «միարարությունը», որ հայտնի է լատիներեն «ունիթորություն» անունով։

«Ունիթորները» գործում էին թե՛ բերանացի քարոզներով և թե՛ պրավոր կերպով։ Մի կողմ թողնելով և նույնիսկ արհամարհելով հայոց գրականությունը, անարգելով ամեն ինչ, որ հայկական է—ծես, սովորություն և այլն, նրանք լատիներենից թարգմանում էին կաթոլիկական ոգով կրոնական գրքեր, մեկնություններ, քարոզներ և այլն, նույնիսկ լատին ծիսարաններ, երբեմն և ուրիշ բովանդակությամբ գրքեր, որոնցով տարածում էին հայերի մեջ Արևմուտքի սքոլաստիկական ուղղությունն ու գաղափարները։ Այս ունիթորական գրականությունը, հարկավ, գրական արժեք չունի։

Ունիթորների նախանձախնդրությունը լատին եկեղեցու համար այն աստիճանի է հասնում, որ եթե հնար ունենային, հայոց լեզուն կփոխարինեին լատիներենով, բայց որովհետև այդ անել անկարելի էր, ուստի նրանք հայոց գրական լեզուն ձևում են ըստ լատիներենի. կիրառում են նորաստեղծ հոլովական ու խոնարհման ձևեր, նոր տեսակի նախդիրներ, բառերի լատինաձև շարադասություն ու համաձայնություն, լատիներենի հետևողությամբ կազմված նոր բառեր և արտահայտություններ և այլն։ Այսպիսով առաջ է գալիս մի «տարօրինակ լեզու», մի լատինաբան հայերեն, որ բացի հայոց լեզուն խանգարելուց ոչ մի բանի և ոչ ոքի պիտանի չի եղել։ Այս ունիթորական աղճատ լեզուն իր գրականությամբ հանդերձ բավական գործածություն է ունեցել և երկար է տևել, մինչև նույնիսկ Մխիթարյան միաբանության հիմնադիր Մխիթար Սեբաստացին, որ և 1721 թ. առաջին անգամ Վենետկում տպագրել է տվել Պետրոս Արագոնացի քարոզչի «Առաքինութեանց գիրքը»... «Նորում [=յորում, Մ. Ա.] նախ ընձեռին ղեօթանց առաքինութեանց... Անդրածեցեալ [=թարգմանեալ, Մ. Ա.] ի լատինականէն ի հայ բարբառ, ի գաւառն Նախիջևանու, ի վաղնջուց ժամանակաց։ Իսկ այժմ ի լոյս ածացեալ [=ածեալ, Մ. Ա.] աշխատասիրութեամբ և սրբագրութեամբ տեառն Մխիթարայ վարդապետի Սեբաստացւոյ Աբբայ հայր կոչեցելոյ»։ Այս դեռ սրբագրված լեզվով է։ Վենետկում 1772 թ. կատարվել է դրա երկրորդ տպագրությունն էլ, որի մեջ հիշվում է, թե թարգմանությունը եղել է 1339 թ.[1]։

3. Հովհան (Յովհան) Որոտնեցի և վանական դպրոցներ:—*Ունիթորների հայրենամերժ և ավանդուրաց անզուսպ գործունեությունն ա-*

---

[1] Գ. Զարբհանալյան, *Հայկական մատենագիտութիւն*, Վենետիկ, *1883*, էջ *49*։

առաջ է բերում հուզումներ, խռովություն, և բնականաբար չի մնում առանց զորեղ հակազդեցության, որ ունենում է իր բարերար հետևանքները ոչ միայն հայոց եկեղեցու համար, այլև ընդհանրապես կուլտուրայի, լուսավորության և մասնավորապես գրականության նկատմամբ։ Տաթևի, Գայլեձորի (Գլաձորի) և մի քանի ուրիշ վանքեր, որոնց մեջ դեռ շարունակվում էր հայկական ուսումը, իրենց աշակերտներին կրթում էին լինելու ոչ միայն ուսումնասեր, այլև հայրենասեր, և անաղարտ պահպանելու հայոց լեզուն, ինչպես և ազգային եկեղեցին իր ավանդություններով։ Նրանց աշակերտներն ահա հակառակ են ելնում ունիթոռներին և՛ բերանացի, և՛ գրավոր քարոզներով։ Այդպիսիների մեջ առաջին տեղը բռնում է Հովհաննես (Յովհաննէս) Որոտնեցին, Կախիկ մականունով (1315—1388 թթ.)[2]։ Նա Օրբելյան տոհմից էր, «ի գաւառէն Որոտնոյ ի գեղջէն Վաղանդնու՝ որդի մեծի իշխանին Իւանի, որ էր ի զարմէ առաջին իշխանացն Սիւնեաց, յորմէ Վասակն էր... յոյժ իմաստուն և գիտնական Հին և Նոր Կտակարանաց, լուծիչ Աստուածաշնչոյ նրբից և արտաքնոց»[3]։

Գրիգոր Տաթևացին ևս իր Ներբողյանի[4] մեջ գրում է. «Գոլով նորա ազատ պայազատ յազնէ Սիսական բնիկ Հայկազնի. գաւառաւ Որոտնէի իշխան ազգաւ, տիրելով բազմաց և փարթամ գոյից»։ Օրբելյանները վաղուց իրենց համարում էին Սիսական տոհմի ժառանգներ, ուստի զարմանալի չէ, որ Որոտնեցուն այն տոհմից են դնում։ Նա Գայլեձորի հռչակավոր վարդապետ Եսայի Նչեցու աշակերտն էր, շատ տասնամյակներ նվիրվել էր ուսման, սովորել,—ինչպես գրում են,—օտար լեզուներ, հմուտ էր գլխավորապես լատիներենին, հետևելով արևմտյան ուսմունքներին և կաթոլիկական դպրոցներում ընդունված մեթոդներին։ Նա ուսումնասիրել էր նաև հայերի մեջ հնուց ընդունված արտաքին գիտությունները, Փիլոնի, Արիստոտելի, Պորփիրի և ուրիշների երկերը։ «Բազմահանճար իմաստիւք աւլցեալ,—գրում է Տաթևացին հիշված Ներբողյանի մեջ,— ընդ ոգէշունչ մատենի՝ յարտաքինսն վարժեալ սոփեստի»։ «Ի սմանէ ընթերցումն սուրբ գրոց և վարժումն արտաքին կրթութեանց, տեսական իմաստից և գործնական արդեանց շարայարութեանց։ Ի սմանէ յոքնանկար նորագիծ տառք, և երաժշտական եղանակք... Մեկնութիւն հոգէշունչ մատենից... և արտաբացումն արտաքին սոփեստից»։ Ուրիշ տեղեր Գրիգոր Տաթևացին[5] իր «վարժապետ» Որոտնեցուն անվանում է «մեծ հռետոր Հայոց», «ազգիս Հայոց մեծ հռետոր»։

---

2 Այս թվականն է դնում Մ. Օրմանյանն իր «Ազգապատում»-ի մեջ։

3 «Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց, արարեալ Թովմա վարդապետի Մեծոբեցւոյ», Փարիզ, 1860, էջ 14 և հտն.։ Տպված է Մովսես Կաղանկատվացու «Աղուանից պատմութիւն» Բ հատորին կից։

4 «Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր, արարեալ Գրիգորի Տաթևացւոյն», Կ. Պոլիս, ՌՃՂ (1741), էջ 711 և հտն., «Նորին Գրիգորի Ներբողեան ողբերգաբար ոգեալ ի թաղումն տիեզերալոյս վարդապետին իւրոյ Յօհաննու Որոտնեցւոյ»։

5 «Գիրք հարցմանց... Գրիգորի Տաթևացւոյն», Կ. Պոլիս, ՌՃՀԸ=1729, էջ 773. այլև Քարոզգիրք, Ամառան հատոր, էջ 721։

Այս շնորհալի անձը թողնում է աշխարհիկ կյանքը և հաստատվելով Տաթևի վանքում, որ ի հնուց նշանավոր էր եղել իր վարդապետարանով, նա նորից կազմակերպում է այն վանքի դպրոցը և ուսուցանում է այնտեղ բազմաթիվ աշակերտների, աշխատելով իր ձեռ բերած բոլոր ուսումը տալ նրանց։

Այն ժամանակներում հայտնի է դառնում Նախիջևանից ոչ շատ հեռու Աստապատի վանքի (Կարմիր վանքի) դպրոցն ևս, ուր ուսուցանում էր «մեծ վարդապետն Սարգիս»։ Ունիթորները հենց սրա աշակերտների միջոցով անկարգություններ են առաջ բերում, ուստի նրանց դեմ կռվելու համար Հովհաննես Որոտնեցուն, իր աշակերտների հետ միասին, Տաթևից հրավիրում են Ապրակունիսի վանքը, ուր նա շարունակում է ուսուցանել մինչև կյանքի վերջը։ Նա մոտիկից զորեղ ախոյան հանդիսանալով ընդդեմ Երնջակի և Նախիջևանի ունիթորների և մեծ ժողովրդականություն ստանալով՝ արգելք է դառնում կաթոլիկության տարածվելուն հայերի մեջ[6]։ «Ժողովեաց առ ինքն զբազում աշակերտս յամենայն գաւառաց և լուսազարդեալ պայծառացոյց զազգս Հայոց վարդապետօք և քահանայիւք». «որ իբրև արեգակն փայլէր ընդ ամենայն ազգս Հայոց և լուսաւորէր զամենեսեան գիտութեամբ»,— գրում է Թովմա Մեծոփեցին[7]։ Հետաքրքիր է, որ Ապրակունիսի և Աստապատի վանքերի դպրոցները մեծ հաջողություն են ունենում և հռչակ են վայելում ոչ միայն իրենց երկու վարդապետների շնորհիվ, այլև Որոտնեցու աշակերտ և ղրիմեցի Մաղաքիա վարդապետի նյութական օժանդակությամբ, որ, ինչպես գրում է Մեծոփեցին, էր «ի ծովահայեաց քաղաքէն Ղրիմայ» [հավանորեն Կաֆայից, այժմյան Թեոդոսիայից], «յոյժ մեծատան որդի», «շինեաց զվանորայս Հայոց», «վասն զի զերկուց վարդապետաց դասատունն՝ զՅովհաննու և զՍարգսին՝ նա պահէր ի շինութեան՝ ղԱպրակունեացն և զԱստապատին»[8]։

Հովհաննես Որոտնեցին ուսուցանում էր ոչ միայն բերանացի դասավանդությամբ ու քարոզներով, այլև գրավոր աշխատություններով. նա գրած ունի դավանաբանական աշխատություններ, մեկնություններ, քարոզներ և այլն։ Ինչպես Գայլեձորի վանքի դպրոցում, Որոտնեցու դպրոցում ևս շարունակում էին ուսումնասիրել հին փիլիսոփայական երկերը։ Նրանից մնում են Արիստոտելի, Պորփիրի և Փիլոնի գործերի մեկնություններ, որ նա արել է, անշուշտ, իր աշակերտների համար։ Նրա անունով կան նաև առակներ, որոնցից է և հետևյալը.

«Ասի յառակաց, թէ զաղուէսն բռնեալ կենդանի քերթեցին և մին փողի չափ մորթ ի վերայ գլխին թողին, և այնչափ ի վերայ ագոյն և ի վերայ ճանգերոյն։ Եւ թողին գնալ։ Յայնժամ մարդիկն տեսեալ՝ ծիծա-

6 Թ. Մեծոփեցի, *Պատմություն*, Փարիզ, 1860, էջ 39 և հետ.։

7 Անդ, էջ 15 և հետ., 55 և հետ.։

8 Անդ, էջ 15 և հետ.։

ղէին բարձրաձայն։ Եւ ասէ աղուէսն. «Դեմ աբեղայ ի մէջ հարսանեաց չեմ՝ որ կու ծիծաղիք»[9]։

Որոտնեցին վախճանվել է 1386 թ., ըստ ուրիշների՝ 1388 թ. Ապրակունիսի վանքում և այնտեղ էլ թաղվել։ Նրա մահվան առթիվ Մեծոփեցին գրում է. «Ի սոյն աւուրս հանգեաւ [Որոտնեցին] ի Քրիստոս, և խաւարումն եղև աշխարհիս Հայոց»[10]։ Ահա թե ինչպես է անդրադարձել նրա մասին նրա երիտասարդ ժամանակակիցը, նրա աշակերտի աշակերտը։ Եվ նա, Մեծոփեցին, իրավունք ուներ. «Զի ոչ միայն սուվ մարմնական տուաւ մեզ,—գրում է նա,—այլ և սուվ հոգևորական»։ Այդ հոգեվոր սովը վերացնելու համար Որոտնեցու աշակերտները նրա մահից հետո տեղափոխվում են զանազան վանքեր. «Մեծն Յակոբ գնաց յերկիրն Արարատեան և բնակութիւն իւր արարեալ զսուրբ ուխտն Սաղմոսավանից, որ 20 ամ աշակերտեալ էր Յովհաննու Որոտնեցւոյ։ Եւ վարդապետն Գրիգոր գնաց աշակերտօք իւրովք ի գաւառն Եկեղեաց յԵրզնկայն. և այլք ասա և անդ ցրուեալ եղեն»։ Սրանցից Հակոբ ու Մխիթար վարդապետները գնում են Ռշտունիք։ Ապրակունիսի վանքում Որոտնեցու ամբիոնը ժառանգում է Գրիգոր Տաթևացին, որի մասին կխոսվի ներքևում[11]։

«Մարմնական սովից» և իշխանավորների բռնություններից, ինչպես և նյութական պակասությունից ղրիմեցի Մաղաքիա վարդապետի և Հովհաննես Որոտնեցու մահից հետո, ստիպված է լինում «մեծ վարդապետն Սարգիս, որ ունէր զսուրբ ուխտն Աստապատու», թողնելու իր վանքը և գնալու «ի Հեր քաղաք սակաւ աշակերտօք ի նոյն ամի դառնութեան»։ Նա այնտեղ է անցկացնում «զաւուրս սովոյն դառնութեան», ապա անցնում է Քաջբերունյաց գավառը և, տեղի եպիսկոպոսի սիրալիր ընդունելությամբ, հաստատվում է «ի մայրաքաղաք վանս Սուխարայ, որ այժմ խառաբաստոյ վանք կոչի»։ «Եւ նստաւ յաթոռ վարդապետութեան։ Եւ ժողովեցան առ նա բազումք ի գրոց աշակերտաց և ի կրօնաւորաց և յուսումնասիրաց աւելի քան 60 կարգաւորք և ուսումնականք։ Եւ ուսոյց զամենայն ծովեզերս վասպուրական գաւառիս ուսմամբ և գիտութեամբ»[12]։ Նա այստեղ գործում է 1389—1402 թվականը։ Նրա մահից հետո նույն տեղում մեծ աջողությամբ ուսուցանում է «պատկառելի քաջ վարդապետն», որ սակայն «ի հալածմանէ անօրինաց» ստիպված է լինում իր աշակերտների հետ գնալու Տոսպ երկիրը, Սալնապատի վանքը, ուր և վախճանվում է 1406 թ.։

---

9 Պետ. Մատենադարան, ձեռ. № 57 (նոր համար), 91 (հին համար)։ Ժողովածու Հովհ. Որոտնեցու երկերից, Լուծմունք, Գիրք պարապմանց, առակներ (160-րդ էջից)։ Առակներից հետո (էջ 172) հիշատակարան. գրիչը՝ Ռըստակէս Սեբաստացի. հավաքած է «ի լուսաւոր բանից տեառն իւրեանց և վարժապետին Յովհաննու Որոտնեցւոյ»։ Առակների մի մասը կա Վարդանայ առակների մեջ։—Հաղորդեց ՀՍՍՀ ԳԱ գրականության ինստիտուտի գիտ. աշխատակից Վիգեն Խեչումյան։

10 Անդ, էջ 15։

11 Անդ, էջ 33։

12 Թ. Մեծոփեցի, Պատմութիւն, էջ 35 և հետ.։

Հիշենք և Արճիշո դավառի Մեծոփա վանքը, որ նշանավոր է հանդիսակում Հովհաննես անունով մի ուսումնասեր կրոնավորի աշխատությամբ[13]*։ Նա այդ վանքում սովորելուց հետո՝ ցանկանում է ավելի բարձր ուսում առնել և վարդապետական աստիճան ստանալ։ Եվ որովհետև «ոչ գոյր վարդապետ ի ծովեզերս Վասպուրականի», նա մի քահանայի հետ գնում է Հովհաննես Որոտնեցու մոտ՝ տասներկու տարի աշակերտում է նրան։ Որոտնեցին 1386 թ. մտադրվում է նրան վարդապետական իշխանություն տալ, բայց հանկարծակի հիվանդանում և վախճանվում է, մեռնելուց առաջ պատվիրելով իր աշակերտ Գրիգոր Տաթևացուն՝ Հովհաննեսին վարդապետական աստիճան տալ։ Այդպես էլ լինում է։ Հովհաննեսն այնուհետև վերադառնալով իր հայրենի երկիրը՝ ծաղկեցնում է Մեծոփա վանքը դպրոցով ու շինարարությամբ. նա հաջողում է նույնիսկ մի եկեղեցի շինել այնտեղ յոթ դժվար տարիների ընթացքում՝ 1402—1409 թվականների մեջ. «Եւ սկիզբն արար շինութեան սուրբ եկեղեցւոյն յաւուրս Ջաղաթայիին [այսինքն՝ Լանկթամուրի օրով 1402 թ.], յորմէ ամենայն եկեղեցիք Հայոց ի հիմանէ քակեալ լինէին»*[14]*։*

Այսպես՝ մեծ խեղճության ու տագնապի, նեղության ու կողոպուտների, հալածանքների ու կոտորածների, անգամ Լանկթամուրյան ավերմունքների օրերին կային դեռ վարդապետներ, մեծ մասամբ Հովհաննես Որոտնեցու աշակերտները, որոնք անսպառ եռանդով, ամեն տնտեսական զրկանքներ կրելով, ճիգեր էին անում լուսավորության ճրագը վառ պահելու մեր վանական դպրոցներում։ Նրանք պահում էին բազմաթիվ աշակերտների խմբեր, երկար տարիներ, նույնիսկ տասնամյակներ սովորեցնելով նրանց ոչ միայն հայոց եկեղեցու մեջ ընդունված ուսմունքը, այլև արտաքին գիտությունները, որքան կարողացել էին իրենք ձեռք բերել։ Եվ հեշտ չէր այն ժամանակ ուսում առնելը. վարդապետները հաճախ նեղվում ու հալածվում էին, և ստիպված էին լինում մի տեղից մի ուրիշ տեղ թափառելու, անգամ փախչելու իրենց բազմաթիվ աշակերտների խմբերով։ Բայց և այնպես նրանց մեծ ճիգերը ապարդյուն չեն մնում. նրանք կարողանում են Հայաստանի որոշ թվով անկյուններում, գոնե ժամանակավորապես, կուլտուրական և եկեղեցական անկման առաջն առնել։

4. Գրիգոր Խլաթեցի Մերենց։— *Այդ վանքերում ավանդված առարկաների մեջ եղել է և գրչության արվեստը, որով գրքեր արտագրելով՝ բազմացնում էին։ Այս նկատմամբ կարելի չէ չհիշել այստեղ Գրիգոր Մերենցին, «որդի հաւատարիմ առն Աստուծոյ Մերի, գոլով ի քաղաքէն Խլաթայ, յաշակերտացն մեծին Սարգսի՝ հոդևոր հարազատ և համշիրակ»։ Նա չի նստում Սարգսի վանքում (Սուխարա ուխտ), այլ Բզնունյաց երկրի Արծկե քաղաքի Ցիսկնա կոչված վանքում։ Նա պարապում է գրչությամբ. «Տիւ և գիշեր դիրս գրէր, և դամենայն աղքատս կերակրէր... և*

---

13 *Անդ, էջ 52—61։*

14 *Անդ, էջ 58։*

զամենայն վարդապետս և կարգաւորս ի նոյն յորդորէր... եւ 50 ամ գիրս գրեաց տիւ և գիշեր անհանգիստ տքնութեամբ»[15]:

Նա ներկայանում է և իբրև գրական աշխատող. «Բազում երգս գանձուց և տաղից յիշատակ թողեալ ինքեան»: Գրել է թղթեր զանազան մարդկանց ուղղած: Նրանից մնում է «Յիշատակարան աղետից», որ ոտանավորով հորինած մի պատմություն է Հայաստանի 1386—1422 թթ. թշվառությունների, որոնց ժամանակակից և ականատես է եղել ինքը[16]: *Բացի այդ՝ նա «զերից ժամանակաց պատմութիւնս ի լոյս ածէր ի հարցանելն և ի պատասխանատուութիւնս, և զգիրս սրբոց մարտիրոսաց և վկայից որ կոչի Յայսմաւուրց՝ սակաւաբան և անվթար շարադրեալ ի սրբոց հնոց և նորոց վարդապետացն՝ ի լոյս էած»: Իր կազմած «Յայսմաւուրք»-ի մեջ նա ավելացրել է նաև իր օրով նահատակվածների պատմությունը: Այս անխոնջ աշխատավորին իրեն էլ 1425 թ. ավելի քան 75 տարեկան հասակում չարչարելով նահատակում են «պիղծ ազգն Մարաց», —ասում է Մեծոփեցին և ապա պատմում ուրիշ երեք վարդապետների նահատակության մասին ևս: Ոչ միայն գրասիրության, այլև ուսումնասիրության մի տիպար է եղել այս վարդապետը: Երբ Գրիգոր Տաթևացին 1409 թ. Տաթևի վանքից Մեծոփա վանքն է տեղափոխվում և դասավանդում է ավելի քան 80 հոգու, Գրիգոր Խլաթեցին, չնայելով իր անցած տարիքին, մոտ վաթսունամյա հասակին, Արծկեի վանքից գալով այնտեղ՝ ունկնդիր է լինում հռչակավոր գիտնականի դասախոսություններին*[17]:

5. Գրիգոր Տաթեվացի:—*Տաթևյան վարդապետարանի բարձրագույն ուսումը և ժողովրդականությունը պահվում և ավելի ևս մեծանում է շնորհիվ Գրիգոր Տաթևացու, որ մի ավանդապահ, գործունյա և բազմագետ ուսուցիչ է եղել: Ըստ Առաքել Սյունեցու՝ նա «ընթերցման էր պարապօղ, աշակերտաց էր մարզօղ... ծածուկ բանից բացայայտօղ»: «Ի գիշերի խոկմամբ զիմաստս գրոց հաւաքէր, և տուրընջեան աշակերտացն պատմէր»: Արտաքուստ էլ նա գեղեցիկ է եղել, այնպես որ երբ ամեն կողմից աշակերտելու էին գալիս նրա մոտ,—ասում է Առաքել Սյունեցին*[18],— *«նախ ի տեսն ուրախանային, և ապա խօսիւքն ցնծային: Նախ ի պատկերին գեղեցկութիւնն խնդային, և ապա ընդ բարբառոյն համեղութիւնն զուարճանային»:*

Նրա հայրն արհիշեցի էր, մայրը՝ փարպեցի, ինքը ծնված էր մոտ

---

15 Թ. Մեծոփեցի, *Պատմութիւն*, էջ 41 և հետ.:

16 «*Յիշատակարան աղէտից Գրիգորի Խլաթեցւոյ, պատմական վիպասանութիւն*», *Վաղարշապատ, 1897. հրատ. Գր. Խալաթյան. արտատպություն «Արարատ» ամսագրից, 1897, էջ 176—182*:

17 Թ. Մեծոփեցի, *Պատմութիւն, էջ 52*:

18 «*Առաքել վարդապետի ասացեալ Ներբողեան առ քաջ հռետորն... Գրիգոր Տաթեվացի...*»: *Տպված է Գր. Տաթևացու «Քարոզգրքի» Ամարան հատորի վերջում, էջ 716 և հետ.*:

1446 թ.[19] վայրց Զորում, ուր բնակվում էին ծնողները։ Երկար տարիներ, ըստ Մեծոփեցու 28 տարի, աշակերտել էր նա Հովհաննես Որոտնեցուն, որից և ստացել էր վարդապետական իշխանությունը Երզնկայում, իսկ ծայրագույն վարդապետական գավազանը՝ 1387 թ. Ապրակունիսում։ Որոտնեցին, վախճանվելուց առաջ (1388 թ.),— ասում է Մեծոփեցին[20],— «կոչեաց զմեծ վարդապետն [Գրիգոր] և զընկերակիցսն նորա, օրհնեաց զնոսա... և եդ զԳրիգոր ամենեցուն գլուխ և ուսուցիչ»։ Ինչպես երևում է, Գրիգորն արդեն հայտնի է եղել իր գիտությամբ, և նրա հոգևոր եղբայրներն էլ ցանկացել են, որ նա՛ լինի Որոտնեցու ժառանգը. «Եւ յաջորդեաց յաթոռ սորա [Յովհաննու] քրիստոսածաւալ աղբիւրն և անմուռ արեգակն՝ երկրորդ լուսաւորիչն Գրիգորիոս վարդապետն Տաթեւացի հաւանութեան և կամօք մեծ վարդապետին Սարգսի...[21] և համշիրակ և եղբարց իւրոց՝ Յակոբայ Սաղմոսավանիցն Արարատեան գաւառին և Գէորգայ Երզնկացւոյ, և ամենայն աշակերտաց գնդին» և ուրիշների, որոնք, ինչպես տեսել ենք, գնում են զանազան վանքեր։

Գրիգորը, սակայն, երկար չի մնում Ապրակունիսի վանքում. հրևի նույն պարագաները—սովը, տնտեսական պակասությունը, որ ստիպում են Սարգիս վարդապետին հեռանալու Աստապատից, նույն ժամանակում հարկադրում են Գրիգորին թողնելու Ապրակունիսը և իր աշակերտների հետ գնալու Տաթև, «ի տունն Օրբելեանց առ իշխանն Սմբատ՝ որդի Իւանէի՝ թոռն Բուռթէլի»։ Սմբատ իշխանը, որ Հովհաննես Որոտնեցու եղբայրն էր, հավանորեն կանչել էր նրան՝ իր մոտ իր վանքում ուսուցանելու։ Այդպես էլ անում է Գրիգորը. Տաթևի վանքում ժողովում է ամեն կողմերից բազմաթիվ աշակերտներ և ամեն եռանդով պարապում նրանց հետ 1390—1409 թթ.։

Ըստ Գայլեձորի վանքի ավանդության, ինչպես Որոտնեցին՝ Տաթեվացին ևս հմուտ էր ոչ միայն հին եկեղեցական և հայկական գրականությունների, այլ ուսումնասիրել էր նաև հունական փիլիսոփաների գործերը, ինչ որ Արևմուտքում ևս անում էին, և ծանոթ էր ունիթորների մեջ ընդունված գրականությանը։ Հավանորեն, ինչպես կարծում են, նա գիտեր նաև լատիներեն լեզուն։ Իր դպրոցում նա սովորեցնում էր իր իմացածը, այն է՝ հայոց գրականություն, Հին և Նոր Կտակարանների մեկնություն, սուրբ Հայրերի գրվածքներ, «զգիրս արտաքին իմաստասիրացն», «լուծմունք արտաքին գրոց»[22], որ են Պղատոնի, Արիստոտելի, Փիլոնի և Պորփիրի գրվածքները և նրանց բացատրությունը։ Բացի այդ՝ աշակերտներին վարժեցնում էին նաև երաժշտության, ճառասացության և գրչության արվեստներին։

---

19 Մ. Օրմանյան, *Ազգապատում*, էջ 1981. թվականները բերվում են մեծ մասամբ ըստ Օրմանյանի հաշիվների։

20 Թ. Մեծոփեցի, *Պատմութիւն*, էջ 17, 33 և հետ., 56։

21 Աստապատի վանքի ուսուցիչը, որ հետո, ինչպես տեսել ենք, տեղափոխվում է Խառաբաստա վանքը։

22 Թ. Մեծոփեցի, *Պատմութիւն*, էջ 51, 34։

Գրիգորի համբավի վրա ամեն կողմից հավաքվում են նրա մոտ աշակերտներ, ոչ միայն Սյունիքի վանազան տեղերից, այլև Եկեղիքից, Արարատից, Ջուղայից, Աստապատից, Շամախուց, Կապանից, Գանձասարից, Փայտակարանից, Թավրիզից և այլն։ Գալիս են նաև Արճեշի կողմերից։ Ինչպես արդեն տեսել ենք, Սարգիս վարդապետի մահից հետո՝ նրա աշակերտներին սովորեցնում էր Վարդան վարդապետը, որ մի չորս տարի հետո վախճանվում է։ «Եւ որբ մնացեալ աշակերտաց նորա,— գրում է Մեծոփեցին,— թողեալ գնացաք ի գաւառն Սիւնեաց առ մեծն Գրիգոր վարդապետն ամենայն Հայոց... Որ և նա ուրախացեալ յոյժ՝ սիրով ընկալաւ զմեզ իբրև զորդիս իւր սիրելի հոգևոր և բաղձալի. զի հայր նորա էր ի գաւառէն Քաջբերունեաց ի քաղաքէն Արճիշոյ»։ «Եւ երկոտասան եղբարք, աշակերտք մեծին Սարգսի, մեք էաք որ յետ մահուան նորա գնացաք յաշակերտութիւն նորա», շարունակում է Մեծոփեցին, հիշելով իր ընկերների անունները՝ վերջին տեղում հարելով «և ես անարժանս Թովմա»։ Տաթևացին ժողովում է իր աշակերտներից շատերին և վաթսունից ավելի քահանաներ, ինչպես և Արճեշի կողմից եկած տասներկու կրոնավորներին և սկսում է «ուսուցանել զգիրս արտաքին իմաստասիրացն», ապա և ուրիշ գրվածքներ։ Նա իր գործը կատարում էր դժվար ժամանակում, երբ «ոչ գոյր անդորրութիւն և ոչ հանգիստ խաղաղութեան վասն անօրինաց չարութեան»։ «Բռնաւորն Յուսուփ, տէրն Թաւրիզու, էառ զՈրոտն ի Սմբատայ իշխանէ, վասն բարեխօսութեան նոցա եկն. և նա ոչ լուաւ աղաչանաց վարդապետին»։ Այդ Յուսուփը Ղարա ղոյունլի, Ղարա-Յուսուֆն է, որ Լանկթամուրի մահից հետո վերականգնել էր իր տերությունը (1405—1420 թթ.)։ Այն ժամանակ Գրիգոր Տաթևացին, «ի հալածմանէ անօրինաց», առնելով իր աշակերտներին, 1409 թ. տեղափոխվում է Արճեշի գավառը, Մեծոփա վանքը. վանահայր Հովհաննես վարդապետը սիրով ընդունում է նրանց։ Հավաքվում են զանազան կողմերից շատ ունկնդիրներ ևս, և ավելի քան ութսուն աբեղա, և Տաթևացին մի ամբողջ տարի պարապում է նրանց հետ, մեկնելով Ս. Գրքի հետ «և զգիրս գրչութեան երկոքեան վարդապետացն Գէորգայ լամբրոնացւոյն և Արիստակէսի»։ Այստեղ էլ, սակայն, նա չի կարողանում հանգիստ կատարել իր ուսուցչական գործը. նրա աշակերտները մի տարի հետո՝ «գաղտագողի առնում են նրան», այսինքն փախցնում են, գնում Արարատյան գավառը, «առ մեծ վարդապետն Յակոբ Սաղմոսավանից՝ հոգևոր հարազատն իւր։ Եւ մեք ամենեքին վարդապետք և աշակերտք գնացաք առ նա», ավելացնում է Մեծոփեցին։ Հետները գնում են և ուրիշները, որոնց թվում և Մեծոփա վանահայրը՝ Հովհաննես։ Հայտնի չէ, թե ո՛րքան է մնում Տաթևացին Սաղմոսավանքում։ Տաթևից գալիս են նրա աշակերտները և քեռորդին, եպիսկոպոս Առաքել Սյունեցին, և վերադարձնում են նրան Տաթևի վանքը, բայց նա այլևս

երկար չի ապրում. հիվանդանալով շուտով վախճանվում է 1410 թ., ըստ ուրիշների՝ 1414 թվականին[23]։

Ահա իր ժամանակի մեծ վարդապետը, որ չնայելով դժվարություններին՝ եռանդով անվհատ շարունակում է իր ուսուցչական գործունեությունը, պարապելով բազմաթիվ աշակերտների հետ, որոնք իրենց «վարժապետի» հետ աստանդում էին, փախչում Հայաստանի այս կողմից այն կողմը։ Մեծոփեցին, ցավոք, չի հայտնում, թե ինչպես և ում օգնությամբ էին ապրում այն ուսումնասերների բազմությունները։ Անշուշտ օգնում էին առանձին անհատներ. վերևում տեսանք «մեծատան որդի» ճգնազգյաց Մաղաքիա վարդապետի նյութական օժանդակությունը վանական դպրոցներին։ Մի նույնպիսի օգնություն հիշում է և Գրիգոր Տաթևացին իր «Ամարան հատորի» վերջում դրված «Յիշատակարանի» մեջ (էջ 721)։ Նա իր ուսուցիչ Հովհաննես Որոտնեցուն և ուրիշներին հիշելուց հետո՝ ասում է.

Եւ զՀարապետ միայնական,
Որ նա եղև մեզ օգնական,
Հոգալ ըզպէտըս մարմնական
Աշակերտաց մերոց լըրման,
Յիշման ի տէր լիցի արժան։

Երևի վանահայրերն էլ էին հոգում նրանց մարմնական կարիքները։ Բայց անշուշտ այդ չէր այնքան նեղություն պատճառում այն սակավապետ մարդկանց, որքան իշխողների կեղեքումը և խռովահույզ վիճակը, որ արգելք էր լինում նրանց իրենց սիրած ուսումով պարապելու։ Գրիգոր Տաթևացին էլ ոչ թե նյութական պակասությամբ էր մտահոգված, այլ, ինչպես ինքը գրում է[24], իրենց ակամա կրած չարչարանքներով, իրենց ստրկական ծառայությամբ և որ իրենք իսկապես ստրկացած են եղել խստասիրտ տերերի ձեռին։ Նա խնդրում է, որ Ս. Գրիգորի բարեխոսությամբ աստված ազատի իրենց «յաշխարհակալէն, յըստ հոգւոյ գերողէն և յըստ մարմնոյ նորին արբանեկաց չարաչար տանջողաց»։

Գրիգոր Տաթևացու համբավը մեծ է եղել ոչ միայն նրա սրբակրոնության և ուսուցչական գործունեության համար, այլև նրա բազմաթիվ գրական աշխատությունների։ Դրանցից այստեղ կհիշենք միայն երեք մեծ հատորները, որոնք տպագրված են դեռ 18-րդ դարում։

Նրա «Հարցմանց դիրքը»[25] երկուսն են՝ մեծ և փոքր։ Վերջինիս վերնագիրն է՝ «Հարցմունք Գէորգ վարդապետի և լուծմունք Գրիգորի

---

23 Թ. Մեծոփեցի, *Պատմութիւն*, էջ 34, 51 և հտն., 59 և հտն.։

24 «Քարոզգիրք», *Ամարան հատոր*, կ. Պոլիս, ի թուին ՌՃՂ (=1130+551=1741), էջ 421, Ս. Գրիգորի քարոզի վերջում։

25 «Գիրք հարցմանց... Գրիգորի Տաթևացւոյն», կ. Պոլիս, ի թուին Հայոց ՌՃՀԸ (=1178+551=1729)։

նորին Հարաղատին»[26]։ Այս Գեորգ վարդապետը վերևում հիշված Գեորգ Երզնկացին է, Հովհաննես Որոտնեցու աշակերտներից մեկը, որ նույնպես պարապել է գրականությամբ՝ գրելով լուծմունք ու մեկնություն։ Տաթեվացին մանրամասն պատասխանել է նրա 14 հարցումներին «շրջագայութեամբ տօմարի Հայկազեան սեռից հարիւրից կրկնակի քառից և վեցեակ վեցից», որ է՝ 836+551=1387 թ.։

Մեծ «Հարցմանց դիրքը», ինչպես հեղինակը հայտնում է վերջում գրված «Յիշատակարանի» մեջ, ավարտել է «ի շրջագայութեան Հայկազեան տօմարի ՊԽԶ թուի», որ է՝ 846+551=1397 թվականին։ Գրել է «ի խնդրոյ ումեմն բանասիրի Ատոմի», «բազում միջոցաւ և փախըստեամբ ի տեղիս»։ Սկզբի «Յառաջաբանի» մեջ (էջ 4 և հտն.) հայտնում է, թե գրել է «ի խնդրոյ ուրումն աշակերտի Ատոմի», այլև թե իր աշակերտներն էլ շատ անգամ աղաչել են իրեն «զխնդիրս ոմանս լուծանել»։ Բացի այդ՝ ավելացնում է նա, «Զի աշխատութիւն իմ մի՛ միայն լիցի ներկայիս լսելոյ, հոգ տարայ և յետնոցն դրչաւ աւանդել»։ Ուրեմն չի բավականացել բերանացի դասախոսելով, իր դասախոսածն ավանդել է և գրավոր։ Դա հարց ու պատասխանով հորինված մի դասագիրք է իսկապես այն բոլոր խնդիրների մասին, որ հետաքրքրելիս են եղել այն ժամանակի հարցասերներին։ «Յիշատակարանի» մեջ (էջ 772) հայտնում է, թե «է՛ ինչ ի սմա հաւաքեալ ի լուսաւոր բանից վարդապետաց սրբոց ըստ գրոյն կամ իմացուածոյն»։ Օգտվում է և արտաքին իմաստունների կարծիքներից։ Կա բան էլ, որ իրենից է գրել։ «Զոր և ես զօրէն մշակաց բազմահաւաք պտղոց. կամ փունջ մի անուշահոտ բազմերանգ ծաղկանց, կամ չնչին թռչնոյ զխորիսխ մեղու, կամ որպէս զլոմայս արւոյն տառապեալ գոյիւ աղերս [=պարգև] ընծայեցի ի գանձանակ ճոխութեան ձերդ մեծութեան, իմաստասէր և ճշմարտասէր եկեղեցւոյդ Հայաստանեայց և ընթերցասէր մտաց»։

«Յառաջաբանի» մեջ խոսում է իր կիրառած տրամաբանական մեթոդի մասին։ Դրանից առաջ, գրքի սկզբում, դրել է ամբողջ աշխատության «մեծ ցանկը»—քառասուն գլուխ, վերջից քառասունմեկերորդը՝ «Հարցմունք Գէորգեայ»։ Այդ ցանկի գլխակարգություններից արդեն իմացվում է գրվածքի ամբողջ բովանդակությունը— «գլխաւոր բանք»։ Հետո էլ ամբողջը բաժանում է տասն հատորի, և ամեն հատորի սկզբում դնում է նույն հատորի ցանկը՝ պրակների բաժանած, և ապա ամեն մի պրակն ունենում է իբրև մի մաս, որի վերնագրի մեջ հայտնում է, թե «մեծ ցանկի» որ կետին է համապատասխանում, օրինակ՝ «գլուխ Դ ի մեծ ցանկէն և առաջին պրակ երկրորդ հատորիս. վասն թիւրութեան հերձուածողաց»։ Եվ վերջապես՝ անհրաժեշտ է համարել այդ մեծ գրքի ամեն մի վերին լուսանցքում էլ դնել հատորը, պրակը, բովանդակությունը. օրինակ, «Հատոր Բ. պրակ Ա. վասն հերձուածողաց»։ Այսպես ամեն

---

26 Տպագրված է նախորդի վերջում, էջ 773—789։

միջոցներ ձեռք է առել, որպեսզի, ասում է նա, դիմելով ընթերցողին, «դիւրաւ գտցես զամենայն զոր և խնդրեսցես առանց շփոթելոյ ի կարգի իւրեանց»: Այս ամենը, հարկավ, մի լոկ արտաքին ձև է, բայց այդ միայն վկայում է, թե որքան,— մեր ժամանակի համար անգամ նախանձելի,— մեծ հոգացողությամբ է վերաբերվել նա դեպի իր ընթերցողները, և որքան մեծ արժեք է տվել նա իր գործադրած նյութի բաշխմանը և դասավորությանը:

Այստեղից և ընդհանրապես «Հարցմանց գրքի» բովանդակությունից երևում է, որ շատ կարդացած, շատ մտածած մարդ է եղել Գրիգորը, լավ ծանոթ տրամաբանությանը, կշռադատող և համեմատող, դասավորող, տեսակավորող և ուսանողների դյուրության համար խորհող: Նույն ոգին երևում է և նյութի բացադրության կամ շարադրության մեջ: Ձգտելով հարցումներին ըստ կարելոյն լիակատար պատասխանել, բերում է նույն խնդրի մասին զանազան վկայություններ ու պատճառներ, բազմաթիվ կարծիքներ ու լուսաբանություններ, և որպեսզի ընթերցողի համար շփոթում առաջ չգա, սովորաբար դիմում է թվարկության—առաջին, երկրորդ և այլն, թվարկությունները հասցնելով երբեմն մինչև 30-ի, և ավելի ևս: Որպեսզի իր գործը թերի և անբավարար չլինի, նա բերում է նաև հակառակորդների կարծիքները և ընդդեմ պատասխանները: Օրինակ՝ տասներորդ հատորի մեջ շատ երկար խոսելով «վասն հանդերձեալ աշխարհին», մերժում է կաթոլիկների ընդունած «քավարան» ասածը, և նույն հատորի ԺԹ պրակ դնում է. «վկայութիւնք հակառակացն և պատասխանիք նոցին» (էջ 695), այսպես սկսելով. «Այլ և տեսցուք զվկայութիւնս հակառակացն և յարմարեսցուք զպատասխանիսն, զի առձեռն պատրաստ լիցի»:

«Հարցմանց գրքի» խնդիրները, բնականաբար, ամենամեծ մասով կրոնական են, «ընդդէմ նոցա որք զբախտն և զհարկն ասեն», այսինքն ճակատագրի հավատքն ընդունողների դեմ. «ընդդէմ հրէից», «ընդդէմ արիոսեանց», «ընդդէմ հոգէմարտից», «ընդդէմ Նեստորի և երկաբնակացն», «Աստուածաբանութիւն ըստ Դիոնէսիոսի» և այլն: Խոսում է և հրեշտակների ու դևերի, մեղքերի և առաքինությունների, մարդու հոգու և բազմաթիվ ուրիշ նյութերի մասին: Հետաքրքիր է «մեծ ցանկի» ԺԵ գլուխը՝ կամ հինգերորդ հատորը. «վասն կազմութեան մարդոյն», որի մեջ բերում է ոչ միայն մարդակազմության, այլև բնախոսության վերաբերյալ գիտելիքներ, տալով ժամանակին հետաքրքրող հարցերի պատասխանները: Օրինակ՝ Ս. Գրքի մեջ պատմվում է, թե մարդը հողից է ստեղծվել. ուստի առաջին հարցումն է. «վասն է՞ր մարդն ի հողոյ ստեղծաւ»: «Պատասխանի՝ Ասեմք վասն բաղում պատճառի: Նախ՝ որպէս ասացաւ ի վերոյ, հողն ունի զայլ զ [=երեք] տարերքն խառնեալ. յորժամ ի հողոյ ասէ՝ [Ս. Գիրք] իմանալի է զդ [չորս] տարերս»: Ուրեմն՝ մարդն իսկապես չորս տարրներից է կազմված և ոչ թե միայն հողից: Ապա բերում է թվարկությամբ ինն ուրիշ պատճառներ ևս հողից ստեղծ-

վելու, օրինակ՝ «Իններորդ՝ զի մայր մեր հողն է, և՛ սեղան, և՛ տեղիք, և՛ գերեզման. թէպէտ և այլ տարերքն են մեզ աղգականք, այլ մեք ի մօրէ՛ ծնանիմք»[27]։

Կան դատողություններ և ապացույցներ, որոնք շատ միամիտ են. բայց չպետք է մոռանալ, որ հեղինակն ապրել է 14-րդ դարում։ Այսուհանդերձ՝ նա եղել է մեծ մտածող, ուժեղ տրամաբանող, և նրա երկերի մեջ կան նաև իր ժամանակի համար շատ լուսավոր մտքեր ևս։ Այսպես, օրինակ, ճակատագրի հավատքը հերքելիս՝ իբրև մի երրորդ հիմք դնում է հետևյալը (էջ 8 և հտն.). «Երրորդ՝ եթէ զոր ինչ ասէաք և ճշմարիտ էր, յայնժամ բանս մեր ոչ հետևէր իրացն, այլ իրն բանիցն հետևէր, որ է յայտնապէս սուտ. զի մնացականն ոչ մնացականին ո՛չ հետևի։ Այլ անդրադարձեալ [=ուրիշ կերպ պատասխանելով, այլ կերպ ասած]. զի հետքն՝ ընթացից ոտիցն հետևին, և ոչ ոտքն հետոցն. և ստուերն՝ մարմնոյ, և ոչ մարմինն՝ ստուերին»։

«Ապա ուրեմն յայտ է, զի բանն զիրն ո՛չ կարէ ճշմարտել, այլ իրն զբանն ճշմարտէ, յորժամ գոյ կամ ո՛չ գոյ...»։ Այսպես ուրեմն՝ «բանը», խոսքը, մտածությունն է հետևում իրականությանը, ոչ թե իրականությունը՝ խոսքին, որ մտածության արտահայտությունն է։

Ավելորդ չէ այստեղ դնել կաթոլիկ և հայկական աստվածաբանություններին հմուտ անձի կարծիքը[28]։ «Տաթևացին անկասկած պետք է դասել ժամանակին գիտնականներուն շարքը։ Հարցմանց գիրքը թե ոճով և թե պարունակությամբ համահավասար կերպարան և արժեք ունի միջին դարու հռչակյալ լատին աստվածաբաններուն, Թովմաս Ակուինացիի, Ալբերտոս Սուաբեցիի և Սկովտոս Երինացիի (Thomas Aquinatensis[29], Albertus Sueviensis[30], Scotus Erigena[31]) գործերուն հետ, հանգիտակշիռ առավելություններով և համանման թերություններով։ Ասկե կհետևցնենք թե ոչ միայն լատիներենի հմտությամբ, այլև լատիններուն ընդունած ձևերով ուզած է մաքառիլ անոնց դեմ։ Մինչև իսկ կրնանք ավելցնել, թե Հարցմանց գիրքին մթին բացատրություններ կրնան լուսաբանվիլ սկոլաստիկյաններուն լատիներեն դարձվածներուն համեմատությամբ»։ Սրանից, սակայն, չպետք է հետևցնել, թե Տաթեվացին լատինաբան հայերենով գրած լինի. նա հորինում է մաքուր հայերենով։ Բայց զարմանք չէ, որ այդպես գրելով հանդերձ՝ նա մեկ մեկ գործածած լինի օտարաբանություններ, հատկապես երբ իր կաթոլիկ հակառակորդների կարծիքներն է մեջ բերում։

Գրիգոր Տաթևացու երկրորդ մեծ աշխատությունն է «Քարոզգիրք»-ը,

---

27 Գր. Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ միթ=229։

28 Մ. Օրմանյան, Ազգապատում, էջ 2029։

29 13-րդ դարի ամենից գիտուն և մեծ աստվածաբանը։

30 13-րդ դարի սքոլաստիկ փիլիսոփա և աստվածաբան։

31 9-րդ դարում, սքոլաստիկայի հիմնադիրներից մեկը։

երկու մեծ հատոր. առաջինը՝ «Ձմերան հատոր»[32], երկրորդը՝ «Ամարան հատոր»[33]։ Այս երկրորդի վերջում (էջ 720 և հետ.) կա հեղինակի հիշատակարանը, որից իմացվում է, որ նա քարոզների գիրքը կազմել է «ի ստորասուզեալ ժամանակի ի թուաբերութեան մեծի յուին հարիւր յիսուն և վեցերորդի ամի» (856+551=1407)։ «Ձմերան հատոր»-ն, ասում է, պարունակում է ՃԿ (=160) քարոզ, և «Ամարան հատորը»՝ ՃՁԴ (=184)։ Նա հայտնում է, որ քարոզների մեջ կան այնպիսիները, որոնք իրենը չեն, այլ ուրիշներից են առնված. ուստի վերնագիրների մեջ դրված են «նորին» և «յայլմէ», «զի յատկասցին ի միմեանց, և մի՛ գողացեալ թուեսցին տխմարաց մտաց»։ Ուրիշներից առած քարոզները բավական թիվ են կազմում, հեղինակների անունները չեն հիշվում սովորաբար։ Առաջին հատորի (էջ 15) երկրորդ քարոզն է «Ընտամեծի Յօհաննու Որոտնեցւոյ տիեզերալոյս րաբունապետի...»։

Այստեղ, հարկավ, չպիտի խոսենք քարոզների բովանդակության մասին, որ շատ բազմազան է, ընդհանրապես բարոյակրթական և ուսուցական ուղղությամբ։ Խոսում է, օրինակ, սիրո, խոհեմության, արիության և գործի, հեղգերի, երկրագործների մասին, այլև քնի, «հալալ ամուսնության», «վասն արդար վաճառաց և կշռոց», եկեղեցու խորհուրդների և այլն և այլն։ Մեծ տեղ են բռնում նաև սրբերի ու տոների վերաբերյալները։

Տաթևացու «Քարոզը», որ իբրև տեսակ, փոխանակել է հին «ճառին» և «ներբողյանին», չունի վերջիններիս պերճ ու պաճուճած և եռանդալից ձևը, ընդհանրապես սառն ու ցամաք է, պարզուկ ու հասարակ, խոսված լեզվին մոտ, բայց ոչ միջին հայերենով։ Իշխող տոնն է հանգիստ սովորեցնող ուսուցչի, որ տալիս է լուրջ բացատրություններ. ազատ չէ սքոլաստիկ ձևերից, թվարկություններից և մեկնություններից, որոնք իր ժամանակի մարդկանց համար անհրաժեշտ ու հաճելի են եղել։ Առաքել Սյունեցին չափազանց գովելով իր «մեծ վարդապետ» Գրիգորին՝ անվանում է նրան «մեծ հռետոր», «քաջ հռետոր», «հոգեշարժ լեզուի» տեր։ Անշուշտ, նա իր բերանացի քարոզների մեջ ավելի հռետորական շնորհք է ցույց տվել, քան գրավորների մեջ։ Հովհաննես Որոտնեցու թաղման ժամանակ ասած նրա ներբողյանն[34] իսկապես հարուստ է ճարտասանական ձևերով—հարցում, բացագանչություն, կրկնություն նման կազմությամբ խոսքերի և այլն. կան նաև պատկերավոր և առատաբան արտահայտություններ առանց ճոռոմության, տրտմագին զգացմունքով և ան-

---

32 Գրիգոր Տաթևացի, Գիրք Քարոզութեան, որ կոչի Ձմերան հատոր, Կ. Պոլիս, թուին ՌՃՁԹ (=1189+551=1740)։

33 Գրիգոր Տաթևացի, Գիրք Քարոզութեան, որ կոչի Ամարան հատոր, Կ. Պոլիս, թուին ՌՃՂ (=1190+551=1741)։

34 Գր. Տաթևացի, Գիրք Քարոզութեան, Ամարան հատոր, էջ 711 և հետ. «Նորին Գրիգորի ներբողեան ողբերգաբար ոգեալ ի թաղումն տիեզերալոյս վարդապետին իւրոյ Յօհաննու Որոտնեցւոյ» (գլուխ ՁՃԵ)։

կեղծ սիրով լի մի գեղեցիկ ներբողյան, Սուրբ Գրքից առած նմանություններով մի երախտագիտական գովեստ արժանավոր գործչի։

Բայց ինչպես էլ լինի, այս շրջանի վարդապետների գրավոր երկերը մեծ մասամբ ունեն ոչ թե գրական-գեղարվեստական արժեք, այլ ընդհանրապես կուլտուրական։ Կարելի չէ, հարկավ, մեր ժամանակի չափանիշով վերաբերվել նրանց գիտական գրվածքներին ու գործունեությանը։ Առասպելներն ու ղրույցները, սին դատողություններն անգամ պարզում են այն դարու ոգին ու հասկացությունները, կյանքն ու բարքերը, էլ չենք ասում կան նաև բազմաթիվ փայլուն մտքեր ու դատողություններ, որոնք այն ժամանակի համար ակնբախ են։ Չպետք է մոռանալ, որ այն մարդիկը տքնել և հորինել են գործնական նպատակի համար—պատրաստել, ըստ իրենց ժամանակի հասկացության, գիտուն աշակերտներ, որ ընդունակ լինեին մաքառելու և ազգային անկման առաջն առնելու։

Նույնպիսի գործնական նպատակի համար է հորինել Գրիգոր Տաթևացին իր ուրիշ աշխատություններն ևս, այսինքն՝ «զԱրիստոտելի գրոց լուծմունսն, զՍտորագրութեանցն, զՊէրիարմէնիասին, և զԱռաքինութեանցն. նաև զՊորփիւրին զսպարապմանց լուծմունքն, զՍաղմոսի քաղուածոյն, զԱռակաց քաղուածոյն, և զիմաստութեանն, և զԺողովողին... զՅորայ լուծմունքն, զՅօհաննու աւետարանի քաղուածուն զլուծմունքն Արիստակիսի և Գէորգեայ գրչութեանն... զՔաղուածուն Մատթէոսի աւետարանին, և զԵսայեայ քաղուածուն, և զՈսկեփորիկն, և այլն»[35]։

6. Թովմա Մեծոփեցի։— Քաջբերունյաց գավառից էր սա. սովորել է Մեծոփա վանքում, նաև վերևում հիշված Սարգիս վարդապետի մոտ. վերջն աշակերտել է, ինչպես տեսել ենք, Գրիգոր Տաթևացուն։ Նա իր ժամանակի ուսումնասեր ու գործունյա վարդապետներից է և առանձին մասնակցություն է ունեցել կաթողիկոսական աթոռը 1441 թ. Սիս քաղաքից Վաղարշապատ տեղափոխելու գործի մեջ։ Իր հիշատակը մնում է գլխավորապես երկու փոքրիկ գրավոր աշխատություններով։

Նրա առաջին գործն է վերևում շատ անգամ հիշված «Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց»[36], որ գրական արժեք չունեցող մի հասարակ գործ է։ Իսկապես մի տեսակ ժամանակագրություն, մեծ մասամբ հիշողությամբ գրված, երբեմն նույնի կրկնություններով։ Եվ ինքը հեղինակն էլ լավ գիտե իր գրվածքի թերությունը. այսպես՝ (էջ 44) խոսելով չորս վարդապետների նահատակության մասին, ավելացնում է. «Այս չորս վարդապետքս յաւուրս մեր անօրէնք սպանին... Այս էր ի յ 874 [=1425] թուականին աւելի կամ պակաս. դու անմիղաղիր լեր, զի ծեր էի և յետ 50 ամաց սկսայ. վասն այսօրիկ յետ և յառաջ գրեցի»։ Բայց և այնպես Թովմայի աշխատությունը պատմական տեսակետով կարևոր է։ Հայաստանից դուրս կատարված եղելությունների մասին գրածները

35 Տե՛ս «Գիրք հարցմանց», էջ 791. «Ցիշատակարան տպեցման Գրքոյս»։

36 Թ. Մեծոփեցի, Պատմութիւն, Փարիզ, 1860։

շատ համառոտ են, և մասամբ անճիշտ։ Հայաստանի վերաբերյալ պատմությունն սկսվում է 1386 թվականից Սյունիքի ավերմունքով հյուսիսային թաթարների ձեռով։ Ապա համառոտ պատմում է Լանկթամուրի 1387 թ. գործած կոտորածներն ու գերությունները Հայաստանի զանազան կողմերում, մի առ մի հիշատակելով տեղերի անունները։ «Եւ անտի [Թավրիզից] չուեալ եկն յերկիրն Սիւնեաց ի վերայ դղեկին Երնջակու. և ապա ի վերայ երկրին ճակատուց՝ էառ զքաղաքն Սուրբ Մարի ի հիմանց տապալեալ զամուրն մեր... և գերեաց զքաղաքն և զամենայն շրջակայ գեղորայսն»։ Հայերն ամրանում են Բարդող լեռան վրա, որ թշնամիները չեն կարողանում առնել։ «Եւ անտի չուեալ եկն յերկիրն Արարատեան և Կարբու և Կոտայից. և խսարեալ [պաշարեալ] զամուրն Բջնոյ՝ էառ զնա և սպան զեպիսկոպոս աշխարհին զտէր վանական, որ էր այր իմաստուն և գիտնական... Եւ զայլ ամենայն բազմութիւն հաւատացելոց չարշարէին տանջանօք, սովով, սրով, գերութեամբ, անտանելի չարչարանօք և անագորոյն բարուք անմարդաձայն արարին զամենալից գաւառն Հայոց... Եւ առեալ զառ և զաւար և զդերին անթիւ, զոր ոչոք կարէ ճառել զաղէտս և զդառնութիւն մերոյ ազգին։ Եւ ընթացեալ բազում զօրօք ի Փայտակարան Տփղիս քաղաք, էառ զնա և գերեաց անթիւ և անհամար»։

Համեմատաբար մանրամասն պատմում է հաջորդ տարում (1388 թ.) գարնանը Լանկթամուրի հարձակումը Ղարաղոյունլի Թուրքման Ղարա Մահմատի վրա և պարտությունը Ճապաղջրում, ինչպես և նույն տարում նրա զորքի ջարդվելը Սասունի վրա հարձակվելիս։ Պատմագիրն անձամբ եղել է այս իրողությունների մեջ։ Նա գրում է. «Եհան ղմեզ զառ ի վերլերինն Խութայ։ Եւ նոյն օր հասին զօրք Ջաղաթային [=Լանկթամուրի] ի վերայ մեր... եհաս մեզ ի յօգնականութիւն... և մեք ի լեառն ելանէաք... եկն եհաս առ մեզ... Որ և ես ի ներս կայի» (էջ 21—28)։ Նա անձամբ եղել է և Վանի մեծ կոտորածի մեջ. «զոր տեսաք աչօք և լուաք ականճօք մերովք»։ «Բայց ո՞վ կարէ պատմել զթիւ գերեացն և զսպանումն անմեղացն... ղի լցաւ աշխարհ ամենայն գերութեամբ Հայոց. մեռան քահանայք և աշխարհականք, հաւատացեալք և անհաւատք... Աւա՜ղ և եղո՜ւկ ամենայն Հայոցս՝ ղի աւերեցաւ ամենայն երկիրս. ղի յԱրճիշոյ մինչև ի տունն Վրաց. և մինչև ի Կուր գետն Աղուանից շաղախեցաւ արեամբ անմեղաց երկիր ամենայն չարչարանօք, սպանմամբ և գերութեամբ։ Եւ յետ գնալոյ նորա յաշխարհէս մերմէ եկն սով սաստիկ յաշխարհս մեր և տարածեցաւ յամենայն տեղիս... Ջի ոչ կարեմ պատմել զդառնութիւնս մեր զոր տեսաք աչօք և լուաք ականճօք. զի ջնջեցաւ մարդկութիւնս, մանաւանդ Հայկազեան գաւառիս» (էջ 30 և հտն.)։

Ապա պատմում է, թե 1395 թ. Լանկթամուրը Միջագետքից դարձյալ արշավում է Հայաստանի վրա, սրով ու հրով և գերությամբ ավերում երզընկա, Բասեն, Արարատյան գավառը, Սուրմառի, Կողբ և այլն։ Դրան էլ հաջորդում է սովը։ Կռիվ է լինում Ջաղաթայի և Յուսուփի (Թուրքման Ղարա Յուսուփի) միջև, որ փախչում է Ջաղաթայի ձեռից։ Երրորդ անգամ

էլ Լանկթամուրը 1401 թվին արշավում է մեր աշխարհի վրա, 1402 թ. ան. գութ կոտորածներ անում Սեբաստիայում, հաղթում է Իլդրումին [=սուլթան Բայազիդին], վերադառնալով ավերում, գերում մինչև Վրաստան և ետ գնում իր քաղաքը։

Այնուհետև Մեծոփեցին ավելի ու ավելի մանրամասն գրում է Լանկթամուրի հաջորդ Շահ-Ռուհի (1405—1447 թթ.) և Ղարա Ղոյունլի Ղարա Յուսուֆի, սրա որդի Սքանդարի (1420—1437) և սրա եղբայր Ջահանշահի օրով կատարված դեպքերի մասին։ Շարունակ պատերազմներ, հարատև նույն ավերմունքները, կողոպուտները, շատ կարճատև խաղաղություն այս կամ այն շրջաններում. այն էլ մեծ հարկապահանջությամբ նեղում են մերկ, ընչաղուրկ ժողովրդին։ Պատմագիրն իր պատմած եղելություններին ոչ միայն ժամանակակից է, այլև ականատես և անձամբ կրել է շատ նեղություններ։ «Եւ այս կսկիծ դառնութեանս անճառելի է ընդ գրով արկանել, զայս աղէտ տարակուսանաց նեղութեանս։ Բայց սակաւ մի ծանօթութիւն տամ յետ մեզ եկելոցդ զի լալով լայք ղկորուստ ազգիս Հայոց, զի անձամբ ի ներս կայաք» (էջ 91), և ապա որքան կարող է՝ սրտաճմլիկ նկարագրում է երկրի թշվառությունը։ «Եւ այս եօթն ամք են որ ի ներքոյ դառն պատուհասի կամք. զի սուրն կորոյս, սովն սպան, գերին պակասեաց, գազանք կերան զմարդիկ, թռչունք կերան զվաստակս...» (էջ 95)։ Վերջին դեպքը, որ պատմում է, Շամշուլտէ քաղաքի, ապա և Տփղիսի առումն ու կործանումն է 1440 թ. Ղարաղոյունլի Ջահան-շահի ձեռով։

Ինչքան ըստ երևույթին աննշան է Մեծոփեցու այս պատմական գործը, բայց նա դրանով շատ պայծառ տալիս է մեզ իր չարաբաստիկ ժամանակի թշվառությունների տխուր պատկերը 1386—1440 թթ., երկրի աննկումն ավելի քան Լանկթամուրի ձեռով՝ նրանից հետո իշխող թաթարների, թուրքմենների ու քրդերի վայրագ արարքներով։ Հարատև իշխում է մի մղձավանջային դրություն, որ շատ զգայուն սրտով և կենդանի ցուցադրում է մեր այս պատմագիրը, որովհետև ինքն էլ ուրիշների հետ անձամբ ապրել է շատ բան։ Պատկերը լրիվ է, քանի որ նա միաժամանակ խոսում է նաև վանքերի և նշանավոր վարդապետների—Հովհան Որոտնեցու, Գրիգոր Տաթևացու և նրանց աշակերտների անդուլ գործունեության մասին՝ Հայաստանում լուսավորության ու գիտության ճրագը գոնե վառ պահելու այդ աղետալից դարում։ Այդ մենք տեսել ենք արդեն։

Մեծոփեցու երկրորդ աշխատության նյութն է կաթողիկոսական աթոռը 1441 թ. Սիս քաղաքից Վաղարշապատ տեղափոխելը և Կիրակոս կաթողիկոսի աթոռակալությունն ու անկումը հաջորդ երկու տարում[37]։ Սկզբում անուններով հիշում է այն նշանավոր վարդապետներին, որոնք զանազան վանքերից հավաքվելով եկեղեցական ժողով են անում։ «Եւ

37 Թովմա Մեծոփեցու «Յիշատակարանը», հրատարակեց Հառաչաբանով Կարապետ Կոստանյանց, Թիֆլիզ, 1892։

այլ բազում վանորայք և կրօնաւոր սուրբ հարք և պատուական երիցունք աւելի քան զերեք հարիւր անձինս և բազում միայնակեացք. և ազատք և որդիք ազատաց ձեռնաւորք և տանուտէրք. և անթիւ և անհամար բազմութիւն ժողովրդեան՝ արանց և կանանց»: Մի խումբ հեռավոր վարդապետներ և եպիսկոպոսներ գրավոր թղթով իրենց համաձայնությունն են տալիս աթոռի տեղափոխության համար: Ասյա Մեծոփեցին մի առ մի թվում է այն պատճառները, որոնց հետևանքն է եղել կաթողիկոսական աթոռի տեղափոխությունը, որ կատարվում է Հայոց եկեղեցու անկման առաջն առնելու համար: Այդ վերաբերում է Հայոց եկեղեցու պատմությանը[38]: Այստեղ այն միայն պետք է շեշտել, որ այդ խնդիրն, ինչպես տեսել ենք, մեր բանաստեղծության մեջ արծարծված էր դեռ 1300 թ. Ստեփաննոս Օրբելյանի «Ողբի» մեջ և այժմ, մոտ դար ու կես հետո, իրագործվում էր Գրիգոր Տաթևացու և ուրիշների աշակերտների—լավագույն հոգևորականների ձեռով, որոնցից մեկն և այդ գործին նախաձեռնողներից ու ձեռներեցներիցն էր ինքը՝ Թովմա Մեծոփեցին:

Բայց նրանք եկեղեցական դասի մի փոքր մասն էին կազմում, այն էլ ոչ ամենքը լավագույններից: Այն կողմում կար կրոնավորների, վանականների ստվար մեծամասնությունը, նրանք, այսպես ասած, աշխարհական վանականներն էին, որոնք վանքերից օգտվում էին միայն իրենց վայելքների և հաճույքների համար, իսկ իրենց կենցաղով չէին տարբերվում աշխարհականներից և երբեմն ամեն տեսակ արատներով ապականված և ավելի ևս ընկած քան աշխարհականները:

Թովմա Մեծոփեցին իր Պատմության մեջ հանդես է բերել 14—15-րդ դարերի անձնվիրությամբ աշխատող լավագույն վարդապետներին, իսկ այստեղ, նրա այս փոքրիկ երկի մեջ մենք տեսնում ենք եկեղեցական դասի վատթար կողմերը 15-րդ դարում, նրա բարոյական քայքայումը, զեղծումները, խարդավանքներ, կաշառակերություն, անուղղա և անկարգ ու վավաշ, հեշտասեր ու ցոփ կենցաղ և այլն: «Անտառակութեամբ և արբեցութեամբ և պիղծ վարուք շրջէին, և ինքեանք կապող և արձակող նստէին Հայոց» (էջ 56),— և այսպես իրենք կաթողիկոսները:

Վանական կրոնավորների անկումը սկիզբն էր առել շատ վաղուց. Ներսես Շնորհալու գրվածքների մեջ արդեն այդ տեսանք: Այդ դրությունը երբեմն զորանալով, երբեմն թուլանալով հարատևել էր, և 15—16-րդ դարերում արդեն, կարելի է ասել, ծայրահեղության էր հասել: Թեպետ կային, անշուշտ, և սրբակրոններ, բայց նրանք փոքրաթիվ են եղել և հետզհետե կորցրել են իրենց ազդեցությունը: Այդ է պատճառը, որ էջմիածինը 1441 թ. դառնալով եկեղեցական կենտրոն, երկու հարյուր տարի շարունակ, մինչև 1640-ական թվականները, չի կարողացել դառնալ նաև կուլտուրական կենտրոն և առաջ բերել գրականություն:

---

38 Տե՛ս անդ, էջ 7—48. Կ. Կոստանյանցի առաջաբանը. «Ս. Էջմիածնի վերանորոգությունը ԺԵ դարում»:

ԱՌԱՔԵԼ ՍՅՈՒՆԵՑԻ

1. Կենսագրական։— *Տաթևյան դպրոցի առաջնակարգ եկեղեցական բանաստեղծն է Առաքել Սյունեցին, որի կենսագրության մասին շատ բան չգիտենք։ Նա Գրիգոր Տաթևացու քեռորդին էր և աշակերտել էր նրան, ինչպես պետք է եզրակացնել նրա հետևյալ տողերից*[39].

Զմեծ վարդապետն իմ դասասաց,
Գրիգոր անուն պատճառ բարեաց,
Յիշէք յաղօթս ձեր առ աստուած...
Զիմ մեծ րաբունապետն յոյժ իմաստասէր
ԶԳրիգոր մեծ ճգնազգեաց աղերսէք առ տէր...
Զմեծ վարդապետն իմ հանճարեղ...

Առաքելն արքեպիսկոպոս էր, «Սիւնեաց վերադիտող», այսինքն գլխավոր տեսուչ, առաջնորդ, որ նստում էր Տաթևի վանքում։ Նա բնականաբար հովանավորում և օժանդակում էր իր առաջնորդարան վանքի ծաղկմանը։ Ինչպես տեսել ենք, նա անձամբ ուրիշների հետ գնում էր Սաղմոսավանք՝ Գրիգոր Տաթևացուն իր աշակերտներով վերադարձնելու Տաթև, որտեղից նա այլազգիների պատճառով ստիպված հեռացել էր։ Թովմա Մեծոփեցին, որ Տաթևում լսում էր Գրիգորին, շատ գովում է Առաքելին. «Եւ էր սուրբ ուխտին առաջնորդ հեզահոգին և ընտրեալն յոբովայնէ՝ սուրբ եպիսկոպոսն տէր Առաքել և մեծ իմաստասէրն, *քուերորդին մեծ վարժապետին, որ ունէր զմիտքն իբրև զհրեղինաց. և էր սիրող ամենայն առաքինութեանց»։ Ուրիշ անգամ այս պատմագիրը նրան անվանում է «*իմաստասէր *եպիսկոպոսն և վարդապետն Տէր Առաքել»*[40]։

Գրիգոր Տաթևացին էլ 1407 թ. գովեստով է խոսում Առաքելի մասին, գրելով թե իր գրքով[41] *հիշատակումն լինի՝*

Նախ քեռորդւոյն իմոյ ըստ մարմնի,
Ծընընդամիտ երզաբանի,
Առաքելոյ առաքինի,
Եւ Սիւնական գըլխոյ արհի։

Վերջին տողից էլ իմանում ենք, որ Առաքելը եղել է Սյունիքի «արհին», որ է՝ գլխավոր առաջին եպիսկոպոսը, արքեպիսկոպոսն ու առաջնորդը (գլուխը)։

2. Երկերը։— *Բացի առաջնորդական գործերից և գրականությունից՝ նա ամենայն հավանականությամբ ունեցել է նաև ուսուցչական գործունեություն, և իր աշակերտների համար հորինել է «Մեկնութիւն կամ հա-*

---

39 Առաքել Սիւնեցի, *Ադամգիրք, հրատարակեց Մ. Պոտուրյան, Վենետիկ, 1907, էջ 229, 271, 332 (հիշատակարանների մեջ)։*

40 Թ. Մեծոփեցի, *Պատմութիւն, էջ 51, 53։*

41 Գր. Տաթևացի, *Գիրք Քարոզութեան, Ամարան հատոր, վերջին հիշատակարան, էջ 721։*

մատօտ լուծմունք Սահմանաց՝ գրոցն Դաւթի Անյաղթի», և «Քերականութեան մեկնութիւն» կամ «Քերականութեան լուծումն»։ Եվ իզուր չէ, որ Մեծոփեցին նրան «իմաստասէր» է անվանում։

Բացի այս երկուսից՝ Առաքել Սյունեցին ունի նաև բազմաթիվ ուրիշ արձակ գրվածքներ, մեծ մասամբ քարոզներ և ներբողներ[42], բայց նա ավելի չափածո գրող է, մի «ծննդամիտ երգասաց», արգասավոր բանաստեղծ։ Տաղարանների և գանձարանների մեջ կան բազմաթիվ տաղեր, որոնց հեղինակ դրվում է Առաքել Սյունեցին կամ «Տէր Առաքելը» կամ «Տէր Առաքեալը», ինչպես նա ինքն իրեն անվանել է իր գրվածքների մեջ։ Բայց կան շատ այնպիսի տաղեր էլ, որոնց հեղինակը հիշվում է լոկ «Առաքել» անունով, և այդպիսիները կարող են նաև Առաքել Բաղիշեցունը լինել։ Հավաստի կամ հավանորեն Առաքել Սյունեցունը համարում են մոտ հիսուն տաղ և մի մեծ աստղաբաշխական քերթված «Վասն կոտասան կենդանակերպիցն... ասացեալ ի յԱռաքել վարդապետէ», միջին կա նաև այս տողը. «Տէր Առաքել գրեցի զայս բան»[43]։ Այստեղ քննության չենք առնիլ նրա այս երկերը, այլ միայն նրա մի մեծ քերթվածը, որ հայտնի է «Ադամգիրք» անունով։ Առաքել Սյունեցին, ըստ երևույթին, ունի նաև աշխարհիկ ոդով բանաստեղծություններ, անգամ սիրու երգեր, բայց տողերիս դրողը ձեռի տակ չունի այնպիսիք[44]։

3. Ադամգիրք Գ։— Առաքելի Ադամգրքի երրորդ տպագրությունը[45] կազմված է երեք գրքերից, որոնք ոչ թե նույն երկի մասերն են, այլ ամեն մեկը մի առանձին գործ է. բայց երեքն էլ վերաբերում են նույն նյութին, առաջին մարդկանց—Ադամ-Եվայի մեղանչմանն ըստ Ս. Գրքի։ Ամենից առաջ 1401 թվականի սկզբին հորինված է երրորդ (Գ) գիրքը, ինչպես ինքը հեղինակը հայտնում է այդ գրքի «Յիշատակարանների» մեջ[46]։ Այդ մի փորձ է մի նոր գրական տեսակի։ Առաջին գլուխը ութ-

---

42 «Բազմավէպ», 1913, մարտ, էջ 97—101. Մ. Պոտուրյան. Մատենագրութիւնք Առաքել Սիւնեցւոյ։—Այստեղ հիշված են 12 արձակ գրվածքներ, որոնց վրա պետք է ավելացնել նաև վերևում հիշված ներբողյանը, որ նա ասել է Գրիգոր Տաթևացու մահվան առթիվ։

43 Տպագրված է 1792 Ս. Նոր Նախիջևանում, Հովհաննես Երզնկացու «Յաղագս երկնային շարժմանն» [տպված է «Տետրակ համառօտ և լի...» վերնագրով] աշխատության ետևում, էջ 62—73։

44 Ռուսերեն թարգմանված «Հայոց բանաստեղծության ծաղկաքաղի» մեջ (Антология армянской поэзии, под. ред. С. С. Арутюняна и В. Я. Кирпотина, Москва, 1940), էջ 259—261 «Ադոթք» (перевод М. Кузмина) վերնագրով, Առաքել Սյունեցու անունով տպված են 19 քառյակներ, որոնք շատ գեղեցիկ սիրու երգի տներ են։ Ոչ մի կերպ հնարավոր չեղավ ինձ գտնել դրանց հայերեն բնագիրը։ Այդ ժողովածուի հայ խմբագիրն էլ չկարողացավ հայտնել, թե որտեղից են թարգմանել տվել հիշված բանաստեղծությունը։ Ցավալի է, որովհետև Տեր Առաքելի ամենագեղեցիկ գործերից մեկը պիտի մնա առանց նկատի առնվելու այս աշխատության մեջ։

45 Ա. Սիւնեցի, Ադամգիրք, երեք գիրք՝ Ա, Բ, Գ, ձեռագրների բաղդատությամբ. հին տպագրությունների մեջ՝ 1721 թ. և 1799 թ. պակասում է Բ գիրքը։

46 Անդ, էջ 321. «ի յուի հարիւր Հայոց թուական և յիսներորդ մտեալ նոր ամ». էջ 323. «ի յուի հարիւր Հայոց թուական և յիսներորդ սկսեալ նոր ամ»։

վանկանի քառատող նույնահանգ տներով (թվով 30), դրամատիկական ձևով մի հորինվածք է, մենախոսություններ Ադամի և Եվայի, և կամ խոսքերի փոխանակություն այս երկուսի միջև։ Դրախտից արտաքսվելուց հետո է. նախ՝ ինչպես մի տեսարանի մեջ հանդես է գալիս Ադամը, հետո՝ Եվան։ Դիմում են խաբող բանսարկուին, թե ինչո՞ւ նա նախանձում է մարդուն, կնոջը դարձնելով իր չարիքի ընկեր՝ զրկել է նրանց անճառ փառքից, անմահ կյանքից, ինքն էլ ոչինչ չօգտվելով պիտի ժառանգի անեծքն ու անշեջ հուրը։ Բանսարկուի վրա հարձակվելուց հետո՝ հիշում են իրենց կորցրած վիճակը.

Ադամ ասէ.

Ջերդ զարեգակն էի մարմնով,
Ճառագայթեալ պայծառ հոգով.
Աստուածատիպ ծաղկեալ լուսով,
Ընդ հրեշտակաց պարակցելով։

Եւա ասէ.

Եւ որպէս հարսըն զարդարեալ,
Եւ յառագաստ լուսոյ բազմեալ.
Որպէս դըշխոյ փառօք հըրճուեալ,
Նորանշոյլ ճառագայթեալ։

Ադամը մեղմությամբ հանդիմանում է Եվային. սա մեղքը ձգում է իրեն խաբողի վրա.

Եւա ասէ.

Ինձ վայել է՝ զոր դուն ասես,
Պատճառ չարեաց եղէ ես քեզ.
Բայց դու ականջ դիր որ լըսես,
Ջիս հէնց խաբեաց՝ ինչ ես ըզքեզ։

Ադամ ասէ.

Ես ի սիրոյ քո յաղթեցայ,
Վասն այն ի քէն հէնց խաբեցայ.
Ով որ կընոջն ա՛յլ հաւատայ,
Այսպէս չարիք լինին նմա։

Եւա ասէ.

Ես վասըն քո չար չկամեցայ,
Վասն ա՛լ փառաց զայն խորհեցայ.
Քո ինձ լըսելն ես չշահեցայ,
Այլ զքեզ քան ղիս առակ տեսայ։

*Ադամը շարունակում է իր հանդիմանական խոսքերը։ Եվան արդա-
րացնում է իրեն.*

Եւա ասէ.

Ինձ լըսեցեր վասըն փառաց,
Հանդիպեցար անարգանաց.
Համբերեսցուք չարչարանաց,
Քանզի կերաք մեք հետ իրաց։

Հետո երկուսն էլ դղյագին ողբում են իրենց վիճակը.

Ադամ ասէ.

Ահա բանամ զբերանս ցաւօք,
Աղաղակեմ հառաչանօք.
Սաստիկ գոչիմ դառն արտասուօք,
Քանզի ի հուրն անկայ աղգօք։

Եւա ասէ.

Կըսկըծեցաւ սիրտս ի փորիս,
Ընդ ճաշակել դառըն պտղիս.
Մորմոքեցաւ առ իս հոգիս,
Ընդ բարբառել Թիւնաւորիս։

Ադամ ասէ.

Հառաչելով զանձն իմ բախեմ,
Գոչմամբ ըզսիրտըս պատառեմ.
Ճիչ բառնալով աղաղակեմ,
Մինչև ի հող դարձեալ նիրհեմ։

Եւա ասէ.

Քունըս հատեալ է ինձ յաչաց,
Ի սաստկագին հառաչանաց.
Երկունք մահու զիս պաշարեաց,
Զի ինձ անշէջ հուրն է վառած։

Ադամ ասէ.

Լալով իմ սիրտս ոչ հանդարտի,
Որքան ողբամ՝ հոգիս մաշի.
Հեղձամղձուկ լինիմ յերկրի,
Յետո ի հուրն անշիջելի։

Եւա ասէ.

Ինձ հուր վառեալ կայ ի սըրտիս,
Եւ մորմոքէ միշտ ըզհոգիս.
Ծուխ և ծրծումբ այս մըրըրկիս
Ջթողու հանգչել ինձ յաշխարհիս։

Ադամ ասէ.

Ես որպէս մոմ հալեալ դողամ,
Հառաչանօք զանձն իմ ողբամ.
Թ՝ յորժամ մատնիմ ի դատաստան,
Աստուծոյ ի՞նչ տամ պատասխան։

Եւա ասէ.

Դու որ յինէն եղեր խաբած,
Այդքան ողբաս տարակուսած,
Ես որ պատճառ եղէ չարեաց,
Ինձ թէ քանի՞ հուր կայ վառած։

Վերջը երկուսն էլ մեղքը ձգում են աստուծու վրա, ասելով, որ եթէ նա ծառն ու պտուղը կամ օձը ստեղծած չլիներ, կամ իրենց պատվիրանուած և անձնիշխան թողած չլիներ, ապա.

Ջէաք խաբեալ որպէս անբան,
Կամ մերկացեալ զփառս անվախճան։

Շարունակության մեջ իշխում է ոտանավորով մեկնաբանությունը հեղինակի կողմից, թե ինչո՛ւ նախամարդերն այնպիսի փորձանքի պիտի հանդիպեին։ Նա մեղադրում է նախնիներին, որ օձին են լսել և ոչ աստուծուն. նրանք պատասխանում են, թե իրենց հանցանքը մի խրատ պիտի լինի մարդկանց համար։ Ադամը դարձյալ ողբում է, որ կորցրել է իր նախկին վիճակը։ Հեղինակն իր կողմից դիմում է բանսարկուին և օձին՝ ուժեղ խոսքերով բնորոշելով նրանց. վերջիններս պատասխանելով՝ արդարացնում են իրենց։ Ապա նա մի գլուխ նվիրում է «արարչությանը» և վերջին գլուխը (ժ), դարձյալ «վասն օձին և բանսարկուին, թէ որպէս պատրեաց զնախնիսն»։ Այս է ահա այս «Ադամգրքի» Բ—ժ գլուխների բովանդակությունը։

Մեջը կան սակավաթիվ գեղեցիկ տներ. բայց այնքան մեծ տեղ են բռնում մեկնությունն ու դատողությունները ժամանակին հետաքրքրող կրոնական հարցերի մասին, որ ամբողջությունը դառնում է ձևով անկատար մի երկարաբան գործ։ Հեղինակը չի կարողացել մինչև վերջը պահել սկզբնական հղացման ձևը. գործող անձերին—Ադամ, Եվա, բանսարկու, օձ, աստված—հետզհետե բեմ հանելով՝ նրանց բերանով հայտնել կարևոր համարած նյութը։ Այդ, երևի, անհնարին է եղել այն շրջանում,

երբ իշխում էր սքոլաստիկական մեկնաբանությունը, որը բանեցնելը համարվում է ամեն հեղինակի համար մի անհրաժեշտ պահանջ ու պարծանք, մանավանդ որ Առաքելն իր այս աշխատությունը հորինել է Գրիգոր Տաթևացու հրամանով ու ծրագրով և «նա ուղղեաց բզկարգ բանին ըստ իւրաքանչիւր պատշաճին», ասում է նա երկրորդ հիշատակարանի մեջ[47]*։*

Բայց և այնպես Տեր Առաքելի այս բանաստեղծության մեջ որոշ չափով կա մի նորություն, որ ըստ երևույթին հաճելի է եղել ժամանակակիցներին։

4. Ադամգիրք Ա։—*Առաջին դիրքը բավարարություն չի տվել բանաստեղծ հեղինակին իրեն. ուստի նա 1403 թվի սկզբներին գրել է մի ուրիշ «Ադամգիրք», ըստ տպագրածին՝ Ա-ը*[48]*, ըստ գրության ժամանակի՝ երկրորդը.*

Ի յութ հարիւր Հայոց թվական,
Յիսուն 'ւ երկու մտեալ նոր ամ,
Խորհրդաւոր բանըս գրեցան՝
Ի խրախութիւն սըրտից մարդկան։

*Այս գիրքն էլ նախորդի պես լի է նման թերություններով և ավելի ևս մեծ չափերով, որովհետև ամբողջի ծավալն էլ ավելի մեծ է. բայց անպայման մեծ են սրա և առավելությունները։ Այս անգամ Առաքելը գրել է մի գեղեցիկ վիպական բանաստեղծություն, մի գրական տեսակ, որ վաղուց արդեն սիրելի էր հայ ընթերցողներին։ Նա հորինել է մի կրոնական քերթված՝ նյութ առնելով Ս. Գրքից Նախնիների մեղանչումը—***դրախտի կորուստը***, ինչ որ շատ ուշ դարձած է բանաստեղծության առարկա այլ ազգերի մեջ։ Այս քերթվածն իր վիպական մասով մի սիրուն նորություն էր մեր կրոնական բանաստեղծության մեջ, մի ուշագրավ ընթերցանության գրվածք, որ բավարարություն է տվել ոչ միայն ժամա-*

---

47 *Անդ, էջ 324. բերենք և հետևյալ տները.*

Վերադիտողն իմ ըստ հոգոյ,
Եւ ազգակից հիքիս մարմնոյ,
Նա հըրամեաց ինձ գըրելոյ
Զոտանաւորքս ըստ խորհըրդոյ։
Ասաց գըրել ինձ ըստ կարգի
Յաղագս նախնեացն յիշատակի,
Վասն Ադամայ և Եւայի,
Ի դէմս օձին և բանսարկուի։
Բարունապետ յոյժ պանծալի,
Ծով իմաստից, ծաւալք շնորհի.
Ի նոյն շնորհէ մասն ինչ առի,
Զոտանաւորքս շարադրեցի...

Ապա 16 գեղեցիկ տներով գովաբանում է նա Գր. Տաթևացուն։

48 *Անդ, էջ 229։*

նակակիցներին, այլև հետագա դարերում, անգամ 19-րդ դարում, ինչպես երևում է այն հանգամանքից, որ դա երկու անգամ տպագրվել է 18-րդ դարում՝ 1721 և 1799 թվականներին։ Այժմ էլ դրա որոշ մասերը կարդացվում են հաճույքով։

Պատմվածքը ճաշակավոր է. Աստվածաշնչի պարզ ոճույցը ճոխացրած, կենդանացրած է՝ ստեղծելով արտաքինի և ներքինի—հոգեկան կողմի համար թարմ մանրամասնություններ, նոր մոտիվներ, միջադեպեր ու նկարագիրներ։

Սկզբում, Ա գլխի մեջ, պատմում է արարողության մասին, իսկ Բ գլխի մեջ խոսում է «Վասն գեղազարդութեան Նախնեացն և դրախտին». մի նոր հղացում, որ չկա Ս. Գրքի մեջ։ Ամբողջապես լույս ու փայլ է, ծաղիկ ու բուրմունք, անմահության հոտ, բերկրանք ու ցնծություն։ Եվ երջանիկ է Ադամն իր փառքով.

Անդ լոյս սիրոյն ճառագայթէր,
Եւ խընդութեամբ փառքն փայլէր.
Ուրախութիւն յորդահոսէր
Եւ հրճուանաց ձայնըն հընչէր։

Այս գլուխը (20 տուն) գրվածքի շքեղ նկարագիրներից մեկն է. հավասար գեղեցիկ են գրեթե բոլոր տները.

Էր փառք դրախտին անպատմելի,
Զըքնաղատես և սքխրալի,
Ծաղկունքըն տայր փայլըս փայլի՝
Արեգական նման և լուսնի։
Դէմքն Ադամայ փառօք ծաղկեալ,
Եւ որպէս լոյս ճառագայթեալ.
Ցոլմունք լուսոյ անտի հոսեալ
Եւ որպէս հուր փայլատակեալ...
...Բուրէր և հոտ անմահութեան,
Բերկրեալ խայտար ինքն ընդ ինքեան։
Ադամ ծաղիկ էր նորածին,
Լուսաբողբոջ գարնանային,
Փըթթեալ փառօք ի մէջ դրախտին՝
Ծափըս ծափի տայր ի սըրտին...
Ոտօքըն ճեմս առեալ պարէր,
Ի մէջ ծաղկանցն որ վառ վառէր
Զեռօքըն ծափըս հարկանէր,
Զի խընդութեանցն ոչ հանտարտէր։
Ծառքն և ծաղկունքն որ ի դրախտին՝
Զերդ վարեգակըն փայլէին,
Յանուշահոտ բուրմանց նոցին՝

Որպէս թըմբրեալ լինէր Նախնին։
Մարմնովն անմահ էր ’ւ անթառամ,
Փառօք ծաղկեալ էր զանազան.
Սըրտիւ ցընծայր խրախճանական,
Բերկրեալ ի փառս արքունական...
Անդ հող դրախտին փայլըս փայլէր,
’Ի ի չրոյն ցոլմունք լուսոյ հոսէր,
Օդք զանմահից հոտըն բուրէր,
Հուրըն վառեալ ճառագայթէր։

Ամեն ինչ լուսավոր ու փայլուն էր, բայց միակերպ չէր աստծու և մարդու, ծառերի ու ծաղիկների լույսը,—ասում է բանաստեղծը.

Անդ կերպ լուսոյն էր զանազան,
Ցեղ մ’ անեղին, ցեղ մ’ եզական,
Ա՛յլ ազգ դրախտին, ա՛յլ ազգ մարդկան,
Ծառք և ծաղկանցն այլ զանազան։

Բանաստեղծը տեսանելիքի հետ չի մոռանում նաև լսելիքը, հոտոտելիքն ու ճաշակելիքը.

Անդ աչքն ի գոյն ծաղկանցն հըրճուէր,
Ականջն ի ձայն զուարթնոցն զմայլէր,
Ռընկունք յանոյշ հոտոյն թըմբրէր,
Բերանըն միշտ քաղցր ճաշակէր։

Ադամի փառքն ու հրճվանքն ավելի մեծ էր և այնու, որ նա, աստուծու պատկերը, ծաղկում էր աստվածային լուսով, իսկ

Աստուած ընդ փառք մարդոյն հանգչէր
Եւ յիւր պատկերն ուրախանէր։

Կան միայն աստված ու հրեշտակներ և երկու նախնիները։ Կան և Սադայելն իր դևերով, որոնք արդեն հրկնքից կործանված են անդունդ և ընկած են իրենց սկզբնական փառքից։ Գեղազարդ դրախտը, նախնիների բնակարանը, ու նրանց դրախտային վայելչությունը գրգռում է չար Սադայելի նախանձը, և այս դառնում է մի մոտիվ, մի դրդիչ քերթվածի մեջ գործողություն առաջ բերելու։ Եվ բանաստեղծը բնական ձևով անցնում է «վասն բանսարկուին և օձին և խաբմանն» (Գ. գլ. 130 տուն)։ Այստեղ երևում է Քերթողի շնորհքը տեսարաններ ու դրություններ, հոգեկան վիճակներ ստեղծելու, գործողությունն ընդարձակելու և գործող անձերին խոսեցնելու իրար հետ և բնութագրելու ավելի իրենց ասած խոսքերով։

Ամենից առաջ հանդես է գալիս Սադայելը, «չարն առաջին», իր դևերի հետ (տներ 1—51)։ Նա Ադամի դրախտային երջանկությունը տես-

նելով՝ նախանձից տրաքում է։ Բայց ավելի լավ է՝ բերենք Քերթողի տողերը.

Զայս ամենայն տեսեալ չարին՝
Հեղձամղձուկ լինէր յանձին.
Եւ մորմոքէր կըսկըծագին՝
Պիղծ Սադայէլ չարն առաջին։
Որպէս ըզհուր վառեալ հնոցին՝
Նա բորբոքէր զչարն ի հոգին.
Եւ դիզանայր ծուխ նախանձին,
Կայր խաւարեալ բոլորովին։
Ողբայր սաստիկ հառաչագին,
Եւ մախանօք մաշէր զհոգին.
Զար նախանձովն որ առ Նախնին՝
Հանգիստ չունէր ամենևին։
Զմաղձ դառնութեան իւրոյ անձին
Փըսխէր զդասօքն անդընդային.
Սպառնմամբ ցասնոյր չար բանակին,
Ի բարկութիւն շարժէր զնոսին։

Ժողովվում են նրա մոտ խավարային դասերը, որ իմանան, թե ի՛նչ է կամենում իրենց պետը։ Եվ նա՝

Ասէ «Բերէ՛ք զարկածք չարին
Առ հասարակ ամենեքին.
Արկէ՛ք ի բովս հրահալոցին,
Տեսցուք, թէ զինչ ծնանիցին։

Սադայելի հպատակները բերում են «չարի արկածները», այսինքն չար փորձանքները, ամեն տեսակ մեղքերի պատրանքները, ինչ որ ապագայում լինելու էին, լցնում են անշեջ հրատի բովի (քուրայի) մեջ ու բորբոքում և իրենց խոսքերն ասում, ճիշտ ինչպես նույնը, ըստ միջնադարյան սնահավատքի, իբր չար ոգու զորությամբ անում էին կախարդները։ Եվ ի՞նչ են ասում չար ոգիները Սադայելին։ Մենք Ադամի ծնունդներին չար կանենք,— ասում են նրանք,— իսկ նրան, այդ առաջին մարդուն, դու պիտի խորտակես։ Դու հակառակ կանգնեցիր Արարչին, և մենք քեզ հետևելով՝ անճառ փառքից արտաքսվեցինք, իսկ այս հողածինը մեզ հակառակ՝ պիտի գնա և բնակվի Հզորի մոտ։ Այդ դեպքում մենք էլ չենք կարող հաղթել նրան։ Այժմ է ժամանակը նրա կորուստը հնարելու։ Մենք քեզ շատ բամբասեցինք, թե ինչո՛ւ հակառակ բան չի մտածում։ Դու շատ զորք ունես.

Այնպէս մեծ չար խորհեա՛ դոցին,
Որ յաւիտեան ոչ ազատին.

Զի վիշտք չարեաց հողեղինին
Յիւր արարիչըն հասանին։

Մինչ այդ Բանսարկուի բովը վառվում է և՝

Հալեալ ծրնաւ ղպատկեր չարին,
Որպէս և որթն յանապատին։

Այդ ժամանակ ահա Բանսարկուի մտքում ծնվում է իր անելիքը.

«Ուրախ լերուք, ասէր ցնոսին.
Ես իմացայ զկորուստ մարդին»։

Եվ նա բացատրում է, թե իրենք անհնազանդության պատճառով են արտաքսվել երկնքից, այնպես պիտի անել, որ Ադամն էլ չհնազանդի աստուծուն և արտաքսվի դրախտից։

«Ես Ադամայ յաղթեմ, ասէր,
Բայց դուք կացէք այլոցըն տէր։
Բայց թէ յաղթեմք հողեղինին,
Այն որ հընարք է մեր չարին,
Այլ հնարեսցուք զանհընարին՝
Մինչև ի մահ գալ Անմահին»։

Եվ բանաստեղծը թվում է բազմաթիվ չարիքներ, մեղքեր, որ չար ոգիները պատրաստում են մարդու համար։

Ասեն. «Բերէք զանպակ գինին,
Ըզդառն և զմրուրն խաւարայինն.
Թաս բըռնեսցուք նախաստեղծին,
Զի նա արբցէ զմահն իւր անձին»։
Բերին ղխաղողն դառնալի,
Զողկոյզըն չար որպէս լեղի.
Արկին ի հընձանըս թիւնալի,
Զի բարկութեան բաժակ լիցի...
Սըրտմտութեամբ զայն կոխէին,
Եւ բարկութեամբըն ճըմլէին.
Ի վիշապաց գինի հանին՝
Խառնեալ թիւնօք մահաբերին։
Զսըրտմըտութիւն իժից չարին.
Զմըրուր մաղձից թիւնաւորին,
Զի որ ըմպէ զնա կամովին,
Այլ հնարք չըկայ թէ բըժըշկին։

Պեսպես սկավառակների մեջ լցնում են այն գինին, որ զանազան մեղքերի որակ ուներ,— «ոմն գինի յիմարութեան», «ոմն գինի մոռա-

ցութեան», «ոմն գինի խաբէութեան», գողութեան, ագահութեան և ամեն տեսակ մեղքերի գինին։ Այսպիսի չարիքներ նյութելուց հետո՝ Սադայելը մտնում է օձի մեջ, որ սկզբից հենց ոխ ուներ Ադամի դեմ, որովհետև սա նրա անունը «օձ» էր դրել, իսկ այս անունն այն կենդանին իր համար սարսափ էր համարում։ Բանսարկուն, որ մտնում է նրա մեջ, իր թույնով լցնում է նրան, որ առաջ թունավոր չէր։

Գալիս է թունալի օձը Եվայի մոտ կանգնում ու խաբում նրան (տներ 52—72).

Ասէ. «Ուրախ լեր և բերկրեա՛,
Քեզ աւետիս տամ ՚ւ Ադամայ»։

Նա նենգությամբ ձևանում է նախնիների հնազանդ բարեկամը և ոչ անգետ, ինչպես անասունները, այլ իբրև իմաստուն, որ գիտե ծածուկ բաները, լինելիքները. գիտե, որ մարդկանց համար մի ուրիշ մեծ փառք կա, որ Ստեղծողը ծածկել է, չի հայտնել նրանց։ Եվան հավատում է, թե նա ամեն բան գիտե։ Իսկ օձը շարունակում է շողոքորթելով.

«Դու իմ դրշխոյ ես անձնիշխան,
՚Ի ես քո ծառայ հնազանդութեան.
Որքան դու տէր լինիս ու իշխան,
Այնքան փառօք ես ճոխանամ...
«Բայց երբ հասնիս այնըմ փառաց,
Հրաշափայլիս իբրև զաստուած.
Ի յանճառ կեանս հրրճուանաց՝
Յիշեա, թէ նա՛ զայս բարբառեաց»։

Ուրեմն նա, որպեսզի հավատացնի Եվային, թե իր ասելիքը ստույգ է, այնպես է ձևացնում, թե իբր ինքն իր (օձի) օգտի համար էլ է մտածում։ Բայց նախ քան գաղտնիքը հայտնելը՝ մի պայման է դնում, որ Եվան այն չասի Ադամին, Ադամը չիմանա այն,

«Զի նա հրպարտ է, բարկանայ,
Եւ անկատար բանըս մրնայ.
Բայց դու հնազանդ ես, հաւատա՛,
Զի դո՛ւ լիցիս տէր Ադամայ»։

Այսպես նա խորամանկությամբ գրգռում է Եվայի անձնասիրությունը։ Ապա պահ մի լռում է, մինչև որ կախարդելով խելքահան է անում նրան, և ասում, թե՝ ինչու ստեղծողը նախանձել է և պատվիրել. «Մի՛ ուտեք յամէն ծառոց»։ Եվան հիմարանում, դառնում է օձի խոսակիցը և առանց Ադամին հարցնելու՝ պատասխանում է.

«Ծառոց դրախտիդ որ այսըր կան՝
Մեզ ուտելոյ հրաման տուան,

Բայց ի ծառոյն չար գիտութեան,
Ասաց չուտել, զի մահ կու տան»։

Խրոխտալով ուրախանում է Չարը. նա արդեն գիտե գաղտնիքը և ասում է, թե Տերն այդպես պատվիրելով՝ խաբել է նրանց, և որպեսզի իր ասածը հաստատի, ավելացնում է, որ եթե այն ծառը բարիքի պատճառ չլիներ, ինչո՞ւ պիտի աստված ստեղծեր այն։ Դրա պատուղն ուտողը ոչ թե կմեռնի, այլ կաստվածանա.

«Թէ դուք ուտէք՝ աչք ձեր բանան,
Իբրև զաստուած լինիք բնութեան։
Ահա ձեզ ձայն մեծ աւետեաց,
Որ ի յականջըս ձեր հընչեաց,
Զանճառ խորհուրդ զոր Տէր ծածկեաց,
Ես յայտնեցի ձեզ սիրելեաց»։

Այստեղ վերջացնում է օձն իր ասելիքն ու դերը։ Բանաստեղծը դառնում է Եվային և շատ կենդանի պատկերացնում է նրա վիճակը պտուղն ուտելուց առաջ, ուտելիս և հետո (տներ 73—86)։ Նա, թեթևամիտ Եվան, ցնծում է փառամոլությամբ. կարծես մի նոր արև ծագած լիներ իր գլխին։ Նա արդեն մոռացել էր աստուծու պատվերը և մինչև անգամ խեթ սրտով էր վերաբերում նրան, որ արգելել էր պտուղն ուտել. զի երկնքից ընկած չար փայլակն, այսինքն Սադայելը,— ասում է բանաստեղծը,— նրա խելքն առել էր, միտքը խավարեցրել։ Ուրախությունից ի՞նչ էր անում նա.

Խաղայր մարմնով զինչ դիւահար,
Ճեմս առնելով պարէր յերկար,
Վազէր ի ծառն անասնաբար։

Պտուղն առնում է ձեռը, բայց դողում է մարմնով. զի դեռ կասկածում է, թե մի՛ գուցե կորուստ լինի։ Պտուղը դնում է բերանի մոտ, բերանը չի բացվում, բերանի պահապանները—շրթունքներն ու ատամները փակվում, արգելում են.

Իսկ չար լեզուն որ բարբառէր՝
Ի ներսկուսէ զփականս բանէր...
Բացեալ զբերանըն դրժնային՝
Ծամեաց ըզթիւնքն օձի լեզուին,
Զմաղձըն մահու որ ի պըտղին՝
Նա կլանէր բոլորովին։

Եվ հանկարծ պատահում է սպասածի հակառակը.

Յանկարծ լինէր ի հիացման,
Ետես զոր ոչ կարծէր յինքեան.

Խլեցին ղլուսոյն պատմուճան,
Լինէր խաւար գիշերանման։

Նա սկսում է մորմոքալ, կսկծալ, հառաչելով աղաղակել. սաստիկ գոռում, գոչում է ինչպես անբան, բարձրաձայն ճչում է մոլեգնած.

Նա արտասուս սաստիկ հոսէր,
Լալով միշտ զանձն իւր հեղհեղէր,
Որպէս սգաւոր զհերսըն փետէր,
Եւ արեամբ զանձն իւր շաղախէր։
Որպէս մոլեալ ինչ կատաղէր,
Որ և ըզ·հիս րազկին ուտէր.
Քունըն հատեալ, հանգիստ չունէր,
Յաղաղակէն ոչ դադարէր։
Յերկինս հայել՝ սիքն մըթնէր,
Դիտել պ·հրկիր՝ միշտ խաւարէր.
Յետ և յառաջ տարակուսէր,
Յաջ և յահեակ միշտ երերէր։

Եվայի դառն դիպվածի նմանը ոչ եղել է և ոչ էլ կլինի,— ասում է Քերթողը,— ամեն տեսակ դժնդակ ցավ երևում էր նրա մեջ։ Նա այնքան· կսկիծ ունեցավ, որքան ունենում են մարդիկ, երբ մեռնում են և դժոխքում տանջվում անվերջ։

Հերթը հասնում է Ադամի խաբվելուն (տներ 87—130)։ Ս. Գրքի այս կարճ խոսքը՝ «Եւ ետ առն իւրում ընդ իւր, և կերան»՝ բանաստեղծն ընդարձակել, դարձրել է առն և կնոջ հարաբերությունների մի սիրուն պատկեր, որի մեջ Եվան, որ արդեն ճաշակել է բարու և չարի գիտության ծառի պտուղը, հանդես է գալիս ոչ իբրև մի պարզամիտ էակ, այլ արդեն ճանաչում է իր չարն ու բարին, իր մարդու թույլ կողմը, և թե ինչպես պիտի ազդել նրա վրա, որ ենթարկվի իր կնոջը և հետևի նրան։ Ադամը միամիտ ու թույլ է, նա սիրում է Եվային. սկզբում տատանվում է, բայց Եվան, ինչպես ասում են, լեզու է թափում, մինչև որ՝

Խարբալեցաւ միտքն Ադամայ...
Խելքն ընդ աչացըն գընացին,
Եթող զաստուած և ոչ ըզկին։

Պետք է կարդալ այս հատվածը՝ բանաստեղծի թեթև ներշնչումն և Ադամ-Եվայի խոսքերի գեղեցիկ տողերը վայելելու համար։ Այստեղ կբերենք սակավաթիվ տներ միայն։

Եկն առ Ադամ որպէս օտար,
Մերկ, խայտառակ անասնաբար.
Ադամ տեսեալ զնա զարմանայր,
Թէ զի՞նչ եղև այդըմ պատճառ։
Ասաց, թէ՝ «Զի՞ կու լաս դու, կի՛ն.

Զի՞ հառաչես ողորմագին.
Այդ ի՞նչ չարիք որ քեզ եկին,
Ո՞ւր է քո լոյս պատմուճանին...»։
Ասէ, թէ՝ «Զիս չարըն խաբեաց.
Պըտղով ծառոյն, զոր Տէրն յայտնեաց.
Առի ձեռօք իմ չորացած,
Եւ մերկացայ յանճառ փառաց։
Բայց թէ դու սէր ունիս ընդ իս,
Փութով լսէ՛ քո կողակցիս.
Առ կե՛ր և դու զպըտուղս ընդ իս,
Զի մնամ ընդ քեզ ես ի դրախտիս։
Թէ կայր քո սէր ընդ իս նախկին՝
Այն սէրն այսօր երևեսցին.
Վասըն սիրոյ քո արարչին
Յիշեա՛ և զմեր սէրն առաջին։
Բայց թէ չլըսես ամենևին,
Յորժամ հհաս ցաւս իմ անձին,
Սուտ է քո սէրն այն առաջին,
Զի ոչ հոգաս վասն իմ դարձին։
Թէ անասնոց լինէր այս չար,
Դեռ մեզ պիտէր զնոսին հոգալ.
Ես քո մարմին՝ այսպէս խոցեալ,
Դու ա՛յդպէս կաս անհոգացեալ...
Ես որ դիպայ այս փորձութեան՝
Մեռեալ ի հող դառնամ անձամբ,
Հոգիս տանջի անանց մահուամբ,
Թող դու մընա՛ս յայդ խնդութեան»։
Պատասխանեալ Ադամ նըմին,
Խանդաղատեալ ի սէր նորին.
Տարակուսեալ մորմոքէին
Ոչ գիտելով ըզդեղ ցաւին։
«Մի՛ մեղադրեր դու ինձ, ո՛վ կին,
Ես նոյն սիրովն եմ առաջին.
Բայց թէ ուտեմ զպտուղ ծառին՝
Ես քեզ նըման պատուհասիմ...»։
Ուրախացաւ կինն ի հոգին,
Զի ետ սիրով զպատասխանին.
Հընար գըտաւ թըշուառ հոգին՝
Սիրով խաբել զմարդն առաջին....

Նա զանազան ձևերով ջանում է համոզել մարդին, որ հետևի իրեն.

«Թէ դու սիրով ուտես վասն իմ՝
Իմ նենգութեան մեղքն ջընջին»։

Վերջիվերջո Ադամը՝ Եվային ազատելու համար՝ ինքն էլ ուտում է պտուղը և նույն վիճակն ունենում, ինչ որ կինը. նա աղաղակելով, ողբում ու վա՛յ է տալիս իրեն։

Հաջորդ Դ գլուխը (12 տուն) ամբողջապես Ադամի ողբն ու սուգն է, որ անում է նա՝ կանխատեսելով իր և իր սերունդների ապագան՝ դրախտից զրկվելը, մահը, դժոխքը և այլն։ Այդ ողբի մեջ մի գլուխ (ե, 28 տուն) նվիրված է «Վասն հոգեվարին և ճանապարհի հոգւոյն և պատերազմի դիաց և կայանին հոգւոցն»։ Հոգեվարի մասին խոսում է և Գրիգոր Տաթևացին[49]*։ Մարդու մահվան ժամանակ՝ հոգին երբ բաժանվում է մարմնից, դեպի երկինք է դիմում իր հրեշտակի ետևից՝ «գնալ ի կայանս հոգւոց»։ Նա դժվարին և անտես ճանապարհին՝ սարսափած ու ապշած վիճակի մեջ է ընկնում. զարհուրում է դևերի բազմությունից, «որ դառն և դաժան կերպարանօք շուրջ լինին ի վերայ հոգւոյն և պատերազմին ընդ նա»։ «Զամենայն մեղս իւրեանց տեսանեն և առաջի բերեն դևքն մանր քննութեամբ, զոր գործեալ են և զոր մոռացեալ»։ Տաթևացին աղդվել է Անտոնի տեսիլից, որ գրել է Աթանասը*[50]*։ Այս երկուսից էլ ներշնչվել է և Առաքել Սյունեցին։ Նյութի հղացումն, ուրեմն, ինքնուրույն չէ, բայց նա բանաստեղծել է Ադամի բերանից իրեն՝ Ադամի և նրա սերունդների համար և զգացմունքի ու պատկերի բավական ուժեղ մանրամասնություններով, որոնց մեջ նա անկախ և ինքնուրույն է*[51]*։*

---

49 *«Քարոզգիրք, ձմերան հատոր», կ. Պոլիս, ՌՃՁԹ (=1189+551=1740), էջ 230—233։*

50 *«Վարք սրբոց հարանց», հատոր առաջին, Վենետիկ, 1855, էջ 17—80. «Վարք նրանելոյն Անտոնի եգիպտացւոյ միայնակեցի, թուղթ Աթանասի»։*

51 *Համեմատելու համար դնում ենք այստեղ Անտոնի տեսիլը (էջ 61)։ Միայնակյաց Անտոնը աղոթելիս «զգաց զինքն յափշտակեալ մտօքն, և... տեսանէր զինքն իբրև արտաքոյ ինքեան եղեալ և իբրև յօդս զինքն առաջնորդեալ յոմանց։ Եւ տեսանէ զոմանս դառինս և անհնարին դժնեայս, որք կային յօդս և կամէին արգելուլ զնա զի մի՛ անցցէ։ Իսկ որք մարտնչէին ընդ նոսա, առաջնորդէին Անտոնի, և պահանջէին նորա բան ի սոցանէ և ասէին, թէ տեսցուք մի՛ գուցէ պարտապան է մեզ. քանզի կամէին ասել իմն բան ի նորա, ծննդենէն և արգելուին զնոսա։ Իսկ որք առաջնորդէին Անտոնի, ասէին ցնոսա, եթէ զծնընդեան նորա տէր ի բաց չնչեաց. այլ յորմէհետէ եղև միայնակեաց և խոստացաւ աստուծոյ իշխանութիւն ունիմ խնդրել ձեզ համարս։ Յայնժամ նորա ամբաստան եղեն և յանդիմանել ինչ ոչ կարացին, քանզի ազատեցաւ ինքն և անարգել եղև նմա ճանապարհն»։ Դարձյալ քիչ հետո (էջ 62). «Եւ ի վեր հայեցաւ և ետես զոմն երկայն ահագնատես չարատեսիլ և ահագին, քանզի կայր և հասանէր մինչև յամպս, և ելանէին ոմանք իբրև թռուցեալք, և նորա տարածեալ զձեռսն և զոմանս արգելոյր և ոմանք ի վերոյ քան զնա թռուցեալք և անցեալք՝ այնուհետև աներկիւղ և անհոգ վերացեալք։ Եւ ի վերայ այսպիսեաց և երկայնն կրճէր զատամունսն, և ի վայր անկելոցն ի նմանէ ուրախ լինէր։ Եւ անդէն վազվաղակի ձայն եղև առ Անտոն և ասէ. իմա՛ որ եղևդ։ Եւ բացան նորա միտքն և գիտաց զի հոգւոյն էին անցք ճանապարհին. և երկայնն որ կայր, նա է որ զչարի ընդ բարիս հաւատացելոց, և որ դատապարտք են նմա՝ զնոսա ունի և արդելու և չտայ անցանել։ Իսկ որք ոչն հաւանեցան նմա, ոչ կարէ ըմրռնել, այլ ի վերոյ քան զնա զանց առնեն»։*

Ավելորդ չի լինիլ այստեղ բերել նաև Սերապիոնի պատմածն Աբբա Մարկոսի հոգւոյ մասին, երբ այս ճգնավորը վախճանվում է. «Իսկ ես ի վեր նայեցայ ափշեալ և տեսի հոգի նորա ի կառս հրեշտակաց սպիտակ աղաբողոնամբ պատեալ, և տանէին զնա զունդք

Առաքելը թանձր գույներով նկարում է մի տեսարան, որով խիստ պիտի սարսռային կրոնամիտ ընթերցողները և Ադամի հետ ասեին.

Վա՜յ իմ աւուր հոգեվարին,
Վա՜յ որ առեալ զհոգիս տանին.
Վա՜յ ապշութեան ճանապարհին,
Վա՜յ որ չգիտեմ, թէ ո՛ր տանին։

Խառնիխուռն երևում են դևերի գնդերը, ահեղ դեմքերով, բերանները բաց արած, մեռելի «մեղաց նամակը», այսինքն մատյանը բռնած։ Ուղեկից հրեշտակը թույլ է տալիս, և նրանք պտտում են հոգու շուրջը, կատաղում նրա վրա, տանջելով նրան՝ պանազան կերպերով կռվում են նրա հետ,

Պէսպէս դիմօք կերպարանին,
Զարատեսակք և դժնային.
Մրոմրոալով միշտ կատաղին,
Եւ պատառել ջանան զհոգին...

Դէմքն այլակերպք և ահագին,
Զարհուրական կերպարանին.
Հուր ցոլանայ յոլընգաց նոցին,
Եւ պաշարէ զգերեալ հոգին...
Զայնիւ գոչեն յոյժ սաստկագին,
Որպէս ճայթմունք յորոտ ամպին.
Եւ ճըչել ձայնից նոցին
Սարսեալ հոգւոցըն նուաղին....
Հոտ գարշութեանց յոյժ զազրագին
Որ ի դիւաց դասէն բուրին...
Շուրջանակի պատեն զհոգին,
Ըստ վեց շարժմանցն որ յանձին,
Ի վեր, ի վար, յաջ՝ւ ահեկին,
Յետ և յառաջ մըրցեալ կըռուին...
Ի խաւարեալ օդոց միջին
Խաւարային դիմօք յայտնին.
Հոգին ապշեալ միտքըն ցընդին,
Միջաբեկեալ յուսահատին։
Եւ ղօղանջեն գոչմամբ նոքին.

Հրեշտակաց փառօք յերկինս սաղմոսիք և երգովք ընդ վերին լուսաւոր օդսն։ Եւ տեսի զքննիչ ոգւոց. տեսի և զգուշութիւն սատանայի զի կային մնային և արգելուին զնա ժամ մի։ Եւ լուայ ձայն յերկնից որ ասէր. ի բաց կացէք յերեսաց լուսոյդ, որդիք խաւարի։ Յայնժամ ձայն եբարձ մի ոմն ի դիւացն, աղաղակեաց և ասէ. փախերուք, որդիք սատանայի, և ամօթալից եղերուք, զի այրդ այդ արդար է։ Եւ իբրև անց վերացաւ հոգի նորա ընդ ամենայն փորձութիւն սատանայի, տեսի իբրև զաչ հրեղէն ի վերայ նորա, և աներևոյթ եղեն յինէն»։ Վարք ս. Հարանց, հատ. երկր., Վենետ., 1855, էջ 205։

«Այո՛, այո՛, աչք մեր տեսին
Զարկածք չարեաց մերոց ի դմին
Ի սկզբանէ մինչ ի վերջին»։

Նրանք ջանում են հափշտակել Հոգին. բայց երբ հրեշտակն ասում է՝ «ի ձեզ սաստէ Տէր»՝ ցրվում։

Ապա այդպես խորտակված, նվաղած Հոգին հրեշտակը հանում է Հոգիների կայանը, ուր Հոգիները՝ նայելով իրենց գործած մեղքերին՝ դաս դաս ամբարված պահվում են հառաչանքով և լաց ու կոծով մինչև դատաստանի օրը, վա՛յ տալով իրենց առաջուց, երբ հարուցյուն և դատաստան սիրտ լինի։

Սրանից հետո բանաստեղծն երկու առանձին գլուխներով (Զ, 37 տուն, է, 56 տուն) գրում է «Վասն ահեղ դատաստանին քննութեանցն» և «Վասն տանջանաց դժոխոց», որոնք երկուսն էլ մեր քերթողների սիրած նյութերից են և նորանոր կողմերից և ինքնատիպ մտքերով ու պատկերներով մշակված են Առաքելի ձեռով։ Ադամգրքի այս վերջին երեք գլուխները (Ը, Զ, է) շատ հաճելի են եղել մեր հներին, ուստի դրանք մի քանի ուրիշ հատվածների հետ, իբրև անկախ քերթվածներ, առնված են ծաղկաքաղ ժողովածուների մեջ։

Դժոխքի տանջանքների նկարագրով և տանջվողների ողբով՝ վերջանում է և Ադամի ողբը.

Այս ողբ երգոց նախաստեղծին,
Որ դէմ քննութեանը բարբառին.
Այս դոյժ ողբոց միշտ կատարին
Յանցեալն, ներկայս և յապառնին։

Այսպես է վերջացնում բանաստեղծն այդ գլուխը, միանգամայն և Ադամի «տեսիլը»։ Մենք զգում ենք, որ գործող անձը, Ադամ, մեղանչելուց հետո, դեռ աստուծուն չհանդիպած, իր գլխին վայ տալով, ինչպես մի կարճատև երազի մեջ տեսնում է շատ երկար ու դառն բաներ, և՛ աստուծուն իր վճռով, և՛ Հոգեվարը, և՛ վերջին դատաստանը, և՛ դժոխքը։ Բանաստեղծը, ցավոք, տարտամ ու ոչ պայծառ է հորինում Ադամի այս «տեսիլը», մեկ մեկ էլ իր անձը, դեմքը խառնում է վիպական պատմվածքի մեջ և ավելորդ կրկնություններով ձիգ դարձնում այն։ Արվեստի պակասություն է այդ։ Ավելի մեծ պակասություն է այն, որ դժոխքի տեսլից հետո, մոռանալով, որ ինքը վեպ է հորինում, նա երեք գլուխ (Ը, Թ, ժ, էջ 56—77) նվիրում է մեկնաբանության և իր տեսություններն է բացատրում իրեն հետաքրքրող նյութերի մասին («Վասն չարին թէ ուստի՞ ունի զսկիզբն կամ ո՞նչ է», «Վասն ցանկալոյ բարոյն», «Վասն մարդոյն թէ ո՞րպէս է պատկեր աստուծոյ...»)։ Պատմվածքին չեն վերաբերում նաև ԺԲ և ԺԳ գլուխները (էջ 82—102) իբրև մեկնություններ։ Այս հինգ գլուխները երբ անջատվում են, մնացած ԺԱ, ԺԴ, ԺԵ գլուխների

մեջ պատմվում է քերթվածի գործողության շարունակությունը. «Վասն՝ յետ յանցման Ադամայ՝ հարցափորձելոյն աստուծոյ, որ ասաց, թե՝ Ո՞ւր ես»։

Յետ ողբալոյն տեառն Ադամայ
Հարցաքննել գայ ըզնոսա.
Զի ղըղջացեալ ասեն մեղայ,
Եւ ջընջեսցին յանցանք նոցա։

Տէրն ասէ.

Ո՞ւր ես, Ադամ, մարդս առաջին,
Ո՞ւր է քո փառքն հրաշալին.
Փառօք եդի զքեզ ի դրախտին,
Եկեալ չգտի ընդ նոյն տեղին։

Ադամ ասէ.

Լուայ ըղձայն գնալոյ քոյին,
Որ հեռանաս վասն իմ յանցին.
Երկեայ միայն կեալ ի դրախտին,
Եկեալ թագեայ առ թզենին,

և այլն։

Տիրոջ, Ադամի, Եվայի միջև տեղի է ունենում մի տրամախոսություն, որի հիմքը Ս. Գրքից է, բայց շատ սիրուն ղարգացրել է բանաստեղծը։ Նրանք «մեղայ» չեն ասում և մեղքը նույնիսկ աստուծու վրա են ձգում։ Եվ աստված դնում է իր հայտնի վճիռը Ադամի, Եվայի և օձի վերաբերմամբ։ Այս ԺԱ գլխի բնական շարունակությունն է ԺԴ և հետո՝ ԺԵ գլուխն («Վասն տարակուսանօք փոշիմանելոյն նախնեացն ի զրկմանէ ծաղկապանծ փառացն», «Վասն զղջմամբ ողբալոյն Եւայի»)։ Ադամն ու Եվան դրախտից արտաքսված են, զղջում են իրենց հանցանքի համար, և ցավ ի սիրտ հիշում են դրախտի վայելչությունները. ողբում են իրենց ողորմելի վիճակը և մխիթարվում են, որ վերջը պիտի փրկվեն։ Այս գլուխները գեղեցիկներից են. բանաստեղծը մի երկրորդ անգամ Ադամի բերանով սքանչացած նկարագրում է նրանց կորցրած դրախտի շքեղությունը և ավարտում վիպական քերթվածը, բայց ոչ «Ադամգիրքը»։ Նա գրում է էլի 11 գլուխներ, «Վասն կողին» [այսինքն՝ կնոջ] և այլն, որոնք սքոլաստիկական մեկնություններ են, որոնցով Առաքել Սյունեցին իր սրամտությունն է ուզեցել ցույց տալ։ Ա՛յ գլխի մեջ (ԺԸ) բնութագրում է կանանց ոչ լավ կողմից, առաջաբանի մեջ զգուշացնելով այսպես.

Թէ հանդիպիս դու մօտ ի կին,
Զայս բանքըս մի՛ կարդալ նոցին.
Որ չանարդեն զգրրող սորին,
Կամ բանքս ելնէ յաչաց նոցին,

Կամ զի կողն ոսկր է անըզգայ,
Ինքն ըստ ինքեան բան չիմանայ,
Վասն այն կընոջըն խելք չըկայ,
Ջինչ որ լըսէ՝ շուտ հաւատայ։

Եվ այսպես ամբողջ 36 տուն։ «Կողն» այնքան մեծ տեղ է բռնում «Ադամգրքի» այս երկրորդ մասի մեջ, որ ամբողջը կոչվել է նաև «Կողգիրք»։

Առաքելը չի բավականացել երկու «Ադամգրքերով», որոնց մասին խոսվեց վերևում. նա նույն 1403 թվականին, ինչպես հիշատակարանից (էջ 270) իմացվում է, գրել է մի երրորդ (ըստ տպագրության Բ=երկրորդ) Ադամգիրք տասնումեկ (6+5) վանկանի տողերով, սկզբից մինչև վերջը «էր» հանգով։ Բովանդակությունը նույնն է, ինչ որ նախորդ երկուսինը։ Գրվածքն ավելի սեղմ է, վիպական մասը շատ չնչին է, ավելի ուշադրություն է դարձրած մեկնությանը, թե ի՛նչ «խորհուրդ» ունի Ադամի մեղանչումը։ Կան, հարկավ, նաև սակավաթիվ գեղեցիկ տներ։

Առաքելն ունի և մի չորրորդ հատոր Ադամգրքի, որ դեռ չի տպագրված։ Այդ կոչել են «Դրախտագիրք», գրված է 4+4+5 վանկանի տողերով, ամբողջը նույն հանգերով։ «Հեղինակին նպատակն եղած է այս աշխարհի բնակիչներն իր հետ առնելով՝ փնտռելու ելնել այն անծանոթ քաղաքը՝ ուսկից արտաքսված էր Ադամ»[52]։

5. Հորինվածքի թերությունն և գրական արժեքը։— *«Ադամգրքերի» զեղարվեստական կողմից թուլությունը ծագում է գլխավորապես այն հանգամանքից, որ հեղինակը կրկին նպատակ է դրել՝ 1. ոտանավորով բանաստեղծորեն պատմել Ս. Գրքի գրույցը. 2. ոտանավորով հորինել հին մեկնաբանների կարծիքները Ս. Գրքի գրույցի մասին և իրենից էլ, որքան կարելի է, շատ բան ավելացնել ուրիշների ասածների վրա։ Այդ վերաբերում է «մարդեղության խորհրդին», որով բացատրել են Ադամ-Եվայի գրույցը։*

Նա իր մեկնություններն անում է ոչ միայն հատուկ գլուխների մեջ, այն էլ երբեմն ընդհատելով պատմվածքը, այլ մեկ մեկ նաև պատմվածքի ընթացքում։ Ինչքան էլ կոկ ոտանավորներով են գրված այդ կտորները, այժմ դրանք, բացի թերևս սակավաթիվ քաոյակներից, գրական արժեք չունեն։ Առաքելի աշխատության այդ մասը մեզ համար հետաքրքիր է այնու, թե որքան ղորեղ է եղել այն դարում սքոլաստիկական բացատրությունը, և որքան չնչնահավատ են եղել այն ժամանակի գիտնականներն անգամ, որոնք իրենց «գիտնականությունը» ցույց են տվել պարծանքով, բազմաթիվ այնպիսի համեմատություններ անելով և «խորհուրդներ» ու «խորհրդավորություններ» գտնելով, որոնց վրա միայն զարմանալ կա-

---

52 *«Բազմավէպ», Վենետիկ, 1913, մարտ, էջ 99.* **Մ. Պոտուրյան,** *Մատենագրութիւնք Առաքել Սիւնեցւոյ հոլվածի մէջ։*

րող է արդի մարդը։ Այդ նկատմամբ այստեղ բավական է միայն հիշատակել «Ադամգիրք Ա-ի» իբ գլուխը (էջ 159 և հտն.)։ Բանաստեղծ Ա. ոաքելին կաշկանդել է Գրիգոր Տաթևացու ազդեցությունը և կարծես նա մրցում է իր քեռու հետ, ոտանավորներով մեկնություններ աներով երբեմն նույն խնդիրների մասին, ինչ որ Տաթևացին բացատրել է իր աշխատությունների մեջ։ Եվ բնական է այդ, քանի որ Տաթևացին է տոն տվել նրան Ադամի և Եվայի մասին գրելու և նույնիսկ «ուղղել է ըզկարգ բանին» առաջին գրքի (ըստ տպագրվածին՝ Գ գրքի) վերաբերմամբ[53], Որ Առաքելը երեք գիրք է հորինել նույն նյութի մասին, այդ ցույց է տալիս, որ իր գրվածքներն ըստ երևույթին բավարարություն չեն տվել նրա գեղարվեստական զգացմանը, անշուշտ հենց այն սառն մեկնաբանական դատողությունների պատճառով։ Նրա երեք Ադամգրքերը թողնում են այն տպավորությունը, թե դրանք առանձին փորձեր են մի մեծ քերթվածի համար, ինչպես մի մեծ կոմպոզիցիայի համար կատարված նախանկարներ, որոնց հիման վրա պետք է գեղարվեստագետն ստեղծեր իր իսկական երկը։ Բայց բանաստեղծն այդ չի արել, և նրա այդ երկերը մնացել են իրարուց անջատ և անկախ, բայց և չափազանց նման բաներ։

Եթե առաջին Ադամգրքի մեկնաբանական մասերն (վերջի գլուխները և վերևում հիշվածՙ Ը, Թ, Ժ, ԺԲ, ԺԳ, 56—77, 82—102) անջատվեին ի մի առանձին հավելված,—և դժվար չէր այդ անելը,—և հեղինակը Բ և Գ (ըստ տպագրվածին) Ադամգրքերի վիպական գեղեցիկ կտորներն օգտագործած լիներ Ա Ադամգրքի մեջ, ապա կունենայինք մի հատիկ իսկական, գեղեցիկ վիպական քերթված, փոխանակ երեքի։ Այնպես էլ, սակայն, ինչպես կա, Առաջին Ադամգիրքը (ըստ գրության ժամանակի՝ երկրորդը), մեր երրորդ կրոնական բանաստեղծական մեծ երկն է, որ ունի իր բազմաթիվ առանձին գեղեցկություններ։ Առաջին երկուսը՝ Գրիգոր Նարեկացու Ողբերգությունը և Ներսես Շնորհալու Ողբերգությունը («Յիսուս որդի») քնարերգություններ են։ Իսկ Առաքելի գործը մի առարկայական

---

53 Առաքել Սիւնեցի, *Ադամգիրք, Վենետիկ, 1907, էջ 324.*

... Նա հրամայեց ինձ գրել ոյ
Ջոտանաւորքս ըստ խորհրդոյ։
Ասաց գրել ինձ ըստ կարգի,
Յաղագս նախնեացն յիշատակի,
Վասն Ադամայ և Եւայի,
Ի դէմս օձին և բանսարկուի։
Բարունապետ յոյժ պանծալի,
Մով իմաստից ծաւալք շնորհի,
Ի նոյն շնորհէ մասն ինչ առի,
Ջոտանաւորքս շարադրեցի։

Մի քիչ վերևում էլ Գրիգոր Տաթևացու համար ասում է.

Զի նա ուղղեաց ըզկարգ բանին,
Ըստ իւրաքանչիւր պատշաճին։

բանաստեղծություն է։ Այդ էր ժամանակի պահանջը։ Կրոնական ոգին չէր մեռած, բայց սառած էր. մարդկանց հարկավոր էին կրոնական բանաստեղծական գրվածներ, ոչ թե նրանց վրա աղոթելու և իրենց մեղքերն ողբալու համար, այլ զվարճությամբ կարդալու և սովորելու։

ԱՌԱՔԵԼ ԲԱՂԻՇԵՑԻ[54]

«Ողբ մայրաքաղաքին Ստըմպօլա և վասն գալստեան ֆրանկաց ազգին և ազատիլ զաշխարհն Հայոց Առաքել վարդապետէ ասացեալ», տըպված է «Անահիտ», 1901, էջ 217. «Վենետիկ վանք, Տաղարան թիվ 529, բաղդատած ուրիշ ձեռագրի մը հետ»։

Աթոռն էջմիածին տեղափոխվելուց հետո՝ չի դադարում քաղաքական անկախության մասին երազն ու երգը, որ սևեռված մնում էր նույնիսկ մեր ժողովրդի ամենադժբախտ օրերին, երբ 1453 թ. օսմանյան Սուլթան Մահմեդ II առնում է Կ. Պոլիս, կոտորում քրիստոնյաներին, այդ դեպքը ցնցող տրտմական տպավորություն է թողնում արևելյան քրիստոնյաների վրա... Վերջին քրիստոնեական պետությունը, որ արեվելյան քրիստոնյաների հենարանն էր, հույսն ու ապավենը, ընկնում է։ Արևելքն ամբողջ մնում է մահմեդականների ձեռին։

Այդ ցնցող տպավորության տակ, ահա, Առաքելը, ինչպես քերթվածից իմանում ենք, նույն 1453 թվին ողբում է այդ եղելությունը։ Քերթվածը շատ մեծ է, 4+4+4+4 տողերով, սկզբի մասի բոլոր տողերը (թվով 52) վերջացնում է «Ստըմպօլ» անունով.

Արդ ամենայն աղգք և ազինք
ողբան ըղքեզ, քաղաք Ստըմպօլ։

Երկրորդ մասի (30 տող) ամենաառաջին տողը՝ «Բիւզանդիա» անունով.

Այլև կոչեմ ղքեզ յանուանէ,
ընտիր քաղաք Բիւզանդիա,
Որ անօրէնք պաշարիցին
և արարին ըզքեզ ղազա։

Երրորդ մասը, 62 տող, բոլորը իճ հանգով, բացի վերջին 6 տողը, որ ի հանգով է։

Կոծի պատճառն այն է, որ քրիստոնեության կենտրոնը դառնում է «չարագործաց հանգստարան»։ Հիացմունքով խոսում է Կ. Պոլսի հին քրիստոնեական փառքի մասին, չհիշելով դավանաբանական վեճերն ու հալածանքները հույների կողմից, որ այդ ժամանակ չկային, այլ միայն

---

54 Տե՛ս Գ. Ջարբհանալյան, Պատմ. հայերեն դպրութ., Բ, Նոր մատենագրություն, Վենետիկ, 1878, էջ 250։

ընդհանուր քրիստոնեական և կուլտուրական տեսակետով մոտենալով քաղաքին։

Դու մարգարիտ տեսակ գանձուց
Հոգևորաց, դու Ըստըմպօլ,
Հանկարծակի կողոպտեցար
յանօրինաց դու Ըստըմպօլ։

Երկրորդ մասի մեջ գովում է Բյուզանդիայի նախկին փառքը և ողորմելի դառնալը և հեթանոսների ժամանակ ծաղրելի դառնալը. միակերպ հինը և արդեն տխուրը, և վերջը նորոգման հույսը։

Վերջը գրում է.

Արդ ակն ունիմ կատարածին,
Թէ նորոգիս Բիւզանդիա,
Եւ ազատիս յանօրինաց բռնութենէ,
Բիւզանդիա։

Ի՞նչպես պիտի ազատվի։ Նորոգվում է խաչակրական արշավանքների գաղափարը, «ֆրանկաց ազգն», որ արևմտյան քրիստոնյաները պիտի շարժին միաբան,

«Գայցեն ծովով և ցամաքով որպես վաստեղս, որ ոչ թուին»։

Նախ Ստամպոլ քաղաքը կառնին, ապա

«Ելցին յերկիրն Արևելից և կոտորին զամենեսին,
Որպէս առիւծ մրոընչելով ի յանօրէնս համարձակին»։

Կառնին Երուսաղեմ.

«Անթիւ լինի զօրք ֆըրանկին որպէս
զաւազ յեզերր ծովին»,
«Առցին զՀոռմոց աշխարհն ամէն,
մինչև ի Մըսըր հասանին»։

«Քակին զդիւաց բնակարան, զանօրինաց ուխտատեղին»։
Կառնին Շահաստան, Դավրեժ, Խորասան, ամենքին կգերեն։

Եդեսիո ողբի նմանողությունը երևում է։ Իսկ Հայոց ազգի՞ն ինչ։

«Ազգըս Հայոց պայծառանայ,
զի յայլազգեացն ազատեսցին,
Բերկրեալ ցնծան ամենեքեան
որպէս յաւուրս Լուսաւորչին»։

Հետո պատմում է Տրդատի ու Գրիգորի գնալը Հռոմ և մի տարի այնտեղ մնալը և «դաշինքը» Կոստանդիանոսի հետ, Հայոց ազգը ֆրանկի հետ դաշինք կապեց.

«Սիրով դաշինս հաստատիցին՝
զազգըս Հայոց ընդ ֆրանկին։
Զորս հարիւր մարդ ի հոն թողին
յԱրշակունեաց պահլաւունին,
Զի մընասցին և աճեսցին,
ֆրանկ ընդ Հայս միաբանին։
Արդ առաջնորդք նոքա լինին
արփական ֆրանկ ազգին։
Առցին զգաւառն Արարատեան,
որ է տեղիք լուսաւորչին.
Թագաւորին յէջմիածին
Վաղարշապատ սուրբ քաղաքին»։

Հեղինակն իրեն համար վերջը գրում է.

«Ես անարժան ամենայնի
որ վարդապետ անունս կոչի...
Եւ ասասցին տէր ողորմի
ինձ Բազմամեղ Առաբելի։

Դա չի կարող Սյունեցին լինել, որ այդ ժամանակ կենդանի չէր լինիլ։

Ողբի կարևոր նպատակն է մարգարեական տոնով քաջալերել լրբավածներին և հուսադրել քաղաքական ազատության վերաբերմամբ, կենտրոնը Վաղարշապատ, որ չունի Շնորհալին։

Բանաստեղծությունը, որ իր գաղափարով կարևոր և ուժեղ է, այնքան թույլ է իր միակերպ ձևով. բայց ժամանակակիցների համար անշուշտ արժեքավոր, նրանց հարկավոր է բովանդակությունը, որ է կենդանի, հուսալից շնչով ու հավատքով, թե հնուց «սուրբ հայրապետներից» մարգարեություն կա ֆրանկաց ազգի գալու համար, այն էլ իբր Տրդատի ղորքից (ազատներից) արևմուտքում մնացած հայերի առաջնորդությամբ։

Այդ հավատը մնում է մինչև օրս, այժմ էլ նախորդ իմպերիալիստական պատերազմից հայ ժողովրդի և Հայաստանի մեծ ավերմունքի ժամանակ դեռ կենդանի մնում է հույսն ու հավատը, թե Հայաստանը, ինչպես առասպելական ֆենիքսը, մոխիրների միջից կվերակենդանանա և կաճի։

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՀԱՎԵԼՎԱԾ

ՍԱՐԿԱՎԱԳ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋԸ

1. Որտեղացի է նա։— *Այս նշանավոր անձի մասին կենսագրական տեղեկությունները տատանվում են։ Այստեղ դնենք նախ Վարդան Արեվելցու հաղորդածը*[1]*։ «Էին և վարդապետք յայնմ ժամանակի՝ Յովհաննէս, որ և Սարկաւագ՝ ի գաւառէն Փառիսոսայ ի քահանայական ազգէ, որոյ յիշատակք ճառագայթիցն փայլին մինչև ցարդ ի բանս իւր և ի նմանէ աշակերտեալսն.— երեմիա, որ և Անձրևիկ, որ և զամս երեսուն չորակետ եղև, և այնչափ հլու եղեալ վարդապետին իւրոյ, որ ի սաստելն երբեմն, թէ՝ «լուռ լե՛ր», զամս երիս ընդ այլ մարդ ոչ խօսեցաւ, բայց եթէ ընդ վարժիչս [այլ ընթերց. վարժիչն] իւր ի կարիս [վար. ի կարասիս, որ սխալ է].— և Սամուէլ երէց աշխարհի, որ զգաւազանն յօրինեաց զԲրոնիկոնին՝ Անեցին [այլ ընթ. Սամուէլ երէց Անեցին, որ...].— և նախ քան զսոսա Անանիա, որ զԱռաքեալսն համառօտեաց հրամանաւ կաթողիկոսին Պետրոսի՝ Սանահնեցին։ Իսկ Սարկաւագ [այլ ընթ. սուրբ] վարդապետն կացեալ ի ժիր մշակութեան զաւուրս իւր՝ հանգեաւ ի հինգ հարիւր վաթսուն և ութ [ՇԿԸ=568+551=1119. Վենետիկի տպագր. մեջ՝ «հինգ հարիւր ութսուն և ութ=1139] թուին. և ղկնի ամի միոյ՝ լծակից իւր Ալաւկայ որդին Դաւիթ, որ Կանոնքն գրեաց դիւրահաս [այլ ընթ. որոյ Կանոնքն է դիւրահաս, որ Կանոնքն էր դիւրահաս].— և Թոքակերայ որդին կոչեցեալ աշակերտ նորին, և այլ արք ճգնաւորք ի յԱղուանս, որպէս Պետրոս Խոնթկայ որդին և Յակոբ սքանչելին... էին և կանայք թագաւորազունք կրօնաւորեալք կուսութեամբ ի Քոբայրն՝ Խորասու և Մարիամ, առ որս գրէր սուրբ վարդապետն Սարկաւագ զգուշական խրատս»։*

Ըստ Վարդան Արևելցու, ուրեմն, Սարկավագ Վարդապետը Փառիսոս գավառից է, քահանայական տոհմից,—ինչպես և գրել ենք վերևում

---

1 *«Մեծին Վարդանայ Պատմութիւն Տիեզերական», Մոսկվա, 1861, էջ 159—160։ Մեր գործածածն այս է։ Վարդան Վարդապետ Մեծն, Հաւաքումն Պատմութեան Վարդանայ Վարդապետի, Վենետիկ, 1862։ Այլև ՀՍՍՀ Մատենադարան, ձեռ. № 1770, էջ 63—64. ընդօրինակած է 1589 թ. Աստուածատուր գրիչը։*

նրա կենսագրության մեջ։ Սխալ է ասել, թե «Վարդանի ավանդության համեմատ անոր հայրն ամուսնացած երեց մըն էր»[2]։ Վարդանն այդպիսի բան չի հայտնել. նա գրում է՝ «ի քահանայական ազգէ». իսկ մեկը կարող է քահանայական տոհմից լինել նաև իբրև քահանայի թոռ, բայց աշխարհականի որդի։

Սամուել Երեց Անեցին գրում է[3]. «Ի ՇՀԸ [=578+551=1129] թվին փոխի յաշխարհէս մեծ վարդապետն **Սարգիս**, որ է ի Փառիսոսոյ՝ որդի քահանայի միոյ, և աշակերտ սորա՝ Երեմիա, որ և յասելն վարդապետին, թէ՝ «լուռ լե՛ր», զամս Գ [=երիս] լուռ եկաց, ընդ միտս և ընդ աստուծոյ խօսէր, որ և Անձրև կոչեցաւ։ Եւ ընկերք սորա՝ տէր Խաչատուր և Գրիգոր և Յովհաննէս և Սամուէլ. ամենեքին սորա Աննեցիք»։

Վարդան Արևելցու և Սամուել Երեցի գրածների բովանդակությունը նույնն է. վերջինիս հիշած «Գրիգորը»՝ առաջինի «Թոքակերայ որդին» է. ավելի են «Խաչատուր» և «Յովհաննէս» անունները։ Բայց այս էական չէ։ Ինչ որ Վարդանը գրում է «Յովհաննէս Սարկաւագի» մասին, նույնը Սամուելը դնում է Սարգիս անունով «մեծ վարդապետի» համար։ Եվ իսկապես եղել է Սարգիս անունով մի հայտնի վարդապետ, քանի որ Սամուելը (էջ 132) հիշում է նրա մահը. «Ի ՇՁԸ [=588+551=1139] թվին ի ժէ արեգ ամսոյ շարժմամբ կործանեցաւ Դանձակ քաղաք. և սուրբ վարդապետքն Գրիգոր [=Թոքակերի որդին] և Սարգիս՝ ընկղմեցան, և եկեղեցին Հաղբատայ փլուզանի»։ Հիմա, ի՞նչպես պիտի բացատրել, որ նույն բովանդակությունը պատմվել է երկու տարբեր անունների վրա։ Անհավանական է ենթադրել[4], թե «Սարկաւագ» անունն արտագրողների ձեռով դարձած լինի «Սարգիս». զի այս նկատմամբ մի մեծ դժվարություն կա։ Սամուելը քիչ հետո գրում է. «Ի ՇՀԸ [=578+551=1129] ամին փոխեցաւ ի Քրիստոս մահուամբ վարդապետն մեծ որ Սարկաւագն կոչիւր՝ ի Հաղբատ». և ապա՝ «Ի ՇՁ [=580+551=1131] թվին... Ննջեաց յայսմ ամի լուսաւորիչ և սուրբ վարդապետն Դաւիթ Ալաւկայ որդի»։ Եթե «Սարկաւագ» անունն աղճատմամբ «Սարգիս» դարձած լիներ, ապա այլևս ինչո՞ւ պետք է Սամուելը նրա մահը քիչ հետո երկրորդ անգամ հիշեր[5]։ Պետք է ասել և հետևյալը։ Կիրակոս Գանձակեցին խո-

---

2 Հ. Ոսկյան, Հովհաննես Սարկավագի կյանքը. «Հանդես Ամսօրյա», Վիեննա, 1925, էջ 28։

3 Ս. Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիտի ժամանակաց մինչև ի ներկայս, էջ 128։

4 Այսպես ենթադրում է Հ. Ոսկյան, Հովհ. Սարկավագի կյանքը, «Հանդես Ամսօրյա», Վիեննա, 1925, էջ 28։

5 Սարկավագ Վարդապետին վերաբերյալ գլուխն և այս Հավելվածը Հայկական ՍՍՀ ԳԱ «Տեղեկագրի» մեջ (Հասարակական գիտություններ, № 1—2, Երևան, 1945, էջ 31—60) և «Առանձին արտատպությամբ» հրատարակվելուց հետո՝ Պետ. Մատենադարանի (Ձեռագրատան) գիտ. աշխատակից Լ. Խաչիկյանը հաղորդեց ինձ հետևյալը. «Սամուել Անեցու 1176 թվին Հեղինակի ձեռագրից արտագրված գրչագրում (№ 5619) «Սարգսի» հատվածը չկա. ուստի այն ներմուծված է Պատմության մեջ հետագայում։ Սրանից հետևում է, որ

սելով երեք «սքանչելի» վարդապետների մասին, որ են Սարկավագ Վարդապետ, Թոքակերի որդի Գրիգոր և Ալավկա որդի Դավիթ, ավելացնում է. «Սոքա երեքեանս էին յաշխարհէն Գանձակայ, ուստի և ես»։ Չի հիմնավորված ծանոթության մեջ դրած այս բացատրությունը «Յաշխարհէն Գանձակայ» այս է՝ Արցախա, որուն մեկ գավառն ալ է Փառիսոս»[6]։ Ըստ այսմ առանց այլևայլության նույնացրած է «աշխարհ Գանձակայ» և Արցախ։ Ինչքան էլ քաղաքական սահմանները փոփոխական լինեին այն դարում և Գանձակի ամիրան, ինչպես տեսանք, 1003 թ. գրավել էր Փառիսոս գավառի մի մասը, բայց և այնպես Արցախը և ոչ իսկ Փառիսոս գավառը չէին կարող կոչվել «աշխարհ Գանձակայ», որ է Գանձակ քաղաքի շուրջն եղած գավառները։ Հավանական է կարծել, որ գանձակեցիները նշանավոր վարդապետներին տեղական փառասիրությամբ կապած լինին իրենց կողմերի հետ։ Վերջապես՝ պետք է նկատի ունենալ և հետևյալը։ Վերջերս հայտնաբերված մի ձեռագրի մեջ, որ հիշվեց Հովհաննես Սարկավագի կենսագրության առթիվ, դրված կա նրա մասին. «Որ իբրև դիմաստուն մեղու՝ բարձեալ յանդամս մտաց զծաղիկս յերանգոց գունոց և հոտոց և համոց բերէր ի **ƒաղաƒ իւր և տեղի սննդեան ի ƒաղաƒամայրս Անի, և լի առնէր զտունն ի փարթամութենէ անտի...»**[7]։ Ընդգծված բառերից կարելի է հետևցնել, որ Սարկավագ Վարդապետն Աննեցի է եղել։ Բայց նրա ծնողները կարող էին Փառիսոս գավառից լինել և Հովհաննեսի մատաղ մանկության ժամանակ Անի տեղափոխված, և Հովհաննեսն այստեղ մեծացած ու սնված, ուստի և Անին նրա համար կարող էր համարվել «քաղաք իւր և տեղի սննդեան»։ Այսպիսի եղելությունները ոչ սակավ են։

Այսպիսով դեռ բացատրության կարոտ է մնում Հովհաննես Սարկա-

այն նույնպես կարող է Սարկավագին վերաբերել»։—Ուրիշ խոսքով՝ ներմուծումը եղել է Սարկավագ անվամբ, որ հետո դարձել է Սարգիս։ Բայց ներմուծումը կարող է հենց սկզբից Սարգիս անունով եղած լինել»։

6 Հ. Ոսկյան, Հովհ. Սարկավագի կյանքը, «Հանդես Ամսօրյա», էջ 28, ծան.։

7 Այս քաղում եմ վերևում Սարկավագի կենսագրության մեջ հիշված հոդվածից (Պետ. Համալս. Գիտ. աշխատություններ, հատ. XIII, Երևան, 1940, էջ 346 և հտն., Աբ. Մովսիսյան, Հայագիր դպրոցի ծագումը և հետագա վիճակը)։ Հոդվածագիրը, էջ 414, տողատակի յուսանցքում, դրել է հետևյալ ծանոթությունը. «Սարկավագի դպրոցի վերաբերյալ նյութերը վերցված են հիշատակարան «Հարանց վարքից», որը արտագրել է Մաթևոս Երեցը Հայոց Պիէ թվին Անգեղակոթում։ Հին ձեռագիրը գրվել է Հայոց ՇՂ թվին Հաղպատում»։—«Հին ձեռագիր» բառերով, երևի, պետք է հասկանալ այն գրչագիրը, որից արտագրել է Մաթևոս Երեցը։ Դրա գրության թվականը՝ Հայոց ՇՀ=508+551=1059 թ. բացարձակ սխալ է, գուցե արտագրության կամ տպագրության վրիպակ։ Այդ թվականին Սարկավագը չէր կարող Անիում անվանի ուսուցիչ լինել, բացի այդ՝ հիշատակագիրը Սարկավագի մասին այնպես է գրում, որ նա արդեն վախճանված պիտի լիներ. «Սա ի մանկական անտի տիոց մինչև ցվերջին որոշումն հոգւոյն յերկրորդէն (յերկրէն? Մ. Ա.) ոչ երբեք շեղեալ սայթաքեցոյց երբէք զուշ ոգւոյն ի նպատակէ ընթերցման, ուսանելոյ և ուսուցանելոյ...»։ Պետք է կարծել, թե ՇՀ թվի տեղ պիտի լինի ՇՂ=590+551=1141, այսինքն Սարկավագի մահից մի 12 տարի հետո։

վագ Վարդապետի որտեղացի լինելը։ Այդ կպարզվի միայն այն դեպքում, երբ երևան գան այնպիսի ձեռագրական ընթերցվածներ, կամ այնպիսի նոր գրական հիշատակարաններ, որոնցով կստուգվի նրա ծննդավայրը։

2. Երբ է վախճանվել նա։— Կասկածի տակ է դրված Սարկավագ Վարդապետի և մահվան թվականը, որ է 1129 ըստ Սամուել Երեցի և ըստ Կիրակոս Գանձակեցու։ Վարդան Արևելցու ձեռագիրների մի մասի և Մոսկվայի հրատարակության մեջ է ՇԿՔ [=568+551=1119] թվականը, իսկ Վենետկի տպագրության մեջ՝ «հինգ հարիւր ութսուն և ութ» [=588+551=1139], և ծանոթության մեջ «Հին 0. ՇԿՔ, որ է հինգ հարիւր վաթսուն և ութ։ Այլ ժամանակագիրք՝ ՇՀՔ ասեն, որ է հինգ հարիւր եօթանասուն և ութ [=1129], որ ուղղագոյն թուի» (էջ 121)։ Հայտնի բանասեր Կ. Կոստանյանցն իր մի հոդվածի մեջ[8] ընդունում է Վարդանի որոշ ձեռագիրների մեջ եղած 1139 թվականը, և որովհետև թե՛ ըստ Վարդանի և թե՛ ըստ Կիրակոսի մի տարի հետո վախճանվել է Ալավկա որդի Դավիթը, ուրեմն, ըստ Կոստանյանցի, նրա մահն ընկնում է 1140 թվին։ Նա այդպես դատում է նկատի ունենալով հետևյալը։ Կիրակոս Գանձակեցին Աղվանից կաթողիկոսների մասին գլխի մեջ հիշելով նրանց անուններն ու կաթողիկոսության տարիները՝ էջ 188 գրում է. «և տէր Ստեփանոս՝ ամ մի և կէս, ի տիս պատանեկութեան վախճանեալ ի ՇՁՔ [=588+551=1139] ամի թուականին Հայոց»։ Դրանից հետո Կիրակոսը պատմում է, թե Հայոց Գրիգորիս կաթողիկոսի ժամանակ քսան և հինգ տարի թափուր է մնացել Աղվանից կաթողիկոսական աթոռը. «Ապա մանուկ մի էր յազգէ կաթողիկոսացն Գագիկ անուն, որդի Գէորգեայ, զոր սնուցին, և ուսուցին, և իբրև ի չափ հասաւ մանուկն, ապա գրեն թուղթ մաղթանաց Գրիգոր վարդապետն՝ որդին Թոքակերի, և Դաւիթ՝ որդի Ալօկայ, և այլ աշխարհն Աղուանից, առ մեծ հայրապետն Հայոց Գրիգորիս... զի ձեռնադրեսցէ զնա եպիսկոպոս»։ Նա ձեռնադրվում է եպիսկոպոս, հետո՝ կաթողիկոս։ Այս կատարվում է նույն 1139 թ., որովհետև նույն տարին սաստիկ երկրաշարժ է լինում, կործանվում է Գանձակ քաղաքը, «և շնորհօքն աստուծոյ ապրեալ եղև Ներսէհ կաթողիկոսն, բայց մեռաւ ի շարժմանէն մեծ վարդապետն Գրիգոր»[9]։ Արդ՝ մի կողմ թողնելով Կ. Կոստանյանցի մի քանի ուրիշ անհիմն ենթադրությունները՝ առնենք միայն հետևյալը։ Որովհետև Ալավկա որդի Դավիթը մեկն է 1139 թ. Հայոց Գրիգորիս կաթողիկոսին թուղթ գրողներից, «հետևաբար նրա մահը չէր կարող հանդիպել 1140 թվից առաջ, պետք է հավանական համարվի Վարդանի ցուցումը, թե Սարկավագ Վարդապետի մահը եղել է 1139 (ՇՁՔ) թվին։ Ըստ այսմ՝ Դավթի մահը պատահել է Սարկավագ

---

8 «Ազգագրական հանդես», ԺԴ գիրք, 1906, էջ 105 և հետ. «Դավիթ Ալավկա որդի»։

9 Կ. Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 188 և հետ., երկրաշարժի մասին նաև էջ 108. այլև Սամուել, էջ 132։

Վարդապետից մի տարի հետո, 1140 թվին»։ Սույն թվականը Դավթի մահվան համար, անշուշտ, Կոստանյանցից առնելով, ընդունում է և Խ. Սամուելյանը[10]։ Այս խնդիրը, սակայն, այդպես հեշտ չի լուծվում։

1. Սխալ է ոչ թե Կիրակոսի և ուրիշների հիշած 1129 թվականը, այլ այն տեղեկությունը, թե մանուկ Գագիկի համար թուղթը գրվել է և Դավիթ վարդապետի մասնակցությամբ։ Այս դեպքից ավելի քան հարյուր տարի հետո, երբ գրել է Կիրակոսը, ճիշտ հիշողություն սյահված չէր լինիլ գանձակեցիների մեջ, նրանք կարող էին՝ չիմանալով թե ե՛րբ է մեռել իրենց նշանավոր հայրենակից Դավիթ վարդապետը, սրա անունն էլ կապել հիշված թղթի հետ, և Կիրակոսն այդ զրույցը լսելով՝ այդպես էլ գրի է առել, առանց ուշ դարձնելու, որ ինքն իր գրքի մեջ (էջ 107) Դավթի մահն արդեն դրել էր 1130 թվին, Սարկավագի մահից մի տարի հետո։

2. Կ. Կոստանյանցն այնպես է գրում, իբր թե «Վարդանի ցուցումն» է 1139 թվականը. բայց այս տարեգրի ուրիշ ձեռագիրների մեջ, ինչպես վերևում ասվեց, է 1119 թվականը։ Այդ ցույց է տալիս, որ նրա ձեռագիրների մեջ Սարկավագ Վարդապետի մահվան թվականն աղճատված է։ Այդ կարող էր լինել 1129, ինչպես է՛ Սամուել Անեցու ժամանակագրության և Կիրակոս Գանձակեցու Պատմության մեջ։ Վերևում տեսանք, որ ինչ որ Վարդանը գրում է Սարկավագ Վարդապետի մասին, նույնը Սամուել Անեցին դրում է Սարգիս վարդապետի համար։ Արդ՝ Սամուելն այս վերջինի մահը դնում է 1129 թվին։ Պետք է կարծել, որ Վարդանի մեջ բովանդակության նույնության հետ՝ թվականն էլ նույնն է եղել, որ հետո աղճատվել է։ Այդ հաստատվում է հետևյալով։

3. Ժամանակագիրները, որոնց թվի մեջ և Վարդանը, հորինում են տարեթվերի կարգով։ Նա էջ 154 և հտն. (Մոսկվայի տպագր.) հիշում է 565 (=1116) թվականը, հետո՝ 567 (=1118 թ.), ապա՝ «ի գալ տարոյն», այսինքն հաջորդ տարին, ուրեմն 1119 թվականը։ Այնուհետև նա առանց թվականներ հիշելու պատմում է մի շարք եղելությունների մասին, որոնց թվականները գիտենք այլ աղբյուրներից. այդպիսիք են՝ Վրաց Դավիթ թագավորի տիրելն Անի քաղաքին, որ կատարվել է 1124 թ., Աբլսուարի որդի Փատլունի տիրելը նույն քաղաքին, որ եղել է 1126 թ.։ Ապա Փատլունի մասին մի երկու բան պատմելուց հետո՝ նա խոսում է Սարկավագի և մյուս վարդապետների մասին, այսինքն՝ գրում է այն հատվածը, որ բերվեց վերևում («էին և վարդապետք յայնմ ժամանակի»,— որ է Դավիթ թագավորի և Փատլունի ժամանակին), և այդտեղ Սարկավագի մահը դրված է, ըստ որոշ ձեռագիրների, 1119 թ., իսկ ըստ այլ ձեռագրի՝ 1139 թ.։ Արդ՝ այդ երկու թվականներն էլ աղճատված են. պետք է լինի 1129, որովհետև դրանից հետո հիշում է Փատլունի մահը «ի հինգ հարիւր եօթանասուն և ինն [=1130] թուին», և հետո պատմում

10 Խ. Սամուելյան, Հին հայ իրավունքի պատմությունը, էջ 74։

է դեպքեր՝ հիշելով 1131 թվականը, ապա՝ Գանձակի երկրաշարժը 1139 թվին, և այսպես շարունակում է կարգով հիշելով 1141, 1145 և այլն։ Քանի որ նա պատմում է Փատլունի մասին 1126—1130 թվականների մեջ ընկած դեպքեր, սպասելի էր, որ Սարկավագի մահվան տարին նա դներ վերջին երկու թվականների միջև, ուրեմն 1129 թվին, և ոչ թե ետ դառնար մինչև 1119 թվականը, կամ թե թուչեր առաջ մինչև 1139 թվականը, և ապա դարձյալ ետ դառնար 1130 թվին, Փատլունի մահվանը, և այլն։

4. Կա մի ուրիշ հանգամանք էլ, որ պետք է ուշադրության առնել։ Հայոց տոմարի նորոգումը եղել է 1084 թ. Սարկավագ Վարդապետի ձեռով, ուրեմն, եթե նա մեռած լինի 1139 թ., նրա մահից հիսուն և հինգ տարի առաջ։ Եթե նա մեռած լինի, դիցուք, խորին ծերության ժամանակ՝ 80—85 տարեկան, տոմարի նորոգման թվականին նա պիտի լիներ 25—30 տարեկան։ Բայց նախքան 1084 թվականը պետք է առնվազն մի հինգ տարի միջոց լիներ, երբ մի կողմից՝ Սարկավագ Վարդապետն աշխատեր այդ գործի վրա, և մյուս կողմից՝ մտքերը պատրաստեին այնպիսի մեծ փոփոխությունն ընդունելի անելու համար. որովհետև խնդիրը միայն շարժական տարին անշարժի վերածելը չէր, այլ պետք էր նավասարդի 1-ը փետրվարի 29-ից տանել օգոստոսի 11-ի վրա, և սրբերի տոնակատարության օրերն ըստ այնմ փոփոխության ենթարկել։ Արդ՝ 1084 թվականից մի չորս-հինգ տարի առաջ, ըստ վերևի հաշվի, Սարկավագը պիտի լիներ 20—25 տարեկան։ Դժվար է ենթադրել, թե այս տարիքի մի երիտասարդ, ինչքան էլ նա ընդունակ լիներ, այնքան մեծ հեղինակություն ունենար, որ կա՛մ իր սեփական նախաձեռնությամբ, կա՛մ ուրիշների հանձնարարությամբ ձեռնարկեր այնպիսի պատասխանատու գործ և գլուխ բերեր այն՝ ընդունելի դարձնելով ուրիշներին[11]։ Իսկ եթե նա վախճանված լինի 1129 թ., ապա ուրեմն 1084 թվից մի հինգ տարի առաջ նա կլիներ 30—35 տարեկան, և այդ տարիքին կարող էր արդեն հեղինակավոր ու ազդեցիկ լինել և ձեռնարկել այդ գործը, այսինքն 1084 թվականից առաջ նախապատրաստել տոմարագիտական հաշիվները։ Բայց այս չի նշանակում, հարկավ, թե նա 1084 թվականից հետո էլ չի զբաղվել նույն գործով և այդ մասին գրավոր աշխատանքներ թողել։

Վերջապես՝ 5. Պետք է նկատի ունենալ և հետևյալը։ Սարկավագ Վարդապետի կենսագրության մեջ տեսանք, որ, ըստ Կիրակոս Գանձակեցու հաղորդածին, նրան շատ սիրելիս է եղել Վրաց Դավիթ թագավորը (1089—1125 թթ.) և նրա օրհնությունն է խնդրելիս եղել։ Նույնը բավական նման ձևով պատմված կա և «Վրաց տարեգրության» («Քարթլիս

---

11 *Թեպետև մեր ժամանակագիրները չեն հիշում, բայց անպայման անհրաժեշտ պիտի լիներ իշխանության համաձայնն այդ գործի համար, և հավանորեն այն եղել է Անիում նստող Բարսեղ եպիսկոպոսի կողմից, որ 1081 թ. Հաղպատի վանքում ձեռնադրվել է կաթողիկոս։ Հավանորեն այս թվականներին էլ հանձնարարվել է Սարկավագին գլուխ բերել այդ գործը։*

ցխովրեբա»-ի) 12-րդ դարում կատարված հայերեն թարգմանության վերջաբանի մեջ, ուր ասված է նաև, թե թագավորը «ընծաէր ընդ նմա և փարէր զպարանոցաւ նորա, և նա ասէր. «Լուծեալ եմ և հոտեալ ի ծերութենէս, ի բաց գնա յինէն, զի մի աշխատ լիցիս»։ Եւ թագաւորն համբուրէր և ասէր. «Անպակաս լիցի հոտս այս յինէն, հայր պատուական»[12]։ Արդ, եթե այդպիսի մի դեպք պատահած լինի,—ինչ որ շատ հավանական է,— այն էլ թեկուզ Վրաց այդ թագավորի վերջին տարում, 1125 թ., այն ժամանակ արդեն Սարկավագ Վարդապետը շատ ծեր պիտի լիներ, մոտավորապես 80—85 տարեկան։ Հիմա, եթե նա վախճանված լինի 1139 թ., ուրեմն այդ դեպքից (1125 թվից) հետո 14 տարի էլ պիտի ապրած լինի և մեռած 94—99 տարեկան հասակում, ինչ որ հավանական չէ, քանի որ նա 1129 թ. արդեն,—եթե ոչ սրանից առաջ,— «ծերությունից լուծված և հոտած» է եղել։

Հիշված բոլոր պարագաներն ապացույց են, որ Սարկավագ Վարդապետը վախճանված է 1129 թ. և ոչ թե 1139-ին։

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՎԵԼՎԱԾ

ԲԱՐԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿԸ

Խաչատուր Կեչառեցու բարառնություններից հետո[1] դրեթե բոլոր ձեռագիրների մեջ կա այս հիշատակարանը. «Որք լսէք զաղիողորմ բարառնութիւնս զյարմարող սորա [այլ ընթերցված՝ «սորին»] զխաչատուր Կեչառուեցիս յիշեցէք ի Քրիստոս տէր մեր»։ Ոչ մի հիմք չկա կեղծ համարելու այս հիշատակարանը։ Խաչատուր Կեչառեցին շատ պարզ կերպով իրեն անվանում է բարառնությունների հեղինակ։ Բայց չնայելով դրան՝ Հ. Տաշյանը[2] մի շարք խղճուկ պատճառաբանություններով ճգնում է ցույց տալու հակառակը, որպեսզի վերջը դրանց հեղինակ համարի «Ալեքսանդրի Պատմության» հայ թարգմանչին, որ է, ըստ նրա կարծիքի, Մ. Խորենացին։ Տեսնենք նրա փաստարկումները։

Ա ռ ա ջ ի ն՝ նա ընդգծելով «զյարմարող սորա» բառերը՝ գրում է, թե դրանով «չի կարող հասկացվել բարառնությունների հորինումը. ապա թե ոչ գոնե «զյարմարող սոցա» պետք էր ըսուիլ»։ Նախ՝ «յարմարել» բառն ինքը Կեչառեցին ուրիշ տեղ էլ գործածել է «հորինել» բառի իմաստով։ Ալեքսանդրի և Քրիստոսի համար արած իր 18 բարառնություններից հետո՝ նա հիշատակարանի մեջ գրում է. «Ընթեռնելով զսա [այսինքն

---

12 Տե՛ս Լ. Մելիխսեթ-Բեկ, *Հովհաննես Սարկավագ վարդապետ Հաղբատացու «Վասն շարժման և սասանութեան երկրի»*, «Տեղեկագիր» ՍՍՀՄ ԳԱ Հայկ. ֆիլ. № 1, 1943, էջ 75։

1 «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ», Վենետիկ, 1842, էջ 189—195։ Տե՛ս և «Հիշատակարանը», էջ 195, ծան.։

2 Հ. Տաշյան, *Ուսումն. Մատյն Կալ.*, էջ 106—111։

18 բարառնութիւնները], յիշմամբ արժանի լիցի ի ձէնջ խաչատուր Կեչառուեցի. զի ի յարմարումն սակաւ բանիցս [այսինքն 18 բարառնութիւնների] և պրչութիւն գրոցս հաւատով աշխատեցայ»։ Ահա մի ուրիշ օրինակ ևս. «Եւ ոչ գիտեմ, եթէ զիարդ յարմարեցից զողբերգութիւնս»[3], գրում է Մ. Խորենացին, «հարմարել» բայը «յօրինել» բառի նշանակութեամբ։ Այսպես և ուրիշները։ Եվ ինչո՞ւ չպիտի նույն Կեչառեցին նույն բառը գործածեր նաև իր բարառնութիւնների համար։

Ապա՝ գալով «սորա» բառի եզակի ձևին, Հ. Տաշյանը, եթե ուզենար, շատ հեշտությամբ կբացատրեր, թե «սոցա» ձևն աղճատումով դարձել է «սորա», մանավանդ որ այս դերանվան անունը՝ «զբարառնութիւնս» կարող էր արտագրողից հասկացվել եզակի՝ իբրև «այս բարառնությունը»։ Բայց կարիք էլ չկա աղճատման դիմելու. նույն Կեչառեցին, ինչպես վերևում բերած ցիտատից կարելի է տեսնել, իր 18 բարառնությունների համար, որ հոգնակի ձևով անվանում է «բանք», դրել է եզակի ձևով «զսա» դերանունը, և ոչ «զսոսա»։

Երկրորդ՝ Տաշյանը առանց հիմքի հայտնում է, թե Կեչառեցին «զյարմարող սորա» բառերի տակ «անշուշտ կհասկանա միայն կալիսթենյա օրինակութիւնը [=արտագրությունը]՝ բարառնութեանց և յուր հորինած Հառաջաբանին և Վերջաբանության հետ ի միասին», այսինքն ամբողջ գիրքը։ Վիեննայի բանասերը մոռանում է, որ այդպես հասկանալու համար Կեչառեցին «գիրք» կարդացողներին պիտի դիմեր և գրեր «Որք ընթեռնուք զգիրս», և ոչ թե գրեր՝ «Որք լսէք զաղիողորմ բարառնութիւնս»։

Երրորդ՝ «Կեչառուեցվո խեղճ ու ռամիկ [ընդգծումը հեղինակինն է] լեզվին քով բարառնութեանց լեզուն շատ ու շատ բարձր է, մանավանդ վերջին չորրորդ բարառնության մեջ»,— գրում է Տաշյանը, և հետո ավելացնում. «Որպեսզի հախուռն չերևա լեզվի և ոճո կողմանե աւյալ մեր դատաստանը՝ դնենք հոս պատառիկ մը միայն երկու գրութեանց, որ ամեն տեսական համեմատութենեն ավելի պարզ կցուցնե իրը»։ Եվ նա բերում է հետևյալները, ընդգծելով որոշ բառեր։

Նշխար խաչատրոյ Ոտանաւորներէն.

«Ասաց մատրռուակ գինոյն
Որ զկրթդայս ի ձեռս է առեր.
Առ՛ք բմպեցէք զգինիս
Ու հերիք արէք զբռուցել.
Յերկար ճանապարհ ունիս
Գնալու, ես անհոգացել[4].

---

3 Մ. Խորենացի, Գիրք Երրորդ, ԿՀ «Ողբի» մեջ։

4 Տաշյանը տպագրել է «գնալ ու ես անհոգացել»։ Ուղղել եմ ըստ իմաստին և ըստ տոհանավորի չափին։ «Ես անհոգացել» միջին հայերենում նշանակում է՝ «անհոգացել եմ»։

Զայս տիկնոջ մըտօքն
Որ վախէր ըզնա[5] *սպանանել»։*

Նշխար Դ. բարառնութեան.

«Զայս ասելով ի յողբ շարժին, պատառեն զպատմուճան, ներկ(ան)են արեամբ զերեսս, փետտեն զհերս վարսից, ճղռեն զմօրուս իւրեանց, հող գգլխով արկանեն, տան զերեսս միգախառն մոխրի, հնչեն զգալարափողս... զաշխարանն այսպէս հրատարակեն. Տէր արքայ, այսքան ժամանակս աշխատ եղաք ի գործ պատերազմի, ծովակուրս և գազանաբեկ լինելով», և այլն, և այլն։

Այս կտորները ոչ մի բան «պարզ» չեն ցույց տալիս, բայց եթե նրանց ցիտողի պարզամտությունը գրական և լեզվական խնդիրների նկատմամբ, եթե ոչ ավելին։ Տաշյանը կարծում է, թե Կեչառեցին 13-րդ դարում չէր կարող հին գրական լեզվով հորինել, այլ միմիայն «խեղճ ու ռամիկ» լեզվով. իսկ ինքը, Տաշյանը 19-րդ դարում կարող էր և գրաբար հորինել և աշխարհաբար. նույնպես և Ա. Բագրատունին կարող էր հին լեզվով «Հայկ Դիւցազն» քերթել, իսկ «Տարերք քերականութեան» գրքի մեջ ասել՝ «ասանկ ալ կըլլայ, անանկ ալ», և այլն, և այլն։

Այսպես և շատ ուրիշ գրողներ։ Եթե այդպես դեմ ու դեմ դնենք նույն հեղինակների գրաբար և աշխարհաբար լեզուներով հորինած երկերը, շատ շատերի համար սիտի ասենք, թե գրաբար հորինածները նրանցը չեն, օրինակ՝ «Հայկ Դիւցազնը» Բագրատունու գործը չպիտի համարվի։ Տաշյանն այդպիսի «հախուռն» փաստարկումն է արել, երևի չիմանալով, որ 13-րդ դարում բանաստեղծությունների, առանձնապես հայրենների համար, արդեն իշխող էր մեր միջին հայերենը, որ Մխիթարյաններն անվանում են «ռամկօրէն»։ Եվ Կեչառեցին իր վերևում բերված կաֆան հորինել է միջին հայերեն լեզվով, իսկ «բարառնութիւնները» նա հարմարել է հին հայերենով։ Եվ այլապես էլ չէր կարող լինել, քանի որ այդ տիպի երկերի—ճառերի, ներբողյանների և նմանների համար ընդունված չի եղել միջին հայերենի կիրառությունը։ Այդպես վարվել են նույն դարերում և ուրիշները, ինչպես Հովհաննես Երզնկացին (Պլուզ)։ Ապա՝ Տաշյանը Դ բարառնությունից իր բերած կտորի համար գրում է, թե «Ե դարու գոնե վերջին կիսուն [ընդգծումը հեղինակինն է] լեզվի դրոշմը յուր վրան կկրե»։ Եվ այսքան. պետք է հավատանք։ Ի՞նչ կա նրա բերած այն պարզ ու համառոտ նախադասությունների մեջ, որ ամեն վարժ գրաբար գրողի գրչի տակից դուրս չգան նմանները, այն էլ 13-րդ դարում մի գովված «շնորհազարդ» հռետորի։ Տաշյանը դրանց հետ բաղդատելու համար պիտի բերեր ոչ թե Կեչառեցու միջին հայերենով հորինած հայտնին, այլ գոնե նրա գրաբար նախադրությունն ու վերջաբանությունը, և այն ժամանակ կերևար, որ մեր այս բանաստեղծը կոկ գրա-

---

5 *Տպված է «զնա», ուղղում եմ ըստ չափին «ըզնա»։*

բար գրել գիտեր, ճարտասանական գրվածքների մեջ, անշուշտ, ավելի գեղեցիկ ոճով։ Նրա «Նախադրության» մեջ գտնում ենք նաև հետևյալ նույնիսկ ոչ սովորական ձևը՝ «վայել է արքայից և զօրապետաց իմաստուն և հանճարեղս լինել», մի հոլովական կիրառություն, որ կա նաև բարառնությունից Տաշյանի ցիտած կտորի մեջ ևս՝ «աշխատ եղաք ի գործ պատերազմի՝ ծովակուրս և գազանաբեկ լինելով»։

Զ ո ր ր ո դ՝ իբրև մի ապացույց դնում է Տաշյանը և հետևյալը. «Խաչատուր ըստ բավականի գիտե յուր գրուքյանց արժեքը, ուստի միշտ կջանա արդարացնել յուր գրվածները՝ «սակաւ բան», «զԿեչառեցիս տկար արարէք յիշման դիս արժան», «այսպէս և դու առ ի մտի, ծույլ և ծանակ Կեչառեցի» և նման բացատրությամբք. և այսպես դժվարավ կրնար բարառնությանց համար՝ եթե յուր գործքն էին՝ ըսել թե «Որք լսէք զաղիողորմ բարառնութիւնս՝ զանոնք այսպէս գովութեամբ յիշելով»։— Տաշյանի այս խոսքերը հերքելու կարիք չկար. զի «դժվարավ կրնար» ասելով չի մերժվում այն, որ Կեչառեցին կարող էր իր բարառնությունները բնորոշել «աղիողորմ» բառով։ Ամեն հեղինակ էլ կարող է իր մի աշխատության համար այս կարծիքը հայտնել, մի ուրիշ աշխատության համար՝ այն։ Դարձյալ՝ եթե նա «ըստ բավականի գիտեր յուր գրուքյանց արժեքը» և ըստ իր գիտցածի բնորոշել էր իր ուրիշ երկերը և իրեն՝ «սակավ», «տկար», «ծույլ և ծանակ» բառերով, ապա նա «ըստ բավականի» գիտեր և իր բարառնությունների արժեքը, որոնք իրոք «աղիողորմ» ողբեր են իրենց բովանդակությամբ, և նա կարող էր այդ «աղիողորմ» բառով որակել այդ ողբերը։

Ավելորդ չէ նկատել և հետևյալը։ Երբ Կեչառեցին իր 18 բարառնություններն Ալեքսանդրի և Քրիստոսի կյանքի վերաբերմամբ՝ անվանում է «սակավ բանք», կամ մի տեղ հիշատակարանի մեջ իրեն համար գործածում է «տկար» բառը,— թեկուզ նկատմամբ իր ոտանավորների,— ինչ որ հավաստի համարելու հիմք չկա,— այդ մի հիմք չէ ասելու, թե նա «միշտ կջանայ արդարացնել իր գրածները»։ Հետաքրքիր է, թե ո՛ր դեպքում է Կեչառեցին իրեն անվանում «ծույլ և ծանակ»։ Երբ Ալեքսանդրը տեսնում է ոչ շատ լայն Սկամանդրոս գետը՝ որի վրայով ցատկել է Աքիլլեսն, ըստ Իլիականի, նա Աքիլլեսի արածը մեծ բան չի համարում, և երանի է տալիս Աքիլլեսին, որ արժանացել է Հոմերոսի գովքին։ Այն ժամանակ մի քերթող ասում է նրան. «Ալեքսա՛նդր, քան զՀոմերոս... լաւ ևս գրեսցուք մեք զարարս քո»։ Ալեքսանդրը պատասխանում է նրան՝ «Ընձալի է ինձ ի Հոմերոսի պատմութեանն Թերսիտէս դոլ, քան ի ձերդ՝ Աքիլլես»[6]։— Կեչառեցին «Ալեքսանդրի Պատմության» այս կտորի առթիվ գրել է.

Ոչ հիանայ ընդ վազն արի
Քաջաղնաբար յափրն գետի,

---

6 «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ», էջ 60 և հտն.։

Այլ դներբոդեան Հոմերոնի,
Բաղկացական բան դուվեստի։
Այսպէս և դու՛ առ ի մտի,
Ծոյլ և ծանակ կեչառեցի։

Առաջին չորս տողի մեջ ամփոփ դրված է Կալիսթենեսի պատմածը. հետո մեր բանաստեղծն ավելացրել է վերջին երկու տողը։ Ի՞նչ է այս երկու տողի իմաստը։— Անպայման այն, որ ինքն էլ չպիտի զարմանա Աքիլլեսի ցատկելու (վախն) վրա, այլ Հոմերոսի ներբողի, գովեստի վրա։ Ապա թե Ալեքսանդրի ծաղրն իր արարքները գովել ցանկացող քերթողի վերաբերմամբ՝ համեմատությամբ Հոմերոսի գործի՝ վերաբերում է նաև իրեն՝ Կեչառեցուն, որ ոտանավորներ է գրում Ալեքսանդրի գործերի վրա։ Պարզ է, որ Կեչառեցին մեծ կարծիք չունի իր քերթվածների վերաբերմամբ. բայց այսպես «ծաղ[7] ու ծանակ» է համարում իրեն՝ համեմատությամբ Հոմերոսի,— որին հավասարվելը երբեք չէր էլ անցել նրա մտքից։

Հիգերոդ՝ Տաշյանը բերում է և հետևյալն իբրև ապացույց իր կարծիքի համար. «Լավ կճանչնանք դարձյալ գնաչատուր, որ այնպես «անվայելուչ» կգտներ «հեթանոսական» գրվածքները, որ այսպիսի գիրք մը գրելու համար թողություն խնդրելու պետք կտեսներ. մինչ բարառնության հեղինակը՝ հարմար կամ անհարմար՝ հեթանոսական դիցաբանության հաճախ՝ նաև ոչ ճիշտ՝ ակնարկներով ճոխացնել կ'ուզե յուր գրչությունը... Նման բացատրություններ... Կեչառեցվո գրչեն դժվարավ կրնային ելնել»։ «Դժվարավ կրնային» խոսքով, հարկավ, չի ժխտում, որ «կրնային ելնել»։ Բայց ուրիշ բաներ էլ տեսնենք։ Նախ՝ Տաշյանը չի բերում և իր ուսումնասիրության մեջ էլ չի բերած, թե Կեչառեցին ո՛ր դեպքում ո՛ր տողերով ներողություն է խնդրել «Ալեքսանդրի Պատմության» գիրքը գրելու համար։ Այդպիսի բան չկա։ Ընդհակառակն, նա, Կեչառեցին, այդ գրքին մեծ արժեք և կարևորություն է տվել, որ արտագրել է անձամբ, ինչպես հիշատակարանի մեջ հայտնում է. «Գրեցի իմով ձեռամբս սակս աւգտի ինձ և այլ համբակաց, որք կամին աւգտիլ յԱղեքսանդրէ»։ Նա այնքան մեծ նշանակություն է տվել այդ գրքին, որ կաֆաներ է հորինել. դրա համար Ալեքսանդրի գործերը համեմատել է Քրիստոսի «տնօրինականների» հետ և այս արել է հավատալով իր գործին։

Ապա՝ Կեչառեցին, ինչպես տեսել ենք, Ալեքսանդրի Պատմության մեջ գտել է նաև շատ սնոտի կարծիքներ ու խաբեություն. բայց այդ մի պատճառ չէր կարող լինել, որ նա բարառնությունների մեջ հեթանոսական բան չդներ։ Որ նա իր այդ գործի մեջ արել է հեթանոսական դիցա-

---

7 «Ծաղ ու ծանակ» [=ծաղածանակ] հավանորեն աղճատմամբ դարձել է «ծուլ ու ծանակ»։

բանութեան ակնարկներ, այդ ցույց է տալիս նրա բարձր հասկացությունը գրական արվեստի մասին։

Նա, ինչպես վերևում ընդորոշեցի, «ողբասացներին իրենց խոսքն ասել է տալիս իրենց դարին և հավատալիքներին համեմատ, ինչպես մեր օրով վարվում են պատմական վեպեր գրողները»։ Մի բան խառնում է Տաշյանը. այլ բան է, եթե քրիստոնյա Կեչառեցին իր կողմից իր անձնական քնարերգության մեջ գործածեր հեթանոսական ակնարկները,— ինչպես արել են հաճախ կեղծ կլասիկ գրողները, նույնիսկ մեր գրականության մեջ,— այլ բան է, երբ այդ կիրառել է նա հեթանոս հերոսների կողմից, նրանց բերանից ընդամենը վեց անգամ, այն էլ մեծ մասամբ առնելով հերոսների կյանքից այն, ինչ որ կա «Ալեքսանդրի Պատմության մեջ»։ Տաշյանը չի կարող ասել օրինակ, թե Մովսես Խորենացին բարեպաշտ քրիստոնյա չի եղել և հավատում էր հեթանոսական աստվածներին. բայց ահա մեր այդ Պատմագիրն իր հորինած նամակի մեջ, որ իբր Վաղարշակն է ուղղել Արշակին, սրա համար գրում է՝ «որոյ անձն և պատկեր... մեր աստուածոց» (Խոր., Ա. 9)։ Ահա և թե ինչպես է սկսում նա մի ուրիշ թուղթ. «Ինքնակալ Յուլիանոս, ծնունդ Ինաքայ, Արամազդայ որդի, և ճակատագրեալ յանմահութիւն...» (Խոր., Գ. 15), կամ մի երրորդ թուղթ. «Մազդեզանց քաջ և բարձակից արեգական Շապուհ արքայից արքայ» (Խոր., Գ. 17)։ Այսպես և շատ բնական է, երբ Աղեքսանդրը մահամերձ ողբում է իրեն՝ ասելով. «Կարծես առեալ եղջիւրօք անմահ կալ մնալ իբր թէ յԱմոնէ կամ յԱրամազդայ հելլենական նուագօք ի Կրաւնոսէ և յՀռայէ սերեալ աղգաբանութեամբ, և այժմ յիմարեալ անճողոպրելի ի մահուանէ», կամ երբ ասում է. «Ոտք իմ սրընթաց իբր ղգարշապարս յուշկապարակուց օդապարիկ լինելով իբր զՔսէներքա և Պագիսոս, արդ վրիպեալ կապեալ ի մետաղս մահճաց»։ Այսպես և երբ նա հիշում է իր ուսանելն «ի մայրն իմաստութեան առ Աթենայ իսկուհւոյն». կամ երբ Ողոմպիադան ողբալով ասում է ակնարկելով իր հղացմանը «եգիպտական մարգարէն ազդեաց ինձ զգալն Ամոնայ», նույնպես և «Այժմ պիտոյ է ինձ տապարն Հեփեստոսի առ ի հերձանել զգլուխ ծնողիս Աթենայ», կամ երբ Հռոքսիանեն լալով դիմում էր Ալեքսանդրին ասելով. «Որպէս հանդերձեալ ես յաստուածոցն խառնիլ երամս, այսպէս և զիս արա քեզ գերեզմանակից և մահակից»։ Կեչառեցին հո չէ՞ր կարող այն հեթանոս ողբացողներին հիշել տալ քրիստոնեական աստուծուն կամ սրբերին, կամ Ալեքսանդրին ասել տար, թե «իմ ոտները որ սրընթաց էին ինչպես արագահաս սուրբ Սարգսի ճերմակ ձիունը...»։ Այսպես, եթե սակավաթիվ հեթանոսական ակնարկները մի բան ապացուցում են, այդ ոչ թե այն է, թե բարառնությունների հեղինակը Կեչառեցին չի կարող լինել, այլ այն, որ մեր «շնորհօք ծաղկեալ» հեռատորը հմուտ է եղել իր արվեստին։

Վերջապես բնավ արժեք չունի այն, թե բարառնությունների համար էլ «նմանողական ոտանավոր» են հորինել ուրիշները Կեչառեցուց հետո,

և կամ այն, թե մի ձեռագրի լուսանցագրությունը... Ի բարառնության նմանողությամբ շինված... ոտանավորը «Կեչառեցու անվամբ կը հիշեհորինված»։ Նախ մյուս ձեռագիրների մեջ այդ չկա, իսկ մի ձեռագրի մեջ էլ այդ ոտանավորը Գրիգոր Աղթամարցուն է վերագրված[8]։ Ապա՝ որ կաֆաների հեղինակների անունները իրար հետ շփոթված են, այդ ինքը Տաշյանը լավ ցույց է տվել։ Եվ երկրորդ՝ դիցուք թե մի ձեռագրի լուսանցագրության հաղորդումը ստույգ իրականություն է, և Կեչառեցին ինքը «Ի բարառնության նմանողությամբ» մի ոտանավոր է հորինել («նմանողությունը» Տաշյանը չի պարզում), այդ ոչինչ ու ոչինչ չի ապացուցում։ Մի՞թե նորանշան մի երևույթ է, որ բանաստեղծները, նույնիսկ մեծ բանաստեղծները, երբեմն հորինում են թե՛ իրենց մի երկի «նմանողությամբ» և թե՛ նույն նյութը երկու երեք անգամ են բանեցնում, կամ առաջ հորինում են արձակ, հետո նույնը՝ ոտանավորով։

Այսպես ուրեմն, Հ. Տաշյանը ոչ մի կերպ չի ապացուցել, թե կեղծ է բարառնությունների հիշատակարանը և դրանց հեղինակը Խաչատուր Կեչառեցին չէ։ Մենք իրավունք չունենք մեր նշանավոր հռետորին զրկելու իր սեփականությունից։ Այլ բան է, եթե փաստեր լինեին, հիմնավոր և համոզիչ։

ԵՐՐՈՐԴ ՀԱՎԵԼՎԱԾ

ՖՐԻԿԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋԸ

1. Թվականներ։— Ֆրիկի կենսագրության միակ աղբյուրը նրա բանաստեղծություններն են։ «Ընդդեմ ֆալաքին» քերթվածի մեջ[1] կան հետևյալ տողերը.

Հիմիկ դրժարեց բաներս.
Որ թաթարն եղաւ թագաւոր։

Պարզ է, որ բանաստեղծն ապրել է թաթարական իշխանության որով, այն էլ սրա առաջին շրջանում, երբ դեռ չէր մոռացվել նախորդ Ջաքարյան իշխանության բարի հիշողությունը։ Նա վերոհիշյալ բանաստեղծության մեջ մարդուս բախտի անկայունության համար իբրև օրինակ բերում է հետևյալը.

Սահիպ Դիւանին ասենք,
Որ մըլքեց զերկիր նա բոլոր.
Հանցեղ սիասաթ[2] ունէր,

---

8 Հ. Տաշյան, *Ուսումն. Ստոյն կալ.*, էջ 108։

1 Ֆրիկ, *Բանաստեղծություններ*, էջ 216 և հտն., «Նորին Ֆրկանն ասացեալ բան պիտանի»։

2 Տպված է «սիսաթ», «խոնարայք», պետք է ուղղել «սիասաթ», «խանորայք»։

Որ չունէր ոչ ոք թագաւոր.
Զինչ որ խանորայք կային
Յափն ունէր զինչ ըզմի խընձոր.
Ֆալաքն երբ ի սիրտ ելաւ,
Նա արար զինչ երկու կտոր։

Արդեն ցույց է տրված[3], *որ այս Սահիպ Դիվանին նույն անձն է, որին հիշում է և Ստ. Օրբելյանը՝ ասելով, թե Սյունիքի իշխան Սմբատը «ինքն իշխէր ամենայն իշխանութեանց աւագին։ Եւ տայ զդուստր նորա դխոշաքն ի կնութիւն մեծ խոջային Սահիպ Դիւանին, որ ունէր ի բոին գամենայն աշխարհս տէրութեան Ապաղայ ղանին... և նա էր դիւանի գլուխ և վերակացու ամենայնին. և էր այս յ718 [=718+551=1269] թուին»*[4]։ *Նա անցնում է մահմեդական դարձած Ահմադ ղանի կողմը և, ինչպես բերել ենք վերևում («Թաթարական իշխանությունը 13-րդ դարում» պարագրաֆի մեջ), սպանվում է այս ղանի և նրա համախոհների հետ 1286 թ., երբ իշխանները թագավորացնում են Ապաղայի որդի Արղունին*[5]։ *Ըստ այսմ Ֆրիկի «Ընդդէմ ֆալաքին» բանաստեղծությունը քանի որ սրա մեջ հիշատակվում է Սահիպ Դիվանի խոջայի անկումը, հորինված է ոչ առաջ, քան 1286 թվականը, հավանորեն հենց այս թվականին կատարված դեպքի թարմ ազդեցության տակ։*

Այս միևնույն քերթվածի մեջ Ֆալաքը բարկացած՝ ասում է հեղինակին. «Մի՛ հաչել, անգէտ ալևոր»։ «Ալևոր» նշանակում է՝ սպիտակ մազեր, սպիտակած մորուք ունեցող, շուրջ 50 տարեկան, ինչպես սովորաբար ընդունում են[6], *երկրորդաբար նաև՝ ծեր։ Այդ՝ քանի որ Ֆրիկը 1286 թ. հիշվում է իբրև ալևոր, շուրջ 50-ամյա, հետևաբար նա ծնված պիտի լինի շուրջ 1236 թվականին։ Այս հավանական է դառնում և հետևյալով։*

Ներքևում քիչ հետո կտեսնենք, որ Ֆրիկի «Վասն Արղուն ղանին և Բուղային» քերթվածը հորինված է 1289 թվականից ոչ առաջ և հավա-

---

3 *«Արարատ», 1918, էջ 181, 192—194. վերևում հիշված հոդվածը՝ «Մոռաց. մի հայ երգիչ» Տիրայր եպս.-ի։ Սրանից օգտվել է, առանց անունը հիշելու, նաև Մ. Մկրյանը, «Ֆրիկի ստեղծագործությունը», տե՛ս Ֆրիկ, «Բանաստեղծ.», էջ 6։*

4 *Ստ. Օրբելյան, Պատմ. նահ. Սիս., էջ 418 և հետ.։*

5 *Стекли Лэн-Пуль,* Мусульманские династии. СПб., *1899, էջ 182. Արղունի թագավորության սկիզբը դրված է 1284 թ.։ Բայց ստույգ պիտի համարել Օրբելյանին, որ ոչ միայն ժամանակակից է, այլև մոտիկ ծանոթ է եղելություններին։*

6 *Այսպես, օրինակ, հին գրողներից Գրիգոր Տաթևացին մարդու հասակի համար վեց շրջան՝ երեխայ, մանուկ, պատանեակ, երիտասարդ, ծեր և զառամացեալ՝ դնելուց հետո, ավելացնում է մի ուրիշ կերպ բաժանումն. «Եւ դարձեալ հասակ մարդոյ չորիցս ունի զփոփոխումն. այսինքն՝ ի մանկութիւն, երիտասարդութիւն, յալևորութիւն և ծերութիւն»։ Քառասուն և վեց (խզ) տարիքի համար ասում է. «Աստ տիրէ ալիք և սկիզբն լինի ծերութեան»։ Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, Կոստանդնուպոլիս, ի թուին Հայոց ՌՃԻԸ [=1178+551=1729], էջ Մկե=265։*

նորեն սույն թվականին։ Այդ բանքի մեջ բանաստեղծը խոսում է, ինչպես տեսել ենք, թաթարական հարստահարիչ իշխանության—«մասասի» և «մասասչիների» մասին և ասում է.

Աւուրքս անցաւ հետ մասասիս,
Եզերր չըկայ, հուն չերևին։

Այս տողերը բառացի նշանակում են՝ «օրերս անցան [=կյանքս անցավ] այս մասասի հետ, որի վերջը չկա, ծայրը չի երևում»։ «Մասաս» բառն, ինչպես տեսել ենք, վերաբերում է թաթարական կեղեքիչ իշխանությանը։ Երբ բանաստեղծն ասում է, թե օրերս անցան, կյանքս անցավ այս «մասասի» հետ, այդ պարզապես նշանակում է, որ նա ծնվել է կամ, ինչպես ժողովուրդն ասում է, աշք է բացել «մասասի» հետ։ Արդ՝ թաթարական արշավանքն ի Հայաստան եղել է առաջին անգամ 1236 թ., հետևաբար և նա ծնվել է շուրջ 1236 թ. և 1286 թվականին եղել է շուրջ 50 տարեկան, իսկ 1289 թ՝. շուրջ 53 տարեկան։

Պատմական եղելությունը, որով սույնը որոշվում է «Վասն Արղուն ղանին և Բուղային» քերթվածի գրության, հետևաբար և բանաստեղծի ապրած ժամանակը, հետևյալն է։ Ստ. Օրբելյանի «Ողբ»-ի մասին խոսելիս, «Թաթարական իշխանությունը 13-րդ դարում» պարագրաֆի մեջ տեսանք, որ մահմեդականության հարած Ահմադ ղանի և քրիստոնյաների վրա հենվող Արղուն ղանի կուվի մեջ 1286 թ. վրաց թագավորը և հայոց իշխան Տարսայիճը Արղունի կուսակից էին, և սրա ձեռով առաջ էր եկել Հայաստանի քաղաքական միությունը։ Երեք տարի հետո դավադրություն են սարքում Արղուն ղանի դեմ։ Ստեփաննոս Օրբելյանը (էջ 430) պատմում է, թե «Երկպառակեցան զօրքն ղան Արղունին. և անկաւ շփոթումն մեծ ի մէջ մեծամեծացն գլխաւորաց, և հանին բազում արեան ճապաղիս. զի կալաւ Արղունն զմեծ զօրավարն զԲուղայ Ջինքսանճ, որ կոչի աւագաց աւագ կամ տէրանց տէր, և եսպան զնա, զի խորհուրդ նենգութեան էին խորհեալ նմա. ընդ նմա և զամենայն համախոհս նորին՝ զՂազանն և զԹուխլուխ հազարապետն, զԱուխն, զԱճանն և այլ բազումս»։ Այդ ժամանակ, 1289 թ., զրպարտելով սպանում են և վրաց Դեմետր թագավորին։ Դրանով չի ոչնչանում դավադրությունն Արղունի դեմ։ Ինչպես հետո նույն Օրբելյանը (էջ 467 և հետ.) գրում է, Արղուն ղանը 1291 թ. իր սիրած հարճից թունավորվելով մեռնում է։ «Որ և ի մահուան նորա լինի կոտորուած բազում մեծամեծ աւագանւոյն՝ Խոջանին որ էր գանձապետ արքային, և Սուլտանին որ էր ի վերայ կերակրոցն և ըմպելեացն. և Ջիշուին և Աւրդուղանին որք էին ի վերայ դատաստանացն, և մեծ դիւանին Սադադալին՝ բարեբարոյ Ջհտին որ էր ի վերայ ամենայն հարկաց աշխարհի»։ Այս անգամ էլ սպանվում են Արղունի մարդիկը։

Արդ, ինչպես արդեն ցույց է տրված[7], Ֆրիկի «Վասն Արղուն զանին և Բուղային» քերթվածը հորինված է Արղունի դեմ կազմակերպված առաջին դավադրության մասին, որ տեղի է ունեցել 1289 թ.։ Ապա ուրեմն այս երկը գրված պիտի լինի ոչ առաջ քան 1289 թվականը, և ոչ թե (գուցե վրիպակով) «ոչ առաջ քան 1282 թվականը»[8]։ Ապա ընդունելի կսրելի չէ համարել և այն, թե Ֆրիկի տվյալ քերթվածի մեջ իբր երևում են Արղուն զանի մահվան ժամանակ կատարված դեպքերն ևս, «այն է մինչև 1291 թվականի վերջը»[9] կամ թե հետևյալը, որ ասված է առանց որևէ հիմնավորման, հետևելով նախորդին. «Վասն Արղուն զանին և Բուղային» ոտանավորում Ֆրիկը, Բուղայի ապստամբությունից հետո, նկարագրում է մի քանի դեպքեր ևս, որոնք կատարվել են 1291 թվին։ Այսպիսով Ֆրիկի այս ոտանավորը չէր կարող 1291 թվից առաջ գրված լինել։ Մյուս կողմից էլ այն չէր կարող 1295 թվից հետո գրված լինել...»[10]։ Ուրեմն իբր 1291 և 1295 թվականների մեջ է գրված այն։ Բերված երկրորդ ասացվածի վերջին մասը, որ վերաբերում է 1295 թվականին, կարևորություն չունի. որովհետև թե որոնք են այն «մի քանի դեպքերը», որ իբր կատարված են 1291 թ., այդ մասին ոչ մի խոսք։

Որ Ֆրիկի այս բանաստեղծությունը վերաբերում է Արղուն զանի դեմ 1289 թ. կազմակերպված դավադրությանը, այդ շատ պարզ է։ Քերթվածի մեջ հիշված եղելություններն և անունները միայն բավական են ապացուցելու այդ։ Թե՛ Ֆրիկի քերթվածի և թե՛ Օրբելյանի Պատմության մեջ դավադրության պարագլուխն է Ջինքսան Բուղան, որ կամեցել է «նենգել» Արղունին, կամ, ինչպես Օրբելյանը գրում է, «խորհուրդ նենգութեան էին [էր?] խորհեալ նմա»։ Ֆրիկը Բուղայի համախոհներից հիշում է Արուխին, նույնը կա նաև Օրբելյանի Պատմության մեջ։ Ըստ Ֆրիկի՝ դավադրությունն իմանում է Սուլթան Աղան, որին հիշում է Օրբելյանը իբրև Արղունի հավատարիմներից մեկը։ Վերջապես երկուսի մեջ էլ հիշվում է Արղունի բարեկամ Սադաղաւ(ին), որ Արղուն զանի կու-

---

7 «Արարատ» ամսագիր, 1918, էջ 182 և հտն., Տիրայր եպս., Մոռացված մի հայ երգիչ։ Այլև Ֆրիկ, Բանաստեղծություններ, 1941, էջ 6 և հտն., Մ. Մկրյան, Ֆրիկի ստեղծագործությունը։ Այս երկրորդն օգտված է առաջինից՝ առանց իր աղբյուրը ցույց տալու։ Ընդհանուր եզրակացությունը մասամբ ճիշտ համարելով հանդերձ՝ ընդունելի չեմ համարում այս երկու հոդվածների էլ որոշ մանրամասնությունները։

8 «Արարատ», 1918, էջ 187։

9 Անդ, էջ 189, 193, 194։

10 Ֆրիկ, Բանաստեղծություններ, 1941, էջ 8։

Չհիմնավորված կերպով առաջարկված է Ֆրիկի քերթվածի «Ղուչան» անունը համարել «Ղազան» անվան աղճատում, և Ղազան անվան մեջ տեսնել Արղուն զանի Ղազան որդուն, որ իր հոր մահվան ժամանակ Խորասանում էր և 1295 թ. իր հակառակորդներին հաղթելով՝ դառնում է թագավոր։ Նույնպես մի չհիմնավորված առաջարկ է «Թաչար» անվան մեջ տեսնել Ստ. Օրբելյանի (էջ 171) հիշած «մեծ բիւրապետ Թաչարին», որ պատերազմի ժամանակ անցել է Ղազանի կողմը։ Տե՛ս «Արարատ», 1918, էջ 188, և հտն., Տիրայր եպս-ի վերևում հիշված հոդվածը՝ «Մոռացված մի հայ երգիչ»։

սակից ավագանիներից մեկն էր, որին ուրիշների հետ, ինչպես պատմում է Ստ. Օրբելյանը, սպանում են Արղունի մահվան ժամանակ։ Այս քերթվածի մեջ նա հիշվում է իբրև դեռ կենդանի։ Նույնպես դեռ կենդանի է ներկայանում և Արղուն ղանը։ Եթե այն գրված լիներ 1291 թվից հետո, Ֆրիկն անպայման ավելի ևս բուռն զայրույթով կխոսեր այդ թվականին կատարված եղելության մասին. բայց ոչ մի ակնարկ չկա Արղուն ղանի թունավորման և նրա կուսակիցների կոտորածի վրա։ Ընդհակառակն, նա Արղուն ղանի մասին խոսում է իբրև կենդանի մարդու, և գոհ է, որ նա չէր սպանվել։

Բուղա՛, դու ո՞նց կամիր [=կամէիր] նենգել.
Զ'Արղուն ղանն աստուած եդիր,
Ով է յաղթող Արղուն ղանին։

Այսպես չի կարող դրվել իր կուսակիցներով հանդերձ արդեն սպանված մի մարդու մասին։ Կամ հետևյալը.

...Աղաչենք զստէր Աստուած,
Որ ցուցանէ Արղուն ղանին,
Թէ չէ՛ աղէկ այն արտասուքն,
Որ թափեցին օրթախբնին։

Եթե Արղուն ղանն արդեն սպանված լիներ, այլևս ինչո՞ւ պիտի բանաստեղծը գրեր «Աղաչենք աստուծուն, որ ցուցանէ» նրան, թե լավ բան չէ օրթախների թափած արտասուքը։ Այսպես ուրեմն, «Վասն Արղուն ղանին և Բուղայինն» քերթվածը գրված է 1291 թվականից առաջ և 1289 թ. ոչ առաջ. իմ կարծիքով՝ քերթվածի ամբողջ բնավորությունից երևում է, որ դա հորինված է հենց այս 1289 թվականին կատարված եղելության անմիջական տպավորության տակ անմիջական բռնկումով։

Երրորդ թվականը վերաբերում է «Գանգատ» քերթվածին։ Խաչատուր Կեչառեցու «Ողբի» մասին գրելիս՝ արդեն տեսել ենք, որ Ղազան ղանի թագավորության սկիզբներում սոսկալի հալածանք է հանել քրիստոնյաների դեմ մահմեդականության հարած Նավրուզ զորավարը. քանդել են եկեղեցիները, կոտորել են քահանաներին ու շատ քրիստոնյաներ, շատերին կողոպտել ու գերի տարել։ Այդ դրությունը, որ արտահայտված է Կեչառեցու «Ողբի» մեջ, ավելի զորեղ կերպով երևում է Ֆրիկի «Գանգատ» («Բան ի Ֆրիկ գրքոյն») քերթվածի[11] մեջ։

Այլ կամք ի ձեռս անօրինի,
Որք կու վարեն անգին գերի.
Ո՞րքան քակեն եկեղեցի.
Քանի՞ շինեն սիրծ մզկիթնի։

11 Ֆրիկ, *Բանաստեղծություններ, էջ 232։*

Քանի՞ կանայս առնեն այրի,
Եւ ո՞րքան որբ քրիստոնէի.
Ո՞րքան արիւն հեղուն յերկրի։

«Քանի որ թաթարական տիրապետության նախորդ շրջանում եկեղեցիներ քանդելու մասին հիշատակություն չկա, ուրեմն կարելի է հաստատ եզրակացնել, որ «Բան ի Ֆրիկ գրքոյն» բանաստեղծությունը գրվել է 1295 թվից հետո»[12]*։ Ըստ իս՝ այդ քերթվածը հորինված է ոչ թե 1295 թ. հետո, որ է՝ 1296 թվականին կամ ավելի ուշ, այլ հենց նույն 1295 թվականին, Խորասանից Ղազան ղանի գալու ժամանակները և Ղազանի թագավորության սկիզբներում, երբ և տեղի է ունեցել եկեղեցիների քանդումը։ Այդ հաստատվում է հետևյալով։ Հենց այդ ժամանակներում էլ Կիլիկիայի Հայոց Հեթում թագավորը, որ եկել էր Ղազանի նախորդի մոտ, «և հասաւ յայս տագնապ շփոթի»,— գրում է Ստ. Օրբելյանը*[13]*,— գնում է Ղազանի մոտ և խոսում է նրա հետ այդ հալածանքի մասին։ «Իսկ նորա [=Ղազանը] ի չքմեղս նղեալ ասէր. ես ոչ գիտեմ զայդ. այլ Նաւրուզն գործեաց զամենայն։ Եւ հրամայեաց առ ժամայն գրել հրովարտակ ընդ ամենայն աշխարհ, զի մի՛ իշխեսցեն ձեռնարկել յեկեղեցիս և ի քրիստոնեայս. այլ խաղաղութեամբ բնակեսցէ ամենայն ոք՝ ղիւր հաւատ և պաշտօն համարձակ ունելով։ Եւ յայսմանէ սակաւ մի խաղաղացեալ եղեն հէնք տագնապին... Իսկ Ղազանն առեալ զղաւնութիւն յ744(=1295) թուին յաշունն... կացուցանէր նա ի վերայ ամենայն զօրաց իւրոց և աշխարհաց զխութլուշահն՝ այր բարի և հզօր և յաղթող ի պատերազմունս, որ էր յոյժ բարեկամ և օգնական քրիստոնէից. որ և փեսայացաւ արքայի առնելով զքոյր նորա ի կնութիւն. և ի սադրելոյ սորա լինէր խաղաղութիւն մեզ և ամենայն աշխարհիս Հայոց»։ Իսկ Նավրուզը դնում է Խորասան, ուր և մտածում է դավել Ղազանին, բայց իր տոհմով ոչնչացվում է Խութլուշահի ձեռով։ «Ահա՛ տեսէք զեղջիւր եկեղեցւոյ, նիւթ որպէս մեծագոյն պատառեաց զթշնամին իւր,— գրում է Օրբելյանը,— և խնդրեաց զվրէժ քակտելոյն իւրոյ, զի ոչ ևս եաց իշխանութիւն նորա (Նավրուզի) ամ մի. այլ իսպառ ջնջեցաւ ազգաւ»։ Այս ամենն, ուրեմն, կատարվել է մի տարում՝ 1295 թվականին։ Եվ Ֆրիկի «Դանգատ» բանաստեղծությունն էլ գրված է հենց նույն թվականին հայերի այդ մեծ հալածանքի օրերին և ոչ թե հալածանքը դադարելուց հետո, «1295 թվից հետո»։ Ուշադրություն պիտի դարձնել, որ Ֆրիկը հորինում է բայերի ներկա ժամանակով՝ «կամք, վարեն, քակեն» և այլն. ուրեմն «կանք», «գերի են տանում», «եկեղեցիները քանդում են» և այլն։ Այսպես գրում են մարդիկ, երբ գրելիս հենց կատարվում է այն եղելությունը, որի մասին գրում են։*

---

12 *Անդ, էջ 9, Մ. Մկրյան. Ֆրիկի ստեղծագործությունը։*

13 *Ստ. Օրբելյան, Պատմ. նահ. Սիս., էջ 474 և հտն.։*

Ըստ երևույթին նույն 1295 թվականի հալածանքի ժամանակ է Ֆրիկը գրել իր մի ուրիշ բանքն ևս՝ «Վասն անմիաբանութեան քրիստոնէից», որի մեջ հիշում է եկեղեցիների հալածանքը («ղեկեղեցիս հալածեն») և դիմում է աստուածն ասելով՝ «Յարո՛ մեզ եղջիւր փրկութեան...»։

Քանի որ, ինչպես տեսանք, մեր այս բանաստեղծը ծնված պիտի լինի շուրջ 1236 թ., հետևաբար նա 1295 թ. իր նշանավոր «Գանգատ» բանքը հորինել է մոտ 59—60 տարեկան պատկառելի հասակում։ Դրանից հետո էլ նա ապրել է շատ տարիներ, և հասել է լի ծերության, քանի որ նա մի բանքի մեջ, որի սկիզբն է «Ջանացի թէ լոյսն ելնեմ» (էջ 79), գրում է.

Ալիքս է դեղին դարձել։

Ընդունելով այսպիսի հասակը 70—75-րդ տարին, նա վախճանված պիտի լինի 14-րդ դարի առաջին տասնամյակներին։

2. Ֆրիկի որդու գրավ դրվելու խնդիրները։— Այս բանաստեղծի կենսագրության մեջ տեսանք, որ թաթարների իշխանության ժամանակ, երբ պահանջված հարկը չէին կարողանում վճարել, հարկի պարտքի տեղ հարկատուների զավակներին էին առնում։ Կարծում են, թե Ֆրիկի որդուն էլ տարել են հոր պարտքի փոխանակ[14]։ Բայց այն բանաստեղծությունը, որի մեջ հիշատակվում է այդ, ինչպես կենսագրության մեջ ասացինք, դեռ կարոտ է բանասիրական քննադատության։ Դնենք այստեղ Ֆրիկի այդ գեղեցիկ բանքը[15], որի մասին խոսվել է նրա կենսագրության մեջ։ Մասերը նշվում են 1 և 2 թվանշաններով։

Նորին Ֆրկանն ասացեալ

1. Գնաց մանկութեան հասրաթն,
Ու երեկ ինձ հոգս անիհուն.
Ջըրկած եմ երկու կենօք,
Վասն այնոր չեմ ելնել ի հուն։
Գազան 'ւ անասուն ու հաւ
Գէմ ունին իւրեանց տուն ու բուն.
Ոչ տուն ու ոչ տեղ ունիմ,
Կու խոցիմ զօրն ի յայն հարկուն։
[Վարիանտ՝ կու խոցիմ ի յանհաւատնուն]։
2. Յաւել թէ գինի խմեմ,
Նա՛ ծըփամ զինչ նաւն ի յալուն.
Գընա, թող ի բաց զամէն,
Ու եղիր սիրող վանքերուն։
Յիշխան մի՛ յուսալ, եղբա՛յր,

---

14 «Արարատ», 1918, էջ 83 և հտն.։ Այստեղից էլ ունի «Ֆրիկ, Բանաստեղծություններ», էջ 10։

15 **Ֆրիկ**, *Բանաստեղծություններ*, էջ 40 և հտն.։

Ճար չըկայ ի յաղամորդուն.
Գընա, ծառայէ նորա,
Որ տէր է անձին ու հոգուն։
Գէմ զայն խասիաթս գիտեմ,
Կեանքըս չի մընա մարըդոյն.
Ճարակ անտէնին արա,
Որ չլինիս ի հօն դու լալուն։

Ժողովածուն կազմողը՝ Տիրայր եպիսկոպոս՝ Ֆրիկի այս բանքը հանել է երեք ձեռագրից (x, a, b), որոնց մեկի մեջ միայն (x ձեռ.) եղել է սովորական վերնագիրը՝ «Նորին Ֆրկանն ասացեալ», մյուս երկուսը (a, b) չեն ունեցել վերնագիր։ Նա մի չորրորդ ձեռագրի (c) մեջ գտել է վերևում դրված բանաստեղծության միայն առաջին (1) երկու քառյակն առանց վերնագրի, ուրեմն առանց Ֆրիկի անվան. իսկ հաջորդ երեք քառյակի (2 մասի 12 տողի) փոխանակ տարբեր 14 տողեր, որոնց մեջ է և հեղինակի որդու գրավ դրվելը։ Բերենք և այդ **«անանուն բանքը»**:

1. Գնաց մանկութեան հասրաթն,
Ու երեկ ինձ հոգս անհուն.
Ջրկեալ եմ երկու կենօքս,
Վասն այնոր չեմ ելնել ի հուն։
Գազան 'ւ անասուն ու հաւ
Գէ՛մ ունին իրենց տուն ու բուն,
Ոչ տուն ու ոչ տեղ ունիմ,
Կու խոցիմ ի յանհաւատնուն։
2. Կասեն թէ խմէ գինի,
Որ լինես դու մի պահ ի քուն.
Ուսկա ի պարտուց յահուն[16]
Կու դողամ զինչ ուտն ի քամուն։
Դրրի զիմ որդին գըրաւ
Ուստի ճուղապ գընալուն.
Միթէ թագաւորն երկնից
Նայ բերէ զիմ որդին ի տուն։
Հալար ցեղ թապտիր կածեմ
Թէ... ներուս թէ ելնեմ ի հուն,
Ժամ ժամ ի դէպ կապ կուգա,
Չի ընկնիր իմ ջուրն ի յառուն։
Ջանցի թէ հանց բան այնեմ
Որ էր... (թերթ ընկած և պակասավոր)։

Ժողովածուն կազմողն այս «անանուն բանքի» (2) մասը, վերջին 14 տողերը, որոնց մեջ է հիշվում հեղինակի որդու գրավ դրվելը, համարել է

16 *«Արարատ», 1918, էջ 81 «յահուն», իսկ «Ֆրիկ, Բանաստ.», էջ 40 տպված է «յալուն»։*

մի այլ ընթերցված Ֆրիկի բանքի, այսինքն վերևում դրված «առաջին բանքի», փոխանակ սրա (2) մասի, այսինքն վերջին 12 տողերի (սկսած՝ «Յաւել թէ գինի խմեմ» տողից) և իբրև այսպիսին էլ գծի տակ տպված է ժողովածուի մեջ, որից և օգտվում ենք մենք։ Այսպես վարվելու հիմքը միայն այն է եղել, որ այս կարծեցյալ «այլ ընթերցվածից» առաջ եղել է Ֆրիկի բանքի («առաջին բանքի») սկզբի մասը՝ (1) առաջին ութ տողերը։ Բայց այդ մեծ հատվածն իր բովանդակությամբ կապ չունի Ֆրիկի բանքի երկրորդ (2) մասի հետ, որ սրա այլ ընթերցվածը համարվի։ Միակ նմանությունը որ կա երկուսի մեջ՝ է «գինի խմեմ», «խմէ գինի»։ Բացի այդ՝ ոչ մի հաստատ հիմք չկա պնդելու, թե այդ հատվածի հեղինակը Ֆրիկն է։ Այսպես ուրեմն, ունենք երկու առանձին բանքեր, «Ֆրիկի բանք» կամ «առաջին բանք» և «անանուն բանք» կամ «երկրորդ բանք», որոնց սկզբի ութ տողերը նույնն են, իսկ շարունակությունը՝ տարբեր։

Այլ և այլ վարկածներով կարելի է բացատրել այդ երկու բանքի հարաբերությունը։ Եթե ընդունվի, թե այդ երկուսի էլ հեղինակը Ֆրիկն է, ապա այդ դեպքում պետք է ենթադրել, թե նա դրանցից մեկն ու մեկը հորինելուց հետո առել է իր բանքի սկզբի (1) մասը, առաջին ութ տողը և շարունակությունը նոր բովանդակությամբ հորինել, որով առաջացել են երկու տարբեր քերթվածներ՝ իրենց սկզբի մասերի նույնությամբ։ Իրենց աշխատությունների հետ այսպես վարվող քերթողներ էլ կան. բայց այդ դժվար է ընդունել Ֆրիկի նման առատաբան և հեշտ հորինող մի բանաստեղծի համար։ Նա իր մի քերթվածի տողերն առնելու փոխանակ՝ ամենայն թեթևությամբ նոր տողեր կշարադրերը նոր բանքի սկզբում։ Բացի այդ՝ քանի որ հեղինակի անվան հիշատակություն չկա երկրորդ բանքի համար, ուստի վերջին հաշվով ենթադրական է մնում դրա հեղինակի ով լինելը, հետևաբար և Ֆրիկի որդու գրավ դրվելը, որ հիշվում է այդ անանուն բանքի մեջ։

Դարձյալ կարող է առաջ գալ և այս ենթադրությունը. Ֆրիկը հորինել է երկու բանքերից առաջինը, որի վերնագրի մեջ կա Ֆրիկ անունը, և մի ուրիշ քերթող՝ յուրացնելով նրա քերթվածի առաջին ութ տողերը, շարունակությունը ինքն է հորինել, և այսպես կազմվել է «անանուն բանքը» կամ «երկրորդ բանքը»։ Այսպիսի վերաբերմունքը մի անսովոր երևույթ չէր Ֆրիկի ապրած շրջանում, երբ ուրիշի հեղինակությունների հետ ազատ էին վարվում։ Այս դեպքում, սակայն, ժխտվում է, թե Ֆրիկն իր որդուն գրավ է դրել, քանի որ այդ հիշվում է «անանուն բանքի» մեջ։

Երրորդ՝ կարելի է ենթադրել, թե այդ «անանուն» կամ «երկրորդ» բանքն առաջացել է որևէ դրչի ձեռով պատահաբար այսպես. Ֆրիկի բանքի, այսինքն վերևի «առաջին բանքի» ետևից դրված է եղել մի ուրիշ բանք, երբ գրիչը Ֆրիկի բանքն արտագրելիս հասել է «Յաւել թէ գինի խմեմ» տողին, նա անզգուշությամբ սկսել է արտագրել ետևի

ուրիշ բանքի նման տողից՝ «Կասեն թէ գինի խմէ», որով և առաջացել է «անանուն բանքը»։ Այսպիսի թռիչքներ արտագրության ժամանակ սովորական են. այդ առաջանում է նույն բառերի և նույնանման խոսքերի ազդեցությամբ։ Եթե այսպես ծագած լինի «անանուն բանքը», քանի որ դրա՝ ուրիշ քերթվածից ծագած մասի մեջ է հեղինակի որդու գրավ դրվելը, իսկ այդ ուրիշ քերթվածի հեղինակի ով լինելը հայտնի չէ, ապա ուրեմն դարձյալ ենթադրական է Ֆրիկի որդու գրավ դրված լինելը։

Չորրորդ՝ կարելի է ենթադրել, թե այդ «անանուն բանքը» ծագել է այսպիսի մի կերպով։ Ֆրիկի բանքը գրված է եղել որևէ ձեռագրի մի թերթի երկրորդ էջի վրա. եւևից նույն էջի ցածի մասում՝ մի ուրիշ քերթվածի սկզբի մասը։ Որևէ պատճառով պատռված հանված է այդ թերթի ցածի մասը, որի վրա եղել են Ֆրիկի բանքի երկրորդ (2) մասը և այն ուրիշ քերթվածի սկզբի մասը։ Հետագայում մի գրիչ արտագրել է Ֆրիկի բանքից մնացածը, որ է առաջին (1) մասը, և ապա հաջորդ թերթից առաջին էջը, որի վրա գրված է եղել այն ուրիշ քերթվածի շարունակությունը, և այսպես մեխանիկորեն միացել են Ֆրիկի բանքի առաջին (1) մասը և մի ուրիշ քերթվածի մնացած մասը, և առաջացել է «անանուն բանքը»։ Այսպիսի դեպքեր պատահում են ձեռագիրների մեջ, բայց այսպիսի դեպքում էլ, քանի որ Ֆրիկի անունը հիշված չկա «անանուն բանքի» համար, չգիտենք թե ո՛վ է հեղինակը ենթադրական ուրիշ քերթվածի, ապա դարձյալ չենք կարող հաստատ ասել, թե Ֆրիկի որդին է պարտքի տեղ գրավ դրված եղել։

Վերջապես՝ կարելի է կարծել, թե այդ երկու՝ «առաջին» և «երկրորդ բանքերը» սկզբնապես ոչ թե տարբեր բանաստեղծություններ են եղել, այլ Ֆրիկի մի գեղեցիկ քերթվածի մասեր, որոնք պատահաբար անջատված են ամբողջությունից։ Այդ քերթվածը ենթադրաբար եղել է այսպես.

1. Գնաց մանկութեան հասրաթն,
Ու երեկ ինձ հոգս անիհուն.
Ջրրկած եմ երկու կենօք,
Վասն այնոր չեմ ելնել ի հուն։
Գազան՝ ւ անասուն ու հաւ
Գէմ ունին իւրեանց տուն ու բուն.
Ոչ տուն ու ոչ տեղ ունիմ,
Կու խոցիմ զօրն ի յայն հարկուն.
[Վարիանտ՝ կու խոցիմ ի յանհաւատնուն]։
2. Կասեն թէ խըմէ՝ գինի,
Որ լինիս դու պահ մի քուն.
Ուսկա ի պարտուց յահուն[17]

[17] «Արարատ», 1918, էջ 81՝ «յահուն». իսկ ժողովածուի մեջ՝ «յայուն»։

Կու դողամ զինչ ուրն ի քամուն.
Դըրի զիմ որդին գըրաւ,
Ուստի ճուղապ գընալուն.
Միթէ թագավորն երկնից
Նայ բերէ զիմ որդին ի տուն։
Հազար ցեղ թապտիր կածեմ,
Թէ... ներուս թէ ելնեմ ի հուն.
Ժամ ժամ ի դէպ կապ կու գայ,
Չի ընկնիր իմ ջուրն ի յառուն։
Ջանցի թէ հանց բան այնեմ,
Որ էր... («Թերթ ընկած և պակասավոր»)։
3. Յաւել թէ գինի խմեմ,
Նա՛ ծըփամ զինչ նաւն ի յալուն.
Գընա, թող ի բաց զամէն,
Ու եղի՛ր սիրող վանքերուն։
Յիշխան մի՛ յուսալ, եղբա՛յր,
Ճար չըկայ ի յադամորդոյն.
Գընա, ծառայէ՛ նորա,
Որ տէր է անձին ու հոգուն։
Գէմ զայն խասխաթս գիտեմ,
Կեանքըս չի մընալ մարըդոյն.
Ճարակ անտէնին արա,
Որ չինիս ի հօն դու լալուն։

Այս ենթադրական ամբողջական քերթվածից 3-րդ հատվածի դուրս ընկնելով առաջացել է վերևի «անանուն» կամ «երկրորդ բանքը». և ժողովածուն կազմողը հայտնում է այդ մասին գրելով՝ «Թերթ ընկած և պակասավոր»։ Իսկ Ֆրիկի բանքը կամ «առաջին բանքը» առաջացել է այսպես։ Գրիչն արտագրել է ենթադրական ամբողջական քերթվածի 1. մասը. երբ հասել է 2. մասին, որ սկսվում է «Կասեն թէ գինի խմէ», նա անզգուշությամբ, «գինի խմելու» զուգորդությամբ, թողել է 2. մասը և արտագրել է 3. մասը, որ սկսվում է «Յաւել թէ գինի խմեմ» տողով։ Այսպիսով պատահաբար ծագել է «Ֆրիկի բանքը» կամ «առաջին բանքը», որի պակասավոր լինելն ըստ իմաստի զգալի չէ, և ուրիշներն արտագրել են նույնը։ Եթե ընդունվի այսպիսի վերականգնված ամբողջական քերթվածը իբրև Ֆրիկի մի երկ, ապա պետք է ընդունվի նաև Ֆրիկի որդու գրավ դրված լինելը։ Բայց ինչքան էլ հնարավոր և հավանական է այդպիսի ամբողջական քերթվածի գոյությունը և նրա միջից կամ վերջից հատվածներ դուրս ընկնելը, դարձյալ մի ենթադրություն է այդ, հետևաբար այս դեպքում էլ ենթադրական է մնում Ֆրիկի որդու գրավ դրված լինելը։ Այդ վտույգ որոշելու համար՝ պետք է սպասել նոր հավաստի տեղեկության։

ՇԱՀՆԱՄԱՅԻ ՁԵՎԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

«Ասել ձայնով»:— *Կոստանդին Երզնկացուց, ինչպես տեսել ենք, խնդրում են հորինել մի քերթված այնպիսի չափով, որ կարելի լինի «ի Շահնամայի ձայն ասել, կարդալ», կամ «ասել ձայնով», ինչպես Շահնաման էին ասում։ Եվ Կոստանդինը, նմանելով պարսկական դիցազներգությանը, հարմարում է մի բանք, ասելով, թե «ի Շահնամայի ձայն կարդացէք»։ Անկարևոր չէ այստեղ բացատրել, թե ինչպիսի է եղել այդ նմանողությունը, և թե ինչ է նշանակում մի ոտանավոր ասել ձայնով, և որն է «Շահնամայի ձայնը», որի համեմատ պիտի ասեին Կոստանդնի հորինած ոտանավորները*[1]։

Հին ժամանակ բանաստեղծությունը կատարում էին երեք կերպ, երգում էին, «ի թիւ» էին ասում և «ի ձայն» կամ «ձայնիւ» էին ասում։ Երգելը պարզ է, թե բանաստեղծության որպիսի կատարումն է։ «Ի թիւ ասելը», դա «ի թիւ» ուսած, այսինքն՝ բերան արած՝ արտասանելն է առանց որևէ եղանակի, սովորական կարդալու կամ պատմելու ձևով, որքան կարելի է, պարզ և մեկին։ Այսպես «ի թիւ» է ասվել, մասամբ և երգվիլ, մեր հին վիպասանությունը կամ վիպասանքը, որ և այդ պատճառով կոչվել է նաև «Թուելիք», «Թուել» բառից, որ նշանակում է նաև պատմել[2]։ *«Թիվ են ասվել» և դեռ այդպես ասվում են, և քիչ մասով միայն երգվում մեր «Սասնա Ծռերը», ինչպես նմանապես նաև ուրիշ ազգերի ժողովրդական վեպերը։*

«Ձայնով ասելը», դա մի առանձին տեսակի եղանակավոր ասելն է, որ երգելու և թիվ ասելու միջին տեղն է բռնում։ Եթե թիվ ասում են սովորական խոսակցական կամ գրուցատրական ձևով ու ձայնով, որոշ դեպքերում նաև սովորականից էլ ցած ձայնով, «ձայնով ասելու» ժամանակ ձայնը բարձրացնում են սովորականից ավելի։ Արձակ խոսքի, պրոզայի այսպիսի արտասանության ժամանակ խոսքի մեջ որոշ բառերի վրա, նայելով բովանդակությանն ու բառերի կապակցության խմբերին, ուժեղշեշտեր են դրվում և վանկերի ժամանակը, այսինքն տևողությունը, երկարացվում է, այնպես որ արձակ ասացվածը ստանում է մի առանձին ռիթմ ու եղանակավորություն։ Մինչև այժմ էլ մեր «Սասնա Ծռեր» պատմողները, եթե չեն երգում այն հատվածները, որ ուրիշները երգում են, հաճախ «ձայնով են ասում», և հայտնում են, թե այդ ինչ կտորը պետք է ձայնով ասել։ Նույնիսկ վեպի պատմվածքի ընթացքում, վեպի բնագրի մեջ այդ-

---

[1] «Ֆիրդուսի», *բանաստեղծի ծննդյան հազարամյակին նվիրված ժողովածու, Երևան, 1934, էջ 117—128,* Մ. Աբեղյանի *«Շահնամայի ոտանավորի չափը հայ բանաստեղծության մեջ» հոդվածը։*

[2] *Տե՛ս սույն աշխատության Առաջին հատոր, էջ 44 և հետ. «Թուելիք, Թուելեաց երգք» («Երկեր», Գ, էջ 57 և հետ.)։*

պիսի հատվածների համար գործածվում է կամ «երգել», «խաղով (=երգով) ասել», կամ թե չէ՝ «ձենով ասել» արտահայտությունը[3]։

Ոտանավորներն «ի ձայն ասելը», կամ «ձայնով կարդալը», դա նույն ձայնով ասելն է, միայն այս դեպքում առանձնապես շեշտվում ու երկարացվում են, ոտանավորի կազմության համեմատ, ռիթմական ոտքերի ու անդամների այն վանկերը, որոնք իրենց վրա պետք է կրեն ռիթմական շեշտերը։ Բացի այդ՝ ռիթմական ոտքերը կամ անդամները մի փոքրիկ դադարով անջատվում են հաջորդ ռիթմական ոտքերից կամ անդամներից։ Այսպիսի արվեստական արտասանումի ժամանակ վանկերը միակերպ մեկին են հնչում, ռիթմական շեշտերը միակերպ ուժեղ և այդ շեշտերը կրող վանկերը միակերպ երկար տևողությամբ, այնպես որ ունկնդիրների համար անջատ-անջատ լսելի են լինում առանձին ռիթմական ոտքերը կամ անդամները։ Այսպիսի արտասանումն ահա, որ կոչվում է «ի ձայն» կամ «ձայնով ասել» կամ «ոգել ձայնիւ», սիրված է եղել մեզնում մինչև 19-րդ դարի կեսերը և նույնիսկ մինչև 1880-ական թվականները գրաբար ոտանավորների համար։ Այսպիսի արվեստական արտասանումով կարդացել են և Շահնաման և դեռ կարդում են մինչև մեր օրերը։ Դրանով ուժեղ կերպով արտահայտվում է այդ վիպասանության չափը։

Պարսկական ոտանավորի էական հիմունքը կազմում է վանկերի երկարությունն ու կարճությունը։ Շահնամայի չափի յուրաքանչյուր ոտքը կազմված է երեք վանկերից, որոնց առաջինը կարճ է և ռիթմորեն անշեշտ, երկրորդն ու երրորդը երկար են. ռիթմական ուժեղ շեշտը, որ անկախ է պրոզաիկ շեշտից, այսինքն սովորական արտասանության շեշտից, դրվում է երկրորդ վանկի վրա, երրորդ վանկը կրում է երկրորդական, թույլ շեշտ։ Այս չափի յուրաքանչյուր տողը, որ 11-վանկանի է, կազմված է չորս այսպիսի ոտքերից, որոնց վերջինը չունի երրորդ վանկը։ Երկու տողը միասին կազմում են մի տուն (բեյթ) և նույնահանգ են։ Ձայնով կարդալու ժամանակ՝ ամեն ռիթմական ոտք հաջորդ ոտքից բաժանվում է մի փոքր դադարով, որ կարող է ընկնել նաև բառամեջերում։ Շահնաման, ուրեմն, հորինված է հետևյալ սքեմայով՝

⏑ — — ⏑ — — ⏑ — — ⏑ — ։

Վանականները Կոստանդնին խնդրել են հայերեն լեզվով այնպիսի ոտանավոր հորինել, որ կարելի լինի «Շահնամայի ձայնով ասել»։ Այսպիսի չափով հայերենում իսկապես հնարավոր չէ ոտանավորներ գրել, զի հայոց լեզուն չունի երկար և կարճ ձայնավորներ։ Մեր բանաստեղծը հայերեն ոտանավորի ոտքերն էլ կազմում է երեք վանկից, բայց յուրա-

---

3 Մինչև այժմ էլ հայոց եկեղեցու ժամերգության ժամանակ պահված է ոչ միայն երգելը, այլև թիվ ասելն ու ձայնով ասելը որոշ դեպքերի և առանձին տիպի ընթերցվածների համար։ Տե՛ս **Մ. Աբեղյան**, Հայ ժողովրդ. առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմ. մեջ, Վաղարշապատ, 1899, էջ 56—71։ «Ասել, Վիպասանք, Երգք վիպասանաց, ի թիւ ասել, թուել, Թուելեացն երգք»։

քանչյուր ոտքի միջին երկար և դորեղ շեշտված վանկի փոխանակ, հլնելով հայերենի պրոսոդիայից—առոգանությունից, դնում է շեշտված վանկ, որ հայերենում համեմատաբար երկար է արտասանվում, քան մյուսները և հարկավոր ժամանակ կարելի է ավելի ևս երկարել։ Այսպիսի կազմությամբ ոտանավորը կարելի է ազատ կերպով «ի Շահնամայի ձայն» ասել։ Բայց դա, եթե բովանդակության համեմատ կարդանք, իսկապես հայկական անապեստյան ոտանավոր է, սկզբից մի յամբական ոտքով, և արվեստական արտասանումով միայն ստանում է բարձրացող-ընկնող ռիթմ։ Ռիթմական շեշտերը կրող երկար վանկերը նշանակելով հայերենի երկար (ˉ) նշանով, իսկ ոտքերի երրորդ վանկերը (որ պարսկերենում ունի երկրորդական ռիթմական շեշտ), նշանակելով հայերենի բութ (ˋ) նշանով, և ոտքերի միջի դադարները՝ ուղղաձիգ գծով (|), Կոստանդնի հետևյալ տողերն՝ ըստ Շահնամայի՝ ձայնով ասվում են այսպես.

Այսկեա՞նքսէ՝ | ունա՛յնև՝ | ժառա՛նգե՛նք | մահո՛ւ,
Ջունի՛մե՛զ | դըրո՛ւնքբա՛- | րութեա՛նև՝ | շահո՛ւ.
Երա՛զէ՝ | խաբո՛ղև՝ | խայալա՛ն- | ցաւո՛ր,
է սո՛ւտսի՛- | բելի՛և՝ | ընկե՛րնե՛ն- | գաւո՛ր։

Կարելի չէ կարծել, թե հայերին Կոստանդին երզնկացու ապրած շրջանում միայն ծանոթ է եղել Ֆիրդուսու Շահնաման և նրա բանեցրած չափր, որ պարսից մեծ բանաստեղծից առաջ էլ ուրիշները գործածել են։ Եվ իսկապես Գրիգոր Նարեկացին արդեն ունի այդ չափով մի տաղ («Եկեղեցւոյ»), որ Շահնամայի ձայնով կարդալիս՝ ստանում է նույն բարձրացող-ընկնող ռիթմը.

Երկինքն ի յերկիրս և երկիրս ի յերկինքն,
Վայրէջք ի խոնարհ և վերելք ի բարձունս...

Ձայնով ասելիս՝

Երկի՛նքնի | յերկի՛րսև | երկի՛րսի | յերկի՛նքն,
Վայրէ՛ջքի | խոնա՛րհև | վերե՛լքի | բարձո՛ւնս...

Այսպես ուրեմն, 10-րդ դարուց, Ֆիրդուսու ապրած ժամանակից արդեն մեր բանաստեղծության մեջ գործածված կա Շահնամայի ոտանավորի չափը[4]։ Բայց չենք կարող ասել, թե Գրիգոր Նարեկացին այդպես հորինել է պարսկականի ազդեցությամբ, ինչպես Կոստանդինը։ Սա նմանում է Շահնամային, բայց, ցավոք, միմիայն ձևական կողմից, բովանդակությամբ բոլորովին հեռու պարսկական հռչակավոր դիցազներգությունից։ Նա, ինչպես ասվեց, հորինում է աշխարհի ունայնության և մահվան երգը, արժանի իրեն խնդրող կրոնավորներին, և ոչ թե մի աշխարհիկ բովանդակությամբ քերթված, կամ մի ազգային հերոսական վեպ։

[4] Մանրամասնությունները՝ վերևում հիշված «Ֆիրդուսի» ժողովածուի մեջ, էջ 117 և հտն.։ Իսկ պարսկերենի համար տեսնել՝ Persische Grammatik, von C. Salemann und V. Schukowsky. Berlin, 1899, և Грамматика персидского языка, сост. Мирзою-Джафаром, Москва, 1901.

ԷՋԵՐ
ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

ՏԱՂԱՍԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Մկրտիչ Նաղաշ։—*Մինչև 14-րդ դարը մեր բանաստեղծությունն արդեն ունի ձեռք բերած իր գլխավոր թեմաները՝ կրոնական-միստիքական զգացումն ու մտածություն, հայրենասիրություն, բնություն ու սեր, աշխարհի ունայնություն ու մահ և խրատական երգեր, այսինքն՝ քնարերգության գրեթե բոլոր խնդիրները։ Մի տեսակ ինքնուրույն վերածնություն քրիստոնեականի և հեթանոսականի միացումով։*

Հաջորդ դարերում այդ միևնույն անսպառ նյութերի մասին միայն ավելի արվեստավոր և ուժեղ ու նորանոր կողմերով պետք է երգեր հորինվեին։ Բայց մեր կյանքը թաթարաց լծի տակ ճնշված էր, երբ քաղաքական ազատությունը ոչնչացված էր և խավարած էին լուսավորության կենտրոնները թե՛ կենտրոնական Հայաստանում և թե՛ Արևելքում ու Արևմուտքում։ Բնականաբար այս ազետալից շրջանում չէր կարող զարգանալ այդ վերածնության ոգին։ Զարմանալ միայն կարելի է, թե այդ հարստահարությունների ու կեղեքումների, այդ անվերջ պատերազմների ու ավերմունքների շրջանում ի՛նչպես չի մեռնում բոլորովին բանաստեղծությունը և դեռ մինչև անգամ երևան են գալիս մի շարք բանաստեղծներ, որոնք իսկապես զարգացնում են մեր բանաստեղծությունը։ Դժբախտաբար, այդ բանաստեղծներից շատ բան չի մնացած, շատ բան էլ դեռ ձեռագրերի մեջ է և եթե տպագրված են՝ ցրիվ են, ուստի այժմ իսկապես չենք կարող մեր բանաստեղծության զարգացման ճիշտ պատկերը տալ։ Մենք խոսենք միայն մի քանիսի մասին, որոնց երկերն ավելի են հայտնի։

Դրանց մեջ առաջին տեղը, ըստ ժամանակի, ունի Մկրտիչ Նաղաշը՝ ծնված Բաղեշ քաղաքի մոտ, Պոռ գյուղում։ 1430 թ. ձեռնադրվել է եպիսկոպոս և այնուհետև եղել է առաջնորդ Ամիդ քաղաքի։ Մեռած պիտի լինի 1470—1480 թվերի մեջ։ Եղել է ծաղկող կամ նկարիչ, միաժամանակ և բանաստեղծ։ Նա կյանքը նվիրած է եղել իր հոտի բարօրությանն այն նեղ ժամանակներում, Ամիդի բռնակալներից ստանալով որոշ դյուրություններ և իրավունքներ հին եկեղեցիները նորոգելու և նորերը շինելու։ 1440-ական թվականներին, երբ մոլեռանդ մահմեդական ամ-

բոխը քանդում է նրա մեծ ջանքերով շինած գեղեցիկ կաթուղիկեն, նա սրտի ցավից հեռանում է Ամիդից՝ պանդխտելով Կ. Պոլիս և ապա Կաֆա (Թեոդոսիա). բայց հետո նրան դարձյալ հետ է բերում իր վիճակը, ուր նա ոչ միայն բարեկարգություն է մտցնում, այլև Շահնշահի ավերմունքների ժամանակ (1450 թ.) իբրև մխիթարող հովիվ է հանդիսանում իր հոտի համար, խնամք տանելով աղքատներին, գերիներին գնելով և ամեն տեսակ օգնություն հասցնելով կարոտյալներին։

Մկրտիչ Նաղաշը թեպետ ունի մի-երկու երգեր վարդ ու բլբուլի մասին, ինչպես և ուրիշները, ու ծաղիկներով այլաբանական երգեր, բայց գարունն ու սերը, ղվարթ բնություն երգելը չէ նրան հատուկ. նա շատ լուրջ կրոնավոր է և շատ տոգորված է իր առաջնորդական վսեմ կոչմամբ, ուստի և իր բանաստեղծության մեջ ևս մի նպատակ ունի՝ մխիթարել, սովորեցնել, կրթել և այլն. նա սովորեցնում է կրոնական ոգով քրիստոնեական բարոյականությունը։

Նրա խրատական ոտանավորները, մասամբ ունենալով մի քանի գեղեցիկ ներշնչման կտորներ, ընդհանրապես շատ դժգույն, թույլ ու միակերպ են, թեպետ դրանց մեջ էլ երևում է ազնիվ վարդապետն իր բարոյական հասկացողությամբ և անկեղծ ջգացումով։ Այստեղ նա ամեն չարիքի աղբյուրը, աշխարհի սկզբից ի վեր, անձնական փորձից սովորած, համարում է մարդկանց երկու կիրքը՝ ագահություն («Վասն ագահութեան») և ոխակալություն («Խրատ խռով չկենալու և ոխ չպահելու»)։

Ի սկզբանէ մինչ ի վախճան
Ամէն վնաս որ դործեցան,
Ագահութիւնն եղև պատճառ,
Որ ի բարեացն զրկեցան։

. . . . . .

Ագահն գայլ է պատառող
Եւ ծարաւի արեան մարդկան...
Կաթուղիկոսքն շատացան
Անօրինացն բռնութեան,
Եպիսկոպոս օրհնեն անբան,—
Ամէնն վասն ագահութեան։
Եպիսկոպոսք զկանօնն անցան,
Որ պոռնկաց կուտան հրաման,
Կաշառ առնեն կարմիր դեկան,—
Ամէնն վասն ագահութեան։
Վարդապետերս որ նոր ելան,
Բանին եղեն վաճառական,
Եւ քարոզեն զհաճոյս մարդկան,—
Ամէնն վասն ագահութեան։
Հաբեղանին զվանքն ուրացան,
Եւ ի գիւղօրայքն ի շուրջ կուգան.

Սաղմոս ասելն մոռացան,—
Ամէնն վասն ագահութեան։
Երիցաներն յիրար կռուան,
Բիր վերուցին և գաւազան,
Փետեն մորուս, կոտրեն բերան,—
Ամէնն վասն ագահութեան։

Ագահության հետ միասին աշխարհի չարիքների պատճառն է ոխակալությունը, վերժխնդրության ոգին։ Եվ, բնականաբար, Նաղաշը չափավորության հետ քարոզում է և քրիստոնեական ներողամտության, խաղաղասեր ու անհիշաչար ոգին։ Ոխակալ մարդը, ինչքան էլ աղոթք անի ու պահք պահի, թեկուզ կուսության անց կացնի կյանքը ու աստվածային բոլոր օրենքները պահի և իմաստության աղբյուրը լինի,—«բաժին չունի ի Քրիստոսէ։ Ընդհակառակը, հաշտ ու ներողամիտ ոգով, չարին բարի անելով՝

Թէ ի յատակս դժոխոց ծանր մեղօք ընկղմեալ ես,
Թէ խոնարհիս քո ընկերին, յերկնից խորանն վեր ելանես։

Եվ բանաստեղծը մեկ մեկ թվում է այն վատթար գործերը, որ գործվել են ու գործվում են ագահությունից,— գողություն, հավատուրացություն, ընտանեկան երկպառակություն և այլն, պատերազմներ, արյունհեղություն, ավերմունք ու գերություն։ Նույն ագահությունն է պատճառ դարձել և մեր եկեղեցու անկման. կաթողիկոսները շատանում են (ըստ ժամանակակից Թոմա Մեծոփեցու՝ մի քանի տարվա մեջ վեց կաթողիկոս են փոխում և վեցն էլ թունավորված մեռնում), եկեղեցականների անկարգությունը մեծանում, բոլորը միայն ագահության համար։ Մկրտիչ Նաղաշի այն կտորները, որ ժամանակի այս ընկած դրությանն են վերաբերում, իսկապես շատ կծու և դառն են, և դրանք մեր բանաստեղծության մեջ առաջին բավական զեղեցիկ դասրովանքն են ապականված եկեղեցականության։

Նաղաշն իբրև իսկական բանաստեղծ, թեպետ դարձյալ խրատական ոգով, հանդես է գալիս չորս քերթվածի մեջ, որոնք ձևով շատ անզարդ են, բայց լի են զորեղ և համակող զգացմունքով. նա դրանց մեջ դրել է իր ապրած կյանքն ու սիրտը, և քնարականությամբ զարգացրել խրատական բանաստեղծությունը։ Բացի այդ՝ փայլուն ձևի փոխանակ, որ պակասում է, նա երկու քերթվածի մեջ մտցրել է երկխոսությունը, որ շատ կենդանացնում է գրվածքի ընթացքը։ Նյութի տեսակետից նույնիսկ նորություն ու թարմություն ենք գտնում այդ բանաստեղծությունների մեջ։

Առաջին անգամ նրա մեջ գտնում ենք պանդխտության մեծ վիշտն ու թշվառությունը պատկերացած, որ մեր ժողովրդի սրտի տխուր լարերից մեկն է եղել ամենահին ժամանակներից սկսած մինչև օրս, և որ բանաստեղծն զգացել է իր հոգու խորքով.

Ջղարիպին հալն գիտեմ, օր վա՜յ կուտամ...
Ջղարիպութիւնն յորժամ յիշեմ քան զուռ դողամ։

Պանդխտության երգերը, անշուշտ, նաղաշից ավելի վաղ են ծագել մեզանում, քանի որ նրանից առաջ դժբախտ ճակատագիրը շատ անգամ ստիպել է հայերին ոչ միայն խմբերով գաղթել՝ բռնի և հոժարակամ կտրվելով հայրենիքից, այլև ժամանակավոր կերպով դիմել օտարության՝ ընտանիքի ապրուստը ճարելու և բռնակալների հարկահանության բավականության տալու համար։

Պանդխտել են և նաղաշի՝ իրեն նման մարդիկ։ Դրանց՝ այդ օտար երկիր թափառողների բոլորի վիճակը շատ խղճալի է, և այդ այնպես ուժեղ կերպով պատկերացնում է մեզ բանաստեղծը իր երկու երգի մեջ, որ նրան կարելի է համարել մեր առաջին մեծ պանդխտի երգիչը։

Ղարիպին կեանքն է լալի ողբերգական,
Դառն ու լեղի, լի տրտմութեամբ ի նեղ ղընդան...
. . . . . .
Աւա՜ղ ղղարիպն ասեմ, որ յօտար երկիր հանդիպի,
Աչերն արտասուօք ի լի, յերեսէն ի վայր կութափի.
Յորժամ ի մեջլիս նստի, յանկասկած սրտիկն արունի,
Ջաչերն ի բոլորն ածէ, կարևոր և ղոք նա չունի։

Առաջին մեծ ցավը սրտնեղությունն է, որ ունի իր սիրելիներից զրկված պանդուխտը, այն, որ նրան ճանաչող ու հասկացող չկա, չունի կարեկից ասպնջական. մարդը մենակ է մարդկանց մեջ, ինչպես մի բանտում, նա խորտակվում, նվաստանում է հոգեպես։

Որ թէ լինի պարոնորդի և աննման,
Հանած վարած ասեն նմա մոլորական։
. . . . . .
Ղարիպին խելքն է կորեր, միտքն է մոլար.
Եւ թէ լինի քան զՍողոմոն մաօք ճարտար,
Որ թէ խօսէ բան մի քանի անգին ճոհար,
Սաստեն նմա թէ լուռ կացի՛ր, անգէ՛տ յիմար։

Միայն բնական կարոտը չէ ուրեմն, որ նրան հիշել է տալիս իր սիրելիներին, ու ցանկանում է տուն դառնալ, այլև այն, որ նա ապրել է ուզում, ապրել մարդկանց մեջ, այդ է, որ նրա կյանքը դառնացնում է, հացը լեղի դարձնում, սիրտը փորում դալարեցնում.

Հոգի՛, մի՛ ասեր ղարիպ,
Թէ չէ՛ իմ սիրտս կարունի,
Ղարիպն ի յօտար երկիր
Գեմ խիստ դիժար կուլինի։

Այս դեռ նյութական պակաս չունեցող պանդուխտն է. իսկ աղքատ պանդուխտը և նրա անհանգիստ մտատանջությունները, անքուն գիշերների հոգսը թե «վաղիւն ես ի՞նչ լինիմ գերիս, երբ լուսանայ»։ Եվ բանաստեղծը նկարում է մեզ քաղցած ղարիպի շատ ողորմելի վիճակը, երբ նա «երես ի քաշ» փողոցներն է դուրս գալիս մի կտոր հաց մուրալու. շատերը նրա առաջը դուռը փակում են ու մի կաթ ջուր էլ չեն տալիս. և նա նստում, լալիս է։ Բայց պետք է ապրել, ճար չկա. նա գնում է փոխ է ուզում. ոչ ոք չի տալիս։ Եվ նա ստիպված գնում մտնում է մի տուն՝ քաշվելով «ի տան տիրուն վինչ ի շանէն խիստ վախելով», բայց դարձյալ դուրս են հրում անարգելով, և նա ետ է դառնում տրտում և արտասվելով։ Եվ վերջապես ամաչելով մտնում է մի տուն, ուր հազար բարիքով լի սեղան է դրած։

Նա՛ հազար պէշ ասին նմա անարգելով,
Ասյա թէ տան կտոր մի հաց տրտնջելով...

Բայց որքա՜ն թշվառ ու ողորմելի է, երբ այսպիսի ղարիպը հիվանդանում է փողոցում՝ անտեր, մեն մենակ, և մեռնում ու թաղվում է։ Շատ թանձր գույնով է նկարում բանաստեղծն այս ողբալի տեսարանը, այս մեռնող պանդխտի հոգեկան ու ֆիզիկական տանջանքները և մարդկանց անգթությունը դեպի իրենց նմանը.

Եւ կայր անկեալ մէջ փողոցին անտիրական...
Ծիծաղելով աւուին տարան յեզեր հողին...

Բավական չէ, որ բանաստեղծը հոգու խորին կարեկցությամբ լցված նկարագրում է այդ թշվառությունը, այլև նա չի մոռանում վերջում կարեկցություն քարոզելու իբրև վարդապետ և նույնիսկ աղոթելու ամեն ղարիպների համար, որ աստված օգնե նրանց և հասցնե իրենց փափագին։ Մի քերթվածի մեջ, որ երկախոսություն է պանդխտի և իր բարեկամի մեջ՝ պանդուխտն իր վշտահար սիրտն է բաց անում, նմանեցնելով իրեն երամից զատված ու մոլորված մի հերոսուն թռչունի, որ հանգիստ կգտնի միայն այն ժամանակ, երբ երամին կհասնի։ Նրա համար այնքան սոսկալի է պանդխտությունը, որ նույնիսկ «ղարիպ» բառը լսել չի ուզում։ Բանաստեղծն աշխատում է փորձել սփոփել պանդխտին, թե հոգ չունի, մեկ [օր] աստված նրան էլ կդարձնի հայրենիք։ Բայց պանդուխտն ամենևին չի մխիթարվում, և վերջիվերջո բանաստեղծին ուրիշ բան չի մնում, բայց եթե ասել.

Ամէնքս եմք ղարիպ, եղբա՜րք, հայրենի մարդ իսկի չունի,
Հաւասար գնալու եմք, ղի այն կեանքն է մեզ հայրենի...

Այս միևնույն գործնական, խրատական մտքից է ծագում նաև Մկրտիչ Նաղաշի հայացքն ու երգն աշխարհի ունայնության մասին, որ բա-

վական մոտ է Կ. Երզնկացուն, թեպետ ոչ այնպես փայլուն ու գունագեղ, բայց ոչ պակաս ներքին ուժով և ինքնահատուկ շնորհքով։ Նա ևս աշխարհի ունայնությունը տեսնում է նրա անհաստատության մեջ։ Աշխարհը մարդուս բարիք չի տալիս. եթե մի օր ուրախություն է տալիս, հետո գալիս է մշտական դառնությունը. մարդս միմիայն խաբուսիկ հույսերով է ապրում, և իզուր հանգիստ, ուրախություն ու հարստություն որոնելով՝ աշխարհի հոգսերով ու մեծ աշխատանքներով տառապում, և դեռ ոչինչ չստացած՝ մեկ օր էլ հանկարծ գալիս է մահը և «յարևուն դատարկ հանէ և առնէ ողորմ ու լալի»։ Եվ ագահության դեմ երգող վարդապետի համար՝ խրատական եզրակացությունը սիրտի լիներ հորդորը՝ չսիրել աշխարհը ավելի, քան կարևոր է, չփարվել նրան և ապրել անասունի նման, չցանկալ հարստություն ու մեծություն, այլ բարին գործելով բավականանալ կերակրով ու հանդերձով, որովհետև «աւելին քեզ ցաւ կը լինի»։ Ունայնության երգն, ուրեմն, Նաղաշի գրչի տակ դառնում է մի խրատ, շատ զգացված ու խորը գիտակցված, մի բացատրություն, թէ չպետք է ագահ լինել, որովհետև ագահության մեջ ոչ մի խորհուրդ չկա, քանի որ մարդն ինքը չի վայելում իր մեծ աշխատանքները.

Բայց դու զայս գիտացի՛ր թէ յի՞նչ կու դատիս,
Երբ թողուս օտարաց ՚ւ ի հող մտանես։

Անշուշտ, Նաղաշը չի քարոզում անգործություն և ոչ էլ աշխարհուրացություն, ինչպես միստիկ Նարեկացին. այլ միայն անցավորի համար, որ մարդ ինքը չի վայելելու, չաշխատել անասունի նման և չմոռանալ հոգևորը, հավիտենականը. նա միայն չափավորություն է քարոզում.

Աշխարհս տուն է լի գանձով,
Փարթամութեամբ և մեծութեամբ.
Այլ և սեղան է բարելի,
Որ ամենայն ոք ցանկանան.
Որք իմաստուն են, հաւատով
Ըզչափաւորն առնուն, գնան։

էջ 13

Ինչքան էլ աշխարհն ունայն է համարում, և մարդկանց աշխարհի մեջ մի ժամանակավոր հյուր միայն, բայց և այնպես նա չի արհամարհում աշխարհը, ուստի և բոլորովին անտարբեր չի համակերպում մահվան առաջ.—

Ճանապարհ հեռաւոր ունիս գնալու.
Ճար չունի՛ս, ճար չունիս փրկիլ ի մահու.—

հուզված բացականչում է նա մահվան համար, դիմելով ինքն իրեն, և ապա նկարագրում իր իսկ տենչն ապրելու մահվան րոպեին.

Յորժամ մահ քեզ տիրէ 'ւ օրն հասանի,
Եւ հոգիդ ի մարմնոյդ ելեալ բաժանի,
Նա՛ հայիս աստ և անդ ողորմ ու լալի,
Ոչ օգնէ քեզ եղբայր և ոչ սիրելի։
Շուրջ ածես ողորմուկ զաչերդ ու նայիս,
Հետ թափես արտասուք ու հետ շուարիս.
Ոչ օգնէ մեծութիւն 'ւ ոչ սէր աշխարհիս,
Զինչ բարի գործեցեր՝ նա զայն տի տանիս։

էջ 6—7

Մահը և ապրելու այս տենչն ավելի զորեղ կերպով երգել է Նաղաշը «Ողբ վասն մեռելի» քերթվածի մեջ, գրված 1469 թ. Մերտին քաղաքի կոտորածի մասին ժանտախտից, որ վարդապետն ինքն իր աչքով տեսել է.

Աչօք տեսայ դառն կսկիծ ողորմագին.
Լալով լացի և ողբացի արտասուագին,
Դառն արտասուօք զողբս ասացի նոր մեռելին...

Այդ ողբը մի ժամանակ մեծ ժողովրդականություն է գտել՝ երգվելով նորատի ննջեցելոց հուղարկավորության ժամանակ և մինչև անգամ մտել է Մաշտոցի մեջ, ուստի և փոփոխության է ենթարկված, մեջն ավելացրած են տներ, որ ուրիշ օրինակներում չկան։ Բանաստեղծին, բնականորեն, ոչ մի հասակի մարդու մահն այնպես ցավ չի պատճառում, որքան անմեղ երեխաների, նորատի մանուկների ու երիտասարդների, որոնք այնքան հեռու են մահից, և նա, ծերության հասակում, շատ սրտառուչ, խորին հուզմունքով նկարագրում է այդ մահը, որ ամենից արտասվելի է.

Լացէ՛ք այսօր և ողբացէ՛ք ամենեքեան,
Դառն արտասուօք հառաչեցէ՛ք դուք միաբան.
Զի հանց կսկիծ այլ չէ տեսեր մարդ բանական,
Որ սար ու ձոր և ծառ ու ճեղ ամէն կուլան։
Աղէկ մանուկ աղուր պատկեր արևնման,
Յունքն կամար, աչքն կանթեղ էր յանդիման,
Յամէն անձամբ և հասակօք ինքն աննման,
Ամէն մարդոց էր սիրելի և սիրական...
Մանուկ անկեալ և թաւալէր ողորմագին,
Քանզի հասեալ էր օր մահու բուռն ատենին,
Հայէր ողորմ յաջ և ի ձախ, քակտէր հոգին,
Ճար չունէր, ոչ օգնական յայնմ ատենին։
Յայնժամ ելաց, լալով ասաց. «Ինձ խղճացէ՛ք,
Եւ զենէհար ի մահուանէն զիս թափեցէ՛ք,

Եւ ի ձեռաց սուրբ հրեշտակին ազատեցէ՛ք,
Զի դեռ մանուկ եմ, ղենէհար, ղիս գնեցէ՛ք»։

Ասյա մեռնողը աղիողորմ կերպով հոր երեսին է նայում, աղաչելով, որ օգնի իրեն. թշվառ հայրը պատասխանում է հառաչելով՝ թե պատրաստ է հոգին տալու որդու փոխանակ, բայց ոչ մի բան չունի փրկելու նրան, և որդուն ուրիշ բան չի մնում, բայց եթէ լալ իր «կանաչ արևն մանկութեան»։

Գեղեցիկ գոյնն երեսաց թառամեցաւ,
Եւ ծովային աչքն ի լուսոյ պակասեցաւ,
Վայելուչ զօրեղ բաղուկրն թուլացաւ,
Լար արծաթոյ ոսկի մանեակրն մանրեցաւ։

Եվ մեռնողն իր վերջին հրաժեշտը տալով և իր համար պատարագի հոգ տանելով ընկնում է «դառն ու դժվար ճանապարհը», որ նա չի կամենում գնալ, որովհետև դեռ ժամանակը չէ. դեռ սրտում փափագներ ունի, որ նա անկատար հետը գերեզման է տանում։ Այս մահը և նարեկացու մահը արդեն որքա՜ն տարբեր են. վերջինս ամենևին չի հուզվում և չի ցավում, թե կյանքից զրկվելու է, այլ միմիայն իր հոգու փրկության համար է հոգում, մեռնելիս անգամ միմիայն ապաշխարելու և աղոթելու վրա մտածելով. իսկ այստեղ էականն է այս դառն ցավը աշխարհը թողնելու համար. փրկությունն արդեն ձևական է դարձել. «Զենէհար ինձ պատարագ դրէք պաշար», «սուրբ աղօթիւք զիս յիշեցէք դուք միաբան, պատարագօք հաշտեցուցեք դաստուածն բան, որ զիմ հոգիս արքայութեան առնէ արժան»։

2. Քերովբե։— *Մահվան այս երգը, որ մեր քնարերգության ամենագլխավոր թեմաներից մեկն է, իր ձևով և բովանդակությամբ կատարելության է հասել «Քերոբէի տաղի» մեջ («Հայ էջեր», էջ 76, 1 տ.)։ Թե ո՛վ է այդ տաղի հեղինակ Քերոբեն, ո՞ր դարում է ապրել և ունե՞նք արդյոք նրանից մնացած ուրիշ քերթվածներ ևս, այդ հայտնի չէ։ Ըստ Հ. Պոտուրյանի (*Les Tpouvères Armenien, *եր. 163)՝ նա ապրած պիտի լինի 15-րդ դարու վերջերում։ Այսպիսի երգիչը չէր կարող ուրիշ տաղեր ևս հորինած չլինել. բայց դժբախտաբար մինչև այժմ բան հայտնի չէ։ Այդ տաղի մեջ նա հանդիսանում է իսկական արվեստավոր երգիչ։ Նյութը Մկրտիչ Նաղաշի նույն երիտասարդի մահն է, և նկարագրի մեջ էլ մեկ-մեկ նույնը։ Բայց մինչ Նաղաշը ինքն է երգում և մեռնող մանուկին ու իր հորն է խոսել տալիս, այստեղ բանաստեղծը գերեզմանից դուրս է կանչում նոր թաղված մեռելին և նրան խոսել տալիս իր մասին։ Բանաստեղծը քնարերգություն չի հորինում, այլ վեպ. սեղմ, խորացրած գործողությամբ ու նկարագրով, որ խիստ սրտառուչ ազդեցություն է թողնում, երբ բանաստեղծն իր սեփական զգացումն արտահայտում է «Վա՜յ անձն իմ, եղուկ, հազար վա՜յ» բացականչություններով, որ*

կրկնում է ամեն էջում իր պատմածի և թե մեռելի՝ ամեն մի տնից հետո և ուժեղ ցնցում ընթերցողին, մտածմունքի մեջ ձգելով, չնայելով ինքը բանաստեղծը և նույնիսկ գերեզմանից խոսող մեռելը շատ մեղմ ու հանգիստ են պատմում։ Բանաստեղծն իր ամբողջ էությամբ զգացել է մահվան սոսկումը, որ շատ մեծ է և մեծ է հուզիչ կացութիւններով և կյանքի ու մահվան զորեղ հակադրութիւններով։ Հենց սկզբից մարդուս ֆիզիկականի համար ստանում ենք մի սարսուռ գերեզմանի առաջ, որի մեջ հոտում է գեղեցիկ ու խիստ նազելի մանուկը.

Երէկ հողվերօքն անցի, հոտ առի զքիմըս կափուցի,
Քայլ մ՝ երկուք յառաջ գնացի, նեղ ու խոր զնդան մի տեսի.
Վա՜յ անձն իմ, եղու՜կ, հազար վա՜յ։
Մանուկ մի պառկած տեսի գեղեցիկ ու խիստ նազելի,
Հարցուկ ես նորա եղայ՝ թ՝ ի՞նչ կանես, այդ քեզ չէ տեղի.
Վա՜յ անձն իմ...
Դարձաւ ու ճուղապ ետուր թէ՝ կանգնե՛ց, կորիճ գովելի,
Ես ա՜յլ քան ըզքեզ էի գեղեցիկ ու այլ ցանկալի.
Վա՜յ անձն իմ...

Մեռելի առաջին խոսքերից մենք խորն զգում և տեսնում ենք մարդուս դառն ճակատագիրը, որ ոչինչ է ինքը, և այսօրվա զվարթ ու փարթամ մարմինը վաղը մի զզվելի գեշ է, և իզուր կափուցանում է քիմքը ու հեռու փախչում, քանի որ ինքը մեռելի ընկերն է, բայց երբ մանուկն սկսում է պատմել իր անցած կյանքը, իր հոգեվարքի գալարումները, նրա ամեն մի խոսքը մուրճի պես հարվածում է մեզ, որովհետև մենք տեսնում ենք քաղցր և լավ բաների կործանումը, տեսնում ենք կյանքի և մահվան անհուն տարբերութիւնը և մարդուս կատարյալ անզորութիւնը։ Մի կյանք, որ ճոխ, ուրախ ու լիառատ, անհոգ ու առույգ է, մի մարմին, որ ուժեղ ու գեղեցիկ, առույգ և շնորհալից է, մի մարդ, որ ամենքի համար ցանկալի ու հիանալի է, շրջապատված սիրելի ազգականներով ու բարեկամներով, մի խոսքով՝ ամեն բարեմասնութիւններով լի, մի կատարյալ բախտավոր մարդ, որ մահվան մասին երբեք էլ չի մտածում և իր բարի գործով չի պատրաստվել անդենի համար, որովհետև մահն իրենից շատ հեռու է երևակայել, այլ միայն կերել, անուշ խմել է, ճարտար խոսել, այս մարդը հանկարծ ցավից բռնվում է. նա սկզբում զարմանում է, որ հիվանդացել է, բայց շուտով ընկնում է անկողին, թուլանում ու կարկամում է։ Ողորմագին ուզում է, որ օգնեն իրեն, բայց չեն կարողանում օգնել, մարմինը թուլանում է, լուսատու և ցանկալի աչքերը կուրանում են, զորավոր բազուկը անշարժ է մնում, զարմանալի ճարտարախոս լեզուն կապվում է և վերջիվերջո ասում է մանուկը.

Հոգիս ի մարմնոյս ելաւ, ու մընաց մարմինս գարշելի,
Այն իմ սիրելիքն ամէն ողբալով լային դէմ ինձի.

Վա՜յ անձն իմ, եղու՜կ, հազար վա՜յ։

Բայց այդ չէ միայն մարդուս ոչնչությունը. լսենք մեռելին և տեսնենք նրա ողբալի վիճակը, որ անխուսափելի ճակատագրականություն է։

Այն իմ քոյր 'ւ եղբայր՝ որ իւրեանց էի ցանկալի,
Շուտով ինձ պատանք բերին՝ «Թէ՛զ հանէք, որ խիստ չհոտի»։

Սիրելինե՛րն իսկ, ուրեմն, շուտ դեն են շպրտում իրենց սիրեցյալին, որ արդեն «գարշելի» է։ Դրանից էլ ավելի դառնություն չի կարող լինել։

Կոստանդին Երզնկացու մոտ արդեն, որ նույնպես երգում է գեղեցկի մահը, կա այդ գարշությունը, բայց նուրբ. այնտեղ մահը գեղեցիկ մարդկանց միայն «քաշէ զերեսին գոյնն, որ է զերդ ծաղիկ», «ոչ այլ գեղեցիկ երևին սուրաթով», «որ ոչ աչք ունին, ոչ լեզու կամ բերան. դարձել են փոշի և ոսկերք են ցամաք, այն անձն, որ պայծառ էր, քան զձիւն սպիտակ»։ Մկրտիչ Նաղաշի մոտ «աւաղ զայն աղուոր մանկտիքն, որ դարձան ի հող և ի փոշի»։ Իսկ Քերովբեի մոտ գեղեցկությունը գարշանքի է վերածվում, մի զզվելի ոչնչության, որից թրթռում է բանաստեղծի վշտահար սիրտը։

Բայց այդ չէ միայն։ Նրանք ինչպես գերու, կողոպտում են նրան՝ կարծես ապացուցելու համար, թե չպիտի սիրել աշխարհի փառքն ու հարստությունը, խլելով զարդարանքներն ու հագուստը, ու իրենցից շատ հեռու խոր ու գեճ գնդանի մեջ հողով ծածկում և ասում, թե «անշարժ եղիցի»։

Ահա թե ի՛նչ է պահված մարդու համար, թող նա քիմքը չկափուցանի և չշտապի հեռու փախչել։ Միջնադարյան հավատացյալի համար, սակայն, մահվան արհավիրքն ավելի երկարատևում է հանդերձյալի տեսարանով, մահով չի ոչնչանում մարդը, մեղավոր մարդը,

Խիստ ողորմելի է մարդ, որ մեղօքն ի հողն իջանի.
Երթայ նա անլոյս խաւար, տարտարոս 'ւ ի հուր գեհենի.
Ոչ սուրբ բարեխօս լինի, ոչ եղբայր եղբօրն օգնելի։

Մկրտիչ Նաղաշի մեջ գոնե այն միամիտ հավատը կար, թե պատարագը, մնացողների աղոթքը կօգնի մեռելին. այստեղ այդ ամենը անարժեք է. միակ բարեխոսը մնացել է Աստվածածինը, որին դիմում է նաև Նաղաշը, և միակ միջոցը սեփական բարի գործն է կենդանության ժամանակ, բայց այդ էլ չի անում մարդ, հարուստ մարդը[1], որովհետև չի հավատում իր մահվան, և իր գործն այնպես չի բռնում, որ մեռնելիս չշվարի։

Մըսքին Քերովբէ անխել բառդ է պաղ ու խօսդ է քամի,
Թէ խիստ իմաստուն ես դու, նայ արա ճարակ դու քեզի.

---

1 Ասլան աղա։

Քանի յաշխարհիս կացեր՝ չես գործեր դու գործ մի բարի,
Ըզփառս աշխարհիս սիրէ, որ կորուստ է քեզ 'ւ ամենի։
Վա՛յ անձն իմ, եղո՞ւկ, հազար վա՛յ

3. Հովհաննես Թլկուրացի[2]։— *Մին՝ Քերովբեի տաղի մեջ ավելի մարդուս ոչնչությունն ենք տեսնում, քան սարսափը մահից՝ Հովհաննես Թլկուրանցու մահվան երգերի մեջ՝ ընդհակառակն։ Այս բանաստեղծը, որի կենսագրությունից միայն այսքանը գիտենք, որ 1489—1525 թթ. եղել է Սսի կաթողիկոս, իր ամբողջ էությամբ դողում ու սարսափում է մահից, որովհետև ամենամեծ չարիքը, որ կա մարդու համար, դա մահն է.*

Է՛, մա՛հ, քանի ըզքեզ յիշեմ՝
Կու դողամ և կու սարսափիմ.
Չկայ քան ըզքեզ լեղի,
'Ի ամենայն լեղւոյն լեղի ես։
Լեղի՛, 'ւ ամենայն լեղւոյ՝
Մի՛թէ դու ի քե՞զ նման ես.
Դժոխք քան զքեզ լեղի,
Եւ յետոյ զայն ալ դու բերես։

էջ 46

Նա այնքան ատում է մահը, որ նույնիսկ բորբոքում, զայրանում է աստուծո դեմ, որ քեն պահելով մարդոց դեմ՝ մի հանցանքի համար մահ է ստեղծել։

Է՛, մա՛հ, դու քէն ունիս,
'Ի Ադամայ որդին կու հանես.
Կամ մեղաց հարուած ես դու,
Ի մահու պտղէն ծնեալ ես։

Մահվան մնացած պատկերացմամբ և առհասարակ աշխարհի անցավորության մասին իր հասկացողությամբ Թլկուրանցին չի տարբերվում նախորդներից. միայն որովհետև նա խիստ ատում և սարսափում է մահից, ուստի և հանգիստ երգել չի կարողանում այդ նյութերը, այլ ընդհակառակը, նույնիսկ յոթանասուն տարեկան հասակում մի բուռն և ուժգին թափով պատկերացնում է մահվան ոչ միայն դառնությունը, այլև ամենահաղթ ուժը, որ ոչ մի մարդու, ոչ սրբի ու մարգարեի, ոչ ուժեղի ու թագավորի մտիկ չի տալիս, այլ ամենքին հավասար ընկճում, հավաքում է իր բռան մեջ ու խորտակում, և ինչպես Քերովբեի տաղի մեջ, գեղեցկությունը անուշահոտ մի գարշելի «գեշ» բան դարձնում.

Թէ հագիդ է վեց զրահ,
Նետ նետես 'ւ ի թափ անցընես,

---

2 Կ. Կոստանյանց, *Հովհաննես Թլկուրանցին և յուր տաղերը, Թիֆլիս, 1892։*

Տանիս զնա ի բանտ ածես,
Դէմ դռանն քար մի ձգես։
Արծիւ ես, յերագ թռչիս,
Լայնաձիգ զթևդ տարածես,
Ջինչ աշխարհս հզօր մանուկ,
Ի թևիդ ծայրն ծրարես։
Հազար երանի՜ նորա,
Զոր բարի գործով գտանես.
Հեղեղ բոցեղէն տարեր,
Զոր ի մէջ մեղացն ըմբռնես։

էջ 47

Թլկուրանցու այս անհանգստությունն ու սարսափը, նրա զայրույթը, ատելությունն ու գարշանքը մահից՝ ծագում են նրա ընդհանուր խառնըվածքից, որի էական գիծն է **կենսասիրությունը**: *Նա ոչ միայն ապրելու տենչ ունի, այլև գեղեցիկ, ուրախ ու զվարթ ապրելու, և կուզեր հավիտյան այդպես ապրել՝ միայն սիրելու և գեղեցկությունը դիտելու համար։ Բայց դրան խանգարում է մահը, ոչ միայն նրանով, որ զըրկում է սիրելուց ու գեղեցկությունը տեսնելուց, այլև նրանով, որ, ժամանակի հայացքով, այդպիսի կյանքն ու սերն ընդհանրապես, այս աշխարհի համար վտանգավոր էր, իսկ այն աշխարհը մարդուս բերողը մահն է։ Եթե չլիներ մահը, մարդ այդ վտանգից ազատ կլիներ և կսիրեր ու վայելչությամբ կապրեր ընդմիշտ՝ առանց որևէ վրդովմունքի։ Բայց այն միտքը, թե մահ կա, ինչպես մի թույն միշտ կաթում է նրա վայելչասիրության մեջ,— ահա թե ինչո՜ւ մահն ամենից մեծ չարիքն է.*

Թէ չէր մահու՜ն օրն ու դժոխքն
Եւ կամ սարսափ դատաստանին,
Նա՜ այս աղէկ էր ղինչ ասաց
Խև Հովհաննէս Թլկուրանցին։

էջ 36

Այսպես է վերջացնում նա իր կենսուրախ սիրո երգերից մեկը (տե՛ս և էջ 28, 30—31, 37, 49—50)։ Այսպես է հաճախ վերջացնում, երբեմն և սկսում սիրո երգեր (տե՛ս նաև «Հայ էջեր», էջ 32)։

Բանաստեղծը փորձում է արդարացնել իրեն, թե սերը մարդկային բնության մի պահանջ է, որի համար մեղադրել կարելի չէ իրեն, քանի որ Ադամից սկսած (էջ 27—33) մարդիկ միշտ հաղթվել են նրանից (էջ 33—34) և սուտ է, թե կրոնավորներն անզգա են.

Ինձ մեղադիր չէ՞ր կու լինիք,
Հարիւր տարուոյ հաբեղանին,
Որ ճերմակն է դարձեր դեղին,

Կարէ զկօրտիկ պատարագին
Ու զքեզ ուզէ առջև խաչին (էջ 32)։
Սէրն կուտանի զամօթն երեսէն
Ի հաբեզայէն և ի վարդապետէն.
Երէց, սարկաւագ կու ձգէ ի կարգէն,
Տանի վխելքն ի գլխուն, զամօթն երեսէն (էջ 34)։
Թէ վարդապետն զձեզ տեսնու,
Մոռնայ զուսումն ու շատ գրունք (էջ 16)։
... Ջմիակեցին խելքն տանիս,
Որ կացեր է զօրն անարատ (էջ 29)։

Եվ վերջապես աստված կնոջը ստեղծել է սիրո համար (դու ստեղծեր զկինն ի կողէն վասն Ադամայ սիրոյն համար) (էջ 27), և նրան սիրում են ոչ միայն մարդիկ, այլ ինքն աստված է սիրում, քանի որ գեղեցիկ կինն արարչության պսակն է.

Պարծանք ու վա՜շ քո ծնողին,
Փառք ու պատիւ քո Արարչին (էջ 22)։

Բայց այս մտածություններն ամենևին չեն հանգստացնում բանաստեղծին, որովհետև սերը դարձյալ մնում է իբրև մի մեղանչականություն («Ով որ մեղաց ճաշակն առնու՝ այլ Աստուծոյ չի տար խաբար») (էջ 28), ուստի և նա տանջվում է երկվության մեջ, ու նրա սիրո և ուրախության երգերը, մահվան հիշատակով, վերջում մեծ մասամբ դառնում են և զղջման երգեր.

Բացէն ասեմ, ճարակ չկայ.
Մահու մեղաց ներքև եմ ես.
Հայիմ ի քեզ, հայիմ ի նա,
Որ ի հողոյ ստեղծեր զքեզ։
էջ 30

Բայց ինչքան էլ մահը թունավորում է նրա հոգին, ինչքան էլ մահվան երգերի մեջ նա երգում է անցավորությունը, բայց և այնպես թլկուրանցին հոռետես չէ. աշխարհը նրա համար ոչ միայն ոչինչ չէ, այլ, ընդհակառակն, ամենալավ բանն է, և նույնիսկ Ադամա անմահության դրախտից լավ, որ պիտի վայելել։ Երբ գարուն է պայծառ, այգի ու պարտեզ, դաշտ ու լեռներ զարդարվում են կանաչ զգեստներով ու ծաղիկներով, երբ շնչում է անուշ քամին, թռչուններն անուշ երգում, քաղցր գալիս է սոխակի ձայնը, և մարդ նստում է վարդենիների մոտ, ծառի թանձր ստվերում, առչեն ունենալով արագ վազող խոխոջուն ջուրը, ու թևն ընկերի վզով ձգած՝ սիրով խմում է անուշ գինին և ուրախություն անում։ Դա մի այն-

պիսի բան է, ասում է Թլկուրանցին, որ դրանից լավ բան չկա, և մարդ նույնիսկ Ադամա դրախտի հետ չի փոխիլ այս կյանքը, եթե միայն չլիներ մահը («Տաղ գարնան», էջ 35)։

Այս աշխարհասիրությունն արդեն այն չէ, ինչ որ Կոստանդին Երզընկացին ուներ իր գարնան և արեգակի, լուսո և սիրո փառաբանական երգերի մեջ, որտեղ ամեն ինչ մի կրոնական հրճվանք էր աստվածային բնության գեղեցկության ու հավիտենականության առաջ։ Այստեղ արդեն մարմինն է իշխում իր թանձրացած, երկրավոր, ցանկական պահանջով. մարդը երկնային ոլորտներից իջել է իրական աշխարհը և իրական կյանքի վայելքը։ Իսկ այդ վայելքի մեջ էական տեղը մեր Թլկուրանցու համար բնությունը չէ [գրավում] իր գեղեցկություններով և խորհրդավոր ուժերով, որ մարդուն մի հոգևոր վայելչություն է ընծայում, այլ ինքը, մարդու մարմինը. բնությունը նրա, այդ մարմնի համար միայն մի գեղեցիկ զբոսավայր է, մի կանաչ պարտեզ, ուր կարելի է ծառի ստվերում նստել, վայելք քաշել, խնդում անել։ Այդ պատճառով Թլկուրանցին, գոնե ինձ ծանոթ երգերի մեջ, չունի բնության երգեր, ինչպես Կոստանդինը։ Նրա «Գարնան տաղը» նույնիսկ (էջ 35) մի «ուրախության» տաղ է, և գարունը նրա համար միայն ուրախության ամենալավ ժամանակն է, որովհետև

Գարնանային ամիսն երբ գայ,
Հաւսար ծաղկի չոր և դալար.
Գետերդ յորդոր գնացք առնուն,
Ի լեռներուն թափին ի վայր։

Այդ ժամանակ, բնության այդ զարթումի հետ՝ զարթնում է մարդու մեջ ուրախության և սիրո բնական հույզը—

Գէնա բահար, այլ՛ւի բահար,
Այլ՛ւի կուտան սիրոյ խաբար։

Այս պատճառով, սիրելի կինը բանաստեղծին ներկայանում է գրեթե [միայն] իր գեղեցիկ մարմնով, որ հափշտակում է նրան և որին մեծ սիրով նվիրում է տաղեր։ Գեղեցիկ մարմնի նկարագրի համար, Նարեկացու ժամանակից սկսած, ուրեմն 10-րդ դարուց, կազմված է եղել որոշ ձև ու ճաշակ, որով թվում են, ինչպես անում է Նարեկացին, հասակը, աչք և ունքը, այտերը, ձեռքերը, բերանն ու շրթունքը, լեզուն ու ձայնը, ծամերը կամ վարսերը, ծոցը, ժպիտը, պատմուճանը, գոտին (քամար), քայլվածքը, կեցվածքն ու շարժվածքը։ Դրա հետ միասին առաջ են գալիս ոչ միայն արտաքինի նկարագրի համար ընդհանուր պատկերներ և նմանություններ երկնային լուսատուներից, բույսերով ու ակներով, որ բանեցնում են երգիչները, այլև դեղեցկության մի ընդհանուր իդեալական պատկեր, որի մեջ առանձին բանաստեղծները շատ քիչ փոփոխություն են մտցնում նայելով իրենց ճաշակին կամ սիրած կնոջը և կամ իրենց հակումներին,

ավելի կամ պակաս տեղ տալով մարմնին։ Երգչի անհատականությունը երևում է, գլխավորապես, ոչ այդ նկարագրով, այլ իր տրամադրությամբ. որ նա դնում է իր երգի մեջ։ Թեպետև մինչև Թլկուրանցին հայտնի են միայն երկու երգիչ՝ Նարեկացի, Կոստանդին, որ ունեն այդ նկարագիրը, և Թլկուրանցին առաջինն է, որի երգերի մեջ մեծ տեղ է բռնում արտաքինը, բայց և այնպես այդ երեքի համեմատությունից հենց պարզ երևում է վերևում գրածի ճշտությունը։ Շատ բան Թլկուրանցու մեջ ընդհանուր տեղիք է, թեպետև առանձնահատուկ ուժով արտահայտված։

Այդ գեղեցկության իդեալն, անշուշտ, մեր հին երգիչներից է գալիս և 10-րդ դարում արդեն գրեթե ամբողջ պատրաստ է. թե արաբական ազդեցություն կա՛ դրա մեջ թե չէ՝ այդ չգիտեմ, բայց քանի որ 10-րդ դարու է, նոր պարսկական չկա։ Երգոց երգի ազդեցությունն անպայման երևում է, բայց այդ ճաշակը շատ հեռու է հին հրեականից։

Կոստանդինին, քանի որ նրան հետաքրքրում է ավելի ներքինը, գրավում է գեղեցիկ պատկերը իր մի քանի էական գծերով, իր մորճ ու շիտակ հասակով և մանավանդ պայծառ դեմքով և ոլորուն սև մազերով։ Թլկուրանցուն, ընդհակառակը, մարմնի բոլոր մասերի հետ՝ ամենից առաջ հափշտակում են ծով-ծով աչքերը, թուխ ու մեծ (էջ 29, 37, 25, 31, 33, 36, 39, «Հայ էջեր», 32), որ արեգակի նման փայլում են.

Արևնման շողշող կը տաս,
Յորժամ սիրով պայծառ ածես (էջ 29)։

Մի պատկեր և նմանություն, որ նույնիսկ Վահագնի երգի մեջ ենք գտնում՝ «Աչկունքն էին արեգակունք», որ և Նարեկացու մեջ նմանեցրած է ծովի.

Աչքըն ծով ի ծով ծիծաղախիտ,
Ծաւալանայր յառաւօտուն
Երկու փայլակնաձև արեգական նման։

Այս բոլորի հետ՝ այս գեղատեսիլ պատկերը ներքին գրեթե ոչ մի արժեք չունի, բայց եթե այն, որ «անուշ քաղցր եղանակ» ձայնով զրույց անում և բնական գեղեցկությունը բավական չէ, արվեստով էլ գեղեցկանում է և ծեքծեքում, ու դրանով ավելի գրավիչ դառնում ու հափշտակում մարդկանց թունավորելու համար։ Այդ է Թլկուրանցու երգի կինն իր թանձրացած մարմնով, որ բանաստեղծի համար ամեն ինչ է։

Կինն քաղցրիկ զրուց ունի,
Խայթաւ ի հետ առնէ գալար,
Յանկարծ զթիւնքն ի մարդ թափէ,
Որպէս զակնատ բռնէ անճար։
Յունքն քաղէ, զաչքն դեղէ,

Հենէշանայ քան զբելիար,
Միշտ զպռունկն ծոմոէ,
Ջմարդիկ կու ձգէ ի քարն ի վայր (էջ 27)։
Պագ մի յերեսէդ կ'ա՛ժէ զԽորասան,
Ջհապաշ ու զեմէն տիլու Հնդուստան,
Երկու վարսդ է գին Ջինի և Խութան,
Պուլղար, Ստամպօլ է Շէհրի եագդան (էջ 34)։

Այսպիսի մարմին երգողի ու գնահատողի համար, բնականաբար, սերն այլևս մի ներքին մտերմական ուժ չէ, հոգեկան գաղտնի ցավերի ու վշտի աղբյուր, այլ ֆիզիկական հույզի մի բռնկում միայն գեղեցիկ կնոջ տեսքից, բայց այնպիսի բռնկում, որ նրան հափշտակում, վառում է և սպառում. և այսպես ամեն անգամ, երբ նրան երևում է գեղեցիկ պատկերը։ Բանաստեղծն այդ ժամանակ դառնում է մի աչք, սևեռած գեղեցիկ սիրելիին կամ բարեկամին, ինչպես անվանում է նրան երգիչը, նրա մարմնին և մարմնի բոլոր մասերին, և նրանից խելքամաղ լինելով՝ տանջվում է ինքն ևս մարմնով։ Դրա համար և նրա երգի մեջ մարմնի նկարագրի հետ տեսնում ենք և երգչի իրեն մարմնի խորտակումը, որ ունենում է սիրո առարկայից։

Կնոջ տեսքից նա, մանավանդ երբ հանկարծ է պատահում, և այս մոտիվը սովորականն է, ալեկոծվում է (էջ 25), նրա մարմնով սարսափ է անցնում, ամբողջ մարմնով դողում, շունչը կտրվում է, սիրտը մարում և ուշագնաց լինում («Հայ էջեր», 8, 32).

Հանգոյն այլուվդ տեսիլ զմրուխտ,
Տպազիոն ակն ու ջուհար
Ինձ անկասկած ի դէմ ելաւ,
Շունչս քաղեցաւ,
Ջթողիր յիս համբերութիւն (32)։
Քանի տեսնիմ՝ կուսարսափիմ,
Սրտիկս ի վորիկս կանցնու կրծիցս (էջ 32)։
Թէ վարդապետն զձեզ տեսնու...
Ամեն անձամբ ի դող ելնու (էջ 36)։
Յանկարծակի մէկ մի տեսայ,
Թուլցայ անկայ ի տեսլենէն...
Երբ իմ աչերս ի քեզ դիպաւ...
Զարհուրեցայ ի տեսլենէն... («Հայ էջեր», 32)։

Սերը նրա համար խավարած սրտի լուսատու էակը չէ, ինչպես Կոստանդնի համար. Թլկուրանցու սիրո արեգակը, ինչքան էլ փայլուն է, երևան է գալիս իր այրող, խորտակող ուժով, որին ոչինչ չի դիմանում. նա երգչի սիրտը անվախճան կրակ է լցնում (էջ 31) և այրում, վառում է նրան.

Քո սէրն ի յիս դիպաւ, ստոյգ կայրիմ ես (38)։
Ես զքեզ տեսայ նման լուսոյ,
Ջէտ արեգակն որ նոր կելնու,
Սիրտս այրեցաւ բարկ կրակով,
Ես մնացի խև կապելու (49)։
Ջինքն ճօճար՝ զէտ զուռի ճեղ,
Հրով այրէր զերկիր ամեն...
Երբ իմ աչքերս ի քեզ դիպաւ,
Նա վառեցայ զէտ մոմեղէն («Հայ էջեր», 32)։
Ես եմ ափ մի հող, դուն հրեղէն ես,
Քանի՛ զիմ այրած սիրտն արիւնես (39)։
Քո սէրն զիս մոմ արար,
Դու ինձ պողպատ ու կայծքար ես (38)։
Արև նման շողշող կրտաս,
Յորժամ սիրով զաչերդ ածես...
Դու զվէմերն խորտակես,
Դու զլերունքն հալ հանես,
Ջով դու սիրես, նադար առնես,
Անանց կրակով զանձնիկն այրես...
Ճօճան վզովդ բերդեր քակես (29)։
Ջեզ ի՞նչ ղադար ես դիմանամ,
Որ դուք հալէք, հանէք լերունք,
Սիրով քակէք բարձր բերդեր.
Ա՛ի ի գիլ հանէք վէմք ու սարունք (37)։

Բնական է, որ այսպիսի սիրո առարկան չպիտի ներկայանար իբրև թագավոր, որ ծառայութիւն ու ստրկութիւն է պահանջում, կամ իբրև ազատութիւն բերող տիրուհի (ինչպես Կոստանդնի համար), այլ իբրև մի դահիճ, որ զոհ, մատաղ է (էջ 30) պահանջում, ինչպես սիրո հին անողոք աստվածուհիները. նա սպանում է, կյանքից կտրում է (էջ 33),—

Դու ինձ լեր դատաւոր, արա՛ դատաստան,
Սիրով մի՛ սպանաներ, ճէլլէտ էֆենտի։

Եվ այս վերջին տողը նա կրկնում է ամեն տան համար։

Դու գիշեր և ցերեկ մէջ իմ սրտին ես,
Անմահ ու անգրող ղարիւնս հեղեր ես...
Ջարկամն ղայդ չէր անէր՝ ղինչ որ դուն կանես.
Անթուր ՚ւ անդանակ ղարիւնս հեղեր ես (38)։

Այսպիսի սերն արդեն մի հիվանդութիւն է, որ, ինչպես ասում են, առաջանում է կախարդվելուց միայն, և գրավելով դրանով բոնվածի ամբողջ էութիւնը, գիշեր ու ցերեկ դրանով զբաղեցնելով միայն՝ տանում է

ինքնամոռացման ու խելացնորության և դարձնում է նրան քնից կտրված մի խելագար։

Յորտեղ որ կընստիմ զիս կըմոռնամ ես.
Մի՞թէ զիս դեղեցիր, կամ կախա՞րդ ես.
Ձքո ծով ծով աչերդ դեղով լցե՞ր ես (39)։
Սէրն հանէ ղմարդն ի խելաց
Որ այլ ըսկի չկա խաբար,
Իմաստութիւնըն խափանի,
Եւ հանց դառնայ քան զդիւահար (27)։
Մարդ որ սիրոյ կուհանդիպի,
Նա քան զկրակ կուլինի վառ,
Այլ ոչ աղօթք ի միտ կուգայ,
Ոչ յայսմաւուրք կալ.դայ ու ճառ (26)։
Սէրն կուտանի զամօթն երեսէն
Ի հաբեղայէն և ի վարդապետէն... (34)։
Ով որ մեղաց ճաշակն առնու,
Այլ աստուծոյ չի տար խաբար (26)։

Եվ այսպիսի հիվանդին բժշկողը միայն իր սիրո առարկան կարող է լինել, որի կողքին նստելով և նրա երեսին նայելով միայն կհանդարտի.—

Հանցեղ նետով զիս խոցեցիր,
Որ այլ չունիմ բժշկարար (25)։
Հիւանդ եմ ես, ողջանամ, երբ նստիս ինձ յաջ (33)։
Նիստ որ հայիմ յերեսդ ի վայր (31)։
Արի ինձ դեղ արա, իմ ճարն դու ես (38)։

Իր սիրո այս ամբողջ նկարագրի, իր այս հոգեկան վիճակի հետ, Թլկուրանցին մեզ չի տալիս գեղուհու ներքին արժանիքը. ինքը չունի ոչ մի քնքշություն դեպի իր բարեկամը։ Մի տեղ միայն նա գրում է.

Է՛ մեղր ու կարագ և կեղևած նուշ,
Քեզ ծուռ նայողին յաչքն հազար փուշ,
Սիրով մի՛ սպաներ, ճէլլէտ էֆենտի (34)։

Բայց այստեղ ևս ոչ թե սիրելիի մասին է հոգ տանում, այլ իր «դահճին» համոզել է ուզում իր անկեղծության մասին, ինչպես և ուրիշ տեղ՝

Թէ զիս յիշես, թէ չյիշես,
Ես կուսիրեմ սրտով զքեզ (29)։

Բայց այդ սիրելին երևի անպատասխան է թողնում, որ երգիչը մի տեղ հանդիմանում է նրան՝

Աշխարհս խօրոտիկ գէմ դու մէնակ չե՞ս,
Աստուորս շատ իկէ 'ւ այլ տի գայ քանց քեզ (39)։

«Հայ էջերի» մեջ տպված է «Տաղ Յովաննէսի վասն սիրոյ», որի վերջում հեղինակն ինքն իրեն կոչում է «խև Յովհաննէս»[3]։ Այդ տաղն անպայման Թլկուրանցունն է, ոչ միայն «խև Յովհաննէս» անվան համար, այլ մանավանդ իր ոգով և տրամադրությամբ ու բովանդակությամբ։

Այս մեծ ուժն ու խորությունն առաջանում է նրանից, որ երգիչը թողնում է իր բարեկամի մարմինը մի կողմ, և միայն սիրո մեզ արդեն ծանոթ ազդեցությունն է վեր հանում իր բոլոր կողմերով։ Այսպես վարվում է նա, որովհետև այստեղ ոչ թե իր հրճվանքը, բախտավոր սերն է երգում, այլ սիրո ցավը, որովհետև, ասում է նա,

Քաղցր լեզուով խոցոտեցայ...
Կերակրեցաք ի մի սեղան, ու խմեցաք ի մի կթխայ,
Մէկտեղ ելաք, մէկտեղ նստաք, ան ժամանակն ո՞ւր է հիմայ.
Ո՞ւր է ղաւլըտ, ու՞ր է երդումն, որ բռնեցաք զաստուած վկայ,
Ի վար անկաք, օտարացաք, չարկամն եղև մեզ մահանայ։

Այսպիսի վիճակը բնականաբար կարիք չի զգում բարեկամին գովելու, այլ միայն իր վիշտը երգելու։ Եվ երգում է նա «արիւն արցունքով»։

4. Գրիգոր Աղթամարցի[4]։—*Հովհաննես Թլկուրանցուց կրտսեր, բայց երիտասարդ ժամանակ նրան ժամանակակից է մեր երկրորդ սիրերգող կաթողիկոսը, Գրիգոր Աղթամարցի, ծնված 15-րդ դարի վերջերում։ 1515 թ. արդեն ունի բանաստեղծություններ, իսկ 1569 թ. դեռ կենդանի է հիշվում։*

Սա իր աշխարհայեցողությամբ և երգի վերջում դրած ապաշավանքով շատ չի տարբերվում Թլկուրանցուց. նույն հայացքն ունի ունայնության և մահվան մասին, ինչ որ նախորդները, նույնպես երգեր՝ նվիրված սիրո, գեղեցկության և աշխարհային վայելքների ու մահվան, ինչպես Թլկուրանցին, միայն ավելի գեղեցիկ ձևով, բուռն ավյունով և մաքուր ու խորացրած բովանդակությամբ։ Ժողովրդական ձևով մի երգի մեջ բողոքում է մահվան դեմ, որ գալիս, բռնի և անագորույն կերպով զրկում է մարդուս աշխարհի վայելչությունից.

Յամէն առաւօտ և լոյս
Պիւլպիւլն էր նստեր յայգւոյս,

---

3 *Թլկուրանցին իր տաղերի մեջ կոչում է իրեն «Թլկուրանցի» (28), «խև Յովհաննէս Թլկուրանցի» (30, 31, 33, 36, 37, 44, 49, 50, 56), «Յովհաննէս» (39), «խև Յովհաննէս» (42), «Յովհաննէս Թլկուրանցի» (45, 47). իսկ երկու տաղի մեջ (b, ժե) հեղինակ չի հիշված։*

4 Կ. Կոստանյանց, *Գրիգորիս Աղթամարցին և յուր տաղերը*, Թիֆլիս, 1898։

Քաղցրիկ ձայնէր վրայ վարդոյս,—
Կասեն, թ'արեկ ե՛լ այգուոյս։

Աշխարհը նրա համար մի «ուրախարար տեղի» է, մի նորաոունկ, գարնանային ծաղկած այգի, շրջապատված ցանկապատով, տնով, ավազանով, անուշ ջրերով, ծաղիկներով, կարմիր ու սպիտակ վարդերով. մարդն ուզում է վայելել այդ ուրախարար տեղը, կյանք ու լույս տեսնել, այդ այգու պտուղն ուտել, վարդի հոտն առնել, գինին խմել.—

Քաղեմ փունջ մի վարդ այգուոյս,
Դնեմ մէջ կարսի գինուոյս,
Ուրախանամ այս հոտոյս։

Ահա թե ի՛նչ է մտածում մարդս միշտ, բայց և ինչ են նրան ասում՝ դուրս արի քո այդ այգուց։ Մարդը բողոքում է.

Չեմ ելներ ես այս այգուոյս,
Այս իմ նորաոունկ այգուոյս,
Յայս ուրախարար տեղուոյս,
Եւ այս նորաշէն տներուս...
Դեռ չեմ տեսեր կեանք և լոյս...
Ի՞նչպես ելնեմ ես այգուոյս։

Բայց ավա՞ղ, երիտասարդ կյանքը ստիպված պիտի զրկվի այդ վայելքից և նրա համար աշխարհը կործանվի.—

Ծաղկունքն վերացան յայգուոյս.
Վարդն թափաւ իմ այգուոյս.
Յանկն քակեցաւ յայգուոյս,
Ահա՛ ոդ ելայ այգուոյս։

Բայց մարդուս այս դառն ճակատագիրը, թեպետ Աղթամարցուն ևս միշտ ապաշավել է տալիս Թլկուրանցու նման, բայց չի խանդարում գարուն և առանձնապես սեր երգելու հոգեզմայլ արբեցությամբ (Կոստանյան, Նոր ժողովածու, Բ. պրակ, էջ 16)։

Գարունն է բացուեր, վարդ ի պաղչանին.
Քաղցր հղանակեն պիւլպիւլն ու ղումրին.
Սիրով են վառեալ ի կարմիր թփին,
Կանաչ ու կարմիր տերև կու հագնին։
Գինով եմ, գինով, հարբեր եմ սիրով,
Գինով եմ, գինով, ցերեկս արևով.
Գինով եմ, գինով, գիշերս երազով։

Եվ նա իր արբեցման ու երազանքի առարկան երգում է մի «բեղուն խանդով, գույների հարստությամբ և թարմությամբ», որոնց մեջ շատ

քան, հարկավ, նախորդ բանաստեղծներից, ուրեմն և «երգ երգոց»-ից է առած իբրև սովորական ձևեր, բայց իր անկեղծ ավյունով այնպիսի գեղ ու փայլ տված նրանց, որ շլացնում է ընթերցողներին, ինչպես և Աղթամարցին ինքը շլացած է եղել իր գեղուհու «աստուածագիծ պատկերից»։ Իսկույն երևան է գալիս կրակոտ բնավորությունը, որ վառված է, հափշտակված է մի ճոխ անձից և ուզում է նկարել այն։ Եթե նա նկարիչ լիներ, կառներ վրձինն ու ներկով կհաներ այդ, որ միշտ իր աչքի առաջն է.—

Եթե յաչաց մարմնոյս ծածկիս,
Մտաց աչօք ինձ երևիս (80)։

Բայց նա խոսքերով է ուզում նկարել, և բառերը բավականություն չեն տալիս նրան՝ այդ պատկերն իր ուզած նրբությամբ գծելու և միշտ նորանոր գույների, նորանոր ձևերի է դիմում՝ օգնության կանչելով բազմաթիվ ծառեր ու ծաղիկներ, հրեղեններ ու թռչուններ, բուրավետ խնկեր ու ակներ, բնության երևույթներ ու լուսատուներ։ Նմանությունների այս կուտակությունը, ծնված սիրազգաց սրտից, վերջիվերջո դարձյալ գոհացում չի տալիս նրան, որովհետև իր գեղուհին աստվածանման է։ Նա ոչ միայն մարմնով կատարյալ է, այլև վերնային է իր հոգով.—

Վերնոց վեհագոյն և աշխարհի զարդ,
Ուշիմ և խոհեմ անօրինակ մարդ... (63)։
Տիպ և գաղափար Տեառն Աստուծո ես,
Պատկերով պատառեալ, քան զմիքայէլ ես,
Ի մէջ հողէղինացս հրեղէն ես (62)։
Դու սքանչելագործ, քան Զօրաւոր խաչ (64)։
Մաքուր պատկերով նման հրեշտակի... (57)։
Սոսկալի վարսաւոր սրովբէ (76)։

Գեղուհու այս ներքին մասի հետ, որ առաջին անգամն է երևում մեր բանաստեղծության մեջ, մենք տեսնում ենք Աղթամարցու քնքուշ գորովական վերաբերմունքը դեպի իր սիրո տիրուհին, որին նվիրում է իր երգը, մի վերաբերմունք, որ չուներ Թլկուրանցին։

Պատկեր ես քո Ստեղծողին շաղկապեալ ի քառանիւթէ
Տիպն իւր գոյացոյց զքեզ, նկարեաց 'ւ եհան յարգանդէ.
Զիա՞րդ օրինակ՝ տամ քեզ յանշնչից և յանզգայէ,
Յայս իմ այրեցած սրտէս զայս ընծայ ընկալ ընդունէ։

էջ 77.

Ուրիշ տեղեր քնքուշ հոգատարությամբ երգում է.

Օրհնութիւն Փրկչին ի քեզ իջանի,
Կամօքն Աստուծոյ կենաս կենդանի.
Գունդ չար այսովն ի քէն հալածի,
Ձերդ զարեգակն փայլես ի յերկրի (64)։

Միշտ կանաչ կենաս քան զնշդարենի...
Քաղուի լոյս աչաց քո թշնամւոյն։
Քեզ միշտ հովանի բանն հայրական,
Միքայէլ հրեշտակն քեզ պահապան,
Աշխարհիս կենաս անփորձ 'ւ անսասան,
Անմեղ 'ւ անարատ և անապական (էջ 69)։
Ի յամէն դիմաց բղխէ քեզ բարին,
Եւ քեզ հովանի նշան սուրբ խաչին,
Պահապան լիցի աջն հայրենին,
Եւ փրկէ զքեզ ի չար վտանգէ։

Կոստ., *Բ. պրակ, էջ 18։*

Այս քնքշութեան հետ երևում է նաև մաքուր և ազնիվ տարփանքը դեպի գեղուհին, որ ինքն ևս մի հրեշտակ է, հեռու թլկուրանցու հեշտալից բորբոքումից, ավելի մոտ Կոստանդինին։ Սակայն Աղթամարցու սերը դրա համար պակաս ուժեղ և կարոտակեզ չէ, նա էլ պակաս չի այրվում, հալվում ու մաշվում և ծարավի (68) տեսնելու նրան. նրա սերն էլ շղթայում, իշխում է նրան իր ուժով.—

Հանց սիասաթով իջնուս քան զխան,
Դրիր զգերիս զընճիլ ու զընտան (59)։

Բայց նա տանջանք բերում է միայն իր բացակայութեամբ.—

Ուներդ է քաշած քան զթափած թուր,
Թարթափդ քո թեք քան զնշտար սուր.
Սպանանես գերիս օրն հազար բիւր...
Ոսկի ի Հնդկաց, ակն պատուական,
Շուրջ գամ և փնտրեմ զքեզ անխափան..
Ես եմ քեզ խնդրող և վաճառական
Ի բազում մտաց ծածուկ 'ւ անդուման։
Նայեա՛ց մէկ ընդ իս աչօքդ մէստան,
Կամ քաղցրիկ խօսէ կամ տու՛ր պատասխան....
Ով որ դու նայիս և առնուս նատար,
Լինի քան զմամ՝ պողպատ է թէ քար։
Սիրով լափեցիր ու արիր սիրտս խոց,
Կուտապիմ 'ւ այրիմ որպէս զհնոց,
Սրտէս կութափի յոլով հուր ու բոց,
Զայդ աստուածադիծ պատկերդ քո ինձ ցո՛յց։
Քո մէջքդ է բարակ քան զուտի վարոց.
Սպիտակ ատամունք, մարգարտէ շարոց.
Դու քաղցրատեսիլ և պտուղ ծառո՛ց.
Այդ շիրին լեզուէդ տու՛ր երկու զրուց։

Քան զշամբայ եղեգն ելեր ես շիտակ.
Ուներդ է կամար որպէս զաղեղնակ,
Աչերդ է պայծառ որպէս զծովակ,
Ղարղ եղայ ի ներս, եղայ անճարակ։
Թարթափդ է խանչար՝ ինքն պատղպատ զուտ,
Այտով զիս հարիր՝ արիր խուրդ ու մուրտ,
Ամպի պես ածիր ինձ սաստիկ կարկուտ,
Թէ ես մեռանիմ քեզ շահ չէ, օգուտ (57, 59)։
Վտա՛կ եղեմայ և գե՛տ Յորդանան,
Սելովմայ աղբիւր և ջուր ես յուզման,
Անկեալ եմ հիւանդ մերձ առ քո դրան,
Սպասեմ հանապազ ես առողջութեան...
Ելանես գնաս, ես լինիմ յառաջ,
Կամ խօսի՛ր ընդ իս կամ նստի՛ր ի յաջ։
Գիշեր և ցերեկ եմ ես երերուն,
Ոչ կենամ ի դուրս, ոչ օդիմ ի տուն...
Զարկած է վրադ քեզ կարմիր վրան,
Բազմիս ահաւոր՝ ես քեզ յանդիման,
Սիրտս փափագի և կայ ի դողման,
Աչերս է կարօտ տեսոյդ աննման։
Զի՛ր բաժանիմ ի քէն կենդանի,
Առանց քո տեսուդ շունչս կուքաղի (62—64)։

Իսկ իր սիրո ներկայութեամբ, սիրուհու տեսքը ոչ միայն չի ջախջախում նրան, այլ, ընդհակառակը, նրա սիրտը լցնում է մի անուշ բերկրալից երջանկութեամբ, նրան հանգստացնում ու լուսավորում է և հոգով փարթամացնում (62).

Պայծառ արուսեակ ի յառաւօտու,
Ես եմ քեզ փափագ, ի յիսնէ ես հեռու.
Իմ շուշան ծաղիկ, կարմիր վարդն դու...
Լինի՞ թէ աչուերս քեզ արժանանայ։
Իմ սուն իմ սրտի՝ և իմ ուրախութիւն,
Իմ շունչ ու հոգի՝ և իմ կենդանութիւն...
Բերկրութեան բաժակ, ոչ ապի յայաթ,
Ես եմ ծարաւեալ, արբո՛ ինձ մի կաթ... (67—68)։
Նոր գարուն եղև, և նոր առաւօտ...
Նոր ձայն արձակեց, նոր նստաւ ի մօտ...
Հեռացաւ ու գնաց յինէն տրտմութիւն,
Եկն եհաս այսօր ինձ ուրախութիւն.
Այլ փափագ չունիմ, իմ փափագս դուն... (69)։
Գեղեցկագեղ, քաղցրաբարբառ

Սէր քո ունի խորհուրդ անճառ,
Իմանալի արև պայծառ,
Լուսաւորեա՛ միտս իմ խաւար...
Երևեցան ծաղկունք յերկրի,
Նստցուք ընդ քեզ ի պարտիզի.
Երգեցից սէ՛ր քեզ, սիրելի՛,
Սիրտ իմ ի սէր քո տոչորի...
Բնակեալ ես դու յիմում սրտիս,
Ծրարեալ ունիմ զքեզ ի հոգիս...
Թէ տեսանեմ զքեզ կրկին,
Լուսաւորի միտս իմ մթին,
Եւ տամ համբոյր շրթանց քոյին,
Նա՛ վերանամ ես ի յԱդին (80)։

Աղթամարցին իր սերը բուռն ուժով երգել է երկու անգամ, նախ՝ վարդ ու սոխակի այլաբանութեամբ, մի սիրավեպով, երկրորդը գրած 1523 թ., որի մեջ՝ այն մոտիվն է, ինչ որ մյուս երգերի մեջ. այն է՝ վիշտ սիրո բացակայութենից և հրճվանք նրա ներկայութեամբ։ Աշուն է. վարդը չկա այգում, սոխակը անհանգիստ որոնում է վարդը՝ նրան գովելով և վախենալով նրա վիճակի համար, որ փորձանք պատահած չլինի։ Նա անիծում է այգին, որ չի պահել վարդը։ Միգուցե այգեգործն է արել այդ, կամ ծաղիկները քեն պահելով՝ վրեժ են առել։ Ծաղիկները պատասխանում են, թե տեղեկություն չունեն վարդի մասին։ Սոխակը թռչուններին է հարցնում վարդի մասին. թռչուններն էլ բան չգիտեն. սոխակի ցավը մեծանում է։ Այգեգործը մխիթարում է նրան, թե վարդը չի կորել, կգա։ Սոխակը ուրախացած օրհնում է այգին, և նամակ գրելով վարդին՝ իր վշտահար սերն է հայտնում և խնդրում է տեսակցություն։ Վարդը ժողովում է ծաղիկներին ու ամենքի առաջ կարդալով նամակը, ինքն էլ նամակով պատասխանում է, թե սոխակը քիչ համբերե, և ժամադիր է լինում պարտեզում։ Սոխակն ուրախությամբ սպասում է։ Գարունը բացվում է, բացվում է և վարդը։

Երբոր արևն ի խոյն եկեալ ժամանեաց,
Ամպն ի վերուստ ցօղով յանկարծ որոտաց.
Բուսան ծաղկունք յերկրի հազարք հազարաց,
Վարդն չէր ի միջի, պլպուլն որոնեաց...
Յետոյ տեսաւ կանաչ ղտերևն վարդին,
Այլ պատուական պայծառ որպէս զառաջին,
Վարդն էր վարագուրով ի մէջ գահոյին,
Ծաղկունքն հաւասար երկրպագեցին (43)։

Պլպուլն ուրախացած փառք է տալիս աստուծուն, որ իր աչքով տեսնում է վարդը թփերի մեջ։

Երկրորդ «Գարնան տաղը» մի տեսակ շարունակություն է առաջինին։ Երբ հեռացած պլպուլը գալիս է այգին, ծաղիկները աչքալույս են տալիս վարդին՝ թե գալիս է իր սոխակ սիրելին։ Սոխակը կանչում է դումբրին (տատրակին), որ միասին տեսնեն վարդի ելքը։ Նրանք վրան են խփում պարտիզում, վարդի կանաչ թփի դիմաց, վարդը քնած է կոկոնում. սոխակը սկսում է երգել ղազելներ.

Գիշեր ցերեկ կամ էրէրուն,
Ես ես կ'այրիմ ի դէմ վարդուն.
Թէ ե՞րբ ելնէ ինքն ի քնուն,
Քանի՞ կանչեմ զար իւր սիրուն... (46)։

Ծաղիկները նախանձելով ասում են, թե բավական է անժամանակ երգի, թող սոխակը ելնի գնա իրենց պարտեզից։ Սոխակը պատասխանելով իր սերն է գովում և սիրտը բանում։ Վարդը նրան քաջալերում է, որ ուշադրություն չդարձնե նախանձողներին և իր երգը շարունակե։ Ծաղիկները դարձյալ ասում են — «Քանի՞ կանչես, մէկ պահ լսէ»։ Սոխակը պատասխանում է.

Ասաց, թէ սէրն կունեղէ,
Որ վրայ վարդին աշըգ եղէ,
Սիրտս վկայ հետ իւրն հերթ,
Քանի՞ խոցէք, ասէք թէ ե՛րթ,
Հողմն շարժէ զվարդին թերթ,
Նա ի դողման դառնայ իմ լերթ...
Աղաղակեմ արտասուալի,
Ցայգուցս չերթամ ես այլ տեղի (49)։

Այդ միջոցին վարդը հետզհետե կարմրում է, անմահության հոտ բուրում, պլպուլը սիրով արբենում և ուրախանում. վարդը տեսնելով, պլպուլն անուշ երգում է.

Միծաղեցաւ ինքն մէկ պահ,
Պայծառացաւ տիպն քան զջահ.

և կարմիր գույնով վառում է, իսկ սոխակը

Հոտոյն եղև խև ու արբած (49 և հետ.)։

Վարդը, սակայն, ամաչկոտ է, ազատ չէ իր սիրո համար։ Թռչունները կատակելով ծաղրում են սոխակին, թե «Վարդն չի նայեր ինքն երակ»։ Նա տանջվում է, գանգատվում է վարդին, կասկածում է, թե մի գուցե վարդն իրեն չի սիրում, և հավատացնում է վարդին իր սիրո անկեղծության մասին։ Վարդը քաջալերում է նրան, որ երգե և իր՝ վարդի ահն ու երկյուղը վերացնե.

Զկանաչ փարտէս ետ կուբանամ,
Զքեզ որ տեսնում, ուրախանամ,
Այլ ի քեզնէ ոչ հեռանամ (50)։

Պլպուլը զարթնում է կես գիշերին, վարդը փթթում է առավոտյան, սոխակը հափշտակվում է և մտնելով վարդի վրանը՝ սիրո գրավական համբույր է ուզում։ Վարդը, սակայն, սիրելով հանդերձ՝ դեռ անառիկ է, նա միայն գովում է սոխակին, ուղարկելով դարձյալ ուրիշ ծաղիկների մոտ։ Հավատարիմ ղումրին մխիթարում է սոխակին և համոզում վարդին, որ պլպուլին ընտրե և ոչ ուրիշ թռչուններին։ Բայց վարդը պատասխանն ուշացնում է.

Եղև պլպուլն թևաթափ,
Թէ ե՛րբ ածեմ զվարդն ի յափ.
Քանի՞ ֆիրղան կանչեմ անչափ,
Ի դէմ վարդին հարկանեմ ծափ։
Ի ձեր սրտին դուք սէր չունիք,
Վասն այն ղիմ ձայնըս չընդունիք։
Վարդըն կ՚ասէ. «Մ՚ենե՛ր հերիք,
Ես կուկանչեմ, ունեմ կարիք» (52 և հետ.)։

Այս վեպի մեջ գործողությունը սիրավեպի մի սքեմա է. բայց դրա գեղեցկությունը գործողության մեջ չէ, այլ սիրո գեղգեղանքի մեջ, որ բարձրանում է ցողաթուրմ պարտիզում, գեղազարդ բուրմունքի մեջ, սիրատարփ սրտի այն խռովածուփ նվաղումների, անհանգիստ որոնումների ու սպասումների մեջ, երբ սերը հեռու է կամ անպատասխան, և այն դաշն հրճվանքի մեջ, երբ հույսը զորանում է։

5. Աշխարհիկ երգ, ուրախություն։—*Մենք ունեցել ենք և բուն խրախճանքի երգեր։*

Ներսես Շնորհալին Հայաստանի անցած փառքը ողբալիս գրում էր հարսանեկան ուրախության համար.

Ո՞ւր պարարակ եղն ամոլին.
Զիարդ ի քեզ ոչ զննանին,
Եւ կամ մատռուակիրն բաժակին
Զի ոչ բաշխեն զանոյշ գինին.
Ուր բարեկամք զուարճակիցք...
Ուր քաղցրահամ երաժշտի
Կամ գեղգեղումն եղանակի...
Ուր են ազատքն ի տաճարի
Կամ տեառնորդիքն ի ծաղկոցի...
Մանկունըք քո զուարճալի
Նըման նորոգ բուրաստանի,

Դստերըք քո պաճուճալի
Յերգ և ի fնար միշտ ի խաղի (12—16)։

Այս խրախճանքի երգերից դժբախտաբար ոչինչ չի մնացել մեզ։ Կյանքն ինչքան էլ ավերածություններ պատճառով դառն լիներ, բայց ուներ և իր ուրախության պահանջը, և աշխարհականների մեջ անպայման շարունակվել են ուրախության երգերը, որ հիշում է Եղիշեն։ Կրոնավորները, սակայն, դժվար թե շատ վաղ սկսեին մշակել ուրախության երգը, որի մեջ փառաբանվեին միաժամանակ կին ու գինի, պար ու նվագ, սիրով կեր ու խումը բնության ծոցում։ Դրա համար պետք էր, որ մտածությունը բոլորովին ազատվեր միստիքական մղձավանջից և մարմնին ոչ միայն սիրո կողմից, այլև կերուխումի՝ տրվեր կատարյալ ազատություն. Թլկուրանցին (+1525) նույնիսկ, որ հոգով սիրում է, ինչպես տեսանք, ուրախությունը բնության գրկում, «Ջթևն բոլոր վզին, սիրով խմէր զանուշ գինին», այդ լավ է համարում, եթե չլիներ մահվան օրն ու դժոխքը և դատաստանի սարսափը։ Նա նույնիսկ արբեցության դեմ գրված մի տաղում խրատում է—«Թէ սէր ունիս հետ Աստուծոյ, դու զգինին ու բոզք ատէ. գինին է մայր ամենայն չարեաց... Քան զգինին յետև հացէն երկու երեք՝ այլն անշահ է»։ Այսպիսի հայացքի սիրը, բնականաբար, ինչքան էլ սեր երգեր, չէր կարող խրախճանքի երգ հորինել, և եթե երգելու լիներ՝ պիտի դիմեր այլաբանության։

17-րդ դարու սկզբի տաղարաններում գտնում ենք մի քանի ուրախության երգեր, ուրեմն ամենից ուշը 16-րդ դարու երգեր, որոնց մեջ գինին և խրախճանքն են փառաբանում։ Սարկավագ Բերդակցին (Թերևս այն սարկավագը, որի մի սիրո երգը Կոստ., Բ., եր. 60-ում աղավաղված երգել է խառակոնիսցի Քուչակ Նահապետը) գովում է խաղողը (Կոստ., Գ., եր. 67) իբրև մի «անմահութեան պտուղ», որ բոլոր պտուղներից գեղեցիկն է և նրանց թագավորը.—

Թելդ քաշած է յոսկւոյն միջէն,
Դու մարգարիտ ոսկի շարած,
Քո մէկ պտուղդ աժէ ճուհար,
Տպազիոն ակն ու գոհար...
Ջքեզ հրեշտակն եբեր Նոյի,
Որ քո պտղովդ ուրախանայր։

Ասլա առանձին սիրով պատմում է գինի պատրաստելը, գինին, որ մարդու սիրտ բաց է անում, սիրով մոռանալ տալիս չարակամությունը և ներող է դարձնում մարդուս.

Յորժամ խմէ աղքատն ի քէն,
Որ զհացն և զջուրըն մուրանայր,
Նա և լինի տէր աշխարհիս,

Արարածոցըս պատսպար։
Յորժամ խմէ կոյրն ի քէնէ,
Որ ի մօրէն ծներ խաւար,
Հանց քաղաքաց տայր մեկնութիւն,
Որ չէ տեսեր, չունի խապար։
Յորժամ խմէ մունճն ի քէնէ,
Որ ի լեզուէն քամ ու տկար,
Ձերտ զթութակն առնու լեզուն,
Մասխարանայ, քան զդիւահար։

Շատ պարզ երևում է արդեն գինու սիրահար զվարթ երգիչը, որը, սակայն, չի կարողանում դեռ ազատ երգել և ինքն իրեն հանդիմանում է դրա համար.

Ո՛վ Սարկաւա՛գ Բերդակացի,
Դու ի գինւոյն ի՞նչ շահեցար,
Այնչափ ունիս սէր հետ գինւոյ,
Որ գովեցիր սրտովդ յօժար։

Եվ Սարկավագն իրեն արդարացնում է, թե գինին չէ երգում, այլ պատարագի «բաժակը», որ «հոգուն է լուսարար», քանի որ առանց գինու «ոչ ժամ լինի, ոչ պատարագ»։ Գինու գովքն, ուրեմն, դեռ այն սքողված, այլաբանական, անհամարձակ վիճակի մեջ է, որ ուներ սկզբում նաև սերը։

Նույն նյութը «վասն խաղողի» (Կոստ., Գ. 63) մշակել է Աստվածատուր անունով մեկը (1617 թ. ձեռագիր), պարզաբար իբրև գինու գովք, զվարթ և ուրախ։

Ա՛յ լի՛ց ու տու՛ր, ա՛յ լի՛ց ու տու՛ր,
Անապակէդ ա՛յ լի՛ց ու տու՛ր։

Կրկնում է շարունակ երգիչը։

Սկզբում, բոլոր պտղաբերներից առաջ, այգում խաղողն են տնկել, ասում է, և բարձր ձայնով գովել, ապա պատել են այգին, պայծառ ծաղիկներով ու պտուղներով լցրել ու գինու գովքն ասել։

Քո կոճերդ է ի կանգուն,
Ողկոյզն մեծ և քաղցրագոյն,
Պտուղն ի վառ դէմ արևուն
Քան զկանթեղ մէջ գիշերուն։
Ա՛յ լի՛ց ևլն։

Ապա նույնպես պատմում է գինեգործությունը և գինու գործածությունը պատարագին, բայց ոչ արդեն աշխարհիկ մտքով.

Քո անունդ լինի բաժակ,
Որ դուն ի շուռ գաս համարձակ...
Դու ես գունով զէտ մանուշակ,
Կարմիր եաղուխ ակն սուտակ,
Քեզ քահանայքն են մատռուակ...
Սարկաւագունք յառաջ եկին,
Սաղմոսելով մեծարեցին,
Տարան դրին եկեղեցին,
Ու սուրբ խնկօք զարդարեցին։
Ա՜յ, լի՛ց ու տո՛ւր...
. . .Զգաւաթն ի լի արա՛ ու տո՛ւր
Թո՛ղ շատ ապրի՛ս ի՛մ խաչատո՛ւր։
Ա՜յ, լի՛ց ու տո՛ւր...

Իսկական ուրախ զվարճության գինեերգու է Մարտիրոս Խարասարցին իր երկու երգերով, որոնք հորինված են այբբենական սկսվածքով (Կոստ., Բ. 47 և հետ.)։ Սա ոչ թե գինին է երդում, այլ գինարբուքը, տոնական հացկերույթյուն (եր. 49)՝ հյուրերի ու դրացիների հետ մի ուրախ ազգային դեպքի առթիվ։ Բազմական են քահանաներ, հյուրեր, դրացիներ և ռամիկներ, որոնց հոգսը տանում է երգիչը։ Գինին գովվում է արդեն իբրև նպատակ, և երգիչն ուրախանում է, որ ձեռքին ունի նորից անուշ, պարզ, անխառն գինու գավաթը, և կամկար շատ ուտել-խմելը տանձ ու խնձորով, նուռով զարդարած սեղանի շուրջը և ծաղիկներով զարդարած կարասի շուրջն ուրախանալը ու նոր կարաս բանալը հրճվանք է պատճառում նրան.

Այսօր տօնեմք, ձեզ աւետի՜ս,
Ահա ցնծամք յայսմ տօնիս,
Բարով տեսայ գաւաթն յափիս.
Աւետիս տամ Հայոց ազգիս...
Ինձ մեծ աման տո՛ւր թէ ունիս,
Ի քեզ նայեմք երիցանիս,
Լի՛ց տո՛ւր, եղբա՛յր, ի՞նչ կու նայիս,
Աւետիս տամ Հայոց ազգիս։
Խնդամք ամէն շուրջ կարասիս,
Խորվենք հոդ տաք ոչխըրի միս,
Ծաղկունք բերենք մէջ ժողովիս,
Աւետիս տամ Հայոց ազգիս։
Ճերմակ գինի, լաւ դեղ սրտիս,
Ճաշակն անոյշ, համն ա՛ռ տե՛ս.
Մեք այլ այտից, խմենք այտից.
Աւետիս տամ Հայոց ազգիս։

Յարի՛ ի վեր, հաշտեա՛ց ընդ իս,
Յարի՛ խմէ՛, համբուրէ՛ զիս,
Նոյնպէս ամէն ժողովրդիս,
Աւետիս տամ Հայոց ազգիս (49 և հտն.)։

Սերը, հաշտության համբույրը, հյուրասիրությունը, պատվելը, անենգ սիրտը, միաժամանակ սիրո բարեմաղթությունները, ազգի հոգսը նույնիսկ, և ծաղրը, ծիծաղը անբաժան ընկերներ են այսպիսի ուրախությունների։

Այսօր խմենք քաղցր և յորդոր,
Բարեկամաց ի հետ բոլոր.
Գինիս աղէկ, ճաշակն աղուոր,
Անո՛յշ խմենք քաղցր և յորդոր։

Դա ազատ ուրախությունն է լավ խմողի, որ սիրում է գինին ու խնջույքը իր բոլոր սրտով և առանց քաշվելու ի ցույց է դնում մարմնապաշտությունն առանց որևէ շնորհալիության և խորության, այլ, ընդհակառակը, մի տեսակ կոպտությամբ, պարծենկոտությամբ, որ ինքը կարողանում է լավ խմել. «Զի խմող մարդ է ծովի խոր».

Այո՛, խմենք քաղցր և յորդոր...
Հիւծեալ մաշիմ գլուխ ի կոր,
Փառասիրիմ մարմնով զինչ հոր,
Քե՛զ, Մարտիրո՛ս, գինով խոչկոր,
Անոյշ խմենք քաղցր և յորդոր (49)։

6. Նաղաշ Հովնաթան[5]։ — *խրախճանքի ամենից նուրբ և ազնիվ ու ճաշակավոր երգիչն է Նաղաշ Հովնաթանը՝ ծնված 1661 թ. Շոռոթ գյուղում, և իր հայրենի գյուղում էլ վախճանված 1722 թվին։ Սա իսկական բանաստեղծ և նկարիչ է, որ շատ եկեղեցիներ զարդարած է եղել իր նկարներով, մի «շնորհալից վարպետ իմաստուն», լավ ծանոթ իր ժամանակի ուսմունքներին, շատ ճանապարհորդած, իբրև սարկավագ մերթ ծառայած եկեղեցում, շատ հարգված և դիրք ունեցող մի մարդ։*

Նրանից հայտնի են 26 տաղ, որոնցից մի քանիսը կրոնական և խրատական ու երգիծական են, մեծ մասը սիրո և ուրախության։

Նաղաշ Հովնաթանը խոհուն մարդ է և կորովի, բարոյականություն որոնող. նա շատ մարդ է տեսած և ավելի շատ մտածած. իր բանաստեղծության մեջ մենք տեսնում ենք մի ամբողջական աշխարհայեցողություն, որով քրիստոնեական ոգին և աշխարհասիրությունն արդեն հաշտված են, ինչպես արդի մարդու համար, և վերջ է տրված մեր հին բանաստեղծության ցավագին շեշտերին։ Դա մի աշխարհական հայացք է և ոչ կրոնական։

---

5 «Նաղաշ Հովնաթան աշուղը և Հովնաթան Հովնաթանյան նկարիչը», Փարիզ, 1910 թ.։

Ճիշտ է, աշխարհս նրա համար ևս սուտ, անցավոր մի երազ է, խաբեբա և անհավատարիմ, քանի որ «էս գիշեր հոգիդ ի բաց պահանջին», և մարդ պիտի դատաստանին ներկայանա,— բայց աշխարհիս ունայնությունն ու մահը նրան այլևս սարսուռ չեն ազդում և բնավ չեն պղտորում նրա պարզ ու քնքուշ հոգին։ Որովհետև եթե աստված մարդուս համար տնկել է այն կյանքի արքայության դրախտն իր պտուղներով ու ծաղիկներով, իր լուսավոր օթևաններով և հրեշտակների սպեր-ով ու տաղերով,— նա և մարդուս համար այս աշխարհում պարգևել է դարնանային դրախտը, հացն ու գինին, «աստվածազարդ սեղանը» (85, 88, 90 և այլն)։ Պետք է, ուրեմն, և այս վայելել և այն չմոռանալ։ «Մարմնաւոր ուրախացէք, հոգևորին մի՛ կենայք ծոյլ» (85). «Մարմնով խմէք, ուրախացէք, հոգով մեղաց ղղջացէք» (88),— այս է նրա ամբողջ աշխարհայացքի սեղմ արտահայտությունը։

Հոգևորի համար բավական է միայն, որ մարդ արդարությամբ ապրի, և նա դրա համար տալիս է իր գործնական խրատները՝ «Խրատ պիտանի վասն հոգւոյ» (եր. 75). չլինել հպարտ, ապերախտ, նախանձոտ, ունենալ սեր, լինել աղքատախնամ, ծնողասեր, չար չանել ուրիշներին, չսիրել հայհոյանք, աղքատի դատաստանն արդարությամբ վարել և առհասարակ արդար լինել հարաբերությունների մեջ. ժամ գնալ, աղոթել, «պատուել վարդապետն ու քահանէն», նրանց օրհնությունը տնից անպակաս անել, որովհետև «նոքա են մեր կերակրին աղբն»,— բոլորը սովորական ավանդական խրատներ, որ Հովնաթանը մանկությունից սովորել է։

Այս են այն գործնական խրատները, որ տալիս է Հովնաթանը, սրանք սովորական քարոզներ են, բայց այնպես համեղ և անուշ ասված, իսկը ժողովրդական ձևով ու մտածությամբ և շնորհալի կերպով, հանգիստ ու խաղաղ սրտով և այնպես ծանրությամբ ու կշռով, խորը համոզված իր ասածին, և բնական ձևով, առանց որևէ արվեստականության, որ այդ տաղը մեր խրատական մեծ տաղերի տեսակի (և ոչ քառյակների) մեջ կարելի է ամենից ազնիվը և գեղեցիկը համարել։

Այս ավանդական խրատներից, սակայն, մի բան նա դուրս է ձգում.—

> Պաս կու պահես ու սէր չունիս՝ էն ասէ՛.
> Ի՛նչ օգուտ սատանայէն՝ ամէն օր պաս է,
> Որ անգեղջ նախանձոտ չար ու վասվաս է.
> Անշէջ կրակն է նորա եաթաղըն (77)։

Պաս պահելը, մարմինը տանջելն, ուրեմն, ոչ մի արժեք չունի հանդերձյալ կյանքի համար։ Այսպիսով մի կողմ է դրվում մարմնատանջ ճգնավորական միտքը, և բանաստեղծը կարող է ազատ կերպով, հանգիստ խղճով «մարմնաւոր ուրախանալ», առանց հոգուն վնասելու եր-

կյուղի։ Մարմինն իր պահանջն ունի և նրան բավականություն պիտի տալ իր պահանջի համեմատ. հոգին էլ իրն ունի, նրան էլ «արդարութեան խօսքերը» կատարելով պիտի բավականություն տալ։ Այս երկուսն այլևս իրար չեն խանգարում։

Մի անգամ որ մարմնատանջ հայացքը դեն է դրված, աշխարհի ունայնությունն ու վերահաս մահը նրան այլևս ոչ միայն արգելք չեն լինում մարմնավորապես ուրախանալուն, այլ նույնիսկ պատճառ են դառնում, որ մարդ վայելի և, որքան կարելի է, շատ և լավ վայելի այս աշխարհի բարիքները։ «Թասըն գինի լից տուր խմեմք», ասում է նա, «Զէրա յաշխարհս օր քան զօր չարըն կու շատանայ» (86), որովհետև «Անցեալ օրին օր չի հասնիլ» (90), և «Այսօր քանց վաղըն աղեկ» է (68), որովհետև «Սուտ աշխարհըս անցաւոր է, մարդըն երազ կու նմանի» (եր. 85) և մարդ իր հետ ոչինչ չի տանելու, «աշխարհիս մալըն կու մնայ աշխարհիս վերան» (91), ուստի մարդ «քանի սաղ է՝ ածէք խմի» (58)։

Կյանքը շատ կարճ է, ուստի պետք է րոպեն ձեռքից չթողնել՝ վայելչություն անելու համար։

Այլ կե՛ր խըմէ՛ հետ ընկերաց,
Քանի որ ֆրսանդ կայ ձեռաց,
Գալ տարի ով սաղ, ո՞վ մեռած.
Խարճեք, եղբա՛րք իմ, ցնծալով,
Ուրախութեամբ և պարելով,
Ծափըս ծափի հարկանելով։
Է՞ր պարապ կու մնաս, սաղի,
Ֆալաքն է մեր յօմրին եաղի.
Աշխարհս մեզ չէ մնալ պաղի,
Լի՛ց, տո՛ւր, եղբայր իմ, ցնծալով,
Ուրախութեամբ և պարելով,
Ծափըս ծափի հարկանելով (78)։
Նաղաշն որ այս դառըն կեանքըս մէկ օրէն հիւր է,
Վաղըն մեռնիմ՝ կասեն «Նաղաշ Յովնաթան ո՞ւր է».
Մեզ ողորմի տվողի հոգւոյն անմահութեան հոտըն բուրէ.
Սիրով խըմէք, խաղաղութեամբ ուրախ լիցուք (86)։

Եվ բանաստեղծի սիրո և ուրախության երգերը, տոգորված այս մտքով, մի սուռանձին հրապույր ու գեղ, ավելի խորություն ու ներքին բովանդակություն են ստանում, մանավանդ որ նրա ուրախության երգերը երբեք հոգու պահանջը չեն մոռանում իր ուրախության վայրկյաններին.

Ապա ում սրտի քէն ունի՝ հանի, հաշտութեամբ մընայ,
Լավ մարդըն այն է՝ ոնց որ եկալ՝ այլ այնպէս գնայ (81)։
Սիրով խըմէք, խաղաղութեամբ ուրախ լիցուք,—

կրկնում է նա մի երգի մեջ (85).

Աստուած սիրեք՝ ում սրտում նախանձ կայ՝ հանի (85)։
Թոյլ միք տալ, որ եղբայրութեան սէրն հովանայ (86)։
Պարտիմք ընտրել զբարութիւնս, մերժել ի մէնջ զչարիս (87)։
Թէ ձեր մէջըն խռով մարդ կայ՝ ելէք սիրով հաշտեցէք (88)։
Մինակ մի՛ ուտէք, բաժանեցէ՛ք, հաւասար շարէ՛ք (82)։
Եկայք այսօր ժողովեցէք, ընկերք միաբան,
Պարկեշտութեամբ բազմիլ սեղան, եղբայրք պատուական,
Զուարճանալով արասցուք սէր և բարեկենդան (90)։

Այս պատճառով Հովնաթանի ուրախության տաղերը մեր հին բանաստեղծության ամենից զվարթ և լուսավոր երգերն են, որոնց մեջ կյանքի հրճվանքն արտահայտված է ամենաղորեղ, միաժամանակ և ազնիվ շեշտերով։ Նրա երգը այլևս լավ ուտողի մի սին պարծանք չէ, կոպտաբար փառաբանող ուտել խմելու հաճույքը, ինչպես մի Մարտիրոսի երգ, այլ բարոյախոսի ու ճաշակավոր արվեստավորի մի նուրբ ու գեղեցիկ վայելչություն, որի մեջ ավելի շատ հոգևոր զվարճությունն է տեղ բռնում. նրա սեղանը ինքը ոչ միայն բարելի է, այլև զարդարուն է—

Սեղանըս լի է ծաղիկ (68)։
Սեղանըս լցեալ միրգ ու ծաղիկ,
Չլինի վեր քաղեք (81)։

... Վարդ ըռեհան և զարանֆիլ ծաղկունք խորհրդաւոր...
Նարգիզ, զամպաղ և սուսամբար, եասաման և սրմպուլ (85),—

դրված է միշտ գեղեցիկ բնության մեջ և մարդիկ ուրախանում են՝ ծափ տալով ու ցնծալով, երգելով և աստծուն փառք տալով, իրար համբուրելով և մեծարելով.

Բերէք տաղարան շարական,
Թողէք մանկունք ձայնիւ կարդան (71)։
Կանչէք տաղեր և շարական (79)։

Սազերն ածէ՛ք, տաղերն կանչեցէ՛ք, ծափ տուք և պարէ՛ք (82)։
Մանկունքն երգեն տաղ շարական քաղցր որպէս բլբուլ (85)։
Ո՛վ մանկունք սուրբ եկեղեցւոյ, քաղցր ձայնիւ երգեցէք (88)։

Հաճույքը ստանում են ոչ թե գինիներից ու կերակուրներից, որոնք լոկ պատճառ են լինում սրտերը բանալու, այլ ավելի բնությունից, գեղարվեստից և մարդկանց բարեկամությունից։

Չդիտեմ ընկերներին ով ավելի լավ սրտի խոսք է ասել, քան այս Նաղաշը.—

Այսօր ուրախութեան օր է,
Թասերըս կարգաւ բոլորէ՛...
Եղբարք նստած շարէշար,
Որպէս թագ մարգարտաշար...
Պարոնայքն պատուելի,
Մէկ քան զմէկ սիրելի...
Դուք որպէս աստղ պայծառ էք,
Վարդ և կնդրուկ հոտ առէք,
Քաղցր ձայնիւ բարբառէք... (67).
Նորահաս մանկունք հանճարեղ,
Խելքըն բոլոր, խօսքըն համեղ,
Ջեռացներըն վարդ ու զամբեղ.
Հոտ առէք, եղբա՛յրք, ցնծալով,
Ուրախութեամբ և պարելով
Ծափըս ծափի հարկանելով (78)։

Այս ուրախ ընկերութեան մէջ վատ մարդ չկա, որ «մեկ խոսքի չհամբերելով մեջլիսն աւերի», այդպիսին դուրս է ձգվում (78)։ Նրանք բոլորը սիրով լի են և սրտով պայծառ, ինչպես նրանց շրջապատող բնութիւնը և օրը, որ հենց սիրտը բաց է անում և ոչ գինին,—

Այսօր նման է վարդի,
Եւ ծառոց ծաղկազարդի,
Սիրտ կու բացուի շատ մարդի (67)։

Գեղեցիկ բնութիւնն իր զարդարանքներով անհրաժեշտ պահանջ է խրախճանքի համար.—

Ջիման լինի կանաչ խոտ,
Մանուշակ սըմպուլի հոտ... (68)։

Նորափոր գնացք առուոց փրփնջագոչ պաղպաջունակ...
Այլ և ցուրտ աղբիւր բղխեալ քաղցր և անուշ խիստ գովելի,
Աւազան ջրով լցեալ պարզ և մաքուր որպէս հայելի...
Թունկ և կուժ գինով լցեալ ի մէջ ջրոյն սաստիկ ցրտացեալ,
Ջրոյն երեսն միրգ և ծաղկունք, վարդ բուհան,
խնձոր կարմրացեալ (74)։

Յաւուրս գարնան ժամանակին՝
Փթթեալ ծաղկեցաւ այգին.
Հնչէ քաղցրը ձայն տատրակին... (77)։
Վարդըն որ փրթթեալ բացուի և այլ ծաղկունք զանազան,
Ծառոց պտուղ անուշահամ, հոտ կընդրկի պատուական,
Մէջլիսըն զարդարեալ ցնծայ ղինչ դրախտըն եդեմական...

Անմահութեան հոտըն բուրէ աստուածազարդ սեղանէս (88)։
Մեր տոջևն կանաչ պաղչա, ծաղկունք և չիման,
Աստուածազարդ սեղան հղեալ աչաց յանդիման... (60)։

Բնության մի հրճվալից գովք է Զատկի տաղը (103) և «ի վերայ գարնան և ուրախութեան» (107)։

Այս կենսուրախ երգիչը, հակառակ Նարեկացուն, որ մեռնելուց հետո ուղում էր, թե իր գիրքն ուրիշների բերանով աղոթե, մի բան է միայն ցանկանում մնացականներից, որ իր մահից հետո էլ նրանք ուրախանան. «Յիշեցէք Նաղաշ Հովնաթան, ածէք խմէք կարմիր կթխան» (71), համաձա կրկնում է նա։

Այս միևնույն կենսախինդ հայացքով նա երգում է և սերը, որ կյանքի խնջույքի մի մասն է, կինը, բնությունը։ Գինին և երգ ու պարը անբաժան մի ընկերություն են կազմում նրա ուրախ ու բախտավոր կյանքի համար, և եթե խրախճանքի երգերի մեջ կինը երևան չի գալիս ընկերների հասարակության մեջ, որովհետև սերը սրտի ծածկարանում է, երգերի մեջ, սակայն, անբաժան են գինին, երգն ու բնությունը։

Սիրո ամենայայտ ժամանակն է օրհնյալ գարունը (41, 50), երբ բացվում է պարտեզի վարդը, որով զարդարում է սիրականն իր գլուխը, պարտեզ տանելով (40) գինի մտազայ և ուրախանում (89), թաս տալով տարփավորին (36), ծաղիկ քաղելով ու ծիծաղելով. բաղչի նման զարդարված գեղուհին, ինքը մի նոր կանաչ պարտեզ.

Ես տաղ կանչեմ, դու է՛լ խաղա (38)։
Պաղչի մէջըն մեկնենք խալի,
Սեղաններ՝ գինւոյ սիւրահի,
Պագ տուր, որդիդ Աստուած պահի (41)։
Վարդըն ձգեցիր գոգիս մէջ, գոգիս...
Թասըն դէպ ինձ մօտ խմեցիր (41)։
Թող Յովնաթան մէկ տաղ ասէ քո թասին (42)։
Դու քո ձեռօքն թաս մի՛ խմեր,
Եկ միատեղ նստեմք սեղան (64),
Մէկ ձեռնիդ գինւոյ թասըն,
Մէկ ձեռնիդ սմբուլն (66, 54, 59)։

Նա նույնպես ալատ, անվախ վայելել է ուզում սերը, որովհետև այստեղ ևս երիտասարդությունը շուտ անցնում է և մահը վերահաս է.

Ծոցիդ շամամներըն խիստ է նորահաս,
Վախեմ թէ թառամի, շատ մի՛ կենար պաս... (63)։
Նոր փուռած վարդի նըման ես,
Ափսո՜ս որ խիստ շատ նազ կ'անես.
Գնաց դովրան՝ կու փոշմանես... (43)։

Դու էլ կու մեռնիս, չես անմահական,
Ինձ է՞ր կու պահես տըխուր տրտմական (63)։
Գիտեմ որ դու քանց զիս սիրոյ թամահ ես.
Նըռներըդ հող կու դառնայ, է՞ր պինդ կու պահես,
Թող համբուրեմ օրհնեմ, հոգով ղարդարուես (41)։

Այս միևնույն հայացքը գտնում ենք նաև մի հայրենի մեջ.—

Թուխ աչք ու ունքեր ունիս, լայն ճակատ ու կարմիր երես,
Այդ ճերմակդ որ դուն ունիս, զշամամ ծիծերդ որ ի ներս,
Մեռնիս այլ անդին երթաս՝ վայդ ճերմակ ծոցիկդ ի՞նչ առնես
Ջամէն որդերն ուտեն, դու է՞ր զիս մահրում կու պահես (47)։

Եվ եթե այստեղ սիրահարի փորձը՝ ողոքել իր անառիկ գեղուհուն՝ ցույց տալով նրան աշխարհի ոչնչությունը՝ մի ինքնաբուխ խոսք է, իսկ Նաղաշի այդ խոսքերը բխում են նրա որոշ աշխարհայացքից, այդ երկուսը, սակայն, հոգով շատ մոտ են իրար, և Նաղաշի սիրո երգերը, ինչպես և հայրենները մեր հին սիրերգության մի-մի առանձին տեսակի կատարելագործություն են, նույն ժողովրդական ոգով, մաքուր և զգաստ, և նույնիսկ տարփալից վայրկյաններում նուրբ. Հայրենները միայն մոտ են ավելի արևմտյան ժողովրդական երգերին, իսկ Նաղաշինը՝ արևելյան։ Այդ պատճառով և՝ մի կողմից Նաղաշի երգերի, մյուս կողմից հայրենների ու ժողովրդական երգերի մեջ ոչ միայն նույն ընդհանուր ոգին ենք գտնում, այլև շատ մոտիվներ, արտահայտություններ. դարձվածներ և պատկերներ ու դրություններ նույնն են. Նույնիսկ մեր այժմյան հասկացողությամբ շատ ազատ, հեշտասեր։ Տների մեջ, որոնց թիվը մի քանիսն է, Հովնաթանը չի հեռանում հայրեններից կամ ժողովրդական երգից։ Միայն մինչ «հայրենի կարգի» սիրերգը, ժողովրդական քառյակների մշակություն լինելով, սեղմ կերպով պարունակում է ընդհանրապես սիրավեպից բազմազան միջադեպեր, շատ գաղափարներ և արտահայտության ձևեր, Հովնաթանի սիրերգն անհատական կյանքի արտահայտություն լինելով՝ համեմատաբար միատեսակ է թե՛ իր հղացման, թե՛ իր ընդհանուր եղանակի և թե՛ արտահայտության ձևի մեջ։

Դժբախտաբար նրա կենսագրությունը չգիտենք, բայց երգերից երևում է, որ նա սիրվել է և մեկ անգամից ավելի. և նրա երգերը ոչ [թե] արվեստով հորինված ընդհանուր դրություններ են, այլ առնված են ապրած կյանքի պատահարներից (48...), այսինքն երգիչը ոչ թե ընդհանուր զգացումներ է երգում, այլ իր սեփականը։ Այդ պատահարներն, անշուշտ, մանր բաներ են, բայց սրտի համար մեծ՝ և նա դրանով երջանիկ է։

Նրա յարը կամ հայտնում է, որ սիրում է նրան, կամ խոսք ուղարկում (35, 60, 46, 48), կամ ծիծաղում նրան (36, 39), կամ նամակ գրում (36, 37, 39, 44, 47, 56), կամ բարև տալիս (40, 43), բարև ու-

զարկում (47, 48, 54, 58), կամ նրա մոտ գնում (40, 48), նրա հետ խոսում կամ վարդ ու ծաղիկ ձգում նրան (41), կամ նրա սիրով ծարավ է (42, 54), ծոցը նշանց տալիս (42), ծիծաղելով աչքով անում (44, 46, 49, 53, 65), խնդրում, որ պատկերը քաշէ (47), նամակ ուղում տարփավորից (47), մտիկ տալիս նաղաշի աշխատանքին (52), կամ նրանից վարդ առնում (65), կամ պայման և ուխտ դնում նրան (69)։

Բանաստեղծը նրա համար տաղ է գրում (44, 48, 52), ծաղկում (48), նրա պատկերը քաշում (47, 49), նամակ է գրում (47), խաբար խնդրում (58)։

Եվ այդպիսի կենսուրախ ու սիրո մեջ բախտավոր երգիչը, որ բոպեն լիակատար վայելել է ուզում, չէր կարող իր խորքում տխուր սիրերգ հորինել, այլ միայն ուրախ. բայց և այնպես նրա երգերն իրենց արտահայտության եղանակով մեծ մասամբ տխուր են և չունեն այն հրճվալից բնավորությունը, ինչ որ խրախճանքի երգերը։ Այստեղ պետք է նկատի ունենալ երկու դրություն։ Նա իր սրտի ուրախ թրթիռն է միայն հայտնում իր տարփածուին, միայն [թե] ողբագին եղանակով, որովհետև նրա ուրախությունը շատ մեծ է։ Երգիչը լալիս, արտասվում է, բայց ոչ թե տրտմության արտասուք է թափում, այլ ուրախության։ Մեծ ուրախությունը, չափազանց մեծ հաճույքը նույնպես է ազդում մարդուս վրա և նույնպես հիմնովին քայքայում մարդուս կազմությունը, ինչպես չափազանց տրտմությունը, և վերջ ի վերջո մի թախծալից հիվանդագին հանգստացնող վիճակի մեջ ձգում սիրահարին։ Այսպիսի վիճակի մեջ է Հովնաթանն իր սիրով։

Այդ բուռն սերը, որ «քաղցր, միանգամայն և դառն է», ինչպես ասում է Սապֆոն իր մի նշանավոր սիրերգի մեջ, բնականաբար պետք է երգվեր դժբախտ սիրո ձևով, տխրագին եղանակով, որովհետև դա ևս տարփավորին ձգում է նույն հոգեկան անհավասարակշռության և արբեցության մեջ, որովհետև այդ սերը բուռն է անսահման՝ ուզում է փորձել սերը։ Եվ այս հատկանիշը ունեն բոլոր մեծ սիրերգուները, մանավանդ արևելյան, որոնց մեջ սերն ավելի կրքոտ ու խանդակաթ է։ Երջանիկ սերը երգվում է դժբախտ սիրո ձևով, որովհետև այդ ժամանակ մարդս կորցնում է իր հոգեկան հավասարակշռությունը և բուռն հարբեցության մեջ ձգվում. «կուզեմ հոգիս հանեմ»։ Եթե տխրում է նա իսկապես, ոչ թե նրա համար, որ չի սիրվում և սեր է պաղատում, ինչպես «Հայրենի կարգի» մեջ, այլ կամ հեռու է սիրականից, կամ մի երկու օր լուր չունի նրանից, թշնամուց քաշվելով լուր չի ուղարկում, հետը շարունակ տեսնվել է ուզում, սիրականը նաղեր է անում։

Հովնաթանն այն երջանիկ վայրկյանին, երբ իմանում է, թե իր սերը փոխադարձ է, իր սերը երգում է նույն հատկանիշներով, ինչ որ «Հայրենի կարգի» մեջ դժբախտ սիրահարը, բայց մի մեծ տարբերությամբ, որ երգն այստեղ մեղմ է, հանգիստ, որովհետև արդեն իր էական պահանջը, որ է փոխադարձ սիրվելը, բավականություն է ստացած։

Իմ եարըն նըստել դամով,
Լեզուն քանց շաքար համով,
Ինձ կու սիրէ իւր կամով.
Զա՛լում, ուրախ եմ, ամա՛ն, աման (35)։
Պաղչումըն ծաղիկ քաղես,
Ծածուկ դէպ ինձ ծիծաղես,
Կրակով սի՛րտս դաղես.
Զա՛լում, էրվել եմ, ամա՛ն, ամա՛ն։
Գիր ես գրել տոշխարով,
Մէջըն լցրել շաքարով,
Յովնաթանին շատ բարով.
Զա՛լում, կարդացի, ամա՛ն, աման (36)։

Այսպիսի մի երգի մեջ «զալում» հնչյունն արդեն դառնում է փաղաշուքյուն, ինչպես և ժողովրդական երգի մեջ «Պուճուր աղչիկ, զալում ես». նա զալում է ոչ թե իբրև «անգութ, վայրագ հարստահարիչ», ինչպես նշանակում է այդ բառն իսկապես, այլ իբրև մի շնորհքով ու հաջողակ և կտրիճ, որ կարողանում է գրավել տարփավորին, և ծաղիկ քաղելով ու ծիծաղելով նայելով միայն «սիրտը կրակով դաղել», այրել, բայց ոչ անհույս տանջանք, այլ անուշ հաճույքյուն բերող կրակով. նույնպես ոչ թե հուսահատ օգնուքյան մի ճիչ է այլևս «ամա՛ն, ամա՛ն» բացականչուքյունը, ինչպես հին «ղէնահար», այլ դա միայն ցույց է տալիս, թե ինքը որքան շատ սիրում է իր գեղուհուն։ Եվ երբ որ նա նույն երգի մեջ իրեն «վշտահար» (դարդու) է անվանում,— կամ հիվանդ և «խոցված սրտով»— այլևս ոչ ոք չի հավատում, թե նա իսկապես վշտահար է, հիվանդ, այն մտքով, թե դժբախտ է, այլ դա միայն ցույց է տալիս, թե սերը որքան հաղթահարե է և ջարդում է նրան։

Եվ վերջապես նույն երգի մեջ յարի խոսքը, թե սիրում է երգչին, միայն ավելի ևս բորբոքում է նրան՝ «խօսքդ սիրտըս կու էրէ», և նա ավելի ևս կարոտում, ծարավում է իր տարփածուին ու ցանկանում նրանոր տենչալի լուրեր ստանալ նրանից, ցանկանում է, որ նա իր ծարավը հագեցնի և համբույրով բժշկի իրեն։ Բայց որովհետև այդ չկա, ուստի նա և գանգատվում է և գութ հայցում, ինչպես ապերջանիկ սիրահար։

Այսպես, ուրեմն, Նաղաշի երգերով մեր քնարերգուքյունը կատարելապես աշխարհականացել է, նա արդեն նոր ժամանակի երգիչ է։ Նրա երգը պետք է երևան գար ոչ թե 17-րդ դարի վերջերում, այլ 15—16-րդ դարերում։ Բայց 14-րդ դարու վերջերից Հայաստանը Լանկթամուրի արշավանքից սկսած (1387 թ.) և նրա մահից հետո սոսկալի ավերածուքյունների ենթակա եղավ զանազան բռնակալների ձեռին կուվների ասպարեզ դառնալով. քաղաքներ ու գյուղեր ավերվեցան, գերուքյուն, սով, գաղթ, կոտորած... Ապա օսմանցոց և պարսից շահե-

րի մեջ ծագած պատերազմը, որ 250 տաքուց ավելի տևեց (1473 թվից), մերթ օսմանցոց, մերթ պարսից ձեռն անցնելով. մինչև 1639 թ. հաշտվեցին և Երասխ ու Կուր գետերի մեջ եղած երկիրը անցավ պարսից, և ութսուն տարու չափ մեր արդեն բոլորովին ավերված երկիրը խաղաղություն ունեցավ, երբ հայոց մեջ սկսվեց վերածնության շրջանը։

Այս խաղաղության շրջանի որդին է ահա Նաղաշ Հովնաթանը, որ ապրել է պարսից համեմատաբար բարվոք կառավարության շրջանում, մի լիառատ ժամանակ, ինչպես նկարագրում է Զաքարիա սարկավագը, որով և հասկանալի է և նրա երգերի ուրախ բովանդակությունը։ Այդ ժամանակ և նոր պարսկական ազդեցությունը զորանում է հայ ժողովրդի վրա և դրա հետևանքն է, որ Նաղաշի երգերը իրենց վրա կրում են արդեն պարսկական բանաստեղծության ազդեցությունը, ոչ միայն բառերի և պատկերների, այլև ոտանավորների վրա. նրա գործածած չափն արդեն երբեմն տարբերվում է մեր հին բանաստեղծական մաքուր շեշտական չափից, և երբեմն դարձել է գուտ վանկական, մոտիկ ֆրանսերենին։ Նրանով իսկապես փակվում է մեր հին երգիչների շարքը և սկսվում է նոր աշուղների շրջանը։ Նաղաշը միջին տեղն է բռնում հնի և նորի։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐՈԳՈՒՄԸ 17—19-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

16-րդ դարը և 17-րդ դարու առաջին քառորդը հայոց կյանքի և գրականության ամենից անկյալ շրջանն է։ Մահմեդական թուրքերն էին բարձրացել բյուզանդական գահի վրա և իրենց պատերազմական բնավորությամբ, շարունակ արշավանքներ էին անում՝ ավերելով թե՛ իրենց և թե՛ դրացի երկիրները։ Հայաստանը, ինչպես առաջ, ավերիչ պատերազմների ասպարեզ էր երկու մահմեդական, քրիստոնեության և քաղաքակրթության թշնամի պետությունների մեջ։ Մի կողմից տաճիկներն էին ավերում և սոցա թողածը՝ պարսիկները։

Եթե այդ՝ դարեր շարունակ տևող պատերազմների մեջ քիչ ու շատ լինում էին կարճատև խաղաղության շրջաններ՝ այդ ժամանակ էլ ժողովուրդը կրոնի պատճառով հալածված, ճնշված հարկերի տակ, ենթակա կեղեքումների։

Անկումն իր վերջին ծայրն հասնում է 17-րդ դարու սկզբին, երբ պարսից Շահ-Աբաս թագավորի ձեռով երկրի ավերմունքն յուր վերջին ծայրն է հասնում—հարյուր հազարավորների բռնի գաղթեցնելով, և ապա սով ու ջալալիք։

Այդ վերջին ավերմունքը և վերջին հարվածն է տալիս հայոց հին բաղաքակրթությանը, որ արդեն նվազած էր շատ։ Հայերն այնուհետև կամ պետք է ոչնչանային և վայրենանալով ընկնեին, և կամ, եթե ազգի մեջ կենսունակության դեռ ուժ կար՝ մեծ ջանքերով նորից ձգտեին կենդանության։ Բարեբախտաբար այդ ուժը կար հայոց մեջ, և վերջին ծայր

հասած ավերմունքից հետո, անմիջապես նորոգության ձեռնարկությունն սկսվեցավ և այն շատ կողմերից։ Սկսվեցավ մի վերածնության շրջան հայոց կյանքի և գրականության մեջ, որ սկզբում շատ դանդաղ առաջ գնաց՝ Հայաստանի անկայուն քաղաքական դրության պատճառով, և հետո՝ շատ արագ քայլերով, երբ այս դարու առաջին քառորդից հետո՝ այդ ամեն տարվա պատերազմներին վերջ դրվեցավ։

ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Վերածնության շրջանի մեջ պատմագրություն իսկական իմաստով՝ գոյություն չունի։ Մի քանի այդ անունը կրողները լոկ անարվեստ նկարագրողներ են իրենց ժամանակի, կամ իրենցից սակավ առաջ պատահած դեպքերի, որոնք Հայաստանի կամ հայոց գլխով են անցել, գլխավորապես օտարներից կրած հարստահարությունների ու ճնշումների նկարագիրը։ Այդ պատմագիրները, իսկապես, գրականության նյութ չեն կարող լինել, որքան պատմության ուսումնասիրության համար իրև աղբյուր կարող են ծառայել։

Մարդկանց հետաքրքրությունը վարթնած է և ուղում են ծանոթանալ հին ու նոր մարդոց։ Հների ծանոթությունը ձեռք են բերում հին մատենագիրներ և հատկապես Խորենացի կարդալով, իսկ ժամանակակից իրողությունների ծանոթությունը՝ ականատեսների պատմությունը լսելով, և որպեսզի կարողանան ամենքն այդ պատմությունը լսել, կարիք է զգացվում ականատեսների վկայությունը գրի առնելու։ Եվ գրի են առնում։ Բայց այդ գրվածների մեջ քննադատությունը, դոկումենտների խուզարկությունը և վկայությունների (ականատեսների) կոնտրոլը բոլորովին բացակայում է։ Գիտական երկեր չեն։

Այդ պատմագիրներից են.—

1. Առաքել Դավրիժեցի[1]։—Առաքել վարդապետ, Թավրիզ քաղաքից, Փիլիպպոս կաթողիկոսի աշակերտներից, Ս. Էջմիածնի միաբանությունից, սնված (երևի մանկությունից) և «վարժեալ» Մայր Աթոռում, և ծերության օրերը հասած, և այնտեղ էլ, ինչպես ինքն «ակն ունէր ընդ հովանեաւ նորին ամփոփիլ ի հող», մեռած ու թաղված միաբանության գերեզմանատանը ՌՃԺԹ=1670 թվին. (տապանագիրն է—«Պատմագիրն այս է տապան Առաքել վարդապետի ՌՃԺԹ»)։ Իր ժամանակակիցների վկայությամբ՝ բավական անուն ստացած, անշուշտ իր ուսման կամ հմտության համար. «Ստեփանոս Լեհացի իր մեկ թարգմանության (Դիոնիսիոսի Արիոպագվոյն գրոցը) հիշատակարանի մեջ Էջմիածնի ուսումնարանի վրա խոսելով՝ կդրուցե—«Զայնու ժամանակաւ բազում

---

1 «Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ սակս դիպուածոց Հայաստանեայց և գաւառին Արարատոյ և մասին Գողթան գաւառի, սկսեալ ի ՌՄԴ թուականէն Հայոց մինչ ի ՌՃԺԲ թ.ա, Վաղարշապատ, 1884։

ճին Երևելի վարդապետք (էջմիածին), քաջաբանք, բանաստեղծք, աստուածային գրոց քաջք գիտունք և հմուտք, յորոց մի է և Առաքել վարդապետն վիպասան, որ զժամանակագրութիւնս հայրապետաց և թագաւորաց գեղեցիկ յարմար բանիւ դրոշմեալ» (Զարբհ., եր. 172), որի պատճառով նույնիսկ կենդանության ժամանակ հայտնի էր Առաքել պատմագիր անունով։

Այս վկայությունից երևում է, որ Առաքել վարդապետը ժամանակի նշանավորներից մեկն է, շատ ճանապարհորդած Արևելքում և Արևմուտքում, Նիկիրակ Փիլիպպոս կաթողիկոսի Հունաց աշխարհում, Ասպահան, Ամասիա, Սեբաստիա, Ուռհա, Հալեբ։

Առաքելի ծննդյան թիվը հայտնի չէ։ 1651 թ. սկսել է գրել իր Պատմությունը Փիլիպպոս կաթողիկոսի հորդորով. նրա մահից հետո դադարել է գրելուց, և այնուհետև Հակոբ կաթողիկոսի հրամանով վերջացրել է 1662 թ.։ ՌՃԺԱ=1662 թվին, երբ նա իր Պատմությունը վերջացնում է, հիշում է և (գլ. Ժ), որ ինքը ծերացել է և «Կարի պակասեալ ի զօրութեանց, և մահն եկեալ հանապազօր իմոց աչացս կանգնեալ»։ Իսկ հիշատակարանի մեջ (ԺԶ) «այլև դիպեցաւ պատահել ինձ այս գործ, ոչ ի ժամանակս առոյգ երիտասարդութեան, այլ յողորմելի ծերութեան, վասն զի ծեր էի, նաև յոյժ ցաւագար մարմնով, և ի լուսոյ աչքս պակասեալ և ի պնդութենէ ձեռքս թուլացեալ դողայր. սոյնպես և յայլոց յամենայն կարողութեանց տկարացեալ, և մահու հրաւէրք ամենեքեան հանդէպ աչացս եկեալ կացեալ»։

Պատմագրի անձնական վկայությունն իր ծերության համար ոչ թե նրա գոյության վերջին տարու՝ 1662 թվականի համար պետք է հասկանանք, այլ ավելի՝ Պատմությունը գրելու ամբողջ ընթացքի համար և գուցե նույնիսկ սկզբնավորության ժամանակի համար, որ է ՌՃ=1651։ Արդ, եթե ընդունենք իր պատմության ընթացքի կեսին՝ 1656 թ. նա ծեր է եղել, և ուժից ընկած և աչքի լուսից պակասած, իսկ այդպիսի ծերության համար պետք է ընդունենք առնվազն, որ 60—65 տարեկան է եղել այդ ժամանակ, իսկ 1670 թվին, ուրեմն, 74—79 տարեկան հասակում մեռել է, որ և մի անհավանական թիվ չէ,— ուստի ըստ այնմ նա ծնված կլինի 1591—1596-ին։ Այս հաշվով, նա Շահաբասի առաջին արշավանքի ժամանակ, ՌՄՐ=1603 թվին 7—12 տարեկան պիտի եղած լինի։ Եվ այս հարմարվում է խոսքին.— «Ես ինձէն իսկ տեսանելով զաւերս Հայաստան աշխարհին և զնուազիլն մերոյս ազգին, և զչարութիւնն մահմեդականաց», իսկ երկրի ավերումը եղել է Շահաբասի բռնի գաղթից, Ջղալօղլու և Շահաբասի կռիվներից և նոցանից հետո եկած Ջալալոց և սովի ձեռից, որ տիրել է ՌՄԸ=1606—1609 թվականներին, երբ «եղեն ցիր և ցան ազգն Հայոց և գնացին իւրաքանչիւր ոք հանդէպ երեսաց իւրոց դտանել տեղի կելոյ և ապրելոյ... Զի յազգէն Հայոց՝ որքան զարիպականք կան յասացեալ գաւառս, յայս ժամանակիս և յայս պատճառէս են գնացեալք» (եր. 65, գլ. է)։

Ուրեմն Հայաստանի ավերմունքը, ըստ Առաքելի 1603—1609 թթ. լինելով, որ և պատմում է սրտառուչ գրչով (այնուհետև եղած ավերմունքը մասնակի է և հայրենիքից դրսի համար է պատմում), պետք է ենթադրենք, որ ականատես համարվելու համար այդ դեպքերը (1603—1609) կատարվել են նրա գոնե 7—13 կամ 12—18 տարեկան հասակի ընթացքում, որ համապատասխան է մեր ենթադրած թվականին:

Սակայն այս տարիքը հակասական է թվում, Առաքելն իրեն Փիլիպպոս կաթողիկոսի աշակերտ է անվանում, իսկ Փիլիպպոս կաթողիկոսի համար գրում է. «Գոլով սորա ի տես տղայութեան չորեքտասան ամաց աւելի կամ պակաս», երբ ութ ամսից հետո սա հանդիպում է Մովսեսին, երբ սա դեռ կաթողիկոս չէր[2]:

Եթե 1606-ին Փիլիպպոս 15 տարեկան լիներ, ուրեմն նա ծնված պիտի լիներ 1591 թվին և հասակակից Առաքելին: Այս ժամանակի համար մի անսովոր բան չէ հասակակցի մոտ ուսում առնելը, երբ փոքրերն էլ մեծերից ուսում էին առնում: Այլ մանավանդ թե Առաքելն իրեն Փիլիպպոսի աշակերտ է անվանում ըստ «կարգի վարդապետաց», «սկսեալ ի Գօշէ Մխիթարայ գաւազանաւն՝ որ իջանէ յէջմիածնի դասատունն»:

Համենայն դեպս ինչ որ էլ լինի՝ Առաքելն էջմիածնի դպրոցի վարդապետ է, ուրեմն բավականին մեծ հասակում էջմիածին եկած և Փիլիպպոս կաթողիկոսից ստացած վարդապետական գավազան: Նվ իրրև էջմիածնի դպրոցի գիտուն աշակերտ՝ հետաքրքիր է նրա հայացքն ու ղարգացումը տեսնել թե որքան է: Ինչպես երևում է, այդ դպրոցը կարողացել է կարճ միջոցում բավական ուսում տալ իր աշակերտներին, թեպետև գրաբարի ոչ կատարյալ ուսումը, հին ղրաբարի, բայց և այնպես դրեթե անսխալ պարզ շարադրություն կարողացել է անել և, որ գլխավորն է, իրրև Սիմեոն Ջուղայեցու քերականության աշակերտ, լատինացած լեզվին ենթարկվելու տեղը, ավելի հետևել է ժողովրդական պարզ շարադասությանը, կենդանի ժողովրդական ձևերին ու դարձվածներին, չխորշելով, ճշտության ու պարզության համար, նույնիսկ գավառական ու թուրքերեն բառերից, որ և ոչ թե պատմագրի պակասություն, այլ առավելություն պետք է համարել, զի ամեն պատմություն կամ զրույցների ժողովածու, ինչպես է Առաքելի Պատմությունը, յուր կենդանությունը, գույնն ու երանգը ստանում է միայն ժամանակի կենդանի լեզվով պատմվելուվը: Առաքել պատմագիրը, անշուշտ, ոչ շատ անգամ հասկանալով, գեղեցիկ գործադրել է մանավանդ ուրիշների խոսքերը մեջ բերելիս, չխորշելով նույնիսկ զուտ աշխարհաբարից: Բայց նա նույնիսկ այդ հասկանալով է անում, քանի որ թուրքերեն և գավա-

---

2 Կաթողիկոս եղել է 1629 թվին, և Սարգիս պարոն տերը (մեռած ՌԿԹ=1720) Փիլիպպոսին հանձնում է սրան քարոզչության ժամանակ: Մովսես քարոզչության է ելնում Սրապիոնի մահից հետո (մեռել է ՌՄԵ=1606), ուրեմն շուրջ 1610—Փիլիպպոս 15-ի մոտ պիտի լինի, որով նա ծնված պիտի լինի 1590-ի մոտերը, ուրեմն Առաքելը հասակակից է Փիլիպպոսին: Այս ասենք անսովոր չէ:

ական բառերի դիմաց հաճախ գրաբար բառեր է դնում փակագծի մեջ։ Այս լեզուն լատինացած հայերենով գրողների համար, հարկավ, ինչպես Ոսկանի, որ առաջին տպագրողն է Ամստերդամում, պիտի համարվեր «աղաւաղեալ ի գրչաց անհմտաց և անուղայից արանց և բանաստեղծից»։

Սակայն այդ դպրոցը, մյուս կողմից, տվել է Ս. Գրոց բավական ծանոթություն և հին սովորությամբ Առաքելն ևս իր գրվածքի մեջ ցույց է տալիս, որ ինքը գիտե Սուրբ Գիրքը, թե Ս. Գրքի ձևերից օգտվելով և թե, որ ավելի հաճախ է պատահում, խրատական կամ նկարագրական օրինակներ բերելով Սուրբ Գրքից։

Նկեղեցու հարազատ զավակ, եկեղեցական ոգվով սնված, առանց աշխարհական գաղափարների մասնակցության։ Կրոնասիրության և անարատ բարոյականության հետ՝ ավելի զորեղ է պատմագրի մեջ հայրենասիրության ոգին, որից նրա պատմությունն ավելի շունչ է ստանում, ինչպես է բոնի գաղթի նկարագիրը։

«Եւ զօրապետացն՝ յետ ընդունելոյ պայպիսի զաշխարհակործան և ղսաստիկ հրաման ի թագաւորէն, ելեալ իւրաքանչիւր զօրավար իւրով գնդաւն՝ դիմեցին յիւրաքանչիւր հրամայեալ գաւառսն աշխարհիս Հայոց. և իբրև հողմնախառն հուր ընդ եղէգն ընթացեալ, հապճեպ տագնապաւ վաղվաղակի պամենայն բնակիչս գաւառացն կարգեալք յիւրաքանչիւր բնակութեանց, և արտասահման արարեալ յիւրաքանչիւր տեղեաց, իբրև ղջոլիրս բալմութեան հօտից և անդէոց զառաջեաւ արարեալ՝ բռնութեամբ վարեալ՝ ածեալ բերեալ հասուցին ի գաւառն Արարատոց, և ղլայնանիստ դաշտն նորա լցին ծագէ ի ծագ. քանզի ի ստորոտէ լերանցն Գառնւոյ մինչ ի յեղերն երասխայ մեծի գետոյն լայնութիւնն էր բանակին, իսկ զերկայնութիւնն դովիմբ կշռեաց դու, բայց ես ասեմ աւուր միոյ ճանապարհ. և յայլուր տեսի՝ որ հինգ աւուր ճանապարհ էին գրեալ» (28)։

«Ի եղեն երեք բանակք մեծամեծք և անհունք. առաջին՝ բանակն ժողովրդեանն, երկրորդն՝ բանակն Պարսից, երրորդն՝ բանակն Օսմանցւոց։ Եւ այնպէս դիպեցաւ պատահումն՝ զի յորժամ չուէր բանակ ժողովրդեանն, իջեալ բանակէր ի հանգրուանս նոցա Շահաբասն զօրօքն Պարսից. և ի չուելն նոցա բանակէր ի նոյն տեղին Ջղալօղլին զօրօքն Օսմանցւոց, և այսպէս՝ զհետ միմեանց կրնկակոխ գնալով գնացին, մինչև հասին ժողովուրդքն և Պարսիկքն ի գեղն Ջուղայ, և Օսմանցիքն հասին ի Նախչուան։ Եւ այնուհետև ո՛չ թողացուցին Պարսիկքն ժողովրդեանն ղկա՛յ առնուլ՝ և ոչ ժամ մի, այլ կարի սաստիկ տագնապալ նեղէին զժողովուրդն, զոմանս մահու հարուածով գանելով, զոմանց զունչս և զականջս հատանելով, և զոմանց գլուխն կտրեալ ի ձող ցցէին, որպէս զեղբայր Առաքել կաթուղիկոսին, որում անունն էր Յօհաննէան, զսուրբ և զայլոյ ումեմն առն զգլուխսն կտրեցին, և ի ձող ցցեցին՝ յեզր գետոյն Երասխայ. դայսոսիկ և առաւել քան դայսոսիկ խոշտանգանս

Կտտանաց ածէին ի վերայ ժողովրդեանն, ի յա՛հ և յերկիւղ ժողովրդեան և տեսողացն, զի փութանակի անցցեն զգետն։ Զայս ամենայն վտանգս ածէին ի վերայ ժողովրդեանն խորամանկ աղգն Պարսից յահէ Օսմանցւոց, որք զկնի նոցա գային» (29)։

«Իսկ ողորմելի ժողովրդեանն հայէին յառաջ զանհուն գետն տեսանէին իբրև զծով՝ որ խեղդէր, և չետուստ զսուրն Պարսից՝ որ սպանանէր, և ճարակ փախչելոյ ոչ գտանիւր. և առհասարակ աղիողորմ ողբս, և յորդ արտասուս յաչաց հեղեալ առնէին երկրորդ ներսախ. և ձայն լալեաց, և հառաչանաց, ճչանաց, վայոց կսկծանաց, մորմոքանաց ընդ միմեանս խառնեալ գոչեցուցանէին ուժգին աղաղակաւ. իսկ ողորմութիւն և փրկութիւն ոչ ուստեքէ էր։

Աստանօր կարի հարկիւ պիտոյ եղև մերում ժողովրդեանն հինն Մովսէս՝ և նորին աշակերտն Յեսու առ ի փրկել զնոսա Իսրայէլ ի ձեռանէ երկրորդիս Փարաւոնի, և կամ դադարեցուցանել զուղխս յորդահոսանս լայնատարած գետոյն մեծի, և ոչ եղև դեռևս. քանզի յորդութիւնք մեղաց մերոց փակեցին ընդդէմ մեր ղդուռն ողորմութեան դթածին Աստուծոյ։

Եւ անողորմ ղօրացն Պարսից վարեալ զժողովուրդն լնուին ի գետն. և նոքա ի մէջ գետոյն ևս քան զևս բազմացուցանէին զձայն աղաղակին և դողբոցն ի վտանգէն։ Եւ ոմանք ի նոցանէ կալեալ ղեղերս նաւացն, և ոմանք զափոցն, և ոմանք զագիս ձիոց՝ և զեզանց, զգոմշոց, և ոմանք իւրովի լողեալք անցանէին։ Եւ որք անհմուտք էին լողելոյ և անզօրք, ծերք և պառաւունք, տղայք և աղջկունք, և մատաղ մանկտիք լցեալք էին յերեսս ջրոյն. և գետն առեալ տանէր զնոսա իբրև զխոհու ի ժամանակս գարնայնոյ. և գետաւտար մարդով ծածկեալ էր երեսն գետոյն, և թէպէտ անցին, որք անցինն, այլ բազումք այնք էին՝ որք հեղձմամբ ջրոյն մեռան։

Եւ հեծեալք ոմանք ի ղօրացն Պարսից՝ որք ունէին ուժեղ ձիս և ինքեանք արք արի և կարօղ, շրջելով ի մէջ քրիստոնէից տեսեալ նկատէին զուստերս և դստերս քրիստոնէից, և որոց հաւանեալ սիրտք իւրեանց, եթէ կանանց, եթէ աղջկանց, և եթէ տղայոց. էր զի խաբէին զտեարսն, թէ տուր՝ զի վասն քո անցուցից ընդ գետն յայնկոյս, և իբրև անցուցանէր, ո՛չ դնէր անդէն ի գետնի, այլ առեալ երթայր յո՛ և կամէր։ Եւ այլք դողութեամբ առեալ տանէին։ Եւ այլք յափշտակութեամբ և սպանութեամբ առեալ ի տեարցն տանէին։ Եւ բազումք մարք զտղայս, և տեարք զհիւանդս ի ճանապարհին ընկեցիկ արարեալ լքեալ թողեալ գնային, վասն անհանդուրժելի և անբմբռնելի վտանգին, որ ժամանեալ էր ի վերայ նոցա։ Եւ միանգամայն ասեմ՝ զի թշուառութիւնք՝ և արհաւիրք անտանելիք հասին ի վերայ աղգիս մերոյ, և ոչ բաւեմ թէ որով տարաղու հիւսեցից ողբս դամբանականս և աշխարանաց ի վերայ բեկման հայկական սեռիս, որք այսքան չարակամութեանց եղեն ընդունակք։ Զի թէպէտ ըստ սարասի հնոյն Իսրայէլի լինէին վարեալք գերի

ձեռամբ երկրորդիս Բաբելացւոց, այլ ոչ գոյր երեմիա, որ խրատէր, և ո՞չ եզեկիէլ, որ լուսաւորէր և ո՞չ Յեսու կամ Զօրաբաբել՝ որ զդարձն առաջնորդէր, այլ եղեալք իբրև զհօտս անհովիւս ցրուեալք և հալածեալք առաջի գայլոց պատառողաց և գիշատող գազանաց, որք վարէին բռնութեամբ։ Եւ նոքա երթալով երթային և լային, որք բարձեալ տանէին զսերմանս իւրեանց։

Իսկ յաջորդ սորին, ո՞չ եղև տեւանելի՝ որ ասէ, գալով եկեսցեն, և ցնծասցեն, վասն զի ոչ եկին և ոչ եղև ցնծութիւն, այլ անդէն մնացին ուր և տարեալ արգելին, այսինքն յաշխարհն Պարսից» (30—32)։

[Այսպիսի] նկարագիրներ մեր պատմութեանց մեջ քիչ կպատահինք եղիշեի ժամանակից ի վեր։

Ոդին, ուրեմն, մեղքով բացատրելը նույնն է, ինչ հների մեջ։ Սակայն նա մեղքի համար համարելով հանդերձ այդ պատահարները՝ խիստ ուրախանում է, որ մատնիչները իրենց պատիժն են ստանում, ինչպես երկու եպիսկոպոսների համար (եր. 35)։ Բայց, մյուս կողմից, շատ սառնասրտությամբ պատմում է (եր. 157) Մելքիսեթ կաթողիկոսի յուր մխան ուտեցնելը, այլև (եր. 159) սքանչանում, հիանում է, որ Մելքիսեթն յուր պատիժն է ստանում, [որ] Սրապիոնին արհամարհել էր։ Առաքելը մոռանում է նույնիսկ, որ այդ անարգ վարմունքն հայ կաթողիկոսի հետ է լինում, ինչքան էլ անարժան լիներ։ Սակայն այդ մոռացումն ևս պատմագրի հայրենասիրությունից է։ Եվ ի՞նչպես չուրախանա Առաքելը, քանի որ իր պատմական նեղ հայացքով Հայաստանի ավերման և աղքատության նախապատճառը Մելքիսեթին է համարում, որ հրավիրել էր Շահին այն ավերմունքների, որոնց համար գրում է.

«Եւ զայս ամենայն լսելով և գրելով մեր, ճմլին սիրտք մեր, և գալարին աղիք որովայնի մերոյ, և աչք մեր վտակս արտասուաց թորեալ իջուցանեն, վասն եկելոյ հասելոյ թշուառութեանս ժողովրդեանս մերոյ։ Եվ ոչ բաւեմք աստանօր՝ թէ որով օրինակաւ՝ և կամ որով տարազու ողբս առեալ աշխարեսցուք ի վերայ բնկման ազգին և աշխարհին մերոյ, յաղագս որոյ ել հրաման մահաբեր ի բերանոյ երկրորդ Սաբինոսին և շունչ հրախառն յընդացք նորին՝ և եկեր զեղևնափայտս լիբանանու, քանզի անմարդաբնակ արար միահաղոյն զամենալի և ղյուրթի աշխարհս Հայոց։ Վասն զի ի քշելն ղերկիրս՝ ո՞չ թէ զմի կամ զերկու գաւառս վարեաց ի պարսկաստան, այլ զբազումս։ Եւ սկսեալ ի սահմանացն Նախչուանու և անցեալ ընդ եղեգաձոր, առ եզերբ Գեղամայ, և Լօռւոյ, և զՀամզաչիման գաւառն, զԱպարան, զՇարապխանէն, զՇիրակուան, ղԶարիշատ, և մասն ինչ ի գեղօրէիցն Կարսայ, և զձօրն Կաղզվանու բնաւին, և բովանդակ զերկիրն Ալուշկերտու, և զգեղօրայան Մակուայ. և զերկիրն Աղբակու, և ղՍալմաստու, և զԽոյայ, և զՊրմի, և որ ինչ պանդուխտք և զարիպականք մնացեալք էին ի քաղաքն և ի գեղօրայսն Թարվիզու, զդաշտն Արարատու բովանդակ, և զերևան քաղաք, զերկիրն Ղրխբուլաղայ, զՇաղկունուց ձոր, զԳառնու ձորն, զՈւրծաձորն։

եւ յառաջ քան զայս՝ զգաւառն Կարնոյ, և զԲասենու, և զՆուսայ, և զՄանազկերտու, և զԱրծկէոյ, և զԱրճշոյ և զԲերկրու, և զՎանայ, աւարով և գերութեամբ բերեալ էին յերևան, և ընդ սոսա քշեցին և տարան։

Արդ՝ զայս ամենայն գաւառս՝ և որք ընդ սոքօք էին, հրամայեաց շահն, որ քշեցին և տարան յաշխարհն Պարսից, և արար աւերակ և անմարդաբնակ զվայելուչ աշխարհս Հայոց։

Որ և այժմ տեսանեմք զարգաւանդ և զբերրի վհող, զարտ և զանդաստանս սորա, և զաւերակս բազմապատիկ գեղօրէիցն և զմեծանիստ աւանացն։

Նա և զաւերումն և զտապալումն և զքայքայումն զանաւրէիկ և զամուր և զհաստահեղոյս վիմարդեամբք և կրով մածուցեալ զանմատոյց բերդորէիցն։

Եւս առաւել զմեծափառ և զհռչակաւոր վանորայսն, զտեղի և զհանգստարան սրբոցն Աստուծոյ։

Եւ զերկնանման և զբարձրաբերձ և զգմբէթաշէն կոփածո և հաստահեղոյս վիմօք կառուցեալ զեկեղեցիս աշխարհիս Հայոց։ Յօրում յօրինեալ զանազան և պէս պէս նկարս և տեսակս շուշանաց և կենդանակերպից, գեղեցիկ յօրինուածովք քանդակեալք ի վէմս՝ պէս պէս հնարակերտութեամբ։ Որոց ձևն և դիր շինուածոյն և սիւնքն և ախաւեղագէաք կամարացն ազգի ազգի, և լուսանցոյցքն և դրունքն, և ամենայն ինչ խորհրդական։

Նա և զբարեհամ և զականակիտ զմշտահոսան աղբերակունս ջուրցն։ Եւ զկարկաջահոս ծիծաղախիտ յաւէտընթաց յառաջախաղաց վտակս ջուրցն, որ ի գլխոց ձիւնաբարդ սպիտակափայլ բարձրաբերձ լերանց առ ի ստորև հոսեալ իջանէ ի դաշտ անդր և զշինութիւն նոցին մատուցարէ։

Նա և զքաղցրաշունչ և զառողջարար և զկենդանապարգև զօդ և զհողմն սորին։ Եւ զայլ ամենայն վայելչութիւնս սորա տեսանելով հեղձամղձուկ եղեալ փղձկիմք՝ և հարեալ յարտասուս ողբամբ և աշխարեմք՝ զի անապատ եղև վայելուչ և քաղցր աշխարհս մեր։ Եւ ազգ և ժողովուրդ մեր խլեալք ի տեղեաց և անջատեալք ի հայրենի և ի բնիկ ժառանգութեանց, և յօրհնեալ յերկրէ, որ լի է նշխարօք սրբոց աստուծոյ, և որոգեալ արեամբ սրբոց վկայից՝ և օրհնեալ քարողութեամբ սրբոց առաքելոց՝ եղեն վտարանդեալք և տարամերժեալք յերկիր օտար և յազգ այլասեռ և այլալեզու, որ և թշնամիք հոգւոյ և հաւատոյ, և արեան ծարաւիք մարմնոյ։ Որք և անդէն օր աւուր առ սակաւ սակաւ նուազին, ոմանք մահուամբ և կորստեամբ, և ոմանք հաւատոյ ուրացութեամբ, որք դառնան յանօրէն օրէնս պղծոյն անապատի։

Եւ յաղագս երկնանման և ադինասարաս եկեղեցեաց զի՞նչ ասացից՝ որք ի խաւարի մնացեալ և ի բնակչաց թափուր եղեալ՝ մերկացեալ ի վարդուց՝ եղեալ հանգրուանք համբարուաց և ջայլամանց ըստ Նսայեայ տեսանողի. որոյք աղուխսուց և նապաստակաց, մակաղատեղք խաշանց

և անդէոց, բոյնք թռչնոց և աւերաբնակ բուաց։ Փոխանակ օր աւուր նորոգման, օր զհետ աւուր խարխալեալ և քայքայեալ աւերեալ փլուղանի. փոխանակ բուրման խնկոց անուշից՝ լցեալ ողբովք՝ լռեալք ձայնք փառաբանչաց, և կատարմունք տօնից տարեկանաց, և մատուցմունք փրկական պատարագաց» (38—40)։

Եվ իրավ, Խորենացու հայրենասիրության ոգին անցել է այդ վարդապետին. Խորենացին այդ «Դասատան» սիրելի դասագիրքը պիտի եղած լինի, որ և Առաքելի մահից 25 տարի հետո իբրև «չքնաղավէպ և գեղեցկաշար պատմութիւնս նախնեաց մերոց», որ Թոմաս եպիսկոպոս «ընծայէ ծաղիկ բերկրութեան ցանկալի աղգին Արամեան»։ Խորենացու հայրենասիրությամբ, բայց և առանց Խորենացու ճարտասանության, պարզ ու բնական, Խորենացուց ավելի սրտառուչ է ողբում յուր հայրենիքը, որից ավելի դեղեցիկ չէր կարող ոչ մի իրեն ժամանակակից բանաստեղծ ոլբալ։

Եվ կամ հետևյալ կտորը (43—44), որի մեջ ցուղայեցոց՝ բանալիները գետը ձգելն է նկարագրում, որին կարծես ինքն էլ մասնակցում է։ Որքան սրտառուչ և տխուր իր պարզության մեջ, կարծես ամբողջ վիշտ լինի և, իրավ, արտասուքով գրված, մի բանաստեղծության կենդանի պատկեր է։ Եվ ինչպես չմորմոքվեն, քանի որ նրանք պիտի թողնեին ամենայն բարութեամբ լի աշխարհը (եր. 150), ուր «լիութիւն և առատութիւն է», ուր են «գերեզմանատունք հարց և նախնեաց նոցա, վանորայք և ուխտատեղիք, ուր դամբարանք են սրբոց, և մանաւանդ մեծահանդէս աթոռն Սուրբ Էջմիածին, ուր կա սուրբ աջն Գրիգոր Լուսաւորչին, որով օրհնի սուրբ մեռոնն, ուստի գնացեալ սփոի յաղգս Հայոց յամենայն աշխարհ ուր և իցեն. վասն որոյ ամենայն ազգն Հայոց հնազանդին Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի և կաթողիկոսի նորա՝ որ անդ նստի... Քանզի ի վերայ սոյն և Էջմիածնի ամենայն ազգն Հայոց կանգնեալ կան»։ Եվ այդ հիշելով ուզում էին գերիները դառնալ հայրենիք։ Սակայն անհույս, դի «նոքա երթալով երթային և լային» և «ո՛չ եղև տեսանելի՝ որ ասէ, գալով եկեսցեն և ցնծասցեն» (32)։

Թե Առաքել վարդապետը ո՛րքան ճիշտ ըմբռնել է հայի ժամանակակից զգացմունքն ու տենչանքները և ոգին, և շատ գեղեցիկ կերպով արտահայտել, մեզ համար պարզ կլինի, եթե համեմատենք ժամանակակից մի ոտանավորի հետ.— «Ափսո՛ս քեզ, հայոց խզճիկ ժողովուրդ»։ Եթե Աբրահամ վարդապետի ասածը չլիներ, ոչ ոք կարող չէր ասել, թե դա Առաքել վարդապետինը չէ, նույն զգացմունքը, նույն ձևերով և նույնիսկ նույն բառերով արտահայտված։ Նույն հայրենասիրությամբ լցված, նա զայրանում է այն «անմիտների» վրա, որոնք գաղթականությունը լավ բան են համարում, որոնք «լուան ղարիպականքն Նախջուանու, թէ շահն ղղարիպականսն Թաւրիզու քշեց տարաւ ի պարսից աշխարհն։ Լաւ իմն գործ զայն ինքեանց համարեցան». և գալիս իրենք էլ շահիսեվան են դառնում, Պարսկաստան գնալու համար, «և շահն վասն

հաճելոյ զմիտս նոցա և զնոցին նման անմտացն պատրելոյ, հրամայեաց խղլաթ (պարգև) տալ նոցա», և քշել տանել, որտեղից այլևս չպիտի վերադառնային (եր. 110, գլ. ԺԹ)։

Բայց որքան ավելի մեծ սրտմտությամբ լցվում է, երբ հայերը, Պարսկաստանում աղքատացած, շահից օգնություն են ուզում և նա դրամ է փոխ տալիս, երեք տարուց հետո ետ ստանալու պայմանով, իսկ եթե չկարողանան տալ՝ կամ իրենք մահմեդական դառնան, կամ որդին ու դուստրը «թագաւորական ծառայ» դառնան։

«Այլ իբր անբան և անմիտ անասուն գոլով՝ գնացին և առին զթագաւորական գանձն, որ էր որպէս զմահարար թոյնս օձի, և պատճառ նոցին կորստեան. և ոչ եղեն մտախոհ, թէ որպէս զփուշս օձի է գանձն այն մահացուցանող։ Այլ երկոքին մելիքն իւրեանց ժողովրդովքն առին զթագաւորական գանձն, Ղարապաղ մելիքի ժողովուրդքն առին երեք հարիւր թուման, Ղրխեալան մելիքի ժողովուրդքն առին հարիւր թուման, և լաւ իմն գիւտ բարւոյ համարեցան զայն անձանց իւրեանց» (եր. 112—113)։

Կարծես թե Խորենացու, մեր այդ ամենամեծ հայրենասեր մատենագրի խոսքերն ենք լսում, որ անաչառ կերպով խարազանում է հայ ազգի քաղաքական անհեռատեսությունն ու անմտությունը. «իսկ արբշիռ, և անաղորոյն, և անիմաստ, և անասնաբարոյ ազգս Հայոց՝ ոչ ի սկիզբն խորհեցան, և ոչ ի վերջն հայեցան՝ թէ զինչ է լինելոց վերջ գործոյս այսորիկ»։ Մի գործ նրանց դեմ լարված՝ օրինավորության քողի տակ՝ նրանց դեմ կրոնական հալածանք հանելու և դեպի հոգևոր ու աղգային կորուստ տանելու։

Ժամանակի վիճակն էր այդ. կրոնի պատճառով հայ ազգը հալածվում էր, և կարելի է ասել, որ Առաքելի ամբողջ գրվածքը գրեթե մի համազգային վկայաբանություն և նահատակություն է, ինչ որ ընդհանուր ազգին է վերաբերում, բայց և մասնավոր նահատակություններով էլ լի է Առաքելի Պատմությունը (գլ. ԽԹ—ԽՀ), որոնք մի տեսակ հավելված են Առաքելի Պատմության, և կարևոր հավելված՝ ժամանակի վիճակը լավ ըմբռնելու համար (իէ—«Վասն նահատակութեան տէր Անդրէաս քահանային», որ և ամենից զեղեցիկն է, և նախնի վկայաբանությունների հետ կարող է մրցել)[3]։

Սակայն այդ վկայաբանությունց մեջ՝ մեզ պատմադիրը չի տալիս երևակայական կամ առասպելական զարդարյալ պատմություն, այլ մի իրական թշվառ աշխարհի նկարագիր, որի մեջ եթե պատմելու ձևը ժողովրդական պատմողների և մեծ մասամբ ականատեսների բերանից առած լինելով՝ ժողովրդական բնավորություն է ստացել. հիմքը իրական է։ Այստեղ մենք տեսնում ենք մոլլանների, մահմեդական սուխտաների և մուֆթիների կատաղությունը, թե ինչպես մահմեդականը քրիս-

---

3 *Մուրացանի վեպը։*

տոնեին անպատվել կարող է ամեն տեսակ, և քրիստոնյան պետք է լռե, թե չէ նահատակությունը նրա համար պատրաստ է։ Ջուր խմելիս կամ լվացվելիս աղբյուրից՝ եթե մահմեդականը գա՝ հայը պիտի հեռանա, եթե չի ուզում նահատակվել։ Նույնիսկ լամուկները կարող են նեղել հային, և հայը պետք է լռի, եթե չի ուզում նահատակվել։ Բավական է մի հայի համար սուտ ասեն, թե նա ցանկացել է մահմեդական դառնալ, և պիտի դառնա, եթե չէ ուզում նահատակվել և այն էլ ինչպես և ինչ չարչարանքներով։

Եվ Առաքելը, ինչպես յուր ժամանակակիցները, իրենց կենդանի հավատքով չէին կարող անտարբեր մնալ այդ ազգայինների բազմաթիվ նահատակությունների առաջ։

Եվ այսպիսով, վկայաբանական պատմությունը գրավել է մեր հայրերի մտքերը հնուց ի վեր, թե թարգմանությամբ և թե ինքնուրույն հեղինակությամբ, թե օտար և թե մանավանդ հայ վկաների։ Այդ տեսակի ընթերցանությունը սիրելի էր ազգին այն ժամանակ, և Առաքելը չէր կարող յուր Պատմության մեջ չառնել այդ պատմությունները, և հենց այդ պատմությունները պետք է նրա ժամանակակիցների վրա մեծ տպավորություն թողնեին, և Առաքելի Պատմությունը մի սիրելի և ժողովրդական գիրք գարձնեին, ինչպես եղել է իրոք։

Ժամանակի ոգին հերոսական էր, որը բոնի գաղթի ժամանակ ծնեցնում էր դյուցազներ և դյուցազնուհիներ. «Կանայք և տղայք և աղջկունք... իբրև տեսին զինքեանս մատնեալս ի ձեռս անիրաւ մարդադէմ գազանաց, որ վարեն զնոսա ի գերութիւն և պէս պէս աղտեղութեամբ ապականեն զսրբութիւն նոցա... պատէին զերեսս փակեղամբ և ձորձով իւրեանց և յամբաւ բարձրութենէն ի յայրէ անտի ի վայր արկանէին զինքեանս և մեռանէին» (եր. 37)։

Այսպես և բազմաթիվ քաջ նահատակներով ավելի ևս զորանում էր Ժողովրդի մեջ ազգային եկեղեցու հավատը, ջերմեռանդ փափագանոք համբուրելով «զսուրբս», նրանց մարմնի մասունքը եկեղեցիների մեջ դնելով և բոլոր բազմությամբ դիմելով սրբի թաղմանը, մի ազգային մեծ հանդես կատարելով այն տխուր ժամանակին, երբ հայը զրկված էր ամեն հանդեսից ու մի տեղ խմբվելու հնարավորությունից, թեպետև մահմեդականներն այդպիսի տխուր հանդեսներ կատարելն անգամ արգելում էին (եր. 417)։ Մինչդեռ ազգային մխիթարությունն այդպիսիների գլխին լույս է իջեցնում, չարաչար պատժում է հավատուրացներին, որ միևնույն է՝ այդուրացներին։

Այդպիսի մի պատմություն գանում ենք Խ գլխում (եր. 428), մի Ղարաչորակի վրա, որ հավատ ուրանալու վրա գոռնագաբ է լինում, եթե Առաքելն իր քրիստոնեական բարեպաշտությամբ հավատում է լույս իջնելուն, նա հավատում է և գոռնադաբությանը, որով հասարակ ժողովրդից բարձր չէ նա յուր սնոտիապաշտությամբ։ Բայց նորա սնոտիապաշտությունն ավելի լավ երևում է «Ջոհարների» մասին գրածից

(գլ. ՃԳ, ՃԴ), որ յուր պատմութեան հետ բնաւ կապ չունի, այլ կցված է.— «Կայծ, որ է եաղութ... ով որ ի հետն պահէ՝ նա ի մարդիկ ընդունելի լինի, և զարկուածի լաւ է»: «Սարդիոնն...ի հետն պահելն զարիւն կտրէ», նոյնպես մյուս գոհարների համար. «Վնասակար թունաւորք չմերձենան ի նա. սեաւ հալ... փորցաւութեան լաւ է, երկու պատերազմողի որ կողմն որ աւելակշիռ ալմասա լինի՝ այն կողմն յաղթող լինի, կինն որ ի ծնունդն զալմասա քարն ի բազուկն կապեն արձակի աստուծով»:

Արդ, այսպիսի մի մարդ, որի բոլոր գիտութիւնը միայն մի քանի կրոնական գրքեր կարդացած լինելն էր և շատ ճանապարհորդութիւնների ժամանակ յուր հարցասիրութիւնամբ ձեռք բերած ծանոթութիւնները,— չմոռանանք, որ մինչև 1662 թ. 24 դիրք էր միայն հայերեն արտված, որից 5-ը Սաղմոս, 3-ը Հիսուս որդի, 2-ը Ժամագիրք, 1-ը Տոմար, 1-ը Հարանց վարք, 1-ը Աղթարք, 1-ը Կիպրիանոս, իսկ մնացածները ուրբանյան կաթոլիկ դպրոցի կրոնական և քերականութեան ու պատմութեան գրքեր,— պետք է գրեր մի մեծ շրջանի պատմութիւն, որ շարունակութիւն էր նախորդ դարերի և որի պատմական նշանակութիւնը սպասայի համար մեծ պիտի լիներ: Այդպիսի մի անձն չէր կարող, անշուշտ, պատմական առողջ դատողութիւն ունենալ և ոչ իսկ պատմական ընդարձակ աշխարհայեցողութիւն, որ կարողանար իրողութիւնները կշռադատել իրենց պատճառներովն ու ծանրակշիռ հետևանքներով: Ուստի և նրա գրած պատմութեան մեջ նոյնիսկ շատ հրաշալի բաներ են մտնում, որոնց նույնիսկ ինքը հավատում է. օրինակ, թե ինչպես Փիլիպպոս կաթողիկոսը մի դիվահար է բժշկում աղոթքով, կամ Պողոս վարդապետի եղնիկները, որոնց կանչում է յուր մոտ (գլ. ԺԹ), կամ Պողոս վարդապետի դռնբացեքին՝ դռների ինքն իրեն բացվելը. կամ նույնիսկ մեռելին հարութիւն տալը (ԻԱ գլ., եր. 197), և նույն ինքը հավատում է այդ պատմութեանը, վասն զի «ամենևքեան արժանացեալք էին շնորհաց Սրբոյ Հոգւոյն»... և այսպիսի պատմութիւնները համարում է չարժանի լսելոյ... վասն զի Հոգին Աստուծոյ վերակացու էր նոցա»:

Այսպիսի բաների հավատով և հասկացողութեամբ Առաքել վարդապետը ոչնչով բարձր չէ ոամիկ ու տգետ ժողովրդից: Բայց և այնպես, չնայելով յուր մեծ միամտութեանը, նա լավ կերպով ըմբռնել է ժամանակի ոգին և մանավանդ Շահաբասի քաղաքականութիւնը, ձգտումներն ու նպատակը, գործ դրած խորամանկ միջոցները. մինչդեռ իր ժամանակակիցները չեն հասկացել այդ թագավորին, և նա զանազան զրույցների հերոս դարձած, նույնիսկ քրիստոնեասեր է համարվել:

«Արդ՝ որք գովեն զայս շահս թէ քրիստոնէասէր և աշխարհաշէն և խաղաղարար թագաւոր էր, այս է նորա քրիստոնէասիրութիւնն, որ զամենայն աշխարհն քրիստոնէից՝ զՀայոց և զվրաց աւերեաց. և զամենեսեան սպառեաց սրով և սովու և գերութեամբ. և զմնացեալսն վարեալ

տարաւ ի Ֆահրապատ և յԱսպահան, որ նոքա ևս օր աւուր անդէն սպառին պէս պէս կերպիւ։ Եւ ով ոք որ գովել կամի զնա, թող յառաջ հայեցեալ նկատեսցէ զարարեալ գործս նորա, զոր արար ընդ քրիստոնէից՝ և ապա գովեսցէ զնա» (եր. 100)։

Ինչպես երևում է, շատ գովողներ եղել են, խաբված նրա խորամանկ միջոցներից, որ գործ էր դնում՝ բոնի գաղթեցրած հայերի սիրտը շահելու համար։ Սակայն Առաքելը նրա հոգու բոլոր մանրամասնությանց մեջ է, կարծես մի քաղաքագետ և հոգեբան լինի։ Նա Շահաբասի հոգու խորքն ու սկիզբն է մտնում վերլուծելով. «Հանճարեղն ի խորհուրդս չարեաց (եր. 52). Հարուստն ի խորհուրդս չարեաց Շահաբաս (եր. 73). խորամանկն ի հնարս չարեաց Շահաբաս (եր. 75). կամայօժար կամարս.ն սնկելոյ արուսեկին Շահաբաս» (եր. 86)։

Նա տալիս է մեզ իրողությունների նկարագիրը, այն էլ ոչ միշտ ժամանակագրական կարգով, որովհետև ժամանակը չէ գտած, այլ խառն։ Այս ժամանակագրության մի լրացումն պետք է համարել (գլ. ԼԱ) կաթողիկոսների ժամանակագրական կարգը, ինչպես և ԾԱ և ԾԲ ղլուխները, որոնց մեջ օսմանցոց և պարսից թագավորների ժամանակագրությունն է տալիս, որքան որ կարողացել է ժողովել։ Եվ պատճառաբանական պատմություն նա գրել էլ չէր կարող, քանի որ իրողությունները հազիվ թե ժողովել է նա, այն էլ գրեթե միմիայն բերանացի աղբյուրներից (38, 63, 66, 67, 68, 70, 92, 151, 161, 162, 137, 147, 148, 149). գրավոր աղբյուրներ քիչ է գործածում (եր. 28—111)։

Նա ամենքի բերանից ժողովում է իրողությանց ճիշտ մանրամասնությունները, մեծ ծախքով և նեղությամբ, կատարելով «յոքնաշխատ և զբազմաերկ զտաժանելի գործս և՝ աւուրս յոլովս ի սմին դեգերելով և ի յոլով երկիրս և յաշխարհս շրջադայելով ի խնդիր զրուցած պատմութեան, ոչ միայն ի քրիստոնէից, այլև յայլոց ազանց հարցանելով, և ամենեցունց գասացեալսն գրելով, և վասն զստուգութեան բանին գտանելոյ, եղև զի զմի պատմութիւն տասն անգամ և աւելի կրկնելով գրեցի, և զամս ինն ի սմին դեգերելով, և զինչս ծախելով, հազիւ թէ զայսքան պատմութիւնս ի մի վայր հաւաքեցի և գրեցի, և բնաւ ոչ ոք եղև ինձ ձեռնտու» (հիշատակ.)։ «Այլ և թէպետ ի շրջագայութիւնս աշխարհաց ի բաղում տեղիս մասնաւորաբար եղև գրեալ ի սմանէ, սակայն սկիզբն սորին եղև ի բարձրագահ աթոռն, ի սուրբ էջմիածին և կատարումն ևս ի նույն տեղին»։

Առաքելի պատմության ընթացքից հենց երևում է նրա հարցասիրությունը և պատմության նյութ հավաքելու համար շրջագայելը։ Այնպես որ նրա այս վկայությանը լիովին հավատալ կարող ենք։ Նա հարցասեր է ու հիշատակարան պահող, հետաքրքիր ծանոթություն ձեռք բերելու և պատմելու։ Սակայն, դժբախտաբար, նա պատմության ամբողջությունը ևս սկսում է շարադրել հենց այդ 1615—1662 թթ. ընթացքում, երբ ծանոթությունների մեծ մասը ձեռք է բերում շրջելով, առանց

ժամանակ ունենալու նախ ծանոթությունները դասակարգելու և խմբա գրելու։ Եվ թեպետ նա արագության ետևից է ընկած, բայց նա խիստ զգայուն է հայ աղգի և եկեղեցու շահերին, սրտով ու հոգով հայ լինե. լով, խիստ հաճախ ցույց է տալիս յուր ատելությունը առ ամենը, ինչ որ կորստաբեր է համարում հայ ազգին և եկեղեցուն։

Բայց և այնպես նրա պատմությունը, մյուս կողմից, ցոլացնում է այն մարդոց կրքերը, որոնք իբրև գործիչ կամ ականատես՝ տեղեկություն են տվել նրան, թեպետև նա ստուգության համար տասն անգամ փոփոխության է ենթարկում յուր պատմությունը։ Սրա հետևանքն էլ այն է լինում, որ արտաքին ձևի մեջ անխուսափելի կրկնություններ և ավելորդաբանություններ շատ է անում (եր. 152)։

Սակայն այդ ամենը ավելի նրանից են առաջանում, որ նա յուր աղբյուրները իսկապես չէ կարողանում մշակել, այլ, կարելի է ասել, զանազան մարդկանցից ինչպես լսել է, այնպես էլ շարել է։ Այնպես որ Առաքելի պատմությունը կարելի է համարել զանազան զրույցների անմշակ ժողովածու, որոնք ծերերի բերանին շատ անգամ պատմվել են, և ինքը գուցե ուրիշներին, և պատմվելով արդեն մի որոշ ձև ու կերպարանք են ստացել։ Օրինակ՝ մի պատմող կլիներ Այրարատի քշելու մասին, մյուսը Ջուղայի քշելու մասին։ Նա եր. 33 Այրարատի քշելու պատմությունը վերջացնում է Սպահանում տեղավորելով, և եր. 33 նորից սկսում է Գառնվո քշելը—«դարձեալ դարձցուք...», որովհետև այդ պատմությունը ուրիշից է լսել։ Եր. 40 նորից դառնում է Ջղալօղլուն, եր. 41 նորից ջուղայեցոց քշելուն։

Այդպիսի մի-մի անկախ զրույցներ են և բազմաթիվ նահատակությունները և Ջալալիների մասին պատմածները (Ջորակ, Սուլեյման-բեկ և այլն) և վկայաբանություններն ու Շահաբասի մասին պատմածները և առհասարակ գրեթե բոլոր պատմությունները։

Այսպիսի դեպքերում, անշուշտ, կարելի չէ խոսել Առաքել պատմագրի գրվածքի գեղարվեստականության մասին, գրական արժեքի մասին։ Նրա ոճը միայն կենդանի է, որովհետև զգացմունքով գրված է, և որովհետև ժողովրդի բերնից է առնում անմիջապես և բարեբախտաբար լեզուն շատ չէ փոփոխում։ Այսպիսի ժողովրդական հերոսների կենդանի պատմություն է պիղծ Ջոմարի սատակումը։

Առաքելը մատենագիր չէ, բայց նա չուներ նույնիսկ մատենագիր լինելու պատրաստություն, որ կարողանար մի միություն մտցնելով յուր գրածի մեջ, մատենագրական մի երկ տալ մեզ, որի մեջ իրողությունները, մի կենտրոնի շուրջ խմբված, պատկերանային բանաստեղծական կենդանությամբ։

Սակայն և այնպես, նրա պատմության բուն մասը, իրերի բնական ընթացքով, երկու բանի շուրջ է պտտում.

ա) Հայաստանի (մասամբ և Վրաստանի) ավերումը և անկումը Շահաբասի և օսմանցոց ձեռով (գլ. Ա.)։

բ) Վերածնության սկիզբը Հայաստանում նույն միջոցներին Առաքել կաթողիկոսի մահից (1586—1662), երկու սերնդի վարդապետների միջև եղած կռիվներով, մինչև Մովսես կաթողիկոսի օրով նոր սերունդը հաղթում է և վերանորոգության է սկսում Մովսեսի և Փիլիպպոսի օրով, մինչդեռ հին սերունդը ի դեմս՝ Դավթի, Մելքիսեթի, Սահակի ավերմունքներ է գործում: Առաքելի համակրությունը, հարկավ, նոր սերընդի կողմն է, որի համար և յուր պատմությունը գրում է: Ինքն էլ դոցանից մեկն է: Շարունակ դովում է նոր սերունդը, իսկ հինը՝ պախարակում:

Բուն պատմությունը վերջանում է ԻԶ գլխում, Փիլիպպոսի մահով և վանքերի շինությամբ (վերջին թիվը հիշված է ՌՃԸ=1658):

Այնուհետև եկած գլուխները արդեն իբրև հավելվածներ պետք է համարել: Եվ ապա վկայաբանական և յուղկահարների պատմություն, ինչպես և մի քանի տարեգրական տեղեկություններ: ԽԴ գլուխը «Պատմութիւն Աղուանից աշխարհին արարեալ Մարեցի Յովհաննու վարդապետին»: Այդ հավելվածներից մի քանիսը շատ ուշ ավելցրած է, ինչպես հրեից Սաբեթար պատմությունը, որ միայն Ավետիք երիցու գրչագրի մեջ կա:

2. Զաքարիա Սարկավագ[4]**:**— *Ծնված Քանաքեռում ՌՃԼԶ (1136+551=1687—60=1627) թվին, ինչպես ինքը հիշում է (Գ. Հատոր, եր. 2), 1687 թվին 60 տարեկան է եղել:*

Զաքարիա Սարկավագն իր գրության եղանակով Առաքել վարդապետի աշակերտն ու հետևողն է, թեպետև յուր գրաբար լեզվով Առաքելից բարձր է շատ անգամ, բայց իբրև պատմագիր ստոր է կանգնած Առաքելից: Ճշմարիտ է, Առաքելը ևս շատ անգամ բավական միամիտ է, բայց նա քիչ ու շատ էլի ճաշակ ունի, կարողանում է նյութերի մեջ ընտրություն անել, դատել և պատճառներն ու հետևանքները վերլուծել և փոքր ինչ դասավորել նյութը: Մինչդեռ Զաքարիան, այդ ժամանակի կրթված ու շատ ճանապարհորդած եկեղեցականը կատարյալ պարզամիտ է մի լեռան հովվի, մի ուղտապանի չափ: Խիստ նեղ հայացքով, գրեթե ամեն բանի, որ լսել է, հավատում է:

Բավական չէ նրա գրածների մեջ նահատակների վրա լույս իջնելը, դևերի՝ մարդկանց գլխին կատարած գործերը ճշմարիտ պատմություններ են համարվում, մի բան, որին հավատում էին բոլոր ժամանակակիցները, այլև այնպիսի զրույցներ ու ժողովրդական սնոտիապաշտություններ է բերում Զաքարիան իբրև պատմական իրողություններ, որոնք նույնիսկ մի ժամանակում կազմված չեն, այլ դարեր շարունակ ապրում են ժողովրդի մեջ: Եվ Զաքարիան, այդ զարգացած, ճանապարհորդած գրագետը հավատում է այդ ամենին: Պետք է երևակայել, ուրեմն, թե Զաքարիայից ստոր կրթությամբ մարդիկ՝ եկեղեցականներ

---

4 Զաքարիա Սարկավագ, *Պատմագրութիւն*, Ա. Բ. Գ. *հատ.*, *Վաղարշապատ*, *1870:*

ինչերին կարող էին հավատալ այն ժամանակ,— էլ չենք ասում Թանձր խավար մարդիկ։

Նա յուր վաթսունամյա հասակում, ՌՃԼՉ=1687 թվին, ժամանակի Հովհաննավանքի առաջնորդից, «ի Սարգիս վարդապետէ խոհեմայ և բանասիրէ» հարկադրված սկսում է գրել կամ անել «Կոնդակ սուրբ ուխտին Յովհաննու վանից», որ և նույն 1687 թվին ավարտում է։ «Յամենայն օր դեղերէի,— գրում է Զաքարիա,— թէ ընդէր ոչ գոյ հաստատուն կոնդակ վանացս, որ ամենայն արձանք որմոցն գրեալ լինի ի նմա, և վարանէի միշտ առ այն»։ Զաքարիան միշտ մտածում է այդ անել, բայց ձեռնահաս չի լինում, որովհետև յուր առաջին տերերը Զաքարիա և Հովհաննես վանահայրերը նրան մարմնավոր գործերով են զբաղեցնում։ Սարգիս վանահայրը դրդում է նրան այդ անելու՝ լինելով բանասեր։

Եվ նա գրում է Հովհաննավանքի կոնդակը կամ պատմությունը, «Թէ ի պատմագրաց, թէ ի յիշատակարանաց, թէ ի յարձանաց և թէ ի լրոյ իմաստուն արանց և ի գիտուն ծերոյ»։

Եվ Զաքարիան, հավատարիմ յուր ծրագրին, նախ համառոտաբար խոսում է, թե ընդհանրապես ե՞րբ են հայոց մեջ վանքեր շատ շինվել և թե հատկապես ե՞րբ է շինվել Հովհաննու վանքը, որի հնությունը մինչև լուսավորիչ է հասցնում։ Այնուհետև խոսում է այդ վանքի թեմի և վիճակի մասին, թե ե՞րբ է այդ վանքը նորոգվել և ծաղկել։

Յուր գրության և ապացուցման եղանակով հետևում է Առաքելի Ք. գլխին— «Պատմութիւն վասն սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչի աջոյն»։ Բայց մի բանի վրա հատուկ ուշադրություն է դարձնում Զաքարիան. բացի մատենագիրներից ու գրքերի հիշատակարաններից՝ օգտվում է և արձանագրություններից, նա ընդօրինակում է պատերի վրա եղած արձանագրությունները և մանրամասն ճշտություն մտցնում յուր կոնդակի մեջ, որով Զաքարիան հանդիսանում է մեր հնագրական արձանագրական թանկագին հիշատակարանները ժողովողների նախահայրը։ Մի բան, որ շատ կարևոր է։

Այնուհետև աշխատում է Հովհաննավանքի առաջնորդների անունը, որքան որ կարողացել է ձեռք բերել՝ հիշատակել ժամանակագրական կարգով, հիշելով միանգամայն և յուր աղբյուրները։ Առանձնապես կանգ է առնում յուր ժամանակի երեք նշանավոր առաջնորդների վրա՝ Զաքարիա Վաղարշապատցի (ՌՃԶ=1637—1659—ՌՃՀ), Հովհաննես Կարբեցի (1659—1679—ՌՃԻՀ) և Սարգիս Կարբեցի, որի ժամանակ և գրում է Կոնդակը։ Վերջացնում է Կոնդակը՝ տեղեկություն տալով նույն վանքի ս. Հովհաննու մասունքի մասին, որի համար ժողովում են այնտեղ ամենայն ուրուկք և գոթիք։ Եվ թե ինչպես Մողնու վանքն է շինվում և մասունքն այնտեղ փոխադրվում։ Վերջին գլուխներում յուր նախորդների պատմությունն է անում։ Այս գրվածքը հնագրական-պատմական կարևոր տեղեկություններ ունի, և արժեքը միայն այդ տեղեկությունների մեջ է։

Երևի Զաքարիայի այս Կոնդակը հավանություն է գտնում, և նրան մի քանի բանասերներ հորդորում են պատմություն էլ գրելու։

Պատմությունը երկու հատոր է։

Զաքարիայի Պատմությունն իսկապես պատմություն չէ, սուտ ու ճշմարիտ, առասպել ու իրողություն վայրիվերո, խառնիխուռն ժողովված են մի տեղ՝ առանց որոշ դասավորության, առանց որևէ կարգի։ Ժամանակագրական ճշտություն, իհարկե, պահանջել կարելի չէ մի պարզամիտ մարդուց, որ պարզ սուտը ճշմարտից ջոկել չի կարողանում և առօրյա չնչին, մանր ու մունր դեպքերը իբրև կարևոր պատմական եղելություն՝ արձանագրում է։

Զաքարիայի Պատմության երկու հատորները մեկմեկուց բոլորովին տարբեր արժեք ունին։ Առաջին մասը, սակավ բացառությամբ, որ առնված է հիշատակարաններից և Առաքել պատմագրից կամ ականատեսից է լսած (Ա. ԺԶ, եր. 28)՝ իբրև պատմական երկ, արժեք չունի, որովհետև զուտ ժողովրդական զրույցներից և երգերից է առնված, որոնց հիմքը, սակայն, անշուշտ պատմական է։ Առաջին հատորը, իսկապես, մի ժողովրդական բանաստեղծության ժողովածու պիտի համարել և ոչ պատմագրություն, որով և Զաքարիան, այս միամիտ մարդը, անգիտակցորեն, իր պարզամտության պատճառով, հանդիսացել է հայոց ֆոլկլորի—ժողովրդագիտության առաջին հավաքողը խորենացուց հետո, բայց և խորենացուց սվելի հարուստ ու հարազատ կերպով, քանի որ նա, հավատացած լինելով թե պատմություն է տալիս, մեղ ժողովրդական անգիր բանահյուսության օրինակներ է տալիս և կամ բովանդակությունը, առանց փոփոխելու և հետաքրքիր մանրամասնություններով, որով նա հանդիսանում է իբրև ժողովրդական գրող, որի գրվածի մեջ մնում են ժողովրդական պարզությունը, կոպիտ, բայց թարմ կյանքը։

15 և 16 ու 17-րդ դարը մի դյուցազնական շրջան է. 15-րդ դարում, Լանկթամուրի արշավանքից հետո նոր ազգեր և պետություններ էին կազմակերպվում, մի կողմից օսմանյան պետությունը և ազգը, մյուս կողմից քրդերն էին ձգտում պետություն կազմելու (Դարա Յուսուֆ Սաունում, Իսկենդար, Ջհան շահ), մյուս կողմից թաթարների հին պետությունը կործանվել էր և Լանկթամուրի հաջորդ Շահրուխի ձեռով նոր պետություն պիտի կազմվեր և, վերջապես, Միջագետքում Ջհանգիր թուրքմենների իշխանապետությունը։ Մինչև որ Ջհանշահի մահից հետո Ուզուն Հասան, այս Ջհանգիրի որդին բարձրանում է պարսից գահը և Հայաստանի միահեծան տերը դառնում (1468 թ.)։ Բայց նույն ժամանակ օսմանցիք Կ. Պոլիսն առնում են և կազմակերպվում, և սկսվում է երկու նոր կազմակերպված պետությունների մեջ երկուս ու կես դար շարունակ կռիվ։ Ուզուն Հասանը հաղթում է (1473)։ Ուզուն Հասանից հետո խռովություն է ընկնում, և Շահ Իսմայիլ Սեֆյան իշխանը հակառակորդներին ընկճելով՝ Թավրիզում հաստատում է յուր գահը։ Հետո Թահմազ որդին, Խուտաբանդ, Շահաբաս։

Այսպես նորոգվում է Սեֆյան ցեղով պարսից պետությունը և հաղթական կերպով մեծ պատերազմներ է մղում օսմանցոց դեմ, դյուցազնական կռիվ, և շատ բնական է, որ ինչպես պարսից բոլոր հարստությանց սկզբնավորության մասին, նույնպես և այս հարստության մասին կազմվում են շատ զրույցներ և երգեր, որոնցից է և Շահ Իսմայիլի և ապա Շահ Թահմազ Խուտաբանդի, Շահաբասի և Շահսեֆիի մասին։ Ահա այդ զրույցներն ու երգերն են և Զաքարիայի պատմության նյութը կազմում։

Սակայն եթե այդ զրույցները պատմություն չեն, նոցա հիմքը պատմական է և նոցա մեջ շատ գեղեցիկ երևում են ժամանակակից կյանքը, բնավորություններ և դեպքեր, կենցաղական գծեր, որոնք հետաքրքիր են, որովհետև Զաքարիան անպաճույճ, բայց բնական ու կենդանի է հանում, և այս տեսակետից Զաքարիայի պատմության այդ զրույցների մասը լրացուցիչ է յուր ժամանակի բուն պատմությանը։

Այդ զրույցների կամ անեկդոտների, ինչ որ հայոց է վերաբերում, կենտրոնը կազմում է Շահաբասը։

Այսպիսի պարզամիտ մարդը բնականորեն ոչ միայն ինչ որ Շահաբասի վրա պատմվում է՝ պիտի բերեր իբրև Շահաբասի պատմություն, այլև ուրիշ շատ առասպելներ և սնոտիապաշտություններ և այնպիսի նկարագիրներ, որոնք պատմության հետ բնավ կապ չունին[5]։

Ինչպես որ լսել է կամ տեսել և իրեն կարևոր է թվացել, առել է յուր Պատմության մեջ. երկրաշարժ, արեգակի խավարում, սով, մարախ, երկնային օդերևույթներ, հետաքրքիր զրույցներ, առասպելաղարդ պատմություններ, որոնք իրողության վրա հիմնված թե զուտ առասպելական՝ բոլորը կարևոր բաներ են Զաքարիայի աչքին, այն պատճառով, որ քննադատության կատարյալ բացակայություն է։

Զաքարիայի պատմությունը, առաջին հատորի վերջում և Բ. հատորի մեջ ներկայանում է, այսպիսով, իբրև մեծ պատկեր, որի հիմքը պատմական է, հիշատակարաններից քաղած և կամ անձամբ տեսած, իսկ այդ հիմքի վրա շարված են առասպելները և զրույցները, ականատեսի նկարագրությունների հետ միասին խառն։ Եվ այդ իսկ պատճառով թե ինչով

---

5 Օրինակ՝ Բ. գլ, ՃԳ., եր. 108—«Վասն միւս նշանին երկնից», որ վիշապ հանելու պատմությունն է։ Կամ Բ. գլ. եր. 55—«Վասն դևին կերպարանեալ կին», նույնը և Գանձակեցու մեջ, որ և Մխիթ. Այրիվանեցին իբրև նշանավոր դեպք առնում է ժամանակագրության մեջ, մարդկանց հետ հարաբերության մեջ մտնող պարիկի հայտնի առասպելն է։ Նույնպես Բ., լ., եր. 31—«Վասն սրտապատառ առն», «որ ի միում ժամու տասն գոյնս փոխեաց», կամ ավելորդաբանություններ ու դասարկախոսություններ, ինչպես Բ., լՀ., եր. 53—«Պատմուճիւն միւս վիշապին», և հաջորդ գլուխը «Վասն օձաձար առն», որպեսզի եզրակացնե. «ամօթ այնոցիկ որ ասեն, ընդէ՞ր ստեղծան այդպիսի անարդ կենդանիք»։ Բ., է., եր. 12,—«Պատմութիւն կռապաշտ առն», որ պատժվում է աստծո անունը չտալու համար։ Այդպես և պատմության մեջ առնում է իբրև տարեգիր, Բ., լԶ., եր. 63—«Վասն իշանելոյն լուսոյն երկնից», կամ. Բ., ՃԳ., եր. 108—«Վասն նշանացն երկնից» երկրաշարժից առաջ։

էր զբաղվում յուր ժամանակի հայ և պարսիկ մարդու միտքը, հայ ժողովրդի մտավոր կյանքն ու աշխարհայեցողությունը, բարքերը, նիստն ու կացը, սովորությունները, սնոտիապաշտությունները, հավատալիքը՝ ավելի ևս պարզ են երևում այդ գրվածքի մեջ, քան մեր որևէ ուրիշ պատմական կարևոր երկի մեջ։ Առաջին անգամ մենք այստեղ ենք տեսնում հայ գյուղը, այն էլ գլխավորապես Արարատյան երկրի, Քանաքեռը, որը Զաքարիայի ծննդավայրն է, մի գյուղ, որ հետո տաղանդով պիտի նկարագրեր Աբովյանը։

Այստեղ մենք տեսնում ենք, թե ինչպես նենգությամբ են վարվում իրար հետ պարսիկները և օսմանցիք։ Շահը տիրում է Երևանի բերդին և հրաման է տալիս օսմանցի բերդապահներին՝ ուր ուզում են երթան. «Եւ նոքա առին զգէշն Մուրթուզայ փաշային, և ելին ի գնալ։ Իբրև գնացին կէս աւուր ճանապարհ, նենգաւոր ազգն Պարսից գնացին զկնի նոցա, և կոտորեցին զնոսա, և յափշտակեցին զինչսն» (Բ., Ձ., եր. 12)։ Նույն հայացքը պարսից վրա, ինչ որ Առաքելն ունի, որ այսպիսի դեպքեր նույնպես բերում է։ Կամ ինչպես պարսիկ ծառայողը դավաճանում է յուր ազգին և օսմանցոց հրավիրում՝ խոստանալով Երևանը նոցա տալ (Բ., Գ., եր. 5)։ Կամ ինչպես պարսիկ խանը Մաղասբերդի սուլթանին, որ պարսից գերիշխանության տակ էր, խղճալու տեղ, տիկ է հանում և շահին ուղարկում,—բավական չէր, որ նրա բացակայության ժամանակ նրա բերդն օսմանցիք առել էին և նրա որդուն սպանել և կինն էլ իրեն դահավեժ արել։ Բայց պարսիկն երևում է և յուր լավ հատկությամբ. Թահմազ ղուլի բեկը, պատվի զգացմամբ լցված՝ սպանում է գերության մեջ այդ դավաճան Մուրադ բեկին և խոնթկարն ասում է—«Բարւոք արար, զի ծառայն իր սպան» (Բ., Դ., եր. 7 և հտն.)։

Այստեղ մենք տեսնում ենք թե՛ հայոց և թե՛ մահմեդականների մեջ տիկ հանելը, կոպիտ բարքեր հայ գյուղացոց մեջ, որոնք իրենց գլխին մահմեդականներից եկած խստությունն ու գազանաբարոյությունը իրենց համագյուղացիների վրա են գործադրում՝ գազանաբար պատժելով հասարակաց ստացվածքը գողացող տանուտերին (Բ., Բ., եր. 1 և հտն.), և մեր սարկավագը կարծես համակրում է. «և աստ տե՛ս դու զչարչարանս նորա» (Բ., եր. 4), «տեսէք և այժմ լուարուք», ասում է ոգևորությամբ։

Մարդկանց սրտերն ամբողջապես քարացած են, և միայն նյութական շահի ետևից են ընկած, անիրավությունը, սպանությունը նրանց համար սովորական երևույթ է։ Եվ այդ բոլոր ապօրինություններն ու արատները Զաքարիան մեր աչքի առաջ է դնում և մեզ համար շոշափելի դարձնում, մեզ ցույց է տալիս դրանք գործողության մեջ և զանազան մասնավոր անցքեր պատմելով։ Կենդանի արտահայտիչ պատկերներ, բայց և մեծ մասամբ զզվելի ու քստմնելի։

Եվ այդ բրտությունը, կոպտությունը նույնիսկ մտնում է Զաքարիայի պատմության մեջ, նրա ոճի մեջ, քանի որ մի լուսանկար է անում նա։ Կոպիտ խոսվածք, լեզու, նկարագրություն ու մտածմունք։ Խաները մի-մի

բոնակալներ են, ինչպես և ամեն զորեղ. նրանց ձեռին է սպանել ու նե-րել ամենքին։ Ոչ միայն շահը խիստ պատժել գիտե, այլև նույնիսկ յուր զվարճության համար տանջել ժողովրդին։

3. Աբրահամ կաթողիկոս Կրետացի[6]։—Մննդյան և կրթության մասին ոչինչ հայտնի չէ։ Ծնված է Կրետեի Կանդիա քաղաքում։ Քսան և հինգ տարի առաջնորդ եղած Թեքիրտաղի (Ռոդոսթո), կամ ինչպես ինքն է գրում՝ Թրակիո քաղաքին, ուստի և երբեմն Աբրահամ Թեքիրտաղցի է կոչվում։ 1734 թ., հայոց ՌՃՁԴ, կաթողիկոս է դառնում (ուխտի եկած լի-նելով էջմիածին) և մեռնում է 1736 թ.։ Սիմեոն կաթողիկոսի «Ջամբռում» խիստ գովասանքով է խոսվում Աբրահամ կաթողիկոսի մասին, թե «էր ահարկու և շքեղատես, մեծանձն և խելօք, ճարտարալեզու և հանճարեղ»։ Այս պատճառով և սիրելի է լինում Պարսից Նադր Շահին, որ Աբրահամ կաթողիկոսին «յինքն պահէր և շատ խորհուրդ և առնելիս իւր ընդ սմա տնօրինէր և հարցանէր»։ Նույն «Ջամբռը» սրա համար ասում է. «քան զամենեսին առաւել արար զբարերարութիւնս և զօգուտս սրբոյ Աթոռոյս և ազգիս և բոլոր երկրիս մերոյ։ Նադր Շահ կոչեցեալն այնքան էր ահեղ և զարհուրելի, մինչ քարինքս հալէին յահէն և յանուանէն։ Սակայն ողոր-մածըն աստուած այնքա՛ն քաղցրացոյց յաչս նորա զսրբազան Հայրա-պետս մեր, որպէս զՅովսէփ առ Փարաւոն և զԵսթեր առ Արտաշէս, որոյ բան և խնդիր մի ոչ անկանէր յերկիր առաջի այնպիսոյ բռնաւորին»։

Աբրահամ կաթողիկոսի Պատմագրությունից հենց այդ ևս երևում է, ինչ որ «Ջամբռը» նրա համար գովեստով գրում է։

Այդ պատմությունն իսկապես պատմություն չէ, այլ անձնական հի-շատակարան (memoires), և իբրև այդպիսին՝ մեր պատմության մեջ մի առանձին տեղ է բռնում և, կարելի է ասել, եզակի է իր տեսակի մեջ, քա-նի որ մեզանում պատմական հիշատակարաններ շատ չկան։ Աբրահամն այն է մանրամասն արձանագրում, ինչ որ ինքն արել ու գործել է, կամ մտածել է։ Շատ քիչ բան՝ ուրիշներից լսած։ Հենց այդ պատճառով ևս Աբրահամի հիշատակարանը շատ հետաքրքիր է, նա ուրիշներին նկարա-գրելով հանդերձ՝ դարձյալ ավելի ինքն իրեն է նկարագրում, յուր ճաշակը, հասկացողությունները, առաքինությունն ու արիությունը, բայց նա ինքն իրեն նկարագրելով՝ նկարագրում է միանգամայն և ժամանակի ըն-տիր հայ եկեղեցականներին, որոնց լավագույն օրինակներից մեկն էլ ինքն է։

Այստեղ մենք տեսնում ենք, ամենից առաջ, թե ինչպես մի գաղթա-կան հայ մարդ մանկությունից բարեպաշտական կարոտություն ունի սուրբ աթոռները տեսնելու, մանավանդ «վասն Հայաստան երկրի վան-օրէից և ուխտատեղեաց»։ Եպիսկոպոսը թողնում է յուր Թրակիո վիճակը (ՌՃԿՀ=1719 թ.) տասներորդ տարում առաջնորդության և գնում է Երու-

---

6 Աբրահամ կաթողիկոս Կրետացի, *Պատմագրութիւն անցից իւրոց և նադր շահին պարսից*, Վաղարշապատ, 1870։

սաղեմ ուխտ, իսկ ապա, 15 տարի հետո, ճանապարհ է ընկնում, հարյուր օր ճանապարհորդելով՝ հասնում է ս. էջմիածին, երկրպագում է սուրբ տեղերին։ Ապա ցանկանում է Տարոնի ս. Կարապետ ուխտ գնալ, վեհը չի թողնում և նա լսում է։ Բայց և այնպես՝ փափագանոք ուխտ է անում Արագածի ստորոտների վանքերին։ Եվ թեպետ՝ «տկարացեալ անձամբ», բայց գնում է Արարատի մյուս վանքերն էլ ուխտ՝ «այնու մտօք և հաւատով, զի բուժիցիմ ի չարաչար տենդէ ցաւոյս». Խոր Վիրապ, Ակոռու մոտ՝ Մասիսի ս. Հակոբա աղբյուրը, Հավուց թառ, Աղջոց վանք, ս. Գեղարդ, Գետարգել։—Մյուս վանքերն այլևս չէ կարողանում շարունակել այցելել, զի վեհը մի քանի պատճառներով յուր մոտ է կանչում։

Գալուստին իսկույն ներկայացնում են Աբրահամ վեհապետին՝ սրբազան կաթողիկոսին, «որ էր նստեալ ի պարտէզն՝ ի ներքոյ մեծի այւանին»։ Կաթողիկոսը սիրով ընդունում է, «զի սաստիկ սէրն որ արծարծեալ էր ի սրտի մերում Ի. ամէ ի վեր բոցափայլեալ յայտնի երևիր», գրում է պարզապես Աբրահամ։ Նա ամենայն ակնածությամբ է վերաբերվում Աբրահամ կաթողիկոսին, որ չի թողնում մեր Կրետացուն իրենից հեռանալ, «որքան պաղատեցի և աղաչեցի, չեղև հնար. և ոչ ետ թոյլ և հրաման, այլ ասաց, եթէ Տէր կամեսցի, ի գալ ամի և ես կամիմ գնալ ի Տարոն... Կա՛ց առ իս աստէն և ի միասին գնասցուք և անդ կատարեա զուխտ քո»։... «Եւ ես խոստացայ մնալ մինչև ցայգեկութեն, և ապա չուել. որ և ծիծաղեցաւ երանելին և ասաց բարի է, այնպէս եղիցի»։

Կաթողիկոսի հետ ուխտի է գնում Հովհաննավանք, որի առաջնորդ Հակոբ վարդապետը գալիս հրավիրում է «զվեհն վասն օծման ս. խորանին», ապա Սաղմոսավանք և մյուս սրբատեղիքն ուխտ անում։ Այստեղ սիրուն նկարագրում է կաթողիկոսի հետաքրքրությունը, և թե ինչպես «նրբահայեաց» է նա և «ցաւեցող վասն ամենեցուն», և ասպնջականներին ձանձրություն չտալու համար աճապարում է ս. Աթոռը, մանավանդ որ ժամանակը խառնակ էր և Թահմազ խանի արշավանքի զրույցները պտըտվում և հասնում են վեհի ականջին։ Կաթողիկոսը շտապում է, որ հոգա «զհոգս ամենեցուն և զի այսպէս բնաւորեալ է»... (եր. 4 և հետ.)։

Շատ ճիշտ բնութագրում է Աբրահամը մեր սևագլուխներին՝ տգետ և ապերախտ, ոչ մի բանի հոգ տանել և ոչ ցավել, յուրաքանչյուրն իր հանգըստությունը, բարեկեցությունը որոնող և դրա համար ջանացող և այն ապահովող, հասարակաց բոլոր հոգսը, «զամենայն ցաւս ընկենուլ ի վերայ գլխոյն», «պաշտիչ ուրուականին իւրոյ», կեղծավոր ու շողոքորթ մեծավորի առաջ՝ այն էլ յուր օգտի և բարեկեցության համար, իսկ մեծավորի մեռնելուց հետո՝ երբ այլևս շահ չունին, եպերել և հեգնել «որպէս ի բնուստ անտի ունին զայն ազգն մեր, որոյ զոպատճառն՝ ոչ այլ ինչ գիտեմ, եթէ ոչ զտգիտութիւն և զապերախտութիւն»։ Ինչո՞վ է տարբերվում այս բնութագիրը այժմյան վիճակից։ Մի՞թե Աբրահամ կաթողիկոսն յուր ժամանակի մարդկանց լավ չի ճանաչում և որքա՜ն զեղեցիկ նկարագրում է նրանց. սուր, կտրուկ, չոր, բայց այրող։

Մի՞թե այսպիսի մարդկանց մեջ կաթողիկոսն իրավունք չուներ ասելու Աբրահամին, «զքեզ ինձ աստուած առաքեաց տեսանելով զխեղճութիւնս իմ... լե՛ր ինձ խորհրդակից, ցաւակից և կարեկից»... Մի կաթողիկոս, որի «սիրտը կարի նեղացեալ է, զի ի հեռուն հետէ ի դուրս չեմ ելեալ», և որի վրա է ս. Աթոռի ամբողջ հոգսը, որ թեպետև նույն բարեպաշտական փափագն ուներ մի քանի մերձակա վանքեր ուխտի գնալու, «բայց ցաւն ժամանակիս և զբաղմունքն ոչ եւտուն թոյլ» (եր. 5)։

«Եղանակն և տարին ծանր էր և յօդն ապականեալ», շատերը հիվանդանում և մեռնում են, հիվանդանում է և վեհը, և մեր Աբրահամը տառապում և վատանում է (եր. 7) և չի ուզում հեռանալ կաթողիկոսի մոտից, թեպետև «երանելին» երեք-չորս անգամ ասում է, «գնա՛ հանգստացիր, խեղճ ես, և ի ճանապարհէ եկեալ դադրած ես», և եպիսկոպոսը գնում է միայն մտածելով, թե մի՛ գուցե հիվանդը նեղանա կամ տրտմի յուր չգնալու համար. այնուհետև ևս «զմահճովն նստելով՝ վարանէաք, և ընդ միմեանս հայելով լռելեայն տրտմեալ երեսօք տարակուսէաք»։ Մինչև որ երանելին յուր օրհնութիւնը տալով «աջ ձեռն ի մէջ ձեռացս հեշտ և հանգիստ աւանդեաց զմաքուր հոգին իւր ի ձեռն հրեշտակի բարւոյ, ա՛յնպէս. որպէս թէ ոք հանցէ խնձոր մի ի ծոցոյ և տացէ բարեկամին կամ սիրելոյ իւրոյ»։

Եվ այդ այն ժամանակ, երբ այգը կատարելուց հետո Նադիր խանի արշավանքի ահից Երևանի հայ բնակիչներից կանայք ու մարդիկ փախըստյա գալիս են էջմիածին։

Այս ծանր տարին ոչ ոք չի ուզում, երևի, կաթողիկոս լինել։ Ամենքը Աբրահամին են մատնացույց անում, որ հրաժարվում է՝ ասելով «թէ չեմ բաւական այդմ գործոյ... մանաւանդ ղարիպ և օտար եմ»։ Ջոռով քարշում տանում են Երևանի փաշայի մոտ. Աբրահամը լալիս ողբում է, չի ուզում կաթողիկոսությունը, որովհետև ընտրություն պիտի լիներ և Սպահանի ու Ստամպոլի քաղաքացիք պիտի ընտրեն—«Ապա թէ ոչ՝ Սուրբ Աթոռին և կաթողիկոս նստողին մեծ վնաս կլինի» (9)։ Բայց փաշան առարկում է, «եթէ Սպահան և Ստամպօլ մինչև երեւելութիւն գրերաց լինի և ընտրութիւն վասն ումեմն, ի մէկ տարին չլինիր, և ահա երկուց կողմանց զօրք և պատերազմունք երևին, և էջմիածին ի վերայ ճանապարհին է, մինչև ցայն օրն վանքն պիտի քակուի, և միաբանքն անգլուխ գոլով մինն ոչ մնայ, այլ ցրուին. այնուհետև ի՞նչ օգուտ է ձեր ընտրութիւնն»։ Ահա հատողող պատասխան։

Ժողովվում են շրջակա իշխաններն ու եպիսկոպոսները և նրան ղոռով դնում են «ի ծառայութիւն և ի ներքոյ լծոյ սուրբ էջմիածնի և Աթոռոյն մեծի սուրբ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի»։

Եւ մեծ հոգացողության մեջ է նորընտիր կաթողիկոսը, անծանոթ երկրին, մարդկանց ու միաբաններին, ել ու մուտքին և արարողության։ Եվ, որ գլխավորն է, ամենևին փող չկա, իսկ վանքի ծախքը մեծ և անթիվ։ Բայց որ գլխավորն է՝ Ղարսում ջարդում է Նադիր շահն օսմանցոց, և եկել

է Արարատի կողմը։ Կաթողիկոսին Մելիքջան քալանթարն իմացնում է, որ պիտի ելնել Նադիր խանի առաջ ընծաներով։ Նադիր խանը սիրով ընդունում է, երեք օր յուր մոտ պահում։

Եվ Մայր Աթոռի ու եկեղեցու օգուտը խորհող կաթողիկոսն օգտվելով հաջող հանգամանքից, ոչ միայն յուր կաթողիկոսական հրովարտակն է առնում, այլև ուրիշ երեքը էջմիածնի պահանջները թողնելու, և «զի թուրքացողքն և հայրենեացն զրկեսցին, և մի՛ ոք գայցէ ի վանքս, և նեղացուսցէ առանց հրամանաց խանին»։ «Յորմէ և ես վստահացեալ հրաւիրեցի զնա գալ ի վանքն թամաշայ և զիարաթ»։ Եվ նա գալիս է ու բանակում գեղի մոտ անդում. «զցորեանն և զգարին իսպառ կերցուցին երիվարացն և արաթուր կոխեցին, զի ժամանակ էր հնձոց. և զի ևս էր հնձեալ», գանգատվում է կաթողիկոսը, եկած օրը կաթողիկոսը խանին ընդառաջ չի գնում, որովհետև «այլք... խելացնորեալք ոչ ուսուցին զիս զծէսս պարսից և զսովորութիւնն երկրին»։

Սարսափում է ծերունի կաթողիկոսը. «ահիւ պակեայ, և ի կենցաղս յուսահատեցայ, և սկսայ այնուհետև զյետին և զհրաժարական զողջոյնն տալ, ներումն և աղօթս խնդրել յամենեցունց. և մտեալ ի սուրբ տաճարն՝ անկեալ առաջի սուրբ իջման տեղւոյն, լալով և հառաչանօք, և դառն արտասուօք յանձնելով զհոգի իմ յաստուծոյ, և այսպէս պաշարեալ երկիւղիւ, և լքեալ սրտիւ գնացի ի բանակն կիսամեռ»։ Բայց որքան է մեծ լինում նրա սրտի ուրախությունը, որ «մինչ ակն ունէի տանջանաց և մահու», խանը իբրև մարդ է վարվում և «խիլայեաց ինձ», և «ո՞վ ոք ոչ զարմասցի,—բացականչում է ծերունին,—փա՛ռք աստուծո հրաշագործութեանն, մեծ են գործք քո տէր, և յոյժ խոր են խորհուրդք քո», և ապա խաչով ու թափորով բերում են խանին էջմիածին։ Եվ խանն ամենայն հետաքրքրությամբ դիտում է ու լսում է ժամերգությունը և մինչև իսկ 300 փլորի ողորմություն տալիս։ Եվ նույն գիշերը յուր կանանոցն է ուղարկում վանքը տեսնել. մյուս օրը լուսանալիս՝ նորից գալիս, խոսում, ուրախանում է, մինչև անգամ շնորհակալություն հայտնում և մխիթարում՝ ասելով «մի հոգար և մի՛ տրտմիր և բնաւ մի՛ երկնչիր, այս օճաղս մեր է»...

Կաթողիկոսն այժմ խրատված՝ ընծաներով հետը մինչև Փարաքար է գնում։

Լինում է Եղիվարդի դաշտում մեծ ճակատամարտը, օսմանցիք կոտորվում ու փախչում են, և կաթողիկոսը դիակների ու վիրավորների միջից անցնում է, ազատում շատ վիրավորներ կոտորելուց—թուրք, հայ, հոռոմ ու խնամում։

«Հանճարեղն և երկրորդ Աղեքսանդրն» պաշարում է Կարսը, նեղը լծում օսմանցոց, Երևանը և Այրարատն ընկնում են պարսից ձեռը և խաղաղություն է լինում։ Նադիր խանը արշավում է Թիֆլիս և կանչում է խաներին և այլն, նաև կաթողիկոսին և խիստ պատվերներ տալիս Երևանի խանին, որ լավ վարվեն կաթողիկոսի և հայերի հետ, և կաթողիկոսը շատ

ռաղամներ է ստանում հայոց համար, այլև ազատում 300 տուն հայեր՝ Թիֆլիսից Խորասան քշելուց։ Այլև հոգ է տանում երկրի հարկի մասին, որ աղքատներին չնեղեն։

ԵՐԳԻՉՆԵՐ

Այդ երկու հարյուրից ավելի տարիների ընթացքում եկեղեցականների և եկեղեցական նյութի մեջ բանաստեղծություն չկա, բայց բուն ժողովրդի մեջ եղել է, անշուշտ, բանաստեղծություն, և ավելի ժողովրդական երգիչների մեջ, որոնք մեծ մասամբ աշխարհաբար լեզվով են երգել, իրենց տեղական բարբառով, շատ քիչ տեղեկություն ունենալով Ս. Գրքից և գրաբար լեզվից։ Այդպիսի շատ երգիչների անուններ են հիշվում 17-րդ և 18-րդ դարերի համար և սրանց ժառանգները հարատևում են մինչև մեր օրերն իսկ։ Բայց դժբախտաբար դրանց երգածները չեն ժողովված ու գրի առնված, ուստի և կորած են. իսկ գրվածներն ևս հրատարակված չեն։

Այսպես, 17-րդ դարու երկրորդ կեսի երգիչներից մեկն է Խասպեկ Երեց, որ երգել է արևմտյան բարբառով, խառն գրաբարի հետ. ունի երևի կրոնական կրթություն, և երեց լինելով՝ Աստվածածնի վրա էլ տաղեր է ասել, որոնք, սակայն, տպված չեն։ Կոստանյան, Բ. պրակ, եր. 11, կա՝ «Տաղ ի վերայ վարդին և անուշահոտ ծաղկանց», որ սովորական ձևով մի հասարակ գովեստ ու նկարագիր է վարդի ծաղիկների, թեպետև ստոր հին բանաստեղծներից, բայց ճաշակը դեռ երևում է ոտանավորի և բառերի ընտրության մեջ։ Ավելի գեղեցիկ է 1670 թվին գրած մի տաղ (Կոստ., Գ. պրակ, 15)՝ «Տաղ սիրոյ և ուրախութեան», որ նկարագիր է գարնան բնության, ծաղկող այգու, ծառ ու ծաղկի և երգեցիկ թռչունների, հատկապես պյուլպյուլի և վարդի (որի համար «հումբ առեալ պայծառաղգեցաւ վարդն կարմիր սպիտակ, յայտնեցաւ ի մէջ կոկոնին երփնազարդ ճշմարտապէս», իսկ պյուլպյուլը.—«Աղաղակէր քաղցր ձայնիւ պիւպիւլն վարդին սիրուն, ոչ դադարէր երագ շրջելոյ վարդին սիրոյն»... «Առաւոտէն մինչ իրիկուն գովք ասէր»)։ Գեղեցիկ նկարագրված է սոխակի սերն առ վարդը, թե ինչպես նա պարթևում է կես գիշերին, կաքավում, ծիծաղում, արտասվում ծիծաղելով. կամ երգելով ու ճովողելով փարվում վարդի շուրջը, անթարթ աչքով նրան նայում։ Իսկ մյուս կողմից՝ ինչպես վարդը ննջում է ցողի մեջ մանրամասնիկ ողողվելով, մինչդեռ մյուս ծաղիկները «հոտ անուշ բուրեն ի թփին գոյնզգոյն ծաղկածաւալ» մի տեղ խմբված ու պար առած սոխակի քաղցր ձայնով հրճվում են, գովում են բոլոր թռչուններին ու սոխակի համար արքայական գահույք պատրաստում։

Անշուշտ այս երգն այլաբանական է՝ թռչուն—տղայք, ծաղկունք—աղջկերք. վարդը սիրուհին, և ծաղիկները նրա ընկերուհիք։ Բայց հենց առանց այդ այլաբանության ևս ուղղակի իբրև բնության երգ՝ մեր գեղեցիկ երգերից մեկն է։

Խասպեկ երեցից ուղիղ հարյուր տարի հետո ապրել է Սայաթ-Նովա,— որ ավելի մեծ և զուտ քնարական երգիչ է, մեծ թերևս գուցե նրա համար, որ նրա գրածներից ավելի բան ունինք։ Սակայն Սայաթ-Նովան ուրիշ կարգի երգիչների է պատկանում։ Նա աշուղ է։

Սայաթ-Նովա[1]:—*Սայաթ-Նովան աշուղ է, այսինքն՝ ժողովրդական երգիչ։*

Սայաթ-Նովայի հայացքն աշուղության վրա երևում է նրա մի քանի երգերի մեջ։ Ախվերդյանի հրատարակության մեջ դրած առաջին երգը (1759 թ. գրած) մի գովասանք է քամանչայի. արծաթե ականջով, գլուխը ջավահիր քարած, շիրմայի (փղոսկրյա) կոթով, փորը սադափով նախշ արած, ոսկե սիմով, էրկաթը փանջարա արած, վարաղնած ճիպոտով. ուշի պոչից ձարը։

Քամանչան (աշուղի նվագարանը) «Ամեն սազի մեջըն դոված դասն» է, որ «պարապ վախտին րափա» է ուզում, «մերձըրվում է այիվնումը» չայով ու սուրճով. նրա «բոլորքը» շարվում են «գողալնիրը», և նա «մեջլիսի կեսն է». նա «շատ տխուր սիրտ խնդացնում է, հիվանդի դողը կըտրում», «երբ քաղցր ձայնը վեր է ունում» կամ «քաղցր հանգով խոսում», ոչ միայն «ածողին երկու է շինում», և «հետը խաղացողի սիրտը բաց անում», այլև լսողներին «քաղցր զող ու սափա է ցույց տալիս», այն սատիճանի, որ «շատին զարթուն լուսացնում է», շատին էլ օրոր կարդալով «քնեցնում է բանգով՝ ինչպես մի անուշահամ գինով լիքը ոսկե թաս»։

Երգիչն յուր նվագարանի արտաքին գեղեցկությունը նկարագրելով՝ պատրաստում է նրա ներքին ազդեցությունը ըմբռնելու։ Այդ նպատակով **պիտի** *խոսքով է ասում, քամանչայի արժանավորությունը զգալ տալու համար։*

Սակայն «նաքազ» (վատթար) մարդը չի կարող քամանչի այդ ազդեցությունը տեսնել, քամանչեն նրա «պասն է», ուստի և երգիչը հորդորում է «ջանք անել ավելի ևս լավ օրերի», այսինքն գործերի ետևից լինել։

Ահա այսպես գիտե երգիչը յուր նվագարանի ու երգի ուժը, որ ոչ ոք կարող է վիճելով (ըստ աշուղների) նրա ձեռքից խլել, այսինքն նրան հաղթել, իսկ, ընդհակառակն, «քանի սաղ է Սայաթ-Նովան, շատ բան կըտեսնի այդ քամանչեն», շատ հաղթանակներ կտանի, միայն հարկավոր է, որ խալխն աղոթք անե, որ «ապրի նորա ածողն»։

Ի՞նչ պիտի լինի այդ երաժշտության նպատակը, արդյո՞ք միայն

---

[1] *«Սայաթ-Նովա», լույս գցած աշխատասիրությենով Գեորգա Ախվերդյան, Մոսկվա, 1852։— Մի բժիշկ, Գեորգ Ախվերդյան, որի վաղաժամ մահը զրկել է հայոց գրականությունը յուր բանիբուն ու սիրող մշակից,—Ախվերդյանը դժբախտաբար միայն յուր մի հատորն է լույս ընծայել՝ «Գուսանք», առանց ժամանակ ունենալու մյուս գուսանների ժողովածուն ևս հրատարակելու, ինչպես և «Առակ, ասած, վիճակախաղեր և ամենայն տեսակ խաղեր», որոնց ժողովելու, կարգավորելու սիրահար էր նա։ Նրա հրատարակությունն յուր հառաջաբանով և ծանոթություններով ոչ միայն յուր ժամանակին, այլև այժմյան ժամանակին պատիվ կբերեր ամենայն մարդու (անշուշտ մի քանի բան հնացած)։*

ուրախացնել։ Երգիչն արդեն այն խոսքով թէ՝ «նաքաղ մարդ քիզ չի կանա տեսնի, դուն նրա պասն իս» ակնարկում է յուր մտածութեան եղանակին։ Նա իրեն անվանում է մի տարի առաջ, 1758 թ. գրած (ԼՒ. եր. 131) երգի մեջ «խալխի նոքար», որ «համով պիտի ծառայե» ամենքին, թեպետև այդ ծառայութեան մեջ շատ դառնութիւն է կրում։ Եվ ինչ է այդ դառնութիւնը. նա իբրև խալխի նոքար խալխի կամքը պիտի կատարե. իսկ խալխի կամքն է զվարճանալ ու սիրո երգ լսել. սակայն աշխարհը միայն զվարճութիւն ու սեր չէ. «վուր տիղ հարսնիք, վուր տիղն սուք, վուր տիղ սոյբաթ խաղ է ըլում, վուր տիղ ժամ, վուր տիղ պատարագ, վուր տիղ սիրով տաղ է ըլում»,—այսինքն ուրիշ խոսքով՝ զվարճութեան հետ խառն է և սուգը, մարմնի հետ միացած է և հոգին։ Մարդս երկվութիւնից է կազմված, որոնք իրար հակադիր են ըստ քրիստոնեական հայացքի, և Սայաթ-Նովան կանգնած երկվութեան առաջ՝ չի իմանում ի՛նչ վճիռ տա, «թե որ հոգուտ կամքն իս անում, մարմինդ բեդամաղ է ըլում», և բացականչում է՝ «վո՞ւր մէ դարդին կու դիմանաս, դուն ջրատար Սայաթ-Նովա»։

Հոգին պահանջում է և ասում է. «թեկուզ իմանաս, գիտենաս աստղերու համբարքն սիրուն, անբարի գործն կորած է», այդպես է ասում «Հարանց վարքն սիրուն, Ավետարանի խօսկիրն՝ մարգարտե կարգը սիրուն». նա քարոզում է, «թե էս կինաց փառքն չուզիս՝ էն կինաց ալմասն կուտան. թե հոգուտ խաթիր շալ հագնիս՝ զար քաշած ատլասն կուտան». նա պահանջում է մեղքը խոստովանել և անձնուրացութիւն։ Սակայն աշխարհն էլ յուրն է պահանջում. նա այդ քարոզից խելքի չի գալիս, նրա անձի մեջ նստած է «անախտելի չար դևը», որ մինչև դուրս չգա, մարդ չի ուղղվիլ. խոսք ու խրատներով բան չի լինում, նրանց համար ավետարանի խոսքերը «լալ ու գովար են խոզի առջև ածած», ուստի թեկուզ դպրատանն պահ տաս՝ ծեծով չի խրատվի խիվն... բեդասլն ասըլ չի դառնա. թոլով չի սիպտակի սիվն, ծուռն փետն չի դրստի ռանդան»։ Ուստի և Սայաթ-Նովան իզուր կամենում է դրստել իբրև «դուրգար» այդ ծուռ փայտը։ Նրան չեն հասկանում և նրանից ուրախ երգ են ուզում, «խալխին համով ղուլուղ անել» միայն։ Բայց դեռ նա բարի է, ինքն իրեն մխիթարում է աշխարհի այդ անուղղելիութիւնից և կոչում. «ով քիզի լեղի պարքիվե, դուն տո՛ւ շաքար», միայն պետք է ջանք անել, որ իր «շուշեն չկոտրին, չխփին քար», և շարունակում է միաժամանակ ևս խալխին համով ծառայել։

Սակայն այս երկվութիւնը նրան հանգիստ չի թողնում։ Նրա աչքի առաջ (ԼԴ. եր. 136, գր. 1759 թ.) կանգնած է շարունակ աշխարհի ունայնութիւնը մի պատուհանի պատկերով, որի միջից նայելով՝ տեսնում է կյանքի բազմատեսակ եղանակները. այդ պատուհանից մտիկ տվողը խոցվում է դաղերով, այնտեղ «սուտը շատացել է», «ղուրթը ճամպա չէ գնում, բարեկամները թշնամի են դառնում», «դոլվաթն էյթիբար չունի»։ Կամ եր. 143, երգ լէ (1759 թ.). «Շուռ էրիտ չարխ ու փալագն, դոլվաթն միզնից խռով ա, ում հաքին հին շալ ին տեսնում, էլ չին ասում թե էս ո՞վ ա». «իմաստուններին չտեսան էս աշխարհիս հուտն ու համքն»։

Սակայն այդ ունայն աշխարհն էլ ոչ մի մարդու մնալու չէ, մահը պատրաստ է. ոչ ոք չի կարող ասել, թե «առավոտից մինչև մութն կարող է ապրել», քանի որ աստուծու ձեռին «հեշտ է մարդու աշխարհք եւ ու մուտքը»։ Եվ «Ջուրս գլխանի ոաշի վրեն աջալն դրիլ է թամքն», «մեր ու մանուկ բաժանվեցան, մանուկն էնդուր ունի լալու», և, որ ամենից դժվարն է՝ «Սատանեն մե դամբ է դրի Ադամի զաթն որսալու. շատն սատանեն ի տանում, վիրջն մնում է վա՜յ տալու»։

Այս ամենն ի նկատի ունենալով զող ու սափան այլևս չեն զվարճացնում երգչին. անցել է նրա «վաղվան քաղցր փառքը», նրա դառն վիշտը շատանում է հետզհետե և մանավանդ համբերությունը հատնում է, չի դիմանում խալխի դափին։ Նա կյանքից ձանձրանում է. «Մարթ համաշա մեկ չի ըլի»։ Եվ այդ դառնությունը հետզհետե ավելի մեծանում է, որովհետև «էրեկ լավ էր, կանց վուր էսօր», իսկ ապագայի համար ևս հույս չունի, քանի որ նա հաճախ հուսախաբվել է՝ «վաղէրումեն բեզարիլ իմ»։ Միանգամ արդեն այդ քրիստոնեական հոռետեսության հայացքին հասած՝ այլևս նա, անշուշտ, «խաղերից էլ պետք է բեզարեր», ինչպես որ բլբուլը յաց է լինում, երբ վարդի խարը շատանում է, այնքան կոկոն քաղում են, որ չեն թողնում ժամանակին բացվի վարդը։ Լալիս է, ողբում է երգիչը աշխարհի վրա, ուր սուտը շատացել է, և ցանկանում է «բաղերից բեզարած բլբուլի պես դուրս թռչել» աշխարհից, զի «լավ մարթն էն է՝ գլուխն պահե աշխարումս էյթիբարով» կամ «լավ մարթն էն է՝ սիրով անե բարի հրեշտակներու կամքն»։

Բայց ի՞նչպես պետք է պահել գլուխն աշխարհում էյթիբարով։ Շատ պարզ է այն ժամանակի հայացքով։ Պետք էր ուրանալ աշխարհն ու մարմինը և միշտ հոգու եռևից երթալ։

Թե ի՞նչպես է հասկանում ժամանակակից մարդն այդ անձնուրացությունը, որ հետևանք է այն հայացքի, թե՝ «աշխարհս միզ մնալու չէ, մալ անիլն ինչի՞ն է շահ» (եր. 136, 143), կամ «վուր չէ Ուռնիելի նման, կալ անիլն ինչի՞ն է շահ», շատ գեղեցիկ երևում է Գ. երգից, եր. 52, գրած դեռ 1753 թվին։ Այդ է՝ նախ կրթել իրեն «հայա (ամոթ), ադաբ (համեստություն), ար (ամոթ) սիրելով», ապա «Աստված, հոգի, յար (ընկեր, ավետարանական իմաստով) սիրել», «գիր, դալամ, դավթար սիրել»։ «Խրատ, սաբր (համբերություն) ու շար (արդարություն, դատաստան) սիրել», «աղմատ, ղոնաղ, տար սիրել», և վերջիվերջո «վանիմ, անապատ, ֆար սիրել»։ Այս է «Աստծո շարքումը», այս խրատներն են գրած «Հարանց վարքումը», «հալալ մտիկ անիլ հացի ու աղի (արդարության), հպարտություն չանիլ, այլ խոնարհ լինել»։

Բոլորը կրոնավորի համար եղած պահանջներ (նույնպես գիր սիրելը), որոնցով մարդ Աստծո դուր կգար, բայց որոնցով «հոգու խաթեր մարմնու ումբրը կես է լինում»։ Ուստի և դեռ 1753 թվին երանի է տալիս իրեն, եթե միայն այդ կարողանա անել։ Այդ աշխարհուրացության հայացքը հետզհետե զորանում է նրա մեջ, որքան ավելի նա հուսախաբ է

լինում, և մեր երգիչը վերջապես քաշվում է վանք, հակառակ յուր խոստմանը, թե «քանի սաղ է Սայաթ-Նովեն, շատ բան կուտեսնիս, քամանչա»։

Սայաթ-Նովան աշուղ է, և իբրև աշուղ յուր բանաստեղծության նյութ ունի սերը, որ երգվում է սովորաբար վեճերի և ուրախությունների ժամանակ։ Նրա երգերի մեծ մասը նվիրված է այդ նյութին, որ երգվում է աշուղական ձևերով։

Սայաթ-Նովայի այդ իդեալի նկարագիրը երբեմն մի կանխամտածություն է միայն, մի թեմայի զարգացում, որ նման ձևերով արդեն շատ բանաստեղծներ արել են. գրեթե բոլոր նմանությունները կարելի է գտնել 15—16-րդ դարու բանաստեղծների մեջ։ Եվ ինքը, Սայաթ-Նովան անկախ չէ գտնում այդ ձևերը, այլ շատ հավանորեն պարսկերեն կամ թուրքերեն երգերից պատրաստ առնում է, որին ապացույց են և հանգերը՝ օտար բառերով։ Անհատականության կնիք գրեթե չկա։ Եվ եթե մենք Սայաթ-Նովայի տիկինը համեմատելու լինենք Աղթամարցու տիկնոջ հետ, ոչ մի առանձին տարբերություն չենք գտնիլ, որովհետև դա մի որոշ տիկին չէ, որ գովում են, այլ տիկնոջ՝ «արեգակնափայլ» երեսով տիկնոջ գաղափարը, գեղեցկությամբ, և գրեթե միայն արտաքին գեղեցկությամբ կնոջ վերացականությունը։

Ամենից առաջին տեղը բռնում է կնոջ արտաքին գեղեցկության գովքը, կնոջ պաշտամունքը, սիրո արտահայտությունը, մարմնական աննման գեղեցկությունը, որի «նման աշխարհիս մեջ չի տեսած» (Զ, 61, դ.). կամ՝ «թամամ աշխար պտուտ էկա, չթողի Հաբաշ նազանի. Ջտեսա քու դիդարի պես՝ դուն դիփունին բաշ, նազանի» (Իե, 112 ա)։

Ընդհանուր պատկերի մեջ, բնականորեն, ամենից ավելի գրավում են աչքերը, որոնց համար զանազան նմանություններ է բերում.—«Օսկու մեջն մինա արած աչկիրդ ակնակապ թաս է» (ԺԸ, 93, բ.), կամ՝ «Աչկիրդ կարմիր վարդ, նուր բացարած տուխտ» (ԺԶ, 88 դ.)։

Դոշ ու թիկունք.—«բույչմեգ չուրս մատն ավելի լցվիլ է դոշդ ու թիկունքդ» (Դ. 55, բ.)

«Ռանգդ շաքարի» (ԺԶ, 88, ա.)
«Ռանգդ փռանգի ատլաս է» (ԺԸ, 93, բ.)
«Քու տերն բաղն ինչ կոնէ, քու հուտն ուհան իս շինի...
Աշխարքն ծով, դուն մէջն նավ, ման իս գալի, լանգ իս
անում» (ծփալ) (Լե, 139, դ.)։

«Վուրբան իմ ծուցիդ նռանը» (ԼԶ, 141, բ.)
«Լիզուդ օսկե զալամի պես» (ԽԱ, 151, դ.)
«Մեչկդ՝ հաղիզեմեն (գործիք՝ պղնձե թել քաշելու) քաշած
սիրմա մավթուլի (արծաթյա) նման է»... (Լ., 127, դ.)
«Երիք հարուր ու վաթսուն ու վից ամեն անդամդ զարարի»
(Դ., 55, գ.)։

Հաճախ Սայաթ-Նովան յուր յարին նմանեցնում է ծաղիկների և հատկապես վարդի, սակայն վարդի և սոխակի այլաբանություն չի անում, այլ լոկ նմանություն. այլաբանական երգ չունի Սայաթ-Նովան. ամենից գեղեցիկ համեմատությունը յուր և յուր յարի վիճակի համեմատությունն է (Ժ. 73).

Ուստի՞ գու քաս, զարիբ բըլբուլ,
Դու մի՛ լաց ՚լի, ես իմ լալու.
Դու վարթ պրտռե՛, ես գոզալին,—
Դու մի՛ լաց ՚լի, ես իմ լալու։

Արի՛, բըլբուլ, խոսի՛ բառըն,
Օխնըվի՛ քու էկած սարըն.
Քի վարթն էրից, ինձ իմ յարըն,—
Դու մի լաց ՚լի, ես իմ լալու...

Բնությունն առհասարակ գրեթե տեղ չունի. միայն յարի ման գալը պարտիզում (ԻԲ. 154)։ Սայաթ-Նովայի սիրած նմանություններն են նաև թանկագին քարեր և մետաղներ։ «Անգին ակն վրեդ շարած՝ անբան օսկու ոախտ իս, գոզալ»... (ԻԱ, 102, ա.),

«Սկանդարի Զուլղարի թողած չալահիր իս, անգին լալ իս,
Դանգն դանգի միչեն հանած, հիդքաշած մսխալ, մսխալ իս»
(ԻԱ, 102, գ.)։

Հագուստը և զարդը նույնպես դուվասանքի առարկա է.—

... Թե խամ հաքնիս, թե զար հաքնիս,
Կու շինիս ղումաշ, նազանի...
. . . . . .
Բարակ միչքիդ թիրմա շալն՝ նման է օսկե քամարին.
. . . . . .
Ղալամն ձեռին չ'է կանդնում, մաթ շինեցիր նաղըշքարին։
. . . . . .
Դուն կրակ, հաքածդ կրակ, վո՞ւր մե կըրակին դիմանամ։
. . . . . .
Հինդու ղալամքարու վրեն ծածկիլ իս՝ մարմաշ, նազանի։
. . . . . .
Դաստամակիդ թիլի մնչըն մե շադա ։մարչան է քաշած (ԻԵ, 112)։

Ջնայելով Սայաթ-Նովան ժամանակի բոլոր թանկագին բաներով գովում է յուր գոզալին, բայց և այնպես հաճախ բառ չի գտնում գովելու.

«Յար, քիզ ինչո՞վ թարիփ անիմ՝ աշխարումս բան չմնաց.
Կրակե ծովեմեն դուս էկած՝ ոաշ, ջեյիրան իս ինձ համա»։
(ԺՐ, 93, դ.)

Ղումաշ ասիմ՝ շուրեղեն է կու մաշվի,
Սալբի ասիմ՝ ախըր մին օր կու տաշվի,
Ջեյրան ասիմ՝ շատ մարթ քիզիդ կու յաշվի (համեմատվել),
Բաս վո՞ւնց թարիփ անիմ՝ միրա (երկին) իս, գողալ։
Թե մանուշակ ասիմ՝ սարեմեն կոսին,
Թե ջավայիր ասիմ՝ քարեմեն կոսին,
Թե վուր լուսին ասիմ՝ տարրեմեն կոսին,—
Արեգագի նման՝ փարա (լույս բոլորակ) իս, գողալ։
(ԺՋ, 88, բ., դ.)

Ներքին գեղեցկությունը շատ քիչ է ոգևորության նյութ դառնում Սայաթ-Նովայի համար, ինչպես առհասարակ մեր ժողովրդական երգերի համար։ Բանաստեղծը բավականանում է մի քանի ընդհանուր ակնարկներով. «դուն խոմ էն գլխեն գոված իս, ես քիզ նուրմեկ գովիմ արի» (Դ. 55, գ.), բայց դեռ արտաքինն է գովում։ Կամ՝ «դուն էն գլխեն իմաստուն իս, խելքդ հիմարին բաբ մի անի» (Ը, 66, ա.), կամ ազգն է գովում «ասկդ ասկերում գոված» (Ը, 66, բ.),—«խոսկիրդ քաղցր քաղցր է, լիզուդ շաքար ու նաբաթ է» (ԺԴ., 84, դ., ԺԷ, 90, բ., ԺԸ, 93, բ.)։

Ինչպես կնոջ պատկերի մեջ անհատականություն չկա, նույնպես և հաճախ զգացումների արտահայտությունների մեջ տարբերություն չկա. զգացումները միևնույն ձևով կամ ֆորմուլով են արտահայտվում։ Հեյրան լինել (Թ, 69, բ.), այրվել սիրուց, «էրած խորված ման իմ գալի, մի տիղ չկա մար ունենամ» (ԺԳ, 81, գ.), «Սիրտս էրից՝ ջեյիրանի նման ման գալդ», կամ՝ «վախում իմ թե՝ ինձ էլ էրիս՝ անհանգչելի հուր իս, ախպեր», «Հուր իս էշխով կրակած» (ԺԱ, 75, ա., բ.), «Կրակ նրնգած վառ իս էլի» (ԺԱ, 76, ե.), «Ինձ հուրյան, բիրյան արիր» (76, գ.)։

Սայաթ-Նովան կնոջ պաշտամունք ունի և սեր է գովում, և սերը երգում է կանխանման ձևերով, բայց զուտ անձնական շեշտերով։ Այդ սերը մի իդեալական գաղա֊փար չէ, այլ մի իրական նյութական զվարճություն, բայց ոչ ֆիզիկական կրքի զվարճություն, հեթանոսական սեր—Սայաթ-Նովայի միտքը հեռու է այդ բանից, երկրավոր զգայականությունից, եվ այդ սերն անարատ մաքուր է։

Սերը պետք է հաստատ լինի (Ը. 66, դ.), և մարդ մի հատիկ յար ունենա։ Այդպիսի սեր ունենալու համար պետք է երկուսն իրար հավասար լինեն (ԺԳ, 81, ա.)։ Այդպիսի յարն անգին է, որից ոչ մի բանով բաժանվել ու հեռանալ չի լինի, ոչ մարգարտով ու ալմաստով, ոչ մահով, ոչ ահով և եչ շահի հրամանով (Բ. 50)։

Նրա անձնական զգացումը երևում է դժբախտ սիրո մեջ, երբ յարը նազ է անում (ԺԷ, 90, ե., Թ, 69, բ.) և հեռացնում է յարին (Ը, 66, գ.) ուրիշին լսելով. երբ նրա յարն իրենից նեղացած է և աշխատում է սիրտն առնել (ԻԸ, 119) և հավատացնել, որ ինքը հանցանք չունի (Ը, 66, բ., և. 58. ա.)։ Այդ ժամանակ կսկծում ու լաց է լինում անհատական կերպով (Ջ,

62, ե., ԻԴ, 111, ե., ԺԸ, 93, գ.) կամ մահ է ցանկանում (ԻԲ, 106, ե., ԺԱ, 103, ե.), որովհետև առանց սիրեկանի՝

... Ինչ կոնիմ սոյբաթն ու սազն,
Ջեռնեմես վեր կոծիմ չանգիրն մեկ-մեկ,
Ջունքի ուշկ ու միտկըս իրար շաղեցիր,
Փահմես կու հիռացնիմ հանգիրն մեկ-մեկ։
. . . . . .
Առանց քիզ ինչ կոնիմ աշխարհիս մալըն...
Կու հաքնիմ մազեղեն, կու հաքնիմ շալըն,
Կերթամ ու ման գու քամ վանքիրն մեկ-մեկ։
Բըլքամ մե մարթ ոաստ գա՝ վուր ինձ խրատե.
Գո՛զալ, քու էշխեմեն սիրտըս ազատէ (է. 64)։

Յարից խոստում և հաստատուն երդում է ուզում՝ հաստատ երդում խոստանալով (Իե. 112, ե.)։ Այսպիսի երգերի մեջ պակաս չեն հնչյուններ, որոնք իրոք մի փափուկ բանաստեղծի սրտից են բխում ու մեզ տանում ի ցավ և ի խնդություն։

Նա թափառել է ուզում իբրև աշուղ, երբ սիրեկանը մերժում է իրեն (Ը. 67, ե. ժ.)։ Աղաչում, խնդրում է գթալ իրեն (Զ. 61, գ., ը.), ասելով՝ որ պակսի՝ յարին կպակսի (Ը. 67, ե.)։

Եվ իսկապես Սայաթ-Նովան դժբախտ է յուր սիրո մեջ. «Ինչո՞վ չ'էլավ, չոաստ էկա՞ր մե լա՛վ յարին, Սայաթ-Նովա» (ԺԳ. 82, ե.)։ Նա դժբախտ [է], որ յուր սիրածն ուրիշին է պատկանում։

ՈՒՐՎԱԳԾԵՐ XIX ԴԱՐՈՒ ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

(ԱՌԱՋԻՆ ԵՐԵՄՆԱՄՅԱԿ)

ՈՒՐՎԱԳԾԵՐ 19-ՐԴ ԴԱՐՈՒ ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

(Առաջին երեսնամյակ)[1]

Մեր նոր գրականության սկիզբը:—*Ամենից առաջ կուզեի որոշել, թե ո՛ր ժամանակից պետք է դնել մեր նոր գրականության սկիզբը, արդյոք 18-րդ դարում Վենետիկի Մխիթարյանների՞ց, ինչպես դնում են հաճախ:—Ես կարծում եմ, որ Մխիթարյաններն և ինքը Մխիթար Աբբան սկիզբ չեն, այլ ծնունդ ու շարունակող են այն մեծ շարժման, որ առաջ է գալիս հայոց եկեղեցու մեջ 17-րդ դարում և տևում է մինչև 19-րդ դարու կեսերը և այս կողմն ևս:*

Մեր հնի և նորի բաժանումը լինում է ոչ թե 18-րդ դարում, այլ 16-րդ դարու վերջերը և 17-րդի սկզբներում, երբ համատարած իշխում էր ավելցակ և թանձր տգիտություն. երբ «տգիտութեամբ խոպանացեալ և կորդացեալ էր աղգս Հայոց,—ինչպես գրում է Առաքել պատմագիրը,—և ոչ միայն ոչ ընթեռնուին, այլ և ոչ զգիրս գիտէին և զզօրութիւն գրոց. վասն զի անպիտանացեալ էր գիրքն յաչս մարդկան և իբրև զկոճեղս փայտից անկեալ յանկեան ուրեք՝ լցեալ հողով և մոխրով»:—Անկումը սոսկալի էր. մեր հին քաղաքակրթությունը գրեթե ամբողջապես ոչնչացել էր այդ ժամանակ: Մարդիկ կտրվել էին հնից այն աստիճանի, որ հոգևորականներն եկեղեցուց դուրս աշխարհական հագուստով էին շրջում, տրեխներով ու չուխայով սեղան բարձրանում և մոռացել էին նույնիսկ շատ եկեղեցական կարգեր:

Եվ հնի հենց այս մահվան մեջ է, որ սկսում է ծնվել նորը՝ հնի վերածնությամբ: Պետք էր հայությունը փրկել վերջնական անկումից և վայ-

---

[1] *Այս վերնագրի տակ՝ «Արարատի» ընթերցողներին հետզհետե կտրվին մեր 19-րդ դարու գրականության, գլխավորապես բանաստեղծության պատմությունից տեսություններ, որ քաղում եմ տասը տարի առաջ Ս. Էջմիածնի ճեմարանի լսարաններում ասած դասախոսություններից, ուղղելով և նորից մշակելով: Ասիլ չի ուզի, որ իմ գրածը չի կարող լինել գրականության պատմություն, որը, կարծում եմ, դժվար է գրել այժմ և մանավանդ Էջմիածնում, ուր չկան բոլոր հեղինակները: Ես կաշխատեմ խոսել այն բոլոր հեղինակների մասին, որ կան այստեղ:*

բենացումից։ Եվ ահա՛ 17-րդ դարու սակավաթիվ լավագույն մարդկանց բոլոր ձգտումը կենտրոնանում է այն բանի մեջ, որ կենդանացնեն մեռնող հայ կյանքը։ Դրա համար երկու ճանապարհ է ներկայանում նրանց— վերածնել հին հայ կյանքը, գիրն ու գրականությունը և ապա օգտվել եվրոպական լուսավորությունից, որ մեր նոր գրականության համար նույնդերը պիտի խաղար, ինչ որ հին բյուզանդականը մեր հին գրականության համար։ Այս երկու ուղղությամբ առաջ է ընթանում մեր մտավոր շարժումը Շահաբաս Ա-ի օրերից սկսած մինչև 19-րդ դարու վերջը, հարկավ ժամանակի բնական շրջափոխությամբ։ Եվրոպացիներից ազդվելը սկզբում շատ թույլ էր, առաջ էր գալիս միայն գաղթականների, վաճառականների, կաթոլիկ քարոզիչների և տպագրության համար Եվրոպա գնացող մարդկանց ձեռով, բայց այդ ազդեցությունը հետզհետե զորանում է և 19-րդ դարու երկրորդ կեսից առաջին տեղն է բռնում. մինչ հնի վերածնությունը հենց սկզբից զորեղ է և նույն թափով շարունակվում է մինչև 19-րդ դարու կեսերը, երբ թողնելով յուր կրոնական բնավորությունը՝ աշխարհականանում է։

Հնի մեռելության մեջ վերածնություն առաջ են բերում ոչ թե Մխիթար Աբբան և Մխիթարյանները, այլ Ամբերդցի Սարգիս եպիսկոպոսը (մեռել է 1620 թ.), որ միաբան էր Սաղմոսավանքի, և Տրապիզոնցի Տեր Կիրակոսը (մեռել է 1621 թ.), որոնք բուն երկրի մեջ հիմնում են Սյունյաց Անապատը Տաթևի մոտ։ Դրանցից անբաժան պիտի համարել և Սյունեցի Մովսես վարդապետին, որոնք և եղել են «առիթ լուսաւորութեան ազգիս Հայոց»։ Դրանք և դրանց աշակերտներն են, որ մտածում և գործում են մեր խոպանացած կյանքը նորոգելու համար։

Այդ մարդիկն իբրև վերածնողներ, ինչպես հատուկ է ամեն վերածնության մարդու, աչքերը դարձնելով դեպի մեր հինը՝ շատ ճիշտ նկատում են մեր հին կյանքի ամենից կարևոր կողմը։ Այնտեղ նրանք տեսնում են ամենից առաջ՝ ծաղկած վանքեր և անապատներ և իրենք ևս մեծամեծ ջանքերով կարողանում են հետևելով հներին՝ նորերը հիմնել։ Զարմանալի է, թե ինչպես 17-րդ դարու այն անասելի աղքատության մեջ հնարավոր է լինում ոչ միայն բազմաթիվ հին վանքեր նորոգել, այլև շատ նորերը կանգնեցնել՝ դարին հատուկ մի ճարտարապետությամբ։ Մխիթար Աբբան յուր հիմնած վանքով ահա այս միևնույն գործն է շարունակում, ինչ որ տեղի է ունեցել 17-րդ դարում Հայաստանում։

Վանքերը կենդանանալով՝ կենդանություն և թարմ հոսանք են մղում ցընում ժողովրդի թմրության մեջ։ Զարթնում է նոր ուժով կրոնական ոգին։ Արդարև այդ վանական և անապատային կյանքի հետ անխուսափելի կերպով նորոգվում են նաև հին ճգնավորությունն ու խստակրոն կյանքը, նոր ուժ են ստանում հին անպետք հասկացողություններն ու աշխարհայացքը, բայց դա արգելք չէր լինում, որ մեր վանքերը մի անգամ էլ կատարեին իրենց պատմական քաղաքակրթական դերը, որ ունեցել էին 10-րդ դարում։ Դրանք մեղմացնում էին ժողովրդի կոշտացած ոճ

բրտացած բարքերը և, որ գլխավորն է, գիր ու գրագիտություն էին տարածում։ Որովհետև վանականներից շատերը լոկ աղոթքով չէին պարապում և իրենց ամբողջ կյանքն աշխարհից կտրված չէին անց կացնում, այլ սովորում էին կարդալ, գրել և մտնելով ժողովրդի մեջ՝ քարոզում էին նրան և երեխաների համար «դպրատներ», այսինքն դպրոցներ հիմնում։ Մեր վանական և ծխական դպրոցների սկիզբն ահա՛ այս ժամանակից է գալիս։

Ապա այդ մարդիկը մեծամեծ, իսկապես հիացմունք պատճառող ջանքերով աշխատում են կարդալ և հասկանալ մեր անհասկանալի դարձած ու մոռացված գրականությունն ամբողջ, թե՛ եկեղեցական և թե աշխարհիկ քնավորություն ունեցող ձեռագիրները՝ ինքնուրույն թե թարգմանական երկերը՝ որքան որ կային կամ ճարում էին։ Նրանք արտագրում են բազմաթիվ նոր ձեռագիրներ. աշխատում են զտել ունիթորների ձեռով լատինացած գրաբար լեզուն. հորինում են քերականության, տրամաբանության և այլ նոր դասագրքեր՝ օգտվելով գլխավորապես հին գրքերից, և նույնիսկ թարգմանություններ էլ են անում։ Շարժման գլխավոր կենտրոններ հանդիսանում են Էջմիածին և Նոր Ջուղա, որտեղից և այս մտավոր շարժումն անցնում է Կ. Պոլիս։ Այս ամենի հետևանքն այն է լինում, որ բնականաբար առաջ է գալիս մի նոր գրաբար գրականություն, որի առաջին ներկայացուցիչները լինում են Սիմեոն Ջուղայեցի և Առաքել Դավրիժեցի, իսկ վերջինը՝ Արսեն Բագրատունի։

Իմ նպատակը չէ 17 և 18-րդ դարերի գրականության մասին խոսել այստեղ. այլ այն միայն շեշտել եմ ուզում, որ ինչպես մեր՝ 19-րդ դարու կյանքի ձգտումը, նույնպես և գրաբար գրականությունը բնական շարունակություն է նախորդ երկու դարերի։ Այն, ինչ որ 17-րդ դարն սկսել էր և որ այդ և հաջորդ դարում շատ դանդաղ կերպով և մեծ ընդհատումներով էր առաջ գնացել բուն երկրի մեջ, 19-րդ դարն ստանում է իբրև ժառանգություն և ավելի հաջող հանգամանքների մեջ ավելի արագ է առաջ տանում և զարգացնում։ Անցած դարու նոր գրաբար գրականության սկիզբն, ուրեմն, 17-րդ դարու շարժման մեջ պետք է տեսնել և ոչ 18-րդ դարու մեջ։ Եվ որովհետև 19-րդ դարու գրաբար գրականությունը կարելի չէ բաժանել աշխարհաբար գրականությունից, քանի որ առաջինն յուր գրական խնդիրներն ավանդում է երկրորդին և լինում է ժամանակ, գրաբարից աշխարհաբարին անցման շրջանում, երբ միևնույն մարդիկը երկու լեզուն ևս, հինը և նորը, բանեցնում են,—ապա և մեր նոր գրականությունն սկսվում է 17-րդ դարում, և այս վերջին երեք դարերը շարունակություն են միմյանց։ 17-րդ դարն է միայն, որ շարունակող չէ նախորդին, այլ միայն վերածնող։

Ի՞նչ է մեր նոր գրաբար գրականության իշխող գաղափարն ու զգացումը սկսած 17-րդ դարից մինչև վերջը։—Երկու բան, կրոնասիրություն և հայրենասիրություն, որոնք երկուսն էլ զորեղ կերպով արտահայտված գտնում ենք արդեն Առաքել Դավրիժեցու երկի մեջ։ Կրոնասիրություն-

կամ ավելի ճիշտ՝ կրոնական-եկեղեցական զգացումը նորոգված էր նոր վանական կյանքով՝ հնի աղդեցությամբ և նմանողությամբ. բայց և հայրենասիրական գաղափարը, որ, իհարկե, 17 և 18-րդ դարերում միշտ այնպես չէին հասկանում, ինչպես այժմ, արդյունք էր հին գրականության ալդեցության։ Եվ այս մասին հներից անպայման ամենամեծ դերն է կատարել Մովսես Խորենացին, որ այս շրջանում սիրված, շատ կարդացված և ամենից շատ արտագրված գիրքն է եղել մեր հին պատմագիրների մեջ։ Այս է պատճառը, որ մեր հին պատմագիրներից առաջին անգամ նրա Հայոց պատմությունն է տպագրվում 1695 թվին՝ աշխատությամբ Վանանդեցի Թովմա եպիսկոպոսի, որ դրա համար մինչև Ամստերդամ է գնում։ Մի անգամ որ տպագրության արվեստը բանում էր հայ գրքերի համար, պետք էր մատչելի դարձնել և տարածել սիրված պատմական երկը։ Եթե Խորենացու Հայոց պատմության երևան գալն յուր ժամանակին՝ իբրև առաջին պատմություն Հայոց՝ նշան է եղել ազգի ինքնագիտակցության, այժմ էլ ամենից առաջ նույն գրքի տպագրությունը պիտի լիներ ազգի մեջ ինքնաճանաչություն և հայրենասիրություն մտցնելու համար։

Բայց Խորենացին մենակ բավական չէր հին կյանքի վերածնության համար։ Ուստի և 18-րդ դարու սկզբից Կ. Պոլսում, որ ժամանակի հարմարավոր մտավոր կենտրոնն էր հայոց համար, աշխատում են տպագրել և հետզհետե տպագրում են մի շարք մեր հին մատենագիրներից, ինչպես՝ Ագաթանգեղոս, Փավստոս Բյուզանդ, Եղիշե, Զենոբ Գլակ, Մեսրոպ Երեց, Ստեփանոս Օրբելյան և այլն. իսկ կրոնական բովանդակություն ունեցողներից՝ Նարեկացի, Հաճախապատում, Եզնիկ, Լամբրոնացու Ատենաբանություն, Ճառընտիր և այլն։ Հին գրականության մի պատկառելի վերածնություն, ուրեմն, տպագրության միջոցով, և այս ա՛յն ժամանակ, երբ վենետկի հայ միաբանությունը դեռ նոր էր հիմնվում և երբ նա դեռ շատ ուշ, միայն 18-րդ դարու վերջին քառորդում պիտի երևան գար իբրև հին լեզվի վերածնող և գրականության հրատարակիչ։

Բարեբախտությունը սակայն այն էր, որ Մխիթար Աբբայից հետո (1676—1749), որի մեծ գործը գրաբարի համար է՛ նրա Բառարանը, Մխիթարյանների մեջ գոնե 18-րդ դարու վերջին քառորդում հանդես են գալիս մի քանի իսկապես աշխատող և բեղմնավոր անձեր։ Միքայել Չամչյանն յուր քերականությամբ (1779 թ.) և Հայոց պատմությամբ (1784—1786 թթ.) մի անգամից բարձրացնում է Մխիթարյանների անունը, որ մինչ այդ գրեթե հայտնի չէր, և խոշոր ազդեցություն է թողնում հետագա սերունդների վրա։ Մխիթարյանները սեփական տպարան ձեռք են բերում միայն 1788 թվին, երբ սկսում են մտածել և նախնյաց տպագրության մասին. բայց այս մեծ գործը շատ դանդաղ և առանց որոշ ծրագրի է առաջ գնում։ Հազիվ մի չորս-հինգ գիրք լույս ընծայած՝ վախճանվում է երկրորդ աբբահայր Ստ. Մելքոնյանը (1750—1800) և դադարում է գործը և միայն Սուքիաս Սոմալի (1824—1846) օրով դարձյալ սկսվում է, այս անգամ կանոնավորապես հաջողությամբ։ Վենետկի Մխիթարյանները դրանով

վաստակում են նախնյաց մատենագրության հրատարակիչներ լինելու փառքը, թեպետև առաջնությունը նրանց չի պատկանում։ Բայց այս հանգամանքն իհարկե չի պակասեցնում նրանց վաստակի արժանիքը։

Նրանց անվան փայլը գնալով աճում է. որովհետև եթե մի կողմից Ջամչյանը յուր Քերականությամբ գրաբար լեզուն էր հստակում և միջոց ընծայում հեշտությամբ սովորելու այն, իսկ յուր Հայոց պատմությամբ ազգային անցյալի ուսումնասիրությունն էր դյուրացնում, մյուս կողմից Ինճիճյանը յուր Հնախոսությամբ և Հայաստանի աշխարհագրությամբ Հայոց հին ու նոր աշխարհն էր ծանոթ դարձնում. և վերջապես այս ամենի վրա ավելանում էր Հայկազյան լեզվի նոր բառագիրքը (1836—1837 թթ.), մի հսկայական աշխատանք, որով անգնահատելի ծառայություն է մատուցվել և դեռ շատ երկար կմատուցվի մեր լեզվի ուսումնասիրության համար։ Դրանց հետ միացած և բազմաթիվ գրքեր ու դասագրքեր՝ կրոնական-եկեղեցական, փիլիսոփայական, պատմական, աշխարհագրական և այլ բովանդակությամբ, հաճախ նույնիսկ մեծամեծ հատորներով, հրատարակում են անխոնջ աշխատությամբ։ 19-րդ դարու առաջին կեսը մի բուռն գործունեության շրջան է Մխիթարյանների համար, երբ նրանք հրապարակը լցնում են իրենց գրական աշխատանքներով և թարգմանություններով, ավելի շատ գրքերով, քան կարդացողներ կային և շատ շատ ավելի, քան հասկացողներ։

Այսպիսով Մխիթարյանները գլուխ են բերում այն, որ երկու հարյուրից ավելի տարիներ առաջ ձեռնարկել էին հայ վարդապետներն Արևելքում. բայց բուն երկրի մեջ մեծամեծ դժվարությունների և քաղաքական դժբախտ պատահարների հետ կապված լինելով՝ դյուրին չէր գալիս այնպես, ինչպես կցանկանային կատարած լինել այդ գործի համար աշխատողները։ Մխիթարյանները բարեբախտաբար իրենց ձեռքն են առնում գրականության այս վերածնությունը և վայելելով եվրոպական հարմարությունները և խաղաղ ու անվտանգ կյանքի դյուրությունը՝ անընդհատ առաջ են տանում։ Նրանք մատչելի են դարձնում մեր հին գրականության կարևորագույն մասը. կենդանացնում են, միայն գրքերում, հին գրաբարը ոչ միայն կատարելապես զտելով լատինաբանություններից, այլև նորոգելով, հարըստացնելով և ազնվացնելով այն աստիճանի, որ ընդունակ է դառնում այնպիսի բանաստեղծական գրվածքների արտահայտության համար, որ չէր ունեցել հնումը։

Բանաստեղծության վիճակը 19-րդ դարու առաջին երեսնամյակում։— Վերածնության առաջին շրջանի մարդիկը, հազիվ գրել-կարդալու և գրոց լեզվի ուսումը սովորած, առանց արտաքին ծանոթությունների, մի քանի կցկտուր ճարտասանական, տրամաբանական ու պատմական տեղեկություններ ստացած մի սերունդ, անշուշտ չէին կարող ոչ միայն բանաստեղծություն, այլև ընդհանրապես արժեքավոր գրականություն առաջացնել. մանավանդ որ վերածնության գործը նպաստավոր պայմաններին մեջ չէր բուն երկրում և շարունակ ընդհատվում էր։ Եվ եթե այդ մարդիկն ար-

տադրեին էլ գրական երկեր, դրանք պիտի լինեին մեր հնի նմանողությամբ պատմագրություն ու քնարերգություն։ Ուսումն ու գրագիտությունը եկեղեցականների ձեռին էր, և բնականորեն գրականության մշակությունն էլ նրանք պիտի անեին. բայց հոգևորականը յուր կոչմամբ արդեն ընդունակ չէ բազմակողմանի գրականություն և մասնավորապես բանաստեղծություն առաջ բերելու։ Այդ շրջանի մարդկանց միտքն զբաղված է գլխավորապես կորցրած ծանոթությունները հետ բերելով. գեղեցկի վրա ոչ մտածելու ժամանակ ունեին և ոչ հնարավորություն։ Գեղեցկի բավականությունը նրանք տալիս էին հին երգարաններ արտագրելով կամ տպագրելով, կամ երբեմն տաղեր հորինելով, որոնք շատ ավելի ստոր են, քան իրենց նմանողության օրինակները։

Այս նոր երգերի ու տաղերի նյութն էս կազմում են, հարկավ, վարդն ու սոխակը, կամ խնջույքի ուրախությունը, բայց ամենից առաջ՝ կրոնական-բարոյական գաղափարները։ Ժամանակի ոգին էր այդպես. կրոնական ջերմեռանդությունը մեծ էր, ուստի և պահանջ էր զգացվում ոչ միայն նոր կրոնական տաղերի ու գանձերի, այլև նոր աղոթքների։ Նույնիսկ ժողովրդական երգիչները, որոնց մեջ գլխավոր տեղը բռնում է Սայաթ-Նովան 18-րդ դարու երկրորդ կեսում, կրում են իրենց մեջ ժամանակի այդ ոգին։

Սակայն միայն քնարերգությամբ ու աղոթքներով չի բավականանում մեր վերածնության միտքը. 17-րդ դարում արդեն ձգտումն է երևում նաև վիպական բանաստեղծություն առաջ բերելու. բայց դարձյալ կրոնական-եկեղեցական բովանդակությամբ։ Ուստի վեպի նյութ են Ս. Գրքի և ուրիշ կրոնական պատմություններ, որոնք ոտանավորի են վերածվում, ինչպես եղել է և մեր գրականության մեջ։ Եվ ինչպես սիրո ու կրոնական տաղերը, նույնպես և այս բանաստեղծությունը շատ կոնվենցիոնել է, զուրկ կենդանի երակից, չոր ու ցամաք պատմվածքներ, և միայն ոտանավորով հետևակ դրվածք։

Այս մեռած բանաստեղծության մասին գաղափար կազմելու համար բավական է հիշատակել այստեղ Կ. Պոլսեցի Տեր Կոմիտաս Խանձայի «Ոտանաւորք բանք ի գործս առաքելոց», որ տպված է Կ. Պոլսում 1704 թվին։ Հեղինակն ինքը գրքի վերջում ասում է, թե մի պատմագիրք է տեսել, որի մեջ գրված է եղել, թե 536 թ. Հուստինիանոս կայսրի օրով «Հրուշակեալ Արադորոս՝ կիսասարկավագ սրբուհւոյ եկեղեցւոյն Հռոմայ զարմանալի ֆիլիսոֆոս և վարդապետ տաղաչափութեանց» ոտանավոր է դարձրել «Գործք առաքելոցը». ինքն էլ իմանալով, որ հայոց մեջ չկա այսպիսի բան՝ յուր կողմից տաղաչափում է այդ գիրքը, հետևելով Ներսես Շնորհալու «Յիսուս որդի» երկին։ Բայց ո՞ւր «Յիսուս որդին», ո՞ւր սրա աշխատությունը. այնտեղ ստեղծագործություն կա և ջերմ զգացում, որով համակվում է ընթերցողը. իսկ այստեղ սառն, մեքենայական տաղաչափություն միայն «Գործք առաքելոցի» բառերի։

«Զբանն առաջին զոր արարի
Սակս փրկութեան ամենայնի։

Ո՛, Թէոփիլէ այր բարի
Աշակերտ բանին ճշմարտի։
Զոր սկսաւ Յիսուս առնել
Եւ ապա մեզ ուսուցանել։
Մինչև յօրըն պատուիրելոյ
Սրբոց առաքելոցն իւրոյ։
Ի ձեռն հոգւոյն վկայեալ
Ընտրեալ զնոսա և վերացեալ։
Որոց եցոյց զինքն կենդանի
Յետ չարչարանացն և խաչի։
Բազում արուեստս նոցա ցուցեալ
Յաւուրս քառասուն նոցա երևեալ»։

Եվ այսպես մինչև վերջը։

Ավելի լավ վիճակի մեջ չէ գրականությունը և՛ 18-րդ դարու վերջում, և՛ 19-րդի սկզբում։ Հայրենասիրական գաղափարը, որը վերջին դարու բանաստեղծության գլխավոր շարժիչն է, դեռ չի զտված կրոնական-եկեղեցականից։ Այդ ներկայանում է կամ դեռ ողբի ձևով, ինչպես մեր հին գրականության մեջ է եղել. կամ թե, ինչպես դարձյալ հաճախ հնումը եղել է, կենտրոնացած է էջմիածնի շուրջը, որի անունը ժողովրդականացնելու և սիրելի դարձնելու համար գրում են ներբողյաններ ու տաղեր։ Թե ինչ աստիճանի ցամաք ու սնանկ է գրականությունը այս մասին, այդ կարելի է տեսնել 1807 թվին Կ. Պոլսում տպված «Ներբողեան սրբոյ Աթոռոյն էջմիածնի» գրքույկից, որ հորինել է նվիրակ Աստաբատցի Աբրահամ վարդապետը «Զկնի Աստուծոյ՝ օրհնեալ ազգիս Հայոց հոգևոր հայրն և մայրն՝ են երկոքին սոքա. այսինքն լուսաւորիչն հոգւոց մերոց սուրբն Գրիգոր. որ ամս հնգետասան ի բովս չարչարանաց՝ որպէս ոսկի մաքրեցաւ. և Աստուածակերտ աթոռս Սուրբ էջմիածնի... Սոքա են յետ Աստուծոյ երախտաւորք մեր և բիւր բարեաց պատճառք. զորս պարտիմք ճանաչել. և առաւել սիրոյ արժանի համարել ըստ առաքելոյն։ Թեո. ի. 12. 13. ղշնորհս բարերարութեանցն մի՛ մոռանալ ըստ Սիրաքայ, իԲ. 20։ Եւ յամենայնի զսոցանէ գոհանալ. ի հաւատս սոցա հաստատուն մնալ» և այլն։ Մարդ սպասում է, թե էջմիածնի համար մի կենդանի ներբող գտնի, որի մեջ ցույց տրվի նրա նշանակությունը հայ կյանքի մեջ, նրա կատարած դերը և տեղը, գտնում է մի ահագին կուտակություն Սուրբ Գրքի վկայությունների, որ ծայրահեղ աստիճանի սքոլաստիկ մեկնություններով հարմարեցրած են էջմիածնի վրա։

«Վասն զի՝ որպէս ասէ Արիստոտէլ գլուխն ճեմականաց դասուն, ի սեռս իւրաքանչիւր իրաց՝ մին է առաջին և գովելի քան զամենայնսն։ Զորօրինակ՝ ի յիննեակ դասակարգութիւնս հրեշտակաց՝ առաջին և գովելի են Սերովբէքն. ի տասն երկինս՝ հրեղէն երկինքն. ի մէջ լուսաւորաց՝ արեգակն. ի չորս տարերս՝ հուրն. ի մէջ հողմոց՝ հարաւայինն. ի յօթն հրա-

Հալելիս՝ ոսկին. ի մէջ ականց՝ ադամանդն. ի մէջ ծաղկանց՝ վարդն. ի քաղցրահամ ուտելիս՝ մեղրն. ի կերակուրս՝ հացն. ի հեղուկ նիւթս՝ բաղասանն. ի լերինս՝ Սիօն. ի քաղաքս՝ սուրբ Երուսաղէմ. ի տասն սեռականագոյն սեռս՝ գոյացութիւնն. ի յառաքինութիւնս՝ սէրն. և ի յաղօթս Աստուածուսոյց աղօթքն: (Զորոց ամենեցուն գովութեան պատճառս՝ տե՛ւ ի մեկնութեան Հայր մերին, ի գլուխն եօթներորդ, յորինեալն ի մէնջ): Արդ՝ որպէս ի սեռս իւրաքանչիւր էակի՝ մին է գլուխ ամենայնի, առաջին և գովելի քան զամենայն, ըստ որում կարգաւ ցուցաք. ըստ այսմ օրինակի՝ ի վանորայս և ի յեկեղեցիս հայկազեանս ազգի՝ է ամենագովելի և առաջին՝ գլուխ և մայր ամենեցուն՝ Քրիստոսահիմն և Աստուածակերտ Աթոռս մեր՝ Սուրբ Էջմիածին: Եւ սոյն այս ցուցանի՝ ըստ տասն ստորոգութեանցն Արիստոտէլի» (եր. 16):—Եվ ասլա վարդապետը Արիստոտելի տասն ստորոգություններով ապացուցանում է, թե ինչպես Էջմիածինը գովելի է «ըստ գոյացութեանն, ըստ քանակութեանն, ըստ առնչութեանն, ըստ որակութեանն, ըստ երբին, ըստ ուրին» և այլն:

Բայց այդ դեռ բավական չէ: Գովելի է Էջմիածինը նաև նրա համար, որ յոթն սեղան ունի. իսկ սեղանների յոթն թվի մեջ մեծ խորհուրդ կա, և ի՞նչ է այդ խորհրդավորությունը: «Նախ զի եօթն են մոլորական աստեղքն: Երկրորդ՝ զի նահապետն Նոյ առ ջրհեղեղաւն, յամենայն սուրբ անասնոց եօթն եօթն եմոյծ ընդ իւր ի տապան... Երրորդ՝ զի թիւն եօթնեակ ի Թուաբանից կոյս կոչի.... Չորրորդ՝ զի եօթն էին ընտիր և գեղեցիկ հասկքն՝ որք միանգամ ելանէին ի միում փնճի, ի նշանակ լինութեան եօթն ամաց, զոր Փարաւոն ետես և Յովսէփ մեկնեաց... Հինգերորդ՝ զի եօթն էին ճրագարանքն ոսկիաձոյլ Աշտանակին, զոր արար Մովսէս... Վեցերորդ՝ զի եօթն էին գիսակք գլխոյն քաջին Սամփսոնի»... և այսպես մի ահագին շարք, ամբողջ վաթսուն երես, որոնց մեջ Էջմիածնի անունը բարձրացնելու համար բացատրում է յոթն թվի խորհրդավորությունը: Նույնպիսի մի շարքով (61 երես) գովաբանելով Էջմիածնի հինգ կաթողիկեն, չորս սյունը, ցույց է տալիս հինգի և չորսի խորհրդավորությունը, և վերջապես գովում է Էջմիածին անունը, և մինչև անգամ գումարում է տառերի թվական նշանակությունը և եզրակացնում. «Էջմիածին՝ խորհրդաւոր անուն, որոյ տառքն ըստ համարողական հաշուի բաղկացուցանեն ցթիւ ՌՇՂ: Եւ աստի հազար հինգ հարիւր՝ (որ է երիցս հինգ), զամենասուրբ Երրորդութեանն և զհնդից ղգայութեանց կատարեալ կենդանւոյ ցուցանէ խորհուրդս: Եւ իննսուն որ է իննիցս տասն՝ զՔրիստոսի բնակելոյն ինն ամիս ի յորովայն սրբոյ Կուսին, և զիննեակ հրեշտակաց, և զաստիճանաւորացն եկեղեցւոյ՝ նշանակէ՛ խորհուրդս: Այլ և՝ ցուցանէ զտասն երկինս և զտասնաբանեայ օրէնս, զտասն խորանս, և զտասն ստորոգութիւնս, զտասն եղանակս ձայնից, զտասն հոլովս անուան, և զտասն զօրութիւնս հոգւոյն» և այլն:

Ահա թե ինչպես և ինչպիսի միջոցներով են մի դար առաջ աշխատել բարձրացնել Էջմիածնի անունը և կուռել օտար քարոզիչների դեմ: Ինչ որ

ասես՝ կա այդ ներբողյանի մեջ, բայց էջմիածինը չկա։ Աբրահամ վարդապետը, որ յուր ժամանակի գիտնականներից մեկն է եղել, մինչև անդամ տաղեր է հորինում էջմիածնի համար և եղանակներն էլ նշանակում, թե ինչպես պիտի երգեն։ Նույնիսկ աղոթքներ էլ է գրում ուղղված էջմիածնին, և այս ամենը Աստվածաշնչի խոսքերը ժողովելով և հարմարեցնելով էջմիածնի վրա։ Դա «գիտնական» տիրացության մի արդյունք էր, որ դրանից ավելի բան չէր կարող արտադրել «ի փառս Մօրն Հաւատոյ»։ Դժբախտաբար այդ անմտություններն էին գրավում ժամանակի հասկացողներին։

Նույնպիսի մի տիրացության արդյունք է և Կեսարացի Գապասախալյան Գրիգոր դպրի «Երգարանը», տպ. Կ. Պոլիս, 1803 թվին։ Այդ մարդն եղել է ժամանակի ականավոր երգիչը, ծանոթ արևելյան եղանակներին և երաժշտության, և անպայման գործնական նպատակի համար հրատարակել է յուր երգարանը, որի երեսին «շարադրեցեալ» է գրում, բայց ունի և մի երկրորդ մաս, որի երգերն իրենը չեն։ Այստեղ ամենայն ինչ կա, և՛ թուրքերեն ու հունարեն երգեր իրենց թարգմանություններով, և՛ աղոթքներ, և՛ երաժշտության մասին։ Յուր հորինածն առաջին մասն է, որի տաղերի մեծ մասի համար նշանակած է, թե ինչ եղանակով պիտի երգվին. եղանակները թուրքական կամ արաբական են։

Մի կողմ թողնելով աղոթախառն երգերը՝ «Աղերս առ Ս. Հոգին Աստուած», «Առ Հայրն երկնաւոր», «Առ Մայրն երանութեան» և այլն, ինչպես և բարոյակրթական երգերը՝ «Երգ խրատուրէն» կոչվածները, մենք այստեղ տեսնում ենք, որ տաղասաց դպիրը սիրահար է բնության, գարնան, վարդի ու երգնակի (սոխակի), որոնց և վերաբերում են տաղերի խոշոր մասը։ Բայց նա բնություն երգելով հանդերձ բնություն չի տեսնում, նրա երգած երկինքը երկինք չէ, այլ միջնադարյան երևակայության երկինքը։ Ահա թե ինչպես է սկսվում նրա «Երգն ի վերայ երկնի»։

Ի յոչնչէ էացելոց.
Համաեղեալ գոյացելոց.
Նախաբսկիզբն՝ հանրից նոցին.
Ի յԱստուածոյ գոյ ածելոց.
Կամարատես՝ մեծ շրջանակ.
Յոյժ աննըման՝ լայն ընդարձակ։

Եվ այսպես, մինչև տների սկզբի տառերը կազմեն «Ի Գրիգորէ»։ Երկինքը բանաստեղծի համար է դեռ մի «գերակայան», մի «րախճանական տեղ ցնծութեան յորում բարիքն երանութեան», մտքից ու խելքից վեր մի լուսավոր տեղ, մի «անսիւն խորանայարկ», լայն, ընդարձակ, ուր սրբերի հոյլերն են կենում և տեղի է լուսնի և արևի։ Դա կրոնական հայացքով երկինքն է, «վերին Երուսաղեմը», որ և մի ուրիշ երգով դարձյալ գովում է Գապասախալյանը։ Շատ հասկանալի է, որ այսպիսի երկինքը չպիտի տեսներ բանաստեղծը և այդպիսի բնությունից ոչ մի տպավորություն չստանալով՝ նրա երգն էլ բնության տրամադրություն չպիտի զարթեցնի։

Այսպես և «գեղեցկատեսիլ յերեսս երկնի կարի ցանկալի, արծաթանման բոցաճաճանչ յոյժ զարմանալի» աստղերը նյութ են դառնում ոտանավորի ոչ իրենց թողած տպավորությամբ, այլ իրենց մասին եղած ավանդություններով, հավատալիքներով ու սնապաշտություններով։ Այսպես և օդը, երկիրը, ծովը գովում է Գապասախալյանն առանձին երգերով, նա միայն ֆիզիկական և կրոնական աշխարհագրություն է գրում և ոչ թե բանաստեղծություն։

Մեծ թվով երդեր ունի նվիրած և վարդին ու երգնակին, որ սրան էլ հրապուրում են ինչպես մեր միջնադարյան երգիչներին. բայց ոչ մեկի մեջ չի երևում այն եռանդն ու կորովը, արտահայտության այն ուժը, որ ունին Հովհաննես Թլկուրանցին կամ Գրիգոր Աղթամարցին. չկա ոչ մի նոր գեղեցիկ գյուտ խոսքի։ Այստեղ էլ անշուշտ վարդն ու սոխակն իրենց սիրո տխրությամբ և ուրախությամբ անբաժան են գարնան ծաղկալից, գեղեցիկ եղանակից։ Այստեղ էլ վարդը բացվում է ու բուրում փայլելով. գարունը ծաղկում է. դաշտերը զարդարվում և ուրախանում են, գետերը հոսում, քամին փչում, թռչունները կարկաչում քաղցրանվագ և վարդը կարիք է ղգում, որ «զարմանատիպ» սիրահար սոխակը երգե իրեն և կանչում է նրան,—և այս է ամենը, ինչ որ Գրիգոր դպիրը հեղեղում է իր սիրո երգերի մեջ։ Եվ այս ամենը հորինված են հների փշրանքներով՝ միայն մի բարի նպատակով, որ հայերեն բառեր լինին հայտնի եղանակներն ասելու համար։ Հետևյալները Գապասախալյանի լավագույն երգերն են։

Ի վարդէ յերգնակն

Արի՛, սէր իմ, արի՛ երգեա ցնծալի.
Եղանակաւ՝ միշտ քաղցրաձայն բաղձալի.
Ահա եհաս գարուն ծաղկեալ՝ սխրալի.
Սիրտ վշտալի՝
Ես վիրալի
Վարանեալ.
Եմ սգալի՝
Միշտ խղճալի
Ընկեցեալ։

Ողբերգական երգով եկ ձայն արձակեա.
Ինձ լալագին եղանակաւ ձայնակցեա,
Ձայն գովելի՝ երգ ցանկալի դու երգեա.
Սիրտ վշտալի և այլն։

Լալով, ողբով, աղաղակաւ արտասուեմ.
Ձքնաղ ձայնիդ՝ քոյին ահա ըսպասեմ.
Նովաւ յաւէտ՝ զովանալով հանդարտեմ.
Սիրտ վշտալի և այլն։
(Սորա ձայնն է՝ ողբերգական՝ լո՛ւր սէր իմ։
Պիր կիտէրիմ՝ պիր արտըմա պագարըմ)։

Առ երգնակն

Արի՛ երգնակ դու ցանկալի,
Շըքեղաձայն զարմանալի.
Գեղեցիկ ես թռչնոց համայնց,
Երգեա սիրով միշտ ցնծալի.
Գովելի, գովելի, գովելի, գովելի լի լիս

Սիրով ցընծա՛ ոստոստելով
Քաղցրիկ ձայնիւ երգակցելով.
Զայն քո սիրուն զարմանալի
Արի երգեա երգ ցընծալի.
Գովելի և այլն։

Սիրակարկաջ դու սլանծալի,
Զարմանաձայն հիանալի.
Արժան բարի՝ երգ արկելոյ.
Երգեա՛, սէր իմ, միշտ սխրալի,
Գովելի և այլն։

Ուրախացեալ՝ ցընծա՛ սիրով.
Արի՛ փութով ձայնիւ երգով
Ահա է ժամ երգս առնելոյ,
Գարուն եհաս՝ հոտ բուրելով։
Գովելի և այլն։

Էվիճ Զայնիւ՝ ասէ սըմա։
Կեօրտիւմ պիր ղօն՝ չէ յիրանայ։

Նույն անկենդան, կյանքից կտրված և հետևակ բանաստեղծությունն են անում մինչև երեսնական թվականները նաև Վենետկի Մխիթարյանները։ Առաջին մեծ ոտանավոր գրողն է սրանց մեջ 18-րդ դարու վերջում Ղուկաս Ինճիճյանը *(1758—1833)։ Ինճիճյան և բանաստե՞ղծ, շատ տարօրինակ է, բայց Մխիթարյանների հատկությունն է այդ. նույնն եղել է և Ալիշանը և ուրիշները։ Բայց մինչ Ալիշանն իսկական բանաստեղծ է, Ինճիճյանը միայն հնախո՛ս և աշխարհագրություն ու պատմություն գրող։ Եվ եթե ես այստեղ կարևոր եմ համարում կանգ առնել դրա, ինչպես և նախորդների վրա, միայն նրա համար, որ պարզ լինի, թե ինչ վիճակի մեջ է եղել բանաստեղծությունը անցյալ դարու առաջին քառորդում։*

Ինճիճյանը, հարկավ, ոչնչով չէ տարբերվում յուր նախորդներից ու ժամանակակիցներից, բայց եթե նրանով, որ ինքն ավելի կարդացած ու զարգացած մարդ է. ուստի ավելի իմաստալից է գրում։ Նա իբրև քերթող հանդես է գալիս 1794 թվին Վենետիկում տպված «Ամարանոց Բյուզանդեան» գրքով, որ երկու մասից է կազմված։ Առաջին մասի մեջ, որ ունի վերնագիրս՝ «Ծանոթութիւնք աշխարհագրականք առհասարակ նեղուցին

Կ. Պոլսոյ», նա տալիս է «ի մի հաւաքեալ համառօտիւ գրեթէ զամենայն կարևոր և զերևելի տեղեկութիւնս նեղուցին ի հին և ի նոր պատմութիւնս և զստորագրութիւն դրից նորա»։ Այս աշխատանքը Ինճիճյանի հնասեր և փորձ գրչի արդյունք է, որ այժմ ևս կարդացվում է իբրև բազմազան ծանոթությունների մի ժողովածու։ Դա յուր ժամանակի համար մի գեղեցիկ ուղեցույց է եղել Կ. Պոլսի։ Բայց Ինճիճյանը դրանով միայն չի բավականացել. կցել է և մի երկրորդ մաս բանաստեղծական՝ «Ամարանոց Բիւզանդեան», որի մեջ «ոտանաւոր չափմամբ ստորագրեն ծովեզերեայ գիւղօրէք նոյն նեղուցին», նախ եվրոպական ափը և ապա ասիականը։

Ինճիճյան բանաստեղծն այստեղ միևնույն վարդապետն և աշխարհագրություն գրողն է։ Չնայելով որ նա բնության գեղեցկություններն է նկարագրում և գովում, ուրեմն աշխարհական նյութ է բանեցնում, բայց կրոնական նպատակի համար։ Եթե հին աստվածաբանները բնությամբ աստուծու գոյությունն էին ուզում ապացուցանել, հնախոս կրոնավորն այս գրվածքում շարունակ զգալ է տալիս աստուծու մատը բնության մեջ և բնության գովեստը շուռ է տալիս և դարձնում փառաբանություն աստուծու։ Վարդապետը բնավ չի ուրանում ինքն իրեն. ուստի կարևոր է համարում մի երկրորդ երգ ևս գրել, որի մեջ խրատներ է կարդում բյուզանդացիներին արծաթասիրության, անձնասիրության, աշխարհասիրության ու փառասիրության մասին։ Եվ այսպես նա տաղաչափում է մի «նախերգանքից» ու երկու «երգից» կազմված բանաստեղծություն, մոտ երեք հազար տող, քառյակներով տների բաժանված, բոլորը 10-վանկանի տողեր՝ միայն ին հանգով։ Նա նորոգում է Շնորհալու ժամանակի ճաշակը հանգերի վերաբերությամբ, որ նույնիսկ Կոմիտաս քահանային դյուր չէր եկել։

Ինճիճյանը հարկավ բանաստեղծություն չէ անում։ Այս ահագին զանգված տողերի մեջ շատ քիչ քառյակներ են պատահում, որոնք զգացում ունին. բանաստեղծության փոխանակ ճարտասանություն է բռնում. առանց գործողության միակերպ սառն նկարագիր է։ Բնությունը չի կենդանացնում ընթերցողին, որովհետև ինքը հեղինակն էլ, թեպետ ազդված է երևում Բյուզանդիոնի գեղեցիկ տեսարաններից, ուր ծով, լեռ, հովիտ, դաշտ ու անտառ միացած են, բայց չի կենդանացնում յուր երևակայության մեջ այդ բնությունը։ Եվ հետևանքը այն է լինում, որ հեղինակն յուր աշխատության այս մասի մեջ ևս՝ ավելի յուր տեղագրական և հնագրական հմտությունն է ցույց տալիս, քան թե բնության առաջացրած տրամադրությունը։ Առաջին երգն ամբողջ մի ոտանավորով աշխարհագրություն է. իսկ երկրորդ երգը մի հասարակ խրատ։ Ժամանակի պահանջն է այդպես. ոտանավոր շինել մի նյութ, որի համար ոտանավոր պետք չէ։ Այսպես է, օրինակ, և Մկրտիչ Ավգերյանի (1762—1854), մեծ բառարան կազմողի «Բան գործնական» (1812 թ.), որ է գրաբար ոտանավորով մի «կրթութիւն չորս բարոյական առաքինութեանց վրայ», և կամ Ման. Ջախչախյանի «Արուեստ աստուածսիրութեան» խրատականը (1819 թ.)։

Բայց չնայելով այս ամենին՝ Ինճիճյանի գրվածքը յուր ժամանակին

յուր տեսակի մեջ մի նորություն է և մի քայլ առաջ է տանում մեր բանաստեղծությունը։ Նորությունը նյութի ընտրությունն է. այն՝ որ Ինճիճյանը ցույց է տալիս, թե բացի կրոնականից, «խրատօրէն երգերից», էջմիածնի ներբողյանից և գարնան վարդ ու սոխակից՝ ոտանավորի նյութ կարելի է դարձնել և բնությունը, երգել բնության տեսարանները, կամ, ինչպես ինքն է ասում, կենդանագրել Արարչի այդ գեղեցկադիր գործը, «կրկին նորոգել բնութեան ստեղծուածը»։ Նա յուր երկի սկզբում, ինչպես հներն անում էին, դիմում է «զուարթուն ոգուն», որ սովորեցնե իրեն «զգոյ նիւթական յաննիւթ գոյ բանին» հեղուլ, բայց դժբախտաբար զվարթուն ոգին օգնության չէ հասնում և Ինճիճյանի միայն նպատակն է գովելի մնում։

Այս շրջանում անարժեք ոտանավորներ են շինում և մյուս Մխիթարյան քերթողները՝ Ավետիքյան, Ջախջախյան, Թոմաճյան և նույնիսկ Բագրատունի, որոնց բանաստեղծությունները բավական ուշ, 1852 և 1853 թթ. ամփոփված են երկու հատորի մեջ՝ «Տաղք Մխիթարեան վարդապետաց»։ Երրորդ հատորը, հրատար. 1854 թ., յուր մեջ ունի Եդվարդ Հյուրմուզի (1799—1876) տաղերը, որ սակայն ես նկատի չունիմ՝ ձեռի տակ չունենալով։

Գաբրիել Ավետիքյանի (1751—1827) վեց երգերից իսկական բանաստեղծության հոտ բուրում է միայն «Մօրն սրբոյն Աղեքսիանոսի եղերերգը», և հենց այդ պատճառով կասկածելի է թվում, թե արդյոք որդեկորույս մոր այդ սրտառուչ ողբը մի թարգմանություն կամ նմանություն չէ՞ որևէ եվրոպացի բանաստեղծի։ Մյուս երգերը՝ Տրդատի, Շուշանի, Գաբեգին Սրվանձտյանի, Վարդանի ու Վահանի վրա գրած տաղեր են, բոլորը կրոնական բովանդակությամբ։

Ավետիքյանի ոտանավորներից շատ ավելի բարձր չեն **Մանուել Ջախջախյանի** (1770—1835) քերթվածները։ Այդ ոտանավորների արժեքը իմանալու համար հարկավոր է իմանալ, թե ինչպես են հորինվել դրանց մեծ մասը։ Մխիթարյանների այս մեծ սերնդի մեջ մի տարօրինակ գրական սովորություն է եղել. նրանք զվարճացել են ոտքերով ու հանգերով և ոտանավոր գրելով՝ իրար հետ հանաքներ են արել։ Զբաղված լինելով ուրիշ գրական ծանր աշխատանքներով՝ բառարան գրելով, թարգմանություններ անելով և այլն, մեկ մեկ էլ պետք են զգացել հանգստանալու և իրենց հանգստությունը գտել են քերթողության մեջ։ Բայց քերթողություն ի՞նչ տեսակի։ Ինչպես հին աշուղները իրար հետ բաս մտնելիս՝ միմյանց առեղծվածներ էին առաջարկում հանգեր ու ոտքեր տալով, և մրցակիցը պետք է յուր ոսոխի պատասխանը տար առաջարկված հանգերով ու ոտքերով, ճիշտ նույն ձևով իրար հետ մրցում են և Մխիթարյան ընկեր քերթողները։ Իրենց բառով ասեմ, նրանք հորինում են «բռնահանգ» և «բռնակարգ» ոտանավորներ։ «Յորժամ տացի բանաստեղծին նիւթ ինչ հանդերձ հանգական բառիւք, և ըստ այնմ պահանջեսցի զտաղն, կամ թէ քերթողն ինքնին՝ այլոյ ուրուք տաղի յանգավոր բայիւք և չափովք յօրի-

նեսցէ ինչ կամ դարձուսցէ նմին պատասխանի, այս ազգ քերթածաց կոչի բռնայանգ»: Նյութը և հանգն ու չափն ուրեմն տալիս են քերթողին և պատվիրում նրան, որ բանաստեղծե և նա բանաստեղծում է «բռնահանգեր»: Բայց այս դեռ քիչ է. այստեղ քերթողն երևի ազատ է դեռ տրված հանգական բառերը դասավորելու մեջ. բայց «եթէ որով առեալն իցէ կարգաւ զծայրայանգ յայնսն՝ անփոփոխ նովին յիւրումն անստերիւր պահեսցի տաղի, ասի յայնժամ և բռնակարգ»: Ահա՛ թե ինչով են զվարճանում այս քերթողները. նրանք «բռնազբոս հանգեր» են շարժում:

Այսպես Առան Սիսակյանը, այսինքն Արսեն Բագրատունին 1825 թվին առաջարկում է Վահրամ Ռուբինյանին, այսինքն Ջախջախյանին (Մխիթարյան քերթողներն աշուղների պես իրենց կեղծ անուններն ունին) գրել մի բռնահանգ և բռնակարգ ոտանավոր հենց իրեն Ջախջախյանի այդ տեսակի քերթողության վրա, ընդամենը չորս տուն 15-վանկանի տողերով. առաջին տան հանգերը պիտի կազմեն լայնալիճ, ճաճիճ, խիճ, կապիճ բառերը. երկրորդինը՝ բարեբար, կամար, շար, անդադար, երրորդինը՝ նպատակ, ախորժակ, օրինակ, ժամանակ. իսկ չորրորդինը՝ կենաց, հիւսեաց, բարեաց, ի բաց: Եվ Ջախջախյանը գրում է այդ ոտանավորը (Տաղք, Բ. 89): Զարմանալ պետք է, թե ինչպես նա այսպիսի բռնազբոսությամբ դեռ կարողանում է իմաստ դնել յուր ոտանավորի մեջ: Բագրատունին ինքն էլ ապա նույն հանգերով պատասխան է գրում Ջախջախյանի ոտանավորին (Տաղք, Ա. 143): Եվ այդ դեռ բավական չէ, Ջախջախյանը նորից ուրիշ ոտանավորով, նույն հանգերով պատասխանում է Բագրատունուն, և սիրահարվելով այդ հանգերին՝ դարձյալ ուրիշ երկու ոտանավոր էլ է գրում «Յուսով խաբիմք» և «Յամենայնի խոհեմութիւն»: Եվ այդ անում է նա մեծ սիրով և պարծանքով.

Եթէ դիպուած բռնազբօսիկ ինձ կարկառէ նպատակ,
Իմ մեղուքէն ճախրէ զնովաւ քերթողական ախորժակ—

Ջախջախյանը վարպետն է այս կարգի ոտանավորների. ունի մոտ հիսուն այսպիսի քերթված. նրա ոտանավորների մեջ բազմաթիվ են և այնպիսիները, որոնք միևնույն հանգերով են կազմված, ինչպես՝ 19 քերթված միևնույն մեհևանդ-գահավանդ, երթևեկ և տաբեկ և այլն հանգերով (Բ. 68—82):

Ասիլ չի ուզիլ, որ այսպիսի ոտանավորները լոկ մեքենայական արդյունք են մի տեսակ սրամտության. բանաստեղծություն որոնել այդտեղ կարելի չէ. քերթողին տրվում է հանգ և ասվում է գովիր հույներին և նա գրում է «Գովեստ յունաց» (Բ. 62):

Զելլենական զարմիցն ըզպերճ
Առնում գովել նիւթ ոչ ըստերջ:
Վարժեաց ուսմամբ մեծըն Սողոն
Զազգ սովորեալ յանգործ գողօն.
Զորսըդ ձրկանց և զխեչափառ

Իմաստութեամբ լից լուսավառ.
Եւ որք վարժեալ քաղել զհօրոտ,
Զարեւսական ուսան զորոտ: Եվ այլն:

Բայց նույն քերթողը նույն հանգերով և հակառակն է գրում՝ «Պարսաւ Յունաց»:

Ազգ պանծալի երբեմն պերճ,
Ամենայնիւ կաս արդ ըստերջ.
Եւ զոր ուսոյց Թաղէս, Սողոն,
Եգիպտական էր այն գողօն:
Արհեստ քո արդ է զխեչափառ
Կամ ձուկն որսալ լուսնոյն ի վառ.
Հեռի ի քէն նախնին որոտ,
Թութ քաղեսջիր տնկեա հօրոտ: Եվ այլն:

Ապա նույն բանաստեղծը զղջում է յուր վերջին գրվածքի վրա և նույն հանգերով գրում է «Զեղջ ընդ պարսաւին Յունաց»:

Թէ ազգն Հելլէն երբեմն ըզգօն և զինուք պերճ
Այդ յիմաստից յամենայն բարեաց ըստերջ,
Մի զարմանար, ծնցի կրկին Լիկուրդ Սողոն.
Թողցեն դարձեալ համակեալ կան ի գողօն:
Ի նըւազիլ լուսնոյն ծիւրի և խեչափառ.
Եւ պատարի յորժամ լուսինն է լուսավառ.
Եւ երբ թխպին երկինք հողմուտ յամպրոպ յորոտ,
Եւ գեղեցիկն ի դաշտ տապաստ դընի հօրոտ: Եվ այլն:

Ի՞նչ կարելի է ասել այս տղայամիտ խաղերի համար, որ անում են վեհետկյան քերթողներն իրենց հասուն տարիքում, և որ սահմանված են միայն ընկերներին զվարճացնելու համար:

Առեր ահա՛ զոր ինձ ետուր յանգ ի վըսեր,
Խնդրուածոյդ մի՛ անլսող զիս դու ասեր.
Թէ քաղցրասցի երգս անպաճոյճ քան ըզհանուրց,
Յետ կարդալոյդ արկ ի մախաղդ և կամ քուրձ:

Եվ իսկապես, «քուրձ ձգելու» բաներ են դրանք: Եվ բանաստեղծներն իրենք ևս, նույն ինքն Զախջախյանը մեծ բան չեն համարում այս տաղերը.

Գիտեմք անշուշտ նիւթեալս աւիշկ չէ ինչ ախորժ յօրինակ,
Եւ ո՞ գիտէ վարձահատո՞յց լից ներող ժամանակ:
Ոչ շուք անձանց այլ դիւրութիւն միայն խնդրեմք մեր կենաց.
Ոչ թէ պըսակ զոր բաղդն ագահ հէգ քերթողին ոչ հիւսեաց.

Բանդեալն եամոս թէ մրմնջէ ա՞կն ունիցի ինչ բարեաց.
Իմ, Սիսակեան, լուր նըւագիս. թէ չախորժես կաց ի բաց։

Այս «բանտեալ եամոսները», շղթայակապ տաղերը, շատ բան չեն տալիս մեր մտքին, և ոչինչ մեր ղգացումին։ Այդ տաղերի մեջ Մխիթարյան քերթողները զբաղվում են իրենց առանձին խնդիրներով, ընկերական կյանքի մանր դեպքերով. ոտանավորով գովում են միմյանց, կարծես մի տեսակ սիրահարված են մեկմեկու և իրար կրթել ու խրատել են ուզում։ Նրանք փակված իրենց վանական պատերի մեջ՝ իրենցից, իրենց գրական աշխատանքներից, իրենց բառախաղերից դուրս աշխարհ գրեթե չեն տեսնում։ Եվ այս ամենը երգվում է ներդաշնակ, երաժշտական ոտքերով, լիահնչյուն հանգերով, մի խոսքով հիանալի տաղաչափությամբ, բայց ավա՛ղ, միայն այդքան։ Մարդ ցավում է, որ այդ գեղեցիկ տողերը, լիքը հանգերը չունին լի և հարուստ բովանդակություն. որ այդ ներդաշնակ տողերից չի կազմվում և ներդաշնակ միություն հորինվածքի, այլ միայն կցկտուր, հաճախ անհարիր շարվածքներ են առաջ գալիս, լավադույն դեպքում հատ հատ առածանման, իմաստալից խոսքերով, որոնց վրա գոնե մեկ մեկ հանգչում է կարդացողի ծանրացած միտքը։

Բարոյական գաղափարները, որ Ջախջախյանը դնում է յուր «բռնահանգ» և ոչ «բռնահանգ» ոտանավորների մեջ, շատ սովորական վարդապետական քարոզներ են, բոլորն ընդհանուր բնավորությամբ։ Աստված յուր գերագույն իմաստությամբ մարդկանց վիճակը պես պես է ստեղծել, որպեսզի հնարավոր լինի աշխարհում ապրել. ուստի մարդ չպիտի դժգոհի յուր վիճակից. որովհետև

Եթէ անցնիւր ոսկի թագից էր արժանի,
Ի քոյդ փարախ կամ յաղօրիս ո՞ տարժանի։
Կամ թէ գեղջուկ քո պէս մրէ անպէտ քարտէզ
Ո՞ր բահ յայնժամ ըզքոյդ հեշտին բըրէր պարտէզ։

Մի հին գաղափար, որ զբաղեցրել է մեր վարդապետներին, այն է, թե աշխարհում անպետք բան չկա. աստվածային տեսչությամբ, որ չպետք է ուրանալ, ամենայն ինչ որոշ նպատակի համար է ստեղծված.

Ոչ թօնք անպէտք և ոչ երաշտ,
Ոչ առիւծուց, ոչ վագերց վաչտ...
Ոչ անպիտան տեսցես դու գիժ,
Եթէ յաչացդ առցես զբիժ...

Աշխարհի մեջ ամենաբարձր բանը, որ արժանի է երգչի կիթառին՝ է առաքինությունը միջնադարյան քրիստոնեական կրոնական իմաստով։ Առաքինի է նա, որ «ճարտարապես ընդոտնէ զընդդիմակից մարմին հեստ», որին չեն գրավում աշխարհի փառք ու պատիվը, ճոխությունը, ոչ քաջության անունը, ոչ աշխարհի սերը, որ հաղթում է կրքերին և որի ուշ ու միտքը միշտ Աստուծուն է ուղղված.

Երբ նստի յառուակ, և կամ կողմանի ի ծաղկեայ պարտէզ
Շիթք շիւղք ամենայն ղԱստուած նկարեն իբրև ի քարտէզ։

Ունեցածով գոհանալ, հոգ չտանել աշխարհում գանձ ժողովելու, որ մարդուս համար ցեց է։ Թեպետև ուսումնականներին չեն հարգում մեր աղգի մեջ, բայց միշտ պետք է աշխատել, աշխատութիւնն ամեն բանի կհաղթե.

Վաստակք շըքեղք՝ իմ ժառանգ յաւերժակից պայազատ,
Անմահութիւն քանդակեալ նահատակիս ի ճակատ,—

Ահա՛ Մխիթարյան կուսակրոնի մխիթարութիւնը յուր մենավոր կյանքի մեջ։ Ամեն բանում խոհեմութիւն է հարկավոր և քաջ մտածողութիւն.

Թէ ոչ կըշռէ ակըն դիտող,
Ինչ ոչ արժէ ձիգ լայնալիճ.
Թէ ոչ ըզժամ գիտէ որսող,
Ջարժեն և խուռն հաւք ի ճահիճ։

Այս նյութերի վրա պիտի ավելացնել և այն, որ տաղերգութեյան առարկա են դառնում Ջախջախյանի համար նաև կրոնական բաներ— Աստվածածնի ծնունդ, Փրկչի ծնունդ, սրբեր և այլն, ապա բուն Մխիթարյան ընտանեկան կյանքի դեպքեր, ուղերձներ, ձոներ՝ ուղղված այցելուներին. իրենց «աստվածապատիվ» հոգևոր տիրոջը, աթոռակալներին, նորընծաներին, «ի հանդէս ընդունելութեան վարդապետական գաւազանի երկուց նորընծայ վարդապետաց», «ի հանդէս սքեմառութեան», «ի հանդէս ուխտադրութեան» և այլն. բոլորը միայն Մխիթարյաններին, այն էլ միայն ժամանակակից Մխիթարյաններին հետաքրքրող բաներ, զուտ Մխիթարյան «հայրենասիրութեյամբ» գրված։

Ընդհանուր հայ ազգայինը, հայ ազգային վիճակը, խնդիրները չեն հետաքրքրում Ջախջախյանին, եթե այդ խնդիրների մեջ չուզենանք դնել լեզվի այն երկար գովեստը—«ի վերայ լեզուի բան», որի մեջ սակայն հայ լեզվի մասին չէ խոսվում, այլ ընդհանրապես լեզվի։ Նույնպես «ի պարսաւագիրս նախնեաց երգիծաբանութեան» մեջ մարդ սպասում է գտնել գովեստ հայ նախնիների, բայց այդ խոշոր, բոլորը աբ հանգով կազմված քերթվածի մեջ այն միտքն է հայտնվում, թե ամենայն բան, որով ներկա դարը պարծենում է, յուր սկիզբն ունի հին դարի մեջ, և միայն ի միջի այլոց հետևյալ միամիտ ազգային սնափառության տողերն են մեջ գալիս.

Երբ Յոյնն ի դաշտ՝ մեր ցրտահար
Ընդ վայրասուն ցիւռ և իշեար,
Եւ կամ որսայր զանզօր ճագար,

Եւ բուտ քաղէր կաղին և խար,
Հայկ նախահաւ գիրապարար
Յատոք ցորեան և ի յաշար,
Ջեռնոյր թիկունք յիւր ի քովթար
Եւ ի սամոյրն ի յոսկեկար...
Բամբիշն Հայոց էր ի ժանուար,
Աշխոյժ մանկտին քաջ ձիավար...

Բանաստեղծութեան նյութ դառնում են և գրքերի տպագրությունը, ի միջի այլոց Խորենացու տպագրությունն ևս ոգևորել է այս քերթողին. և պետք է խոստովանել, թեպետև դարձյալ «բռնահանգ», բայց լավագույն տողերն է ներշնչել նրան.

Երգել խնդրես զանշուք Խորնի
Որ առ ինև պերճ քան զԱնի,
Որ զԱրամեան զարմ և համբաւ
Պայծառացոյց ի շուք անբաւ։
Այո՛ հնչեմ կերկեր ի փող
Քերթողահօր իմում ներբող,
Որ զիմս երգէ դիւցազուն Հայկ
Տոհմիս որդւոց արև և այգ.
Որ ինձ վիպէ զքաջն Արամ
Հիւսեալ նմին հիւսք անթառամ։
Բարեհնչան մեզ այս տարի,
Որ յիւր եգիտ բազուկ արի,
Զնորայն կանգնել արձան արդար
Ի տիպ աշաց գործոց տիպար,
Տալ յընթերցուած ազգին Հայոց
Զորս են ի փառս և զոր ի խոց,
Զոր նայն սուլեաց քաղցր ի յառաջ,
Եւ կնքեաց յողբ ու ի թառաջ։

Պետք է կարծել թե Խորենացու Ողբը գոնե պիտի ազդեր քերթողին, և նա այստեղ պիտի բարձրանար ընդհանուր ազգային վիճակին և իսկական հայրենասեր դառնար. բայց ոչ։ Նա ողբում է միայն Հայոց ձեռագիրների կորուստը, մնացածն անտարբեր է նրա համար.

Ինձ զի՞ պիտին կաթողգդ և սիւն,
Զոր հուր վատնեաց նևրկեաց արիւն.
Ինձ առիմէ՞ խոյր քո և բարձ,
Զոր աջ անգութ վաղուց եբարձ...

Կամ նույն հանգերով և նույն խնդրի մասին գրած երկրորդ բանաստեղծության մեջ.

Ոչ զամբարտակս և ոչ զսիւն
Ողբամ յարտօսր ողջամբ արիւն։
Զոր բաղդ Յոնեաց՝ բաղդն և եբարձ,
Զթագ ազգիս զգահն և զբարձ։

Եվ այսպես, «աստված տվավ և աստված առավ», ուրեմն «աստ...ւծով մխիթարվիս»։ Եվ այս «աստուծով մխիթարվիսը» այն աստիճանի դեռ իշխում է, որ տեղ է գտել նույնիսկ սգավոր «Ոգի Հայաստանի» պատկերի տակ, որ երևի առաջին անգամ այս մեծ Մխիթարյաններից մտածված և զետեղված է Խորենացու այս 1828 թվի տպագրության վերջում։ Ահա՛ թե ինչպես է հնչում Ջախջախյանի այդ ոտանավորը՝ «Արձանագիր առ ոգին, եղերերգակ ընդ կործանումն Հայկազեան գահու».

Ոգիդ վսեմ, զթագն և զբարձ
Թէ ինձ ողբաս զոր բաղդն եբարձ,
Մի՛ լար. բաղդին բարքն են անդարձ։
Թէ զբարձման սրգաս դու խանձ,
Լա՞ց, ա՛ռ և զիմ արտօսր անսանձ.
Ո՛հ, լա՛մ ըզձեզ հետ և նախանձ։

Մինչ Խորենացու սրտից արյուն է կաթում, երբ հիշում է գահի անկումը, 19-րդ դարու ուսյալ վարդապետը, Հունաստանի ազատության օրերում նրա ողբի տակ ասում է. «Մի՛ լար. բաղդին բարքն են անդարձ»։ Բայց և նույն վարդապետը լալիս է և լացի հրավիրում, որ այդ անկման պատճառն են եղել «հետ և նախանձը»։ Եվ ուրիշ բան էլ սպասել կարելի չէր մի կրոնավորից, որի համար բանաստեղծության գլխավոր նյութը ընդհանուր բարոյական խրատն է կազմում։ Ահա թե ինչ է ասում նա այս մասին մի բոնահանգ, բայց գեղեցիկ տողերով հարուստ քերթվածի մեջ՝ «Մուսայն առ Արամեան քերթողս».

Նիւթ քերթածաց նախ եղիցի ձեզ Արամազդ,
Գործք եղիւսեանց և ուղղութիւնք հանճարիմաստ.
Խոտումն ախտից և կրթութիւնք մտաց հրահանգ...

Անշուշտ, անմարմին վերացական բարոյականը չէ, որ երգի նյութ դառնալով պիտի կարողանար «զանհագներգակն ի յԱրամեանց չնջել արատ», ինչպես ցանկանում է Ջախջախյանը վերոհիշյալ երգի մեջ, այլ բուն ազգային կյանքը, մարդուս թրթռուն սիրտը։ Եվ այն, ինչ որ Ջախջախյանը խրատներ կարդալով ուղղում է հայ բանաստեղծներին, դրանով իսկապես յուր և յուր ընկերների երկերն է բնորոշում.

Աւ ի՞նչ շարժիք դուք զերկնուղէշ սօս և նոճի
Աւ սիւք հողմոց, թէ բանիցդ յերգ՝ սիրտ ոչ ճօճի։
Կամ թէ քերդողն ամենահաճեալ զերդ սէգ առիւծ,

Բաշ ծածանէ՝ ծեծէ զձեռ, բայց սիրտն է հիւծ.
Կամ թէ սրավար աստ անդ սուրայ իբրև թռչուն,
Զբոյն մոռանայ և ոչ գիտէ ո՞ւր իցէ չուն...
Ես և քերդողք երկայնաթռիչք քան զՄասիս,
Յորոց ճախրել թէև պշնուս՝ խոնջեալ կասիս։

Մեր «սիրտը չի ճոճում» այդ «երկայնաթռիչ» բանաստեղծությունից, ու «խոնջացած ետ ենք կասում», որովհետև գրվածքի «սիրտն է հիւծ» և որովհետև բանաստեղծը յուր «բույնը մոռանում է», բայց բույնը ոչ այն վերի տողերի իմաստով։ Բանաստեղծության բույնը ժողովուրդն ու իրական կյանքն է, որ չունի Ջախջախյանը։ Նրա ամբողջ բանաստեղծության մեջ միայն «ի սուրբ Վարդանաւս» բռնահանգում, գրված 1828 թվին, հետևյալ տողերն եմ գտնում ժամանակակից կյանքի մասին.

Նըստի մշակ ընդ հովանեաւ ի բարտի
Լայ զիւր վաստակ ծածկէ զլալիս զոր պարտի.
Հայի ի քիրտն յամարայնի 'ւ ի գարուն,
Ոչ իւր մընայ մեղուացն անմեղ գունդ պարուն։
Ջհօտ իւր խըլէ Մար յուղկահար շոյտ ի քայլ.
Ոչ թէ ըզմին որպէս ներող քան զայն գայլ։

Ահա թե ի՛նչը պիտի լիներ մեր բանաստեղծության «բույնը», որ վերջում միայն գտել է Ջախջախյանը, բայց դժբախտաբար այն ժամանակ, երբ արդեն ուշ էր։ Բայց նա մեր ապագա բանաստեղծության այդ նյութը գտել է կիսատ. նա շատ չափավոր է յուր տեսլականների մեջ։ Վարդանանց դործքը գովելով Եղիշեի նմանողությամբ, նա խնդրում է.

Սո՛ւրբ Վարդանանք, զայս երգ ձօնէ իմ գուսան
Ընդ փունջ ծաղկանց որ յարենէ ձեր բուսան.
Վարձ ոչ հայցեմ գահ Պահլաւկաց հաւասար,
Ոչ զԱրծրունեաց զոր հիմնարկեաց Սանասար։...
Դարձցի մաղթեմ անդրէն Մասիս և Մարանդ,
Կանգնել ձեզ սուրբ տաճար ի կորդ ի մարմանդ...

Եվ այս հասկանալի է մի բանաստեղծի համար, որ մի քիչ վերևում Մուսային Այրարատ հրավիրելով՝ խնդրում է

Ոչ զԱրամեան երգաձայնել ինձ բաղդ յոյր
Ջքաջահաղթ նախասպրսակ կամ Պարոյր.
Եւ ոչ զարին վիշապայաղթ գոռ Տիգրան։
Շամփրեալ ըզթոք ի նիզակին սուր ճիրան։
Այլ Վարդանանց արեան զոր հեղ գոռ Սասան,
Լեր դրուագօք բարձրաձայնիւք վիպասան։...
Ո՛վ երջանիկ սրբոյ գարուն գերդաստան,

Ի դա պանծա՛ ի դա ողո՛րմ Հայաստան.
Ոչ թէ ի Հայկ ոչ ի Տիգրան կամ յԱրայ,
Ոչ և բերրի դաշտ զոր ցանեաց քեզ Շարայ։

Հեռո՛ւ ուրեմն ամենայն ինչ, որ աշխարհական է. հեռո՛ւ հայրենի աշխարհ և քաղաքական կյանք, և դեռ սրբեր ու սրբեր միայն։

Վերջում հիշենք և այս, որ 1789, 1804 և 1815 թվերին գրված երկու քերթվածներ կան,—«Նուագ յաղթութեան ի հանդէս մենամարտութեան Որատեանց, Ողբերգեալ ի թատեր Մխիթարեանց», «Ի ննջեցեալ մահ Խոսրովայ Մեծի յաւարտ ողբերգութեանն եղերերգ», «Ի թատերական ողբերգութեան Երուանդայ Հայոց արքայի»։ Սրանցից հայտնի էր լինում, որ 18-րդ դարու վերջերում արդեն Մխիթարյանց [կողմից] հայերեն ներկայացումներ են տրված, և երևի Ջախջախյանը հայերեն, իհարկե, գրաբար, պիեսներ է գրել պատմական բովանդակությամբ։ Նույնպես Թոմաճյանի քերթվածների մեջ կան երկու երգ «Յողբերգութենէ սրբոյն Աբդլմսեհի», գրած 1802 թվին։

Եղիա Թոմաճյանի *(1777—1848) մեծ վաստակը մեր գրականության համար է՛ Հոմերոսի Իլիականի և Ոդիսականի թարգմանությունը. իբրև ինքնուրույն բանաստեղծ սակավաթիվ քերթվածներ ունի և շատ աննշան է, թեպետև Ջախջախյանի չափ բռնահանգեր չի կազմում։ Այդպիսիներն ընդամենն երկու են թվով՝ «Յարկածս իւր ողբ եկեղեցւոյն Հայաստանեայց», մի հին նյութ, որ սա էլ դնում է յուր բռնազբոս հանգերի մեջ, ապա «Առ Հայաստան խրախոյս ի պարտութիւն Տուղրիլայ ի Մանազկերտ»։ Այս վերջին նյութը նույն հանգերով և հանգերի նույն դասավորությամբ երգել է նույն 1828 թվին և Արսեն Բագրատունին, երևի մրցելով Թոմաճյանի հետ։ Տուղրիլի այդ պարտությունը Մանազկերտի մոտ, որ ոչ մի առանձին նշանակություն չի ունեցել թուրքերի հառաջխաղացման շարժման համար և բնավ չի ազդել Հայաստանի բախտի վրա, անշափ ոգևորում է այս երկուսին ևս անշուշտ միայն այն պատճառով, որ «բռնահանգ և բռնակարգ» ոտանավոր են գրում, այսինքն նյութն և հանգերը տվողը պատվիրել է նրանց ոգևորվել այդ նյութով և խոշորացնել այդ դեպքը։ Եվ այսպես վարվել են մեր քերթողները։ Բագրատունու քերթվածը՝ «Հայաստան առ Խուժաստան ի Մանազկերտ» անպայման շատ ավելի բարձր է քան Թոմաճյանինը, յուր թափով և ուժգնությամբ, որ առաջանում է սակայն ոչ թե նյութից, այլ զորեղ խոսքերից։ Բերենք մի մի հատված երկսից ևս.*

Գլուխ տարւոյդ հաս նաւասարդ,
Վառեա՛ց հայկազն ի զէն ի զարդ.
Հաստահարուստ իբրև բարտի,
Ճօճեա զտէգդ որպէս պարտի։
Թագիդ, բաբէ, եհաս գարուն.

Դու յարքայից անց ի պարուն՝
Քո երկնաճեմ սար ի Մասիս.
Ահ արկանել ազգաց կասի՞ս.
Զի ցնծասցէ քաջն իմ Արամ,
Եւ մանկրաւոյն նորուն երամ՝
Օ՜շ լիասցին իբրև Շարայ,
Իցի՜ւ առլէզք կանգնեն զԱրայ.
Զի գող մեղուդ Տուղրիլըն բոռ,
Տապաստ մեղուացն անկցի ի գոռ՝
Եւ դու ըզթագդ առցես, Թորգոմ,
Ճաճանչ հատցէ շիջեալըդ մոմ.
Դո՜ւ բարձրասցիս գեղով նոճի,
Որ ի զեփիւռ անուշ ճօճի՝ Եվ այլն՝

Իսկ Բագրատունին գրում է.

Ի գալ ամսոյն մեր նաւասարդ
Զգեցան ազինք զինուց ըզգարդ,
Բարձրացաւ բախտ մեր զերդ բարտի,
Գունդ թշնամեաց մերոց պարտի.
Իբր այծեմանց հոյլք ի գարուն
Խայտան Հայոց կոյսք ի պաքուն,
Եւ ի բոլորըս քո, Մասիս,
Որ հովանի ոչ պակասիս,
Խռնեալ կաքաւ կայթէ Արամ
Որպուովք իւրովք երամ երամ՝
Առատութիւն գայ քեզ, Շարայ,
Զիք Շամիրամ Դրժբախտ Արայ.
Հալածեցան իբրև ըզբոռ
Ի ծուխ ցասման մարտկացըս գոռ՝
Նիստ կեր զմեղըր քո, Թորգոմ,
Ջախ աստեղաց վառեա քեզ մոմ՝
Ի բաց կացցէ շիրմաց նոճի,
Որ ի մռունչ տխուր ճօճի՝ Եվ այլն՝

Թոմաճյանի մյուս ոտանավորներն են «Ի սուրբ Դաւիթ մարգարէն», «Ի հարսանիս մեծաց պայազատաց բարերարաց ազգիս», «Առ ազնուազարմ պատանի Յ. Դարեգին Տատեան»,—«որ ուսումնական յաղթանակաւ արքունի հրովարտակին դարձ առնէր ի Փարիզոյ ի հայրենիս անդր ընդ վենետիկ անցեալ յայց վանացս»՝—Այս վերնագիրներն արդեն ցույց են տալիս արժեքն այդ բանաստեղծությունների, որոնք քառասնական թվականների ծնունդ են՝ Ավելի աչքի է ընկնում 1843 թվին գրած «Տաղերգու-

թիւն ի մեծն Մխիթար Աբբայ»։ Հոմերոսի Ողիսականի թարգմանչին վայել էր այսպես նմանողությամբ այսպես սկսել յուր այդ տաղերգը.

Ինձ, երկին, զԱյրն երգեա, որ յաղգէ հողածին
Վերառեալ հրաշացաւ որպէս մարդ երկնային.
Ինքն ողջոյն լուսազգեաց իբր արփի գերակայ,
Եւ զերկրորդն զխաւար փարատեաց Թորգոմայ։
Ինձ դարձեալ զայն ասա. այրն անյանց զի՞ զի
Բազմադէմ լըլկանօք տանջեցաւ յաշխարհի.
Բայց և ճետ զիւր ձգեաց ի նորոգ գերդաստան,
Բերկրեցաւ ծնընդովք, բերկրեսցի և յապայն։

Սպասում ենք մի նոր Ողիսականի, բայց բարեբախտաբար կարճ է կտրում Թումաճյանը. մի երկու խոսքով նկարագրում է Հայաստան դրախտը, Ադամ, Ջրհեղեղ, Նոյ, Հայկ։

Ճետք սորա քաջազունք, որ ի վէպս հրաշանան.
Զի թէպէտ փոքր յածու, գործ ցուցին աննըմանն։

Եվ ապա Արամին, Տիգրանին ու Վահագնին հիշելուց հետո՝

Մի՛ այլ շատ, իմ քընար, զիմ ըզքաջս յուշ ածեր,
Զի մի՛ երգ քո յապայն ցաւ ածգես կարեվէր։

Հայաստանի վիճակը թշվառ է. ավեր այգի, ավեր տունք է նա.

... Հարուածեալ տուն Հայկայ դիւցազին,
Ա՜հ իսպառ խըրթնացաւ, հետքն անգամ չերևին։

Հայաստանը մի կույրերի աշխարհ է, ուր մարդիկ

Ձեռն ի ծնօտ գերարտօսր յորդ հեղուն ի յարկին,
Զայն յողորմ այր ընդ այր կողկողին, ո՞ւր է լոյս.
Այսպէս ազգն իմ նըստեր և անյոյս։...
Գութ հարաւ Արարչին. «մինչև ցերբ այդ խաւար
Թախծութեամբ պաշարէ զԱրամեանն ըզգաւառս»։
Զայն հնչեաց աստուածեան, «Ձա՛պա լոյս եղիցի».
Եւ եղև լոյս արհի Մըխիթարս արփենի։

Մխիթարն ուրեմն է Հայաստանի լուսավորիչ արեգակը և նրա ծնունդները միմյանց հետ մրցում են հայերի մեջ «իմաստից ճրագը» վառելու համար.

Ոմն յիմաստ աստուածեան, ոմն ի վարժըս բնական,
Կէսք յաշխոյժ Պառնասին, կէսք ի գիր հայկաբան։

Այդ ոտանավորն յուր շոշափած խնդրով, թեպետ թույլ արտահայտությամբ, ավելի մեծ նշանակություն ունի քան Մխիթարյան քերթողների

մյուս բազմաթիվ ոտանավորները. սրա մեջ գոնե ազգի լուսավորության հոգն է տարվում։ Բայց Թումանյանը դրանով ոչ մի առանձին նշանակություն չի ստանում մեր բանաստեղծության համար, որովհետև նրանից առաջ, ինչպես կտեսնենք, ուրիշները նույնն արդեն երգել են ավելի գեղեցիկ և ուժեղ կերպով։ Մխիթարյան վարդապետն ուշացել է և նա յուր «Արփենի Մխիթարի» տաղերգությամբ 1843 թվին միայն թույլ արձագանք է տալիս ուրիշների երգածին և սրբացնում Մխիթարին։ Թումանյանը ոչ նյութի և ոչ ձևի ստեղծող է, նա չէր կարող ուղղություն տալ մեր գրականությանը։

Նույնիսկ Աբսեն Բագրատունին *(1790—1866)*, Մխիթարյանների այս համբավյալ քերթողը, յուր սուվարյա հատոր տաղերով, կարելի է ասել՝ ոչ մի շարժում չի մտցնում մեր բանաստեղծության մեջ։ Ես կրկին անգամ համբերություն ունեցա սրա, ինչպես և մյուսների տաղերը ծայրեծայր կարդալու, շատ տաղեր նույնիսկ կրկին ու կրկին անգամ, և ցավում եմ, որ չգտա արժանի այն գովեստին, որ տալիս են նրան իրենք վենետկեցիք առաջ և այժմ՝ համարելով նրան մեծ բանաստեղծ, «ատտիկեցի և լատին քերթողաց արժանավոր անձն՝ իր լեզվովն, մտքովն ու սրտով», այնպես որ «ոչ լոկ ազգային՝ այլ նոր ժամանակաց ընդհանուր մատենագրության ասպարիզին մէջ ալ, իրավամբք և պատվով նշանավոր տեղ մը կրնա գրավել»։ «Կրփայլի քերթողական և իսկաշնորհ հանճար, վառվռուն միտք և բացատրություն, ղարդարուն գեղեցիկ լեզու մը։ Անկարելի է կարդալ Եղերք սոխակին, Գանգատ Պառնասայ և Դատաստան Ապողոնի, Յաղթանակ արդարոց, Դաշտիկն յաւար, ու անոնց նման տաղերը և չխոստովանիլ թե ասոնք արտադրողը սովորականեն դուրս հանճար մըն է ու նախնի քերթվածոց աշխուժիվն ու եռանդով կրթված միտք»։

Բայց դժբախտաբար այսպես չէ։ Արդարև Բագրատունին անխոնչ պարապող մարդ է եղել. լավ իմացել է մեր գրաբարը և հին ու նոր օտար լեզուներ. շատ կարդացել է Աստվածաշունչ, ինչպես և Հոմերոս և ուրիշ դյուցազներգություններ, մեր հին մատենագրությունը. ուսումնասիրել է օտար բանաստեղծություններ, որոնցից և թարգմանել է բավական բան. նա արտադրել է ինքնուրույն շատ բան,—բայց այս ամենով հանդերձ նա մեր գրականության համար ծառայել է ոչ յուր ինքնուրույն բանաստեղծությամբ։ Նա է՛ և կմնա իբրև թարգմանիչ, հայկաբան, քերականություն գրող։ Իսկ իբրև բանաստեղծ ոչ միայն արժանի չէ այն գովեստին, որ տալիս են նրան, այլև չի կարող յուր ժամանակի առաջնակարգ հայ բանաստեղծների շարքը դասվել։ Նա առաջին տեղն է բռնում միայն Մխիթարյան այս առաջին քերթողների մեջ, բայց և յուր էությամբ շատ էլ բարձր չէ նրանցից։

Նրա տաղերը, հրատարակված 1852 թվին, կազմում են մի մեծադիր ստվար հատոր և բաժանված են մի քանի մասերի՝ «տերունականք», «կրօնականք», «բարոյականք», «կենցաղականք», «սթափականք» և ապա «թարգմանութիւնք»։ Ի՞նչ է այս տաղերի նյութը. ինչո՞վ է հետաքրքրվում

և ոգևորվում Բագրատունին. ի՞նչ նորանոր դաղափարներ է արծարծում նա յուր երգերի մեջ։

Նրա «տերունական» տաղերը նվիրված են Քրիստոսի ծննդին և մոգերի երկրպագությանը։ Նյութն ուրեմն շատ հին է և մեր շատ բանաստեղծներից հաճախ երգված։ Բագրատունին ևս յուր երիտասարդ հասակում, երևի նոր կրոնավոր դարձած, 1811—1814 թվականներին յուր հարկն է վճարում այդ հին նյութին։ Առաջին տաղն՝ «Ի ծնունդ Տեառն», որ գրված է 18-րդ դարու իտալացի նշանավոր բանաստեղծ Մետաստազիոյի (1698—1782) նմանողությամբ, իսկապես մի գեղեցիկ քերթված է շնորհալի ու փափուկ անուշությամբ, կենդանի ու հարուստ երևակայությամբ, թեպետև սովորական գաղափարներով. այն է՝ մանուկ Քրկիչը գարնանային մի առավոտ է ծագում մարդկանց համար, մի ճշմարիտ ոսկեղեն դար բաշխում, գթություն ու սեր, հավասարություն ու խաղաղություն բերելով աշխարհ։ Եթե Բագրատունին բավականացած լիներ միայն այս քերթվածով, շատ էլ չէինք ցավիլ. բայց նրա գրիչը բեղմնավոր է, և հենց սկզբից հակված է դեպի վիպականությունը. ուստի և նրա կրոնական ջգացումին չէր կարող գոհացում տալ միայն «ըստ Մետաստասեայ» քնարերգությունը։ Պետք է նորից մի քանի անդամ նույն բանն երգել մեծամեծ քերթվածներով, երկար, վիպական տողերով, առանց սակայն մի որևէ խորություն մտցնելու նյութի մեջ. այլ, ընդհակառակն, ծանծաղացնելով այն, և ոչ միայն մտքերի, այլև խոսքերի և նույնիսկ հատվածների կրկնություններ անելով։ Այսպես, օրինակ, ամբողջ տասնութ տող 1812 թ. գրած մի քերթվածից, առանց այլևայլության, բառացի առնում դնում է 1813 թվին գրած մի ուրիշ քերթվածի մեջ։

Բագրատունին յուր այս հասակում, այդպես երևում է՝ տարված է հեթանոսական դյուցազներգությամբ։ Բայց ի՞նչ ավելի անգյուր և անպատեհ՝ քան Փրկչի խոնարհ ծնունդը վիպել հեթանոսաբար և Քրիստոսին անվանել «վեհազուն ծնունդ անմահին Ոլիմպեան» (եր. 29), և կամ «Միրանեփառ» հայր Աստուծուն դնել Ոլիմպոսի կատարին, ինչպես հոմերական Զևս, բարձր գահի վրա։ Այսպես, ծնվում է մանուկ Հիսուսը անշուք այրում. հավատքը անձնավորել իբրև մի լուսապգեստ, պառաված կույս, ներկա է նրա ծննդյանը, բայց երկբայում է, թե նորածին մանուկը լինի նա՞, որին չորս հազար տարուց ի վեր սպասում է ինքը։ Այդ ժամանակ նա

> Կոչէ ի սըրտէն պարտօսր պճառաչ զաղերս մաղթանաց։
> Եւ հոգւոց ելեալ ասէր առ նոսա դիմօք սրգապգեաց։

Բավական չէ, որ Հավատքը, վերացական գաղափարն անձնավորյալ է, նրա արտասուքն ու մաղթանքներն ևս, ըստ հին մեկնաբանների, անձնավորյալ են այստեղ. և Հավատքը պատվիրում է դրանց գնալ Բարձրյալի մոտ և հարցնել, թե արդյոք մսրում ծնվածը նա՞ է, որ պիտի գա։ Եվ ահա այդ արտասուքն ու մաղթանքները սևապգեստ խմբով, թևերը բաց են անում, դլխակոր, աչքերը խոնարհած հասնում են Ոլիմպոս, պատում են

Միրանեփառի բարձր գահը, լաց ու կոծով փարում են նրա ծնկներին և աստմ նրան ինչ որ պատվիրել էր Հավատքը։

Խոնարհեաց բարձրեալն ի վերին գահուն զունկն իւր անմոլար
Անժըպիտ դիմօք զաղերսըն լսել, սակայն հեզաբար։
Առ ապա ի վեր ըզգլուխ իւր ահեղ և զուլան կամար,
Ի շարժել յօնից սասանեալ դողաց Ոլիմպեայ կատար։
Եւ ո՞ հանդարտէր ի լուր պատգամաց լեզուին ազդարար.
Հայեցաւ յերկիր, ձայն եւս որոտման ի սոյն յայս տիպար։

Ճիշտ ինչպես ամպրոպային Զևսը Ոլիմպոսի գլխին։ Նա հավատքի դեսպաններին բացատրում է, թե նորածինն յուր որդին է և ապա կանչելով հրեշտակների բանակը՝ հրամայում է, որ գնան պաշտեն յուր որդուն.

Եւ ընդ բարբառոյն որոտաց երկին շանթից ի փայլակ,
Հոգւոց անմահից ծածանեալ յերեր սօսափիւն բանակ,
Եւ երկրպագեալ տէրունեան ոտից գընան յանդաստակ,
Գըլուխ ոսկեվարս լուսաթև թըռչին արի պատանեակք։

Հրեշտակներն իմաց են տալիս և հովիվներին, որոնք նույնպես գալիս են երկրպագելու նորածին արքային։

Այս միևնույն նյութը, ինչպես և մոգերի երկրպագության մասին քերթվածը՝ «Ի յայտնութիւն Տեառն» նա վերածած ունի նաև բեմական ձևի, բաժանված չորս փոքրիկ արարվածների. երևի Մխիթարյանների աշակերտական թատրոնում խաղալու համար։ Դրանք առաջին հայ օրատորիաներն են, կրոնական թատերգություններ, որոնց ներկայացման համար առանձին բեմական հարմարություն չի պահանջվում։ Բագրատունին այստեղ էլ ներշնչված է անշուշտ Մետաստազիոյից, որը նույնպես ունի բավական թվով օրատորիաներ։ Գործողությունը իհարկե շատ պարզ է, չկա դրամատիկական զարգացում և ոչ բնավորությունների ուսումնասիրություն. դրանց, ինչպես սպետք էր, փոխանակում է կրոնական-բարոյական այլաբանությունը, որով երեք մոգերի տեղ հանդես են գալիս անձնավորյալ Հավատք, Հույս և Սեր, և ապա իշխում է աստվածային հրաշալիքն ու սքանչացումն այդ հրաշալիքի վրա։ Բայց դժբախտաբար սառն է հնչում Բագրատունու քնարերգությունը, և մանավանդ միջի երգերը չունին այն ցնծագին խանդավառ հափշտակությունը, որ անհրաժեշտ է։

Ինչպես էլ լինի, Բագրատունին յուր այս կրոնական դրամաներով մի մեծ նորություն է մտցնում մեր գրականության մեջ, մի բոլորովին նոր տեսակ, որ մինչ այդ գոյություն չի ունեցել մեղնում։ Արդարև, ինչպես տեսանք, Ջախջախյանի և Թոմաճյանի ոտանավորների մեջ հիշվում են 1789, 1802 և 1804 թվերի համար «Մխիթարյանց թատր» կամ «Թատերական ողբերգություն», բայց Բագրատունու այս օրատորիանները, գրված 1812 և 1813 թվերին, ինձ ծանոթ հնագույն գրվածքներն են իրենց դրա-

մատիկական ձևով, թեպետև քառասուն տարի հետո միայն հրատարակված, ուստի և ոչ մի ազդեցություն չթողած մեր գրականության վրա։

Բագրատունու «Կրօնական» տաղերը պետք է հասկանալ կրոնավորների և կրոնավորության վերաբերյալ։ Դրանք նվիրված են նորընծա կրոնավորյալներին, այս կամ այն ձեռնադրությանը, սրա կամ նրա սքեմ ընդունելուն, նորընծա բարեկամների առաջին պատարագին, Մխիթարյան Աթոռակալի ընտրությանը, օծմանը և այլն,—բոլորն էլ ըստ ավուր պատշաճի հորինված ոտանավորներ, Մխիթարյան ընտանիքի մեջ տեղի ունեցող դեպքերին հանդիսավորություն տալու համար։ Տաղերիս նյութից հենց կարելի է գուշակել, թե ինչպիսի գաղափար պիտի արծարծվի դրանց մեջ։ Դա Հոգու և մարմնի, երկնքի և երկրի միջնադարյան կռիվն է։ Պետք է կռվել աշխարհի բռնակալ սիրո դեմ, որ մարդուս հոգին շղթայակապ քշում է դեպի խավար անդունդը. պետք է հաղթել այդ կորստաբեր սերին և ամաչեցնել սատանային, որ մարդուս թշնամին է։ Եվ այդ նորընծա կրոնավորները, նորոգվելով անունով ու գործով, իբր քաջ զինվորներ մարտնչում են չար թշնամի հրեղեն սպառազենների դեմ. և այդ նրանք կարողանում են անել, որովհետև կատարելով ամենամեծ գործը, այսինքն իրենք իրենց ինքնակամ նվիրելով Աստուծուն իբրև զոհ, դառնում են հրեղեն հրեշտակներ և սարդենի սլսակներով սլանում են դեպի երկինք, մտնում փրկչի տունը՝ երկնային կամարը, ուր հավիտյան պիտի ապրեն։ Կրոնավորը նման է փյունիկի, որ ինքն իրեն ողջակիզելով՝ հրաշալի կերպով կրկին նորոգվում է հավիտենական կյանքի համար։

Այս է ահա՛ այդ կրոնական տաղերի նյութը, որ անհրաժեշտորեն շարունակ հեղհեղում է քերթողը, քանի որ բոլորը միանման դեպքերից առթված բաներ են։ Դա մի շատ հին նյութ է, որ շատ ավելի գեղեցիկ կերպով երգել է Կոմիտաս կաթողիկոսը՝ Հռիփսիմյանց մի Անձինքի մեջ, որի խորությունն էլ չունին Բագրատունու այս տաղերը։ Հռիփսիմյանք իրենց նվիրելով Քրիստոսի սիրուն՝ դառնում են Հայաստանի փրկության պատճառ. բայց և մեր բանաստեղծն անկեղծ սրտով ուրախանում է յուր նորընծաների ձեռնադրությունների համար, ուրախանում է նրա կարծիքով և «Հարսն անարատ Հայաստան», որովհետև

Արդէն սարսին սանդարամետք ի խաւար,
Եխած զմատն արիւն ակամբ Բելիար,
Զի յաջորդէ Յեսու զՄովսէս յամս յամայր
Քակել զամուրս, թաւալ ժանիսն ընդ աւար։

Աթոռակալին նվիրված քերթվածների մեջ մեր քերթողը մեծ թեթևությամբ չափազանցության մեջ է ընկնում, ուժգին տողերով գովելով նրան իբրև աստուծու ընտրածի, և գուցե մխիթարյան տեղական դեպքը խոշորացնելով իբրև մի համազգային բան.

Զարթիր, զարթիր, տուն Սիսակայ, զարթո՛ և պար նուագածու.
Հայրենի մեր աշխարհին սուրբ թագաւոր օծաւ իշխան,

Առէք տաւիղ կընդընդոց փող և բամբիռըն Գողթան,
Գողթան շըռինդն յարուսցէ զբլուրս և զանտառ։
Յաղթող երգոց ձայնիւ գոչել մըրցական
Ըզխոնարհ միտս իմաստնոյն՝ ըզսիրտն ի տէր սիրոյն ի վառ։

Այդ նոր առաջնորդը, «թագաւորը», որ հավելյալ կոչում ունի «Դիտապետ Սիւնեաց», է մի արևգակ, որին երգում է տիեզերքը, որովհետև նա ձմեռվա կապանքը քանդում է և այլն։

Ո՞վ է սա նոր արքայ եկեալ ի Սիւնիս,
Անձաւք լերանցըն Սիսակայ հարցանեն։
Ընտրեալն է դա եթերին նորաւրըսակ տէր երկրիս,
Գայ ի պարտէզ քո սիրելի շունչ հարաւոյ ի հիւսիս.
Հոյլ վարդից և շուշանաց և համասպրամ ցիր նըկարէն
Փըթթեանդ ոտիւք տէրունեան գարշապարաց լուսեղէն։

Ահա թե ինչպես բարձրացնել գիտե Բագրատունու Մուսան յուր մեծավորին։ Եվ ինչի՞ համար, որովհետև

Յաւուրց Մուշեայ պակասեցին հալք որդւոց,
Պակասեցին ի տուն Հայկայ պետք հարանց,
Մինչև յարեաւ Մըխիթար, մինչև յարեաւ դէտն Ադոնց,
Որ այդ յերկնից սպատշգամէն յառեալ ի մեր յոյժ լալօնս,
Զի՞ յամէ մեզ, ասէին, աթոռակալ ժառանգ մանկանց։

Եվ այժմ այդ ուշացած աթոռակալն ընտրվում և օծվում է։

Մխիթարյանց այս սովորությունը, որ կարծեմ Կ. Պոլսից է ծագել, անցնում է ետ Կ. Պոլսի վրայով Հայոց եկեղեցու մեջ և երկար ժամանակ, կարելի է ասել մինչև մի տասն ու հինգ տարի առաջ, էջմիածնում ևս պարտք էին համարում գրաբար ճոճուն ոտանավոր ուղերձներով շնորհավորել կաթողիկոսի գալուստը, օծումը, նոր տարին և այլն։ Դրանք քնարերգություն չեն հարկավ, այլ միայն մտածված հանգիր ու ոտքեր, որոնց մեջ սակավաթիվ տողեր միայն ունին զգացմունքի շեշտ։ Դրանց կատարելատիպը կարելի է համարել ահա՛ Բագրատունու այս քերթվածները, որոնց մեջ փայլուն արտաքին, զարդարուն լեզու, վարթամ ասացվածներ՝ որքան ասես՝ կա, բայց իզուր կլինի որոնել զգացմունքի ուժեղություն, եթե չասեմ զգացմունք. իսկ իմաստ ու գաղափարի նկատմամբ դատարկություն է իշխում։

Նույնպիսի չնչություն են ներկայացնում գաղափարներով և «բարոյական» տաղերը։ Աշխարհումս խաղաղ կյանք ասածը չկա, այլ միայն ցավ ու աղետ, թախիծ ու տագնապ.

Գանձեալ կան քեզ աղէտք ցաւոց դարան,
Սրտի մտաց երերական

Բքայորդոր ձմեռն ալեաց խուժան
Փոթորկայոյզ ծով դառնութեան։

Աշխարհս մի ծով է և մարդս նրա վրա մի նավ, որ ալիքների ձեռին խաղալիք է դարձած, դիվաշունչ հողմը առնում տանում է դեպի նավաբեկութիւն,—մի հին գաղափար և նոյնիսկ նմանութիւն, որ սակայն բագրատունին մանրամասնութեան մեջ նորոգում է։ Նոյնպիսի մի նորոգած ձևով երգում է նա վերջին դատաստանը, որ մեր հին բանաստեղծների սիրած առարկան է եղել և որի ժամանակ երևում է, որ վերջին հաջողութիւնը ոչ թե անօրենն ունի, այլ արդարը։

Բագրատունու «կենցաղական» կոչած տաղերը, որոնք թվով ամենից շատն են և լի գովեստի արժանացած, նյութով շատ ավելի բարձր չեն։ Դրանք մասամբ ուղղված են յուր ընկերներին. մեկի մեջ յուր սերն է հայտնում, մյուսի մեջ յուր շնորհակալութիւնը ստացած պարգևի համար. կամ թե լացով ճանապարհ դնում յուր ընկերին. մի չորրորդի մեջ գանգատվում, որ յուր սրտի հատոր ընկերն իրեն նամակ չի գրում։ Կան և կաղանդի շնորհավորութիւններ իրենց հոգևոր տիրոջը կամ «Առ կարգակիցն ճանապարհորդ ի Հնդիկս օգտախնդիր ազգիս», իսկ թե ինչ է այդ օգուտը՝ չի իմացվում. այդ կարգակիցն արիութեամբ ծովեր է անցնում, սրտում ունենալով ազգի սերը։

Հայկ կառուցող հայրենեաց
Զքեզ որդի դաւանեաց.
Պարթևն արթուն և ցանկալին քո Սահակ,
Մխիթարայ զորավարք՝ քեզ հարկանեն փողոց հրուչակ.
Տես արդէն, տես ի տրխուր դէմս հայրենեաց
Քաղցր շողեալ ըզժրպիտ որդեգորով քո գրգուանաց։

Կան և ուղերձներ նվիրված Աղեքսանդր Ռափայել Ղարամյանին նրա գալուստը կամ ծնունդը շնորհավորելու համար, որովհետև նա դպրոց է բացել։ Մի քերթված Ռուսաց Աղեքսանդր Բ. կայսեր այցելութեան առթիվ, ուրիշները Լևոն ԺԲ պապի Ուրբանյան դպրոցի սանների հետ ճաշկերույթի առթիվ, և այլն։ Եվ վերջապես բռնահանգ խաղեր Ջախջախյանի հետ, և ահագին թվով ոտանավորներ նվիրված Տյուզյան ընտանիքի որևէ զուտ ընտանեկան դեպքի, ինչպես՝ ծնվում է մի երեխա, պետք է ոտանավոր գրել. մեռնում է մեկը՝ դարձյալ ոտանավոր է հարկավոր. հիվանդութեունից առողջանում է մի ուրիշը՝ ինչպե՞ս կարելի է ոտանավորով խնդակցութեյուն չհայտնել. հապա երբ հարսանի՞ք է լինում, իհարկե պետք է հարսին գովել... Բագրատունին այդ բազմաթիվ տաղերի մեջ դառնում է Տյուզյանների տանու քերթողը, որ յուր՝ նրանցից վայելած բարիքների համար գրաբար հանգերով ու ոտքերով վարձահատույց է լինում։ Դրանք գրչի վարժութեյուններ են միայն երբեմն ձիգ ու երկար տողերով, և սահմանված են միայն մանավոր մարդկանց սրտերը շոյելու համար։

Նրա կենցաղական տաղերի մեջ շատ գովում են «Դաշտիկն յաւար, եզերք մշակի», որ մի ուխվանկանի ղուգահանգ ոտանավոր է մեծավերջ և չափի պատճառով հենց աշխույժ եռանդով է ընթանում։ Բովանդակությունը մի շատ հասարակ բան է։ Երիտասարդ որդին ծերունի հոր հետ, բախտից հալածված, գալիս բնակվում են բնությամբ հարուստ մի ամայի դաշտում. մշակում են. հինգերորդ տարվա վերջը մշակությունը տալիս է յուր արդյունավետ պտուղը։ Այդ ժամանակ հայրը մեռնում է, և որդին մեն մենակ է մնում ու ասում է.

Այն ինչ արդարն յինէն գնաց,
Վեհն յերէկ զմեղս իմ յիշեաց.
Յիւրմէ գընգէն ետ ասպատակ
Առնուլ վրէժ արագ արագ։

Իսկ թե ի՞նչ է արիլ որդին, ի՞նչ մեղք է գործել նա, որի համար աստված վրեժ է առնում, հայտնի չէ այդ։ Անշուշտ մի մեղք գործել է, որ աստպատակավորները երեք կողմից վրա են տալիս, ավերում են արտ ու այգին, տիրում երկրին և իրեն մշակին էլ «Հաննալ գանիւ ու ի քարշ ընդ երիզուտ վարեն զիս գարշ»։ Եվ նա այնուհետև մի մխիթարություն ունի,— հիշելով յուր անցյալ աշխատանքը՝ ողբալ։

Նախաբանն այնպես է, որ մարդ ապաստում է մի դառնագին զորեղ ողբի, մի զգացմունքների բուռն զեղման.

Մելպոմենէ, հար ինձ քընար
Երգել ձայնիւ ողբերգաբար...
Լացցեն նուաղ լերանց փապարք,
Մրոընչեսցեն ձորք և անտառք.
Երեսք մարգաց հարցեն դալուկ,
Արտօսր հեղցեն սողեալ առուք.
Յաւերժահարսանց պար գեղեցիկ
Ձեռն ի ծնօտի նըստցին լըռիկ.
Զի մեր դաշտիկն յաւար եղև,
Յոյս վաստակոցս ել ի դերև։

Բայց այդ նյութն ավելի վիպական-նկարագրական է քան քնարական։ Բնության նկարագիրները շատ ընդհանուր են և ամեն տեղի. մշակության և ավերմունքի նկարագիրը նույնիսկ համաչափ չէ տարված, և վերջը բանաստեղծի թափը թուլանում է և սառն է հնչում այն մասը, երբ հեծեծագին ողբը պիտի լիներ։ Գուցե կարելի է այլաբանություն համարել այս քերթվածը և Հայաստանի պատկերը տեսնել մեջը, բայց այդ կլիներ ձգձգված բացատրություն։

Նյութով շատ ավելի ստոր բան է և մյուս գովված քերթվածը «ի մահ սոխակին եղերք հովուի», որի գեղեցիկ մասը հենց սկիզբն է.

Աչք գեղեցիկ ցօղագին
Լացէք զմահ սոխակին։
Վա՜յ և եղո՜ւկ ինձ հիքիս,
Սուգ և ի յիմ սիրելիս.
Ջամեննեսին մի խաւար
Դընէ յարտօսր անդադար։
Մի՛ զիս, մի՛ զիս ըսփոփէք,
Մի՛ դիւր սըրտիդ տայք երբէք.
Զի սէր սոխակն իմ լըռեաց
Սան իմ սիրուն երգասաց,
Զի սէր հաւիկն իմ մեռաւ
Սան իմ սիրուն անպարսաւ։
Նըզով ի սև օրն և ժամ
Յոր զիւր տարմին լիք երամ,
Օրն և տեղին սև նըզով՝
Ուր տեսի զնա մոտ երգով։

Եվ այս բոլորն ինչո՞ւ համար։ Մի արճեճցի հովիվ մի անգամ սրինգ է փչում։ Լսում է մի սոխակ նրա նվագը, մոտենում է և ինքն էլ երգում է։ Հովվի խնդրի վրա այդ սոխակը նախ նստում է նրա ուսին, և ապա

Անդուստ ածեալ ըզթևերն
Ի ծայր սրընգիս գայր նըստէր։
Ելեալ և իմ մեղմաքայլ,
Երգ փոխելով այլ և այլ
Եկի՝ւ ի տուն իմ մըտի։

Հովվի կինը սրնգի ծայրից ընդունում է սոխակին, փայփայելով դնում է վանդակում, ուր երգելով նա զվարճացնում է հովվին և յուր ընտանիքին։

Սակայն ի սեաւ մանգաղէ
Ժպիրհ մահուն ո՞վ ապրէ։

Մի ամառ այդ սոխակը սատկում է և կարծես աշխարհը կործանվում է. կարծես այդ սոխակից էր կախված ոչ միայն հովվի, այլև աշխարհի բախտը։ Եվ ողբում է ու ողբում հովիվը ու չի մխիթարվում։

Ո՜հ, մի՛ ստիպէք երկարել,
Սիրտ ոչ բերէ զբանիս թել...
Ոչ բըժըշկի սրտիս խոց...

Եվ այսպես մոտ երկու հարյուր տողանի մի ահագին քերթված, որի մեջ այլաբանությունն էլ կարելի չէ լինում տեսնել, ուստի և ծաղրական մի

բան է դառնում յուր մեծավայելուչ լրջությամբը։ Ծաղրելի է դառնում մանավանդ և նրանով, որ արճեշցի հովվի բերանից լսում ենք՝ Ամինդաս, Անակրեոն, Տիբուլ, Որփեոս, Ոսիան, Բարգ, Պռոմեթևս, Աուլուժ լիբյան, Հիմալայք և այլն, և այլն։ Եթե կլասիկական կյանքից առած ոտանավորների մեջ, ինչպես «Ի մահն Կեսարու», կարդում ենք ժողովուրդ արիսյան, դիք և կամ դից անուններ, այդ հասկանալի է, որովհետև նյութն է պահանջում այդ։ Բայց երբ մի արճեշցի հովիվ է այսպիսի անուններ արտասանում և կամ նույն ինքը Բագրատունին, մխիթարյան մի վարդապետ, այդ արդեն տաղտկալի է։

Եվ Բագրատունու ամենամեծ ծառայությունը մեր գրականության համար այն է, որ նա այդ կեղծիքը՝ կեղծ դասական ուղղությունը մտցրել է մեր բանաստեղծության մեջ։ Կրթված լինելով կլասիկական գրականության վրա, նա կարծում է, թե աստվածներըը կամ դից առասպելները, որ հիշում են հին բանաստեղծները, մի բանաստեղծական պաճուճանք են միայն և այդ պաճուճանքը կարելի է և հայ կյանքի քերթվածների մեջ գործածել։ Նրա համար գրեթե չկա աստված, այլ աստվածք, դիք, անմահք։ Եվ այդ անմահները մի քանի քերթվածների մեջ վխտում են՝ Մուսա, Մելպոմենե, Պոլիմնիա, Մնեմոսինե, Պիգաս, Արամազդ, Ապողոն, Պիմպլայք, Փայտոնք, Փեբոս, Արես, Պոսիդոն և այլն, և այլն. նույնպես Հելիկոն, Պինդոս, Պառնաս և այլն, և այլն. դրանց հետ բազմաթիվ ակնարկություններ հին կլասիկական առասպելների։ Ընթերցողն անսպայման պետք է ձեռի տակ ունենա մի հատուկ անունների բառարան, ապա թե ոչ՝ բան չի հասկանալ Բագրատունու լավագույն համարված քերթվածներից։ Որովհետև, օրինակ, ի՞նչ կհասկանա մարդ առանց բառարանի հետևյալ երկտողից՝

Մեզ տիտոնեան հարսն սիրած
Պարզէ զգլխով վրան ներկած։

Բառարանը միայն մեզ տեղեկացնում է, որ Տիթոն եղել է Տրոյացի իշխան, Պրիամոս թագավորի եղբայրը, որին իր գեղեցկության պատճառով սիրում է Արշալույսը, Ավրորան, և անմահացնում նրան։ «Տիտոնեան սիրած հարսն» ուրեմն արշալույսն է, և փոխանակ պարզաբար ասելու, թե «մեզ արշալոյսն ղգլխով պարզէ վրան ներկած», Բագրատունին վերի տողերն է կազմում։ Ջախջախյանն յուր լավագույն քերթվածի մեջ, «Մուսայն առ Արամեան քերթողն», գրում է հետևյալը.

Բառք անապակք՝ որպէս ուսոյց հաւ ձեր Թորգոմ.
Բայց ոչ մոռայք՝ մինչ լուցանել լապտեր և մոմ.
Կամ ի Տարօն չուել պանդուխտ կամ ի Դըւին,
Մեռելահարց՝ զի՞նչ այն բառից ձեզ միտք թըւին։

Բագրատունու քերթվածները հասկանալու համար ահա՛ հենց այդ միջոցներին պիտի դիմել։ Այդ պատճառով թեպետև քանի քանի անգամ

կարդացի նրա գրված «Առ գանգատ Պառնասեաց և դատաստան Ապոլոնի» տաղը, որի մեջ քառասուն-հիսունից ավելի դիցաբանական անուններ միայն կան,—բայց շատ քիչ բան հասկացա։ «Լապտեր և մոմ» էլ վառեցի, բայց դարձյալ գոհ չեղա, թե իրոք կատարելապես ըմբռնել եմ այդ քերթվածի միտքը։ Այո՛, իմացա, որ Առանը, այսինքն բանաստեղծ Բագրատունին, իրեն երևակայում է հովիվ Բյուրականյան լեռներում, յուր տաղավարում ճաշում է ղմայլելով բնության գեղեցկությանը։ Այդ ժամանակ հանկարծ վերևից տեսնում է իջնում են

Կաղըս կրկին երկածի քառահոլով անուադործ,
Ուլթոտանի երիվարք ի գիլ գոլով քաջափործ։

Այսինքն երկու ոտանավորով գրած նամակներ է ստանում, որ և առիթ են լինում այս քերթվածը գրելու,—ասած է ծանոթության մեջ, թե չէ ընթերցողն ինքը չէր հասկանալ։ Եվ ապա դժվարանում եմ ասել որոշ բան, բայց եթե այն, որ հեղինակը մեծ տենչանք ունի մեծ բանաստեղծ դառնալու սրաթև Պիդասի վրա նստած՝ Պինդոս բարձրանալու և մեծ բանաստեղծների հետ անմահության մահով մեռնելու։ Բայց «չիք սէր կամենայց, ո՛հ, յանտերունչ իմ գրոհիս. սակաւ բնատուր վեհ ոգի՝ աստուածատեղծ մեծութիւն», ասում է քերթողը։ «Պարք Մուսայից հայկազանց փախեան ի գոգ Ադրիոյ», այսինքն Վենետկի Մխիթարյան վանքը. բայց այդտեղ էլ նրանք բանաստեղծության համար պահանջված հարմարությունը, հանգիստն ու պարապը չունին։ Իսկ Հայաստանը հո՞ բնավ հարմարություն չունի բանաստեղծներ ծնեցնելու համար. բայց մի ժամանակ այդպես չէ եղել, մեր բուն երկրում էլ մի ժամանակ մուսաները զվարճացել են։

Ինչքան այս քերթվածի մեջը մութ և դանդաղ է, այնքան վերջին մասը կենդանի է և գեղեցիկ, որովհետև խոսում է իրական կյանքը, սիրտը։ Բանաստեղծը մտքով սլանում է Հայաստան, բայց ինքն օտար աշխարհում է, որ նման չէ յուր երևակայած եդեմական աշխարհին։

Եւ դառն ողբոց յիշատակ, ով ցանկալի հայրենիք,
Անդ էր երբեմն հեշտասուն քո Մուսայից ճեմելիք....
Բիւրուկն ի ծիր ծաղկազուարճ բիւր խոխոջիւք բարեհամ
Խայտայ ի բոյլըս հոտից, հազար երէ խուռներամ.
Փըչէ հովուիկ նուրբ սըրինգ, հօտք ըզկընի իւր դըրդին,
Նստի գողտրիկ օրիորդ, կըթէ ըզստինըս նոցին։
Հոյլ վըտակին կարկաչոտ, անդ երասխայ քարավէժ
Եւ ծիածան ի ցընցուղսն՝ հերքել սաստիցն ըզվըրէժ....
Երկինք ջերին կապուտակ՝ ամպք ոսկեփայլ շուրջ ի խիտ,
Շաղն ի ցօղել շայեկան ի ծոց երկրին մարգարիտ...
Անդ է հոգւով իմ Մուսայն, սակայն մարմնով աստ պանդուխտ
Ի խորշ նըստի Ադրիոյ հեղտիւր ծովուց ի քերցն ուխտ։....

Քերթվածի այս գեղեցիկ վերջը, որ ես ամբողջը չբերեցի, որից կարծես ազդվում է Դամառ Քաթիպան յուր «Իմ սոխակին» երգը երգելիս,— գոնե նմանություն կա,—է և միակ հայրենասիրական արտահայտությունը Բագրատունու քերթվածների մեջ։ Այո՛, ուրիշ դեպքերում էլ հիշում է նա Հայաստանի անուններ, բայց հայրենիքը հեռվից մշուշով պատած է երեվում նրան. հայրենիքը և հայրենի հիշատակությունները երգի նյութ չեն դառնում, այլ միայն իբրև մի արտաքին ձև օգնում են նրան, ճիշտ ինչպես և հունական աստվածների, աշխարհագրական տեղերի անուններն և նրանց առասպելներն ու զրույցները։

Մի կողմ թողնելով մի քանի պատմական անձերի վրա տաղերը, ինչպես և «սթափական» բռնահանգերն «ի հերիսայն», «անէծք և ճանճս», որոնց մասին խոսել չարժե,—տեսնում ենք, որ Բագրատունու բանաստեղծությունների նյութը ամենամեծ մասամբ հասարակ բաներ են. նա աղքատ է եղել մտքերով և նրա մտքերն ու տրամադրությունն ընդհանրապես պրոզաիկ են։

Ինչի՞ մեջ է ուրեմն քերթող Բագրատունու արժանիքը։ Երկու բանի մեջ, նախ՝ նա բնություն սիրող է, գիտե զգալ և նկարագրել բնությունը. և ապա՝ նա հասարակ ու պրոզաիկ նյութերն ևս հարուստ ու ճոխ լեզվով արտահայտել գիտե։ Կարելի է ասել Բագրատունին առաջիններից է, իհարկե ժամանակով, մեր նոր գրականության մեջ, որ կարողանում է իսկական բնություն տալ, լինի այդ ընդարձակ նկարագիրներով, թե կարճ պատկերների ու նմանությունների մեջ.

Երփնիւ ծաղկանց դաշտ և հովիտ
Վէտ վէտ խաղայ ծիծաղախիտ.
Նըկարակերպ բուսոց կանաչ
Հիւսկէն օթոց սըփռի ընդ առաջ.
Բացեալ մարմանդք զիւրեանց զծոց
Գըգուեն զայգիս սիրեալ տնկոց.
Աղբերականց պարզեալ խոխոջ
Գոչէ 'նդ ծործոր լերանց խոռոջ.
Հեզիկ ի մարգ սողոսկ ընդ դար
Հազիւ կըքեն ըզգեղ դալար։
Բացատ լերանց գեղեցկադիր
Ոսկեգօտիք փայլեն ի ծիր.
Հաւերժ մայրեաց խրոխտ յեթեր
Ընդ սոսափւն շարժին ըստուեր.
Պարզ և յըստակ օդ քաղցրասիգ
Բուրեն վարդից հոտ անուշիկ։
Մեզ Տիտոնեան հարսըն սիրած
Պարզէ ղգըլխով վըրան ներկած
Ոսկեթրտուն վարդապըսակ

Ընդ աշալուշն և ընդ երեակ.
Շուրջանակի յաշաց եզերք
Հոյլ հոյլ ոսկի սփռին իւր հերք։

Քերեմ մի օրինակ էլ նմանութիւններից.

Որպէս ալիք անդնդոց
Ի ծուփ երկմիտ տատանին
Ի խիստ հողմոց գուպարած,
Մինչ ուժգնագոյնն անկասկած
Ոստեալ վարէ ի Հանդրին.
Եւ կամ զօրէն Եփրատէս
Գարնանազայր թափ առեալ
Վանեալ գըլէ ամեհի
Թումբ և կամուրջ և մայրի՝
Ըզբնաւս ի մի տառ ձուլեալ...

Երբեմն նմանութիւնները հոմերական ձևով այնպես ընդարձակվում են, որ ինքնուրույն բնավորութիւն են ստանում և մարդ գրավվելով նկարագրած տեսարանից՝ մոռանում է նույնիսկ երգի բուն նյութը։ Այս աղդեցութիւն է անշուշտ յուր ընթերցանութեան. ինչպես պատմում են, Իլիականը նա բերան ասելիս է եղել։ Բայց ընդհանուր առմամբ Բագրատունու տաղերի մեջ ավելի ճարտասանութիւն կա, քան բանաստեղծութիւն. ավելի սովորովի է, արվեստ ունի, քան ինքնաբուխ ստեղծագործութիւն և զգացում. ուստի նրա նկարեն ու պերճ ոճը յուր բոլոր սեթևեթանքով հանդերձ՝ միակերպ է, ձանձրալի է յուր դիմումներով, պարավոր նվագներով և այլն։ Նա ոչ միայն իշխան է լեզվի, այլև ոտանավորի. միանման հաջողութիւնով նրա գրչի տակից դուրս են գալիս և՛ կարճ, սրընթաց տողեր, և՛ դանդաղ, ծանր ու մեծավայելուչ ասացվածներ երկար տողերով։ Հեշտալուր հնչյուններն ու վանկերը, երաժշտական շեշտերն ու հանգերը երբեմն հափշտակում են ընթերցողին։ Բայց ավա՜ղ, այդ ամենն ապարդյուն են անցնում, որովհետև տաղերն արտաքին գեղեցկութեան [համեմատ] չունին ներքին հարստութիւն, և մարդ հոգնում, նույնիսկ ուժասպառ է լինում, երբ կարդում է մի չնչին միտք անվերջ երկարութեամբ զարգացրած, մանավանդ երբ հաճախ այդ չնչին միտքն ևս բառերի և խոսքերի հեղեղի մեջ կորչում է։ Մարդ զգում է շարունակ, որ մի սնամեջ քերթողութեան հետ գործ ունի. իսկ այդ բավական է ամենայն բանաստեղծութիւն մեռցնելու համար։

Եվ այս ամենն առաջանում է նրանից, որ Բագրատունին քնարական բանաստեղծ չէ, քնարական ոչինչ չունի, բայց և այնպես նա յուր գեղեցիկ հասակը կորցնում է քնարերգութիւն անելով։ Նա «դիւցազանց մարգարէ» է, ինչպես ինքն իրեն անվանում է մի տեղ, ծնված և վիպական բանաստեղծ և առանձնապես դյուցազներդու լինելու։ Եվ 1830 թվից հետո նա

այդ զգում է և ինքն իրեն նվիրում է միայն յուր «Հայկ դիւցազնին», դադարելով այլևս քնարական քերթվածներ հորինելուց, և եթե դարձյալ գրում է բավականաչափ մեծ ու փոքր քերթվածներ, դրանք, այսպես ասած, ի պաշտոնե շինված բաներ են, գրեթե բոլորը նվիրված Տյուզյան ընտանիքին։

Բագրատունու բանաստեղծության զարգացումը իհարկե «Հայկ դիւցազնի» մեջ է. բայց ես այդ քերթվածն յուր ժամանակին առանձին կառնեմ, որովհետև դա ծնունդ է մեր 19-րդ դարու բանաստեղծության ոչ թե առաջին, այլ երկրորդ երեսնամյակի։

Ինճիճյանի ու Դապասախալյանի ժամանակակից է Գրիգոր Փեշտիմալճյան (+1837), որի բանաստեղծությունը զուտ կրոնական է։ Կենսագրությունն ինձ հայտնի չէ։ Եղել է «մեծիմաստ պատուելի վարժապետ» Կ. Պոլսում,—և այսքանն էլ բավական է։ Իբրև վարժապետ հորինած ունի դասագրքեր՝ Քերականություն (Կ. Պոլիս, 1829), Տրամաբանություն (Երուսաղեմ, 1854), Լուսաշավիղ, «որ է բացատրութիւն Նիկիական Հանգանակին» (Կ. Պ., 1848) և նույնիսկ Բառգիրք Հայկազեան լեզուի. ունի և մի բանաստեղծական երկ «Դիմառնութիւն» (Կ. Պ., 1845)։ Մահից հետո կատարված այս տպագրությունները ցույց են տալիս, որ նա հարգանք ու հեղինակություն է վայելել յուր աշակերտների մեջ. և իսկապես մեծ անուն է ունեցել Փեշտիմալճյանը։ Գերմանացի բողոքական քարոզիչները մինչև այժմ մեծ գովեստով են խոսում նրա մասին՝ անվանելով նրան հայ Երազմոս[2], որ իբր իսկապես բողոքականության է դարձած եղել, ծածուկ մասնակցել է նրանց ժողովներին և իբր մինչև մահը հավատարիմ բարեկամ է եղել ավետարանական Եկեղեցուն, թեպետև երբեք արիություն չի ունեցել հրապարակով ինքն իրեն բողոքական խոստովանելու։—Այդ պատմությունը ցույց է տալիս միայն, որ Փեշտիմալճյան պատվելին քարացած մարդ չի եղել. հետաքրքրվել է Հայոց եկեղեցուց դուրս եղած բաներով, եկեղեցական վերանորոգության խնդրով և շատ հեռու է եղել յուր ժամանակակիցների հալածասիրական ոգուց։ Լինելով ջերմ կրոնասեր, նա ծարավի է եղել կենդանի ոգու և գուցե կարծել է, թե այդ կգտնի բողոքականների ժողովներում։ Բայց որ նա բողոքականության հարած լինի, այդ հավանական չէ։ Այդ ժամանակ ով որ հայոց եկեղեցուց կաթոլիկների կամ բողոքականների հետ հարաբերություն էր ունենում, թեկուզ արտաքին, համարվում էր կաթոլիկ կամ բողոքական և հալածանքի ենթարկվում. նույն սխալ հայացքն, ինչպես երևում է, ունեցել են և ժամանակի բողոքական քարոզիչները՝ բողոքական համարելով նրանց, որոնք իրենց մոտ գնացել եկել են։ Հայտնի է Մատթեոս պատրիարքի նյարդային աններող վերաբերմունքը դեպի կաթոլիկներն ու մասնավորապես դեպի բողոքականները. իսկ արդ նա Փեշտիմալճյանի հարգողներից մեկն է.

---

2 «Mission und Evangelisatton im Orient». *1908. եր. 76։ Տեղեկության համար, շնորհակալ եմ իմ աշակերտ Գալ. Խաչենդերյանից։*

եւլել և նրա «սրտի իղձը» կատարելու համար՝ նրա մահից ութ տարի հետո, 1845 թվին Կ. Պոլսում տպագրել տալիս նրա «ցանկալի մատեանը», որ է «Դիմառնութիւն ի չարշարանս Քրիստոսի Փրկչին մերոյ», և այս՝ «յօգուտ ազգիս»։

Այս գրքի մեջ, բացի Փեշտիմալճյանի վերոհիշյալ գլխավոր աշխատանքից, զետեղված են իբրև մի չորրորդ մաս նաև նրա տասնուվեց «մաղթանքներն առ Աստուած և առ սուրբս նորա»։ Դրանք աղոթախառն տաղեր են, որ հեղինակն «աղերս» է անվանում, և որոնց մեջ առանձնապես աչքի է ընկնում այն հանգամանքը, որ նրան գրավում են ամենից ավելի հայ եկեղեցին և հայ ազգային սրբերը, ինչպես՝ Ս. էջմիածին, Լուսավորիչ, Աբգար թագավոր Հայոց, Տրդատ թագավոր, Ս. Թարգմանիչք, Ներսես Շնորհալի, Վարդան Մամիկոնյան։

Փեշտիմալճյանն յուր բանաստեղծության վրա նայում է նախ՝ իբրև վարժապետ. նա ոտանավորներ է գրում «ի հրահանգութիւն մանկանց» յուր դպրոցի, որպեսզի նրանք իրենց վարժապետի օրինակներով վարժվին «ի յօրինուածս նմանատիպ գրուածոց»։

... Որք չեն վարժ ի յուսման
Քերթողական բանից չափման,
Կըրթին ի սա՛ գէթ անագան,
Իբր ի նըկար ինչ ուլուական։

Ապա՝ նրա հայացքով բանաստեղծությունը մի բարեպաշտական գործ է, որ մանուկներին տալիս է կրոնական հոգևոր կրթություն, և կարծում է, ճիշտ ինչպես Նարեկացին, թե յուր աշխատանքը հոգևոր բժշկություն և առողջություն պիտի բերե ընթերցողներին։

Այս հայացքը բնականորեն թելադրել է նրան նախ՝ «աղերսներ» գրել և ապա՝ յուր «աղերսների» մեջ բանեցնել բազմազան տաղաչափական ձևեր, որոնց մեջ, եր. 245, աչքի է ընկնում «Աղերս առ ս. Խաչն աստուածընկալ», որ գրված է Բագրատունուց առաջ Բագրատունու «Հայկական» կոչված չափով։ Մի անգամ որ այդ աղերսները այդպիսի ծագում ունին, այլևս դրանից կարելի չէ պահանջել բանաստեղծություն. դրանք մեծ մասամբ միակերպ հորինված բաներ են, դիմումներ սովորական նմանություններով. օրինակ՝ Շնորհալու աղերսն այսպես է սկսվում.

Աղբիւր ես բարի, կենաց վտակի
Որպէս եղջերու փափագի,
Հոգիս ծարաւի։
Ճրագ լուսարփի, Արամեանս ազգի
Ցոլացո՛ ըզլոյս քո պայծառ,
Աչացս իմ սրտի։

Այսպես և Շնորհալուն կոչում է՝ ոստ գավազանի, ծաղիկ նազելի, ուռ ողկուզալի, երկիր բերրի, պարարտ ձիթենի, լեառն կնդրկի, մառան բա-

րելի և այլն, և այդ նմանութիւններին համապատասխան մեկ մեկ խնդրվածքներ անում նրանից։

Նման ձևով գովում է և էջմիածինը,—«Աղերս առ շնորհածին ծնողն մեր Սուրբ Էջմիածին».

Լուսակերտ խորան փառաց՝
Երկնաւորին,
Կառուցեալ յԱրարատեան
Մեծի դաշտին։
Սեպհական պարծանք ազգիս
Պըսակ անգին.
Դու լե՛ր միշտ պատսպարան
Իմոյ անձին. և այլն։

Փեշտիմալճյանի երկերը ժամանակի կրոնական պահանջին բավարարութիւն տալու են սահմանված։ Խրիմյան Հայրիկը պատմում էր, թե ժամանակակից պատրիարքներից մեկը (անունը մոռացել եմ) մի անգամ ասել է Գրիգոր պատվելիին, թե ամեն սրբերի գովեցիր ու աղոթեցիր, մեր ս. Թադեոս Առաքյալին ինչո՞ւ մոռացել ես։ Պատվելին պատասխանում է. թե Թադեոս Առաքյալը շատ հեռու է ընկած, ուստի միտը չի եկել նա։ Բայց մի քանի օրից հետո նա բերում է և Հայաստանյայց առաքյալի աղերսը, որի սկիզբն է՝ «Առաւօտ լուսաբեր Հայաստան երկրի, Թադէոս առաքեալ, ընդէ՞ր կաս հեռի»։ Աղերսը հավանություն է գտնում, եղանակ հարմարեցվում նրան և երգվում։ Եվ Գրիգոր պատվելիի բազմաթիվ աղերսներից այդ մեկը, որ չի առնված նրա «Դիմառնութեան» մեջ, յուր եղանակի պատճառով ապրում է մինչև այժմ իբրև երգ։ Խրիմյան Հայրիկի սիրած տաղերից մեկը դա էր։

Փեշտիմալճյանին և նրա հոսանքով ընթացողներին անշուշտ եկեղեցուց և սրբերից շատ ավելի մեծ ոգևորության նյութ պիտի տար և ավելի տարանական պատմութիւնը, որին նվիրված է մեր այս քերթողի «Դիմառնութիւնը», գրված 1820 թվականի մոտերը։ Այս երկը, որի մեջ մի քանի հատվածներ դարձյալ ջերմ աղոթքի կերպարանք ունին, համեմատաբար ավելի բարձր է քան աղերսները. բայց և այնպես սա ևս բանաստեղծական հղացման արդյունք չէ։ Եթե Ինճիճյանը ոտանավորով աշխարհագրութիւն է անում, Փեշտիմալճյանը մի բանաստեղծական կրոնագիտութիւն գիրք է գրում Քրիստոսի տնօրենության վրա, որի մեջ ոտանավորով պատմված և մեկնված են Փրկչի չարչարանքը, խաչելությունը և այլն, հետը միացրած և Հին Կտակարանից ակնարկներ և նույնիսկ ավանդություններ։ Լինելով մեր վերածնության շրջանի միմիայն ներքին հոգևոր ուղղության արտահայտիչ, առանց եվրոպական ազդեցության, նա մտածում է այնպես, ինչպես միջնադարում մտածում էր, օրինակ՝ Ներսես Շնորհալին։ Այդ հասկացողությամբ պահանջվում է, որ պրոպաիկ

նյութն ևս բանաստեղծորեն գրվի, որպեսզի տպավորություն թողնի և երեխաները հեշտ սովորեն.

Ոտիւք չափեալ քերթողական,
Առ անձանձիր վերծանութեան.
Եղեալ ի ձև դիմառնական,
Առ շարժութիւն կրից հոգեկան։

Փեշտիմալճյանը նույնիսկ յուր լեզվով և ոտանավորով ևս ազդվում է Շնորհալուց. վերջնիս պես նա շատ պարզ ու վճիտ է գրում. սիրում է ութվանկանի տողեր, և ամբողջ խոշոր հատվածներ միևնույն հանգով է վերջացնում. բայց բոլոր երկը նույն հանգով չի հորինում, ինչպես վարվում են Ինճիճյանը և Հովհան Վանանդեցին յուր առաջին գրվածքների մեջ։ Նա ճաշակով համեմատաբար բարձր է յուր ժամանակակիցներից։

Ջունենալով ոչ մի գաղափար թատերգության մասին՝ Փեշտիմալճյանը հորինում է մի տեսակ թատերական երկ։ Նա ոչ թե մեկնում կամ պատմում է Քրիստոսի տնօրենությունը, այլ դրամատիկական ձևով գործող անձեր է մեջ բերում և միայն նրանց խոսել տալիս, և այս ձևը պահում է սկզբից մինչև վերջը։ Դա մի բոլորովին նոր ձև էր մեր գրականության մեջ, որ յուր արտաքին նորությամբ միայն պիտի հաճելի լիներ ժամանակակիցներին։ Հենց այս պատճառով և նա յուր երկը կոչում է «Դիմառնութիւն», որովհետև այստեղ մեռած անձերը, և նույնիսկ երկինք, երկիր, աստղ և այլն կենդանանում և խոսում են իբրև կենդանի անձեր։ Այս երկը կդառնար միջնադարյան քրիստոնեական թատերգության նման մի բան, եթե միայն հեղինակը ներկայացման մասին մտածած լիներ և քիչ ու շատ հարմարեցրած դրան։ Բայց նա այդ ձևն ընտրել է միայն ավելի ևս աղդու անելու համար. ուստի և ոչ թե արարվածների ու տեսարանների է բաժանում նա «Դիմառնութիւնը», այլ մասերի և գլուխների, որով և նրա երկը բռնում է մի տեսակ միջին տեղ դրամատիկական ու վիպական ձևերի մեջ. մինչդեռ նույն ժամանակներում Բագրատունու գրվածքն, ինչպես տեսանք, արտաքուստ դրամատիկական է։ Եվ այս հասկանալի է. Փեշտիմալճյանը հին մարդ է, երիտասարդ Բագրատունին համեմատաբար նոր, և սրան ծանոթ էր դրամատիկական ձևն օտար գրականություններից։ Դրանց երկերն առաջին ձգտումներն են դրամատիկական տեսակն առաջ բերելու մեր գրականության մեջ, և այս տեսակետից հետաքրքիր։

Այսպես, թելադրված անշուշտ Կտակ-Գրքից, Փեշտիմալճյանն առաջին արարվածի առաջին տեսարանի մեջ (հեղինակի առաջին մասի առաջին գլխի մեջ) երևան է հանում Քրիստոսին խաչի վրա, դեռ չմեռած. Կույսը խաչի առաջ ողբում է ինքն իրեն և յուր որդուն երկինք ու երկիր կանչելով իրեն սփոփելու.

Ո՛ օր սրդոյ, օր մահաբեր,
Օր խաւարի անլոյս գիշեր,

Եհար ըզսիրտ իմ կարեվէր
Սաստիկ ցաւոց սըրեալ սուսեր։
Աչացըս լոյս եղև ըստուեր,
Շիջաւ յանկարծ սրտիս լապտեր.
Կար զօրութեան իմ կենսաբեր
Բարձաւ յինէն որպէս թէ չէր...
Երկի՛նք, երկի՛ր, լուռ կայք ընդէ՞ր,
Փութացարո՛ւք վիս սփոփել.
Զի բաց ի ձէնջ չունիմ ընկեր
Ոչ ի ստորինս և ոչ ի վեր։

Եվ ահա՛ բեմ են մտնում երկինքն ու երկիրն անձնավորյալ և հուսադրելով Կույսին՝ հայտնում են, թե Հիսուս պետք է խաչվի, որպեսզի մարդկային ազգն ազատվի՝ սատանայի ձեռով անկումից.

Զի եղիցի մահուան իւր գին
Ազատութիւն մարդկան ազգին։

Այս խոսքի վրա նկատում է մտնում Բանսարկուն և ինքն իրեն արդարացնելով՝ մարդու անկման պատճառը մարդուն իրեն է համարում։ Սկսվում է մի վիճաբանություն, որի ժամանակ բեմ են գալիս և մասնակցում վեճին նաև հրեշտակներ, և վերջը Բանսարկուն ստիպված է լինում կասկածելու, թե մի՛ գուցե այս խաչյալը կործանե յուր իշխանությունը և ազատե յուր կապյալ ոգիները դժոխքի բանտից։

Շարունակության մեջ տեսարանն անփոփոխ միևնույն է մնում. Կույսըն անդադար ողբում է, դիմելով այն ամենքին, Աստվածաշնչի այն բոլոր անձերին, որոնք ըստ մեկնաբանների որևէ կերպով գուշակել են Քրիստոսի մարդեղությունը, և զարմանքով հարցնում է, թե ինչո՛ւ նրանց գուշակությունները չեն կատարվում. յուր որդին ահա՛ խաչվում է։ Այդ անձերը՝ Գաբրիել հրեշտակ, մոգեր, հովիվներ, եղիսաբեթ, Զաքարիա, Հովհաննես Մկրտիչ, Սիմեոն ծերունի և ուրիշներ, ինչպես և Հին Կտակարանի նահապետներ, մարգարեներ և այլք, պարտք են համարում հետզհետե հանդես գալ և մխիթարել Կույսին և հայտնել, թե այդպես էլ պետք է լինի և թե իրենց մարգարեությունից ոչինչ չի վրիպել, իսկ քահանայապետներն ու դպիրները և հրեից ամբոխը մյուս կողմից հրճվանքի մեջ են. դևերը սակայն երկյուղով կասկածում են։—Կրոնուսույցն ուրեմն ոչինչ պակաս չի թողնում, ինչ որ Քրիստոսի կյանքին է վերաբերում. երբեմն մանրամասն, երբեմն համառոտ ակնարկներով անցնում է ամեն բան։ Սակայն այսպես լինելով հանդերձ՝ շատ հատվածների մեջ նա յուր երևակայությամբ կենդանացնում է խոսքն ու նկարագիրը.

Ահ քեզ գոչեմ արտասուահոս,
Ե՛կ, մերձաւորդ իմ Ղազարոս.

Տե՛ս, որ զքեզ ձայնիւ յարոյց,
Ի փայտ մահու լըռէ անխօս։...
Դառըն խորշակ հարաւ գըլխոյս.
Եկէզ ըզտունկըս բարեբոյս.
Թառամեցաւ ծաղիկն հոգւոյս.
Եղէ ես ծառ պըտղակորոյս։

Իսկ Ղազարոսը սփոփելով նրան՝ պատմում է յուր դրութիւնը գերեզմանի, որ միևնույն է դժոխքի մեջ.

Եհաս օրհաս կենաց հիքոյս,
Ժամանեցի ի բանդ անլոյս...
Խուժան դիւաց անդընդասոյզ
Պըտուտկէին զինև ի խոյզ.
Ըսպառնային ըզցաւս անբոյժ,
Ըզհուր անշէջ, զանմեռ որդունս։
Ուր խանչէին որպէս ըզխոզ
Ամբարշտաց ժողովք յայլ կոյս.
Ի ծով հըրոյ ծըծըմբայոյզ
Ի լեղ անկեալ որպէս զեռունս։
Օձք և կարիճք զեղուին թոյնս
Որպէս ըզգետս առատահոս.
Գազանք հըրէշք սուր ի լեղուս
Գիշատէին ըզմեղաւորս։...

Այս ամենը տեսնելով՝ սարսափած մնում է Ղազարոսը. բայց երբ Քրիստոսը ձայնում է նրան,

Յայնժամ շարժեալ դրանց դժոխոց
Խռովեցան անդունդք խորոց,
Զահի հարեալ գումարք այսոց
Մատեան միմեանց ի հարց ի փորձ.
«Այս ի՞նչ, այս ի՞նչ»,—ասեն այլոց,
«Գողնաց առիւծ ահեղագոչ.
Իբրև՛ ամպրոպ շփոթ ամպոց
Զամենեսին ահիւ պակոյց»։—
Անդ բանսարկուն ասէ նոցին.
«Զայս մի անգամ լուեալ է իմ
Մինչ յանէից ի գոյ եկին
Երկիր, երկինք, և մեք ի նմին։
Ահա՛ այս ձայն է Արարչին,
Որ դրկըրդեաց զամենեսին.
Արդ կասկածիմ եկեալ ինքնին
Յավար առցէ զիմ տուն գանձին»։

Դևերը խորհուրդ են տալիս Բանսարկուին հավաքել յուր զորքը և պատերազմի պատրաստվել. նա չի համաձայնում՝ քաջ իմանալով Արարչի զորությունը։ Այն ժամանակ կատաղում են դևերը և

Գոռան, խանչեն մոլեգնաձայն,
«Արդ գիտ հնար, ով գոռ իշխան,
Պատճառ չարեաց մեր կորստեան»...
Անդ բանսարկուն գոչէ այսոց.
«Ի դուրս արկէք զՂազարոս.
Դեռ քառօրեայ չէանց միջոց,
Էարկ աղմուկ ի տարտարոս»։

Այս խոսքի վրա մի այլանդակ դև վազում է դեպի Ղազարոսը և նրան դուրս ձգում գերեզմանից։

Ասել չի ուզիլ, որ բոլոր անձնավորությունները խրտվիլակներ են միայն և ոչ մարդիկ. նրանք ծառայում են լոկ Աստվածորդու մեծությունը և մարդեղության խորհուրդը բացատրելու համար։ Բայց մի վեհ պատկեր է ներկայացնում ինքն Տերը, այսինքն Հիսուս խաչի վրա. նա լուռ տանջվում է ամենայն համբերությամբ. քիչ է խոսում և խոսում է միայն նրա համար, որ ցույց տա, թե որովհետև աշխարհի անկումը Բանսարկուի հպարտությունից ու ըմբոստացումից է ծագել, ուստի և ինքը խաչի վրա ամենամեծ խոնարհությամբ պիտի բարձրացնի անկյալ աշխարհը։ Նա մեկ մեկ արտասանում է յուր «եօթն խօսքերը», ինչպես «Հայր, թող դոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն» և այլն և բացատրում, թե ինչպես արդարության օրենքի տեղ դնում է գթության օրենքը։ Մխիթարում է յուր մորը և քնքշությամբ հոգում նրա մասին։

Վշտահար մայրը պահում է շարունակ նույն ողբացող վիճակը. լալիս է յուր և յուր որդու վրա. գովում է որդուն. չի կարողանում հասկանալ, թե ինչու մարդկային ազգը չպիտի փրկվեր առանց յուր որդու անարգ վիճակին և տանջանքներին։ Նրա վիշտն ավելի մեծանում է, երբ հիշում է յուր որդու հրաշագործությունները։ Նրա դառնագին հեծեծանքը, ողորմագին տեսիլն այն աստիճանի է հասնում, որ նույնիսկ որդուն խաչի վրա մոռանալ է տալիս յուր ցավերը։ Եվ այստեղ, այս սգավոր մոր ողբի ու բողոքի մեջ Փեշտիմալճյանը մեկ մեկ իսկական քնարերգու է դառնում։

Տեսարանը սկսում է փոխվել միայն այն ժամանակ, երբ Հիսուս վերջին խոսքն է արտասանում։—Երրորդ մասի սկզբում Քրիստոս արդեն գերեզմանի մեջ է. նա մտնում է դժոխք և կործանում չարի իշխանությունը։ Դժոխքում կապված հոգիները մեկ մեկ, Ադամից սկսած Հին Կտակարանի բոլոր հայտնի անձերը միանման կերպով դիմավորում են Փրկչին, որ նրանց ամենքի հետ կարճ կամ երկար խոսքեր փոխանակելուց հետո՝ բանտարկությունից ազատում է նրանց։ Արդարներից հետո առաջ են գալիս մեղավորներն իրենց լաց ու կոծով, հուսակտուր աղաղակով. սակայն այս շարանին վերջը լռեցնում են դևերը, գոչելով.

Կարկեցարո՛ւք, չաղեաց գումարք,
Վայրաղօղանջ շո՛ւնք նետահարք։

Այստեղ իսկապես վերջանում է Քրիստոսի չարչարանքի դիմառնությունը, սակայն կրոնագիտության դասագիրքն ամբողջական անելու համար՝ ետևից գալիս են և երեք պատկերներ Հարության, Համբարձման և Հոգվո գալստյան համար, որոնք իրարուց անկախ բնավորություն ունին։

Մեր այժմյան պահանջին իհարկե Փեշտիմալճյանը բավարարություն չի տալ. բայց պատմության մեջ ամենայն բան յուր տեղում պիտի առնել և այն ժամանակ հաճախ այժմյան անարժեքը ստանում է արժեք՝ դառնալով մի օղակ դեպի կատարելության դիմող զարգացման շղթայի մեջ։ Այս տեսակետից դատելով՝ հասկանալի է լինում, թե ինչու ժամանակակիցները գրավվել են այդ «մեծիմաստ» և «պերճիմաստ» պատվելիի տաղաչափությամբ։ Բավական է միայն համեմատենք նրա աղերսները Ղազար Ջահկեցու աղոթքների և կամ իրեն ժամանակակից Գապասախալյան դպրի և Աստապատցի Աբրահամ վարդապետի աղերսների հետ, որպեսզի համոզվենք, թե Փեշտիմալճյանն ավելի անկեղծ զգացող է և պարզ ու մաքուր մտածող, իսկ նրա «Դիմառնութեան» հետ բնավ համեմատվել կարող չէ հարյուր տարի առաջ հրատարակված «Գործք առաքելոցը» Կոմիտաս քահանայի։ Նա մի աստիճան ավելացնում է մեր վերածնության շրջանի կրոնական բանաստեղծությունը և մինչև անգամ ազդում հաջորդների վրա, ինչպես Խրիմյան Հայրիկի։ Բայց և այնպես Փեշտիմալճյանն յուր ամբողջ էությամբ, ինչպես նկատեցի, մի տնասուն քերթող է, որ հոգվով մեր միջնադարյան բանաստեղծների կարգին է պատկանում և մի առանձին թարմ երակ չի մտցնում մեր, թեկուզ կրոնական, բանաստեղծության մեջ։ Եվ այս հասկանալի է թե ինչու։

* * *

Մեր հնի վերածնությունը և հնի նմանողությունը միայն բավական չէր կենդանի բանաստեղծություն առաջ բերելու։ Եվրոպական միտքը պետք է ներդործեր. բայց մինչ այդ եվրոպացոց հետ ունեցած հայոց հարաբերությունը արտաքուստ էր, ուստի և ազդեցությունը աննշան։

Եվրոպական մտքի իսկական ազդեցությունը շատ բնականորեն սկսվում է գաղթավայրերում և դպրոցով և այս միայն 19-րդ դարու առաջին քառորդից։ Արդարև Կ. Պոլսում 18-րդ դարու վերջերից արդեն բացվում են ժողովրդական դպրոցներ, բայց դրանք հին ձևով են կազմըված եղել և ժողովրդի մեջ գրագիտություն տարածելով հանդերձ՝ հային երկար ժամանակ չեն կարողացել ծանոթացնել եվրոպական քաղաքակրթությանը։ Դրանց պատվելիները փակված են մնացել մեր ներքին նեղ շրջանակի մեջ, և միշտ պատկառանքով են նայել դեպի վենետկեցիք՝ համարելով նրանց կատարելություն և նմանողության աղբյուր, չմտածելով անգամ մրցել նրանց հետ։ Ռուսաստանի հայերն ավելի ուշ են կեն-

դանության նշան ցույց տալիս, բայց մի անգամ շարժվելուց հետո՝ գըլխավոր հոգսը հենց սկզբից տանում են նոր ձևով դպրոցներ հիմնելու համար։ Աղաբաբյան դպրոցն Աստրախանում (1810 թ.), Լազարյան ճեմարանն (1816 թ.) ու Ներսիսյան դպրոցը (1824 թ.) հաստատված հայ գաղթավայրերում, հետագայում պիտի իրենց բարերար ազդեցությունն անեին նաև բուն երկրի հայ ժողովրդի վրա, որ 19-րդ դարու առաջին երեսնամյակում դեռ տառապում էր պարսկական և թուրքական դժպետությունների ձեռքին։

Բավական ժամանակ պիտի անցներ սակայն, մինչև որ եվրոպական լեզուների և կյանքի ծանոթությունը այս նոր դպրոցների միջոցով մի առողջ հոսանք մտցներ հայ անշարժության մեջ և հայ միտքը դուրս դալով ինքնագոհ դրությունից՝ կտրվեր միմիայն մեր միջնադարին նմանելուց և ազգի հասարակական պայմաններից մեկը համարել հայ կյանքի մեջ փոխադրելու ամեն ինչ որ եվրոպական է։ Եվ այս ձգտումը եվրոպականին նմանելու, որ ծնվում է գաղթավայրերի դպրոցների մեջ, գնալով զորանում է և կամաց կամաց ներքին բնավորություն է ստանում։ Առանց թուլանալու եկեղեցական-կրոնական զգացմունքի մեջ՝ մարդիկ տեսնում են, որ եկեղեցուց դուրս ուրիշ բան էլ կա. և չեն բավականանում հայ եկեղեցական անցյալով։ Հայ միտքը բացվում է, և սովորում են դիտել և ուսումնասիրել կյանքը, բաղդատություն դնել հայի և օտարի ունեցածի մեջ. որոշվում է հայրենասիրության գաղափարը, որ հետզհետե ավելի մեծ ծավալ է ստանում։ Հայրենասիրությունը նրանց առանդ է ներշնչում հայ կյանքը մի նոր ձևով նորոգելու։ Իսկ դրա միջոցներ են համարվում նոր ուսումն ու գիտությունը, գիտական գրքերի թարգմանությունը և վերջապես լրագրությունը։

Լրագրությունը ծնունդ է առնում արդեն 18-րդ դարու վերջում։ Առաջին ամսաթերթը, «Ազդարար» (1794—1796) լույս է տեսնում Մադրասում Հարություն քահանա Շմավոնյանի ձեռով, և ապա Վենետկում հրատարակվում են Ինճիճյանի խմբագրությամբ «Տարեգրութիւն» (1800—1802) և «Եղանակ Բիւզանդեան» (1803—1820), որոնք տարեթերթ են, այսինքն տարեկան մի գիրք են լույս ընծայում։

Լրագրությունն ազդանիշ էր, որ հայությունը յուր նեղ շրջանակից պիտի դուրս գար։ Հայը սկսել էր հետաքրքրվել, թե իրենից դուրս, հեռվում ինչ է կատարվում։ Ահա «Ազդարարի» ծրագիրը. «Ազդ առաւող յորմէ իմացումն լինելոց է ընթերցողաց ծայրաքաղ աճցմն նոյնոյ ամսոյ, եթէ ի զանազան կազեթաց, եթէ ի զանազան խառնեսաց և եթէ այլոց զանազան գրոց. նաև բանք հարկաւորք և քաղցրալուրք, և ի վերջնումն տետրակիս՝ զօրացոյց մի հետևեալ ամսոյ, պարունակեալ ի նմա զտօնս սրբոց և զաւուրս ծննդեան և լրման լուսնոյ»[3]։ Ինճիճյանի ձեռով խմբագրված տարեթերթերն ևս մանրամասն տեղեկություններ են տալիս նա-

3 Գ. Գալեմքեարեան, *Պատմութիւն Հայ լրագրութեան, Վիեննա, 1895, Ա, էջ 24։*

խորդ տարվա մեջ զանազան երկիրներում կատարված քաղաքական, եկեղեցական ու գիտական դեպքերի, գյուտերի մասին. գիտելիքներ՝ բժշկական, բնագիտական և այլն։ «Ազդարարի» օրացույցին այստեղ փոխանակում է «գուշակութիւն օդերևոյթ փոփոխութեանց»,— կարծես բավարարություն տալու համար մեր պապերի պահանջին, որ չէին կարող ապրել առանց էֆիմերտիական գուշակությունների։

1812 թվին Կ. Պոլսում կազմվում է մինչև անգամ «Արշարունյաց ընկերությունը», որ իրեն նպատակ է դնում «ազգին մեջ գրականության ոգի զարթուցանել՝ ոչ միայն նախնյաց մատենագրությունն ի լույս ընծայելով, այլև ազգին օգտակար գրոց հրատարակման ձեռնտու ըլլալով»[4]։ Այս ազատասեր ընկերությունը յուր ծախքով 1815-ից տպագրում է Ինճիճյանի «Ծղանակ Բիւզանդեանը»։ Այս ընկերությունն է, որ առաջ է բերում և «Դիտակ Բիւզանդեանը» (1812—1816), մի շաբաթաթերթ, որ սակայն ոչ Կ. Պոլսում, այլ Վենետկում Մխիթարյանների ձեռով է խմբագրված և տպագրված, անշուշտ այն պատճառով, որ Կ. Պոլսի պատվելիներն ընդունակ չէին լրագիր խմբագրելու։ Դա սկզբում զբաղվում է գլխավորապես եվրոպական և նույնիսկ ամերիկյան քաղաքական անցքերով, առանձնապես Նապոլեոնի սրարքների մասին լուրեր տալով, իսկ վերջին երկու տարին, երբ խմբագրում է Ջախջախյանը, առանձին տեղ է տալիս նաև ուսումնական և բանասիրական խնդիրներին։ Դժբախտաբար, որքան քաղաքական լուրերին ընդարձակ տեղ է տրված այս լրագրի մեջ, «ժամանակակից ազգային խնդիրներն և դեպքերը բոլորովին անհիշատակ են թողնված»[5]։ Եվ այս հասկանալի է։ Մխիթարյանների հոչակը մեծ էր, բայց հեռու Վենետիկը չէր կարող ազգային կյանքը ցոլացնող և կյանքի հետ կապված լրագիր հրատարակել այդ ժամանակ, մանավանդ որ, տեսանք, վենետկյան քերթողներն անգամ նույն միջոցին շատ էլ չէին հետաքրքրվում ազգային ժամանակակից խնդիրներով։ Բայց ինչպես էլ լինի, այս առաջին վենետկյան լրագիրները, հրատարակված ռամկական աշխարհաբարով, շատ նպաստել են հայերի աչքը բանալու և օտար ազգերի կյանքին ու գործունեությանը ծանոթանալու։ Եվ եթե Մխիթարյան խմբագիրներն ազգային կյանքն անուշադիր են թողած, բայց և այնպես «առաջին անգամ հոս (Դիտակ Բիւզանդյան) կհանդիպենք ազգային առաջադիմության հորդորակներու, Արշարունյաց ընկերության անդամներեն խոսված»[6]։ Եվ այս շատ էր արդեն։

Այս շարժումը բնականորեն յուր հետ բերում է և պահանջ մի նոր տեսակի գրականության, որ չի եղել հնումը։ Դասագրքերի, կրոնական, պատմական և այլ բովանդակության գրքերի հետ սկսում են մեկ մեկ երևան գալ և բանաստեղծական թարգմանություններ եվրոպական ազգերի գրականությունից։ 1793 թվին արդեն Նոր Նախիջևանում տպագրվում

---

4 *Անդ, եր. 28։*

5 *Անդ, եր. 34։*

6 *Անդ, եր. 33։*

է Ֆենելոնի Տելեմաքը, որ մի ժամանակ Եվրոպայում ամենից ժողովրդական և տարածված գիրքն է եղել և յուր խրատական բնավորությամբ շատ հարմար էր մեր գրագետների այն ժամանակվա ճաշակին. ուստի և մի քանի ուրիշ թարգմանություններ էլ է ունենում հետագայում, երկրորդ անգամ Ջախջախյանի ձեռով Վենետկում 1826 թվին։ Նույն տեղում մի տարի առաջ տպագրվում է, դարձյալ Ջախջախյանի թարգմանությամբ, Գեսների «Մահ Աբելի», որ բնականությունից զուրկ մի հովվերգություն է և արժանացած հայերեն թարգմանության անշուշտ նրա համար, որ կրոնական բնավորություն ունի, և որ մեր բանաստեղծներն այն ժամանակ շատ ավելի դրախտով, Ադամ-Եվայով էին հետաքրքրվում քան Հայաստանով։ 1824 թվին լույս է տեսնում Միլտոնի «Դրախտ կորուսեալի» արձակ թարգմանությունը Հ. Ավգերյանի ձեռքով։ Հնդկաստանի հայերն ևս անմասն չեն մնում այս թարգմանությունների մեջ, Կալկաթայում, ուր 1821 թ. հիմնվում է Մարդասիրական ճեմարանը, 1826-ին Շատոբրիանի Ատալան է տպվում, իսկ Մադրասում, 1818-ին՝ Վոլտերի Հուլիոս Կեսարը, և 1812-ին՝ Ֆլորիանի Նումա Պոմպիլիոսը, որ Տելեմաքի հատկության մի գիրք է և երկրորդ անգամ արժանանում է թարգմանվելու Ե. Հյուրմյուզի ձեռքով։

Այս թարգմանությունները, գլխավորապես կրոնական-բարոյական ուղղությամբ վիպական երկեր և նույնիսկ թատերգություններ, դանդաղ, բայց անընդհատ շարունակվում են և հետագայում, գլխավորապես վենետկեցոց ձեռով, որոնք տալիս են հին և ֆրանսիական կլասիկներից մի քանի կարևոր երկեր՝ դժբախտաբար գրաբար լեզվով։ Եվ այսպիսով նույնիսկ 19-րդ դարու սկզբներից առաջ է գալիս գեղարվեստական թարգմանական գրականություն, որ գոյություն չուներ առաջ։ Դա արդեն նշան էր, որ հայ գրական միտքը շարժվում էր և պիտի բաժանվեր սքոլաստիկայից և միջնադարյան միակողմանի ու միակերպ սրբազիկ բանաստեղծությունից ու մի նոր ճանապարհով ընթանար։ Հարկավ դեռ շատ ժամանակ պիտի անցներ, մինչև որ ճաշակը, գեղարվեստական հասկացողությունը դպրոցի և թարգմանությունների միջոցով աղնվանար ու բարձրանար և թոթափելով հինը՝ կարողանար նմանել եվրոպականին և առաջ բերել մի նոր տեսակի, թեկուզ նմանողական, բանաստեղծություն, որ արտահայտիչ լիներ կյանքի, յուր մեջ ցոլացներ մեր իրականությունը և բավականություն տար հասարակության ձգտումներին։ Ամենից առաջ հաջող կերպով այս բանը կարող էին անել Մխիթարյան բանաստեղծները, որոնք քիչ ու շատ ծանոթ էին եվրոպական բանաստեղծությանը. բայց նրանք ժողովրդի կյանքով չէին ապրում, ուստի և իրենք ինքնուրույն երկերի մեջ թույլ, մանկական ու բավական պարզամիտ են։ Բայց և այնպես դրանց բանաստեղծությունները, ինչպես և Փեշտիմալճյանինը, եթե ժամանակին տպագրված լինեին, կարող էին որոշ չափով բավականություն տալ ժամանակակիցներին, որոնք այդ նկատմամբ շատ էլ պահանջկոտ չէին։ 19-րդ դարու առաջին երեսնամյակում սակայն, որքան գիտեմ, գրեթե ոչինչ չէ տպագրված։

* * *

1829 թվին Մոսկովում Մուշայէ Աբարատեան *շատ բան խոստացող անվան տակ հրատարակվում է մի դիրք։ Դա Լազարյան ճեմարանի սաների բանահյուսութիւնների ժողովածուն է, որով նրանք եթե մի կողմից պարծանքով ուզում են ցույց տալ իրենց հառաջադիմութիւնը «քերթողութեան և ստեղծաբանութեան» մեջ, մյուս կողմից «առ հասակակիցս արձակեն զառաջին զայս փունջ բանահիւսութեանց, հրաւիրեալ զնոսա յայս աղբիւր լուսաւորութեան, գալ աջակցել ի քերուբաքանդակ ճախարակութիւն տողաչափութեանց»։*

Շատ բնորոշ է այս կոչը յուր ժամանակի համար։ Մարդիկ կրթվում են դպրոցում, կարդում են եվրոպական լեզուներով բանաստեղծութիւններ, նույնը որոնում են և հայոց մեջ ու չեն գտնում։ Բայց դպրոցը տվել է նրանց ազգի պակասութիւնը հոգալու միտքը, չեն կարող անտարբեր մնալ։ Չկա բանաստեղծութիւն, բայց պետք է ստեղծել։ Ուրեմն ի՞նչ պետք է անել։ Պատասխանը շատ պարզ է և երեխայական։ —Հարկավոր է հրավեր կարդալ հայ դպրոցների բանաստեղծներին, որ զարթնեն։ Եվ այդ անում են Լազարյան սաներն իրենց աշակերտական շարադրութիւններով ու ճարտասանական վարժութիւններով, որոնք անշուշտ սրբագրված ու շինված են իրենց հայկաբանութեան ուսուցիչ Միքայել Ծայրագույն վ. Սալլանթյանցից։

Այն բազմաթիվ անուններից, որոնք գրված են ոտանավորների տակին, և ոչ մեկն էլ ապագայում գրական շնորհք չի ցույց տվել, որքան հայտնի է. բայց և բոլոր գրածներն էլ աննշան բաներ են. մեծ մասամբ Ձոներ՝ Ջատկի, Ծննդյան, Նոր տարվա և այլն առթիվ ուղղված Լազարյան իշխաններին. մի սովորություն, որ տեսանք, միայն այդ Լազարյան սաների մեջ չի եղել և միայն նրանք չեն, որ իրենց երախտավորներին տվել են այնպիսի մականուններ, ինչպես՝ աստվածազույգ, դյուցապատիվ, դյուցազնափայլ, սխրափայլ դասու դյուցազանց զուգաթոռ, դյուցածնունդ, մեծամեծարար հերոսք, արքայապսակ դյուցազանց վեհազնյա անմահից բարձակից և այլն։ Դա ժամանակի ողորմելի ոգու արտահայտութիւնն էր։

Սակայն այսպես լինելով հանդերձ՝ այդ ժողովածուն մի մանկական թոթովանք է, որ ցույց է տալիս, թե լեզուն պիտի բացվի։ Դրա մեջ արդեն երևում է, որ «մուղանները» ոչ միայն բարոյական խրատներ ու Աստվածաշունչ են սիրում և տաղաչափում նրա հատվածները, այլև ոգևորվում են մեր անցյալով ընդհանրապես. ունին արդեն հայրենիքի գաղափար, որով պարծենում են, որովհետև այդ հայրենիքը դրախտն է. ցույց են տալիս ուսման սեր և ուրախանում են, որ պարսից բռնակալ լծից ազատվում է հայ ազգը։ Դրանք ոգևորության նոր նյութեր են, որ Լազարյան սաներն առաջարկում են մեր բանաստեղծներին մշակելու, և որոնցով այնուհետև պիտի զբաղվեր մեր ապագա բանաստեղծութիւնը։

Եվ առաջինը, որ նույն ժամանակներում այս և նման խնդիրներ է

նյութ դարձնում բանաստեղծության, է Հովհան Վանանդեցին, որ թեպետ Ինճիճյանի ու Փեշտիմալճյանի ժամանակակից է և բագրատունուց մի սերունդ առաջ մեռած, բայց շատ կողմերով տարբերվում է նրանցից և իսկական հիմնադիրն է դառնում մեր նոր ոգով գրականության։

Հովհան Միրզայան Վանանդեցին *(1772—1840)* ծնվում է Վան քաղաքում։ Չորս տարեկան հասակում որբ է մնում հորից, աղքատ մայրը շատ նեղություն է կրում յուր բազմանդամ ընտանիքը պահելու համար և յուր ութ տարեկան որդուն տալիս է Կտուց անապատը իբրև փոքրավոր մի ոմն Գասպար վարդապետի։ Այստեղ նա ցույց է տալիս առանձին սեր ուսման և կարդալը երևի հենց յուր վարդապետից է սովորում, իսկ գրելը՝ վանքի կոնդակագրից։ Միաբանները տեսնելով նրա ընդունակությունները՝ առանձին խնամք են տանում վրան. շուտով դրպրության չորս աստիճան է ստանում՝ Ամիրզադե անունը փոխելով Հովհաննի։ Ուսման փափագը նրան Կ. Պոլիս է տանում իր քսանամյա հասակում, երբ լավ ծանոթ էր Աստվածաշնչին, գիտեր շարական ու Նարեկ, իհարկե մեծ մասամբ անգիր սերտած, ինչպես սովորական էր ժամանակի համար։ Այս միջոցին նա անգիր անել է սկսում և «բառարանը»։

Մայրաքաղաքում նրան հաջողվում է մտնել «մայր դպրատունը», ուր ստանում է յուր ժամանակի իսկական մեծ ուսումը, սովորում է քերականություն, ճարտասանություն և տրամաբանություն «յոտս գերիմաստ ուսուցչացն տիրացու Յարութեան և մահտեսի Մանասէի Կարնեցւոյ»։ Սկզբում ապրում է մեծ նեղությամբ, յուր հացը հայթայթում է ուրիշների համար նամակներ գրելով, բայց դպրատան վերակացու Շնորհք Մկրտիչ Միրիճանյան ամիրան, տեսնելով նրա ընդունակությունն ու հառաջադիմությունը, շաբաթական երեք դահեկան թոշակ է նշանակում նրան, որպեսզի ավելի մեծ եռանդով կարողանա պարապել. և հետո նույնիսկ յուր տունն է ընդունում նրան ապրելու, սեղանակից անելով իրան։

Վանանդեցին այս հասակում արդեն ցույց է տալիս բանահյուսության շնորհք և հորինում է ճառեր կրոնական բովանդակությամբ, որոնցով զվարճանում էր Շնորհք ամիրան յուր ազատ ժամերին։ Այդ ճառերից մեկը գրում է նա յուր մայր դպրատան, յուր հովանավոր ամիրայի և յուր երկու վարժապետների վրա, կամենալով երախտահատուցյ լինել նրանց։ Մի անգամ ամիրան խնջույք է տալիս Զաքարիա պատրիարքին. և բազմականները խնդրում են Հովհաննին, որ իրենց խնջույքի առթիվ մի ոտանավոր հորինե։ Նա ճաշի միջոցին կրում է ուղած ոտանավորը ու կարդում. ամենքը հավանում են և խնդրում պատրիարքին, որ մի «վերատուությամբ», այսինքն մականուն դնելով, պատվե Հովհաննին։ Ամիրայի ցանկությամբ՝ պատրիարքը «Վանեցի» կոչումը, որ երևի դյուր չէր գալիս ամիրային, փոխում դարձնում է «Վանանդեցի» ի հիշատակ Ղուկաս Վանանդեցու։

Վեց տարի սովորելուց հետո Հովհան Վանանդեցին Շնորհք ամիրայից վարժապետ է ուղարկվում Զմյուռնիա, ուր և ուղևորվում է 1798 թ.

ապրիլին։ Այստեղ ամուսնանում է նա, և տասնութ տարի վարժապետությունն անելուց հետո ձեռնադրվում է քահանա և մի առանձին գրքով, «Կերակուր քահանայից», բացատրում է քահանաների պարտականությունները։ Կյանքի վերջում տասը տարի հոդացավությամբ տանջվելով մեռնում է 1840 թ. փետրվարի 3-ին և ամենքից հարգված պատվով թաղվում է։

Հովհան Վանանդեցին ունեցել է միայն հայ ուսում. չի իմացել ոչ մի եվրոպական լեզու, տեղյակ է եղել բացի տաճկերենից նաև պարսկերենի և արաբերենի. և ինչպես երևում է, պարապել է պարսից գրականությամբ, որովհետև կենսագիրն[7] ասում է, թե պարսկերենից թարգմանել է ոտանավորով «Փէնտի ագդար» կոչված բարոյական բանաստեղծությունը։ Հին կլասիկներ չի կարդացել, բայց նրանց մասին, ինչպես և դիցաբանության մասին, տեղեկություն ունի և մեկ մեկ դործ է ածում դից անուններ։ Քաղ ծանոթ է եղել հայ մատենագրությանը, որից և ստացել է յուր ամբողջ զարգացումը։ Սիրող լինելով գրականության, նա աշակերտական հասակից արդեն գրել է ոտանավորներ, բայց բանաստեղծությամբ պարապել է իսկապես Զմյուռնիայում և հորինել է շատ բան։ Նա գործել է սակայն և իբրև վարժապետ ու պատրաստել է շատ աշակերտներ, որոնցից հետագայում նշանավոր է լինում Մսեր Մսերյանը, որ հիացմունքով ու մեծ ակնածությամբ է խոսում յուր սիրած վարժապետի վրա։ Սա յուր աշակերտական երախտագիտությունն արտահայտելու համար 1853 թ. Մոսկվայում հրատարակում է Վանանդեցու «Ճառ ներբողական ի սուրբ խաչն Քրիստոսի և պատմագրական առասացութիւն ի Սուրբ Նշանն Վարագայ», որ գրված է 1815—16 թվին։ Ճառի վերջում կա և ոտանավորով «Ներբող բարեբանութեան ի սուրբ նշանն Վարագայ»։ Դա մի կես քնարական, կես վիպական ներբող է նման նույն բովանդակության հին երկերին, լի մեկնաբանական բացատրություններով։

Նրա գլխավոր բանաստեղծական երկերն են՝ «Տեսարան հանդիսից Հայկայ, Արամայ և Արայի», որ ժամանակով ամենից հինն է, բայց տպագրված է 1856-ին Զմյուռնիայում. «Արփիական Հայաստանի», Կ. Պոլիս, 1836 թ. և «Ոսկի դար Հայաստանի», որ տպագրված է մահից մի տարի հետո, 1841 թ. Զմյուռնիայում։

Վանանդեցին նույնպես հին դպրոցի մարդ է և յուր մեջ կրում է յուր ժամանակակիցների բոլոր պակասությունները բանաստեղծական արվեստի նկատմամբ։ Եղել է մտածող ոգի, օժտված երևակայությամբ և խոսքի շնորհքով, բայց նրա բնատուր շնորհքն անկիրթ ու անմշակ է մնացել, և ինքն ևս զգում է այդ, ուսսի և ցավելով գրում է, թե բանաստեղծում է դիցազներգություն «չունելով իսկ և տեսութիւն անգամ նախնի հագներգութեանց մերոց կամ օտար ազգաց յայս վաստակ յարացոյց, և ո՛չ ևս ի նոյն սիտանեգոյն զամբողջ հնախօս մատեանս»։ Այդ ժամանակ

---

7 «Ոսկի Դարի» Հառաջաբան։

ոչ Հոմերոսի և ոչ Վիրգիլիոսի թարգմանություններն էին հրատարակված և ոչ իսկ Բագրատունու տուղերը. իսկ Վիդայի Քրիստոսականը, թարգմ. Թոմաճյանի, հրատ. 1832 թվին, չէր կարող ազդել Վանանդեցու երկին, քանի որ նա ծեր էր և յուր երկերը հորինած արդեն։ Բանաստեղծության վիպական ձևն ուրեմն ամբողջ ինքը պիտի ստեղծեր, իսկ ինքն առանց նախորդների չէր կարող բնականորեն նոր գեղեցիկ ձև առաջ բերել գրականության մեջ։ Այս պատճառով նրա երկն աչքի է ընկնում ճաշակի և արվեստի բացակայությամբ։

Ամենամեծ թերությունը, որ վնասում է Վանանդեցու աշխատանքին, այն է՝ որ նա ոչ մի գաղափար չունի գեղարվեստական երկի միության մասին, և իբրև հին սերնդի մարդ, կարծում է, որ եթե մի պատմական նյութ բանաստեղծական ոճով ոտանավորի վերածվի, կդառնա վիպական քերթված։ Նրա «Արփիականն» ամբողջապես Ագաթանգեղոսի Պատմությունն է ոտանավորով գրած։ Հորինվածքի կատարյալ բացակայություն է. նյութի մասերի հարմարում, ավելորդ բեռը դուրս ձգել և պակասը լրացնել չգիտե նա։ Բայց և այնպես, թեպետև անծանոթ արվեստի պահանջին, բնազդաբար զգացել է միության կարիքը և աշխատելով գործողությունը կենտրոնացնել Ս. Գրիգորի շուրջը՝ մի քանի մեծ փոփոխություն է մտցրել Ագաթանգեղոսի պատմության մեջ։ Նա տառացի չի հետևել Ագաթանգեղոսին սկզբից մինչև վերջը, այլ ամբողջ սկզբի մասը, Խոսրովի պատերազմները, Անակի գործը, Տրդատի փախուստն ու Լիկիանեսի մոտ ծառայելը, պատմել է տալիս Գրիգորի դայակին, և Գրիգորն այս պատմությունների ազդեցության տակ գնում է ծառայելու Տրդատի մոտ։ Այնուհետև Տրդատի քաջագործությունները պատմել է տալիս Լիկիանեսին Դիոկղետիանոսի առաջ, և վերջապես Հռիփսիմյանց նահատակությունը հրեշտակն է պատմում Ս. Գրիգորին Խոր-Վիրապում։ Այս և սրանց նման փոփոխություններով գործողությունը որոշ չափով արագանում և սեղմ է դառնում, բայց դժբախտաբար ամբողջ միջին մասը. Լուսավորչի քարոզությունը, բաց չի թողնում, որով և Վանանդեցու քերթվածի կեսից ավելին ավելորդ մի ծանրություն է դառնում և մի գործը երկուսի վերածվում։

Ինչքան էլ նա «Արփիականի» մեջ կապված է մնում Ագաթանգեղոսին, չի վարվում սակայն Կոմիտաս քահանայի Գործք Առաքելոցի պես։ Վանանդեցին բանաստեղծ է. նորից հորինում է Ագաթանգեղոսը։ Ազատ զգալով իրեն մանրամասնությունների մեջ, ստեղծում է ամբողջական պատկերներ ու դրություններ և երբեմն իսկական վիպական ոգով շատ հաջող կերպով կարողանում է մեջ բերել գրավիչ ու կենդանի մանրամասնություններ, արտաքինի և հոգու նկարագիրներ։ Իսկ այս արդեն մի խոշոր հառաջադիմություն է մեր վերածնության վիպական բանաստեղծության մեջ։ Ահա թե ինչպես է նկարագրում Դիոկղետիանոսի վիճակը, երբ նա լսում է Գոթաց Հուչե թագավորի մենամարտի հրավերը.

Դիոկղետեայ յունկն հարեալ ուխտ այսանակ ամրակուռ,
Յոսկերս ողջոյն և ընդ իրանն ահռից տարաւ զսարսուռ.
ի սաստկաշունչն որպէս յորժամ տատանս առնու հողմոց՝ ուռ,
Այնպէս դողայր ըստ ջերմնոտաց, իւր դալկացան դէմք համուռ։
Վարանական ի հոգս անկեալ՝ քունն հեշտին գայր ի խոյս,
Կասկած ընդոստ յերեքոսէն զարդեանցն ի բաց մերժէր հոյս.
Զի ոսկերացն ուժոյ տակ՛ր ի գոռ խիղա՛խ անխրախոյս,
Կնատասուն միշտ փափկացեալ Արեսեան չէր ոգւոյն կոյս։
Կարշնեղ ջղաց փոխան ղյո՛յն մտաց ձկտե՛ր աստ և անդ.
Հնարից ինչ մարթել ի գիւտ զանձն պահել անվկանդ։

Ապա պատմում է թե ինչպես կայսեր կոչի վրա՝ ղանազան կողմերից իշխանները ժողովվում և ներկայանում են կայսրին.

Մարզից մարզից հապ խմբէին իշխանորեար ի մի վայր,
Որպէս յախորժ սրինգ հովուի խաշանց բազուրդ գառն ի մայր.

Լիկիանեսը պատմում է Տրդատի քաջագործությունները.

Ասաց, խսկոյն և Տրդատէս կայսեր եկաց յանդիման.
Սէգ ի հասակ ճետ Պահլաւիկ, ցոլք հրափայլք յիւր ական.
—Իմ է այդ գործ ի հաճելեաց, ասէ, կանգնիլ ախոյեան.
Վաղիւ յայս ժա՛մ նա ձերբակալ շառագնեսցի յայս ատեան։

Ապա մանրամասն նկարագրում է Տրդատի հագուստն ու զինումը և մենամարտի ելնելը.

Պղնձենիւթ փողոց գանգիւն ժամազդեցիկ ի պայքար,
Աշխոյժ յերկուց վառեալ կողմանց թնդիւն գործէ հիարար,
Սիրտ յոխերիմ ի ճակատուն գան ի տեղի վագրաբար,
Բաղձ ի հոգիս դէտակն ի պսակ մենամարտից ուժգնակար։
Սօս երիվարք գոռ ի փռինչ դափր հատանեն յասպարէզ,
Եւ կարախիւն յերկուց կողմանց բոց բորբոքէ անձնակէզ.
Երկոքեանն ի՛սկ մտրակ ի կուշտ տան արշաւել ի կրկէս,
Շրջանս առնուն արձակ խաղան, յերկար բաղխին սաստկապէս...

Եվ երբ Տրդատը բռնում բերում է Գոթաց թագավորին կայսեր առաջ,

Ծաւի ղծափի սիրտ ի կայտիռ հռովմէական համագունդ,
Ի գոչ վաշից ղքարանձաւս արձագանգեն տան ի թունդ...

Երբ Դիոկղետիանոսի մարդիկը թագավորի հարսնացու են որոնում, բանաստեղծն առիթից օգտվում է գեղեցկության հետևյալ նկարագիրն անելու (եր. 148).

Հռովմայ ողջոյն թնդայր սահման յաղչկանցն ի վալ ճեպերագ,
Գեղք շպարեալք ի հրապարակս փայլակէին կարգ ի կարգ.

Զփղոսկրեայն ուսովք ծածան վարսից խարտեաշըն գիսակ,
Նոճեսարաս զանդամայօղն հարդարեր պե՛րճ զհասակ։
Երփն գեղոց չքնաղացոյց դէմք շողէին արծարծուն,
Լուսնեացն երեսս ակն այծեմանց կաթնածով ի՛նչ լուսաբուն.
Յօնք մրագարդք աղեղնակեալ կիսաբոլոր մէտ ի քուն,
Նռնակեղև այտիցն ցոլք հրավառեալք ի փաղփիւն։
Տաշտից խնոց ծնօտքն ի տիպ, բոյր անուշից հոտեան.
Ունգունքն որպէս լիբանանու իսկ զաշտարակս գեղազան.
Շրթանց փափկիկ կարմրալարք երփն հարեալք ի յորդան,
Կաթուած մեղու լեզուին շնորհք զրոյց բղխին քաղցրաբան։
Կճեայ կրծոց փայլուն տեսիլ ի գոյն վառեալ շուշանաց,
Բարեյարմար մատանցն ճիւղք ձիւնապայծառք ընդ ձեռաց.
Նոյն և մարմնոյն համայն մասամբք անհամեմատն յօրինուած,
Զբնաւից գիտէր զսիրտ ի խանդ գերել տարփանաց։

Բայց երբ խնդրակները չար ոգու դրդմամբ բռնի կերպով մտնում են Հուսանոցը,

... Հռիփսիմեա՛յ ցոլս արձակեալ դէմք հրաշատես զարփենին՝
Ստուեր զայլոցն ածէ գեղովք օրիորդաց նահանգին,
Յապուշ հարեալ հոյլք յուզակաց ի սխրանս գան հիացման...

Իսկ երբ նրա պատկերը ցույց է տալիս թագավորին,

Որպէս ուրուք սիրտ կաթոգին ի սէր վառեալ երկրէից,
Անակնկալ ի ձեռս անճառ բերցէ ճոխանս զանմահից,—
Կամ ընդ ծաղկանց վաղաթարշամ վայելչութեան երանգից
Զանթառամից հասցէ ունիլ զպերճութիւն հրճուալից,—
Խանդ ի հոգի նոյնպէս ի ներքս ածեալ կայթէ՛ քաջն արանց,
Յայլո իբրու ի խելս եկեալ վաշ վա՛շ գանչէ հրճուանաց.
Համայնց ի բաց փախչին գեղձանք, յայն կայ և ե՛թ ակնքաց,
Վայրկեանք դարուց նմա բերեն երկարութիւն շրջանաց։

Ես կուզեի, առանց երկարությունից վախենալու, մի երկու հատված ևս մեջ բերել ցույց տալու համար, թե ինչպես հանդարտ ու սիրուն պատմել գիտե այս մոռացված բանաստեղծը։

Խոր տխրութիւն զանհնարին աղունս ածեալ ի գուպար,
Զարքայն յանձուկն ի Հռիփսիմեայ գեղոյն լլկէր չարաչար։
Յայգ և ցերեկ յանմխիթարն անկեալ ի սուգ անդարման,
Եւ յայլոյ խելս այլանդակեալ կոծէր ջայլէր ի կական.
Կուրքն դառինք և ըմպելիք հոտս ի ժահրիցն Ստիդսեան,
Ի քիմսն ազդեալ յանբերելի ածեն վշտացն ի տուգան։
Աւագանւոյն իւր ի շուարս անկեալ առ փիւտ հնարից,
Դիւրումն ի սիրտ ածել պետին յայն ի մորմոք ցաւալից.
Երէվայրեացն որսոյ տան ժամ բոլոր զօրացըն խմբից,

Փոքու զաղէտս մեղմել ցաւոց որ մահաբերն է սրտից...
Այն ինչ ի կաոս Տրդատ ելեալ ելոն ճեպէր ընդ քաղաք,
Շեշտ ի վերայ գայր պատուհա՛ս շանթ բարկութեան երկնառաք...
Խոտաճարակ ի շամբս անկեալ անզգամէր չարաչար,
Մերկ զանձն ընդ դաշտան կոծելով ընդ գայոս գայր կնճաբար...

Այս ցավալի դեպքի վրա սուգը բռնում է ամբողջ աշխարհը և նույնիսկ բնությունը սգում է.

Բերկրանաց փախեան խնծիղք, բոխք ապալերք խոնեցան,
Դաշտաց լերանց յեղծ եկին գե՛ղք, ծառք գեղուղէշք խամրացան...
Լցաւ քաղաքն պանծալի մառախլապատ խաւարաւ...
Նոճի հասակն անդ Աշխենայ մեծ թագուհւոյն գեղապանծ,
Յաղէտաւոր յայս կորացեալ դիպուած դնէր ոստաքանց,
Ջայլէր կոծէր անմխիթար, վտակս հոսէր արտուտուաց։
Ո՞ փառք, ասէր, Հայաստանի, այր ահընկէց շանթահար,
Ո՞ւր սլանծագոյն քո այն գահոյք յարփեան ցոլմունս ակնասար,
Աւա՛ղ ցաւոյս... արդ ի շամբից ի տիղմն գաս հիգաբար,
Ընդ բեհեզաց ծածկոյթ մարմնոյ գայտից շաղախք պատսպար,
Ձիա՞րդ սիրոյ քո սերտ ընկերս սփոփս առից գէթ ինչ խուն,
Որ յամենուստ արդ կողոպուտս եմ ի փառաց բարձրագոյն։
Ո՞ փութասցի յԱպողոնին անդր ի մեհեան ելուզմոյն
Ձելից ստոյգս առնուլ գուշակս այսմիկ դիպաց դառնագոյն։
Հա՛յր իմ հզօր, դու Աշխարադ պետդ Ալանաց ոգի սերտ,
Ձքո դստրիկս եկ տեսանել խանձեալ ի ցաւս իբրու շերտ...

Բերած հատվածներից երևում է, թե ինչպիսի վիպական ոգի է ունեցել Վանանդեցին և ինչպիսի եռանդով կենդանացնում է նա պատմվածքը։ Նա մի անգամից մեր թմրած, սառն ու անշունչ բանաստեղծությանը հոգի ու շունչ է տալիս. ափսոս միայն, որ Արփիականի տասն հազարից ավելի տողերից երկու երրորդ մասը ավելորդ բեռն է։

Պակաս չի վնասում Վանանդեցու երկին և նրա ճաշակը ոճի, գլխավորապես բառերի ընտրության նկատմամբ։ Ոտանավորը կշռված ոտքերով և հնչուն հանգերով, երկար վիպական տողերով, բաժանված քառյակների, թողնում է նյութին պատշաճ լրջության տպավորությունը։ Բայց այն վայելքը, որ ընթերցողն ստանում է ոտանավորից և խոսքի հարմարավոր արտահայտություններից, որոնք այն ժամանակ նորություն են եղել մեր գրականության մեջ, հաճախ անսպասելի կերպով ոչնչանում է բառերի և երբեմն շարահյուսության անպիտանությունից։ Նա սիրող և հետևող է 11-րդ դարու փչացած ճաշակին, որի նմուշը գտնում ենք Գրիգոր Մագիստրոսի և Նարեկացու տաղերի մեջ, այն է՝ լեզվի գեղեցկությունը որոնել խրթնության մեջ։ Վանանդեցու այս պակասությունը մասամբ ներելի է լինում, եթե նկատի ունենանք, որ նա հին, մեռած լեզվով

է գրում, և որ նա առաջինն է, որ խոշոր բանաստեղծական երկեր է հորինում հանգավոր ոտանավորով, ուստի և ինքը պիտի ստեղծեր մի նոր բանաստեղծական լեզու, կարիք պիտի ունենար հարուստ բառարանի՝ հանգեր ու ոտքեր կազմելու համար։ Այս պատճառով նա բավական ազատ է վարվում բառերի վերաբերմամբ. գործ է ածում քիչ գործածական և դժվար հասկանալի բառեր, հաճախ այնպիսի արմատներ, որոնք պարզ կերպով գործածական չեն, կամ նորանոր բառեր է ածանցում և բարդում. կամ բառերը մի բոլորովին անսովոր նշանակությամբ բանեցնում։ Եվ վերջապես կան բառեր ևս, որ Առձեռն բառարանի մեջ չկան։ Այս ամենը բավական դժվարացնում է ընթերցողին, որ սակայն հետզհետե վարժվում է այս խորթուբորթություններին։

Չպետք է մոռանալ մի հանգամանք ևս։ Մեր լեզվական կրթությունն այժմ հիմնված է մեր կլասիկական համարված գրաբարի վրա. մենք այժմ շատ ավելի հեշտությամբ հասկանում ենք մեր առաջին գրաբար մատենագիրները, որոնց լեզուն և ավելի է ազդել մեր աշխարհաբարի վրա. մինչդեռ դրանց հետ զուգընթաց և դրանցից հետո կան շատ գրաբար գրվածքներ, որ դպրոցական ուսման նյութ դարձած չլինելով՝ մինչև այժմ ևս խորթ են մնացել մեզ համար։ Արդ՝ Վանանդեցու ժամանակ եթե Մխիթարյան դպրոցում մեր հին լեզվի այս բաժանումն եղած էր և Մխիթարյան գրողներն արդեն հետևում էին դասական գրաբարին,— ուրիշները սակայն այսպիսի խտրություն չէին դնում. ուստի և հաճախ այնպիսի լեզու են բանեցնում, որ մեզ դժվար հասկանալի է. մանավանդ որ այդ ժամանակ Հայկազյան լեզվի ընդարձակ բառարանը դեռ չէր հրատարակված և բառերի նշանակությունները դեռ ճշտված չէին։ Վանանդեցին ուրեմն ամեն ինչ ինքը պետք է սովորեր գրքերից մեծ մասամբ առանց բառարանի օգնության, և երևի դժվար բառերի համար անձամբ բառարան է կազմած եղել յուր համար. հաճախ իհարկե սխալ մեկնություններով, և այդ հազվադեպ երևացող բառերը գործ է ածել անխտիր յուր քերթվածների մեջ։

Նույն պակասությունները, որ ունի Արփիականը, կան և Ոսկի Դարի մեջ և մինչև անգամ ավելին ևս։ Արփիականի մեջ, թեպետ թույլ կերպով, կա գործողություն և նույնիսկ մի միություն, որ առաջանում է անշուշտ նրանից, որ Ագաթանգեղոսն ևս որոշ չափով գեղարվեստական գրվածք է. Ոսկի Դարի մեջ այդ էլ չկա։ Այս խոշոր քերթվածը, մոտ 5600 15-վանկանի տողերից կազմված, անասելի տուժում է նրանից, որ առանց որոշ ծրագրի և հաջորդականության է հորինված, և ծանրաբեռնված է կրկնություններով և անպետք մասերով։ Բովանդակությունն է ընդհանրապես Հայաստանն յուր պատմությամբ և աշխարհագրությամբ։

Առաջին երգի սկզբում Սահակ Բագրատունին խնդրում է Խորենացուն գրել Ոսկի Դարի մասին, և Խորենացին պատմում, իսկապես նկարագրում է Ոսկի Դարի կյանքը, բնությունը, համառոտ անցնելով Ադամից և մանրամասն պատմելով ջրհեղեղի մասին։ Այստեղ մենք կգտնենք

և ամեն ավանդություն ժողովված՝ Նախիջևան, Ակոռի, Սիմ, Տարրան, Մարանդ անունների համար, և վերջը՝ թե ինչպես մարդիկ տարածվում են Հայոց աշխարհի զանազան կողմերը։ Նյութը դյուցազներգության համար մի անպետք բան է, բայց կան մեջը կենդանի երևակայությամբ և աշխույժ եռանդով առաջ տարված այնպիսի հատվածներ, որոնց նմանը չունի մեր հին բանաստեղծությունը։ Այսպես, օրինակ, կենդանիների ելքը Նոյան տապանից (եր. 14 և հետ.), որից ավելորդ չի լինիլ մի քանի տներ դնել այստեղ, քանի որ այս բանաստեղծն այժմ այլևս չեն կարդում։

Բայց յապրացու մեր տապանին բացման՝ զնոր տեսարան
Մեր իսկ աչօք անդր ի Մասեաց տեսաք լերին յարտևան.
Օդոյն զիա՞րդ դղորդէր յարկ թռչնոցն ի թափ թևածման,
Եւ գետնոյն պի՞ բնդէր յատակ ցամաքայնոցն ի կայթման։
Մռինչս առիւծն որոտացեալ և յագին տա՛յր ուժգին թափ,
Իբրև զանիւ հիռայր հրոյ յորսոյն ի գիւտ զառ ի թափ.
Խոժոռադէմ բիբս ի բնաւից բացեալ վերայ զանթարթափ,
Եւ ընդ խռան յանձն ապաստան երկիր խաղայր հարթատափ։
Ընդ առապարս ցոուն սաստիկ հնչեալ բառանչ բոմբահան,
Ի դալարեացն անկեալ խնդիր, հովտաց յածէր ընդ սահման.
Ջազատութեան հարեալ դիպաց յանձկանաց չէ՛ր կապարան,
Եւ ոչ ունկանցն ազդէր քրքինջ քանզի չունէր հարկահան...
Վա՛շ վա՛շ՝ ո՞րպէս իբր ի փողոյ լուր վառեալ շեշտ յասպարէս,
Փառք զլանջօք ձին որոտայր դափր հատեալ ի կրկէս.
Խնջագոռ իբրև տօնից սուր արշաւեալ ի հանդէս,
Ընդ զառիվայր խաղայր լերին յարօտ դիմել փութապէս։
Նապաստակին սուր էր վազումն ականջ ընդ ուլն ի կռուան,
Առ ի կողաց յածեալ լերին վէմ գտանել յօթևան.
Յանձինն ի պուրծ հանճարագիւտ շրջան գործէր ի սուրման,
Յնդոյր ի կեանս յառապարացն եղեալ ամուրս ապաստան։

Այսպես իրենց բնավորության համեմատ մի քանի խոշոր գծերով նկարագրված են և մյուս չորքոտանիներն ու թռչունները. իսկ կապի՞կը.

Կապիկ ի դէմս անդ ծամածուռ նոցուն տարեալ զուրուական,
Խաղայր, կայթէր, խլիրաս տայր, սողէր, սուրայր մունջ ի բան.
Չկենդանեաց նմա զբօսանք էր խառնաղանճ կարաւան,
Յայն զմայլուն յամպահաղաց մնայր լերին յարտևան։

Երկրորդ երգի մեջ դարձյալ սկսում է երկու նախաստեղծից և պատմում է արվեստների ու երկրագործության գյուտը, անելով մի տեսակ ազգագրական և դիդակտիկական բանաստեղծություն։ Ապա թե ինչպես մարդիկ ցրվում են Հայաստանից դեպի Սենաար, Հայկի և Բելի մասին, Հայկի գալը Հայաստան, Բելի կռիվը և այլն։

Երրորդ երգն սկսվում է Արամից և Խորենացու համառոտ պատմությունն է անում, խոսում է Հայոց առևտրի մասին և թե ինչ գաղթականություններ են եկել Հայաստան։ Արշակունիներից հետո գրում է Բագրատունյաց մասին և Հայոց պատմությունը համառոտ տեսությամբ բերում հասցնում է մինչև նույնիսկ Ռուսաց տիրապետությունը։

Չորրորդ երգի մեջ նորից դառնում է դրախտին և հիացմունքով նկարագրում է, երբեմն առանձին գեղեցկությամբ, Հայաստանի բուսականությունն ու բնությունն ընդհանրապես։ Ապա մի անպետք հնախոսություն է անում ապացուցանելու, թե դրախտը Հայաստանում է եղել։ Հետևելով Ինճիճյանին՝ ոտանավորով Հայաստանի աշխարհագրությունն է անում, նկարագրելով լեռները, գետերը, գավառները։ Վերջը Հայոց աստվածապաշտությունն ու կրոնն է գովում և պաշտպանում եվրոպացի քարոզիչների դեմ, վիճելով նրանց հետ։

Ի՞նչ է այս բանաստեղծության արժեքը։

Վանանդեցու գլխավոր արժանիքն իհարկե ձևի մեջ չէ, որը շատ անկատար է յուր ամբողջության մեջ։ Թեպետ մանրամասնությունների ստեղծող է հանդիսանում և դիտե զգալ բնությունն ու երբեմն սիրուն նկարագրել, բայց նա ընդհանրապես պրոզա և բանաստեղծություն չի տարբերում և ամեն ինչ խառն ի խուռն ոտանավորի է վերածում։ Նրա գլխավոր վաստակը, որով նա մեր գրականության մեջ տեղ պիտի բռնի, շոշափած գաղափարների և նոր տեսակի զգացումների մեջ է։ Այս նկատմամբ Վանանդեցին իսկապես խոշոր նորամուծություններ է բերել մեր բանաստեղծությանը, երբ համեմատում ենք սրա գործն իր նախորդների ու նույնիսկ ժամանակակիցների հետ և երբ ի նկատի ենք ունենում այն ազդեցությունը, որ նա թողել է հաջորդների վրա։ Նրանով է իսկապես սկսվում մեր նոր բանաստեղծությունը, որովհետև նրա գրվածքների մեջ առաջին անգամ գտնում ենք մեր 19-րդ դարու գեղեցիկ գրականության գրեթե բոլոր գլխավոր գաղափարներն ու զգացումները։ Շատ բան իհարկե սաղմնային դրության մեջ է, որովհետև 19-րդ դարու առաջին երեսնամյակում շատ գաղափարներ էլ դեռ նոր էին ծնվում մեր մեջ և պարզված չէին։

Վանանդեցին մի կողմից շարունակելով հին կրոնական ուղղությունը, մյուս կողմից բանաստեղծության առաջ դնում է մի նոր խնդիր, ազգային քաղաքական անցյալը։ Նրա ձեռքով սկսվում է, այսպես ասած, Հայոց fաղաfական անցյալի բանաստեղծությունը, քաղաքական անցյալից առած հայրենասիրական քերթվածների շարքը, որ հետզհետե ավելի ընդարձակվում է, և որի մեջ ավելի ու ավելի ուշադրության է առնվում ներկա կյանքը։ «Տեսարանի» մեջ արդեն, որ մյուսներից վաղ է գրված և հիշվում է «Արփիականի» մեջ, վիպական քերթվածների նյութ դարձնում է Հայկ[8], Արամ, Արա առանձին երգերով և ապա մի չորրորդ երգով ևս՝

8 «Հանդէս դիւցազին մերոյ Հայկայ» երգի բովանդակությունն է՝ Հայկի ծնունդն ու անունը. Հայաստանի աստվածապաշտությունն ու մարդկանց զեղծումը, ջրհեղեղի մասին. մարդկանց բազմանալը և բաժանվիլը. աշտարակաշինությունը, Հայկի ապստամբությունը,

«Յորդոր նմանիլ նախնեաց», ամփոփումն է անում առաջին երեք երգերի։ Նույն նյութը նա հեղհեղում է և Ոսկի Դարի մեջ և մասամբ նույնիսկ Արփիականի մեջ։

Սա արդեն մի մեծ հեղափոխություն է մեր բանաստեղծության մեջ։ Դարեր շարունակ քաղաքական կյանքը մերժված է եղել երգի արժանանալուց. քերթողները միակերպ միայն վարդ ու սոխակ, պարտեզ ու գարուն են երգել և կամ եկեղեցի ու սրբեր, կրոնական խնդիրներ, Հին ու Նոր Կտակարանը, շատ շատ՝ Հայոց եկեղեցական անցյալից՝ հայ սրբեր. իսկ այժմ բանաստեղծը առանց թողնելու կրոնականը՝ ոգևորվում է Հայոց քաղաքական անցյալով։ Նա աչք դարձնելով դեպի հեռավոր անցյալը, այնտեղ բացի սրբերից տեսնում է նաև քաղաքական աշխարհական կյանքը և հեռավոր անցյալի միջից հանում է մեր պատմության առասպելական դյուցազներին, որոնք նրա համար սակայն իրական էին, և պարծանքով երգում է «Հայկեան ազատութեան» համար կռիվը, որով սկըսվում է հայ ազգի «ահեղագին տերութիւնը» (Տեսարան, եր. 51) և թե ինչպես օտարները հնազանդվում են հայերին և

Յօրէ անտի պայծառ փայլէ պարծանք ազգին,
Երբ միապետ հանդիսանայ մեր այս նախնին.
Յաջողք բարեաց ի Հայաստան յաճախեցին
Ջքնաղ ցուցեալ համայն ազանց այլ աշխարհին։

Չկա քաղաքական ազատություն առանց հայրենիքի, և Վանանդեցին մեր անցյալ կյանքի հետ բնականորեն հիշեցնում է մեր մոռացված հայրենիքը, որ մեր անցյալի հետ հավասար և նրանից էլ ավելի զբաղեցնում է քերթողին։ «Ո՞րն է աշխարհ Հայաստան», ինքն իրեն հարց է տալիս նա. և պատասխանն այն ժամանակի համար շատ պարզ էր։ Մենք մի այնպիսի հայրենիք ունենք, որի նմանը չի ունեցել և չունի ոչ մի ազգ։ Մեր հայրենիքը դրախտն է, մարդկության առաջին և երկրորդ որորանը,— մի հին ավանդություն, որ վաղուց արդեն բնիկ զրույց էր դարձել և որ 18-րդ դարու վերջում և 19-րդի սկիզբներում շնորհիվ Ջամչյանի և Ինճիճյանի զորեղ կերպով նորոգվել էր հայ գրագետների շրջանում և ազգային մեծ պարծանք էր համարվում. ուստի և պետք է տեղ գտներ բանաստեղծության մեջ։ Եվ ահա՛ Վանանդեցուց սկիզբն է առնում Դրախտ Հայաստանի և Նոյան Հայաստանի գովքը, որ այնուհետև երկար ոգևորում է մեր բանաստեղծներին, մինչև անգամ աշխարհաբար գրողներին, ինչպես Գամառ Քաթիպա և ուրիշներ։ Դա մի սին պարծանք էր, բայց սիրով կապում էր սրտերը երկրի հետ, այն երկրի, որ ուրանում էին իր բնիկները։

պատերազմը և հաղթությունը, Հայկի միապետությունը, աշխարհաշինությունը և մահը։— Այս «Հանդէս դիւցազին մերոյ Հայկայ» ուրեմն նախագաղափարն է Բագրատունու «Հայկ դիւցազնի»։

Հրճուի՛մ, վա՛շ ինձ, Հայկե՛ան է տուն ուր և դրախտն էր զետեղ.
Ուստի քառից բաշխին զետոցն առաջք ուխտ յաղթազեղ.
Երկիր բեղնուտ, վայր փափկութեան յերփն ծաղկանց լուսագեղ,
Ու նախահարցն իսկ նախ քան ջուրց կացեալ ղողող տուն շքեղ,
Անդէն և Նոյ զվեցդարեան ձդեալ ղաւուրս իւր կենաց...

(Ոսկի Դար, 9)։

Դրախտը, Նոյի փրկութեան տեղը, մեր երկիրը, մերն է եղել. և բնական եղրակացութիւնն այն պիտի լիներ, թէ ինչո՛ւ պիտի թողնել, որ օտարները խլեն մեզնից այդ պարծանքը, որ մերն է և մենք պետք է գովենք ու սիրենք։

Զի թէ մարդկան յերկեակն աճուրդ մեր կաց երկիր նախապար,
Զմեր և հի՞մ կալցին պարծանս, որ յետինն են դեհք օտար։

(Ո. Դ., 3)։

Եվ Վանանդեցին ձեռնարկում է մի դյուցազներգություն գրելու, որով կարողանար հայ երիտասարդներին հասկացնել Հայոց աղգի պարծանքը թե անցյալի և թե հայրենիքի նկատմամբ։

Բանաստեղծն ուրեմն սկսել է արդեն մտածել աղգի և հայրենիքի վրա, համեմատել ներկա վիճակն անցյալի հետ և երազել ապագայի համար։ Աղգն ու հայրենիքն է շարունակ նրա մտքի մեջ.

Հուր է սեղանոյ իղձ ազգասիրին
Արծարծուն վառեալ ի ներքս ի հոգին.
Ուր խաղաղականք և այլքն ըստ կարգին
Ազգային դարձուածք հաճոյ ճենճերին։

Այդ աղգն ու հայրենիքը անցյալում՝ ներկայանում են նրան գաղափարականորեն գեղեցիկ, համակ քաջություն, քաջազնություն և բարեշինություն։

Ի Հայաստան նախ կանգնեցան շէնք և քաղաքք ի հիմանց,
Անդեայք և հօտք անդ խայտացին նախ ի ծնունդս սերմանց...
Հայաստանին են նախարուեստ վաճառականքն ի հանճար,
Որք զառաջինն ի տուրևառս կարգ հաստեցին զճարտար, և այլն։

(Ո. Դ., 88)։

Ամեն ինչ լավ է եղել անցյալում, ասում է բանաստեղծը, ափսո՛ս միայն, որ իմաստությունը պակաս է եղել Հայոց միջից։ Մեր նախնիքը հաճախ, մինչ հավատարիմ ծառայել են օտարին, զինվել են յուրայինների դեմ և պատրաստ են եղել իրենց պետությունն ուրիշներին մատնելու,— իրենցը քանդել են ուրիշինը շինելու համար։

Բա՛ըէ փառաց քոց, Հա՛յաստան, ղի Հաստողին շնորհաց բան
Ի քեզ յառաջ հնչեաց յատուկ ի մարդկաձայն բարբառման...

Քոյդ հնչեցին անձաւք լերանց նախ արձագանգ պարզ ի դարձ,
Քոյոց կայից ծառք և ծաղկունք յակճիռ հարան շքաբարձ,
Գետք և աղբիւրք ի քէն բղխման ուխս յորդեցին նախապարծ,
Բայց իցի՞ թէ քոյին որդիք ղքոյդ գիտէին շուք, յանկա՞րծ...

(Ո. Դ., 353)։

Եվ հայրենիքի արժէքը չճանաչելու, իսկ օտարներին հավատարիմ ծառայելու այդ ոգին մեր պապերից ժառանգել ենք մենք և պահում ենք մի՛նչև այժմ մեր արյունի մեջ.

Ի Մոսկովաց հայեա՛ց Կայսեր՝ զոր Հայոց տայ գովութիւն,
Ազգ է անկեղծ և մտերիմ առ ո՛ և է տէրութիւն.
Զոր և արդիւնքն ի նորս և հինս հաւաստիս տան հաստատուն,
Սակայն զի՞նչ շահ, զի յանհոգս են զիւրեանց յարգել բնիկ տուն։

(Ո. Դ., 325)։

Ի՞նչ շահ հայ ազգի ամեն բարեմասնություններից, երբ անհոգ են մնում բնիկ տունը հարգելու։ Եվ ոչ միայն դրանից օգուտ չունին, այլև տեսեք թե ինչ է եղել դրա հետևանքը.

Վայրավատին ուստի Հայկեան եղեալ սերունդք ի հաւար,
Շքեղ պատուոյն անկան փոխան՝ մերգուզանացն ի խաւար.
Ոսկեդրուագ յարկացն շէնք և սրահից գեղապար,
Յաւուվ ասեմ, յատակեցան յանշէնս եղեալ առապար։
Մտրկութեան անուրն ի մերս անլոյծ կապեալ պարանոց,
Հայրենատուրն խսպառ քերքեաց ի վիճակէն աւալոց.
Երկիր՝ որ դրախտն էր փափկութեան անմահութիւն ծաղկանոց,
Դժնեայն եղև ազգաց կոխան՝ մեր յանդարման սրտից խոց։
Խեթիւ ի մեզ զի հայեցաւ Արփին արդարն յիւրն ի դատ,
Զմեր դիմացն ի տխրաթոյր մերկել տեսիլն ըզախատ,
Մերոցն եղեալ ժանտ դրացեաց կատականաց ի նախատ...

(Ո. Դ., 326)։

Եվ այս ամենը ինչո՞ւ համար, ի՞նչ մեղք են արել, որ Աստված պատժում է հայերին։ Այո՛, մեղանչել են, բայց այլևս ոչ միջնադարյան հայացքով, այլ միայն նրանով, որ օտարասեր հայն անհոգ է իր բնիկ տունը հարգելու համար, և դրա համար հենց այդ օտարների նախատանքի, ծաղր ու ծանակի առարկան է դարձած։ Արդարև եղել են մեր պատմության մեջ շրջաններ, երբ հայերն ընկած դրության մեջ են եղել, բայց ոչ այժմյան պես, որովհետև այն ժամանակ առաջ են եկել տաղամարդիկ, որոնք «փոյթ յառնէին յազգին պատիւ ձեռնարկուք», իսկ ա՛յժմ... այժմ բանաստեղծն անմխիթար է.

Սակայն զարդիս անփառունակն եմք աղետից ողբերգուք.
Աշխարհակալ մեր միացաւ պայծառ թագին փայլատակ,
Արքայազանց համակ բարձաւ տոհմեղութեան յիշատակ.
Զի ցան և ցիր յոլորտս անկան յոտարազգեացն ի պառակ,
Նորոգութեան ոչ ունելով զակնկալեաց նպատակ։

Ահա թե ինչ վիճակի մեջ է պատկերանում հայ ազգն ու աշխարհը բանաստեղծին, և նրա սիրտը կտրատվում է տեսնելով այդ ամենը, և սրտի խորքից ձայնում է.

Ո՛վ, զի՞ հոգւոյս փղձկէ զկայս չարախտավար այս արկած,
Եւ կենդանւոյն զմահուն տայ կլնուլ օրհաս վայրանկած։

Եվ այսպես մեր բանաստեղծությունն արդեն գտել է յուր իսկական խորը զգացմունքի աղբյուրը. դա հայրենասիրությունն է իսկական ընդարձակ իմաստով, որ միանգամից յուր բոլոր թափով գալիս է բարձրացնելու մեր քերթվածները և վորեղ շեշտեր հնչել տալու նրանց։ Եվ վանանդեցու այդ շեշտերի մեջ մենք գտնում ենք և՛ Ալիշան, և՛ Գամառ Քաթիպա, և՛ Պեշիկթաշլյան և նույնիսկ Աբովյան։ Եվ այլապես էլ չէր կարող լինել, քանի որ բանաստեղծությունը կապվում է կյանքի հետ, իսկ կյանքն ու կյանքի ձգտումները նույն են եղել դրանց ժամանակ։

Բանաստեղծն առաջին անգամ սկսում է վերլուծել ներկա հայ կյանքը, որի մեջ ոչ մի մխիթարական բան չի գտնում։ Հայն ընկած է, «վայրանկած» այն աստիճանի, որ շատ հայեր հայ անունն անարգանք են համարում իրենց համար.

Անունն՝ որ բուն էր պարծանաց ի նախնեաց քաղցր գարուն,
Այժմիկ, վա՛յ ինձ, յանախորժակն անկեալ դնի հիգութիւն.
Զի են բազումք, որք անարգանս անձանց դնեն Հայ զանուն,
Յայլոց միտեալ յիմար մտօք ազնուանալ յետին տուն։
Ի ծայրայեղն այո՛ մոլիլ կենցաղագէտ չէ մարդկան.
Բայց մերքն և յայս անզգամեալ զսիրտ կալան խժական։

(Ո. Դ., 326)։

Հայն այլասերվել է. քաղաքական իշխանության անկումից հետո՝ սկսել է ցրվել այլ և այլ կողմեր և յուր բնիկ ազգային ոգին հեշտությամբ հեղափոխում է յուր դյուրափոխ բարքերով. նայելով թե որ երկրում է, նրանն էլ ընդունում է շարունակ փոփոխելով, այն աստիճանի, որ

«Մինչև զհայութեան անուն չյիշել յայլազանց երկրին.
Որով օր աւուր կորուսեալ զյարգ և զշուք անձին.
Առ օտարազգիս անկած ցուցանեն զազգն գլխովին»։

(Տեսարան, եր. 140)։

Սրանից էլ ավելի ստորանալ չի լինիլ մի ազգի համար։

Ի՞նչ է դրա պատճառը և ի՞նչ պիտի լինի դրա ճարը,— հարց է տալիս բանաստեղծը և պատասխանում։

Ոչ թե ընդհանուր ազգի բնավորությունն է պատճառ այս խորին անկմանը, այլ կրթության պակասությունը։ Ուրեմն պիտի կրթել հայությունը։ Եվ ո՞վ պիտի հոգա կրթության համար։— Ամենայն հայ մարդ և հատկապես քերթողները։ Եվ այսպիսով բանաստեղծությունը վանանդեցու գրչի տակ ստանում է մի նոր ազնիվ նպատակ. նա մինչև հիմա դրված էր աստուծու և սրբերի, վարդի ու սոխակի փառաբանության համար, իսկ այնուհետև պիտի պարապի ազգի վերաշինության գործով, հասարակություն կրթելով։ Եվ այս նպատակին նվիրում է Վանանդեցին յուր երկերը։ Լինելով ժամանակակից Ինճիճյանի ու Փեշտիմալճյանի, նա նույնիսկ յուր Արփիականը գրում է «ոչ ի պատիւ այնքան սրբոց հռչակ հարեալ գովութեան... Ամենասպարծ քանզի նոքա ի փառս կան պարտուր», որքան Հայաստանի «երգակների» համար. և նա համոզված է, որ յուր օրինակին պիտի հետևեն շատերը նույնպիսի երգեր հորինելով.

Վեհազանցն այո՛ ի սիրտ վառեսցի խանդումն անուշակ
Երագ ի յորգոր գալ քաջազնութեան յարդեանցն ի գուշակ։

Եվ հայ բանաստեղծների այդ աշխատանքի արդյունքն այն պիտի լինի վերջը, որ պիտի դադարի գժնյա գանգատն ազգից, որ արդեն ձրգտում է հարություն առնելու, և պիտի գա մի օր, որ պիտի կործանվի հայ ազգի խավար ու խարխուլ ամբարտակը, որ կարծես նրա կոչումն է դարձել.

Ջմրեսցի զազգեն, որ յառնել դիտէ, դժնեայ քանքարտակ,
Նսեմն այն կոչման հիմն ի վեր գայցէ խարխուլ ամբարտակ։

Ահա թե ինչո՛վ է ոգևորվում և ի՛նչ նպատակ է դնում Վանանդեցին մեր բանաստեղծների համար. նրան ոգևորողը ազգի սերն է, և այս սերն է դրդում նրան գրիչ առնելու.

Մշտատենչիկ սոյն այս խանդանք յալգին ի սէր սիրաւառ
Նշածաղիկս իմոց ալեաց զերկանց մատոյց նոր պատճառ։

Ի՞նչպես և ինչո՞վ պիտի առաջ բերել ազգի վերաշինության գործը։ Վանանդեցին այդ մասին ունի որոշ հայացքներ, որ ցրված են նրա երկերի մեջ և որոնք ամփոփված են նրա «Տեսարանի» չորրորդ երգի մեջ, որ մի դիդակտիկական քերթված է, ամբողջական մտածությամբ, լի հարուստ և առողջ գաղափարներով։ Այստեղ հանդես է գալիս վարժապետ և քահանա բանաստեղծը, որի գլխավոր հոգսն է կրթել աճող սերնդի սիրտն ու միտքը։ Դաստիարակության մի ամբողջ ծրագիր է բանում նա ընթերցողի առաջ։

Ուսման էական հոգին պիտի կազմի նմանող լինել մեր հայրերին, թե հոգևոր և թե մարմնավոր։ Այս պատճառով և Վանանդեցու գրեթե բոլոր բանաստեղծությունը զբաղվում է մեր քաջ և իմաստուն նախնիքների արարքները ի տես հանելով։ Նույնիսկ «Տեսարանի» այս չորրորդ երգի մեջ համառոտ, բայց ուժեղ կերպով թվում է մեր նշանավոր նախնիքները Հայկից սկսած մինչև անգամ բյուզանդական հայազգի կայսրները։

Մեր այս են նախնիք և որք ի սոցայն կարգի դերազանց.
Ծոխ բարեկրթութեան ազգին յայտնեցան հայր ի Հայկազանց.
Գանձեալ և զարդիւն լցին զաշխարհ մեր ի շուք պարծանաց,
Անպարտ ղօրացան ի կոր կործանել զոգին թշնամեաց։

Մանուկը պետք է աշխատի իր ընտիր նախնիքների հարազատ զավակը լինել.

Հետևեա, որդեա՛կ, անշեղ հետևեա ուշ ընդ կուրծս ածեալ,
Զի ընտրագոյն հարց զաւակ զարգասցիս հարազատ ընտրեալ։

Եվ ի՞նչ է հայրերին նմանող լինելը,—եթե ոչ նախնյաց արդյունքը, որ ամբարված կա ազգաշինության համար, մարդ պետք է ճանաչե և ինքն էլ աշխատի վրան և մի քայլ առաջ տանե։ Պետք է հայրերի գործով ոգևորվել և նրանց գործը շարունակել.

Արդ մանուկ դո՛ւ, հարազատ ծնունդ գերաբուն քաջաց,
Զօրացի՛ր հզօր անմոռաց պահել զշուք քոց նախնեաց.
Զանք յարավաստակ մի անգործ կացցէ ի քեզ և թմրած,
Զազգին զօգտաւէտն ի հանդէս կացո՛ յամենայն շարժուած։
Զաւակ ես քաջաց, մի՛ շիջցի ի քեզ ոգին նախահարց.
Զարմ ես վեհազանց, յարեա՛ց ի նոսա յօրանալ ի վարձ.
Քանզի զի՞նչ օգուտ ունիլ զնախնիս ի մեծ դիւցազանց,
Եւ նուաստանալ անտոհմից գործովք ի կարգ վատ արանց։

Ազգասիրությունն ուրեմն ազգաշինության մեջ է տեսնում բանաստեղծը և անհատը պարտական է անել ամեն բան հասարակության և ազգի համար։

Քեզ յատուկ պարտիս զհասարակաց բարին վերագրեալ.
Զի թէ մեռանիլ վասն հայրենեաց քաղցր է և գովեալ,
Զի՞նչ այլ ինչ մնայ՝ որում ազգայինք չեն պարտաւորեալ։

Իսկական հայրենասիրությունը ազգին հարելու, միության մեջ է և ոչ երկպառակության, ներքին կռիվների, բաժան բաժան լինելու մեջ։ Եվ քերթողը ժամանակի կրոնական կռիվներին ու պառակտումներին ակնարկելով՝ կոչ է անում.

Յարեսցուք յազգ մեր, սիրեսցուք ղազգ մեր սէր համեստագին.
Մի՛ զփառըս մեր թողցուք ի յագուրդ որդւոց օտարին։

Այսպիսի ազգասիրությունն ահա՛, որ միության ու ազգաշինության մեջ է երևան գալիս, դառնում է աղբյուր ազգի բարգավաճման.

Ազգին շինութեան սէրն է նախաղբիւր յերկնից վտակեալ
Որով ազգային գործոց դարաստանք ծաղկին ոռոգեալ։

Այս տողերի մեջ մարդ կարդում է ապագայի Պեշիկթաշլյանի «Եղբայր եմք»-ը։ Բայց և Վանանդեցին հայրենի հավատի ավանդապահությունը քարոզելով՝ ընդունում է խղճի ազատություն և խրատում է կրոնի վեճ չհանել, օտարազգիներին հարգել։

Վարեսջիր անկեղծ ընդ օտարազգիս հոգւով հեզութեան.
Մի՛ նիւթեր զչար, կա՛լ խաղաղութիւն՝ որքան մարթական.
Մի՛ բամբասանօք եղծեր զնոցուն զաւանդն սյլական,
Զի ի հարց նոցին յատուկ է նոցա իսկ գործադրութեան։

Կրոնի ազատություն ընդունելով հանդերձ՝ նա յուր կյանքի վերջում սակայն սաստիկ զայրանում է ամերիկյան բողոքական քարոզիչների դեմ, որոնք այդ ժամանակ հաստատվել էին Զմյուռնիայում։ Անշուշտ նա շատ վիճաբանություններ է ունեցել նրանց հետ և պղտորվել է յուր հոգու խաղաղությունը, որ հարկ է համարել յուր Ոսկի Դարի վերջում վիճաբանել նրանց հետ։ Այդ հատվածը, որ հետո ավելացրած բան է և վնասում է երկի ամբողջությանը, ցույց է տալիս այն ատելությունը, որ նա տածում է դեպի օտար քարոզիչները, որոնք փոխանակ հեթանոսներին երթալու, քրիստոնյաների մեջ քրիստոնեություն էին քարոզում։

Մերոց կարգաց մեք սիրահաճ եմք ի սրտէ և հաւան...
ՅԱմերիկեան ձեր դարձարուք յորջ նորափոր ոսկեծոր,
Ի վայրենեաց ճեպեցէք սարս որսալ էրէս ի ծործոր.
Սինէ, ճեաբոն և որ այլք են անհաւատից մոլար փոր,
Զձեզ կոչեն, է՞ր յուլանայք, հա՞ վազեցէք ուժգնասոր։

Վանանդեցու զայրույթը շատ հասկանալի է. կաթոլիկության վեճերը դեռ չվերջացած՝ վրան ավելանում է և բողոքականության վեճը, որով և ազգաշինության գործը խանգարվում է նոր երկպառակություններով։ Ուստի և մեր բանաստեղծը բողոքում է ասելով.

Յիմանալին մի՛ սողոսկիք յԱրփաւորչին մեր այգի,
Դալարագեղ զի ծաղկեսցի պտուղ բերիլ զյարգի.
Մշտահարուածն՝ ի թշնամեաց անմեղ մանկունք Հայ ազգի
Հարան մարմնով, մի՛ ևս հարցին վէրս ընդունել ի հոգի։

Երբեմն նկարագրելով մխոհոնարների վարմունքը, դրանց բանեցրած հնարները, խաբեբայություններն և խորամանկությունները, լիաոատ գանձի միջոցով միամիտ մարդկանց հրապուրելը, հայոց հին կարգերի ոչնչացնելը, չի համբերում և սրոմտած բացագանչում է վերջը.

Շանց և թուչնոց գէշ ձեր ոակերց օ՞շ թէ մատներ կոտորած։

Նա դեմ է դուրս գալիս և բողոքականների կրոնական գրքերին, որոնք «ընդդեմ մերոց ծխից բերեն զբան բարեքանդ», և իրավունք է տալիս Պատրիարքին, որ նզովում է նրանց գրքերը.

Մունջ կարկեսցի՛, մեզ չէ պիտոյ Ամերիկեան սին քարոզ...
Մանկունք Հայկեան, մի՛ յայնոսիկ իղձս լայնէք վայրապար.
Մի՛ ընթեռնուք զգիրս նոցա, ուր իմաստութեան չիք նպար։

Եվ այսպես Վանանդեցին յուր ծերության օրերում դառնում է երգիչ միսիոնարների դեմ կռվողների։ Նրա մոլեռանդությունը սակայն միայն կրոնական գրքերի դեմ է ուղղված. որովհետև իսկույն անմիջապես ավելացնում է, թե չպետք է փակված մնալ միայն հայ ուսման մեջ։

Մի՛ մոռանար և յայլ առուաց թոշակ առնուլ պիտանի,
Միայն ղի մի՛ զքո ղեղծչէն վայելչութիւն մայրենի։

Այստեղ արդեն դարձյալ երևան է գալիս երիտասարդ Վանանդեցին յուր հառաջադիմական ոգով, որ ազգի փրկությունը տեսնում է ուսման մեջ, ուսում լայն, ընդարձակ մտքով։

Ծնողք մարմնաւորք, թէև չէք ծանօթ գրական շնորհին,
Մի՛ անգրագէտ թողուք զմանկունսն ի թարմ հասակին։

Բայց ուսումը պիտի լինի նախ մայրենի լեզվով և հայրենի հոգվով և ապա նոր օտար ազգերի։ Ո՜րքան այժմեություն ունին հետևյալ տողերը.

Մատիցեն մանկունք նախ ի հայրենի վարժն գրավոր,
Ամբարել ի միտս զնախնեացն ազգիս զարդիւնս օգտաւոր...
Ջանա՛ նախագոյն յուսումն լեզուի քո հայրենական,
Ապա յայլ լեզուաց վարժումն գայցես ըստ վայելչութեան։
Անկարգ եռանդն է զոր ունին ոմանք ի շաւիղ ուսման,
Լքեալ զսեպուհն՝ զօտարացն ունիլ զգենուն զջան։

Այսպես միայն կրթված մանուկը կլինի յուր հայրերի հարազատ զավակ և կկարողանա յուր պարտքը կատարել յուր ազգի նկատմամբ, և այն երեք միջոցով.

Ազգային գործոց երիւք վճարել փորձն մեզ յայտնեաց.
Ի գիր, ի uուր և յարհեստսն ի պէտս հասարակաց։

Գրի ընդունակություն ունեցողը դրանով պիտի աշխատի բարձրացնել յուր ազգը՝ գործելով գրականության, գիտության և փիլիսոփայության համար. ով արհեստի ընդունակություն ունի, պիտի արհեստները զարգացնի և հարստացնի յուր ազգը։ Իսկ սո՞ւրը։ Ինչի՞ է պետք դա։

Ինչքան էլ հայերն անտարբեր հանդիսատես լինեին հունական ազատության կռիվներին, այդ մեծ հեղափոխությունը չէր կարող չազդել նրանց վրա, և Վանանդեցին, Զմյուռնիայում նստած, չէր կարող չմտածել այդ մասին։ Եվ ինչպես երևում է, նա երկար խորհրդածել է այդ մասին և եկել է մի որոշ եզրակացության։ Նա երևի լավ կշռել է հայ մարդու հոգին, որ սրի գործածությունը քարոզելով՝ հարկ է համարում ամենից առաջ մի զգուշություն անելու.

Ծնա՞ր ի սուսեր, մի՛ գազանասցիս հեղումն արեան։

Յուր ժամանակի համար նա զենքի գործածությունը քարոզում է ինքնապաշտպանության համար։

Ըստ մեր վիճակի այժմիկ չեն և պէտս ղէնք զինուորութեան,
Այլ ի պաշտպանել անձին ի դիպուածըս ուղևորման,
Ի գործ արկ որպէս օրէնք բնութեան տայ քեզ հրաման։

Սակայն Վանանդեցին դրանով միայն չէ սահմանափակում զենքի նշանակությունը։ Դա ունի և մի այլ կարևոր ու օգտակար գործածություն։ Ինչպես ինքնապաշտպանությամբ մարդս յուր անձն է պաշտպանում բնական օրենքով, նույնպես մարդ պարտական է սիրով, արիաբար և անընկուն սրտով նաև ազգի շահերը պաշտպանել, որ և անհատինն են։ Նա պարտական է զենքով անսասան դեմ դնել ամեն վտանգների, որ այգելք են լինում ազգային շահերին. ոչ մի դեպքում չպիտի վախենալ.

Աննկուն սրտիւ տոկալ վտանգացն դժուարութեան,
Որք շահուց ազգին և քո իսկ անձին բերեն զխափան...
Նա՛ ի մահուանէ որ զամենայնիւ թուի ահռական,
Ոչինչ վահրոտիլ, երբ չիք ի նմա վատանուն նշան։

Արդյոք Վանանդեցին ապստամբությո՞ւն է քարոզում։ Բնավ ոչ. նա շատ լավ ճանաչում է հայ ազգի վիճակը. գիտե, որ դա յուր ժամանակին հիմարություն կլինի և մեծամեծ չարիքների պատճառ կդառնա։ Պետք է հանգամանքները լավ կշռել, ինչպես Վահան Մամիկոնյանը և ուրիշ քաջարի հայկազուններն են արել։ Խոհեմություն է հարկավոր և շրջանկատություն.

Ջասեմ քեզ այսուիկ ոգի զգենուլ զյանդգնական,
Մխեալ զանձն ի վիշտս որք ի քոց կարեաց անյաղթիկ մնան...
Առանց պատճառի ի վտանգ մխիլ ի վեր քան զարժան,
Փորձել է զԱստուած, ասաց Տերն մեր առ փորձիչ սատան։

Ինչպես որ նավաստինները, երբ ալիքները հուզվում են, նրբին խորհրդով ալիքների դեմ են գնում և առանց նավաբեկության՝ նավը տեղ են հասցնում, այսպես և դու, հայ մարդ, պետք է քո մարմնի ուժը բանեցնես շրջադետ մտքով և այդ դեպքում միայն դու քո հայրերի հարազատ որդին կդառնաս և կառնես «զպատիւ յերկուս յաւիտեան»: Մի կողմ ուրեմն այժմ մեր ուժից վեր հանդգնությունը, որ աստվածատրձությունե է. այժմիկ միայն ինքնապաշտպանություն: Բայց եթե հանգամանքներն ավելին են ստիպում անել, ա՛յն ժամանակ ինչպես պիտի վարվել.

Այլ թէ քեզ հասցէ վտանգ ինչ կարի ահաւորական,
Մի՛ կորուսցես անդ կնատ մեղկանօք զոյժ տևողութեան:

Այն ժամանակ ուրեմն պիտի արիանալ և զգաստացնել հային ոտնատակ տվողներին.

Իսկ թէ յարիցէ ոք ոտնահարու շքոյ Հայկազին,
Կամ զգաստացուսցէ կամ ընդ վայր հարցէ միութեան Ոգին:

Ես չեմ ուզում այլևս կանգ առնել այն բարոյական խրատների մասին, որ վանանդեցին ստանում է ավանդությունից: Դրանք ընդհանուր բաներ են: Բայց այն ամենը, ինչ որ վերևում բերեցի, նրան ներկայացնում են իբրև մի նոր տեսակի քերթող, որ յուր մեջ ամփոփում է յուր ժամանակի ոգին:

Նա է առաջին անգամ մեր բանաստեղծությունը մոտեցնում կյանքին և ծառայեցնում կյանքի համար: Եվ նրա բացած ճանապարհով ընթանում են ուրիշները հաջորդ երեսնամյակում: Բայց դրանից առաջ մնաց մեզ խոսել և մի ուրիշ բանաստեղծի, Ալամդարյանի մասին:

Հարություն Ալամդարյան[9] *(1796 սեպտ. 25—1834 թ. մայիս) ծնված է Աստրախանում: Այստեղ 1810 թ. բացվում է Աղաբաբյան դպրոցը, ուր և ուսում է առնում նա և այնուհետև աշակերտում է Սերովբե վարժապետ Պատկանյանին: Նոր ձևի դպրոցը տալիս է նրան լավ կրթություն, իսկ Սերովբե վարժապետը, որ իր ժամանակին գիտնականի համբավ ուներ և միաժամանակ պարապում էր ոտանավորներ գրելով, անպայման բանաստեղծության սեր է զարթեցրել յուր աշակերտի մեջ և ոտանավոր գրելու արվեստը սովորեցրել նրան: Ալամդարյանը տասնյոթ-ամյա պատանեկան հասակում ամուսնանում է և մի տարի հետո, 1814 թվին փոխադրվելով Մոսկվա՝ վարում է քարտուղարի պաշտոն լազարյանների մոտ, ապա և ուսուցչություն է անում Լազարյան ճեմարանում*

---

9 Հարություն վարդապետի Ալամդարյան, *Ձափաբերականք, Ս. Պետերբուրգ, 1884:* Ստ. Մալխասյան, *Համառոտ պատմ. Ներսիսյան հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1900, էջ 19. հետ., էջ 40 հետ.:* «Գեղարվեստ» հանդես, № 2, Լևոն Մանվելյան, Հար. Ալամդարյան:

(բացված 1816 թ.) և թարգմանություններով պարապում։ Լազարյան ճեմարանում վարած պաշտոնը լրացնում է նրա ուսման թերին։

1821 թվին Ալամդարյանը, որ արդեն քահանա էր ձեռնադրված, կրում է յուր կյանքի ամենամեծ դժբախտությունը. մեռնում է նրա կինը, սիրած ու պաշտած։ Սիրելիի մահը ցնցում է քսան և հինգամյա երիտասարդի ներքին աշխարհն ամբողջապես և ստիպում է նրան իր մխիթարությունը գտնել բանաստեղծության մեջ։ Խորին վիշտը, կարծես, զարթեցնում է նրա մինչ այդ թմրած բանաստեղծական ոգին, և նա սկսում է երգել։

Երևակայությամբ բավական թույլ, գաղափարներով աղքատ է Ալամդարյանը, իսկ ձևով դեռ հաճախ միջնադարյան. բայց և այնպես անձնական կսկիծը դարձրել է նրան մեր՝ 19-րդ դարու գրականության առաջին երեսնամյակի միակ քնարերգուն, որի գրվածքների մեջ շինծուություն չկա։ Այն ինչ որ նա գրում է, ոչ թե մեռած, մեքենայական ձևով սարքում է ինչպես մի Գապասախալյան, և ոչ արվեստով հորինում ինչպես Մխիթարյան քերթողները, այլ իր զգացածն ու կրածը, իր վիրավոր սրտի հառաչանքն ու հնծությունը անկեղծությամբ, ինքնաբուխ, պարզ ու անպաճույճ ասում է մեզ։ Նա յուր իրական, անհատական կյանքի բանաստեղծությունն է անում, յուր սրտի պատմությունը գրում, որ և քնարերգության իսկական աղբյուրն է. որովհետև բավական չէ միայն բանաստեղծ լինել, այլ հարկավոր է և զգացած լինել. իսկ Ալամդարյանը յուր կնոջ մահը, յուր կրած զրկանքներն ու հալածանքը զգացել է յուր բոլոր էությամբ։

Բազմազան չէ Ալամդարյանի բանաստեղծության նյութը, բայց նա ունի քնարերգության ամենամեծ թեմաներից երկուսը՝ սեր և մահ, և այս միացած մի սրտի մեջ, միաժամանակ զգացած և ի մի ձուլված մի սիրած անձի համար։ Սերը նրա համար մի բնական պահանջ է, մի աստվածային շնորհք, որին ենթակա են ոչ միայն մարդս, այլև բոլոր կենդանի էակները։ Առանց սիրո կյանք չկա։ Սիրո առարկան ամենայն ինչ է աշխարհում («Քև տէր էի ես աշխարհաց»), և սիրահար սիրտը, անշղթա կապված, բնական անխուսափելիությամբ ձգտում է միանալու նրան.

Որպէս ծուխն ի վեր բնապէս ձգի,
Որպէս նետն առ իւր նպատակ բերի,
Որպէս ջուր վերուստ ի վայր սողոսկի,
Որպէս մարդ հիւանդ՝ ողջ լինել կամի՝
Նոյնպէս սիրտ, մարմին, իմ բոլոր հոգի
Քեզ բաղձա, սէր իմ, քև վառի, մաշի։

Նույնիսկ նրանից հավիտյան բաժանված՝ շարունակ աչքի առաջ ունի նրա պատկերը.

Աչք իմ միշտ առ քեզ պշնուն, սիրելի,
Հանգէտ երկաթոյ, գերւոյ մագնիսի.
Ջեմ երբէք ի քէն բաժան, տենչալի,
Նման լուսասէր խոնարհ ստուերի։

Մի անգամ, որ նրա սիրտը նվիրված է յուր սիրույն, նա այլևս մինչև կյանքի վերջը ոչինչ չի տեսնում յուր սերից գեղեցիկ. աշխարհի առաջին գեղեցկությունները, բացականչում է նա,

Առ քև չեն այլ ինչ, բայց միայն ստուեր.
Դու՝ տիւ աննման, իսկ դոքա՝ գիշեր։

Այս պատճառով և մի անգամ սիրողն այլևս չի կարող երկրորդ անգամ սիրել.

Մի թոյնն է դեղթափ երկրորդեալ թունոյ,
Իսկ սէրն առաջին՝ է խոչ մյուս սիրոյ։
Մի հոգի չէ ստրուկ երկուց ներհակ կրից.
Մին սիրտ չէ մեհեան երկուց ահեղ դից։

Մահն ևս նրա համար մի բնական դրություն է, որի դեմ, կարելի է ասել, շատ էլ չի բողոքում մեր բանաստեղծը, և ոչ քննում է, թե ինչից է առաջանում և ինչ ուժ է։ Խորը հայացքով չէ թափանցում այդ առեղծվածի մեջ։ «Անգութ օրհասը» նրան պատկերանում է միայն «զօրեն առողորմ, անհաշտ ոսոխի, ժանտ մարդասպանի», որ զրկում է մարդուս ծանոթներից ու բնությունից՝ լեռներից ու հովիտներից, պայծառ ծաղկափթիթ դաշտերից, որ զրկել է իրեն հատկապես յուր աննման Մարգարտից։ Էականը մեր բանաստեղծի համար ոչ թե ինքը մահն է, այլ մահի բերած այս զրկանքը, որ ճնշում, խորտակում է նրան ոչ միայն հոգեպես, այլև ֆիզիկապես։

Երբ չիշեմ զանուն իմ սիրականի՝
Յողուածք իմ դողան, սիրտ իմ սարսափի։

Կամ մի ուրիշ տեղ.

Համակ զողուածք մարմնոյս հեծեն,
Սարսին՝ այլ դեռ քայքայեալ չեն.
Բիւր վա՜յ, ե՞րբ հանգիցեն։

Չկա այլևս սիրած անձր, որի հետ խոստումն էր արել «կեալ, մեռանիլ, ցնծալ, տրտմիլ ի միասին». գիտե, որ Հավիտյան չի գտնելու նրան («Կորուսի զնա՝ այլ ոչ գտանեմ»), բայց և այնպես չի կարողանում հաշտվել յուր այդ վիճակի հետ և բուռն կրքով կոծում, ջարդում է իրեն, լաց ու արտասուքով որոնում նրան. կյանքը մաշվում է հոգվոց հանելով,

և հոգին քաղվում միշտ մտածելով իր թանկագին կորուստի մասին։ Նա անմխիթար է, և անմխիթար մինչև կյանքի վերջը։

Դուք ի զուր ջանայք զիս մխիթարել.
Ջկայ կէս սրտիս՝ զիա՞րդ ապրեցայց։
Իմ կյանք այլ չեն կյանք առանց փարելոյս.
Իմ ցավոյս դեղն է մահն, սիրելիք։

Եվ կենդանի թաղվելու, յուր սիրականի հետ մեռնելու բուռն տենչանքը երկար, շատ երկար իշխում է նրան. որովհետև նա չի կարողանում ազատվել մահվան թողած զորեղ տպավորությունից և այնպիսի կյանքով է ապրում շարունակ, որ մահից վատ է («կյանք այդպիսի քան մահ է չար»),—միշտ տանջված, միշտ բեկված.

Ի յաւերակս ի յամայիս
Ձեռն ի ծոցի շրջիմ գերիս,
Ո՜հ, խնդրեմ զհոգիս.
Սևափետուր, տխրատեսիլ
Բուոց ձայնից ձայնակցիմ ես.
Վա՜յ, վա՜յ, այսպես կեամ ես։

Եվ այս կիրքն ու զգայնությունն իշխում են նրա մեջ, հաճախ այն աստիճանի, որ նա ինքնախաբեության մեջ ոչ միայն փափագ, այլև հույս ունի դեռ տեսնելու յուր կորուստը։

Յոյս իմ ի քոյ տես յաշխարհիս
Յարդ չարաչար խոշտանկէ զիս,
Մտացս աչաց միշտ երևիս,
Սիրոյդ հրով կիզես զհոգիս։

Այսպիսի դժբախտ դեպքերում անցյալի հիշողություններն ու տեսարանները մի մի մխիթարություն են լինում և վշտահար սիրտը մի առանձին հրապույրք է գտնում ապրելու դրանցով։ Այդ դեպքում, ցավը թեպետև թարմ, բավական մեղմացած է լինում և չի կլանում ամենայն ինչ բռնանալով բանաստեղծի հոգու վրա և թույլ չտալով նրան, որ, այսպես ասած, մի տեսակ հեռու քաշված, առարկայաբար նկարագրե յուր կիրքը։ Մեր բանաստեղծի առաջին երգերի մեջ, գրած 1821 թ. օգոստոս ամսին, երևի կնոջ մահից քիչ հետո, իշխում է զգայունությունը. դրանք մորմոքվող սրտի ողբ ու աղաղակ են միայն. մինչդեռ դրանցից վերջինը՝ «Երկու ձեռին երկու մոմ», գրած նույն թվի սեպտ. 1-ին, գրավիչ է յուր մեղմիկ գեղեցկությամբ։ Այստեղ բանաստեղծը մի վայրկյան կտրվում է իր ներկա վիճակից և ասլրում է անցյալի ամենից հրապուրիչ ժամանակամիջոցով։ Նրա աչքին պատկերանում է յուր նշանադրության տեսարանը։ Նա մոռանում է այրու դառնագին թառանչները և պատանեկական հափշտակվող խանդաղատությամբ տեսնում է, թե ինչպես ամո-

թից վարդ կարած կույսը պարկեշտ, երկու ձեռին երկու մոմ, իրեն առաջն է դուրս գալիս աղջիկների ու հարսների բազմության միջից ինչպես մի հրեշտակ՝ մարգարտափայլ մարմնով, վայելուչ հասակով, քրքմագույն երկայն վարսերով և զմայլելի աչք ու ունքով։ Նրա սքանչելի տեսք ու խոսվածքի վրա սիրտն սկսում է դողդողալ, և ինքը հիացած՝ մոռանում է աշխարհն ու մի տեսակ մեղմ արբեցության մեջ ընկած՝ մի նոր կյանքով սկսում է ապրել։

Յերկու ձեռին երկու մոմ՝
Ինձ ընդառաջ եկ յիւր տան.
Մի՞ հարցանէք ո՛վ էր նա,
Հրեշտա՞կ, թէ կոյս լուսագէղ։
Ամօթն զնա վարդ արար,
Ես հիացեալ դարձայ քար.
Այն ի՛նչ օր էր և ի՛նչ ժամ,
Որում տեսի ես կեանք նոր։
Լիաճրագ յայնմիկ տան
Ի մարդաշատ բազմութեան,
Ի մէջ աղջկանց և հարսանց
Յոտին կայր ոմն անդ յանկեան։
Այն օրիորդն էր պարկեշտ
Ինձ պատահեալ առ դրամբ տան.
Ջոգիս գրաւեաց յիւր ի սէր,
Ի նմա տեսի ես կեանք նոր։
Մարգարտափայլ մարմինն էր,
Հասակն էր յոյժ վայելուչ.
Ջոտիւքն իւր վարսք քարշ գային,
Ի գոյն քրքմոյ փայլէին։
Դիմացն շքեղ երևոյթ,
Յոնից, աչաց, այտից դեղ,
Շրթանց լեզուին համ անոյշ՝
Խոստանային ինձ կեանք նոր։
Ա՜խ, ասացի թմրեցայ,
Սիրտս սկսաւ դողդողալ.
Ջաշխարհ համայն մոռացայ,
Ի գեղ կուսին ապշեցայ։

Եվ բանաստեղծը բախտավոր է, որ իրեն այդ կույսի փեսան են անվանում. բախտավոր և ուրախ է, որ ինքն այդ կույսի մոտ է. բայց ավա՜ղ, միայն մի վայրկյան։ Ներկան, որ ախ ու վայ է դիշեր-ցերեկ, դարձյալ շուտով կանգնում է նրա առաջ յուր բոլոր թախծալից ծանրությամբ, և նա զգում է աշխարհի ունայնությունը և յուր ամենագեղեցիկ

քանաստեղծությունը վերջացնում է միջնադարյան երգիչներին հատուկ մի խրատով.

Նանրախորհուրդ ազգ մարդկան,
Շատ մի՛ սիրեր դու զաշխարհ.
Նա թշնամի է անգութ,
Չար քան զքարբ մահաբոյն.
Յանցիւ սիրոյ զքեզ կարթէ,
Ի հաղը անել ըմբռնէ.
Ապա զսիրոյդ առարկայ
Ի քէն արագ կողոպտէ։

Երկու տարի հետո, 1823 թ. Ալամդարյանը Մոսկվայից վերադարձած է Աստրախան, ուր նույն թվի օգոստոսի 21-ին գրում է յուր «Ողջոյն հրաժեշտի զաւակաց իմոց», մի փոքրիկ, դրամատիկական ձևով հորինած քերթված, որի մեջ հայրը գորովանքով՝ որբերի հայր Փրկչին է հանձնում յուր երեք ազջիկներին, իսկ ինքը կամենում է գնալ հեռու, անծանոթ աշխարհ՝ որոնելու իր կորուստը։ Հանգիստ չէ դեռ նրա հոգին և երկար սուգ ու մորմոքի մեջ լինելով՝ վերջապես ընկճվել, հուսահատության մեջ է ընկել. նա, ինչպես երևում է, անձնասպանության մասին է մտածում։ Չկա այլևս նրա կյանքի կեսը, և ի՞նչն է կապում նրան աշխարհի հետ։ Աղջիկներից մեկը, փոքրը, անմեղությամբ չի հասկանում հորը, և հորից անբաժան՝ նրա հետ լինել է միայն ցանկանում. մյուսը հասկանում է, որ հայրն իրենց մորն է ողբում անմոռաց. իսկ երրորդը միաժամանակ և մխիթարում է նրան, որ չսգա, և ի՞նչպիսի փափկությամբ.

Ջիս ո՞ սիրեսցէ՝ զկատեացս քո թշուառ՝
Թէ զքեզ Տէր տարցէ յիւր երկնից գաւառ։

Փոքրիկ որբերի այս գութը, ծնողական սէրն ահա՝ բարեբախտաբար զորանում է հոր սրտում, և Ալամդարյանը վերջ չի տալիս յուր կյանքին։

Շուտով նա Թիֆլիսի առաջնորդ Ներսես Եպիսկոպոսից հրավեր է ստանում գալ Թիֆլիս յուր հիմնած դպրոցին վերակացու, այսինքն կառավարիչ լինելու։ Ալամդարյանն ընդունում է հրավերը և 1824 թ. աշնանն արդեն գործի գլուխ է կանգնում և վեց տարի (1824-ի դեկտեմբերից մինչև 1830 օգոստոսի 1) վարում է Նորաբաց դպրոցի դեկավարությունը բեղմնավոր աշխատանքով։ Նա է իսկապես կազմակերպում դրպրոցը, թե իբրև տեսուչ և թե իբրև ուսուցիչ հոգի ու շունչ տալով յուր աշակերտներին, որոնցից հետագայում շատերը նշանավոր են լինում, ինչպես՝ Ստ. Նազարյան, Խ. Աբովյան և ուրիշները։

Այստեղ Ալամդարյանը աշխատանքի մեջ կարծես մի առժամանակ մոռանում է յուր անձնական մեծ վիշտը և տարվելով շրջապատի

ոգվով՝ գրում է կրոնական բովանդակությամբ ոտանավորներ, իսկապես աղոթքներ («Աղօթք», «Աղերս առ ամենօրհնեալ Տիրամայրն»), որոնք իրենց ձևով շատ էլ բարձր չեն ժամանակակից Փեշտիմալճյանի աղերսներից. բայց, որ գլխավորն է՝ նա ոգևորված է Ներսեսով և դպրոցական գործով, որոնց և նվիրում է մի երկու ոտանավոր, սակայն դարձյալ ժամանակի սովորական ճարտասանությամբ։

1827 թ. Ներսեսը գնում է ռուս-պարսկական պատերազմի դաշտը, Հայոց կողմերը։ Բոլոր արևելյան հայերը գերությունից փրկություն էին տեսնում այդ պատերազմի մեջ, և մեր բանաստեղծը արձագանք տալով այդ ընդհանուր ոգևորությանը՝ գրում է յուր «Տեսիլը», որը յուր ժամանակի այդ ոգու առաջին արտահայտությունն է։

Յաղջամուղջ գիշերի, ի տեսլեան տխրագին,
Յարուցեալ թափառիմ յանծանօթ ի դաշտին։
Ընդ ինև ոչ ուղի, ոչ շաւիղ երևին.
Ընդ կապոյտ քօղ երկնից սևաթոյր ամպք կուտին։
Սիրտ իմ, միտք յայլանդակ ի կարծեաց խիստ յուզին,
Յակամայս զիս մղեն առ կատար մի լերին։

Այդ լեռն երկնահաս Արարատն է։ Բանաստեղծն ապահով բարձրանում է վեր, ուր կազմվում է զվարթունների վեհ ատյան։ Հրեշտակը փողում է սաստկաձայն.

Խմբեսցին աստ, գոչէ, բոյլք հոգւոց լուսաճեմ,
Որք վարուք՝ արեամբ և քրտամբք ուղիաճեմ
Ոտոգեալ զՀայաստան՝ արարին նոր եդեմ։

Բարձրանում է փոթորիկ ու ամպրոպ. ապա լռում, խաղաղում է ամեն ինչ. փչում է մեղմաշունչ հովը, և հրեշտակների օրհներգությամբ գալիս է աստված, և մեծ ատյանը լսում է նրա վճիռը.

...Մերկասցի՛ քուրձ սգոյ Հայաստան,
Պճնեսցի՛ յիւր շքեղ ոսկեխայտ պատմուճան,
Լուսասցի յարտասուաց դարաւոր տրտմութեան...
Քարասիրտ, ոխերիմ, խորամանկ, անպիտան
Թշնամիք եղկելւոյս առ ժամայն բերկրութեան՝
Պրկեսցի՛ն ի կապանս անազատ գերութեան,
Մատնեսցին չարաչար անվախճան նեղութեան։

Եվ նա հավատացած է, որ «հինաւուրց օծեալը», այսինքն եփրեմ կաթողիկոսը, պիտի դառնա իր գահը Ներսեսի վրա հենված և՝

Հայաստան զառամեալ առ նովաւ մանկասցի,
Դարն ոսկի մոռացեալ՝ արդ կրկին յայտնեսցի,
Սեռն Հայկայ յանաղարտ խնդութիւն զմայլեսցի։

Սակայն Հայաստանի մանկանալու, «Մանուկ Հայաստանի» դաղափարն այլևս չի դբաղեցնում նրան, որովհետև նա յուր անձնական զգացմունքի երգիչ էր և ընդունակ չէր նույն գեղեցկությամբ և ուժով հավաքական զգացումներ երգելու. ուստի և սառն և արվեստական են հնչում նրա՝ այդ նյութին նվիրված տողերը, որոնց մեջ և Ս. Գրքի ազդեցությունն է երևում։

Ներսեսը 1828 թ. օպոստոսին հեռացվում է Բեսարաբիա, և Ալամդարյանը դպրոցի տեսչությունը հանձնելով Հակոբ Զրպետյանին՝ ինքը մնում է միայն դպրոցի խնամակալների մեջ։ Մի տարի հետո սակայն նա դարձյալ յուր վրա է առնում դպրոցի տեսչությունը, բայց այլևս երկար չի մնում այդ պաշտոնում։ Ներսեսի թշնամիները նրա բացակայության ժամանակ զորանում են, և վերջապես Ալամդարյանը պարտվելով դրանցից՝ իբրև Ներսեսի կուսակից հալածանքի է ենթարկվում և կոմս Պասկևիչի պահանջով նույնիսկ աքսորվում է Հաղբատի վանքը։ Այստեղ ծանր փորձության է ենթարկվում երիտասարդ վարդապետը,— նա այդ ժամանակ արդեն վիզար էր ընդունել,— երկարատև հիվանդությամբ և ամեն տեսակ նյութական և բարոյական զրկանքներ կրելով. բայց հոգու արիությամբ տանում է ամեն նեղություն։

Հաղբատում, անապատի ամայության մեջ զարթնում է նրա հին, թաքցրած, բայց ծխացող վիշտը, և նա մենակ մնացած ինքն յուր հետ՝ տեսնում է, որ իզուր աշխատել էր յուր մեջ մեռցնել յուր սերը, որի «քաղցր վերքերը» յուր միակ մխիթարությունն էին։ Եվ նա սկսում է նորից երգել յուր սերը, բայց այլևս ոչ առաջվա ազատությամբ. նա վարդ ու սոխակի հին այլաբանությանն է դիմում։

Մոլորին իմ միտք, լեզուս պապանձի,
Բաբունիլ զքէն ոչ զօրէ յայտնի, առ չարացն ահի։

Նրան բամբասում էին նույնիսկ յուր այդ մաքուր զգացմունքների համար.

Յիշել զքո անուն չիշխեմ, պապանձիմ
Յահէ նախանձոտ մարդոց դիւադէմ։

Բայց այդ ահն ի՞նչ կարող էր կապանք դնել բանաստեղծի լեզվին. նրա սոխակը «լաց չառնէր երէկ. այսօր շատ ողբայ», և ողբում է նա ականա, ողբում է ավելի դառնագին, ավելի թախծագին, որովհետև նրա սիրտն այժմ ավելի ևս խոցված էր։ Ուստի և նա ի զուր.

Բամէ զուշն ի կուրծս, տքնի հանդուրժել,
Անօրեն բախտէն զկիրս իւր հնազանդել.
Եղո՞ւկ, նա խաբի. չէ՛ կարող ժուժել.
Ուժգնութեան սիրոյն ո՞վ կարէ յաղթել։

Եվ «վարդակորոյս» բանաստեղծն յուր Մարգարտի մահից ամբողջ տասը տարի հետո դեռ նույն նյարդային դրության մեջ, նույն թափով բացականչում է.

Աւա՜ղ վիճակի անբաղդ սոխակին,
Ոյր կեանքն ի հնոցի սիրոյ տոչորին։
Մա՜հ, ո՞ւր ես, ե՛կ, հա՛ս, օգնեա թշուառին.
Դու դառն ես այլոց, քաղցր ես անբաղդին։

Այս ժամանակի երգերից է անշուշտ և «Սոխակ ի հոգեվարս» (որի տակին դրած է 12 մարտի 1823 ի Հաղբատ, անշուշտ սխալմամբ փոխանակ 1831-ի)։ Գարուն է բացվում. չքանում են ձմեռային չարաչար բուքերը. գալիս է քաղցրաշունչ օդն յուր սփոփանքով. բնությունը, ծառ ու ծաղիկ զարդարվում են և մարդկանց հրավիրում զվարճանալու, բայց այդ կենդանությանը հակադրություն է հիվանդ բանաստեղծի սիրտը, որ ներկվում է արյունով. «Աշխարհ խնդայ, ես միայն եմ ի շիւան», ասում է նա։ Մի անգամ միայն նա հոգվով մարմնով զվարթանում է յուր «Անուրջքի» մեջ։ Այս փոքրիկ բանաստեղծությունը Ալամդարյանի արվեստի կատարելությունն է։ Սկզբում նա կարճ, բայց կենդանի գծերով, պայծառությամբ հանում է յուր տանջագին, տխուր ու վհատ վիճակը՝ անքուն գիշերից հետո անկողնում մտածելով շարունակ յուր հիվանդ ու թշվառ կյանքի վրա. բայց ահա առավոտյան արևի զվարթ ցնցուղն ընկնում է ներս, և բնության այս կենդանի խաղի մեջ մեկ էլ հանկարծ նա՝ կես քուն, կես արթուն՝ լսում է յուր նազելիի ոտնաձայնն ու բարբառը, թե ինչո՜ւ է մաշվում նա,— և տառապյալ միտքը հավատում է, թե իրոք տեսնում ու լսում է յուր նազելիին, և թարմանում ու կենդանանում է։ Ամեն ինչ բնական ու կենդանի և առանց այլաբանության, և ամեն ինչ յուր իսկական տեղում հարմար բառով ու պատկերով արտահայտած։ Բարեբախտաբար Ալամդարյանը, որ յուր ոտանավորների տները հաճախ այնպիսի բառերով է սկսում, որ յուր անվան տառերը կազմեն, այստեղ այդ միջնադարյան սովորությունը գործադրել է տների կեսի վրա, ուստի և ստիպված չի եղել շատ տներ գրելու և ճապաղելու յուր միտքն ու զգացումը։

Յառաւօտուց ի յանկողնի
Սէր նազելւոյս զիս խորովէր.
Անքուն գիշերն ես անցուցի,
Զի տանջէր զիս նորա պատկեր։
Լեզուս ցամաք, հոգւով վհատ,
Տկար մարմնով կայի անկեալ.
Անուրջք անոյշք ի նինջ կիսատ
Զթաց աչօքս կային սփռեալ։
Միշտ մտատանջ, միշտ կաթոգին,

Ալէկոծեալ նաւու նման.
Դեղն իմ ցաւոց սէրն էր անգին,
Բայց չերևէր նորայն նշան։
Այգին ցնցուղ ցայտեալ յիմ տուն՝
Մերժեաց յինէն զմէգ քնոյն.
Բոտեմ ղիմ ուշ, լսեմ զդուփիւն
Ոտնաձայնի իմ նազելւոյն։
Երա՞ղ է այդ, մնչեմ մեղմով,
Հոգւոյս տանջող և յարթնութեան.
«Աւա՞ղ գլխոյս, գոչեաց ճեպով,
Ընդէ՞ր մաշիս, սրտիս իշխան»։
Նազելւոյս ձայնն յունկն իմ հնչեալ՝
Յիս արծարծեաց զկայծ կենաց
Յնծութիւն ինչ հանրածաւալ
Հոգւոյս մարմնոյս իսկոյն տիրեաց։

Բայց ինչքան էլ մեր բանաստեղծը յուր ցավերի դեղը անգին սերն է համարում և ինքնամոռացության համար անձնատուր է լինում յուր հին սիրո հուշերին, այդ սերը մենակ չէր կարող փարատել նրա մեծ վիշտը։ Սերը միայն վայրկենական սփոփանք էր տալիս, որի ետևից գալիս էր ավելի մեծ բռնությամբ յուր լքված վիճակի դառն զգացումը։ Ամեն ինչ հիշեցնում էր նրան, որ ինքն, այն «գործունյա, բարեխիղճ աշխատավորը», աքսորական էր այժմ, հալածված ու դրկված. որ իրեն նեղիչները դավեր են սարքում իր դեմ, և գուցե անդարձ կորած է։ Եվ գարնանը, ապրիլի վերջերին, երբ ձյունաթաղ դաշտերը զարդարվում են, նա փոխանակ հրապուրվելու բնության գեղեցկությամբ՝ ավելի ևս դառնանում է սրտով և անիծում նույնիսկ իր ծննդյան օրը։

Յամսաավելջն ապրիլի վսյատուհանս բացի,
Ձձիւնաթաղ դաշտորայս ծաղկազարդ տեսի.
Արտասուք եռանդունք ղայտս իմ այրեցին,
Ձիմ անդարձ գերութիւն յուշն իմ մուտ ածին,
Լեզուապէս դառնացան քիմք վհատ հոգւոյս,
Ձմրեցան զգայարանքս, հատան ելք շնչոյս։
Ափսօս ինձ, ասացի բիւր անգամ յայն օր,
Շատ աննծս թափեցի ի ծննդեանս վատ օր։

Բանաստեղծի ցավը սոսկալի է. նա մարմնով մաշվում է յուր վշտից ավելի քան յուր հիվանդությունից։ Հուսահատությունը երկրորդ անգամ տիրել է այդ «հէք այրուս» զգայուն սրտին, և հարկավոր էր մի հզոր ուժ, որ այս անգամ ևս փրկեր նրան։ Եվ փրկվում է նա յուր ջերմ հավատքով, որ ուներ առ աստված։ Ցավի ծանրությունից նա խոր քնի մեջ է ընկնում

և տեսնում է ոչ թե յուր նազելիին, այլ կենսածին Տիրամորը, որ յուր ձեռքով որպես փոսից հանում է նրան։ Եվ այս երազը վերադարձնում է նրան հույսը.

Աւա՜ղ ինձ, նեղասիրտ կարճամիտ լալոյս,
Զիա՞րդ դիս կարծեցի կորուսեալ անյոյս։

Շուտով կատարվում է իսկապես բանաստեղծի նախազգացումը։ 1831 թ. հունիսին Ներսեսի միջնորդությամբ նրան թույլատրվում է գնալ Բեսարաբիա Ներսեսի մոտ. բայց բախտն այստեղ ևս չի ժպտում նրան.

Մինչչև էր բուժեալ վէրք սրտի իմոյ՝
Նոր վիշտք, նոր արկածք, նոր աղէտք ոգոյ,
Նման կարկտածին թխպայոյզ ամպոյ՝
Տեղացեր ի գլուխ թշուառս ծերոյ։

Հակոբի այս խոսքերով Իսրայելի Ողբերգության մեջ, ինչպես և շատ բանով այդ Ողբերգության մեջ, բանաստեղծն իսկապես յուր անձնական կյանքն է ողբում։ Բեսարաբիայում նա Ներսիսյան դպրոցի ինչ որ հաշիվների պատճառով գժտվում է Ներսեսի հետ և կարգվում է վանահայր նոր Նախիջևանի Ս. Խաչ վանքում։

Սկսվում է Ալամդարյանի համար մի նոր ցավալի վիճակ, նա իրեն անարդար կերպով հալածված ու զրկված է համարում և սրտի խորքից բողոքի ճիչեր է արձակում հորինելով, երբեմն սաղմոսների նմանությամբ, սքանչելի աղոթքներ, որոնց ամեն մի տողն ու բառն անձնապես զգացված են, ուստի և ազդու։ Դրանք հավատացողի ջերմ սրտի արտահայտություն են, բուռն թափով գրված, որոնց մեջ նա ուրիշ ապավեն չի գտնում յուր թշնամիներից աղատվելու համար, բայց եթե աստվածային գթությունն ու օգնությունը։

Լարեն ինձ թակարդ ժանտից ջոկք ահեղ,
Յիմ կորոատ բերին, իբր անհատ հեղեղ...
Աման յեղկելիս զմահաթոյն քարբից,
Ընդ լաց իմ բերկրին, ա՜խ, ո՞ւր դիմեցից...
Մորմոք, սուգ, կսկիծ և երկունք մահուան,
Անթիւ տառապանք զինև շրջեցան,
Ապշեցայ, ցնորեցայ...
Դառնացան իմ կեանք յօրէս ծննդեան,
Յո՛ և գնացի՝ միշտ գտի դարան.
Հալեցայ, մաշեցայ, յամբարշտաց ոչ զերծայ...

Այսպես է նկարագրում այդ բախտից հալածվածը ինքն յուր կյանքը, կողկողագին դիմելով Փրկչի խաչին, որ իրեն ողորմելով՝ ազատի յուր թշնամուց.

Նորոգեա՛ զիմ կեանս, զիս ի հաղբից հան.
Ոչ երթայց ի քոց դրանց՝ չև առեալ զիմ խնդրուած։

Այդ մի քանի աղօթքներով (Նոզկողանք առ խաչ Փրկչին.— Սաղմոս ՃԵ.— Սաղմոս ՃԼԹ.— Ապաշաւ) Ալամդարյանը միանգամից բարձրացընում է մեր կրոնական առան բանաստեղծութիւնը, ցույց տալով, որ, ինչպես ամեն քնարերգութիւն, ավելի ևս կրոնականը, նույնիսկ եթե սաղմոսներից է տալաշափված, պետք է հորինվի միայն անձնապես զգալուց հետո և նյութ պիտի ունենա մարդուս ապրածը, և ոչ թե սարքվի մտածած ճարտասանութեամբ։

Բանաստեղծը Ս. խաչ վանքում յուր ամենագեղեցիկ հասակում յուր զարգացման ծայրն է հասել և թեպետև հալածված ու ճնշված, բայց մեծ հույս ունի, որ ինքը շուտով սիրտ «տմարդիների» ձեռից ազատվի և ապրի նորոգված հոգվով։ Բայց ավա՛ղ բախտին։ 1834 թվի մայիսի գիշերը ավազակները մտնում են վանքը կողոպտելու, և մահացու վիրավորվում ու մեռնում է նա, որ երկու ամիս առաջ գրում էր՝ «Յո՛ և գնացի՝ միշտ գոհ դարան»։

Այսպիսի ցավալի վախճան է ունենում մեր 19-րդ դարու առաջին քնարերգուն, որ դժբախտ է լինում յուր բանաստեղծական կյանքի ամբողջ ընթացքի մեջ, ուստի և գրեթե ոչ մի ուրախ տող դուրս չի եկել նրա գրչի տակից։ Նա շատ բան չի արտադրել, բայց ամեն ինչ յուր տխուր հոգուց է գրել, հենց այդ պատճառով և կենդանի է, սրտառուչ ու գրավիչ։ Ցավել պետք է, որ նրա բանաստեղծութիւնները շատ ուշ, մահից հիսուն տարի հետո միայն, մահվան հիսնամյակի առթիվ, հրատարակված են յուր թոռ (աղջկա զավակ) Քերովբե Պատկանյանի ձեռով։

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբասյան Գագիկ *(թագ. վանանդի)* 34
Աբգար *(հայոց թագ.)* 581
Աբդլմսեհ 565
Աբեղյան Մեներ 8
Աբլսուար 448
Աբովյան Խ. 604, 615
Աբրահամ Աստաբատցի 551, 553, 587
Աբրահամ եպիսկոպոս *(կաթողիկոս՝ Աբր. Կրետացուց հետո)* 531—532
Աբրահամ Թեֆիրտաղցի *տե՛ս* Աբրահամ Կրետացի կաթողիկոս
Աբրահամ Կրետացի կաթողիկոս 13, 530, 531
Աբրահամ վարդապետ 519
Ագաթանգեղոս 112, 183, 253, 594, 598
Ադամ 433, 435—440, 484—486, 567, 586, 590, 598
Աթանաս 435
Ալադին Սուլտան ճռռոմոց 248
Ալամդարյան Հ. 6, 610, 611, 615—621
Ալբերտոս Սուաբեցի 415
Ալեխս Ա *(Բյուզ. կայսր)* 97
Ալեխսանդր Բ *(Ռուս. կայսր)* 573
Ալեխսանդր Մակեդոնացի 273—282, 284, 285, 287, 450, 453—455
Ալթունյան Գ. 260
Ալինախ 264
Ալիշան Ղ. Մ. 64, 67—69, 96, 99, 115, 116, 127, 260, 271, 280, 282, 284, 290, 347, 555, 604
Ալփասլան 52, 53, 64, 68, 70
Ախվերդյան Գ. 535
Ահմադ Բագուտար 263, 264
Ահմադ դան 305, 457, 458
Ահոթամարցի Գրիգոր (Գրիգորիս) 8, 9, 199, 274, 279, 280—282, 456, 491—494, 496, 538, 554
Ահառյան Հր. 120, 320
Ամատունի Ս. 120
Ամիրա 236, 248
Ամիր Գովլաթ Ամասիացի 116
Ամիր Փոլին 356—358, 360
Ամլածին 41, 42
Ամոն 286, 455
Այծյամն (Այծեմնիկ) 23
Անակ 594
Անանիա 444
Անանիա Շիրակացի 18, 20, 39
Անանիա Սանահնեցի 64
Անանուն Ջրուցագիր 18
Անդրեաս Բահանա 520
Անծրևիկ 444
Անտոն Եգիպտացի 435
Աշխեն *(Թագուհի)* 597
Աշոտ *(Գագիկ Թագ. որդին)* 25, 255
Ապաղա 263, 272, 305, 306, 457
Ապիրատ *տե՛ս* Գրիգոր Ապիրատ կաթողիկոս
Ապիրատ Պահլավունի *(Ն. Շնորհալու հայրը)* 96, 98, 101
Ապլղարիպ Արծրունի 158
Ապլոց իշխան 348
Ապոլոն 568, 597
Առան Սիսակյան *տե՛ս* Բագրատունի Առաքել
Առաքել Բաղիշեցի 8, 9, 422, 441, 443
Առաքել Դավրիժեցի 13, 512—515, 517, 519—525, 527, 529, 545, 547
Առաքել կաթողիկոս 515, 525
Առաքել Սյունեցի 7, 9, 336, 409, 411, 421—426, 435—440, 443

Ասլան պեկ 236
Աստղիկ 371
Աստվածատուր գրիչ 444, 500
Ավազ 264
Ավգերյան Մ. 556
Ավգերյան Հ. 590
Ավետիք երեց 525
Ավետիքյան Գ. 537
Ավճյան 458
Ատոմ 413
Ատր-Ներսեհ 255
Արա (Գեղեցիկ) 565, 566, 593, 600
Արադորոս 550
Արամ 566, 567, 593, 600
Արամազդ 286, 455
Արիստակես Լաստիվերտցի 21—26, 29—31, 36, 51, 52, 55—58, 62, 70, 71, 87, 90, 131, 136, 139, 221, 270, 411
Արիստոտել 37, 38, 50, 101, 241, 263, 276, 286, 405, 406, 410, 417, 551, 552
Արծրունի(ներ) 255, 564
Արդուն *(դահ)* 263, 264, 290, 300, 305 307, 311, 312, 323, 457—460
Արշակ 455
Արշակ Տեր-Միքելյան 94
Արշակունի(ներ) 113, 209, 236, 255, 600
Արտաշես Պարթև *(Արշակունի)* 39, 142, 530
Արտավազդ 142
Արուզ (Արզու) խաթուն 176, 177, 255
Արուխ 307, 458, 459
Արքայություն ֆահանա 83, 84
Աֆլլես 453

Բարիկ *(Սյունեցի)* 253
Բագրատունի Արսեն 452, 547, 557, 558, 565, 566, 569—573, 576—581, 583, 592, 594, 601
Բագրատունի(ներ) 21, 33, 113, 172, 174, 178, 201, 236, 252, 255, 256, 260, 300, 600
Բաբու 243
Բայազիդ սուլթան 419
Բաստամյանց Վ. 178, 181
Բարթողիմեոս 403
Բարսեղ *(աշակ. Գր. Մագիստրոսի)* 37
Բարսեղ կաթողիկոս (եպիսկոպոս Աննեցի) 88, 99, 100, 101, 113, 171, 449
Բարսեղ Շնորհալի 99
Բարսեղյան Արտաշես 397
Բարտոլդ Վ. 262
Բել 243, 599
Բենուքա 261
Բոկաչիո 19
Բրյուսով Վ. 321
Բուդա 290, 305—308, 311, 313, 457, 459
Բուդել 410

Գագիկ Ա 25
Գագիկ Բ 25, 34, 35, 41, 42, 63, 114, 158, 255
Գագիկ 447, 448
Գալեմբերյան Գ. 588
Գամառ Քաթիպա 578, 600, 604
Գապասախալյան Գր. 553, 554, 580, 587, 611
Գասպար վարդապետ 592
Գդիճոն (Գդիճոն) 41
Գեորգ 447
Գեորգի Գ *(վրաց. թագ.)* 94, 172, 174, 175, 250
Գեորգ Լամբրոնացի 411
Գեորգ Երզնկացի 410, 412, 413
Գեսներ 59
Գող Վասիլ 93, 97—100, 102
Գրիգոր 63
Գրիգոր Անավարզեցի 251, 258
Գրիգոր Անեցի *(Թոքաքերի որդի)* 66, 445—447
Գրիգոր Ապիրատ 111, 129
Գրիգոր Աստվածաբան 65
Գրիգոր գրիչ 185
Գրիգոր *(Բջնո եպիսկ.)* 233
Գրիգոր երեց 87, 94, 97
Գրիգոր *(Թագավոր)* 254
Գրիգոր իշխան 236
Գրիգոր Լուսավորիչ 309, 412, 442, 443, 519, 526, 532, 551, 581, 582, 594
Գրիգոր Խլաթեցի Մերենց 408, 409
Գրիգոր Հնձացի Տելեհիս 34, 44
Գրիգոր Մագիստրոս 20, 26, 29, 30, 33—50, 70, 76, 96, 97, 101, 107, 109, 113, 123, 183, 260, 285, 358, 597
Գրիգոր Նարեկացի 7, 18, 29, 30, 34, 45, 47, 51, 56, 58, 73, 75, 107, 108, 123—125, 131, 135, 159, 312, 320,

326, 330, 352, 360, 368, 388—392, 396, 397, 430, 469, 478, 486, 487, 507, 548, 581, 597
Գրիգոր Պահլավունի կաթողիկոս *(Ներ-սես Շնորհալու հղբայրը)* 97—102, 103, 104, 113, 115, 133, 147, 269, 447
Գրիգոր Վկայասեր 50, 51, 84, 93, 97—100, 104, 107, 113, 269
Գրիգոր վարդապետ 244
Գրիգոր վարդապետ *(Հաոիճայի վանա-հայր)* 95
Գրիգոր Տաթևացի 336, 405—417, 420, 421, 426, 435, 440, 457
Գրիգոր Տղա Պահլավունի 116, 156, 157—170, 174, 179
Գրիգոր Տուտեորդի 157, 159, 174, 259
Գրիգոր փոքր վկայասեր 104

Դանիել *(Նրաժիշտ)* 42
Դանտե 19, 399
Դավթակ Քերթող 73, 142, 169, 310
Դավթուկ արեպիսկոպոս 26
Դավիթ 525
Դավիթ Ալավկա որդի 66, 83—85, 179, 444—447
Դավիթ Անհաղբ 115, 422
Դավիթ Անհողին 171
Դավիթ Արմայորդի 92
Դավիթ Կյուրապաղատ 53
Դավիթ մարգարե 566
Դավիթ Շինող *(վրաց թագ.)* 68, 70, 172, 244, 448, 449
Դավիթ *(Սասունցի)* 142
Դավիթ վարդապետ 448
Դարեհ 279, 280, 287
Դեմետր 264, 273, 458
Դիոկղետիանոս 594, 595
Դիոնիս Թրակացի 263, 348
Դիոնիսիոս Արիսպագացի 115, 163, 512
Դիտապետ Սյունեցի 572
Դոդոնա 290
Դուլորիե 114

Եզեկիել 517
Եզնիկ Կողբացի 183, 301, 314, 548
Եզոպոս 183, 189
Ելիկում *(որդի Տարսայիճի)* 250, 251, 255
Ելիկում *(հղբայր Իվանեի)* 250
Եղիշե 86, 190, 243, 499, 517, 548, 564
Եղիսաբեթ 584
Եղիսե 37
Եսայի Նչեցի 262, 263, 403, 405
Եսայի տեսաճող 518
Եսթեր 530
Եվա 433, 435, 438—440, 590
Երեմիա 444, 445,
Երեմիա *(մարգարե)* 517
Երիցյան Ա. 29
Երվանդ արքա 565
Եփրեմ եպիսկոպոս 43
Եփրեմ *(Ասորի)* 292
Եփրեմ կաթողիկոս 616

Ջանգի ամիրա 128, 138—142
Ջարբհանալյան Գար. 34, 64, 68, 71, 100, 114, 115, 167, 169, 240, 241, 249, 258, 349, 404, 441
Ջարմանազան 12
Ջահարև 172, 173, 176—178, 221, 223, 229, 235, 250, 260, 264
Ջահարիա 584
Ջահարիա Գնունցի Եպիսկ. 274
Ջահարիա պատրիարք 592
Ջահարիա Սարկավագ 13, 511, 525—529
Ջահարիա Վաղարշապատցի 526
Ջահարիա վանահայր 526
Ջահարիա *(վանքի առաջնորդ)* 347
Ջահարյան (ներ) 22, 172—174, 179, 201, 260, 456
Ջահեսս 124
Ջենոբ Գլակ 253, 548
Ջենոբ եպիսկոպոս Տարոնացի *տե՛ս* Ջենոբ Գլակ
Ջորաբաբել 517
Ջրպետյան Հ. 617
Ջևս 569, 570

Էաշի 262
Էմին Մկրտիչ *տե՛ս* Մկրտիչ Էմին
Է. Պ. (Էմ. Պիվագյան) 7, 12—14

Թագվոշ 290
Թադեոս Առաքյալ 582
Թահարբեն իշխան 346
Թահմազ խան 531
Թահմազ դուլի բեկ 527, 529
Թահմազ Շահ Խուդաբանդի 528
Թամար թագուհի 172, 175, 176, 250

Թեոդոս 170
Թոմանյան ե. 557, 565—568, 570, 594
Թոմաս եպիսկոպոս 519
Թոռնիկ Մամիկոնյան 44, 91
Թովմա Մեծոփեցի 405—412, 417, 419—422, 475
Թովմաս Ակուինացի 415
Թորգոմ 566, 567, 576
Թորոս *(Դպեսիայի կառավարիչ)* 128
Թորոս Բոռեպիսկոպոս 149
Թորոս *(Հևթում թագ. որդին)* 247
Թորոսյան ե. 289, 340
Թուխլուխ հազարապետ 458

Իգնատիոս Շնորհալի 99
Ինաճ 455
Իննիճյան Ղ. 549, 555—557, 580, 582, 583, 588, 589, 592, 600, 601, 605
Իսրայել 516
Իսմանղար 401, 419, 527
Իսրենդերյան Գ. 580
Իվան *տե՛ս* Իվանե Աթաբեկ
Իվանե Աթաբեկ 172, 173, 176, 223, 229, 235, 250, 260, 264
Իվանե իշխան 405, 410

Լազարյան (Եեր) 591, 610
Լանկրամուր (Լենկրեմուր) 400—402, 405, 408, 411, 417—419, 510, 527
Լաուրա 372
Լիխաչով Վ. 372
Լիկիաներ 594, 595
Լիպարիտ 250
Լուբեր 31
Լևոն *(Բյուզանդ. կայսր)* 170
Լևոն Բ Կիլիկիայի թագ. 159; 172, 173, 192, 234, 247, 248
Լևոն Գ Կիլիկիայի թագ. 114, 192, 246, 247, 258
Լևոն Ըոռբինեանձ տե՛ս Լևոն Բ Կիլիկիայի թագ.
Լևոն ԺՐ պապ 273

Խալաբյան Գր. 409
Խաղան 235
Խաղբակյան Պռոշ իշխան 260, 262
Խաչատուր Անեցի 445
Խաչատուր *(Լամբրոնացու աշ.)* 169
Խաչատուր Կեչառեցի 257—260, 266, 271, 273—287, 344, 345, 450—456, 460
Խաչատուր Տարոնեցի 175
Խաչիկ իշխան 92
Խաչիկյան Լ. 271, 445
Խասպեկ երեց 534, 535
Խեչումյան Վ. 407
Խոնթկար 529
Խոշամ 457
Խոչան 458
Խորով Մեծ 565, 594
Խորենացի տե՛ս Մովսես Խորենացի
Խրիմյան Հայրիկ 582, 587
Խուրլու բուղա 272
Խուտաբաձդ 527

Կալիսթենես (Սուտ) 274—278, 281, 282, 284, 450, 451, 454, 456
Կաուցկի Կ. 213, 214
Կիո Մանուել կայսր 156, 157
Կիրակոս Գանձակեցի 65, 66, 68, 71, 83, 104, 171—178, 184, 185, 221, 229—237, 240, 241, 243, 246, 248, 259, 275, 296, 297, 445, 447—449, 528
Կիրակոս Տարպիզոնցի 546
Կիրպոսին Վ. 422
Կյուլեսերյան Բ. 96, 97
Կյուրիկե Բագրատունի 171, 231
Կոմիտաս կաթողիկոս 336, 571
Կոմիտաս Քահանա 550, 556, 587, 594
Կոստանդիանոս *(Բյուզ. կայսր)* 170, 442
Կոստանդին Երզնկացի 9, 10, 257, 294, 343, 345, 347, 356—360, 365—373, 377—398, 467—469, 478, 482, 486—489, 494
Կոստանդին կաթողիկոս 240, 243, 258
Կոստանյան Կ. 20, 26, 30, 46, 49, 83, 84, 251, 255, 260, 263, 281, 282, 344, 419, 447, 448, 483, 499, 492, 494, 499, 500, 534
Կորյուն 186
Կրիտիսե Կրետացի 43
Կուզմին Մ. 422

Հազկերտ 190
Հակոբ 444
Հակոբ կաթողիկոս 513
Հակոբ վարդապետ *(Սաղմոսավանքի առաջնորդ)* 407, 410, 411
Հակոբ վարդապետ *(Հովհաննավանքի առաջնորդ)* 531

Համառն *(կրոնավոր)* 254
Հայկ 243, 565, 567, 572, 573, 593, 599, 600
Հասան իշխան 92
Հասան Խաչենցի 254
Հասան Մանլի շեխ 264
Հարություն տիրացու 592
Հարությունյան Ս. 422
Հեթում թագ. 158, 182, 234, 240, 244, 246—248, 272, 275
Հեթինեատոս 455
Հիպոկրատես 42
Հյուրմուզ Ե. 557, 590
Հնդի Փոլադ 13
Հոբ (Յոբ) 320
Հոմերոս 101, 453, 454, 565, 567, 568, 594
Հովհան Մարեցի վարդապետ 525
Հովհան Մամիկոնյան 185
Հովճան (Յովճան) Որոտնեցի (Կախիկ) 8, 404—408, 410, 412, 413, 416
Հովհան Քոնեցի 403, 404
Հովհան Օձնեցի 28
Հովհաննես Անեցի 445
Հովհաննես *(Երզնկայի կառավարիչ)* 346
Հովհաննես Դրասխանակերտցի 28
Հովհաննես Երզնկացի Պլուզ, Մորձորեցի 185, 241, 257, 285, 342, 344—349, 352, 354, 356, 387, 396, 422, 452
Հովհաննես Թլկուրանցի 8, 9, 13, 199, 483—494, 499, 554
Հովհաննես կաթողիկոս 202
Հովհաննես Կարբեցի 526
Հովհաննես Կոգեոն 26, 27
Հովհաննես կրոնավոր 408
Հովհաննես Մկրտիչ 584
Հովհաննես Սարկավագ վարդապետ 11, 12, 63—76, 82—84, 86, 94, 96, 145, 147, 172, 270, 411, 444—450
Հովհաննես Սմբատ թագ. 25, 26, 33, 35
Հովհաննես Վանական *տե՛ս* Վանական վարդապետ
Հովհաննես վանահայր 526
Հովհաննես Տավուշեցի 175, 233
Հովհաննիսիկ վարդապետ 94
Հովհաննիսյան Հովհ. 285
Հովսեփ Խաչանման 232
Հովսեփ Մեճակյաց 552
Հովսեփյան Գ. 221
Հոփսիմե կույս 112, 113, 596
Հոռոսիանե 287, 455
Հոչե թագ. 594
Հուլավու էլղան *տե՛ս* Հուլավու դան
Հուլավու դան 241, 243—246, 262, 263, 306
Հուլիանոս 455
Հուստինիանոս 550

Ղազան դան 255, 264, 271, 272, 357, 458, 459, 461
Ղազար Ջահկեցի 587
Ղազարոս *(Երանելի)* 584—586
Ղանալանյան Ա. 7, 315
Ղարա Մահմուտ 418
Ղարամյան Ալեքսանդր Ռափայել 573
Ղարա Յուսուֆ 356, 401, 411, 418 419, 527
Ղարաչորակ 521
Ղարապաշ Մելիք 520
Ղաֆադարյան Կ. 261
Ղութու Նոին 236

Ճննդուկ *(իշխան)* 92
Ճոսլին 128

Մաթեոս Ուռհց 446
Մալխասյան Ստ. 610
Մանեվան 254
Մաղաքիա Աբեղա 241, 246, 247
Մաղաքիա վարդապետ 406, 407, 412
Մամիկոնյան (ներ) 236, 250, 252
Մամիկոնյան Վահան 609
Մանանդյան Հ. 261
Մանասե Կարնեցի 592
Մանգու դան 275
Մառ Ն. 21, 22, 24, 183—185, 191, 192, 195—199
Մատթեոս *(ավետարանիչ)* 156
Մատթեոս պատրիարք 580
Մատթեոս Ուռհայեցի 25, 26, 34, 35, 86—88, 90—97, 100, 171, 249, 256
Մարգարե 233
Մարգարիտ 612, 618
Մարկիոն 27
Մարկո Պոլո 25, 345
Մարկոս 237
Մարկոս Արքա 435
Մարտիրոս *(Երգիչ)* 505
Մարտիրոս *(Մխ. Գոշի աշ.)* 229

Մարտիրոս Խարասարցի 501
Մաղեր Ֆր. 12
Մելիքյան Հ. 289
Մելիքշահ 68
Մելիքշահ Խալանբար 533
Մելիքսեթ-բեկ Լ. 70, 450
Մելիքսեթ կաթողիկոս 517, 525
Մելոնյան Ստ. 548
Մեծն Վարդան *տե՛ս* Վարդան Անելցի
Մեսրոպ Երեց 548
Մեսրոպ Մաշտոց 71, 186, 239
Մեսրոպավան 569, 570
Միքոռ 356
Միլոռն 590
Միհր (Միթրա) 366, 368
Միրզա-Ջաֆար 469
Միքայել Ասորի 241
Միքայել եպիսկոպոս 193
Մխիթար Աբբա 545, 546, 548, 567, 568
Մխիթար Այրիվանեցի 247, 528
Մխիթար Անեցի 95
Մխիթար Գոշ 85, 170, 171, 175—189, 200—218, 221—230, 232, 233, 249, 300, 315, 316, 347, 514
Մխիթար Հերացի 115, 116
Մխիթար Սեբաստացի 404
Մխիթար Սյունեցի 263
Մխիթար վարդապետ 407
Մխիթարյան(ներ) 404, 452, 545, 546, 548, 549, 555, 557, 558, 560, 561, 563, 565, 567, 570—572, 589, 590, 598, 611
Մխիթարյանց Ադեբ. 104
Մկրյան Մ. 289, 291, 315, 319, 335, 457, 459, 461
Մկրտիչ Էմին 240
Մկրտիչ Նաղաշ 8, 9, 218, 473—482
Մհեր 142
Մոլար Նուին 237, 239.
Մովսես Խորենացի 20, 113, 135, 205, 252—254, 294, 450, 451, 455, 468, 512, 519, 520, 527, 548, 562, 563, 598, 600
Մովսես կաթողիկոս *(VI դ.)* 66
Մովսես կաթողիկոս *(VII դ.)* 514, 525, 552
Մովսես մարգարե 516, 552, 571
Մովսես Սյունեցի վարդապետ 546
Մովսիսյան Աբ. 446
Մսերյան Մսեր 593
Մուրադ բեկ 529
Մուրթուզա փաշա 529

Յեսու 516, 517, 571
Յոհաննյան *(նղբայր Առաքել կաթողիկոսի)* 515
Յուսուփ *տե՛ս* Ղարա Յուսուփ

Նադիր խան *տե՛ս* Նադիր Շահ
Նադիր Շահ 530, 532, 533
Նազարյան Ստ. 615
Նահապետ Քուչակ 341, 344, 356, 493
Նաղաշ Հովնաթան 502, 503, 505, 507—511
Նապոլեոն 589
Նավասարդյան Տ. 213, 214
Նավրուզ զորավար 271
Ներսես եպիսկոպոս 615—617, 620
Ներսես Լամբրոնացի 98, 103, 106, 127, 157—160, 164, 166, 167, 169, 170, 177, 179, 248, 259, 548
Ներսես Կլայեցի *տե՛ս* Ներսես Շնորհալի
Ներսես Մեծ կաթողիկոս 71, 142
Ներսես Մշեցի 262, 263
Ներսես Շնորհալի 25, 51, 95—111, 113—127, 129—131, 133—137, 139, 140, 142—154, 156—159, 163, 167—169, 177, 184, 185, 193, 216, 222, 225, 234, 259, 269—271, 310, 312, 314, 337, 358, 366, 396, 420, 440, 443, 498, 550, 556, 581—583
Ներսես Պաղլավունի *տե՛ս* Նրսես Շնորհալի
Նոյ 552, 567, 599, 602

Շահաբաս (Շահ-Աբաս) 402, 511, 513, 515, 522—524, 527, 528, 546
Շահանդուխտ 158
Շահան (Զորավար) *(Ն. Շնորհալու եղբայրը)* 129, 158
Շահիշապնուրին 12, 13
Շահիշիրին 13
Շահ Խմայիլ 402, 527, 528
Շահնազարյանց Աս. 172
Շահնազարյան Կ. 95
Շահնշահ 474
Շահ-Ռուհի (Շահրու) 401, 419
Շահսեֆի 528
Շահրուհ *տե՛ս* Շահ-Ռուհի
Շամիրամ 566
Շապուհ արքա 455

Շապուհ զորավար 92
Շատոբրիան 590
Շուրա 566
Շեդդադիդներ, Շեդդադյաններ 22, 172
Շմավոնյան Հարություն քահանա 588
Շնորհք ամիրա (Միրիմանյան Մկրտիչ) 592
Շուշան 557

Ոլիմպիանոս 39, 138, 184
Ոլոմպիա 280
Ողոմպիադա 455
Ոսկան Հովհաննիսյան Երևանցի 247
Ոսկան *(տպագրիչ)* 515
Ոսկյան Հ. 68, 230, 233, 237, 241, 246, 445, 446

Չաղաթա *տե՛ս* Լանկթամուր
Չանկզ ղան տե՛ս Չինգիզ խան
Չամչյան Մ. 248, 548, 549, 601
Չինգիզ խան 235, 244, 246, 306, 401
Չինքսան բուղա 459
Չիշու 458
Չհտի 458
Չոմար 524
Չորակ 524
Չուղուշայ 239

Պագիսոս 455
Պահլավունի(ներ) 113, 255, 260, 564
Պաղտին (Բալդվին) իշխան 192, 193, 196
Պասկևիչ 617
Պավլոս 287
Պատկանյան Սերովբե 610
Պատկանյան Քերովբե 621
Պեշիկթաշլյան 604, 607
Պետրարկա 19, 392
Պետրոս Արագոնացի 404
Պետրոս Գետադարձ կաթողիկոս 20, 25, 26, 36, 37, 40, 48, 49
Պետրոս (Խոնթկա որդին) 444
Պետրոս Սանահնեցի կաթողիկոս 444
Պետրոս (Սյունյաց եպիսկ.) 253
Պլատոն (Պղատոն) 38, 39, 101, 276, 278, 410
Պողոս վարդապետ 522
Պողոս քահանա 238
Պոտուրյան Մ. 395, 421, 422, 480
Պորփյուր (Պորպիտ) 37, 263, 405, 406, 410, 417

Պռոշ իշխան 260
Պռոշ (Հասան) իշխան 234
Պռոշ Պարոն 273
Պռոշյան Պերճ 120
Պռոշյան տոհմ 260
Պրովանս 19

Ջալալադին 230
Ջախջախյան Մ. (Ռուբինյան Վահրամ) 556, 565, 570, 576, 589, 590
Ջհանգիր 527
Ջհան-շահ 401, 419, 527
Ջղալօղլի 513, 515, 524

Ռըստակես Սեբաստացի 407
Ռոմանոս Դիոգենես 53
Ռուբեն 158
Ռուբինյան(ներ) 247, 249
Ռույ Գոնզալես դի Կլավիխո 346

Սադադոլի (Սադադօլի, Սադադալի) 458, 459
Սադուն Արաբել 264
Սալեման Ս. 469
Սալլանթյանց Մ. 591
Սահակ 525
Սահակ Բագրատունի 598
Սահակ Պարթև 71
Սահիպ Դիվանի 264, 457
Սամադին 261
Սամուել Անեցի 23, 65, 68, 94, 103, 444, 445, 447, 448
Սամուելյան Խ. 85, 181, 249, 448
Սամփսոն 552
Սայաթ-Նովա 13, 535, 536, 538—541, 550
Սարգիս 236
Սարգիս ամիրասպասալար 172
Սարգիս եպիսկ. Ամբերդցի 546
Սարգիս կաթողիկոս 29, 45
Սարգիս Կարբեցի 526
Սարգիս Շնորհալի 99
Սարգիս վարդապետ 33, 39, 41, 42, 244
Սարգիս վարդապետ 406—408, 410, 411, 417
Սարգիս վարդապետ 445, 446, 448, 526
Սարգիս պարոն 514
Սարգսյան Բ. 29
Սարգսյան Խ. 7

Սարկավագ 176
Սարկավագ Բերդակցի 499, 500
Սապֆոն 509
Սեպտեմբրիմ *(Վասպուրականի թագ.)* 63, 92, 93
Սերապիոն 435
Սիֆյան(ներ) 402
Սիմեոն Ծերունի 584
Սիմեոն կաթողիկոս 530
Սիմեոն Ջուղայեցի 514, 547
Սիսալիոս 42
Սիսակ 254
Սիսական տոհմ 252, 254, 255, 405, 571
Սիրաս Հ. 289
Սկովտոս Երիճացի 415
Սմբատ թագ. 255
Սմբատ *(Բոնդ. աղանդի հիմնադիրը)* 28, 30
Սմբատ Սիսական 256
Սմբատ Սյունիի իշխան 250, 254, 410, 411, 457
Սմբատ Սպարապետ (Գունդստաբլ) 25, 179, 182, 247—249
Սյունի տոհմ 253
Սոսթենես 237
Սոֆի 309
Ստեփանոս *(բժիշկ)* 116
Ստեփանոս Լեհացի 512
Ստեփանոս կաթողիկոս Աղվանից 179, 180, 447
Ստեփանոս կաթողիկոս *(13-րդ դ.)* 258
Ստեփանոս Մանուկ եպիսկ. 99, 100
Ստեփանոս Սյունեցի Քերթող 115
Ստեփանոս Տարոնեցի 21, 28, 63, 150
Սրապիոն 514, 517
Սրվանձտյան Գ. 557
Սուլեյման-բեկ 524
Սուլթան աղա 458, 459
Սուլթան Մահմեդ II 441
Սուհիաս Սոմալ 548

Վախթանգ Խաչենցի 176
Վահագն 120, 487, 567
Վահան Մամիկոնյան 41, 557
Վահրամ-Գրիգոր Վկայասեր. *տե՛ս* Գրիգոր Վկայասեր
Վահրամ Պահլավունի 35, 90, 231
Վահրամ Բաբունի 95, 114
Վաղարշակ 455
Վանական վարդապետ 185, 229—234, 237, 240, 243, 246, 262
Վանանդեցի Թովմա 548
Վանանդեցի Հովհան (Ամիրզադե) Միրզայան 583, 592—594, 597, 598, 600—610
Վանանդեցի Ղուկաս 592
Վասակ Պահլավունի 35
Վասակ (Պոռշյան) 260, 262
Վասակ Սյունի 405
Վասիլ (Բարսեղ Բ.) 53, 54
Վասիլ *(Ն. Շնորհալու եղբ.)* 156, 158
Վարազդատ 120
Վարդան Այգեկցի 97, 183, 189—201, 204, 206, 207, 210—212, 214, 217, 218—220, 223, 225, 227, 228, 232, 246, 300, 407
Վարդան աշխարհագիր 241
Վարդան Արևելցի 63, 64, 83, 234, 240—243, 246, 262, 347, 444—448
Վարդան Բարձրբերդցի 232, 233, 240, 247
Վարդան Հայկազն 107
Վարդան Մամիկոնյան 557, 564, 581
Վարդան վարդապետ 411
Վեսելովսկի Ա. 260, 263
Վիրգիլիոս 594
Վոլտեր 590
Վրվեռ իշխան 31

Տաշյան Հ. 183, 260, 274, 276—278, 281, 282, 284, 450—454, 456
Տասյան Գ. 566
Տարսայիճ իշխան *(Ստ. Օրբելյանի հայրը)* 250, 255, 264, 271, 273, 300, 458
Տեր-Մկրտչյան Կ. 28
Տիգրան արքա 89, 564, 565, 567
Տիգրան Հոնեցի 22, 23
Տիմեոս 39
Տիրայր եպիսկ. 289, 291, 335, 457, 459, 463
Տյուզյան *(ընտանիք)* 573, 580
Տորկվատոս Տասսո 146, 372
Տորֆ 120
Տրդատ արքա 71, 120, 442, 443, 557, 581, 594, 595, 597
Տուրիլ 64, 68, 565, 566
Տևկանց Ա. 288, 314

Ուզուն Հասան 527

Փայփաո 13
Փավստոս Բուզանդ 548
Փատլուն ամիրա 63, 448, 449
Փարավոն 516, 530, 552
Փափազյան Վ. 349, 355
Փեղովն 39
Փեշտիմալճյան Գր. 580—583, 586, 587, 590, 592, 605, 616
Փիլարտոս 91
Փիլիպպոս կաթողիկոս 512—514, 522, 525
Փլոն 405, 406, 410
Փտղոմեոս 20

Քեռովբե 480, 482, 483
Քոբայրեցի 159
Քոչակ *տե՛ս* Նահապետ Քուչակ
Քսեներա 455
Քուրթ իշխան 176
Օշին *(Համբրոնացու մեծ պապը)* 158
Օշին *(Համբրոնացու հայրը)* 158
Սաման 401
Օվիդիոս 371
Օրբելի Հ. 21—24, 261
Օրբելյան(ներ) 250, 252, 254, 255, 403, 405, 410
Օրբելյան Ստ. 233, 250—259, 263—266, 269—273, 285, 305, 306, 323, 420, 457—461, 548
Օրբելներ 250
Օրդուղան (Աւրդուղան) 458
Օրմանյան Մ. 67, 97, 98, 100, 159, 405, 410, 415

Ֆարման Մանուկ (Ամանի) 9, 12, 13
Ֆենելոն 590
Ֆիրդուսի 397, 467, 469
Ֆլորիան 590
Ֆնտուխտար սուլթան 247
Ֆրիկ 257, 272, 279, 281, 283, 288—345, 351, 356, 368, 378, 385, 396, 456—466

Ց Ա Ն Կ

Խմբագրի կողմից . 5

Առաջին հրատարակության առաջաբանից . 7

ՀԱՅՈՑ ՀԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ

ՎԵՐԱԾՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԿՅԱՆՔԻ ԵՎ ԱՇԽԱՐՀԱՅԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Վերածնություն—17։ Քաղաքներ և քաղաքացական կյանք ու կուլտուրա—20։ Թոնդրակեցոց աղանդը—27։ Դաղափարախոսության զարգացման դանդաղ ընթացքը—32։

ՆՈՐ ՄՏԱՎՈՐ ՀՈՍԱՆՔԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԵՐԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Գրիգոր Մագիստրոս Պահլավունի 33

Լուսավորության և ուսման ծավալումը—33։ Կենսագրությունը—34։ Ուսման ծրագիրն ըստ Գրիգոր Մագիստրոսի և նրա թարգմանությունները—37։ «Թղթերը»—39։ Գրիգոր Մագիստրոսի լեզուն—45։ Ջափածո գրվածքները—46։ Մագիստրոս և Պետրոս Գետադարձ—48։ Մագիստրոս և Վահրամ—Գրիգոր Վկայասեր—50։

Արիստակես Լաստիվերտցի 51

Ընդհանուր դրությունը—51։ Պատմագրությունը—52։ Աշխարհայեցությունը—55։ Աշխարհասիրություն և հայրենասիրություն—57։ Իրականության սրտահույզ պատկերը—58։ Հայրենասիրական ողբերգությունը—60։

Հովհաննես Սարկավագ Վարդապետ 63

Կենսագրություն—63։ Երկերը—68։ Հայրենասիրական գաղափարախոսությունը—70։ «Բան իմաստութեան»։ Արվեստի ծագման նոր տեսությունը—72։ Հորինվածքը—75։ Ջգտում դեպի բնություն ու ռացիոնալիզմ և դրա ազդեցությունը գրականության մեջ—82։

Դավիթ Ալավկա Ոդի 83

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մատթեոս Ուռհայեցի և ուրիշներ . 86

Ժամանակագրություն—86։ Մատթեոս Ուռհայեցու Ժամանակագրությունը—86։ Գրիգոր Երեց—94։ Սամուել Անեցի—94։ Մխիթար Անեցի—95։

ԱՇԽԱՐՀԻԿ ՈԳՈՒ ՎԵՐԱԾՈՒՄ

Ներսես Շնորհալի 95

Կենսագրություն

Հայ գաղութն աստրական Միջերկրայքում իբրև հայկական մշակույթի վայր—96։ Ներսեսի ուսումն ու կրթությունը—98։ Գրիգոր և Ներսես եղբայրները Տովք և Հռոմկլա բերդերում—101։ Երկու եղբայրների գրական վաստակը—103։

Ներսեսի չափածո երկերը . . 104

Հայացքը բանագործության վրա—104։ Տաղաչափական արվեստի զարգացումը—106։ Հոգևոր երգեր ու տաղեր և ՃղՃեր—110։ Նոր գրական տեսակները—113։ «Առակք»— հանելուկներ—119։

«Յիսուս Որդի» . 122

Դարերի լեգենդանները և ողբերգություն—122։ Արտահայտության ձևը Գրիգոր Նարեկացու ձևի հետ համեմատությամբ։ Հասարակության աղդեցությունը ոճի վրա—124։ Վերջին դատաստանը—126։

«Ողբ Եդեսիոյ» . . 127

Քերթվածի իրական պատմական նյութը և ծագումը—127։ Դիմառնությունը—129։ Էական կողմը—130։ Իրականության հրապուրիչ ներբողը—134։ Բարբարոսական ռազմական դործողությունների ռեալիստական պատկերը—136։ Մահմեդականության և քրիստոնեության կռվի հիմնական պատճառը, մեղքը։ Նոր հայացք։ Երկբայություն—139։ Աննծքների շարանը—140։ Քաղաքական լավատեսություն և լավ օրերի դեղեցիկ երազը։ Աշխարհիկ կյանքի ծարավն ու հաղթանակը բանաստեղծության մեջ—143։

Արձակ գրվածքները 147

Աստենաբանություն—147։ «Թուղթ ընդհանրական»—148։ Ուրիշ գրություններ—156։ Գիրգոր Տղա—156։

Ներսես Լամբրոնացի 157

Կենսագրությունը—157։ Համբարձման Ներբողյանը—160։ Ուրիշ աշխատություններ—167։ Թարգմանություններ—169։

ԱՌԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մխիթար Գոշ 171

Հյուսիս-արևելյան Հայաստանի ազատումը մահմեդական բռնատիրությունից—171։ Մխիթար Գոշի կենսագրությունը—175։ «Դատաստանագիրք Հայոց»—178։ Առակներ—183։ Մխիթար Գոշի առակները—184։

Վարդան Այգեկցի և «Առակք Վարդանայ» 189

Վարդան Այգեկցի— 189։ Վարդանի գրություններին թեման կամ նյութն էա-

պես նորություն չէ—193։ Առակավոր ճառեր—195։ «Առակք Վարդանայ»—197։

Սոցիալական ճարաբերություններն առակների մեջ . . 200

Դասակարգային պայքարը—200։ Աշխատավորության պայքարն ազնվականության դեմ—202։ Արհեստավոր քաղաքացիներ և քաղաքացիների վերաբերմունքն առ գյուղացիները—212։ Աշխարհականի հայացքն եկեղեցականի վրա—214։ Հոգևորականության հայացքը այլազգիների հետ հարաբերության վերաբերմամբ—221։

ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Վանական վարդապետ—229։ Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» — 234։ Վարդան Արևելցի—240։ Մաղաքիա Աբեղայի «Պատմութիւն վասն ազգին Նետողաց»—246։ Մխիթար Այրիվանեցի—247։ Սմբատ Սպարապետ —247։ Ստեփաննոս Օրբելյան—250։

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ

Ստեփաննոս Օրբելյան 257

«Ողբ ի դիմաց կաթուղիկէին»—257։ «Ողբի պատմական հիմքը նկատմամբ արևմտյան հայության և թեման—258։ Թաթարական իշխանությունը 13-րդ դարում—259։ Օրբելյանի «Ողբի» նյութն ու հորինվածքը—264։ Ուրիշ ձևական կողմեր—270։

Խաչատուր Կեչառեցի 271

«Ողբ վասն իշխանաց»—271։ «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ»— —273։ Կեչառեցու կարծիքն Ալեքսանդրի կյանքի և պատմության մասին— 276։ Կաֆաներն ու այլ քերթվածները—279։ «Բարառնութիւնք ի մահ Աղեքսանդրի»—284։

Ֆրիկ 288

Գրականություն—288։ Կենսագրություն—289։ Ազգային և սոցիալական հարցեր—299։ «Ընդդեմ ֆալաքին»—300։ «Վասն Արղուն ղանին և Բուղային»—305։ «Գանգատ»—314։ Մեղքն իբրև ժողովրդի տառապանքի պատճառ և նրա փրկության միջոցը—321։ Մահվան և ունայնության երգը—323։ Կրոնական ու հոգեշահ բանքեր և միստիկական ձգտում—326։ Ստեղծագործություն ինքնաշարժ ազդումով։ Ձևական կողմը—329։ Մի քանի ուրիշ գրական տեսակներ (գրական սևեռը)—337։

Իմաստասաններ և Հովհաննես Երզնկացի կամ Պլուզ 342

Իմաստական ասքեր

Իմաստա-ուսուցական բանաստեղծություն—342։ Երզնկան իբրև առևտրական և կուլտուրական կենտրոն—345։ Հովհաննես Երզնկացու կենսագրությունը—347։ Երկերը—347։ Հովհաննես Պլուզի աշխարհայացքը։ Մարմնի իրավունքը—349։ Ուրիշ իմաստական ասքեր—354։

Կոստանդին Երզնկացի 356

Կենսագրական—356։ Կրոնական և խրատական բանք—357։ Արևգակի, գարնան և լուսու բանքեր—360։ «Գարուն»—360։ «Բանք յերկու դէմս»—362։

«Բանք յաղագս Արեգական արդարութեան»—364։ Խորհրդավոր նմանության օրինակներ—365։ Վարդ ու սոխակի այլաբանական սիրավեպը և սիրո գովաբանություն—370։ Անձնական բանաստեղծություն—378։ «Տեսիլը»։ Հայացքն իր բանաստեղծության ծագման վրա—379։ Խմաստական ասքեր—380։ Մարմնի իրավունքը—384։ «Սիրու բանները»—387։ Բանքեր անձնական վշտի, աշխարհիս ունայնության և մահվան մասին—393։ Գուսանական երգերի ձևական ազդեցությունը—395։ Պարսկական բանաստեղծության ձևական ազդեցությունը և չափածո բանաստեղծության կատարումը—396։ Վեպածնության գրականության առաջին էտապը—397։

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԱԼՈՒՅՍՆ ԵՎ ԱՐԵՎՄՈՒՏԸ

Ճիգեր անկման առաջն առնելու համար 400

Ավետմունքների դարեր—400։ Ունիթոռական գրականություն և լատինաբան աղճատ հայերեն—403։ Հովհան (Յոհան) Որոտնեցի և վանական դպրոցներ—404։ Գրիգոր Խլաթեցի Մերենց—408։ Գրիգոր Տաթեացի—409։ Թովմա Մեծոփեցի—417։

Վահաթել Սյունեցի . 421

Կենսագրական—421։ Երկերը—421։ Ադամգիրք— 422։ Ադամգիրք Ա—426։ Հորինվածքի բնույթն և գրական արժեքը—439։

Վահան Բաղիշեցի 441

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ Ն Ե Ր

Ա ռ ա ջ ի ն հ ա վ ե լ վ ա ծ

Կարակավագ Վարդապետի կենսագրության շուրջը 444

Որտեղացի է նա—444։ Երբ է վախճանվել նա—447։

Ե ր կ ր ո ր դ հ ա վ ե լ վ ա ծ

Քարառնությունների հեղինակը . . . 450

Խաչատուր Կեչառեցու բարառնություններըը—450։

Ե ր ր ո ր դ հ ա վ ե լ վ ա ծ

Ծրիկի կենսագրության շուրջը 456

Թվականներ—456։ Ծրիկի որդու գրավ դրվելու խնդիրները—462։

Չ ո ր ր ո ր դ հ ա վ ե լ վ ա ծ

Շահնամայի ձևական ազդեցությունը . 467

«Ասել ձայնով»—467։

ԷՋԵՐ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

ՏԱՂԱՍԱՑՈՒԹՅՈՒՆ

Մկրտիչ Նաղաշ—473։ Քերովբե—480։ Հովհաննես Թլկուրանցի—483։ Գրիգոր Աղթամարցի—491։ Աշխարհիկ երգ, ուրախություն—498։ Նաղաշ Հովնաթան—502։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐՈԳՈՒԹՄԸ 17—19-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

Գաղափարություն 512
Առաքել Դավրիժեցի—512։ Զաքարիա Սարկավագ—525։ Աբրահամ կաթողիկոս Կրետացի—530։

ԵՐԳԻՉՆԵՐ

Սայաթ Նովա—535։

ՔԻՐՎԱԳԻԵՐ 19-ՐԴ ԴԱՐՈՒ ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (ԱՌԱՋԻՆ ԵՐԵՍՆԱՄՅԱԿ)

Մեր նոր գրականության սկիզբը—545։ Բանաստեղծության վիճակը 19-րդ դարու առաջին երեսնամյակում—549։
Անձնանունների ցանկ 622

ՄԱՆՈՒԿ ԽԱՉԱՏՈՒՐԻ ԱԲԵՂՅԱՆ

МАНУК ХАЧАТУРОВИЧ АБЕГЯН

ԵՐԿԵՐ

Դ

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակչ. խմբագիր Ժ. Մ. ԱԴՈՆՑ
Նկարչ. ձևավ. Կ. Թ. ՏԻՐԱՏՈՒՐՅԱՆԻ
Տեխ. խմբագիր Մ. Ա. ԿԱՓԼԱՆՅԱՆ
Սրբագրիչ Ի. Ս. ԲՐՈՒՏՅԱՆ

ՎՖ 1208 Հրատ. 3237 Պատվեր 444 Տպաքանակ 7000

Հանձնված է արտադրության 10/X 1969 թ., ստորագրված է տպագրության 18/VI 1970 թ., տպագրական 39,75 մամուլ + 1 ներդիր, հրատ. 39,1 մամուլ, պայման. 51,45 մամուլ, թուղթ № 1, 70×108¹/₁₆։
Գինը 2 ռ. 67 կ.։

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, Երևան, Բարեկամության 24